ՑԻՇԱՏԱԿ
Ց. Ս. ՀԻՖՅԱՆՑ

Ա
142

3251

12004

960

Ա· ՕԳՈՍՏԻՆՈՍ

ՅԱՂԱԹՍ ՓԱՂԱՂՅՈՒՆ ԸՍՏ ՈՒՆՈՑ

1983
200
409-09
1635.44
969.
969
200
409-09

ՍՐԲՈՑՆ

28(09)
О-19

ՕԳՈՍՏԻՆՈՍ

ՀԻՊՊՈՆԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԱՂԹԱԿ ՔՐԻՍՏՈՍԻՆ ԲՍՏՈՒՆՔՈՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ԳԻԲՐԻԵԼ Վ. ԸՆՏԻՔՆԵՐՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԻՆ

Ի ԽՆԴՐՈՑ ԲԱՐԵՊԱՀՏՈՒՆ
ԳԱԼԹԻՆԵՐՈ ՏԻԿՆՈՋ ԽՈՍՏԻԿԵԱՆ
ԿՈՂՄԿԵՑ
ՆԱՀԱՊԱՐԵՔ ԱՄԻՐԱՅԻ ԱՅՂԱՀԱՐՏԵՑԻՆ
ՀՐՏՈՐ ՊՈՒՐՃՅԱՆ

Ի ՎԻՆՆԻՍԻԿ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ԳԱՆՁԱՐՈՒՆ
ՑԱՄԻՆ ՌՉՃՃ ԹՄԳ.

28(09)+9(3)

ԱՌ

ՀԱՅԿՈՒՑԵԼ ՊԱՅԾԱՂԱՏՍ

ՏԱՆՆ

ԸԼԼԱՀԱԼԵՐՏՆԱՆՑ

ԱՅՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՊՕՊՀՄՍ

ԵՒ ԸՌ

ՔՈՑՐ ՆՈՑԱ

ՎԱՐՊՈՒՀԻ

ՄԱՅՐՆ ՈՐԲԱՑԵԼ.

HIC JACE

ՆԵՐՍԻՍԵԱՆ
ՀԱՓՆԻՈՐ
ՅԳՐԱՆՈՑ

Որ ի ծաղկի տիոցդ վաղամեռիկ Թալչամեալ՝ ի սեաւ սուգ զմայր ձեր Թողէք . ընդ մայրենի արտասուս աղի արտասուացն , զոր նա ի Ձենջ ընդունել ակնուներ , ընկալարուք ի նմանէ և զայս արձան յաւերժ յիշատակի անմոռաց սիրոյն՝ զոր ի փառս Ձեր և ի տիպանս ցաւոց անձինն հնարեցաւ սէրն մայրական : Օ այս քան զեպիպատոյ երկնաբերձ և զհրաշակառոյց ամբարտակսըն՝ զոր ունի նշխարացն աւանդապահս , և քան զԱտաոսեայ պերճ և զՀոյակապ շիրիմն վերագրեալ Ձեզ ի

հաձոյս ։ Որ քանզի ոչ յանկեան ուրեք և յանձուկ վայրի սահմանեալ՝ սակաւուց ևեթ հետախոյզ աչաց կացցէ սա ՚ի տեսիլ ունայն և ՚ի փառս վաղանցուկ · այլ համակրէին սիրեալ ընդ աշխարհս համազգի և հայախօս մարդկանն յընթերցումն , արծարծեսցէ ՚ի նոսա զաղնուական տենչ և զանձուկ երանաւէտ Վաղարշն Պատուածոյ , որում անչափն տենչացեալք Պօսք ՚ի մահուան Ձերում՝ Նէ օգտեցեալցին սովաւ հոգևկեցոյց արգասիք և մաղթանք սրտառուչք՝ լեցին անշուշտ օժընդակ անձատելոցս արդ յիրերաց , անմեկին միանալ վերստին յերկնաձեմ և ՚ի սուրբ Վաղարշ Պատուածոյ , ուր ընտրեալքն ՚ի նմանէ հանդերձ սիրելիք , միաշուրթն բարբառով օրհնել յաւէրժ զվշտացեալցին միխիթար և զպատկիչն հանգուցելոց զմիայն անմահն Պատուած ։

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ար ընդ կենցաղ ()գոստինոսի ոք անցեալ և զընաւ հրաշալիսն նորա յահին արկանիցէ զգրաւորական վաստակս, ահաբեկ սեամանէ զմեծ զօրութիւնն այ, եթէ զիարգ յերկրածնաց աստի զոր կամի երկնայմոյն առնել հանգէտ. որպէս զի որ երբեմն Աշմարտութեանն էր հակառակ ոխերիմ մարտադիր, պատկառելի ակնթից սուրբ հարցն նստի արդ գահագլուխ յեկեղեցի այ. և քաջածանօթն ըստ աշխարհի իմաստութեանց և ահարկու, ի տեառնակոչին կոյս անցեալ միանգամ՝ որպէս զայլ ոմն Պօղոս անարատ կրծնիցս կանգնի պատուար. և բարեյոյս անսխրեալութեանն փոխան՝ ասպնջական լինի ածայինն խորհրդոց և փառաւորելոյ անուանն այ անօթի ընտիր:

()գոստինեայ պերձախօս հանճարոյն գաստիարակ եկաց Աարթագինէ, և Հռոմ հանդիսարան գեղեցիկ. հանապազօրեայ գեգերանք էին մտաց նորա հզօր իմաստասիրացն նուրբ տեսութիւնք, յորս յարեցաւ նա առ՝ի դիւտ Աշմարտութեան. և իբրու հասու նմին լեալ դողացոյց ինն զողջամիտս՝ի վարդապետաց, թէպէտ և դըրդուեցոյց ոչ: Ապակոյն՝ի զուր էր նմա երկրաւոր իմաստից լինել հետամուտ, ուր երկինք նմին այլ պատրաստէին առպարեզ չնաշխարհիկ իմաստասիրութեան, որ ոչ մարդկեղէն Աարտարութեամբ յօրինեալ, այլ օծեալ Հոգւոյն այ. և հանդիսադիր՝ի նմա երանելի այրն այ Ամբրոսիոս հայրապետ՝ի Միեդիոլան քաղաքի: Ընդ՝ի բանս նորա եդիտ ()գոստինոս զոր այլուրն խնդրեր զանստեղիւթ Աշմարտութիւն. սարտեաւ խոպատ յորոց վրիպական կարծեօքն զարտուղեալն էր. և որոց խորչէինն կանխաւ՝ի

նմանէ, հոգևոր միխիթարութեան եղև նոցա այնուհետեւ ասելն։ Եպիսկոպոսութիւն կոչեցեալ նորա եկեղեցւոյն Հռոմայ՝ի միաձայնութենէ ժողովրդեանն, հաւատարիմ եկաց անտես՝ի տանն Աստուծոյ, բարեկարգութեանց հեղինակ, հովիւ և հայր խնամակալ. որ և զառաքելային գրոցն ներքատես և կիրթ ախորժակաւ առեալ զնաշակ, զնոյն և որոց վարդապետեացն քաղցրացոյց կերակուր։

Իսկեան ամարկու կանգնեցաւ նա եկեղեցւոյ, յորժամ հերձուածոցն խուժան կործանումն նմին սպառնայր. և եթէ յառաջնորդաց որ տառապէր երբէք՝ի հերձուածողական զինուց, թէպէտ և աչխարհաւ բացական, յոգոսմնեան վարդապետութիւնն ապնստանէր. մանիքեցւոցն մոլորութիւն ծաղր եկաց առաջի նորա. յերբեսաց նորա յիրեար անցին դմնատեանք, և պրեսկիղեանք վատաբարեցան՝ի նմանէ մինչ խոպատ։ Իբրև յարեաւ Պետրոս իսոս, ասէ Մեծն Պօսիւէ, Հայրապետիս և ժողովք և ամենայն մարդ յարևմտից մինչև՝ի ծագս արեւուց() գոսպէնոս զաչս իւրեանց դարձուցին, զնա միայն հաւատեաւ ծանուցեալ ահեղ ոսոխացն յաղթող նահատակ։

Մա ոչ ոք՝ի հարց սրբոց հաւասարեաց արդեօք բազմութիւն մատենից. որ և մեծարոյ յոյժ կացին յեկեղեցւոջ յամենայն՝ի դարս, և անսպառ աղբիւր խորհրդոց և յատակ վարդապետութեանց։ Այլ՝ի գրաւորական վաստակս նորա մեծատէս համբաւեալ է մատենիսն Յաղագս քաղաքին այդ, ոչ միայն զի լի է բազմապատիկ հմտութեամբ, այլ և խելամտութեամբքն նրբախոյզ, վեհ և հզօր պերճախօսութիւք. և որչափ ստեղծական միտք հասու լինել զօրինէ, սա Հայելի յատակատես աստուածային խորհրդոցն՝ի մտատեսութիւն կարգաց աչխարհի։() գոսպինեայ իսմասոք Թէպէտ այն էին զի զՀայհոյութիւն հերձանոսացն՝ի դէպ բերէ. Հանդէս, որք զաղէտս պետութեանն Հռոմայ տային կռապաշտութեանն բառնալոյ, այլ յիմասոից աստի անց նա և՝ի բան ընկերութեան բարեացն և չարաց. զնոսա քաղաք այդ կոչելով և զոսա քաղաք սա-

մանայի . առաջինն տասն դրոշքն զՀեթանոսացն խայտառակեալ մոլորութիւն, և ապա երկոտասանիւքն քրիստոսական կրօնիցս հաստատեալ զՔրիստոսութիւն : Վասնզի սկիզբն արարեալ նորա ի յարձակելոյ Պետրիկոսի գոհացուցն արքայի ի վերայ Հռոմայ , որով և ի մահանել քաղաքին ի ձեռս բարբարոսաց՝ անհաւատիցն լի եղեն բերանք հայհոյութեամբ Թէ զի անձեաց կալաւ ամենայն ուրեք պաշտօն Քրիստոսի և աստուածոյն պաշտամունք բարձան ի միջոյ նմին իրի և այս աղէտք անցին ընդ նոսա , հակառակօքն ցուցանէ սուրբ վարդապետն՝ Թէ ի շնորհս մանաւանդ Քրիստոսի անուանն անվհատելի մնաց ի բարբարոսաց որ միանգամ ի քրիստոնէից ոք և ի հեթանոսաց իսկ ապաւինեցաւ յեկեղեցի այ . որպիսի ինչ չետես ոք յանաստուած ժամանակաց պատերազմունսն , ի մեհեանս կռոցն ապաստան լեալ ուրուք և զերծ ի փորձանացն լինել : Ընդեալ ապա ի նկարագիրս բարուց հռովմէական ժողովրդեանն , վերս ի վայր խոհեմ զննոտի պաշտամունսն որով զպետութիւնն անկործան համարէին . և զաստուածսն մեծամեծ պաշտամանց արժանացեալս ի նոցանէ , ցուցանէ յապականութենէ յապականութիւն առաջնորդեալ նոցա . և զի պետութիւն անընդհատ մարտիւ ընդարձակեալ աւազակութիւն իսկ է , և ոչ ի դիցն խնամակալութենէ կամ ի շարժմանէ աստեղաց : Յայտառակեալ զաստղահմայիցն և զնախատագրաց մոլորութիւնն , զայլ տեսչութիւնն ի հանդէս ածէ յամենայն անցս աշխարհի . և Թէ երջանկութիւն Թագաւորաց ոչ երկարութեամբ կենաց սահմանի կամ խաղաղաւէտ կենօք և ժառանգս Թողով , որով և հեթանոսաց հաստատէն , այլ յորժամ արդարութիւն Թագաւորեսցէ առնօքօք , և նոքա զմեծութիւն իւրեանց ի չափու կալեալ՝ այ իշխանութեանն տացեն տիրել տիեզերաց : Ձետ այնորիկ զարտաքին խմաստասէրսն ածէ ի մէջ . որոց խուզարկու եղեալ առ ի նոցանէ կարծեալ Հնմարտութեանն զառածան ի մտոհս , զարարածս իբրև զնճծ պաշտեալ , և խոիր ինն ընդ դևսն եղեալ մեծարե-

լիս և անմեծարս . և Թէ քանի տարօրինակ իցեն և այլազգի հեթանոսականացն զոհից նուէրքը ՚ի քրիստոնէիցն Հնդիքիա պատարագէ՝ ՚ով միայոյ մատուցեալ, և ոչ բնաւ հրեշտակաց և մարտիրոսաց , որք իբրև ծառայք ՚ով պատուին և ոչ հաւասար նմին պաշտելիք : Ոչ այսոսիկ ՚ի դէմս ածեալ հեթանոսաց տանեակ գրովք , ՚ի մեծասքանչելորդումն սկիզբն առնէ զինչ կրկին քաղաքքն իցեն երկնաւորին և երկրաւոր . զոր ՚ի հրեշտակաց անտի ՚ի բարեացն և յանկելոյն սկզբնաւորեալ , անցանէ ասա ՚ի տեղիսն մարդոյ և ՚ի բազմապատիկ աղէտս անկման նորա . և Թէ զիարդ ՚ի սերնդոց նորա քաղաքքն կրկին յառաջադէմ եղեն Աբելէ և ՚ի Կայենէ մինչև ցՆոյ և յԱբրահամ և ցԹագաւորս Իսրայելի : Այս զմարգարէսն և զպատգամս նոցա յանդիման առնէ, որ յաղագս Քրիստոսի գալստեան և մշանջենաւոր Թագաւորութեանն նորա . ուր այլք ՚ի Թագաւորութեանց աշխարհի անկեալ վատԹաբեցան . յարեան հերձուածք՝ երկրաւոր քաղաքի կողմանն հզօրիչք , այլ նկուն եղեն առաքի մշտայաղԹ զօրութեանն քաղաքին ՚ով , որ է եկեղեցի Քրիստոսի : Ընդայնէ յետ այնորիկ ՚ի նկարագրութիւն աւուրն դատաստանի և յարութեան մեռելոց , և անվախճան տանջանաց դատապարտելոց և արդարոցն մշանջենաւոր երանութեանն . և հնձէ զմատեանն :

Այդ Եթէ ըստ պատուականութեան և մեծի անուանն և արժանեաց ոչ Թերի քան առ արևմտեայսն և առ մեր բայինս յարգեսցի մատեանս , ոչ միայն բարեյիշատակ Թարգմանչին պատկին վաստակք, և ազգասէր բարերարին արդիւնանան իղձք , այլ և մեք քաջալերս առցուք և զայլոց արևմտեայ հարց սրբոց աՀռուակցայն սրբոյ վարդապետիս՝ Եթէ ոչ զամենայնին , այլ զպատուականագոյնսն անչուշտ ՚ի գրաւոր աւանդից նոցա հայեցեալ խօսիւք տալ ՚ի վայելս ազգիս տեառն յաՀզելով :

ՍՐՄՈՑՆ ՕՍՄԱՏԻՆԱՍԻ

ՀԻՊՊՈՒՆԵՑ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

ԳԻՐՔ ԱՌԱՔԻՆՈՅ

Ի հաստատեալ հաւատոյս, որք զաղէտս աշխարհի, մանաւանդ և զայն ինչ զառ ի դահճացեալն ածեալ քաղցումն Հռոմոյ՝ վերագրէին քրիստոնէական կրօնիւք՝ իբր խափանողի ասուածոցն պաշտամանն : Ձառէ զայնպղուածոց և զնախադասից, որք նոյնօրինակ անցին յայնժամ ընդ բարիս և ընդ չարս՝ որպէս և է սովորական : Ընդայնացուցանէ և զերազարուեթիւն այնոցիկ, որք զհաւատացեալ կանոնն խոյտառակիլ ի զինուորաց՝ ի դէմս հարկանէին :

ՅԱՌԱՔԱԿՐՈՒՆ

ՆՊԱՏԱԿ ԵՒ ԱՌԱՔԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՅԱՆՁՆԱՌԵԱԼՍ ԳՈՐԾՈՑ

ՓԱՌԱՒՈՐԵՑԵԼՈՑ Վ՚ազաքին Յ՚ստուծոյ եթէ ՚ի չըբջ ջանս ժամանակացս՝ մինչդեռ ՚ի մէջ անօրինաց պանդըխտանայ հաւատով գնացեալ, և եթէ յանշարժութեէ յարակայ աեծուոյն՝ որում զարգիս համբերութէ աէր ունի, մինչև զարձցին իրաւունք յարդարութէ, և ապա զերօրինակ զբաւմբ ածցէ գյաղթութիւն վերջինն և զկատարեալն խաղաղութէ, ահա ՚ի սոյն գործ ՚ի քէն թելադրեալ, և իմովհանն խոստմամբ պարտ եղեալ, պաշտպան կալ յանձն առի, ո՛ սիրեցեալ որդեակ Ա՚արկեղինէ, հաւկառակ այնոցիկ՝ որք քան զհաստիչն բոլորից և ՚ածեղէն քաղաքիս իշխեն նախապատիւ առնել զդիս խրբեանց :

Նորա ապաքէն մեծ և տարժանաւոր, այլ յաճ օգնական է մեր։ Վասնզի գիտեմ որպիսում ուժի պէտք են առ ի հաւանեցուցանելոյ ամբարտաւանից՝ որքան իցէ խոնարհութենէն առաքինութէ մեծութենի, որով համարձակ երկրաւոր բարձրութենէ ծփելոց ժամանակաւս տատանմամբ՝ ոչ մարդկեղէնն վարեալ գոռոզութէ, այլ յաճախ ուսան ընդհակառակ բարձրութենէ դէրիվերոյ անցանել։ Վասն զի թագաւոր և կերտող քաղաքիս՝ զրոմէ խօսեալ կայ մեզ առաջի, յայտնեաց իւրոյն ժողովրդոց գրովք զդատաւորիս յաճախին օրինացն յասել անդ, "Ցէր ամբարտաւանից հակառակ կայ, տայ ընդհն խոնարհից ,, (Յակ. դ. 6։ Այլ զոյն զայս՝ որ այն է, ախորժէ և փափաքի անգամ ոգի ամբարտաւան, և սիրէ առնուլ իւր ի գովեստ,

"Զբ հնազանդեալսըն խընայել,
Զ ամբարտաւանսըն խորտակել։" Ա էրեխ. ե. 5։

Մօրին վասն և զընթացիւք երկրաւոր քաղաքին, որ ի ցանկանալ իշխող լինել, թէպէտ և ծառայիցեն նմա ժողովուրդք, այլ նմին իսկ տիրէ նոյն ինքն իշխանասիրութէն, ոչ արժան է անցանել լռութէ, որպէս ինչ առաջարկեալս գործոյ կարգ պահանջիցէ, և մեզ տացի կատարելութիւն։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս Թշնամեաց անուանն Քրիստոսի, որոց ի քանդման քաղաքին հաւտից նախայեցն բարբարոս վասն Քրիստոսի։

Վասն զի յայսմ քաղաքէ յարուցեալ կան թշնամիքն՝ առ որս պատշտպանել առաջի կայ զքաղաքն այ. յորոց թէ բազմաք թողեալ ի քաց զմոլորութիւն ամբարշտութէն՝ լինին արժանաւորք նորուն քաղաքացիք, բայց յոլովք և այն

սէս ինն յատկութիւն նորա բորբոքին, առ յայտնի ե-
լանիս փրկչի նորա զառաջք ապախտաւորք, մինչ զի
ոչ ունէին լեզուս շարժել այսօր հակառակ նմա, թէ ոչ
'ի սրոյ Թշնամւոյն փախուցեալք 'ի նուիրեալ տեղիս
նորա ապրեցուցանէին զկեանս՝ ընդ որ հպարտանան։ Ա-
ահա և նորքին հնազանդեցեալք դժխեմեալ էն ընդ անուն
Քրիստոսի, յորս խնայեցեալն բարբարոսք վասն Քրիստո-
սի։ Ա կայէն այսմ մարտիրոսացն հանդատարանք և
տաճարք առաքելոց, որք յայնմ աւերմանն քաղաքին զա-
պաստանեալսն անդր՝ եթէ զիւրեանցն, և եթէ զօ-
տարս ընկալան։ Ա՛ինչ ցայն վայր խիզախեր Թշնամին ա-
րիւնարբու, և անդէն զտեղի առնոյր կատաղութէն սա-
տակչին, կարեկիցքն 'ի Թշնամեաց անտի՝ անդր ապրե-
ցուցանէին զայնոսիկ՝ որոց արտաքոյ սուրբ տեղեացն խը-
նայեալ էին, մի գուցէ անկանիցեն նորա 'ի ձեռս անօ-
ղորմից։ Ա՛ակայն և նորքին իսկ գազանամիտքն և կատա-
ղեալք զօրէն Թշնամւոյ իբրև յայն տեղիս հասանէին,
ուր արգելեալ էր նոցա առնել զոր ինչ այլուր օրէն էր
ըստ իրաւանց պատերազմի, անդէն ցածնուին 'ի սրախող
խոցն անգթութէ. և դերի վարելոյն իղձ բեկանէր։

Ա՛յսու օրինակաւ ապրեցան բազումք, որք այժմ ըզ-
քրիստոնէականն բամբասեն ժամանակ, և զչարիսն ան-
ցեալս ընդ այն քաղաք 'ի Քրիստոս վերագրեն. իսկ զբա-
րիսն որք 'ի կեանս եղեն նոցա առ 'ի պատիւ Քրիստո-
սի, ոչ մերում Քրիստոսի ընծայեն, այլ իւրեանցն ձա-
կատագրի. ուր և առաւել պարտ էր՝ եթէ ուղիղ խոր-
հէին, զգժնդական զայն և զխիստս զառ 'ի Թշնամեացն
կրեալս ընծայել ճշմարիտ տեսչութէն, որ զմարդկան
գեղծագործութիւնս սովոր է պատերազմօքն մաքրել և
բառնալ, իսկ զարդարագործ և զգովելի վարս մարկա-
նացուց այնպիսեօք վշտակրութեամբ հրահանգել, և
զընտիր գտեալն՝ կամ 'ի լաւագոյնս անդր փոխադրել, և
կամ պահել գեռ յերկրի աստ առ այլ ինչ պէտս։ Ա՛յլ
զայն՝ զի վասն անուանն Քրիստոսի խնայեցին առ նոսա
անողորմ բարբարոսք արտաքոյ օրինաց մարտի՝ կամ ա-

մենայն ուրեք, և կամ՝ ի նուիրեալ տեղիս յանուն Քրիս-տոսի՝ յընդարձակս, և յընտրեալս առաւել մարդասիրու-թեամբ առ՝ ի լինել ընդունարան բազմաց, զայն ասեմ՝ ընծայել արժան էր քրիստոնէութեես ժամանակի, ընդհա-վասն այսր ունել առ ձեռ, ՝ի նորին անուն վստահել Աշխարհութեամբ առ՝ ի զերծանելոյ ՝ի պատուհասից հրոյն յաւիտենից. որպէս զայն անուն քրիստոնէի յոլովք ՝ի նոցանէ տուեալ՝ ի վար արկին՝ ասպրիլ՝ ի պատուհասից այժմու հարուածոցս: Վասնզի զորս տեսանես յանդուգն և ժպիրհ Թշնամանողս ծառայիցն Քրիստոսի, բազում այն են որք ոչ ողջանդամ ապրէին՝ ի կտտորանէ անտի, Թէ ոչ Քրիստոսի ծառայս ձևանային. իսկ այժմ ապաշնորհ հպարտութեբ և ամբարիշտ մոլեգնութեամբ հակառակ անուան նորա յարուցեալ կան՝ ի սիրտս Թիւրեալս, զի մշանջենականն տանջեսցին խաւարաւ, որք յայն անուն եղեն ապաստան բերանով կամ խաբէութեբ, զի յաւիժա-մանակեայ լոյսն վայելեսցեն:

ԳԼՈՒԽ Ը

Ոչ ժիջան քնաւ պատերազմանց՝ յորս յաղթական խնայեալ էցեն՝ է յաղ-թեալն առ՝ ի մեծապանս սատուածոց նոցա:

ՅԱՋՄԱՑ պատերազմաց անցք կան արձանագրեալք նախ քան զՔրիստոսի Հռովմայ, և կամ՝ ի սկսմանէ անտի նորա և՝ ի տիեզերակալութենէն: Ամօղ ընթերցին և ցուցցեն Թէ իցէ երբեք ըմբռնեալ օտարաց զքաղաք հինչ, և Թշնամեացն յաղթողաց խնայեալ՝ ի նոսա՝ զորս՝ ի տաճարս դից իւրեանց գտին ապաստանեալս, կամ ու-րուք զզրադվելի բարբարոսաց հրամայեալ իցէ՝ յարձակ-ման քաղաքի ուրեք մի զոք Հարկանել՝ որ յայս հինչ կամ յայն տաճար գտանիցի: Ա՛ւ ահա Հնեաս հնքնին եւես զՊրիամոս՝ ի վերայ սեղանոյն

“Ա՛րեամբ ըզկրակըն չազախեալ,
Օ՛ր ինքնին իսկ էր նըւիրեալ ,,. Ա՛ղէք. Ը.
Ո՞չ ասպաքէն Պիտեդիս և Պղիսեւս
“Կոտորեալ զպահնակս բարձու զըղեկին,
Օ՛ արձանըն նուիրեալ ՚ի վայր հոսեցին.
Զեռաքն արիւնոտ զկուսի գլխաշուք,
Օ՛ մեծ աստուածուհւոյն առնուլ իշխեցին ,,։
Սակայն որ զկինն գայ՝ ոչ է Ձմարիտ.
“Ա՛ւ յայնըմ հետէ լուծեալ Թուլացաւ,
Յունայն յուսոյ եղեք ՚ի դերև եղաւ ,,։

Ա՛յսպէս զի յետ այսը յաղթեցին, յետ այսը զՏրոյա՛ի սուր և ՚ի հուր մատնեցին, յետ այսը զապաստանեաըն ՚ի սեղան անդր զՊրիամոս խողխողեցին։ Ա՛ւ ոչ յայն սակս կորեաւ Տրովադա, իբրև զի կորոյս զԱ՛ֆենաս. քանզի զինչ նա ինքն Ա՛ֆենաս կորուսեալ էր յառաջն՝ զի և ինքն կո-րընչեցի. մի Թէ զի՞ւր պահպանեաց։ Ա՛յս ինչ Ձմարիտ է. զի յետ կոտորելոյ Թշնամեաց զնոսա, բարձին և գնա. զի ոչ ԼԹԷ մարդիկն յարձանէ անտի, այլ արձանն ՚ի մարդ-կանէ լինէր պահպանեալ։ Օ՛ խաղդ ասպա ՚ի պաշտօն ա-ռեալ էր նա առ ՚ի պահպանիչ լինելոյ հայրենեացն և քաղաքացեաց՝ որ ոչ զիւրմն կարաց պահպանել պահնակս։

ԳԼՈՒԽ Գ

Հռովմայեցիք քանի անմոռաքար զառանին աստուածն անզօրս ՚ի պահպանուէ Տրովադայ՝ նպատակադրեցան ինքեանց լինել կարեցին։

Ա՛ՀԱՒԱՍԻԿ որպիսեաց աստուածոց ՚ի պահպանութէ զիւրեանցն քաղաք յանձնել խնդային հռովմայեցիք։ Ո՛ աշխարելի մնլորուն։ Օ՛ այրագնին ընդ մեզ՝ յորժամ զայս պիսիս խօսիմք զդից և զդրօշելոց նոցա. և ոչ զայրանան ընդ մատենագիս իւրեանց, որոց և վարձս եռուն առ ՚ի ուսանելոյ, այլ և զնոսին իսկ ուսուցիչս արժանիս վարկան

Հասարակաց ոռնգիլ և պատուոյ։ Եւ Ալ Իրգիլեայ՝ զոր և մանկունքն ընթեռնուն, իբր զի մեծի սիրմ քերթողի՝ քան զընաւան ականաւորի և քաջի յիշատակին անդստին ի մտաղ սիոց սերտեալ դժուարաշնչելի կայցէ ըստ Վերատեայ ասացածին ի Խղ. ։

«Հոս տարբացեալ ի կուժ ի նոր,
Պահի նգերկար յօրէ ի յօր ...,

Զգ առ Ալ Իրգիլեայ ասեմ՝ Հերա սիերիմ առ տրտ վայիս այսպէս իմն խօսի հակառակ նոցա ի գրգիռ զարթուցանելով զԱստղս զՀողմոցն իշխեցող.

«Զգ աւասիկ ինձ թշնամի,
Ընդ տիւրենեանըն ծով բերի.
Յիտալիա զՏրոյա տանի,
Ես ըզյաղթեալ դիմս ընտանի ... Ընէպ. ։

Ես զիարդ նկուն եղելոցս այսոցիկ աստուածոց արժան վարկան խնամատունքն յանձն առնել զՀռոմ՝ զի յաղթեսցի մի։ Ալ Թերևս Հերա ասէր զայդ կին զայրագին անգիտացեալ զոր խօսէրն։ Օ՛ ինչ և Կնէաս՝ ինքնին բառբեպարիշտն յանձին կարգացեալ ոչ ահանոնպես զրուցէ.

«Պանթեոս Աղրիադ կարգեալ քահանայ
Դիղեկին սըրբոյ և Ապոլոնի.
Օ՛արձանն և զաստուածս անկեալըս նըկուն,
Ալ և զիւր որդեակ մանկիկ դեռատուն,
Զգէ իւր ձեռամբ ասլուշ ի մըտաց,
Խուժեալ ըզտապաւ ի կողմնըն դըրաց ... ։

Ես ապաքէն զնոսին իսկ զաստուածս՝ զորս ոչ զանգիտէ յաղթեալս ասել, նման առաւել տայ ի խնամարկութէն, քան թէ զնա նոցա՝ յասել անդ առ նոս,

«Օ՛ մեհեանս ահա քեզ հաւատայ,
Ես զիւր տան դիս այս Տրովադա ... ։

Իսկ արդ եթէ Ալ Իրգիլիոս զաստուածսն զայնոսիկ՝ և յաղթեալս ասէ, և իբր այնպիսիս՝ առ ի հայթայթուն ինչ ապրանաց յանձնեալս ի մարդ, օր անմուռանալի կարծել թէ խնամատութ յանձն եղև Հռոմ խնամակալուաց այնպիսեաց. և եթէ նոքա կորուսեալ չէին, ոչ յա

ւեր լինէր քաղաքն՝ Ա՛ւա՛ղ ինչ պարտեցելոց իրը վերակա-
ցուաց պաշտօն տանել և պահպանչաց զինչ այլ է՝ բայց
կանգնել ոչ աստուածս բարերարս, այլ դրօշուածս չա-
բաբախաս։ Վասն իմնատնաբար և կարծելի է, ոչ զայն՝
Թէ Հռոմ ոչ այնպիսում հանդիպեր կատորածի՝ Եթէ
նախ կորուսեալ ոչ էին աստուածքն այսոքիկ, այլ զայն Թէ
նոքին իսկ վաղու և կորնչելոց էին, Եթէ Հռոմայ չէր
պահեալ զնոսա ըստ իւրում կարի։ Օ՜ի՞ նք մտացի ոչ
տեսանիցէ՝ քանի զրախորհուրդ իցէ ճնալ անպարտելի՝ի
ներքոյ պաշտպանաց յաղթեցելոց, և Թէ յայն սակս կո-
րեաւ, զի զպահպանիչ աստուածսն կորոյս։ ուր զի այն և Եթ
բաւական էր լինել կորստեանն պատճառ՝ զի ունել կամե-
ցաւ պահպանս կորստականս։ Այլ ոչ դարձեալ զայսոսիկ
գրելով և նուազելով յաղագս աստուածոցն յաղթեցելոց,
ըստ կամի իմն տեղեաբանելոյն քերթողին, այլ Ձնմար-
տուԹիւնն սահպեաց զարան մտաւորս խօսել զարդարն։

Այլ յաղագս այսոցիկ՝ի դէպ և ձառեսցուք յայլում
վայրի զգուշեաւ և յամախագոյս. յայժմուս զոր առա-
ջի եդի ասել յաղագս մարդոյն ապահաստուորայ՝ բացա-
տրեցից սահաւուք ըստ կարի։ որք զբարիսն յիրաւի ընդ
նոսա անցեալս առ իւրեանցն չարաբարուԹե՛ի Վնաս ձգեն
հայհոյելով։ իսկ զայն զի նոյնպիսիք ելով տակաւին ինա-
ւուԹե՛ն լինի նոցա վասն Վնաի, ՚ի միտ առնուլ ոչ կա-
միս։ Հակառակ անուանն նորա՝ի գործ արկեալ մոլեգնին և
անսուրբ ապարասանուԹե՛ զլեզուան զայն, որով՛ք զնոյն
անուն՝ի կիր առին առուԹե՛ առ՝ի կեալ, և կամ զորս՝ի
նուիրեալ տեղիս նորա լուեցուցին առ երկիւղի, որպէս զի
անդանաւր յանքոյթս ամրացեալք յորժամ վասն Վնաի
անվնասաբ պահեսցին՝ի Թշնամեաց, ապա Թշնամանաբարն
անիծանաբ՝ի նա յարձակեսցին։

ԳԼՈՒԽ Ի

Յաղագս Հերայ մեհենին ի Տրոյա, ուր ոչ ոք ապրեցաւ ի հարուածոցն Յունաց. և վասն տաճարացն առաքելոց որք գտպատանեալն են ի նոսա՝ պահպանեցին ի բաբելացոց։

Տրոցա ինքնին որպէս ասացի, հռովմէական ժողովրդոյն մայր, ոչ կարողացաւ ի նուիրեալ վայրս իւրոցն աստուածոց յապահովացուցանել զիւրոյին քաղաքացիս ի հրոյ և ի սրոյ Յունաց, որք և նոցունց աստուածոց էին պաշտօնատարք։ Մանաւանդ զի ի տաճարի անդ Հերայ

«Պահնակ փիւնիկ ընդ Ողիսէ,
Պահէր զաւարն որ ի Տրոյէ։
Ընդերը համայն Ճոխ ըստացուած
Բերեցելոց համբարակաց.
Վիցըն սեղանք բաժակք ոսկի,
Հանդերձք գերեալ անդր հաւաքի.
Տըղայք առ մարդք կան ի շարի,
Նրեսք մաշեալք առ երկիւղի»։ Ենէաս. Բ։

Պաքէն ընտրեցաւ վայրն մեծի այնմ աստուածուհւոյնուիրական՝ ոչ ուստի չիցէ օրէն զգերեալն ի դուրս կորզել, այլ ուրանօր զգերեալն ամրափակել հաձոյ իցէ։

Ներ արդ զտեղին զայն ոչ հասարակականի ուրուք աստուածոյ, կամ միոյ ուրուք ժողովրդականի, այլ որ Վէսթայ քոյր էր և լծակից՝ բոլորից աստուածոցն Թագուհի, դիր՝ի կշիռ ընդ վկայարանաց մերս առաքելոց։ Ընդր չտեմարանեալ լինէր կապուտ կողպուտ տաճարացն և աստուածոց հրակիզելոց՝ ոչ զի տացին յաղթելոյ, այլ զի յաղթականացն բաժանեսցին. իսկ այսր և որ արտաքոյ հինչ գտաւ նոցունց տեղեացն յատուկ՝ մեծարանօք և երկիւղածութիւք անդրէն ածաւ։ Ընդ ազատութիւն կորուսեալ, աստանօր պահպանեալ. անդ գերութիւն՝ի ներքս փակեալ, աստ արգելեալ. անդր յաղթողաց Թշնամեացն օրէն հասի լինէր խոհեալ, իսկ աստանօր հանդիպեալքն

ազատութեէ՛ի մարդասիրելոյ Թշնամեաց՝ աճեալ գնէին։ Սկիզբ բանից, զայն զՀերային տաճար ընտրեաց իւր ծանօ ծաղամիտ Յունացն ընչաքաղցութեէ և ամբարհաւաճու թեէ, իսկ զՄովսէի տաճարս ընտրեաց զԹասիրութեէ և խոնարհութեէ նոցուն իսկ գժնեայ բարբարոսաց։ Վասն արդեօք կարծիցի, թէ Յունաց յայնմ յաղթութեէ խնայեալ իցէ՛ի տաճարս հասարակաց աստուածոցն, և զանդր ապաստանեալսն որովայնիս տառապեալս և նկուննս ոչ իշխեալ նոցա հարկանել և կամ գերի վարել։ Իսկ Ալ իբ գիւիոսի զՀակառակն ստայօդեալ իցէ ըստ բանաստեղ ծիցն սովորութեէ։ Ալ այդպէս։ այլ յաւէտ և զսովորու թեէ Թշնամեաց՛ի կործանել զքաղաքս՝ նկարագրեաց նա։

ԳԻՒՂԻՍ Ե՛

Չինչ արդեօք ասէր Վեսար յաղագս սովորութեէ Թշնամեաց՛ի կործանել զքաղաքս յաղթեալս։

ՕՂՈՑՆ սովորութիւն և Վեսար ինքնին ըստ գրելոյ Սալուստեայ Հմարտաճառն վիսպագրի՝ յիշատակեաց՛ի խօսսն՝ զոր՛ի ծերակուտին արար յաղագս երդմնակուռ դաւակցացն։ Վուանաց յաւիշտակել մանկանց ազատաց խլել՛ի գրկաց ծնողացն, տանտիկնայց մատնիլ՛ի հաճոյս յաղթականաց, տաճարաց և տանց գնալ յաւարի, սրոյ հարուած և հրկիզութեէ, և միանգամայն ասել, ամե նայն տեղի լցեալ զինուք, դիակամբք, արեամբ և կոծովք։ Վթէ զտաճարսն չէր յիշատակել, համարեաք արդեօք թէ Թշնամեացն սովորութեէ խնայեր յաստուածոցն կայաննս։ Հյ այսոցիկ լինելոյ՝ ոչ յօտարազգի Թշնամեաց երկնչէին տաճարք Հռովմայ, այլ՛ի Վատիլինեայ և՛ի միաբանելոց նորա՝ յաշնուական պատրկաց և քաղաքա ցւոց Հռովմայեցւոց։ Ւայց սոքա գուցէ արք էին անա գորոյնք և հայրենեացն դրժողք։

ԳԼՈՒԽ Ը.

Եւ ոչ հաւմայեցիք անգամ յառնուլ քաղաքաց իմոյէն երթիլ առ յաղթեալսն ի տաճարս նոցա։

Յայլ ընթանայիցէ մեր բանս ընդ այլ ազգս բազումս, որոց մարտ առ իրեարս եգեալ, ոչ ողջմիտեցան ընտրել պարտեցելոցն ի կայանս աստուածոց նոցա։ Ո՛չ հաւմայեցին տեսցուք, զնոյն զՀաւմայելիս ասեմ առցուք ի միջ, ի նոսին հայեցցուք, որոց մեծապէս ի գովեստ ասացաւ

“Յա հնազանդեալսըն խրնայել,
Ո՛ամբարտաւանսըն խորտակել ,,։

Այլ թէ կրելոց անիրաւութեանց առաւել նեղել ախորժէին, քան եթէ վրէժս լուծանել։ Յորժամ առ ընդարձակելոց տէրութէ իւրեանց աւերեցին նոքա զբազում զաղանաւոր քաղաքս մարտուցեալս և ըմբռնեալս, աղէ ցուցի մեզ որոց տաճարաց ակն ածէին ապրել ամենայնի՝ որ անկանիցէին ի նոսա։ Այնժէ նոցա զայդ արարեալ, վիպագիրք անցիցն այսոցիկ լռեցին արդեօք. և զիարդ որք գովելեացն առաւել ի խնդիր էին պատմելոյ, զքաջնապայլն զայն բարեպաշտութէ ըստ նոցա չհաւատիան թողուն անյիշատակ։ Այարկոս Այարկեղոս մեծանունն Հաւմայեցի որ ի բուռն արկ զԱիբակուսա քաղաք գեղապանծ, ելոյց զայն՝ որպէս պատմի՝ նախ քան զաւերելն, և մինչև զնորայն արուն հեղեալ՝ զիւր արտասուսն ցօղեր. խնամ կալաւ զգուշանալ պարկեշտութէ և յանձն ընդնամուիոյն։ Վանզի մինչև յաղթականին հրամանն տուեալ էր յարձակիլ ի քաղաք անդր, արար պատուէր՝ մի ումեք բռնաբարել զմարմին ազատաց։ Յապալեցաւ քաղաքն ըստ պատերազմական օրինի. այլ ոչ ուրեք ընթեռնումք թէ զօրագլուխ այնպիսի մաքրախոհ և բարեգործ՝ հրամայեալ իցէ արձակել անվնաս որ ոք յայս կամ յայն տաճար

պատասպարիցի . որում՝ անկիշատակիլ բնաւ ոչ էր մտքի , ուր արտասուել նորա և պատուէր ահնածելոյ ՚ի պաշկեշտութիւն՝ ոչ անկաւ ընդ լուութիւն ։

Փաւստոս աւերող Տարենատայ քաղաքին՝ ՚ի գովութիւն առեալ է սակս ձեռնհասի լինելոյ նորա յաւարառութիւն կռոցն . քանզի ՚ի հարցանիլ նմա գոլոին՝ թէ զինչ հրամայիցէ առնել արձանաց աստուածոցն՝ յորոց զրաղումն ՚ի բուռն առեալ էին , նա զիւրն չափաւորութիւն կատակաւ ինն քաղցրացոյց . զի հարցեալ թէ որպիսիք էցեն , իբրև պատմեցաւ նմա լինել բազմացն ոչ միայն վիթխարս՝ այլ և սպառազինեալս , ասէ . Ածողովք տարենատացւոց զաստուածսն սրամտեալս ։ Ուստ արդ եթէ հռովմ. ականն արարուածոցն պատմագրողք ոչ զառաքինսն լռեցին զարտասուել և ոչ զերկրորդիս զծաղր , ոչ զնորայն պարկեշտ գթասիրութիւն և ոչ զսուրս զուարթականն չափաւորութիւն , զիա՞րդ անգիր թողուին արդեօք՝ եթէ արդարեւ խնայեալ էր հռովմայեցւոց ՚ի մարդին առ ՚ի պատիւ միոյ ուրուք՝ ՚ի գից նոցա , մինչև արգելուլ զկոտոր բաճ կամ զդերութիւն ՚ի մեհենի ուրեք ։

ԳԼՈՒԽ Ի.

Որ ինչ միանգամ դժնդակք գործեցան ՚ի յաւերման քաղաքին Հռովմայ , զկապ կին պատերազմացն սովորութիւն . եւ որ ինչ խնայութիւն , զնի անուանն զորութիւն կին արդիւնք ։

Ոչ ուրեմն որչափ ինչ յայսմ արդեան Հարուածի Հռովմայ քանդուածն գործեցաւ , արիւնհեղութիւն , աւարառութիւն , հրկիզութիւն , աղէտք , զայգ պատերազմացն սովորութիւն արար ։ Ուստ որ նորօրինակ ինն գործեցաւ , ըստ ոչ սովորութիւն բարբարոսականն կատաղութիւն այնպէս հեղաս համբոյր ցուցեալ , մինչև զընդարձակաւայր տաճարսն ընդարել և կարգել ընդունարան ժողովրդեանն խնայելոյ ,

ուսոմն ոչ ոք՝ի գուբս կորզեսցի, ուր ազատեալքն՝ի կաբեկից Թշնամեացն անդր ածցին, յորմէ ոչ զոք գերել անագորոյն Թշնամեացն իսկ օրէն իցէ, զայս որ ոք ոչ տեսանիցէ լինել Աստի անուանն Ընորհ և քաջանուն դարուս, նա կոյր է. որ ոք տեսանէ և ոչ գովաբանէ, ապաշնորհ է. և որ գովողին ընդդէմ վիճի, նա մտաթափ է։ Աւաւ լեցի Թէ մտաւոր ոք այր՝ գազանութէ բարբարոսացն զայդ հա- մարեսցի։ Օ խժականան զայն և գկատաղի ոգիսն նա զարհուրեցոյց, նա սանձեաց, նա սբանչելապէս ամրեաց, որ մարգարէին՝ի կանուխ ժամանակաց ասացեալ էր. “ Հարիւ գաւազանաւ զանօրէնութէիս նոցա, տան- ջանօք զանիրաւութէիս նոցա. բայց զողորմութէի իմ ոչ արգելից՝ի նոցանէ ,, . Ա-ղ . ֆ ։

ԳԻՒՈՒՆ Բ

Ցաջողուածք և ձախորդութիք յոլովակի առ հաւասար են բարեաց և չա- րաց։

Ա՛յն ասիցէ ոք. զիարդ ասպա ընծայիցին այն գթու- թիք վիճակեցաւ ամբարշտաց և ապաշնորհաց անգամ։ Օ Լ աւրդ համարիցիմք, բայց զի նա արար զողորմութէին զայն, որ հանապազօր “ Օ արեգակն իւր ծագէ՝ի վերայ չա- րաց և բարեաց, և ածէ անձրև՝ի վերայ արդարոց և մե- ղաւորաց ,, Ա-ռ . ե . 45 ։ Օ լ թէպէտ և ոմանք՝ի նո- ցանէ մնախորհ եղեալք յայսոսիկ, զգաստանան յամ բարշտութէէ անտի ապաշաւելով, և այլք՝ ըստ ասացածի առաքելոյն՝ գմեծութէէ քաղցրութէին նոյ և զերկայնմտու- թէին արհամարհեալք, ըստ խստութէէ իւրեանց և ըստ անզղջ սրտի գանձեն անձանց զբարկութէի յաւուր բար- կութէէ և յայտնութէէ արդար դատաստանին նոյ, որ հատուցանէ իւրաքանչիւր ըստ գործոց իւրեանց ,, . Ն- . է . 40, սակայն նոյ ներողութէին յապաշխարութէի ածէ

զարս, որպէս գաւազան նորա ի համբերութիւն զարիւն հրահանգէ։ Կարձեալ, զի ողորմութիւնն այ սիրով ընդունի ի գարմանել զարիւն, որպէս խաւսութիւն նորա զարան կրաւմբէ ի պատուհասել։ Այսն զի ածականն տեչութիւնէ կամք եղեն պատրաստել յապայն արդարոց զարիւս, յորս անարդարքն չընդիցին վայելել, և ամբաքրշտացն զարիւս, որովք ոչ տանջեսցին բարեպաշտք։ Սակ զառաժամանակեայ զարիւքս և զարիւս հասարակաբար երկոցունցն կամեցաւ մնմնաւորել, զի մի բարիքն տալ փաղիք լինիցին՝ տեսեալ և չարացն զնոյնս ունել, և մի չարիքն լինիցին նողկալիք, որովք յոլով անգամ և բարեգործքն վարակին։

Այսակայն խոիր բազում է ի վարել անդ ըստ արժանեաց զաջողակ և զձախողակ անուանեալ գէպս. վասն զի այր բարի ժամանակիւքն այնոքիւք՝ ոչ բարեօքն ամբարհաւաձէ, ոչ չարեօքն լքանի. իսկ չարն յայն սակս վշտացնի չարակրութիւն, զի բարօրութիւնն զեղծումն առնու։ Այայց և ի անտեսութիւնէ այսոցիկ յայտնապէս ցուցանէ ած յոլովակի զիւրն ներգործութիւն. վասն զի եթէ այժմ ակնարկս պատուհասէր զմեղս ամենայն, կարծիւր իսն թէ ոչ պահիցի ինչ յետնումն դատաստանի. և եթէ ոչ միւսմեղաց պատուհաս ածէր յայտնապէս, համարիւր արդեօք՝ թէ բնաւ չգուցէ նախախնամութիւնէ ածեղէն։ Այսպէս ըստ յաջողուածոցն՝ թէ հայցողաց ոմանց ոչ ընդհարձ զայն յայտնապէս առատութիւն, սակաւք թերևս՝ ոչ նորա լինել այսոցիկ. և գարձեալ, եթէ ամենեցուն խնդրողաց տուեալ էր, կարծել գոյր թէ սակս այնպիսեաց վարձուց միայն ունիցիմք պաշտել զնա. և պաշտօն այնպիսի ոչ եթէ բարեպարիշտս զմեզ առնէր, այլ յաւէտ ցանկասէրս և օգտախնդիրս։

Այս զի այսոքիկ այսպէս, ուր միանգամ բարիքն և չարք զնոյն օրինակ առաւպին, ոչ եթէ չկայցէ ի նոսա խոիր՝ այնու զի յերկաքանչիւրսնոյն անցք կրկին։ Կանգի ի նմանէ նութիւնէ անդ կրկին ինայ տակաւին կրկնացն աննմանութիւն. և թէպետ և ընդ նովիմբ վշտօք, ոչ նոյն է առաքինու-

թէ և ախտաւորութէ։ Օ՜ որ օրինակ նովին հրով պայծառ
ռանայ ոսկի, և յարդ ծուխ առնէ, և նովին կանանասայ
լիս խոզանք մանրին, ցորեան սրբի, և ոչ մրուր ընդ ձէթ
խառնի սակս նովին մամլոյ ծանրութէն Ա՜նչէլոյ, սոյն-
պէս բռնութէն նոյն մի՝ի վերայ հասեալ, զաւրիան փոր-
ձէ մաքրագործել յատակէ, և զւարս գաւաթ ապականել
կորուսանէ։ Ա՜ման որոյ՝ի նմանակիր տառապանս չարք
յատեալութէն բերին առ Ա՜ծ և՝ի հայհոյանս. իսկ բարիք
աղօթէն և օրհնէն։ Ա՜յսքան է զանազանութէն, ոչ թէ
որպիսիս կրեցէ այր իւրաքանչիւր, այլ որ ոք այր կրեցէ։
Ա՜նազդ միօրինակ շարժմանն յուզելոյ, Հոտ գաւաթն աբ-
ձակէ տիզմ, և ախորժելի բուրէ իւղ անոյշ։

ԳԼՈՒԽ Լ

Պատճառք խրատուց, յոյր սակս նոյնօրինակ հարուածին բարիք և չարք։

ԻՍԿ արդ յայն հասարակաց արկածս զի՞նչ ինչ կրեցին
քրիստոնեայք՝ որ ոչ՝ի նոցայն օգուտ արդիւնանային յա-
ւէտ՝ հաւատովք կռնեալ զիրսն։ Ա՜յս այն իսկ, զի խնամարկ
ոգւով զմեզ աճեալ նոցա զնեղսն՝ որովք ցասուցեալ Ա՜ստ
յանհնարին թշուառութէնս համակեաց զաշխարհ, թէ-
պէտ և ինքեանք բնաւ անհաղորդք էին եղեռնագործացն
և ամբարշտաց. բայց ոչ այնպէս անյանցս համարեին
զանձինս, մինչ վասն նոցա և ոչ ժամանակիւ չարեաց ինչ
կրելոյ արժանիս զինքեանս գտանէր։ Ա՜նազդ Թողեալ
զայն, զի այր իւրաքանչիւր՝ Թէ և երկիւղած ոք իցէ, յիւրս
իսկ տեղի տայ մարմնաւոր ցանկութէն, Թէ և ոչ միանգ
յանհնարին եղեռն և՝ի խորս չարեաց և՝ի գաւշանս ամ-
բարշտութէն, այլ՝ի մեղս ինչ կամ անսովորս և կամ այն-
չափ յաձախեալս՝ որչափ մանուանս, Թողեալ զայդ ա-
սեմ, ո՞ոք իցէ՝ որ զայնսոսիկ որոց քաւմնելի հալածութէնն

վանն, և զաղբագործութիւնէ և ագահութիւնէ, և զարշ անօրինութենեն և ամբարշտութենէ հարկանէ ՚ած զերկիր ըստ նախագուշակին սպառնալեաց, զխիլիճ այնպիսիս համարել՝ որպէս արժանն է, և այնպէս նոցա կենաց կցորդ լինել, որպէս ընդ նոյսպիսեացն կեալ օրէն է։

Վանդի է բազում անգամ՝ զի զպնոսիկ ուսուցանելոյ և խրատելոյ, և երբէք երբէք խոտիւ իսկ յանդիմանելոյ աչառութեամբ, կամ յաշխատութենէ խորշելով, կամ յերեսս դառնացուցանել զնոսա չկրկնելով, կամ ՚ի թշնամութենէ ուսուցեալ զգուշանամբ, մի արդեօք խափանումն և վնաս մեզ նուիրեսցեն ՚ի ժամանակին ինչ՝ զոր ցանկամբ ստանալ, կամ կորուսանել խիթայ վերհերոտութենէ մեր. մինչ զի թէպէտ և չարացն կենցաղք անհաճոյ են բարեգործաց, որով չլինիցին նոցին պատժակիցք ՚ի դատապարտութենէն՝ որ կայ պատրաստեալ այնպիսեաց յետ այսց կենաց, բայց զի ներելով վարին առ կորստականն նոցա մեզ, թերեւս յանցուցեալք առ երկիւղ նոցա, յիրաւի ապա ընդ նոսին հարուածեսցին ՚ի ժամանակիս, թէ և անպատուհասք ՚ի յաւիտենից մնայցեն։ Այսպա իրաւամբք ՚ի կրել նոցա վիշտ ինչ առ չայ զոյգ ընդ չարսն՝ դառն տեսանեն զոլ զասուի կեանս, զորոյ զքաղցրութենէ սիրելով՝ ոչ կամեցան դառն երևել առ մեզուցեալսն։

Վանդի թէ որ ՚ի կշտամբել և ՚ի խրատել զչարագործս խնայելով զնայցէ՝ այնու զի խնդրէ ժամ դիպողագոյն, կամ կասկածէ՝ մի արդեօք չար և այնու լինիցին, կամ զի մի խափան լինիցին կրթելոյ, այլ տկարս ՚ի բարեկրօնութենէ, և ձնշելով զնոսա խոտորեցուսցեն ՚ի հաւատոց, այդ ոչ թուի գործ անձնասիրութենէ, այլ թելադրութենէ սիրոյ։ Այսյց ընդ մեղադրանաք այն է, զի որոց վարք աննման են, և խորհուրդ ՚ի գործոցն չարաց, խնայեն յօտարին մեզ՝ զորս խրատել կամ յանդիմանել պարտ էր նոցա, զգուշացեալք զի մի դժուարեալ նոցա զնաս բերիցեն յերկրաւորս իրս անդր. որովք թէ և բարիոք և անյանգիստ վարին, բայց առաւել երկրաքարշ մտօք քան զարժանն պանդխտելոցն յաշխարհի աստ, և յոտսացելոց

'ի վերնականն Հայրենիս։ Ա՛յսն զի ոչ տկարագոյնք ևեթ՝ ամուսնական կենացն պարապեալք, որք որդեակս ունին կամ ունել խնդրեն, զտուն և զընտանիս ժառանգեն, առ որս և առաքեալն խօսի ըստ եկեղեցեաց, ուսուցանելով և խրատելով զի՛րդ գնալ արժան է կանանց ընդ արս և արանց ընդ կանայս, որդւոց ընդ ծնողս և ծնողաց ընդ որդիս, ծառայից ընդ տեառս և տերանց ընդ ծառայս. ոչ այդպիսիք միայն ասեմ զբազում ինչ ժամանակ կեայս՝ զերկրաւորս յոլովս կամակար ստանան և յոչկամայս կորուսանեն. որոց վասն ոչ իշխեն զայրացուցանել զմարդիկ՝ յորոց գաւրին 'ի պղծալից վարուցն և յեղեռնաւոր. այլ և նոքին իսկ որք գերագոյն վարուց են վիճակեալք, արձակք յամուսնութենն կապանաց, սակաւապէտք 'ի կերակուր և 'ի հանդերձ, բազում անգամ ակնածեալք իւրեանցն համբաւոյ և բարեկեցութե՛ն, առ երկիւղի դաւանաց և հարստահարութե՛ն չարացն՝ 'ի բաց կան 'ի հշտամբելոյ զնոսա։ Ա՛յսպէսն ոչ ցայն վայր զանգիտեն 'ի նոցանէ, մինչև խոնարհիլ առ 'ի զնոյնս գործելոյ որով և իցէ ահարկուե՛ն նոցա և անզգամութե՛ն, սակայն զգործս՝ յոր չհաղորդին ընդ նոսա, յոլովակի ոչ յօժարին կշտամբել, ուր մարթ էր թերևս զամանս յանդիմանեալն ածել յուղղութե՛ն. կասկածեալք գուցէ ոչ օգտեալով ինչ, իւրեանցն բարեկենդանութե՛ն և համբաւ 'ի վտանգի լինիցի և յեղծուին, ոչ զայն խորհեալք թէ համբաւ նոցա և կեանք կարևորք իցեն առ 'ի պէտս ուսուցանելոյ զմարդիկ, այլ առաւել առ տկարութե՛ն՝ որով հեշտալի է նոցա քաղցրաբանութե՛ն և մարդկան պատիւ, և երկիւղալի՝ դատաստան ամբոխին, և մարմնոյ տանջանաց կամ մահ. այս է, 'ի ցանկութե՛ն կապանաց իմն ձգեալք, և ոչ 'ի սիրոյն պարտեաց։

Ա՛յմին իրի ոչ փոքր այս թուի ինձ պատճառ, որով ընդ չարս և բարեգործքն պատուհասին, յորժամ այ կամք են զանօրէնն գնացս ժամանակաւորաց և պատժոք հարկանել։ Ա՛յսն զի զոյգ ընդ նոսա տանջին՝ ոչ զի հանդոյն նոցա չարաչար կեանս վարեն, այլ զի նոյնօրինակ սիրե-

ցին զառ-ժամեայ կեանս, թէպէտ և ոչ հաւասար նոցա, բայց նմանապէս. զոր պարտ էր բարեգործացն անտես առնել, որպէս զի և չարացն կշտամբեալք և զգաստացեալք՝ յաւիտենական կենացն լինիցին ժառանգորդք. և եթէ չառնուցուն յանձն այնմ կենաց լինել բաժանակից, տանելի են և սիրելի իբրև Տէնամիք. քանզի ցոյչափ՛ի կեանս են, միշտ մնայ անդիտելի փոխհատոյց զկամն իւրեանց՛ի լաւ անգը։ Եւ յայսմ թէ և ոչ համահաւասար պատճառաւ՝ բայց քաջագէպ իմն առ նոսա ելանել մարգարէին ասացեալն. "Եւ վասն անօրէնութեանէ իւրոյ ըմբռնեցաւ և զարիւնոտից՛ի ձեռաց դիտէին խնդրել ցից..." Եզեկ. Գ. 6։ Այսն զի չայս իսկ գէաք՝ վերակացուք ժողովրդոց կարգեցան յեկեղեցիս, զի առանց խնայելոյ յանդիմանեսցեն զմեղս. և ոչ գլխովին անսպարտ չայոց յանցանաց է նա՝ որ թէպէտ առաջնորդ ոչ իցէ, բայց՛ի կցորդեալն ըստ հարկի կենացս՝ գիտելով բազում ինչ խրատու կամ յանդիմանութենէ արժանի, անփոյթ առնէ, զգուշացեալ՛ի դառնացուցանելոյ զնոսա սակս մարմնաւորացն պիտոյից, զոր թէպէտ և ոչ յանարժանս վարէ, բայց ախորժէ քան զարժանն։ Վասն բարեգործացն և այլ պատճառ, յորս սակս ժամանակեան չարեօք վշտանայցեն. որպիսի Հնոբացն էր. զի ինքնին մարդ յանձին փորձեալ ծանիցէ՝ թէ ո՛րչափ առաքինութենէ՝ ածպաշտութենէ ձրի սիրիցէ զնա։

Ա.Ի.Ն Ձ ՀԱՅԿԱԶՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.P.A. Institut Arménien Bibliothèque
7/XI 1922
Ս. ՍՅՍՍԻՀՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՐՔ Ժ

Ի կորսեան իրաց ժամանակէից ոչ կորնչի ինչ արդար։

ԱԽՂԱՂԱՑՍ մնածուքեամբ նկատեալ զայսոսիկ, տեսցես եթէ անցանիցէ՛ ինչ չար ընդ հաւատացեալս և ընդ ածպաշտս, որ ոչ՛ի բարիս չքջեսցի նոցա. ապա թէ ոչ անկած համարիցի արդեօք առաքելականն վէմիս, "Կիսեալք

1983
1004
T638t

եթէ որոց սիրելին զնա՛ծ, յամենայնի (կամ ամենայն ինչ) գործակից լինի ՚ի բարիս ,, . Հ՚Ա. Ը. 28։ Կորուսանել կորուսին զամենայն զոր ունէին . այլ միթէ և զՀաւատս, միթէ զնա՛ծպաշտութիւն անգամ, միթէ և զնեղըքին մարդոյն զբարիսն, " Ար է առաջի այ բազմապատիկ ,, . Ա . Պետ . Գ . 4։ Ա՚յս են քրիստոնէիցն ստացուածք . որովք մեծատունն առաքեալ ասէր . " Ա՚յլ չահավանա՛ մեծ՝ ա՛ծպաշտութիւն է բաւականութի՛ւն հանդերձ . զի ոչ բերաք ինչ յաշխարհս, և ոչ տանել ինչ կարասցուք . այլ ունիմք կերակուր և հանդերձս , և սիրոյ շատացուք։ Իսկ որք կամինն մեծանալ, անկանին ՚ի փորձութի՛ւն և յորոգայթ , և ՚ի բազում ցանկութի՛ս անմիտս և վնասակարս, որք ընկղմեն զմարդիկ ՚ի սատակումն և ՚ի կորուստ ։ Ա՚յ արմատ ամենայն չարեաց արծաթասիրութի՛ւն է. որում ոմանց ցանկացեալ վրիպեցան ՚ի հաւատոյն, և զանձինս արկին ընդ բազում ցաւովք ,, . Ա . Տիմ . Ը . 6 . 10 ։

Ա՚պա ուրեմն որոց կորեան երկրաւոր մեծութի՛ք յաւերմանն Հռովմայ , եթէ ունէին զայնս ըստ որում լուեալ էին յառաքելոյ ասելի՝ որ արտաքոյ չքաւոր և ներքոյ Հարուստ, այս է՝ եթէ վարէին զաշխարհ որպէս թէ չվայելիցեն , Ա . Կոր . Է . 31 . ասել կարող էին՝ զոր և բազմափորձն այն և անպարտելին Յոբ . " Ա՚երկ իսկ եկի ես յորովայնէ մօր իմոյ , և մերկանդամ դարձայց անդրէն . տէր ետ, և տէր առ . որպէս ե՛ն Հաճոյ Թուեցաւ, նոյնպէս և եղե . եղիցի անուն ե՛ն օրհնեալ ,, . Յ . Ա . 21։ Իբրև ծառայ բարի՝ մեծագանձ ստացուածս անձինն Հա մարէը զկամս տեառն իւրոյ, որում սպասաւարկեալ Ա՚նխանայր Հոգւովն, և ոչ տխրէր՝ կենդանութի՛ւն լքեալ զիւրն զայն , զոր մահուամբ լքանելոց էր ընդ Հուպ։ Իսկ տակաւնդա՛ծ՝ որք զերկրաւոր բարիքս ոչ քան զԱ՚ն նախատամեծար եդին , բայց առ փանաք իմն ՚ի նոսա յարեցան , որչափ ՚ի սիրելն յանցուցեալն էին , գիտացին զայն կորուսանելոյն . զի այնչափ ցաւս կրեցին , որչափ զանձինս արկեալ էին ընդ ցաւովք , ըստ նախայիշատակեալ առա-*

քելոյն բանի : Վանդի պարտ էր յաւելուլ առ նոսա և զուսուն փորձոյ, որք զանիցին ուսուն անտես արարեալ էին յերկար ժամանակաց . զի և յասել առաքելոյն " որք կամինն մեծանալ , անկանին 'ի փորձութիւն ,, , ապաքէն 'ի մեծութիւնս անդ զցանկութիւնն ստգտանել , և ոչ գտանցուածն . որ այլուր հրամայէ ասելովն . " Ի՛ նեծատանց որ են յայսմ աշխարհի, պատուէր տացիր մի՛ հպարտանալ և մի՛ յուսալ 'ի մեծութիւն մնոտի , այլ յԱստ՝ որ տայ զամենայն առատապէս 'ի վայելել . զբարիս գործել , մեծանալ գործովք բարութիւն , առատս , սիրունս , հաղորդս լինել , գանձ անձանց հիմն բարի 'ի հանդերձեալսն, զի բուռն հաւ. կանիցեն զՀմարիտ կենացն ,, . ա . Տիմ . ը . 17 . 19 :

Որք միանգամ արարին զայսոսիկ յիւրեանցն ընկից , մեծամեծ շահիւքն մխիթարեցան 'ի Թէթև տուգանսն, առաւել խնդացեալք այնորիւք զոր մտադիւրն բաշխելով յանկասկածս շտեմարանեցին , քան Թէ տխրեալք ընդ այնս զոր զգուշեաւ պահելով՝ արագ կորուսին . քանզի այն միայն կորեաւ յերկրի , զոր աստի փոխադրել Հնդգացան : Օ՛ի որք յանձին կալան զտեառն իւրեանց զխրատս յասելն . " Ի՛ գանձէք ձեզ գանձս յերկրի , ուր ցեց և ուտիճ ապականեն , և ուր գողք ական Հատանեն և գողանան . այլ գանձեցէք ձեզ գանձս յերկինս , ուր ոչ գող մերձենայ , և ոչ ցեց ապականէ . զի ուր գանձք ձեր են , անդ և սիրտք ձեր եղիցին ,, . Ի՛ Մ. ը. 19. Նորա 'ի փորձութիւնն ժամանակի 'ի միտ առին՝ Թէ քանի՛ ուղղութիւք իմաստասիրեցին անսալ իւրեանցն վարդապետի, որ գանձս իւրեանց պահապան է Հաւատարիմ և անյաղթելի , Վանդի եթէ խնդացին բազումք՝ ունելով զինչս իւրեանց 'ի տեղի ուրանօր ոչ մտտեաւ Թշնամին, ո՛րչափ և աս յանկասկածս խնդալ ունէին՝ որք ըստ խրատուս այն իւրեանց անդր ուրեմն փոխադրեցին , ուր՛ Թշնամւոյն մատչել բնաւ անմարթ է ,

Ասաի մերս Պաւղինոս՝ եպիսկոպոս Ղողայ , 'ի բազմահարուստ մեծութենէն կամաւ աղքատացեալն, 'ի սրբութենէն բարգաւաճ, այն ինչ յառաման Ղողայ քաղաքին

'ի բարբարոսաց՝ անկաւ 'ի ձեռս նոցա, այսպէս 'ի սրտին աղօթեր, որպէս յետոյ ինքնին ծանուցց. Տէր, ոչ վշտանամ ինչ սակս ոսկւոյ և արծաթոյ. քանզի դու գիտես՝ ուր է իմ ամենայն ինչ։ Ա՝ման զի անտանօթ ուներ զիւրն զնամ, ուր եցոյց նմա տէրն ամբարել և գանձել, որ և զմեռուլուա արկածս աշխարհի նախասպատմեալ էր։ Այրին վանն որք միանգամ անասցեալ էին տէրունեանն խրատու՝ գանձել ուր և զիարդ արժան էր, նոքա և ոչ զերկրաւոր մեծութենն կորուսին՝ի խուժել բարբարոսացն։ Այսպէս որք ասպարեզեին ընդ ոչն անասել իւրեանց, ուսան և նոքա արդարեւ՝ ոչ 'ի նախազգեցիկ իմաստութէ անտի, այլ 'ի վերահաս փորձոյ՝ թէ զի՞նչ առնել արժան էր ընդ գոյն ընդ այնոսիկ։

Ա՝յլ ասիցէ որ. ահա և ոմանք 'ի բարի քրիստոնէից տանջանօք խոչտանգեցան, զի յայտնեսցեն թէ ունամեաց զինչ ջնս իւրեանց։ Այսպէս նոքա ոչ յայտնել կարէին և ոչ կամ բուսանել զբարին՝ որով և ինքեանք բարի էին։ Ա՝յս եթէ տանջիլ առաւել յանձն առին՝ քան յայտնել զմամոնայ անիրաւութէ, ոչ և ս բարիք էին։ Ա՝յլ խրատել զնոսա պարտ էր, թէ ոյք այնքան սակս ոսկւոյ չարչարեալ լինէին, օրշափ և արժան էր կրել վասն Քրիստոսի. որով ուսանէին զնա սիրել առաւել՝ որ զտանջեալն վասն իւր յաւիտենից բաւօրութէն Հոգւոյ սրբոյն, և ոչ զոսկի և զարծաթ, ոյր վասն չարչարանս ընդունել կարի ողջմտիլ էր, եթէ 'ի Թագաւորութէն ստուգէ և եթէ 'ի յայտնեն Հմարտութէ։ Ա՝ման զի 'ի տանջանս անդ ոչ ոք զՔ՝ն խոստովանելոյն կորոյս. և ոչ զոսկին որ պահեաց, բայց ուրանալոյն։ Ա՝յլն իրլ օգտակար բազմից թերևս գտան տանջանքն որք զանեղծական բանիսն ուսուցանէին սիրել, քան զբարիսն զմեռսիկ՝ որք յանօգուտս իւրեանց սիրով զտացիչն տանջէին։ Ա՝յլ զի և ոմանք որոց ոչ կայր ինչ առ'ի յայտնել, և ոչ եղեալք հաւատացեալք՝ տանջեցան։ Այսպէս սոքա գուցէ ունել ցան կային, և չէին գովելի կամօքն աղքատք. որոց պարտ էր 'ի միտ առնուլ թէ ոչ ստացուածք, այլ ցանկութէքն էին այնպիսեաց տանջմանց արժանաւորք։ Այսպէս եթէ լաւագոյն

կենացն ուխտադրուժիք ոչ ունէին արդարեւ ասկի և արծաթի թաքուցեալ, ոչ գիտեմ դիպա՞ւ արդեօք միում յայնպիսեացն ի տանջանս գալ՝ կարծելով թէ ունիցի. այլ եթէ դիպաւ և այդպէս որ յայն տանջանս գՀոգևոր աղքատ տուիմն խոստովանէր, գՆա խոստովանէր։ Այլ ոմն որոյ թէպէտ և առ Թշնամին ոչ եղև հաւատալի, բայց անմարթ էր նմա անմահն յերկնաւոր վարձուց տանջել իբրև Հոգևորականն աղքատութիւն խոստովանող։

Յայնիկ ասէն, և գյոլովս ի քրիստոնէից մաշեաց սուխ յերկարատև։ Ոչայց և զայն յիւրեանցն օգուտ շքնէցին հաւատացեալքն բարեկիրք՝ քաջիկ համբերելովն. զի որ սովամահն եղեն, ազատեցան ի վշտաց կենցաղոյս իբր մարմնոյ հիւանդութիւնք. իսկ ոչ մեռեալքն ուսան սակաւապիտութիւն կեալ և ծոմապահել յերկար։

ԳԼՈՒԽ ԺՎ.

Ցաղագս կատարածի կենացս՝ եթէ յերկար, եթէ սուղ։

Պարզեալ ի դէմն ածէն, թէ ահա և քաղուածք ի քրիստոնէից սրամահ եղեն, և շատք ազգի ազգի մահուամբ գեշագէշ սպառեցան։ Այդ զինչ. այդ թէ գժոխատանելի ինչ է, ապաքէն ամենեցուն ծնելոցն յայս կեանս՝ հասարակաց է։ Այս գիտեմ, զի ոչք մեռաւ՝ որ չէր մեռանելոց երբեմն. իսկ կատարած կենաց՝ և զերկայն կեանս և զկարճն հաւասարման կացուցանէ։ Ի ոչ եթէ ոմն լաւագոյն էգէ և ոմն յոռեգոյն, կամ ոմն մեծագոյն և ոմն սպաս գոյն, երբ զուգասէս ոչ և գոյ։ Այլ զինչ փոյթ, թէ որպիսեաւ մահուամբ վախճան առնուցուն կեանքս, յորժամ վախճանելոյն չէր միսանդամ մեռանել։ Այլ քանզի իւրաքանչիւրում՝ ի մահկանացուաց ըստ օրըստօրէ պատահացեալ և թէ որ յայնցանէ հասանիցէ՝ անյայտ է,

սաս աղաչեմ՝ ո՛ր լաւ է, զմին եւեթ կրել մեռանելոյին, քան յաւիտենից երկինսն երկնելով։

Իսկ անգիտանամ, քանի՞ անհամաստաբար ընտրեն մարդիկ լինել երկայնակեաց երկիւղիւ այնչափ մահուց, քան եթէ մեռանելով մի անգամ՝ ոչ եւս այլ զանգիտել եւ ոչ ի միջին։ Վասն այլ է այն՝ յորմէ մարմնոյ զգայութիւն վայրապար առ երկիւղ խուսափէ, եւ այլ՝ զոր մտացն դատաստան խնամով կշռեալ հատանեցուցանէ։ Իսկ չար հանդերձ է մահ, զոր կանխեաց կեանք բարեկրօն։ Օ՛ի ոչ այլ ինչ զմահն գործէ չար, բայց որ զհետ գայ մահուն։ Վասն ոչ յոյժ հոգալի է թէ որոց հարկ է մեռանել՝ որով պատահմամբ մեռանիցին, այլ թէ մեռանելոյն յո՛ գնալ ունին։ Այս զի գիտակ են քրիստոնեայք՝ թէ կարի լաւագոյն եղեւ մահ բարեպաշտն աղքատի ի մէջ չանց լինդանոց՝ քան զամբարիշտն մեծատան ի բեհեզս եւ ի ծիրանի նիս, սորին աղագաւ զինչ ինաս ահագինն այն ազգ մահուց արար մեռելոցն՝ որ բարիոքն քաղաքավարեալ էին։

ԳԼՈՒԽ ԺՐ

Ա՛ետ մեալ մարմնոց քրիստոնէից՝ ոչ ինչ պակասեցուցանէ։

Ասէ, ասէն. *յանհնարին կոտորածի անդ յոլովք անթաղ մնային։* Այլ ընդ այս ոչ կարի երկինսն հաւատոք բարեպարիշտ, պինդ ունելով զբանն, թէ և ոչ գիշախանձ գաղանք ինասիցեն ինչ մարմնոց ի յարութենէ կարգելոց, որոց և ոչ մազ գլխոյ կորիցէ։ Զասէր արդեօք Աստուածն՝ «Ի՞ երկինսիք յայտնացան՝ որ սպանանեն զմարմինն և զոգի ոչ կարեն սպանանել...» Ա՛ռ. ե. 28. Եթէ արդեօք սպառնի կենացն գործէր ինչ ինաս՝ որ զինչ Աշնամիք ընդ մարմինս սպանելոցն անցուցանէին. բայց եթէ այն չափ ոք անմտանայցէ, մինչև յամառեալ ասել թէ՝ի սպառ նողաց մարմնոյ երկինսել ոչ է պարտ յառաջ քան զմահ, զի

մի սպանցեն զմարմին, այլ յետ մահուն երկնչել պարտ էցե, զի մի զմարմինն սպանեալ անթաղ թողուցուն։ Այսու ուրեմն լինէր և Աստ ասէրն, «Որ սպանանէն զմարմին և յետ այնորիկ աւելի ինչ ոչ ունիցին առնել...» Ղուկ. ԺԲ. 4. Թէ արդարեւ մեծ ինչ լինէին և զոր արարին նոքա ընդդիմակացան։ Ասաւ լեցի Թէ զոր Չէմարտութեին ասաց՝ սուտ էցէ։ Այանգի ասացաւ իսկ՝ առնել նոցա ինչ յորժամ սպանանեն. քանզի զոյ ի մարմնի զգայութէն ի սպանանելն. իսկ յետ այնր ոչ ունին այլ ինչ առնել, զի մարմնոյ սպանելոյ չէք զգալ։ Այսպէսքն բազում քրիստոնէիցն մարմինք ոչ ամփոփեցան ի հող. բայց և ոչ զմի յայնցանէ որոշեաց ոք յերկնից և յերկրէ, ուր զբովանդակն ընու մերձ կալով նա, որ ի նէ՝ Թէ ուստի յարուցաւնել զոր սաեղծն։ Պետեմք զասացեալն. «Երկին զգիաւկունս ծառայից քոց գէշ Թուշնոց երկնից, և զմարմինս սրբոց քոց գազանաց երկրի։ Հեղին զարիւնս նոցա որպէս ջուր շուրջ զԵրուսաղէմաւ, և ոչ ոք էր որ Թաղէր զնոսա...» Սաղմ. ՀԹ. 2։ Նայց այդ աձեցուցանելոյ վասն է յաւէտ զարարողացն անգԹուԹիւն, քան Թէ զկրեւէացն ԹշուառուԹիւն։ Ոչ ի Թէպէտ յայս մարդկան խիստ և դժնդակք Թուէն այդոքիկ, այլ «Պատուաւկան է առաջի Տեն մահ սրբոց իւրոց...» Սաղ. ՃԺ. 15։ Զայն իրի այն ամենայն, եԹէ խնամ յուշարկաւորուԹէ, եԹէ հանդամանք Թաղման, եԹէ հանդէս մեռելապաշտաման առաւել ի սիսիւն են կենդանեաց, քան մեռելոցն ի դիւրուԹէ։ ԱյԹէ առն ամբարշտի օգտեսցէ իւիք յուշարկաւորուԹէ մեծաշուք, վնասեսցէ սպա քա բեպաշտին՝ Թաղումն անշուք, կամ բնաւ անԹաղն լինել։ Ոչիրանազգեցիկ այնմ մեծատան՝ զգամապայծառն առմարդիկ յուշարկուԹէ մատոյց ամբոխ ծառայիցն. բայց պայծառագոյն և յաչս Այ մատոյց վիրաւից աղքատին հրեշտակացն սպասաՀարկուԹէ, որք ոչ ի դամբարան կՀեայ ամբարձին զնա, այլ ի գոգ Աբրահամու վերաբերեցին։

Ա՛ս այսոսիկ ունչս առնեն նոքա՝ որոց ընդդէմ կամք

պաշտպան լինել քաղաքին այդ։ Ապակին և նոցին իսկ իմաստասէրքն զգերեզմանաց հոգս առ ոչ ինչ գրեցին, և յոլովակի համբերէն բանակաց անկելոց սակս երկրաւոր հայրենեաց՝ ոչ ինչ փոյթ արարին՝ թէ ուր դիտապատս կայցեն, կամ որոց գաղանաց կերակուրք լինիցին. առ որ և քերթողաց նոցա պանծալի եղև ասել.

«Աչքկինք համայն են ծածկարան
Ի հիմ որոյ չիք իւր գամբարան...»։

Այսպա որչափ և անարժան է նոցա ի պատճառս անթաղ մարմնոցն երգիծուցանել զքրիստոնեայս, որոց խոստացեալն է և մարմնով և բոլորից անդամոցն նորոգութիւն ոչ միայն ի հողոյ, այլ և յամենաթաքուն ծոցոյ այլոց տաւ բերաց, յոր լուծեալ ցրուեցան մարմինքն, յական թօթափել վերակենցաղեալք անթերի մասամբք։

ԳԼՈՒԽ ԺԹ

ՑԻՆչ պատճառս սրբոցն մարմինք ի թաղումն ամփոփին։

Անհաւն ոչ է պարտ վասն այսոցիկ արհամարհել և լքանել զմարմինս ննջեցելոց, մանաւանդ զարդարոցն և զհաւատարմից, զորս իբր գործարանս և անօթս ի կիր արկ Հոգին սուրբ յամենայն գործս բարութեան։ Օ՛ի եթէ հանդերձ հայրենի և մատանի, և այլ ինչ այնպիսի՝ այնչափ առաւել սիրելի է զաւակացն, որչափ յորդագոյն է առ ծնողս ըղձութիւն, ապա ոչ իւիք անտեսելի են մարմինքն, որք առաւել քան զամենայն զգեստ ընտանեգոյն և հաճելագոյնք են մեզ. վասն զի մարմինք ոչ եթէ ի պատուհասս ինչ են կամ յարտաքին պէտս, այլ նմին բնութեանն մարմնոյ անկաւորք։ Այլ իբրև առաջնոց արդարոցն մատուցան սգոյ պաշտամունք մտադիւր բարեպաշտութեան, յուզարկաւորութիւնք կատարեցան, շիրիմք պատրաստեցան, և մինչդեռ տակաւին ինքեանք կենդանիք էին, պատուէր

Եւ ասէ ցոդն՝ Թաղելոյ և այլուր և ա՛ս փոխելոյ զիւրեանց մարմինս. Ոչ. Եչ. և Ճ. Այլ Յովհեթ վասն զմեռեալն Թաղելոյ՝ հաձոյացեալ առ ՚ած գովի՝ ըստ վկայելոյ հրեշտակին. Այլ և ինքնին տէրն՝ որում երկիւղած քարոզեաց առաջի կայր, զարի գործ հնոցն երկիւղածի քարոզեաց և քարոզել պատուիրեաց յարկանել նորա զիւզն ազնիւ ՚ի վերայ մարմնոյն՝ Թաղելոյ նորա նշանակ. Այս գովութիւք յիշատակեալ են յաւետարանի՝ որք զմարմին ՚ան ՚ի խալէ անտի առեալք, հոգ կալան ինամովք և պատուով պահել զնա և Թաղել.

Այլոց այս հաւատոիք ոչ երեւ ցուցանեն՝ զգայութիւն իրիք լինել ՚ի դիակունս անդ, այլ յայտ առնեն Թէ, նաև մեռելոցն մարմինք ընդ ՚այ տեսչութիւն են, որում և հաձոյ գոհանին այնպիսի սպասք գԹասիրութիւն առ ՚ի զհաւատս յարուԹիւն հաստատելոյ. Վասն ասոնցոր և զայն ուսաւ նել առ ՚ի յօգուտ, որչափ հաւատացուն փոխարինի կայցէ ողորմութիւնն՝ զոր կենդանեաց մատակարարեմք և գիտութ զայն, երեւ ոչ կորնչին առ ՚ած և ոչ որ առ անշնչացեալ մարմինս մարդկան կատարին արբանեկութիւնք և ինամք. Այն և այլ ևս իրք, որով մարգարէական ինն հոգւոյ տան ի մատոս ասացեալքն նահապետաց սակս զմարմինս իւրեանց ամփոփելոյ կամ տեղափոխելոյ. սակայն ոչ տեղւոյս է զայնոսիկ ձառել. ուր շատ են և ասացեալքս. Այլ երեւ ՚ի պահասել կարևորացն իսկ ՚ի դարման կենդանեաց՝ կերակրոյ և հանդերձի՝ հանդերձ բազմաւ նեղութիւք, ոչ Թուլանայ յարդարս համբերատարն առաքինութիւն, և ոչ հոգւոյն ՚ած պաշտութիւնն սասանի, այլ կրԹեալ ամենայն բացակատարի, որչափ և ա՛ ՚ի պահասել ինամոց և պաշտամանց՝ որ ՚ի Թաղումն մեռելոցն մարմնոց սովորեցան, չկարեն աւաղելիս գործել զարդէն հանդուցեալն ՚ի ծածուկ օԹևանս բարեպաշտացն. Սակս որոյ յաւարհարութիւ մեծին Հռոմայեցւոյ կամ այլոց և քաղաքաց ոչ մատուցան այսքիկ առ քրիստոնէիցն մարմինս. այդ ոչ կենդանեացն մեղ է, զի անկարողք էին առնելոյ. և ոչ մեռելոցն պահիւ, զի զգային ինչ ոչ.

ԳԻՒՒՒՒ ԺԴ

Յաղագս գերութեանն քրիստոնէից, որոց ոչ պակասեաց միխիթարութիւն ձեռնին։

Այլ ասէն. շատք՝ ի քրիստոնէից գերի եւս վարեցան։ Արդարեւ կարի ողբալի այդ է, եթէ էր մարթի վարել զնոսա՝ ուրանալ ոչ գտանէին զձեռ իւրեանց։ Զոն՝ ի սրբազան գիրս մեծամեծ միխիթարութիւնք այսր հաստատեալ. ի գերութեն էին երեք մանկունքն, էր Զոանիէլ, եղեն այլ մարգարէք. և ձեռ միխիթարիչ ոչ պատկասեաց նոցա։ Այլ ոչ անտես արար ձեռ զհաւատացեալս իւր ընդ ձեռամբ խաւժագուժ՝ այլ մարդկեղէն ազգի, որպէս և ոչ՝ ի պորտ վիշապին լիք եղեալ զմարգարէն։ Այս այսոսիկ եւս՝ ի ծաղր յօժարին բերել առաւել քան՝ ի հաւատալ մարդիկն ընդ որս վիճեմք. և սակայն ինքեանք հաւատան ընծայեն գրոց իւրեանց, թէ Երիովն մեհենացի՝ քաջքարուեստ քնարահար ծովամոյն եղեալ, բարձաւ՝ ի թիկունս գլխի և հանաւ՝ ի ցամաք։ Ոչ՝ արգելօք մերս յաղագս Յովնանու՝ անհաւատացին։ Քիրաւի անհաւատացին գոգ ցես, վասն զի հրաշափառացին. և հրաշափառացին, վասն զի հզօրեղացին։

ԳԻՒՒՒՒ ԺԵ

Հաւգուղեայ օրինակ՝ կամաւ տանելոյ գերութեն տակս կրթնից, այլ ոչ ինչ օգտեալ յայնմ յաստուածոյն պաշտամանէ։

Պաւքին և ինքեանք ունին օրինակս վեմականս ինքնակամ գերեվարութեան՝ ի պատճառս կրօնից՝ մարգոց նշանաւորաց։ Արիոս Պտոլիմեոս Հռոմեգուղոս՝ հռովմէական ժողովրդեանն հիւպատոս՝ էր կալանաւոր

առ կարբեդոնացիս . որոց կամեցեալ առաւել զիւրեանց
կալանաւորս թափել՝ի Հռովմայեցւոց՝ քան թէ զնոցայս
սըն պահել առ իւրեանս , զնա ինքն Հռեգուղոս ընդ
պատգամաւորս իւրեանց արձակեցին՝ի Հռովմ կա-
տարել զիրան , բայց նախ երդումի արարեալ զնա՝ զի
եթէ ոչ՝ի գլուխ տանիցի զոր կամ իւրն, դարձ արասցէ՝ի
Կարբեդոն : Ընուաց նա , և՝ի ծերակուտի անդ զհա-
կառակն Թէլադիր եղև . քանզի ոչ յօդուտ վարկանէր
Հռովմէական պետութեանն զկալանաւորացն փոխանակու-
թեան , Այլ յետ այնր խրատուս ոչ ինչ բռնադատեալ նորա
յիւրոցոյց անտի դառնալ առ թշնամին,կատարեաց ինք-
նակամ զոր երդուեալն էր : Իսկ կարբեդոնացիք առ
զայրոյթ սրտի բարձին զնա՝ի կենաց նորահնար խին և
զարհուրելի տանջանօք . քանզի զնդեալ զնա յարկղ ան-
ձուկ՝ լցեալ յամենայն կողմանց սայրասուր բևեռօք ,
մինչ չի էր հնար՝ի մի կողմն թեքել առանց դժնդակ
ցաւոց , այնպէս աչօք բացօք զբաւեցաւ : Զորդարապէս
յիրաւի՝ի գովութիւն առնուն զդրա զառաքինութիւնն՝
որ քան զմեծն զայն թշուառութիւն դոյաւ մեծագոյն : Իսկ
արդ երդուեալ էր նորա՝ի դիս , յորոց պաշտամանն խա-
փանմանել համարին դրա զայժմու հարուածոց անցս
ընդ մարդիկ : Զոր եթէ յայն սակս էր պաշտօն դիցն
զի զասացի կեանքս բարգաւաճեցուն , և սակայն նորա
այնմ արդար երդուողի զամենիսի տալ պատուհաս կա-
մեցան կամ թողացուցին, զի՝նչ այլ խոստագոյնս ունէին
դործել առ երդնելոյծ ոք՝ի զայրանալ իւրեանց :

Այլ ընդէր զպատճառաբանութիս ոչ ձգեցից ընդ եր-
կաքանչիւր կողմն : Այպաքէն այնպէս պաշտէր նա զաս-
տուածսն , զի առ՝ի հաւատս երդմանն ոչ՝ի հայրենի
տանն մնաց , և ոչ անտի յայլ կողմն գնաց տարադէմ. այլ
առ ոխերիմ իւր թշնամին դարձաւ անվեհեր : Եթէ
զայդ համարիցէ նա՝ի շահ այսց կենաց՝ զոր ահագին կա-
տարածիւն վախճանեաց , արդարեւ խոթեցաւ . զի ուսոյց
իւրում օրինակաւ , թէ ոչ ունին աստուածքն բարեգոր-
ծել առ իւրեանսն պաշտօնեայսն ժամանակիս բարե-

բաստումէն. իբրև զի այն պաշտօնասէրը նոցա և յապաղեալն և կալանաւորեալն, որ և չկամեցաւ անդր քան զոր երդուեալն էր նոքօք՝ անցանել, այնպիսի նոր և անլուր և զարհուրագին տանջանաց օրինակաւ զկեանսն վախճանեաց։ Իսկ եթէ ունի դիցն պաշտօն զկնի այսց կենաց զերջանկութէն վարձատրել, առիմն ապա քրիստոնէականաս դարու լինին չարախօսք, ասել՝ թէ յայն սակս անցին այն աղէտք ընդ Հռոմ, վասն զի՛ ի բաց եկաց՛ի դիցն իւրեանց պաշտամանէ, յորժամ և ջերմ պաշտօնեայ նոցա կարող է այնպէս թշուառանալ, որպէս Հռեգուղոն թշուառացաւ. բայց եթէ ոք ընդդէմ յայտ տառեսիլ չէմարտութէն յորն կայցէ անմոռացեալ յետինն կուրութէն, մինչև պնդել թէ ողջոյն քաղաքի դիցն պաշտօնատարն չէ հնար թշուառանալ, բայց միոյ մարդոյ հնար է. իբր այն թէ դիցն նոցա կարողութէն քաջագէպ իցէ առ բազմագունիցն պահպանութէն, քան միոյ միոյ. ուր բազմութէնն յիւրաքանչիւրոց բաղկացեալ է։

Իսկ եթէ ասէն, Արկաս Հռեգուղոս կարող էր և՛ի կալանս անդ և՛ի խոշտանգանս մարմնոյն լինել երջանիկ առաքինութէն հոգւոյն, ապա ուրեմն չէմարիտն առաքինութէն յաւէտ խնդրելի է, որով և բաղաքին երջանիկ լինել մարթ է. զի ոչ եթէ այլով երջանիկ է քաղաքն, և այլով մարդն. իբր զի քաղաք ոչ այլ ինչ է՝ բայց միաբան բազմութէն մարդկան։ Այլն իբր ոչ վնաս առ տեղեաւն՝ որպիսի լեալ իցէ՛ի Հռեգուղոս առաքինութէն. շատ է՛ի ժամուս՝ զի պանծալի օրինակաւս ստիպին նոքա խոստովանել, թէ ոչ՛ի պատճառս բարեաց մարմնոյ, կամ իրաց որ եկամուտ են մարդոյ՝ պաշտելի են աստուածքն. որովհետև Հռեգուղոս առաւել ընտրեաց մերկանալ յայնմ ամենայնէ, քան զաստուածսն յորս երդուեալը էր՝ զայրացուցանել։

Այլ զինչ ասասցուք արանց՝ որք պարծին ունել զայնպիսի քաղաքացի, որպիսի ունել քաղաք երկնչին. իսկ թէ երկնչին ոչ, ապա լցցին խոստովան՝ թէ որպիսի ինչ անց ընդ Հռեգուղոս, կարէր անցանել և ընդ քաղաքն՝ ջերմ

եւ անդէն պաշտօնատուր աստուածոյ իբրեւ գՀրեշտուղոս. եւ մի բամբասանս դիցեն քրիստոնէականս դարու։ Այլ զի յաղագս քրիստոնէիցն որ գերի վարեցան շարժեցաւ խնդիրս, յայս Հայեցեալ լուծցեն այնոքիկ՝ որք ՚ի դիցն պատճառէ փրկական մերումն կրօնի ունչս առնեն անպատկառապէս և անմտութիւ. քանզի եթէ ոչ յանաղանս եղև դից նոցա՝ ամենանուէրք այնմ պաշտանէի նոցա և հաւատարիմ երգմնապահի տարագիր ՚ի հայրենեաց լինել, ոչ զայլ ունելով հայրենիս, որ և կալանաւոր առ Թէնեամիս՝ յերկարատեւ մահուամբ ՚ի տանջանս անողորմս նորահնարս սպանաւ, եւս առաւել չէ արժան սագիւտ արկանել ՚ի քրիստոնէականն անուն յաղագս գերութեն նուիրելոց իւրոց, որք վերին հայրենեացն ակն կալեալք Հնմարիա հաւատովք, յիւրեանց խակ ՚ի բնիկ կայանան նշդեհս զանձինս Հանապէն լինել։

ԳԻՄՈՒՍ ԺԲ.

Մխիթ ՚ի բռնաթարել ուխտաւորս կուսանաց եւ յայնմ գերութէն՝ եղծաւ ինչ առաքինութէն հոգւոյ առանց կամացն հաւանութէն։

Աստուծոյն ծանր Համարին ՚ի դէմս ածել քրիստոնէից զայն՝ զի առ ՚ի կուտակել զսոցայս զաղէտս գերութէնն յաւելուն և զնայատառականս գործեցեալս՝ ոչ միայն յաստար ամուանութէնս յօրիորդս Հարանացուս, այլ և ՚ի հաւատաւորս ոմանս սրբասուն կուսանս։ Այլ աստանօր ոչ Հաւատք, ոչ ՚ձեռպաշտութէն, ոչ առաքինութէնն ինքնին ողջախոհութէն ասացեալ կրէ ինչ Հիգն, այլ առաւել մերս պայքար է ընդ ամենախաճութէնն և ընդ իմաստասիրութէն. և ոչ այնչափ փոյթ է մեզ տալ պատասխանի օտարոյ, որչափ մերոյսոցս զմիխիթարութէն։ Այսն որոյ առաջին զայն Հաստատեալ դնեմք, թէ առաքինութէնն որով լինի կեալ ուղիղ, յաճախ ոչ Հրամայէ մարմնոյ անդ-

գամոց, և սուրբ լինի մարմինն ընդ հոգանեաւ սուրբ կամաց. որոյ անդրդուելի և պինդ կացեալ զոր ինչ այլ ոք առնիցէ ընդ մարմինն կամ՝ ի մարմնի անդ՝ յոյսն չի- ցէ մարթ խոյս տալ առանց իւրոց յանցանաց, այն ոչ՝ ի մեզս համարի կրելեացն։ Այլ զի ոչ միայն ցաւոց կիրք, այլ և հեշտութենն մարթին գործել՝ ի մարմնի օտարի, որ ինչ այնպիսի գործեացի, թէպէտ և ոչ խոհեմ զպարկեշ- տութենն պնդապահ ոգւով անդրդուելեաւ, սակայն զա- մեթ՝ ի ներքս ածէ առ խիթալոյ՝ զի մի արդեօք սպրդե- դեալ իցէ և մտացն հաւանութենէ՝ ի գործ՝ որում գուցէ չեզև մարթ լինել առանց հեշտութենէ ինչ մարմնոյ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ցաղագս կամաւոր մահու եղելոց առ երկիւղի տանջանաց կամ խայտառականաց։

Ասացեալ է որք միանգամ յայսմ պատճառէ սպանումն ան- ձանց գործեցին առ՝ ի չկրելոյ այնպիսի ինչ, որ սիրտ մարդոյ չկամիցի կարեկցութենէ ներել նոցա։ Իսկ որք ոչ յայն սպանումն մտաբերեցին, զի մի իւրեանց յանցանաւք անձնապահ լինիցին յօտարին չարագործութենէ, որ ոք ըստ- գտանիցէ զնոսա յայդմ, զանմտութենէ ստգիւտ յանձն իւր ձգէ այնպիսին։ Վասնզի եթէ ոչ օրէն է առանձնային իշխանութենէ սպանանել զմարդ՝ և և զպարտաւոր, զոր ոչ մի ինչ օրէն թողացուցանէ զայնպիսի սպանումն, յի- րաւի ապա և որ զանձն սպանանէ, մարդասպան է. և այնչափ առաւել պարտաւոր լինի անձնասպանութենէ, որ- չափ անպարտ էր՝ ի պատճառի անդ՝ զոր վասն արժան համարեր զանձին սպանումն։ Օ՞ի եթէ արդարեւ ընդ Հուդայինն գործ գարշանամբ, զոր և Աչմարտութենին դա- տապարտէ, որոյ՝ ի խղդ անձինն ձեռնարկեալ՝ յաւե- լուած արար եղերեռնաւոր մահտութենն՝ քան թէ քաւու-

թէն, զի անյոյս եղեալ յայ ողորմութենէն և դատապարտ ապաշաւեալ՝ ոչ եթող անձինն փրկաւէտ ապաշխարու-թեն տեղի. ապա ծրչափ և հրաժարել յանձինն սպանու-թէ արժան է այմմ, որոյ չկայցէ ինչ պատճառ պատու-հասելոյ զանձն իւր այսպիսի օրինակաւ։ Օ՛ի Յուդաս սպանանելով զանձն, զերեսնագործ զոհն սպան. և սակայն ոչ միայն Ա՛նի մահուանն, այլ և իւրումն մահու պար-տաւոր զկեանսն զրաւեաց. զի սակս իւրոյին յանցման, այլով յանցմամբ սատակեցաւ։ Ա՛րդ՝ ասա մարդ ան-պարտ՝ ի չարէ՝ իւրում անձինն առնիցէ չար, և զանձն մեռուցանելով՝ մեռուցանիցէ զանմեղն, զի մի յայլոյ մե-ղասպարտ կրիցէ. և յանձինն իւրում գործիցէ մեղս յա-տուկ, զի մի օտարին մեղք ընդ նա գործիցի։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս օտարին բռնի պղծութեանն յակամայս գործելոյ՝ ի մարմին հարստահարեալ։

Այլ գուցէ լինիցի երկնչել, զի մի օտարին պղծու-թէին զինքն ապականեսցէ։ Ա՛յ արդարեւ ապականէ, եթէ իցէ օտարի. իսկ եթէ ապականէ, օտարի ոչ է։ Այլ զի պարկեշտութէին՝ հոգւոյ առաքինութէի է, և լծակից իւր զա-րիւթէին ունի, որով ընտրէ տանել յաւէտ որոց և իցէ չարեաց՝ քան հաւանել ընդ չարն, և ոչ որ արիասիրտ անձն և պարկեշտ՝ զոր ինչ ընդ մարմնին յայլմէ գործիցի՝ ինքն-իշխան է, այլ միայն զոր միտքն կամին կամ չհաձնի, ո՛ր առողջամիտ հաւանութիւն կորուսանել զիւրն պարկեշտու-թէն, եթէ արդեօք յիւրումն ըմբռնեալ և հարստահա-րեալ մարմնի գործեալ կատարեսցի պղծութէն՝ որ ոչ իւր է։ Օ՛ի եթէ այսու պատճառանօք կորնչիցի պարկեշտու-թէն, ապա ոչ և իցէ նա առաքինութէի հոգւոյ, և ոչ՝ի սակի այնց բարեաց՝ որովք լինի բարիոքն կեալ. այլ ընդ

բարիս մարմնոյ Համարեսցի, որպիսի էն այժ, գեղեց-
կութիւն, քաջողջութիւն, և եթէ այլ սոյնպիսի.
յորոց ի նուազելն՝ ոչ իւիք բարիոք և ուղիղ կենաց
նուազումն բերի։ Այլ եթէ այսպիսի մարմնական ինչ է
պարկեշտութիւնն, հիմ արդեօք առ ի զայն չկորուսանել-
ոյ՝ ի մարմնոյ վտանգս տագնապիցի ոք։ Այսք եթէ հո-
գւոյ բարիք են, և ոչ ի բռնաբարել մարմնոյն կորնչի։ Այս
զի բարին ժուժկալութիւնն հոգևորի՝ ոչ խռնարհելով յան-
մաքրութիւն մարմնական ցանկութեանցն, զնոյն ինքն զմար-
միննն սրբէ. նմին իրի պինդ կացեալ անշարժ կամաք չտալ
նոցա տեղի, և ոչ ի մարմնոյ անտի կորնչի սրբութիւնն.
վասն զի առ ի սրբութիւ վարելոյ զայն՝ միշտ կամքն առա-
ջի կան, և յիւրն կողմանէ նա և կարողութիւնն։

Այանզի մարմին ոչ այնուիկ սուրբ իցէ՝ թէ անդամք
նորա անթերի են, կամ ոչ ընդ Հնդմամբ իւիք զապեալք,
ուր յայլ բազում դիպուածս մարթի Հնոցա վերս կրել
բռնի. և բժիշկք խնամ ածեալք առողջութիւնն՝ այսպիսի
ինչ երբեմն առնեն՝ինոսա, որոյ տեսիլ բերէ սարսափումն։
Վասն եղև ծնուցչի ումեք ի զննել անդ զանարատութիւնն
կուսի միջ՝ կորուսանել զայն, եթէ չարութիւ արդեօք,
կամ յանտեղեկութիւ, կամ ըստ պատահմանն։ Այլ կար-
ծեմ այնչափ զառանցել ումեք, մինչև Համարեսցի՝ թէ
պակասեաց ինչ կուսին ի սրբութիւ մարմնոյն ի կորնչել
անարատութիւն անդամոյ նորա։ Այորին աղագաւ յորժամ
Հաստատուն կայ ընտրութիւն Հոգւոյն, որով է սրբիլ և
մարմնոյ, օտարի պղծութիւնն բռնաբարութիւն ոչ եղծանէ
և ոչ զմարմնոյ սրբութիւնն, զոր պահելով պահէ իւրոյին
ժուժկալութիւնն Հանդէպ։ Այպաքէն թէ կինջ ուրուք մը-
տաքն ապականեցելոյ և յետս կացելոյ յընտրութիւնէն՝ որ
ուխտեալ իցէ այ՝ դիմել առ պատրիչ իւր ի գործ պղծու-
թեր, միթէ ասիցեմք զայնպիսի զնացեալն սուրբ լինել
մարմնովն ի կորնչել և յեղծանիլ սրբութիւնէ Հոգւոյն,
որով մարմինն սրբէր։ Այաւ ի մինջ մոլորութիւն այդպիսի.
Այս ահա առաւել ևս ի միտ առնուլ է այսու, թէ
նոյնպէս ոչ կորնչի սրբութիւնէ մարմնոյ ի կալ սրբութիւնէ

Հոգւոյն, Թէ և մարմնին բռնաբարեսցի. որպէս կարելի մարմնոյն յեղծանիլ սրբութենէ Հոգւոյն, Թէ և մարմինն անպղծուկ իցէ։ Այսու այսորիկ չիք պատճառ անձնասիրհ լինելոյ կնոջ յոչկամայս բռնաբարելոյ և ըմբռնելոյ օտարին մեղաց. որչափ և մինչև եղեալ բռնութենն. զի մի ստոյգ մարդասպանութենէ գործիցի մինչգեռ եղեռնն՝ և այն օտարի՝ տակաւին անստոյգ կայ։

ԿԻՆԻՍ ԺԹ

Յաղագս Լուկրետիայ անձնասպան եղելոյ սակս գործեցեալ ի նմա պղծութենն։

Այլ գուցէ յայտ յանդիման պատճառաբանութեանս այսմ, որով ասեմք ի հարստահարել մարմնոյ՝ անփոփոխ կալով ողջախոհ կամացն ի չհաւանիլ ընդ չարն, նորա միայն է եղեռնն՝ որ բռնաբար անկաւ ընդ կնոջ, և ոչ նորա որ ընդ չար կամն բռնաբարողին ոչ հաւանեաց, ընդդիմաբանել կամիցին՝ որոյ հակառակ ջատագովեմք, Թէ կանանց քրիստոնէից բռնաբարելոցն ի գերութենէ անդ՝ ոչ միտքն ևեթ, այլ և մարմինքն մարթին սուրբ լինել։ Այսպէսն Լուկրետիա տիկին մեծազարմ և նախնի հռովմայեցի մեծասիս գրուատի սակս պարկեշտութեանն. այլ զի ի սորա մարմինն բռնութենէ անկղմտացեալ էր որդւոյ Տարկուինոսի աղբային, զայն եղեռն ժանտագործ երիտասարդին գուժեաց նա առ Յողատինոս այր իւր, և առ Բրուտոս ազգական՝ արս ականաւորս և հզօրս, ի վրէժխնդրութենէ զնոսա Թագաւորանձեալ։ Այլ այսպէս ոչ հանդուրժեալ գաղտնութենն լինքն գործեցելոյ՝ յորս զիւրովի։ Այս արդ զինչ ասիցեմք. Ընացեա՛ Համարիցի սա, եԹէ ողջախոհ. և ո՞ արդեօք դժուարալոյծ դատիցի զխնդիրս։ Այսելուս ինն և արդարապէս ասաց առենախօս սոն. «Օ՛արմացումն է յասել, երկու էին, և զհնութենէն միոք գործեաց»։ Այսրի

չքնաղ և ամենայնիւ ձգմարիտ . քանզի նկատեալ ՚ի զու-
գախառնութենէ երկուցն մարմնոց՝ զմիոյն զամենագարշ
տափանս և զմիւսոյն զողջախոհ կամս , և ոչ հայեցեալ
զինչ ՚ի զուգութենէ անգամոյն գործիւք , այլ զինչ յան-
զուգութենէ հոգւոյն , ասաց . երկու էին , և զչնութենէն
մի ոք գործեաց :

Այլ սակայն զինչ այս իցէ , զի վրէժ ծանրագոյն ՚ի կնա-
ջէն լուծաւ , որ անպատուէր ՚ի չնութենէն էր . քանզի երիտա-
սարդն հարքն հանդերձ արտալաճ միայն ՚ի հայրենեացն
եղև . իսկ կինն յետին պատուհասիւ անձնամահ կորեաւ ,
Այնթէ այն ոչ է անպարկեշտութենէ որ յակամայս բռնաբա-
րի , և ոչ այս արդարութենէ է՝ որով ողջախոհն պատու-
հասի : Այլ ձեզ բողոքեմ , ո՛ օրէնսք և դատաւորք հռով-
մէականք . ապաքէն յետ գոյծեցելոյ չարեաց և՛ ձեզ
ոչ են կամք սպանանել անպատիժ զոր և է չարագործ՝ չև
և առ ՚ի ձէնջ դատեալ : Այլա եթէ ՚ի ձեր առեւանգ
հաներ ոք զայս յանցանս , և ցուցաներ և՛ թէ ոչ միայն
անդատապարտ ոք կինն , այլ և ողջախոհ և անմեղ սպա-
նաւ , ոչ ապաքէն ոք զայն արար՝ արժանի խոստութեամբ
առ ՚ի ձէնջ լիներ պատուհասեալ : Այհա զայս արար Ցուկ-
րետիայն այն , բազմահամբաւեալն այն ասեմ Ցուկրե-
տիա . զանմեղ, զողջախոհ և զբռնաղթօսեալն զՑուկրե-
տիա մեռոյց : Այլ այժմ դատ արարէք . և եթէ զայդ
չկարէք , զի պատուհասելին չէ առաջի , առիմ՚ ասա
զսպանողն զայն անմեղին և ողջախոհին՝ աշխարհաբարող
գովասանէք : Այայց արդարեւ ոչ միով իրաւամբք ունիք
ջատագովել նմա կանգնել յանդիման սանդարամետական
անգամ դատաւորաց իսկ ՝ զորս յօդելով ձեր քերթողդ
՚ի չափս բանից երգագրին . իբր զի կարգեալ է նա ընդ
այնոսիկ ,

“Որք անպարտ ըզմահ անձանց նուիրեցին
Այս արեւատեաց զոգիս փըչեցին :
Որ ցանկայր անդրէն դառնալ ՚ի յաշխարհ ,
Պատգամքն արգելին , նոյն և Պութիգեայ ժահր
Ընդընաց ալեօք կապեր ՚ի խոնարհ ... Այէ-

Եւ միթէ յայն սակս ոչ էր անատնօր Յուկրետիա , զի ոչ զանպարտն սպան , այլ Տարեալ խրոմն խղճի . զի չէ ինչ անհաւան , Թէպէտ և նորա միայն է դիտել զայդ , Թէ՝ի բուռն առնել երիտասարդին՝ զրկուի և խրոմն տալման Տաճեալ էր . և զնոյն պատուհասեալ յանձն իւր՝ այնչափ վշտացաւ , մինչև մահաւամբ սրբել արժան Համարէր . Թէպէտ ոչ և այնպէս անձինն մահ գործել պարտ էր, եթէ առնել կարող էր ապաշխարուի ընդունելի առ աստուածս իւր : Սակայն Թէ այդպէս լիներ էր , և ասա ցեարն սուտ՝ Թէ երկու էին և զչնութիւնն մի ոք գործեաց , այլ երկոքին և՛ չնացան , մին յայտնի յարձակմամբ , և միւսն գաղտնի Տաճուելիք , ապա ուրեմն ոչ յանպարտս զանձն սպան . Նմին իսկ գիտնաւորքն այսքիկ ջատագովք նորա կարեն ասել Թէ չէ նա՛ի գժոխս ընդ այնոսիկ , “ Որք անպարտ զմահ անձանց նիւթեցին ,, : Եւ ահա այս խնդիր այսպէս անձուկ կրէ ըստ երկաքանչիւր կողմանն , մինչ զի՛ի Թէ Թևանալ մարդասպանութենն՝ չնութենն Տասատատի , և՛ի յարդարանալ չնութենն՝ մարդասպանութենն մեծանայ . և չիք եւս աղագս գտանել՛ի բանէս : Եթէ չնացեալ , ընդէր գովի . եթէ պարկեշտ , ընդէր սպանցի :

Այլ մեզ յայս երևելի օրինակ Յուկրետեայ՝ առ՛ի հերքումն այնոցիկ որք անհաման յամենայն խորհրդոց սրբութե՝ Թշնամանադիրք լինին քրիստոնէից կանանց Տարստահարելոց՛ի գերութե , շատ է՛ի չքնաղ գովեստս նորա ասացեալն , “ Երկու էին , և զչնութիւնն մի ոք գործեաց ,, : Օ՛ի այնպիսի Համարեալ է առ նոսա Յուկրետիա , որպէս Թէ ոչ միով իսկ Տաճուելիք չնութենն աղտեղեալ էր , Եւ ասն որոյ եթէ զանձն սպան՝ ոչ զի չնացեալ էր , այլ՛ի չնացողէն կրեալ , այդ ոչ առ սէր պարկեշտութեան է , այլ յամօթոյն տակարութենէ : Օ՛ի ամաչեաց նա ընդ օտարին զաղտութիւնն գործեալ յինքն , Թէ և ոչ ընդ ինքեան . և տիկինն Հռովմայեցի՝ գովելի Թևանց նախանձաւոր՝ խղճէր առաւել մի արդեօք զոր բռնաբար կրեաց մինչ կեայցն , Թուեսցի յօժարաբար

կրեալ՝ եթէ այլ եւս կեցցէ . վասն որոյ վկայ իւրումն մտաց ՚ի գէտ վարկաւ զպատուհասն զայն ընծայեաց յուցանել առ մարդիկ , որոց զիւրն գիտակցութիւնն յուցանել ոչ կարող էր ։ Վասնզի պատկառեաց նա երևել հաղորդ գործոյն , եթէ զոր այլ ոք ՚ի նա աղտեղացաւ , ինքն համբերութիւն տանէր ։ Օ՜յդ ոչ արարին կանայքն քրիստոնեայք , որք զնմանան կրեալք՝ կան կենդանի . և ոչ զօտարին յանցման վրէժս ընդ անձինս իւրեանց անցուցին, որպէս զի յայլոց եղեռն մի և վիւրեանցն բարդեսցեն . և եթէ թշնամիք տուփեալք ՚ի նոսա պղծութիւն գործեցին , մի և ինքեանք անձանց սպանողք առ ամենայն լինիցին ։ Այլ զի ունին նեղքոյ զպարծանս ողջախոհութիւն՝ զվերկայութիւն խղճին մտաց , և ունին զայն առաջի ՚ի յիւրեանց . և ոչ ինդրէն այլ ինչ . ուր չիք նոցա ՚ի ձեռս այլ առ ՚ի զուղղն գործելոյ , մի արդեօք խոտորեսցին յիշխանութենէ ՚ի ձեռնէն օրինացն , յանդիպս զգուշանալով ՚ի մեղադրութենէ մարդկայնոցն կարծեաց ։

ԳԼՈՒԽ Ի

Ոչ գոյ վաւերական բան, որ տայցէ քրիստոնէից իրաւունս կամայական սպանման յինչ և է պատճառաց ։

Ոչ ուրեք բնաւ է գտանել ՚ի կանոնական սուրբ գիրս՝ հրամայեալ մեզ առ յոյժ կամ թողացուցեալ մեզ անձանց բերել , ոչ ՚ի պատճառս զանմահութենէ անգամ բռատանալոյ, և ոչ զերծանելոյ վասն կամ անձնասպահ լինելոյ ՚ի չարէ խմբէ ։ Վասնզի և արգելեալ մեզ զայդ իմանամք՝ յասել օրինացն , “ ՚Ի սպանաներ ,, ։ Ա՛յն զի ոչ յարէ ՚ի նոյն , զընկերը քո , որպէս յարգելուլ անդ զսուտ վկայութենէն՝ ասէ . “ ՚Ի սուտ վկայեր վկայեր զընկերդ քո ամենի ,, . Ելք . 13 ։ Վասկայն և ոչ այսու եթէ զանձնէ ոք վկայիցէ սուտ, անսպարտ յայսմ յանցանայ Համարեսցի. քանզի զկա-

նան սիրելոյ ընկերին՝ յիւրմէ անձնէ առնու սիրոյն, ըստ որում գրեալ է. «Իբրեւցես զընկերք քո իբրև զանձն քո,, Ոչ այդ եթէ ոչ ինչ ընդհատ պարտաւոր սուտ վկայու- թիւն է՝ որ զանձնէ խօսիցի սուտ, քանզի զայն որ զընկերէն առնիցէ զայդ, թէպէտ և 'ի պատուիրանի անդ չվկայե- լոյ սուտ՝ այդելու՝ զընկերէն, և մարթի է խոտորնակ ու- մեք խորհողն կարծել թէ այդելեալ ոչ իցէ մարդոյ իւ- րում անձինն լինել վկայ սուտ, ապա որչափ և իմանալ արժան է՝ ոչ օրէն լինել մարդոյ զանձն սպանանել. իբր զի 'ի պատուիրէն «մի սպանաներ,, առանց իրիք յաւելուա- ծոյ, ոչ որ և ոչ նոյն ինքն Հրամանատուն Միայ արտաքոյ. միանչ զի ամենեք զայս պատուիրան և յանապատնս անգամ և 'ի խաչինս ձգել յօժարին, որպէս թէ օրէն ոչ իցէ սպա- նանել և զմի յայնցանէ, Ընդէր ապա ոչնոյնպէս և զբոյս և որ ինչ այլ 'ի հող արմատացեալ դարմանի և սնդի. քան- զի և այդ ազգ իրաց թէպէտ զգայ ոչ, բայց ասի կեալ. ուստի և մեռանել կարէ, որով՝ 'ի բանի վարեն և՝ սպա նանել. ըստ որում և առաքեալ՝ 'ի խօսեն զայնպիսեաց սերմանց՝ ասէ. «Ոչու զոր սերմանես՝ ոչ կենդանանայ, եթէ ոչ մեռանիցի,,. ▪ Կոր. ԺԵ. 36. Իսկ այդ 'ի լսել մեր «մի սպանաներ,, Համարիմք այդեաք տարօրէն ինչ և զխել մատաղամանկոց, և Հասանիցիմք խօլական մոլորու- թեն մանկեցուց: Ի բաց տարեալ ապա զայդպիսի զա- ւանցանս, լինել եռնուլ մեր «մի սպանաներ,, եթէ չայն սակս ոչ զանկոյն ասել իմանամք, զի զգայուն՝ 'ի նոսա չիք, և ոչ զանբանաւոր կենդանեացն՝ զձուկնոց, զսողակաց, զսողբոտանեաց կամ զբազմոտանեաց, զի չէ նոցա հնար- հեալ բան զայդ մեզ և Հասարակ, որով ըստ արդարա- կրիւ տեսչութեան արարչին՝ 'ի մեր պէտս անկանին և կեանք նոցա և մահ, ապա զմարդոյ միայ իմանալ մեզ զասացեալն «մի սպանաներ,. ապա ուրեմն ոչ զայլ ոք և ոչ զանձն քո: Ո՛ր զանձն սպանանէ, ոչ զայլ ինչ՝ բայց զմարդ սպանանէ,

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս սպանումեցոյ ինչ մարդկան՝ որք անպարտ են ի մարդասպանութենէն արտաքոյ ։

Ասացեալ գոն և յայծմային պատգամն՝ որ ասէին թէ չէ օրէն սպանանել զմարդ , ինչ ինչ ի բաց առեալ իմա, ուր ոյ հրամայեալ է սպանանել կամ օրինադրութիւն, և կամ յայտնի հրամանաւ եղեալ առ որ ըստ ժամանակին։ Ապա կայն ոչ նա ինքն սպանանէ՝ որ սպասաւորէն պարտապան է հրամանատուին, որպէս սուր՝ որ գործի է վարողին ։ Վասն իրի ոչ հակառակ ինչ պատուիրանիս “ մի սպանանեը ,, , գործեցեալն որք միանգամ յայ հրամանէն մղեցեալն մարտս, կամ տեղակալք եղով հասարակաց իշխանութենն ըստ նորա օրինացն , այս է՝ ըստ հրամանի արդարադատ բանիւն՝ մահու պատուհասեցեալն զպարագործս։ Եւ Աբբա համ ոչ անստգիւտ միայն գտաւ յանգիթութենն յանցանացդ , այլ գովեցաւ իսկ երկիւղածութենէն անուամբ՝ կամ մերով սպանանել զորդին՝ ոչ անօրինաբար՝ այլ հպատակ կօրէն ։ Եւ յիրաւի խնդիր է , համարեցոյն արդեօք ի հրամանէն այ սպանանել Յեփթայեայ զդուստրն ընդառաջեալ հօրն . իբր զի ուխտ եդեալ էր այ նուիրագործել զայն՝ որ նախ ընդ առաջ նմա ելանիցէ ի դառնալ իւր յաղթողապէս ի պատերազմէն ։ Եւ ոչ այլազգաբար արդարանայ Ամիհոն, որ զանձն Ամէնայ ընդ թշնամիս կործանմամբ տանի . բայց զի հոգին՝ որ նուաւ զհրաշալիսն գործեր, նոյն ի գաղտնիս ազգեաց զայն։ Արդ բայց յայտ սիսեաց աստի , զոր կամ ընդհանուր օրէնք արդարացի , և կամ արդարութենն աղբիւր ինքնին յատուկ հրամայէ սպանանել , որ որք զմարդ՝ եթէ զանձն իւր և եթէ զայլ որք և սպանանիցէ , ընդ մարդասպանութենէն յանցանօք գրաւեալ կայ ։

ԳԼՈՒԽ ԻԴ

Ոչ բնաւ կամաւորն մահ՝ արիւնքն հոգւոյ ընծայելի է։

ԱՐՔ միանգամ յանձինս մահ գործեցին, զարմանալիք Թեւիւն ըստ ոգւոյ արուեստն։ այլ ըստ առողջ խնամատուեցն ոչ էն գովելի։ Ջնող զի և խնամով հարցաւ փորձեալ զբանն, և ոչ ոգւոյ արուեստ կոչել արժան է ուղղաբար, յորժամ ոչ կարացեալ ոք տանել իրիք իրիք դժընդակաց, կամ օտարին մեղաց, անձինն լինի սպանող։ Ջ այն զի յաւէտ անարի ցուցանին միոք, որք չկարեն ժուժալ խիստ ծառայութեն մարմնոյ իւրեանց, և կամ անմիտ կարծեաց ամբոխին. և արիասիրտ նա յիրաւի ասացի, որ կենաց վշտալեաց առաւել տոկալ գիտէ՝ քան խուսեալ և գիտէ առ լուսով և յոտակութեն խղճին՝ յոլինչ գրել զմարդկան դատաստան, մանաւանդ զուսկացն՝ որ յոլովակի մոլորութեն պատեալ է մառախլով։ Ջ այն որոյ եթէ քաջարութեն էին համարելի՝ մահ անձին բերել մարդոյ, առաւել և Ջղճոմբրոտոն այն գտանի այդմ արուեստ ունակ. զորմէ զբուցին թէ զանմահութեն գիրն ընթերցեալ զՊղատոնի, 'ի վայր ընդ պարիսպն ընկէց զանձն, և այնպէս յայց կենաց չուեաց 'ի լաւագոյնն կարծեցեալ յիւրմէ։ Ջանզի ոչ մի ինչ իրք տառապանաց կամ յանցանաց՝ եթէ ձնմա բիտ եթէ սուտ՝ ստիպէին զնա, որպէս զի առ չկարելոյն տանել կարձեսցէ զկեանս. այլ 'ի յանձնառութեն մահու, և առ խղել զկենաց զանուշակ կապանս՝ արիութեն ոգւոյն ևեթ գտաւ ձեռնտու։ Ջակայն զայդ մեծ իմնքան թէ բարւոքապէս գործեցեալ՝ վկայել կարէ Պղատոն ինքնին՝ զոր նայն ընթերցեալ էր. քանզի նա ինքն Պղատոն նախկին և առաւելապէս արարեալ էր զայն, և հրամայեալ և այլոց, եթէ ոչ այնու հանձարով՝ որով զանմահութիւնն ծանեաւ, դատեալ էր թէ գործ այսպիսի ոչ առնելոց, այլ արգելոյ յաւէտ արժանի է։

Ա՛յլ ասէն. բազումք զիւրովի գնացին առ՝ ի չանկանել լոյ՝ ի ձեռս Թշնամեաց, Ա՛ն խնդիր առնեմք մեք աստանօր՝ արդեօք իցէ այդպիսի ինչ արարեալ. այլ Թէ առնել իցէ՝ արժան Ա՛ն զի առողջ բանաւորութիւն նախագասելի է քան զօրինակս, որում և այլ օրինակք համահաւանք են. այլ այնպիսի օրինակք, որք այնչափ առաւել առ՝ ի նմանել արժանի են՝ որչափ ՅԱծպաշտութեամբն գերազանցեալք։ Ո՛չ այդ ոչ արարին նահապետք, ոչ մարգարէք, ոչ առաքեալք. ապա Թէ ոչ՝ և Ա՛յն տէրն ինքնին՝ յորժամ խրատն ետ նոցա՝ ՚ի հասանել հալածման փախչել քաղաքէ ՚ի քաղաք, ունէր խրատել՝ ձեռն ՚ի կեանս իւրեանց ձգել, զի մի հալածէաց ՚ի ձեռս անկանիցին։ Ա՛յլ արդ եԹէ ոչ հրամայեաց և կամ խրատեաց՝ այնու օրինակաւ չուել իւրոցն ՚ի կենաց աստի, որոց և խոստացաւն պատրաստել օԹևանս յաւերժականս ՚ի փոխիլ նոցա, որ զի՛նչ և օրինակս առաջի արկանիցեն հեԹանոսք անգիտակք այ, յայտ է Թէ որոց պաշտեն զմի ՅԾ ՅՀմարիտ՝ ոչ օրէն է այն։

ԳԼՈՒԽ ԻԳ՝

Որպիսի իցէ օրինակ կատուի, որոյ չՀանգուրժեալ յաղԹութենն կեսարու՝ մահ անբերն արար։

Ա՛յլ սակայն և նոքին իսկ՝ բաց ՚ի Ա՛ուկրետեայ, զորմէ զմեր դատաւճիռ վերագոյն ասացաք բաւականաբար, ոչ ունին գտանել զարժանապատիւ զոք՝ բայց զՎատոն, որ՝ Ա՛ՈՒտիկէ անՀնամարհ եղև. իբր ոչ եԹէ նա միայն արար զայն, այլ զի գիտասուր Համարեալ էր այլն և բարեկիրթ, փիլիսոփայ կարծեցեալ Թէ մարԹ էր ուղղութիւնք գործել զայն։ Ա՛յլ զի՛նչ առ այս նորա գործ գիպուղագոյնս ասացից, բայց զոր նոքին բարեկամք՝ նոյնպիսս մտաւորք ոմանք, որք խմաստնաբար և խրատեին չառնել առաւել սնարի ոգւոյ զայն վարկանելոմ քան Թէ քաջի. իբր զի ոչ Հաճոստութիւն

ցոյցք էին այն՝ որ յանպատշաճէ զգուշանալ, այլ տկարութեէ՝ որ ձախողակաց չգիտէ ժուժկալել։ Ո՛չ սոյն և Կատոն ինքնին յայտ արար՝ ի սիրեցեալն իւր որդի. քանզի եթէ անպատշաճ ինչ էր կեալ ընդ յաղթութեէն Կեսարու, էր վասն առաջնոյդ անպատշաճութեանս նա ինքն Հայրն եղև առ որդին, որում պատուէր էտ ամենայն բարւոյ ակնկալել՝ ի գթութենէն Կեսարու. ընդէր ոչ և զնա մահակից իւր լինել սահեցաց։ Վասնզի եթէ Տորկուատոս սպան զիւր որդի՝ զմարտութեանէն անհրամանն առ Թիշնամիս և դասալքեալ յաղթական գտեալ, հիմ յաղթեալն Կատոն խնայեաց յորդին յաղթեալ, յիւր անձն ոչ խնայեալ։ Ի՞մէն անպատշաճագոյն ինչ էր ընդդէմ հրամանի լինել յաղթականն, քան ընդդէմ անձին պատուոյ համբերել յաղթականին։ Ապա ուրեմն ոչ իւիք անարժան գտեցաւ Կատոն զկեանն ընդ յաղթութենէ Կեսարու. ապա թէ ոչ՝ նովին Հայրական սրով ազատեր զորդին յանպատշաճութենէ անտի։ Այլ զի՞նչ ապա. այլ զի արշաւի սիրեաց զորդին՝ յոր և խնայել Կեսարու յուսայր և կամէր, նոյնչափ ընդ Կեսարու փառն՝ զի մի և յինքն խնայիցէ, ըստ որում ասացեալ իսկ Կեսարու պատմի՝ չարակնեաց, կամ՝ զի մեղմագոյնս ասասցուք՝ պատկառեաց։

ԳԼՈՒԽ ԻԳ

Յառաքինութենէն յորում Հռետորսն գերազանց գտաւ, քան զկատան, առաւել ևս ի վերոյ անցանէն քրիստոնեայք։

Այլ դարձ առ որս վերնեմքն, ոչ կամին նախամեծար քան զԿատոն դնել զսուրբ այրն զՅոբ, որ զայնպիսի զանհնարին չարիս կրեալ՝ ի մարմնի իւրում յանձն էառ՝ քան թէ անձին բերել մահ թերեւս անալ յամենայն վշտաց. կամ զայլ ևս սուրբս վկայեալս՝ ի մերոց ամենայնիւ վաւերականս և արժանահաւատ գրոց, որք ընտրեցին զերութիւն

համբերել և բռնակալութեն Թշնամեաց, քան թէ անձանց սպանումն գործել. զսոսա ասեմ նախամեծար արասցուք քան զԱատան. այլ և՝ի մտաւնէից հռովմայեցւոց զԱարկոս Հռեգուղոս նախագրեսցուք քան զԱարկոս Կատոն, Օ՛ի Կատոն ոչ իւրք յաղթեալ էր Կեսարու, և ինքն յաղթեցեալ ոչ արժան համարէր ընդ նովաւ անկանիլ. և զի միներքոյ անկցի, ընտրեաց անձամբ մահանալ։ Իսկ Հռեգուղոս յաղթեալ իսկ էր կարքեդոնացւոց, և հռովմէական պետութեն եղեալ հիւպատոս, յաղթութեն տարեալ էր՝ իւրոց քաղաքացեացն ոչ անհաճոյ, իսկ՝ի Թշնամեացն զովաբանեալ. սակայն յետ այնր՝ի կարքեդոնացւոցն պարտեալ՝առաւել կամեցաւ տանել նոցա կալանաւոր մնալով, քան անձնասպառ լինել մեռանելով։ Այմին իրի պինդ կալաւ և զհամբերութեն ընդ բռամբ կարքեդոնացւոց, և զհաստատութեն՝ի սէր հռովմայեցւոց, ոչ զպարտեալ մարմինն զատուցեալ՝ի Թշնամեաց, և ոչ զանպարտելի ոգին՝ի քաղաքացեաց։ Այս ոչ զի սպանանել զանձն չկամեցաւ՝ առ սէր կենացս արար զայդ. զոր և եցոյց՝ յորժամ՝ սակս խոստմանն և երդմանն պահելոյ անդրէն դարձաւ անվեհեր առ Թշնամիս, զորս խստագոյն ևս զայրացուցեալ էր բանիւքն որ՝ի ծերակուտին՝ քան զինուք՝ի պատերազմի։ Այսան որոյ այսպիսի ոք կենացս արհամարհող՝ կամելոյին առաւել՝ի կատաղի Թշնամեաց միջի վախճանել զկեանս որ և է տանջանօք, քան ինքնին զրաւել, վճռեաց անշուշտ՝ Թէ անօրինութիւն մեծ է անձնասպան լինել մարդոյ։ Այսունին հռովմայեցիքդ յամենայն իւրեանց գովանի արանցն ականաւորաց հռչակելոց յառաքինութեես յանդիման առնել լաւագոյն զոր քան զՀռեգուղոս. զոր ոչ բարեբաստութեին պատերազ լինչ՝ինալով նորա՝ի մեծամեծ յաղթութեին անդ չքաւոր, և ոչ Թշուառութեին խորտակեաց, աներկիւղ՝ի չարաչար կատարած դառնալով։

Իսկ արդ եթէ որեար այսպիսի արիականք և մեծահոգիքդ, երկրաւոր հայրենեաց պաշտպանիչք, տուտ տուածոց անտուտ պաշտօնատարք, երդնեաստուք անմեղն գաւորք, որք պարտեցելոց Թշնամեաց իշխան էին ըստ

ասովորութեէ և իրաւանց պատերազմի սուբ ՚ի վերայ ածել, սոքա ՚ի թշնամեացն պարտեալք՝ ոչ կամեցան անձանց սուբ դնել, և զրկ ՚ի մահուանէ ոչ բնաւ զանգիտէին, առաւել յաղթականն իշխեցողաց համբերել կամեցան՝ քան անձամբ զմահ ՚ի ներքս բերել, քանիցն առաւել քրիստոնեայք՝ այ ձշմարտի պաշտօնեայք՝ փափաքողք վերինն Հայրենեացն՝ անձնասպահք յայսոսիսեայ ասիրատութէ լինիցին, եթէ երբէք աեսչութէնն ածեղէն առ ՚ի հանդէս կամ յուղղութէ ընդ ձեռամբ թշնամեաց արկանիցէ զնոսա առ ժամանակ մի. զորս և ՚ի նուաստութէ անդ ոչ լքանէ բարձրեալն՝ որ ՚ի նոցա սակս եղէն անձառ խոնարհութէ, մանաւանդ զի ոչ գոն նոցա Հարկադիր իրաւունք զինուորական իշխանութէ, կամ այնպիսի զինուորութէ՝ սպանանել և զթշնամի յաղթեալ։ Այլ որ ասպա մոլորութէ չար ՚ի ներքս սպրդիցէ, մարդոյ սպանանել զանձն՝ այնու զի կամ ՚ի նմա մեղաւ թշնամին, կամ զի մի մեղիցէ, ուր ոչ իշխէ նա սպանանել և ոչ զթշնամին մեղուցեալ կամ որ ՚ի մեղանչել կայ։

ԿԱՆՈՆ ԻԸ.

Չէ օրէն մեղաք խոյս տալ ՚ի մեղաց։

Այլ գուցէ երկիւղ ունել ասեն արժան է և զգուշանալ, մի արգելօք՝ ուր թշնամւոյ զաղթագործութէն ներքոյ անկեալ լիցէ մարմինն, անմաքուր հեշտութէն մեղկանայցէ հոգին ՚ի հաւանութէ մեղաց։ Այսորիկ ազաւաս, ասեն, ոչ եթէ սակս օտարին մեղաց՝ այլ վասն իւրոցն միոջ չև գործեալ զայն, պարտ է մեռուցանել զանձն։ Այ պաքէն ոչ բնաւ իւիք առնիցէ զայդ՝ հաձիլ ընդ հեշտութէ իւրումն մարմնոյ զրգռելոյ յօտարին զաղտութէ՝ անձն որ առաւել այ իմաստութէնն ներքոյ անկեալ է, քան մարմնոյն ցանկասիրութէ։ Այլ սակայն եթէ ասիրատութէ է

անհնարին և եղեռն դատապարտելի՝ մարդոյ սպանանել զանձն՝ որպէս աղաղակէ Ձեմարտութիւնն քաջայայտ, ոմն ոք այնպէս անմոռանայցէ, մինչև ասել՝ այժմէն մեղկցուք, զի մի գուցէ յապայ մեղանչիցեմք. այժմէն կատարեսցուք զմարդասպանուն, մի արդեօք անկանիցիմք յետոյ՝ ի չնութիւն։ Ո՛չ ապաքէն ուր այնպէս բռնանայցէ անօրէնութիւն, մինչև ոչ եթէ անմեղութիւն՝ այլ մեղայ պիտի առնել ընտրութիւն, տանելի է անստոյգ ապառնին չնութիւն, քան ներկայ ստոյգ մարդասպանութիւն. ոչ տանելի և այ է դրծել գչար՝ որ ապաշխարութիւն ունի բժշկիլ, քան զապիրատութիւն՝ ուր ոչ այլ և այ փրկական ապաշխարութիւնն մնայ տեղի։ Ո՞յս ասացի՝ ի պատճառս արանց կամ կանանց՝ որք ոչ յօտարին մեղայ խորհելոյ վասն, այլ յիւրոց անտի, կասկածեալք մի արդեօք առ այլոցն հեշտութիւն և իւրեանցայուծն գրգռելոյ հաւան լինիցին, անձանց բռնութիւն առնել՝ ի մահ օրէն վարկանին։ Վասն քաւ լիցի, թէ այր հաւատացեալ որ չար իւր ապաստան կայ, և՝ ի նոյն օգնականութիւն խորհեսցէ գոյս իւր, տեղի տայցէ մարմնական խրտմանց առ՝ ի հաւանութիւն գազրութեն։ Իսկ եթէ անհնազանդութիւնն այն ցանկական՝ բնակեալ դեռ՝ ի մահկանացու անդամս, հակառակ օրինաց մերոցս կամաց չարժեսցի իւրոյն օրինօքն, որչափ այդ առաւել անմեղադրելի է՝ ի մարմնի չհաւանելոյն, եթէ առանց մեղադրութեն է՝ ի մարմնի կացելոյն՝ ի քուն։

ԳԻ ԿԱՆԽ ՒՕ

Ջիմբդ ելցէ համարել զոչ պատշաճականս ինչ՝ որ՝ ի սրբոց ոմանց առասանին գործեցեալք։

Ա՛յլ, ասէն, թէ կանայք ոմանք սրբասունք՝ ի հալածանաց ժամանակս առ՝ ի զերծանելոց՝ ի լկողաց իւրեանցն զգաստութեն, հոսեցին զանձինս ընդ գետ զայ-

լացեալ և հեղձական, որով և մեռան իսկ. և նահատակուԹէն նոցա բազմահանդէս մեծարանաց տօնախմբի ՚ի կաԹողիկէ եկեղեցւոջ։ Օ այսցանէ ես ոչ իշխեմ ինչ համարձակ վՀին հատանել. զի և գիտեմ իսկ ոչ, միԹէ արժանահաւատ վկայուԹիք ումեքիք հաւանեցոյց արՁեօք եկեղեցւոյ ՏածայինՆ կարգաւորուԹէն պատուել զնոցայն յիշատակ. և Թերևս այդպէս իսկ լեալ էցէ։ ՎՀանգի զայդ արարին նոքա Թերևս՝ ոչ ըստ մարդկուԹէ պատրեալք, այլ յՏածոյս հրամայեալք. ոչ սխալելով, այլ հնազանդելով. որպէս և յաղագս Պամիսոնի ոչ այլ ազգ ինչ խորհել արժան է մեզ՝։ Իսկ եԹէ Տած հրամայէ, և զիւր զՀրամայեալն անեղկեցայաբար զեկուցանէ, ո՞ոք ՚ի յանցանս գրիցէ զՀնազանդեալն, ո՞ զգործ ՏածպաշտուԹէՆն ամբաստանեսցէ։ Պակայն ոչ անպարտ ՚ի յանցանաց գործէ այր՝ որ ոք զիւրն որդի հաստատիցէ զհնուլ՝՝ այն, այնու զի Վքրահամու արարեալ է զայն գովուԹի։ Օ ի և գահիՀ յորժամ հնազանդեալ իշխանուԹէՆ՝ ընդ որով կարգեալ կայ օրինօք, սպանանել զմարդ, ոչ ըստ միոյ իրիք օրինաց քաղաքին պարտաւոր մարդասպանուԹէ լինի. նա՝ ԹէՀ ոչ առնիցէ զայն, լինի պարտաւոր յանցման և արհամարհուԹէՆ հրամանին։ Իսկ եԹէ իւրումՆ կամաւ և իշխանուԹէ արարեալ էր, յարիւնհեղ-

1 Ձիշտասակաւ կանայքդ՝ են սրբուհիՆ պէ զգալա և ընկերք իւր, որք կամ ՚ի բարձանց հասեցին, և կամ գնացան մոյն արարին զանձինՆ՝ զերծանել ՚ի զաղջադործացն հարատարածուԹենէ յամին իբր 311. զորս և ներբողիս յիշատակին առաբ վարդապետք Հերոնիմոս, Ըսերոսիոս, Ոսկէբերան։ Ընդպարս առնՆէն զնոսա յանձնապատուԹէՆ արասց՝ իբր յՏածային ազգեցուԹեան շարժեալս ՚ի նոյն գործ. զոր և ՚ի Պամիսոն նոյնպէս արգարացուցանէ մեր Օգոստինոս. ԹէպէՀ և նորայն պյուերինակ է, այսինքն է ուղղակի զգվեժ ինդրուԹէն գործէլ ՚ի ԹշնամիսՆ ևյ և խոպէլացւոց, որուՀ հետևումՆ միայն էր իւրոյ անձինն մեՀ. ակս ՚ի մեՀն։ Ըբրայ. ժե։ 32։ Ոմանք յՏածբանից անպարտ համարին նա և առանց մանաւոր ազգեցուԹէ ևյ մեՀ բերել անձինՆ՝ ՚ի շարժմանէ ևեԹ սբ. բոյն ևյ զգուշացեալ պահանել զանձն ՚ի վտանգ մեզոց, զոր յայտնապէս չՀաւանի մեր Օգոստ. ՚ի գլՀ. իե. իէ։ Ես բովանդակ վարդապետուԹէ զոր յայտնիկ գլուխս խուսափանէ, հարկանելով հարկանէ կանխաձեռնելն կարծիս և զգործ այնոցիկ ումանց՝ որք ՚ի լեռնի գտան օբէՀ համարիցան առնել մահ անձին՝ ոչ յՏածպաշտուԹէ, ինչ և կամ ա. հաւատացեալ օգուտ, այլ զի զաղջուածկ պտղին բժչկեսցէն, անհաւատք եղով այլուսկնաց՝ որ զինի գայ լի ցաւովք։

զուԹէ մարդոյ յանցանաքն լինելը ըմբռնեալ . ուստի որով պատուհասիւբն՝ ԵԹԷ առնիցէ անհրաման , նովիմբ պատուհասեցի՝ ԵԹԷ հրամայեալ չառնիցէ : Իսկ արդ ԵԹԷ այսպէս է՝ի հրամայել իշխանին , օրըսաի և՛ի հրամայել արարչին : Այ՝ան որոյ որ լսէն՝ ԵԹԷ օրէն ոչ է զանձն սպանանել , արասցէ զայն՝ ԵԹԷ նա ինքն՝ զորոյ հրամանաւ չէ օրէն սպանանել՝ հրամայիցէ . միայն նը֊կատեսցէ քաջ , ԵԹԷ իցէ արդեօք բնաւ աներկբայելի հրամանն ածային : Այ՝եք ըստ որում լուաքն՝ յարմարեսմբ զմեր խիղճ . զգաստանեացն դատաստան ոչ յանձինս գրաւեմբ : Այ՝ որ գիտէ ինչ զմարդոյն՝ ԵԹԷ ոչ հոգի մարդոյն որ՛ի նմա ,, . Այ՝ . Ի . ԱԱ : Այդ ասեմբ , զայդ հաստատեմբ , յայդ ամենևին հաւանեալ եմբ , ԹԷ ոչ ումեք արժան է կամաւորաբար մահ գործել անձին , ոչ առ՛ի խոյս տալոյ ումեք՛ի ժամանակեան վշտաց , զի մի յանանցանելիսն անկանիցի . ոչ ումեք սակս օտարին մեղաց , զի մի զիւր զծանրագոյն մեղս արդեամբք կրիցէ , զոր օտարինն ոչ աղտեղէր . ոչ ումեք սակս իւրոցն մեղաց անցելոց , որոց վասն առաւել պէտս ունէր կենացս , զի ապաշաւելովբն առցէ բժշկութիւն . ոչ ումեք իբր՛ի փափաքմանէ լաւագոյն կենացն՝ որ յետ մահու ակնկալեալ է , վասն զի պարտաւորքն անձանց մահու՝ ոչ հանդիսանացին լաւագունի կենաց որ զկնի մահու :

ԳԼՈՒԽ ԻԱ՛

ԵԹԷ իցէ արժան առ խորհելս՛ի մեղաց՝ ցանկալ կամաւոր մահուան :

ԱԱՑ ինայ և պատճառն՝ զորմէ յառաջն սկսայ առնել , զոր վասն օգտակար կարծիցի սպանանել մարդոյ զանձն , այս է զի մի ընդ մեղս շաղիցի՝ կամ՛ի հրապուրել հեշտուԹենն , կամ՛ի բռնանալ ցաւոց : Այակայն ԵԹԷ ընդ պատճառդ հաւան լինել կամիցիմբ , ցայն վայր ձգեսցի՝

մինչև յորդորել օրէնն իցէ զմարդիկ երթալ զիւրոքին ժամանդէն 'ի լուանալ նոցա աւազանաւ վերստին ծնընդեանն, ընկալան զամենայն մեղաց զթողուած ։ Ա՛ ասէ զի այն է ժամանակ զգուշանալոյ 'ի բնաւ առաջակայից մեղաց, յորժամ անցեալքն ամենայն ջնջեցան ։ Ա՛ր եթէ օրէնքն իցէ այդպիսի կամակար մահ, ընդէր ոչ առաւել և յայնժամ լինիցի ։ առիմ միրաեալ իւրաքանչիւր ինոյ յանձն ։ Եր վասն զազատացեալ զիւր գլուխ դարձեալ 'ի բազմապատիկ վտանգս կենացս արկանել, յորժամ դիւրաւ կարող է մահ բերեալ անձինն՝ յամենայնէն խուսափել։ և գրեալ իսկ է ։ "Ա՛ր սիրէ զտաղնապ, 'ի նմին կորիցէ...։ Ա՛ե՛ղ.Ե.27։ Ա՛ր ինչ ապա սիրեցեալքն են այնչափ և այնպիսի վտանգք։ և եթէ արդեօք սիրեցեալք ոչ բայց յանձն առեալք են, ինալով 'ի կեանս՝ յորմէ հրաժարեցին օրէնն է ։ Ա՛ եթէ այնչափ խելայեղ թիւրութիւն տապալեացէ սիրտ և 'ի չնմարտութենն տեսութէ 'ի բաց դառնայցէ, մինչև թէ ուսիք օրէնն իցէ անձին առնել առ 'ի չանկանելոյ 'ի մեղս բռնութիւնք գերչի ուրուք, համարիցի թէ կեալ արժան է առ 'ի վարելոյ զաշխարհ՝ զլեգեանն հանապազօրեայ փորձութիւնք, և այնպիսեօք զորպիսիս կասկածեն ընդ միով տեղամբ, և այլովք ևս անթուելովք՝ առանց որոց չէ մարթ ձգել զկեանս ։ Ա՛ր վասն ապա ժամավաճառ լինելոյ 'ի խրատականն՝ որովք առ միրաեալն վարդապետելով ջանամբ նախանձեցուցանել 'ի կուսական անարատութիւն, կամ յայրիական ժուժկալութիւն, որպէս և 'ի հաւատարմութիւն ամուսնականն անկողնոյ յորժամ լուսագոյնքն առ ձեռս կային հնարք՝ մեկուսի յամենայն 'ի վանդակ մեղաց, որով կարող էաք հաւանեցուցանել ամենեցուն՝ զի յեա նորոգաւորք թողութիւնք մեղաց 'ի մահ ձեռնարկեսցին իւրովի, և այնպէս առողջս և մաքրագոյնս յուզարկել զնոսա առ աեր։

Իսկ արդ եթէ որ զբ յայս ձեռնարկել և յորդորել արժան համարեսցի, չասեմ թէ տգիտանայ այնպիսին, այլ մոլեգնի, որովք ապա դիմաք իշխէ ասել առ մարդ, մեռս զանձն քո, զի մի փոքունց իսկ մեղաց 'ի վերայ յա-

ւելուցուս զծանրագոյնն , ընդ ձեռամբ կելով խժաբա-
րոյ և աղտեղասեր տեառն . ուր չէ կարող՝ բայց անօրի-
նագոյնս լեթի ասել , մեռս զանձն , լուացեալ գոլով
քո յանհնարն մեղաց , զի մի դարձեալ զնոյնս և զևս չա-
րագոյնս գործիցես , ապրելով քո ՚ի կենցաղումն՝ որ աղ-
տեղեալն է անմաքուր հեշտութիւնք , որպէս գազանացեալ
քարուկան անգթութիւնք , մոլորութիւն և արհաւրօք գո-
թիշեամի : Այլ զի ասել զայդ անպատեհ է , գժպատեհ
ուրեմն և զանձն սպանանել : Իսկ զի եթէ էր պատճառ
արդարացի կամաւ զդոյն գործելոյ , անշուշտ ոչ առաւել
արդար քան զայս էր . այլ քանզի և ոչ այս է , ապա
ոչ մի ինչ պատճառ գոյ :

ԳԻՒՄԻՍ ԻՐ

Որով գաւաստանաւ այ Թողացուցեալ է զպղութիւն Թշնամւոյ մեզանէ
՚ի մարմինս ժուժկալից :

Այ՛ այսուհետև , ո՛ հաւատացեալք Քրիստոս , ձեզ ՚ի
տաղտուկ լինիցին կեանքդ , եթէ ողջախոհութիւնդ
ձեր ՚ի ծանականս եղիցի Թշնամեաց : Քանիք ձեզ միթԹա-
րութիւնք մեծ և ճշգրիտ , եթէ հաւատարմացուցանէք խոհ
ձեր՝ ոչ հաւանեալ ձեզ ընդ մեղս այսոցիկ՝ որոց Թոյլ
տուաւ մեղանչել ՚ի ձեզ : Այլ եթէ խնդրեցէք Թերևս՝
առիմն Թողացուցաւ նոցա , ապաքէն բարձր է տեսչութի-
նորա՝ որ արարիչն է և վարիչ աշխարհի . “ Քանց քրիս-
նեալոյ են դատաստանք նորա , և առանց զննելոյ ճանա-
պարհք նորա ,, . Ն՚ . ք . 33 : Սակայն հարցաքննեցէք
անխարդախ զձեր սիրտս , մի արդեօք ընդ պարգև անեղծ
մաքրութիւնն և ժուժկալութիւնն կամ պարկեշտութիւն փո-
քացեալ ամբարհաւաճեցայք , և ընդ մարդկան գովեստս
անկղնտացեալ՝ յայդմ ևս նախանձու իմն առ ոմանս ախ-
տացայք : Ո՛չ ամբաստանեմ զոր ոչն գիտեմ , և ոչ լսեմ

զինչ ձեր սիրտը հարցնելոյք պատասխանի առնէն։ Այլ եթէ զայն պատասխանիցեն, մի այլ զարմանայք ընդ կոթսանել ձեր զայն՝ որով առ մարդիկ զհաճոյանալն կամեցայք, մնալով ձեզ այն և եթէ՝ որ մարդկան չէ տեսանելի։ Այնթէ մեղադրծէն ոչ եղայք զուգահաւանք, ահա առ անկորուստ մնալոյ ածայինն պարգևին՝ եհաս ի վերայ ածայինն օգնութէն. իսկ զի մարդկայինն պարծանք մի արգոյ լինիցի, փոխանորդեաց այնմ ամենեն մարդկային։ Այլ յերկաքանչիւրն մխիթարեցարուք կարճամիտք, մինչև փոքձեալք և միւսով խրատեալք, միով արգար երևեալք, և միւսով յուղղութէն եկեալք։ Այսկ որոց սիրտք ի հարցափորձէն տայցեն պատասխանի, ոչ բնաւ ընդ պարգև կուսութէն, կամ այրիական և ամուսնացեալն պարկեշտութէն հալարտացեալ երբէք, այլ ընդ խոնարհս զիջանելով, յնծայեալք դողութէ ընդ պարգևն՝այ, և ոչ ընդ մի ոք նախանձեալ յաղագս առաւելութէն նմանակիր սրբութէն և ողջախոհութէն, այլ արհամարհեալ ըզմարդկան դողեստ՝ որ սովորեալն է այնչափ յանձախել՝ որչափ սակաւագոյն է բարին՝ գովութէն արժանաւոր, քանզի կացան յաւէտ բազմանալոյ թուոյ այնպիսեացն, քան թէ ի սակաւութէն նոցա հնբեանց բարձրանալ և գեր ի վերոյ երևել։

Այդ եթէ և ի նոցանէ յայսպիսեաց ումանք բռնաբաւթեցան ի բարբարոսացն զաղրագործութէն, մի վշտանայցեն ընդ թողացուցանելն՝այ, և մի կարծիցեն յայնպիսի իրս անփոյթ առնել՝այ, իբր այն զի թոյլ տայ գործոյ զոր ոչ ումեք է գործել անպատուհաս։ Այ ան զի իբր հակամիտութէնէ ինչ ըղձից չարաց՝ յայժմուս գաղտնի գատաստանաւ՝այ թողացուցեալք, պահին վերջնումն յայտնի գատաստանի։ Այս գուցէ սոքա որոց խիղճ վկայէ ոչ բարձրամտեալ իւրեք ընդ ողջախոհութէնն բարիս, և տակաւին զբռնութէն թշնամւոյն կրիցեն ի մարմնի, ուստի՞ նէին ինչ արդեօք գաղտնի տկարութէն, որով մարթ էր նոցա յամբարտաւանութէն վերբերել՝ եթէ յանարգութէն աստի փրծանէին յայնմ աշխարհական աւերման։

Արդ զոր օրինակ ոմանք յափշտակեցան մահուամբ, զի մի՛ չարութեի՛ չքնեցե զմիտս նոցա, նոյնպէս՝ ի պարկեշտից յայցեցանէ բարձաւ բռնութի՛ւն, զի մի՛ բարեբաստութեի՛ն այլափոխեսցէ զնոցայն հանգստութի՛ւն։ Այսո՛ւ որպէս յերկա քանչիւրոց այսոցիկ՝ որք ընդ անշաղախ մնալ մարմնով իւրեանց կամ հալարտացեալ էին, և կամ գուցէ հպարտանալ կարէին՝ եթէ չմերձենայր՝ ի նոսա բռնութիւն թշնամեաց, ոչ բարձաւ ողջախոհութի՛ն, այլ խոնարհութի՛ն վարդապետեցաւ. նոցա արդէն եղելոյ փքացմանն դարմանն մատուցաւ, և սոցա յառաջեաց՝ զի մի՛ լիցի։

Այլ և զայն լուել չէ պարտ, թէ ոմանց որք զայսպիսիսիսս կրեցին՝ գուցէ կարծիւր, թէ ժուժկալութե՛ն բարիք հաստատեալ իցեն՝ ի մարմնական հանգամանս, և պահին անկորուստ՝ յորժամ անմերձ կայցէ մարմինն յայլոյն ցանկասիրութե՛, և ոչ թէ եղեալ կայցէ և՛ եթէ՝ ի զօրութե՛ կամաց յաճուատ օժանդակելոյ, որով սուրբ իցէ և մարմինն և հոգին. կամ թէ ոչ այնպիսի բարի իցէ՝ զոր յակամայս բառնալ չէ հնար. ահա այսպիսի վրիպակ կարծիք բարձան։ Վասն զի յորժամ զմտաւ ածեն՝ թէ որով մտօք ծառայեցին այ, և անդրդուելի հաւատովք եդեալ են՝ ի մտի՝ թէ զայնպիսի ծառայեալս իւր և զառնա կարդացեալս ոչ բնաւ լքանէ, և թէ որչափ ևս ծառայ Տոյ իցէ ողջախոհութի՛ն՝ գիտեն աներկբայ, ապա ինքնին իմաստասիրեն՝ թէ ոչ Թողացուցանէր նա երբեք այսպիսեաց պատահարաց անցանել ընդ սուրբս իւր, եթէ այնու օրինակաւ կորնչել մարթ էր սրբութե՛ն՝ զոր պարգևեաց նոցա, և սիրէ՝ ի նոսա։

ԳԼՈՒԽ ԻԹ

Չինչ արժան է հաւատացելոյ Քրիստոսի սատանայի տալ առ անհաւատս ի Հիշատակել նոցա, Թէ Քրիստոս չ ապրեցոյց զնոսա ի Հիշատակացն մեղաց նոցա։

Ա.ՊԱՏՈՒԻՆ համօրէն ազգատոհմ գերագունի և Հիմարտին ոյ ունի զիւրն միաբանութեն, ոչ զպատիրն՝ զհաստատեալն ի յոյս անկայուն կամ զխրատահեղն իրաց · որպէս և զժամանակեան զկեանսն առանց զղջանալոյ կամ ապաշխելոյ, որով և յաւիտենականն · և երկրաւոր բարեօքըս իբր պանդուխտ վարին, և ոչ ըմբռնին ի վարս նորա · իսկ չարեաքն՝ հանդիսանան, և կամ յուզողութեն զան։ Ա.յլ նորա որք զհնդէս հաւատացելոյն առնուն ի կատականս, և ի հասանել երբեք ժամանակեան չարեաց իրիք ասեն ցնա, " Ա՞ր է ած քո ,, , Պշ · ի՝ · 4 · ինքեանք Թող ասացեն, որ են աստուածքնոցա, յորժամ զայն պիսին կրեն, յորոց զերծանելոյ վասն՝ պաշտեն զնոսա, և կամ պաշտելոյ արժանիս քարոզեն։ Ա յսն զի հաւատացեալն ունի պատասխանել · ած իմ ամենայն ուրեք մօտ է · ամենայն ուրեք բովանդակ · ոչ ուրեք երբեք փակեալ · որ կարողն է մատչել ծածկաբար, հեռանալ անշարժաբար · ի վշտագնեալնորա զիս ընդդիմակաց՝ կամ զիմ վաստակ քննել, կամ զմեղս պատուհասել, և զյաւիտենից վարձս ինձ դանձեալ պահել սակս բարիոք համբերութեն ժամանակեից չարեաց · բայց դուք ոմ էք, ընդ որոց արժան իցէ խօսել անգամ զաստուածոյն ձեռոց, Թող Թէ զայն իմիք, որ " Ի՞հարկու է ի վերայ ամենայն կուռս ։ Ի՞մենայն կուռք հեթանոսաց դևք են · այլ տէր զերկինս արար ,, · Պշ · ղ՝ · 4 ։

ԳԼՈՒԽ Ի.

Ջախգ յաճեմալի բարեկեցութիւնս ինդբերն յոբանալ՝ որ միանգամ քրիստոնեական գաւուցս ընդդէմ լեզուագործին։

Լ՚ԹԷ Ակիպիոն՝ Լասիկա էրբեմն ձեր քահանայապետ՝ միևդեռ կենդանի կայր, այն զոր՝ ի տագնապի կարբեդոնեանն պատերազմին ընտրեաց ծերակոյտն իբրև ամենալաւ այլ՝ զլսիսի խնդրելոյ առ ընդունելոյ զդիւշէական փուխգեան, յորոյ և՝ ի տեսլենէն Թերևս պատկառէիք, արդարև նա ինքն զձեր յանդգնութիւդ սանձահարէը։ Վ՚անգլ առ ինչ արդեօք վշտանալով ձեր ընդ ձախող պաշտաօնս, զժամանակս քրիստոնէութեան։ բայց զի ցանկայք անվտանգ ունել զհետաոսիրութիւնդ ձեր, և զեղևանալ յանառակ գնացս՝ անխուսն բնաւ դառնութեան վշտաց։ զի ոչ յայն սակս՝ ի խնդիր էք խաղաղութեն և առատութեն ամենազգի ստացուածոց՝ առ արժանապէս՝ ի վար արկանել զայսոսիկ բարիքս, այլ և պարկեշտութեն, զգաստութեն, չափով և բարեպաշտութեն, այլ զի յեռասամիտ շրայլութեն ազգ ազգ հեշտութեց կալ տարեսցին։ և՝ ի դիւրութեց անտի այն չարիք յորդեսցեն՝ ի վարս, որ քան զնուժ ադուժ թշնամիս յոռեգոյն են։ Սակայն Ակիպիոն այն ձեր քահանայապետ, այն ամենալաւ այլ ըստ դատաստանի Համօրէն ծերակուտին, երկուցեալ յայդ՝ ի ձերմէ թշուառութեն, ոչ Համաներ թե դիմամարտան յայնժամ Հռովմէական տերութեն Կարթագոն բարձցի՝ ի միջոյ, և Կատոնի՝ որ զաւերութեն սնդեր, կայր Հակառակ։ կասկածեալ թե անձանց վատաց՝ թերևս նամի ի անկասկածութեն։ և իբր որբոց դաստիարակաջող, նոյնպես քաղաքացեաց կարևոր է ահարկուն՝ և Կր ոչ սխալեաց նա՝ ի կարծիսն, յարդեանց գործոյն Հաւատաւ լիմ՝ եղեալ բանիցն Ձմարտութեն։ Վ՚անգլ՝ ի բնաջինջ լինելոյ Կարթագոնի, գոռ ահարկուն այն Հռովմէական

սէրուԹիւն դատ վատԹարեալ և ապականեալ. և յայնմ հետէ այնպիսի յորդեցին չարիք՝ ծնունդք յաջողուածոց, մինչև խոպան լուծեալ նման և քայքայեալ քաղաքականն միաբանուԹէ մոլեգին և արիւնագործ խռովուԹիք, և ապա իբր շարս իմն պատճառաց չարաց այնչափ կոտորածք գործեցան քաղաքային մրցմամբք, այնչափ արիւնահեղուԹիք, այնչափ անյագուրդ աւարառուԹիք և յափշտակուԹիք, մինչև նոքին հռովմայեցիք՝ որք ՚ի կարծեցեալ բաւ ըևկրօնուԹէ իւրեանց կասկած չարի ՚ի Թշնամեաց և ևԹունեին, ՚ի բարեկրօնուԹէնն զեղծանել՝ խժդժագոյնս կրեին ՚ի նոցունց քաղաքացեաց. և իշխանասիրուԹէն կիրք՝ որ ՚ի մարդկայնոյն ախտից յատակագոյն իմն ներգոյացեալն էր ՚ի բոլորումն հռովմէական ժողովրդեան, կետ այնր ՚ի սակաւս բռնադոյնս զօրացաւ, և գինացեալն նիւնա և խռնջն կալաւ ընդ լծով ծառայուԹէ։

ԳԼՈՒԽ ԼՂ.

Ցխորդ յառաջաւամբ ախտից առեալ ՚ի հռովմայեցիս սիրոյ ազատուԹեանն առփաղք։

Վ[ԱՆԶԻ եղբ արդեօք հանդիսատ առնոյր իշխանասիրուԹէն յամբարհատաճ ոգիսն յայնոսիկ, բայց յորժամ անցեալ ընդ զանազան պատիւս՝ հասանէր մինչև ՚ի Թագաւորականն հարստուԹիւն։ Խոկ պատուոյ մի գՀետ միոյ յաջողեցեալ կարողուԹէն ոչ էր, Թէ ոչ փառասիրուԹէնն զօրանայր։ Այս փառասիրուԹէն ոչ զօրանայր երբէք, բայց ՚ի զեղծանել ժողովրդեանն ազատուԹիւնէ և հեշտասիրուԹէ։ Ա[ՐԴ ժողովուրդն ՚ի բարեբաստուԹէ ժամանակի եղև ագահ և հեշտասէր. յորմէ զգուշանալ ասէր խոհական դատմամբ Ա[ասիկան այն, յորժամ խրատ տայր մի ջնջել զԱ[արքեդոն զքաղաք Թշնամեաց՝ զմեծն և զօրաւոր և զազմագանձ. որպէս զի հեշտուԹիւն յերկիւղէ ընկՀեսցի։

հեշտութի՛ ընդհեալ մի՛ զեղխացի. և՛ ի խափանել զեղ-
ծութենէն, մի՛ ազահութենէն ձարակեացի. Այլ զայս արկեալ
աթոռիցս այսոցիկ ծագկեր ասպա և բարգաւառեր առա-
քինութի՛ պիտանի քաղաքին, և անշարժ մնայր ազա-
ռութենէն՝ առաքինութե՛ պատկանաւոր.

Յաղագս այսր պատճառի՛ ի դոյն իսկ՛ ի նախահոգածն
և հայրենասեր նախանձուն բերեալ նոյն ինքն ծեր քա-
հանայապետ, այն որ՛ ի ծերակուտէ ժամանակին ամե-
նեցուն հաւանութե՛ ընտրեցաւ ամենալաւ այր, զոր ստէպ
ասել արժան համարիմ, արդեւ զծերակոյան՛ ի կանդնե-
լոյ Թատրոնավայրն՝ որպէս խորհեալն իսկ էր և յօժա-
րեալ. և հզօր առենախօսութե՛ հաւանեցոյց մի՛ ներել
յուսական մեղկասիրութենէն սպրդել յառնացի վարս հայ-
բենեաց, և մի՛ օտարոտի վատութենէն լինել համահաւան
առ՛ի մեղկելոյ և տկարացուցանելոյ զհոգեվիճակն ա-
րութե՛. Ա՛յնչափ պատուական եղեն բանք առնն, մինչև
յորդորեալ խոհական ծերակուտին՝ հրամայեաց մի՛ դը-
նել այնուհետև և զնստարանն անգամ զոր սկսեալն էր
քաղաքացւոց ըստ ժամու տեսարանաց խաղուցն՛ ի կիր
առնուլ. Այն այլ քանի և առաւել հոգոցութե՛ ընդեալ
էր արդեօք՛ ի Հռովմայ զխաղսն Թատրոնականս, եթէ
համարձակեր ընդդէմ կալ իշխանութե՛ նոցա զորս աս-
տուածս համարէր, և ոչ իմանայր թէ գնա՛ք են նորա վնա-
սաբերք. կամ եթէ իմանայր, առաւել հաշտ ունել զնոսա
ընտրե՛ քան արհամարհել. Այանգի և ևս յայտնեալ էր
առ հեթանոսս վարդապետութե՛ն վերին, որ հաւատովք
սրբեալ զսիրտս, առ՛ի ստանալոյ զերկնայինսն և զևս գե-
րիվերոյս՝ խոնարհ աստուածապաշտութե՛ փոխարկէր զդ-
մարդկանս ախորժակ, ազատեցուցեալ յիշխանութե՛նէ
դիւացն ամբարտաւանից.

ԳԼՈՒԽ Ի՛Ն

Յաղագս գրութեանն Թաւրձնական խաղուց։

Ա՛յլ, սակայն գ[ի]տասջիք՝ այք այսոցիկ անդէնք էք, և որ անդ իմանալ ձեւանայք՝ յուշածէք. զուք ասեմ՝ որ քրիմ[ի]ն ջնջող հակառակ ազատեցուցչին զձեզ յայսպիսի տեղանց, խաղք Թաւրձնականք, անառակութեանց տեսարանք, ուշնախնեաց խնդիրքն ձեր՝ ոչ ի մարդկան ախտասիրութենէ, այլ աստուածոյն ձեր հրամանաւք կարգեցան ի Հռովմ՝ Կերեւելի և ս էր՝ զնա ինքն Վիկիլիոս պատուել ձեզ ածակերպ, քան պաշտել աստուածս այնպիսիս. զի այն աստուածք ոչ լսէաղ այնք ինչ էին քան զքրմապետ իւրեանց։ Վերամուտ լեռութ, եթէ արդեաք միտք ձեր արբեալք յերկար մոլորութիք տացեն ձեզ առողջս ինն խորհրդածել։ Պատուածքն ձեր առ ի փարատելոյ զմարմնոյ ժանտ ախտս՝ պատուիրէին խաղս Թաւրձնաց ձօնել ինքեանց. իսկ քրմապետք զնոյն զԹաւրձնաց կառուցումն արդելոյր՝ առ ի զգուշանալոյ ի հոգւոյն ժանտ ախտէ։ Կեթէ լուսով իւիք մնաց առաւելութեն ինն տայք հոգւոյ քան զմարմնոյ, ընտրեցէք արդ եթէ զո՞ պաշտիցէք։ Վանգի և մարմնաւորն այն ժանտ ախտ ոչ եթէ այնու դադարեաց, իբրև զի խնդիրն մոլութեն Թաւրձնական խաղուց փոխանորդեաց ի հոգւովուրդն պատերազմաւոր՝ յընդելեալն ի խաղուց և եթէ կրկիսականաց յատպարիսի. այլ զի խորամանկութեն այսոցն պղծոց տեսեալ զմտալուտ ի դէպ ժամու դադարումն ախտին՝ հնարեցաւ այսու պատճառանաւք զևս դժնդակն և զբաջհաձոյ ինքեան զախտ՝ ոչ ի մարմինս, այլ ի վարս անդր ի ներքս խառնել։ որ և այնչափ խաւարաւ զանձինս եղկելեացն կուրացոյց, և այնպիսի տձևութեն գարշացոյց, մինչ զի և արդ իսկ՝ որ անհատատալն արդեաք Թուեսցի յեռանոց յաւերժ քաղաքին Հռովմայ՝ հարեալքն ի ժանտ ախտէ անդ

տի, և որ փախուցեալք սպրել կարացին ՚ի Կարբեդոն, հանապազօր այլ զարամբ եղեալ ՚ի Թատրոնս մղեզնէին ՚ի գործ կատակերգուաց։

ԳԼՈՒԽ ԼՑ

Յաղագս սխալին հռովմայեցւոց՝ որք Հայրենեացն աւերածով ոչ զգաստացան։

Ո՞ Թափեալ ուղեղք, առ ինչ այդչափ՝ չասեմ մոլորութեն, այլ կատաղութեն. զի ուր ընդ ձեր կործանումն ողբային ժողովուրդք արեւելից, որպէս լուաք, և քաղաքք մեծամեծք ՚ի բացարձակ գառառս՝ սուգ հասարակաց առնուին և կոծումն, դուք Թատրոնս խնդրէիք, անդր մտանէիք, խուռն ժողովէիք, և զանմտագոյնս քան զորնախն՝ գործէիք։ Ընդ այսահաւոգւոցն արածև ախտ ժանտ, ընդ այսեղծումն բարեկրօնութեն և համեստութեն խեթայք Ակիսիան, յոր ժամ Թատրոնացն շինելոյ ընդդէմ գնէր, յորժամ խորհէին թէ ՚ի բարեբաստութեն դիւբաւ է զեղծանել և վատնիլ յորժամ ոչ կամէր անկասկածս կալ ձեզ յերկիւղ Թշնամեացն։ Վանդի ոչ ևթէ բարեփառ զհասարակաց համարէր պետութեն, որոյ պարիսպք հաստատուն կան և վարքն զաղիպտուն։ Ա՛յլ առ ձեզ առաւել ազդեաց խաբէութեն դիւացն ամբաշխատաց, քան յառաքինեաց որեբոյն խրատ զգուշութեն։ Ա՛յդ պատճառք էն, զի զայրիան զոր առնէիքդ, չկամիք անձանց ձերոց զրել. խակ զայրիան զոր կրէք՝ քրիստոնէութեն դարու վարկանիք. քանզի և ոչ ՚ի ձերում անդորրութեն զխաղաղութեն տերութեն խնդրէք, այլ զանպատուհաս զեղխութեն, որք յաջողակօքն յոտացեալք չմարթացայք ձախողակօքն յուզղութեն դալ։ Ա՛յն Ակիսիան կամէր զանգիտել ձեզ ՚ի Թշնամանէն՝ առ ՚ի չյուծանելոյ ՚ի զեղխութեն. դուք Թշնամանէն կոխան եղեալք և ոչ այնու զՀերշտութեն սանձեցիք. կորուսիք զառատպանացն շահեկանութեն. եղայք ամենայնիւ ողորմելիք, և վատթարագոյն և կացիք ինացիք։

ԳԼՈՒԽ Լ՟Դ

Յաղագս գԹուԹՆն ոյ՝ի մեղսացուցանել զաւերումն Հռոմայ։

Լ՟Ի սակայն այդ զի տակաւին կենդանի էք, ՚ով հնարՀ է, որ խնայեալ՝ի ձեզ ազգ առնէ՝ ուղղիլ ապաշխարու֊Թի՛ր, որ ապաշնորՀացդ ձեզ պարգևեաց՝ զի յանուն ծա֊ռայից նորա կամ՚ի տեղիս վկայից նորա ապրեիք՝ի ձե֊ռաց Թշնամեացն։ Հռոմուլոս և Հռեմոս՝ որպէս ասի, կարգեցին զՀռոմ քաղաք ապաստանի, առնելոյն որ փախչէր անգր՝ լինել անպարտ յամենայն մեղս։ Կա֊մեցեալք բազմամարդացուցանել այսու զքաղաքն նորա֊կերտ։ Ընդարեւ տիկ ինն հրաշազան նախանշարեալ առ՚ի պատիւ Վէնի զնոյն հրամանատարեցին կործանիլ քա֊ղաքին, զոր չինողք նորա կանխաւ հրամայեալ էին։ Լ՟ե զինչ ևՒ՟ եԹէ նոքա զայդ արարին յաւելուլ զԹիւ քա֊ղաքացեաց իւրեանց, ուր սոքա արարին զնոյն առ՚ի զքաղ֊մուԹԷ Թշնամեաց իւրեանց պահելոյ։

ԳԼՈՒԽ Լ՟Դ

Յաղագս որդւոց եկեղեցւոյ Թաքուցելոց՝ի մէջ ամբարշտաց, և վասն որ յեկեղեցւոջ կան սուտ քրիստոնէից։

Ո՟Ղ ՅՈՍՈՒԿ և զայլս սոյնպիսիս՝ որպէս և յաՀաւատոյս և դիւրաւ մատԹիցէ, ունի առ Թշնամին պատասխանել Համօրէն տունն Վէնի՝ՀՒն մերոյ, փրկանաւորեալ նովաւ և պանդխտեալն քաղաք արքային Վէնի։ Յիշէ և անշուշտ ԹԷ՝ի Թշնամեաց իսկ միջն ծածկեալ կան՝ որ քաղաքա֊կիցք լինելոց են։ զի մի կարծիցէ ԹԷ՝ի զուր ինչ Համ֊բերէ եկեղեցի և ոխացելոյն այնոցիկ, մինչև ընկալցի

զնոսա ՚ի խոստովանութիւն. որպէս և ՚ի նոցայն Թուոյ ունի յիւրեան քաղաքն այլ ցորչափ նշդեհ կայ յաշխարհի, զոմանս հաղորդակից խորհրդոցն, այլ ոչ համադասելիս ՚ի յաւիտենից մասին սրբոց, որք այժմ կէս մի գաղտնիք էն և կէս յայտնիք, որք և ձայնակիւք նոցունց Թշնամեաց՝ ոչ զանգիտեն տրանջել հակառակ այլ, զորոյ գիտորհուրդ յանձինս կրեն, մերթ ընդ Թշնամիս զՅաստրոնս ընուն, մերթ ընդ մեզ զեկեղեցիս։ Վակայն և ընդ զգաստութեի ոմանց ոմանց յայտնիսեաց չէ պարտ շատ անյոյս լինել եթէ արգարեւ գոն և ՚ի յայտնի Թշնամիս անդ ծածկապէս սահմանեալք ՚ի բարեկամութիւն,Թէպէտ և ինքեանց իսկ անծանօթք։ Վասն զի երկու այս քաղաք խառնեալ էն յիրեւարս յաշխարհի աստ, մինչև ՚ի գատաստանին յետնում զատանիցին։ Դէս զոր միանգամ արժան Թուի ասել յաղագս սկսման սոցա և յառաջանալոյն և պարտուպատշաճ կատարածին, Հաստուցից որչափ յաճախաստ գտից օգնութիւն առ ՚ի պարծանս քաղաքին այլ. որ և հրաշափառագոյն բարձրացի ՚ի հակառակէն, մերձ դնելով իրերաց։

ԳԼՈՒԽ Լ.

Զորոց կոչ առաջի կայցէ մեզ խոսել յղինի Ճառիդ։

ԲԱՅՑ ինձ ասել այլեւս ինչ ընդդէմ նոցա՝ որք զՀարուածոս Հռովմէական պետութենն պատկանեն մերում կրօնից, իբր զի արգելու զոհելոյ նոցա։ Վանզի յուշ ածել արժան է զչարեացն՝ որպիսիք և սրբանիք ՚ի միտս գայցեն, կամ որչափ բաւական Համարեսցին, զորս կրեաց այն քաղաք կամ գաւառք ընդ նոցա իշխանութիւն անկեալք, մինչ չև խափանուսին լեալ էր զոհագործութենէ նոցա։ Վանզի զայն ամենայն զչարիս մեզ գրեին անշուշտ, եթէ յարմար Ճանուցեալ էր նոցա մերս կրօնք, կամ

նոյնպէս արգելոյր զնոսա յանսուրբ պաշտամանցն։ Յու-
ցանել դարձեալ արժան է՝ որպիսի էին ընթացք նոցա, և
յոր սակս կամեցաւ Աչմարիանաճ ձեռն տալ նոցա յընդ-
ձակութիւն տէրութեանն. ընդ որոյ իշխանութիւնք կան ամե-
նայն թագաւորութիւնք. և թէ զիա՛րդ ոչ ինչ օգնեցին առ
ի նոցանէ աստուածքն կարծեցեալք. նա ա՛րշաւի պատրա-
նօք և ստութիւնք զեան գործեցին։ Յետ ամենայնի առ
այնոսիկ աստուցաւ՝ որք ի քաջայայտ տարացուցից խոյ-
տառակեալք և յաղթահարեալք՝ գուն գործեն հաստա-
տել, թէ ոչ սակս առաջնիկայ կենացս չահու պաշտել ար-
ժան է զդիս, այլ վասն օգտիցն որ յետ մահու։

Ա՛յս խնդիր թուի ինձ առաւել տարժանելի և ա-
նօսրագոյն վիճաբանութեան արժանաւոր. իբր զի հա-
կառակ իմաստասիրաց կայ ի սմա Հառաքանել՝ ոչ յետ-
նագունից ոմանց, այլ որք առ նոսա գերափառագոյնք
ծանուցեալ էն, որք և ի բազումս ինչ ընդ մեզ միաձայ-
նին, այս է՝ յաղագս անմահութեանն հոգւոյ, և թէ ա՛ծ
Աչմարիա արարչագործեաց զաշխարհ, և էնորա նախախ-
նամութեանն՝ որով զտիեզերս ամ ղեկավարէ։ Ա՛յլքանդի
և զսոսա վանել արժան է՝ յոր ինչ միանգամ հակառակ
մեզ խորհին, ոչ պարտ է մեզ զայսու կարևոր գործով զանց
առնել. որպէս զի զնոցա զամբարիշտ հակառակագրու-
թիւնն ի բաց մերժեալ՝ ըստ առ յայ պարգևելոյ զօրու-
թիւն հաստատեալ յուցցուք զքաղաքն ա՛յ, զՀնչմարիանն
բարեպաշտութիւն և զնծպաշտութիւն, որում և եթէ ստու-
գութիւնք խոստացեալ է երանութիւնն մշտնջենաւոր։ Ա՛յս
լեցին ասպա Հանգամանք առաջնիկայ մատենիս. զի այսու-
հետև զկարգագրեալսդ նորոգ սկսուածս առցուք ի ձա-
ռել։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Յորում Ճառագրեալ յաղագս չարեացն անցելոց ընդ հառվմայեցիս յառաջ քան զՔրիստոս, մինչդեռ առա առաւածոցն պաշտան յաժիկ կայր, ցուցանի Թէ նոքին իսկ յառաջնմէ բան Թէշգրեցեալ առա առաւածոցն լցեալք էին չարաբարուԹ֊ե֊ամբ և ոգւոյ ախտիւք, զորս ևԷ֊ն չար, կամ յաւէտ չար համարեալ է. և Թէ չև ևս յայնցանէ ազատացեալք են։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս եղանակին զոր հարկ է պահել ի կարևոր խնդիրս ։

Ա֊ԹԷ մարդկան բարուցս խօԹամտուԹ֊ե֊ամբ ոչ ժպրծհեր ընդդէմ կքրել բանի բացերև չշմարտուԹ֊ե֊ն, այլ նոր֊քոյ արկանիր կենարար վարդապետուԹ֊ե֊ամբ իբրև դեղոյ զիւր տկարուԹ֊ե֊ամբ, մինչև յաճախին օգնականուԹ֊ե֊ամբ զուա֊ բեպաշտուԹ֊ե֊ան հաւատս ընկալեալ բժշկեսցի, ոչ բազում բանից պէտք էին առանց ողջամտոյ՝ և որք գիտեն պատ֊ շաճող բանիւք զիմաստս բացայայտել առ ի յաղԹահա֊ բելոյ զամենայն մտոտիակարծ մոլորուԹ֊ե֊ամբ ։ Այլ քանզի այն է ի ժամանակիս անմտացն մեծ և գժնդակ ախտ ոգւոց, զի չետ լսելոյ անգամ լինով զհաւաստաբանուԹ֊ե֊ան՝ որչափ պիտոյն է ի մարդոյ առ մարդ, նոքա զանբան մտածուԹ֊ե֊ամբ իւրեանց ջատագովէն իբրև հա֊ւաստի փաստ և չշմարտուԹ֊ե֊ամբ, վարեալք կամ՛ի Թան֊ձրագոյն կուրուԹ֊ե֊ամբ՝ որ և զլայտնիսն չտեսանել, և կամ ի խիստ յամառուԹ֊ե֊ամբ՝ որ և տեսեցելոյն հանդուրժէ ոչ, սորին վասն հարկաւորիմք ստէպ ձառել և զլայտնեաց, ոչ իբր ի հայեցումն տեսողաց մատուցանելով, այլ ի շո֊ շափել լիոն ձեռամբ որոց չտեսանելն ձեւանան ։

Ասացեալ լինիցի արդեօք հակաձառելոյ վախճան և սահ֊

ման խօսելոյ, եթէ արժան դատիցիմք տալ պատասխանի ամենայնի՝ որ անդադարելիք են՝ ի պատասխանել. Քանզի որք միանգամ իմանալ ոչ կարեն զասացեալն, և կամ դժմտութիւն խոստացեալք՝ թէ և իմանայցեն, անսան ոչ բնաւ, այնպիսիք՝ ի պատասխանել կան, և ըստ գրեցելոյն "Ի տարբառեալ խօսին զանիրաւութիւն ... Աշ. ՟ի ՟կ. և անխոնջք են յաշխատանել. և եթէ զհակառակաբանութիւնս նոցա հերքել կամիցիմք՝ քանիցս անգամ ժոլիրն երեսոք այնդեալք լցին՝ ոչ զոր ասեն խորհել, այլ թէ զինչ առ մեր Հառս ընդդէմ ասիցեն, տեսանես ապաքէն քանի՞ անեզրական է այդ, գժուարակիր և մտավաստակ Ո՞ման որոյ ոչ կամիմ, սիրեցեալդ որդեակ Ո՞արկեղնէ, ոչ զքեզ և ոչ զայլս՝ որոց այս մեր երկասիրութիւն սիրոյն Քրիստոսի ձրիապէս արբանեկեացէ յօգուտ, այնպիսի լինել դատիչս իմոց գրուածոց՝ զի միշտ խնդրիցեն պատասխանատուութիւն՝ ի լսել անդ հակառակ ինչ ասացեալ առ այսոսիկ ընդերցուածս. զի մի լիցի նմանիլ զրաւխորհուրդ կանանց՝ զորոց յիշատակէ առաքեալ. "Որ յամենայն ժամ ուսանին, և երբէք՝ ի գիտութիւն ՀՀշմարտութիւն ոչ հասանեն ... ԵՏՀ. ՟ի ՟ է.

ԳԼՈՒԽ Ե

Ցաղագս որ յառաջնում մատենի Հառեցելոցն:

Ա՞ՐԴ՝ ի նախընթաց գիրսն խօսել կամեցեալ իմ յաղագս քաղաքին այ, որոյ վասն՝ ի բովանդակ յայս գործ բուռն Հարի նորին օգնականութիւնք, եղև ինձ պատասխանի տալ նախ առ այսոսիկ՝ որք զայժմու պատերազմունս աշխարհակործանս, և մանաւանդ զարդի աւերուածն՝ ի բարբարոսացն ածեալ ընդ Հռոմ քաղաք՝ վերագրեն՝ ի կրօն քրիստոսական, իբր զի խափանիչ է նա դիւապաշտութեանն զհիւք սղճութեանն դից. ուր արժան էր նոցա

զայն ինչ առաւել ընծայել Քրիստոսի, զի յանուն նո-
րա՝ արտաքոյ սահմանի և սովորութեանէ պատերազմի՝
չնարհեցին նոցա բարբարոսք ազատ տեղիս նուիրական
ընդարձակս, յոր լեցին ապաստան. և ի բազում իրս այն-
պէս ի պատուի կալան զպաշտօնեայս Քրիստոսի ոչ
զնմարիտան միայն, այլև զկեղծաւորեալն առ երկիւղի,
մինչև զոր ըստ իրաւանց պատերազմի օրէն էր առնել
ընդ նոսա, ոչ գոլ օրէն ինքեանց վարկանէին։ Վասն ա-
պա ի ներքս անկաւ խնդիր, աւասիկ այսոցիկ ընծայիս
խնամոց հանդիպելոցն և ամբարիշտքն և անշնորհակա-
լըք. կամ զինքրդ նա և գժնդակացն ի թշնամեաց անտի
գործեցելոց՝ զուգակիրք եղէն բարեպաշտք ընդ ամբա-
րըշտաց։

Այս խնդիր յերկար հարցաբննելի էր, քանզի գլոլով
գիտէ արկանել ի հարցափորձ, տեսեալ զի ամենայն
հանապազորեայ պարգևք այ և կամ հարուածք մարդ-
կան՝ երկաքանչիւր միօրինակ և անխտրաբար անցանեն
բազում անգամ ընդ բարեկրօնս և ընդ չարագործս. նմին
իրի առ ի լուծանելոյ զսոյն ըստ պատեհիւ յանձնա-
ռեալս գործոյ՝ դեգերեցայ ի սմին առ վայր մի, առաւե-
լապէս ի սփոփումն սրբանուէր կանանց և մաքրասիրացն,
առ որս ի թշնամեաց անտի ի վերայ ածաւ ցաւ մեծ ա-
մենախածանութեանէ նոցա, թէպէտ և ոչ խախտեաց զպըն-
դութեանէ պարկեշտութեանէ նոցա. զի մի ապաշաւեսցեն նոքա
ընդ կենդանութեանէ, որոց չկայր ինչ ապաշաւել ընդ ա-
պիրատութեանէ։ Զհետոյ ապա դուշնաբանեցի առ այնո-
սիկ՝ որք զբրիստոնեայսն տառապեալս ի ձախորդութենէ
անտի, և առաւել զամենի հարստահարելոցն կանանց՝
թէպէտ ողջախոհաց և մաքրոց՝ անդուռն բերանով պա-
խարակեն, ուր ինքեանք անօրինագոյնք են և անամենի,
կարի լինն խորհածեալք և ի նախնի հռովմայեցւոց
անտի՝ որոց յոլովագոյնք են պերճ արարուածք գովելիք,
ի յիշատակարանս գրոց համբաւեալք. նա զի սոքա
ընդդիմամարտք իսկ են նոցին պարծանացն։ Վասն
զի հռովմ զհինաւրէականն և զմեծացեալն վաստակոք

նախնեացն , զոքա առաւել խրթնացուցին՝ մինչ շէն կայը , քան յորժամ աւերեցաւ , իբրև զի ’ի կործանել նորա՝ քարինքն անկան և փայտք . իսկ ’ի սոցա վարս՝ ոչ որմոց , այլ ոգւոյն անկան ամրութիւնք և զարդք աղջոյն , յորժամ աղիտագոյն ևս ցանկութիւնք կիզուին սիրտք նոցա՝ քան թէ հուրբ յարկածածուկք քաղաքին : Այսպիսի ասացուածովք հնչեցի զառաջինն գիրսն . յետ այնր ապա ’ի մտի եդի խօսել , թէ զի՞ր չարիս կրեաց այն քաղաք ’ի սկզբանէ անտի , կամ չինքեան , և կամ ’ի գաւառս նմին հնադանդեալս . որոց առհասարակ զբրիստոնէականս կրօնք ունէին դնել պատճառս , եթէ յայնմ ժամանակի համարձակագոյն վկայութիւնք քարոզեալք աւետարանին վարդապետութեն հակառակ սուտ և պատիր աստուածոց նոցա :

ԳԻ ՀԱԻԱՍ Գ

Զառաջքերութեն պատմութեց ’ի ցուցանել , թէ քանի չարիք անցին ընդ հռովմայեցիս , երբ դիցապաշտք էին , և չև էր տարածեալ հաւատք քրիստոնէութեն :

Ասացի քեզ յուշ լինել , զի ’ի յիշատակել իմում զայսոսիկ՝ տակաւին ընդդէմ տմարդաց խօսիմ , յորոց տգիտութէն յառաջ եկին և ոճակացն այն բան . Ընդբև պակասի . քրիստոնեայքն են պատճառ : Վասնզի են են առնոսա՝ որք վարժեալք յուսմունս ազատականս , սիրեն զպատմութէն , ուստի և այսոցիկ քաջ գիտակ են . բայց զի յատելութէն առ մեզ զրգռեսցեն զնսուսմանցն ամբոխ , չգիտել կրնձաւորին . և հաւանեցուցանել զնոսան ըզխառնիճաղանջն , թէ հարուածք որովք երբեք երբեք ըստ տեղեաց և ժամանակաց հարկ է տառապիլ մարդկան ազգի , ’ի վերայ զան ’ի պատճառս քրիստոնէական անուանն , որ հակառակ իւրեանցն աստուածոց՝ բարձրա-

քարոզ և գերապանծ Հանդիսիս ընդ Հանուր տարածա-
նի՝ ։ Այս յիշեսցեն նոքա ընդ մեզ, թէ միով չև Այնմ
եկեալ մարմնով, միով չև անուամն նորա նուիրն փառաւոր՝ զոր
յայտնեն՝ բացատծանուցեալ առ ժողովուրդս, յորպիսի
ազէտս անկան Հռովմայեցիք բազմապատիկ օրինակաւ.
և յայնոսիկ՝ թէ կարող ինչ էն, պաշտպան կացցեն իւ-
րեանցն աստուածոց, եթէ արդարեւ այնը աղաղակ պաշ-
տին նոքա՝ զի մի պաշտօնատարքն զայնոսիկս հրկիցեն չա-
բիս. յորոց եթէ դոյզն մի հրեացեն այժմ, ի մեզ արկա-
նեն զվնասն ։ Այանզի էր վասն Թողացուցին դիք ընդ
պաշտօնեայս իւրեանց անցանել չարեացն՝ զոր յասել
կամք, յորժամ Այնի անուամն հռչակ չև էր զնոսա զայ-
բացուցեալ, և ոչ պաշտամանց նոցա խափանած արա-
բեալ՝

ԳԻ ՅԱԻՆ Գ

Ոչ բնաւ պատուիրանս բարեկրթութեանն ընկալան դիւցապաշտք յաստուածոց
իւրեանց, և ի պաշտամունս նոցա զգաչրչութիս ամենայն գործէին ։

Այ նախ առաջինն, զիարդ ոչ հոգ տարան աստուածք
նոցա, զի մի պաշտօնեայքն ի չարաչար վարս զառածանի-
ցին ։ Այանզի Ձնմարտին այ յիրաւի էր անփոյթ առնել
զայնցանէ՝ որք ոչն զնա պաշտէին. իսկ այն աստուածքն՝
ընդ որոց պաշտամանն խափանուցին տրանջեն մարդիկն
ապաստաւորք, հիմ արդեօք առ բարիոքն կեալ ոչ մի օ-
րինս աւանդեցին պաշտօնէից իւրեանց ։ Այպաքէն իրա-
ւացի էր՝ զի որպէս սոքա նոցա պաշտամանցն խնամ տա-

Եղիսէ մարգարէ Հանէր յաստուածսն։ Գ· Թագ· ԺԸ· 18։ Գ· Թագ· Ը· 31։
Ոչ ի միս առնուին թէ երկնցին պաշ-
տան և Բահաղոյ՝ կուռքեր ի վերայնո-
յա զբոխան ետ, յորոց դիւրիկ էին
ետ ապաշխէն՝ և ոչ եթէ պատուսորք։

1 Ի վազ ժամանակաց ընտանի սո-
վորեցին և ամբարշտեալոց՝ յետա-
պաշտս անդր արկանել զինեա չարեաց
իրենք պատահելոյն։ Աբեսաբ արքայ Ի-
րայելի զհարուստ երեշտուհին ի դէմն
Եղիայի պատճառեալ, և Յովհամ ար-
քայ զանիրել Սամարիայ՝ ասելով՝ ընդ

նէին, նոյնպէս աստուածքն գործոյ սուրբ առնիցեն խըն-
նամ։ Ա՛յլ նորա պատասխանեն. իւրաքանչիւր ոք իւրով
կամաւն չար է։ Այս ո՞վ ոյդ ուրանայ. սակայն անկ էր
խորհրդականացն աստուածոյ՝ զհրամանս բարեկրթնու-
թե՛ ոչ եթէ թաքուցանել՝ի դիւցապաշտ խուժանէն, այլ
յայտնի քարոզութե՛ աւանդել, ընդ ձեռն պատգամա-
խօսացն միաբան յանդիմանել զնեղութեալս, յայտնապէս
պատուհաս սպառնալ չարագործաց և վարձս խոստանալ
բարեգործաց։ Այ՛րը այսպիսի ինչ բնաւ էղև լսելի համար-
ձակաձայն բարբառով՝ի տաճարս դիցնոցա։ Վտաբև մե՛ք
երբեմն՝ մինչ պատանիներ էաք,՝ի տեսարանս և՝ի խեղկատա-
կուիս անսուրբ պաշտամանցն. տեսանէաք զմոլեգնեալսն,
ունկն դնէաք նուագածուացն, զուարճանայաք ընդ ան-
արժան խաղալեկութե՛նն նուիրեալս աստուածոց և աս-
տուածուհեաց, յանուն Ալեքստեայ կամ երկնայինն
կուսի, և Աերեկինթեայ մօրն բոլորից. յորոյ՝ի նշա-
նաւոր աւուր լուացմանն՝ յանդիման զահաւորակի նորա
այսպիսի ցուցս հրապարակաւ երգածայնելին ապիրատ
թատրոնականք, որպիսիս ոչ վայել էր լսել և ոչ մեր աեւ-
նակալի ուրուք կամ այլոց արանց հաւատացից, այլ և ոչ
մեր նոցունց խակ կատակերգուաց, թող թէ մեր աս-
տուածոց։ Այ՛ան զի գոյ բնաւորեալ պատկառանն ինչ
մարդկան առ ծնողս, զոր ոչ և անզգամութե՛ն խլել կա-
րող է։ Այ՛պաքէն զգաստութե՛ն զայն յայրատ ասացուա-
ծոց և արարածոց՝ խաղալեկութ անգամ ամաչելին զբօ-
սանաց պատճառանօք կատարել առ տեսին յանդիման
մարդոյ իւրեանց, զոր հանդիսապէս առնելին յանդիման
մօրն աստուածոց՝ի տես և՝ի լուր խուռն բազմութե՛ն
արանց և կանանց. և եթէ այն բազմութե՛ն՝ի վայրա-
կոյդ բարուց ձգեալ անդր ժողովիւր, անշուշտ ամենով
ունէր մեկնիլ արատոյ պարկեշտութե՛ն։ Այ՛ր ինչ տա
սեղանակապտութե՛նք, եթէ այդպիսի ինչ նուիրական
պաշտամունք սեղանոց. կամ՞ որ ինչ լուալիք, եթէ այդ-
պիսի են բաղանիք։ Այ՛ւ զայսոսիկ՝ խորտիկս անուանելին,
որպէս թէ խրախութե՛ն կոչնոց կատարիւր, յորում այսքն

պիղծք իբր իւրեանց Համադամաք յօրանային ։ Օ՛ւ ա՛ չառնուցու՛ ի միտ՝ Թէ որպիսեաց ոգւոյ իցէ զուարճա-նալ ընդ գարշուԹիս, բայց Եթէ կամանգէտ լինիցի Եթէ կայցէն բնաւ ոգիք պիղծք՝ աստուածոյ անուամբ կեղծաւորեալք, և կամ ինքն զայսպիսի վարիցէ կեանս՝ յորում առաւել քան յայլ Ձնմարտէ ՛ի սոցանէ ակն ունիցի քաւուԹե և ՛ի ցասմանէ սոցա երկնչիցի ։

ԳԼՈՒԽ Ն

Յաղագս զազրագործուԹե՛ց՝ որովք աստուածոյն մայր մեծարիւր յիւրոց պաշտանէից ։

ԶկԱՄԻՍ դատաւորս առաջնիկայ իրացս զայնոսիկ ունել, որք ընդ ապականագործ ախտիցն սովորոյԹս առաւել պարարին՝ քանԹէ պայքարին. այլ զ՝Ասիկան զԱՖրիկիոն՝ զամենասաւ այրն ընտրեալ ՛ի ծերակուտէն, յոյր ձեռն ընկալեալ եղև դիւօշեալն դիւին այնորիկ, և ՛ի մայրաքաղաք անդր բերաւ ։ Ամոզ ասասցէ մեզ, կամիր արդեօք՝ զի մայր իւր այնպէս բարեացապարտ գոցի առ տէրուԹիւնն, մինչև պատիւս աստուածականս նմին սահմանել. զոր օրինակ գիտեմք Յունաց և Հռովմայեցւոց և այլոց ևս ազգաց աստուածարեալ զմահկանացուս ոմանս, զորոց զառ ինքեանս երախտաւորուԹիւնս կարի մեծագրեին, կարծեցեալ զնոսա անմահացուս եղեալս, և զուգաԹուեալս ընդ աստուածոց։ Ընդարեւ Ավիպիոն զլաբեաստուԹե՛ զայսպիսի ցանկայր իւրոյին մօրն՝ եԹէ էր մարԹելի ։ Այլ եԹէ դարձեալ հարցանէաք նմա, եԹէ կամիր արդեօք ՛ի մեծարանս անդ կատարել և ըզխայտառականսն զայնոսիկ, ոչ ապաքէն ազազակէր՝ առաւել ընտրելի մայր իւր անկեալ կայցէ անզգայ անկենդանական, քան Թէ կեալ աստուածուհի՝ առ ՛ի զայսպիսին լսել ախորժանօք ։ Ահա լիցի, Թէ առնական ոք հռով-

Մ. ական ժողովրդական՝ մտաւոր այսպիսի, որ զԹատրա-
նացն շինուԹիՒն ի քաղաքի անդ քաջ որերոյ արդելոյր,
այսպիսի պաշտօն ըղձանայցէ մօր իւրում իբրու ածու-
հւոյ, որ որպէս տիկին որ գաղջէր յայսպիսի բանից ։ Ա-
իւիք հաւատայր նա՝ ԹէԹ գալէլի կնոջն պարկեշտուԹիՒն
այսպէս այլափոխեսցի ածական անուամբ, մինչև յանձն
առնուլ այսպիսեաք մեծարանօք պատուիլ ի պաշտօնէից
իւրոց, որպիսեաք եԹէ նախատեալ էին զոք առ կենդա-
նուԹիՒն նորա, նա խնայր զակնջն և ի բաց գնայր ի
տեղւոջէն, և ամաչէին իսկ վասն նորա և մերձաւորքն և
այլն և որդիքն ։ Ա՝ ասն որոյ այսպիսի աստուածոյն մայր՝
զորպիսի մայր ունել ամաչէր և սինքերն ի մարդկանէ, առ
ի պատրելոյ զՀռովմայեցիս՝ խնդրեաց զայրն առնեալ,
ոչ զի խրատեալին և օգնելով արասցէ զնա այսպիսի, այլ
զի ստուԹիՒ խաբեսցէ, կնոջն այնմիկ նմանեալ, զորմէ գր-
րեալն է ։ “ Ա՛ին չար զարանց պատուականաց զոգիս որ-
սայ ,, ։ Ի՛ոհ ։ ը. 26 ։ որպէս զի քաջաբարոյ այրն այսուիկ
իբր ածայնով վկայուԹիՒ բարձրամտեալ, և յիրաւի առե-
նալոյ զինքն վարկուցեալ, ոչ ևս ի խնդիր լինիցի ստոյգ
ածպատուԹիՒ և կրօնից, առանց որոյ առնային հանճար
գովելի՝ հպարտուԹիՒն ունայնանայ և անկանի ։ Ա՛այս
ուրեմն նենգագնաց ևեԹ խնդրեաց աստուածուհին այն
լայրն առնալոյ, յորժամ զայսպիսի իրս խնդրէր տա-
ռախմբուԹիՒ, որպիսիս արք լաւք գաղջին տեսանել յիւ-
րեանցն խրախճանուԹիՒնս ։

ԳԼՈՒԽ Ը.

Դիք հեԹանոսաց ոչ երբէք զարի վարուց ուսուիՒն առնէին ։

ՅԱՑՍՄ պատճառի՝ ոչ փոյԹ լինչ կալան այսպիսի աս-
տուածքն զվարուց և զկենաց լաւուԹիՒ քաղաքաց և ժո-
ղովրդոց՝ յորոց պաշտօն առնուին, մինչ զի առանց միոյ

իրիք ահացուցիչ հրամանատրութեանն՝ Թողացուցանէին նոցա մոլիլ և վատթարանալ ահագին և նողկալի չարեօք, ոչ յագաւրակս միայն և յայգիս, ոչ՝ի տան և կինս, և ոչ՝ի մարմին անդր՝ որ մնաց է ծառայական, այլ՝ի նոյն իսկ՝ի միտս, և՝ի բուն հոգին՝ որ կառավար է մարմնոյն։ Ապա եթէ արգելուին զայդպիսիս, աղէ Թող զայդ մեզ ցուցցեն սիրասէս և հաւատոյ արատցեն, և մի մեզ՝ի գէմս ածցեն զանճանօթս ոմանս մրմունջս՝ ընդ ունկն սակաւուց չընկալեալս, և մի պարծեսցին ունել զգաղտնածածուկ ինչ աւանդս երկիւղածութեանն, որովք իցէ ուսանել զվարուց լաւութեանն և զողջախոհութեան. այլ ցուցցեն մեզ, կամ յիշեցուսցեն տեղիս յերբեմն ժամանակի նուիրեալս սակս այսպիսեաց ժողովմանց, ոչ ուր խաղք լինիցին անառակ երգօք և շարժմամբք կատակերգուացն, և ոչ ուր փախուցականքն՝ տօնախմբեսցին՝ անպատկառ գարշանօքն առ լեառնք, որք արդարեւ փախուցիչք էին աստեղոյ և հաճոստութեանն. այլ ուր քարոզեսցի ժողովրդեան Թէ զինչ աստուածքն հրամայիցեն առ՝ի սանձել զագահութիւն, ՚ի խորտակել զիշխանասիրութիւն, կարձել զզեղխութիւն. ուր ուսանիցին տառապեալքն, զոր Պետրոս ուսանել խրատէ յասել անդ.

“Ուսարուք եղկելիք դուք,
Ո՛րպ հրաց պատճառսըն ծաներուք։
Ամէն զինչ եմք, առ ինչ ծընաք.
Նէ զո՛ր հրաման գործոց առաք։
Կամ զիարդ դիւրաշրջիկ,
Նէ ուստ ուստեք կենացս աստիք։
Ո՛ր չափով սեր արծաթոյ,
Նէ չինչ արժան ցանկանալոյ։
Կարծրանիւթ դրրամ դժնեայ,
Ո՛ր ունիցի պիտոյից շահ.
Հայրենեաց և ազգայնոց,
Որչափ բաշխոյք լիցի տըրոց։

1 Այն է Φιλάργυρα անուանեալ հանդիսք՝ի յիշատակ բարձման Թագաւորացն։

Ի կարգի յոր եդ Աստուած ,
Ընդնել զարժանն քեզ հրամայեաց ։ Ներից ։ ։
Ասացեն մեզ, յո՛ր տեղիս այսպիսի պատուէրքդ աստուա-
ծոյն կարդացեալ լինիցին , և դիցապաշտ ժողովուրդք
ստէպ լսէին . որպէս մեք ցուցանեմք զեկեղեցիս՝ի դոյն
սահմանեալս ընդ ամենայն կողմանս՝ ուր սփռեալ են
քրիստոսական կրօնք ։

ԳԼՈՒԽ Լ

Պիտան են դիւրքն խմաստասիրականք առանց ածային օրինադրութեան . ուր առաւել չարժեն զմոլեկան բարս արարք դից ,քան հրահանգք մարդկան ։

Ասաց Թերևս զիմաստասիրացն ուսումնարանս և ըզ-
ձառատանս նոցա մեզ յուշ առնիցեն ։ Այակայն նախ ա-
ռաջին՝ այնոքիկ ոչ հռովմէացւոյն էն , այլ Յունաց . կամ
եթէ այնու հռովմայեցւոց համարեալ , զի և յունաս-
տան եղև գաւառ հռովմէական , տակաւին ոչ աստուածոց
էն հրամանք , այլ մարդկան գիւտք . որոց վէճակեալ սը-
բատես հանձարոյ , ջանացան իւիք իւիք իմաստասիրելով
քննել՝ զինչ ծածկեալն էր յիւրաց բնութենս , զինչ՛ի
վարս յօժարելին էր և խորշելի , զինչ ըստ կանոնաց տը-
բամաբանելոյ ուղիղ կարգուածոյ յառաջ գայր , կամ
զինչ ըստ ոչ հետեւութեն էր , կամ դիմամարտ էս ։ Ա-
մենեքին՛ի նոցանէ արդարեւ մեծամեծս լինչ ըստ առ յայ
օգնականութենն հանձարեցեին , բայց մարդկապէս յետ-
նեալք վրիպեցան . մանաւանդ զի նոցայն հպարտութեն
արդարապէս հակառակ կայր ածայինն տեսչութեն , առ՛ի
ցուցանելոյ օրինակաւ նոցա՝ թէ ածապաշտութենն չհամա-
պարհ՛ի խոնարհութեն անտի վերելս առնէ . որով յայտ-
զեսցի այնուհետեւ մեզ կամաք չշմարտին այ և տեառն
մտանել՛ի քննութեն և՛ի հառս իրաց ։ Այլ սակայն եթէ
իմաստասէրքդ գտին լինչ բաւական առ՛ի զբարիսն վա-

րել կեանս, և զբանականն առանալ, քանիցն իրաւացի
եւս էր՝ այնպիսեացն զնածական ձօնել պատիւ. պրչատփ
լաւ եւս և պարկեշտագոյն՝ ի տաճարին Պղատոնի լինելը
նորին գրոցն վերծանութիւն, քան թէ ի մեհեանս դիւաց
կրձնաւիլ քրմաց Ալիպելեայ կամ Լուկայ չաստուածոս-
հոյն, իգացելոցն նուիրիլ, մոլեգնելոց ցեռուածս առնել,
և որ ինչ այլ խժական, կամ զազրատի, կամ երկոքուքը
եւս յոռութիւք սովորեցան լինել՝ ի պաշտամունս այնպի-
սեաց աստուածոց։

Ո՛չ արժան եւս էր առ՝ի խրատելոյ զմանկունս յարդա-
րութիւն՝ հրապարակաւ վերծանել զօրինս աստուածոց,
քան գովել յումեքեաս զօրինս և զկարգս առաջնոցն։
Վասն զի ամենայն պաշտօնեայ աստուածոց այնպիսեաց՝
անդէն՝ի գրգռել զնոսա հեշտութեն մահադեղուն եռացե-
ղոյ, որպէս ասէ Պէրսիոս, առաւել յայն հայի՝ թէ զինչ
Քրամազդն գործեաց, քանթէ զինչ Պղատոն ուսոյց, կամ
խորհեցաւ Կատոն։ Այլ ըստ այսմ պատմի առ Տերեն-
տիոսի, թէ պատանի ոմն անառակ՝ հայեցեալ՝ի տախ-
տակ նկարեալ յորմ, յորում գծագրեալ կայր՝ Քրամազ-
դայ անձրև ոսկի ցօղել՝ի ծոց Դանայեայ, զատագով
իւրումն զաղրագործութիւն կալաւ զայնպիսի անամօթու-
թիւն դից, պարծեցեալ թէ այնուիկ զաստուածոյ բերել
զնմանութիւն։ Այլ թէ զորո՞յ աստուածոյ՝ ասէ. Քրմպի-
սուհի, որ զերկնից խորանս ահեղաձայն որոտմամբ աստա-
նեցուցանէ. և ես մարդ դիւրագայթ զիա՞րդ չառնեմ։
ահա արարի զայն, և կամակաւ մնօք։

ԳԼՈՒԽ Ը.

*Ցազգս Թասբենական խազուց՝ յորս գիցն աստուած ոչ ասին գժկամակեալ
ընդ հրաստարակուն խրճանցն զգծագործութենց, այլ գան՝ի հաշտութիւն։*

*Այլ՝ասիցէ ոք. ոչ եթէ՝ի պաշտամունս աստուածոցն ա-
նանդէին այսոքիկ, այլ յառաստղաբանութիւնս քերթ ողոց*

Եմ ոչ են կամք ասել, Թէ խորհրդականքն այնոքիկ աղաչ-
ապատն և են քան զայսոսիկ Թատրոնականս . զայս և Էհ-
ասեմ Թէ որք ուրանանն՝ խայտառակին ՚ի պատմուԹիւնս
անաի . իբրև զի զնոյն խաղս յորս կան քերԹողացն ստեղ-
ծուածք, ոչ անգէտ ինչ յանձնառուԹ՚ի պաշտամունս դից
խառնեցին Հռովմայեցիք, այլ ինքեանք առաուածքն խառ-
հրամայեալ, և իբր բռնաղբօսելով ինն կարգեցին յատեան
հանել զնոսա, և յիւրեանց պատիւ ձօնել՝ զոր յառաջնում
գրին համառօտիչատակուԹիւնք քաղեցի, Վանդի ՚ի սաստ
կանալ ժանտամահսն՝ քրմապետացն հրամինաւ սահմա-
նեցան զառաջինն Թատրոնական խաղք ՚ի Հռովմ. և ո՞ չ
արժան համարիք՝ առաւել զայս յանձին բերել ՚ի վարուց
կենցաղս, որ ՚ի խաղն ՚ոճահրամանս Համարատակեալ լի-
նին, քան որ ստէպ ընԹերցեալ լինին յօրինս առ ՚ի մարդ-
կան մտածուԹիւնէ նիւԹեալս : ԷԹէ քերԹողացն ստեղծա-
բանուԹիւնք չնացող ձևանայր Թամաղդ, պարտ էր արդեօք
աստուածոցն ողջախոհագ զայրանալ և վրէժս պահանջել
զայնպիսի անպատեհս խաղարկուԹիւնս մարդկան ստեղծա-
նէին, և ոչ էԹէ անտես առնել զայնպիսի խաղուս : ԷԹատ-
րոնական խաղուց այսոքիկ միայն ներելիք են, կատակ-
երգուԹիւն և եղերերգուԹիւն . այս են՝ առասպելք քեր-
ԹողացՆ որք ՚ի տեսարանս կատարին, յօրինեալք՝ Թէ և
ըստ նիւԹոցն գժպատեհք, բայց ըստ առացուածոցն ոչ
այնչափ անպատկառք իբրև զայլս բազումս . զոր և ՚ի
գպրոցաց կրԹանս՝ որ Համեստք ասին և ազատականք,
՚ի մանկանցն պահանջեն ծերք՝ կարդալ և ուսանել :

ԳԼՈՒԽ Ը

Ջինչ խորհէին Նախնի հռովմայեցիքը, յարգելով գերթոզականն համաձակութիւն, զոր ցոյիք՝ դատաստանի ասուածոցն զհետ երթալոյ՝ ազատ Թոզին։

Ի՝ՍԿ Թէ զինչ հռովմայեցիքն առաջինք յազագս այսոցիկ խորհեցան, վկայէ Կիկերոն ՝ի գիրսն՝ զոր զհասարակապետութիւնէ գրեաց. ուր Կիպիոն առենախօսեալ ասէ. Կատակերգութիւնք, Թէ ոչ ներելք մարդկան կենացս սովորութիւն, ոչ բնաւ անպարտ առնել կարող էին զիւրեանցն ապիրատութիւնս։ Եւ Յոյնքն երիցագոյնք՝ պարսաւելի իւրեանցն կարծեաց պատրուակ իմն արկին, առ որս օրինօք իսկ ազատութիւն տուաւ, զի զոյր և կամիցի կատակերգութիւն, զուսմնէ և կամիցի, ասասցէ յականէ յանուանէ։ Ո՝ՎՆ որոյ որպէս ՝ի նոյն գիրս խօսի Կիկիլիոն Ո՝ՎՔրիկանոս, "Ո՝ՎՆդ ո՞ր ոչ ընդհարաւ կատակերգութիւնն, կամ լաւ եւս՝ զո՞ ոչ դառնացոյց, յոմէ որ խնայեաց երբեք։ Պրեսջիր Թէ յարս ոմանս սոսկականս չարագործս՝ ի խոտորարարս պետութիւնէ ընդհարաւ նա, ՝ի Կղէոն, ՝ի Կղէոփոն, ՀՈպերբուղոս։ Կերեսցի այդ, ասէ. Թէպէտ և այնպիսեաց քաղաքացեաց լաւ եւս է ՝ի դատաւորէ առնուլ պարսաւ՝ քան ՝ի բանտատեղեաց։ Կայց սակայն զՊերիկղէս՝ զպերձացեալն գերագահ իշխանութիւնէ քաղաքի իւրոյ ընդամս բազումս պատնին և ՝ի պատերազմի՝ հրապարակական խաւտ առնել քերթուածովք, և զնոյնս ձևակերպել ՝ի Թատրոնի, ոչ առաւել վայելուչ ինչ էր, ասէ, քան Թէ մերս Պղատոս կամ Կեվրոս կամեցեալ էին երգիծաբանել զերկոսին Կիպիոնս՝ զՊօբլիոս և զՆեվիոս, կամ Կեվիլիոս Ո՝արկոս՝ զՎատոն...։ Հետ սակաւուց ասէ դարձեալ. "Ո՝ՎՆդ հակառակին՝ մեր երկոտասան տախտակք, յորս բանքնուազունք օրինադրեալք կային կարճառօտ, ՝ի դէպ համարեցան սահմանել և ընդդէմ այսոցիկ, եթէ ոք ապիրատմանաց

երդս առնիցէ, որով վատ անուն և ապիրատութիւն բերիցէ յայլս։ Եւ կարի իսկ քաջ. քանզի զմարդկան վարս հանել պարտ է ի դատաստան առնեակալաց և յօրինաւոր հարցաքննութիւն, այլ ոչ ի բանաստեղծացն հանձարմտութիւն. և ոչ թէ նմանից ունկին դնել, բայց այնու ևէթ օրինաք, զի համարձակութիւն լիցի պատասխանել և յատկեն զատագովել ...։

Օ այսոսիկ քաղել բան առ բան ի դէպ համարեցայ ի չորրորդ գրոց Կիկերոնի յաղագս հասարակապետութեան, սակաւս ինչ առ ի դիւրահաս լինելոյ ի բաց թողեալ կամ փոքրու իմն այլայլեալ, զի անկաւորք յոյժ են իրացս՝ զոր բաց յայտնելն հնարիմ ըստ կարի։ Յօսի յետ այնր այլ ևս բանս. և յայն կնքել զտեղիս, յուցանել թէ հռովմայեցւոցն առաջնոց անհաճոյ էր զայր որ դէռ կենդանի գովել կամ պարսաւել ի թատրոնի։ Վասկայն որպէս ասացիք, առ Յոյնս թէ և անպատկառապէս՝ բայց դիպողաբար իմն օրէնս նաւոր համարեցաւ այդ, տեսեալ զի և աստուածոցն իւրեանց ընդունելիք են և ախորժական թէ նմանք ոչ մար դոց ևէթ, այլ և հնբեանց աստուածոց ի թատրոնական առասպելս, եթէ ի քերթողացն էին ստեղծաբանեալք, և եթէ ստոյգ նոցայն ապիրատութիւնք յիշատակեալք և երեւութացեալք ի թատրոնս, զորս երանի թէ պաշտօնեայք նոցա ծաղու ծանակի ևէթ արժանիս համարէին, այլ ոչ և նմանողութիւն։ Վանզի առաւել ամբարհաւաճութիւն իրք երևէին՝ խնայել ի համբաւ քաղաքապետաց և քաղաքացեաց, ուր աստուածք չգամեցան խնայել ի համբաւ իւրեանց։*

ԳԼՈՒԽ Ժ

Որով հնարիմացութիւն կամեցան գնք՝ զի ապիրատութիւնք սուտ կամ ճշմարիտ զնոցունց վկայասանեացին։

Վանզի զոր ի քատագովուն ասիս յառաջ բերեն, թէ ասացեալքն զաստուածոց ոչ ճշմարտաձառք են, այլ ստա-

յօդք և մնացածինք, զոյն իսկ անօրինագոյն և ի՝ եթէ ընդ մեծարանս կրճատիցն ակն ածիցես. այլ եթէ զդիւացն չարութիւն ընդ միտ ածցես, զինչ քան զայն խորագէտ և խոհեմանալ ի պատրել Ա՛ան զի եթէ անարգանք ձգիցին յիշխանապետս որ բարեկիրք և պիտանի, ո՞չ ապաքէն այն չափ դժպատեհագոյն է այդ՝ որչափ օտար իցէ ի չէմարտութիւն և ի քաղաքավարութիւն նորա։ Ա՛յս ո՞ր պատուհաս բաւական իցէ՝ յորժամ առ աստուած լինիցին այդպիսի նախատինք անարժան և մեծեղեռն։ Ա՛սայց ոգիքն չարք՝ յաստուածս առ ի նոցանէ համարեալք, նա և զապերատութիւնս անգամ զոր չէ նոցա գործեալ, թողուն առնել զինքեանց, զի զմարդկան միտս իբր յուռկանս ըմբռնեսցեն այնպիսի կարծեօք, և տանջանացն սահմանելոց բաժանակիցս ինքեանց առնիցեն. և այն՝ եթէ մարդիկ գործեալ իցեն զայսպիսիս, զորոց և առ աստուածս գրիչ՝ ախորժեն դնէ՝ խնդացեալք ընդ մարդկան մնալոցս թիւ, իբր զի փոխան նոցա ինքեանք իսկ պաշտօն առնուլ հնարին բազում խաբէպատիր արուեստիւք, և կամ եթէ և ոչ ումեք ի մարդկանէ չէմարտութիւն լեալ իցեն այն յանցանք, բայց մնագիւր ախորժեն ոգիքն հնարիմացք՝ յաստուածս անդ առեղծանել զայնպիսիս, զի թուեսցի յերկինսն անաւ եկեալ յերկիր հրամանն առ ի զերազնականն և զգաղտնելիս գործելոյ։ Ա՛ան որոյ գիտելով Յունաց զինքեանս այնպիսեաց աստուածոց պաշտօնեայս, ոչ ի դէպ համարեցան թէ ի բազմապիսի թատրոնական երգիծանս անդ ինայիցեն յինքեանս քերթողքն. որով կամ համանմանեալս այսու լինել իւրեանց աստուածոցն ցանկացան, կամ երկուցեալք մի արդեօք նախանձաւորս պարկեշտագունի համբաւոյ անձանց լինելով, և քան զաստուածսն նախամեծարս իմն զանձինս առդնելով, ի սրամտութիւն զնոսա գրգռեսցեն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Խազարկուք առ Ցոյնս ամբաստանչին և ի քաղաքական գործակալութենէս, զի մի արհամարհ գոյնի յանխրատ յաչս մարդկան հաշակցուցիչք առաւածոյն։

ՎԱՍՊՈՒԱԿԱՆ պատերհասութենէ զհետ գայր և այն, զի զկատակերգակ խաղարկուս անգամ Ցոյնն առասպելաց գործածոյիս՝ ոչ փոքրու պատուոյ քաղաքաց արժանաւորս վարկանէին Ցոյնք. քանզի որպէս յիշատակեալ իսկ է՝ ի Ցոյն գիրս Արիկերդին յաղագս Հասարակապետութենէ, Ցսքինէս աթենացի՝ այր պերճաբան եղերերգակ խաղարկու եղեալ մինչ պատանին էր, զաւագութենէ քաղաքին ընկալաւ. և զԱրիստոդեմն Ցոյնպէս եղերերգակ յաղագս երևելի գործոյից խաղաղութենէ և պատերազմի՝ բազում անգամ դեսպան արձակեցին աթենացիք առ Փիլիպպոս։ Ա՝ սոյն զի ոչ իրաւացի համարեին՝ թէ զի ուր այսպիսի արուեստք և խաղք թատերականք Հանոյ էին գից, խաղուցն գործադիրք զանուանարկաց կացցին տեղի և զհամար։ Ջ այսոսիկ թէպէտ և չարաչար խորհէին Ցոյնք, բայց աստուածոյն իւրեանց ամենայնիւ յար՝ի գէպ. որք ոչ իշխեցին կորզել զվարս քաղաքացւոյն՝ի լերկութենէ, քերթողաց և ծաղրածուաց, տեսակաք զի և զաստուածոյն վարուք խաղ առնեն նոքա ըստ Հանոյս իսկ նոյն գիցն. նմին իրի զմարդիկ՝ որք՝ի թատերս կատարէին զՀանէլիսն առաստուածոյն՝ որոց կային՝ի ծառայութենէ, ոչ միայն չՀամարեցան խոտելիս՝ի քաղաքի, այլ և առաւելապէս արգոյս գրեցին։

Վասզի զինչ ունէին պատՀասել, զի քուրմք սակս ըզՀանոյականն զոհագործելոյ աստուածոյ՝ի պատուի լինէին, իսկ դերասանք առ անարգս գրեսցին, ուսեալք յաստուածոյն պատգամ, թէ կատակերգակքն ախորժ լինի կամպատիւ ընծայի աստուածոյ, զոր նոքին իսկ խնդրէին, և յոյն տալ գայրանային։ Վանաւանդ զի Ա՝ բաՀան, քա-

ջահմուտն այլ յայսոսիկ ՚ի նոցանէ համբաւեալ , զաստուածս բարիս ՚ի չարաց անտի որոշէ այսպիսի իմն զանազանութեամբ պաշտամանն . զի չար աստուածքն հաշտին , ասէ , արեանց հեղմամբ և տխրատեսակ պաղատանօք . իսկ բարիք՝ խրախուսը և զուարճալի հանդիսիւք . որպիսի են , ասէ , խաղք , խնջոյք և բարձակացութիւնք յընթերս , որ կոչին Լեփէրնալիա՝ իբր մահ-ձակերոյթք . իսկ թէ զինչ էր այն ամենայն , ստորև՝ եւ թէ տացէ ՚ած , խօսեսցուք մանրաբանութեան : Պատանօր ուշ կալցուք առաջիկայ բանիցս . զի եթէ ամենայն պաշտամունք սնխատրաբար դից ամենեցուն մատուցին իբրև բարեաց , որովհետև անպատեհ է լինել չար աստուածոց , որպէս և այսքն պիղծք չարք են առհասարակ , և եթէ ընտրանօք ինչ՝ որպէս Պաբէդնի Թուեցաւ , ոմանց այս և ոմանց այն պաշտամունք բաժանեսցին , ՚ի դէպ իսկ ուրեմն զերկաքանչիւրս պատուոյ արժանիս առդնեն Յոյնք . իմա եթէ զքուրմն՝ որովք զոհքն մատչին , և եթէ զթատրոնականս՝ որովք խաղքն հանդիսանան . զի մի լոյծ անարգանս դնել՝ կամ համօրէն աստուածոց նոցա , եթէ և խաղքն իցեն հաճելիք ամենեցուն , և կամ որ և այ անտեղի է , բարի կարծեցեալքն աստուածոց , եթէ նոցա և եթէ սիրելի են խաղք :

ԳԻՒՏԻՍ ԺԲ՚

Հռովմայեցիք կարճելով ՚ի քրիստոնէից ՚ի հանրածախոսութիւն ընդդէմ մարդկան՝ զոր առ աստուածսն Թոզոցուցեալ էին , աւելի իմն զանձանց՝ քան զաստուածոց խրեանց խորհեցան :

ՅՍԿ հռովմայեցիք , որպէս Վկիպիոն պանծայ ՚ի խօսս անդ որ յաղագս հասարակապետութեանն , ոչ յանձն առին՝ զի վաղը և համբաւ իւրեանց ընդ երկիծանօք և նախատանօք բանաստեղծիցն անկանիցին . զի ապարտ իսկ վնաւելով եթէ

իշխեսցէ որ զտալ ինչ այսպիսի հիւանդի. Այդ արդարեւ վայելչապէս օրինադրեցին առ իւրեանց անձինս, բայց առ աստուածս իւրեանց ամբարտաւանս իմն և անկրօնս. քանզի դիտեալ թէ դիք ոչ ներողամտաբար լոկ՝ այլ հաճութիւնս դատափետին՝ ի լուսանցաց և՝ ի չարախօսութենէ քերթողացն, քան զնոսա՝ առաւել զինքեանս վարկան չարժանիս այնպիսի թշնամանաց, և օրինադրութիւն պահեցին զանձինս՝ ի քերթողաց. իսկ զայնպիսի լուսանս նոցա խառնեցին՝ ի բուն սրբազան ուսմանմբութիւնս դից։

Այդ այսպէս ուրեմն, ո Ակիլլեւս, զովաբանես զձեզդ արդելուիս առ բանաստեղծս հռովմայեցիս, չգնել արհամարհանս միւմոմաքս՝ ի հռովմայեցւոց, ուր ոչև միւմո՝ ի ձերոցդ աստուածոց խնայել նոցա՝ տեսանես քաջ. այդպէս մեծագրելի քեզ թուեցաւ պատիւ առնիդ ձերոյ քան զկապիտոլիոնսին, մանաւանդ թէ միայնոյ Հռովմայ պատիւ՝ քան զերկնից բովանդակ. մինչև օրինօք արգելուլ քերթողաց՝ զի մի զչեզուս չարաբանս արձակեսցեն՝ ի քո բաղաքացիս, իսկ առ աստուածս քո ձգեսցեն աներկիւղ թշնամանս բազմապատիկ, զորս ոչ առնեսկալ ոք արգել, ոչ դատաւոր, ոչ իշխան և ոչ քրմապետ ոք։ Վասնզի անարժան դատեցաւ այրդ, զի Պղատոս կամ Արիստոս լեզուագարեացն զՊօրղիոս և զկնիոս Ակիպիոն, կամ Ակիլլիոս Մարկոս զկատոն. բայց արժան դատեցաւ՝ զի ձերդ Տերենտիոս աղճատղծութիւնք Լատինացդայ մեծ և ամենալաւ կոչեցելոյ զրգռեսցէ զպատահնեայս մեղեսութիւն։

ԳԼՈՒԽ ԺԲ

Պարտ էր՝ ի միս առնուլ հռովմայեցւոց՝ թէ դիք իւրեանց ցանկացողք անարժան խաղոցն պատճառան՝ ոչ արժանիք կին ետձականին պատուոյ։

Այլ դուցէ եթէ կենդանի լինէր այդ Ակիպիոն՝ առնէր ինձ պատասխանի. Օ իաղդ մեք ընդ պատուհասիւ

կապել իշխեաք, զոր նոքին աստուածքն սրբել կամեցան՝ յորժամ հրաման եառուն ղի խաղք Թատերականք, յորս այնպիսի քերթուածիք ստեպ հանդիսանան բանիւք և արդեամբք, ՚ի սովորութիւն հռովմայեցւոց լիցին ընկալեալք, և առ՚ի պատիւ իւրեանց նուիրեսցին։ Ո՛ր ոք սեղի է. զիաՓդ այսու ոչ առիք ՚ի միտ, Թէ չէն նոքա առաւածք Ձմարիտ, և ոչ արժանիք բնաւ՝ ղի զայծական պատիւ ընծայեսցէ նոցա պետութիւն հռովմկական։ Ո՞ւանղի որոց ոչ արժան, ոչ պարտ էր տանել պաշտօն՝ եԹէ իւնդրեալ էին խաղս Թշնամանադիրս հռովմայեցւոց, զիաՓդ պաշտելոյ արժանիք դատեցան, զիաՓդ ոչ ծանուցան՝ Թէ այսք են պիղծք կամ ոգիք գալըէլիք, որք խաբելոյ ցանկութիւն բերեալք՝ կամեցան ՚ի մեծարանս անդ զիւրեանցն յանցաւորութիւնս բարձրաձայնել։ Այս դարձեալ, ղի հռովմայեցիք Թէպէտ և էին ըմբռնեալք ՚ի ճշմարիտ մնապաշտութիւն իբր աստուածս պաշտելոյ զայնոսիկ, զորս տեսանէին Թատերական անառակութեացն լինել ցանկացողս, բայց ուշ եդեալ իւրեանցն պատուականութեանէ և պարկեշտութեանէ, ոչ երբէք զհաղարկուս կամ զերգիչս այնպիսեաց առասպելոյ մեծարեցին ըստ Յունացն սովորութեանէ. այլ որպէս նա ինքն Վկիպիոն խօսի առ Վիկերոնի. «Ո՞ կատակերգակն արհեստ և զամենայն զԹատերս յերեսաս ունելով, ոչ միայն զմարդիկ այնպիսի՚ի պատուոյ այլոց քաղաքացեաց հատանել կամեցան, այլ և ՚ի ցեղէ անտի Ջնջել վատանուն դատակնքով»։ Արդարեւ խոհականութիւն քաջ և արժանի գովութիւն հռովմայեցւոց. բայց ցանկալի՝ Թէ ինքն ինքեան լինէր հետևող, և նմանող իւրումն անձին։ Ո՞վ ի ահա որ ոք ՚ի հռովմայեցի քաղաքացւոց զԹատրոնական խաղարկուի ընտրէր զարուեստ, արդարապէս ոչ միայն անմնաստելի առ՚ի պատիւս լինէր, այլ և տարադիր յիւրմէ ցեղէ դատակնքով։ Խաբէ մեծանձնութիւնք քաղաքի՝ գովեստիցն տարփաւորի, որպէս արդարեւ հռովմայեցի։

Վակայն լսել կամիմ պատասխանի, Թէ որովհետև արդարացութիւն մարդկին խաղարկուք բացասելիք չիք յամենայն

պատուոյ , և խաղքն Թատրոնականք ընդ աստուածոյն խառնին պաշտամունս : Ուրուեստը Թատերացկերիար ժամանակաւ (իբր զամն չորեքհարիւր) անճանօթք էին հռովմէական առաքինութեանց . և եթէ առ՛ի զուարճութեն մարդկային սիսիանաց պիտանիք էին , բայց և յապականութեն լինէին վարուց մարդկան . ապա աստուածքն խնդրեցին ընծայել ինքեանց զնոսա . արդ զիա՞րդ տարամերժի խաղարկուն յոյր ձեռն պաշտին աստուածք . և որո՞վ դիմօք Թատրոնական անառակութենն կատարիչ պարտաւորի , եթէ պահանջողն երկրպագի : Այս ինդիր՝ մաքառումն է Յունաց և հռովմայեցւոց . Յոյնք զԹատերացն մարդիկ արդարապէս պատուել համարին , վասն զի պաշտեն զաստուածսն Թախանձարկուս Թատրոնականացն խաղաց . իսկ հռովմայեցիք և ոչ զժողովրդական ցեղնուաստացուցանել կամին այնպիսի մարդոյք , Թող Թէ զատեհնականն կարգ : Այլ՝ ի վիճաբանութես յայսմ այսպիսի ձեռնարկութէ ահա հինք զնէ խնդրոյն : Ուրաջարկեն Յոյնք . եթէ այնպիսի աստուածք՝ պաշտելոյ արժանիք էն , ապաքէն և այնպիսի մարդիկ՝ պատուելոյ արժանիք : Ուրնուն հռովմայեցիք . այլ արդ ոչ միով օրինակաւ պատուելի էն մարդիկ այնպիսի : Ինքեն քրիստոնեայք . ապա ուրեմն ոչ միով օրինակաւ պաշտելի էն աստուածք այնպիսի :

ԳԼՈՒԽ ԺԴ

Գովելի ևս եղև Պլատոն՝ որ չէտ տեղի բանաստեղծից ՚ի բարեկարգ քաղաքի , քան զաստուածսն՝ որք Թատրոնական խաղուք մեծարիլ կամիցան :

ՀԱՐՑԱՆԵՄՔ դարձեալ . էր վասն քերԹողք՝ այնպիսեաց առասպելաց գրիչք , որոց արգելեալ է օրինաւք երկոտասան Ջախտակացն՝ չեղծանել զհամբաւ քաղաքացւոց , յորժամ՝ նեստաձիգ լինին ՚ի դիս այսպանելի Թշնամանաւք , չէն առ անուանարկս համարեալ իբրև զհաղարկուս . որ

ուղղութեի իցէ՝ վատանուն առնել զնաղալիկս բանաս-
տեղծական դիցանախատ հիւսուածոյն, իսկ զառաջնորդս
այնց պատուասիրել։ Այլ մինչ զմրցանակ գովութենն
տացուք Պղատոնի յունի, որ՝ի սահմանել իւրում թէ
որպիսի լինել արժան է քաղաքն, իրաւացի գտանեցաւ
տարագրել՝ի քաղաքէ զբերթողս իբրև հակառակորդս
Ճշմարտութեանն, որով սա՝ և ընդ անարգանս դնցին դժկա-
մակ լինելոյ, և զքաղաքացւոցն ոգիս ոչ կամէր մոլացածին
զրուցիւք պատրել և ապականիլ։ Ասէր արդ՝ի կշիռ զՊղա-
տոնի զմարդկավայելուչն մնածուածն՝ յարտասահմանել
նորա՝ի քաղաքէ զբերթողս՝ պատրողս քաղաքացւոց՝ ընդ
ձածախուռն դիպ, որք՝ի մեծարանս իւրեանց զիաղսն Թատ-
րոնականս խնդրէցին։ Այս, զի մի և գրեացին անգամ այն-
պիսի հիւսուածք, Թէ և ոչ եցոյց պատճառաբանութեանն,
այլ ողբեաց՝ի նոյն զԵւթեւեամիա և զմեղս բարս Հնոյց.
իսկ սոքա աստուածքս՝ առ՝ի զանսպիսին գործովք երևե-
ցուցանել՝ հրամանաւ իսկ խնամարհեցուցին զծանրութենէ
և զհամառստութենէ հոռվմայեցւոց. և ոչ գործովք միայն
ցուցանել զնոսա, այլ լինքեանց նուիրել, լինքեանց ձգնել,
լինքեանց մեծահանդէս ընծայաբերել։ Արդ ուրեմն արդեօք
ունիցէ քաղաքն լաւ և սահմանել զծածկական պատիւ. Պղա-
տոնի արդեօք՝ աղտեղեացն և անպատշաճելոցն արգելողի,
եթէ գիւաց խնդացելոց ընդ պատրանս մարդկան, որոց
չկարաց Պղատոն զՀմարիստոն հաւանեցուցանել։

Օ՜ սա ինքն զՊղատոն ընդ կիսաստուածոն համադա-
սել արժան գտանեցաւ Լաբէոն, իբրև զՔիլէոն, իբրև
զՀոմուլոս. որ և զկիսաստուածոն գերագոյն դնէ քան
զդիւցազունս, այլ զերկաքանչիւր ևս՝ի համար պաշտե-
լեացն կարգելով։ Վասկայն զոր սա կիսաստուածն կոչէ,
ոչ միայն քան զդիւցազունս՝ այլ քան զնոսին իսկ աստուածս
նախադասել ոչ ինչ երկբայիմ։ Այսպէսն հոռվմայեցւոցն
օրէնք յայր են իւրք առ Պղատոնի բանախօսութենէն, յոր
ժամ նա զամենայն զբանաստեղծական կեղծիսն գատա-
պարտէ, և սոքա զՀամարձակութենէ բանաստեղծիցն կար-
ձեն պէտ յերգիծաբանել զմարդիկ։ Այս՝ի բնական է

քաղաքին Հեռացուցանէ զքրիստոնեա. սոքա գոնէ զխաղաղ-
կուս քրիստոնական առասպելացն զատանէն՝ ի քաղաքակ-
ցութէ. և եթէ իշխէին ինչ առնել հակառակ դիմցն
ինդրողաց զխաղս եթ առեբականս, թերևս բնաւ իսկ զրա-
նատեղծս՝ ի բաց հանէին։ Այդպս ուրեմն օրէնս հրահան-
դիչս՝ ի բարիսը վարս կամ ուղղիչս վատթարութէ վա-
րուց՝ ոչ դոյր հռովմայեցւոց առնուլ կամ աչն ունել յաս-
տուածոցն իւրեանց, որոց յաղթեն իբրայիս օրինօք, և
դատապարտ առնեն։ Օ՛ի նոքա պատուասիրել կամին
եթ առեբացն խաղուք, սոքա հռովմայեցիք դՅՅեն ամե-
նայնիւ զխաղարկու մարդկին. նոքա հրամայեն՝ քրիստո-
զական սուտ զծարանութէքն զխայտառականս աստուա-
ծոցն ծանակամբել ինքեանց, սոքա՝ ի խայտառականաց
մարդկան խորչեցուցանեն զքրիստոզացն անպատկառու-
թէն։ Իսկ կիսաստուածն այն Պղատոն՝ որպէս այնպիսեաց
աստուածոցն ցանկասիրութէ ընդդէմ եկաց, նոյնպէս և
զոր ինչ ընուլ արժան էր՝ ի բաց հռովմայեցւոցն՝ յայտ
արար, ոչ կամեցեալ՝ զի քրիստոզք բնակակից լինիցին՝ ի
բարեկարգեալ քաղաքի. որովհետև կամ ըստ քմոյ սուտս
կարկատէին, և կամ զժանտագործութիս աստուածոցն
տային յօրինակ։

Այլմբ զՊղատոն ոչ աստուած առդնեմք, և ոչ կիս-
աստուած, և ոչ միւսմանբ՝ ի հրեշտակաց մեծին ՅՅ
Համեմատեմք, ոչ Ձնմարտախօս մարգարէի, ոչ առա-
քելոյ ումբք, ոչ որում և է մարտիրոսի Քնէ, և ոչ մար-
դոյ ումբք քրիստոնէի. իսկ զՀաւատիս այսր մերոյ դա-
տաստանի բացայայտեսցուբ ՅՅ յաջողելոյն յիւրում տե-
ղոջ։ Այլ քանզի դոքա զնա կիսաստուած կամին ասել,
նախամեծար համարիմբ՝ եթ ոչ քան զՀռոմուլոս կամ
զՀերակլէս, եթէպէտ և զնմանէ ոչ ոք՝ ի վիպագրաց կամ
՝ի քրիստոզաց պատմից և կամ յօգեաց, եթ եղբայրա-
սպան լեալ լիցէ, կամ այլ ինչ ապիրատ գործեալ. բայց յի-
րաւի առաւել քան զՊղատոս, կամ քան զՀ անագլուխ
ոք, կամ քան զՑՅենդոյշ՝. զորս հռովմայեցիք կիս մի

1 Ա՛ն է Քէզոբ., յաստուածոհի տէնդի.

յօտարաց աստուածս ընկալան, կէս մի յիւրայոցն ՚ի ծա-
ցուցին ։ Եւ զիա՞րդ ասպա զայնչափ զբարիս զոգւոց և զը-
վարուց զմտաալուտս արդելուին, կամ զնեռգոյացեալսն
խլել Հոգւոյն բարեդէպ հրամանօք և օրինօք աստուածք
այնպիսիք, որք առաւել սերմանել ջանային և առնցու-
ցանել զապիրատուԹիս, կամ եթէ զի այնպիսի արա-
րուածք իւրայինք և կամ իւրացուցեալք՝ Թատերական
Հանդիսիւք ՚ի տեսիլ ժողովրդոց գայցեն . որով իբր
ՁԾահրաման անտեսուԹեամբ բորբոքեսցի իւրովի և-
ղեռնային ցանկուԹի՞ մարդկան. ուր վայրապար բողոքէ
Կիկերոն ՚ի Ձառէն զբերԹողաց . “ Ա՞ր որս , ասէ , իբրև
Հասանէ բարբառ և ծափիւն ժողովրդեանն՝ զօրէն մե-
ծ և գիտնական վարդապետի, զո՞ր խաւար ՚ի ներքս չածէն
նոքա , զո՞ր երկիւղ չարկանեն , զո՞ր ցանկուԹիւնս չա-
ռէն .. ։

ԳԼՈՒԽ ԺԱ՛

*Հռովմայեցիք կարգեցին իւրեանց աստուածս ոմանս՝ ոչ ՚ի պատճառս ինչ ,
այլ առ ընդհակս ։*

Այ՛ն արդ ո՞ր պատճառ կայր ընտրելոյ աստուածս այնպիսի
սին սուտս , և ոչ մանաւանդ մարդահաճուԹե՞ բերուին.
յորժամ զՎալտոն՝ զկիսաստուածն համարեալ, որ հան-
ձարեղ բանախօսուԹե՞ք աշխատ եղև զի մի հոգեկան չա-
բեօքն՝ յորոց առաւելապէս զգուշանալ արժան է՝ վարք
մարդկան ապականեսցին, և ոչ միւսմ նուիրական տեղւոյ
արժանաւոր դատեցան, իսկ զՀռոմուլոս իւրեանց՝ քան
զյոքունս՝ իդիոյ վերադոյն դասեցին, Թէպէտև ըստ գաղա-
նի վարդապետուԹե՞ նոցա՝ կիսաստուած յաւէտ ծանու-
ցեալ է, քան Թէ աստուած ։ Ո՞րանզի և Վլամեան քուրմ
նմին կացուցեալ էին յայնմ կարգի՝ որ ՚ի պաշտամունս
Հռովմայեցւոց բարձրագոյն էր, նշանակաւ խուրձին վկայ-
եալ , մինչև երիս միայն այնպիսի քուրմս ունել նոցա ՚ի

պատիւ երից աստուածոց որոշեալը . զդխալեանն՝ Ա՛րա-
մազդայ , զմարտխալեանն՝ Ա՛րեսի , և զգուխրմնեանն՝
Հռոմուլոսի . զի սա՛ի բարեսիրութէ քաղաքացեացն վեր-
առեալ յերկինս , Կուխրմնոս յետ այնր անուանեցաւ :
Ա՛յս այսուիկ պատուասիրութէ նախամեծար գտաւ Հռո-
մուլոս քան զՊոսիդոն և քան զՊղուտոն եղբարս Ա՛րա-
մազդայ , և քան զՀայր նոցա Կռնոս . զի իբր մեծագու-
նի ընծայեցին նմա զայն քրմութէն , զոր և Ա՛րամազդայ ,
և Ա՛րեսի և իբրու հօր նորա՝ թերևս վասն նորա ետուն :

ԿԻՍԻՒ ԺԱ.

Եթէ զարգարութէ ինչ փոյթ էր դիցն , ի նոցանէ առաւել պարտ էր ունել հռովմայեցւոց զիանոնս կենաց , քան եթէ յայլ մարդկանէ օրէնս առնուլ ի փոխ .

Հռովմայեցիքն զի՛րթէ կարող էին յիւրեանցն աստուածոց ընդունել օրէնս քաղաքավարութէն , ոչ արդեօք յետ ա-
մաց իբր երից հարիւրոցն շինութէն Հռովմայ յաթենա-
յեցւոց անտի յանօթ առնուին զօրէնս Սողոնի . Թէպէտ և
ոչ որպէս ընկալանն՝ այնպէս թողին զնոյնս , այլ փոյթ կա-
լան ՚ի լաւն և յուղղագոյնս դարձուցանել : Ա՛յսաբէն ՚ի
կուրգոս ձևանայր առ լակեդեմոնացիս՝ թէ Ա՛պողոնի
իշխանութէն կարգեաց զիւր օրէնս . այլ Հռովմայեցիքն ի-
մաստնաբար չՀաւատացեալ , ոչ գնորայն ընկալան : Կու-
մաս Պոմպիլիոս՝ յաջորդ Հռոմուլոսի յաթոռ թագա-
ւորութէն , սահմանեաց օրէնս ինչ՝ որպէս ասի , այլ չէին
բաւական՚ի մտաւսութէի քաղաքին . կարգեացն և բազում
և պաշտամունս . սակայն չէք զոյց՝ թէ յաստուածոց ան-
տի առեալ էցէ զայն օրէնս : Ա՛յս ուրեմն ոչ փոյթ ինչ ա-
բարին զիքնոցա՝ զի մի անցցեն ընդ պաշտօնեայս իւրեանց
այն չարիք ոգւոց , չարիք կենաց , չարիք վարուց , որ այնչափ
մեծամեծք էն՝ զի ըստ Հաւանութէ իմաստագունից

արանց ՚ի նոցանէ՝ այնոքիւք կործանին տէրութիւնք, եթէ և յոտին կայցեն քաղաքք. մանաւանդ եթէ յաչուն այսպիսի չարեաց ձեռն էտուն աստուածքն, որպէս վերագոյնդ նշանակեցաք։

ԳԼՈՒԽ ԺԵ

Յաղագս յափշտակութեանէ սրբենեան կանանց, և այլոց ևս անօրէնութեանց զորացելոց ՚ի քաղաքին Հռովմայեցւոց՝ նա և ՚ի գովելի նոցա ժամանակս։

Այլ գուցէ արդեօք յայն սակս ոչ յաստուածոց անտի եղան օրէնք առ ժողովուրդն Հռովմէական, իբրև զի ըստ Արիստոտելոսի ասացածին՝ «Իրաւունք և բարուք առ նոսա ոչ յօրինաց հաստատեալ էր՝ քան եթէ ՚ի բուսոյ բարուց...» Այսպէս այսոց իրաւանց և լաւութեանէ գոգցեաս յափշտակեցին նոքա զսաբինեան կանայս. զի զինչ արդարացի և լաւագոյն թուեցաւ նոցա, որպէս զաղջկունս օտարս պատճառանաւք տեսարանացն ժողովեալս՝ ոչ ՚ի ծնողացն առնուլ, այլ բռնաբար՝ որպէս զիարդ կարող ոք էր, ՚ի բաց տանել։ Վասնզի եթէ անիրաւ գործէին սաբինեանք չըտալով ՚ի խնդրելն, որչափ անիրաւ և եղև յափշտակել զտուեալսն։ Իրաւացի և ևս պատերազմ շարժել մարթ էր ընդ ազգին ընդ այնմիկ՝ որ զիւր աղջկունս խնդրեալս ՚ի դաւառակցաց անտի և ՚ի սահմանակցաց հրաժարեր տալ, քան ընդ ազգի՝ որ զ՚ի բաց տարեալսն չտոս պահանջէր։

Այսպա ուրեմն յայն առաւել բերիլ արժան էր. անդ և Աքէս արդեօք ձեռնտու լինէր որդւոյ իւրում Հռոմուլոսի առ ՚ի վրէժս լուծանելոյ մարտիւ անարգանացն՝ որ եղեն ՚ի ժխտել նոցա զամուսնութիւնն. և նովին օրինակաւ ՚ի ձեռս բերեր զնմանայն զորս խնդրէր. քանզի պատերազմական իրաւամբք ինչ արդարապէս թերևս ՚ի բաց տանէր յաղթականն զանիրաւի զլացեալսն։ Այլ հակառակ իրաւանց խաղաղութիւնէ յափշտակեաց զոչ տուեալսն, և մարտ անիրաւ արար ընդ ծնողս նոցա յիրաւի

զայրացեալս։ Պատքէն այս ինչ օգտակար և բարեբաստիկ յաջողեաց, զի Թէպէտ առ յիշատակէ այնը դաւաճանու-թէ պահեցան խաղքն կրկնական, բայց օրինակ տպիրա-տութէն ոչ հաճոյացաւ քաղաքին և տէրութէն. յայնմ առաւել սխալեցան Հռովմայեցիք, զի յետ այնպիսի ա-նօրինութէ ոճացուցին ինքեանց զՀռոմուլոս, քան եթէ Թող տային ըստ օրինակի նորա օրինաք կամ սովորութէ ինչ զայնպիսի յափշտակութիւն կանանց դործել։ Այդ իրաւանց նոցա և լաւութեան գործ էր, զի յետ վտա-բելոյ զարքայն Տարկուինիոս զաւակքն Հանդերձ, որպ որդին լնկեալ էր զՅուկրետիա, Յունիոս Բրուտոս հիւպատոս՝ զպաշտօնակից իւր զՅուկիոս Տարկուինիոս Կողատինոս զամուսին Յուկրետեայ՝ զայր բարեկիր և անպարտական ստիպեաց հրաժարել յիշխանութէն և ոչ ի քաղաքին եթող բնակել՝ սակս համանուն լինելոյ և աղգակից Տարկուինեանց։ Ո՛չ այս անօրինութէ գործեաց նա ձեռն տալովք կամ անտես առնելով ժողովրդեանն, յորմէ զհիւպատոսութէնն ընկալեալ էր Կողատինոս, որ պէս և ինքն Բրուտոս։

Այսպ իրաւանց և լաւութէ գործ էր, զի Պարկոս Կամիղոս՝ առ այնու ժամանակաւ հռչակելին այր, որ զվէյայիս գդուռ Թշնամիս հռովմայեցւոց յետ տասնա-մեայ մարտից՝ որով հռովմէականն զօրութէ ի բազում մաքառումունս վտանգեալ էր անհնարին, և Հռոմ յեր-կիւղն կայր ընդ իւրն փրկութէ, կարի դիւրաւ յաղթա-հարեաց, և զրպմնհարուստ նոցա քաղաք յինքն կալաւ, սա այսպիսի այր ի յաչառելոյ բամբասողաց առաքինու-թեան նորա և յապարասանութէ տրիբունից ժողովրդ-դեանն պարտաւորեաւ, այնպէս անշնորհակալու եգիտ զքաղաքն զոր ապրեցոյց, մինչև գիտելով հաւատալ զնոյն պարտաւորութէն, ինքնակամ գնաց յաքսորս. և ի բացակ գոլով՝ տուժեցաւ և բիւր մի դրամս, Թէպէտ և յետ սակաւուց եղև դարձեալ ազատարար ապահատուոր քա-ղաքին ի գաղղիացւոց անտի։ Ո՛չ այր է յիշատակել զայլ ևս յոլովագոյն պարսաւելիսն և զանկրաւ՝ որովք յուզեր

այն քաղաքը, յորժամ կարողքն նուաճել զանային զառա-
միին և նա ընդվզէը . և երկաբանչիւր կողման պաշտպանք
՝ի յաղթել առաւելապէս յօժարէին , քան արդար ինչ
խորհել և օգտակար ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

*Ջինչ առանգէ պատմագրութիւնն Պալատեայ յազգս վարուցն
հռովմայեցւոց՝ յորժամ յերկիւղի տագնապել էին կամ ՝ի խա-
զաղութեան Թուլացեալք ։*

Ի Դէպ է ինձ այժմ և զնոյն ինքն զՊալատեոս վկայ
յառաջ մատուցանել . որոյ ասացեալ՝ի գովութիւն հռով
մայեցւոց զբանն՝յորմէ և մերում բանիս եղև սկիզբն , “Ի-
բաւունք և բարութիւն առնոսա ոչ յօրինաց հաստատեալ
էր՝քան էիւ՝ի բուսոյ բարուց ,, , գովել գովէ զժամանակին
յորում յանկանիլ Թագաւորաց հռովմայ՝յանկարծ ինն
՝ի սուղ ժամանակի մեծապէս բարգաւաճեաց քաղաքն. սա
կայն նա ինքն յառաջնումն գրի պատմութիւնն անդէն ՝ի
սկսուածին խոստովանէր լինի , թէ յանցանել իսկ տերութիւնն
՝ի Թագաւորաց առ հիւպատոսս՝ զկնի սուղ ժամանակաց
եղեն զրկանք կարողացն , յորմէ հերձուածն ժողովրդեանն ՝ի
ծերոց, և այլ ևս երկպառակութիւնք ՝ի քաղաքին ։ Վանզի
յիշատակելով նորա՝ թէ ժողովուրդ հռովմայ զեղեցիկ
վարուք և քաջայաղնդ միաբանութիւք վարեցաւ յառաջնում
և ՝ի վերջին մասին Կարքեդոնի , և պատճառս ասելով
այնմ բարոյ՝ ոչ զսեր արդարութիւնն լինել , այլ զերկիւղ
խիթալի խաղաղութիւնն՝ յորշակ յակաստանի կայր Կար-
քեդոն, որոյ վասն և Կասիկաս չկամէր զկործանումն Կար-
քեդոնի , առ ՝ի խափանելոյ զապիրատութիւնս , և զբա-
րիոք գնացոյն պահպանելոյ , զի երկիւղիւ ախտին սանձաս
հարեսցին, անդէն ասա ՝ի վերայ բերէ Պալատեոս ասե-
լով . “ Վակայն անմիաբանութիւն և ագահութիւն

և իշխանասիրութիւն այլով և ևս չարեօք բնաւորեալով յիս աջողակս, յետ աւերածոյն Կարբեդոնի առաւել ազդոյս առնելին ,, : Որով խնամանաւք թէ յառաջն և սո- վոր էին այդոցիկ ծնանել և առնել. ուստի յարէ 'ի նոյն զվասն էրն ասացելոյ բանին. “ Կանղի զրկանք, ասէ, կարօղացն, և այսու հերձիք ժողովրդեան 'ի ծերոցն, և այլ ևս գժտութիւնք ընտանի լինելին անդստին 'ի սկզբա- նէ. և ոչ ևս աւելի քան 'ի մերժիլ Թագաւորացն յորժամ 'ի վերայ կայր երկիւղ 'ի Տարկունեայ, և պատերազմ առատիկ յարեաւ ընդ հարուրացիս, արդար իրաւամբք և չափաւորութիւնք վարեր ,, :

Տես զնոյնդ նա և 'ի հակիրճ ժամանակին՝ յորում յետ՝ բաց վտարելոյ Թագաւորացն՝ փոքր մի արդար իրաւամբ և չափով գործէին իրքն, զերկիւղն ասէ լինել պատ- ճառ. քանզի երկնչէին 'ի պատերազմէն՝ զոր նիզակակ- ցութիւն հարուրացւոց մղէր առ Հռոմայեցիս արքային Տարկունիոս՝ մերժեալն 'ի Թագաւորութենն և 'ի քաղա- քէն : Հայեաց և զոր զինեն յարակից. “ Յետ այնր, ,, ասէ, ծառայաբար գժողովուրդն վարէր ծերակոյան, ,, զկնեցաց նորա և զպատուհասից զօրէն Թագաւորի ,, վճիռ հատանէր. զանդաստանն կորզէր. և այլոցն ինաւ ,, լով Թարմատարք, միայնակ տիրանային : Ի գժնդա- ,, կութեց աստի, և առաւել և 'ի վաչխից Հարստահարեալ ,, ժողովրդեանն՝ որ և վասն յանդագար պատերազմաց ,, հեծէր ընդ հարկօք և ընդ զինուորութիւն, զէն առեալ ,, պաշարեաց զքաղան նուիրական և զսահմանեհեանն. և ,, ընկալաւ յայնժամ զտրիբունան և զայլ ևս իւր իրա- ,, ւունս : Կրկպատակութեցս և մնաքատմանց յերկաքանչ- ,, չիւր կողմանց՝ վախճան արար երկրորդ պատերազմին ,, Կարբեդոնի ,, : Տեսանես ահա, զի յայնմ ժամանակ, այսինքն է՝ 'ի սակաւ միջոցսն յետ բառնալոյ Թա- գաւորաց, որպիսիք ոմանք էին հռոմայեցիք, զորոց ասացն՝ թէ “ Իրաւունք և լաւութիւն առ նոսա՝ ոչ յօրի- նաց հաստատեալ, այլ 'ի բուսոյ բարուց ,, :

Իսկ արդ եթէ այսպիսի ցուցան ժամանակքն՝ յորում

գեղաշուք քարոզիւք և քաջալաւ տերութեն հռովմէա-
կան, զինչ զհետ եկելոցն դարուց արժան դատիցիմք ա-
սել և կարծել, յորժամ տակաւ տակաւ փոխանակեալ՝ զի
բանիւք պատմագրին ասացից, գեղաշուքն այն և քաջա-
լաւ՝ եղև ամենասաստ և ապիրատագոյն, այն է՝ յետ աւերա-
ծոյն Կարքեդոնի, որպէս նա ինքն յայտ արար։ Ո՛չ այնց
ժամանակաց իբր կարձառօտ յիշատակէ և նկարագրէ
Պաղստինոս. և մարթ է վերծանել՝ի պատմագրութե-
նոցա, թէ զիարդ յեղծանել վարուց՝ որ՝ի յաջողա-
կաց իրաց ներգործեցաւ, ձեռն արկին՝ի մարտս քաղա-
քականս։ "Յայնմ ժամանակի, ասէ, վարք երիցագու-
„ նիցն ոչ էս մեղմաբար որպէս յառաջն, այլ զօրէն
„ հեղեղաց վայրաբերեալք, այնպէս լինի յանառակու-
„ թիւն և յագահութիւն հարան մանկագոյնքն, մինչև իրաւամբք
„ լինէր ասել՝ թէ ծնեալք էին նոքա ոչ զիւրեանց ինչ
„ ունել իբր՝ի կալգի, և ոչ այլոց ներել..։ Յօսի ասպա
Պաղստինոս բազումս ինչ յաղագս անկարգութեց Սիղ-
ղայի, և զայլ էս խանգարմունս տերութեն. զոր այլ վի-
պագիրք էս միաբան յայտ առնեն, թէպէտ և վայելչա-
բանութիւք կարի ստորինք։

Տեսանես ահա, որպէս կարծեմ, և ամենայն ոք մտա-
դիր կարի դիւրաւ առնու՝ի միտ, թէ՝ի խոհերս չարախո-
տավատ վարուցն սողոսկեալ կայր այն քաղաք յառաջ
քան զգալուստ երկնաւոր արքային մերոյ։ Պ՛ասն զի այս
ամենայն գործեցան՝ ոչ միայն մինչ չև էր սկսեալ Պետ-
մարինով ուսուցանել, այլ մինչդեռ չէր իսկ ծնեալ՝ի կու-
սէն։ Պ՛պա եթէ զայնչափ և զայնպիսի չարիս ժամանա-
կացն այնոցիկ որ՝ի սկզբանն տանելիք էին, և յետ կործան-
մանն Կարքեդոնի անբմբռերելիք և սոսկալիք, ոչ իշխեն նո-
քա համարել աստուածոյն իւրեանց, որք են դևք չարա-
հնար խորամանկութիւք սերմանիչք՝ի մարդկան միտս մոլար
խորհրդոյն՝ յորոց բողբոջեցան այնպիսի քարուսկանք,
առիմք ուրեմն զայժմու չարիքս։ Պ՛պեի համարիս, որ վերկա-
ւեալ վարդապետութիւնն խափանել զպաշտօն սուտ և պատիր
աստուածոյն, և զմարդկան վնասաբեր և զեղեռնաւոր

*ցանկութեիս ՝ձեռային իշխանութեիք անարգեալ և դատա-
պարտեալ՝ ամենայն ուրեք զիւր հաւատացեալս տակաւ
տակաւ կորզել յաշխարհէ աստի՝ որ չարեաքն այնոքիւք
գայ ՚ի նուաղութեի, որով կառուսցէ զյաւիտենականն
քաղաք, զփառաւորեալն՝ ոչ ունայնութեին պարծանօք,
այլ դատաստանաւ Հմարտութեի։*

ԳԼՈՒԽ ԺԹ

*Յաղագս ապականութեի հոռովմական պետութեին՝ մինչ չև գիցապաշտութեին
բարձեալ էր վերս։*

*Այ ահա այսու օրինակաւ տէրութեին հոռովմայեցւոց
այլափոխեալ, որ գեղանին էր և քաջալաւ, եղև հետ-
զհետէ տխեղծ և անագորոյն. զոր ոչ էս ինքն առաջին
ասեմ, այլ նոցին մատենագիրքն՝ յորոց զայսոսիկ ուսաք
աշակերտաբար, բազմօք յառաջ քան զՔրիստոսի գա-
լուստն։ Ահա նախ քան զգալ Քրիստոսի, յետ բնա-
ջինջ լինելոյ Կարքեդոնի, երիցագունիցն վարք՝ ոչ որ-
պէս յառաջն տակաւ տակաւ, այլ հեղեղաբար սա-
հեալք, մանկագունիցն էտուն զառածանիլ յանառա-
կութիւն և յագահութիւն։ Ոսող գացեն և կարգաս-
ցեն մեզ զպատուէրս կանոնաց դից իւրեանց տուեալ
առ ժողովուրդ Հռովմայ՝ յարգելոյն անառակութեի և
ագահութեի։ Այլ իցէ ՚թէ լռէին ևեթ դիք ձառել
առ ժողովուրդն զողջախոհութեի և զհամեստութեի, և
ոչ եթէ պահանջէին ՚ի նմանէ զծանակելիս և զամօ-
թալիս, վաւերականս առնելով զընտասակարս սուտ աս-
տուածոցն իւրեանց։ Ընդ երեցին ապա զմերն՝ և մաղ
գարեւիք, և սուրբ աւետարանաւն, և առաքելական
գործովք և թղթովք՝ բանս բազմապատիկս հակառակ
ագահութեան և անառակութեան ամենայն ուրեք առ
համագումար ժողովուրդս՝ զիարդ վերհապանծս և*

ՅՃայնագոյնս՝ ոչ իբր յիմաստասիրացն վիճմանց չափն
էր, այլ իբր պատգամն յԱծէղէն առնոց որոտալ։ Այս
սակայն քան զայն՝ զի տէրութիւնն յոտացաւ և յասպիրատու-
թիւն դարձաւ խնդիշութիւն և ագահութիւն և խառնակրօն
գարշ վարուք յառաջ քան զգալուստ Քրիստոսի, ոչ հասա-
րիւն գիւտ աստուածոյն իւրեանց. իսկ զնեզուելիսն զոր
յայսմ ժամանակի կրեն վասն ամբարտաւանութեան և յո-
փութեան իւրեանց, ՚ի քրիստոսական կրօնսն ձկտեցուցա-
նեն։ Այնէ զսորա հրամանսն յաղագս ուղիղ և գովելի
վարուց՝ լսելով լսէին և յանձինս բերէին առ հասարակ
Թագաւորք երկրի և ժողովուրդք ամենայն, իշխանք և
համարէն դատաւորք երկրի, երիտասարդք և կուսանք,
ծերք տղայովք հանդերձ, և ամենայն չափ հասակի, և
արք և կանայք, և առ որս Ա՝կրտիչն Յովհաննէս խօսէր՝
մաքսաւորքն և զինուորք, արդարեւ յերկրի աստ կենցա-
ղական բարեբաստութիւն վայելչանայր տէրութիւն, և ՚ի
յաւիտենիցն կենաց բարձրութիւն վերանայր՝ Թագաւո-
րել երանաւետեալ։ Այլ քանզի ոմն լսէ, ոմն արհամար-
հէ, և բազումք՝ առաւել հրապուրանաց ախտիցն են սէ-
րոցք՝ քան օգտաբերք խոստումն առաքինութեան, նմին իրի
հրաման է ծառայից Քրիստոսի՝ եթէ Թագաւորք իցեն, եթէ
իշխանք, եթէ դատաւորք, եթէ զինուորք, եթէ գա-
ւառապետք, եթէ մեծատունք, եթէ աղքատք, եթէ
ազատք, եթէ ծառայք, այր կամ կին, զի համբերու-
թիւն տանիցին տէրութեան յոտացելոյ և անօրինի՝ եթէ
այնպէս Հարկ իցէ. և սովին ժուժկալութիւն առասցին ան-
ձանց տեղի անուանի ՚ի սուրբ և ՚ի գերապայ և յերկնային
տէրութիւն զուարթնոց վերնոց, ուր կամք Այ են օրէնք։

ԳԼՈՒԽ Ի

Ջմբր երջանկութեի վայելել ինդրէն, և զմբր վարս կեալ, որք միանգամ մեղադիր լինին առաջի քրիստոսի կրթիչս։

ՆԱՅՍ արդ այնպիսի պաշտօնատարք և սիրողք աստուածոյդ այդոցիկ, որոց և նմանողն լինել՝ի չարիս և յապիրատութենէ՝ զուարճալի է նոցա, ոչ ինչ հոգան՝ զի մի աերութենէն վատթարեալ իցէ և՝ի չարիս համակեալ։ Այնպէս կայցէ մեսցեյէ, ասեն, բարգաւաճ բազմութեբ գնդաց գնդաց զօրու, յաղթութեբք գերապանծ. և որ ևս երջանկաւէսն է, անբոյիծ խաղաղութեբ։ Այս մեզ զինչ շահ այսի։ Այլ այն իսկ է, ասեն, մեզ կարևոր, որպէս զի այր իւրաքանչիւր միշտ զմեծութենէն առաւելուցու, որովք զօրըստորէ շահայլութենս լինի հայթայթել. որով հզօրն զանաւագն ընդ իւրև նուաձիցէ։ Այնմատանց աղքատք ծառայեսցեն առ՝ի յագուրդ գտանելոյ, և զի նոցին պաշտպանութեբ կայցեն խաղաղիկ յանդգնծութեբ։ Յողովուրդք մեռահաձոյք լինցեն՝ ոչ առ խրատատուս իւրեանցն օգտի, այլ առ առուիս փափկութեբց։ Այ՛ի հրամայեսցեն դժուարինք. մի արգելցեն անմաքուրքն։ Յադաւորք մի հոգասցեն՝ եթէ քանի լաւ արանց իշխեն, այլ եթէ քանի հպատակաց։ Պատուաւք ծառայեսցեն թագաւորաց՝ ոչ իբր առաքինորդաց առաքինի վարուց, այլ իբր բռնաւ իշխողաց և խնամատարաց գրգռանաց իւրեանց. և ոչ եթէ մտերիմ սիրով պատուեսցեն զնոսա, այլ չարաչար և ծառայաբար երկիցեն։ Որինք վերժինդիր լինիցին, յորժամ որ զեան բերիցէ այգւոյ օտարի՝ քան եթէ ոգւոյ իւրում։ Այ՛ի որ առ գատաւորս քարշեսցի, բայց որ յօտարին ինչս, ՛ի տուն, ՛ի կեանս, կամ յահս մնայս ումեք վնասից նեղացուցիչ կամ վշասաբեր. իսկ զիւրոցն, կամ ընդ իւրս, կամ ընդ ուս և կամակից եղելոյ՝ արասցի իւրաքանչիւր որ զինչ և հաճոյ է։ Պատ-

մասցին բոզք յայտնիք, կամ՝ ի պէտս ամենեցուն՝ որոց կամք իցեն, և կամ առաւել՝ ի պէտս նոցա՝ որք չկարեն ուսնել զառանձնականս։ Առաւսցին ապարանք ընդարձակք և յոքնայօրէն. խրախուսնք յանախեսցեն բազմախորհրդիկ, յորս ումմ հաձոյ իցէ և մարթելի՝ զյայգ և զգերեկ լինիցի խաղալ, արբենալ, ժայռքել, մեղկանալ կամ ողողանիլ։ Այլ ամունն ամենայն ուրեք հնչեսցեն, և թատրունք յերգս անառակ ցնծութեանց, և յամենայն ազգ խժական և կամ ազտեղի զուարճութեանց անկղմտանայցեն։ Վասնաման հասարակաց համարեսցի այն՝ որում անհաձոյասցի այս ելոյանկութիւն. և եթէ ոք իշխեսցէ փոխել կամ բառնալ, մի ունկն մատուսցէ նմա ազատ ամբոխն. խըլեսցէ՛ի կայիցն, բարձցէ՛ի կենդանեաց։ Զայն դէպ ընդունելի լինիցին իբրու ձմեռաբիտ աստուածս, որք զայն երջանկութեանց հոգայցեն ստանալ ժողովրդոց, և պահպանիցեն զատացեալն։ Պաշտեսցին նոքա որպէս կամին. խաղս խնդրեսցեն՝ որպիսիս հաձինն, զորս ունել կարիցեն ընդ իւրեանցն կամ չիւրեանցն պաշտօնէից. այսմ եղեալ փոյթ տարցին աստուածքն, զի այսպիսեաւ երջանկութեանց երկիւղ լինի մի լիցի ոչ՛ի թշնամւոյ, ոչ՛ի ժանտախտէ, և ոչ՛ի հարուածոյ խմբէ։

Որք յողջամտաց զայդպիսի տէրութեանց առնուցու՛ի համեմատութեանց՝ ոչ ասեմ հռովմէական պետութեանն, այլ տանն Պարդանաբաղայ. որ երբեմն թագաւոր՝ այնպէս իմն անձնատուր՛ի հեշտութեանս դառաւ, մինչ հրաման տայր արձանագրել յիւրումն չիրմի, «Օ՜ այն եւեթ ընդ իս ունիմ՛ի մեռանելն, զոր ցանկասիրութեանց իմ անդէն՛ի կենդանութեանց վատնեալ և սպառեալ եր»։ Այնեթ դոքա մերս հակառակորդք զսա ունէին իբրեանց թագաւոր՝ հեշտալեացս դիւրացուցիչ, և ոչ միայն ումեք յայսպիսին խափանարար, այլդարեւ մտադիւրագոյն և նմա ձճնէին զմեհեան և զբուրմ, քան եթէ Հռոմուլոսի հին հռոմայեցիք։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Չ՛ինչ կարծիք եղեն Կիկերոնի յաղագս հոռովմական պետութեան։

Այլ արդ եթէ նախատինս ընդունի այր՝ որ զհռովմէական պետութիւն ասիցէ վատթարեալ և յապիրատութիւն համակեալ, և ոչ փոյթ է սոցա ընդ բծկանս և ընդ ագեղութիւն վարուցն գարշելեաց՝ որով նա լցեալ էր, այլ միայն զի կացցէ և մնասցէ, լուիցեն ահա՝ ոչ ըստ պատմաբանելոյն Սալուստիոսի՝ վատթարեալ և՛ի չարսիս լուծեալ, այլ որպէս Կիկերոն Հառաբանէ, այն ինչ խոպառ կորուսեալ, և ոչ մի ինչ մնացեալ՝ և՛ տերութիւնն։ Վասնզի յառաջ կացուցանէ զԿիպիոն՝ զայն որ զկարքեդոն յաւեր դարձոյց, խօսել զպետութիւնն՝ մինչդեռ յինքն բերէր զխանգարումն արտաձառեալ՝ և՛ Սալուստիոսէ, թէ մերձ՛ի կործանումն կայր։ Օ՛ի զայմժամանակէ են բանքն, յորժամ ոմն՝ և՛ Վրակեանց անտի սպանաւ, յորմէ ծանունց խռովութեաց լեալ սկիզբն՝ գրէ Սալուստիոս. քանզի՛ և նոյն գիրս յիշատակի մահ Նորա։ Վասցեալ էր Կիպիոն՝ և՛ կատարած երկրորդ գրոցն, թէ զոր օրինակ՛ի քնարս և՛ի փողս, այլ և՛ի նուագս և՛ի ձայնս՝ ներդաշնակութիւն ինչ պահի յայլատարբեր հնչմանց, յորոյ՛ի փոխխելն կամ չանհամաձայնել՝ ոչ սխորժէն գիտողացն լսելիք, և այն ներդաշնակութիւն՛ի խառնուածոյ անմանեաց ձայնից բացակատարի զուգաձայն և քաջագէպ, նոյնպէս՛ի զանազան կարգս՝ որ գերագոյն, որ ստորին, որ միջակայինս, իբր՛ի հնչմանց ոմանց՝ զուգաձայնի քաղաք անմանեաց համաչնչութիւն ըստ բարեխառն չափոյ. և որ յերաժշտից ներդաշնակութիւն առձայնի յերգսն, այն խակ է միաբանութիւն՛ի քաղաքի, քաջասիրտ և գեղեցիկ յօդակապ անքակութիւն չամենայն պետութիւնս, որում և առկայանալ անհնար է, բնաւ առանց արդարութեան։

Յետ խօսելոյ նորա առաւելապէս եւս , թէ քանի օգտակար է քաղաքի արդարութիւն , և որչափ վնաս իցէ՝ և թէ այն պակասիցի , խօսել արկանէ Պիղոս՝ մի ի լսողաց անտի բանախօսութիւնն , և աղաչէ Ննդրատագոյն եւս բացայայտել զայն խնդիր՝ բազում ինչ զարդարութիւն ձառելով , այսու ի յածէր բան հասարակաց՝ թէ անմարթ է վարել զպետութիւն առանց զրկանաց : Հաւանեցաւ Պիղպոն , թէ արդարեւ այն խնդիր հետաքննելոյ արժանի է և լուծանելոյ . և յաւել ասել , թէ իբր ոչ ինչ իցէ խօսեցեալ նորա դեռ յայտագս պետութիւն . և թէ յերկար եւս մարթ էր ձգել զբանն , եթէ չէր ինքնին անելիք բայելի՝ թէ ոչ միայն սուտ է ասացեալն՝ անմարթ լինել վարել զպետութիւն առանց անիրաւութիւն , այլ հակառակին է ամենայնիւ ասոյգ՝ թէ առանց կատարեալ արդարութիւն անհնար է լինել պետութիւն հասարակաց պետութիւն : Յայլ խնդրոյս բացատրութիւն ձգեցաւ ի վաղուն օրն , յերրորդ գիրս անդ ընդ քննութիւն արկանի բանն սաստիկ պայքարաւ . քանզի յանձին կալաւ Պիղոս ըզհակաձառութիւն այնոցիկ , որք կարծէին՝ թէ առանց անիրաւութիւն չէ հնար վարել զպետութիւն , բայց նախ յայտ արարեալ թէ ինքն չէ ի նոյն կարծիս համամիտ : Յետ նախասեաց ի կամակարուց ի կոյնն անիրաւութիւն հակառակ արդարութիւն , հոգացեալ գոգոյս ցուցանել հաւանելի փաստիւք և յարացուցիւք՝ թէ անիրաւութիւն պետանի է առ պետութիւն , իսկ արդարութիւն՝ անպետ ասի : Յայնժամ Ելիոս աղաչեցեալ յամենեցունց , արդարութիւն եկաց ջատագով , և հաստատեաց ըստ ամենայն կարի , թէ չէր թշնամի քաղաքին այնպէս իբրև զանիրաւութիւն , և ոչ այլով իւիք՝ բայց արդարութիւն և թէ մարթ է անպետիլ և կալ պետութիւն :

Ի վերայ խնդրոյն՝ որչափ բաւական թուեցաւ , Պիղոն դարձաւ յառաջին խօսս իւր , յոչ առնելով և դովելի ցուցանելով զհամառօտ սահմանն հասարակաց պետութիւն , որով ասացեալն էր՝ թէ այսպիսի պետութիւն է ոչի կամ իսկութիւն ժողովրդեան : Իսկ ժողովուրդ ի-

մանայ՝ ոչ զլոլոր խումբ բազմութենն, այլ զխուժին հա-
ւաքեալ ձայնակցութիւք իրաւանց, և կցորդակցութիւք օգ-
տակարութեանն ։ Լուսցանել յետ այնր՝ օրքան լոյս
պիտանութիւն սահմանի ՚ի վիճաբանութիւնս ։ և ՚ի
սահմանել անտի զոր ինքնին ասացեալ էր՝ խնաստասիրել,
թէ յայնժամ է պետութիւն, այն է՝ իրական անտե-
սութիւն ժողովրդեան, յորժամ բարիոք և արդա-
րութեամբ վարի, եթէ ՚ի միջոլ ազգայն, եթէ ՚ի սա-
կաւուց ազնուաց, և եթէ ՚ի հասօրէն ժողովրդենէն ։
Ւսակ յորժամ անիրաւ է թագաւոր՝ զոր ըստ Յունացն
սովորութիւն բռնաւոր անուանել, կամ անիրաւ ազնուա-
կանքն՝ զորոց գկամակցութիւն ասէ լինել Հերձուին, կամ
անիրաւ ինքն ժողովուրդն, որում չգտեալ զոյլ անուն
ընտրել՝ կոչէ և զնա բռնաւոր, յայնժամ ոչ ևս լոկ յոռա-
ցեալ լիներ պետութիւն, որպէս ցուցաւ աւանդ յառաջ,
այլ որպէս փառան ուսուցանել Համեմատ սահմանացն ա-
ւանդելոց, ոչ բնաւ յոռին կայր պետութիւն ։ վասն զի ոչ
ևս էր ոդի կամ սիրտ ժողովրդեան, ուր բռնաւորն հեր-
ձուածով հարստահարեր զայն ։ և ոչ ինքն ժողովուրդն
էր այլ ևս ժողովուրդ՝ եթէ լիներ անիրաւ, զի ոչ էր բազ-
մութիւն միաչեալ համահաւանութիւք իրաւանց և շահիցն
հաղորդակցութիւն, որ այն իսկ էր սահման ժողովուրդ
անուանի ։

Ւյայս ուրեմն յորժամ հռովմէականն պետութիւն այնպէ-
սի էր՝ որպիսի Ւալուտիոսն նկարագրէ, ոչ եթէ լոկ յոռա-
ցեալ էր և համակ անկարգացեալ ըստ նորա ասելոյն, այլ
բնաւին անգոյ էր՝ ըստ փաստաբանութեն եղելոյ յաղագս
պետութեն ՚ի մէջ արանցն գլխաւորաց յայնմ պետութեէ ։
Որպէս և նա ինքն Ցուղթոս Ալիկեան ոչ ՚ի Ալիպիանէ
և ոչ յայլոյ ուրուք, այլ յիւր դէմն առեալ զամին, ՚ի սկիզ-
բըն հինգերորդ գրոց յիշատակէ նախ զտող Ւննեայ
քերթողն, զոյն՝ թէ “ Հռովմայեցւոցն իրք հաստա-
տեալ կան նախնի սովորութիւքն և արամբք ,, , ՚ի վերայ
բերէ ասելով. “ Ո՛յա տող՝ եթէ առ կարգութեամն և
,, եթէ առ ձգնաթութեն իբր ՚ի պատգամաց ինն խօսե-

„ ցեալ վարկանիմ. քանզի ոչ աւրք առանց բարեկարգեալ
„ քաղաքի, և ոչ սովորութիւնք առանց վերակացութե՛ա-
„ բանին այնոցիկ կարող ինչ էին հիմնարկել կամ յեր-
„ կարագոյն ժամանակաւք ունել յականատեսի զգեստուԹի՛
„ այսպիսի ընդ բացարձակ՝ վայրս իշխեցող։ Վ՚ասն որոյ
„ նախ քան զմեր ժամանակս՝ Հայրենեացն սովորութի՛
„ ինքնին երևեցուցանէր արս ընտրականս, և զվաղեմին
„ սովորութի՛ և զկարգս առաջնոցն պահէին հաստատուն
„ աբքն ականատեսք։ Իսկ մերս գար ընկալեալ զգե-
„ տուԹի՛ն՝ օրինակ իմն իբր պատկեր հրաշանկար՝ բայց
„ առ հնուԹե՛ն անդրացեալ, ոչ միայն անփոյթ արար ըստ
„ նախատիճ երանգոյն նորոգել զայն, այլ և ոչ գեԹ-
„ զկերպարան նորա պահել հոգացաւ, և զիաշորագոյն
„ գծագրութի՛ն։ Վ՚ասն զի ո՞ր՚ի նախնի սովորութի՛ց
„ անտի, յորս ասէ նա հաստատեալ զիրս հռովմայե-
„ ցւոց, կայ պահի այժմ. այլ այնպէս՚ի մոռացօնս լեալ
„ տեսանեմք, զի ոչ միայն անյուշ կան, այլ բնաւ յան-
„ գէտս եղեալ գտանին։ Յո՛ զինչ յաղագս որերոյն ա-
„ սացից. զի սովորութի՛ք ինքնին ընդդեմն առ՚ի չգոյե
„ արանց. և զայսպիսի մեծի չարեաց ոչ միայն համարս
„ ունիմք տալ, այլ և իբր մահապարտաց՝ դատաստան ըստ
„ իրաց ինչ կայ մեզ առաջի։ Վ՚անզի յերեսաց անկարգու-
„ թե՛ց մերոց և ոչ ըստ դիպաց ինչ բանիւք ևեԹ ունիմք
„ զգեստուԹի՛ն, այլ արդեամբք վաղու և կորուսաք „։

Ո՝յսոսիկ խօսեր Կիւրեղն՝ ոչ սակաւ ժամանակաւ (կամ ԵօԹանասունն ամաք) յետոյ քան զմահ Կիւլխմնի ապրեկեցոյ, որում յիւր գիբրն տայր իմաստասիրել յաղագս հասարակաց պետութեան. բայց յառաջ (իբր վեԹասունն ամաք) քան զՔրիստի գալուստն. և եԹէ այս բանք լսելի լինէին և ձառեալք յետ տարածանելոյ և զօրա-նալոյ քրիստոնէական կրօնիցս, ո՞ր՚ի հակառակորդաց այսմ ոչ՚ի քրիստոնեայս արկանէր զպատճառս չարեաց այնոցիկ։ Վ՚ասն ընդեր ապա ոչ հոգ կալան աստուածքն նո-ցա՝ առ՚ի չկորնչելոյ յայնժամ պետութե՛ն այնմիկ, զորոյ զկորուստ տեսեալ ողբայ Կիւրեղն կանխագոյն քան

զՔնի գալուստն մարմնով։ Տեսցեն ահա գովիչք նորա, որպիսի էր այն առ նախնիսն և առաքիք և սովորութիւնք. միթէ եղե՞ւ ի նմա արգարութիւն չմարիա. ոչ ապաքէն չէր այն և յայնժամ կենդանի սովորութիւնքն, այլ գուցաե պէղեալ եւեթ. զոր և Աիկերան յանդիմս բացածանոյց համառօտ ի գովելն զայն պետութիւն։ Ասակայն այլոյր տեսցուք զայն, եթէ տէր կամիցի. զի ցուցանել Քրիստոս այդ յիւրում տեղւոջ ըստ սահմանաց նորին իսկ Աիկերոնի ի բացատրել նորա բերմամբ Աիխոխոսի, թէ զինչ էցէ պետութիւնն, և զինչ ժողովուրդ, յառաջ առեալ զայլ և զ յոյսն բանս զԱիկերոնի և զայլոց՝ որոց խօսել տայ յայնմ վիճաբանութիւնն, թէ հռովմէականն այն ոչ բնաւ եղև պետութիւն, զի ոչ երբէք եղև ի նմա չմարիա արդարութիւն։ Քայ հաւանելի ինչ սահմանաց՝ եղև արդարեւ յիւրում կարգի պետութիւն, լաւ և անտեսեալ յաւաչեաց հռովմայեցւոցն՝ քան ի յետոյ։ Քայց արդարութիւնն չմարիա չէր և չէր՝ քայց յայնմ պետութիւն, որոյ հասարիչ և առաջնորդ Քին է, եթէ և զայն կոչել հասարակապետութիւն հարկ իցէ. այնու զի չէ մարդի ժխտել թէ անտեսութիւն ժողովրդեան իցէ և այն. իսկ եթէ այս անունն այլոյր այլազգաբար հնչեցեալ, թերևս օտար իցէ յընտանի մերս բարբառոյ, անշուշտ յայնմ քաղաքի է չմարիա արգարութիւն, զորմէ սքրազանն ասէ զկր. "Վառաւորհան խօսեցաւ վասն քո՝ ահաւադիկ քաղաքդ ՈՅ ... Ասղմ. ՀՀ. 3։

ԳԼՈՒԽ ԻՐ

Ձհզև ինչ փոյթ դիցի հռովմայեցւոց, զի մի պետութիւն հասարակաց կորիցէ անկարգ վարուք։

ՔՈՐ որ մեր այժմու խնդիրս է, զիարդ և գովելի առիցէն եղեալ կամ լինել զայն պետութիւն յառաջն, սա-

կայն ըստ վկայելոյ գիտնադունիցն նոցա մատենագրաց՝ կանուխ ևս քան զգալուստ Քրիստոսի վաստակեալ էր այն և լցեալ էարեաք. Մանաւանդ էր իսկ ոչ, զի բարբառեալ էր զկնովին կորստական վարուք։ Այսպա առ՝ի չկորընչելոյ այնմ պարտ էր դից վերակացուաց նորա՝ աւանդել դիցապաշտ ժողովրդեանն կանոնս վարուց և կարգաց, յորմէ ընդունէին զպաշտօն բազմութիւն մեհենաց և քրմաց և յոքնատեսակ զոհիւք, բազմապատիկ և ազգի ազգի ապարոյրութիւք, խնդալից ծնանիմբութիւք, և յոլովագոյն ևս խաղուցն հանդիսիւք։ Այր ընդ հակառակ՝ զկնի այնոքիկ զլուբեանցն եւԷ վկարէին գործ. ոչ փոյթ առնէին զի ժողովուրդքն զիարդ կեցցեն, մանաւանդ գուն գործէին՝ զի չարաչար կեցցեն, երբ նոքա երկիւղիւ նուաստանային՝ զամենայն առ՝ի նոցա պատիւ ընծայատրէին։ Այս կամ եթէ ետուն դիքն հրամանս ինչ ուղղութեան, բերցի յառաջ, ցուցցի, ընթերցցի. զոր արդեօք օրէնս առտուածոց տուեալը քաղաքին այնմիկ արհամարհեցին Ներակլոսքն՝ առ՝ի խոտովութիւն վերՙ՝ի վայր առնելոյ զամենայն. զոր օրէնս Այարիոս և Կիննա և Կարպոս, մինչև ձեռնարկել՝ի մարտս քաղաքականս, յանօրէնն պատճառաց սկզբնաւորեալ, անողորմ՝ի գործ եդեալ, և անագորոյն՝ի գլուխ հանեալ. զորմէք հրամանօք դից Էանց և Աիղղա, այն զորոյ զվարս և զգնացս և զարարուածս՝ ըստ Ճառագրելոյն Աղեքսանդրոսի և այլոց վիպագրաց՝ սարսափուածն է՝ի լսել։ Այս ահա՞ ոչ խոստովան լիցի, թէ կորուսեալ իսկ էր յայնժամ տէրութիւնն այն։

Այլ թերևս յաղագս այսպիսեաց գնացից քաղաքացւոց՝ զվերգիլեանն առած որպէս սովոր են, ընդդէմ բերել իշխեսցեն առ՝ի պաշտպանութիւն իւրեանցն աստուածոց։

"Այստուածքն ամէն՝ի բաց չորան,
Ընդեալ ըղձորչս և ըզսեղան,
Որովք այս գահ կայր՝ի կայան ...։ Այնէիան. Ը։

Այայց նախ առաջին, թէ այդպէս իցէ, չունին պատճառս տրանջելոյ զքրիստոնէական կրօնիցս, որպէս թէ ընդ այս գժգոհեալ աստուածոց իւրեանց՝ թողեալ իցեն զնոսա.

քանզի ահա նախնիք նոցա իւրեանցն խառնակ գնացիւք վաղու ևս ՚ի սեղանոց քաղաքին վարեցին ՚ի բաց զաստուածսն բազումս և զմնացուսն մնուսնս դունակ Հանձինս Աւյլ սակայն ուրանօր էր այգ ամբոխս աստուածոց յորժամ կանխագոյն ևս քան զնախնական վարուցն ապականել՝ առաւ Հռոմ և այրեցաւ ՚ի գազ ղնացուց անտի։ Այնքան մեծ դոլով ՚ի քրէն լինելին ։ Այանզի յայնմ ժամանակի ընդ ձեռամբ Թէոսմեացն անկեալ ողջոյն քաղաքին, կապիտոլեանն բլուր ևեթ մնացեալ էր ։ որ և այն ՚ի բուռն եկեալ էր, եթէ արդեօք ՚ի հնձել աստուածոցն ոչ արժան կային սագք ։ յորմէ եղև ասա յեգիպտացւոցն անապաշտութեն զառածանել Հռովմայեցւոց՝ ծծնս կատարելով սագուց , որպէս և նոքա զանասունս և զձուկունս պաշտէին ։ Այլոց արդ յաղագս այսպիսեաց եկամուտ չարեաց՝ որք յաւէտ մարմնով են քան Հոգւով , ՚ի Թէնսմեաց կամ յայլ Հարուածոյ խնդիր ՚ի վերայ Հասեալք, ոչ ևս առ տեղեաւս իրաւաբանեմ։զարդիս յաղագս եղծմանն վարուցն Ճառեմ ։ որոց նախ առ սակաւ սակաւ խրթնացեալ, և ապա հեղեղօրէն վայրաբերեալ այնպիսի եղև տերութենն կործանումն, Թէ և յոտին կալով յարկացն և որմոց, մինչև երևելի մատենագրաց նոցա ասել առանց յերկուանալոյ՝ Թէ յայնժամ կորուսեալ իսկ էր ։ Այս իրաւամբք արդեօք դիւքն ՚ի բաց գնային անտի առ ՚ի նորին կորուստ՝ Թողեալ լքեալ զնորոյս և զսեղանս , եթէ ապահաս արարեալ էր քաղաքին զնոցա հրամանօքն յաղագս բարեկրօն քաղաքավարութեն և արդարութեն ։ Այլոց արդ որպիսի աստուածք լցեն՝ աղէ ասասցեն, եթէ չկամեցան կալ ընդ դիցապաշտ ժողովրդեան իւրեանց զոր ՚ի չարաչար կեանն ոչ խրատեցին առ ՚ի բարիոք կեալ ։

ԳԻՐՔ ԻԳ

Ի չափոխութիւն ժամանակաւոր իրաց ոչ ի տատապուիլ կամ ի հակառակուիլ դիւաց դան չառաջ, այլ կարելի ի գտաստանաց Հնմարին ոյց։

Օ՛ի զի դիք ձեռնտու երևին՝ի կատարումն անկարգ ցանկութեց ժողովրդեանն, այլ՝ի սանձահարել զնոյնս ոչ եղեն վերակացու։ Ա՞ռ զի այք ոմանք էին՝ որք Ա՝արիոսի՝ անուշան և վատատոհմիկ առն, արեանաբրբու առաջնորդի քաղաքական մարտից և միաբանակար գործոց ձեռն ետուն եօթն անգամ ամբառնալ՝ի հիւպատոսութիւն, և յեօթնեւորդումն անդ զկեանս իւր վախճանել՝ի աւուրբք, ապրեալ՝ի ձեռաց Ա՝իղղայի՝ որ յաղթականն եղև յետ սակաւուց։ Օ՛ի թէ՝ի սոսին չէին ձեռնտու նմին դիք իւրեանց, շատ է զի այդուիկ խոստովանին՝ թէ նա և՝ի զայրանալ դից հնար է հանդիպել մարդոյ ժամանակեաւն այնմ երջանկութեան՝ զոր սիրեին առաւելապէս. և թէ մարթ է՝ զոր օրինակ Ա՝արիոսի եղև, Հոխանալ մարդկան և վայելել յառաջութիւն, յուժեղութիւն, լինչս, ՚ի պատիւ, յիշխանութեան և յերկարակեցութէ, թէ և աստուածքն ցասուցեալք իցեն. նոյնպէս և տատապել մարդկան, որպէս Հռեգուղեայ դիպաւ, ՚ի գերութէ, ՚ի սարկութէ, յաղքատութէ, ՚ի տքնութիս, ՚ի ցաւս, և ՚ի նոյնս մեռանել, թէ և աստուածքն հաշտք իցեն։

Ա՝յդ եթէ հաւանին թէ այսպէս իցէ, ապա առանց ընդ բանս ինչ ածելոյ խոստովան լինիցին, թէ ոչ իւիք յօգուտ են դիքն, և վարկպարագի պաշտին։ Ա՝նգի եթէ կարգեցին նոքա յուսումն ժողովրդեան զառաւել հակառական առաքինութէնց հոգւոյ և լաւութէ վարուց, որոց վարձուցն աճկալութէ յետ մահուն է, և եթէ յայսոսիկ յանցաւոր և յատիժամեան բարիս անդամ նոքա ոչ առելացն իւրեանց ինասեն ինչ, և ոչ սիրելացն բարեգործեն,

առիմ֊ իցէ պաշտել զնոսա , էր սակս նոցա պաշտամանն լինի նախանձաւորութեի ։ Ընդէր ՚ի վշտագին և ՚ի ցաւալի յայսոսիկ ժամանակս՝ որպէս թէ նոքա առ խելս ինչ միկնեալ իցեն , արանչիւն լսի , և ՚ի նոցա սակս անհամբոյր թշնամանօք քարկոծի բրեստասական կրօնք ։ Սակ եթէ ունիցին նոքա յայսոսիկ իրս իշխանութի՝ կամ բարեգործական կամ վնասողական , հիմ ասա ՚ի սոսին նպաստաւիչք եղեն ամենասաքր առն \՝արիոսի , և անշնորհք՝ առ ամենալաւն Հռեգուղոս ։ Իսկ թէ այսու խելամուտ լինիցի ոք՝ թէ ինքեանք իսկ դիքն զայրացեալք են յանիրաւութեան և ՚ի չարութի ։ Ոչ եթէ այսր աղագաւ առաւել երկնչելի թուիցին և պաշտելիք , մի լսցի և զայդ կարծել , քանզի ոչ ինչ նուազ քան զ\՝արիոս պաշտէր զնոսա Հռեգուղոս . և ոչ յայն սակս առաւել ընտրելի թուիցին վարք վատթարութի , իբրև զի առաւել \՝անբնայ՝ քան Հռեգուղեայ նպաստամատոյցք կարծիցին աստուածքն ։ \՝ան զի \՝հետեղոս ամենագովելին ՚ի հռովմայեցիս՝ ունելով հինգ որդիս հիւպատոսականս , բարեբաստիկ գտաւ և ժամանակեայս Ջոխոթի . և \յաւիրկնա ամենալաւ՝ տուայտեալ կարօտութի , յերջանկական իբրումն կռուէ տապաստ անկաւ չառաջեալ ։ Սակ Ջմարիտ և հաւաստի երջանկութի երջանկանան արք բարիք պաշտօնեայք ՚ին , որ միայն կարող է տալ զերանութի ։

\՝ետսի յորժամ աերութիէն այնպիսկ կորուստ ՚ի վերայ կայր առ չարաչար վարուցն , ոչ ինչ հոգացան դիք նոցա ՚ի կարգադրութի կամ յուղղութի վարուց՝ զի մի կորիցէ . մանաւանդ յաւելուած և սպարին յապականութիս վարուց՝ որպէս զի կորիցէ ։ \՝ի իբր բարիք ոմանք ձևացեալ , եթէ իբրու տաղտկացեալք յանօրէնութի՝ քաղաքացւոյն՝ ՚ի բաց դնացեալ իցեն ։ Հաւրուն անդ էին , որպէս արդեամբք յանդիմանին , և պարտաւորք գտանին . ոչ օժանդակել կարացին՝ հրամայելով , և ոչ թաքչել՝ լռելովին ։ \Ոտղից զայն , զի \՝արիոս կարեկցութի գտեալ ՚ի միտս տուբացւոց անտի՝ յանձն էղե ՚ի խնամս \՝արիկէ աս-

տուածուհոյ յանտառի նորա , որպէս զի յաջողեսցեն նմա իրքն . և որ գլխովին վատնարեալն էր՝ յետս դար-ձաւ հզօրապէս , ածեալ ՚ի Հռոմ զգունդ անողորմ զօ-րավարն անգութ : Այս Թէ անդ զորպիսի յաղթութիւն տարաւ , քանի արիւնահանձ , անկարելիւր և խժդժա-կան քան զքնշնամւոյ , ՚ի պատմագրողս անգ ընթերց-ցին որք կամիցին : Այլ որպէս ասացիք , Թողում զայն . և ոչ անճանօթին այնմ Ա՝արիկեայ ընծայեմ զԱ՝արիոսի զարիւնահերկին երջանկութիւն , այլ առաւել գաղտնի սէր-տեսութիւն այ , որպէս զի ափիբերան լեցին հակառակորդք , և ՚ի մոլորուէ ազատեսցին այնոքիկ՝ որ ոչ կամակաւ հակա-ռակիցն , այլ զգուշեաւ ՚ի քենին առնուն զայսոսիկ : Ա՝ան-զի Թէպէտ լինի և դիւաց խառնիլ իւիք յերազ յայդ , բայց որչափ Թողացուցանեն գաղտնի կամք ամենազօ-րին , որպէս զի մի մեծ ինչ գրեսցուք զերկրաւորս բա-բեմասնուԹիւն , որ յոլովակի տուեալ լինի և չարաց , որ-պէս Ա՝արիոսի . և մի զայն դարձեալ չար ինչ համարի-ցիմք , տեսեալ զի բազումք ՚ի բարեկրօնիչ՝ միով և Ձմար-տին այ պաշտօնեից Ձախացեալ են նովաւ , Թէ և հակառակ կայցեն և դևք գլխովին . և մի կարծիցեմք Թէ այսքն պիղծք ՚ի պատճառս երկրաւոր բարեացն կամ չարեաց՝ աղաչե-լիք իցեն , կամ երկնչելիք : Ա՝ան զի զոր օրինակ մարդք չարք յերկրի , նոյնպէս և դևք ոչ զամենայն զոր կամինն՝ առնել կարող են . այլ որչափ յայ կարգաւորուԹենէն Թո-ղեալ է նոցա . որոյ դատաստանաց ոչ ոք բռնանդակա-պէս հասու լինի , և ոչ ոք իրաւամբք ստգտանող :

ԳԻՒՂԻՍ ԻՐ

Ցաղագս գործոց Սիղոյի , յորս դէք պանծային քնել ձեռնաու :

Ա՝ՅՂԱՑԻ ժամանակք այնպիսիք եղեն , առ որով ան-յեալքն՝ որոց ընդդէմ վրէժխնդիրն ձեռնայր , առաւել

փափաքելի գտան։ Ա՛ա ինչն յորժամ զառաջինն Հորդան
առյր զօրուն ՚ի Հռոմէ անդր հակառակ Ա՛րիոսի, ՚ի
զոհել իւրում այնպէս լինի անաբատ երևեցան փորոտիքն,
մինչև ելդահմայն Պաստուիոս ըստ գրելոյ Լիւիոսի,
յանձն էառ ՚ի տուգումէն գուշակուն կալ ՚ի դիպահոլ
որպէս զլիապարտ, եթէ զոր ինչ ՚ի սրտի ունէր Ա՛իդոյս, ոչ
տարցի ՚ի գլուխ աստուածոյն օգնականութիւն։ Ա՛հա քեզ
ցոյցք, թէ ոչ ՚ի բաց գնացեալ էին աստուածքն՝ լքեալ
զտաճարան և զսեղանս, երբ զելս իրացն նախատամէին,
և ոչ փոյթ ինչ առնէին խրատել զԱ՛իդոյս։ Այսպանչելին
նման յառաջ գուշակելոյն զպարբերաստութեն պերազանց, և
ոչ զբարեկամութեն բեկանէին սպառնալեօք։ Այեա այնր
յորժամ կայր նա յԱ՛ֆրիկէ՝ պատերազմել ընդ Ա՛ինդրա-
տոյ. պատգամ տուաւ նմա յԱ՛ֆրամազդայ ՚ի ձեռն Պ ու-
կիոսի Տիտիոսի՝ թէ յաղթել ունի Ա՛ինդրատոյ. և եղև
այնպէս։ Այս ապա ՚ի փութալ նորա դարձ առնել ՚ի
Հռոմ, և վրէժ առնուլ զնոցն Թշնամանաց և զպարե-
կամացն արիւնհեղութեբ քաղաքին, դարձեալ պատգամ
հրամանի ընկալաւ յԱ՛ֆրամազդայ ՚ի ձեռն զինուորի միոջ
վեցերորդ լեգէոնին, թէ յառաջն գուշակեցի քեզ յաղթել
Ա՛ինդրատոյ, և այժմ խոստանամ քեզ կարողութեն կոր
զելոյ ՚ի թշնամեաց զպետութեն ոչ սակաւ արեամբ։ Այսմ
ժամ հարցեալ Ա՛իդոյի ցղինուորն թէ որ կերպարանք էին
երևեցելոյն նմա ՚ի նշանակել նորա, յիշեաց Ա՛իդոս զկեր-
պարանսն՝ յորմէ յառաջն լուեալ էր զպատգումն յաղթա-
նակելոյ զԱ՛ինդրատոյ։ Այդ զինչ ունիցին աստանօր պա-
տասխանել, թէ վասն էր փոյթ կալան դիք նախագուշա-
կել զայսոսիկ յաջողուածս, և ոչ հոգացաւ ոք ՚ի նոցանէ
ուղղել խրատուք զԱ՛իդոս, մինչ կայր նա ՚ի գործել զարիան
մեծամեծս անօրէն հարուածովք քաղաքին. որովք ոչ մի
այն անշքանայր տերութեն, այլ բնաւին ջնջէր։ Այայտ է
թէ լինի իմանալ, որպէս բազում անգամ ասացի, և մեզ
յայտնի է ՚ի սրբազան գրոց, զոր և իրացն դիպուածք ցու-
ցանեն ինքնին, թէ յայսոսիկ զիւրեանցն խնդրեն դիք
զգործ շահու, որպէս զի առ աստուածս համարեսցին և

պաշտօն առնուցուն, և այնոքիւք մեծարեսցին ի մարդկանէ՝ որովք մատուցողքն կցորդեալք նոցա ի չարիսն, ընդ նովին չարաչար դատակնիքով ըմբռնեսցին ի դատաստանին նոյ։

Յետ այսոցիկ իբրև եկն եհաս Աիղղա ի Տաբենտան, և մատոյց անդ պատարագ, ետես ի ծայրս լերդի որթուն զնմանութիւն ոսկի պսակի։ Ընդէն Պաստուխոս լերդատիմոյ արար պատասխանի, Թէ փառատրագունի յաղթութիւնէ և այն նշանակ. և հրամայեաց՝ զի ինքնին միայն կերիցէ զլերդաբոյնն։ Ապաւ ժամանակ ի վերայ էանց, և ահա ծառայ Ա ուկիոսի ուրուն պետիթացւոյ գուշակելով աղաղակեաց. Ի Աելգոնեայ աստուածուհւոյ պատգամսբեր գամ. քո է յաղթութիւն, ո Աիղղա։ Ոչ ապա յառել. Այսպիսոյն հրձիգ լինելոց է։ Ո այս ասացեալ, մեհենացաւ վաղվաղակի ի բանակէն. և յերկրորդում աւուր դարձ արարեալ շտապաւ, աղաղակեաց. Հրկէզ եղև Կապիտոլն։ Ապա արդարեւ այրեալ իսկ էր։ Ոչ զայս դիւրին էր յառաջ տեսանել դիւին, և արագապէս ծանուցանել։ Ալ զայն ի միտ առ դու, որ մերում խնդրոյս ի դէպ է, Թէ ընդ որովք աստուածովք ցանկան լինել, որք Հայհոյէն զիրկին՝ զազատարարն կամաց հաւատացելոց յիշխանութէնէ դիւաց։ Ազաղակեաց այրն մարգարեացեալ. Կո է յաղթութիւն, ո Աիղղա. և զի կարծեացի ձեռամբով հոգւով զնոյն բարբառեալ, յայտնեաց և ինչ մի՝ որ ընդ հուպ լինելոց էր, և եղև իսկ փութով, յորմէ կարի բացական էր այրն՝ որով խօսէր ոգին դիւական։ Ապա կայն ոչ աղաղակեաց, կասիր ի չարեաց ո Աիղղա. զորս գործեաց նա զաստիճանսն ի յաղթելն անառնոր. որում և պսակ ոսկի երևեցաւ՝ հրաշազան նշանակ յաղթութէնէ ի լերդի որթուն։ Ապա թէ նշանք այսպիսիք տուեալք էին յարդար աստուածոց և ոչ ի դիւաց ամբարշտաց, արդարեւ լերդիւն այնու ցուցանէին զլինելոց չարիս անարժանագոյնս և առաւել ընտանակարս նմին իսկ Աիղղայի. վասն զի այն յաղթութէնէ ոչ այնչափ սաստիկ եղև պատուոյ նորա, որչափ զցանկութէնն զայրացոյց. որով յանչափս բերանա-

բացեալ նորա, և յաջողուածովքն ամբարհաւաճեալ և գահավիժ բերեալ, ինքն առաւել կորեաւ վարուքն՝ քան Թէ զՀնամիս կորոյս՝ի մարմինն։ Զայսոսիկ զարդարեաւ տխրակաս և զատոյգ ողբալիս ոչ նախատածանուցին նմա դիքն այնոքիկ՝ ոչ լերդիւն, ոչ հմայիւք, և ոչ միով ուրուք երազովք կամ մարգարէութեաբ։ Զի առաւել երկնչէին՝ զի մի ուղեացի նա, քան Եթէ մի յաղթեացի։ Մանաւանդ յայն ջանալին, զի պանծալի յաղթականն քաղաքացեաց՝ յաղթեալ և դերի անկանիցի ընդ անարժան ախտիւք, որովք և անդագոյն ինքեանց դիւաց լինիցի կալանաւոր։

ԳԻՄՈՒԹ ԻԹ

Ո՛րչափ յատկաւտութիւն գրգռէն զմարդիկ ոգիքն չարք, յորժամ՝ ի գործել մարգոյ չարիս՝ նոքա իւրեանցն օրինակաւ ճճաբաբ լինն հասաւտէն։

ԼՈՒԿ արդ ո՞ր յայսցանէ ոչ խելամուտ լիցի. ո՞ր ոչ տեսանիցէ, բայց որ առաւել՝ի նմանուելի այնպիսի դից յօժարեալ լիցէ, քան Թէ ճճայինն Հնարհօք՝ի նոցայն կցորդուԹէ զատանիլ. ոչ տեսանիցէ ասեմ, Թէ որչափ մեբենայէն այդ չարահնար ոգիք՝ օրինակաւ իւրեանց զճճայինն լինն վաւերականուԹիւն տալ գործոց ապիրատուԹեան. ոչ ապաքէն և ինքեանք՝ի դաշտավայրի ուրեմն կամ պանիայ երևեցան մերձ ընդ իրեարս, ուր յետ տակաւուց և քաղաքական Ճակատաք դժնդակ մարտիւ Հարան ընդ միմեանս։ Վ՚անզի յայնմ տեղւոջ լսելի եղեն նախ ամբոխք անհնարին, և բազումք պատմէին տեսեալ երկուս Ճակատս՝ զի առ միմեանս բաղխէին աւուրս ինչ. և՝ի դադարել մարտիցն՝ դտան անդանօր իբր Հեռք մարդոց և երիվարաց, որչափ ինչ՝ի բուռն բաղխմանց մեայ տրպառնալի՝ զի եԹէ արդարեւ դիք ինքնին պատերազմեցան ընդ իրեարս, ահա արդարացան քաղաքական կռիւք մարդկան. ուր և զայն է տեսանել Թէ որքան իցէ չա-

բուԹԻ, կամ ԹշուառուԹի այնպիսի դիպ։ Իսկ Թէ առաչօք երեւուԹիւ ևԹ պատերազմեցան, զինչ այլ դիտեին, բայց զի Հռովմայեցիք՝ իյուղէլ զկիւբ քաղաքական՝ Համարիցին Թէ ըստ աստուածային օրինակի ոչ անպատեհ ինչ գործեն. զի այն ինչ սկիզբն եղեալ էր քաղաքական մարթիցն, և յառաջեալ իսկ էր դառն կոտորած ինչ այնպիսի անարժան կուռոց. էր և բազմաց զկղզի եղեալ այն, զի ոմն՝ ի զինուորաց մինչդեռ կամէր կողոպտել զոմն յանկելոց, ի մերկանալ մարմնոյն ծանեաւ Թէ եղբայր իւր է, որով գաղչեցեալ նորա ընդ քաղաքականն մարտս՝ անձին արար և անկաւ առ մարմնի եղբօրն։ Զդ զի մի այս չար նոզևալի լինիցի, այլ զի և այ քան զևս բորբոքեսցի եղեռնաւոր մարթիցն եռացումն, դևքն ժանտագործք՝ առ՝ի նոցանէ կարծեցեալքն աստուածք՝ պաշտամանն և մեծարանաց արժանիք, երևեցան մարդկան՝ ի կռիւ գալ ընդ միմեանս, որպէս զի քաղաքականն աչխոյժ մի զանգիտեսցէ նմանիլ յայնպիսի մարտս, այլ առաւել իբր յաստուածային օրինակէ անպարտ գտանեսցի մարդկայինն ապիրատուԹի։

Զյսու նենդամօք՝ որպէս յառաջն իսկ բազմօք ասացի, հրամայեցին զևքն չարիմացք՝ ինքեանց նուիրել առ՝ի պատիւ զնաղս տեսարանաց, և զի՝ ի նոյն Հանդիսանային չարագործուԹիք դից Թատերական երգեցմամբք և ցուցակուԹիք առասպելացն, ամ՝ որ՝ ի նոյնս մոլէր անխիղճ, եԹէ որ Հաւատային զայսպիսիս գործեալ յաստուածոյն, և եԹէ որ չՀաւատային՝ բայց տեսանէր զի ախորժարար կամէին զևք զայնպիսեացն ընծայումն։ Ուստի զի մի որ կարծիցէ, Թէ յանարգանս նոցա՝ և ոչ ընդ աժանեացն նոցա էին գրեալ՝ զոր միանգամ բանաստեղծքն յիշատակէցին պատերազմ յուզեալ՝ ի միջի նոցա, նոքին իսկ դիք առ՝ի զմարդիկ պատրելոյ Հաստատեցին զերգս բանաստեղծիցն, մարտս երևեցուցեալ ոչ միայն՝ ի Թատրոնի՝ ի ձեռն խաղարկուաց, այլ և ինքեանք՝ ի դաշտավայրի առ աչս մարդկան։

Ո՞չ այսոսիկ ասել Հարկ եղև մեզ առ՝ի յուցանել՝ ըստ

որում և նոցուն մտաներագիրը համարձակ ասացին և գրեցին, թէ հոովմէականն պետութիւն վաղ և ս բարձեալ էր ապիրատ գնացիւք քաղաքացւոցն, և ոչ միացեալ ինչ էր բնաւ յառաջ քան զգալուստ Պրիտոսի։ Այսպէս կորուստ ոչ ընծայեն աստուածոց իւրեանց՝ այնքիկ որք մերում Վիճի համարին զվաղանցուկ չարիս, որովք ոչ լինի կորնչել բարեգործեալ եթէ կենօք և եթէ մահուամբ. ուր Վիճն մեր յաճախակի բազում հրամանօք բարեկրօնութիւն ջանացաւ հաստատ կորստական վարուց. իսկ աստուածք նոցա ոչ ինչ այսպիսի հրամանս արարին առ պաշտօնեայ ժողովրդին սակս պետութեան՝ զի մի կորնչիցէ. մնասուանգ թէ իւրեանց օրինակաւ չար և ագդունի տալով ապականեցին զվարս, առաւել ջանացեալք զի կորնչիցէ։ Այս ոչ և ս որպէս կարծեմ, իշխիցէ ոք ասել՝ թէ յայն սակս կորեաւ նա յայսմ ժամանակի, զի աստուածքն իբր սիրողք առաքինութեան՝ ի բաց մեկնեալ էին՝ լքեալք զտաճարս և զսեղանս, սակս գարշելոյ նոցա յախտից մարդկան. քանզի բազում նշանակօք լերդիցէ, հմայութեանցն և գուշակմանց՝ որովք իբրև կանխագիտք ապառնեաց՝ և ձեռնտուք մարտիցն ձեռնային պանծացեալք, յանդիմանին թէ անդ մերձ կայցէ. և եթէ չէմարտիւ հեռացեալ էին, թուլագոյնս վարկին հոովմայեցւոցն ոգիք ի մարտս քաղաքականս՝ քան թէ աստուածոցն գրգռութիւնք։

ԳԼՈՒԽ Ի.Ջ.

Ցաղագս գայթի կարծելոյ խրատուց դիւաց ի պէտս վարուց բարեաց, ուր յայտնապէս ի պաշտամունս նոցա էր ուսանել զամենայն չարութիւն։

Այլ զի այսոքիկ այսպէս, ուր ակն յանդիմանն հանդիսասացին զպղծագործութիւնք աստուածոցն խոտն ընդ անդ թութեն, և խայտառականք նոցա և անօրէնութիւնք՝ եթէ

առոյգք և եթէ առայօդք, և այն ըստ նոցին իսկ պահանջելոյ, մինչև ցանուալ յոյն լինել, միանգամայն և սահմանեալ ժամական հանդիսիւք նուիրեալք ի պատիւ նոցա, որ և յայս ամենեցուն գայլին ի ցուցակութիւն առ ի հետեւումն գործոց, զի՝նչ իսկ ապա, զի նոքին իսկ զևք՝ որք սոյնպիսեօք ախորժակօք ցուցանեն զինքեանս լինել ոգիս անսուրբս, որք իւրեանցն ապիրատուքք և եղեռնականօք հաւաստեօք կամ կեղծելովք, և այնոցիկ նուիրական կատարմամբն՝ կամաւ յանամօթիցն, և բռնի յամօթիս ծաց, վկային լինել գործոցն եղեռնաւոր և աղտեղի վարուց, յայսր ամի վերայ ասի զնոցանէ, թէ՝ի յարկս իւրեանց և ի գաղտնի խորշս աւանդեալ իցեն իրրու ընտրելոց ոմանց ծառայից իւրեանց հրամանս բարիս յաղագս վարուց. Ով այդպէս իցէ, դովին իսկ յայտնեալ յանդիմանի նենգաւորիւր չարութիւն ոգւոցն ապիրատից։ Ա՝ան զի այնքան է զօրութիւն բարեխաւսութիւն և ողջախոհութիւն, զի հաճելին մարդկայինս ընութիւն, կամ գէթ ըստ առաւել մասին պարարի ի գովեստ նորուն. և չէ այն աղաւաղեալ յոռութիւն, մինչև խափան անզգայ մնալ առ հաճոյութիւնն. նմին իրի գիւտոյն խորամանկութիւն՝ թէ երբէք երբէք ոչ կերպարանեսցի ի հրեշտակ լուսոյ, ըստ որում՝ ի մերոց գրոցս ծանուցեալ ունիմք, ոչ՝ի գլուխ տանի զգործ խաբէութիւնն։ Ա՝ան որոյ արտաքոյ բարձրագոյ աղաղակաւ ամենալուր հնչէ անմարքուն ամբարշտութիւն, իսկ ներքոյ՝ սակաւուց ոմանց հաղիւ լսելի լինի պատրուակեալ ողջախոհութիւն. առ ամենայնիս հրապարակքն բացեալ գտանին, և գովելեացն՝ տեղի խնդրի ծածուկ վայելչութիւն քօղարկի, անվայելչութիւն մերկանայ. գործեալն չարաչար զամենեսին ի տեսիլ հրաւիրէ, որ բարին ասի՝ հաղիւ ունկնդրողս գտանէ սակաւս, որպէս թէ հաճոտականքն պատկառելիք ինչ իցեն, իսկ անհաճոտքն՝ պարծելիք. բայց և այն ուր արդեօք, եթէ ոչ ի գիւտոյն տաճարս. ուր այդ, բայց յիջեվանս խաբէութիւն։ Օ՛յ ահաւասիկն այն լինի, որպէս զի պարկեշտագոյնք որ սակաւաթիւ են, ըմբռնեսցին ի հաղս. իսկ այս՝ զի յոլովա-

գոյքն անմաքրասէրը որ էն բազմագոյնք, մի զգաստա-
նայցեն լնաւ ։

Ա՛ւր և յոր ժամ արդեօք նուիրեալքն Աստուծոյ
աստուածուհւոյ լսելին զՀրամանս աղջախոհութեան ,
մեք ոչ գիտեմք . բայց տեսանելաք մեք յանդիման մե-
հենին՝ ուր կանգնեալ կայր դրօշեալ նորա , զի անդր հա-
մահաւաքեալ յամենայն կողմանց , և կացեալ ուր և կա-
րող էր իւրաքանչիւր , ակնկառոյց սլշնուաք ՚ի խաղն՝ որ
լինելին , փոփոխեալք զՀայեցուածս՝ մերթ ՚ի պռոնկական
ցոյցս , մերթ ՚ի կուսան աստուածուհին , նմին խանարհ
երկիր պագանելին , նորա յանդիման զգաբշականն կատա-
րելին . ոչ տեսաք անդ պատկառոտ կատակերգուս , ոչ պա-
րանոցիկ ամօթխած . արարուածք ամենայն լի լինն յայրա-
տանաք ։ Ոչ լինէր ՚ի միտ առնուլ , Թէ զինչ հաճոյա-
նայր կուսական կարծեցեալ աստուածոյն . և այն ինչ ե-
լեալք անդ՝ զոր որպէս նոր ինչ ուսեալ տան տիկինն , իբ-
րու պիտանոյն տաներ ՚ի տաճարէ անտի ՚ի տուն իւր ։
Ամանք ՚ի կանանց զգաստից զդէմն ՚ի բաց դարձուցանելին
յանառակ շարժուածոց խաղարկուացն , բայց և գաղտա-
գողի աղդմամբ զարուեստ չարութեն ուսանելին . քան-
զի ամաչելին ՚ի մարդկանէ՝ ոչ իշխելեալք հայել Համար-
ձակ յանպարկեշտ արարսն . բայց և չիշխելին յողջախոհ
սրտի իւրեանց շատ անգամեալ զկորհրդակատարութիւ-
նըս աստուածոյն զոր մեծարելին ։ Այլ սակայն զայս
ինչ հրապարակաւ լինելոր ուսանել ՚ի տաճարի անդ՝ Թէ առ
՚ի գործելոյ զամպսխի իրս՝ տեղի ծածուկ ՚ի տանն էր
խնդրելի . և զարմացեալ յոյժ էր ամօթն մարդկային ,
եթէ արդեօք կայր , զի ոչ ազատագէմ գործելին մարդիկ
զմարդկաբար չարիսն , զորս յանդիման դիպն իբր պաշտա-
մամբ ուսանելին . գիտելով Թէ զայրանան և նոքա՝ եթէ
անհոգանայցեն ՚ի մատուցանել ։ Օ՛ի որ այլ ոգի գաղտ-
նի հրապուրանօք պղտորեալ զմիտս չարաբարս , առ ՚ի
գՀնութիւնս գործել դրդիցէ և գործեցեալքն յագենայցէ ,
բայց նա ևեթ՝ որ և այնպիսեօք պաշտամամբք զուարձա-
նայ , կանգնեալ ՚ի տաճարս զդիւացն պատկերս , ՚ի խաղ

զդրօշուածս ախտից սիրելով, ի ծածուկ չընջելով բանս արդարութեանն առ ի պատրելոյ և զսակաւսն բարեկիրս, իսկ յայտնապէս յառնախելով հրաւէրս անօրէնութեանն առ ի ժառանգորդ լինել անբաւ չարեաց։

ԳԼՈՒԽ ԻԱ՛

Որքան էր խանգարումն հասարակաց բարեկարգութեան, զի հռովմայեցիք առ ի հաշտեցուցանել զդէս իւրեանց նուիրեին զանառակութեան խաղուց։

Այնմհետեւ այրն և իմաստասէրդ Տուղլիոս Աիկերոն՝ հանդերձեալ լինել չինուածասէրս, աղաղակէր ի լուր քաղաքին՝ թէ ընդ այլ պարտս իշխանութեանն իւրոյ ունի հաշտ առնել զփլորա, կամ զնաղիկ աստուածուհին հանդիսիս խաղուց. և էին խաղքն այնպէս ջերմեռանդն սիրով կատարելիք, որպէս և անմաքուրքն։ Ասէ և յայլում վայրի՝ մինչ էր հիւպատոս՝ ի յետին վտանգս քաղաքին, թէ եղեն խաղք զեօթն օր, և ոչ մի ինչ պակաս թողաւ առ ի հաշտեցուցանելոյ զդիս։ Այլ ապաքէն լաւ ևս էր զայնպիսի աստուածս ցասուցանել ժուժկալութեբ, քան ցածուցանել յայրատանոք. և պարկեշտութեամբ զըրգռել զնոսա ի թշնամութեբ գլխովին, քան ողբալ այնպիսի անվայելչութեբ։ Այանգի և մարդիկն յորոց երկիւղ ի հաշտութեբ կոչէին զդիս, ոչ ունէին մեծագոյս ինասել համայն անգթական գազանութեբ, որպէս վնաս գործէին նոքին աստուածքն՝ ամենագարշ ախտաւորութեբ հաշտելով. իբր զի առ ի բաց դարձուցանելոյ զոր ի մարմնի վտանգս ի թշնամեացն կասկածեալ՝ այնու օրինակաւ լինէր աստուածոցն հաշտութեբ, որով ի հոգիս վտանգարեալ լիներ առաքինութեբն. և նոքա ոչ լինէին պաշտպանք՝ ի դիմի հարկանելով մարտուցելոցն ընդ պատիսպս, եթէ ոչ նախ ինքեանք լինէին քանդիչք լաւութեբ վարուց։ Այս աստուածոցն այնպիսեաց զհաշտութեբ

զամբարհաւաձն զանմաբրականն զանամօթն զանագո-
րոյնն զամենապիղծն, զորոյ գիտալարկուս ընկէց ՚ի պա-
տուոյ գովելի բնաւորութէն հոովմականն առաքինու-
թեան, և յանառոհմիկս գրեաց, պիղծս համարեցաւ և
արար անուանարկս, զայս ասեմ՝ զամօթականն և զատե-
լին ձշմարիտ կրօնից զհաշտութէն դիցն այսոցիկ՝ ՚ի տես
և ՚ի լուր հասարակաց ուսանէր քաղաքն ողջոյն, զայսոսիկ
առ ասպէլս աստուածոյն հրապուրիչս և բաղմայանցս,
զայսոսիկ զնշաւակ արարս՝ կամ անդգամութէն և անպատ-
կառ ՚ի նոցանէ գործեցեալս, կամ անդգամագոյն և ա-
պաեհագոյնս յայլոց ձեւացեալս, զայսոսիկ տեսանէր հա-
ճոյականս լինել դից. նմին իրի համարէր՝ թէ ոչ միայն ըն-
ծայել նոցա արժան է, այլ և նմանող լինել. և ոչ գիտեմ
զինչ այն բարին էր և համեստն՝ որ կարի սակաւուց և
թաւնաբաւ լինէր ասացեալ եթէ արդարեւ էր ասացեալ
որով առաւել զգուշանալ էրևէր՝ զի մի ՚ի ծանօթութէն
գայցէ այն, քան եթէ մի անգործ մնայցէ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս առաջի և փրկարար գոլոց ուսմանց քրիստոսական կրօնից։

ԱՅԴ ընդ ազատել որդւոց մարդկան անուամբն Աստ-
ծոյ ընդանդայնն լծոյ և ՚ի դատաստարան կացորդութէ աս-
տիպղծ իշխանութէնցս յայսոցիկ դից և դիւաց, և ընդ վեր-
բերել ՚ի խաւարէ կորստական ամբարշտութէնն ՚ի լոյս
կեցուցիչ յաճպաշտութէնն, արանձնէն և քրիստնէն անօ-
րինքն և ապաշնորհք, ըմբռնեալքն այնպատիս յանառըր-
ուոյ անտի. տեսեալ զի ժողովուրդք խուռն ընթանան
յեկեղեցիս՝ մաքուր ծնեալմանութ, և պարկեշտ զառուց-
մամբ արանց և կանանց. որպէս զի լուիցեն անդամօր՝
զիարդ բարիոք քաղաքավարել արժան է նոցա ՚ի ժամա-
նակիս՝ առ ՚ի ժառանգելոյ ապա վերանելի և զհիշա

կեանս . ուրանօր սրբազան ընթերցուածք և արդարու-
թիւն ուսումն հնչէ ՚ի բարձր տեղւոջէ ամենեցուն յան-
դիման . զի որք առնեն՝ լսիցեն ՚ի յոյս վարձուցն , և որք
չառնեն՝ լսիցեն ՚ի դատապարտութիւն : Վասն զի
գան անդր և ամանք այսպիսեաց հրամանաց .
բայց ամենայն ժպրհութիւն նոցա կամ անակնկալ փոփոխ-
մամբ տեղի տայ , և կամ յերկիւղ և յամօթ ըմբռնի ,
Վ՚ասն զի ոչ մի ինչ անվայելուչ և տարօրէն առաջի դնի
անդամնօր ՚ի տեսանել և ՚ի դործել . այլ կամ հրամանք
նոյ Աշխարհի աւանդին , կամ աբանչելիք նորա պատմին ,
կամ պարգևքն օրհնաբանին , կամ բարեբարութեց լի-
նին հայցուածք :

ԿԻՐԱԿ ԻԹ

Յորդորումն առ հոովմայեցիս՝ թողուլ ՚ի բաց զգեցապաշտութիւն :

Ա՚յՍՈՑԻԿ յաւէտ լեր ցանկացող , ո՛ դովանի հոովմիա-
կանդ բարք , ո՛ զարմ Հռոմգուէանց , Վկեւոդեանց ,
Վկիպիոնեանց , Փաբրիկեանց . յայսոսիկ առաւել փա-
փաքեաց . զայսոցիկ որոշումն ՚ի միտ առ յանսուրբ ու-
նայնութիւնէ անտի , և ՚ի խաբէպատիր չարութիւնէ դիւաց ,
Նթէ բնաբար առաւելուս ինչ գովելեօքն , Աշմարիտ ածխ
պաշտութիւնէ ևեթ սրբեալն և գայ ՚ի կատարումն . իսկ
ամբարշտութիւնն խաթարի և պատուհասի : Ընդորեա
արդ՝ որում զՀետ երթալն կամիս , զի մի յանձն քո՝ այլ
յիւծ Աշմարիտ գովեցեալս անբաժ յաւիտենից մեղրութենէ :
Վ՚անզի անդ ուրեմն ունել ունելիր փառս ՚ի ժողովրդոց ,
այլ ՚ի գաղտնի գատաստանաց տեսութենանն այլ պահա-
սեաց թեզ ընտրել զՀշմարիտ կրօնս : Օ՚րթիր , արդ
տիւ է . զոր օրինակ և զարթեաք իսկ յոմանս , ընդ որոց
պարծիմք ընդ կատարեալն առաքինութենէ և ընդ չարչա-
րանս իսկ վասն Հշմարիտ հաւատոց , որք ընդ ամենայն
տեղիս մարտուցեալք առ գոռ իշխանութենս , և արիա-

բար յաղթեալք նոցա մեռանէլով, արեամբ իւրեանց զայս հայրենիս ստացան մեզ։ Յայն հայրենիս հրաւիրեմք զքեզ, և յորդոր լինիմք՝ի նորա քաղաքացւոցն խառնել՝ի համար, որոյ ամուր իմն ապաստանի՝ է տոյզ Թագղուեթի մեզաց։ Ի՝ ունկն մատուցաներ անհարազատ աղգակցաց քոց այնոցիկ, որք լեզուս արձակեն՝ի Պրիստոս և՝ի քրիստոսեանս, և ամբաստան լինին որպէս ըզչար ժամանակաց, ուր ինքեանք այսպիսի խնդրեն ժամանակ՝ յորս ոչ եթէ կեանս խաղաղականս ունիցին, այլ զաներկիւղ չարագործութեն։ Յորպիսի ժամանակք վատթարութեն և ոչ՝ի սակս երկրաւոր հայրենեացն հաստատեցան քեզ բնաւ. յայսմ հետէ զերկինսն որոն բուռն համարեալ, զոր վասն վաստակեացիս սակաւ, և՝ի նմա արդարեւ Թագաւորեացես՝ի մէնջ ենաւորս. քանզի անդամոյ ոչ վերստանան հուր և ոչ արձանն կապիտողեան, այլ ամբ ժի և հնմարիա՝ առանց սահմանս իրաց գնելոյ և ժամանակակեաց՝ տայէ քեզ զհերութեն անաւարտելի։

Ի՝ այլ՝ի խնդիր լեցիս սուտ և պատիր աստուածոց. այլ առաւել՝ի բաց ընկեա, արհամարհեա, թէևակսեալ՝ի հնմարիան աշատութեն։ Ընդ նորա աստուածք. ոգիք են չարք, որոց պատուհաս է քոյդ յաւիտենականն երջանկութեն։ Ընդ այնպէս Թուի նախանձել հերա դիցուհին ընդ տրուայիս՝ յորոց և դուն սերեցար, սակս հոռի հեական ամբոցին, որպէս սորա գևքս՝ զորս տակաւին ընդ դիս գրես, նախանձ բերին ընդ համբերն ազգ մարդկան սակս մէնջենաւոր կայանիցն։ Ոչ դու ինքն ոչ դոյզն ինչ դատապարտ արարեր զնոսա, յորժամ Թէպետ և զնաղան՝ի նոցին հաշտութեն առնէիր, այլ զմարդին՝ որովք խաղքն լինէին, վատանուանս լինել սահմանեցեր։ Յանձն առ քարոզել զաշատութեն քո հակառակ այսոցս պղծոց, որք իբրև զլուծ՝ի քոյդ պարանոց եդեալ էին զիւրեանցն խայտառակութեն՝նուիրագործել տօնախմբութեն։ Ո՝ հանդիսայիրս դիցական եղեռնութեն՝ի բաց հաներ դու՝ի քաղաքայինդ պատուոյ. արդ պաղատեաց առ հնմարիան՝ ած բացամերժել՝ի քէն զաստուածմն

զայսոսիկ, որք ընդ իւրեանց եղեռնականան գուարճա-
նան. որք եթէ արդեամբք լեալ իցեն, կարի ամենայն
իրք. եթէ ստայօդք, կարի չարութիւն։ Այլ է, զի քոյովք
ընտրութիւք փակեցեր զքաղաքականն կցորդուն առ ծաղ-
բածուս և առ խաղարկուս։ Ո՛չ գաստացիք համբուն. ոչ
բնաւ ՚ձձականն մեծուի հաշտի այնպիսի արուեստիւք,
որովք մարգկայինն աղտեղանայ պատուականութիւն։

Ո՛չ իարդ ապա զդիս որք այնպիսի յօրանան պաշտա-
մամբք, համարիս ՚ի կարգ սրբազան երկնայնոց իշխա-
նութեացն լինել, ուր զմարդիկ՝ որով այն պաշտամունքն
կատարին, ոչ արժանիս համարեցար դու ՚ի թիւ որոց
և իցէ հոովմայեցի քաղաքացոց։ Քաղաքն վերին՝ ան-
համեմատ ևս մեծապայծառ է. ուր յաղթութիւն՝ չմար-
տութիւն է. ուր բարձ և պատիւ՝ սրբութիւն. ուր խա-
դաղութիւն՝ երանութիւն. ուր կեանք՝ յաւիտենականու-
թիւն է։ Իրաւամբք չընդունի նա յիւրն միաբանութիւն
զաստուածս այնպիսիս, եթէ դու ՚ի քումդ ամաչես ըն-
դունել զայնպիսի մարդիկ։ Ո՛ւ ասն որոյ եթէ յերանա-
ւէտն յայն ցանկաս հասանել քաղաք, մեկուսացիր ՚ի դէ-
ւացն կցորդութիւն։ Ո՛նպատեհ իմն է պարկեշտիցն պաշտօն
տանել այնոցիկ, որք զազրատուրքն գան ՚ի հաշտութիւն։
Ո՛. Յայնէս սոքա տարագրեացին՝ ի քումմէ պաշտամանէ քրիս-
տոնէական մաքրագործուէն, զոր օրինակ նոքա խաղարկու-
քըն հատան ՚ի քումմէ պատուոյ դատողական սահմանաւ։

Իսկ յաղագս մարմնական բարեաց՝ յորս միայն վայե-
լել ցանկան չարքն, և յաղագս չարեացն մարմնակա-
նաց՝ յորոց ևեթ խոյս տան, տեսցուք այսուհետև՝ թէ և
ոչ յայսոսիկ իշխանութիւն ինչ ունին դևք, որպէս ունել
կարծին. այլ թէ ունէին ևս, առաւել արժան էր առ ոչ
ինչ գրել զայսպիսի բարիս և չարիս, քան թէ սակս այսոցիկ
պաշտել զնոսա, և պաշտելովն անժաման լինել յայն բա-
րիսն՝ ընդ որս նախանձ բերեն առ մեզ։ Ո՛ակայն ՚որպէս
ասացի, և ոչ յայսոսիկ կարող ինչ լինել նոցա՝ որոյ վասն
պաշտել արժան դատին, տեսցուք այսուհետև. և այս
իսկ է կէտ նպատակի մտաւնիկ որ զկնի գայ։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Որպէս ի նախընթաց գրի Յաւետ. Օգոստինոս յաղագս չարեացն վարուց և ոգւոց, նոյնպէս յառաջիկայումն ցուցանել վասն վշտաց մարմնոյ և խոցն որ աստի, Թէ ի սկզբանէ անտի չինուածն Հռովմայ անդադար տառապէցան յայսոսիկ հռովմայեցիք, և ի բարձումն այնպիսեաց չարեաց ոչ մի ինչ նպաստ մատուցին նոցա սուտ աստուածքն՝ զորս ետ իրեք պաշտել յառաջ քան զՔրիստ գալուստն։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս ձախողակ անցից, յորոց չարք միայն երևիցին, և զնոյն հանապազ կրեաց աշխարհ՝ և ի պաշտելն դիս։

Ըստ բաւականին կարծեմ ասացեալ յաղագս չարեացն վարուց և ոգւոց, որք առաւել զգուշալիքն են, Թէ սուտ աստուածքն ոչ հնոգ ինչ կալան երբեք՝ զի դիցապաշտ ժողովուրդ նոցա մի ձմեռացի ընդ ծանրութիւն այնպիսի չարեաց. այլ յաւէտ ջանացան՝ առաւել և ևս ձնելնման։ Վ՚ստահաբար՝ ի դէպ համարիմ խօսել զչարեացն՝ յորոց և ևեթ խուսափեն դիցապաշտքն. որպիսի են սով, հիւանդութիւն, պատերազմ, գերփուճի, գերութիւն, կոտորած, և որ այլ այնպիսիք յիշատակելք յառաջին գիրս։ Վ՚ան զի չարք զայսոսիկ միայն համարին չարս, որք ոչ առնեն չար. և չամաչեն՝ ի մէջ բարի բարի բանից զորս գովին, ինքեանք գովիչքն չար լինել. առաւել դժկամակ լինին, եթէ անշուք ուրախ ցին գիւղ, քան վարս անբարիս. որպէս Թէ մարդոյ գերագոյն բարի այս իցէ՝ զամենայն լաւ ունել իբր բարի, բաց յանձնէ իւրմէ։ Վ՚ակայն և ոչ զպատահումն այնպիսի չարեաց՝ յորոց միայն զանգիտեն սոքա, խոստանեցին՝ ի նոցանէ դիցն կամաւորաբար պաշտեցեալք։ Վ՚անզի յոր ժամ՝ ի պէսպէս ժամանակս ընդ այլ և այլ տեղիս՝ յառաջ

քան զեկաւորութիւն փրկչին մերոյ՝ անթիւ և անկարծելի իսկ հարուածովք վտանգէր ազգ մարդկան, որոյ այլ աստուածոյ՝ բայց սուգա պաշտօն տանէր աշխարհ, քաց յեբրայական ժողովրդենէն և 'ի սակաւուց ոմանց արտաքոյ նոցին, որք միանգամ ամենայն ուրեք ՚ճճայինն չնորհ հաց գտան արժանաւորք՝ գաղտնի և ամենարդար գատաստանաւն ՚այ։ Այլ զի մի յառաւելեալն ձգեսցի բանս, Թողեալ ընդ լռութիւ զբարիսն մեծամեծս այլոց ազգաց ընդ տիեզերս, զոր 'ի Հռովմ և 'ի Հռովմայականն տէրութիւն ևեթ Հայոց՝ առից 'ի ձառել. այս ինքն է՝ զոր ինչ միանգամ յառաջ քան զգալուստն Քրիստի անցին ընդ Հռովմ քաղաք և ընդ իւրաքանչիւր գաւառ՝ որ գաշնակիցք էին նմա կամ ընդ նովաւ նուաճեալք, ուստի և 'ի նորին տէրութեանն 'ի համարի էին։

ԳԼՈՒԽ Բ

Մինչ դիպն պատուական պաշտամանքը միաբան 'ի հռովմայեցւոց և 'ի ցունաց՝ ունէին իրաւացի պատճառս թոյլ տալոյ աւերածոյն խափանի կամ Ջրովագայ։

Ի, ԱՌ առաջին՝ Ջրոյա ինքնին կամ Խլիոն յորմէ հռովմէական ժողովրդեանն եղև ծագումն, զոր չէ պարտ Թողուլ կամ Թաքուցանել, որպէս և յառաջնում գրի ակնարկեցի, զնոյն աստուածս ունելով և պաշտելով, էր վասն պարտեցաւ 'ի Յունաց, առաւ և եղև բնակիչ Քաբեն-ընդ գլուխ Պրիամոս Տատուցան պատուհասք երդմնազանցութեանց Հօր նորա Լաւոմեդոնի։ Այս ուրեմն ատոգի էր Թէ Այաղոն և Պոսիդոն վարձուք վարձկանի ծառայեցին Լաւոմեդոնի. որ խոստացաւ նոցա վարձս, և ստեաց երդմանն։ Օ արմանամ, զի Այաղոն՝ կիւսասիմայն կարդացեալ՝ աշխատ եղև 'ի մեծի յայնմ շինուածեան, անգիտացեալ Թէ Լաւոմեդոն զրժել ունէր խոստմանցն. նա

և ոչ Պոսիդոնի որ հօրեղբայր էր Պղոդնի և եղբայր Ադամաղդայ, վայել էր անդիտանալ զլինելոցն ։ Ուստի՝ Հոմերոս՝ երկայադոյն կարծեցեալ ժամանակաւ քան զլինուԹիւն Հռովմայ, ի մէջ ածէ զՊոսիդոն որպէս մեծ ինչ գուշակեալ զզարմին Էնէասայ, յորոյ ի սերընդոյն կանգնեցաւ Հռոմ. և ասէ զնմանէ՝ ամպով յափշտակեալ, զի մի Աքիլլեայ սպանցի, յորժամ կամէր նա հինն ի վեր տապալել զԻւր զձեռակերտ պաթիսպս երդմնազանցին Ջրովադայ. որպէս և առ Վիրգիլեայ խոստովան լինի ։ Այս ուրեմն այսպիսի մեծանուն դէմ՝ Պոսիդոն և Պղոդնն՝ անդիտացեալք Թէ Լաւոմեդոն ժխտելոյ է զվարձան, եղեն Ջրովայ պարսպացն շինիչք ձրի և անչնորհ ։ Այլ տեսցեն, մի արդեօք չար և իցէ զայսպիսին առ աստուածս ունել, քան եԹէ առ այնպիսի դիս երդմնազանց լինել ։ Օյդ և Հոմերոս անգամ ոչ դիւրաւ հաւատայ, ի պատմել նորա՝ Թէ Պոսիդոն դիմամարտ էր տրուաքացոց, իսկ Պղոդնն՝ պաշտպան նոցա. ուր առասպելն զրուցէ զերկոցունց և՝ Թէ ոխացեալ էին յաղագս երդմնազանցուԹեանն ։

Այլ եԹէ առասպելաց հաւատան, ամաչեսցեն ի պաշտելն զայնպիսի աստուածս. և եԹէ հաւատան ոչ, մի պատճառեսցեն զերդմնազանցուԹիս տրուացւոց. կամ զարմասցին, զի դիք զտրուացւոցն երդմնազանցուԹիւ պատուհասեցին, իսկ զՀռովմայեցւոցն սիրեցին ։ Այլ առ դաւակցուԹիւն Կատիլինեայ յայնպիսւոմ ասպահանեալ քաղաքի դատ մեծ բազմուԹիւ նոցա, որոց ձեռք և լեզուք կամ տեերդմնուԹիւ պարարեին և կամ արեամբ քաղաքացոց. զի զինչ այլ էր բազում անգամ տեհնակալացն Թիւրել զդատաստանս, որպէս և Ժողովրդեան տեպ տեերիւրել ի քաւէարկուԹիս կամ յայլ և դատ՝ որք հաւմնամբուԹիւ կատարէին, բայց զի և տեերդմնուԹիւ յանդգնեին ։ Այսմ ի մեծի ապահանուԹիւ վարուց պահիւր նախնեացն սովորուԹիւ երդումն տալոյ, ոչ զի անձնապահ լինիցին ի չարեաց առ երկիւղի կրօնից, այլ զի յաւելուած այլոցն յանցմանց և զտեերդմնուԹեան առնիցեն ։

ԳԼՈՒԽ Գ

Չկարէին գէթ զայրանալ ընդ Պարխայ Հնուէնի , առ որս նոյն ախտ յաճախեալ ասի ։

Ա՝ԱՍՆ այսորիկ չէր պատճառ՝ յորս սակս աստուածքն իշխեցողք այնմ տէրութեանն , որք՝ ի հզօրացն Հնունայց գտան յաղթեալք , կարծիցին ցասուցեալք ընդ սրտովացիս ստերդմունս ։ Այլ ոչ առ զայրանալոյ ընդ Պարխայ Հնուէնի լքին նոքա զտրտմացիս , որպէս ունէին յօդեն ՝ի ջատագովութենէ նոցա . զի նոքա գտիչք սովորեցան լինել և ուսուցիչք մեղաց , և ոչ եթէ վրէժխնդիրք ։ “ Օ՝հռոմ քաղաք , որպէս և ընկալայ , ասէ Վաղուստիոս , զառաջինն տրտմացիք շինեցին և կալան , որք զՀնէաս ունէլով առաջնորդ՝ գաղթական թափառէին այսր անդր ,, ։ Ա՝րդ եթէ փոյթ էր աստուածոցն վրէժ առնուլ զՀնուէնէն Պարխայ , առաւել և ՝ի հռոմայեցիսն , կամ գէթ ՝ի նոսա և ունէին պատուհաս հասուցանել . զի զնոսն գործեալ էր մայրն Հնէասայ ։ Այլ զիարդ ՝ի Պարխս առեցին նոքա զայն չարութիւն , զոր ՝ի տարփաւորն Իւրեանց Ա՝ստղիկ (որ և Ա՝փրոդիտէ) ոչ առեցին , որոյ՝ թող զայլ ծանականս՝ անկեալ էր ընդ Ա՝նքիսեայ , յորմէ զՀնէասն ծնաւ ։ Ա՝ի թէ յայն սակս՝ զի առաջինն ընդդէմ կամաց Ա՝ենէզայի գործեցաւ , իսկ այս Հաձուէնէ Հեբեատոսի . քանզի որպէս յայտ է , դիքն չէն նախանձաւորք վասն լծակցաց իւրեանց . քանզի յանձն առնուին՝ զիներքս մերձենալիք և ՝ի մարդկանէ լինիցին ։ Կուգէ ծաղր առնել Թուխցիմ զառասպելսդ , և ոչ մտաւորաբար քննել զմեծ զայս խնդիր , Ա՝րդ եթէ հաձոյ է՝ մի՞ հաւատասցուք թէ Հնէաս որդի Ա՝ստղկան էր . զիրայց ընդ այդ , եթէ և Հռոմուլոս չէ՞ որդի Ա՝րէսայ ։ Իսկ եթէ այս ընդունելի , առիմ՞ և ոչ այն . միթէ օրէն էր դէց խառնակիլ ընդ կնոջ մարդոյ , այլ ոչ առն մարդոյ ընդ դէցուհիս ։ Այրի խիստ և

անհաւատալի իսկ է պայմանդ , զի որ ինչ ըստ իրաւանց Աստղական օրէնն եղեւ Աբէսի՛ զուգախառնութեանն, այն չիցէ օրինաւոր լեալ Աստղական յիրաւանց իւրոց : Այս սակայն երկաքանչիւր անցք հաստատեալ կան վկայութիւք հռոմայեցւոց : Անգղ ոչնուաղ իրաւացի դատեցաւ կրսերագոյնն ժամանակաւ Ռեսաը՝ Տանի ունել ինքեան զԱթաղիկ , որչափ վաղնջականն Հռոմուլոս՝ Հայր ունել զԱբէս :

ԳԼՈՒԽ Գ

Ըստ Վարրոնի կարծեաց՝ օգտակար դատ մարդկան ատելի զանձինս՝ աստուածոց նոյնասեբմանս գոլ :

Այս ոք թերևս . միթէ հաւատամն դու այսոցիկ՝ Ես հաւատամ ոչ բնաւ . քանզի և բազմահմուտն ի նոցանէ Վարրոն խոստովանի գոգցես՝ Թէ սուտ են այդոքիկ, Թէ և ոչ կարի համարձակ և անպատրուակ : Ասէ . օգուտ է քաղաքաց, զի արք հզօրք կարծիցեն զանձանց՝ Թէպէտ և ստուէիք՝ լինել ծնունդս աստուածոց . զի այնուիկ տարազու մարդկեղէնն ոգի զանձազանից իմն վստահութիւն յանձին բերեալ դիմագրաւ ձեռն արկանիցէ յիրս մեծամեծս, ուժգինս յառաջ վարեսցէ, և բարեբաստիկ վստահութիւք ի գլուխ հանիցէ : Այս կարծիք Վարրոնի՝ զոր ըստ կարի բացատրութիւք յառաջ բերի, տեսանես՝ քանի՛ ստուէից դուն բանայ ընդարձակ . քանզի է իմանալ՝ Թէ բազում ինչ սրբազանք և ըստ կրօնից արարք առ ի կեղծ հնարեալ լինէին, երբ տեսանէին հռոմայեցիք զի նոցունց իսկ աստուածոց ի չահ են ստուէիք :

ԳԼՈՒԽ Ե

Շնչ ցուցակումն Թէ դիք պատուհասեալ էին աշնութեն Պարիսայ, զոր ոչն արարին ի մայրն Հռոմուղոսի։

Ընդ անհաւատիս Թողցուք առ այժմ, Թէ կարող ինչ էր արդեօք Յաղկին ի մերձաւորութենէն Ինքիսեայ ծնանել զԱնեաս, կամ Յրէս ի զուգաւորութենէ դստերն Նումիտորայ զՀռոմուղոս ծնանել. քանզի խնդիր ինն նմա նակ գոգցես ծագի և ի մեր գրոցս ի Տարցաքննել՝ արդեօք հրեշտակքն ապստամբեալք խառնակեցան ընդ դստերս մարդկան, ուստի ծնեալ սկայից՝ արանց վիթխա բեաց և հզօրաց, լցին զերեսս երկրի։ Նմին իրի աստա նօր առ երկոսին և Տարկանի մերս հակառուրեն. քանզի եթէ ձմարիտ էն ընթերցեալքն առ նոսա յա ղագս մօրն Ինեասայ և յաղագս հօր Հռոմուղոսի, զիարդ անհաճոյ լինիցին դից շնութիք մարդկան, զորս ինքեանք յանձն առնուն անհակառակաբար։ Իսկ եթէ սուտք էն, և ոչ այնպէս զայրանալ էին նոքա ընդ ատելդ շնութիս մարդկան, յորժամ ինքեանք զուարճանան և ընդ առասպելեալ շնութիս իւրեանց։ Յաւել ի դոյն. զի եթէ ասացեալն յաղագս Յրէսի վիպէ Տաւատալի, որպէս զի և Յաղկիանն անհաւատալի լինիցի, ապա դատ մօրն Հռոմուղոսի ոչ և այ արդարանայ պատճառանօք աստուածական իմն զուգախառնութենէ։ Վրմուհի էր Սիլվիա դուստր Նումիտորայ, մայր Հռոմուղոսի ի կար գէ վեստեանց կուսից, որոյ վասն պարտ էր աստուածոյ առաւել և ի հռովմայեցւոց անտի վրէժ առնուլ վասն անարժան գործոյն սեղանակապտութենէ, քան Թէ ի տրո վացւոց վասն շնութենէն Պարիսայ։ Վանզի հինն հռովմայ եցիք զքրմուհիս Վեստայ ըմբռնեալս ի դարշուրեն կենդանոյն Թաղէին. իսկ զկանայս շնացեալս ոչ մահուամբ, այլ այլով դատաստանաւ պատուհասէին. այնպէս սաստ

կապահանջ ցուցեալք ՚ի պղծութեան ձեռայինն կարծեցեալոց՝ տեղեաց , քան մարդկայինն անկողնոց :

ԳԼՈՒԽ Ը.

Ցաղագս եղբայրասպանութեանն Հռոմուլոսի՝ որում դէպն չեղեն վրէժխնդիր :

ԱՅՍՈՒ ևս ածեմ՚ի վերայ . եթէ այնչափ ինչ ատեցողք էին աստուածդրդ մարդկայնոց մեղաց , մինչև ընդ Պաբլիսայ գործն զայրացեալ նոցա՝ լքանել զՏրոյա և ՚ի սուր և ՚ի հուր մատնել , առաւել ևս գրգռելոց էր զնոսա ընդդէմ հռովմայեցւոց արիւն եղբօր , քան ընդդէմ տրուալացւոց՝ թշնամանք առնակինջառաւել զայրացուցանել ունէին եղբայրասպանութեանն նորածնելոց քաղաքին , քան հնոյն քաղաքին որ աձեցեալն էր ՚ի թագաւորութենէ : Ոչ տէ ինչ յայժմուս առ այս մեր խնդիր , եթէ հռոմուլոս հրամայեաց լեռն լինել այդմ՝ , եթէ ինչպէս գործեաց . զոր բազումք անպատկառապէս ուրանան , բազումք յերկբայս ձգեն առ ամենայն , և չատք առ ցաւոց լռեն . վասն որոյ ոչ դէպերիմք զնդագոյնս հետազօտել զերծագ վկայութիւն յողովից մատենագրաց : Այն ինչ քաջայայտ է՝ զի եղբայր հռոմուլոսի սպանաւ , ոչ ՚ի թշնամեաց և ոչ յօտարաց : Եթէ հռոմուլոսի գործեալ էին զայդ և կամ հրամայեալ , յայտ է՝ զի նա առաւել էր հռովմայեցոցն գլուխ , քան եթէ պարիս՝ տրուալացւոց . առիմ ասա յատկապէս այն օտարի կնոջ զգաստութիւն աստուածոց զարթոյց ընդդէմ տրուալացւոց . իսկ եղբայրագործաս այս զդիցն զկնամարկութենէ ձգեաց ՚ի վերայ հռովմայեցւոց : Իսկ եթէ յայն եղեռն անպարտ է հռոմուլոս՝ և գործով և հրամանաւ , այլ զի վրէժ առնուլ արժան էր , ապա քաղաքն ողջոյն զայն գործեաց , իբր զի անտես աբար . և այնուհետև ոչ եթէ զեղբայր՝ այլ զհայրն սպան , որ չար և է : Այսան զի երկաքանչիւր նոքա եղեն հիմնար-

կուք, ուր միոյն յանիրաւի զրկելոյ ի կենաց՝ ոչ տուաւ Թագաւորել։ Եւ կարծեմ ումեք ասել՝ Թէ չար էր գործ Տրովադ, որ վասն արժանի լեալ իցէ լքանել զնա զիւ ի քաղաքացն, և բարի ինչ էր գործ Հռովմայ՝ զի անդադնոր բնակեսցին զիւք ի բարգաւաճել. բայց այս ինչ է՝ զի անդադնոր պարտեալ աստուածքն խոյս տուեն, և առ Հռովմայեցիս տեղափոխեցան առ ի զնոսա և խաբելոյ։ Այնաւանդ ասելի է. և անդ կային մնացին առ ի պատրելոյ ըստ իւրեանցն սովորութեանէ զայնոսիկ՝ որք դարձեալ բնակացին յայն երկիրս, և աստանօր զնոյն արուեստս խաբէութեանէ առաւել և ի գործ արկեալք, մեծագունի փառաց պարծանս յանձինս ձգեցին։

ԳԼՈՒԽ Լ։

Ցաղագս կործանման Իլիոնի, զոր բանգեաց Փիմբրիաս զօրավար Մարիոսի։

Այնուհետև ի յուզել քաղաքական մարտից առ Հռովմայեցիս, զինչ ինչ յանցուցեալ էր աշխարհին Իղիոն, որ և Տրովադա, զի հին ի վեր տապալեցաւ ի ձեռն Փիմբրեայ առն յետին անզգամի ի մէջ կուսակցացն Մարիոսի, առաւել գազանաբար և անագորոյն մնօք՝ քան վաղուրեին ի ձեռն Հելլենացւոց։ Վասնզի յայնժամ բազումք խոյս տուեն անտի, և շատք գերի վարեալք՝ գոնեա զկեանս պահեցին ի ծառայութեանէ անդ։ Այլ Փիմբրիաս արար նախ հրովարտակ՝ մի ինայել ումեք, և զքաղաքն ողջոյն և զհամօրէն բնակեալս հրով մաշեաց։ Այս անցս կրեաց Իղիոն ոչ ի Յունաց անտի զորս գերեգոռեալ էր չարութէ իւրով, այլ ի հռովմայեցւոց՝ որոց իւրով թշուառութէն եղև նախաճնող. և աստուածքն հասարակաբար ի նոցանէ պաշտեցեալք՝ ոչ ի բաց դարձուցին զայն ազէտս, կամ չնմարտագոյնս ասել ոչինչ կարողացան։ Այլ արդեօք և յայնժամ թողեալ զտա-

Ձաբս և զսեզանս՝ մեհենեցան գնացին դիքն ամենայն, որոց ընդ խնամօք էր քաղաքն՝ նորոգեալ յետ առաքին հրկիզութեանն և աւերման առ՝ի Հռունաց։ Այնժամ արդարեւ՝ի բաց մեհենեալ էին, զպատճառն հարցանեմ. և որչափ լաւագոյն գտանեմ զպատճառ բնակչացն, նոյնչափ յոռեգոյն զդիցն։ Վասնզի նոքա զդրունսն փակեցին ընդդէմ փիմբրեայ, զի Աիղղայի պահեսցեն զքաղաքն ողջնկ. ընդ որ սրտմտեալ նորա՝ հուր արկ և խսպառ ջընջեաց զնոսա։ Ցակաւին յայնմ ժամանակի Աիղղա ողջամիտ կողմանն իրացն հռովմայեցւոց առաջնորդ էր. տակաւին հնարէր զինուքն ապրեցուցանել զհասարակաց պետութեանն. և և՝ի բարիոք սկսուածն չարաչար անցս յանձին կրէր։

Այսպա զինչ այլ ինչ լաւ և առնել կարող էին բնակիչք քաղաքին, զինչ այլ վայելչագոյն, զինչ հաւատարմագոյն, զինչ արժանաւոր հռովմէականն ազգակցութեանէ, քան արդարացի պահանջմանն հռովմայեցւոցն պահել զքաղաքն, և առ հայրենասպանսն հռովմէական պետութեանէ զդրունսն ընդդէմ արկանել։ Այլ թէ որքան կորըստեան նոցա եղև նենգիչ գործդ այդ,՝ի միտ առցեն պաշտպանք աստուածոցն։ Ամողեալ դից երբեմն զհնացողս,՝ի Հռունացն բոցս մատնեցին զՀղեան, իբր այն թէ՝ի նոյնն մնոյսոց ծնանիցի ողջախոհն Հռոմ։ Այս ընդէր զհետ այնր լքին նոքա զնոյն քաղաք զհռովմայեցւոցն ազգակից, որ չէր ինչ ընդվզեալ առ աշխարհական իւր դասուցն Հռոմ, այլ արդարախնդիր նորա կողմանն զհաւատս պահեալ անխզելի և բարեպաշտ. և ահա զայն թողացուցին զինաջինջ առնել՝ ոչ Հռունաց արանցն քաջաց, այլ առն միոջ՝ի մէջ հռովմայեցւոցն վատթարագունի։ Այսմ ևթէ պատճառք Աիղղայի կողմանն չէին հաճոյ դից, ոչ բաւ զքաղաքն պահեցին չաւառականքն առարկանելով զդրունսն, ընդէր ասա նմին Աիղղայի բարեթեիս մեծամեծ խոստանայիւն և նախապատմին. Թերևս և այսու յանդիմանին բարեմարդիկս յաւէտ լինել երջանկացեալ՝ քան Թշուառացելոցն պաշտպանս։ Հայտ է ասա, զի

և ոչ յայնժամ յաստուածոյն լքեալ տապալեցաւ Յղնոն. վասն զի գնաց առ ՚ի պատրեցն արքունիք միշտ՝ զոր կալ բէին արարին. զի քանդեալ և ՚ի հուր դատեալ տեսան ամենայն դրօշեալք քաղաքաւն հանդերձ, միայն Ա.Թէ նասայն գտաւ անարատ ընդ փլատակօք տաճարի նորա, որպէս գրէ Իւթոս. ոչ զի ասիցի առ ՚ի գովեստ նոցա, Թէ դիք են հայրենիք, որոց ընդ տեսչութիւն կայ Տրուա դա, այլ զի չունիցին ասել ՚ի նոցայն ջատագովութիւն, Թէ մեհենեացն ամենեքեան՝ Թողեալ զտաճարն և զսե ղանս։ Ոչայլ տուաւ նոցա կարող լինել պահել զԱ.Թենա սայն՝ ոչ ՚ի ցուցանել այսու Թէ կարողք էն, այլ զի յան դիմանեսցին՝ Թէ անդէն իսկ ՚ի ներքս կային անգործ։

ԳԼՈՒԽ Ը.

Թէ արժան ինչ էր հաւատալ զՀռոմ ՚ի ձեռս դից Իղիացւոց։

Ի ՍԿ արդ յետ Տրուադայ օրինակին՝ որով խոհական իմաստութիւն ՚ի ձեռս դից նոցին Իղիացւոց յանձն եղև Հռոմ առ ՚ի պահպանութիւն։ Այսիցէ ոք Թերեալ, Թէ արդեն եկեալ բնակեալ էին նոքա ՚ի Հռոմ, յորժամ ՚ի մարտնչել փիմբրեայ կործան անկաւ Տրոյա կամ Յղնոն, Ո՞ւ ասա մեզ արձանն Ա.Թենասայ։ Այս դարձեալ, եԹէ ՚ի Հռոմ կային՝ յորժամ փիմբրիաս ամայացոյց զՏրոյա, գուցէ անդ ՚ի Տրոյա կային՝ յորժամ ՚ի գաղղիացւոց անտի առաւ Հռոմ և այրեցաւ. այլ զի արագալուրք են և արագընԹացք, անդէն ՚ի ձայն սաստուցն նոյնհետայն դարձ արարին, պահել գոնէ զքլուրն կապիտոլեան՝ զմիակ մնացեալն. իսկ առ ապրեցուցանել զայլ տեղիսն՝ անագան ազգեցաւ նոցա դառնալ։

ԳԼՈՒԽ Ժ.

Աղաչէ զԱստուածածին որ առ տէրութիւն Յովսէփ եղև, հաւատալ արժան իցէ տուրս լինել աստուածոցն։

ՅՈՍՈՒԱՆՈՑ, օգնականութիւն կարծեցաւ և այն՝ զի Լուսաւորիչն Պօղոսիկիոս որ ի Հռոմէ լուսոյ փոխանորդեաց, եկաց ի խաղաղութեան զամենայն ժամանակս Թագաւորութեան իւրոյ, և զգրուսնս մերկենին Հանսոի որ բացեալ լինէին ի մարտից ժամանակս, փակեալ պահեաց. այնու գտեալ նորա զայս հնարս, զի սահմանեաց առ հռովմայեցիս բազում պաշտամունս սրբազանս։ Այլպէս ինդակից լինել մարթ էր առն այնպիսի յաղագս անդորրական հանգըստեանն, եթէ զայն ի գործս պիտանիս ի կիր արկեալ էր. և ի բաց թողեալ զկարի փաստակաւն զպանդրութեն, այ ինչ մարտի լեալ էր ի ինդիր ստոյգ ածպաշտութ։ Այլ արդ ոչ եթէ աստուածքն հնարհեղին նմա զայն հանգստութեն. այլ թերևս սակաւագոյն պատրէին զնա, եթէ չգտանէին զնա պարապորդ ի հանգարտութեն, վասն զի ըստ նուազ զգաղելոյ նորա՝ առաւելագոյնս զինուաւ զբազեցան դիքն։ Այլ թէ զինչ հնարեցաւ նա, և որով ձար տարութ զաստուածոն ընտանեցոյց ինքեան կամքաքին, Ալարրոն զայս ի յայտ բերէ. և մեք՝ եթէ տէր հաձեսցի, յիւրում տեղոջ ձգդով խօսեսցուք. աստանօր զի յաղագս բարեբարութեց նոցա ինդիր է, ապաքէն բարեբարութիւն մեծ է խաղաղութեն. բայց ձմարտին այ բարեբարութ է. և այն յոլովակի՝ որպէս արեգակն և անձրև, և այլ ևս գարմանք կենաց՝ ընդհեղ չարաց և ապաշնորհաց։

Վասն եթէ դիքն պարգևեցին զմեծ զայն բարիս Հռոմէական և կամ Պօղոսիկիոսի Լուսաւորչի, ինչ ապա յետ այնր ի գովելի և ի ժամանակս ոչ գնոյն հնարհեցին հռովմէական պետութեն. մինչ պաշտամունքն սրբազանք սի-

տանագոյնք էին ՚ի սահմանէն անդ, քան ՚ի կատարէն զկանխաւ սահմանեալն։ Իսկ արդ յայնժամ չև էին, այլ եղան՝ զի իցէն. իսկ յետ այնր արդէն լեալ էին, զորս և պահէին՝ զի օգտիցեն։ Այսպս զինչ այն է, զի ընդ քառասուն և երիս ամս, կամ որպէս այլք ասեն՝ ընդ երեսուն և հինն՝ յերկարեաց խաղաղութէն առ Թագաւորութէն Կուսմայի, այլ զկնի սահմանելոյ պաշտամանցն, և նոքօք հրաւէր ելոյ դիցն ՚ի վերակացուս և ՚ի խնամարկուս՝ ՚ի յոքնաթիւ ամաց անտի չինուելէ Հռոմայ մինչև յ( )գ ոստոս կայսր Տիտոս մի ամ և ԼԷ իբր հրաշալի ինն յիշատակի զկնի առաջնին պատերազմին Կարթեդոնի, յորում կարողացան Հռովմայեցիք փակել զդրունս մարտից։

ԳԼՈՒԽ Ի

Է՞ր արդեօք ըզնալի՝ այնչափ պատերազմաց մղելոցն ընդարձակել Հռովմէական տէրութէն, ուր բան փութոյն որով առնեաց առ Կամպիս՝ կարող էր լինել և անգործ և անքոյթ։

ԹՏԵՐԵՒՈՒ տան պատասխանի, թէ առանց անդադար մարտից հետ ընդ հետ մղելոց՝ անմարթ էր այնպէս յերկար և ընդարձակ բարգաւաճել Հռովմէական տէրութէն, և մեծափառութէն լինել գերահռչակեալ։ Վասզեցիկ պատճառ. առ ՚ի մեծանալ տէրութէն զինչ հարկ էր անդադրը լինել. ո՞չ ահա ՚ի մարդկային մարմնոյս լաւ և սակաւահասակն լինել առողջութէն հանդերձ, քան սակաւ ունել իրանս վշտօք հանապազորեիւք. և կամիլը արդեօք ՚ի բարձրահասակն երևել անգամ չգտանել հանդիստ, այլ ըստ անդամոցն մեծութէն՝ մեծագունիւք և տառապիլ չարեօք։ Ո՛չինչ չար էր, նա՝ քանի և լաւ էր, եթէ յերկար ձգեալ էին ժամանակքն՝ զոր Պաղեստինոս Համառօտ նկարագրէ յասելն. «Ի սկզբան անդ Թագաւորք, այն անուն և իշխանութէն՝ որ զառաջինն կոչեցաւ յերկրի,

„ այլ և այլ ունէին պարապուն . կէսք գՀանՀար ՚ի գործ
„ վարէին , և այլք զմարմին . յայսմ ժամանակի ազատ ՚ի
„ ցանկութենէ ընթանայր մարդկայինս կենցաղ , իւրաքան-
„ չիւր ոք յիւրսն շատացեալ „ : Այնժամ առ տարագէմ
ընդարձակելով տէրութենէն՝ արժան էր յայն անկանել զոր
Ալ Էրգիլիոսն երգիծանէ ասելով .

“Այնչափ տակաւ ժամանակ չար ,
Այսօրից գրգիռ , ընչից պակասք ,
Հետ առաջնոցն եկին ՚ի շար „ . Կէս . է :

Այլ թերևս ՚ի բազմապատիկ պատերազմունս անդ զոր
կրեցին հռովմայեցիք և մղեցին , իրաւացի պատճառք
կային նոցա , այս է՝ ՚ի նեղել զնոսա թշնամւոյ՝ սոխակել
լինել ՚ի դիմի հարկանել ոչ առ փառասիրութենէ , այլ
սակս առ հարկի պաշտպանելոյ անձանց և ազատութենէ :
Ծող այդպէս լեցի : Կանգի որպէս գրէ և ինքն Պաւլա-
տիոս , “ Իբրև հռովմայեցւոցն իրք տեսան բարգաւա-
„ ձեալ օրինօք և կարգօք և կալուածովք , բարեբաստիկ
„ և զօրաւոր նախանձ գՀետ եկն Հռոմէացւոցն , ըստ որում
„ և ստէպ ՚ի մարդկային իրս ընտանութեալ է լինել : Այն
„ որոյ սկսան թագաւորք և ժողովուրդք սահմանակիցք
„ մարտս գրգռել , և սակաւք ՚ի բարեկամաց լինէին օգ-
„ նականք . ուր այլք առ ահի կային ՚ի վտանգից մեկուսի :
„ Իսկ հռովմայեցիք փութային ուշ ունել առանին գոր-
„ ծոց և զինուորութենէ , կամք լինել այլ զընկերք խրախու-
„ սել զթշնամեաց ընդդէմ ելանել , զազատուն և զՀայրե-
„ նիս և զազգակիցս զինուք պատսպարել : Յորժամ քա-
„ ջութիւն զվտանգսն ՚ի բաց վանեցին , առ նիզակակիցսն
„ և բարեկամս թիկունս օգնականութենէ մատուցանէին ,
„ և առաւել քարիս առնելով քան ընդունելով Հաստէ-
„ ին զբարեկամութիւն „ :

Այլ այնչաւար ահա այսպիսի Հարատարութիւնք Հռովմ
մեծացան : Սկայց ՚ի թագաւորել Նումայի , և յերկար
ձգիլ խաղաղութենն , ոչ յարձակեին արդեօք չարակամք ՚ի
գրգիռ պատերազմի , կամ թէ ոչ մի ինչ լինէր յայնցանէ՝
առ անդրդուելի մնալոյ խաղաղութեան : Ո՛չ ի՛ նմին յայնժամ

և ես կրեր Հռովմ զպատերազմ, և ոչ վերացուցաներ զէն առ
զէնս, ապա որպէս եղև Հանդարտել յայնժամ Թշնամեաց՝
առանց յաղթեալ լինելոյ մարտիւ և առանց սպառնալեաց
պատերազմի, նովին օրինակաւ ունէր յաջողել միշտ, և
Հռովմ՝ դրօքն Յանոսի փակելովք՝ յար՝ի խաղաղութե
Թագաւորէր։ Իսկ եթէ ոչ էր այդ յիշխանուհե նոցա, ապա
ոչ եթէ՝ի խաղաղուե վայելեաց Հռովմ՝ցորչափ կամք եղեն
դից նոցա, այլ ցորչափ սահմանակից մարդիկն՝ որ չուրջ
զնովաւ՝ այդպէս կամեցան, և ոչ յարուցին պատերազմ։
Այլ Է՛ թէ զայն ևս ասել իշխեցցեն դիք, թէ՝ի ձեռս մեր
էր վաճառել մարդոյ զկամեցն և կամ զկամելն։ Այսպէսն
ըստ ընդաբոյս չարութե դիւաց է՝ զմիտս ապականեալս
զարհուրեցուցանել և կամ դրդել, որչափ Թոյլ տուեալ
լինի. սակայն եթէ միշտ այդմ ձեռնհաս լինէին, և ոչ
այլ ազգ ինչ չորչէին իրքն յոլովակի յեւս գաղտնի և՛ ի գե-
լագոյն իշխանութե ընդդէմ Ճգանաց նոցա, միշտ ինք-
քեանք լինէին իշխեցողք խաղաղութե և յաղթութե
պատերազմի, իբրև զի այսօրիկ գոգդես միշտ՝ի զրգռե-
լոյ ոգւոց մարդկան՝ի վերայ հասանէն. սակայն բազում
անգամ հակառակ նոցայն կամաց լինել՝ ոչ միայն առաս-
պելքն վկայեն բազում մասամբք ստայօղք, կամ դոյզն ինչ
երբեք՝ի Ճշմարտէն յայտնիչք, այլ և հռովմայեցւոցն
պատմութե լինքնին խոստովան լինի։

ԳԼՈՒԽ ԺՎ.

Յաղագս արձանին Ապողոնի որ՝ի Կումա, որ արուսոն կարծեցաւ ցուցանել
զնորատակութիւն Ցունաց, որոց անկարանայր օգնել։

Այսպէս զի ոչ յայլ ինչ պատճառաց արտասուեալ համ-
բաւեցաւ զաւուրս չորս Ապողոնն որ՝ի Կումա, յորժամ
պատերազմ տային հռովմայեցիք ընդ աքիացիս և ընդ
արքայ Պիւրոսոնիկոս։ Ուր այն ինչ ընդ այս նշան յահի

եղեալ Հմայիցն և պարտ վարկան 'ի ծով ընկենուլ զարձանն, ընդդէմ կացին ծերքն Կումայ, պատմելով Թէ նշան այնպիսի ցուցաւ 'ի նմին արձանի և առ պատերազմաւ Գնաիոքայ և Պերսեայ . և զի յաջող դիպան հռովմայեցւոցն իրք, 'ի ծերակուտ անսի առաքեցան պարգևք առ իւրեանցն Կոլղան։ Յայնժամ յառաջ կոչեցեալք Ձարտաբագոյնքն 'ի հմայից՝ եառնն պատասխանի . լալուն Կոլղանի արձանին՝ բարեգուշակ է վասն հռովմայեցւոց, այնու զի Կումա էր գաւառ յունաստանի, և արտասուելովք յայտ առնէր զսուգ և զհարուած յունաստանի՝ իւրում բնիկ երկրի՝ ուստի ածեալն էր։ Ոչ հետ սակաւուց լուր եղև՝ Թէ արքայն Քրիստոնիկոս 'ի պարտութիւն մատնեալ կալանաւորեցաւ . զորոյ զպարտութեի չխամրէ անշուշտ Կոլղան, և առաւել 'ի նշանակ այսմ երևեր տալ արտասուս իւրում արձանին։ Կայս ոչ ամենայն ուրեք տարադէպս ինն նկարագրին դիւացն բարք յերդս բանաստեղծից , Թէպէտ և առասպելականաք՝ բայց առ ձշմարտութիւն նմանական։ Վանգլ և ընդ Կամիլլա դշխոյ ցաւագնեցաւ Քամիոս առ Կիրկիլեայ , և զՊալատնա մերձ 'ի մահ ողբաց Հերակլէս։ Ծերևս այսր աղագ աւ Կումա Պոմպիլիոս խաղաղաւէտն կալով, այլ Թէ այր ընդհ իցէ այն՝ ոչ գիտեմք և ոչ խնդրեմք, մեծախորհրդիներ 'ի հանդարտութիւն իւրում Թէ ընդ որոյ աստուածոց պահպանութիւն արկանիցէ զհռովմէականն փրկութիւն և զարքայութիւն, կարծեցեալ Թէ ձշմարիտն ասծ հզօրն և բարձրեալ՝ ոչ փոյթ ինչ առնիցէ երկրաւորացս. և զի յիշէր Թէ սրտավայի աստուածքն՝ զորս Հնէաս բերեալ էր, ոչ կարացին պահել ընդ երկար՝ ոչ զաթոռականն և ոչ զքաղաքնեան աերութիւն զառ 'ի Հնէասայ կարգեալն, լաւ վարկաւ հոգ տանել յաւելուլ զայլ ևս աստուածս յառաջինն , եթէ գիտեալ ընդ Հռոմուլոսի 'ի Հռոմ, և եթէ որք փոխադրելոց ընդ Հռոմուլոսի 'ի Հռոմ, և եթէ որք փոխադրելոց էին անդր 'ի կործանիլ Կլայի , կարգեալ նոցա կամ իրրև փախստէից՝ պահապանս, և կամ իրրև տկարաց՝ օգնականս։

ԳԼՈՒԽ ԺԲ

Թէ քանի աստուածս յաւելին ինքեանց հաւմայեցեալքն յետ սահմանագրութեանն Նումայի, այլ և բազմութեանն գից ոչ ինչ օգնեաց նոցա։

Ոչ շատ համարեցաւ Հռովմ զառ՝ի Նումայէ կարգեալ գիտցն բազմութիւն. զի Քամազդ ինքնին չև և ունէր զգլխաւոր տաճարն, ապա Յարկուհիսոս արքայ յետոյ ուբեմն կառոյց զԱպիտոլիոնն։ Իսկ Սկղեպիոս Ասկիպաւրոս աւանէ դիմեաց՝ի Հռովմ, յահանաւոր քաղաքի անդ զիւրն արուեստ պանծացուցանել. քանզի Հմուտն ի Պեսինոնտայ գտաւ անշուք, զի անպատեհ իմն էր Թէ որդի Նոբա Քամազդ՝ի կապիտոլեան բլրի բարձրագահ նստիլ, և ինքն յանկնդան տեղւոջ կայել Թաքուցեալ։ Վասն այսր Թէ բոլորից աստուածոց մայր էր նա, ոչ միայն ումանց յորդւոցն զինի չորաւ՝ի Հռովմ, այլ և յառաքեաց քան զայլսն՝ զի զՀետ եկեսցեն։ Յո ընդ այն կարի զարմացեալ եմ, եթէ նորա իցէ ծնեալ զչանագլուխն, որ անագան ուրեմն եկն Հռոդիսոսէ. իսկ Թէ և Տենդոյնն աստուածուհի ջերմանն՝ ծնունդ նորա իցէ, Թողում զինեալ Սկղեպիոսի որդւոյ Թոռին նորա։ Այլ ուստի և իցէ նա ծնեալ, ոչ կարծեմ Թէ դիքն եկամուտք իշխեսցեն անտոհմիկ ումն ասել զայս դիցուհի զքաղաքացի Հռովմայ։ Ո՞վ այսքան նեաց աստուածոց ո՞ր զՔիւ ունել կարիցէ, զգաւառականս և զօտարածինս, զերկնայինս, զերկրայինս, զանդաբամետականս, զծովայինս, զաղբերականս և զգետայինս, և որպէս Վարրոն ասէ, զյայտնիս և զանյայտս, և յամենայն աղգս աստուածոց՝ զօրէն երկրաւոր կենդանեաց զարուսականս և զիգականս։

Իսկ արդ ընդ հովանեաւ այսքանեաց աստուածոց մբռեալ Հռովմայ, ոչ և ունէրնա յուզիլ և տառապիլ այնու հեաև յերեսաց այնչափ մեծամեծ և ահագին հարուածոց,

յորոց ՚ի բազմաց զսակաւսն յիշատակեցից։ Վասնզի բազմաւորք դիս հաւաքեալ էր նա՝ որպէս Թէ առ ՚ի պաշտպանութիւն, այլ առ ՚ի հանդէս ամբարհաւաճութեան իւրոյ մեծի. որոց և տաճարս և սեղանս և զոհս և քուրմս որպէս քահանայս սահմանեալ՝ ՚ի սրամտութեան զգերագոյն գնըչմարիտն ՚ած զաթեուցանէր, որում միայնոյ վայել է այս ամենայն ըստ ուղիղ կատարողութեն։ Վտքին բարեբաստիկ և եկեաց Հռոմ մինչ սակաւ էին նորա դիք. այլ ՚ի մեծանալ իւրում, իբր նաւս գնաւ աստիս՝ բազմացուցանել զաստուածս պարտ վարկաւ. կարծեմ անվատահ եղեալ ՚ի սակաւսն յայնոսիկ՝ ընդ որով բարեկեցիկ և էր առ Համեմատութեամբ յոռեգունի կենացն, Թէ բաւական լինիցին ձեռն տալ իւրումն մեծութեան։ Վ սան զի նախ զառաջինն առ Թագաւորաց անգամ, բայ ՚ի Նումայէ Պոմպիլեայ զորմէ յառաջն Ճառեցի, արքան էր աղէտ գժտութեց մարտի, որ զՀռոմուլոսի զեղբայրն էտ սպանանել։

ԳԻՒՂԻՍ ԺԹ

Որով իրաւամբք և դաշամբք ՚ի ձեռս բերին Հռովմայեցիք զառաջին ամուսնութեան։

Օ ՒՆԴ է, զի և ոչ Հերա ընդ իւրումն Վրամազդայ խնամածոյ գոլով Հռովմայեցւոց տիրացելոց և ազգի ազնուականի, և ոչ Վթաղիկ ինքնին իւրոցն Վհնէայ զարմից օգնել ինչ կարացին առ ունելոյ նոցա ամուսնութեամբ ըստ բարեկարգ և արդար օրինաց. և առ ՚ի չգոյէ այսմ եկն Հասս այնպիսի կոտորած. զի դաւով յափշտակեալ ինքեանց ամուսինս, Տարկեցան վաղվաղակի մարտ դնել ընդ աներս իւրեանց. և կանայքն աշխարելիք չև և Հաշտեցեալք ընդ արանց սակս զրկանացն եղելոց առ նոսա, իբր օժիտս իւեն ընկալեալ զարիւն ծնողաց իւրեանց։ Վ եԹէ յայնմ կռուի յաղԹեցին Հռովմայեցիք զրացեաց իւ-

բեանց, քանի՛ ծանրագին եղէն նոցա այն յաղթութիւնք էր կաքանչիւր կողմանց բազմապատիկ արեամբք և եղերահաճ մերձաւորաց և ահմանակցաց։ Ա՛յսան միոյ Կեսարու անեք եղելոյ, և վասն իւրումն փեսայի Պոմպէի՝ այն ինչ մահու անկաւ դուստր միոյն՝ և կին միւսոյն, զիաթդ արդարացի սրտցաւութիւնք ողբաձայնէ Լուկանոս.

«Վ՛ասն ազգակցին մեք ըզդաշտացըն զեմաթեան մըրցանաց,
Լրջեմք, ի նոյն և զիրաւունս զոր չարագործք տան անձանց»։

Ա՛պա յայնժամ հռովմայեցիք տարան զյաղթութիւն, որ պէս զի՛ ի կոտորել անեղոց իւրեանց, արիւնաշաղախ ձեռաք՛ ի նոցա դստերացն ողորմագին գրկախառնութենն բերիցեն, ուր չէրեկին նոքա սգալ զծնողսն սպանեալս առ՛ ի հնեղելոյ գյաղթականն ամօաչնս. և՛ ի պահու անդ կռուոյ ոչ գիտեին աղջկունքն որոյ վասն խնդրուածս առնիցեն։

Ա՛յսպիսի հարսանեաց ոչ Ա՛յտղիկ բարգաւաճեցոյց զհռովմէական ժողովուրդ, այլ Ա՛ղեքսա դիցուհի մարտից. կամ գուցէ Ա՛ղեկսիա դժոխականն ցնորք՝ տեսեալ զի Հերա պաշտպան էր հռովմայեցւոց, առաւել ներողամիտ եղև առ նոսա, քան յորժամ՛ ի պաղատելոյ նորին Հերայի գրգռեցաւ հակառակ Լնեասայ։ Ա՛պաքէն բարեփառ և եղև գերեաւն Ա՛նդրոմակէ կին Հեկտորի, քան զրմբռնեալն՝ ի հռովմայեցւոց՝ ի հնութենէ. քանզի Պիւռոս յետ ընդունելոյ զնա յիւրն սիրելութենէ և իբր դերի, ոչ զոք սպան՛ ի տրովացւոց անտի։ Ա՛սկ հռովմայեցիք զանեբս իւրեանց սպանանէին՛ ի մարտի, զորոց զգբսաեբս ողջագուրկէին յառագաստի։ Ա՛նդրոմակէ ընդ ձեռամբ յաղթականին ցաւիլ միայն ուներ ընդ մահ իւրայոցն, այլ ոչ երկնչել. իսկ նոքա լծակցեալքն ընդ մարտիկս՛ ի գնալ արանցն՛ ի մարտ՝ երկնչէին ընդ մահ ծնողացն, ՛ի դառնալ նոցա յաղթողք՝ ցաւէին. այլ ոչ էր համարձակ և ազատ՝ ոչ երկիւղն և ոչ ցաւն։ Ա՛նգղ ընդ անկումն քաղաքացոյն, մերձաւորաց, եղբարց և ծնողաց՝ կամ առ

զԹոմն վշտագնեին, կամ խժաբար խնդային ընդ յաղԹուԹիւն ամուսնացն։ Յաւել և զայն, զի որովհետև մարտիցն վիճակ փոխանակաւ է, ոմանք յաղՔկանց անտի զարս իւրեանց կորուսին սրով ՃնողացՒ և այլք ոմանք երկաքանչիւրացն սրով և զՃնողև զարս կորուսին։ Քանզի ոչ փորր էին և հռոմայեցւոցն տոյժք, մինչև քաղաք նոցա եկն ՚ի պաշարուխիւն, և զրօքն փակելովք պաշտպանէին անձանց. զարս ապա դաւանաւոք իւիւ բացեալ և ՚ի ներքս ընդ պարսպօք ընկալեալ զնոսա, ՚ի քաղաքամէջս անդր գործեցաւ մաքառուխիւն չարաշուք և արիւնախանձ ընդ փեսայն և ընդ անեղս։ Յափշտակիչքն անդամ մատնեալ լինէին ՚ի պարտուԹիւն, և ստէպ ստէպ ՚ի տունս իւրեանց խոյս տուեալք, զյաղԹուԹիւնն զառաջինս՝ ԹՀ և ամԹաքիս և աչխարՀիս՝ յանարգուխի դարձուցանէին։ Քնտանօք անյոյս եղեալ Հռոմուլոսի ՚ի քաջուԹՀ իւրոյոյն, մաղԹանս արկաւ Քրամագդ՝ զի զտեղի կալցին իւրքն. և յայսմ պատՃառէ ընկալաւ նա զանունդ Պատոր։ Քյս ոչ վախճան լինէր արդեօք անՀնարին չարեացն, եԹէ ոչ աղՔկունքն յափշտակեալք Հերարձակ ՚ի դուրս ընԹանային, և զազգակցաքն փարեալք վնասս զարդար սրտմտուխի ցածուցանէին՝ ոչ զինուք յաղԹականօք, այլ ողբաւոր դրովանօք։

Քետ այնր Հարկ եղև Հռոմուլոսի ԹագաւորուԹիւն առնուլ զՔիտոս Տատիոս զարքայ Պաբինեանց, ոչ կարացեալ տանել ԹագաւորուԹԵ եղբօրն։ Քայց զիարդ կարէր ընդ երկար տանել նմա, որ ոչ և իւրում Համաձին եղբօրն ժուժեաց. վասն որոյ և զնա բարձեալ ՚ի կենաց, միանգամ ինքն կալաւ զԹագաւորուԹիւնն, զի մեծանուն յաստուածս լինիցի։ Քրդ որպիսի՞ ինչ իցէն այս իրաւունք ամուսնուԹեց, որ գրգռուԹիւք մարտից, որ դաշինք ընտանուԹե, խնամուե, ընկերուԹե, աստուածապաշտուԹե. և կնիք առնային, որ կենցաղ քաղաքի կացելոց ընդ խնամօք այնքան աստուածոց։ Տեսանես ԹԷ որչափ ինչ այլ և կարի յաՃախուԹիւք առաջի կայր մեզ ասել, եԹէ չլինէր մեր դիտաւորուԹիւն փոյԹ տանել ընացելոցն, և բանս ոչ Ճեպեր յայլ իրս։

ԳԼՈՒԽ ԺԴ

Յաղագս անօրէն պատերազմին՝ զոր ընդ Աբգարս մղեցին Հռովմայեցիք, և տարան գաղթուականի անյագ ախորժ ախրելոյ։

Ո՛չ՝ն արդեօք զկնի Կումայի առ այլովք Թագաւորօքն գործեցաւ։ Ու Աբգարս մարտ գրգռելով քանի եղև ինաս՝ ոչ նոցա ևեթ, այլ և Հռովմայեցւոց, որք յերկար խաղաղութենէն առ Կումայիս տաղտկացեալ լինն էին. որչափ ատեպ կոտորած զօրացն գործեցաւ Հռովմայեցւոց և Աբգարայ, և նուազումն երկաքանչիւր քաղաքաց։ Վասզի Աբգա՝ այն զոր Քակնիոս որդի Հնեասայ հիմնարկեաց, և եղև մայր Հռովմայ առաւել քան զՏրոյա, գրգռեալ՝ի Տուղղոսէ Հոստիլիոսէ արքայէ՝ի մարտ միաբան մեծաւ, և մարանչելովն նեղեցաւ և նեղեաց, մինչև ձանձրանալ յոքունց ընդ զուգակիւք ինասս Ձակատուց։ Այս միաբանեցան վճարել զերծ պատերազմին դիմամարտութենէ երից համածին եղբարց յերկաքանչիւր կողմանէ. ՚ի Հռովմայեցւոց անտի ելին ՚ի Ձակատ երեքին Ովրատեանք, և յալբացւոց երեքին Կուրիատեանք. յերից Կուրիատեանց պատեցան անկան երկու Ովրատեանք. բայց ՚ի միոջէ Ովրատիոսէ Հարան Կուրիատեանքն երեքին։ Այսու օրինակաւ յաղթական ինաց Հռովմ վերջին իսկ Հարուածով յայնմ մարտի, ուր ՚ի վերկացունց կենդանեաց մին ևեթ դարձաւ ՚ի տուն։ Ամ եղև ինաս յերկաքանչիւրսն. ոմ սուգն, բայց զարմին Հնեասայ, և սերնդոց Քակնեայ, և զաւակին Յաղկան, և Թոռանց Քամպդայ. զի և քան զպատերազմ քաղաքական առաւել եղև այս, յորժամ դաստը համարեալ քաղաքն ընդ մօր իւրում քաղաքի ՚ի վէգ եկն։

Ա՛յնմ վերջին կռուոյ երից համածնաց՝ եկն ՚ի վերայ և այլ աղէտ դժնդակ և զարհուրելի. քանզի երկու ժողովուրդքս յառաջն բարեկամք էին, իբր մերձաւորք և

ազգակիցք, զի մին ի Աւրիատեանց Հարմացուեալ էր գքոյր Ալբատեանց. որ իբրև եառս յեղբայրն յաղթա-
կան զկողոպուտ փեսայի իւրոյ՝ յարտասուս հարաւ, և
ասեն այն անդէն սպանաւ յեղբօրէ իւրմէ։ Արդասի-
բադոյն ինձ Թուի միոյ կնոջն բնաւորութիւն՝ քան զՀամա-
ըէն ժողովրդեան Հռոմայեցւոյ. և արտաքոյ մեղադրութեան
կարծեմ ողբալ նմա զայրն՝ որում լեալ էր հաւատարիմ
դաշակից. կամ Թերևս զիւրն իսկ եղբայրս աւաղէր՝ որում
խոստացեալն էր քոյր Աւրիատեայ սպանողի եղբօրն։
Վասնզի էր վասն առ Ալբգիլեայ գովութիւն յիշատակի
ցաւագնիլ գԹասիլդին Հնեասայ ընդ Թշնամին՝ զոր իւ-
րով ձեռամբ սպանեալ էր։ Ո՛չ խորդ Արիկեղոս լալագին
կարեկցեր Աիրակուսայ քաղաքին, յիշատակեալ զնորա
շքեղութիւն և զփառս փոքր ի յառաջ ընդ իւր ձեռն ա-
րագ խրթնացեալ, ի միտ առեալ այսու զհասարակացն
փոփոխելի պայման։ Հապա ի մարգկայինս գործովս միտս
ունասցուք, զի կին ոք առանց յանցանաց լայր զփեսայ
իւր զսպանեալն յիւրմէ եղբօրէ, և արք Թշնամիք գովե-
լի ցուցան ողբալով զառ յինքեանց պարտեցեալն։ Հայց
արդ մինչդեռ արտասուէր կինն այն զփեսայի իւրոյ ըզ-
մահ՝ զառ ի յեղբօրէն առեալ, յայնմ ժամու խնդայր
Հռոմ, զի պատերազմ տուեալ ընդ մօրն իւրում քա-
ղաքի մեծամեծ հարուածովք, այնչափ համազգի արեան-
ցըն Հապաղեօք գտաւ յաղթական։

Ո՛չ գովասանաց անուն ի գէմս բերի, և հռչակ յաղ-
թութեան. ի բաց առեալ զպատրուակս անբան կարծեաց,
մերկիկ նկատեսցուք զապիրատութիւնն, մերկիկ քննեսց-
ուք, մերկիկ դատեսցուք։ Ցուցցի յանցանքն Ալբայ,
որպէս Տրովայ ընութիւն լինէր պատճառեալ. աստանօր
ոչ ինչ այնպիսի, ոչ ինչ նման տեսանի. այլ միայն զի
Տաղտուկ զՀռոմայեցւոյն յուլացեալս շարժեսցէ ի զէնս,
և զգունդս խումբացեալս ի յաղթանակաց։ Այն պատ ա-
պա էտ գործել զանօրէնութիւնն զայն առ դաշնակիցն և
առ ազգակից. զոր և ի հարևանցի ևեթ ակնարկէ Աա-
լուստիոս զմեծ զայն պատ, յորժամ գովութիւն կարձառօտ

յուշ ածեալ զնախկին ժամանակս, յորժամ մարդկան կենցաղս ազատ ի ցանկասիրութենէ, իւրաքանչիւր յիւրումն շատանայր. ՚՚ Այլ ահա, ասէ, իբրև Աիւրոս ,, Աքիա, այլև լակեդեմոնացիք և աթենացիք ի յու- ,, նաստան ձեռն արկին ընդ իւրեամբք նուաճել զքա- ,, զաքս և զազգս, տիրապետելոյն իղձք եղեն պատճառք ,, պատերազմաց, մեծափառութենէ կարծեցեալ զմեծ իշ- ,, խանութենէ ,, , այլովքն հանդերձ զոր ասէ ըստ իւրումն առաջարկութենէ, բայց լինի հերքեասցի ցայս վայր ևեթ առնուլ զնորա բանսն : Այս տիրապետելոյ իղձք՝ չարեօք մեծամեծօք խառնվին և խորտակին զմարդկան ազգ : Ա- վին ըղձմամբ պարտեցեալն յայնժամ Հռովմ Աքա- նաց անտի՝ իբրև յաղթող նոցին մրցանակ կանգներ, և զգովեստ իւրոյ ապիրատութենէն՝ ինքեան փառս կար- դայր . որպէս և մեր զիրս ասէ . ՚՚ Ո՛ի գավի մեղաւոր ի ցանկութիւնս անձին իւրոյ,և որ գործէն զանօրէնս՝ օրհնի,, Ա- ղ. ե. 23 : Ի բաց առցին ապա յիրաց անտի ծածկոյթքն պատիրք և խաբէականն սեթևեթք, զի յստակ քննու- թիւք տեսանիցին :

Ի՛ ասիցէ ոք ցիս . ահա մեծ է այս օր և այն, վասն զի մարտեաւ ընդ այս օր և ընդ այն, և յաղթեաց : Ա- պաքէն մարտնչին և մենամարտիկք սրով, յաղթեն և նոքա, տանի և այն անգթութենէ զմրցանակ գովութենէ : Ակայն լաւ ևս կարծեմ պատուհաս վասն անգթութենէ լուծանել, քան զփառս խնդրել զայնպիսի գինուց : Այլ եթէ դեպ լինէր յասպարէզ ելանել մենամարտից ոմանց առ ի կռիւ, միոյն որդի գոլով և միւսոյն հայր, ո՛վ որ այնպիսւոյ տեսարանի հանդուրժէր, ո՞ ոչ ի բաց մեր- ժէր : Այս գինուդ ապա պանծալի հնար եցէ լինել մա- քառանին չարժէլոյ ընդ երկուս քաղաքս, յորոց մին մայր, և միւսն էր դուստր համարեալ : Ի՛թէ յայն սակս որիշ համարիցին, իբրև զի ոչ յասպարիզի գործեցաւ, այլ արձա- կավայր դաշտք լցան եղբանաք՝ ոչ երկուց մենամարտից, այլ բազմաց յերկաքանչիւր ժողովրդենէ . և ոչ ի չորքա- պարիսպ կրկիսի ուրեք սահմանեալ լինէին մրցանքն, այլ

ընդ տիեզերս՝ որոց կենդանիքն էին, և որք գալոցք՝ ուր միանգամ այն լուր հասանէր, յանդիման արձանանայր տեսարան եղեռնաւոր։

Վակասն դիքն խնամարկուք Հռովմէական տերութենն ձիգն իւն կրէին, և այսպիսեաց մըցմանց կային երբ հանդիսատեսք Թատրոնի. մինչև Վերատեսնցն քոյր՝ սակս երից Կուրիատեանցն սպանելոց՝ յերջայրական սրոյ անտի հարեալ, յաւելաւ երրորդ ի Թիւ երկուցն եղբարց, զի մի և Հռովմ որ յաղթեացն նուազքան զՎլա ունիցի զմեռելոցն Թիւ։ Օ հետ այսր՝ առ ի յարդիւնս յաղթութենն քանդեցաւ Վլա. ուրանօր յետ Ցրոյայ կոչմանն ի Յունաց, և յետ Լաւինեայ՝ ուր Վհնեան հաստատեալ էր զպանդուխտ և զգաղթեալ Թագաւորութենն, երրորդ անգամ ընակութեի կալեալ էին դիքն տրովացիք. բայց և անտի ըստ իւրեանցն սովորութեի այլ ուր գուցէ փոխեցան, որ վասն և ջնջեցաւ քաղաքն ի մէնիլ գոգցես դիցն, լքեալ զտաճարս և զսեղանս, յորոց կանգնեալ էր այն տերութեի։ Եւ արդարեւ մէնիեալ էին այս երրորդ անգամ, որպէս զի չորրորդ անգամ Հռովմ ի նոցա խնամարկութեի յանձն լինիցի։ Վանգի անհաճոյ եղև նոցա Վլա, ուր Վմուլիոսի մերժեալ զեղբայր իւր՝ տիրացեալ էր. իսկ հաճոյացաւ նոցա Հռովմ, ուր Հռոմուլոս ի սպանանել եղբօրն կայր տիրեալ։ Բայց ասեն՝ մինչև Վլա քանդեալ էր, ժողովուրդ նորա խոնեցաւ ի Հռովմ, լինել յերկուցն քաղաք մի։ Վյդպէս լիցի. սակայն այն երկիր՝ տերութեի Վսկանեայ և երրորդ կայան աստուածոցն տրովացւոց, ի քաղաքէ անտի իբրու մայր ի գաւերէն յատակեցաւ. իսկ առ ի յերկուցն ժողովրդոց նշխար մնարհին լինելոյ ի մի զանգ գուած ողորմելի, յառաջեաց արիւնհեղութեի բազում յերկուց կողմանց։

Օ ինչ և ասացից մի ըստ միոջէ յաղագս պատերազմացն յոլովակի ձեռնարկելոց առ այլովք Թագաւորօք, որոց Թուէր վախճան առնուլ յաղթութենէ, այլ գարձալ գարձ անհնարին հարուածովք անդրէն յուզէին, կրկին

վերստին յետ գաշանց և հաշտութեանէ երկրորդեալք ՚ի մէջ վեսպասի և աներոյ, և զարմի նոցուն և սերնդոց։ Եւ փոքր նշանակ թշուառութեացս այն է, զի ոչ ոք ՚ի նոցանէ փակեաց զդրունս մարտի։ Եւստի և ոչ ոք ՚ի նոցանէ զայնքանս ունելով խնամածու աստուածս՝ խաղաղութիւն կալաւ զթագաւորութենին։

ԳԻՒՏԻՒՍ ԺԲ.

Որպիսի՛ եղև Թագաւորաց Հռովմայ կեանք և կատարած։

Ի՝ՍԿ Թագաւորացն այնոցիկ որ եկք կատարածի եղեն, Յաղագս Հռոմուղոսի տեսցէ առաւսպեղն այս մտահաճոյ՝ որ յերկինս անդր վերառեալ զնա զրուցաբանէ. տեսցեն և նոցա մատենագիրք ոմանք, որք ասեն՝ Թէ սակս գաղանութեանն գիշատեաց զնա ծերակոյտն, և ապա խրատ ետուն Յուլիոսի ումեմն Պրոկուղոսի ասել՝ Թէ երևեալ իցէ նմա Հռոմուղոս և հրամայեալ ժողովրդեան Հռովմայ, զի ընդ աստուածս պատեսցի, և այսու օրինաւ կաւ լեալ իցէ ցածնուլ և հանդարտել ժողովրդեանն, որ մռմռայր ընդդէմ ծերակուտին։ Այլ քանզի եղև յայսժամ և արեւս խաւարել, զոր ոչ գիտելով անհմաստ բազմութենն՝ Թէ ըստ սահմանեալ ընթացից դիպաւ, ընծայէ արժանեաց Հռոմուղոսի։ Ո՝ՅԼ ԵՒԹ սուգ ինչ արեգական էր այն, ոչ առաւել ևս արժան էր գիտել՝ Թէ սպանին զնա, և զայն եղեռն յայտ առնէր ամփոփմամբ տունջնջեցեալին լուսոյն. որպէս իրօրէն իսկ դիպաւ ՚ի տեառն մերոյ խաչելն ՚ի գԺնդակութենէ և յամբարշտութենէ Հրէից. և զի ոչ ըստ կանոնափակ ընթացից լուսաւորաց հանդիպեցաւ այդ մթագնել արևուս, քաջիկ ցուցանի, զի էր յայնժամ պատքա Հրէից, որ ՚ի լրման լուսնոյ կատարի հանդիսիս. իսկ սովորական նուազել արևուս պատահէ միայն ՚ի նորիլ լուսնի։ Ո՝ՅԼ և ԱՒԿԵ-

բան զընդ դիան գրիլն Հռոմուլեայ՝ առաւել կարծեօք լինել յայտ առնել, քան արդեամբք կատարեալ, յորժամ գովելիս զնմանէ խօսելով՝ ի գիրս յաղագս պետութեանէ, ասէ բանիս Ալկիպիանի. «Ի՞նչպէս՝ ի համարի գտաւ նա, մինչև այն ինչ՝ ի խաւարել արեւու յանկարծ անեղեւութեացաւ, կարծեցաւ՝ ի կարգս աստուածոցն տեղափոխեալ, և ոչ ոք՝ ի մահկանացուացս այնպիսւոյ հանդիպեցաւ կարծեաց՝ առանց վստահատառ առաքինութեան»։ Ոմանք ասեն՝ յանկարծ անհետեւութեացեալ, իմանի ապաքէն՝ կամ սակս մրրկածին բռնութեանն և կամ յաղագս՝ ի ծածուկ եղելոյ սպանմանն և ապիրատութեան։ Պանգի և այլք՝ ի մտաւենագրաց նոցա՝ ընդ խաւարման արեւու զընդ պատմեն և զյանկարծ ինն փոթորիկ, որ պատճառս եղեալ սպանմանն յայնոցելոյ, և կամ ինքնին յափշտակեալ ծախեաց զՀռոմուլոս։ Իսկ և վասն Յուղդոսի Հոստիլեայ՝ երրորդ զինի Հռոմուլեայ կացելոյ Թագաւորի, որ և սա ինքն շանթահար կորեաւ, ասէ Ալկիբրոն՝ ի նոյն գիրս, թէ ոչ համարեցաւ սա այնու մահուամբ յաստուածս վերառեալ, զի ոչ կամեցան արդեօք հռովմայեցիք՝ զոր ինչ Հռոմուլեայ արժան դատելն իւրեանց հասարակորդ առնել, վայրապար այլեւս և զնոյն ընծայելով։ Յայտնապէս իսկ ասէ նա ինքն յերգիծականն. «Իզկանգնիլ այսր քաղաքի զՀռոմուլոս՝ ընդ անմահ դիս պրեցաք առ բարեսիրութեէ մերոյ առ նա, և՝ ի համբաւոյ ,, ։ ցուցեալ այսու՝ թէ ոչ արդեամբք գործեցաւ այն, այլ սակս արգասեաց առաքինութեէ նորա բարեմարդութեէ ինն հռչակեցաւ։ Իսկ՝ ի հորտենսեան տրամախաւութենէն յաղագս սովորական խաւարմանց արեւու բանս արարեալ՝ ասէ. «Ո՛չ գործեացէ զայն մեզնէն՝ զոր արար՝ ի սպանման Հռոմուլոսի, որ՝ ի մեծագնել արեւու գործեցաւ ,, ։ Ի՞ստահօր ոչ ևս զգուշանայ՝ սպանուելն մարդոյ ասել. զի խօսի իբր վիճաբան՝ քան թէ գովասան։

Իսկ այլոց Թագաւորացն Հռովմէական ժողովրդեան՝ զիարդ սարսափելի դիպան եւլը վախճանի, բայց՝ ի Նումայ Պոմպիլեայ և Անկոսայ Մարտիոսէ, որք խօսեացեալք՝ ի

կենաց կարձեցան։ Յուղդաս Հաստիլիոս՝ որպէս և ասացի, յաղթողն և կործանիչն Ղլեայ, աղջկան տամբ իւրով կայծակնահար այրեցաւ։ Պրիսկոս Տարկուինիոս յորդւոց անուն նախորդին իւրոյ սպանաւ։ Սերվիոս Տուղդիոս ապրեցաւ չարութիւն իւրումն փեսային Տարկուինեայ Սուպերբոսի սպանաւ, որ և զԹագաւորութիւնն յաջորդեաց. և ոչ յայժմ մինչեւցան առաւաձքն՝ Թողեալք զառնարս և զսեղանս՝ ի գործել ախտիսի ազգասպանութեանն ի լսաւաբարոյ Թագաւորն Ժողվրդեան Հռոմայ, զոր օրինակ ասեն՝ Թէ զայդ արարեալ էր ի չուառականն Տրոյա, Թողեալ ի ձեռս Յունաց քանդել զայն և հրակիզել առ յաւուրն ընդ շնութիւն Պարիսայ. իսկ առաւօտ սպանելոյ յիւրմէ անեղբոյն՝ ինքն Տարկուինիոս փոխանորդեաց։ Այս ժամուս ազգասպան՝ զԹագաւորն սպանմամբ անեղբոյն, և յետ այնր զպանծացեալն յաղթութիւնք ի բազում մարտս, և որ յաւարաց անուն զԱպոլիտալիոնն հրաշակերտեաց, առաւաձքն այնոքիկ ոչ եթէ ի բացեայ՝ այլ մերձ կալով տեսողք եղեն, և զիւրեանցն Թագաւոր զԱրամազդ յանձն առին գահերէց ինքեանց կալ և Թագաւորել ի բարձրամտութ յայմ տաճարի, այս է՝ ի ձեռակերտն ազգասպանին այնոքիկ։ Այլ ոչ եթէ զեռ այն ինչ անցանց գոլով զԱպոլիտալիոնն կառոյց, և ապա բան արժանի չարութեանցն վտարեցաւ ի քաղաքէն, այլ անհնարին ոճրագործութեն և հանդերձ ի Թագաւորութիւն, յորում և զԱպոլիտալիոնն շինեաց։ Իսկ եթէ զինչ ընկեցին զնա հռոմայեցիք ի Թագաւորութենէ, և պարբսպաց քաղաքին արտաքոյ փակեցին, ոչ նորա յանցանք եղեն ի բռնաւարութենէ Տարկուինեայ, այլ որդի նորա գործեաց յանգետս հօրն, և ի բացականութենէ նորա։ Այմմ ժամանակի մարտնչէր նա ընդ Արդեայ քաղաքի, և վասն ժողվրդեան Հռոմայ տայր պատերազմ. և ոչ գիտեմք զինչ առնել ունէր՝ եթէ իրագիկ լեալ էր անօրինութենէ որդւոյն, կամ սակայն ժողովուրդն առանց հարցփորձ դատաստանի և քննութենէ երթայ ի նահանջ զինչեանց, և զջոյն ի ներքս ընկալեալ, որք ըստ հրամանին Թա-

զեալ կէին զնա, առնն ապա զդրունսն, ոչ մուտս տալով
'ի գալ Տարկուինեայ։ Յակնոցա ծանր ծանր պատերազ-
մաւ նեղեալ զՀռովմայեցիս՝ զրգռելով զսահմանակից
ժողովուրդս, և ապա յօդնականաց անտի և ապաձեռն
Թողեալ, իբրև անկարացաւ անդրէն 'ի ձեռս բերել զե-
Թագաւորութիւնն, մեկուսացաւ սոսկական կենօք յաւանն
Տուսկուղայ մօտ 'ի Հռովմ զամն չորեքտասան՝ որպէս
պատմի, Հանդարտակեաց ծերացեալ ընդ իւրսումն կնոջ,
Թերևս ընտրելագոյն վախճանաւ՝ քան զանեղն ապա-
Նեալ ապիրատութիւնէ փեսային իւրոյ, ոչ անգէտ գոլով և
դառնալն, քան որում կարծի։

Իսկ ահա Հռովմայեցիք զոյն զայս Տարկուինիոս՝ ոչ
եթէ անգութ որ կամ եղեռնագործ վերակոչեցին, այլ
Սուրիգապուս, ամբարտաւան. գուցէ արքայական նորա
պերճութիւնն ոչ կարացեալք տանել ամբարտաւանութիւն
իւրեանց։ Ա՛ան զի այնչափ Թեթև գրեցին զսակրա-
տութիւնն սպանանելոյ նորա զսրբեմոյն Թագաւոր իւ-
րեանց, մինչև զնա ինքն զսպանողն փոխանակ Թագաւո-
րեցուցին. և ո՞չ իցէ այս՝ մեծ ևս անօրէնութիւնէ դարձ փոխա-
րինի առնել այնպիսւոյ անօրէնութիւնէ. իսկ դիքն ոչ մեղ-
նեցան անտի՝ Թողեալ լքեալ զառաքս և զսեղանս։
Ա՛յլ գուցէ որ պաշտպան կացեալ դից, ասիցէ՝ Թէ այնր
աղագաւ մեացին նորա 'ի Հռովմ, զի կարիցեն տառա-
պանօք առաւել պատուհասել զՀռովմայեցիս, քան օգ-
նել բարերարութիւնք, մտոյի յաղթութիւնք զնոսա մոլորե-
ցուցեալ, և խորտակեալ ծանր ծանր պատերազմաւ։
Ա՛յսպիսի եղեն Հռովմայեցւոցն ընթացք առ Թագաւո-
րեսն՝ 'ի գովասանեալ ժամանակի այնր պետութէ մինչև
ցմերժումն Տարկուինի Սուպերբայ, զամն իբր երկե-
բիւր քառասուն և երեք. և սակայն բովանդակ այն
յաղթութիւնք՝ արեան ձապաղեօք ստացեալք և յոբնա-
տաժան վշտօք՝ հաղիւ ուրեմն ընդ քան մղնաչափս ընդ-
արձակեցին զսերութիւնն, որ և այսչափ միջոցք վայրաց՝
և ոչ սահմանի միոյ ևեթ Վետուլեայ քաղաքի 'ի համե-
մատութէ գայ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս նախնին հիւպատոսացն առ Հռովմայեցիս, որք այր զբնիկը տարագիր ի հայրենեացն արարեալ, յետ գմիգակ ազատազանութեանց, վերստին ի վերստին անկեալ սատակեցան։

ՅԱՑՍ ժամանակ յարեւացուք և զժամանակին, ցոր վայր ասէ Պաղատիոս՝ եղև վարիլ արդարացի և բարեկարգ իրաւամբք, յորժամ անդէն ի վերայ կայր երկիւղ Տարկուինեայ, և դուռ պատերազմ ընդ Լդրուբիայ. քանզի որչափ ձեռնատու էին եդրուբացիք Տարկուինեայ ի թագաւորութեն անդր դառնալոյ, հարաւ Հռովմ խիստ պատերազմաւ. սորին վասն ասէ՝ արդարացի և բարեկարգ իրաւամբք վարեալ զկետութեին ի Տարկիւղ երկիւղին, պղ ոչ ի յօժարելոյ արդարութեէ։ Ի հակիրճ յայմ ժամանակի քանի սգաւոր դիպաւ անի, յորում կարգեցան առաջին հիւպատոսք, եղծեալ ի բաց զարքայականն իշխանութեէ. զի և զտարի իւրեանց ոչ բոլորեցին։ Վասնզի Բռունոս Ընտուոս ընկերեալ ի պատուոյ զիշխանակից իւր զՈկտիոս Տարկուինիոս Կոզատինոս՝ տարագրեաց ի քաղաքէն. և ինքն յետ սակաւուց անկաւ ի կռիւ վերս ընդ վերայ առեալ ի Թշնամանէն, բայց նախ ինքնին սպանեալ էր զորդիս իւր և զեղբարս կնոջն, ի վերայ հասեալ թէ դաշնակիցք են նոքա դարձուցանել զՏարկուինիոս։ Օ՜յն արարս գովասանօք ինն յիշատակեալ Պրդիլեայ, անդէն ցաւակցաբար զգծանի։ Վասնզի յետ ասելոյ յԱենէականն ՚ը.

“Ո՜ր գեղեցիկն ազատութեան
Նայր զիւր որդիս եղ պարտ արեան
Իբրև նորոց մարտից օձան ,,,

Ո՜ր նմին ապա աւազէ ասելով.

“Ոայց նա թըշուառ, յետինք զնայդ
Ու գըբեսցեն ըզգործըդ զայդ ,,,

Ա՛րդարեւ ասէ՝ թէպէտ և դատիցին յապա եկեալքն, կամ՝ մեծ գրեսցին զդպծ այդպիսի, Հշուառական է՝ որ զոր դիմն ապանանէ. և յետ այնր առ՝ի սփոփուին Հշուառացելոյն յարէ՝ի նոյն.

"Ահա հայրենեաց յաղթէ անձին,
Եւ գովեսից իղձ սատակապին,,.

Ո՛չ ապաքէն՝ի Երուսաղէմ յայդ, որ զորդիսն ապան, և՝ի Հշնամւոյ լիբանի խոցելոյ՝ յորդւոյն ասէ՝ Տարկուխնեայ փոխարկին խոցեալ՝ ոչ ևս ապրեցաւ, և փոխանակ նորա ապրեցաւ յերկար նա ինքն Տարկուխնիոս, ասասանի՝ զի վրէժխնդրութիւն էր անպարտ իշխանակցին Կողաստինեայ. և սա բարեբարոյ քաղաքացի զպին անցս կրեալ՝ի վտա բիլ Տարկուխնեայ, զոր և բռնաւորն այն Տարկուխնիոս. զի և վասն նորին Երուսաղէմ ասի լինել աղգակից Տարկուխնեայ։ Ա՛յլ Կողաստինոս Թերևս անուանակցութիւն պարաւոր կացոյց, վասն զի կոչէր նա և Տարկուխնիոս. ապա զանուն՝ և ոչ զհայրենին փոխել պիտոյ էր. որպէս և՝ի նորին անուանակոչութիւնն լինէր կարձել զպին Յայն, և յորջորջել միայն Կ՛ուկիոս Կողաստինոս։ Սակայն ոչ եթող նա զանուն՝ զոր առանց իրիք վնասու Թողուլ կարող էր. որպէս զի ծանիցի Թէ պատուով առաջին հիւ պատոս և բաղաքաւ բարի քաղաքացի՝ բռնադատի գնալ՝ի բաց։ Ա՛յս էին փառք Յունիոսի Երուսաղէմ՝ անօրէնութիւն գործելոյ, և յոյժ ինչ պիտանացաւ ակրութիւնն. և միթէ՝ի գործելոյն զայն՝ յաղթէր գտաւ Հայրենեացն սէր, և գովութիւնն տարփուն։ Ա՛յսաբէն՝ի տարակրիլ Տարկուխնեայ բռնաւորի՝ հիւպատոսդ ընդ Երուսաղէմ սահմանեցաւ այլն Կ՛ուկրեաեայ Կ՛ուկիոս Տարկուխնիոս Կողաստինոս. որպէս ժողովուրդն արդարապէս կշռեաց՝ի քաղաքացին յայն ոչ զանուն, այլ զվարս. և զիարդ յանի իրաւի Երուսաղէմ զնկերն առաջնոյ այնմ նորահաստատ իշխանութիւնն՝ զորոյ անուն և՝ևեթ կարող էր լռեցուցանել, եթէ այն գժաւարալուր էր նմա, զրկեաց և՝ի Հայրենեաց և՝ի պատուոյն։ Ա՛յս չարիք գործեցան, այս խառոյնակութիւնք եկին Հասին, միևչդեռ արդարացի և բա-

բեկարգ իրաւամբք ամենայն ինչ գործեալ լինէր յայնմ տերութեան ։ Այլ և Յուկրետիոս՝ որ փոխանակ Կրաւտոսի կարգեցաւ, չև և լացեալ տալոյն՝ ի հիւանդութենէ հարեալ զրաւեցաւ ։ Նոյնպես Պօղղիոս Ազերիոս՝ որ զՎողտինոս փոխանորդեաց, և Պարկիոս Վրաւտիոս՝ որ Յուկրետիոսի յաջորդեաց, ի գլուխ հանին զգաւառն զայն և զդժնդակ տարին, որոյ եղեն հինգ հիւպատոսք, յորում ամի Հռովմէական պետութենէ սկիզբն արար նորոյ պատուի և իշխանութենէ հիւպատոսութենէ ։

ԳԻՐՔ ԺԲ։

Եկեալ սկսանէլոյ հիւպատոսական իշխանութենէն յիւր չարիս տառապեցաւ պետութեն հռովմէական, ոչ ինչ նպաստ գտեալ յատուածոյն զոր պաշտէին ։

Յաճն ժամանակի՝ այն ինչ փոքր ի նուազէր երկիւղ, ոչ ի դադարելոյ պատերազմից, այլ զի ոչ կարի ծանուցեալ էին, բայց իբրև էանց ժամանակն յորում ասի արդարացի և բարեկարգ իրաւամբք վճարիլ ամենայնի, ի վեր երևեցան զոր միանգամ Գալուստիոս Համառօտ արտայայտ. „Եկետ այնր ծառայաբար ժողովուրդն վարեր „ ծերակոյտն. զկենաց նորա և զպատուհասից զօրէն „ թագաւորի վճիռ հատանէր. զանդաստանն կորզէր, „ և զայլը թարմատար թողուլ ինքնին միայնակ տիրա„ նայր։ Ի դժնդակութենէ աստի, և առաւել ևս ի „ վաշխից հարստահարեալ ժողովրդեանն, որ և վասն անզ „ դադար պատերազմից հեծեծ ընդ հարկօք և ընդ զի„ նուորութենէ, զկն առեալ պաշարեաց զքեառն սուրբ կո„ չեցեալ և զաւէնտինեանն. և յայնժամ կարգեաց ինչ „ քեան զաթիքունան, և զայլ ևս իւր իրաւունս։ Այրկ„ պատակութենէս և մեքսումանց վախճան արար երկրորդ „ պատերազմ Կարթագինի „։ Այս զի ևս այլ ևս ի

դրել զեզբերեցայց, կամ ընծայեցանելոցն արարից զե-
զբանս. ահա Պաղատահոս զեկոյց կարձառօտ՝ քանի
Թշուառ գոյա այն տէրութիւն յոլովութիւն ախտից
ամաց մինչև յերկրորդ պատերազմ կարգեցանեան, ար-
ատաբոյ անդուլ մրցմամբ անհանգիստ եղեալ, և նեզբոյ
յերկպառակութիւնս և յամբոխմունս բազաքականս. Զմին
իրի ոչ եթէ հասատատուն խնդութիւնք ինչ երջանկացելոց
էին այն յաղթութիւնք, այլ առ ժամեայ սիսիմամբ Թշուա-
ռացելոց, և հրապուրիչ զրգռութիւնք անհանգիստ ան-
ձանց առ՝ի դիմագրաւ լինելոյ յայլեա բազմանպատու զ
վիշտս.

Ո՞ր ընդ մեզ՝ որ զայսոսիկ ասեմք՝ զայրասցին քաջ
հռոմայեցիքն և խոհականք, Թէպէտ և աւելորդ է ա-
զայնել զնոսա վասն այսր, կամ ազդ առնել, գիտելով
անշուշտ՝ զի ոչ ցանուն բնաւ. Զանգի և ոչ խաթիւ կամ
ծանուցնս քան զնոցա մատենագիրսն ասեմք ինչ, այլ և յոմ
բանի և՝ի ժամ պատապոյ նուաղեալք քան զնոսա, յորոց
յուսումն ինքեանք իսկ աշխատ եղեալ են, և՝ի նոյն պա-
րապումն յորոց լինին զաւակայ իւրեանց. Զոկ եթէ
զայրանան ոմանք, գիարդ ունելին հանդուրժել եթէ ես
ինքնին ասէի զառ՝ի Պաղատահոսէ խօսեցեալսն. “Մ
„ բոխք յոբնատատիկք, ասէ, խռովութիւնք և ապա
„ մարտք քազաքականք՝ի վեր երևեցան, յորժամ սա-
„ կաւք հզօրք՝՝ի բազմայ անտի հնարս գտեալք, զիրա-
„ պետելն ախտանայլին ընդ գեղեցիկ անուամբ երիցագու-
„ նիցն և ժողովրդեան. ուր բարիքն և չարք՝ քազաքացւոյ
„ անուամբ պերձայեալք, ոչ սակս վաստակոց ինչ՝ իսկեստու-
„ Թէ անգր՝ զի հասարակաց էր ապականութիւնն, այլ որ-
„ պէս զիարդ ոք ընչաւէտ էր և առ՝ի զրկել կարողագոյն,
„ այնպիսին առ լաւս հանդարեալ էր, այնու զի առա-
„ ջնկայ իրացն լինելոց պաշտպան „. Զոկ արդ եթէ պատ-
մագրացոյն այնոցիկ ըստ պատշաճի գովելի ազատու-
Թեն համարեալ՝ ոչ լսել զչարիս ընդիկ քաղաքի իւրեանց,
զոր բազում ուրեք բարձրաբարոյ իմն գովասանել
յանձին կալան, ոչ ունելով նոցա զայլ քաղաք զհարա-

զատագոյն՝ յորում գրեալ կան քաղաքացիքն յաւերժա-
կանք, մեզ զինչ առնել արժան իցէ՝ որոց առ ոճ յոյն
որչափ լաւագոյն է և առաքագոյն, նոյնչափ մեծագու-
նի ազատութիւնէ է ընդունակ, յորժամ նոքա զկեալ հա-
սեալ չարիւն ընծայեն մերում Քրիստի, որպէս զի զան-
ձինս տկարս և զանուսումնս օտարացուցեն յայնմ քա-
ղաքէ, յորում միայն է կեալ յաւէժ երջանկութիւն։ Քր-
ոչ իսկ յաստուածս նոցա դժնդակագոյնս քան զբարբա-
ռիմքն քան զնոցուն իսկ մատենագիրս՝ զորս ընթեռնուն
և վերապատմեն. ուր մեք՝ ի նոցանէ իսկ առաքս ասել,
և բնաւ ոչ բաւական եմք՝ ի մէնջ ասել զայնպիսիս, և
կամ զրուանդակն։

Եւ ուր էին ապա այն դիք, որք սակս դուշաբերեալ և պա-
տիր երջանկութեանէ աշխարհիս՝ արժանի պաշտամանն էին
կարծելոցեալ, յորժամ՝ ի նոցանէ խաբէպատիր խորաման-
կութիւն որսացեալքն հոռովմայեցիք տանջեալ լինէին՝ ի
մեծամեծ թշուառութիւնս։ Երանելոյ կայսի՝ յորժամ Վա-
ղերիոս հիւպատոս՝ ի պաշտպանել անդ Վասիտոլիոնին
նեղեալ՝ ի վտարանդեաց և՝ ի ծառայից՝ սպանաւ. նա
առձեռն և ս կարաց նպաստ մատուցանել ասելն Քրամազ-
դայ, քան թէ օգնեաց ինչ նմա խուժան դից բազմաց
ընդ իւրեանց մեծ և ամենալաւ կոչեցեալ Թագաւորի
(Քրամազդայ), զորոյ սպրեցուցեալ էր զաւակն։ Եւ ուր
էին, յորժամ քաղաքն վատակեալ՝ ի խուռն չարեաց
խռովութեանց՝ առ փորր ի ոգի առեալ, և ինայր սպասե-
լով պատգամաւորացն իւրոց յղելոց Յ[illegible]թինս առ՝ ի խրն-
դրելոյ զօրինս՝ ի դիւրութեան, եղև մնալեալ՝ ի սովամահ
և՝ ի մահ։ Եւ ուր էին նոքա, յորժամ միւսանգամ ժողո-
վուրդն լնկեալ՝ ի սովն՝ կացոյց զառաջինն զհամբարապետ,
և՝ ի զօրանալ սովուն՝ Պորիոս Եվլիոս՝ որ սովելոյ բազ-
մութեանն ցօրեան առաստաձեռնեալ, ամբաստանեալ
իբրև Թագաւորելոյ ակն դնել, ՝ի ստիպելոյ նոքին
իսկ համբարապետի՝ ընդ ձեռն դիկտատորին զառա-
ջելոյ Յ[illegible]ուլիանիոսի սպանաւ՝ ի Պուխտոսէ Եվրվի-
լեայ՝ ի զօրագլխէ հեծելազօրուն անհնարին և բազմա-

վանդ չիմանալ քաղաքին։ Ասէր էին, յորժամ ընդ երկար տառապեալ ժողովրդեանն ի յոչնածախ մահատաժամէ՝ անօգնական ի դից և անդարմանն ի դեղոց, ի դէպ համարեցաւ նոր ընծրիս կամ մահճակերպիս սահմանել զոր յառաջն չէր արարեալ. զի մահիճս արկանէին առ ի պատիւ առաւածոց, յորմէ և զանուանն ընկալաւ այս պաշտօն, մանաւանդ թէ սեղանակապտուքեն։ Ասէր էին, յորժամ զանն տանն անդադար ձախող մարտիւ հարուածս ընկալաւ յաճախելոյ և մեծամեծս զօրն հռոմէական ի վէրացաւոց անտի, մինչև եհաս ի թէ կուռնս փուբլիոս Կամիլլոս, զոր ապա յանցաւոր դատեաց քաղաքն ապաշնորհ։ Ասէր էին, յորժամ կալան գաղղիացիք զՀռոմ, յաւարի առին, այրեցին, լցին կոտորածով։ Ասէր էին, մինչ մահատարաժամ տարօրինակ սպառեաց զբազմաքն, յորմէ հարաւ և փուբլիոս Կամիլլոս, այն որ զանշնորհակալս տերութենէն ապրեցոյց յառաջն ի վէրացումն անտի, և յետ այնր ի գաղղիացիս արար վրէժխնդրութեն։ Յայն մարդամահ խաղքն Թատերականք ի ներքս ածին զնոր ժանտ՝ ոչ ի մարմնոյ հռոմէացեացոյ, այլ որ կարի և վտանգաւոր՝ ի վարս նոցա։ Ասէր էին, յորժամ այլ ժանտամահ խիստ ի յայս եկն ի դէպ դատուքեն տիկնոց, որոց վարք ըստ բազմաց աշնուաց կանանց վկայելոյ ցուցան դժնդակ և լինել քան զամենայն ժանտախտ։ Կամ յորժամ ի կատղեհան երկնիղ անձուկն պաշարեալք ի տամնիացւոյ երկաքանչիւր հիւպատոսք զօրուն Հանդերձ, տախտեցան դաշն կռել ընդ նոսա դառն, մինչև վեցհարիւր հեծեալս հռոմէացեացս տալ ի ձեռս պաշարողաց, և մնացելոցն զինքնակէց և կողոպուտ յամենայն զգեստուց, ընդ լծով թշնամեաց սոսկական հանդերձիւ արձակիլ ի բաց։ Կամ յորժամ ժանտ մահուամբ ըմբռնեալ քաղաքացւոց, բազումք ի զօրականէ անտի կայծակնահար սատակեցան։ Կամ յորժամ ի լինել այլոյ և անդարմանելի ժանտամահու տախտեցաւ Հռոմ զՕկղեպիոս զաժշկութենէն չատուած հրաւիրել Հայսպիդաւրայ, և գնալ ի քաղաքին, իբր զի Ասկ-

մազդ Թագաւորնոցա՝ որ արդէն՝ի Կապիտոլիոն անդ նըս-
տեր, սակս զազրագործութեանցն՝ որոյք ախտացաւ յա-
ռաջ Հասակին, ոչ ժամանեաց Թերևս կրթիլ՝ի բժշկա-
կանութէն ։ Կամ յորժամ՝ի միաբանիլ Համանգամայն
Թշնամեաց նոցա՝ լուկացւոց, բրուտեանց, սանիկացւոց,
եղբուրացւոց, սենոնեացն գաղղիացւոց, նախ զառաջինն
պատգամաւորք Հռովմայեցւոցն կորեան՝ի նոցանէ, և
ապա բանակն Հանդերձ սրբոտորիւ նուաձեցաւ, կորըս-
տեամբ եօթանց տրիբունից, և երիքտասան Հազարաց
զինուորաց ։ Կամ յորժամ զկնի ծանուննց և յերկար
խռովութեց Հռովմայ՝ որով Հուսկ ապա Ժողովուրդն
վտարանդեալ ամբաստաւ՝ի Յանիկուղեայ լեառն, այն-
պիսի տագնապ խիստ եղև յայսմ չարէ, մինչև կացուցա-
նել զիկտատոր զՀորտենսիոս, այն էր գործ՝ի յետին
վտանգս ևեթ՝ի կիր արկեալ· որ և՝ի միաբանութիւն
կոչեցեալ ժողովուրդն, ՚ի նմին առենի եՀան զոգի, ուր
ոչ ոք այլ՝ի դիկտատորաց այսպիսում Հանդիպեալ էր
կատարածի · և այն էր յանցանքն մեծ աստուածոցն այ-
նոցիկ, անդ մերձ կալով և Լ՚սկղեպեայ ։

Լ՚ս այնու ժամանակաւ՝ի յաձախել յորջունց մարտից
ընդ ամենայն կողմանս, առ նուազութէ զինուորաց առան
՚ի զինուորութէն նա և արք՝ զաւակաբեր յորջորջեալք, որ
առ չքաւորուն ոչ կարացեալք Հանդերձել զինս՚՚ի մանկա-
ծնութէն ևեթ պարապեին։ Լ՚յլ և՝ի տարենատացւոց անտի
գրգռեալ Պիւռոս արքայ Լ՚լլադայ՝ այր մեծափառ Հռչա-
կեալ՝ի ժամանակին, Թշնամի Հռովմայեցւոց կանգնե-
ցաւ · որոյ խորՀուրդ Հարցեալ Լ՚պողոնէ յաղագս եղից
գործոյն, բարեմարդիկ իմն ընկալաւ՝ի նմանէ պատգամ
երկդիմի, զի ՚որ և կատարիցի յերկուցն, ինքն ծանիցի ան-
սուտ գուշակ · քանզի ասաց · ՚՚ Լ՚սեմ քեզ Պիւռէ՝ յաղ-
թել Հռովմայեցւոց ,, · մինչ զի եթէ Պիւռոս յաղթէր
Հռովմայեցւոց, և եթէ Հռովմայեցիք յաղթէին Պիւռոս-
սի, յերկաքանչիւր դէպս ինքն միայր ստուգաբան գու-
շակ։ Լ՚զդ ՚որ յայնժամ և արքան ահագին եղեն Հարուածք
երկաքանչիւր բանակաց · յորում զառաջինն Պիւռոս գը-

տաւ զօրագոյն, մինչ զի կարող էր ըստ իւրում մտի ձրիս մատուցանել զուշակ զ'պողոս քարոզել, թէ ոչ իսկ և իսկ յայլում կուռի զօրացեալ էին հռովմայեցիք։

Յայն բազմահարուած պատերազմունս՝ի վեր երևեցաւ և սաստիկ մահ կանանց. քանզի մինչ չև երկնեալ նոցա զպատրաստական ծնունդս՝ յոյիք մեռանէին. և կարճեմ այնու՝ի չքմեղս լինելը Ա՛սկղեպիոս, զի ինքն բժշկապետ էր, և ոչ ծնուցիչ։ Պատահեաց նոյնպէս խաչնամանչ, մինչև համարել թէ անանունցն ազգ սպառիցի։ Օ՛ ինչ և ձեռն այն անմոռանալի՝ այնպիսի գաժանացեալ խստութիւն, մինչև զաւուրս քառասուն մնալ ձեռնց դէզադէզ բարձրացելոց՝ի հրապարակամիջի անգամ. այլ և Տիբերիս պաղեալ թանձրացաւ։ Թէ առ մերով ժամանակաւ լեալ էին այսպիսի սրկածք, զի՞նչ ինչ և որչափ ինչ չասէին ընդդէմ բնութեանս։ Օ՛ ինչ գործեաց և որ յայնժամ մարդամահ, որչափ ընդ երկար զայրացաւ, քանի յոլովս ծախեաց. որ և այն ինչ՝ի յաջորդ ամն ունէր զայրանալ դժնդակ և, քանզի անձեռնհաս էր անառնոտը Ա՛սկղեպիոս, եղև ապաստանիլ՝ի սիբիլեան գիրս. ուր յայս ազգ պատգամաց, որպէս կիւկերոն լիշատակէ՝ի գիրսն յաղագս գուշակութեանց, առաւել՝ի մեհենաբանս անդ ինայր հաւատալ, որք ըստ կարի և կամ ըստ կամի զտարակուսանսն լուծանէին։ Ա՛ման որոյ ասացաւ յայնժամ, թէ յայնց պատճառաց լեալ իցէ մարդամահն, զի զյոլով տեղիս նուիրականս գրաւեալ էին բազումք լիբերանց առանձին պէտս. այսպէս՝ի ժամուն անպարտ՝ի ծանր արատոյ անչմտութեանց կամ հեղգութեանց թողաւ Ա՛սկղեպիոս։ Վասն այր որոյ ասացաւ, թէ յայնց պատճառաց լեալ իցէ մարդամահն, զի զյոլով տեղիս նուիրականս գրաւեալ էին բազումք լիբերանց առանձին պէտս. այսպէս՝ի ժամուն անպարտ՝ի ծանր արատոյ անչմտութեանց կամ հեղգութեանց թողաւ Ա՛սկղեպիոս։ Վասն այր որոյ ասացաւ յայնժամ

զուարճութեանց ի պարսն՝ ի գրեթէ յամենայն նուիրական տեղեաց՝ յիշատակել զաղաւնւոյն յայնցանէ՝ որք ի մոռացօնս լեալ էին։ Ի յայժմիկ Ճարտարութիւն ինն փոխն կալան, ոչ ի վանումն մահկանացու, այլ առ ի չքմեղս հանել զդիս։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ոչ ըստ հարուածոյ խոտակեցան հռովմայեցիք առ կարթագինեան պատերազմաւք, ի զուր ժանեղ նոցա զդէմն օգնականութեամբ։

Ասպ ի կարթեգոնեան պատերազմունսն՝ յորժամ ընդ երկաքանչիւր տէրութիւնս յերկար ժամանակաւ յերեսի կայր յաղթութիւնն և երկբայելի, և երկոքին հզօր ժողովուրդք բաղխմունս առ իրեարս տային ուժգնիւն և բազմաճախս, քանի՛ Թագաւորութիւնք փոքունք եղեն կոխան. քանի՛ գաւառք ընդարձակք և ազնուականք քան զեցան, որքանիւք տառապեցան, քանի՛ քաղաքք բարձան ի միջոյ, որչափ ընդ ամենայն կողմանս սահմանք և գետինք ամայացան։ Վանից անգամ յաղթականք ի պարտութիւն մատնեալ լինէին աստի և անտի. որչափ մարդկան վատնումն՝ կամ ի մարտիկ զօրուէն, կամ յանպէտն ժողովրդոց։ Որչափ նաւաց զօրութիւն խոտակեալ ի ծովամարտութիւնս, և ի յուզմանց պէսպէս փոթորկաց ստոբասուղեալ։ Այնի՛կ մի ըստ միոջէ պատմել յօժարիցիմք կամ յիշատակ ածել, Հարկ է զպատմագրի կատարել գործ։

Յայնմ ժամանակի ահաբեկ շփոթեալ քաղաքին Հռոմայ, ի հնարս ընթանային յուսահատս և ի ծաղրականս։ Ի զեկուցմանէ գրոցն սիբիլլեանց նորոգեցան խաղքն գարէ ի դար, որոց հանդէս սահմանեալ էր միանգամ ևեթ ընդ հարիւր ամս, և ի ժամանակս բարեբաստութիւնն մոռացեալ էր յիշատակ նոցա. Նորոգեցին և քրմապետք զսքեբազան խաղս սանդարամետացւոյն, որ և յամս հանդարտութիւնն անգործ կային։ Ի Հանզի արդարեւ ի նորոգիլ այ-

սոցիկ, Հարստացեալ սանդարամետականացն բազմութիւն մեռելոց՝ իբր ընդ խաղս զուարճանային, և մարդիկն ողբալովք զկատաղի զայն պատերազմունս և զարհուրա- հեղ շահատակութիւնն և զեղերասուր յաղթութիւնս եր- կոցունց կողմանց՝ իբր խաղս իմն մեծահանդէս դիւաց մատուցանէին, և խորտիկս պարարտունս սանդարամե- տականաց։ Այլքան աղետագոյն ինչ ոչ տեսաւ քան զա- ռաջինն պատերազմ Կարքեդոնի, յորում այնպէս պարտե- ցան Հռովմայեցիք, մինչև գերի անկաւ և Հռեգուլոս՝ այն զոր յառաջին և յերկրորդ դիպս յիշեցաք, այլ ակա- նատես, և յառաջն յաղթական և նուաճող կարքեդոնա- ցւոց. որ և զգոյն զառաջին պատերազմ քաջութիւն ար- դեօք ՚ի գլուխ տարեալ էր, եթէ առ անչափ տուփանաց գովութիւն և փառաց չգնէր պայմանս առաջի կարքեդո- նացւոցն վաստակելոց դժուարակիրս քան զկար նոցա։ Եթէ այնպիսւոյ առն անկարծելի գերութիւն և անվայե- լուչն ծառայութիւն և երդումն անժխտելի և մահն անա- դորոյն ոչ տան շառագունիլ աստուածոյն այնոցիկ, արդա- րեւ պղնձի են, և արիւն ՚ի նոսա ոչ գոյ։

Այս ոչ ՚ի ներքս քաղաքին պակասեցին յայնժամ ծանր ծանր չարիք. վասն զի ՚ի յորդել Տիբերիս գետոյ առա- ւել քան զսովորականն, յարիք քաղաքին առհասարակ գոգես տասպէտեցան, կէս մի իբր ՚ի հեղեղաց բռնութիւն վարեալ, և կէս մի յերկար շեղջելոյ ջուրցն տամկացեալ և ՚ի վայր հոսեալ։ Այսմ արկածից գՀետերն և գՀրդեհ ծախիչ. որոյ ապականեալ զբարձրաբերձ շէնս հրապարակաց, և ոչ յընտանւոյ իւր ՚ի տաճարն Եստեայ խնայեաց. ուր կու- սանք ոչ մեծարոյք՝ քան թէ դատապարտեալք՝ զամենայն գկեանս իւրեանց նուիրեալ էին ՚ի փոյթ արծարծանելոց գկրակին. իսկ յայնժամ ոչ միայն անշէջ կայր հուրն, այլ և կատաղեալ լափեր. յորոյ ՚ի բռնութիւն զարհուրեալ կու- սիցն այնոցիկ, և ոչ կարացեալք ապրեցուցանել ՚ի հրա- կիզմանէն զտարաբաստիկ արձանս Եստեայ, որք յա- ռաջմէ իսկ կորուսեալ էին գերիս քաղաքս՝ (գՂոնն, գԼաւինիոն և գՂաս) յորս կայենն, ապա Եստեոս քրմա-

պէտ անփոյթ զիւրոյին կենաց արարեալ, ՚ինէրքս յարձակեցաւ, և կիսայրեաց ինքն լինելով զարձանան յափշտակեալ տարաւ ՚ի բաց։ ՚Ի՞նդէ և ոչ զբրմապետն Ծանեաւ Հուբն, և ոչ անդ աստուած ոք կայր. և ոչ ԵԹԷ կայր և ս, կաթող ինչ էր փախչել անտի։ ՚Ոչա ուրեմն առաւել մարդն օգնեաց դրօչելոց Ա՛ստեայ, քան նոքա մարդոյն. իսկ ԵԹԷ յանձանց ոչ փարատեցին զՀուբն, զի՞նչ ձեռնհաս էին լինդդէմ Ջրոյ և բոցոյ օգնել քաղաքին որոյ փրկութեն խնամածուք կարծեցեալ էին՝ որպէս և իրացն արդիւնք ցուցին՝ ԹԷ բնաւ անկարողք էին։ Ո՞յսոսիկ չէր մեզ Հարկ առարկուած ընդդէմ նոցա դնել, եԹԷ արդարեւ խոստովանէին՝ ԹԷ պաշտամունք այսպիսիք ոչ ՚ի պահպանութեն ժամանակիցս բարեաց սահմանեցան, այլ առ ՚ի նշանակել զմշանջենաւորսն։ Նմին իրի եԹԷ կորնչել պատահիցէ մարմնականացն և երևելեաց, ոչ ինչ պակասութեն է իրացն՝ որոց վասն սահմանեալ են, և Հնար է դարձեալ ՚ի նոյն պէտս լինել նպաստաւոր։ Իսկ այժմ նորանշան իմն կուռքն ՚ի մոի եղեալ էին՝ ԹԷ կորնչելի այն պաշտամունք կարող են պահել անկորուստ զերկրաւորսն փրկութեն և զժամանակեան երջանկութեն քաղաքին. և յորժամ ցուցանի յայտնապէս՝ ԹԷ նա և ՚ի կալ պաշտամանց այնոցիկ եկին եՀաս ՚ի վերայ փրկութեն բեկումն կամ թշուառութեն, ամաչեն ուղղել զկարծիս՝ զոր ոչն կարեն արդարացուցանել։

ԳԼՈՒԽ ՀԹ

Ցաղագս վտաց երկրորդ պատերազմին Կարքեդոնի յորում երկաքանչիւր կողմանք պարտասեցան յուժոյ։

ԻՍԿ զերկրորդ պատերազմին Կարքեդոնի կարի յերկար է զՀարուածսն ՚ի Համար ածել զերկոցունց ժողովրդոց ընդ երկար և Համառատած առ միմեանս կռուելոյ,

մինչ զի և մատենագրողք ինքեանն՝ որոց առաւել քան զերկովականս տերութեանն պանծացուցանել՝ քան թէ զպատերազմունսն զրուցաբանել, խոստովան լինին թէ յաղթականն ոչ ինչ ընդհատ էր ի յաղթեցելոյ անտի։ Վասնզի այն ինչ Հնիբաղ ի վեր երևեցաւ ի կողմանց Ասդրիոյ, անց զալիւբեանսն լերինս, դիմեաց ընդ Հռաղղիա և զալբեանս լերինս եհատ և երկայնաձիգ արշաւանօք անձեռոյց զզօրութենն, ամենայն ուրեք քանդելով կամ նաւատձելով, գունակ հեղեղաց ընդ անցս Իտալիոյ ի ներքս բերս յարձակեալ, բաւէ քանի արիւնահեղ ռազմիցն մղեցան, քանիպատիկ մրցմունք. քանիցս Հռովմայեցիք ի պարտութենէ մատնեցան. որչափ աւանք բազումք ի Թշնամի անդր եղեն անձնատուր. որչափ բազումք առան և նուաձեցան. քանի՞ մարտք սաստիկ, և այն պանծալիքն Հնիբաղայ՝ կոտորմամբ Հռովմայեցւոց։ Ո՞վ ինչ և զաթսաներկու անցից ասացից որ ի Կաննա, ուր Հնիբաղ գազանասիրտն այն յաղեալ կոտորմամբ սխեբիմ Թշնամեացն, հրամայեաց խնայել, որպէս պատմի։ Հնոի առաքեաց ի Կարքեդոն երիս գրիւս մատանի ոսկի, նշանակել Թէ այնչափ իշխանաւորք Հռովմայեցւոց անկեալ էին յայնմ պատերազմի, մինչև գիւրին էր յամին քան Թէ ի Թիւ արկանել, յորմէ և զկոտորած այլ ևս խուժանին՝ որ որչափ բազմանէին, նոյնչափ և սակաւագոյն և առանց մատանւոյ տապաստ անկեալ, Թողցուր իմաստասիրել՝ քան ինքեանն զեկուցանել։

Զետոյ ապա առ ի չգոյէ զինուորաց՝ հարկ եղև Հռովմայեցւոց՝ զպատժապարտան անպատուհասութէ պայմանաւ հաւաքել, գերեաց կամ ստրկաց հնորհել ազատութէ. և յայնցանէ զբանակ ամենայն կազմել, քան Թէ զպակասորդն լնուլ։ Այլ սակայն ծառայիցն այնոցիկ, կամ զի մի անարգանս առնել Թուխիմբ, ազատագրեցին՝ որ մարտնչել ունէին վասն Հռովմէական պետութենն, զինք պահանէին. վասն որոյ ի տաճարաց քաղեցին զնոսին իբրու ասելով ցդիս իւրեանց. Ձուք ի բաց զքինս զորս ցայսչափ ժամանակ կրեիք յանպէտս, զի Թերևս մեր

ստրուկքս առնիցեն պիտանացու, որով դուք աստուածքդ
մեր ոչ ինչ զօրեցիք առնել։ Այլ և՛ ի ընուլ զԹոշակն՝
երբ գանձն պակասեաց, առան՛ ի պէտս հասարակաց
ինչք առանձնաւորաց, և անցինիւք այր էտ զոր ունէին,
մինչ զի բայ յիւրաքանչիւր ոսկի մատանուոյ, և՛ ի մա-
հեկն կամ՛ ի ճիւքոյ՝ սին նշանակաց պատուոյ՝ ոչ զայլ
ոսկի ունէր ծերակոյտն, և ա առաւել մնացեալ ստորին
կարգք և ցեղք քաղաքին։ Որ տանել կարող էր բա-
ջաղանաց սոցա՝ եթէ՛ ի մերում ժամանակիս յայնպիսի
չքաւորութիւն լինէին բռնադատեալք, ուր այժմ հազիւ
ժուժեմք նոցա մինչ ինքեանք առաւելագոյնս վտանգն
առ խեղկատակս սակս աւելորդ զուարճութեանց, քան զոր
տուան յայնժամ լեգէոն զօրացն՛ ի պէտս յետին ապրա-
նաց։

ԳԻՏՈՒԹԻՒՆ Ի

Ցաղագս յետին կորուստն ազգնոտացոց, որոց՛ ի ստակին սակս
բարեկամութեն առ Հռովմայեցիս՝ ոչ հասին՛ ի թիկունս աստուածքն
հռովմէականաց։

Անգամն ոչ ինչ այնպէս ողորմագին և աւաղանաց ար-
ժանի ցուցաւ յամենայն աղէտս երկրորդ պատերազմին
Կարքեդոնի՝ քան զաւերումն Ազգնոտաց։ Այս քաղաք
Ապանիոյ՝ կարի բարեկամ ժողովրդեան Հռովմայ՝ պահե-
լով առ նա զիւրն հաւատարմութեն, եղև յաւէր Կայն զի
Հնիքաղայ լուծեալ զուխտն ընդ Հռովմայեցիս, պատճա-
ռեր իւն՛ ի մարտ գրգռել զնոսա. յայր սակս արկ պաշա-
րումն սաստիկ զԱգնոտաւս։ Իբրև լուաւ եղև՛ ի Հռովմ,
հրեշտակս արձակեցին առ Հնիքաղ՛ ի բաց Թողուլ
զպաշարումն. բայց արհամարհեալ՛ ի նմանէ, դիմե-
ցին՛ ի Կարքեդոն, բողոք կալեալք յաղագս գաշանցն
լուծանելոյ. այլ ոչ ինչ վճարեալ դարձան՛ ի Հռովմ։ Յոր-
ժամ այս երթևեկք լինէին, ողորմելի քաղաքն մեծագանձ

սիրելի իւրումն աներութիւն, և Հռովմէականին՝ յումեքեւրոք կամ յիւրաքանչիւր ամիս պաշարմանն քանդեալ աւերեցաւ ՚ի կարբեդոնացւոց անտի։ Օ՜ արհուրելի է աստ դարձեալ ընթեռնուլ և ևս զնոցին կորուստ, թողեալ ՚ի դիր արկանել. բայց կարճառօտ յիշատակեցից, իբր մերում առաջարկութեանն կարի պատշաճաւոր։ Յախ զառաջինն՝ սակ զօրացաւ ՚ի բազաբնին, մինչև ոմանց կերակրել՝ որպէս պատմի՝ և զդիակունս մեռելոց իւրեանց. և ապա ՚ի նուաղել քաղաքին յամենայնի, առ ՚ի չանկանելոյ դերի ընդ ձեռամբ Ինքնիբաղայ, կառոյց ՚ի հրապարակի անդ փայտակոյտ մեծ, յոր խարոյկ արկեալ, և սրով ևս խոցեալք ՚ի մէջ անկանէին մարդիկն։ Պարտ այնպէս էր աստանօր հնարել ինչ դիցն պորտաբուծից և անամնամնաց, որք ՚ի ձարպս զոհիցն բերանաբացեալ էին, խաբէպատիր դուշակութեանցն մառախլով որսողք. պարտ էր ասեմ առնել ինչ աստանօր ՚ի թիկունս հասանել քաղաքին մտերիմ բարեկամութիւք յարելոյ ՚ի ժողովուրդն Հռովմէական, և ոչ թողուլ կորնչել այնմ որ սակս ուխտապահութեանն կայր ՚ի վտանգի։ Պալբէնն դիք ինքնին վերակացու նստէին, յորժամ այն քաղաք դաշնաւորութիւք միացաւ ընդ Հռովմէական տէրութեն։ Ո՜ւ ահա հաւատարիմ պահպանիչ ուխտին՝ որ նոցայն առաքինորդութիւք կռեալ էր՝ անկեղծ կապեալ, երդմամբ հաստատեալ, ծախեցաւ մնչեցաւ։ Ո՜վ է յետ այնր զԻնչի բաղ զմտեսեալն ՚ի պարսպաց Հռովմայ ահաբեկ արարին դիքն մրրկօք և շանթիւք, և ՚ի բաց հեռացուցին, յառաջն ևս այնպիսի ինչ առնել պարտ էր նոցա։ Օ՜ ի ասել խոհ իշխեմ, թէ առաւել իրաւամբք ունէին մրրկալից դիմել ՚ի թիկունս նիզակակից բարեկամացն Հռովմայեցւոց՝ տեսեալ զնոսա վտանգեալս սակս դաշինն անդրժելի ինաւլոյ, որոց և չկային այլ պէտք, բայց տակաւ ՚ի պէտս նոցունց Հռովմայեցւոց, որք վասն անձանց մատնէին, և կայր նոցա այժ ընդդէմ Ինքնիբաղայ։ Վասն որոյ եթէ դիքն խնամածուք էին Հռովմէական երջանկութեն և փառաց, պարտ էր նոցա ՚ի բաց քերել ՚ի Հռով-

մայեցոց անտի զծանր վնաս Սագունտայ Թշուառու-
Թենն. իսկ այժմ զիարդ անմիտ է կարծել, Թէ յերեսաց
Ի՛նիբաղսյ յաղթականի ոչ կորեաւ Հռոմմաստուածոյն
պաշտպանուԹիւն, որք չեղեն կարող օգնել Սագունտայ՝ զի
մի սակս նորա բարեկամուԹենն կորիցէ։ Այլ Թէ ժողովուրդ
քրիստոսադաւան էր ի Սագունտիա, և այսպիսի ինչ
կրեր վասն հաւատոց աւետարանին, Թէպէտ և առանց
ձեռն մխելոյ յանձն սրով և հրով, բայց մատնիւր ի կո-
րուստ սակս աւետարանին հաւատոց, այնուհետև յուսամն
կրեր՝ որով ի Քրիստ հաւատացեալն էր, ոչ ըստ փոխարինի
համառօտ ժամանակիս, այլ անզբաւական միանձնա-
ւորուԹենն։

Իսկ ի կողմն դիցդ այդոցիկ՝ որք արժանի պաշտելոյ
կարծին և խնդրեն առ անմահութ ունելոյ զբարօրուԹի
եղծանելեացս և անցականաց, զինչ պատասխանել ունիմ
Ջատագովք և արդարացուցիչք նոցա ի սակս սագունա-
ւանացն կորուսելոց, բայց զոր վասն Հռեգուդեայ պատ-
Ճառին անպարտ սպանելոյ։ Քանզի այս ևԷթ խորհ է,
զի նա՝ մի մարդ էր, իսկ այս՝ քաղաք ողջոյն. բայց էր-
կոցունց ևս կորուստ եղև ի պատՃառս ուխտապահու-
ԹԷ. զի վասն այսր նա առ Թշնամին դառնալ կամեցաւ,
և սա առ Թշնամիս անցանել ոչ կամեցաւ։ Իւր միԹէ
հաւատարմուԹէն պահեալ չարժէին զգաստուԹիւն դից. միԹէ
մարԹէ լեր ի հաշտ լինելն դիցն կորնչել ոչ ոմանց ոմանց
միայն մարդոց, այլ և ամբողջ քաղաքաց։ Ծառ զոր և կա-
միս՝ ընտրեսցեն. զի ևԷթ ընդ ուխտապահս զայրանան
դիք, խնդրեսցեն ապա հաւատադրուԹիս՝ յորոց պաշտիցին.
իսկ ևԷթ ի նոցա հաշտ մնալն՝ պատահէ և մարդոց և
քաղաքաց ի բազում խիստ տառապանս վշտանալ և կորընչ
չէլ, ի պաշտելոյ նոցա ոչ մի ինչ արդիւնք են առ երջանի
կուԹէ։ Ցադարեսցեն այսուհետև ի զայրագնելոյ, որք
ԹշուառուԹէ անձանց վարկանին զեսափանուԹիւն դիցա-
պաշտուԹենն. քանզի Թէ աստուածք միայն և օգնական
իսկ լինէին, մարԹէ էր ևԹանոսացդ ոչ միայն որպէս
այժմ ընդ ձախողակսն քրիՃիջել, այլ որպէս յայնժամն

իբրև զՀռոգեղոս և զսադունտացիս՝ ահագինս տանջել և կորնչել խոպառ։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Ո՛րչափ ապաշնորհ գաւառ Հռոմէքաղաք առ Ակիպիան ազատաբար խօ, և օրպիսի՛ վէճակ նորին՝ զոր յայնժամ իբր ամենալաւ նկարագրեր Պաղատոիոս։

Ընդ միջոցս երկրորդի և վերջնոյ պատերազմին Կարքեդոնի, յորժամ ըստ ասելոյ Պաղատոիոսի՝ ընտիր քաղաքավարութեամբ գնային հռոմայեցիք և հաստատուն միաբանութե՛ր, քանզի ես զյոլովագունիւք զանց առնեմ՝ ուշ եդեալ պայմանի առաջագրեալս գործոց, յայնմ ժամանակի ասեմ գովելի վարուց և միաբանութե՛ր, Ակիպիան՝այն որ Հռոմայ և Իտալիայ ազատիչ, և երկրորդի այնմ կարքեդոնեան ահաւոր և սատակչական և բազմավտանգ պատերազմինս քանչելապէս դադարեցուցիչ, Յաղթող Կնիքաղայ և տիրող Կարքեդոնի, որք կեանք՝ի մանկութե՛ն ասի գից նուիրեալ և ինքն՝ի տաճարս դասս տիարակեալ, այր այսպիսի խոյս տուեալ՝ի չարախօսութե՛ն ոսոխաց, և հեռացեալ՝ի հայրենեացն՝ զոր իւրով քաջութե՛ն հանեալ էր յանվնաս ազատութե՛ն, զնացուած կենացն անցոյց յաւանն լինտերեան, ոչ ևս այլ յարեալ՝ի քաղաքն զկնի պանծալի յաղթանակին. մինչև պատուիրել՝ որպէս ասի, զի և ոչ՝ի մեռանել իւրում մեռեալ յաշաշտն կատարեսցի յայսմ՝ քաղաքի անդ։ Նետ այսոցիկ նախ զառաջինն՝ի ձեռն Կնէոսի Պանդեայ փոխանակի զդեղխի՝ որ յաղթանակեաց՝ի վերայ Հելլենացն զաղատացոյց,՝ի ներքս եմուտ՝ի Հռոմ ասիականն զեղխութե՛ն՝ ժանտ քան զամենայն թշնամի. քանզի յայնժամ ասէն երևեալ՝ի Հռոմ պղնձազարդ մահիճք և մեծագին օրոցք. յայնժամ՝ի խրախճանս մուծան գուսանք, և այլ և անպատկառ ապիրատութե՛ք։

Սակայն ի ժամուս ոչ զչարեացն զոր կամաւ գործէն մարդիկ՝ խօսել առաւել եմ, այլ զորս ակամայ կրէն բանիւ։ Աստի յառաջիկայ Ճառս պատկանի առաւելապէս այն՝ զոր վասն Սկիսիոնի յիշատակեցի. որոյ խոյս տուեալ յերեսաց ոսոխաց՝ մեռաւ արտաքոյ Հայրենեաց՝ զոր ազատ տեառն էր. իբր զի դիք հռովմայեցւոց, յորոց ի մեհենից ի բաց դարձոյց զՔննիբաղ, ոչ հատուցին նմա փոխարէն զայն երջանկութեի, այր վասն ևեթ պաշտին նոքա։ Այլ քանզի ասաց Սալուստիոս՝ թէ յայնմ ժամու նակի ընտիր էր նոցայն քաղաքավարութեի, զասիական գեղութեին յիշատակել պարտ վարկայ, որպէս զի ծանիցէ՝ թէ ասացեալն Սալուստիոսի ըստ Համեմատուե այլոց ժամանակաց Ճշմարտեալ է, յորս արդարեւ վատթարագոյն էին կենցաղք նոցուն ծանր ծանր երկպառակութիք։ Այսն զի յայնժամ, այս է՝ ընդ մէջ երկրորդ պատերազմին Կարքեդոնի և վերջնոյն, եդաւ և օրէնք՝ Ոչ ոքինեան ասացեալ, թէ կին մարդ ժառանգ մի լիցի, և ոչ իսկ դուստր միամօր. և ոչ գիտեմ իցէ մարթ անիբաւ ինչ քան զայդ օրէն ասել կամ խորհել։ Այայց սակայն ընդ միջոցս երկուց պատերազմացդ Կարքեդոնի՝ հանդուրժելի էր թշուառութիւնն. քանզի արտաքին կռուովք ևեթ բեկանէր զօրն, այլ յաղթութեամբքն քաջալերէր. իսկ առնինն ոչ յուզէին երկպառակութիւնք, որպէս յայլ նուագս։ Այսպա ի վերջնում պատերազմին Կարքեդոնի, արշաւանօք երկրորդին Սկիսիոնի՝ որ և յայն սակս Աքրիկեցի (կրտսեր) վերակոչեցաւ, աստիճանն հռովմէական տերութեի Կարքեդոն կորեաւ քնաջինք, և յետ այնր այնչափ չարեաց կուտակութեի վատթարացաւ պետութեին հռովմէական, մինչև յայտնի ցուցանել թէ յաջողուածոյքն և յապահովականն վնասակաւ՝ որով յեղծանել վարուց չարիքն առնէին նախնեացն, առաւել վնասեաց նմա արագակործանն Կարքեդոն, քան թէ յառաջ ընդերկար դիմամարտին։

Այս որ ինչ ընդ բովանդակ այն ժամանակս գործեցան մինչև ի կեսար Աւգոստոս, որ շազատութեին զայն՝ ոչ

և ս պանծալի բստ նոցայն կարծեաց , այլ զԽոռովելայոյն , զկորստականն և զամենևին ներգևեալ և զնուաղեալ ՚ի բաց կորզեաց ամենայնիւ ՚ի հռովմայեցւոց , և համբուն ՚ի Թագաւորական վերածեաց իշխանութիւն , իբր արծաթ ծեալ ՚նորոգելով զպետութիւնն զնախաթարեալն տիրատեսակ հնութիւնէ , որ ինչ միանգամ ընդ բռնանդակ ժամանակն գործեցան ասեմ Հարուածք պատերազմական , Թողում ՚ի բաց սակս զննադան պատճառաց , որպէս և զնուամանութեանն դաշնադրութիւնն զկարի ամենալին . իբր զի որպէս ասի , ձագք Թռուցեալ էին ՚ի բունոյ իւրեանց , և գուշակութիւնք գժպատեհ արարեալ առ ՚Անկինոս հիւպատոս , որպէս Թէ ընդ այնքան ամս ՚որչափ այն քաղաք փոքր պաշարեալ տագնապեցոյց զզօրս Հռովմայեցւոց , և եղև յահ և յերկիւղ Հռովմէական պետութիւնն , այլք ամենք ունին յարձակիլ ընդդէմ նորին չարագուշակ կատարածիւ :

ԳԼՈՒԽ ԻԲ

Յաղագս հրամանին Մխրդատայ՝ սպանանել զամենայն Հռովմայեցիս գտեալս յԱսիա :

ԱՐԴ զայսոսիկ ահա Թողուլ ասեմ , բայց ոչ ընդ լռութիւնէ արկանեմ զոր ՚Իշխդատն արար Թագաւոր Պոնտոյ , հրամայեալ զամենայն քաղաքացիս Հռովմայ զպանդխտեալս յասիական կողմանս , որոց անթիւ էր բազմութիւն պարապեալ յիւրաքանչիւր արարս , ՚ի միում աւուր հանել ընդ սուր . որ և կատարեցաւ խակ ՚Ով , զինչ եղև կելի տեսիլ էր այն անցիցն . նոյն հետայն իւրաքանչիւր յոր վայր և էր՝ եթէ յագարակի կամ ՚ի ճանապարհի , յաւանս կամ ՚ի փողոցի , ՚ի հրապարակի , եթէ ՚ի տաճարի կամ յանկողնի կամ ՚ի խրախուճս , յեղակարծումն ժամու ՚ի սուր մաշիլ յանիրաւի : ՚Որ հեծումէն էր արդեօք սպանեալոցն , որ արտասուք տեսողաց՝ գուցէ և սպա-

նողաց իսկ . զիա՛րդ դժնեայ հարկ ՚ի վերայ ասպնջակա-
նաց , ոչ տեսանել միայն զանարժան կոտորածն ՚ի տան
իւրեանց , այլ և անձամբ գործել զայն . յանկարծակի
ինն փոփոխեալ զդէմս ՚ի քաղցր ՚ի մարդասէր հիւբրնակա-
լութէ անտի՝ զթշնամւոյ առնել գործ ՚ի խաղաղութէ ,
և իբր երկուստեք գոգցես վէրս ընկալեալ , յորժամ հա-
բեալն խոցիւր ՚ի մարմնի , և հարկանողն ՚ի յոգւոջ ,
Ա՛յթէ սոքա ամենեքին արհամարհեցին արդեօք զգու-
շակութէս . միթէ յորժամ ՚ի տանց իւրեանց չուեցին
յայն անդարձ պանդխտութէն , ոչ ուսնէին առ իւրեանս
աստուածս առանինս և հասարակաց՝ հարցանել ՚ի նո-
ցանէ պատգամ : Այթէ այդ այդպէս իցէ , ապա չկայ նո-
ցա պատճառ բողոք ունելոյ զմերոց ժամանակաց ՚ի մա-
սինս յայսմ . քանզի կանխաւ իսկ արհամարհէին հոգւո-
մայեցիք զնոսին զայն գուշակութէս : Իսկ եթէ հարցին
պատգամն , թող ասասցեն , զինչ շահ օգտի եղև յայն-
ցանէ , յորժամ մարդոյ լոկոյ հրամանաւ եդան ՚ի գործ՝
առանց ուրուք արգել լինելոյ :

ԳԼՈՒԽ ԻԳ՝

Ցաղագս առանին չարեաց՝ որովք տագնապէցաւ հոգւովնականն պետութէ,
յետ կանխելոյ անհեթեթ նշանի կատարելոյ ամենայն ընտանի
կենդանեաց :

Ի ԱՅՍ արդ զայն չարիս յիշատակեսցուք համառօտիւ
ըստ կարի , որք որչափ նեղքինք , նոյնչափ և աղետաւորք
ցուցան : Այրկպատակութէնք քաղաքականք , մանաւանդ
ասել՝ անքաղաքականք . ոչ ևս հակառակութէնք , այլ բուն
իսկ խաղմք քաղաքայինք . յորում արեան Ճապաղիք լի-
նէին , և Ճիգն կողմանց հերձելոյ ոչ եթէ առեղական
բանամրցութէքք և այլ և այլ բարբառովք ընդ իրեարս
սաստկանայր , այլ մերկաբար սրով և զինուք : Ա՛ստք

զաշնաւորաց, մարտք ծառայից, մարտք քաղաքաց ո՛րքան յորդ խաղացուցին զարիւն հռովմէական, քանի՛ աւեր և ամայութի՛ւն գործեցին Իտալիա։ Վանդի մինչ չև գաշնաւորն Լատին ամբարձեալ էր հակառակ Հռովմայ, կենդանիք առհասարակ՝ որ ՚ի պետս մարդկան, շունք և ձիք, եզք, արջառք, և որ այլ ևս անասունք էն ընդ տէրութեամբ մարդոյ, յանկարծ լինի գազանութի՛ւն արտոյրք քան զընտանի հեզութի՛ւն բերեալք, Թողեալ զիւրաքանչիւր կայանս՝ անտէրունչք Թափառէին. և ոչ միայն յօտարաց՝ այլ և ՚ի տէրոյն մերձենալոյ խոյս տային. և ոչ առանց մեծաւոր կամ անվտանգ իշխեր ոք ՚ի մօտոյ վարել զնոսա։ Վթէ՛ նշան ինչ էր այդ, ո՛րքանոյ չարի նշան լինէր արդեօք. և եթէ՛ նշան ոչ էր, ինքնին չար մեծ եղև։ Վյս եթէ՛ էր յաւուրս մեր այդպիսի ինչ պատահեալ, ապաքէն առաւել կատաղիս առ մեզ գտանէաք զոսոխս մեր՝ քան նոքա զանասունս իւրեանց։

ԳԻՒՂԻՍ ԻԳ

Յաղագս քաղաքական գժտութե՛ն յուզելոյ ՚ի պատճառս գրակրօնական հակառակութե՛ան։

Իսկ քաղաքական մարտիցն սկիզբն եղև ՚ի շարժիլ Կրակրօսեանցն վերի յաղագս ագարակական օրինաց։ Վյսն զի կամէին ՚ի ժողովուրդ անդր բաժանել զագարակն, զորս ազատք յինքեանս գրաւեալ էին տարապարտուց։ Վակայն իշխել բառնալ զկարի հնացեալն չափըշտակութի՛ւն լի էր վտանգօք, մանաւանդ և ՚ի յաստակաբ խակ գլխովին, որպէս և արդիւնքն ցուցին։ Վյնո՛ր մահունքն գործեցան՝ յորժամ սպանաւ առաջինն Կրակրոս, և ո՛րքան ևս՝ յանկանիլ միւսոյ եղբօր նորա ոչ յետ բազում ժամանակի. վասն զի ոչ օրինօք ինչ և ըստ իշխանական կարգի, այլ ամբոխիւ և զինուց մարքառմամբ մեռանէին

տոհմիկք և անտոհմիկք։ Յետ սպանման երկրորդին Կրակքոսի, Պուկիոս Պվլիմիոս հիւպատոս՝ որ զինեցաւ ի քաղաքի անդ ընդդէմ Կրակքոսի, և զնա միաբանելովքն հանդերձ նուաճեալ, հարուածս մեծամեծս արար քաղաքացւոցն, յորժամ դատ վարէր՝ առենական հարցաքննութիւն պարտաւորել զայլ և ևս ինացեալս, ասի՝ թէ երիս հազարս մարդկան անցոյց ընդ սուր։ Յորմէ գոյ խնամատարել որչափ յաձախուԹէ մտնոյն խռովայոյզ զինուցն, յորժամ այնչափ ինչ արար կարծեցեալն այն քննողական դատ։ Իսկ սպանողն Կրակքոսի՝ ըստ չափոյ ծանրուԹէն գլխոյ նորա ընկալաւ ոսկի ի հիւպատոսէն, այնպէս իմն սակ արկեալ նախ քան զկոտորածն։ Յայնմ կոտորածի սպանաւ և Պարկոս Փուլվիոս այր հիւպատոսական՝ զաւակօքն իւրովք հանդերձ։

ԳԼՈՒԽ ԻԸ

Յաղագս տաճարի միաբանուԹէ, որ ի խորհրդոյ ծերակուտին կառուցան ի սեզոնն խռովուԹէց և կոտորածին։

Ա ՍԵՄԱԿԱՆ իմն արդարեւ խորհրդով ծերակուտին ի նմին իսկ վայրի՝ ուր գործեցաւ աղմուկն մնհառաԹի, ուր տասնաստ անկան բազմաԹիւ քաղաքացիք յիւրաքանչիւր կարգէ, չինեցաւ մեհեան միաբանուԹեան, զի իբր վկայ Կրակքոսեանցն պատուհասի՝ զաչս առենախօսիցն հարկանիցէ, և զուշ մնասց նոցա ընդոստուցանիցէ։ Սակայն զինչ այլ էր այդ՝ բայց այսն կատականաց դիցն, կանգնել տաճար այնմ դիցուհւոյ, որ եԹէ գտեալ էր ի քաղաքի անդ, ոչ արդեօք այնքան չհակառակուԹիք փեռեկտեալ ապականեր։ Այլ Թերևս պարտաւորն այնմ չարի՝ միաբանուԹիւն որ ի համարի աստուածոհւեաց՝ վասն զի Թողեալ լքեալ էր զանձինս քաղաքացւոց, արժանի եղև վախել ի տան անդ իբրև ի բանտի։ Վասնզի եԹէ ըստ ի-

քացն պատշաճի գործել կամիլն, ընդէր ոչ առաւել ևս զտուն երկպառակութիւն կառուցանիլն անտանօր։ Այլ ինչ պատճառս ասել, էր վասն միաբանութիւնն դիցուհի իցէ, և երկպառակութիւնն ոչ իցէ. եթէ ոչ ըստ խորհրդոյն Աբէոնիևեայ իրաւագիտի, միոյն լինել բարի և միւսոյն չար. որ և Թուխ ոչ այլ ազգ ինչ՝ի սոյն եկեալ միտս, բայց զի տեսանէր տաճար կանգնեալ՝ի Հռովմ տենդի՝ որպէս և առողջութիւն. ապա ըստ նմին օրինակի պարտ էր առնել ոչ միաբանութիւն ևւեթ, այլ և երկպառակութիւն։ Վասն որոյ չարաչար էր Հռովմայեցւոցն վտանգ, զի համարէին կեալ ցասմամբ այնպիսի աստուածոյ չարի. ոչ բերէալք՝ի լուր՝ զի Տրոյայ աւերուածն՝ի նոքա զայրացմանէն պատճառաւորեցաւ։ Ապա՝ քանզի ոչ հրաւիրեցաւ ընդ այլ աստուածս, հնարեցաւ զվէճուածն երից աստուածոցն առէղծուածով ոսկի խնձորոյն. յորմէ դիցն կռիւ, և Պատրիկ յայնոց, և Հելենա յափշտակեալ և Տրոյա կործանեալ։ Եւ եթէ արդարեւ ցասմամբ էր նա ընդ Հռովմայ՝ սակս ոչ ունելոյ անդ իւր տաճար ընդ այլ դիս, և այնր աղագաւ բաղում չիոմիւք ընդոյր զքաղաքն, որչափ և ծանրացաստուածն լինէր, տեսեալ՝ի տեղւոջ անդ կոտորածին՝ որ իւր էր արարուած, զիւրոյ դիմամարտին կանգնել զկայան։ Ընդ այսոսիկ զրաբանութիւս՝ ուր մեք ծիծաղիմք, նոքա գիտնաւորքն և իմաստունքն զայրագնին յիրաւի. և սակայն պաշտօնեայք բարի և չար աստուածոցն ոչ կարեն խոյս տալ՝ի վէճէ աստի միաբանութեանն և երկպառակութեան, թէ զանց արարեալ զնոցա պաշտամունքն՝ վերոյ քան զնոսա դասին զՏենդոյնև զՊելոնիա, որոց կանխաւ արարեալ էին տունս, և եթէ զնոսա ևս պաշտիցեն. քանզի և այնպէս՝ի հեռանալ միաբանութենն՝ի նոցանէ, երկպառակութիւն գժնեացեալ՝՝ի մարտս քաղաքականս արկանէր զնոսա։

ԳԼՈՒԽ Ի.Օ.

Յաղագս բազմաթիւնակ մարդկից եղելոց յետ չինածոյ Աշխէնին Փաթանուէի։

ՎԱՂՁԱԴԻՊ իմն արգել հակառակութենէ կարծեցաւ՝ զմիաբանութենէն կայան՝ վկայ կոտորածի և պատուհասի Կրակրօսեանցն յանդիման կանգնել առենախօսաց · այլ Թէ որչափ ինչ օգտեցան այսու , յայտ առնեն որ զկնի եւ կեալքն չար և ս արկածք։ Այսն զի ջան եդին այնուհետեւ առենախօսքն՝ ոչ եթէ զգուշանալ յօրինակէ Կրակրօսեանցն, այլ առաւելուլ և ս ։ Ա՛յն ինչ Ա ուկիոս Աատուբնինոս տրիբուն ժողովրդեան , և Այիոս Աերվիղիոս պրետոր , և յետ բազում ժամանակի Աարկոս Կրասոս՝ զհակառակութենէն բորբոքեին , դժնդակագոյն քան զառաջինն հարուածք գործեցան , և ապա մարտք դաշնաւորաց վաւեցան, որովք սաստկապէս նեղեցաւ Իտալիա , յաւեր և ի նորանշան ամայութենէ գարձեալ ։ Ո՛չ հետ եկին ապա ծառայական մարտքն և քաղաքականք · յորս քանի քանի մնքառամունք գործեցան, և որչափ արեանց հեղումն · մինչ չև Համօրէն ազգք իտալացիք՝ որովք հռովմէականն իշխանութենէ զօրանայր առաւելապէս , իբր խժական բարբարոս ոմանս նուաձեալք լինէին ։ Ի պաքէն Թէ զիարդ ի սակաւուց անտի իբր յեօթանասուն մեհենամարտից սկիզբն կալաւ մարտն ծառայական , և յոր Թիւ ժամանեաց և յորպիսի ժանտութենէ և ի մոլեգնութենէ , զի և հրամանատարաց ժողովրդեան Հռովմայ յաղթեաց այն Թիւ, զոր քաղաքս և գաւառս՝ և որպիսի օրինակաւ ապականեաց՝ ահա տկարացան բովանդակապէս արտայայտել՝ որք միանգամ զվէպն գրեցին ։ Այս ոչ այն միայն եղև ծառայական մարտ , այլ և յառաջագոյն զի՝ակեդոնիա գաւառ անմարդացուցին ծառայականքն , և յետ այնր զԻկիլիա և զԻտալիական ։ Այս Թէ որչափ ինչ ահագին գործե-

յին աւազակութիւնն, և ապա սաստիկ մարտք հինից ծո-
վու, ո՛վ կարող էիցէ զչարեացն մեծուն չդլտաբանել։

ԳԼՈՒԽ ԻԴ.

Յաղագս քաղաքական մարտին Մարիոսի և Սիղայի։

ԻՐԵՒ Մարիոս շաղախեալ քաղաքացւոցն արեամբ, և զբազումս ի հակառակորդացն ի սուր մաշեալ յետոյ ու-
բեմն պարտեալ խոյս ետ ի քաղաքէ անտի, առ փոքր մի
ոգի առնոյր քաղաքն, որպէս Սիկերոն ասէ. և ահա Սին-
նա միաբան ընդ Մարիոսի յաղթող դառաւ. և յայնժամ
սպանմամբ արանց ահաւորաց՝ շինչան լուսաւորք քաղաք-
քին։ Ընդողմայոյր յաղթութենէ վրիժառուս եկաց ապա
Սիղայ, բայց թէ քանի կորստեամբ քաղաքացւոցն և ա-
զետիւք տերութենն՝ ոչ է հարկ ասել. քանզի յաղագս
վրէժխնդրութեանս այս՝ որ ինասակարագոյն գտաւ քան
զասիրատութենն գործեցեալս, թէ և անպատուհաս թո-
ղեալ լինէին, այսպէս ասէ Ղուկիանոս.

“Ինչ քան ըզչարի դէղոյն հընար.
Այս ձեռն կարծեալ բժըշկարար,
Ընդեցաւ անդր քան զախտին վայր,
Ընարեացապարաք արդեօք կորեան.
Կայց նոյնպիսիք ինացին միայն.
Թէրընամութենէք ազատ Թողան.
Յասուն անսանձ յօրինայ կան ,, ։

Ի մղել մարտին Մարիոս և Սիղայի՝ բայ յանկելոյն արտաքոյ ի չակատու, ի բուն իսկ ի քաղաքի լցան պիա-
կամբք փողոցք և հանապարհք, առեանք, Թատրոնք և տաճարք. մինչև դժուարին էր ընտրել երբ արդեօք ա-
ռաւել մահաւնս գործեցին յաղթականքն, արդեօք յա-
ռաջն առ ի լինել յաղթող, թէ յետ յաղթելոյն. ուր ի
յաղթել անդ Մարիոսի զառաջինն յորժամ ի փախստեանէ

դարձաւ յետս, բայց՝ի Հարուածոյն գործելոյ յայլ և այլ տեղիս, գլուխն Կաւակեայ հիւպատոսի եգաւ յատեանս կան բեմին. Կեսար և Փիմբրիաս սրախողխող եղեն՝ի տունս իւրեանց. երկոքին Կրասոսը Հայրն և որդին զեղան յանդիման միմեանց. Կերթիոս և Կլուսիտորիոս Ձանձկօք քարշեալք աղեձափք դէշագէշ կորեան. Կատուղեցաւ դեղաուեալ կարձեցաւ՝ ի Թշնամեացն ապրել ձեռանէ. Կերուլաս քուրմ արամազդեան զերակոն Հատեալ՝ իւրոյն արեամբ աշտ արար Կիմոսի, Ի լուկ իսկ Հայեցուածոց Կարիոսի անդադար վիրաւորը անկանէին, որոց միանգամ յողջունելն ոչ կամէր զաջն կարկառել.

ԳԻՐՔ ԻԲ.

Որպէսի եղև Անդրայի յաղթուԹի՝ վերժառաւ անդԹուԹեն Կարիոսի.

Կայն ինչ զհետ գայր յաղԹուԹին Անդրայի՝ ի վերէժխընդրուէ Կարեայ անողորմուԹեն, Թէպէտ և բազում արիւնհեղուԹիք քաղաքացւոցն՝ի ձեռս բերեալ, արգարեւ մարտն դադարեաց, այլ ԹշնամուԹեան ողջիկ կալով անողորմ և զայրացաւ՝ի խաղաղուԹե. Կպաքէն յետ առաջին և վերջին Հարուածոց Կարիոսի երիցագունի՝ այլ և խոտագոյնք յաւելան՝ի Կարիոսէ փոքուէ և՝ի կարպոսէ կուսակցէն Կարեանց, Առքա՝ի Հասանել Անդրայի անյոյս եղեալք՝ի յաղԹուԹէ և՝ի կենաց անգամ, լքին զամենայն առղի Հարուածովք իւրեանցն և օտարաց, Ա՝ան զի բաց՝ի կոտորածէն՝ որ Ձարակէր ընդ այլ և այլ կողմանս, պահ առ կեալ և զծերակուտիսն, ՝ի խորհրդարանէ առաի իբր՝ի բանտէ Հանեալ, տանէին՝ի վենուսի. Կուտիոս Ակվողաս քրմապետ՝ի տաճարի անդ Կեսարեայ՝ քան զոր էէր առաւել նուիրական ինչ առ Հռովմայեցիս, մինչդեռ բուռն Հարեալ էր զանգանոց նորա՝ անգէն սպանաւ, իւրով արեամբն գոգցես շիջուցանելով զկրակն՝ որ միշտ վառէր

անդ Հանապազօրեայ սպասաւորութիւք վերառեան կուսա-
նաց ։ Յետ այնորիկ Աղղայ յաղթական եմուտ ի քաղաքն ,
որ և ՚ի հրապարակական ադարակի անդ ոչ ևս մարտիւ ,
այլ ՚ի զայրոյթ խաղաղութեն զէօթեն Հաղարս անձնա-
տուրս , ուստի և զինքնակէսս , առանց սրոցելոց հրամայե-
լով ևեթ տապաստ արկեալ էր ։ Իսկ ընդ քաղաքն ողջոյն
իւրաքանչիւր սիղոյական վիրաւորեր զոր ոք և կամէր , և
առանց Համարոյ լինէր մեռելոցն թէ , մինչև ազգս մա-
տուցաւ Աղղայի՝ թագացուցանել զամենս կենդանի , որ-
պէս զի գտանիցեն մարդիկ որոց իշխել կարիցեն յաղթա-
կանքն ։

Յայնժամ արգելուին հրամայեալ մոռնդին ազատու-
թեն սպանանելոց անխտիր ընդ ամենայն վայրս , հրապա-
րակեցաւ տախտակն յուրախութեի մեծ , այն՝ յորում նշա-
նակեալ էր զի երկու Հազար մարդիկ յերկաբանչիւր ա-
կանաւոր կարդիւ՝ սասեատաց և սինդիքատոսաց , կէսք սպան-
ցին և կէսք տարագիր գնայցեն ։ Դադարեաւ տրամեցու-
ցանել թէն , այլ ուրախ առնէր պայմանն . և ոչ այնչափ
տրամութեի էր ընդ բազմութեի անկելոցն , որչափ խնդու-
թիւն ընդ աներկիւղ մնալ մնացելոցն ։ Ականչն յոմանս
յայնցանէ՝ որոց մահ հրամայեալ էր , նորանշան եղա-
նակ մահուն տայր և մնացելոցն յոգւոց Հանել ՚ի դառն
աներկիւղութեն անդ ։ Ականջի առանց երկաթոյ ձեռաք
ևեթ պատառոտեցին , առաւել անողորմ յօշատակ զմարդ
կենդանի , քան զոր գազանաց է սովորութեի դիշատակ զդի
ընկեցիկ ։ Ի զայրոյզ զայն բերեալ , և անդամ անդամ
կտրատեալ , եռուն նմա բազում տանջմամբ յերկար ապ-
բել , մանաւանդ թէ յերկար մեռանել ։ Ի վաճառ Հա-
նին գքաղաքս ոմանս ազնուականս իբր գիւղս անհնանս .
իսկ մի քաղաք՝ իբր միակ պարտաւոր Համարեալ , հրա-
մայեցաւ ՚ի սուր Ձարակել բովանդակ ։ Այսոքիկ իրա-
գործեցան ՚ի խաղաղութեէ անդ յետ պատերազմին , ոչ զի
արագ ՚ի ձեռս բերցի յաղթութեին , այլ զի բերեալն ՚ի ձեռս
մի անգոնեացի ։ Խաղաղութեէ և մարտ ՚ի վիճի կացին
յաղթել իրերաց անդթութիւք , և խաղաղութեին տարաւ

զյաղթութեի. քանզի մարդն տապաստ արկ զքինեալսն, իսկ խաղաղութիւն՝ զանգիտան. մարդն լինելը, զի որ վիրաւորիւրն՝ վիրաւորեսցէ՝ եթէ կարէ. իսկ խաղաղութեի լինելը, ոչ զի ապրեալն կայցէ, այլ զի մեռեալն մի ընդդէմ դառնայցէ։

ԳԼՈՒԽ ԻԀ

Բաղդատութիւն յարձակման գոհացուց ընդ այն կոտորած՝ զոր հռովմայեցիք ընկալան կամ՝ ի գաղիացւոց, և կամ յառաջնորդաց քաղաքական մարդոց։

Ասէ արդ՝ ո՞ր կատաղութեի ազգաց օտարաց, ո՞ր բարբարոսաց դժնեպութեի համեմատեսցի բնաւ առ յաղթութեի այսպիսի՝ զոր քաղաքացիք՝ ի վերայ քաղաքակցաց տանէին։ Ո՞ինչ ինչ ետես արդեօք Հռովմ առաւել սգաւոր, անագորոյն և դառն, միթէ զկանխաւ յարձակուիւն գաղղիացւոցն, և զի մեծով զգոհացուցն, եթէ զգազանաբար բոյուի առ իւրեանցն ազգակիցս զվարիոսի և զվիղղայի և զայլոց նոցին կուսակցաց՝ արանց նշանաւորաց՝ կարծեցեալցն լուսաւորաց իւրեանց։ Այսպիսին գաղղիացիք զոր միանգամ՝ ի ծերակուտէն գտին՝ ի քաղաքի անդ, բաց՝ ի Կապիտոլեայ դղեկէն՝ որ միայն պատսպարեաւն էր. իսկ ապաստանեալսցն՝ ի բլրի անդ՝ ոսկւով և եղեամ զկեանսն շնորհ հեցին. զոր եթէ սրով գրաւել ոչ կարէին, բայց կարող էին պաշարմամբ սպառել։ Իսկ Կռուիք այնչափ բազմաց խնայեցին՝ ի ծերակուտ անտի, մինչ առաւել զարմանք են՝ զի ոմանց ոմանց մահ՝ ի վերայ ածին։

Ասայ սակայն Վիղղա՝ մինչ կենդանի կայր դեռ Վարբիոս, ՝ի Կապիտոլիոնի անդ՝ որ ՝ի գաղղիացւոց պահեցաւ, ինքն նստաւ յաղթող՝ տալ հրաման կոտորածոյն. և յորժամ փախստականն Վարիոս՝ որ առաւել գազանաբար ունէր դառնալ՝ ի քաղաքն, Վիղղա ՝ի Կապիտոլիոնի՝ ծերակուտէն իսկ խորհրդով զյաքսունս մերկացոյց՝ ի կենաց և ՝ի գոյից։ Իսկ ի՝ ոտնմանց Վարեայ՝ մինչ Վիղղա ՝ի

բացեալ էր, եմ իմիք 'ի նուիրականաց եղև խնայել, ուր և ոչ 'ի Աթոռոն խնայեցին՝ 'ի քաղաքացի յատենակալ և 'ի քրմապետ, յորժամ ողջմէն ի դիրս արկեալ նորա կայր զսեղանոնին՝ ուր համարեին հաստատեալ զաթոռ հոռովմայեցւոց։ Իսկ սիղպայեանն այն տախտակ յետին, զի մի զայլ ևս զանհամար մահուանն թուիցեմք, զազգմադրոյս խողխողեաց 'ի ծերակուտէ անտի, ուր գոհացիք կողոպտել միայն իշխեցին։

ԳԻՒՂԻՒ Ի.

Յաղագս խուռն պատերազմացն՝ որք յաճախ և ծանր ծանր եղեն յառաջ քան զքրիստ գալուստն։

ՅԻ արդ որով դիմօք, որպիսի՞ համարձակութեամբ, որո՞վ ժպրհութեբ և անզգամութեբ, մինաւանդ և խելագարութեբ՝ զայդ ամենայն չընծայեն դից իւրեանց. իսկ զոր այժմ լինին՝ ընծայեն մերում Աստի։ Ընդդէմ մարտըն քաղաքականք՝ ըստ նոցին իսկ մատենագրացն խոստովանելոց դաժանագոյնք քան զԶէնիամեաց մարտս առհասարակ՝ որովք ոչ միայն տագնապեցաւ այն տերութեբ, այլ գոգոյս իսպառ բարձեալ գատեցաւ, յերկար ամանակաւ նախ քան զգալ Աստի յուզեցան, և այն՝ շղթայատող կարգաւ անհրաւացի պատճառաց 'ի մարտէ անտի Աբիսոէ և Աիղղայի ցմարտս Աերաւորի և Կատիլինեայ, որոց առաջինն 'ի Աիղղայ արտասահմանեալ, և երկրորդն 'ի նմանէ խնամարկեալ։ Ընդ առ մարտն Լեփիդոսի և Կաուղղոսի, 'ի կամել միոյն ցրել զարարուածս Աիղղայի, և միւսոյն պաշտպանել։ Ընդ առ Պոմպէի մարտն և Կեսարու, յորոց Պոմպէոս զԱիղղայի Ձգնէր կողին, և նորուն զօրուեն հաւասարեաց, կամ առաւելեալ և։ իսկ Կեսար ոչ հանդուրժէր զօրութեն նորա, զոր ինքն ոչ ունէր. բայց 'ի պարտիլ Պոմպէի և 'ի մեռանել անցոյց զնովաւ։ Ընդ առ և երկրորդն Կեսար՝ որ ()գոստոս անուանեցաւ,

ժամանեցին մարտքն, առ որոյ տէրութիւն ծնաւ Վասա-
լեան զի և սա ինքն ( )դոստոս մղեաց ընդ բազմաց մարտս քա-
ջաբանս, յորս և կորեան բազում որեար ականատես,
յորոց մինչ և Կիկերոն պերճ Ճարտասանն զեկավարու-
թիւն պետութիւն։ Վասնզի զյաղթականն Պոմպէի զԱյսիոս
Կեսար, որ զքաղաքականն յաղթութիւն քաղցրութիւն ի վար
արկանէր, մինչև իւրոյն Հակառակորդաց չնորհել զկեա-
նսս և զիշխանութիւն, ազնուականք ոմանք ուխտադրուժ
ի ծերակուտէն՝ իբր զթագաւորութիւն Թէկնածու՝ սպա-
նին ի խորհրդարանի անդ, նախանձ բերեալք ազատու-
թիւն տերութիւնն։ Ո՛չ հետ նորա վարուք կարի աննման,
զակառակ յախտս ամենայն, երևէր ակն եդեալ յիշխա-
նութիւն Կեսարու Պետոնիոս. որում սաստկապէս իմն ընդ-
դէմ դարձաւ Կիկերոն՝ իբր սակս ազատուէ հայրենեացն։
Ի ժամանակիս յայսմ բարգաւաճեաց քաջաբարոյ երի-
տասարդն երկրորդն Կեսար՝ որդեգրեալն Կայիոսի Կեսա-
րու, որ ապա ( )դոստոս կոչեցաւ, ըստ որում ասացի։
Պ՛յսմ դեռահասակ Կեսարու ձեռն տայր Կիկերոն՝ զօ-
րացուցանել զնա ընդդէմ Պետոնիոսի. ակն ունելով թէ ի
նուաճել տիրապետութիւն նորա՝ անդրէն նորոգեսցէ Կե-
սար զազատութիւնն պետութեան. այլ այնչափ անտես գտաւ
նա և անգիտակ ապատնեայն, մինչ զի երիտասարդն՝ ո-
րոյ իշխանութիւնն և զօրութիւն Թևարկէր, ուխտ իմն հաշ-
տութիւն եդեալ ընդ Պետոնիոսի, նմին խակ ետ սպանա-
նել զԿիկերոն, և զազատութիւն պետութիւնն՝ որ վասն Կի-
կերոն բազում պայքարէր, գրաւեաց իսպառ ընդ իւրով
ձեռամբ։

ԳԼՈՒԽ ԼԴ.

Խափանելոյն ի պաշտելոյ զդիս՝ անպատկառապէս զայժմու վիշտս ի վայ վերագրելն, ուր ի ժամանակի անդ հատարձակ դիցապաշտութեն եղեն այնչափ կատորածք։

Յ[ՅՈՒՀԵՏԵՒ զկնբեանց ատտուածոցն ամբաստան լինէին դիցապաշտք յաղագս այնքան չարեացն, որք ապատնորհքն էն առ Աստ մեր ընդ բազմապատիկ բարեացն։ Այլաբէն միով լինելին չարիքն այնոքիկ, ի վառ կային բազինք դից, խնկովք ի Աստուած և գեռաբողբոջ պատկօք բուրելին, պերճանային քրմութիքը, միհետանք պայծառանային, զոհք և խաղք և գուշակաց մոլեգնութիքը լինէին ի տաճարս, և այն յոլովակի յայնժամ՝ յորժամ քաղաքացւոյն արիւն հեղեալ լինէր ի քաղաքակից անձն՝ ոչ միայն յայլ տեղիս, այլ առ սեղանովք իսկ դիցս։ Ել ընտրեաց Աւիկերոն իւր տեղի ապաստանի՝ զտաճար, քանզի վայրապար ընտրեալ էր Աստուած։ Իսկ սոքա՝ որք յետին լրբութիւն թշնամանեն զքրիստոնէութիւն ժամանակս, կամ ինքեանք ապաստանեցան ի տեղիս նոսին բեալս Աստուծոյ, և կամ բարբարոսքն անդամ անդր տարան զնոսա՝ զի ապրեսցին։ Ո՜այս ես այսպէս գիտեմ. և որ միանգամ առանց կուսակցութեն կշռիցէ զերծդ, անդէն Հանդէպ՝ զի եթէ յառաջ քան զկարբեդոնեան պատերազմունս ընկալեալ էր մարդկանս ազգ զքրիստոսական վարդապետութիւնն, և Հանդիպէիր յայնժամ առերուինն՝ որչափ ի պատերազմաց անտի գործեցաւ ընդ Հրոսակ և ընդ Աքրիկէ, Թող զայլսն՝ յորոց զերազումս յիշատակեցի և զերազմագոյնս յերկար վարկայ յիշատակել, արգարեւ ոչ որ էր յայսպիսեաց աստի յետաստնոց՝ որ զայն ամենայն չարիս ոչ Հանէր ի կրծս քրիստոնէական։

Իսկ զՀռոմայեցւոցդ խօսել, արգարեւ անբմբէրելի լինէին նոցայն շաղակրատանք՝ եթէ յետ ընդունելութե

և տարածելոյ քրիստոսական կրօնիցս լեալ է յարձակումն գաղղիացւոց, կամ ամայութեն գործեալ ի Տիբերիս գետոյ և ի հրկիզութեց, կամ քաղաքականքն մարտք՝ ա-ռաւելեալքն քան զՀամօրէն արկածս։ Ոչ այլևս չարիս՝ որ սակս անհաւատալի հանդիպմանն՝ ահեղատրաշ իմն թուեցան, եթէ առ քրիստոնէութեն ժամանակօք երևեալ էին, ո՛մ այլ ի դէմս ունէին հարկանել, բայց քրիստոնէից իբր յանցանս անբերելիս։ Վասն զի թողում որ ինչ իբր առա-ւել զարմանալոցը պատմին առ նոսա՝ քան զնոսաբերքն, արջառոց խօսել, անծին տղայոց յարգանդէ մարց բար-բառ արձակել, օձից թռչիլ, մատակաց և մարեաց և կանանց յարուսական փոխել սեռ, և այլք սոյնպիսիք՝ ոչ յառաւոպէտագրեալ յիշատակեալք, այլ ի վիպասանից, թէ ձևմարիտք իցեն կամ սուտք, որք ոչ զեանս ածեն ի մարդիկ, այլ զարմանս։ Այլ յորժամ երկինք անձրևէին զՀող, զկաւ, զքարինս՝ ոչ զկարկուտ իմացեալ այսու ա-նուամբ, այլ զքար յատուկ, այսոքիկ յայտ է թէ ձևաս բազում մարթացան գործել։ Ընթեռնումք առ նոսա, հրոյ Վանայ լերինն ի գագաթանց անտի մինչ ի մեր-ձակայ ծովափունս վայրաբերեալ, այնպէս եռացուցանել զծովն՝ մինչև ժայռից չերձանել, և հալել նաւթի նաւացն։ Այդ և այս ոչ փոքր ինաս առթեաց, թէպէտ և իբր դժոխահաւատալի՝ զարմանս բերէ։ Այսպէս գարձեալ գրեցին, թէ ի բորբոքմանէ հրոյն՝ աշխունն երից զԱիկի լեա, մինչև յարկաց Վասխայ քաղաքի ծանրանալ և կործա-նիլ. ուր և հոսումայեցիք կարեկցեալ ընդ այն աղէտ, թո-ղացուցին նմա զՀարկ այնր տարւոյ։ Ի գիրս դրոշմեցին և զայն, թէ մարախոյ բազմութեն իբր արշաւիրք իմն զե-ղաւ Այերիկ, լեա լինելոյ նորա գաւառ հոսումէաս-կան ժողովրդեան. որոց ծախեալ զպտուղս և զտերևս ծառոց, ապա զօրէն ահագին ամպոյ տարածելոյ թօթա-փեցան ի ծով անդր. այլ ի սատակիլ իւրեանց յայնն կոյս ձգելոք, այնպէս իմն ապականութեն գործելոյն օդոց և զմահ ժանտ, մինչև ի թագաւորութեն Վասխիսոսայ ևեթ՝ ասէն մեռեալ ութսուն հազարաց մարդկան, և

յոլովագունից և 'ի ծովեզերեայ վայրս։ Յայնմ ժամա նահի Աւետիկ քաղաք՝ յերեսուն հազար երիտասարդաց եղելոց անզգանօք՝ տասն միայն ապրեալ ասին ։

Իսկ արդ զրաբանութեի հակառակորդաց՝ զոր լեմք այժմ, և որում հարկ առեալ եմք տալ պատասխանի, զինչ ինչ յայնցանէ 'ի դէմս չածելք քրիստոսական կրօնից՝ եթէ առ մեզ տեսանէր հանգիպեալ ։ Այս սակայն զայսպիսիսդ ոչ համարիմն աստուածոց խրեանց. զորոց զպաշտօն յայն սակս խնդրեն, զի մի եթեթևագոյնս քան զայնոսիկ կրիցեն, ուր զմեծագոյնսն կրեցին յայնցանէ՝ զորս յառաջն պաշտեին ։

ԳԻՐՔ ՀՈՐԻՈՒ

Յայս գիրս կայ ցուցանել՝ Թէ զընդարձակութեի և զանզգուշութեի հռովմէական պետութենն ոչ Աբամաղայ ընծայել արժան է, և ոչ այլոց դից հեթանոսաց. ուր իւրաքանչիւր նոցա ինքեանք իակ հաստիւն՝ Թէ մի մի ինոցանէ յաւանձին իրս կարգեալ են և ի չնչին գոյծս գլխովին. այլ միայնոյ Ա՛ստուծոյն այ ընծայելի է, որ երջանկութեի սկզբնապատճառն է, և նորա խնամոյութեի և կարգաւորութեի հաստատին Թագաւորութիւնք երկրի և պահպանին:

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս բանիցն Ա՛ստուծոյ յառաջնումն մասանէ:

Սկիզբն արարեալ իմ խօսելոյ յաղագս քաղաքին այ, ի Ա՛հ գաւեցայ պատասխանել զաւանչինն Թէհամետայ նորա, որոց զակատեալ ի վայելուածս երկրաւորս, և ի դիւրաւատնելիս մոլեալք, զոր ինչ միանգամ տխրակասս կրեն յայնոսիկ ըստ խրատու ողորմութեն այ, քան Թէ ի սատկութեի պատուհասիցն, ընդդէմ արկանեն քրիստոնէական կրօնիցս, որ այն միայն է փրկաւէտ և Ա՛ստուածիտ: Եւ որ ի նոսա անգէտ ոտիին է, իբր գիտնականացն դատաստանաւ յատելութեի մեր գրգռի սատկասկս, կարծելով տգիտացն այնոցիկ՝ Թէ որ ինչ յիւրեանց ժամանակս տաբօրինակ իմն գէպք անցին, նոյնպէս անսովորք իցեն ընդ անցեալ ժամանակս. իակ տեղեակքն գիտելով զատուն կարծեացդ, տակաւին հակառակ իւրեանցն գիտուն գնոյն պնդեն, զի երևեսցին իրաւամբք տրտնջել զմեզ: Եւ ասն այսորիկ պէտք եղեն ցուցանել ի գրոց մատենագրացն նոցա՝ որք զանցելոց ժամանակաց զրոյցսն արձանագրեցին, Թէ կարի այլազգաբար խորհին. ուստի ցանելով միանգամայն՝ Թէ սուտ աստուածքն՝ զորս յայտնի պաշտէին, և այժմ պաշտին ի ծածուկ, էն ոչ իք անսուրբք

և դևք չարիմացք և խաբեբայք. մինչ զի յիւրեանց իսկ անձինս՝ ստոյգս կամ ստայօգս զուարճանալ նոցա, և ա-խորժել՝ զի հանդիսիւ պաշտեացն՝ ի տանս իւրեանց. որով մարդկան դիւրասահութեի՛ անխափան բերիցի՝ ի գործսն կորստականս, իբր աստուածախոսք լինն հաստա-տութե՛ վստահացեալք առ՝ ի զմանան կատարելոյ։

Ո՛չ այսոսիկ ոչ մերովս ինչ հրաւադատութե՛ ցուցաք, այլ կէս մի յարդեան յիշատակաց՝ մեր իսկ տեսանելով զայսպիսիս մատուցանել աստուածոց այնպիսեաց, և կէս՝ ի գրոց նոցա՝ որք յապա եկելոցն Թողին զայսոսիկ իբրև՝ ի պատիւ աստուածոցն՝ և ոչ յանարգանս. մինչ զի բազ-մահմուտն առ նոսա Ա՛ստրոն՝ այր մեծարոյ՝ դիրս եր-կասիրեալ ուրոյն՝ ի վերայ մարդկայնոցս իրաց և ածա-նոց, և բաժանեալ ըստ իւրաքանչիւր իրացն պատշաձի՝ զոմանս յաղագս մարդկայնոցն, և զոմանս՝ աստուածայ-նոցն, ոչ միայն՝ ի մարդկայինքս՝ այլ և յաստուածայինսն եդ խաղս Թաւերականս. ուր ընդ հակառակն՝ էթէ՝ ի քաղաքի արք բարիք միայն լինէին և համեստաբարոյք, և ոչ՝ ի մարդկայինքս արժան էր տեղի ունել խաղուց Թաւերականաց։ Այլ զայս ոչ յիւրոց մտաց արուեստա-կեաց Ա՛ստրոն, այլ զի ծնեալ և վարժեալ՝ ի Հռոմ, այնպէս նեղիւ՝ ի դիցակրօն պաշտամունսն։ Այլ քանզի՝ ի կատարած առաջին գրոցն նշանակեցաք համառօտ՝ զոր ինչ յետ այնր կայր մեզ ասել, և յայնցանէ ինչ ինչ ասացաք յերկոսին ջննիսն, արդ ժամ է և զայլ միացեալ սըմն հատուցանել ակնկալութե՛ ընթերցանելեացն։

ԳԻՒՂԻՍ Ր

Յաղագս որ ինչ յերկրորդ և յերրորդ գիրս պարունակելոց բանիցն։

ՎՀՍ խոստացանեալ էր մեր ասել ինչ ընդդէմ այսո-ցիկ, որք զարդի հարուածս հռոմկական պետութե՛ մե-

բում կրօնից պատկանեն, և յիշատակութիւն առնել որ ինչ և որչափ ինչ մարթ էր գտանել, կամ երևէր բաւական՝ չարեացն անցելոց ընդ այն քաղաք, կամ ընդ գաւառն անկեալ ընդ նովին տերութիւն, մինչ չև դիցն պատրաստք խափանեալ էին. զորս և բովանդակ մեզ համարէին անշուշտ, եթէ յայնժամ ծանուցեալ էր նոցա կրօնս մեր, կամ արգելեալը զնոսա 'ի պիղծ պաշտամանցն։ Ո՛չ այսոսիկ ահա յերկրորդումն գրի և յերրորդին՝ ըստ բաւականին որպէս կարծեմ՝ վէմարեցաք. Ձառեալք յերկրորդումն զպատեացն վարուց՝ որ կամ միայն, և կամ կարի մեծ չար հանդիպեալ են. իսկ յերրորդին խօսեցաք զպատեացն՝ յորոց միայն խորհին անմիաքն, այս է՝ զտուգանաց մարմնոյ և իրաց արտաքնոց, զորս յոլովակի և բարիքն կրեն. բայց զնոյն չարիս ոչ եթէ համբերութիւք լոկ՝ այլ կամաւորաբար յանձն առնուն՝ որով այլք չար լինին։ Այլ տակաւին սակաւս յոյժ յառաջ բերի յաղագս բուն քաղաքին Հռոմայ և տերութեանն նորա, և ոչ զամենայն մինչև 'ի Կեսար (). գոստոս։ Ո՛ւնչ ապա, եթէ յիշատակել կամիլ և կուտակել զչարիսն՝ ոչ զառ 'ի մարդոյ առ մարդ գործեցեալս, որպէս պատերազմացն աւերածք և կործանմունք, այլ որ յաշխարհի տարերացդ պատահէն ընդ արեգակամբ. զորս 'ի միում վայրի համառօտ բովանդակեաց Պտղոմեոս 'ի գիրսն՝ յաղագս աշխարհի, ասելով թէ երկրաւորքս ամ՝ նեքին անկեալ են այլայլութեանց, փոփոխութեանց և պականութեանց։ Ա՛ստն ի՛ր ըստ ասելոյ նորա, տարապայման սաստանութեամբ երկրի տատանելով հողոյն, տապալեցան քաղաքք ժողովրդովք հանդերձ. 'ի յորդել անձրևաց ողողեցան գաւառք ողջոյն. որ յառաջն ցամաք էին՝ դարձան 'ի կղզիս 'ի զեղմանէ եկամուտ կոհակաց. և այլ տեղիք՝ եղեն դնալիք հետիոտս 'ի նահանջմանէ ծովու. հրթիռք յամպոց անտի արձակեալք՝ յամձիւն դատեցին զդաւառս արևելից, և յարևմտեան կողմանս զնոյն հարուածս գործեցին յորդահոսանք ջրոց։ Ա՛յսպէս երբեմն 'ի գագաթանց Կտնեայ զեղմամբ ընդունարանացն, ահագին ինն բորբոքմամբ ուղխոցին գետք հրոյ լնելացան ընդ գառ 'ի վայր։

Ա՛րդ եթէ զայսոսիկ և զսոյնպիսիս կամ էր ինձ զորս կան՝ ի պատմութենն՝ ժողովել՝ ի մի, զիա՞րդ էր հնար՝ ի գլուխ հանել զամենայն զհանդիպեալսն ընդ այն ժամանակս, յորս չև էր անուանն Քրիստի դադարեցուցեալ զհեթանոսացն ունայնութիւն՝ զիշատաբերս ձգմարիտ փրկութենէն։ Յոստացեալ էի զարձեալ ցուցանել թէ որպիսի էին նոցայն կենցաղք, և յինչ պատճառս հաձոյ եղև ձշմարտին այ ձեռն տալ յաձուծն տէրութենէ նոցա, յորոց իշխանութէն թագաւորութիւնք երկրի. և թէ որպէս կարծեցեալք՝ ի նոցանէ աստուածք ոչ ինչ օգնեցին նոցա, այլ առաւել վնաս գործեցին պատրելով և սատելով։ Այն որոյ յայժմուս մնայ ինձ խօսել յաւէտ յաղագս գերաձման հռովմէական պետութենն. քանզի յաղագս կորուսիչ խաբեբայութենէ դիւացն՝ զորս իբր աստուածս պաշտեն, թէ որչափ խանգարուն՝ ի վարս նոցա առեալ, ասացաք ոչ սակաւս առաւելապէս յերկրորդում գրի։ Ասայց և զայն ծանուցեալ յերեսեան անցեալ գիրսդ ըստ պատշաձի տեղւոյն, թէ նա և՝ ի պատերազմացն աղէտս որչափ դիւրաւիս պարգևեաց՝ ձե բարեացն և չարաց՝ վասն անուանն Քրիստի, որում և բարբարոսքն արարին մեծարանս արտաքոյ սովորութենէ պատերազմաց, ըստ ասացելումն, «Որ զարեգակն իւր ծագել՝ ի վերայ բարեաց և չարաց, և ածէ անձրև՝ ի վերայ արդարոց և մեղաւորաց». Մատ. Է. 45։

ԳԼՈՒԽ Գ՝

Մինչ ընդարձակութենէ տէրութենէ՝ զոր պատերազմաք ևեթ է առնալ, կամ համարիլն ընդ բարիս խնամոութենէ կամ էրջանկութենէ։

Տեսցուք այսուհետև զինչ այն է, զի զհռովմէական տէրութեանն տարածութենէ և զլերկարաձգութենէն իշխեն ընծայել դիոց, զորս զազիր խաղուց նուիրմամբք, և զազգագործ մարդոց արբանեկութենէ համարին պաշտել

պարկեշտաբար ։ Այլ նախ փոքր՛ի շատէ հետաքննել ա-
խորժելի , որ իրաւունք , որ իմաստութեի՛ւն ինչ պարծել ընդ
մեծութե՛ւն և ընդ տարածումն պետութե՛ւն , ոչ կարացեալ
քո ցուցանել զերջանկութե՛ւն մարդոց այնպիսեաց՝ որք յար
՛ի հարուածս մարտից դեգերին , յարիւն քաղաքացւոց
կամ օտարաց , բայց միշտ մարդկային , և այն աղջամղջին
երկիւղիւ և արիւնախմանձ ցանկութե՛ւ , առ՛ի ձեռս բերելոյ
զապահեայ գոգցես ինդութե՛ւն զդիւրաբեկ Ճաճանչեղն ,
ուր կայ երկիւղ մեծ յանկարծակի խորտակելոյ ։ Օ այդ
եթէ առաւել դիւրաւ կշռադատել կամիցիմք , մի՛ ունայ-
նասցուք մնապարծութե՛ն բքովք , և մի՛ զՀայեցողութե՛ն
սրութե՛ւ բթեցուսցուք մեծամասին հնչմամբք անուանց ,
՛ի լսել անդ ժողովրդոց , թագաւորութե՛ւն , գաւառս .
այլ կացուսցուք՛ի միջի արս երկու ։ Ականջ զոր օրինակ ՛ի
բանի մի մի տուա , նոյնպէս մի մի մարդ իբրու տարր է քա-
ղաքի և թագաւորութե՛ան , որչափ և լայնածաւալ իցէ
այն երկրակալութե՛ամբ ։ Ընդ յերկուց այսոցի մարդոց՝
զմին համարեսցուք աղքատ , մանաւանդ թէ միջակայն ,
և զմիւսն ընչաւէտ ։ Այս երկիւղիւ տագնապեալ , մա-
շեալ՛ի տրտմութի՛ւնս , ցանկութեամբք տոչորեալ , ոչ
բնաւ անկասկած , յար անհանգիստ , ՛ի հանապազորդ
վիշս թշնամութե՛ց համակեալ . որ յայսոսիկ տառա-
պանս թէ և զօտացուածսն աձեցուցանիցէ յանչափս ,
բայց ըստ աձելութե՛անցն և զհոգսն բազմապատկէ
կարի դաւիս ։ Իսկ միջակայնն այն՝ սակաւապէտ գոյիւ
տանն շատացեալ , սիրելի իւրայոցն , անուշակ հան-
դարտութե՛ամբ ինդամիտ ընդ աղգակիցս , ընդ դրացիս ,
ընդ բարեկամս . ըստ բարեպաշտութե՛ան երկիւղած ,
հոգւով բարեմոյն , մարմնով առողջ , կենօք չափաւոր ,
վարուք պարկեշտ , ՛ի մտայն խիղճ աներկիւղ ։ Այ գի-
տեմ , թէ անմտանայցէ ոք այնչափ , մինչև երկբայել
զոր յերկուցս նախադասել ունիցի ։ Ընդ որպէս առ եր-
կու մարդ , նոյնպէս յերկու տունս , յերկու ժողովրդս ,
յերկու թագաւորութե՛ունս նոյն կանոն արդարութե՛ան
զօրանայ . զոր զգաստութե՛ամբ ՛ի կիր արկեալ , և ուղ-

զնալ զմեր հայեցողութեի, կարի դիւրաւ ունիմք տեսանել թէ ուր կայցէ ունայնութիւն, և ուր երջանկութիւն։ Այսու որոյ եթէ Աչխարհին ՚ած պաշտեսցի, և նմա մատուցի ծառայութեի ստոյգ պաշտամամբք և ուղիղ վարուք, օգտակար Հանապէ՝ զի բարիքն Թագաւորեսցեն ընդարձակ և յերկար. որ ոչ միայն անձանց նոցա է օգուտ, այլ և այնոցիկ յորոց վերայ Թագաւորեն։ Ասանզի Հնարեանց ՚ածպաշտութիւնն և վարուց ընտրութիւն, որք ՚ոյ են պարգեւք մեծ, բաւական է ՚ի Աչխարհիս երջանկութիւն, որով աստ բարիւք կեան, և ապա դյաւիտենից ընդգրկեն։ Այլ ուրեմն յերկրի աստ բարեացն Թագաւորութիւն ոչ այնչափ նոցա շնորհեալ գտանի, որչափ աղգի մարդկան։ Ասկ չարացն Թագաւորութիւն առաւել ՚ընաչիչ է նոցին իսկ Թագաւորելոցն, որք անձանց գործեն աւերածս համարձակ ոՀրագործութիւնք. այլ Հնազանդելոցըն ՚ի նոցա ծառայուի՝ ոչ այլ ինչ ՚ընասէ, բայց անցնելոյ չարագործուի։ Ասանզի որ ինչ չարիք յանօրէնն տեսցէ անձի գործիցին առ արդարն, այն ոչ յանցման է պատիժ, այլ Հանդէս առաքինութեի։ Որքն վասն այր բարւոյ՝ թէ և ծառայ գոցի, ազատ է. իսկ չարն՝ թէ և Թագաւորեալ՝ ծառայ է, ոչ միոյ մարդոյ, այլ խստագոյն և այնչափ տերանց, որչափ ախտից. զորոց և ՚ածայինն խօսեցաւ գիր, ասէ. “Ո՞վ որով իւիք յաղթիցի ոք, նորին և ծառայ է„. Բ. Պետ. Բ. 19։

ԳԼՈՒԽ Գ

Թագաւորութիւնք առանց արդարութեի ոչ ինչ ընդհատ են յաւազակութեի։

Ասասցեն ուրեմն ուր չկայցէ արդարութիւն՝ զինչ այլ են Թագաւորութիւնք, բայց մեծամեծ աւազակութիւնք. զի և աւազակութիւնք ինքեանն զինչ այլ են, բայց փոքրիկ Թագաւորութիւնք։ Ասանզի և դա է ժողով մարդկան, հրամանաւ

գլխաւորի վարի , դաշտամբ ընկերուբե կապեալ կայ , ըստ յանձնառական օրինաց զաւարն բաժանել : Այլ եթէ այդ վաշտ չար՝ ըստ յաւելելոյ սրիկայից մեծանայցէ , մինչև տեղիս ըմբռնել կայանս հաստատել քաղաքս գրաւել ժո ղովուրդս նուաճել , յայտնապէս զթագաւորութիւն առնու զանուն , զոր տայ նմա ոչ բռնացեալ ցանկութիւնն , այլ յաւելուածն անպատուհաս մնալոյ յայլմէ : Վասն զի ձա հողապէս իսկ՝ և արդարացի հնարահար ոմն ծուռ՝ի ձեռս անկեալ , արար պատասխանի մեծին Աղեքսանդրի . զի՝ի հարցանել զնա թագաւորին , զինչ տեսեալ աղվիկիր ըզ ծով , ասաց համարձակ հետուրեք . յայն ինչ ակն ե դեալ , յոր և դու՝ յաղվիկէդ զերկիր ամենայն . այլ քան զի ես առնեմ զայն փոքու նաւակաւ , աւազակ կոչիմ . իսկ դու՝ զի նաւատորմաւ առնես , ինքնակալ անուանիս :

ԳԼՈՒԽ Ե

Ցաղագս փախստեայ մենամարտից , Թէ որպէս հաւասար գոան Թագաւորական իշխանութեանէ :

Ես՝ի ինդիր արկանեմ զոյս ոմանս արդեօք հաւաքեաց Հռոմուլոս . վասն զի այն օգուտ եղև նոցա , զի յընկե րութեն քաղաքական միացեալք , այնու քաղաքավարութեն ոչ ևս ունէին զերկիւղ արժանահաս պատուհասից , որ ձը գեր զնոսա յոճիրս մեծագոյնս . և այնու հետև հանդար տութեն գնային նոքա յիրս քաղաքականս : Այլ զայս ասեմ , Թէ նոյն ինքն հռովմէականն տերութեն՝ ընդար ձակն նուաճմամբ ազգաց բազմաց , և այլոցն ահացու ցիչ , քանի վշտացաւ , զնարդ ահիւ տագնապեցաւ , և բազում աշխատութեն առ՝ի խորչելոյ՝ի մեծամեծ կոտո րած՝ի յածոյց զաղմուկն , յորժամ սակաւք ոմանք մենա մարտիկք՝ ոստուցեալք՝ի Թատրոն՝ի Կամպանիա՝ որ՝ի Կեսպոլիս , խմբեցան՝ի բանակ մեծ երիւք զօրավա րօք , և զբազում կողմանս Իտալիա վեր՝ի վայր արա

բին գազանաբար ։ Ալէ ասացեն ո՞ր ի դից ձեռն էտ սոցա , ի փոքուէ անտի և յանարգ ասպատակութէ հասանել ի թագաւորութէն, եղեալ ահարկու հռովմէական բուռն զօրութէն . միթէ վասն այնորիկ՝ զի ի կարձոյ եղև վախման նոցա՝ համարիցին անօգնական Թողեալք ի դից . որպէս թէ՝ և կենդանի իւրաքանչիւր մարդոյ յերբ կարասաւ ինչ իցէ ։ Այլ ըստ այդմ պատճառի՝ և ոչ միւսմ ումէք օգնեն աստուածք առ ի թագաւորելոյ , զի և իւրաքանչիւր նոքա արագավախման էն . և ոչ բաբերարութէն համարել արժան է զայն , որ ի դայլն ժամանակի յայր իւրաքանչիւր՝ որով և յաւելեսին՝ մի ըստ միոջէ իքր ծուխ ունայնանայ ։ Վասզի որ շահ է այնոցիկ որք առ Հռոմուլոսիւ զաստուածն պաշտեցին , և վաղու էս մեռեալէն, այն՝ զի յետ նոցա մնհուն այնչափ բարգաւաճեաց տէրութէն հռովմէական , յորժամ ինքեանք մեռեալքն համարս տան ի դժոխս . այլ թէ աջողակի արդեօք , եթէ ձախողակի , արտաքոյ այժմու բանիս է ։ Այդ զնոյն է ասել և զամենեցունց զայնցանէ , որք թէ և կացին յայնմ տէրութէ ձգեցելոյ յերկար ժամանակս՝ ոմանց գնալով, և այլոց յաջորդելով , բայց իւրաքանչիւր նոքա սակաւօրեայ կենօք արագ և շտապաւ անցեալ պակասեցան , ստանձնեալք զբեռն գործոց իւրեանց ։ Այս եթէ և զկարճամանակեայ զայն բաբիս ընծայել պարտ իցէ դիցն օգնականութէ , ոչ սակաւ գոն օգնականութէն և մեծամարտիկքն այնոքիկ , որք ըզկատանս ծառայութեան խզեալք՝ փախեան ապրեցան , կազմեցին գունդ ստուար և հզօր , խորհրդոց և հրամանաց Թագաւորացն իւրեանց հպատակ կացին . երկիւղ բազում արկեալ ի հռովմէականն բարձրութէն , ոմանք յայնցանէ անպարտեալք ի Հռովմայ կայսերաց կալան ըզբազում տեղիս . յաղթութէնս բազումս տարան , և փախկացան ի զրգանս յոյս և կամեցան . զոր թէպաղրկէր նոցա ցանկութիւնն , կատարեցին . զհպատակս Թագաւորս նկուն արարին . և եթէ պարտեցան և այլ զժուարութէ բազմաւ ։ Յառաւելագոյնն մասիցուք ։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս իշխանասիրութեանն Կլինոսի Թագաւորի, որ առաջին գաւառ չարժէր պատերազմ ընդդէմ սահմանակից աւ ընդարձակէր զերկրութիւնն։

ՅՈՒՏԻՆՈՍ վիպագիրն՝ որ զյունականն, կամ մանաւանդ զօտարացն պատմութիւն գրեաց համառօտ ի լատին լեզու, զհետ երթեալ Տրոգեայ Պոմպէի, այսպէս առնէ սկիզբն գրոց իւրոց. “ Յառաջինոն անդ իշխանութիւն ժողովրդոց և ազգաց եղեալ կայր ի Թագաւորս. զորս ոչ եթէ ամբարտաւանութեան ազգային ամբառնայր յայն բարձրագահ մեծութիւն, այլ վկայեալ նոցայն բարեկրութիւն։ Ժողովուրդք ոչ ընդ օրինօք ինչ կապեալ էին, այլ փոխան օրինաց էր հաճոյք իշխանաց։ Այլ յայնժամ սովորութիւն պահպանել յաւէտ զսահման տերութեանն՝ քան եթէ ընդարձակել. յիւրաքանչիւր բնիկ երկիր սահման ունէին Թագաւորութիւնքն։ Այնոյնս ասորեստանեայց Թագաւոր՝ առաջին ամենեցուն յեղաշրջեաց զվաղեմի գնահատեացն սովորութիւն ազանց նոր իմն իշխանասիրութիւն. նախկին գրգռեալ մարտ առ սահմանակիցս, ընդ ինքեամբ նուաճեաց զազգս անհրահանգս ըմբ՝ի մարտնչել միմեանս։ Այս զինի սակաւուց ասէ. “ Կլինոս ըստ տիրապետութեանն ցանկացեալ՝ հաստատեաց զընդարձակութիւնն հետ ընդ հետ գրաւելովն. նմին իրի զմերձակայսն նուաճեալ, անմարդ զօրութիւնն հզօրագոյն և յայլսն յառաջանայր, և յաղթութիւնն ստացեալ նպաստ իմն լինէր ապագային, որով ընդ լծով արկ զժողովուրդս արևելից ազգացն։ ” Այս բանք են Յուստինեայ կամ Տրոգեայ՝ եթէ հաւատարիմք իցեն, և եթէ ոչ, քանզի յիրս յիրս ստայօդել նոցա ցուցանեն այլ ստուգաբան գրութիւնք, սակայն յայտ է և յայլոց մատենագրաց, զի ասորեստանեայցն Թագաւորութիւն սփիւռ տարածեցաւ ի Կլինոսէ սկսեալ. և այնչափ

յերկարատև ձգեցաւ , որչափ չև և հռովմէականն ունի զիւրն ժամանակ : Ուանզի որք ի պատմութիւն ժամանակաց պարապեցին , գրեն՝ զհաղար և զերկերիւր և գքառասուն ամն բաւեալ այնմ թագաւորութիւն յառաջնոյ ամէ անտի ՚Ռիմոսի , մինչև անց ի Կ՚արս : Ուակ արդ պատերազմ տալ ընդ սահմանակիցս , անտի դիմել յայլս , և զժողովուրդս անմեղանչականս հարկանել և նուաճել առ իշխանասիրութիւն ևեթ , զինչ այլ բայց աւազակութիւն մեծ վերակոչեսցի :

ԳԼՈՒԽ Ի

Մինէ ի զբանալ անդ և կամ ի նուազել թագաւորութենց երկրի դիցն օգնականութենէ հասանէը նոցա , կամ պակասէը ի նոցանէ :

Ի՝թէ առանց իրիք ձեռնտուութենէ աստուածոց այնչափ մեծացաւ և յերկարեաց ասորեստանեայցն թագաւորութիւն , առիմ՚ դիցն Հռովմայ ընծայի թագաւորութենն Հռովմէական՝ ընդարձակ և յերկարատև . վասն զի նոքա պատճառք են և նորա և սորա : Ուակ եթէ այնպիսին՝ դիցն օգնականութենէ համարել և զայն , հարցանեմ՝ ոյց ոմանց դիցն : Ուանզի ազգ՝ որոց սիրեաց Ռիմոս և կացոյց ընդ լծով , ոչ զայլ աստուածս պաշտէին յայնժամ : Ի՝ր եթէ ասորեստանեայք ունէին աստուածս սեպհականս , իբր գաղատոս ի կանգնել և ի պահել զիշխանութիւնս , միթէ այդ դիք մեռան ի կորուսանել նոցա զայն իշխանութիւն , կամ թէ անվաթձ առ ի նոցանէ ինալով և կամ առաւելագունի վարձու սակ գտեալք , անցանել կամ ցան առ Կ՚արս , և անտի դարձեալ առ Պարսս , Կիւրոսի զնոսա հրաւիրելոյն , և առատագոյնս ինչ խոստանալով : Ուր և այս ազգ՝ յետ Ա՚ղեքսանդրի մակեդոնացւոյ թագաւորութենէն մեծացելոյ տեղւոք , բայց համառօտելոյ ժամանակաւ , ոչ անձուկ սահմանօք արևելից կայ մինչ ցայսօր յիւրում թագաւորութէ :

Այլ եթէ այս այսպէս , ապա կամ անհաւատարիմ են դիքն, որք զիւրեանցայլինսն լքեալ՝ անցին առ Թշնամին . զոր և ոչ Պաւիղեան արար՝ մարդ գոլով , յորժամ յետ յաղթելոյ և տիրելոյ սիրելիմ քաղաքի՝ Թէսիա և ապա Հռոմ եդիտ զՀռովմ որում՝ յաղթեալն էր , բայց յետոյ անյիշաչար եղեալ անարդանացն , այլ միայն զՀայրենիս յիշելով՝ ազատեաց զայն դարձեալ՝ի գաղղիացւոց անտի , և կամ ոչ այնպէս զօրաւորք են դիք , որպէս նոցա վայել է . ուր կարեն յաղթիլ՝ի մարդկային խորհրդոց կամ յուժոյ : Այլ կամ, եթէ ընդ իւրեարս մարտնչին , ոչ եթէ աստուածք՝ի մարդոյ յաղթին , այլ Թերևս դիք՝ի դից սեպհականաց իւրաքանչիւր քաղաքի . ապա ուրեմն գոյ և առ նոսա Թշնամութիւն , որով իւրաքանչիւր կողմանն լինին պաշտպանք : Այլ ասն որոյ պարտ էր քաղաքի քաղաքի ոչ զիւրան ևեթ դիս պաշտել , այլ մանաւանդ զայլսն՝ յորոց և իւրքն օգնականութիւն գտցեն : Այլ կնիք բանիս , զիարդ և իցէ այդ աստուածոց անցուն , կամ փախստական , կամ տեղափոխութիւն , կամ պարտուիլ , չև էր ընդ այն ժամանակս և յայնոսիկ կողմանս երկրի անունն Վէմի քաղաքել , յորժամ Թագաւորութիւնքն այնոքիկ բարձան և փոխոխեցան անհնարին հարուածովք պատերազմաց : Վասնզի եթէ յետ հազար երկերիւր և այլ ևս ամաց՝ յորժամ յասորեստանեայց անտի բարձաւ Թագաւորութիւն , կրօնս քրիստոսական քարոզէր անտանօր զայլ Թագաւորութիւն զյաւիտենական՝ խափանելով զսուտ աստուածոցն զպաշտամունս պիղծս , ոչ ապաքէն արք նահապետք այնր ազգի ասել ունէին , Թէ բազմադարեան Թագաւորութիւնն կորնչելոյ ոչ այլ ինչ է պատճառ՝ բայց զի եթող զիւր կրօնն , և զքրիստոնէականն ընդգրկեաց : Հայեսցի նահապետութիւն իրր՝ի հայելոյ նկատեսցէն մեր հակառակորդք զիւրեանցն , և պատկառեսցին՝ի նոր մանուրինակ տրտնջանաց , եթէ կայցէ՝ի նոսա միաց ուսումն ամենայն : Այլ սակայն հռովմէականն տէրութիւն զարգիս վշտացեալ է յաւէտ , քան Թէ քայքայեալ . որ և՝ի ժամանակս յառաջեալս քան զանունն Վէմի հանդի-

պէտք իսկ է, և ապա 'ի վերայ անտի սիրուելն գտեալ. և չէ իսկ անյոյս 'ի մերում ժամանակի. զի ոմ գիտաց զկամն տեառն յիրիդ յայդմիկ։

ԳԼՈՒԽ Ը.

Որոյ ոմանց դէպ խնամով կարծէն հոգևմայելիք բարգաւաճել և պահպանել զերծուն իւրեանց, ուր իւրաքանչիւր դէպ համարին յանձն եղեալ զմանաւոր իրաց զննութեան։

Այլ հարցցուք զնոսա, եթէ հաճոյ է. յայնչափ գուժարարակի, դէպ զորս հոգևմայելիքն պաշտէին, զի ոք գլխաւոր, կամ զոր աստուածս կարծէն ընդարձակիչ և պահպանիչ այնր իշխանութեանն։ Վասանզի չիշխեն նոքա յայս գործ գերակայ և իշխանապանծ՝ իւիք խնամածոյ դնել զաստուածոհին լուսլեաց զվլուակինն, կամ զվողուպիա՝ 'ի փափկութենէ դիցուհի անուանեալ, կամ զվքենտինէ՝ անուն առեալ 'ի հեշտախտութենէ, կամ զվատիկանուհի և կամ զվակիտանուհի որ տղայոց լալեացն տեսուչ է, կամ զվունինա որ պատրաստէ օրոցս տղայոց։ Այլ զիարդ հնար էցէ 'ի միում վայրի գրոցս զամենայն յիշատակել զանուանս աստուածոց և աստուածուհեաց, զորս նոքա հաղիւ կարողացան բովանդակել 'ի սուսար մատեանս, իւրաքանչիւր իրաց յատուկ գործս տեսչութեան դէպ կարգեալ։ Ո՞ւ և ոչ զպարակաց գործառնութիւնս միում ևեթ 'ի դէպ յանձն առնել լաւ համարեցան. այլ զանդս եառնն Ղուսինեայ դիցուհւոյ. զարտևանուհւոն լերանն՝ Ցուգատեայ չասուածոյ. բլրոց՝ զվոլլատիա կարգեցին վերակացու, և հովտաց՝ զվալլոնիա։ Ոչ գոհն և զմի գոհ Վեգետիա, որում յանձն առնէին զարմտիս համայն. այլ ցորենոյ սերմանելոյ՝ մինչ ընդ հողով կայ, նախատեսուչ կարգեցին զվէյա. իբրև բուսանի և առնէ ցօղուն, զվեգետիա

'ի ժողովել ցորենոյն և յըշտեմարանել՝ զի պահեսցի անվնաս, զՏուտիլա եդին վերակացու։ Իթէ չէր բաւական Եգեսիա ևեթ 'ի գալարելոյ անտի սերմանն մինչև 'ի ցամաքել ցորենոյն. այլ սակայն մարգոյ բազմաստուածութենն սիրողաց՝ ոչ բաւական եղև զատաւպեալ ոգին պռոնկեցուցանել ընդ խուժանի դիւաց, արհամարհեալ զողջախոհն սիրելութեն միոյն այ Աստուծոյ։ Այն որոյ ցորենոյն բուսեալոյ տեսուչ եդին զԳերսեփոնէ. Ծնորհն որ 'ի ծղօտս՝ զԱդոտոս չաստուած. կեղևոց կամ պատենից փաթթութեանց՝ զԱլըտիսէ դիցուհի. 'ի կեղևոցն բանալ ցերեւումն հասկին՝ զՊատէլանէ։ Յորժամ արմտիք հաւաստարին նորոյ ցորենոյ, տեսուչ ասէն զաստուածուհին Հոստիլինէ. 'ի ծագկիլ ցորենոյն՝ ըզՓլորա. 'ի լինել կաթնային՝ զաստուածն Լակտուրնոս. յատոքանալն զաստուածուհին Պատուտէ. 'ի քաղելն, զաստուածուհին Ռունկինէ։ Այլոց ոչ զամենայնին յիշատակ ածեմ. զի տաղտուկ է ինձ՝ յորմէ ոչ ամաչեն նոքա. այլ զսակաւագոյնքս յայն սակս ասացի, զի լինիցի 'ի միտ առնուլ թէ ոչ իւիք Համարձակին դիցապաշտքն զՀռովմէական իշխանութենն զծագումն, զաճումն և զպահպանութէն Համարել աստուածոցս այսոցիկ, որոց գիւրաքանչիւր գործառնութենս սահմանեալ, ոչ 'ի դէպ վարկանելին միում ումեք զամենայնն ապաստարել։ Այրբ արդեօք Եգեսիայն խնամ տանէր տերութենն, որում չէր տուեալ խնամարկութէն արմտեաց և ծառոց միանգամայն. երբ և Ռունկինայն հոգածու լինէր գինուց, որոյ վերակացութէն ոչ ձգէր անդր քան զօրացս տղայոց. իսկ Ադոտոսի երբ էր ձեռն տալ 'ի մարտի, որում ոչ էր անկ և ոչ կեղևոց Համակին ուշ ունել, այլ միայն ծնրոց եղէգանն։ Այլ իւրաքանչիւր իւրում տանն զի ևեթ կացուցանէ դռնապան. որ մարդ գոլով բանաւոր, բաւական իսկ է. իսկ սոքա երիս աստուածս կարգեցին, զՓորկուղոս դրանն, զԱրատիա ծղմնեաց, զԼիմենտինոս սեմոյն. ահա ուրեմն ոչ կարէր Փորկուղոս պահպանել միանգամայն ըզծղմնիս և սեամն։

ԳԼՈՒԽ Ը

Մխիթ արժան իցէ զընդարձակութիւն և զտեսականութիւն հոովմէական տէրութեան յայտնել ընթերցողաց , զոր պաշտնեայք նորա համարին գերագոյն յաստուածս ։

ԱՅԺՄ արդ Թողեալ զխուժան դից մանուկց , կամ լռեալ առ ժամն , մնայ հարցաքննել զգործակալութիւն աստուածոյն մեծաց , որով պերճացեալ իցէ Հռովմ , յերկարաձոյս և ազգաց բազմաց իշխելով ։ Ցոյզ ասացցեն , Թէ Պրամագդայ գործ է այդ . քանզի զսա Համարին հայմօրէն դից և դիցուհեաց Թագաւոր . զայս յայտ առնէ արքունի գաւազան նորա . զայս և Կապիտոլինն 'ի բարձրը բլրին ։ Ցամանէ Ձահողապէս ասացեալ Համարին 'ի քերթողէն Վ իրգիլիոսէ , Պրամագդաւ լի ամենայն . և Վարրոն արժանահաւատ դատի , Թէ սա ինքն է և պաշտեցեալն յայնցանէ՝ որք զմի ՚ած միայն գաւանին առանց պատկերի կամ դրօշելոյ , այլով անուամբ կոչելով ։ Եթէ այդպէս իցէ , էր վասն խոտորնակի պատուեցաւ նա 'ի Հռովմ , որպէս և առ այլ ազգս , առեղծանելով նմա դրօշեալ ։ Ընդ այս և Վարրոն ինքնին այնչափ դժկամակ դաւս , մինչ զի Թէ և 'ի տարօրէն սովորութիւնէ մեծի քաղաքին ակնածէր , բայց ոչ զանգիտեաց ասել և գրել խակ , Թէ որք դրօշեալս կանգնեցին առաջի ժողովրդոց , նաւաղեցուցին զերկիւղ առ աստուածս , և մոլորութիւն 'ի վերայ յաւելին ։

ԳԼՈՒԽ Ժ

Չ՛ինչ կարծիք էին նոցա՝ որք այլ և այլ մասանց աշխարհի վերակարգիչին առտուածս զանազանս։

Ա՛ր ինչ արդեօք կին Ա՛բամազդայ գնեն և զ՝Հերա զկին, զոր քոյր նորա Համարին և ամուսին։ Ա՛յն զի ասեն՝ Ա՛բամազդ իմանալ զԵթէր կամ զարմին և Հերա կամ այեր զօդդ, որ են երկու տարերք հպատորք իւրեարց, մին ի վեր, մին ի խոնարհ։ Ա՛պա ուրեմն առաջինն ոչ է այն զորմէ ասացաւ, Ա՛բամազդաւ լի ամենայն, եթէ արդարեւ Հերա ընու զմի մանն։ Ա՛ի արդեօք երկաքանչիւր իսկ ընուն զերկոսին, և երկոքին սորա ամուսինք՝ կան միանգամայն յերկոսին տարերսդ, և չիւրաքանչիւր ի նոսա. Եր վասն ասա եթէր Ա՛բամազդայ ընծայի և օդ Հերայ։ Ա՛յս պարզաբար երկոքին սորա բաւականք էին. և զի՞ է՝ զծով ընծայել Պոսիդոնի և զերկիր Պղուտոնի։ Ա՛յս առ չինալոյ նոցա անամուսին, ի Պոսիդոն յարեն զԱ՛ղաղակիա, և ի Պղուտոն զՊերսեփոնէ։ Վ՛ասնզի որպէս զխոնարհագոյն կողմն երկնից՝ այսինքն զօդ, ասեն գրաւել Հերայ, նոյնպէս զստորինս ծովու՝ Աղաղակիայ, և զստորինս հողոյ՝ Պերսեփոնեայ։

Ա՛պաքէն խնդրեն սորա եթէ զինչդ կարիցեն կարկատել զառասպելսն, և ոչ գտանեն։ Ա՛յն զի եթէ այդպէս էին ասացեալքդ, զերիս միայն տարերս ցուցեալ էին առաջինքն, և ոչ քառեակս, որպէս զի իւրաքանչիւր ամուսնութիւնք դից բաժանեսցին յիւրաքանչիւր տարր։ Նոյնպէս ընկալան, Թէ այլ է հուր, և այլ օդ. իսկ ջուր՝ եթէ վերին, եթէ ներքին, ապաքէն ջուր է. գոջջիր Թէ անմանն իցէ, բայց միեթէ այնչափ զի չլինիցի ջուր։ Ա՛յլ և խոնարհագոյն հողն զինչ այլ՝ բայց հող միայն է, որչափ և պլատան իցէ։ Ա՛յդ մարմնականս ահա աշխարհ համակ՛ի չորս կամ՝երիս տարերս բովանդակե-

ցաւ . իսկ Ա֊ԹԵՆաս ուր իցէ արդեօք , և զինչ գրաւէ , զինչ լսու . քանզի սա կից ընդ այլոցն կացուցաւ ՚ի Կապիտոլիոն, Թէպէտ և չէ դուստր Ա֊յսմաղդայ և Հերայ : Կամ եթէ ասէն՝ զարձրագոյն մասն հրոյ ունել Ա֊ԹԵՆասայ , և այսր աղագաւ կեղծէն բանաստեղծք՝ Թէ ՚ի գլխոյն Ա֊յսմաղդայ ծնեալ իցէ, ընդէր ապա ոչնա ինքն համարիցի Թագուհի աստուածոց , որ քան զԱ֊յսմաղդ իսկ վերագոյն է . միթէ վասն այնր , զի անվայելուչ է զգուստր վերագրել քան զՀայր . և առիմ այդ իրաւունք ոչ պահէցան յԱ֊յսմաղդ առ Կռոնոս Հայր իւր . Թերևս զի յաղթեցաւ Կռոնոս . ապա ուրեմն մարտ եղիցի ընդ իբեարս : ( )ն անդր ՚ի բաց տար՝ ասէն , զառանցանք առասպելաց են այդոքիկ : Ա֊յո է , առասպելաց ունիմք աբաստուքն, և բարձրագոյնս իմն զմտաւ ածցուք յաղագս աստուածոյն : Ա֊յր վասն Կռոնոսի կամ Աստուրնոսի հօրն Ա֊յսմաղդայ ոչ տուաւ կայան մեծարանաց գոնէ հաւասար, Թէ ոչ վեհագոյն : Ա֊յսն զի ասէն՝ Կռոնոս երկայնուԹի ժամանակի է : Ա֊յս ուրեմն՝ զժամանակ պաշտեն որք զԿռոնոն պաշտեն . և աստուածոյն Թագաւոր Ա֊յսմաղդ՝ ցուցանի ծնեալ ՚ի ժամանակէ . քանզի զինչ անվայել իցէ ասել զԱ֊յսմաղդ և զՀերա ծնեալս ՚ի ժամանակէ , եԹէ մին երկին է , և միւսն երկիր . որովհետև երկնական արարածք են երկոքեանն : Օ֊սյն և գիանաւորք նոցա և իմաստուԹիք աւանդեն ՚ի գիրս իւրեանց . և ՚ի Ա֊իրգիլեայ ասացաւ՝ ոչ ըստ պատմական ստեղծաբանուԹեց , այլ ըստ իմաստասիրաց գրոց ,

“Ա֊ԼՆադօր Հայրըն եԹէր
Ա֊երքի ցօղուվք գայր իջանէր
Ա֊ կողակցին արգանդին սէր ,, ։

Ա֊յս ՚ի ծոց գետնոյ կամ Հողոյ . զի և աստանօր որոշումն ինչ ասէն նոքա , և ՚ի նոյն իսկ Հող այլ Համարին զկուսեցեալն Ա֊երքս՝ երկիր, և այլ Ա֊երկնաւմն՝ ՀողանիւԹ . և զմի ՚ի սոցանէ ուրոյն ուրոյն անուամբ աստուածս կոչեն, զիւրաքանչիւր գործս զառանձնեն, և առանձին սեղանովք և պատարագօք մեծարեն։

Ո՛չնոյն հող կամ ջերմիկը՝ նա և աստուածոյն մայր կար-
գան. մինչ զի նեբելի և իցէ պուետիկոսացն սահեցաբա-
նութեի, եթէ նուիրական մատեանք նոցա և ոչ եթէ բա-
նաստեղծականք՝ զ՚Էրա ոչ միայն քոյր և ամուսին, այլ և
մայր ասեն նորին [՚]Քամազդայ։ Ո՛չնոյն հող մերթ [՚]Աեմե-
տրէ ասեն, մերթ [՚]Եստա. Թող զի յաձախակի զ[՚]Ես-
տայն համարին լինել հուր, տեսուչ վառարանաց՝ առանց
որոց ոչ կարէ կալ քաղաք. նմին իրի կուսանք ապաս-
տանէին նմա. իբր զի որպէս ի՛ կուսէ՝ նոյնպէս ի հրոյ
ոչ ինչ ծնանի։

[՚]Այլ զայս ամենայն ունայնաբանութեի ունէր խափա-
նել և նանրացուցանել այն՝ որ ծնաւն ի կուսէ։ Ո՛վ ո՞
ժուժալ կարիցէ ընդ այն՝ զի յետ մեծապատիւ ինն և իբր
ոգեշահ մեծարելոյ նոցա զՀուր, չամաչեն զնա ինքն
զ[՚]Եստա կոչել երբեմն [՚]Վստղիկ՝ որ և [՚]Վիրոդիտէ, զի
ունայնասցի պանծացեալն յաղախնայս նորա կուսութեի։
[՚]Ուանզի եթէ [՚]Եստայն իցէ [՚]Վիրոդիտէ, զիարդ նմա ո-
բինաք ի սպասու կային կուսանք՝ ափրոդիտականաց գործոց
անհաղորդք։ [՚]Ի թէ երկու [՚]Վիրոդիտէք իցեն, մին կոյս,
և միւս կին. կամ գուցէ երեք և իցեն. մին կուսանաց՝ որ
և [՚]Եստա, և մին՝ ամուսնաւորաց, և մին՝ պոռնկաց. ո-
րում՝ և փիւնիկեցիք ձօնեցին զնաւտնակութեի գտաերաց
իւրեանց՝ մինչ չև առն տուեալ զնոսա։ [՚]Չէ՞ որ յայսցանէ
իցէ կին [՚]Եփեստեայ. ոչ կոյս ոք, որ արամբի է. և առա-
ւելոչ պոռնիկ, զի մի անարգանս առնիցեմք որդւոյն [՚]Էրայ
և համարուեսին [՚]Թենասայ։ [՚]Այս ուրեմն միայ իմանալ
զայն որ ամուսնաւորացն է. բայց ոչ կամիմք թէ նմանող
լինիցին նմա յայն ինչ զոր ընդ [՚]Էրեսի գործեացնա։ [՚]Այլ ու-
նին ասել ցիս. դարձեալ յառաջագրեալ յածիս։ [՚]Այլ զինչ
իրաւունք են ցանուել նոցա ընդ մեզ՝ սակս ասելոյ մեր
զայսպիսիս զնոցա աստուածոյն, և չզայրանալ ընդ անձինս
իւրեանց, յորժամ՝ ի Թատրոնս ախորժաբար լինին տեսողք
գիցն իւրեանց յանցմանց. և որ անհաւատալի Թուէր
Թէ ոչ հաւաստի էին ցոյցքն, այն Թատերական ոձրագոր-
ծութիք գից սահմանեալ են ի պատիւ նոցին իսկ գից։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Յաղագս բազմութեան աստուածոց զորս հեթանոսացն վարդապետք սնդեան մի և նոյն Աբրամազդ դոլ։

Լսեսջ արդ որչափ և հաճոյ իցէ յառաջ բերել ընդդէմ փաստս քննասոսականս և հակաճառութեիս, Թող լիցի ըստ նոցա Աբրամազդ երբեմն հոգի մարմնեղէն աշխարհիս, որ զմեծամարմին զայս գումնատ բազկացեալ՝ի քառեակ կամ յաւելի և ս տարերց՝ լուսոյ և շարժից. և երբեմն՝ի մանանց անտի իւրոց բաժին տացի քեռն և եղբարցն. մերթ լիցի եթէ արփիական, որպէս զի զներքոյ սփռեալ զօդն զՀերա՝ի վերուստ պարուրեսցէ. մերթ զոգ ընդ օդոյ իցէ ինքն բովանդակ երկին, և զերկիրս արդիւնացուցիչ ցօղովք և սերմամբ արգասաւոր առնիցէ իբրև զիւր կին միանգամայն և մայր, զի այս չէ անարժան ինչ առ աստուածան այսոսիկ. և մերթ՝ զի մի հարկ լիցի ընդ ամենայնին անցանել՝ իցէ մի աստուած, զորմէ իմանան բազումք զաստղաբաշխքաջ և աղնուական քերթողին.

«Անդր աստուած ընդ ամենայն,
Երկիրս և որ ծովու սահմանն,
Երկինս՝ի բարձր շրջոյն համայն...» Իլիա. հատ. ը։

Զոր լեթէրի անդ իցէ Աբրամազդ, նոյն ինքն յօգս՝ Հերա, նոյն՝ի ծովու՝ Պոսիդոն, և՝ի խորս անդ ծովու՝ Վազակիա, յերկրի՝ Պղուտոն, ի ծոց երկրի՝ Պերսեփոնէ, ի վառարանս տանց՝ Վեստա, ի քուրայս դաբբնաց՝ Հեփեստոս. յաստեղատունս՝ արեգական և լուսնի և աստեղք, ի գուշակութիս՝ Ապողոն, ի վաճառս՝ Հերմէս։ Նոյն ինքն սկզբնաւորիչ՝ի Յանուս, կատարիչ՝ի Տերմինոս, Վառնոս՝ի ժամանակի, Արէս և Վելլոնա՝ի մարտս, Դիոնիսոս կամ Բաքոս յայգիս, Վեներ յարմունիս, Ընահիտ յանատաս, Աթենաս՝ի հնարագիտութիւնս։ Եւ պարզաբար նա ինքն իցէ՝ի խմբի անդ խառնիւ-

Ձաղանձ դից · անուամբ Նաբոսի՝ ազատ հօր՝ իցէ վե-
բակացու արարածոց, և անուամբ ազատուհւոյ՝
իգականացն · Նա իցէ օրհնայր կամ հայր տուընջեան,
ի լոյս վերածելով զծնունդն · Նա դիցուհի Ննա՝ տե-
սուչ ի դաշտանս կանանց · Նա Ուկինա՝ ի ծնող ականաց
կոչեցեալ յօդնուէ · Նա իցէ նպաստիչ ծնանելեաց ընդու-
նելով ի ծոցոյ երկրի, և կոչեսցի Վկիս · Նա ի լալիս տղայ-
ոց բացցէ զբերան, և կոչեսցի աստուած Ատիկանոս կամ
Ակիտանոս · Նա բարձցէ յերկրէ, և կոչեսցի աստուածու-
հի Եվանա՝ մանկաբարձն · Նա խնամ տարցի օրորանի, և
կոչեսցի Ունինա · Նոյն ինքն իցէ յաստուածուհինն՝ որք
ծնելոց զգալոցն երգեն, կոչեցեալք Պարմնաէս՝ եր-
գիչք · իցէ Նա տեսուչ դիպուածոց, և կոչեսցի Վորսունա՝
բազդ · որպէս աստուածուհի Ումինա՝ սանտուր, գիւեցուա-
ց տղայոց զսահնս · զի առաջինք զսահնս բումս ասա-
ցին · և որպէս աստուածուհի Պոտինա՝ արբուցիչ, տացէ
ըմպել · որպէս աստուածուհի Տուկա՝ մնուցիչ, կերա-
կուր տացէ · յերկիւղ տղայոց կոչեսցի Պավենտիա՝ եր-
կեղուկ · ի յուսոյ որ գայ Հասանէ՝ Ենիլիա, եկաւոր · ի
հեշտութէ՝ Ոլոլպիա · ի ներգործելոյ՝ Գենսրիա · ի
խթանաց՝ որովք ի գործ ուժգին շարժի մարդ՝ Ատիմո-
լէ կոչեսցի · Իցէ Նա Արեներա դիցուհի սակս ուժեղակս
գործելոյ · Ռումիլիա, սակս զհամարողութէն ուսուցա-
նելոյ · Կամենաս, ուսուցանելով զերգել · իցէ Նա և աս-
տուած Կռնսոս, խորհուրդս տալով · և աստուածուհի
Ննեմիա, ազդելով իմաստս · Նոյն ինքն աստուածուհի
Յովկնատա, իբր յարբունս Հասուցիչ որ ի լռանալ մանկու-
թէն՝ սկիզբն տայ պատանեկութէ Հասակին · Նոյն և Վոր-
տունա մօրուանի, որ Հասելոյն ի չափ զմօրուս աձե-
ցուցանիցէ · բայց այսու ոչ պատուեցին զի չափ Հասելոյն,
իբր զի զայն կարծեալ աստուածն՝ դէմ իբր արու պատ
եր կամ ի մօրուացն անուանել Նարբասոս, որպէս ի
ծնորսն բուսոց Ոդոտոս, և կամ ոչ իգական Վորսու-
նա, այլ արական Վորսունիոս, ունելով առնաբար զմօ-
րուս · Նա ինքն անուամբ Յուգատին չաստուածոյ զա-

մուանաւորս զուգեացէ. և յորժամ կոյս օրիորդի հնիքն լաճանի, առ սա կարդասցեն, և աստուածուհի Վ իրգինեան անուանեսցեն ։ Կա ինքն իսկ Վուտունոս կամ Տուտունոս, որ է առ Հռոմս Պրիապոս ։

Արդ եթէ ոչ ամաչէն, զայս ամենայն զոր ասացի, և զայլն ևս զոր ոչ ասացի, քանզի ոչ կամք են ինձ ասել բոլանդակ, զոլորեսին աստուածս և աստուածուհիս համառօտեացն լինել մի ևնոյն Արամազդ. կամ որպէս ամենք ընտրեն, այս ամենայն իցեննորա մասունք կամ զօրութիք, որպէս Թուեցաւ այնոցիկ որք ախորժեն հոգի աշխարհի զսա լինել. և է այս կարծիք երևելեաց և իմաստնագունից առնոսա ։ Այլ եթէ այդպէս իցեն իրքդ, զոր դեռ առ տեղեաւս ոչ առնում՝ ի քննին, զինչ ինաս էր դոցա՝ եթէ զմի ՚ած պաշտէին իմաստախոհ բովանդակութիք. զի որոմ մասին նորա լինէր արհամարհութիք, յորժամ նա ինքն պաշտիւր ։ Այլ եթէ կայր երկիւղ՝ մի արդեօք անտես Թողեալ մասունք նորա ցասնուցուն, ուրեմն ոչ ըստ նոցայն խորհելոյ՝ այս ամենայն լինի կեանք միոյ կենսատուցչի, որ յինքն բովանդակիցէ զաստուածս համայն՝ իբր իւր զօրութիս, կամ անդամս, կամ մասունս. այլ իւրաքանչիւր մասն ունի զիւր կեանս զատուցեալ յայլոցն, որով մարթի իցէ ցասնուլ միոյն, և միւսոյն հաշտիլ, և այլում զղրգռիլ ։ Ասէ եթէ ասիցեն, ամենայնին միանգամայն՝ այս է՝ Արամազդայ ողջոյն ի գայրացումն գալ՝ եթէ մասունք նորա ոչ պաշտեսցին մի առ մի և ուրոյն, անմոռանալիք ասի այդ. զի և ոչ մի յայնցանէ մեսյ արտաքոյ, յորժամ միոն այն որ զամենայն ունի՝ ի պաշտօն առեալ է ։ Ա՛ր որ Թողեալ զայլ անհամար հաւաստիս, յասել նոցա Թէ աստեղք ամենայն են Արամազդայ մասունք, և Թէ առհասարակ նոքա կենդանիք են՝ հոգի ունելով բանաւոր, ուստի առանց իրիք հակառակութիք աստուածք իցեն համարելիք, յայն ոչ հայիմ՝ զի զյոլովս յայնցանէ ոչ պաշտեն, ոչ տաճարս շինեն բազմաց, ոչ կանգնեն սեղանս, այլ սակաւուց և եթէ աստեղացյ կամեցան յանուանէ առնել սեղանս և պատարագս ։ Արդ եթէ զայրանան չպաշտեալքն որիշ որիշ, ոչ

արդեօք երկնչին՝ ի սակաւուցն հաշտել զերկինի բովանդակ զցասումն յինքեանս ձգել։ Այլ եթէ զաստեղս հաստատեալ պաշտեն այնու՝ զի պաշտեն զՔամազդ, յորում է ամենայն, ապա սովին կարծոյ Ձանասպարհաւ կարող էին ի միում անդ ամենեցունն լինել պաշտօնատար. զի այսպէս ոչ ոք զայրանայր, և ոչ միում կրելով արհամարհութիւն ի մին յայն. ուր ընդ հակառակին՝ սակաւուց պաշտօն մատուցանելով, այլոց բազմաթիւցն անպաշտօն ինալով տուեալ լինէր իրաւացի ցասմանն պատճառ, մանաւանդ եթէ նոցա ի բարձր կայից անտի լուսածոզաց նախամեծար լինէր մերկ խայտառակն Պրիապոս։

ԴԻՈՅԻՍ ԺԲ.

Ցաղագս կարծեաց նոցա՝ որ զշած համարեցան հոգի աշխարհի, և զաշխարհ մարմին ասի։

Ո՞Չ ապա և այն որ դժուարալուր է ապանց մտաւորացս, մանաւանդ որ և է մարդոյ. զի ոչ գերազանց հանճարոյ պէտք են ի սոյն, այլ զի ի բաց եդեալ զբանակութիւնն, ուշ ունկնիցն միայն. զի թէ հոգի աշխարհի է ասէ, և այնր հոգւոյ մարմին է աշխարհս, լինիցի սա կենդանի ունի բազկացեալ ի հոգւոյ և ի մարմնոյ. և աստուածդ այդ իբր ի ծոցի բնութեանէ յինքն բովանդակիցէ զամենայն. մինչև ի հոգւոյ նորա՝ որով կենդանանայ բոլոր այս զանգուած, առնուլ ամենայն ընտրութեամբ ըստ իւրաքանչիւր ազգի՝ զկեանս և զոգի. և ոչ կայցէ ինչ բնաւ՝ որ չիցէ մասն աստուածոյ։ Ո՞Չ այդ եղեալ, ո՞ ոչ տեսանէ՝ քանի՛ ամբարշտութիւն և անկրօնութիւն ծագէ այսի. որպէս թէ զոր ինչ և կոխէ ոք, զմասն աստուածոյ կոխիցէ, և ի զենուլ զամենայն կենդանւոյ աստուածոյ մասն սպանցի։ Այլ կամիմ ասել զամենայն՝ որ ինքնին դիտելին է մտախոհ մարդոց, և չէ իսկ հնար ասել առանց ամաչելոյ։

ԿԱՅՈՒԹ ԺԴ

Կա այնոսիկ որք զանաւար կենդանիս ևեթ ասէն լինել մահն միայն ։

Ասպ եթէ զանաւական կենդանիքս միայն՝ զմարդիկ ասեմ, այնպէն լինել մահն ։ոչ իմանամ զիարդ ուր աշխարհիս սղջոյն իցէ աստուած , զանաստուածն զատանէն ի մահանոյ նորա ։ Կ.յլէ հարկ յաղագս այսր վիճաբան լինել ։ զինչ անտեղի քան զբանաւոր կենդանւոյ զմարդոյ կարծել , թէ յորժամ մանուկն հարկանի , մահն աստուծոյ գան հարկանի ։ եւս առաւել ո՞ հանդգնասցէ կասլիցէ՝ բայց զառանցեալսը՝ի մտաց ,խորհել թէ մահուանէ աստուածոյ իցէն զաղբատգործք , անօրէնք , ամբարիշտք , և կորստականք գլխովին ։ Ասղ զայն ։ զի՞ ասպա զայրանայ առ այնոսիկ՝ յորոց ոչն պաշտի ։ որովհետև մահուանէ իւր են յորոց չպաշտի ։ Կ.ան որոյ միայ նոցա ասել թէ աստուածքն իսկ իւրեանց առհասարակ ունին զիւրեանց կեանս, իւրաքանչիւր ինքեան կեայ, ոչ ոք՝ի նոցանէ մահն է այլոմ ։ այլ ամենեքին են պաշտելիք , զորս մարթ իցէ Հանդչել և պաշտել ։ բանզի սակս կարի բազմութեան՝ անմարթ է ամենայնին լինել գիտակ ։ Ասյորոց միջի քանզի Կ.րամագդ անցեալ նստի Թագաւոր , վասն այն՝ որպէս կարծեմ՝ զնա Համարին հաստիչ կամ մեծացուցիչ Թագաւորութեն հռոմայեցւոց ։ զի եթէ ոչ նորա իցէ արարեալ զայս , զո՞ր այլ աստուած կարծիցեն բաւական՝ ձեռն արկանել՝ի գործ այնպիսի մեծ , ուր այլք ամենեքին պատրաստեալ կան յանցնիւր պաշտօն և՝ի գործ , և չէ նոցա միտ՝ի գործս միանց ։ Կ.պա միայնոյ Թագաւորի աստուածոյ Հնար է զմարդկան Թագաւորութիւն տիրուել ։

ԳԼՈՒԽ ԺԲ

Ոչ ի գեպ է Աբամաղդայ ընծայել զգերաձուծն Թագաւորութեանց. իբր զի յաղթութեան ըստ նոցա կարծելոյն գոլով աստուածուհի ոմն, նա միայն բաւական է յայս գործ։

Ա՛ՍՏԱՆՕՐ զայն նախ հարցանեմ, ի՛ր վասն Թագաւորութեան ինքնին ոչ աստուած ոմն իցէ. ընդէ՞ր չիցէ նա այդպիսի, եթէ արդարեւ յաղթութեա՛ն աստուածուհի ոմն է։ Այժմ՝ զի՞ պիտոյ է զԱ՛բամազդ առնուլ յայս արարուած, եթէ յաղթուհին է ձեռնտու և բարեխնամող, և միշտ հաստատ առ այնոսիկ՝ զորս յաղթողն լինել կամի։ Այլ՝ զի՞ ինչ աստուածուհիդ այդ կայ օժանդակ և խնամածու, թէ և՝ ի հանգիստ կամ յայլ գործ պարապեալ իցէ Աբամազդ, որ ազգք հնուաձիցին, որ Թագաւորութիւնք ոչ խոնարհեսցին։ Այլ երևեալ ունին ասել, թէ ոչ հաճոյ է արանց քաջութեաց՝ յանիրաւի ձեռնարկել՝ ի պատերազմ, և զնոքա ճարտար հանդարտեալս և ոչ իւիք անիրաւեալս՝ գրգռել՝ ի մարտ կամայական առ ընդարձակելոյ զԹագաւորութիւն։ Ա՛րդարեւ եթէ այդպէս խորհիցին, հաւանեալ եմ ընդ այդ և գովեմ։

ԳԼՈՒԽ ԺԱ

Մխիթ արժան իցէ բարեպիրայ զընդարձակութիւն խնդրել Թագաւորութեան։

Ա՛ՅԱՍՆ այսորիկ՝ ի միտ ածցեն՝ իցէ՞ արդեօք անկ մարդոց բարեաց խնդալ ընդ տարածումն Թագաւորութեան։ Վ՛ասզի անօրինութիւն նոցա ընդ որս իրաւացի մղի պատերազմ, սատար լինի մեծանալոյ Թագաւորութեան, որ արդարեւ փոքր մնայր՝ եթէ հանդարտութիւն և արդարութիւն սահմանակցացն ոչ ընդդէմ գրգռէր՝ ի մարտ անիրաւու-

Թէ իւիք . և բարեբաստագոյն ևս լինէին մարդկայինս կենցաղք , փոքունց թագաւորութենց առհասարակ գաշնակից մերձաւորքն զուարճանալով . և այնուհետև լինէին յաշխարհի յոլով թագաւորութիք ազգաց , որպէս ՚ի քաղաքի բազում երդիք են քաղաքացեաց ՝ Այլ իրի պահ տերազմել , և նուաճութեամբ ազգաց զթագաւորութին ընդարձակել , չարաց բարեբաստութէն կարծի . այլ բարեացն՝ հարկ է անհրաժեշտ : Այլ քանզի դժպատեհ ևս էր՝ եթէ անիրաւք տիրէին արդարախորհաց , յայսմ պատճառէ ոչ անդէպ է բարեբաստութէն ինչ ասել և զայս : Սակայն անշուշտ մեծ ևս բարեբաստութէն է՝ ունել զբարի մերձաւոր հաշտ , քան նուաճել զչար մերձաւոր պատերազմող : Ընդարի յաժարութիք են , եթէ ցան կանայցես ունել զոք՝ զոր աւիցես , կամ յումմէ երկնչիլ ցիս , որպէս զի գտանիցի ոք որում յաղթեացես :

Այդ եթէ հոռովմայեցիք արդար պատերազմաք՝ և ոչ անարժան կամ տարօրէն զիշխանութէնն այնպէս մեծացուցանել կարողացան , ոչ ապաքէն իրրև աստուածուհի սին պաշտել ունէին զօտարացն անիրաւութէ . վասն զի բազմաք գործակից տեսանէմք զայն ՚ի ծաւալումն իշխանութէնն , երբ հնարեր գտանել զանիրաւագործս՝ ընդ որս մարթ իցէ տալ պատերազմ արդար , և զտերութիւնն աձեցուցանել . և ընդէր ասա նա և անօրէնութիւնն չիցէ աստուածուհի՝ գնել արտարին ազգաց , եթէ երկիւղն , դալուին և տենդն արժանացան լինել աստուածք հռովմայեցւոց : Այս երկոքումբքս այսոքիւք , օտարին անիրաւութեամբ և աստուածուհետն յաղթութեամբ մեծացաւ տէրութէն , անիրաւութէնն զպատճառս մարտիցն սպրդելով , և յաղթուէնն զյաջողակն տալով կատարած մարտից , առանց իրիք ներգործութէ Յամազդայ : Ոչ ան զի զոր բաժին ունէր Յամազդ յայդմ , յորժամ այն իրք՝ որ ՚ի սակի բարեբարութէց նորա համնելիք են , ընդ աստուածս գրին , աստուածք անուանին , առ աստուածս պաշտին , և նոքին յիւրաքանչիւր պաշտաման յօգնութիւն կոչին : Արեր և նա ունել զիւր

քաժին, եթէ անուանեալ կոչէր Թագաւորութիւն, որպէս միանգամ կոչի յաղթութիւն. կամ եթէ Թագաւորութիւնն իցէ գործ Աստուածայայ, ընդէր և յաղթութիւնն ոչ գործ Նորա համարեսցի. և արդարեւ համարեալ իսկ լինէր, եթէ ոչ քարշ ինչ ի Պասխողինոն, այլ Չհմարիտ Թագաւորն Թագաւորաց և տէրն տերանց էր ծանուցեալ և պատեգեալ։

ԳԻՒՂԻՍ ԺԲ.

Չի է զի ի սահմանել անդ հռովմայեցւոց աստուածս յատուկ առ ամենայն իսս, և առ շարժմունս ամենայն, զաստարն հանգստեան կամեցան արտաքոյ գրանց կառուցանել։

Ասացեալ է ինձ զարմանս մեծ, զի աստուածս առանձին կարգելովնոցա առ իւրաքանչիւր իսս, և գոգցես շարժմանց իւրաքանչիւր կոչեցին աստուածուհի Աֆեհորիա, որ շարժէ ի գործել. աստուածուհի Պոմոնա, որ սաստկապէս մղէ ի գործ. աստուածուհի Ռուբիկիա, որ դանդաղ շարժէ, յոյլ և անգործ առնելով զմարդ, որպէս ասէ Պանտոնիոս. աստուածուհի Ստեհնիա, որ քաջակորով առնէ։ Ասացի դից արուեաց և իգաց տաճարս հրապարակաւ ի քաղաքի կանգնել յանձն առին. իսկ զաստուածուհի ոմն Վուրիէս անուանելով, զի լցցի հանդերձարար, տուն նմա հասուցելին արտաքոյ Կոլինայ դրանն, ոչ կամեցեալ հրապարակաւ զնա ի ներքս ընդունել։ Վասզ այս էր ցոյցք անհանգիստ ոգւոյ բաղաքացւոցն. կամ մանաւանդ նշանակել կամեցան այսու, Թէ որ զնուժանն զայն դիւաց, քան Թէ աստուածոց միւսք պաշտել կամիցի, ոչ հասցէ երբէք յայն հանգիստ՝ յոր հրաւիրէ բժիշկն Չհմարիտ առեալով. «Լսարուք յինէն՝ զի հեզ եմ և խոնարհ սրտիւ. և գտջիք հանգիստ անձանց ձերոց». Մատ. ժա. 29։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Եթէ Աբամադոյ անկանի դերագոյն իշխանութիւնն, էր արժան արդեօք և գոյութիւնն համարել աստուածուհի։

Այլ ասիցեն թերևս, թէ զաստուածուհինն Իգտուրիա անուանեալ, որ է յաղթուն, նա ինքն Աբամադ առաքէ, որում իբր թագաւորի աստուածոց անսալով նորա՝ գնայ առ սրա հրամայի, և՝ ի նոցա կողմն դադարէ։ Օ այդ ձշմարտութեամբ է ասել ոչ զԱբամադոյ զայնմանէ, զոր ըստ մտի կազմակերպեն լինել աստուածոց թագաւոր, այլ զձշմարիտ թագաւորէն յաւիտեանց. իբր զի նա առաքէ ոչ զյաղթութիւն, որ անանձն ինչ է, այլ զհրեշտակ իւր, և տայ զյաղթութիւնն ումմէ կամի. որոյ և խորհուրդն մարթի և թաքուն լինել, այլ ոչ բնաւ անիրաւ։ Վասնզի եթէ աստուածուհի իցէ յաղթութիւն, էր վասն և յաղթանակն ոչ է աստուած, յծորդեալ ընդ յաղթութիւնն իբր այր նորա, կամ եղբայր կամ որդի։ Այս զայսպիսիս խորհրդածեցեալն դոքա զաստուածոց իւրեանց. զորս եթէ բանաստեղծքն յօդէին, և՝ ի միջի երգիծանէին, պատասխանէին դոքա՝ թէ են այն աստղածաւք քերթողաց ծիծաղելիք։ Այլ սակայն ոչ ծիծաղէին դոքա՝ ի վերայ անձանց իւրեանց յորժամ զայնպիսի զառանցանս ոչ եթէ՝ ի քերթողացն իրս ընթեռնուին, այլ՝ ի տաճարսն երգածայնէին։ Այսպա ուրեմն պարտ էր նոցա՝ վասն աներևոյթ իրաց զԱբամադ աղաչել, նման միայնոյ լինել աղերսարկու. քանզի եթէ յաղթութիւնն աստուածուհի ոմն է, նեբբոյ անկեալ Աբամադոյ թագաւորի, ուր միանգամ առաքիցի՝ ի նմանէ, չիշխէ ընդդէմ կալ նմա, և զիւրն առաւել կատարել հաճոյս։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Որք միանգամ զերջանկութիւնն և զբախտ համարին աստուածուհիս, եւ որչեն զնոսա։

Օ՜ն՜ց ասա, միթէ և երջանկութի՞ւ աստուածուհի ոմն իցէ. տաճար նմին կառուցաւ, սեղանով պատուեցաւ, առանձին հանդիսիւք տօնախմբեցաւ. ապա զնա միայն պարտ էր պաշտել. զի ուրանօր կայ նա, որ բարի ոչ գըտանիցի։ Այլ զի՞ է, զի և բախտն համարեալ է աստուածուհի, և պաշտի. միթէ այլ երջանկութի՞ւն իցէ, և այլ բախտ։ Այս կարի խակ քաջ. զի բախտն կարէ և չար լինել. խակ երջանկութիւն եթէ չար լինիցի, ոչ ևս երջանկութիւն է։ Այսպէսքն զաստուածսն ամենայն զարուսկանս և զիգականս, եթէ կայցէ՛ի նոսա այդ խտիր, պարտ և արժան էր բարիս համարել միշտ. զայդ Պղատոն ասաց, զայդ այլք յիմաստասիրաց, զայդ նշանաւոր առաջնորդք տէրութեան և ժողովրդոց։ Օ՜ի՞ այդ ապա աստուածուհին բախտ մերթ բարի, մերթ չար իցէ. մի արդեօք՛ի լինելն չար՝ ոչ ևս իցէ աստուածուհի, այլ յանկարծ իմն՛ի չարադէ փոխարկեալ։ Այսպա քանի՞ աստուածք էն այդոքիկ. յայտ է թէ այնքանիքն, որքանիքն աբք բարեբախտիկք իցեն. և զի կան այլք բազումք դժբախտք՛ի նմին ժամանակի, եթէ մի և նոյն էր, լինէր չար և բարի միանգամայն, ոմանց այլ կինչ, և այլոց այլ։ Իսկ եթէ որ աստուածուհին է, միշտ է բարի, և սա է երջանկութիւնն, առիմ՞ երկուս անուանս կոչեն. բայց ներեսցուք այդմ. զի է խակ սովորութի՞ մոյ և նոյն իրի երկուս յորջորջել անուանս։ Այդքա՛ր այլ և այլ տաճարք էն նոցա, այլ և այլ սեղանք, այլ և՛ այլ պաշտամունք։ Պատճառ այն է, ասեն, զի երջանկութի՞ն՝ զոր աբք բարիք ըստ նախընծայ վաստակոցն ընդունին. խակ բախտն բարի՝ առանց՛ի վաստակս հայելոյ՝ ըստ դիպոյ

լինի հասանել մարդոյ բարեաց և չարաց։ Այլա ուրեմն որպէս բարի իցէ, որ առանց ընտրութեան իրիք գայ հասանել և բարեաց և չարաց. և առ ինչ պատշաճ կոյր այսպիսի, որ անխտիր ումեք պատահէ, մինչև յոլովակի զիւրովք պատճառաւորօք զանց առնել, և առ արհամարհոտս իւր մնալել։ Այլա եթէ պատճառեալք նորա կարիցեն լաւ ինչ առնել, զի տեսեալ զնոսա սիրեսցէ, ապա արժանեաց զհետ գայ այն, և ոչ եթէ պատահմամբ. և ոչ ինայ այնուհետեւ սահման բախտի. ոչ այն՝ որ ի գիպաց առնու զանուն։ Օ՛ի ոչ ինչ շահ է պատահել զնա, եթէ բախտ դիպուածոյ իցէ. իսկ եթէ գիտէ ընտրել զչէրմ պատճառեսյս իւր առ ի բարիս առնել, ոչ և ս է բախտ կամ դիպուած։ Այդեօք և զսա Այրամադր առաքէ յս և կամի. ուրեմն Այրամադր միայն պատեսցի. քանզի ի նորա հրամայելն և առաքել ուր կամիցի, չկարէ բախտն կալ հակառակ. և կամ իրաւացի և ս ասել, Թող չարք միայն պատեսցեն զբախտ, որք ոչն կամին ունել վաստակ արժանիս՝ որովք կարիցեն առ ինքեանս հրաւիրել զերջանկութեն։

ԳԼՈՒԽ ԺԹ

Եաղագս կանացի բախտի։

Այնչափ զօճական իմն ընծայեն դոքա բախտ կուէցեցուն դիպուածոյ, մինչև դրօշելոյ նորա որ ի տիկնայ էր ձօնեալ և անուանեալ բախտ կինոջական, խօսել և ս առանդեն յիշատակագիրք, և ասել միանգամ և երկիցս, Թէ տիկնայք օրինօք նուիրեցին զայն։ Այթէ այդ ձշմարիտ իցէ, չունիմք ինչ զարմանալ, զի ոչ դժուարին է այսոց չարաց պատրել այսու օրինակաւ և ս. որոց նենգապատիրն արհեստից այնու և ս յաւէտ արժան էր նոցա ի վերայ հասանել, զի այն աստուածուհի խօսեցաւ՝ որ

ըստ գիտութեան եւթն հանդիսի, և ոչ որ ըստ արժանեաց վաստակոցն գայ. զի ըստ այդմ բախտ՝ եղև խօսուն, իսկ երջանկութիւնն՝ համր. և առ ինչ արգելոք, բայց զի անփոյթ զուղիղ կենաց առնիցեն մարդիկ, հաշտ ընդ ինքեանս ունելով զբախտ՝ որ առանց վաստակոց բարեաց բարեբախտիկս զնոսա առնիցէ։ Այս արդարեւ եթէ բախտ խօսի, ոչ լսիկ հնոջականն ունէր խօսել՝ այլ մանաւանդ առնականն. որպէս զի մի կարծիս տայցեն թէ տիկնայքն նուիրիչք այնը դրօշելոյ ինքեանն յօդեալ իցեն զայնպիսի մեծ աքանչելիս կանացի շաղփաղփութիւն։

ԳԼՈՒԽ Ի

Յաղագս առաքինութեանն և հաւատոյ, զոր հեթանոսք պատուէրքին տառապոք և պաշտամանաւք, թողեալ ի բաց զայլ բարիս՝ որք նոյնպէս արժանիք էին պահելոյ, եթէ ուղղութիւն տային այլոց զատուածութիւն։

Այդ զառաքինութիւն անգամ ՚ճճացուցին հեթանոսք. և եթէ յիրաւի աստուած էր նա, նախապատիւ քան զաստուածս կարգել արժան էր զնա։ Այլ զի չէ աստուած, այլ պարգև ՚ոյ, պարտ է խնդրել և առնուլ զայն ՚ի նմանէ՝ որ միայն տալ կարող է. և զամենայն խուժան սուտ աստուածոց ՚ի բաց ցրել որպէս մնոտիս։ Այլ էր վայն և հաւատն աստուած կարծեցաւ, մինչև ունել և զտաճար և զպաշին. որովհետև որ միանգամ խոհական իմաստութիւն ձանաչէ զայն, ինքն իսկ բնակարան լինի նորա։ Այլ ուստի գիտեն նոքա՝ զինչ հաւատքն իցեն, որոյ նախկին և մեծ պարտիք են՝ հաւատալ յԱստուած իմ։ Այսինքն ոչ բաւական լինէր նոցա առաքինութիւնն. ոչ ապաքէն ՚ի նմա էն և հաւատք. զի գիտէին նոքա ՚ի քառեակ տեսակս բաժանել զառաքինութիւնն, ՚ի խոհեմութիւն, յարդարութիւն, յարիւթիւն, ՚ի բարեխառնութիւն. և զի ունէին իւրաքանչիւր սոքա զիւրեանց տե-

տակս , յարդարութեանէ մասին է հաւատքն . որ և զառաջինն տեղի ունի առ Մով՝սէսէ զիտեմբս , զինչ իցի ասելն , "Արդարն ի հաւատոց կեցցէ ,, : Այլոց զարմանամ ընդ ցանկացողս բազմաստուածութեանէ , եթէ հաւատն աստուած իցէ , յորս սակս անարգանս բերեն այլոց և յաղվից աստուածոց , անտես զնոսա արարեալ , որոց կարող էին նոյնպէս տունանուիրել և սեղանս : Ընդէր չեղև ձածանալ բարեխառնուէ , յորոյ անուն մեծապէս փառաւորեցան ոմանք ի հռովմէական իշխանաց : Ընդէր և արիութեին չեղև յաստուածոց համարի , այն՝ որ զօրացոյց զԱ՛ուտիոս ի քոյ միսէ զաջ իւր . որ ձեռն եա Կուբիտոսի գահավէժ արկանել զանձն վասն հայրենեաց . որ օգնեաց Լևկոսեանց՝ հօրն և որդւոյն՝ անձնաւաղոհ լինել սակս բանակին . սակայն եթէ արդարև յամենեսին ի դոսա լեալ իցէ արիութեի չէմարիտ , զորմէ առ տեղեաւս չէ մեր խնդիր : Այլ վասն խոհեմութեի և խմաստութեի չեղեն արժանի մեծարիլ յաստուածոց կարգի . զուցէ վասն այն՝ զի հանրական անուամբ առաքինուէ ամենայն քրն պաշտին : Այսպս նոյնպէս մարթի էր զմի ձած պաշտել , որոյ իբրու մասունք համարին առ նոսա այլ աստուածք : Արդ թէպէտև ի մի և ի նոյն անուն առաքինութեի վարկին և հաւատքն և պարկեշտութիւն , բայց արժանի գտան սոքա ուրոյն յիւրաքանչիւր տունս ունել զնա բեանց բազխնս :

ԳԼՈՒԽ ԻԴ.

Որովհետև ոչ ծանեան զպարգևս ՅՍ , պարտ էր նոցա չտատանել առաքինութի եթէ և երջանկութի :

ՕԱՑԳՊՒՍՒ զաստուածուհիս ոչ եթէ չէմարտութէին ապատ , այլ սէր ունայնութէ հնարեցաւ . քանզի իբրս այս ՅՍ չէմարտի պարգևք էն , և ոչ եթէ ուրոյն աստուածք : Այլոց սակայն ուրանօր կայ առաքինութիւն և երջանկ-

կութիւն, զինչ այլ խնդրի. ուր չիցէ բաւական առաքինութիւն և երջանկութիւն, զինչ բաւական լիցի նմա, ի՝ առն զի զամենայն գներգործելիսն բովանդակէ առաքինութիւն, իսկ զամենայն ըղձալիս՝ երջանկութիւն։ Այլ եթէ յայն սակս լիներ պաշտեալ Քրամազդ, որպէս զի շնորհեսցէ գայսոսիկ, և եթէ տարածումն և տևողութիւն թագաւորութեան բարի ինչ գոլով մանն է երջանկութիւն, զիա՞րդ ապա ոչ իմացան՝ թէ այ պարգևք են, և ոչ աստուածք։ Այլ եթէ յաստուածս համարեցան, չպիտեր գոնէ զայլ ևս խուժան դիւց խնդրել։ Ի՝ առն զի ուշ եդեալ իւրաքանչիւր գործոյից դիցն արուաց և իգաց, զորս ըստ կամի յօդեցին, թողլ թէ կարող էն՝ գացեն ինչ զոր ոմն ՚ի դից շնորհիցէ առն ունողի զառաքինութիւն և զերջանկութիւն։ Օ՞ր ուսումն ինայր հայցել ՚ի Հերմեայ կամ յԱթենասայ, յորժամ առաքինութիւն ունի զամենայն ընդ իւր. վասն զի բուն իսկ արուեստ բարիոք և ուղիղ կելոյ՝ սահմանեցաւ ՚ի նախնեաց առաքինութիւնն. և զի յունարէն անէծն առաքինութիւն, անտի համարին մտեալ առ Լատինս կոչել զարուեստն։ Այլ եթէ առաքինութե՛ ՚ի հանձարեղն և եթէ հանգչի, զինչ պէտք էին աստուածոյն ևատեայ հօր՝ առ ՚ի զմտացիս ծնանելոյ, ուր զդոյն շնորհել կարող էր երջանկութիւն. զի մտացի ծնանել՝ մանն է երջանկութեան։ Այլն իրի թէպէտ չև ևս ծնելոյն անմարթ էր պաշտել զերջանկութի՛՝ առ ՚ի շնորհելոյ նմա զմտաւարժութի՛, բայց շնորհէր զայն ծնողացդ նորա՝ պաշտօնեից իւրոց, որպէս զի ծնցին նոցա որդիք հանձարեղք։ Օ՞ի պիտոյ էր ծննդականաց կարդալ զ՝ուխինա, որովհետև ՚ի մերձ կալ երջանկութե՛՝ ոչ միայն բարիոք ծնանէին, այլ և զբարիս։ Օ՞ինչ հարկ էր Վլպեայ դիցուհւոյ յանձն առնել զնորածինսն, աստուածոյն Ա՝ատիկանեայ՝ զտղայս Ճղոց, Կունինայ աստուածուհւոյ օրօցայ՝ զընկողմնեալսն, Րումինեայ՝ զսանդիացս, Ստատիլինեայ՝ զոտնակայեալսն, Գէովինեայ աստուածուհւոյ՝ զեկաւորեալսն, Քէոմնեայ՝ զբա-

ցապնացեալն, Ա՝ենտեայ աստուածուհւոյ՝ առ՝ի բա-
բիոք միտս ունելոյ, Ա՝ոլումենի և Ա՝ոլումենեայ, զի
զբարիս կամիցին. աստուածոյն Հարսանեաց, զի բա-
բուքապէս լծակցեացին. աստուածոյ ագարակաւոյ՝ և
մանաւանդ աստուածուհւոյն Փրուտեքսեայ, զի պտուղս
առատս ժողովեսցեն. Ա՝րեսի և Ա՝ֆլոնեայ՝ զի քաջիկ
մարտիցեն. Ա՝ֆիտորեայ, զի յաղթեսցեն. աստուածոյն
Հ՝ոնորի, զի պատուեսցին. աստուածուհւոյն Պ՝ակու-
նեայ, զի ընչաւէտք լինիցին. աստուածոյն Ա՝սկուլանայ՝
և որդւոյ նորա Ա՝րգենտինայ, զի ունիցին դրամս պղնձի
և արծաթի. և յայն սակս զԱ՝սկուլանոս եդին հայր Ա՝ր-
գենտինեայ, զի նախ մուծաւ՝ ի կիրառութիւն դրամն
պղնձի, և ապա արծաթին. Ա՝ւր զարմանք են, զի Ա՝ր-
գենտինոսն ոչ ծնաւ զԱ՝էրինոս, քանզի զհետ եկն ապա
և ոսկին. զոր եթէ ունէին սոքա փոխան աստուծոյ, ա-
պաքէն որպէս զԱ՝յամազդ նախակարգեցին քան զԱ՝ռ-
նոս հայր իւր, նոյնպէս զԱ՝էրինոսն յառաջ դասէին քան
զհայր իւր Ա՝րգենտինոս, և քան զՀաւն Ա՝սկուլանոս։

Իսկ արդ զինչ հարկ էր՝ յաղագս այսոցիկ բարեաց
հոգւոյ և կամ մարմնոյ կամ արտաքնոց իրաց՝ զայնչափ
գումարտակ դից պաշտել և կարդալ յօգնութիւն. զորոց և
ոչ զգնաւան յիշատակեցի. այլ և ինքեանք կարէն իսկ ոչ,
առ ամենայն պէտս մարդկան մի ըստ միոջէ մանաւանդ
բաւ հայթայթել աստուածս ուրոյնս և յատուկս. ուր
զհամայնսն կարող էր համառօտ մատակարարել դիւրաւ
մի միայն աստուածուհին երջանկութիւն։ Այլ ոչ միայն առ
՝ի բարեացն ստացումն զաստուած այլ խնդրել չափեր,
այլ և ոչ առ՝ի մեղաւոյն չարեաց։ Ա՝ն զի զինչ հարկ
էր վանն խոնջելոցն կարդալ զաստուածուհին Վեստոնիա,
վանն զՁնշամիսն վարելոյ՝ զԱ՝ֆլոնիա. վանն խօթացելոյ՝
բժիշկ զԱ՝պողոն կամ զԱ՝սկղեպիոս, կամ զերկոսին միան-
գամայն՝ ի կալ մեծի վտանգի։ Ա՝ն պիտոյ էր աղաչել
զաստուածն Ա՝պինէ՝ առ՝ի խլելոյ զփուշս յարտորէից.
ոչ զաստուածուհին Ա՝ուսիգէ՝ առ՝ի խափանելոյ զժանգ
արմտեաց. վանն զի ուր երջանկութիւն միայն առընթեր

կայը և պատասխարեր, անդ չար ինչ բնաւ ոչ ծագէր, կամ արագ արագ անհետ լինէր։ Ինքը բանիցս, քանզի զերկուց աստուածոհեացս խօսիմք՝ զառաքինութենէ և զերջանկութենէ, եթէ արդարեւ երջանկութենին է վարձ առաքինութենէ, ոչ աստուած իցէ, այլ՝ այ պարզև։ Իսկ եթէ աստուած է, ընդէր չասիցեն, թէ նա ինքն չնորհէ և զառաքինութենէ. որովհետև ստացումն իսկ առաքինութենէ երջանկութենէ մեծ է։

ԳԼՈՒԽ ԻԸ

Յաղագս գիցաբանութենէն՝ զորմէ պարծի Վարրան առնէ գիտութենէ հռովմայեցւոց։

Ոչ ինչ ասպա այն իցէ, զի մեծ ինն երախտիս համարի արարեալ Վարրոն իւրոցն քաղաքացւոց. զի ոչ միայն զաստուածոն յիշատակէ՝ զորս պաշտել ունէին հռովմայեցիքն, այլ և նշանակէ զինչ իւրաքանչիւրումն անկ իցէ։ Ոչ որ օրինակ, ասէ, ոչ օգուտ ինչ է գիտել զանուն և զկերպարանս առն բժշկի, և անգիտանալ թէ բժիշկ իցէ նա, սոյնպէս չէ ինչ շահ՝ գիտել թէ աստուած է Ասկղեպիոս, եթէ չգիտիցես թէ ձեռնտու լինի նա յառողջութիւն, որով և անգիտանաս՝ յոր պէտս սիրոյ իցէ աղաչել զնա։ Պարձեալ այլով յարացուցիւ զնոյն յայտ առնէ ասելով. ոչ միայն բարիոք կեալ չունիցի ոք, այլ և ոչ կեալ համբուն՝ եթէ չգիտիցէ ո՞ր իցէ գաւրքին, ո՞ր հացագործ, ո՞ր որմնադիր. յումմէ զայն ինչ սիրտնեացու խնդրել, զո՞ առնուլ օգնական, զո՞ առաջնորդ, զո՞ ոք ուսուցիչ. ըստ նմին օրինակի՝ անեղկայելի առնէ ցուն է շահաւէտն լինել ծանօթութեան աստուածոցն, ՚ի գիտելն զինչ զօրութիւն իցէ միոյ միոյ ՚ի դից, կամ կարողութիւն և իշխանութիւն յիրս առնոյն. վասն զի այսու կարողանամք գիտել թէ զո՞ր աստուած և յո՞ր սակս պարտիմք ունել պաշտպան և կարդալ. զի մի լիցի

առնել մեզ ըստ միմոսայն սովորութեն, և հայցել՝ի Քրիստոսէ զքոյր, և՝ի յիմիայց գինի։ Աչքաբէն մեծ է օգուտս. և ո՞ոչ հնարհակալու լինիցէ Աստուծոյ, եթէ զնշանս մարիան ցուցանիցէ, և ուսուցանիցէ մարդկան պահել զմի զնշմարիտն ճաշ, յորմէ են ամենայն բարիք։

ԳԼՈՒԽ ԻԹ

Յաղագս երջանկութեն՝ զոր հռովմայեցիք պահեստսէրք աստուածոց բազմաց՝ ոչ աստուածակերպ պահելոյն յերկար ժամանակս, ուր նա միայն փոխան ամենեցուն բաւական էր։

Ընդ դարձ արարեալ՝ի մեր բանս, եթէ նոցա զբռնութեանն և պահպանութեանն չհմարիտք իցեն, և երջանկութեն աստուածուհի ոմն, ընդէր ոչ սա միայն կարգեցաւ՝ի պահպանութեն՝ որ կարողն էր մատակարարել զամենայն, և հեշտեաւ առնել երջանիկ. զի՞որ ցանկայ իմիք յայլնոչ պատճառել՝ բայց զի երջանիկ լինիցի։ Այն զի՝ էր վասն կարի անպատան հաստեաց տունն ախպիսում աստուածոյ Ոչ՝ուհուղոս՝յետ բազում իշխանաց հռովմայեցւոց. ընդէր նա լինքն Հռոմուլոս՝ որ ցանկայր հիմնարկել քաղաք բարեբաստիկ, ոչ կատոյց նմա տաճար գլխաւոր, և առայլ դիս լինել աղաչաւոր. ուր չպակասէր նմա ինչ, եթէ երջանկութեն մեծ կայր. քանզի և ոչ նա լինքն լեալ էր նախ թագաւոր, և ապա՝ որպէս Համարիմն՝ աստուած, եթէ չէր նմա խնամածու աստուածուհիդ այդ։ Բրինչ ապա կարգեաց հռովմայեցւոց աստուածս զՅանուս, զՔամազդ, զՔրէս, զՊիկոս, զՓաւնոս, զՏիբերինոս, զՀերակլէս, այլովքն Հանդերձ։ Նոր վասն Տիտոս Տատիոս յաւել զԿռոնոս, զՎակ, զՔեգակն, զՉսկին, զՀեփեստոս, զՂոս, և զայլսն եւս, ընդ որս և զաստուածուհին Կլովակինէ, զանց զերջանկութեամբն արարեալ։ Ընդէր և Կռւմս յաձախեաց և զայլ դիս արուականս

և իգականս բաց յերջանկութենէ . Թերևս յայնչափ ամբոխին միջի վըխտեաց տեսանել զսա : Պաքէն և Հոսիլոս Թագաւոր ոչ արդեօք իբրու աստուածս նորս Հաշտարաս՝ ի նեբքս մուծանէր զերկիւղ և զդալուկն , և Թէ զերջանկութիւնն ծանուցեալերև պաշտեալ : Ա՛ան զի եթէ երջանկութիւնն մերձ կայը , ամենայն երկիւղ և դեղնութի՛ ոչ եթէ իբրու քաւեալ մեհենէր անտի , այլ որպէս ի բաց վտարեալ փախստեայ գնայը :

Վարձեալ զի՞րդ էր , զի Հռովմէականն տէրութիւն ընդարձակեալ աՀեր , և տակաւին ոչ ոք երջանկութի՛ տանէր պաշտօն . և Թերևս վասն այն առաւել մեծ եղև տէրութին , քան Թէ երջանիկ : Վանզի որպէս երջանկութի՛ չէմարիտ լինէր անդ՝ ուր չկայը ՚ածպաշտութի՛ չէմարիտ . զի ՚ածպաշտութի՛ է ստոյգ պաշտօն ՚ոյ չէմարտի , և ոչ եթէ պաշտօն սուտ աստուածոց , մանաւանդ Թէ դիւաց : Սակայն և զկնի Թուականից աստուածոցն կարգելոյ զերջանկութի՛ , եկն եՀաս Թշուառութի՛ մեծ քաղաքական մարտից . գուցէ արդարապէս՝ ի ցասումն էր շարժեալ երջանկութի՛ն , զի կարի անագան Հրաւիրեցաւ , և այն ոչ առ՝ ի պատիւ՝ քան Թէ յարհամարՀանս , ուր զոյգ նմին պաշտէին զՊրիապոս և զԱլեվակինէ և զերկիւղ և զդեղնութի՛ և զտենդ և զայլն , որ չէին աստուածք պաշտելիք , այլ յանցաւածք պաշտողացն :

Ո՞ւր Թողից զայն , զի եթէ Հաճոյ Թուեցաւ խաՀն ընդ անարգ այնմ խուժանի պաշտօն ընծայել երջանկութի՛ն այնպիսում մեծի աստուածուհւոյ , ընդէ՞ր գոնէ ոչ մեծապատուագոյն քան զայլսն լինէր պաշտեալ . ո՞ Համբերել կարէի՞ր զի ոչ կարգեցաւ նա ոչ ընդ խորհրդական դիս՝ զորս ասեն ՚ի խորհուրդ մտանել ընդ Պատմագրայ , և ոչ ընդ դիս զորս ընտրեալս կոչեն . ուր պիտոյ էր կանգնել նմին տաՃար՝ տեղւոյն բարձրութի՛ն և արարուածոյն չքեղութի՛ դերազանցեալ առ այլսվքն . ընդէ՞ր ոչ տուաւ նմա լաւագոյն ինչ քան նմին Պատմագրայ . քանզի և ո՛ այլ չնորՀեաց Պատմագրայ զԹագաւորութի՛ն՝ բայց նոյն լինէն երջանկութի՛ն . եթէ արդարեւ ՚ի Թագաւորել անդ լեալ էր՝

նա երջանիկ ։ Երջանկութիւն առաւել իմն է քան զթագաւորութիւն . վասն զի առանց յերկուանալոյ գիւրին է գտանել զմարդ, որ խնդայցէ երկիւղիւ ընդ լինելն թագաւոր . բայց ոչ է գտանել զոք՝ որ զերջանկին լինել չկամիցի ։ Այլ իբրև եթէ նոքին աստուածքն հմայութիւք ինչ կամ այլով օրինակաւ՝ որով համարին պատգամ հարցանել, լինելին հարցեալ յաղագս այսր , եթէ կամիցին արդեօք պատուով տեղի մատուցանել երջանկութեանն , թէ և զբաւեալ լիներ զոգեաց յայլոյն տաճարաց կամ ի սեղանոց տեղին՝ առ ի կանգնելոյ տաճար մեծ և բարձրաբերձ երջանկութեանն, անշուշտ Ադրամազդ ինքնին յանձն առնուցէ՝ զի գկատար կապիտոլեան բլրոյն ունիցի նա ինքն երջանկութիւն . քանզի ոչ ոք հակառակ կայր երջանկութեան՝ բայց նա ևեթ որ թշուառ լինել կամիցի . այլ անհնար է գտանել զոք այնպիսի ։ Եթէ այսպէս հարցեալ լիներ Ադրամազդ , ոչ առնէր բնաւ զոր ինչ արարին նմա երեքին աստուածքն՝ Ադիս , Տերմինոս և Յավենտաս . որք չկամեցան տալ տեղի իւրեանցն գլխաւորի և արքային ։ Վասնզի որպէս կայ ի գիս նոցա յորժամ Տարկունիոս Թագաւոր չինել կամէր զԿապիտոլիոնն, և տեսանէր զի զվայրն առաւել արժանաւոր և պատշաճող Ադրամազդայ՝ կալեալ էր այլոց դից, ոչ իշխեաց հակառակ ինչ գործել նոցուն կամաց . և հաւանեալ յանձն՝ Եթէ նոքա յօժարամիտ զինքեանցն այնպիսւոյ աստուածոյ և իւրեանց իշխանի , իբր զի բազում կայրին անդ՝ ուր Կապիտոլիոնն հաստատեցաւ , եհարց գուշակսն եթէ կամիցին արդեօք տեղի տալ Ադրամազդայ . և ամենեքեան նոքա հաձեցան զինքեանել , բաց ի Լիչատակելոցն՝ Ի Տիս , ի Տերմինեայ և ի Յովենտայ . վասն որոյ այնպէս կառուցաւ Կապիտոլիոնն , զի և սոքա երեքին ի ներքս անդ մնայցեն . բայց այնպիսի մեծին նշանաւոր, զի հազիւ տեղեկագոյնքն գիտեին զայս ։ Ադդարեւ ոչ այսպիսւորէն արհամարհէր Ադրամազդ զերջանկութեին , որպէս ինքն արհամարհեցաւ յերեքունց անտի նշանակելոց ։ Ամենայն նոքին իսկ որք ոչ զինքան Ադրամազդայ , զինքանչին ապաքէն երջանկութեանէ, որ թագա-

ւորեցոյց նոցա զ[՝]Քամազդ ։ Կամ եթէ զիջանէին իսկ ոչ, ոչ եթէ յարհամարհանս նորուն զայդ առնէին, այլ զի առաւել կամէին՝ի տան երջանկութեան անշնաս լինել, քան առանց նորա յիւրեանց սեպհական տեղիս պերճանալ ։

Այս եթէ այսպէս՝ի մեծանիստ և՝ի գերակայ վայրի հաստատեալ լինէր դիցուհին երջանկութիւն, ՝ի միտ առնուին քաղաքացիք՝ յումմէ հայցելի էր օգնականութիւն ամենայն խնդրոց բարեաց. որով խրատեալք անդստին՝ի բնութիւն՝ի բաց լքանէին զանպիտան բազմութիւն այլոց դիցս, զերջանկութիւն միայն պաշտէին, նմա միայնոյ աղերս արկանէին, ՝ի միոյն և՝ի միայն եթէ տաճար երթևեկէին քաղաքացիք՝ որք երջանկանային կամէին, և չէր որ՝ որ զայդ չկամէր. և այսու օրինակաւ ինքն յիւրմէ խնդրեալ լինէր՝ որ յամենեցունցն խնդրելոյ ։ Վասնզի զինչ ինչ առնուլ որ կամի յաստուածոյ ումեքէ՝ բայց զերջանկութիւն, կամ զպատանկանեալն երջանկութիւն ըստ իւրոց կարծեաց ։ Վասն որոյ եթէ երջանկութիւնն ինքն իշխան է լինել ընդ ումն և է մարդոյ, և է իսկ իշխան՝ եթէ իցէ աստուած, որ անմտութիւն է հայցել զայն յայլմէ աստուծոյ, բաց՝ի նմանէ՝ յորմէ առնուլ կարող ես ։ Զայս զայդպիսի դիցուհի զեր՝ի վերոյ այլոց դից պարտական էին պատուասիրել տեղւոյն չքեղութիւն ։ Վասնզի որպէս գոյ ընթեռնուլ առ նոսա, (ըստ Պլինիոսի և Վիդիոսի) նախնի հռովմայեցիք զանձանօթ ոմն Աումմանոս՝ գիշերային շանթառաք առաւել պաշտէին քան զ[՝]Քամազդ, որում ընծայեն զտուրն ջենային շանթ ։ Այլ յետ կառուցանելոյ զՅոյակապ և զարմանաքերճ տաճարն [՝]Քամազդայ, անդր յաձախելով բազմութիւնն սակս մեծափառութեան տանն, հաղիւ գտան՝ եր որ՝ որ զանուանն գիտեր Աումմանեայ անլուր ։ Եթէ չիշխէր ընթերցեալ ուրեք ։ [՝]Զդ եթէ երջանկութիւն չէ աստուած, զի և իրօրէն պարգև է նա այլ, զնոյն ինքն զաձ խնդրել արժան է, որ զայն տալ կարող է. և այսպէս՝ի բաց թողցի սուտ աստուածոյն բազմութիւն կռոտական, որում ընդ երթայ խուժանն մարդոց անմտաց, ընծա-

յուցեալ Քրիստոսեան զպարգևն ՅԱՅ, և ամբարհաւաճ կամացն խաւուարէն զայրացուցեալ զնա, որոյ են պարգևք։ Լայս թէ ոչ յար ի թշուառութէն լիցի՝ որ զբերկանկութէնն պահ տէ ՅԱԾաբար, և զնա՝ զերկանկութէնն տուիչ՝ անտես առնէ. զոր օրինակ միշտ սովեալ կայցէ մարդ՝ որ լիզանիցէ զՀաց ի նկարի, և ոչ խնդրիցէ ի մարգոյ՝ որոյ կայ հաց առոյգ։

ԳԻ ՅԱՒԱՍ ԻՒ

Ջ՚ի պատճառանս կարկառեն հերձանոք՝ ի պաշտելն զպարգևան ՅՈՅ իբրու աստուածս։

ԱՆԱՑ ի քենէն առնուլ արժան է զպատճառս նոցա։ Լուեր. միթէ այնչափ անմտացեալս համարիցիք զնախնիս մեր, մինչև չգիտել թէ պարգևք էն այսոքիկ ՅԱԾայինք, և ոչ աստուածք. այլ քանզի գիտէին՝ թէ ոչ ուժք չնորհին այնպիսիք բայց ի տուչութէ աստուածոյ ուրուք, չըգտանելով զանուանս աստուածոյն՝ յանուն իրացն յորոց ջնին զաստուածսն՝ յորոց համարէին յառաջ գալ, փոխադրելով զՅայնսն. զոր օրինակ ի պէլոմ ձայնէ՝ որ է մարտ, կոչեցին Պէլլոնա, և ոչ Պէլլում. ի ֆոնա ձայնէզ որ է օրոց, ասացին Ֆունկնա, դիցուհի օրոցաց, և ոչ Ֆունա. ի պէձէս բառէ, որ է արմտիք, ասացին Պէձիցիա. ի ֆոմա բառէ, որ է պտուղ, կոչեցին Փոմոնա. ի պօս ձայնէ, որ է արջառ, ասացին Պուպօնա։ Կամ երբեմն առանց փոփոխութէ բառին՝ զանուն իրացն պահէն. զոր օրինակ Փեքունիա ասացին, այսինքն դրամ, զայն աստուած՝ որ տայ զդրամ, և ոչ զդրամն զի ասոյն աստուած համարեցան. ոմնպէս Յաջաբինութէի ձայնեցին զդիցուհին՝ որ տայ զառաքինութէն. Պատիւ զայն, որ տայ զպատիւ. Հիաբանութէի զայն, որ տայ զմիաբանութէն. Յաղթութիւն, որ զյաղթութէն տայ։ Յայս նմին օրինակի, ասէն, յորժամ Հրջանկութէին աստուածուհի ասէ, ոչ նոյն ինքն տուեալն խնամի, այլ տուողն նորին։

ԿԻՐԻԱ ԻՆ

Յաղագս պաշտելոյ զմի Աստ միայն, որոյ անուն Թէ և անձանօթ իցէ, բայց իմանի առաջ երջանկութեանէ լինել։

Ո՞ՒԱՅԴ զնոցա պատճառանս ընկալեալ մեր, հեշտեաւ իմն Թերևս զոր կամիքն՝ հաւանեցուցանիցեմք այնոցիկ՝ որոց սիրտ ոչ կարի խստացեալ իցէ։ Վ՚ասն զի եթէ մարդ դոյ ազատ հասողութեի խելամուտ է՝ Թէ միայն աստուածոյ ուրուք է զերջանկութեի ընդհէնև զայս իմացան մարդիկն զակատեալք՝ ի պաշտօն աստուածոյ յոլովագունից, ընդ որս և Թագաւորի նոցա Վ՚ամազդայ, և զի անգիտաց նային զանուն տուողին զերջանկութեի, իբրև անուամբն կոչել ընտրեցին զնա՝ յորմէ համարեին տուեալ, այսու ասպա դատեալ կնքեցին՝ Թէ և ոչ Վ՚ամազդ կնքնին՝ զոր պաշտէին, կարող է տալ զերջանկութիւն, այլ նա միայն զոր երջանկութենէն անուամբ պաշտելոյ արժանի համարէին։ Ո՞դոյն և ես հաստատեմ ասելով, Թէ յ՚աստուածոյ ումեմնէ կնքեանց անծանօթէ հաւատացեալն զտուրս երջանկութէ. ուրեմն ապա նա կնդրեսցի, նա պաշտեսցի. և այս շատ է։ Ի բաց փարատեսցի շրմունդն դիւացն անթուելեաց. այնմ և եթէ չլինի բաւական ածէ, որում չէ բաւական պարգև նորա. այնմ ասեմ չէ բաւական առ՚ի պաշտելոյ ածն տուիչ երջանկութէ, որում չէ բաւական նոյն կնքն երջանկութիւնն տուեալ։ Վ՚ասն որում այս բաւական իցէ, զի և ոչ այլոյմ առաւելագունի ըղձանալ ունի մարդ, այնպիսին ծառայեսցէ միոյն այ երջանկութենէն պարգևատուի։ Վ՚ա ոչ է այն զոր Վ՚ամազդն առնուանակոչեն. զի եթէ երջանկութէ զնա Հանապազէին պարգևիչ, ոչ արդեօք զայլ ոք աստուած կամ աստուածուհի բարեբար՝ երջանկութէ անուամբն խնդրէին. և ոչ զՎ՚ամազդ կնքնին՝ ի պաշտօն գրէին յեթին Թշնամանօք. զի սա օտարին կանանց ասի բռնաբարող, և մանկատուիս յափշտակիչ գեղանի մանկան (Գանիմեդեայ)։

ԳԼՈՒԽ Լ.Ջ.

Յաղագս Թաւերական խաղացն, զոր դիպն կատարել պահանջէին ի դիցապաշտից Բերանց։

Այլ զնախահաւատեալսդ Հռոմերոս ստեղծաբանէր, ասէ Տուղլիոս Կիկերոն, զմարդկայինքս փոխառեալ առ աստուածան։ Լաւ ևս կամիմ, ասէ, զնոցայինսն առ մեզ փոխաբերել։ Այլ յիրաւի անդոմնեաց այրն մեծարոյ զքեզ Թողն յօգիչ ոչ գործուիցէ դից։ Այլ վասն ասպ զնացն Թաւերականս, յորս այսօրիկ յիշատակին, յերգս արկանին, արարուածովք երևելեացն, ի պատիւ դիցն վերընծային, ընդ ձեռնական պաշտամունս արձանացուցչին արք յորնիմաստք։ Այղ բողոք կալցի աստանօր Կիկերոն՝ մի ընդդէմ կեղծեացն քերթողաց, այլ օրինադրութեց առաջնոցն։ Այլ միթէ չունին և նոքա բողոքել մեզ զինչ գործեցաք. ինքեանք դիցն ժառելով կամեցան ընծայել զայսոսիկ ի պատիւ Բերանց, ուժգինս հրամայեցին, հարուածս սպառնացան՝ եթէ չլինիցին. ուր երբէք զանց եղև, վրէժս խստագոյն պահանջեցին. և յորժամ անտես արարեալն ի գործ եդաւ, յուցին ի հաշտութիւն գալ։ Այհա ի նոցայն առաքինութիւնս և ի զարմանագործութիւնս յիշատակեալ է այն՝ զոր ասէլցին եմ։ Վիւզականի ումեմն Հռոմայեցւոյ՝ անուն Տիտոս Լատինիոս, որ տանուտէր էր, ասացաւ յանուրջս՝ ազգ առնել ծերակուտին, զի զարձեալ սկսանիցին խաղքն Հռոմկականք. իբր զի յառաջնում աւուր խաղացն՝ չարագործի ուրումն մատնելոյ ի տանջանս յանդիման ժողովրդեանն՝ անհաճոյ էր դից որ խուր հրամանն, որք սիրտիանս իւն խնդրելին ի խաղաց աւուրն։ Իբրև այրն խրատեալ յանուրջս ոչ իշխեաց ի յաջորդ աւուր կատարել զհրամայեալն, յերկրորդում դիշերի պըրն դագոյն ևս հրամայեցաւ նմա. և յոչ կատարելն, կորոյս զորդի իւր։ Ի դիշերին երրորդում ասացաւ առ այրն, զի

Թէ ոչ կատարեսցէ՝ պատուհաս ՚ի վերայ կայ նմա մեծ եւս։ Այլ ոչ այնպէս համարձակեալ նորա՝ անկաւ ՚ի խոթումէն դժնդակ և զարհուրելի, մինչև ըստ խրատու բանիցեակամայ զեկոյց առենակալաց կիրճն, պատգարակաւ աճեալ առ ծերակոյտ անդր. ուր իբրև պատմեաց զերազն, անդէն վաղվաղակի դարձաւ յառաջումէն, և հեռի եղ գնաց ողջանդամ։ Յապուշ կրթեալ ծերակուտին ընդ սքանչելին, խորհեցաւ չորեքկին գումարաւ դրամոց զնաղն նորոգել։

Ոչ արդ ո՞ր ողջամիտ չտեսանիցէ, Թէ մարդկին վտարանդեալք ՚ի ծառայումէն այսոց չարաց, յորոց իշխանումէ միայն ՚այ ընորհքն ապրեցուցանեն ՚Ի՞նչ Յիսուսիւ տերամբ մերով, բռնադատեալք լինելին ընծայաբերել դից զնրս այնպիսի, զորս ուղղատես խորհրդով կառոյց էին զազիրս գոլ դատել։ Այլաքէն ՚ի խաղն յայն յեղյեղելին քերթողական ոձրագործումէնք դից. և նոցունց իսկ ստիպելով ՚ի հրամանէ ծերակուտին խաղքն նորոգելին, ՚ի նոյն խաղս զՐամազդ որպէս ապականիչ պարկեշտումէ երգաձայնելին կատակերգակքն աղտեղասելք, և գործով ձևացուցանելին, և անառակումէ հաշտարարք դից լինելին։ Թէ արդարեւ կեղծեաք էին իրքն, պարտ էր Րամազդայ զայրանալ ընդ այն. իսկ եթէ ընդ ստայօդ յանցանս իսկ զուարճացայր նա, զնաւրդ էր պաշտել զնա առանց ծառայելոյ սատանայի։ Եթէ սա ըզհռովմէական տերումէն հիմնարկեր, ընդարձակեր և պահպաներ, որ անարգագոյն էր քան զամենայն մարդ հռովմայեցի՝ այնպիսեաց գաղջումէց առեցող. միթէ սա զերջանկումէն տայր, որ չարաչար պաշտօն ընդունէր. և եթէ չընդունէր, ևս չարաչար ՚ի ցասումն բրդէր։

ԳԼՈՒԽ ԻԱ

Յաղագս երրեակ ազգի դից, զորոց խոսեցաւ Սկեվռղա քրմապետ։

ՊԱՏՄԵԱ, կայ ՚ի գիրս դոցա, Թէ մեծիմաստ քրմապետն Սկեվռղա զերիս ազգս աստուածոց ասաց առնել, զմի ՚ի բանաստեղծից, զմիւս այլ յիմաստասիրաց, և զերրորդն յիշխանաւորաց քաղաքի։ Առաջին ազգն շաղակրատանս ասէ լինել, զի բազում ինչ պատճառեն անարժանս աստուածոց։ Երկրորդն ոչ պատահ է քաղաքաց, իբր զի ունի աւելորդս ինչ, և այլ ինչ՝ զոր ՚ի սասակար է գիտել ժողովրդոց։ Յաղագս աւելորդացն չէ հոգալի. քանզի և առ իրաւագէտս ասի. Աւելորդք ՚ի սահն ինչ ոչ։ Իսկ որ այնորիկ իցեն՝ որոց ՚ի ծանօթս Թէ բազմութիւն եկեալ ՚ի սահս գործեն։ Այս են, ասէ, զի տեղ Թէ ոչ են աստուած Հերակլէս, Ասկղեպիոս, Կաստոր, և Պողիտեւկիս. քանզի առ իմաստունս յայտնի է՝ Թէ սոքա մարդիկ էն, և մարդկապէս պակասեցան։ Այս ևս՝ ՚ի սահս է, ասէ, գիտել՝ Թէ աստուածք չունին ՚ի քաղաքի զՀմարիտ պատկերս. և Թէ աստուածն Հմարիտ չէ արու կամ էգ, չունի զհասակ, և ոչ զորշեալ անդամս մարմնոյ։ Այսոսիկ ահա հմարի քրմապետն գիտել ժողովրդոց. զի խիթայ ընդ սուտն լինել։ Այսպա ուրեմն յօգուտ կարծէ նա՝ զի քաղաքք ՚ի պատրանս կայցեն զսա կրօնից։ Զդոյն և Աարրոն ասել ոչ երկմտեաց ՚ի գիրս ՚ՁՀայրն իրաց։ Այ՝ ՚ի չքնաղ կրօնիցն, յոր ապաստան լինիցի տկարն ՚ի պէտս փրկուէ, և ՚ի խնդրելն զՀմարտութէն փրկարար, կարծեացն՝ Թէ լաւ է նմա պատրիլ։ Իսկ Թէ յինչ պատճառս մերժիցէ Սկեվռղա զբանաստեղծականն ազգ դից, ոչ Թաքուն է ՚ի նոցունս իսկ գիրս. վասն զի այնպէս ինն արհամարհ կացուցանէն զդիս, զի և ոչ լաւացն ՚ի մարդկանէ արժանի լինին Համեմատութէն. քանզի զուսեմնէ ասեն գողանալ զայլ

մէ՝ ընալ. նոյնպէս գարձեալ ասել և գործել նոցա իրս օտարոտիս և զազիրս և անդէպս։ Զոր օրինակ ասէն, Թէ երեք աստուածուհիք առ միմեանս ի պայքար մտեալ էին յաղագս մրցանակի գեղոյ. որոց երկուքն իբրև յաղթեցան Յ՝ յաղթականէ, զՏրոյա կործանեցին։ Ա՝յս ինքն Յ՝ունադդ փոխաբերեալ էին յԱ՝ղն կամ՝ի կինդ, զի կարիցէ անկանիլ ընդ կնոջ. և Թէ աստուածուհին ամուսնացեալ էին ընդ մարդոյ. և Կռնոսի կնեալ էին զիւր որդիս։ Զ՝իով բանիս, չիք ինչ կեղծեալ հրեշաւոր կամ մոլեկան, որ ոչ գտանիցի առ նոսա, կամ օտար էին՝ի բարուց աստուածոցն։

Զ՝ դու Զկեվղոզ՝ քահանայդ մեծ, անհետ արա զբաղանդ՝ Թէ կարող ինչ ես. հրամայեա ժողովրդոց չընծայել պատիւ այնպիսի դիցն անմահից, յորում զարմանալ պիտոյ լիցի ընդ ոձիրս աստուածոցն, և յօժարիլ առ՝ի նմանողութի՛ւն ուր մարթ իցէ։ Իսկ եթէ պատասխանի առնիցէ ժողովուրդն, Թէ քահանայապետդ՝ի նեռքոս առ մեզ ածիք զայսոսիկ, յայնժամ զաստուածան աղաչեա, յորոց՝ի Թախանձելոյ հրամայեցէքն, մի այլ և այս պատուիրել՝ զի այնպիսի սպասք մատուսցին ինքեանց։ Զ՝ի Թէ չար են այն իրք, ուստի և ամենևին անվայելք մեծութե՛ դից, անարգութիւն մեծ է նոցա՝ զայնպիսիս զնոցանէ ստեղծանել անպատուհաս։ Զ՝յլ նոքա ոչ լսեն քեզ, զի դևք են, խոտորնակս ուսուցանեն, ընդ աղտեղութիւնս զուարճանան. ոչ միայն զայնպիսի առասպելս չգրեն անարգանս ինչ, այլ առաւել անքերելի համարին անարգութե՛, եթէ ոչ կատարեսցին այնք՝ի ոճս իւրեանց։ Զ՝այս եթէ զնա ինքն զ՝բամադդ Թախանձիցես հակառակ խաղուցն այնոցիկ, զայն իրաւունս պատճառեալ առաւելապէս՝ զի յոլովս զնորա յանդուցածս՝ի մէջ ածեն խաղքն Թատերականք, ոչ ապաքէն Թէ և զնա աստուած անուանէք՝ տեսուչ և խնամիչ տիեզերաց, անարգութե՛ մեծ նմին գործէք, զոյդ ընդ այլ դիս զնա պաշտելն կարծելով, որոց Թագաւոր զնա ասէք լինել։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Մխեթ՝ի կանգնումն և յընդարձակութիւն Թագաւորութեանն եղեալ. Նպաստիչ հռովմայեցւոց գերյաջողութեան։

ԱՊԱ ուրեմն զհռովմէականն տէրութիւն ոչ միով իւիք կարողանայիւ մեծացուցանել և պահպանել աստուածաբ այնպիսի՝ որք այնպիսեաբք յարգանաբք հաշտեին, մանաւանդ թէ լինէին ամբաստանեալք. մինչ զի մեծ ևս յանցանաբք էին նոցա ընդ ստացող կեղծիսն հեշտանալ, քան եթէ աստուածալքն զնոցանէ չնմարիտք լինէին։ Վասն զի եթէ՝ի բարգաւաճումն տէրութեանն զօրէին ինչ դիք, Յուսնոց առաւել անկ էր պարգեւդ այդ մեծ. զի նոքին այսպիսեաբք նուիրականաբք Թատերական խաղուց պաշտեցին զդիս առաւել պատուով և շքով։ Օ՛ի և ոչ զանձինս աստատացուցին՝ի կակծելեաց խօսից քերթողաց, տեսանելով զի և զաստուածսն խածանեն նոքա. այլ ետուն հանմարձակութիւն թշնամանել զմարդ զոր և կամիցին. և ըզնոսին իսկ կատակերգակս ոչ պիղծս ինչ համարեցան, այլ արժանիս իսկ երևելի գործակալութեանց։ Վասն զոր օրինակ յայլոցանց հռովմայեցւոց ստանալ դրամ ոսկի, թէպէտ և ոչ ձանաչէին զաստուած ոսկեայ, նոյնպէս էր նոցա ստանալ զարծաթի և զպղնձի՝ առանց իսկ պաշտելոյ զՎրգենտինոս և զնորուն Հայր զԳոսկուլայն. ըստ նմին կարգի և զայլսն, զորս բովանդակ շարել դանդաղիմ։ Այսպէս ապա և զթագաւորութիւնն՝ի չհաձել ձըմարտին այ, ունել բնաւ ոչ կարող էին. իսկ եթէ զգաստութիւն սուտ աստուածոց անգիտանային կամ արհամարհէին, և զմին զայն ծանուցեալ՝ անկեղծաւոր հաւատովք և վարուք պաշտէին, անշուշտ լաւագունի և թագաւորութեանն աստանօր կարէին լինել ստացող՝ քան զոր ունէին, և յետ աստեացս զմշանջենաւորն ընդգրկէին, եթէ ունէցին ատ, և եթէ չունէցին։

ԳԼՈՒԽ ԻԹ

Յաղագս սատանայ գուշակմանն՝ որով կարծեցաւ նշանակիլ զօրութիւն և ամրութիւն հռովմէական թագաւորութեան։

Իսկ այն որպիսի իցէ արդեօք՝ զոր չքնաղ ինն գուշակութիւն լինել ասացին, զիարդ մի յառաջ չիշատակեաքն, զայն թէ Ք՛րէս և Յերմինաս և Յովենտաս տեղի տալ ոչ կամեցան Թագաւորի աստուածոյն Ք՛րամազդայ։ Վասնզի ասեն նշանակեալ սովիմբ, եթէ արիական ազգն հռովմայեցին՝ ոչ ումեք թողուցու զտեղի՝ զոր կալեալ ունի. և թէ ոչ ոք չարժիցէ զսահմանս հռովմէականս զօրութեամբ աստուածոյն Յերմինեայ. և թէ հռովմէականն առոյգ հասակ ոչ ումեք խոնարհեսցի, ունելով զաստուածուհին Յովենտաս։ Ք՛ղէ տեսցեն արդ զիարդ ունին զՔ՛րամազդ որպէս թագաւոր աստուածոյ իւրեանց, և տուող ինքեանց զթագաւորութիւն, ուր այդ գուշակութիւնք հակառակորդ զնա արարին, և զոն տալ նմա տեղի՝ չքնաղ ինն համարեցան լինել։ Ք՛այլ թէ ձշմարիտ իցեն այդոքիկ, չունին ինչ երկնչել. զի չառնուն յանձն ասել, թէ աստուածքն տեղի տայցեն Վնէի, որք չկամեցան տալ Ք՛րամազդայ. քանզի ամբողջ ինալով սահմանաց տերութեանն՝ մարթ էր նոցա տեղի տալ Վնէի՝ թէ ի կայից տեղեացն, և թէ առաւել ևս ի սրտէ հաւատացելոց։

Ակայն մինչ չև Վնէի եկեալ մարմնով, և մինչ չև այսոքիկ գրեալ էին՝ զոր ի նոցա գրոցն յառաջ բերեմք, տակաւին յետ լինելոյ այնր գուշակութէ առ Յարկութիոսիւ արքային, երբեք երբեք հարուածեցաւ զօրն հռովմէական՝ ի փախուստ դարձեալ և սուտ եղոյց զգուշակութիւնն՝ որով Յովենտասն այն չէր զկնեալ Ք՛րամազդայ. և արիական ազգն ի զօրանալ և ի զիմել գաղղիացւոց՝ ի նոյն իսկ Հռովմ նկուն եղև, և սահմանք

տէրութեանն փոքրկացան՝ ի հատանել Հնիբաղալ զքաղաքս բազումս։ Յայսէս ահա գառարկացան գու-շակութեանցն պարծանք, և մեաց որ առ Յրամազդն հեստուքն՝ ոչ աստուածոյն, այլ դիւաց։ Ոչ ման զի այլ և չտալ տեղի, և այլ՝ դառնալ անդրէն ուստի տըւեալ էր։ Նայց և զհետ այնր՝ ի կողմանս արևելից՝ կա-մաք Յդրիանու կայսեր փոփոխեցան սահմանք հռովմէա-կան տէրութեն. քանզի երիս գառաս ականատեսս՝ զՀայաստան աշխարհ, զԻլագետս, և զՅորեստան դարձոյց նա ընդ իշխանութիւն Պարսից. մինչ զի Թուխ Թէ Տերմինոս այն աստուած՝ որ ըստ նոցա պահպանիչն էր հռովմէական սահմանաց, և ըստ հանձարեղն գուշակու-թիւն չէր տուեալ տեղի Յրամազդայ, առաւել իմն երկու-ցեալ իցէ Յդրիանոսէ ի Թագաւորէ մարդկան, քան ի Թագաւորէ աստուածոց։

Նայլ և ժամանակս ի գրաւել անդրէն հռովմայե-ցւոց զգառառան յիշատակեալս, առ մեզ ահա գարձեալ յետս դահանջեցան սահմանքն, յորժամ Նուլիանոս ու-բացող՝ մոլեալն այն ի պատգամն դից, անխորհուրդ իմն Թափով հրամայեաց այրել զնաւսն նպաստակաւորս. որով անյոյս մնացեալ բանակին, և Նուլիանոս իսկ արագ պա-կասեալ ի խոցմանէ Թշնամեաց, այնպէս իմն ի նեղ անկաւ բանակն, մինչև ոչ ումեք էր ապրել, խուժելով Թշնամեացն ընդ ամենայն կողմանս, և զօրականին խառ-վելով սակս մեռանելոյ կայսերն, եթէ ոչ դաշամբք հաշ-տուԹէ՝ անդանօր կնքեալ լինէին տէրութենն սահմանք՝ ուր այժմ կան, ոչ այնչափ կորստեամբ՝ որչափ Յդրիա-նոսն յանձին կալաւ, բայց և ոչ դուշնաբեայ փոխոխու-Թիւ։ Յայս ուրեմն ըստ զրաբան գուշակութեանն Տերմինոս ոչ ետ տեղի Յրամազդայ, բայց ետ կամացն Յդրիանու, ետ և յանդգնութեն Նուլիանու, այլ և հարկի Նովիա-նոսի։ Տեսին զայսոսիկ մտաւորքն և երևելիք ի հռով-մայեցւոց, բայց ընդդէմ դնել սովորութեանէ քաղաքին կա-պելոյ ի դիւական պաշտամունս՝ տկարանային. զի և ին քեանք առնուին ի միտ արդեօք Թէ մտոհի ի այնմհնացն,

սակայն բնութիւնէ իրաց՝ որ կարգեալն է ընդ տեսչութիւն և հրամանաւ միոյ Աչմարտին այլ, զաւարեպաշտութիւնն կրօնս՝ զվայելչականն այլ, արժան վարկանելին ընծայել. պաշտելով զարարածս՝ և ոչ զարարիչն, որ է օրհնեալ յաւիտեանս։ Այրին այլ Աչմարտի օգնականութիւնէ կարօտ էին, զի առաքեցին ի նմանէ արք սուրբք, և Աչմարտիւ ետծապաշտք, որք սակս ստոյգ կրօնից մահ յանձն առնուցուն՝ առ ի բառնալոյ ի կենդանեաց անտի զկրօնս սուտս։

ԳԼՈՒԽ Ի.

Զբնէ ինչ յաղագս գից Հեթանոսաց խօսիցին և ինքեանք գիցապաշտք։

ԱՒԿԵՐՈՆ այր Հաւատմայ՝ ծաղր առնէ զգուշակութիւնք կամ զՀմայիւք, յանդիմանեալ զմարդիկ՝ որք ի ձայնից ագռաւու և ցնոյ խրատս կենաց կարկատեն։ Այլոյ ակադեմականաս այս այր՝ որ պնդէ զանհնարին ինչ անհաւատի լինել, չէ արժանի Հաւատարմութէ յայսպիսի իրս։ Այս նմա խօսս առնէ Պուկիլիոս Աղբոս յերկրորդ գիրն յաղագս բնութէ աստուածոց. ուր նա ինքն ի մէջ բերեալ զնոսին պաշտամունս իբր յիրաց բնութէ առեալս բնաբննականաս և իմաստասիրականաս, անդէն դժկամակի ընդ գիւտ դրօշելոց և ընդ կարծիս առասպելականաս՝ այսպէս խօսելով. “ Տեսանեմ ապաքէն՝ զի ի դեղեցիկ „ և ի պիտանացու գիւտից բնական իրաց՝ ի մտացա„ ծին և ի պաճուճեալ աստուածս ձգեցաւ բանն։ Աչտի „ ծնան կարծիք սուտք, և մոլորութիւնք խոտորկուք, և „ մնոտիապաշտնք գոգցես պառաւականք։ Աչանզի ծա„ նօթ են մեզ և կերպարանք աստուածոց և Հասակք և „ Հանդերձք և զարդարանք. այլ և ցեղք նոցա, ամուս„ նութիւնք, ազգականութիւնք և այլն ամենայն, յարմա„ րեալ ըստ օրինակի տակաւ բնութէ մարդկայնոյ։ Աչան„ զի և ոչ ոք կիրս մուծանէն ի նոսա, որպէս և ընկա-

„ լաք զդիցն ցանկութիւնս, հիւանդութիւնս, սրամտութիւնս. և
„ զոր օրինակ առաստղքն զրուցեն՝ մարտք և կռիւք ոչ
„ պակասեցին աստուածոց, ոչ միայն որպէս առ Հոմերոսի
„ կայ, յորժամ բանակք երկու զիմամարտք՝ ունն զայս
„ աստուած՝ և ունն զայն ունելին իւրեանց կողմանն պաշտ-
„ պանիչս, այլ և յորժամ զիւրեանցն առանձին մարտս
„ մղելին ընդ միմեանս կամ ընդ սկայից։ Ոչ այսպիսեաց
„ լինի զրուցել և հաւատալ անմտաբար, զի լի են ունայ-
„ նութիւք և թերահաւատութեամբ „։ Արդ զայսոսիկ առ
սեղեսան խոստովան լինին Ջատագովքն դից հեթանոսաց։
Զետ մնապաշտութիւն համարելոյ Արիկերմի զայսոսիկ,
ապա կրօնից անկատար գնեն զայն՝ զոր ինքն ուսուցանէ
ըստ ստոյիկեանցն աղանդոյ. զի ասէ. „Ես միայն իմաս-
„ տասէրք, այլ և մեր առաջինքն զատուցին զնապաշ-
„ տութիւն՝ ի կրօնից. քանզի որք զօրն ողջոյն կային յա-
„ զթիս, և զոհս մատուցանէին սակս ապրելոյ զաւա-
„ կաց իւրեանց, կռեցան աւելորդապաշտք „։

Իսկ արդ ո՞ր չիմանայ, զի Արիկերմն յերկինսէ՛ի
սովորութիւն քաղաքին՝ հնարի գովասանել զկրօնս նախ-
նեաց, և զայս որոշել կամի յաւելապաշտութիւն, բայց
զորպէսն ոչ գտանէ։ Վասնզի եթէ աւելորդապաշտք կամ
անապաշտք այնոքիկ կոչեցան յառաջնոց անտի՝ որք զօրն
ողջոյն ազօթէին և զոհէին, ո՛չ ահա և առաւել ստգտա-
նելի գտանին՝ որք սահմանեցին դրօշեալս աստուածոց՝
զանազանեալս՛ի հասակ և՛ի հանդերձս, և զ ցեղս աս-
տուածոց, ամուսնութիւնս, ազգականութիւնս. զոր և ինքն
Արիկերմն ստգտանէ։ Արդ եթէ պախարակին այդոքիկ իբր
անօտի պաշտամունք, այն ստգիտ պարտաւոր առնէ և
զդրօշելոցն սահմանիչս և պաշտօնատարս. պարտ առնէ
և զինքն զԱրիկերմն, որ թէ և պերձախօսութիւնն ազատա-
նալ նկարի յայսոսիկ, այլ յարդել ստիպի զնոյնս. և ոչ
զոր համարձակ բարբառի յայսմ վիճաբանութիւնէ՛ իչխէր
ընչախառն ասել յաւելապաշտութիւն։ Այլ արդ ընդրկս
մատուցցուք քրիստոնեաքս տեառն այ մերում, ոչ երկնի
և երկրի՝ որպէս Արիկերմն համարի, այլ այսմ որ զերկինս

և զերկիր արար . որ զնոսսի պաշտամունսն զայն՝ զըստ-
գտեալն ՚ի Յաղթոսէ գրեա Թէ իբր պապաջելով , բարձ-
բագոյն խոնարհութիւն Աստի և առաքելոցն քարոզութիւն
և Հաւատովք մարտիրոսաց՝ որք վասն Աշմարտութեան
մեռան , և ընդ Աշմարտութենէ կենդանի են , խլեաց կոր-
ծանեաց ոչ միայն ՚ի սիրտս բարեկրօնս , այլ և ՚ի մնոտիա-
գործ տաճարսն՝ ազատական ծառայութիւն իւրոցն ։

ԳԼՈՒԽ ԼՂ.

Ցաղագս կարծեացն Պարսից՝ որ Թէպէտ և ՚ի մերժել անդ զկարծիս ամբոխին ոչ Հաս՚ի գիտութենէ Աշմարտին ևս, բայց եդ վկայութիւն Թէ զի ևս արժան է պաշտել ։

Այս ինքն Պարսից , ընդ որ ցաւէ մեզ՝ զի զխաղսն Թա-
տերականս կարգեաց եդ ընդ աստուածպաշտական գոր-
ծըս , Թէ և ոչ իւրովսանն Հաւանութենէ , ՚ի յորդորել անդ
բազում ուրեք ՚ի պաշտելութենէ աստուածոցն իբրև կրօ-
նասէր , ոչ ապաքէն ինքնին խոստովան լինի , ոչ ըստ իւ-
րումն գատման զՀետ երթալ իրացն՝ զոր ինչ միանգամ
սահմանեալս յիշատակէ ՚ի քաղաքէն Հռովմայ , մինչև ան-
երկիւղ խոստովանել զի Թէ ինքն նորոգ չիներ զայն քա-
ղաք , առաւել ըստ բնութենն կարգի յարմարեր զաստուած-
սըն և զանուանս նոցա ։ Այլ քանզի կայր նա ՚ի մէջ հնոյ
ժողովրդեան , պարտ է , ասէ , զառ ՚ի նախնեացն ընկալեալ
պատմուճան անտուանց և մականունս անց՝ որպէս աւանդե-
ցաւն , և ըստ նմին գրել և հետաքննել զնոցանէ , զի յօժա-
րեսցի ժողովուրդն պաշտել զնոսա յաւէտ՝ քան անդ ոտնել ։
Որովք բանիւք ոչ ընդ աղօտ ակնարկէ այրն անօսրամիտ՝
Թէ ոչ հրապարակէ զամենեսին բանս , որք ոչ յաչս իւր և եթ
արհամարհք էին , այլ և նոցունց իսկ ժողովրդոց լինելին
անգոնանելիք ՚ի յայտնելն ։ Օ՜ այսոսիկ իմաստասիրելով
ինձ պարտ վարկայ դնել աստանօր , ուր և ինքն յայլում

վայրի ասէ յայտնապէս՝ի Հաւէնն զկրօնից, թէ բազում՝ ինչ Հմարիտս՝ ոչ օգուտ է դիտել ժողովրդեան. այլ եթէ սուտք ևս իցեն, օգուտ է ժողովրդեան Հմարտութեանն ունել կարծիս. նմին իրի և Հոյիք զնուիրապործութիս և զխորհրդածութիս լուսնի՝ և՝ի ծածուկ կատարէին, Հատանօր ահա՝ի վեր Հանէ զովանդակ Հանճար կարծեալ իմաստնոցն, որք կան յառաջնորդութեի քաղաքաց և ժողովրդոց։ Վասին այսպիսի պատրանօք մեծ իմն զուարճանային այսքն չարք, որք զպատրիչսն և զպատրեալսն միանգամայն գրաւեալ ունին. և՝ի նոցա իշխանութենէն ազատել՝ միայն Ա՛յ Հնորհացն է, ի ձեռն Հոյ Վիսի Հն մերոյ։

Վսկ դարձեալ նոյն մատենագիր նրբամիտ և բազմահմուտ, թէ նոքա ևեթ թուին՝ի միտ առեալ զինչ իցէ ՀՀծ, որք Հաւատացին զնա լինել Հոգի վարիչ աշխարհի շարժողութեամբ և բանիւ։ Ա՛ւ թէպէտ չէ ևս դադանէք նա այսու զՀմարտութեանն ուսումն, իբր զի ՀՀծն Հմարիտ ոչ միայն ինքն Հոգի է, այլ և բանական Հոգւոյ արարող և Հաստիչ, սակայն եթէ Համարձակէք ընդդէմ կանխակալ սովորութեանն, խոստովաներ ապաքէն զմի ՀՀծ պաշտելոյ արժանի, և՝ի նոյն թէ լադիր լիներ, որ և վարէ զաշխարհ շարժմամբ և բանիւ. և մնայր խնդիր ընդ մէջ և ընդ նա յայն աեթ, զի Հոգի զնա ասաց որպէս բանական, և ոչ յաւէտ՝ բանական Հոգւոյ ևս ստեղծիչ։ Վսկ և զայս, թէ Հռովմայեցիքն առաջինք աւելի քան զՀարիւր և չեօթանասուն ամ պաշտէին զաստուածն առանց դրօշելոց կամ պատկերաց. և եթէ ցարդ ևս այնպէս մնացեալ էր, ասէ, պարկեշտագոյն ևս լինէին աստուածոյն մեծարանք։ Ա՛ւ վկայ՝ բանիս Հաստատութեի Հանդերձ այլովք՝ի մէջ բերէ՝ և զՀրեականն ազգ. և աներկմտաբար յայս կինքէ զբանն, թէ որք զառաջինն յանդիման արարչին ժողովրդոց զդրօշուածս աստուածոց, նուազեցուցին՝ի քաղաքացւոց անտի զերկիւղն, և՝ի վերայ յաւելին զմոլորութի. քանզի իմաստնաբար խորհէր, թէ յանդգնութեե անդ դրօշելոց դիւրաւ

յարհամարհանս գայլին աստուածքն, Իսկ այն զի ոչ ասաց, աւանդեցեալն զմոլորութիւն, այլ թէ՝ ի վերայ յաւելչին, յայտ իմն առնել կամեցաւ՝ թէ առանց դրօշելոց իսկ արդէն կայր ի նոսա մոլորութիւնն։ Այսքան վասն յաւել նորա՝ թէ նոքա ևեթ խելամուտ եղեն՝ զինչ և ասէ զի զայս հոգի հաւատացեալն վարիչ աշխարհի, և զի պարզ կեչտագոյն գտանեաց առանց դրօշելոց ունել զկրօնս, ո՛չ տեսանէ՝ քանզի հուպ առ ձշմարտութիւն մատչի նա։ Վասն զի եթէ զօրէր ինչ նա հակառակ այնպիսի հնազեալ մոլորութեանն, արդարեւ դնէր թէ առանց դրօշելոց պարտ եւ արժան է զմի ասէ, զոր աշխարհի հաւատացեալ լինել վարիչ. և յայս մերձ եկեալ դիւրաւ արդեօք ի միտ առնայր զՀոգւոյ մերոյ զփոփոխելի բնութիւն. որով և իմաստասիրէր՝ թէ բնութիւնն անփոփոխելի է միայն ասէն ձշմարիտ, որ և զՀոգի արարչագործեաց։ Այլ զի այսոքիկ այսպէս, զոր ինչ միանգամ այդպիսի սրբ երևելի աւանդեցին ի գիրս իւրեանց զծանաւանս աստուածոց բազմաց, առաւել ի գաղանի խորհրդոց այ չարժեցան ի խոստովանել զնոսին, քան թէ փոյթ տարեալք ի հաւանեցուցանել այլոց։ Այմին իրի զոր ի նոցանէ առնումք վկայութիւնս, ի կրտամբութիւն այնոցիկ են՝ որք այն կամին առնուլ ի միտ, յորքան և յորպիսի չարիմաց իշխանութիւն դիւաց ապերջոյց զմեզ գերահարէ պատարագ արեանն սրբոյ հեղլոյ վասն մեր, և պարգևք Հոգւոյն՝ որ մեզն բաշխեցաւ։

ԳԼՈՒԽ Լ՛

Որովք արտաքին երևութիւք օգտակարութիւն կամեցան իշխանք հեթանոսաց Թողուլ զժողովուրդս կռոցն իւրեանց։

Այս դարձեալ ասէր յաղագս ծննդոց աստուածոց, թէ առաւել ի քերթողացն առեղծուածս հակամիտեալ են ժողովուրդք՝ քան ի ձշգրտութիւնս բնախօսաց. Նմին իրի

զորոշումն արուաց և իգաց, և զծնունդս դից յանձն առին նախնիք իւրեանց հին հաւատացեալք, դնելով ի նոսա ամուսնութիւնս։ Այսպէսին զայդ ոչ յայլ ինչ պատճառս է կարծել, բայց զի կարծեցեալ խոհականացն մարդոց իմաստնագունից հնարս իմն եղև՝ պատրել զժողովուրդն ի բանս կրօնից. և այսու ոչ լոկ պաշտել զդևս, այլ և զնոցին կրել նմանութիւն՝ որք ի խաբէին են զակատեալք։ Վասն զի զոր օրինակ դևք զառյինքեանց զպատրեալսն ևեթ կարող են զրաւականել, նոյնպէս մարդիկ իշխանք՝ ոչ զարգարսն ասեմ, այլ զնմանեալսն դիւաց, զյայտնի զսուտ ծանուցեալսն իբր ճշմարիտս առաջի դնելին ժողովրդոց պատրուակաւ կրօնից. այսու աղագաւ սկսագոյնս կա պեալ զնոսա յընկերութիւն քաղաքական, որով մարթասցին ունել զնոսին ընդ հպատակութիւն։ Այս օր տկարամիտ և տխմար կարէր անձնապահ լինել՝ ի կրկին խաբեբայից, յիշխանաց ասեմ քաղաքին, և՝ ի դիւաց։

ԳԼՈՒԽ ԼԴ

Թէ խորհրդով և իշխանութիւն ճշմարիտն ոչ սահմանեալ են ժամանակք թագաւորաց և թագաւորութեանց։

Ցաւս է յասացելոցս, զի ասծ է երջանկութիւնն պատճառ և տուիչ. և զի նա միայն է ասծ ճշմարիտ, նոյն ինքն տայ զերկրաւոր թագաւորութիւնս՝ և բարեաց և չարաց. և զայն ոչ անխորհրդաբար և իբր դիպուածով լինի, քանզի ասծ է և ոչ բախտ, այլ ըստ կարգի իրաց և ժամանակաց՝ որ մեզ անյայտ են և ինքեան ամենայայտ. բայց այդմ կարգաւորութիւն ոչ եթէ հպատակօրէն ծառայէ, այլ տիրաբար ինքնին վարէ զայն, և տնտեսէ չափով։ Վասն զերջանկութիւնն տայ բարեացն միայն, վասն զի զայն կարեն ունել կամ չունել և ծառայք. նոյնպէս կարեն չունել և թագաւորք անգամ. այլ այդ կատարեալ լինիցի յայն

կեանս, ուր չէ ոք այլ եւս ծառայ ։ Այլ ամէն իրի Թագաւորութիւնք երկրաւորք և բարեաց և չարաց տուեալ էն ի նմանել, որպէս զի պաշտօնեայք նորա՝ որք գեռ յաձուխն հոգւոյ տղայքն էն, մի այնպիսեաց պարգեւաց ցանկանայցեն իբր մեծի իմիք ։ Այս այս է խորհուրդ հնոյ կտակին, յորում նորա ծածկեալ էր ։ Իբրև զի անտանօր երկրաւորք են խոստմունքն և պարգեւք. այլ որ յայնժամ հոգևորքն էին՝ իմանային, թէ և տակաւին յայտնապէս չքարոզէին, թէ որպիսի ինչ յաւիտենական նշանակիւք ի ժամանակեայն յայտնուիլ, և յոր պարգեւս այ հաստատեալ կայր Աշմարիտն երջանկութիւն ։

ԳԼՈՒԽ Լ

Քաղագս Թագաւորութեանն Հրէից, որ ի միոյ ի Աշմարտէն այ հաստեցաւ և պահեցաւ՝ ցորչափ ի Աշմարիտ կրօնս մտցին ։

Այլ զի ծանիցի՝ թէ երկրաւոր այն բարիք եւս, յորս միայն ըղձանան զրկեալքն ի լաւագունիցն գիտութիւն, կան յիշխանութիւն միոյն այ, և ոչ բազմաց սուտ աստուածոց՝ որ առ հռովմայեցիս կարծեալ լինէին պաշտամանն արժանիք, նա ինքն զժողովուրդ իւր զսակաւաւորն՝ բազմայոյզ Այգիպտոս, և ազատեաց անտի զարմանագործ նշանիւք ։ Եւ զ Աւկինաան աստուածուհի կարդացեալն կանայքն այնօրիկ, յորժամ զծննդեանդ նորա զրազմացեալն հրաշապէս, որով գեր ի վերոյ քան զկարծել աձեր ազգն, նա ինքն զերծոյց և պահեաց ի ձեռաց Եգիպտացւոց հալածչացն՝ որք զամենայն տղայսն իմդրէին կորուսանել ։ Այնանց Թումինայ դիցուհւոյ դիւեցան նորա. առանց Աւսնինայի կացին յօրոցս. առանց Աւտուկայ և Պոտինեայ կերին և արբին. առանց այնպիսի տղայական դից սնան նորա. առանց դից Հարսանեաց ամուսնացան. առանց պաշտելոյ զՊրիապոս զուգաւորեցան.

առանց զՊոսիդոն կարդալոյ բաժանեցաւ ծովին յանցա-
նել նոցա, և զքնչնամին հետամտեալս յանդգնին դարձ
ալեացն ստորասուզեաց։ Ել աստուածարեկին նոքա զոմն
Ա՛ննիա, յորժամ յերկնից ընկալան զմանանայ. և ոչ
յորժամ՝ի ծարաւին ջուր բղխեաց վէմն հարեալ պաշ-
տեցին նոքա զԱխիայա և զԽիխայա։ Ա՛ռանց խօլակա-
նաց պաշտամանց Ա՛րեայ և Ա՛ղլոնեայ եռուն պատե-
բազմ. ոչ յաղթեցին արդարեւ առանց յաղթուհէ, սակայն
յաղթութիւնն այն պարգև էր այ Իւրեանց, և ոչ դիցուհւոյ
ուրուք՝ յաղթուհի կարծեցեալ։ Ա՛նկալան արմտիս ա-
ռանց Ա՛գդետեայ, արջառս առանց Ա՛ստղոնեայ, մեղր ա-
ռանց Ա՛ելոնեայ, պտուղս առանց Պոմոնայ. և զամե-
նայն՝ի գլխովին՝ որոց վասն հռովմայեցիք՝ի բազմա-
խուռն սուտ աստուածոց անտի հայցել վարկանէին, ՝ի
միոյ՝ի Չմարտին այ առատագոյն և ընկալան նոքա։ Ա-
եթէ ոչ էր նոցա մեղուցեալ ամբարիշտ մեղմեխանօք, իբր
դիւթական արուեստիւ մոլորեալք՝ խոտորելով յաստուա-
ծըս օտարս և՝ի կուռս, և յետ այնր սպանանելով զԱ՛ն,
ապաքէն ՇՈւացեալ էին՝ի նմին Թագաւորութէ, որ բա-
րեբաստիկ և ի վնաս, Թէ և ոչ ընդարձակ։ Ասկ զի այժմ
ցրուեալ էն նոքա ընդ ամենայն երկիր և ընդ ազգս, է և
այդ միոյ Չմարտին այ խնամոյն գործ. որպէս զի՝ի կոր-
ծանիլ ընդ ամենայն կողմանս դրօշելոց սուտ աստուածոցն
և սեղանոց նոցա և անտառաց և տաճարաց, և՝ի խափա-
նել պատարագացն, Հաւաստեալ յուցցի՝ի նոցունց Հրէ-
էից մատենիւք՝ Թէ զիարդ այս ամենայն՝ի վաղ ժամանա-
կաց յառաջ մարգարէացեալ էր. զի մի՛ յընթերցուլ զայն
՝ի մեր մատեանս և եթէ, կարծիս առնուցուն՝ Թէ առ՝ի
մէնջ յօդեալ իցէ։ Ա՛յլ արդ ժամ է զոր՝ի յայնոյդ դիրսդ
տեսանել աստանօր սահման դնելով երկարութէ ձառիս։

ԳԻՐՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Խօսս առնէ ի սկզբանն առ ի հերքումն կարծեաց Ձակատագրի , զի մի իցեն ոմանք որք Ձակատագրի ընծայեցուն զգործս մեր և զնիժանալ հոգւոյական պետութեն , այնու զի յանցեալսմ գրի ցուցաւ՝ ոչ գործ լինել աստուածոյն ասաց , Ասաի Թևակոխեալ ի խնդիր յատաջդիտութեն ։ ցուցանէ ոչ լինել այնուիկ բարձուն ազատ խնամուքեն կամաց մերոց , Զկնի ապա խօսի զնախնի վարուց հոգւոյեցուց , և Թէ յորոց վատակոց նոցա , կամ որով ։ ։ գատաստանաւ յաջողեաց նոցա ձեռնտու յաՁուն տէրութեն ունել զնոյն Ձչմարիտ՝ զոր ոչն պաշտեին ։ ի կատարածին ուսուցանէ՝ որ այն իցէ Համարել Ձչմարիտ երջանկութեն Թագաւորաց քրիստոնէից ։

ՅԱՒՐԱՆՈՒԹԻՒՆ

ՎԱՆԶԻ լուսն ըղձալեաց ամենայնի գիտեմք զերջանկութեն լինել , որ ոչ աստուած՝ այլ ՚ի պարգև է , որով այն աստուած միայն առ ՚ի մարդկանէ գոյ պաշտելի , որ երջանիկս զնոսա առնել կարող է . մինչ զի եԹէ աստուած էր երջանկութեն , միայն արդարեւ պաշտելի Համարեալ էր . այսուհետև ապա յարմարապէս տեսանել արժան է , յինչ պատՃառս ՚ի՞ որոյ է տալ և զբարիսն ստանալիս՝ նա և ոչ բարեացն և ոչ երջանկաց , կամեցաւ զՀոգւովիւսն պետութեն յայն ՚ի մէջ և ՚ի բազմատեսակն սահմանն Հաստուցանել . զի Թէ ոչ տուր աստուածոյն բազմութիւն արար զայդ՝ զոր պաշտէին , ա՞նա յոլովագոյնս ասացաք , և ասել ևս ունիմք՝ ուր դէպն բերիցէ ։

ԳԼՈՒԽ Ը.

Պատճառ հոգեվիճակի տէրութեանն և համբերն Թագաւորութեանց ոչ ըստ դիպուածոյ է, և ոչ՝ ի դիպս ասելոցդ հաստատելոյ։

Այլ արդ մեծանալոյդ հոգեվիճակին տէրութեանն պատճառ՝ ոչ ըստ դիպուածոյ է, և ոչ ըստ Ձակատագրի, որպէս կարծեն այնոքիկ՝ որք դիպուածս զայն ասեն, որոց պատճառ ինչ չիք, կամ ոչ՝ ի բանաւոր ինչ կարգմանէ գան յառաջ. իսկ Ձակատագիր զայն ասեն՝ որ առանց կամացն այ և մարդկան՝ ի հարկէ իմեմնէ պատահին։ Այլ նայն իրօք Թագաւորութիւնք մարդկեղինք՝ յածային նախախնամութենէն լինին. զորս եթէ որ յայն սակս Ձակատագրի ընծայեսցէ՝ զի զայ կամին և զիշխանութենէն կոչէ Ձակատագիր, պինդ կայցի զկարծիսն, և զլեզուն ուղղեսցէ. և ընդէր անդէն՝ ի սկզբան ոչ ասէ զայն՝ զոր ասել ունի յետոյ՝ յորժամ հարցանիցի, Թէ զինչ իմանայ առնուամբս Ձակատագիր։ Այլ ասն զի մարդիկ ի լսել զայն՝ ոչ այլ ինչ իմանան ըստ սովորեալ խօսիցն, բայց զզօրութենէ կայից աստեղաց, յորժամ ծնանի որ, կամ յղանայ յարգանդի. զոր ոմանք առանց կամաց այ ասեն լինել, իսկ այլք Համարին և՝ ի կամաց նորա։ Այսպէս որք միանգամ կարծեն՝ Թէ առանց այ կամաց յաստեղաց անտի լինիցի որոշումն՝ զոր ինչ առնելոց իցեմք, և զոր բարիս ունիցիմք, զինչ չարիս կրիցեմք, ընդդէմ այսպիսեացս պարտ է խնամել զականջս՝ ոչ միայն կուռեցելոցն՝ ի Չմարիտ կրօնս, այլ և որք պաշտօնասէրքն են որոց և իցէ աստուածոց սըրնտաեաց. քանզի ոչ այլ Հետևումն է այդմ կարծեաց, բայց զի մի աստուած որ պաշտեսցի բնաւ, կամ աղօթիւք կոչեսցի։ Այլ ոչ առ այսոսիկ աստանօր վերաբանել յանձն առեալ եմք, այլ առ նոսա՝ որք՝ ի պաշտպանութենէ իւրեանցն կարծեցեալ աստուածոց՝ Հակառակ կան քրիստոնէական կրօնիցս։ Իսկ որք՝ ի կամաց այ ասեն անօրի-

նեաւ զդիրս աստեղաց՝ որոշելնոցա իւիք՝ որպիսի իւրա-
քանչիւր ոք իցէ,որ բարի նմա յաջողեսցէ, և որ չար դի-
պիցէ, եթէ այնպէս համարին Թէ ունիցին աստեղքն զիշ-
խանութիւնն զայն տուեալ նոցա՝ի գերագոյն իշխանու-
Թէնն այ, որպէս զի ըստ իւրեանց կամաց որոշեսցեն զայսո-
սիկ, արդարեւ Թշնամանս մեծ ձգեն յերկինս անդր, կար-
ծիս տուեալ Թէ յամենապայծառ յայնմ խորհրդա-
բանի և՛ի նշուլագեղ աստենին բացորոշին չարագործու-
Թիք մարդկան. որպիսիս եթէ յերկրաւոր քաղաքի ուրեք
լեալ էր բացորոշել կործանել զայն արժան էր համարա-
կաց վճռով մարդկան։ Այս դարձեալ, որ դատաստան
ինայ այնուհետև այ՝ի վերայ գործոց մարդկան, առ որս
երկնիցն հարկադրութիւն ներգործէր, ուր նա ինքն ած է
տէր և աստեղաց և մարդկան։ Այսմ եթէ չիչխեն ասել՝
Թէ աստեղք իշխանութիւն առեալ՝ի մեծէն այ, ըստ իւ-
րեանց հաճոյիցն բացորոշեն զիրարդ, այլ Թէ՝ի նոյն հար-
կադրութիւնն զայ հրամանս կատարեն, միթէ իցէ օրէն
զայն ինչ կարծել զայ, զոր զկամաց աստեղացն կարծել
անարժան դատեցաք։

Այլ եթէ ասիցեն, Թէ աստեղք նշանակեն և եթէ զայ-
սոսիկ՝ քան Թէ ներգործեն, իբր այն Թէ նոցայն դիրք՝
խօսք իմն են ապառնեացն յառաջասացիկ և ոչ արարող,
քանզի այդպէս եղև կարծել ումանց ոչ դուշնաքեայ դիտ-
նաւորաց, սակայն ոչ այդպէս ասել սովորեցան աստեղա-
բանք. զոր օրինակ եթէ ասէին. հրատն այսպիսի ունե-
լով դիրս՝ զմարդասպանն նշանակէ, այլ ասէն, մարդասպան
առնէ։ Այլ այդ՝ի վերայ այսր՝ գրեսցուք Թէ՝ի պատշաճն
խօսելոյ և եթէ վրիպեն նոքա, և պիտոյ է յիմաստասիրաց
անտի առնուլ նոցա զկանոն բանի՝ առ՝ի արտայայտելոյ
զոր ինչ յաստեղացն դիրս կարծեն գուշակել. զինչ այն է
ասա՝ զի ոչ ինչ ասել կարողացան, էր վասն՝ի կեանս եր-
կուորեակ ծնեալոյն, ՝ի գործս նոցա, և՝ի հանդիպաւածս,
յուսմունս, յարհեստս, ՝ի գործակալութիւնս, և յայլսն
մարդկային կենաց վայելչականս, և բազում անգամ՝ի
մահու իսկ նոցա՝ այնպիսի զանազանութիւն է տեսա-

նել, մինչ զի բազում օտարածինք առաւել համամանեալ նոցին գտանին յայսոսիկ՝ քան զբուն համաճինան, յորս փոքու վայրկենի խառիր է՝ի ծնանելն, իսկ՝ի յղանալ՝ի միւսմ վայրկենի սաղմնառեալ են միով զուգաւորութիւն։

ԳԼՈՒԽ Ը

Բազագս նման և անման առողջութիւն երկասրեկաց։

Այս Կիկերոն, Հիպոկրատեայ քաջի բժշկի գրով աւանդել, թէ տեսեալ նորա զերկուս եղբարս՝ զի՝ի միում ժամանակի անկան՝ի խօթութիւն, և սխատ նոցա միանգամայն ծանրանայր, և միանգամայն դիւրանայր, երկասրեակս զնոսա համարեցաւ։ Իսկ Պոսիդոնիոս ստոյիկեան՝ մոլեալն յաստեղագիտութիւն, ասէր զայսպիսեացս՝ թէ ընդ նովին կարգադրութիւն աստեղաց յղացեալք են և ծնեալք։ Այդ զոր բժիշկն համարեր հետեւութիւն լինել նմանօրինակ խառնուածոյ առողջութեան, իմաստասէրն աստեղագէտ տանէր զայն յազգութիւն և՝ի կարգադրութիւն աստեղաց, յորում յղացեալ և ծնեալ էին։ Այսոյ խնդիր առաւել ընդունելի և հաւանելի ևս է բժշկականն կրնադատութեան. վասն զի ըստ հանգամանաց մարմնոյ ծնողացն՝ի մերձաւորիլ նոցա՝ նոյնպէս և նախ կին կազմուածոյ յղացելոցն մարթ է կերպարանիլ. որով ընկալեալ նոցա զառաջին առմունս՝ի մայրենի արգանդէ՝ նմանակիրք ըստ առողջութեան ծնանիցին. ապա՝ի նմին տան մնալ նոցա նովին դարմանօք, ուր օդ և տեղոյ դիրք և ջուրցն զօրութեան մեծապէս առ՝ի բաւ ընկրկութեան կամ յառութեան մարմնոյ զօրեն՝ ըստ վկայելոց բժշկականութեան, այլ և՝ի նոյն կրթանս՝ սովորեալ նոցա, այնպէս իմն զուգակիրս ունիցին զմարմինս, մինչև՝ զոյգ ժամանակաւ և՝ի նոցունց պատճառաց բերիցին՝ի խօթութիւն։ Իսկ զերկինից կարգումն և զաստեղաց՝ յորում*

լեալ ինչ յղանալ և ծնանել նոցա, չգիտեմ որով յանդգնութիւն ասիցէ ոք պատճառ նմանակիր ախտաւորութեան. ուր աչա յոլովից որոշելոց ըստ սեռի և ըստ ախորժակաց և ըստ դիպմանց՝ եղև յղանալ և ծնանել ի նմին ժամանակի, յերկրի անդ միոյ գաւառի, ընդ նովին երկնաւ։ Իսկ ծանեաք զերկուսորեակս, որոց ոչ միայն արարք և տարագնաց ուղևորութիւնք էին այլ և այլք, այլ և հիւանդութիւնս աննմանս կրեցին, զորոյ թուի ինձ՝ առձեռն ունել տալ զպատճառսն Հիպոկրատէս. իբր զի ըստ այլ և այլ մնդեան և կրթանաց՝ ոչ ի մարմնոյ խառնուածէն, այլ ի կամակարուց գան յառաջ, այլ և այլ դիպիլ և առողջութիւնք նոցա։ Իսկ Պոսիդոնիոս, կամ այլ ևս ախտարաց հետամուտ՝ ոչ մեծ ինչ է եթէ գտաւ նիցէ ասել պատճառս, բայց եթէ խաղ առնել կամիցի այնոցիկ՝ որ յիրս այսպիսիս անգիտացք են։ Այսու զի զոր կարկատէն հնարին ի փոքր խորոցէ ժամանակի՝ որ անց ի ծնանել երկուսորեակացն, ի պատճառս այնր մասին երկնից՝ ուր ժամն նշանակի, զոր և ժամադիտակն առնուանեն, այդ կամ նուազ է քան զտարբերութին երևեալ յախորժակս երկուսորեակացն, յարարս նոցա և ի վարս և ի դիպուածս, և կամ ընդ հակառակն՝ աւելի ևս է քան զերկուսորեակացն նուաստատոհմութիւն կամ աղնուատոհմութիւն, զորոյ զերևելի տարբերութինն դնեն նոքա ի ժամն յորում ոք ծնանի։ Որքին վասն եթէ այնչափ արագ ծընանի մին զհետ միւսոյն, մինչև ծնալոյ նոյն մասին ժամադիտակին, ապա զամենայնն պահանջեմ զդէպ և հաւասար լինել, զոր չէ մարթ յերկուսորեակս երբէք գտանել. իսկ եթէ յապաղումն յետնոյն փոփոխէ զժամադիտակն, զայլ և այլ ծնողս որոնեմ, զոր երկուսորեակք ունել ոչ կարեն։

ԳԼՈՒԽ Գ

Յաղագս ձեռնարկութեան՝ զոր Վիգիտիոս ասպազմայ ուսումնականն յառաջ բերէ յանուագ բրան՝ ի ինդիր երկուորեկացն։

Ա ՌԱՋՈՒՊԱՐ ուրեմն՝ ի դէմս ածէն զձառատարն զայն գիւտ յանուագ բրան, զոր յառաջ բերեալ էր Վիգիտիոս՝ ի պատասխանի խնդրոյս, ուստի տագնապէր. յորմէ և Ներուտ յորջորջեցաւ նա։ Վասնզի շրջանակեալ նորա ամ ուժգնութիւն զանիւ բրան, մինչ դեռ պտուտէրն՝ նշանաւ կեաց երկիցս սևակաւ՝ ի միում տեղւոջ անհնարին արագութիւն. և ապա՝ ի դադարել շարժմանն՝ գտան նշանքն գծեալք խարտեաւ մեծաւ տարակայք՝ ի միմեանց՝ ի ծայրս անուոյն։ Այսպէս այսմ օրինակի, ասէր նա, յանհնարին պարբերութիւնէ երկնից՝ թէ և ծնանիցի ոք զկնի այլոց նոյնչափ արագութիւն՝ որով երկիցս նշան եղի յանիւ անդր, կարի բազում է յերկինս անջրպետութիւնն. և ասի իսկ են, ասէ, որ ինչ անմանութիւնք երևին՝ ի բարս և՝ ի դիպուածս երկուորեկաց։ Այսոքիկ դիւրաբեկ ևս է այս գիւտ քան զանօթ խեցիս՝ որք անուոյն ստեղծանին. քանզի եթէ այնչափ բացարձակութիւն է յերկինս անդ, մինչև չէ մարթ յաստեղատանց անտի խմաստասիրել թէ ընդէր միում յերկուորեկացն անկանիցի ժառանգութիւն, և միւսումն ոչ, զիարդ իշխեն ապա վասն այլոց ոչ երկուորեակ ծնեալոց՝ նախապատմել զայնպիսիս, իբր դիտելով զնոցայն աստեղատունսն, որք նոյնպէս գաղտնածածուկ են՝ զի ոչ ումեք է հասանելի, և չէ մարթ զվայրկեանս ծնելոցն նշանագրել։ Իսկ եթէ յայն սակս զայն պիսիսն ասեն՝ ի վերայ ծննդոց այլոց, իբրև զի յերկարագոյն միջոցս ժամանակի անկանին, իսկ վայրկեանք մասանց՝ որք պատահեն՝ ի ծնունդ երկուորեկացն, զիրս գուշնաբեայս յայտ առնեն, զորոց ոչ լինի հարցանել զաստեղադէտս, զի՞ ոք հարցանէ նոցա՝ երբ նստիցի,

Երբ շրջագայիցի, երբ կամ զինչ ձաշիցիե, միթե զդոյն զայդ ասիցեմք՝ յորժամ յայտաբար ցուցանեմք զբազումն ինչ և զկարի այլազանս 'ի բարս երկուորեակացն, յարթաս նոցա և 'ի հանդիպուածս։

ԳԼՈՒԽ Գ

Յաղագս Եսաւայ և Յակոբայ համածնաց՝ կարի տարբերելոց 'ի բարս և յարարս։

ԱՐԿՈՒՈՐԵԱԿՔ երկու ծնան 'ի նախնի յիշատակ դրուեցին նահապետաց, կամեցեալ ընչանաւորացն Աստուածոյ, այնպէս իմն միանգամ հայաւորք, մինչև կրեերն ըզգարշապարե ունէր զառաջնոյն։ Այլ 'ի կեանս նոցա և 'ի բարս այնչափ իմն էր զանազանութիւն, այնչափ գործոցն անզուգութիւն, այնչափ և սիրոյ ծնողացն աննմանութիւն, մինչև տարակայութիւնն մեծ թշնամիս իմն իրերաց զնոսա առադրեաց։ Այնթէ զայն ասեմք, թէ 'ի շրջագայիլ միոյն՝ միւսն նստէր, 'ի ննջել միոյն՝ արթուն կայր միւսն, մին խօսէր, միւսն լսէր, որք անկ են մանրիկ խորհուրդքն անըմբռնելեաց յայնցանէ՝ որք նշանագրեն զսահման առեղացն, յոր իւրաքանչիւր ոք ծնանի, և որ վասն առեղադէտքն հարցանին։ Այն 'ի նոցանէ վարձուք ծառայեաց, միւսն ծառայեաց ոչ բնաւ. մին սիրեցեալ մօրն էր, միւսն ոչ սիրելի. մին զանդրանկութիւնն պատիւ՝ զմեծագրեալն առ նոսա՝ կոչոյս, միւսն ստացաւ. զինչ ապա զնոցա կանանցն ասացից, զինչ զորդւոցն, զինչ զդոյիցն. քանիօն այլազանութիւնք յայսոսիկ։ Այլ ապա ուրեմն էթէ մանրամասնանց ժամանակին՝ որ ընդ երկուորեակ ծնեալքսին՝ անկ են այսոքիկ, և ոչ նշանագրին յաստեղատունս, զնմանէ ապա նորանախնիքն գուշակին 'ի դիտողութիւն աստեղատանց այլոց։ Ապա եթէ այնու գուշակին, զի ոչ մանունց անըմբռնելեաց անկ են, այլ խորոցաց ժամանա-

կաց զորս մարթ ի զննել և նշանակել, զինչ այլ աստա-
նօր զօրել ունիցի անիւ բրտին, բայց զմարդիկ՝ զկաւե-
զէն սրտի ունակս յածել չուրջանակի, զի մի աստեղա-
գիտացն վայրաբանութիւնք յանդիմանեսցին։

ԳԼՈՒԽ Լ.

Զիաղդ յանդիմանին աստեղագէտ ուսումնականք՝ թէ անօթ գիտութեան
են պարապեալք։

Օ՞ՆՉ և այնոքիկ ոմանք՝ որոց ախտակրութիւն ի նմին ժամանակի ծանրացեալ և դիւրացեալ, պատճառս ետ բժշկական զննութիւն Հիպոկրատեայ՝ երկուորեակս զնա սա կարծել. ոչ ապաքէն ի կշտամբութիւն նոցա էն՝ որք աստեղաց ընծայել յօժարին զյառաջագայեալն ի համանման խառնուածոյ մարմնոցն։ Կանգնէր վասն համանաբար ի միում ժամանակի և ոչ յառաջ և զկնի խօթանային՝ որպէս և ծնանին. իբր զի երկոցունցն միանգամայն ծնանել անմարթ էր։ Կամ եթէ ոչ մի ինչ ազդեաց առ ի խօթանալոյ նոցա յայլ և այլ ժամանակ՝ այն զի ծնեալ էն յայլ և այլ ժամանակս, ընդէր ապա այնգէն թէ տաբ բերութիւն ժամանակի զօրէ ի զանազանութիւն այլոց իրաց։ Ընդէր կարացին նոքա յայլ և այլ ժամանակս ձանապարհորդել, յայլ և այլ ժամանակս կին ածել, յայլ և այլ ժամանակս ծնանել որդիս, և այլ ևս բազումս, այնու զի յայլ և այլ ժամանակս ծնան, և ոչ կարացին սակս նորին պատճառի խօթանալ յայլ և այլ ժամանակս։ Վասն զի եթէ անհատասար յատկացումն ծնանելոյն փոխեաց զժամադիտակն, և յայլ իրս զանհատասարութիւն ի նեըքս եմոյծ, առիմ ի խօթութիւնն պահեցաւ հատասարութիւն ժամուդ յղութիւնն։ Այլ կամ եթէ առողջութիւնն ձակատագիր ասիցի հաստատեալ ի յղութիւն, իսկ այլոցն իրաց ի ծնդեան, ոչ պարտ էր նոցա գուշակել ինչ զա-

առաջութիւն՝ զինեալ զաստեղատուն ծննդոցն, որովհետեւ
ոչ տուեալ է նոցա դիտել զժամ յղութեն։ Այլ եթէ
յայն սակս նախապատմեն զխօթութենն՝ առանց նկարե-
լոյ զյղութենէն ժամադիտակ, վասն զի զայն յայտ առնեն
վայրկեանք ծնելոցն, զիարդ ունելին ասել՝ի ժամ ծնըն-
դեանն՝ թէ ուր յերկուորեկացն և ևրբ խօթանալոց է,
և միւսն՝ որոյ ոչ նոյն ժամ է ծննդեան, հարկաւ ունիցի
նոյնպէս խօթանալ։ Հարցանեմ դարձեալ. եթէ այնչափ
տարակայութիւն ժամանակի է՝ի ծննդեանն երկուորեկա-
ցըն, մինչև վասն այնր պարտ իցէ ունել նոցա զայլ և այլ
աստեղատունս՝ի պատճառս այլ և այլ ժամադիտակի,
որով և զամենայն կէտս դնել այլ և այլս, յորում եղեալ
կայ ըստ նոցա զօրութիւն այլ և այլ հակատագրոց, ուստի
եղև այդ հնարաւոր. որովհետև նոցայն յղութիւն ոչ կա-
րէ զայլ և այլ ունել ժամանակ։ Այսմ եթէ երկուց՝ի մի
վայրկեան ժամանակի յղացելոց եղեն անհման հակա-
տագիրք առ՝ի ծնանել, ընդէր և երկուց ծնելոց՝ի մի
վայրկեան ժամանակի չիցէ մարթի ունել զանհման հա-
կատագիր՝ի կեալ և՝ի մեռանել։ Վասզի եթէ՝ի միոյ
վայրկենէն յորում յղացան երկոքին, չեղև արգել ծնա-
նելոյ նոցա յառաջ և զկնի, ընդէր՝ի միում վայրկենէ ծնե-
լոցն խափան ինչ լինիցի մեռանելոյ միոյն յառաջ քան զմիւ-
սըն։ Եթէ համավայրկեանն յղութի՝ներքէ երկուորեկա-
ցըն ունել յարգանդի անդ այլ և այլ պատահմունս, ընդ-
էր ոչ նոյնպէս համավայրկեան ծնունդ ևրբ և իցէ երկուց
ներքոյ ունել յերկրի այլ և այլ պատահարս. որովհե-
տէր աստեղագիտականդ արհեստի, կամ լաւ և ևս ասել
ունայնութեն, բարձցի գլխովին։ Օ՜ինչ պատճառ է, զի
յղացեալքն՝ի մի ժամանակ, ՝ի մի վայրկեան, ընդ միով
և նոյն դրիւք երկնից՝ այլ և այլ ունիցին հակատագիրս՝
որք որոշեցեն զնոսա՝ի ծնունդ այլ և այլ ժամուց. իսկ
երկու այլք ծնեալք միօրինակ յերկուց մարց՝ի մի վայր-
կեան ժամանակի, ընդ միով և նովին երկնից դրիւ՝ ու-
նել ոչ կարիցեն հակատագիրս այլ և այլ, որք ձգիցեն
զնոսա յայլ և այլ կարիս կելոյ կամ մեռանելոյ։ Այնեթէ

յղացեալքն լինն ընդունակ Հակատագրի , զոր ՚ի ծնա-
նելն ևեթ կարիցեն ունել ։ Այլա զինչ է զոր ասենն , եթէ
յղութենն ժամ գոնէիցի Հնգրիտ , բազում ինչ գուշակել
կարող են հրաշագէտքս այսօրիկ ։ Այս այսմ Համաւաի
յոմանց և այն՝ թէ խմասուն ոմն ընտրեաց զԺամ մուա-
նելոյ առ կինն իւր , զի ունիցի որդի հրաշագեղ ։ Այս էր
և պատճառ Պօսիդոնեայ քաջի աստեղագիտի և խոհա-
տասէրի՝ պատասխանել վասն երկուորեկացն զոյգ խո-
Թացելոց , Թէ վասն զի ՚ի նմին ժամանակի ծնեալք և
յղացեալք էին ։ Այլաբէն գրգռանալ վասն այն յաւելու ,
զի մի ասիցի նմա՝ անմարթ էր ՚ի մի ժամանակ Հղիա-
ծնանել նոցա , որոց յայտ էր ՚ի միում ժամանակի լինել
յղացեալս . որպէս զի զմիապէս խօԹանալ նոցա զոյգ
ժամանակաւ՝ մի ընծայեսցէ տիրապէս զուգակիր խառ-
դուածոյ մարմնոյն , այլ զՀամանման առողջութենն յատ-
կեղական կապանս պնդեսցէ ։ Այսն որոյ եթէ ՚ի
յղութենն այնչափ զօրութիւն է ՚ի Համանմանութիւն Հակա-
տագրացն , ոչ պարտ էր փոփոխել այնց Հակատագրաց ՚ի
ծնանելն ։ Ապա եթէ յայն սակս փոփոխին Հակատագիրք
երկուորեկաց , վասն զի ծնանին յայլ և այլ ժամանակս ,
ընդէր առաւել ևս չասիցեմք՝ Թէ արդէն իսկ փոփոխեալ
էին առ ՚ի կարելոյ նոցա ծնանել յայլ և այլ ժամանակս ։
Այն եթէ ոչ փոփոխէ զծննդեանն Հակատագիրն՝ կամք կեն-
դանեացն , ուր զՀակատագիրն յղութենն փոփոխէ կարգ
ծնելոցն ։

ԳԻԼՈՒԽ Զ.

Ցաղագս երկուորեկաց , յորոց մին արու իցէ և միւսն էգ ։

Լուսն արդ և յերկուորեկացն յղութիս , ուր անչուշտ
նոյն վայրկեան ժամանակի է երկոցունցն , ուստի իցէ այն՝
զի ընդ նովին աստեղատամբ յղանայ մին արու , և միւսն
էգ ։ Տեսեալ է և մեր երկուորեակս ոմանս՝ մին ուստր ,

և միւսն դուստր. և երկոքին դեռ կենդանի են, երկոքին դեռ առոյգք հասակաւ. որք թէպէտ և համանման են մարմնոյ կերպարանօք, որչափ մարթի լինել ընդ եղբայր և ընդ քոյր, բայց ՚ի հրահանգս և ՚ի վիճակ կենցաղոյ այնպէս իմն անմանրք են, մինչ զի Թոզ զարարս՝ որովք հարկաւ որոշումն է արուց և իգոյ, եղբայրն զինուորելոյ է ՚ի պաշտօն կոմսական, հանապազ արտաքոյ տան տարագնաց չըլլալով. իսկ քոյրն անմեկնելի ՚ի հայրենի տանէն և ՚ի բնիկ գեղջէ։ Այս որ անկարծելին է՝ ըստ ծննդաբաշխիչն Հաւանութեան, այլ ոչ զարմանալի՝ եթէ զկամս մարդկան նկատիցեմք և զպարգեւս այ, եղբայրն ամուսնացեալ է, և քոյրն կոյս նուիրական. նա զաւակօք բարգաւաճեալ, սա և ոչ ամուսնացաւ անգամ։ Ի ծողա սացեն ախտարք, թէ բազում է զօրութիւն ժամադիտաց կին. բայց շատ իսկ խօսեցայ՝ թէ անգոյ է այդ։ ՚Ի յորպիսի և իցէ, ասեն, ՚ի ծննդեանն զօրէ. այլ միթէ և ՚ի յղութեանն. ուր յայտ է միոյ մերձաւորութիւն լինել. և այնպիսի է բնութիւն զօրութիւն, մինչև յորժամ սաղմնաւոր կինն, յետ այնր չկարէ յղանալ և զայլ. ուստի հարկ է՝ զի նոյն վայրկեան իցէ ՚ի յղութիւն երկուորեակաց. միթէ արդեօք՝ զի ըստ այլ և այլ ժամադիտակի ծնեալ են, ՚ի ծնանել անգ՝ մին յարու և միւսն ՚ի յետ փոխարկեցաւ։ Պարզն չէ յայնհնային անտեղի ասել, թէ ՚ի մարմնոյ ևեթ տարբերութիւնն ներգործիցեն ազգմունք լինչ աստեղայինք. որպէս և յարեգակնէն մատչել և հեռանալ՝ տեսանելեաց զտարևոր եղանակացն փոփոխութիւն, այլ և յաձմունս լուսնոյ և ՚ի նուազմունս՝ զլնուլ և զնուազել ի բաց լինչ, ոչնեաց և խեցեմորթից, որպէս և զսքանչելին զայն երթևեկ ծովու. բայց ոչ եթէ և Հոգւոյ յօժարութիւնք ներքոյ անկանին դրից աստեղաց։ Այլ զի դարձ ախտարդ հնարին և զմեր ներգործութիւնս մարդկայինս ՚ի նոյնս յեցուցանել, Հարկ առնէն ընդ խնդրոյ արկանել՝ թէ և ոչ ՚ի մարմնոյ անգամ հաստատուն կայ այդ պատճառ. վասն զի զինչ այլ այնպէս առ մարմին պատկանաւոր՝ իբրև զմարմնոյ սեռին որոշումն. և սակայն և

զև ահա ընդ նովին դրութեամբ աստեղաց յղանալ երկուորեակաց տարաստեղիցն՝ [1]վին իբր զինչ այլ առաւել անպատեհ՝ քան ասել և կամ կարծել, թէ աստեղացն դիրք որ նոցա գալով յերկոցունցն յղուէ, և աստեղատունն գնացն ունելով, չկարացին խափանել՝ զի մի եղջերայր և քոյր ճնանիցին, նոյն դիրք որ եղեն՝ի ժամ ճնանելոյ նոցա՝ կարացին առնել զի մի ճնանիցէ զատանիցի յեղջերէն քոյրն կուսականաւն մաքրութիւն։

ԳԼՈՒԽ Լ.

Ցաղագս խորանաց աւուրց կին ածելոյ, որպէս և անկելոյ կամ սերմանելոյ յագարակի։

Այսպ՝ ո՞ տանիցի այնմ, զի յընտրութենէ աւուրց՝ի ձեռս բերել կարծեն ձակատագիրս ինչ նորա վասն իւրեանցն գործոց։ [1]Որպէս այն, թէ ոչ այնպիսի ծնեալ էր այն որ՝ զի ունիցի որդի հրաշագեղ, այլ ընդ հակառակն՝ զխեղճ ծնանելոյց էր. վասն այնորիկ այլոյն իմաստուն ընտրեաց ժամ կին ածելոյ։ [2]Այլ արար ձակատագիրն՝ զոր ոչ ուներ. և՝ի գործոյ անսխալ իւրմէ սկսաւ լինել ձակատագրեալ, զոր ոչն ուներ՝ի ծննդեան իւրում։ [3]Այսպէս նորօրինակ յիմարութենէն։ [4]Յորմէ ընտրութէն աւուր կին ածելոյ, կարծեմ այնու աղագաւ՝ զի թէ ոչ ընտրեսցի, մարթէ է անկանիլ յօր չարաժամ, և չարաբաստիկ զամուսնութենէն առնել։ [5]Սակ արդ ուր մնայ այն՝ զոր ասէին թէ՝ի ծնանել ուրուք սահմանաւ վճռէին աստեղք. միթէ կարող իցէ մարդ զվաղ և սահմանեալն յետաշրջել ընտրանօք աւուրն, և զոր ինքն ընտրեալ աւուրն սահմանեաց, յետ կարող փոխել այլ իշխանութեամբ։ [6]Ա՛ւ դարձեալ. եթէ մարդկէ միայն՝ և ոչ ամենայնիւք որ ընդ երկնաւ՝ներքոյ անկանէն աստեղատանց, զմի զայլ աւուրս ընտրէն դիպանոս՝ի անկել զօրէ, կամ զծառս, կամ զարմտիս.

զայլ օր խաչանց՝ յարդելոլ կամ ՚ի Թողուլ զարուսն, յորս ջոկք մատակայ կամ կովուց յղանայցեն, և այլ ևս նոյնպիսիք։ Իսկ եթէ յիրսդ յայդոսիկ վասն այն զօրէ աւուրցն խորուրդ, վասն զի յամենայն երկրային մարմինս կենդանականաց կամ անկենդանս՝ ըստ պէսպէս բոպէից ժամանակի տիրանայ դրուխն աստեղաց, ածգեն զմտաւ՝ քանի անհամարք ՚ի մի կէտ ժամանակի ծնանին կամ բուսանին կամ սկսանին, և իւրաքանչիւր այլ և այլ ունին կատարած. մինչ զի յայսցանէ ծիծաղելիք և մանկան տղայոյ գտանին աստեղականդ զննութիւնք ախտաբաց։ Օ՞ի ո՞ք և ՚ի կարի խօթամտաց ասել իշխիցէ, թէ ծառք համայն, բոյսք առհասարակ, ամենայն գազանք, օձք, թռչունք, ձկունք, զեռունք իւրաքանչիւր առանձինն ուրոյն ուրոյն հանդիպելոցն զանազան բոպէից ծնանելոյ։ Ոմանք են մարդիկ առ ՚ի փորձելոյ զմտաւութիւն աստղաբեմայ ուսումնականաց՝ առաջի առնել նոցա զաստեղատունս անհաւս կենդանեաց, զորոց զծնունդս ուշի ուշով նկատեն ՚ի տան իւրեանց վասն այսր դիտողութեան. և զայն աստղաբեմայն առաւել քան զայլսն համարին, որոց դիտեալ զաստեղատունն՝ ասեն թէ ոչ մարդ է որ ծնաւն, այլ անասուն. իշխեն ասել և որպիսի անասուն, եթէ ասրաքեր, արդեօք կառաջիգ, կամ արօրաձիգ, կամ պահակ տան։ Վասն զի և յաղագս ձակատագրի շանց հարցփորձ լինի. և ՚ի լսելն զայսպիսի պատասխանիս, մեծաձայն աղաղակաւ զարմանս ցուցանեն։

Այսպէս ահա անմտանան մարդիկ, մինչ կարծել թէ ՚ի ծնանել մարդոյ՝ խափանեալ ինայ ծնունդ այլոց երաց, և ընդ նովին հայեցուածով երկնից չկարել և ոչ ձանձ ՚ի ծնանել ընդ մարդոյ։ Այսն զի ընկալեալ զայդ միանգամ, այնուհետև փորը փորը յառաջանայ ձեռնարկութիւնն, և տանի զնոսա ՚ի ձանձից մինչև յուղտս և ՚ի փիղս։ Եւ ոչ զայն խորհին, թէ ընտրելով նոցա զօրն սերմանելոյ յանդաստանի, այնպէս հատ բազումք միանգամայն արկանին ՚ի հող, միանգամայն բուսանին, յերևել ծղօտին միանգամայն դալարանան, հասունանան, չիհնա-

նան . և սակայն ՚ի հասկից անտի որք ժամանակակիցք էն և համաբոյք , զոմանս ժանգն ապականէ , զոմանս թռչունք յափշտակեն , զայլս մարդիկ կորզեն : Ոչ խաղդ այլ և այլ տայցեն սոցա աստեղատունս , որոց կատարած այսչափ տարօրինակ նշմարին : Վերեւս տարբաժանին ընդ ընդ տեղ զօրն յայսպիսիս , և ասիցեն ոչ զօրել առ այսոսիկ երկնային սահմանին . և զիարդ նեղբդոյ արկանիցեն աստեղաց զմարդիկ միայն , որոց ևեթ յերկրաւորքս տուեալ է առ յոյ կամք ազատական : Ոչ այս ամենայն հղռադատեալ , յիրաւի է կարծել , թէ ուր բազում ինչ ձնմարիտ գուշակեն աստեղադէտք ՚ի զարմացումն , լինի այդ գաղտնի ազդմամբ ոգւոցն չարաց , որոց ջանն է զսուտ զայն և զխաւսաբեր կարծիս ախտարացն սերմանել ՚ի մարդկան միտս և պահել հաստատուն , այլ ոչ եթէ առ բուեւսագիտութեամբ ինչ ժամագիտակի նշանագրելոյ և գինեղոյ , որ չէք ընաւ ։

ԳԼՈՒԽ Ը.

Ընդ այնոսիկ որք ոչ զդիպս աստեղաց , այլ զպատճառաց չարակցութեանկախեալ զկամացն են՝ անուանեն ձակատագիր ։

Այն որք յանուն ձակատագրի ոչ զաստեղացն կարգադրութեանն վերակոչեն , յորժամ յղանայ ինչ կամ ծըննանի կամ սկիզբն առնէ , այլ զամենայն զպատճառացն կապակցութեանն և զշարս , որով լինի ամենայն որ և լինի , առ այնպիսիս չէ հարկ վանն բառի յերկար տարժանիլ ՚ի վիճուն , յորժամ գնոյն կարգ պատճառացն և զուգակցութեանն ընծայեն կամաց և իշխանութեանն այ բարձրելոյ . զորմէ հաւատամբք քաջ խորհրդով և աներկբայ՝ թէ գիտէ առ զամենայն յառաջ քան գլինել նոցա , և ոչ թողացուցանէ ինչ մի առանց կարգի . յորմէ և ամենայն իշխանութիւնքն են , թէպէտ և ոչ թիւրեալ կամք ուրուք ՚ի նը-

մանէ . Իսկ Թէ զուն կամ մեծին այ յանուն Ձակատագրի իմանան նոքա առաւելապէս , որոյ իշխանութէն ձգի անընդդիմաբար յամենայնան , այսպէս է ցուցանել . Ինէոսի Ենեկայի են , որպէս կարծեմ , ոտանաւոր տողքս .

"Ո՛ հայր բարձրեալ , երկնից բարձանց դու իշխեցող .
Ուղղէս յոր կոյս քեզ Ձակոյն է , չեմ վհերող ;
Յասիկ եմ , արա Թէ և ոչ կամիցիմ .
Ընչեւ եկից հեծեծելով Թող ես Հարկիմ՝
Ձարս ի բարին , զոր ըստ լաւոց առնել էր իմ ,
Ձակատագիրդ առաջնորդէն կամեցողի ,
Նուռըն վարեն զերասանակ ոչ կամողի ... ,

Յադիկ յայտնապէս ի վերջնումն տողի Ձակատագիր անուանեաց զայն՝ զոր վերագոյն ասացեալ էր կամն Հօր բարձրելոյ . որում և զինքն ասէ՝ կազմ լինել ի հնազանդութէն , որպէս զի կամաւորութէք առաջնորդեսցի , և մի ակամայաբար ձգեսցի : Ամին կարծեաց օժանդակ են և տողքն Հոմերեան , զոր Աիկերոն ի լատինականն յեղաշրջեաց ըստ իմաստից այսպէս .

"Յնպիսի միտք լինին մարդկան ,
Որպէս երկիր արդիւնական .
Որ լոյս ծագեաց մեծն Յրամազդ
Նոցորեցունց հայր և իշխան ... Դէսպոտն ձէ :

Այս խնդիր ոչ զօրէր ինչ բանաստեղծականն առաստացութէն . բայց զի ասէ Աիկերոն , Թէ ստոյիկեանքն հաւանեալք ի զօրութէն Ձակատագրի՝ զայսոսիկ տողս ի կիր առնուին ի Հոմերայ , ոչ զբանաստեղծին կարծիսն յառաջ բերեմք , այլ զիմաստասիրացն . որք ի ցոյցս խըրդոյ խըրեանց զնոյն տողս ածելով , զինչ Ձակատագրաւն իմանային՝ ծանուցանեն յայտնապէս . զի Յրամազդ անուանեն զկարծեցեալն յինքեանց Յստուած գերագոյն , զորմէ կախեալ է ասեն կապակցուի Ձակատագրաց :

ԿԻ ՅԱԿՈՒԲ Ը.

Ցաղագս յառաջգիտութեանն այլ, և անձեռնհասն կամայ մարդոյ, ընդդէմ սրտաղութեանն Կիկերոնի։

ՀԱԿԱՌԱԿ այդպիսի իմաստասիրաց՝ի պայքար մտեալ Կիկերոնի, այնպէս ինն կարծէ, թէ ոչ կարէ զդէմ ունել նոցա՝ եթէ ոչ՝ի բաց բարձցէ զդուշակութիւնս. և զայն բառնալ՝ջանացեալ, ուրանայ զապառնեացն դիտութիւն, և պնդէ առնային Ճգամբ թէ չիք այնպիսի դիտութիւն՝ ոչ յաճ, և ոչ՝ի մարդոյ. և թէ նախասացութիւն բնաւ չիք։ Յորս օրինակաւ ուրանայ զյառաջգիտութիւնն այ, և զառնային մարգարէութիւն զգերափայլ քան զլոյս՝ մտոյ ձեռնարկութիւնք ցրել հնարի, առարկուած հակառակ իւր բերելով զպատգամախօսութիւնս ոմանս՝ դիւրինս առ՝ի հերքուն, թէպէտ և ինքն ոչ ըստ արժանին տկարացուցանէ զնոսին։ Ի մերժել զաստեղհմայիցն ախտաբաց կեղակարծ բանս՝ արդարեւ զօրանան խօսք Կիկերոնի, զի և իրօրէն այնպիսի են՝ որ ինքնին եղծանին և կշտամբին։ Ակայն առաւել նեղութիւք են հաւանեալքն յաստեղային Ճակատագիրս, քան զնա՝ որ զապառնեացն յառաջգիտութիւն բառնայ՝ի միջոյ։ Ա՛ման զի խոստովանել թէ գոյ ՚ած, և ուրանալ զյառաջգիտուն նորա զՀանդերձեալ, ահի յայնի խելագարութիւն է. որում և ինքնին խրատագած եղեալ յանձին կալաւ հաստատել և զգրեաւն. "Ա՛յց անզգամն՝ի սրտի իւրում, թէ ոչ գոյ ՚ած,, բայց ոչ յիւր դէմս, այլ այլոց։ Վ՛ասզի տեսեալ թէ առելի լիներ և գժտիւն, զՎոտաս ումն կացոյց՝ի միջի հակաՃառել յաղագս այսր խնդրոյ ընդդէմ ստոյիկեանց՝ի գիրս յաղագս բնութեան աստուածոյ. և ինքն զՎ՛ուկիլեայ՝ առ բոսն՝ ստոյիկեանցն մասին պաշտպան կացեալ՝ զկողմն առաւել կամեցաւ արդարացուցանել, քան զՎոտասայ՝ որ պնդեր թէ չիք բնաւ բնութեն ՚ածեղէն։ Ուստ՝ի գիրսն

յաղագս գուշակութեանէ, ինքնին Ալիկերան ազատագրէմ հակառակ կայ նախագիտութեանէ ապագայից։ Եւ զայս ամենայն Թուի առնել նա, զի մի արդեօք Ճակատագրի հաւանական տալով միտս՝ զանձնիշխան կամս կորուսանիցէ։ զի կարծէ նա՝ թէ յընդունելն միանգամ զապագայից գիտութիւն, Տարկաւ զՀետ գայցէ Ճակատագիր իբր անժխտելի։ Այսոյ Թողեալ ի բաց զմոլորաշարժիլ մարքառմունս իմաստասիրաց և զվիճմունս, մեք որպէս դաւանութեամբ զգերագոյն և զՀնչմարիտ Աստ, նոյնպէս զկամս և զգերակայ իշխանութիւն և գյառաջգիտութիւն նորա խոստովանիմք։ ոչ ինչ խիթացեալք թէ ակամայ առնիցեմք՝ զոր առնեմքն կամաւ, այսու զի յառաջ գիտաց նա թէ առնելոց եմք, որոյ յառաջգիտութէ չիք վրիպել։ Այսմանէ երկեաւ Ալիկերան՝ առ ի հակառակելոյ յառաջգիտութէ, որպէս ստոյիկեանք, զի մի լեցի զամենայն ինչ ի հարկադրութէ ասել, Թէպէտ և սիդէկն ի Ճակատագրէ լինել ամենայնի։

Ոսկ արդ զինչ երկիւղէր Ալիկերանի ի նախագիտութէ ապագայից, մինչև նկրտիլ ուսայասցուցանել զայն ալժգալի վիճաբանութէն։ Այս երկիւղէր նորա, զի թէ առաքինքն ամենայն իցեն նախ գիտացեալք, Տարկ է գալ նոցա այսու կարգաւ՝ որով որպէս գալոցք գիտելի եղեն կանխաւ. և եթէ այսու կարգաւ գայցեն, կարգ իրացն Հաւաստի լինի առաջի կանխագիտին. և եթէ կարգ իրացն Հաւաստի է, լինի Հաւաստի և կարգ պատՃառացն. զի անմտութէ է լինել իմիք, Թէ ոչ յառաջեսցէ պատՃառ ինչ արարող. իսկ եթէ պատՃառացն կարգ Հաւաստի է, որով ամենայն եղեալքն լինին, ապա ուրեմն Ճակատագրաւ լինին եղեալքս ամենայն։ Ի լինել ասէ, այսմ՝ այսպէս, ոչ ևս ի մերում իշխանութեան. ոչ ևս է անձնիշխանութիւն կամաց. զոր Թէ յանձն առնուցուամբ, ասէ, վերջ ի վայր ջրջի մարդկային կենցաղս բովանդակ. ի զուր են օրէնսդրութիւնք. վայրապար լինին կշտամբանք, գովութիւնք, դատուվանք, յորդորմունք. և ոչ արդարութէ իւիք սահմանեալ զըս-

տանին բարեացն վարձք, և չարաց՝ պատուհասք։ Այս
ոչ մի հեռանալ այսպիսի անարժանք և անտեղիք և մարդ-
կայնոցս իրաց վնասակարք յառաջ գայցեն, ոչ կամի ըն-
դունել զառաջադրեալն յառաջգիտութենէ. և յայն տագնապ
արկանել զառաքինի անձն՝ զի յերկուց աստի ընտրեսցէ
զմին, կամ զայն թէ կայ ինչ՝ի մէջտեղի իշխանութենէ, և
կամ թէ գոյ նախագիտութենէ ապատնեաց. զի անհնար
համարի կալ երկոցունց միանգամայն. այլ՝ի դնիլ միոյն,
համարի բառնիլ միւսոյն։ Այլ թէ գյառաջգիտութենէ ապա-
գայիցն ընտրիցեմք, ասէ, բառնի անձնիշխանութենէ կա-
մացն. և եթէ զանձնիշխանութենէ ընտրիցեմք, բարձեալ
է նախագիտութենէ։ Ասաի Աւգուստինոս՝ թէ և այր կորովի և
գիանաւոր, և կարի քաջ և հմուտ իրատատու վարուց
մարդկան, յերկուց յայսցանէ զազատ իշխանութենէ կա-
մաց ընտրեաց. և առ հաստատելոյ զնոյն՝ ուրացաւ զա-
պագայիցն յառաջգիտութենէ. որով կամեցեալ ազատս առ-
նել, արար սեղանակապուտս։ Իսկ անձն առաքինի ընտրէ
զերկաքանչիւրն իսկ. զերկուսն և խոստովանի, և հաւա-
տովքն ածպաշտութենէ հաստատէ զերկոսեանն։ Այլ զինքդ
լինիցի այդ, ասէ նա. քանզի եթէ գոյ նախագիտութենէ ա-
պառնեաց, զհետ գոյցեն ամենայն կապակցեալքն, մինչ
հաւանեալ յայն՝ զի ոչ մի ինչ կայցէ՝ի ձեռին կամաց մե-
ծոց։ Այս եթէ կայ ինչ յանձնիշխան կամս մերկընդ նոյն
աստիճանս թևակոխեալ հաստանիցեմք յայն՝ զի ոչ գուցէ
նախագիտութենէ. քանզի այսպէս ընդ ասացեալսդ ունիմք
անցանել։ Այլ գոյ անձնիշխանութենէ կամաց, ապա ոչ
ամենայնի՝ի ձեռս ապագրեալ լինի. եթէ ոչ՝ի ձեռս ապագրեալ
լինի ամենայն, ոչ գոյ հաւաստի կարգ ամենայն պատճա-
ռաց. եթէ հաւաստի կարգ պատճառաց չիք, և ոչ իրացն
կարգ հաւաստի լինի նախագիտին այ, որոց չէ մարթի
լինել առանց կանխելոյ արարողք պատճառաց. եթէ ի-
րացն կարգ չէ հաւաստի առ նախագիտան ած, ոչ ամե-
նայնին գոյցեն այնպէս՝ որպէս գալոցս գիտաց զնոսա.
իսկ եթէ ոչ գան ամենայն ըստ որում նախ՝ի նմանէ ե-
ղեն գիտացեալ, ապա, ասէ, ոչ գոյ յած յառաջգիտութենէ
ապառնեաց։

Ա՛յլ մեք առ այսպիսի ՝ձեր[ն]դդէմ և ամբարիշտ ժողովուրդս ասեմք . և ՝ձե գիտէ զամենայն յառաջ քան զլինել նոցա , և մեք անձնիշխան կամաւ առնեմք՝ զոր ինչ միանգամ զգամք և ՝նանաչեմք լինել մերումն կամելով : Իսկ զամենայն ՝ի ՝նակատագրէ լինել՝ ոչ ասեմք . այլ զսորին հակառակն ասեմք՝ թէ ոչ ինչ լինի ՝նակատագրեալ . քանզի և զ՝նակատագիրդ անուն՝ ուր սովոր են ՝ի կիր առնուլ հնարիչքն , այս է՝ ՝ի կարգադրութենէ աստեղաց՝ յորժամ յղանայ ոք կամ ծնանի , թող թէ զիւրն իսկ զրաբանութենէ ասացեալն , ցուցանեմք ոչ ինչ զօրել ա՛ մեռեալին : Իսկ զկարգ պատ՝նառացն , յորում առաւելապէս կարող են կամքն ՝ով , ոչ ուրանամք , և ոչ ՝նակատագրի անուն նմա տամք , բայց եթէ զյատկականդ ՔՈՀ համարիցիմք առեալ՝ի ՔՈՀէ բայէ , այս է՝ խօսել . քանզի ոչ անգիտանամք զգրեալն՝ի սուրբ գիրս “Ա՛ի անգամ խօսեցաւ ՝ած , և երկուս զայս լուաք : ՇՈՎ է զօրութեն , և քո տէր ողորմութի . և դու ՀատուցանԷս իւրաքանչիւր ըստ գործս նոցա ... Ա՛ղ . ՝ի : Օ՛ի որ ասիդ , “ միանգամ խօսեցաւ ,, , իմանի անշարժաբար կամ անյեղափոխ խօսեցաւ , որպէս անփոփոխապէս ծանեաւ զամենայն ըզլինելոցսն , և զորս լինքն իսկ առնելոց է : Ա՛յսու որոյ ըստ այսմ պատ՝նառի կարող էաք զՔՈՀ բառդ ստուգաբանել՝ի խօսելոյ , թէ չէր սովորութի լեալ յայլ իրս իմանալ զձայնդ , յոր ոչ կամիմք թէ ընթերցանելեացն միտք խոտորեսցին : Ա՛կայն չէք հետևեցուցանել , թէ՝ի Հատատի գոն առ ՝ած կարդի պատ՝նառացն , ոչ ՇԱՅՑԷ ինչ յիշ խանութենէ կամաց մերոց . քանզի և մեր իսկ կամք՝ի կարգի անդ պատ՝նառացն են , որ Հատատին է առ ՝ած , և՝ի նորա յառաջգիտութենին փակին . իբր զի մարդկայինս զործոց պատ՝նառք՝ մարդկային կամքն են . նմին իրի որ յառաջն գիտաց զամենայն պատ՝նառս իրաց , յայտ է թէ՝ի նոյն պատ՝նառսն ոչ անգիտացաւ և զմեր կամս , զորս յառաջն ծանեաւ մերոց գործոցն պատ՝նառս լինել :

Ա՛նզի և այն՝ զոր յանձն առնու Ա՛լիէբրոն , թէ ոչ լինի ինչ՝ եթէ ոչ կանխեսցէ պատ՝նառ արարող , բաւական

է առ՝ի նորայն յանդիմանութեէն յառաջիկայս ինդիր։ Օ՞ի զի՞նչ օգտիցեմս ասել՝ թէ ոչ լինի ինչ առանց պատճառի, և թէ ոչ ամենայն պատճառ է ըստ Ճակատագրի. զի գոյ պատճառ պատահական, գոյ բնական, գոյ և կամաւորական։ Շատ է, զի ամենայն որ և լինի, խոստովանեսցի լինել միայն՝ի նախընթաց պատճառաց ուստեք։ Վասնզի զպատճառսն ասացեալս ըստ դիպուածոյ բախտի, չաւ սեմք մեք ոչ ինչ լինել, այլ զաղանիս ասեմք, և ընծայեմք զայն կամացն ՚ով Ձիմարտի, և կամ այլոց Հոգւոց. և ըզ բնական պատճառսն ոչ իւիք տրօհեմք՝ի կամացն նորա՝ որ ամենայն բնութեէ հեղինակ է և հաստիչ։ Իսկ կամաւոր բանիքն պատճառք՝ կամ ՚ով են, կամ հրեշտակաց, կամ մարդկան, կամ այլոց ևս կենդանեաց, եթէ օրէն իցէ կամն անբան կենդանեաց կոչել զայն շարժմունս՝ որովք առնեն ինչ ինչ ըստ իւրեանցն բնութեէ՝ի ցանկալն իւ-միք, և կամ՝ի խորշելն։ Այլ և հրեշտակաց կամն ասեմ, կամ զբարեացն՝ զորս հրեշտակս ՚ով անուանեմք, և կամ զչարացն՝ կոչեցելոց հրեշտակք սատանայի կամ դևք։ Ա-րդ լինի խնդասիրել՝ թէ արարող պատճառք ամե-նայնի որ լինին, են միայն կամաւորականք, այս ինքն է՝ այնք բնութէ, որ Հոգի կամ շունչ կենդանութէ է. քանզի և օդս կամ Հողմ՝ ասի Հոգի կամ շունչ. բայց զի մարմին է, ոչ է Հոգի կենդանութէ։ Ա՞ն որոյ Հոգի կենայ՝ որ կենդանի առնէ զամենայն, և ստեղծիչ է ամ մարմնոյ և ամենայն արարած Հոգւոյ՝ է ինքն ած, Հոգի անեղական։ Ի կամանորա է գերագոյն իշխանութէն, որ՝ի բարի կամս էզական ոգւոցն օգնական լինի, զլաւ կամսն դատի, և զա-մենայնսն նախախնամէ. ոմանց տայ կարողութէս, և այ-լոց ոչ տայ։ Օ՞ի որպէս համօրէն բնութէից արարիչ է, նոյնպէս կարողութէից ամենայնի տուիչ, այլ ոչ կամայ թիւրելոց. քանզի կամք չարք ոչ՝ի նմանէ են, իբր զի հակառակք են բնութեան՝ որ՝ի նմանէ է։ Ա՞յդ մար-միքն նեղքդ անկեալ են կամաց, ոմանք մերոցս կամաց, այս է՝ համայն մահկանացու կենդանեաց, և առաւել մարդկան՝ քան անասնոց. ոմանք հրեշտակացն կամաց.

բայց ամենայնիւքն յաւէտ ՚ի կամացն ՚ի ներքոյ կան, ո՞ր
բում և ներքոյ անկեալ են կամք ամենայն. զի ոչ ունին
իշխանութիւն, բայց զոր նայն ընդոհէ։ Այսպս ուրեմն պատ-
ճառ իրաց արարողական և ինքն անարար, ՚ած է. իսկ
այլ պատճառք՝ և առնեն և արարածք են կամ եղական.
որպիսի են ամենայն ոգիք ստեղծեալք և առաւել քա-
նաւորք. բայց մարմնաւոր պատճառք, որ լինին յաւէտ՝
քան առնեն, ոչ ՚ի համարի արարող պատճառաց են դա-
սել. քանզի զայն ևեթ կարեն՝ զոր ՚ի նոցանէ ներգոր-
ծեն կամք հոգւոցն։ Այլ զիա՞րդ ապա կարգ պատճառացն
որ հաւաստին է կանխագիտին ՚ած, արգելուցու առ ՚ի չը-
լինելոյ իմիք ընդ մերով կամաւ, որովհետև ՚ի նմին իսկ
՚ի կարգի պատճառաց գնահատպատիւ տեղի ունին կամքս
մեր։ Ա՞ման որոյ Աւիկերոն ընդ այնոսիկ մտցե ՚ի պայ-
քար, որք զայն կարգ պատճառաց ասեն ըստ Ճակատա-
գրի լինել. կամ յանուն Ճակատագրի կոչեն, յորմէ
մեքս խորհիմք, առաւել ՚ի պատճառս Ճայնին՝ որ ոչ զՃըշ-
գրիտն տայ իմանալ։ Իսկ զի ուրանայ զհաւաստին լինել
կարգի ամենայն պատճառաց, և Թէ չէ այն ծանուցեալ
՚ած յառաջգիտութենէն, յայսմ գնա առաւել քան զսոսկ
կեանս առեմք և մերժեմք։ Ա՞ման զի կամ ուրանայ
զգոլն ՚ած, զոր յայլոց դէմս ձևացաւ առաջի առնել ՚ի
գիրսն յաղագս բնութենէ աստուածոց, և կամ եթէ խոս-
տովանի Թէ գոյ ՚ած, և ուրանայ լինել կանխագէտ ա-
պառնեաց. ահա և այսպէս ոչ ինչ ընդհատ ասէ քան
զգրեալն. "Ի՞սաց անզգայն ՚ի սրտի իւրում, Թէ ոչ գոյ
՚ած ,, ։ Ի՞անզի որ ոչն է նախագէտ ամենայն ապագայից,
նա արդարեւ ՚ած ոչ է։ Ա՞յլն իրի և կամքս մեր այնպէս
կարողանան, որպէս ՚ած յառաջ գիտացեալ կամեցաւ կա-
րել նոցա. ուստի զոր ինչ կարեն, հաւաստաբար կարեն,
և զոր առնելոցն են՝ առնիցեն համայն. վասն զի նա՝ ո-
րոյ անվրիպելի է յառաջգիտութիւն, գիտաց յառաջմանէ
Թէ ունելին կարել և առնել։ Ա՞որպէս վասն եթէ ախորժելի
ես յայլ ինչ յարմարել զՃակատագիրդ անուն, ընտրելի
ասել՝ Թէ Ճակատագիր տկարագունին է կամք հզօրին,

որ ունի զնա յիւրում իշխանութեն, քան համարել թէ այնուհիկ կարգաւ պատճառաց՝ զոր ոչ ըստ սովորութեն, այլ ըստ կամի Ձակատագիր կոչեն ստոյիկեանք, բառ նայցի անձնիշխանութեն մերոցս կամաց։

ԳԼՈՒԽ Ի

Մթեն տիրէ հարկ ինչ՝ ի վերայ կամաց մարդկան։

Ասացեր էիր արժան երկնչել՝ ի հարկէ անտի, յորմէ ստոյիկեանցն զանգիտեալ, աշխատեղեն այնպէս իմն որոշել զպատճառս իրաց, զի զոմանս ազատ կացուսցեն՝ ի հարկէ, և զայլս ընդ նուաւ արկանիցեն. և յաղագս ցեղսն՝ ի հարկէ՝ կարգեալ եդին և զկամս մեր, զի մի՛ ընդ հարկաւ լինելոյն՝ ոչ եւս ազատք իցեն։ Ո՛չ է եթէ մեր հարկ զայն է ասելի՝ որ՝ի մեզ՝ում իշխանութէն ոչ է, այլ թէ և չկամիցիմք՝ առնեն զոր կարէն, որպիսի է հարկ մահու, յայտ է թէ այն կամք՝ որով լինի կեալ ուղիղ կամ թիւր, ոչ է ընդ այսպիսի հարկաւ. քանզի բազում ինչ առնեմք, զոր եթէ չկամիցաք, առնէաք իսկ ոչ։ Ուր յայտ առաջին է նոյն ինքն կամէն. զի եթէ կամիմք, գոյ. եթէ չկամիմք, ոչ գոյ. քանզի ոչ իսկ կամիցաք, եթէ չկամիցաք։ Իսկ եթէ հարկ զայն սահմանիցեմք, որով ասեմք՝ հարկ է զի այսպէս իցէ ինչ կամ այսպէս լինիցի, չդիտեմ ընդէր երկնչիցիմք յայնմանէ՝ իբր բարձող աստուածութէն կամաց՝ ի մէնջ։ Քանզի և ոչ զայ կեանս և գյաւաջգիտութէն ընդ հարկաւ արկանեմք՝ յասել մեր թէ հարկ է այ կեալ միշտ, և զամենայն գիտել կանխաւ. որպէս և կարողութէն նորա ոչ նուազի յասելն մեր, թէ չկարէ մեռանել և սխալել. զի այսպէս չկարէ զայգ, մինչ զի կարելն նուազուցանի էր կարողութէն նորա. և ձըշմարտութէ ամենակարող ասի նա, որ չկարէ մեռանել և սխալել։ Ո՛չ ասի ամենակարող առնելով զոր կամի, և

չկրելով զոր ոչ կամի . որ եթէ լինէր նմա , ոչ և ամենա-
կարող էր . նմին իրի յայն սակս ասի չկարէ ինչ ինչ , վասն
զի ամենակարող է : Այսպէս նմին օրինակի և՝ յորժամ ա-
սեմք , հարկ է զի ՚ի կամիլ մեր՝ անձնիշխանաբար կամի-
ցեմք , զՀշմարիտն ասեմք առանց յերկուանալոց , և ոչ այ-
նու զանձնիշխանութիւնն դնեմք ընդ հարկադրութիւն ,
որ զազատութիւնն ՚ի բաց բառնայ : Այլ ուրեմն են կամք
մեր , և նոքին առնեն զոր ինչ կամելովին առնեմք . որ և
չլինէր , եթէ ոչ կամէաք : Սակ զոր միանգամ յայլոցն
կամաց կրէ ինչ ոք յակամայս , զօրէ և այնպէս կամք , ոչ
եթէ կրողի մարդոյն կամքն , այլ՝ այ իշխանութիւն : Ա-
նա զի եթէ կամք գոյր միայն , և չկարէր զոր կամէին , խա-
փանեալ մնայր ՚ի զօրագոյն կամաց . սակայն և այսու ոչ
դադարէ ՚ի լինելոյ կամք , ոչ այլոյ ուրուք՝ այլ նորա որ
կամէր , Թէպէտ և չկարէր զոր կամէին՝ ՚ի գլուխ տանել :
Այսան որոյ զոր ինչ և կրէ մարդ առանց իւրոց կամաց ,
ոչ պարտի ընծայել կամաց մարդկան , կամ հրեշտակաց ,
կամ այլոց եղեկան հոգւոյ , այլ յաւէտ կամաց այնր՝
որ տայ իշխանութիւն կամողացն :

Այսպա ուրեմն ոչ եթէ չիցէ ինչ ՚ի կամս մեր՝ այսու զի
յառաջ գիտաց Աստուած որ զինչ լինելին էր ՚ի կամս մեր . զի որ
յառաջ գիտաց զայն , ոչ եթէ զոչէն գիտաց : Այլ եթէ
նախագիտողն զլինելոցն ՚ի կամս մեր՝ ոչ եթէ զոչէն
այլ զէն նախագիտաց , անշուշտ նախ գիտելովին իսկ նո-
քա կայ ինչ ՚ի մեր անձնիշխան կամն : Այմին իրի ոչ իւիք
բռնադատիմք՝ եթէ ՚ի պահէլն գյառաջգիտութիւն Աստ՝
բառնալ զկամաց անձնիշխանութիւն , և եթէ ՚ի պահելն
զանձնիշխանութիւն կամաց՝ ուրանալ , որ է անտեսչի , զայ
կանխագէտն լինել ապառնեաց . այլ պինդ ունիմք զեր-
կաբանչիւրն , զերկուան և Հաստատութիւն և Ճշմարտա-
պէս խոստովանիմք , զայն՝ զի բարիոք Հաւատասցուք , և
զայս՝ զի բարիոք կեցցուք . զի յարաչարս լինի կեալ , եթէ ոչ
բարւոք Հաւատայցեմք զայ : Ասասի քաւ ՚ի մէնջ ուրա-
նալ զնորա յառաջգիտութիւն առ կամելոյ մեր ազատ լինել .
ուր նորա օգնելովին եմք կամ եղեցուք ազատք : Ասասի

չէն վայրապար ինչ օրէնք, կշտամբութիւնք, յորդորմունք, դովութիւնք և պարսաւանք. քանզի և զայսոսիկ նախ գիտաց լինելոցս. և զօրէն այնչափ ուժգին, որչափ և գիտաց կանխաւ թէ զօրելոց էն. որպէս և խնդրուածք զօրէն առ ընդունելոյ զայնս՝ զորս և յառաջն գիտաց թէ չնորհելոց է խնդրողաց. և արդարութիւ սահմանեալ էն բարեգործութեացն վարձք, և մեղաց՝ տանջանք։ Այսու ևս ոչ եթէ յայն սակս անպարտ լինի մարդ, վասն զի յառաջագիտէ գիտաց նա, թէ մեղանչելոց է նա. այլ ընդ հակառակն չէ երկբայել, թէ մեղապարտ գտանի մարդս 'ի մեղանչելն. վասն զի որոյ յառաջագիտութիւն անսխալ է, նոյն ինքն կանխաւ գիտաց թէ մարդն մեղանչելոց է, ոչ եթէ ձևացուցանէ, կամ բախտն և կամ այլ ինչ ընդ մէջ մտնէ։ Այլ եթէ չկամիցի մարդն, մեղանչէ և ոչ. այլ եթէ մեղանչել ոչ կամիցի, նա և զայդ յառաջ գիտաց բարձրեալն։

ԳԻ ՅԱՒԵՍ ԺՈ.

Ցաղագս հանրական նախախնամութեան նորա, ընդ որոյ օրինաւք փակին ամք իւք։

Այր ոմն մեծ և չքմարիտ է ընդ իւրումն Հանսի և ընդ սուրբ Հոգւոյն. որք երեքեանն մի էն, մի ոմն ամենակալ ստեղծիչ և արարող ամենայնի Հոգւոց և ամենայնի մարմնոց. և 'ի նորա պարգևաց լինին երջանիկք՝ որք միանգամ ձըղմարտութեամբ են այսպիսիք՝ և ոչ ունայնութեամբ երջանկացեալք։ Այր արար զմարդ կենդանի բանաւոր 'ի Հոգւոյ և 'ի մարմնոյ. որ և 'ի մեղանչել մարդոյ՝ ոչ անպատուհաս եթող զնա, և ոչ անտես արար յողորմութիւն։ Այր և ետ բարեաց և չարաց զգալ, որպէս և քարանց, զգեհաս բուսականաց կամ սերմնական ընդ ծառոց, զկենաս զգայուն ընդ անասնոց, իսկ զկենաս իմացական ընդ հրեշտակաց միայն։ Նմանէ է ամենայն եղանակ, ամէն տեսակ, ամենայն կարգ. 'ի նմանէ չափ և թիւ և կշիռ.

՝ի նմանէ է որ ինչ բնաբարն գոյ ըստ իւրաքանչիւր ազգի և ըստ իւրաքանչիւր յարգի ։ Ի նմանէ են սերմանք տեսակաց, և տեսակք սերմանց, որպէս և շարժմունք սերմանց և տեսակաց ։ Ար ետ և մարմնոյ զծնունդ , զգեղ , զառողջութիւն, զարգասաւորութեն ատելութեն, զանդամոց կարգադրութիւն , և զկեանս համաչնչութեն ։ Ար և անբանականն ոգւոյ ետ զիշողականն , զզգայարանս , և զբաղձանս կամ զյօժարութեն. իսկ բանականին յաւել զմիտս , զհանճար և զկամ ։ Ար ոչ լոկ զերկին և զերկիր և ոչ միայն զհրեշտակ և զմարդ , այլ և ոչ զդուշնաբեայ և զանարգ կենդանւոյ զաղիս , ոչ զթռչնոյ զփետուր , ոչ զծաղիկ խոտոյ, և ոչ զտերև ծառոյ լքանէ առանց իւրաքանչիւր մասանց յարմարութեն, և առանց բարեհամբոյր հիւ խաղաղութեն ։ Այլ ոչ իւիք է հաւանելի , թէ նա ինքն զթագաւորութեն մարդկան և զնոցայն տէրութեն և ծառայութեն՝ տարագիրս Թողուլ կամիցէ յօրինաց իւրումն տեսչութեն ։

ԳԻՒՄԻՍ ԺԴ

Որպիսի ընթացիւք իւրեանց հին հռովմայեցիք արժանի եղեն , զի Ձմարիան ՅԾ , զոր ոչն իակ պաշտէին , տացէ նոցա զաճումն տէրութեն ։

Ա՛ՅՍՈՒհԵՏԵՒ ապա տեսցուք՝ ո՛ր կենցաղք էին հռովմայեցւոց , և յո՞ր սակս արժան համարեցաւ ձեռն տալ յաճումն տէրութեն նոցա Ձմարիտն ՅԾ , յորոյ ՛ի բռնի կան և Թագաւորութիւք երկրի ։ Ար զի մարթասցուք լի բովանդակ Ճառագրել զայս խնդիր , առ այս կանխեցաք դնել զյառաջանցեալ դիրդ , ցուցեալ Թէ յայդմ ոչ մի իշխանութեն է դից նոցա , զորս և ծանակելի իրօք արժանի վարկան պաշտամանն . նոյն և զվերոյգրեալ մնասունս առաջնիկայ մատենիս վարեցաք ցայս վայր առ՝ի հերքումն Ճակատագրի . զի մի ոք՝ որ հաւանեալ իսկ իցէ ՛ի միտս՝ Թէ ոչ դիցապաշտութիւք ընդարձակեցաւ և պահեցաւ

հռովմէականն տէրութիւն, անճանօթի թերևս ումեքէն ձակատակագրի ընծայեսցէ զայն, քան թէ ամենազօր կամաց մեծին ՅԱ։ Արդ հինքն այնուհետև և նախնի հռովմայեցիք, որչափ ինչ նոցին պատմութիւնք ուսուցանեն, թէպէտ և հանդոյն այլոց ազգաց, բայց յերբայական ժողովրդենէն, պաշտօնատարք էին սուտ աստուածոց, և զոհէին դիւաց և ոչ ՅԱ, սակայն նախանձաւորք էին գովութեան, և առատաբաշխք ընչից, մեծի փառաց ցանկացողք, և չափաւոր մեծութեաց. զփառս ուժգին սիրեցին, վասն այնր կամեցան կեալ, վասն այնր մեռանել անգամ ոչ զանգիտեցին. և զայլ ևս ցանկութիւնս սովին անհնարին փառասիրութիւն նուաձեցին։ Այս զի անշուք իմն թուէր նոցա ծառայութիւն, իսկ տիրել և հրամայել՝ շքեղափառ, ամենայն փութով ամպռութիւն գուն գործեցին նախ ազատ կացուցանել զՀայրենիս իւրեանց, և ապա դշխոյ իշխեցող։ Զայն այսորիկ ոչ հանդուրժելով և արքայականն իշխեցողութիւն, սահմանեցին տարևոր իշխանութիւն ՚ի ձեռս երկուց հրամանատարաց, զորս անուանեցին Կոնսուլս՝ իբր խորհրդատուս, որ և ըստ Յունացն ոմոյ Հիւպատոսք ասին. և ոչ կոչեցին թագաւորս կամ տէրս. զի թէպէտ և թագաւորն ըստ լատին բառին ասի Ռէքս, իբր զեկավար կամ առաջնորդ, բայց զթագաւորականն պերճութիւն ոչ համարեցան նոքա բարեկարգութիւն ուղղի կամ վարողի, և ոչ բարեսէր ընտանութիւն խորհրդատուի, այլ ամբարհաւճութիւն իշխեցողի։ Ասսի մեծ ժեալ նոցա զթագաւորն Տարկուինիոս, և կացուցեալ զՀիւպատոսս, կատարեցին զայն, զոր մատենագրող իրացս Պաղեստինոս յարե՚ի գովեստ հռովմայեցւոց, թէ ընդ ստանալ քաղաքի զիւրն ազատութիւն, ժժուարահաւատ գոգցես թուի՝ թէ որչափ փութով ձեռաց նա ՚ի սուղ ժամանակի, նոյնչափ և փառասիրութիւն յորդեաց։ Այդ այս գովութիւն որ փուճն և իղձ փառաց զբաղմապատիկ զարմանալիսն զայն ՚ի գլուխ տարաւ, գովելիս արդարեւ և փառացիս առ կարծիս մարդկան։

Ի գովութի առնու նա ինքն Պաղեստինոս առ իւրովք

ժամանակօք զերևելն արև հոչակելիս՝ զ|՝արկոս |յատոն, և զ|յայիոս |եսար. և ասէ Թէ ընդ երկար ժամանակս ոչ երևեցաւ յայմմ պետութէն այր ոք նշանաւոր առաքինութէբ, այլ առ իւրով ժամանակաւ էղեն երկոքինն նոքա յառաքինութէն գերազանգք, և՛ի վարս այլազանք։ Իսկ՛ի գո վեսա |եսարու զայն դնէ՝ Թէ մեծի իշխանութէն ցանկայր, զինուորութէն և նորանոր պատերազմի, յորում առաքինութէնն արտափայլեսցէ։ |՝Այսու օրինակաւ իղձ լինէին ազք առաքինիք, զի |՝Աելլենայ դիցուհի պատերազմաց՛ի մարտ գրգռեսցէ զտառապեալ ազինս՝ շարժելով զնոսա յարեան Հապալիս, որպէս զի պայծառասցի հռովմայեցոցն առաքինի քաջութէն. և զայս ներգործէր անշուշտ ըղձումն այն գովութէն, և փառացն ցանկութէն։ |՝Ւ այսպէս՛ի սիրոյ անտի՝ նախ ազատութէն և ազա իշխեցողութէն, և տարփմամբ գովութէն և փառաց՝ բազում ինչ մեծամեծս գործեցին։ |՝Ըրկուց այսոցիկ վկայութէն տայ և մեծանուն քերթող նոցա |՝Իրդիլիոս՝ յասելն.

“|՝Ես զ|՝արկուխոս զհերքեաքն՛ի գահէ,
|՝Ընդունել դարձեալ |՝Որսենաս պընդէ,
|՝Յանձուկ պաշարուին զքաղաքն արկանէ.
|՝Ա|Ւ |՝Նէասեանց ազատութեան իղձ,
Ի սուր կամակար ինքնակամ դիմէ ... |՝Ա|՝Նէասեանն ը։

|՝Այս յայմմ ժամանակի մեծ իմն Թուէր նոցա՝ կամ աբիաբար մեռանել, կամ ազատօրէն կեալ։ |՝Այլց կետ՛ի ձեռս բերելոյ զազատութէնն՝ այնչափ զօրացաւ փառասիրութէն, մինչև փոքր էր նոցա ազատութէնն լոկ՝ Թէ ոչ և իշխեցողութէնն լինէին գամագիւտ, ցորչափ մեծ հասին ըղձին զայն՝ զոր իբրև՛ի բերանոյ |՝Քամազդայ բարբառի նոյն բանաստեղծ.

“|՝Այ խիստն Հերա արդ ահընկէցն
՛ի ծով, յերկինն և յերկիր,
|՝Զմիտան՛ի լաւըն չըրջեսցէ
իմ խորհըրդոյս զուգակիր։
|՝Հնարհակալն օգնել Հռովմայ
և ծերակոյտ որերոյն.

Գնար եկեսցե՛ ի ընուլ ամաց ,
զի այս սահման է վերնոյն ,
Զոնն Աբսարկեայ ըղձըմեխա
ընդ Աիւկենեայց քաջազանց
Նըկուն գործեալ , և պարտեալց
Թագ կապեսցե Աքգոսեանց ... ԱՆԷԱՆ ։

Ո՛այսոսիկ զոր Ալ իրդիլիոս իրը ՛ի նախագուշակութէ Աբամաղդայ ՛ի ներքս ածէ , ինքնին յուշ ածէր զայն ինչ եղեալն , և սեսանէր զոր լինելին . զորս և յայն սակս յիշատակել կամ եղև , զի ցուցից՝ Թէ հռովմայեցիք այնպէս իշխեցողք եղեն զինի ազատութէնն , մինչ ՛ի մեծամեծ գովութիս նոցա կարգել զայն ։ Ասսի և յիշատակեալ քերթողդ առ Ճարտարութէն այլոց ազգաց դերազանց և գեալ զՀռովմայեցւոցն բնիկ Ճարտարութէ՛ ՛ի Թագաւորել , ՛ի հրամայել և ՛ի նուաձել զժողովուրդս , ասէ այսպէս ,

“Ձուլեսցեն այլք արուեստակեալ
քաջահընչակ պղընձիս ,
Նո՛ ծն և ծն դեմս ՛ի կրձեայց
՛ի լոյս ածցեն կենդանիս .
Վաղ դատ վարեալ , զերկին ծըրեալ ,
զելըս Ճառեալ զաստեղաց ,
Դու իշխան կալ ժողովըրդոց ,
Հռովմայեցիք , ՛ի յուշ ած .
Օրինադիր գոլ Հաշտութեան ,
այս քո արուեստք եղիցին .
Աբգահատել հնազանդելոց ,
գոլ սանձակոծ հըպարտին ... ԱՆԷԱՆ ։

Աբդ զայսպիսի արուեստս այնչափ հմուտաբար ՛ի կիր առնուին Հռովմայեցիք , ցորչափ հեռի էին ՛ի հեշտութէց և ՛ի մեղկութէց հոգւոյ և մարմնոյ , ՛ի ցանկալոյ և ՛ի բազմացուցանելոյ Ճոխութէնս , որովք և ՛ի վարուցն ապականեցան և ՛ի յափշտակելոյ զինչս քաղաքացւոցն տառապելոց , և ՛ի վատնելոյ զնոսն ՛ի պիղծ խաղարկուս Թատերականս ։ Ասկ ՛ի զօրանալ և ՛ի յաճախել այսպիսեաց ապա-

կանագործաց՝ ՚ի ժամանակին յորժամ գրէր Պաւղոսիոս, և նուագէր Պ իրգիլիոս, զայսպիսի Ճարտարութեի արուեստից ոչ էս ՚ի պէտս պատուոյ և փառաց վարէին, այլ ՚ի նենգութիս և ՚ի խաբէութիս։ Պ ան որոյ նա ինքն Պաւղոսիոս ասէ . “ Յառաջագոյն փառասիրութիւն առաւել ներգործէր յոգիս մարդկան՝ քան ագահութի. ուր սկսան առաջին հուպ է յառաքինութի, Ո՛ի թէպէտ և փառաց և պատուոյ և իշխանութի՝ միօրինակ ցանկալ և բարին և վատթարն, բայց լաւն ընդ Ճշմարիտ շաւիղ ընթանայ. իսկ վատթարն քանզի անբարի է յոլղել արուեստէ, Ճգնի նենգանօք և խաբէութիք ,, ։ Պ արիւք արհեստ այն է, առաքինութի և ոչ պատիր փառախնդրութի հասանել ՚ի պատիւ և ՚ի փառս և յիշխանութի. որոց արդարեւ միաւ պէս ցանկալ բարին և վատն, այլ բարին աւելի ընդ Ճըշմարիտն գնալ Ճանապարհ՝ Պ՛անապարհ՝ առաքինութեին է, ընդ որ է գնալ ՚ի փառս և ՚ի պատիւ և յիշխանութի՝ իբր ՚ի վախճան ստանալի ։ Պոյն այս բնաւորեալ էր առ հռովմայեցիս, ըստ որում և մեհեանք դից նոցա յայտ առնեն, ուր կից առ իրեարս կառուցեալ էին տաճարք առաքինութե և պատուոյ, զի առ աստուածս ունէին զտուրսն ՚այր։ Ո՛րպէս գոյ իմանալ՝ թէ զոր վախճան դնէին առաքինութե, և յոր վարէին զայն բարեկիրքն, այս է՝ ՚ի պատիւ. զի չարք անհաս գոլով յառաքինութե՝ թէ պէտ և պատուոյ ցանկանային, այլ անբարի արհեստիւ հնարէին ՚ի ձեռս բերել՝ նենգանօք և խաբէութիք ։

Պ աւագունի գովութե արժանացաւ Պատուն, զի ասէ զնմանէ Պաւղոսիոս. “ Պրչափ անփառասէր էր, նոյնչափ փառք զհետ երթային նորա ,, ։ Պ ան զի փառքն՝ յոր առփայլին հռովմայեցիք, զի՞նչ է՝ բայց վարկ մարդոյ՝ ՚ի լաւ կարծիս եղելոյ զմարդոյ. նմին իրի լաւագոյն է առաքինութե, որ ոչ չատանայ վկայութե մարդոյ՝ բայց միայն իւրոյ մտացն խղճի. ըստ որում ասէ առաքեալ . “ Պարծանք մեր այս են, վկայութե մտաց մերոց ,, ։ Ե. Կոր. ա. 12։ Պ ւ այլուր. “ Ո՛չ գործ իւր կշռեսցէ իւրաքանչիւր ոք, և ապա անձին իւրում միայն պարծանս տացէ, և մի առ ընկէ-

բաւն ,, · Կ·աղ· Ը· 4 · Ի՛պա ոչ եթէ առաքինութեին պար-
տի զփառաց զկնի ընթանալ և զպատուոյ և զիշխանութեի՝
յորս նորա ձկտիլն , յոր և դովելի արհեստիւ հասանել
նկրտիլն բարւոյն, այլ փառքն զհետ առաքինութեի : Օ՛ի
և ոչ Ձմարիտ առաքինութեի՝ բայց որ յայն կատարած
ուշ եգեալ գնայ, ուր կայ բարին մարդոյ, քան զոր լաւա-
գոյն ոչ կայ : Ուստի և պատիւ զոր Աստուն խնդրէր, ասէ
Պաւլոս առաքեալ , ոչ՛ի նմանել խնդրելի էր , այլ քաղաքն ու-
նէր տալ զայն ոչ խնդրողին՝ սակս առաքինութեի նորա :

Ի՛յլ որովհետեւ յայսմ ժամանակի երկու կային հռով-
մայեցւոց նշանաւորք յառաքինութեի , Կեսար և Կատոն,
սորայն առաքինութեի հպատոր ևս թուի առ Ձմարտու-
թեի քան զԿեսարուն : Կ՛ասն որոյ թէ որպիսի էր՛ի ժա-
մանակին յայն քաղաքն, և որպիսի լեալ էր յառաջն, յայն
արկցուք՛ի բանս նորին Կատոնի . “ Կ՛ի կարծիցէ, ասէ, թէ
„ նախնիքն մեր՛ի ձեռն զինուց՛ի փոքուէ մեծացուցին
„ զպետութեին : Օ՛ի թէ այդպէս էր, առաւել ևս չքնաղ
„ առ մեզ լինելոց էր այն . իբրև զի մեծ ևս յաձախու-
„ թիւն է մեր քան առ նոսա՝ գաշնաւորացն քաղաքա-
„ ցեաց, այլ և զինուց և առնու ձիոյ : Ի՛յլ այլ էին որ զնոսա
„ մեծս արարին, և այն առ մեզ չիք . առանին հոգոցու-
„ թեի, արտաքոյ արդար իշխողութեի, միտք ազատ՛ի խոր-
„ հելոյ բմբռնեալ՝ ոչ՛ի յանցանսն, ոչ՛ի հեշտասիրութեի,
„ Կ՛յոցիկ փոխանակ ունիմք մեք զցանկասիրութեի և
„ զագահութեի, հասարակաց զչքաւորութեի, առանձնա-
„ կի զփարթամութեի . դովեմք զմեծութիս , զհետ եր-
„ թամք անգործութեի . ընդ բարիս և ընդ չարս չառ-
„ նեմք խտիր . զառաքինութեի զվարձս բռնանդակ յինքն
„ գրաւեր իշխանասիրութեի : Կ՛ու ջեն ինչ զարմանք . զի ուր
„ դուք առանձնաբար զանձանց խորհիք, ուր՛ի տան հիշ-
„ տութեց ծառայիք, և ոմն արծաթոյ և ոմն մարգահա-
„ ձութեի, սովիմք լինի համարձակ յարձակումն՛ի վերայ
„ անխնամ պետութեի ,, · Պլուտոս :

Զի որ զայսոսիկ լսէ քանս զԿատոնի կամ զՊաւլոսեան-
սի , համարիցի թերևս՝ թէ որպէս հռովմայեցիքն առա-

ջինք, այսպիսի լեալ իցեն յայնժամ ամենեքին, կամ բազմագոյնքն։ Եւ այդպես է. ապա թէ ոչ չլինէին Հնդիկք այլ բանք գրեալք առ ի նմանէ, զորս յերկրորդում գրի այսր մատենի յիշատակեցի. յասել նորա՝ զղրկանս կարողացեր, և այնու զգաստութիւնս ժողովրդեանն ի ծերոց, և զայլ ևս երկպառակութիւնս առանձին լեալս անդստին յառաջնմէ, և զի ոչ աւելի ինչ արդար և կարգաւոր օրէնս նոքա վարէին՝ քան առ ընկեցեալ Թագաւորքն, ցորչափ կայր երկիւղ ի Տարկուհեայ, մինչև վախճան լինէր սահմանեալ պատերազմին մղելոյ ընդ Կտորւրիայ ի պատճառս Տարկուհեայ։ Իսկ յետ այնր ծառայաբար վարէր զժողովուրդն ծերակոյտն, Թագաւորակերպ պատուհասէր, զանդաստանս յափշտակէր, և այլոցն ինամով Թարմատոյ՝ ինքն միայն սիրանայր. և այսոցիկ անմիաբանութեաց՝ ի նոցա կամելն խլեալ, և ի սոցա չկամելն ծառայեալ, վախճան արար երկրորդ պատերազմին Կարքեդոնի։ Եւ զան զի դարձեալ երկիւղ ծանր եհաս ի վերայ, որ ի խռովութեաց անտի հանդարտեցուցեալ մեծագոյն հոգւով զոգիս աղմկեալս, ի քաղաքականն միաշնութեի յարմարեաց զնոսա։ Եւ ակայն ընդ ձեռն սակաւուց ոմանց՝ որք իւրեանց մասամբ էին բարեկիրք, մեծամեծքն արդիւնանային, և այլոցն չարաց ներելով և մեղմելով, սակաւուց բարեացն վերակացութիւն աձուցին առնուլն իրքն. որպէս նոյն վիպագիր ասէ՝ Թէ բազում ինչ ընթերցեալ իւր և լուեալ յաղագս մեծագործութեացն յաջողելոց առ ժողովուրդն Հռովմայ առանձին և ի պատերազմի, ընդ ծով և ընդ ցամաք, մտախորհ լինէր՝ զինչ այն իցէ որ առաւելապէս զայսպիսի արարուածս ի գլուխ տարեալ իցէ. զի գիտէր Թէ յորովհետև սակաւաձեռն գնդաս մարտ եղեալ էին Հռովմայեցիք ընդ լեգէոնախումբ Քենտիս, և ընդ բազմահարուստ Թագաւորս՝ փոքու ամբոխիւ ի վեգ եկեալ. ի բազում այսպիսիս մտայոյզ եղեալ, տեսաք յայտնի, ասէ, զի սակաւուց քաղաքացեաց վսեմականն առաքինութիւնք իրագործէր զամենայն, և տայր ապաստութեն պարտէզ Հարստութիւն, և սակաւուց՝ զազմութեն։

Լսակ ապա յեղծանել քաղաքին, ասել, խնդիրքովք և թուլութիւք, զարձեալ պետութիւնն յիւրումն մեծութիւն տաներ զախտս կայսերաց և առեղծակալաց։ Այլա ուրեմն սակաւուցն առաքինութիւն ընդ ուղիղ Աստուածարհ դիմելոց ի փառս և ի պատիւ և յիշխանութիւն՝ գովեցաւ ի կատուած։ Այսոքն եղև հոգւոցութիւնն առանին, որով հասաբակացն գանձ բազմահարուստ էր, և առանձնականքն սակաւագէտ. ուր յապականիլ վարուց՝ ախան յեղաշրջեաց զչքաւորութիւն ի հասարակացն, և զկնութիւն յառանձնաւորս։

ԳԻՒՂԻՒ ԺԶ

Գովութիւն սէր՝ որ ինքնին է ախտաւոր, այնու համարի առաքինութիւն զի ախտք մեծամեծք խափանին նովաւ։

Ընդ երկար ժամանակս բաւեալ հոյակապ թագաւորութիւնդն արեւելից, կամք եղեն ոմք կանգնել և զարեւմտեայնն. որ Թէ և կրսեր գոյի ժամանակաւ, այլ ընդարձակատարը մեծութիւնն լինելի պերճագոյն։ Եւ զայն առ ի նուաճումն ծանր ծանր չարեաց յողովից ազգաց՝ չնորհեաց այսպիսեաց մարդոց, որք փոյթ տանէին հայրենեացն ի պատուոյ սակս, և գովութիւնք և փառաց, յորում զնոյն զփառասխնդրելին, և զհայրենեացն փրկութիւն քան զանձանցն մեծագրել ոչ ինչ դանդաղելին. միով այսու ախտիւ՝ իմա գովութիւնն սիրով, զընչաբաղձութիւնն սանձահարելով և զայլ բազմապատիկ ախտս։ Այսպա Թէ ոչ՝ միտք առողջահայեաց գիտէ յայտնապէս, Թէ ախտ իսն է գովութիւնն սէր կամ փառասիրութիւնն. զոր և քերթողն Վիրատիոս ոչ անգիտացաւ յասելն անդ նորա.

«Գովութեան սիրով այտուցեալ դու ես,
Կան դեղք քեզ մաքրիչ, Թէ կամաս առցես
Լերբեակ ընթերցմամբ բանս ի մատենէս»։ Գէր Ղևո։

'Լ,ա ինչքն 'ի քնարերգակ տաղին զիշխանասիրութեն ախտ
կամեցեալ խորտակել, նուագէ այսպէս .

"Ընդարձակ արքայութի՛ք քեզ ըստասցիս ,
Ով միայն ըղձից հոգւոյդ իշխան լիցիս .
Վ,ան կըցեալ ըզ[խրիա մինչ 'ի Վ,ագիս ,
Օ Երկոսին ըզվարքեդ՚ոս մնդ ունիցիս ,, :

Վ,այց սակայն որք միանգամ զանարգագոյն ցանկութեն ոչ սանձեն հաւատովք ՚ձ՚ծպաշտութե՛ք 'ի չնորհելոյ հոգւոյն սրբոյ, և սիրով իմանալի գեղեցկութե՛ն , լաւ և ս սանձել գոնէ ցանկութի՛ք մարդկայնոցն գովեստից և փառաց , ոչ եթէ անարատ այնու լինելով , այլ նուազ ապիրատ . ուստի և Վլիկերոն իշխեաց ասել 'ի մատեանսն՝ զոր գրեաց յաղագս պետութեան , խօսս արարեալ յաղագս կացուցանելոյ զիշխան քաղաքի , թէ պարտ է փառաց պարարել զնա . առ որով յիշատակէ զիւրեանցն նախնիս՝ զիմիդր առ ըղձէ փառաց բազում ինչ զարմանալիս և քաջնափայլս գործեցին՝ Վ,ան որոյ այնմ՚ախտի ոչ միայն հակառակ ոչ կային , այլ զարթուցանել և ս և արծարծանել արժան համարէին , եդեալք 'ի մտի թէ օգտակար է այն պետութե՛ : Վ,ալ և ոչ յիմաստասիրութե՛ գիրսն անգամ լռեաց զայսմ ախտէ Վլիկերոն , այլ յայտնաբար բառ խոստովանի . քանզի խօսեցեալ յաղագս ուսմանց՝ յորս պարապել արժան է կամօք ստոյգ բարւոյն՝ և ոչ 'ի հոզմոյ մարդկօրէն գովութե՛ , զայս ընդհանուր վճիռ յարագրէ . "Պատիւ տածէ զարհեստս , և փառաց յօժարամտի առնոյն ոք յուսմունս . և 'ի գետին անկանին իրք՝ յամենայն մարդոյ պախարակելիք ,, :

ԳԼՈՒԽ ՀԻԳ

Ի բաց հաւանել պարտ է զսէր մարդկային գովեստից և փառաց , զի ամենայն փառք արգարոց յԱծ են :

Վ,ՈՒ աներկբայ լաւ և ս ընդդէմ կալ փառասիրութե՛ , քան տալ տեղի . զի այնպէս ոք առաւել նմանող Այ է ,

որչափ յանմաքրութիւնէ յայսմանէ սրբեալ լիցէ ։ Ովսկիա և այսու կենօքս արմատաքի խլել զայն՝ի սրտէ ոչ է մարթ, ուր անդադար բերի այն՝ի փորձել և զանձինս առաքինել, գոնեա արդարուէն սիրով նկուն լինի փառասիրութիւն. զի թէ ուրեք ուրեք և իրք բարիք և ուղիղք անտես առնին առ մարդիկ, ամաչեսցէ և սէրն գովուէ մարդկան, և սիրոյ Աշմարտութենն ակն ածիցէ ։ Ո՛չ այս ախտ այնչափ ինն Թշնամի է բարեպարիշտ հաւատոց, յորժամ փառասիրութենն առաւելեալ լիցէ՝ի սրտի քան զերկիւղ կամ զսէրն այ, մինչև ասել տեառն . “ Ո՞րպէս կարէք դուք հաւատալ, զի փառս՝ի միմեանց առնուք , և զփառս զառ՝ի միոյն այ ոչ խնդրէք ,, ։ Յով ։ Է ։ 44 ։ Գ-արձեալ յաղագս ոմանց՝ որք յետ հաւատալոյ՝ի նա ամաչէին խոստովանել յայտնապէս , ասէ աւետարանիչն . “ Սիրեցին զփառս մարդկան առաւել քան զփառս այ ,, ։ Յով ։ ԺԲ ։ 43։

Ո՛չ այդպէս արարին առաքեալքն սուրբք , որք զՔրիստի քարոզելով զանունն՝ի տեղիս՝ ուր ոչ միայն պախարակիւր, ըստ Սիկերոնի ասացածին՝ Թէ՝ի գետին անկանին պախարակեալքն՝ի մարդկանէ , այլ՝ի գարշանս իւն կալեալ էր , նոքա տակաւին պինդ ունէին զլուեալն՝ի քաջ վարդապետէն և՝ի բժշկապետէն Հոգւոց . “ Որ ուրացցի զիս առաջի մարդկան , ուրացայց և ես զնա առաջի Հօր իմոյ որ յերկինս է . այլ և , առաջի հրեշտակաց այ ,, ։ Մտթ ։ Ժ ։ 33։ Որով՝ի հայհոյանացն մինչև ևնախատանաց, ՝ի ծանրը ծանր հալածանս անդ և՝ի գժնդակ խոշտանգանս՝ ոչ լքան երկուցեալք՝ի քարոզելոյ զքրիստի մարդկան՝ հաւատակ խիզախմանց Թշնամւէ նոցա ։ Այլ այն զի գրոծելով նոցա և խօսելով զայծայինս, և բստ այ քաղաքավարելով, նկուն արարին զսիրտս խստացեալս , և՝ի ներքս արկին զխաղաղուէն արդարութէ , որով փառաւորուի գերագանց փայլեաց յերկեղեցւոջ Աշոի , ինքեանք ոչ յայն զտէ զի առին իբր՝ի կատարած իւրեանց առաքինութէ , այլ՝ի նոյն՝ի Աշոի փառս ձգեցին , որոյ պարգեւօքն և զեն այնպիսիք , և նովին ջերմութէ շահեալ զաշակերտեալս իւրեանց վառէին՝ի սէրն Աշոի , յորմէ և ինքեանք

այնպիսիք լեալ էին։ Զանգի կանխաւ խրատեալք էին ի վարդապետէ իւրեանց՝ մի սակս փառաց մարդկան լինել բարեգործս, յասելնորա. «Ոչ գոյշ լերուք ողորմութեան ձերում մի առնել առաջի մարդկան, որպէս զի ի ցոյց լինիք նոցա. զուցէ և վարձս ոչ ընդունիցիք ի Հօրէն ձերմէ՝ որ յերկինսն է ...» (Մատ. Զ. 1)։ Այլ զարձեալ զի մի զայս այլ ընդ այլոյ իմանայցեն, և երկուցեալք ի մարդկան հաճոյանալոյ՝ ծածկեսցեն զիւրեանսն բարուքն, և յօգտել նուազեսցեն, ցուցանէ՝ որով կամօք արժան է նոցա ի ճանօթութեան գալ. ասելով. «Զգնացէք լուսաւորեսցէ լոյս ձեր առաջի մարդկան, որպէս զի տեսցեն զգործս ձեր բարիս, և փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս է ...» (Մատ. Է. 16)։ Այսպա ուրեմն ոչ ի ցոյց մարդկան, այս է՝ այնու կամօք զի զնոսա առ ձեզ դարձուցանել յօժարիցէք, զի գուք ոչ անձամբ ինչ էք, այլ զի փառաւորեսցեն զՀայր ձեր որ յերկինս. առ որ զարձեալք, լինիցին որ ինչ գուք էք։ Այսուհետև զՀետ չտքան մարտիրոսք, որք Հմարիտ առաքինութեանն՝ որ ի սոյգ ածպաշտութենէ, և անհամար բազմութենէ զերիվերոյ գտան քան զԱկվղայան, և զՈւրթիոսս և զՎեկիոսս, ոչ անձամբ անձին մահ բերելով, այլ զառ ի յայլոց բերեալն տանելով։ Զլ քանզի նոքա կային յերկրաւոր քաղաքի, և համօրէն արարուածոց նոցա կէտ նպատակի եդեալ էր պահպանութենէ այնր քաղաքին, և թագաւորութենէ ոչ յերկինս, այլ յերկրի, ոչ ի յաւիտենից կեանսն, այլ ի փոխանորդել մահկանացուաց զմեռեալսն, արդարեւ զինչ այլ ունէին սիրել՝ բայց զփառս, որով ցանկային և յետ մահու կենդանի լինել գոգիս ի գովեացն բերանս։

ԳԼՈՒԽ ԺԶ

Յաղագս ժամանակիան վարձուց՝ զոր ընդհակաց ած ՚ի պատճառս բարեաց գնացեալն հոռովմայեցւոց։

ԿՐԿ որոց միանգամ չունէր տալ ած զյաւիտենից կեաց նըա ընդ իւրոց հրեշտակաց սրբոց յերկինսն քաղաքի, յորոյ ՚ի կցորդութիւն կոչէ Ձշմարիտն ածպաշտութիւն՝ այն որ միւսմ ևեթ Ձշմարտին ոչ մատուցանէ զկարևորն պաշտօն, եթէ չտայր նոցա և զերկրաւոր փառս օգուտս տափառ տէրութեան, անվարձ ընծային ասլաքէն բարիոք արուեստագիտութիւնք նոցա, այն ինքն են առաքինութիւնքն՝ որովք նկրտէին յայն փառսն ժամանել։ Վասնզի և զայնպիսեաց՝ որք փառս ՚ի մարդկանէ գտանելոյ վասն առնէն ինչ գործ բարի, ինքնին տէրն ասէ. “Ամէն ասեմ ձեզ, այն իսկ են վարձք նոցա։” ՄԱՏԹ. Է. 2։ Կատկէս և սորա զառանձնաւոր զիւրեանց իրս անտես արարին սակս Հասարակաց, և ՚ի պէտս զանձու նորա. զագահութիւն սանձեցին, հայրենեաց խնամ կալան ազատական խորհրդով, անպարտք ՚ի յանցանաց ըստ իւրեանցն օրինաց, և ՚ի հեշտ ցանկութէ։ Վոքիմքք արուեստիւք իրք ուղղորդ իմն Ձանապարհաւ դիմեցին նոքա ՚ի պատիւ, յիշխանութէն և ՚ի փառս. մեծարեցան ընդ ամենայն աղինս. զազգս յոլովս նեղբոյ արկին օրինաց տէրութէ իւրեանց. և ցայսօր գրովք և վիպասանութէք բարեփառք են գրեթէ յազգս ամենայն։ Կայս չունին արտնջել զարդարութէ բարձրելոյն ոչ Ձշմարտի. զի ահա ընկալան զվարձս իւրեանց։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս վարձուց սրբոց՝ քաղաքացեաց մշանջենաւոր քաղաքին, որոց օգտակար են և օրինակք առաքինութեանց հոովմայեցւոց։

Յայլ կարի այլ աղգ են սրբոցն վարքք՝ որք աստանօր նահատինս յանձն առին վասն քաղաքին այլոյ, որ ատելին է աշխարհասիրաց։ Այն քաղաք է մշանջենաւոր. անդ ոչ ոք ծնանի, զի ոչ ոք մեռանի։ Անդ է ստոյգ և պատարուն երջանկութի, ոչ դիցուհին այն, այլ պարգեւն այլ։ Անտի զառհատչեայն հաւատոց ընկալեալ ունիմք, յորչափ պանդխտացեալքս հառաչեմք 'ի վայելչութի նորա։ Անդ ոչ ծագէ արեգակն 'ի վերայ բարեաց և չարաց. այլ բարեաց միայն վերակացու է արդարութե արեգակն։ Անդ ոչ լինիցի ձարտարմտութի ձոխացուցանել զգանձն հասարակաց՝ չքաւորութե առանձնաւոր գոյից, ուր հասարակաց է չքմարտութե գանձ։ Ասսի հոովմէականն տերութի բարգաւաճ գտաւ 'ի մարդկային փառս՝ ոչ վասն այն ևեթ զի այնպիսի վարձք տացին այնպիսեաց մարդոց, այլ զի և քաղաքացիք յաւիտենականին այնր քաղաքի՝ յորչափ 'ի ստորև պանդխտանան՝ հայեցցին խնամով և ըզգաստութե յօրինական յարմոսիկ, և 'ի միտ առցեն, թէ քանիսպատիկ առաւել սէր բերել արժան է առ վերին հայրենիս սակս յաւիտենից կենաց, եթէ այնչափ սիրեցան երկրաւոր հայրենիք յիւրոյին քաղաքացեաց անտի 'ի սակս փառաց մարդկան։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Զինչ չահ գործեցաւ Հռովմայեցւոց ի պատերազմից, և օրչափ ինչ օգուտ եղև որոց յաղթեցին։

Վասն զի ըստ մահկանացու կենացս կարգի՝ որ սակաւօրեայ է և արագավախձան, զինչ փոյթ է՝ թէ ընդ որո՛վ տերութե՛ն կեցցէ այր մահկանացու, յորժամ ոչ յապիրատս ինչ և յանիրաւս բռնադատիցին հրամայողք. կամ զոր ինքեանս գործեցին Հռովմայեցիք առ ազգն՝ զորս ընդ լծով օրինաց իւրեանց կապեցին. բայց այն միայն՝ զի անհնարին հալուածովք պատերազմաց եղեն իրքդ այդ. որ եթէ միաբան կամակցութի՛ լինէին, նոյն բան վնասակար լինէր լաւ ևս ելիւք. թէպէտ և ոչ փառք ինչ լինէին յաղթանակողաց. քանզի և Հռովմայեցիք ընդ նովին օրինաւք կային՝ զոր այլոցն ետուն։ Եթէ գործիւր այս առանց Պրեսի և Բելլենեայ, որով և յաղթութիւն ինչ տեղի ոչ ունէր, իբր զի չէր ոք յաղթող՝ ուր պատերազմող ոչ էր, ոչ ապաքէն մի և նոյն լինէր պայման Հռովմայեցւոց և այլոց ազգաց։ Այս առաւել, եթէ կանխաւ կատարիւր այն՝ որ յետոյ ուրեմն արարաւ Հեշտընկալ մարդասիրութեամբ, զամենեսեան զնեբբոյ անկեալս Հռովմէական տերութե՛ն ընդունել չընկերութե՛ն քաղաքին, զի քաղաքացիք Հռովմայ կոչեսցին. որով որ յառաջն սակաւուց էր, լինէր հասարակորդ ամենեցուն. և ժողովուրդն անստացուած՝ի գեանոյ, կերակրիւր՝ի հասարակաց համարուէ. և այն գործման մտադիւր ընդհեալ լինէր՝ի դաշնաւորաց անտի ընդ ձեռն հաւատարիմ գործակալաց պետութե՛ն, քանթէ բռնի կորզեալ՝ի յաղթեցելոց։

Վասզի չտեսանեմ իսկ բնաւ, զինչ առ ամրութիւն և առ գնացս բարիս օժանդակիցեն մարդկային պատուհասանութիւնքն, ոմանց յաղթողս լինել, և ոմանց յաղ-

Թեալը , բայց 'ի մեռոյ սոնքանաց մարդկային փառա-
սիրութիւն, որով ընկալան զվարձս իւրեանց վաւելչին
յանյագ ցանկութիւն նորա , և մխեալքն 'ի մարտս ահա-
գինս : Այլ ի թէ անդաստանք նոցա ոչ վնաբերն հարկս .
մի թէ օրէն իցէ նոցա ուսանել ինչ , որ այլոց չիցէ օրէն .
մի թէ վկայեն ծերակոյտք յայլ գաւառս , որոց չէ բնաւ
տեսեալ զՀռովմ : Ի բայ տար զմնապարծութիւն , և տես-
ցես զի ամենայն մարդ ոչ այլ ինչ գոյի՝ բայց մարդ սոսկ :
Այր զի թէ յանձն առնոյր անկարգութիւն աշխարհի՝ զի
պատուականագոյն ծանիցին լաւագոյնք , և ոչ այնպէս
մեծ ինչ գրել արժան էր զպատիւ մարդկեղէն , զի ծուխ
թէթև է այն բոլորովին : Այակայն և յայսոսիկ զտեա-
ղըն այ մերոյ զբարերարութիւն 'ի կիր արկցուք , ա-
ծեալք զմտաւ՝ թէ ոչքափ ինչ իրս արհամարհեցին նո-
քա , զինչ ինչ իրաց տարան , որոյ ցանկութեաց իշխեցին
սակս մարդկային փառաց , զոր և ընկալան իբր վարձս այն-
պիսեաց առաքինութեաց . և այս եղիցի մեզ 'ի խրատ առ
'ի նուաճելոյ զկպարտութիւն . զի եթէ քաղաքն՝ յորում
Թագաւորել խոստացեալ է մեզ , այնչափ անջըպետեալ
է յերկրաւորէս՝ որչափ երկինն յերկրէ , 'ի ժամանակեայ
խնդութիւն՝ կեանքն յաւիտենից , յունայն գովութեց՝
փառքն հաստատուն , յընկերութիւն մահացուաց՝ հրեշ-
տակայն դասակցութիւն , 'ի լուսոյ արևուն և լուսնի՝ այն
որ զերկոսինն արար , մի ինչ մեծ արարեալ համարեացին
երկնաբաղաքացիք՝ եթէ առ ստանալոյ զայն զվերին
հայրենիս բարի ինչ գործեալ իցեն , կամ տարեալ չա-
րեաց ինչ , ուր հռովմայեցիք սակս երկրաւորիս այս՝ զոր
'ի ձեռին ունէին , այնչափ ինչ արարին և կրեցին : Այ-
նաւանդ զի մեղայն Թողութիւն որ 'ի յաւիտենից գաւառն
հայրենի համահաւաքէ զքաղաքացիս , ստուերաբար ինն
օրինակեցաւ յապաստանն հռովմուլեան , յոր ժողովե-
ցաւ բազմութիւն յանցաւորաց անպատուհաս արձակելոյ՝
առ 'ի կանգնելոյ զքաղաքն ,

ԳԼՈՒԽ ԺԲ.

Քանի՛ անպարծա լինել արժան է քրիստոնէից՝ եթէ գործեցեն ինչ առ սէր յաւիտենական Հայրենեացն, ուր հաւանեցեալք այնչափ ինչ պարծին սակս մարգկային փառաց և վասն երկրաւոր բազաքին։

Այսպ արդ զինչ մեծ իցէ սակս մշանջենաւորին պիտի և երկնային Հայրենեաց՝ զամենայնն արհամարհել զաշխարհի հրապոյրս հեշտալիս, եթէ վասն ժամանակիս այսմ և երկրաւորիս յանձն առ և զորդիսն անգամ սպանանել Աբրահամ, յոր ոչ զոք բռնադատէ երկնաւորն այն։ Այլաբէն գժուարին և մահ գործել որդւոց, քան վասն երկնային Հայրենեաց՝ զգանձելիսն ի գարման որդւոց՝ բաշխել աղքատաց, կամ կորսանել իսկ՝ եթէ փորձութիւն ինչ սակս հաւատոց և արդարութեան ստիպեսցէ ի նոսա։ Այսան զի բարեբաստիկս զմեզ կամ զորդիս մեր՝ ոչ եթէ երկրաւոր մեծութիւնքն առնեն, որք կամ առ մերով իսկ կենդանութիւնք կորստականք են, և կամ ի մահու մերում չգիտեմք ոյք ունանք զնոսա ժառանգիչն, և թերևս այնոքիկ՝ զորս ոչն կամիաք. այլ՝ ած առնէ զմեզ բարեբաստիկս, որ է ձգմարիտ Աստուածն հոգւոց։ Իսկ վասն Աբրահամայ զորդիսն սպանողի՝ Աշուառ լինել վկայէ նա ինքն գովասան քերթողն, զի ասէ.

“Ո՞ գեղեցիկն ազատութեան,
Հայր զիւր որդիս տայ պարտ արեան,
Իբրև նորոց մարտից օձման։
Հայց նա Թըշուառ, յետինք զիարդ
Ընդառիջին ըզգործըդ զայդ...” Յերեսս Աստուծոյ։
Այլ՝ ի յաջորդ տանն մխիթար մատուցանէ Թշուառացեալսն.

“Վեր հայրենեաց յաղթէ անձին,
Ընդ գովեստից իղձ սատակափն...”

Երկու այս երք են, ազատութիւն և տուփանն մարգկային

գովութեէ, որք զՀռոմայեցիս խրախուսէին յարարուածս զարմանագործս։ Արդ եթէ սակս ազատութեէ մահկանացու ցաւաց, և՛ ի տրփանէ գովեստից՝ որ՛ ի մահկանացուս անտի անկանելոյ են, մարթի եղիւ զորդիսն սպանանել, զինչ մեծ է՝ եթէ՛ ի սակս Աչմարիտ ազատութեանն՝ որ զմեզն ազատեցուցանէ՛ ի տէրութէ անօրէնութէ և մահու և սատանայի, ոչ առ տարփանաց մարդկային գովեսից, այլ սիրով ազատելոյ զմարդիկ, ոչ՛ ի Տարկուէ նեայ արքայէ, այլ՛ ի դիւաց և յիշխանէ նոցա, ոչ որդիք սպանանին, այլ աղքատք Աչեի՝ գրէին յորդիս։

Արդ միւս ոմն իշխան Հռոմայեցի՝ անուանակոչեալն Տորկուատոս՝ սպան զորդի իւր, ոչ զի հակառակ հայրենեաց, այլ սակս հայրենեաց իսկ՝ միայն ընդդէմ հրամանի հօրն իշխանաւորի՛ ի թշնամւոյ անտի գրգռեալ՛ ի մարտ մեեցաւ երիտասարդական ոգւով, որով և յաղթեաց, այլ սպանաւ՝ զի մի առաւել իցէ չարն օրինակաւ արհամարհելոյ զիշխանութէն, քան զբարին որ՛ ի փառաց սպանանելոյ զթշնամին, զիարդ պարծել ունիցին՝ որք սակս օրինաց անմահ հայրենեաց արհամարհէն զբռնաւ դակ երկրաւոր բարիքս, որք կարի նուազ քան զորդիս սիրելիք են։ Արդ Փուբլիոս Վալիլլոս զապաշնորհ հայրենիսն՝ յորոց՛ ի պարանոցէ խորտակեալ էր զլուծ գոռ թշնամեացն Վէյենտացւոց, և՛ ի չաւղդոտաց անտի մեղսպարտ դառեալ դարձեալ միւսանգամ ապրեցոյց՛ ի գաղղիացւոց անտի, զի ոչ կային նորա հայրենիք լաւագոյն՝ կեալ անտանօր փառաք, զի՞ ամբարտաւանեացի իբր մեծի իրիք գործողնա՝ որ գուցէ յեկեղեցւոջ անպատուութիւն ծանր կրեալ չանիրաւի՛ ի մարմնաւոր թշնամեաց, ոչ գրաւեցաւ՛ ի թշնամիս անդր՛ ի հերեսիովտայցն, կամ ոչ ինքնին աղանդս մեքենայեաց ընդդէմ եկեղեցւոյ, այլ ընդ հակառակն չամենայն զօրութէ պաշտպանեաց եկեղեցւոյ յերեսաց հերեսիովտացն մահաւոր չարութէ. ուր չիք այլ եկեղեցի՝ յորում կեցցէ ոչ եթէ՛ ի մարդկային փառս, այլ՝ ուր զաւիտենից կեանս լեցի սատակ։ Արդ Աուտիոս՛ ի խօսել հաշտութէ ընդ Պօրսենայ արքային,

որ սաստիկ պատերազմաւ նեղէր զՀռոմմայեցիս, այնու
երբ վերկեալ սպան զայր որ փոխանակ Պօտենայ, զիւր
զաջ ձեռն ձենձերեաց ի կրակ վառեալ յանդիման սուց
ալբայիս, և ասաց իսկ՝ Թէ բազումք այլք երբև զինքն միա
բանեալ էին ի սպանումն նորա, յորոյ ի քաջութենէն և յայ
լոյն դաշնակցութենէ զարհուրեալ նորա՝ անդէն վաղվա
ղակի դադարեցոյց զպատերազմն՝ խօսեցեալ ի հաշտու
թէն, ո՞ր երախտիս ինչ Համաբիոյ առնել երկնից արքայ
ութենէն, եթէ վասն նորա ոչ զմի ձեռն, և ոչ կամաւ անձին
արարեալ, այլ ի հալածչէ ումեքէ կրեալ, զմարմինն ողջոյն
խարուհեսցէ։ Լ Թէ Կուրտիոս սպառազէնն երիվարաւ
հանդերձ զահավէժ ի խոր անդունդս զանձն մղեաց,
հնազանդեալ դիցի պատգամաց, ի հրամայել նոցա զի
անդր ընկեցիկ լինիցի՝ որ ինչ կարի լաւն էր յայս հռով
մայեցւոց, և նոցա այնպէս խմացեալ զբանն՝ Թէ ինչ
քեանք առաւելուն արամբք և զինուք, և Թէ ըստ աս
տուածոյն հրամանի պարտ իցէ խարդաւանել յայն կո
րուստ զայր որ սպառազինեալ, զինչ ապա սակս մնանջինա
ւոր հայրենեացն մեծ ինչ գործեալ ասիցէ վասն նորա որ՝
որոյ ի Թշնամւոյ ումեմն հաւատոյ չարչարեալ, ոչ եթէ
ինքնակամ՝ ի մահ արկանիցէ զանձն, այլ ի նմանէ ար
կեալ մեռանիցի. ուր Ձիգրատագոյն ևս պատգամ ընկա
լաւ ի տեառնէ իւրմէ՝ որ Թագաւորն է հայրենեաց իւրոց.
“ Ի երկնչիլ յայնցանէ որ սպանանեն զմարմին, և զոգի
ոչ կարեն սպանանել.,, ։ Ի՞ռ ։ Ֆ ։ 28 ։ Լ Թէ գեկոսեանք
մահուամբ չափ դիցանուէրք եղեն բանիւք պաղատակա
նաք, զի իւրեանց անկանելոյն և արեամբ՝ ցասումն դից
մեղմանայցէ և ապրեսցի բանակն հռոմէական, չունին
իւիք հպարտանալ մարտիրոսքն սուրբք, իբր արժանա
ւորս ինչ քաղաքակցութենէ երկնային հայրենեացն գոր
ծեալս, ուր երջանկութենէն յաւիտենական է և Ձմարիտ,
եթէ մինչ ի հեղուսն արեան սիրեցին ոչ միայն զեղբարս՝
յորոյ ի խրախոյս լինէր այն, այլ և որպէս հրամայէր նոցա՝
զնոսին իսկ զՔնամիս սիրել, զարիւնահեղս, և մարտեան
հաւատով սիրոյն, և սիրով հաւատոյն ։ Լ Թէ Ի՝արկոս

Պաւղոսեայ յորժամ տառապ ձանձը Յ.ամազդայ, Հերայ և Յ.Թենասայ, և համբաւ սուտ տուաւ նմա ի յաչագկատաց սակս մահուան որդւոյն, որպէս զի ընդ լուծն խոտվեալ ի բաց կայցէ և պիտաս ձանձիցն ընկերք նորա տարցի, այնպէս լինի անհոգացաւ նա, մինչև հրամայել և զի անթաղ ընկեսցի որդին, որով ցաւոց անզգաւակութեն յաղթեաց իւր փառաց ի սրտի նորա, զինչ մեծ ինչ առարեալ ասիցէ զը սակս քարոզութե աւետարանին սրբոյ՝ որով քաղաքացիք վերին հայրենեաց զերծեալք յաղգի մոլորութե անդը ժողովին, կատարելով զտեառն ասացեալն առ այն՝ որ ընդ Թաղուաին հօրն հոգայր. "Լ՝կ զկնի իմ, և Թոյլ տուր մեռելոցն Թաղել զմեռեալս իւրեանց,, ։ Ա՝Ղ ։ Ը ։ 22։ Լ՝Թէ Ա՝արկոս Հռեգուղոս՝զի մի երդմնազանց խաբէութե վարեսցի առ անողորմ Թշնամին, անդրէն դարձ արար առ նոսա՝ի Հռովմայ, և՝ի կամել Հռովմայեցւոց արգելուլ զնա առ իւրեանս, ետ պատասխանի՝ որպէս ասէ, Թէ յետ զերի ափրիկէացւոյն լինելոյ՝ անմարթ նմա կրել՝ի Հռովմ զպատիւ մեծարոյ քաղաքացւոյ, զոր և կարգեդմնացիք դառնամահ սպանին՝ իբր հակառակ ինքեանց վարեալ՝ի ծերակուտին Հռովմայ, ապա զոր տանջանս չիցէ արժան արհամարհել՝ի պատճառս հաւատոց երկնային հայրենեացն, յոյր երանութ նովին հաւատովք է հասանել. կամ՝որ արիտուր տացի տեառն ընդ ամենայնի զոր ետ, եթէ սակս հաւատարմութեանն զոր նմա պարտիմք, զայնպիսիս կրեսցէ մարդ՝ որպիսիս Հռեգուղոս կրեաց՝ի պահել զհաւատարմութե առ անհամբոյր Թշնամիս։ Լ՝ւ զիարդ ընդ կամաւոր աղքատուի բարձրամտել իշխեսցէ այր քրիստոնեայ, որով՝ի պանդրիւտութե կենացս Թեթևաբեռն լինի ընթանալ զհանապարհն՝ որ տանի՝ի հայրենիս անդր, ուր ՚ած ինքնին է Չմարիտ մեծութե, եթէ լուեալ իցէ նորա՝ կամ ընթերցեալ, Թէ Ա՝ղերիոս ոմն յետ վարելոյ զհիւպատոսութե պաշտօն՝ այնպէս չքաւոր դատ, մինչև առ՝ի սիտոս Թաղելոյ զնա՝ դրամս հաւաքել՝ի ժողովրդենէն։ Ա՝կամ եթէ լուեալ իցէ՝ կամ ընթերցեալ, Թէ Ա՝լեքսիոս

լուծս չորս ունելով, և իւրեան ձեռօք վարելով, յարօ-
րոյ անաի առաւ լինել դիկտատոր, մեծապատուագոյն
քան զհիւպատոս, և յաղթութիւնք թշնամեաց փառս մեծ
ստացեալ, եկաց ինաց 'ի նմին աղքատութեն։ Յոր կամ
զինչ մեծ ինչ գործել պարծեսցի ոք այնու՝ զի յաւիտե-
նից հայրենեացն կցորդութիւն ոչ խոտորեցաւ կենցաղա-
կան ինչ պարգևօք, զիտելով զի փաբրիկիոսի անհնար
եղև հեռանալ 'ի հռովմայ խոստմամբ մեծամեծ պարգ-
ևաց՝ և չորրորդ մասին իսկ թագաւորութեն Պիւռոսի
աղբայի եպիրացւոց, այլ ընտրեաց յիւրումն աղքատու-
թեն ինալ առանձին։ Այսոյ զի հռովմայեցիք բազմահա-
րուստ ունելով և մեծագանձ զհասարակացն պետութեն,
և զտացուածս հայրենեաց, ինքեանք այնպէս աղքատք
էին առանձին, զի ոմն 'ի նոցանէ երկիցս կացեալ հիւպա-
տոս, վաարեցաւ դառաստանաւ 'ի ծերակուտ մարդոյն
աղքատաց, վասն զի դուստր առ նմա տասն լման արծա-
թոյ. ահա այսպէս աղքատք էին որեաքն այն, որոց յաղ-
թանակօքն լիանայր գանձն հասարակաց։ Այլ ապաքէն
քրիստոնեայք ամենայն, որք գերազոյն ևս ընտրութեն՝
հասարակաց առնեն զսեպհական ինչս, ըստ գրեցելումն
'ի գործս առաքելոց, զի բաշխեսցի իւրաքանչիւր՝ որպէս
և պիտոյ իցէ, և ոչ ոք ասէր՝ թէ իւր իցէ ինչ, այլ էր նոցա
ամենայն ինչ հասարակաց, քանզի 'ի միտ առնուն՝ թէ չէ
պարտ սակս այսորիկ զպարծանօք գալ, 'ի գործել նոցա
զայն վասն պարակցութեն ընդ Հրեշտակս, ուր նախայլ-
շատակելագոյ արարին զմնպիսիս առ 'ի պահելոյ զփառս
հռովմայեցւոց։

Այլ այսոքիկ և որ այլ սոյնպիսի անցք գտեալք 'ի գիրս
նոցա՝ զիարդ այսպէս 'ի ծանօթութիւն գային, զիարդ աշխար-
հալուր հռչակին՝ թէ ոչ ընդարձակ ծաւալեալ առնէր
հռովմէական աէրութեին մեծահրաշ յաջողութիւնքն։
Այլ իրի այնուիկ լայնածաւալ և երկարժամանակեայ
իշխանութիւնք, որ գերափառն եղև առաքինութիւնք արանց
այնպիսեաց, տուան վարձք կամաց նոցա՝ զոր և ինդրէին,
և միանգամայն առաջի եդան մեզ օրինակք կարևոր իրաւ-

տու. զի Թէ զառաքինութենան՝ զորոց զտուեր իմն յանձին կալան նոքա ՚ի փառս երկրաւոր քաղաքին, ոչ յանձն առնուցումբ մեր վասն փառազարդ քաղաքին այլ, ամենապարտ դատիչսիմբ. իսկ Եթէ յանձն առնուցումբ, մի՞ հպարտութիւ ամբառնայցեմբ։ Ալ ասն զի ըստ առաքելոյ ասելոյն, "Ալ են արժանի չարչարանբ ժամանակիս հանդերձելոյ փառացն՝ որ յայտնելոց են ՚ի մեզ ... Հռ. Ը. 18։ Արդ առ մարդկային փառս այժմու ժամանակիս արժանաւոր Թուէին կենցաղք հոռովմայեցւոց. որ վասն ընդ նոցա փառաքն արկ ոճ արդարապէս և ըզ Հրեայս, որք զՔ՝ սպանին, ՚ի յայտնիլ նորոյ կտակին՝ որ ծածկեալն էր ընդ հնոյն. որպէս զի ոչ Եթէ սակս երկրաւոր և առժամանակեայ բարերարութե՝ անխըտրաբար չնորհելոց ՚ի տէրութէն այ բարեաց և չարաց՝ պաշտեսցի միայն և Հմարիան ոճ, այլ վասն յաւիտենական կեանց և պարգևացն մշանջենաւորաց, և վասն ընկերակցութե վերնոյ քաղաքին. և այսպէս եղև՝ զի հռոմ մայեցիք, որ Թարմատար առաքինութիք խնդրեցին և ընկալան զփառս երկրաւորս, յաղթիցեն Հրէից՝ որք անհնարին ապիրատութիք սպանին և անարդեցին զտուիչն Հմարիտ փառաց և յաւերժական քաղաքին։

ԳԻՒՂԻՒ ՀԻԹ

Ի՛ զանազանին յերեսաց փառասիրուե և խիամասիրուե։

ԱՅԱՌԱՔԻՆ կայ խաղը և ընդ ցանկուե մարդկային փառաց, և ընդ ցանկուե իշխողութե։ Ալ ասն զի Թէպէտ և զակառաեալն ՚ի փառս մարդկեղինս՝ Է՝ և առ իշխեցողութե՝ ըզ Հզձ դիւրապատրաստ, սակայն որք ՚ի մարդկային գովեստս անգամ զուղիղն խնդրեն փառս, Քան դնեն մի անհաձոյ յաչս արդարախորհացն լինել։ Վ՚ասնզի գոն բազում ինչ բարիք ՚ի վարս, զորոց ուղիղ դատին բա-

զումք , Թէպէտ և ինքեանք ոչ ունիցին . և նովին լա-
ւութիւք վարուց նկրտին ՚ի փառս և ՚ի տէրութիւն կամ յիշ-
խեցողութիւն . զորոց Պաղատեոս ասէ , Չէմարիտ Հանա-
պարհաւ նկրտել , Ոչ որ առանց սիրոյ փառաց՝ որ
ընդ անհաճոյ լինել արդարադատ մարդոց պատկառէ , ըղ-
սիրելին ըղձանայ և գՀրամայել , այնպիսին յոլովակի աղա-
տադէմ՝ ապիրատութիւնք խնդրէ ՚ի ձեռս բերել զցանկա-
ցեալն , Որին վասն որ որ փառաց ցանկայ , կամ նկրտի նա
ընդ Հշմարիտ շաւիղ կամ նենդանօք և խաբէութիւք բուռն
առնել՝ բարի երևեալ կամ ցեալ որպիսի ոչն է . ուստի մար-
դոյ առաքինւոյ՝ առաքինութիւն մեծ արհամարհել զփառս ,
զի արհամարհութիւն նորա յանդիման այ է , ծածկեալ ՚ի
մարդկան դատաստանէ : Վասնզի զոր ինչ առնիցէ յայս
մարդկան՝ առ երևելոյ արհամարհող փառաց , եթէ կար-
ծեսցի երբեք առնել զնոյն վասն առաւելագոյն գովա-
թիւն կամ փառաց , չունի ինչ որով ակն յայնմի ցուցանիցէ
այլոց՝ թէ օտարաբար կասկածեն : Այլ որ արհամարհէ
զգովեստն դատաստանս , արհամարհէ և զՀամարձակու-
թիւն կասկածոտաց . Թէպէտ և զնոցայն փրկուի ոչ արհա-
մարհէ՝ եթէ արդարեւ բարի ոք իցէ . քանզի որ ՚ի հոգւոյն
այ ստացեալ ունի զառաքինութիւնս , այնչափ արդարամիտ
է՝ զի և զթշնամին սիրէ . և այնպէս սիրէ , մինչև փա-
փաքել զի և առեցողք իւր և բամբասողք ՚ի դարձեկեալ
ցեին , և կցորդակից իւր լինիցին ոչ յերկրաւոր Հայրե-
նիս , այլ ՚ի վերնումն . իսկ առ գովիչս իւր՝ Թէ և փոքր
նոցա զգովելն Համարի , այլ ոչ զայն ինչ զոր նոքայն սի-
րեն . և ոչ զգովիչն խաբել կամի , զի մի զսիրելին պատ-
բեսցէ . նմին իրի յայն փուճագոյ մեծաձան , զի տէր ինք-
նին գովեսցի առաւելապէս՝ յորմէ ունի մարդ զոր ինչ
ունի յինքեան արժանի գովութեան : Այլ որ զփառաց
ապահատ արարեալ միայն իշխել ցանկայ , այնպիսին չար
և ա քան զգազան՝ եթէ անգթութեան , և եթէ անառա-
կութեան ախտիւք : Զատն այնպիսիք ոմանք ՚ի Հռովմայե-
ցւոց , զի անփոյթ արարեալք զգովելն Համարմամբ , ոչ
ազատք եղեն յիշխեցողութենն ըղձմանէ : Ի բազմայ

յայնպիսեաց՝ զորոց արտայայտէն վիպագրութիւնք , զկատար այսր ախտի՝ և զոգեկս զամրոյն կալաւ նախ առաջին Կերոն կեսար. որոյ այնչափ էր անառակուն, զի և ոչ մի գործ առնացի էր ակնունել առ ի նմանէ . և այնչափ դազանաբարոյութիւն , մինչ զի կարծիւք ոչ մի ինչ մեղկութիւն լինել ի նմա՝ թէ ոչ այլ ուստեք յայտնի էր : Այլ սակայն սոյնպիսեաց անգամ ոչ է տուեալ տիրողականն իշխանութիւն եթէ ոչ ի տեսլութենէն այլ բարձրելոյ , յորժամ մարդկայնոյն իրաց զամպիսի տեարս դատի արժանաւորս , զորմէ բացայայտիւ ածեղէնն բարբառ , ի խօսել անդ իմաստութենէն այլ . "Ոչնա Թագաւորք Թագաւորեն : Այլ բռնութիւնք ինձ ունին զերկիր .. " Ոչ ի զի մի կարծեսցի , թէ անուամբս բռնութիւնք կամ բռնաւորք ոչ նշանակին Թագաւորք ժանտք և անօրէնք , այլ ըստ առաքինոյն առնման՝ առաւել հզօրք , ըստ որում Ալ իրգիլոս ասէ , "Հաշտութեան մանն՝ ինձ համարիմ, ունել զաջոյ բռնաւորին .. , Ակնեական է . ահա յայտնապէս ասացաւ յայլում տեղոջ . "Ագաւորեցուցանէ զայր կեղծաւոր վասն խստութեան ժողովրդեան .. Ես . 13 . 30 : Ալ ասն այսորիկ թէպէտ և բաւականաւոր ըստ իմում կարի յանդիման արարի , թէ չինչ պատճառս միայն Ձմարիան ածէ և արդար ձեռն ետ Հռովմայեցւոց բարեկրաց ըստ տարաղու ինն երկրաւոր քաղաքի՝ պերճանալ այսպիսի տէրութենէն փառաք , բայց կայցէ թերևս և այլ պատճառ գաղտնածածուկ ըստ պէսպէս պիտոյից աղգի մարդկան , այլ յաւէտ ծանուցեալ՝ բան մեզ : Այլ առ խսկութիւն ածասպաշտս քաջայայտ է , թէ ոչ մարթի է ումեք առանց Ձմարիտ ածպետուէ և ածպաշտուէ ունել զառաքինութիւն Ձմարիտ . և ոչ է Ձմարիտ պաշտօն այլ , յորժամ ծառայէ ոք մարդկային փառաց : Սակայն որք չենքաքաջացիք յաւիտենից քաղաքին , որ ի դիս սուրբս Վառաջաք ասի այլ , լինին առաւել պիտանիք երկրաւոր քաղաքի՝ եթէ ունիցին զառաքինութիւն , քան եթէ չունիցին : Ոսկ Ձմարիտ բարեպաշտութենն ստացողք՝ որ բարիոքն քաղաքավարին , եթէ ունիցին և զպիտութիւն առաքինոր-

դէպ ժողովրդոց , ոչ պոյ բարեբաստութիւն ինչ առ մարդկայինքս , քան ունել նոցա զիշխանութիւն ըստ այ հնարէ- լոյն : Այլ այսպիսի մարդիկ զիւրեանցն առաքինութիւնս՝ որչափ'ի կենցաղումն ունել մարթ է, ընծայեն այ հնարիցն և ևթ , որ ևան զնոյնս կամեցողացն և հաւատացողաց և խնդրողաց . միանգամայն գիտեն՝ որչափ ինչ պակաս է ինքեանց 'ի կատարելութէ արդարութէն , որ կայ 'ի դատակրութէ հրեշտակացն սրբոց՝ առ որ պատկանելն փութան : Այլ առաքինութէն որ առանց ձնմարիտ ահ- պաշտութէ ծառայէ փառաց մարդկան , քանի և գովանի և բարեհռչակ լինիցի , ոչ համեմատեսցի բնաւ և դոյզն իսկ սկսուածոց սրբոց , որոց յոյս եդեալ կայ 'ի հնարհս և յողորմութէ ձնմարտին այ :

ԳԼՈՒԽ Ի

Ա՛ինչափ անպիտան է առաքինութէնդ՝ լինել ծառայ մարդկային փառաց , որչափ հեշտութէ մարթոյ :

ԽՄԱՑՍԱՑՈՒԻՐՔ՝ որ զկատարած բարեաց մարդոյ հաս- տատեն յառաքինութէն , կամեցեալք այսմ առնել զայլ խմաստասէրս ոմանս՝ որք Թէսալիս և գովեն զառաքինու- թիս , այլ չափեն զայնս ըստ պատշաճից մարթականաց հնչ- տութէ , և զհեշտութէնն համարին ինքնին փափաքելի , իսկ զառաքինութէնս վասն նորա , սովորեցան պատկեր ինն նկարագրել բանիւ . ա՛ Աիէքսին . գէր է . յղ . վախճանի . ուր հեշտութէ 'ի գահոյս արքունի բազմեալ կայ իբր դշխոյ ոմն փափկասուն, և սպասաւարկու նաժիշտք նմին կան առաքինութէնք , ուշ եդեալք ակնարկութէ նորա՝ կատարել զոր նայն հրամայիցէ : Այս ահա խոհեմութէ հրամայէ 'ի խնդիր լինել արթնութէ , թէ զիարդ թա- գաւորեսցի հեշտութէ , և անկասկած իցէ : Հրամայէ արդարութէ՝ առատանալ 'ի բարեբարութէնս ըստ կարի ,

առ՝ի չահել զբարեկամութիւնս կարեւորս ի մարմնոյ դիւրութիւն. և չառնել զրկանս ումեք, գուցէ յանիրաւիլն առ օրէնս՝ ոչ եւս կարիցէ հեշտութիւնն կեալ յանհոգս։ Այլ եւ առ այս հրամայէ, զի թէ երբեք ցաւք մարմնոյ պատահիցեն՝ ոչ առ՝ի մահ բռնադատիլք, քաջութիւն պաշտպան կացցէ իւրումն տիկնոջ հեշտութեանն՝ ի խորհրդեան հոգւոյն. իբրեւ զի յիշատակաւ անցելոցն վայելմանց մեղմացուսցէ զխայթս առաջիկայ ցաւոցն, հրամայէ բարեխառնութեանն, այնպէս ինչ առնուլ՝ի կերակուր՝ եւ այն զհեշտացուցիչսն, զի մի անչափութիւնք միասս ինչ զմարմնոյ առողջութիւնն խռովեսցէ, և հեշտութիւնն կարի իմն խափանեսցի, զոր առաւելապէս՝ի քաջողջութիւն մարմնոյ հաստատուն եպիկուրեանք։ Այսու օրինակաւ առաքինութիւնք հանդերձ համօրէն մեծափառութիւնք իւրեանց՝ի ծառայութիւն լինիցին հեշտութիւնք իբր իշխանապանծ և լկտի կնոջ ումեք։

Այս ասէն նոյն իմաստասէրքն, թէ չիք քան զայս նկար անարգագոյն ինչ և զազրատեսիլ, զոր տանել ոչ կարէ հայեցուած արանց բարեաց. և արդարասէն։ Վասն այսորիկ ոչ կարծեմ թէ զպատշաճականն գեղ ունիցի նկարն, և թէ այնպիսի ստուերագրեսցի և՝ի կալ առաքինութեանց՝ի ծառայութիւն փառասիրութեան։ Ոչ թէ և փառքն ոչ է կին փափկասուն, բայց է փքացեալ, և առաւելեալ ունայնութեամբ. ուստի ոչ վայելչաբար ծառայէ նմա սնդութեան և հաստատուն առաքինութեանց, մինչ զի ոչ ինչ հոգայցէ խոհեմութեանն, ոչ ինչ արդարութեանն բաշխեսցէ, ոչ ինչ արիութեան հաւատ բերեսցէ, ոչ ինչ բարեխառնութեանն չափաւորեսցէ, բայց զայն միայն որ՝ի հաճոյս մարդկան լինիցի, և ծառայեսցէ փքացուցողացն փառացն։ Այլ ոչ անստգիւտ յայնմ արատոյ կարծիցեն զանձինս այնոքիկ՝ որք զայլոց դատաստանս առ ոչինչ դրեալ իբր արհամարհողք փառաց, զինքեանս առ իմաստունս ունին, և անձանց հաճոյանան. քանզի և նոցայն առաքինութեանց, եթէ արդեօք ունիցին, այլով իմն օրինակաւ ընդ մարդոյ դովութիւնք անկանի. զի ոչ եթէ անձնահաճն արտաքոյ մեծ մարդիւք։ Իսկ որ չէմարիտ

բարեպաշտութիւնէ սիրէ զնա, ՚ի նա հաւատայ և յուսայ, առաւելապէս զայնս նկատէ՝ որ ինքեան անհաճելիքն են, քան զայնս ՚ի երեսաց ունելոյն, որ ոչ անձինն՝ այլ Աչմարտութիւնն հաճոյք են. և զայն ինչ՝ ընդ որ հաճելի մարթի է, ընծայէ միայն ողորմութիւնն այ, որում երկիւղ անհաճոյ լինել: Որոց բժշկեցաւն, գոհանայ. և վասն որոց բժշկելիքն կան, յաղօթս ապաստան կայ:

ԳԻՒՂԱՒ ԻԲ.

Թէ հաւմայեցաւց Թագաւորութիւնն կարգեալ է ՚ի Աչմարտէն այ, յորմէ և ամենայն իշխանութիւն, և ծառա անչափութիւն վարի ամենայնին:

Եւ զի այս այսպէս, մի այլուստ ընծայեացուք զկարողութիւն տալոյ զԹագաւորութիւնն և զտէրութիւն, բայց այ Աչմարտի, որ զերջանկութիւնէ յերկնից արբայութիւնէ շնորհէ բարեպաշտից միայն, իսկ զերկրաւոր Թագաւորութիւնէ տայ և բարեպաշտից և ամբարշտաց, որպէս նման հաճոյ է, ո՞րում և ոչ մի ինչ հաճոյ գտանի առանց իրաւանց: Արդ Թէպէտ և խօսեցաք ինչ ինչ, որչափ նա ինքն յայտնել կամեցաւ մեզ, սակայն դժուարին է և ՚ի վեր քան զկարն մեր՝ զգալանիս մարդկան հետախուզել, և յատակ քննութիւնն կշռադատել զչափ արժանեաց Թագաւորութեց: Այլ ան որոյ նա ինքն միայն Աչմարիտն այ՝ որ ոչ ՚ի գաւթել և ոչ յօգնել անտես առնէ զմարդկան ազգ, յորժամ կամեցաւ և որչափ կամեցաւ, էտ հաւմայեցաւց զԹագաւորութիւնէ, որ ետն և աստուածանեայց, և կամ Պարսից. որք երկուս աստուածս միայն պաշտէին ըստ աւանդելոյ մանեկից իւրեանց, մին բարի, և միւսն չար. Թող զժողովուրդն երբայական, զորմէ որչափ կարևոր Թուեցաւ՝ ասացի յառաջն ըստ բաւականին. որ բայ՚ի միոյն այ զայլ ոչ պաշտեր նա և ՚ի Թագաւորել անդ: Այլ պա ուրեմն որ ետն Պարսից զարմանիս առանց պաշտման ետստուածուհւոյն

Աեգեւեայ, և զայլ բերս երկրի առանց պաշտաման բազմաթիւ աստուածոցն, զորս հռովմայեցիք կարգեցին մի առ իւրաքանչիւր իրս, կամ նա և միւսմիւսոյ զաղաւս աստուածս, նոյն ինքն էառ և զԹագաւորութիւնն առանց պաշտաման այնոցիկ՝ որոց պաշտելոյն Թագաւորել կարծէին հռովմայեցիքն։ Այլպէս իմն և զմարդկանէ. զի որ Թագաւորեցոյց զԱրիոս, նոյն և զԱպիոս կեսար. որ զԴոմոտոն, նոյն և զԱերոն. որ զԱեսպասեանոս՝ զՀայր կամ զորդի՝ զիշխանս բարեբարոյս, նոյն և զՈմեռիտիա՝ նոս խժաբարոյ. և զի մի ընդ ամենայնն անցանիցեմ, որ զՀաւատացեալն Կոստանդիանոս, նոյն և զՅուլիանոս ուրացող. զորոյ զգօրաւոր բնաւորութիւն պատրեաց առ իշխանասիրութեան պիղծ մոգութիւն զարշելի. զի սուտ պատգամաց հաւատս ընծայեալ, իբր հաւատի գլաղթութիւն ունելով, ի հուր ծախեաց զնաւսն բեռնաբարձս կապարեայ դարմանոց. և յետ այնր յարձակ յարձակ ի գործ միսեալ անխորհուրդ խիզախմամբ, և ըստ արժանի յանդգնութեանն սատակեալ, եթող զանահին յերկրի անդ Թշնամեաց կարօտ յամենայնէ. որում չէր հնար զերծանել բայց միայն հակառակ գուշակման դիցն Յերմինեայ փոխոխելով զսահմանս հռովմէական տէրութեան. զորմէ ի նախընթաց գրի ասացաք։ Քանզի Յերմինոսն այն անսաց հարկին, որ չէրն անսացեալ Ապրամազդայ։ Օգայոսիկ տիրապէս մի և նշմարիտն ՅԾ վարէ և անտեսէ՝ ըստ որում նմա հաճոյ է. և եթէ պատճառքն գաղտնի են, միեմ նովքն և անիրաւք կարծեացին։

ԳԻՐՔ ԻԲ

Ժամանակք և եղք պատերազմաց կախեալ կան զգաստասանէն ոչ։

Ոչ։ զոր օրինակ՝ի հաճոյս ոչ և յարդար գատաստան նորա և յողորմութիւն կախեալ կայ տառապեցուցանել

կամ սիրելի զազգ մարդկան, նոյնպէս և ժամանակք պա-
տերազմաց՝ ոմանց սրագ վախճան առնուլ, և ոմանց ա-
նադան՝ ի ձեռն նորա էն։ Պատերազմ Հինից ծովու
՝ի Պոնտէոսէ, և երրորդ պատերազմ Կարբեդոնի՝ ի Հի-
պոնէ՝ անահնալի լին երազուածք՝ ի գլուխ եղեն՝ ի սուղ
ժամանակի։ Եւ պատերազմ փախստեից մեռելաբա-
րից սուսերամարտից յորում պարտեցան բազում զօրա-
վարք Հռովմայեցւոց, և երկու հիւպատոսք, և Կատալի-
ա ահագին կոտորածովք յաւէր գարձաւ, այլ յամի երրոր-
դում յետ բազում աւերածոյ վախճան ընկալաւ։ Պիւհէն
տեառնք, Կ՝արսխացիք, և Պէրիգնադք՝ ազգք ոչ օտարք,
այլ իտալականք, զինի բազմաժանակեայ և չժ արական
ծառայութեան ընդ լծով Հռովմայ, գլուխ ամբարձին ՝ի
ինդիր ազատութեն, ՝ի ժամանակի յորում այլ ազգք յա-
ղթվք նուաճեալ էին ընդ սէրուքն Հռովմայ, և Կարքե-
դոն քննջինք եղեալ էր ։ և յայսմ իտալական մարտի բա-
զում անգամ՝ ի պարտութեն մնանեցան Հռովմայեցւոց, և
կորուսին զերկուս հիւպատոս և զայլ աղնուականս ՝ի
ծերակուտէն, այլ ոչ ընդ երկար ձգեցաւ չարն ։ զի յամին
հինգերորդի առ զկատարումն ։ Կայր երկրորդ պատե-
րազմ Կարքեդոնի Հանդերձ մեծամեծ տուժիւք և թը-
շուառութեք պետունն՝ զոմն ութեւտասն պարտաեցոյց
զոյժ Հռովմայեցւոց, և խսպառ գոգցես մաշեաց, եօթա-
նասուն հազարաց նոցա անկանելով յերկուս մրցմանս ։
Պունիկեան կամ Կարքեդոնի առաջին պատերազմն տե-
ւեաց ամս քսան և երիս ։ մնացեալ Կ՝երզատոյ՝ ամս քա-
ռասուն ։ Եւ զի մի կարծեսցի ոք թէ նախկին մարտք
Հռովմայեցւոց զօրագոյնք եղեն ՝ի փոքր կատարումն յա-
ռաջին ժամանակս անդ սակս բազմագովելի նոցայն ա-
ռաքինութե, ահա պատերազմ սամնիտեանց յերկարեաց
իբր զամս չիսուն ։ յորում այնպէս նկուն եղեն Հռովմայե-
ցիք, զի և ընդ նոցա լծով խոնարհեցան ։ Եւ զի ոչ սիրեին
զփառս վասն արդարութե, այլ դարգարութե վասն փա-
ռաց՝ ըստ որում երևեր, զարարեալ Հաշտութեն և զդա-
շինս ցրեցին ։

Ո՛այսօսիկ յայն սակս յուշ ածեմ, վասն զի բազումք անգիտակք անցիցին անցելոց, և ոմանք և ս ծածկելով զոր գիտեն, եթէ տեսանիցեն ՚ի ժամանակս քրիստոնէութեան սուղ ինչ յերկարել մարտի իրիք, անդէն հակառակ մերոյ կրօնիցս խլըտին ստահակութիւն, աղաղակ բարձեալ եթէ չլինէին այդ նոր կրօնք և ինայր դիցն պաշտօն ըստ նախնեացն սովորութեան, արագավախճան լինէր արդեօք մարտդ, այնուհետև հռովմէականն քաջութիւն՝ որ յառաջն յօգնակայ նուէ Քրէսի և Մեղրնեայ արագ արագ ՚ի գլուխ տանէր զպատերազմունս։ Վ՛ասն որոյ յուշ բերցեն տեղեակքն դրոց, քանի՞ երկարատև մարտս եռուն հռովմայեցիքն առաջինք, օրըստ տարօրինակ կատարածիւ, և քանի՞ երևելի հարուածովք. որպէս և իսկ հանգամանք տիեզերայ՝ զօրէն մերկալից ծովու տատանել ազգի ազգի փոթորկաւ այսպիսի չարեաց. և զոր վհամիներն՝ խոստովան լիցին անագան. և մի անխորատ լեզուօք հակառակ ոք զանձինս խածատիցեն և զանտեղեակսն խաբիցեն։

ԳԻՐՔ ԻԳ։

Յաղագս պատերազմին՝ յորում Հռադագ գիւտպաշտ արքայն Գոթաց յաղթեցաւ ՚ի միում աւուր անհամար զօրօք Իւրովք։

Ո՛՞ր զոր առ մերովք իսկ ժամանակօք ներգործեաց ոճ աքանչելապէս և ողորմութիւն, չիշեն զայն հռովմայեցիքդ բնաւ գոհութիւն. այլ թէ հնար ինչ է, ըստ բովանդակ կարի իւրեանց ջանան անյուշ առնել առ ոչ մարդ. զոր եթէ մեք լուիցեմք, նման նոցա ապաշնորհ լինիմք։ Յորժամ Հռադագ արքայ Գոթաց բազմագունդ և սաստիկ բանակաւ մերձ ՚ի սահմանս Հռովմայ քաղաքին՝ երբ ՚ի գլուխս հռովմայեցւոց եկեալ հասեալ էր, ահա առ օրըն այնպէս ինն վաղվաղակի պարտեալ գտաւ, զի ուր և ոչ մի հռովմայեցի վէրս էր առեալ, թող թէ մեռեալ, ա-

ռաւել քան զՀարիւր հազար՝ի զօրաց նորա տապաստ անկան. և ինքն որդւովք Հանդերձ՝ի ձեռս եկեալ, զարժանին ընկալաւ մահ։ Օ՜ի եթէ էր ամբարշտին այնմ մէկ տեառ՝ի Հռոմ այնչափ ամբարիշտ գումարտակօք, ոմն ումեք խնայեալ էր արդեօք. զոր տեղիս մարտիրոսաց ոչ էր անպատուեալ. որում մարդոյ ակնածէր վասն երկիւղին այ. զոր արիւն ոչ հեղոյր. զոր պարկեշտութեի՛ն Թողոյր անարատ։ Այլ զոր արդեօք յայնժամ Հռովմայեցիքդ ձայնս չառնային վասն դից իւրեանց, քանի՞ խրոխտանօք չասէին, թէ վասն այն յաղթեաց Հադադ, և այնչափ ինչ առնել կարողացաւ, վասն զի օր ըստ օրէ զոհիւք հաշտեցուցանէր և կարդայր զաստուածն, զոր Հռովմայեցւոցս ոչ Թողացուցանէր առնել օրէնքն քրիստոնէական։ Վասնզի իբրև մերձեցաւ նա՝ի սահմանն յայնոսիկ, ուր յակնարկութի՛ բարձրելոյն խորտակեցաւ, և Հռչակ նորա տարածանէր ընդ ամենայն կողմանս, պատմեցաւ մեզ՝ի Կարքեդոն՝ թէ հեթանոսք Համարէին և զոյց Հանեալ պարծէին, անպարտելի լինել նմա յայնցանի՝ որք միանգամ դիմ Հռովմայեցւոց ոչ զոհէն, և ոչ այլոց Թողուն առնել, այլ ինքն Հադադ պաշտպանեալ էր՝ի բարեկամ աստուածոց իւրոց և օգնականութի՛ գտեալ, որոց Հանապազօր զոհէր ասէին։ Այլ ահա այժմ չեւառականքս չտան ինչ գոհուի մեծի գԹութե՛ն այ, որոյ սահմանեալ պատուհասել արշաւանօք բարբարոսաց զվարս մարդկանն՝ զարժանիս ծանրագունիցն կրելոյ, մեզմացոյց հեզութե՛ զսրտմտութե՛ իւր. մինչև նախ զբարբարոսն աքանչելապէս վատԹարեաց, մի արդեօք առ՝ի գլորումն անձանց տկարաց փառաւորեսցին դևք, որոց պաշտօնեաւսր էր նա. և ապա Թոյլ եւս նոցունց բարբարոսաց՝ի բուռն առնուլ զՀռոմ, բայց Հակառակ ամենայն սովորութե՛ պատերազմաց անցելոց՝ խնայելով յապաստանեալսն՝ի սուրբ տեղիս առ՝ի պատիւ քրիստոսական կրօնից. այլ և սակս քրիստոնէական անուանն այնպիսի Հակառակութե՛ ցուցին նոքա առ դևս և յամբարիշտ պատարագացն սովորոյն Թս, յորս վատահայհոյեալն էր Հադադ, մինչև գժընդ-

դակ և մարտ դնել նոցա ընդ դէմ՝ քան ընդ մարդիկ։ Այսու օրինակաւ Աչմարիան ասէ և տեսուչ իրաց ամենայնի՝ զհռովմայեցիս եհար ողորմութիւն, և անկարծ պատահեցեալոյն դիւակրօնից եղոյց՝ թէ զոհք իւրեանց և ոչ յաղթութեան կենացց պիտանիք են. որպէս զի որք միանգամ առանց յամառ վհատանց իմաստաբար նկատիցեն զիրսդ, մի՛ ի պատճառս առաջիկայ կարեաց լքանիցեն զՀմարիտ կրօնս, այլ առաւել պինդ ունիցին անսուտ ակնկալութիւն յաւիտենից կենացն։

ԳԼՈՒԽ ԻԹ

Ո՛ր ինչ և որչափ Հմարիա՝ բարեբաստութեն քրիստոնեայ կայսերաց։

ԿՊԱՏՃԱՌՆ մեք զքեռադաւան կայսերս ոմանս ոչ այնու երջանիկս լինել ասեմք, վասն զի կամ ընդ երկար տիրեցին, կամ խաղաղական մահուամբ թողին յիշխանութիւնէ զորդիս իւրեանց, կամ զհակառակորդս պետութենէնուա Հեցին, կամ զի քաղաքային թշնամեացն ի վերայ յարուցեալոց կարողացան զդէմ ունել և նուաճել։ Այսոսիկ և զայլ ևս վհատալից կենացս պարգևս կամ զդիւրութիւն՝ ընկալան արդեօք ոմանք ոմանք և ի դիւապաշտից անգամ, որոց չիք մասն յարքայութենէն այ, որպէս գոյ սոցա քրիստոնեից, այնպէս տնտեսելով ողորմութենէն այ, զի մի հաւատացեալքն ի նա՝ ցանկանայցեն այնոցիկ իբրև դերադոյն բարեաց։ Այլ ասեմք զնոսա երջանիկս, եթէ արդարութիւն իշխեն, եթէ ընդ լեզուս զարմանագործս և ընդ ցածուն Հարկ մեծարանաց ոչ բարձրամտին, յիշելով թէ մարդիկ են. եթէ զիւրեանցն իշխանութիւն՝ ի վար արկանեն իբր արբանեակ մեծվայելչութեն այ առ տարածանելոյ յաւէտ զպաշտօն նորա. եթէ յայ երկնչին, զնա սիրեն և պաշտեն. եթէ առաւել զայն թագաւորութիւն սիրեն՝ ուր ոչ երկնչին ունել գահակիցս. եթէ յամր լինին ի վրէժխնդրութիւն, և արագ ի ներել. եթէ զվրէժխնդրութիւն

Թափեն՝ի Տարկէ խնամելոյ և պահպանելոյ զպետութիւն, այլ ոչ՝ի յագուրդ ոխերիմ առելութեան. եթէ և զնեբուին վարեն ոչ առ անպատուհաս մնալոյ անօրինութեան, այլ՝ի յոյս ուղղութեան. եթէ բազում անգամ բռնադատին սաստիկս ինչ հրամայել, բարեբարոյ գթութիւն և առատապարգև բարեբարութիւնը զանդրադարձն լնուն. եթէ մարթ մնոյ հեշտութիւն այնչափ զգուշադոյն իցէ՝ի նոսա, որչափ արձակն լինել մարթ էր. եթէ առաւել ախտակիր ցանկութեանց՝ քան ազգայ բազմոյ իշխել կամիցին. և եթէ առնեն զայս ամենայն ոչ՝ի զրգռմանէ ունայն փառաց, այլ առ սէր յաւիտենից երջանկութեան. եթէ ոչ հեղգանան սակս անձանց մեղացն ընծայաբերել՝ոյ իւրեանց պատարագ խոնարհութեան, աղերսմանծութեանէ և աղօթից։ Օ այսպիսի քաջառաւան կայսերս արդարեւ ասեմք երջանիկս լինել՝ այժմ՝ յաւսով, և ապա արդեամբք՝ յորժամ եկեսցի, որում սպասեալ մնամք։

ԳԼՈՒԽ ԻԸ

Քաղաքս յաջողաճոց՝ զոր շնորհեաց ած Կոստանդիանոսի քաջառաւան կայսեր։

Օ ԳՈՒՐԱՑԱՒ բարերարն ած, մի արդեօք մարդիկ՝ որք զնա պաշտել հաւատացին սակս կենացն յաւիտենից, լինիցին՝ի կարծիս թէ զհարստութիւնքս զայսոսիկ և զերկրաւոր թագաւորութիւնս ոչ ումեք է տանել՝ բայց որ դիւացդ իցէ աղաչաւոր՝ իբր ոգւոց զօրաւորաց յայսպիսի իրս։ Այրին վանն զԱյոստանդիանոս կայսր՝ զպաշտօնեայ ՚ոյ Ն՚ըզմարտի, և ոչ դիւաց ողբաւոր, այնչափ Ն՚ոխացոյց պարգեւօք երկրաւորօք, որչափ ըղձանալ ոչ ումեք էր իշխելի. որում և պարգեւեաց նորակերտել քաղաք՝ կոչդր Հռոմ՝ մեկան տերութեանն, իբր գուսար ումն Հռովմայ, այլ առանց դիւանուէր տաճարաց և պատկերաց։ Պայա-

զատեաց յերկար. զբովանդակ աշխարհ հռովմէական միաւնակ օգոստափառ ինքնակալ վարեաց և պաշտպանեաց. ի ձեռնարկս և ի մղել մարտից եղև ամենայաղթ. ի նըւաճել զբռնաւորս ամենայնիւ աջող գտաւ. երկայնակեաց եղեալ, հիւանդութիւք ի ծերութիւն փոխեցաւ յաստեացս, Թողեալ զորդիսն կայսերացեալս։ Այլ դարձեալ զի մի գուցէ կայսր ոք յայն սակս զբրիստոնէութիւն ընտրեսցէ՝ զի մարթասցի Կոստանդիանոս բարեբաստութեն հասու լինել, ուր միայն վասն յաւիտենից կենացն պարտի ոք քրիստոնեայ լինել, զՅովիանոս սակաւակեաց արար քան զՅուլիանոս։ Կոչեցեալ անկանել Կրատիանոսի ի սուբ բռնաւորի, Թէպէտ և տանելի քան զմեծին Պոմպէոսի պաշտօնատարի դից հռովմայեցւոց. քանզի զվերէժ մահու նորա ոչ կարաց առնուլ Վատոն՝ որ մնացեալն էր կատարիչ քաղաքական մարտին. բայց զքէն վրիժուն Կրատիանոսի, Թէպէտ և բարեպաշտի սգոյ չէ այն հեշտալի, ի գլուխ տարաւ Թէոդոս, զոր գահակից իւր արարեալ էր Կրատիանոս, ուր տակաւին մանուկ էր եղբայրն իւր. քանզի առաւել ցանկացող էր նա հաւատարիմ իշխանակցութեն, քան միահեծան իշխանութեն։

ԳԻՒՂԻՒ Ի.Ջ.

Յաղագս հաւատարմութեն և բարեպաշտութեն Թէոդոսի ինքնակալի։

ԱՍՏԻ և Թէոդոս ոչ միայն առ կենդանութեն Կրատիանոսի զարժանին կալաւ առ նա հաւատարմութեն, այլ և յետ մահու նորա նիւթելոյ յարիւնըզուշն Աբսիմոսի՝ զմանուկ եղբայրն նորուն զի աղեխոխիանոս զորքաց ցեաքն՝ կցորդ իւրում իշխանութեն ընկալաւ՝ որպէս վայել է քրիստոնէի. Հայրաբնամ գթութիւք պաշտպանեաց նմա, ուր կարող իսկ էր հեշտաւ լինի ի միջոյ ի բաց բառնալ զանօգնականն յամենայնի, եթէ տիեզերակալելոյն իշխ

առաւելեալ էր ի նմա քան զսէր բարեբարելոյն. վասն որոյ անշրթելի պահեալ զկայսերական գնորայն պատիւ, սփոփեաց զնա մարգասիրութիւնբ և առատութիւնբ: Իսկ զի Աթաքսիմոս կարի իմն գոռոզացեալ էր յաջողուածոյն այնուիկ, և Թէոդոս կայր անձկացեալ ի հոգս երացն, ոչ յանսուրբ և յանարժան դուշակութենէն եղև ապաստան. այլ առաքեաց առ Յովհաննէս ծառայ ՚ի մենաստեալ յանապատն Լիդիայոսի, զորմէ համբաւ առեալ էր ունել զհոգի մարգարէութենէ, և ընկալաւ ի նմանէ զանշուշտ աւետիս յաղթութենէ. և արագ սատակեալ զԱթաքսիմոս բռնաւոր, զի աղեներինիանոս մանուկ ի տեղւոյն ուր փախուցեալն էր՝ դարձոյց գորովական պատուասիրութենբ ի սահմանս տերութենէ իւրոյ: Ապ ի սորա վախճանիլ յետ սակաւուց՝ դաւով արգելաք, կամ այլով իմն օրինակաւ և դիպուածով, և Լիդինէոսի բռնաւորի հնութենբ անցանելն յաթոռ կայսերական, դարձեալ ընկալաւ Թէոդոս պատգամ մարգարէական, և աներկիւն հաստատուբք պարտեաց, աղօթիւբ՝ քան զինուբ մարտուցեալ ընդդէմ հզօր բանակին նորա: Օրինականբ որ անդ գտան՝ պատմիչն մեզ, թէ ուժգին հողմոյ հնչեալ ի կողմանց Թէոդոսի ընդդէմ թշնամեաց՝ յափշտակեալ տանէր ի ձեռաց մերոց զոր ինչ և ձգէաբ աստի, և զնոցին իսկ թշնամեացն հետս յետս ընդդէմ առ նոսա արկանէր. ուստի և Աղաւտիանոս քերթող՝ թէպետ և օտար ի քրիստոնէութենէ, ասաց ի գովեստս Թէոդոսի.

“Ահա՛ յայժ սիրելիդ մեծին աստուծոյ,
Հրամ Հռովմոս ի խորաձորոյ,
Զամբրունս զինեալ խիտ առ խիտ հեղուս:
Վեղ նիզակակից եթերըն վերին.
Հողմունբք դաշնաւորք համագունդ կռուին.
Ի փողանըշան հընչելոյ մարտին ,, :

Յաղթական եղեալ Թէոդոսի, որպէս յուսայն և գուշակեալ իսկ էր, խոստակեաց զարձանան Բամազայ՝ զոր Ալիայա կանգնեալ էին, և անյայտ իմն դիւթութենբ ձօնից առ ի դաւաճանել զնա. և զոսկի շանթն որ յար-

ձանի անդ՝ պարգևեաց զուարթամիտ բարեսիրութիւնս սուրբ
Հանդակաց իւրոց, որք և ըստ ուրախութեն ժամու ա-
սացին ընդ խաղս. ախորժելի է մեզ այսպիսեաք հարկա-
նել չանթիւք։ Օ՜ որդիս թշնամեացն սատակելոց ոչ յիւր-
մէ հրամանէ, այլ՝ի շփոթից մարտին, չև ևս քրիստո-
նեայ գոլով ապաստանեալս յեկեղեցիս, հրամայեաց այսու
պատեհութիւնք լինել նոցա քրիստոնեայս, և քրիստոնէա-
բարս սիրով խնամարկեաց, ոչ զրկեալ զնոսա՝ի գոյիցն,
այլ պատուով և ևս ձոխացուցեալ։ Ի թողացոյց բնաւ յետ
յաղթութեն՝ի կիր առնուլ յոք թշնամութիւնս առանձ-
նաւորս. զմարտս քաղաքական՝ ոչ որպէս Կիննատն և Ա՜ա-
բիոս և Աիղղս և այլք նոյնպիսիք՝ որք յետ դադարմանն
անդամ կամեցան յառաջ վարել, այլ առաւել վշտացաւ
ընդ յարուցմունս այնպիսի մարտից՝ քան յետ դադա-
րելոյն միասել ինչ ուժիւք։ Ի՜ր այսոքիւք անդամին՝ի
սկզբանէ տէրութեան իւրոյ ոչ դադարեաց ձեռն տալ
եկեղեցւոյ նեղելոց արդարակիւս և բարեխնամող օրինաց
ընդդէմ ամբարշտաց. զոր Ա՜աղէս հերձամիտ՝ արիանո-
սացն ձեռնտու՝՝ի մեծ տառապանս էր արկեալ. իսկ ինքն
Ա՜ովդոս խնդայր առաւել՝ լինել անդամ եկեղեցւոյն այ,
քան թագակալել երկրի։ Ա՜ա հրամայեաց կործանել
յամենայն տեղիս զկուռս հեթանոսաց, քաջ՝ի միտ ա-
ռեալ թէ ոչ՝ի դիւացն ձեռս, այլ յիշխանութէն այ ձչմար-
տի են և պարգևք երկրաւորք։ Ի՜չ զինչ այլ զարմանա-
քանչ քան զերկիւղածն նորա խնայարհուէն, յորժամ խոս-
տացեալ նորա ըստ աղերսելոյ եպիսկոպոսաց ներել մեծե-
ղեռն ասլիբատուէ Թեսաղոնիկեացոց, այլ յաղվիկ ոմանց
իւրոցն մերձակայից բռնադատեալ ապա՝ի վրէժխնդրու-
թէ, պարտաւորեցաւ ընդ եկեղեցական խոստութէ. այն-
պիսի յանձն առեալ ապաշխարութէն, միանգ ժողովուրդն
աղաչաւոր վասն նորա՝ առաւել արտասուս հեղոյր տե-
սանելով զկայսերականն մեծափառութէն խոնարհ յերկիր
տարածեալ, քան զոր՝ի յանցանել իւրում երկուցեալ էր
՝ի ցասմանէ նորա։ Օ՜ այսոսիկ արգասիս բարեաց, և
զոր սոցին նմանս՝ զոր երկար լինի յիշատակել, առաւել ընդ

իւր տարաւ նա յառաջամանակաւոյ ծխոյ աստի մարդկային պերձութենէց և վսեմութենէց. որոց վարձք՝ յաւիտենից երջանկութիւն է, այն զոր ոճ տայ միայն արդարեւ բարեպաշտից։ Իսկ զոր այլն և աստի կենացն բարձրութիւնս կամ նպաստս, որպէս աշխարհ, լոյս, օդ, երկիր, ջուր, բերք, և նորին իսկ մարդոյ հոգի, մարմին, զգայարանս, միտք, կեանք, զայսոսիկ բաշխէ ոճ բարեաց և չարաց. յորոց սակի է և առնայն մեծութենէ տերութենէ, զոր տնօրինէ ոճ ըստ տնտեսութենէ ժամանակաց։

Ա՛յլ արդ ժամ թուի ինձ աստանօր գալ՝ի պատասխանիս առ այնոսիկ, որոց խոպառ յաղթահարեալ առնայայտ հաւատոյ առ՝ի ցոյցս՝ թէ ոչ մի ինչ պիտանութենէ է յերնաթիւ աստուածոյն ստոց՝ի յաջողուած ժամանակէիցս՝ անմոռացն և ևթէ փափաքելեաց առ՝ի ստանալ հնարին այնու հետև ասել թէ ոչ սակս առաջիկայ կենացս շահից՝ այլ որ յետ մահուն կայ մեզ՝ պաշտել արժան է զդիս։ Ա՛րդ առ այնոսիկ որք վասն աշխարհիս վայելմանց յօժարին՝ի պաշտօն մնոտեաց, և տղայամիտ խորհրդովք տրբտընջէն ընդ խափանումն նորա, ըստ բաւականին որպէս կարծեմ տուաւ պատասխանի՝ի հնդեսին յայսոսիկ գիրս. յորոց զերիս զառաջինն իբրև՝ի յայտ ածի, և հասին՝ի բազմից ձեռս, լուայ զի ոմանք բուռն հարեալ էն գրել ընդդէմ պատասխանի՝ չգիտեմ զիւրդ կամ որպիսի. և ապա պատմեցաւ՝ թէ գրեալ իսկ էն, այլ դէպ ժամանակի սպասեն՝ առ՝ի կարող լինելոյ յերևան ածել անվտանգ։ Որոց խրատ տամ, մի ցանկալ այնմ որ ոչ յօգուտ նոցա է. քանզի դիւրաւ կարծի թէ պատասխանի տայ այն՝ որ լռելն չկամի։ Այլ զինչ առաւել լեզուանի քան զունայնաբանութենէ. զի ոչ զօրէ որպէս ձշմարտութենէ. այլ զի եթէ կամի, առաւել քան զձշմարտութենէ աղաղակել կարող է։ Սակայն զգուշեաւ քննեսցեն զամենայն. և եթէ օտար՝ի միտս կողմն խորհրդոց կրնադատեալ՝ տեսանիցեն ինչ ինչ՝ որ հարցաքննութենէ արժանի են, և ոչ եթէ հերքման անպատձառ շաղակրատանօք և երգիծական կամ կատակերգական թերեւութենէ, ՚ի չափու կալցին զիւրեանց զրաբա-

նուէիս. և առաւել յանձն առցէն զառ յիմաստնոցն ուղղութիւն քան զանիմաստից գովութիւն։ «Լանզի եթէ ժամանակի սպասեալ ինան՝ ոչ սակս ազատօրէն խօսելոյ զձշմարտութիւն, այլ առ համարձակ չարախօսելոյ, մի արդեօք առ նոսա 'ի դէպ գայցէ ասացեալն Կիկերոնի զուժիճն՝ որ երջանիկն կարգացեալ էր սակս աներկիւղ մեղանչելոյն. "Ո՞ թշուառ, որում օրէն էցէ մեղանչել..։ Կամ իբրև որ երջանիկ զանձն վարկանի առ համարձակ չարաչախօսութիւն, երջանիկ և այ լինիցի՝ եթէ չիցէ նմա այդ օրէն բնաւ. քանզի կարող է այժմէն 'ի բաց դնել զվայրապարշ յանդգնութիւն ձշմարտասիրութեամբ փութով հարցանելով զոր ինչ և իմանալ կամիցի, և յայնցանէ որոց հարցանիցէ բարեբարոյ վիճմամբ՝ լսել ըստ կարի զոր պիտոյն է՝ հաստուածիւ, հանդարտութեամբ և ազատաբար։

ԳԻՐՔ ՎԱՃԱՐՈՒՊՈՑ

Ցայս վայր խօսեցաւ ընդդէմ այնոցիկ՝ որք արժան համարին պաշտել զդիս՝ ի պէտս ժամանակաւոր կենացս, այժմ բերի հակառակ նոցա՝ որք պաշտելի կարծեն զնոյնս վասն յաւիտենից կենացն։ որոց հերքումն առնել կամիցեալ՝ ըստ Օգոստինոսի՝ ի հնգետասն յաջորդ գիրս, առ տեղեաւս յայտ առնէ զառաքինին զայն կարծեան յաղագս աստուածոց, զոր ապահա կալաւ նա ընդ վարդն՝ մեծանուն մատենագրող հեթանոսական դիցաբանութեան։ զորոյ զերծս տեսակս յառաջ բերէ ըստ նորուն վարդին, զառատձեռնն, զընական, և զքազաքական։ և նախ ապացուցանէ թէ առասպելական և քազաքական դիցաբանութիւնք ոչ ինչ օգտին յերջանկութեան հանդերձելոց կենացն։

ՅԱՌԱՋԲԱՆ

Ի ՆԱԽՆԹԱՑ հնգեակ գիրսդ՝ որպէս լինձ թուի՝ ըստ բաւականին դիմախօսեալ է մեր առ այսոսիկ, որք առ՝ի շահս մահկանացու կենացս և իւրաց երկրաւորաց արժան համարին մեծարել և պաշտել ծառայութիւնք՝ որ միայնոյ Աչմարտին ՚ի վայելչական՝ զքազաքս աստուածս տուտս, զորս հաստատեալ ցուցանէ Աչմարտութիւնն քաղաքական՝ լինել պատկերս Թարմատարս, կամ ոգիս անսուրբս, կամ դևս չարանիւթս, և միով բանիւ՝ արարածս, և ոչ արարիչ։ Ապայն ո՞ ոչ գիտէ, Թէ առ՚ի լուեցուցանելոյ զչետին անմտութիւնն կամ զյամառութիւնն՝ ոչ զօրեն ոչ այս հնգեքին, և ոչ այլ յոքնաթիւ մատեանք, յորժամ՚ի պարծանս հաւատարեալ է ջոյլ քնաւ տեղի զօրութիւնք Աչմարտութիւն. այն իսկ է կորուստ մարդոյ՝ որում տիրեալ էիցէ այս ախտ աւերիչ. քանզի և ընդդէմ բովանդակ արուեստի բժշկականին անյաղթելի մնայ հիւանդութիւն, ոչ՚ի Թերութիւն բժշկին, այլ անբուժելի ախտացելոյն։ Ապակ որք աղաչք՚ի յամառութիւն, կամ գէթ առանց ուժգին սրտութիւն՚ի հինն մոլորութիւն՝ մտաւորաբար կշռեն զընթերցեալսն, ՚ի

միտ առնուցուն գիւրաւ՝ թէ հնգեակ այդ մատենիւք առաւել քան զհարկ սիտոյից խնդրոյս հատուցեալ է մեզ, քան եթէ նուազս խօսեցեալ : Այսր ոչ յերկուանայցեն բնաւ, թէ ամ զայրոյթ՝ զոր հակառակ քրիստոնէական կրօնիցս ախտանան անտեղեակքն՝ ի պատճառս հարուածոց այսց կենաց, և որ այլ ինչ բեկումն և փոփոխմունք երկրաւորացս, որոց ոչ միայն անգէտ ձևանան՝ այլ և հակառակ իւրեանցն իսկ գիտակցութեանն խօսին գիտասուրքն ըմբռնեալք ի խելայեղ ամբարշտութենէն, թափուր է գլխովին յողջմտութենէ և յուղիղ բանէ, այլ և անխորհուրդ յանդգնութենէ և ամենակորուստն լրբութենէ լի :

ԳԻՒՂԻՒՍ Ա.

Ա. այնոսիկ որք ասեն՝ ոչ վան այժմու կենաց պաշտել զԵս, այլ վան մեռանելոցն։

Ի սկզբան արդ, քանզի կայ մեզ առաջի ըստ պահանջելոյ խոստաբանեալ կարգին՝ կշտամբել և ուսուցանել զայնոսիկ, որք պնդեն թէ ոչ ի պատճառս արդի կենաց՝ այլ վանն որ յետ մահու լինելոցն պաշտել օրէն է զաստուածս հեթանոսաց, զորս քանդել հնարին կրօնքն քրիստեական, արժան է մեզ ի սկսուած վիճաբանութենս զնդգրիտն կարգել պատգամ հոգեշունչ սաղմոսին . “Երանեալ է այր՝ որոյ անուն Տեառն յոյս է նորա . ոչ հայեցաւ նա ի նանրութիւն և ոչ ի մոլութիւն սուտ ,, . Պաղ . ԽԱ . 5 : Վասն այնորիկ յամառանայնութեան անդ և ի սուտ մոլութիւն՝ առաւել տանելի է ի բանս անկանիլ խօսել ընդ իմաստասէրս, որոց անհաճոյացան կարծիք և մոլորութիւնք ոմանք ժողովրդոց . վասն զի ոմանք կանգնեցին պատկերս գից, և զայլ ինչ բազում սուտ և անվայելուչ զաստուածոցն անմեղք կոչեցելոց՝ կամ ինքեանք հնարեցին, և կամ զառ ի յայլոց հնարեալսն հաւատով ընկալան, և զմտացածինն զայն գիւտս

խառնեցին մուծին ՚ի պաշտամունս և ՚ի նուիրական հանդեսս։ ՚Այլ ընդ արանցն խմասանոց՝ որք յայսպիսիս յուցան անհաւանս լինել՝ թէ և ոչ համարձակախօս քարոզուքն, այլ մեղմաձայն ՚ի Հառս իւրեանց, ոչ անդէպ ինչ թուի հարցաքննել զայս խնդիր. ՚Արդեօք ո՞չ զմի ածն՝ զբոլոր արարածոց հոգեկանաց և մարմնաւորաց զարարիչ պաշտել արժան իցէ սակս կենացն՝ որ զնմանէ մնհու ունի լինել, այլ զաստուածսն բազումս՝ զորս և ոմանք յիմասատասիրաց անտի առաւելեալքն քան զայլս և ակնառուորք Հաւանեցան ասել, թէ ՚ի միջոկ անտի են ստեղծեալք, և կարգեալք ՚ի գերակայն անդ։

՚Այլ արդ ո՞ր ժուժալ կարիցէ յասել ուրուք և ՚ի պնդել, թէ աստուածքն այն մասամբ և ևթէ առ յինէն յիշատակեալք ՚ի ջորրորդ գիրսն՝ շնորհիցեն ումեք կեանս յաւիտենական. ուր իւրաքանչիւր նոցա բաշխեալ է ուրոյն գործակալութիւն իրաց դուշնաքեայց։ ՚Ի թէ բազմահմուտ արքն այնորիկ և անսրամիտք, որք անձանց պարծանս համարին՝ մեծ ինչ երախտիս գործել յուսուցանել անդ գրուիք, թէ վասն որոյ իրաց առ իւրաքանչիւր աստուած աղօթել պիտոյ է, և զինչ յումեք հայցել զի մի լիցի խայտառակ անտեղուքն՝ որպէս միանոյց է կատակաբանել, խնդրել ՚ի Հաքոսէ ջուր, և ՚ի Հիմիեայց գինի, միթէ սահմ առնուցուն յանձն, զի յաղաչել մարդոյ ուրուք զանմահ աստուածսն և ՚ի խնդրելն գինի ՚ի Հիմիեայց, յորժամ նոքա տայցեն պատասխանի, միք ջուր ունիմք, զայդ ՚ի Հաքոսէ խնդրեա, կարիցէ սա ուղիղ անդրադարձել. Հթէ գինի ոչ ունիք, տուք ինձ գոնէ կեանս յաւիտենական։ Օ՛ինչ այլանդակագոյն քան զայդ անտեղութիւն. ոչ ապաքէն Հիմիեայք զծաղուս եկեալ, որպէս և են իսկ դիւրաշարժք ՚ի ծաղր, եթէ ոչ կամիցին պատրել զօրէն դիւաց, պատասխանի առնիցեն աղաչաւորին. ՚Այլ դու, կարծիցես ունել մեզ կենացդ իշխանութիւն, ուր լսես՝ զի և գինեաց ոչ ունիմք։ Հ ասն որոյ կարի անպատկառ յիմարութիւն է՝ կեանս յաւիտենականս հայցել կամ յուսալ յայսպիսեաց աստուածոց, որք և ՚ի խնամել և ՚ի

կազդուրել զի բաքանչիւր մասն վշտալից և կարձօրեայ կեանսս, և որ ինչ 'ի նոյն անկ են, առանձնաբար համարին հոգարկու. մինչ զի եթէ զանկեալն ընդ խնամօք և իշխանութիւն միոյն՝ յայլմէ խնդրիցէ որ, այնպէս յանպատշաճին է, որ ոչ ինչ ընդհատ 'ի միմեանցն խնդկատակութիւն դառնեսցի. արդ քանզի միմեանս գիտելով առնեն, զիբաւի ծաղր շարժեն 'ի թատրոնի. այլ յիմարքն տգիտութիւն առնելով, առաւել և առակ նշաւակի լինիցին յաշխարհի: Հաստատիկ խնամատուքն նոցա սահմանեցին և գրովք աւանդեցին, որպէս աստուածոյ կամ աստուածուհւոյ, և յոր սակս աղաչել պիտոյ իցէ՝ ըստ պատշաճի դիցն յօդելոց քաղաքի քաղաքի. զոր օրինակ, զինչ 'ի Հանդոսէ պիտի խնդրել զինչ 'ի Լիմիեայց, զինչ 'ի Հեփեստոսէ, զայնպէս իմա և զայլոցն՝ զոր մասամբ յիշատակեցի 'ի չորրորդ գիրս, և մասամբ 'ի բաց Թողուլ ընտրեցի: Հայց արդ եթէ մոլորումն է 'ի Պեմետրեայ դինի հայցել, 'ի Հաքոսէ հաց, 'ի Հեփեստեայ ջուր, 'ի Լիմիեայց հուր, քանի՞ և մեծ զառանցանք իցեն միում ումեք 'ի դոցանէ աղաչանս վն յաւիտենից կենդանի մատուցանել:

Որպէս աղագաւ յորժամ սակս երկրաւոր Թագաւորութեն խնդիր արարեալ ումն, թէ որ արդեօք դիք կամ դիւցազիք ունին չնորհել զայն մարդկան, և 'ի քնին առեալ զանենայն, ցուցաք օտար 'ի Հիմարտութեէ գոլ բնաւին կարծել՝ թէ 'ի միոջէ 'ի բազում սուտ աստուածոցդ կարգիցին երկրաւոր Թագաւորութիւնք անգամ, ասպա ոչ արդեօք խելայեղ ամբարշտութեի իցէ՝ համարիլ թէ յաւիտենից կեանք՝ որ անշուշտ և անհամեմատ գերազանցեալ է քան զերկնաւ Թագաւորութիւնս երկրաւորս, տացին 'ի միոջէ 'ի դից անտի: Հանգի ոչ եթէ այնու անկարողք Թուեցան աստուածք այնպիսիք, առ 'ի տալոյ զԹագաւորութեի երկրաւոր, իբրև զի ինքեանք մեծամեծք են և բարձունք, իսկ Թագաւորութիւնն դատարկաբեայ և արհամարհ, մինչ զի ոչ վայել իցէ մեծափառութեէ նոցա հոգս տանել այնմ: Արդ որչափ և արժանապէս տկար խորհրդով մարդկութեէ արհամարհեսցէ որ զանկայուն բարձրութիւնս երկրաւոր

Թագաւորութեէ, ապա և նոքին առաւաւածքն անպատակա-
նաւորք գտանիցին, և ոչ բնաւ արժանիք՝ ի յանձն լինել
նոցա շնորհել և պահպանել զերկրաւորքս իսկ։ Ասեմ
Եթէ ըստ նախակարգեալ երկուց գրոցն ուսուցանելոյ՝ ոչ
ոք՝ի խոժանէ, անտի առաւաւածոյն ժողովրդականաց կամ
իշխանաւորաց բաւական է զմահկանացու Թագաւորու-
թիս տալ մահկանացուաց, որչափ և անբաւական էին
զմահկանացուսն առնել անմահս։

Յաւել և զայն, զի որովհետև ընդ այնոսիկ են բանքս՝
որք ոչ՝ի պէտս այսց կենաց, այլ հանդերձելոցն յետ մա-
հու պաշտել Տաճարին զդիս, յայտ է ասա՝ Թէ չեն և չեն
նոքա պաշտելիք սակս երիք երիք բաշխեցելոցն և սեպ-
հականելոց ընդ իշխանութէ այնպիսեաց առաւաւածոց,
ընծայեալ նոցա ոչ ձեմարտութէն բանիւ, այլ կարծեօք
ունայնութէ. որպէս և Տաւատան որք սխղէնն՝ Թէ պաշտօն
նոցա կարևոր իցէ յօգուտ մահկանացու կենացս, առ որս
ընդդիմաբանեցի բաւական ըստ կարի յանցեալ Հնգեակին
մատեանս. այդպիսի գոլով իրացդ՝ եթէ նոցա որք զՅո-
վհնտաս դիցուհի երիտասարդութեան պաշտեին վասն
ծաղկաւէտագոյն լինելոց Տասակաւ. իսկ անարգիչք նորա
կամ անդէն յամն մահկանացն Թօթափիչն, և կամ յառա-
ջագոյն Տասակին ծերանալոյ իմն Թմրութէ ցրտանայրն։ Եթէ
բաժան մօրուսաւոր զծնօտս իւրոցն պաշտօնէից գեղա-
ծիծաղս և զուարթագինս զարդարէր, և զարհամարհողս
նորա սեսանէաք հերառս կամ քարձս, սակայն և այնպէս
արգարապէս ասէաք՝ Թէ ցայդ վայր միայն կարող էն աս-
տուածդդ իւրաքանչիւր, սահմանն և չափ ունելով գոր-
ծոց իւրեանց. ուստի ոչ՝ի Յովհնտայ օրէն էր խնդրել
կեանս յաւիտենից, և զմօրուս անդամ տալ ոչ ունէր, և
ոչ՝ի մօրուսաւորն բաժան բաւէր իմիք ակն ունել յետ
աստեացս, որոյ և չայս կեանս չէ կարողութէ շնորհել
գնէթ զայն Տասակ՝ յորում մօրուսք բողբոջեն։ Այս քան-
զի պաշտելութէն նոցա չէ կարևոր, և ոչ միւոս չայսոսիկ
աստուածոցդ ներքոյ անկեալս ըստ Հնգեանսացն կարծե-
լոյ, իբրև զի բազումք՝ի պաշտողաց զՅովհնտաս՝ ոչ Տասին

յայն տիս, և չպաշտօնատարք բազումք առուգեցան հասա-
կաւ։ Ապրեցաւ և մօրուսաւոր բախտին ողբաւորքն ոչ ծաղ-
կեցին գէթ Թերաբուսիկ մօրուօք. և եթէ սակս մե-
բուաս ունելոյ մեծարանս նմին առնիցեն, 'ի մօրուսաւոր
արհամարհողաց նորա ծաղր լինին. միթէ արդեօք սիրտ
մարդկան յիմարացի այնպէս տարադէպ, մինչև առ յա-
ւիտենից կեանս շահաւէտ կարծիցէ զպաշտօն դիցն այ-
նոցիկ, զոր տեսանէ անպիտան լինել և ծաղրական 'ի նոյն
իսկ 'ի ժամանակաւորս և 'ի դիւրանցանելի պարգեւս, որոց
միւսմ միւսմ վերակացու համարեալ էն։ Օ՜ յայն գյաւի-
տենից կեանս տալ և ոչ նորին անգամ ասել համարձա-
կեցան, որք առ 'ի պաշտելի առնելոյ անմիտ ժողովրդոց
զդիս, 'ի մասունս մասունս բաշխեալ զգործս ժամանակա-
ւորս՝ ընծայեցին աստուածոց իւրաքանչիւր. զի որպէս
յաքնաթիւս եդին աստուածս, նոյնպէս և բազմամաս-
նեալ արարս, խիթացեալք՝ մի գուցէ 'ի նոցանէ ոք ան-
գործ նատիցի։

ԳԼՈՒԽ Ը

Չինչ խորհել արժան էջէ յաղագս կարծեաց վարրոնի 'ի վերայ աստուածոց. զորոց այնպէս իմն յայտնաբանէ զգաչս և զպաշտամունս, մինչև առաւել մեծարանս առնէր նոցա՝ եթէ բնաւ լռեալ էր։

Այո՛ ոք քան զվարրոս վարրոն պնդագոյնս 'ի խնդիր
եղև այսոցիկ. ո՞ եգիտ իմաստնագոյն, ո՞ առաւել զգու-
շեաւ քննեաց. ո՞ մանրամասն զատոյց. ո՞ 'ի գիր աւանդեաց
խնամով և լի բովանդակ։ Այլաքէն չէ նա 'ի Հարտարա-
բանութենն կարի քաղցրախօս, բայց վարդապետութեամբ և
իմաստիւք այնպէս իմն պատարուն գոյ, զի 'ի հմտութիս
ամենայն՝ զոր մեք աշխարհական ասեմք, իսկ արտաքինք
ազատական, այնչափ ուսուցանել նա զուսումնասէրն, որ-
չափ զբանասէրն զուարճացուցանել Կիկերոն. որ և սա
ինքն վկայութիւ այսպիսի տայ վարրոնի՝ ասելով յակա-

դեմական գիրսն, Թէ զվիճաբանութիւնն զոր անտանօր
ձառէ, կալաւ ընդ Ա՛րիոսի և Ա՛ետրոնի. "Ա՛յլ, ասէ, քան
զընաւս քաջահանձար և ամենահմուտ՝ առանց յերկուա-
նաց,, և ասաց՝ քաջաբան, պերձախօս. քանզի այդու մա-
սամբ արդարեւ նուազեալ է այլն. այլ ասէ՝ ամենի քաջա-
հանձար. և զի յայն ակադեմական գիրս սկսեալ Լիկերոն Թէ
ամ՛ ինչ երկբայելի է, սորին վասն առ ամենահմտան յա-
ւել՝ առանց յերկուանաց. այնպէս՝ի դոյն ստուգագիտ դա-
սուի, միանգամ Թողուլ՝ի բաց զերկբայութիւնն՝ զոր յայլ
ամենայն՝ի կիր առնու. իբր այն Թէ նա և՝ի վիճաբա-
նել անդ՝ի ցոյց ակադեմականն երկբայուէ՝ մոռացեալ
իսկ զվինել իւր ակադեմեան յաղագս Ա՛ետրոնի միայոյ.
Ասէ յառաջին գիրս զԱ՛ետրոնի գրաւորական վաստակն
՝ի դուխատ առեալ ասէ. " Ա՝ետ՝ի բնիկ քաղաքի պանդ
,, դուխտք էլով և վտարանդիք՝ իբրև հիւրս ոմանս,
,, քոյին գրենով գոգցես զարձաք՝ի տուն, առ՝ի կարող
,, վինելոյ Ճանապել անագան՝ ոյք ոմանք, և ուրանօր ի-
,, ցեմք: Ասու զՀիմնարկութիւն հայրենեաց, դու զարձա-
,, նագրութիւնս ժամանակաց, դու զսիաշտամանց և զբրմաց
,, իրաւունս, դու զառանին և զհասարակացն կարգաւո-
,, րութիւն, դու զաթոռս գաւառաց և տեղեաց, դու զծա-
,, ային և զմարդկայինն իրաց ամենայնի զկոչմունս, զգործս,
,, զառեսակս և զպատճառս արտայայտեցեր ,, : Ա՛յս այր
նշանաւոր և գերազանցեալ Համոութիւն՝ յիշատակեալ է և
՝ի Տերենտիանոսէ կարճառօտ գեղեցիկ տաղիւն. Ա՛յր,
ասէ, ամենիմաստ բոլոր մասամբ Ա՛ետրոն. որ այնչափ
յոլովս ընթերցաւ, մինչ զարմանալ մեզ՝ զիարդ եգիտ
պարապ գրել ինչ. և այնչափ յոլովս գրեաց, մինչև դժուա-
րին է կարծել Թէ այնչափ բազմութն կարացեալ իցէ ոք ըն-
Թեռնուլ:

Ա՛րդ այր այսպիսի մեծահանձար և բազմագէտ՝ եԹէ
՝ի գրել իւրում զմծայնոցն կարծեցեալ իցայ՝ խօսեր իբր
ընդդիմաբան և աղէատիչ, ցուցանելով զայնս ոչ կրծնից
լինել անկ՝ այլ աւելապաշտութէ, ոչ գիտեմ կարող ինչ էր
արդեօք այնչափ բազմութն ծիծաղելիս և անգոհանելիս և

զզուականս գրել զնոցանէ ։ Այլ քանզի այսպէս պաշտեր նա զաստուածն զայնոսիկ , և պաշտելոց արժանիս վարկանէր , մինչև ասել՝ի նոյն գրուածին՝ Թէ երկնչի մի արգեօք բարձցին աստուածքն , ոչ՝ի Թշնամեաց յարձակմանէ , այլ՝ի հեղգասրտութենէ քաղաքացւոց . և յայնմ կորստենէ ջանացայ , ասէ , ապրեցուցանել զնոսա , ՚ի յուշ լինելոյ բարեսիրացն աւանդեալ և պահեալ գրովքս իմովք այնոքիւք , լաւ ևս հոգոյս Թէ բերելով քան Թէ Առեղծս յայտնելն ՚ի հրահրմանէ զգրօշելոյս Աստուածայ , և Նահաս՚ի Ցրոյայ կրակէն զառանէն աստուածանա Սակայն զայսպիսի ինչ իրս չընԹերցուին տայ յետնոց ժամանակաց , որ և իմաստնոց և անխիստից յիրաւի անգոհանելիք գտանեցին , և հակառակամարտք Ճշմարտութենէ կրօնից . առ որ զինչ այլ կարծել է մեզ , բայց զի այնու կոյսովի և գերիմաստ ոչ ունելով զազատութենէ հոգւոյն սէր , ՚ի սովորութենէ և յօրէնս քաղաքին գերեալ ներգևեցաւ . այլ ոչ կամեցաւ լռել և զայն՝ յոր վաւերք ոգի նորա ընդ պատրուակաւ գովելի ընծայելոց զկրօնսն ։

ԳԻՐՔ Գ

Բաժանումն գրոցն Վարդանի, զորս շարադրեաց յաղագս հնութենէց մարդկային և ծագման իրաց ։

ՎԱՌԱՒԱՏՆ և մի գիրս հնութենէ արձանագրեաց Վարդան , զոր և արտհեալ՚ի մարդկայինսն և յաճախինս , մարդկայնոցն ետ գիրս քսան և հինգ , իսկ ածախնոցն վեցտասան ։ Այս կարգ կալաւ նա՚ի բաժանմանն , զի մարդկայնոցն իրաց կարգեսցէ վեցեակ գիրս չորիւք մասամբք . քանզի է նորա դիտաւորութենէ Թէ այք են որք առնեն , ուր առնեն , երբ առնեն , զինչ առնեն ։ Այսպա յառաջին վեցեակսն գրեաց զմարդկանէ . յերկրորդ վեցեակսն՝ զտեղեաց . յերրորդ վեցսն՝ զժամանակաց . իսկ զչորրորդ վեցեակսն յետինս՝ բովանդակեաց յաղագս իրաց . և ահա

չորք վեցեակ՝ լինին քան և չորք։ Այլ զի գիր ուրոյն կարգեաց եդ ՚ի գլուխ անդր հասարակաբար զամենայնցն նախաբանել կամեցեալ։ Այլ և յանձայնեան առացեալ իրս պահեաց սովորաբար զնմանօրինակ բաժանումն՝ որքան ինչ ՚ի պաշտօնատարութիւնէ դիցն անկ է. զի պաշտօն ընծայի նոցա ՚ի մարդկանէ ըստ տեղեաց և ըստ ժամանակաց։ Օ չորեսին զասացեալքս բովանդակեաց նա յերկուս երրեակս գրոց. զի յառաջին երիան գրեաց զմարդկանէ. ՚ի յաջորդն՝ զտեղեաց. յերրորդն՝ զժամանակաց. ՚ի չորրորդն՝ զպաշտամանց, աւանդեալ յայնոսիկ մանրաքննին որպղոլուբ՝ Թէ այք են որ ընծայեն, ուր ընծայեն, երբ ընծայեն, և զինչ ընծայեն։ Այլ զի պիտոյ էր և զայն ասել՝ զյաւէտ խնդրելին, Թէ որոց ընծայեն, արձանագրեաց զերիս յետին գիրն յաղագս աստուածոյն. որով հնգիցս երեք լինիցին հնգետասան։ Այլ են որք ասին՝ որպէս ասացաք, վեշտասան. քանզի և ՚ի սկսուած սոցա յաւել զմի գիր ուրոյն, յորում զհանուրցն նախաձառէ. և զայն աւարտեալ, յետոյ ապա ՚ի հնգաթիւ բաժանելոց անտի՝ զերիս առաջինսն որ զմարդկանէ, այնպէս բաժանէ զարձեալ՝ զի առաջինն Ձառէ յաղագս քրմապետաց, երկրորդն՝ զգուշակաց, երրորդն՝ զհնգետասան արանց նուիրելոց։ Երկրորդ երիան՝ որ զտեղեաց էն, ՚ի մուսն յաղագս մեհենական մատրանց Ձառէ. յերկրորդումն՝ յաղագս մեհենական տաձարաց. յերրորդումն՝ յաղագս կրօնասէր տեղեաց։ Օ հետ եկեալ երեքն՝ որ յաղագս ժամանակաց, այս է՝ ցնծութիւնէ աւուրց, առաջինն աւանդէ զտօնսն. երկրորդն՝ զնաղդն կրկիսականս. երրորդն՝ զթատերականս։ Զորրորդ երիցն՝ որ յաղագս պաշտամանց, առաջնումն տայ զնուիրագործութիւնս. երկրորդին՝ զպաշտամունս առանձնայինս, և վերջնումն՝ զհասարակացն։ Օ հետ մեծաչուք սպասահարկութիւնեցս՝ յերիս մնացեալ գիրսն դան վերջոտեալ աստուածքն ինքնին, որոց է ընծայեալ այս ամենայն պաշտօն. նախ՝ աստուածք յայտնիք. զկնի՝ անյայտքն. ՚ի վերջոյ ամենեցուն՝ գվնասուղքն յաստուածոց ընտրանաւ։

ԿԻՒՐԻՒՂ Գ

Թէ ի Հաւս անդ Վարդանի առ նախնիսն դիցապաշտան զմարդկային էրս և դառնալ, քան Թէ զաստուածայինս։

ՅԱՍԱՑԵԼՈՑՆ մեր կանխաւ, և յորոց զինի ասելոցն եմք, անաչխատ տեսանել ամենայն մարդ՝ որ չիցէ խըլտասրտութիւն իւր Թշնամի, Թէ ի բովանդակ յայս շարս վայելչահիւս և մանրազնին բաշխմանցն Վարդանի՝ վայրապար է ինդրել կեանս յաւիտենականս, և լըքուԹիւն մեծ՝ ակնուսնել աշխարհ կամ ցանկալ։ Վասն զի կարգաւորուԹիւնք են այդք՝ կամ մարդկան, և կամ դիւաց. զևս ասեմ՝ ոչ ըստ նոցային կուելոյ՝ զևս բարիս, այլ յայսմանագոյն խօսելով այսոցն պղծոց, որ և չարանիւԹք են անչուշտ։ Որպէս զկարծիս կորստականս՝ որովք սիրտ մարդկան և քան զևս ի տառԹիւ գնայ, և անյօդելի մնայ յանփոփոխ ի յաւիտենականն ԱշմարտուԹիւն, նորանշան իմն նախանձու տրնկին ճաճկապէս ի խորհուրդս ամբարշտաց, և մերԹ յայտնապէս իսկ արկանեն ի զգայարանս, և ամենայն մարԹամնօք խաբէպատիր ցուցմանց գնոյնս հաստատեն։ Վ ըկայէ ինքնին իսկ Վարդան, Թէ յայն սակս գրեմ նախ զմարդկայնոց իրաց և ապա զնաճախոց, վասն զի յառաջ կարգեցան քաղաքք, և ի նոցանէ ապա այդոքիկ ածային կարծեցեալք սահմանեցան։ Որ կրօնք Աշմարիտ ոչ կերկրաւոր քաղաքէ ուսմունք առին գոյուԹիւն, այլ նա ինքն հաստեաց զքաղաքն երկնաւոր. և գնոյն ինքն ազգէ և ուսուցանէ ածն Աշմարիտ, որ պարգևիչ է կենացն յաւիտենից ստոյգ պաշտօնէիցն իւրոց։

Ի՞րդ Վարդան լեռ խոստովան լինելոյ՝ Թէ յայն սակս նախ զմարդկայնոց գրեաց և ապա զնաճախոց, զի սոքա ի մարդկանէ կարգեցան, ասէ զվանէրն. «Օ՞ որ օրինակ առաջինն է նկարիչ քան զտախտակ նկարեալ, և առաջինն է հիւսն քան զշինուած, սոյնպէս նախնագոյն էն քա-

„ զաքք՝ քան զառ 'ի քաղաքացն կարգեալս „ ։ Եւ ասէ իսկ , Թէ ունէր արդեօք նախ զաստուածոց գրել քան զմարդկանէ , եթէ կամք էին նմա գրել զՀամօրէնն բնութեանէ աստուածոց . որպէս թէ անտանօր զմիջնէ կամ զոմանց գրէ , և ոչ զամենայնէ . բայց միթէ և այն որպիսի և է բնութեանէ ինչ աստուածոց՝ ոչ արդեօք նախադասեալ էր քան զմարդկան ։ Եւ զինչ այն՝ զի յետին երիցք գրովք Հնգիցբառանեակ զաստուածս յայտնիս և անյայտս և ընտրեալս , Թուի ոչ լռել և զգնութեանէ իմաքն նոցա . ասա զի աւրդ ասէ . “ Եթէ կայր միշ գրել զՀամօրէնն բնութենէ „ աստուածոց և մարդկան , մինչ չէ 'ի մարդկայինսն ձեռն „ արկեալ , նախ զնծայինսն 'ի գլուխ տանէաք „ ։ Ի այն զի կամ զամենայն բնութեանէ աստուածոց գրէ , կամ զմիջնէ , կամ բնաւ և ոչ զոմանէ ։ Եթէ զամենայնէ , յառաջադասելի է այն քան զիւրս մարդկայինս . իսկ եթէ զոմանէ , ընդէր և այն ոչ յառաջեւսցէ քան զմարդկայինսն . միթէ անպատեհ ինչ էր վերադրել ընդհանուր բնութեանէ մարդկան զման ինչ աստուածոց . և եթէ ծանր է՝ առ Համայն բնութեանէ մարդկան նախագահ դնել զմի մնան , գէթ արժան էր քան զՀռովմայեցւոյն նախ կարգել . քանզի զմարդկայնոցն գիրս ոչ ըստ Համօրէնն տիեզերաց գրեաց նա , այլ որչափ Հռովմայ և եթէ անկ է . և սակայն յիրաւի ասէ նախակարգել ըստ գրուէնն ոմոյ զայն գիրսն քան զնծայնոցն , այնպէս որպէս զնկարիչ քան ըզտախտակ նկարեալ և որպէս զՀիւսն քան զշինուած , քանզայսպէս վկայեալ այսու՝ Թէ նծայինքն Համարեալ այն իրք իբրև զնկար և զշինուած՝ 'ի մարդկանէ սահմանեալ են։ Ի այն որոյ պէտ իմաստասիրել Թէ և ոչ զմիոյ բնութենէ աստուածոց գրեալ է նորա . բայց և ոչ յայտնի ասել կամեցաւ , այլ 'ի մտառուտս Թողու ։ Իսկանզի ուր ասի՝ ոչ ամենայն , սովորաբար ակնարկի՝ ոմն , ինչ . բայց մարթի և իմանալ և՝ ոչ մի . զի որ ոչ ինչ է , ոչ ամի է և ոչ մի է ։ Ի զոր որպէս նա ինքն ասաց եթէ զամենայն բնութենէ աստուածոց գրեր , նախագրելի էր այն քան զմարդկայինս իրս , բայց որպէս և Հմտութենէն աղաղակէ՝ Թէ և լսելոյ նա ,

արդարեւ քան զՀռովմայեցւոց իրս նախադասելի էր, եթէ զմիոյ բնութենէ ևէթ ձառէր՝ և ոչ զամենայնէ. և զի ուղղաբար յետոյ կարգեաց, ապա և ոչ միոյ բնութենէ եղև պատմիչ։ Այլ ոչ եթէ առ ածայինն իրս զմարդկայինն նախագրել կամեցաւ, այլ ոչ կամեցաւ քան զՀրէայսն նախագրել կամեցաւ, զի ոչ զամենայն իրս զսուտսն յառաջադասել։ Վասնզի որչափ ինչ գրեաց զմարդկայնոց իրաց, զՀին չոքաւ պատմութենէ անցեալն անցելոց. իսկ յայնս՝ զոր ածայինս անուանէ, զինչ այլ՝ բայց զկարծիս ստայօղ իրաց տայ ի գիր։ Այս է ապաքէն՝ զոր կամեցաւ նա յայտ առնել Հանճարով իմն, ոչ միայն յետոյ քան զմարդկայինն գրելով զածայնոց, այլ և զպատճառն այր վասն արար՝ ծանուցանելով. զոր եթէ լռեալ էր նա, յայնոց այնպազդաբար թերևս խմացեալ լինէր այս գործ նորա։ Այլ ինքնասաց նորայն պատճառս դրութենէ՝ ոչ թողացուցանէ այլոց կասկածել ինչ ըստ կամի. և ցուցանէ ինով թէ ինքն զմարդիկ նախադասէ քան զբնութենէս մարդկան, այլ ոչ եթէ զմարդոյ բնութենէ քան զբնութենէ աստուածոյ։ Այսպէս խոստովանի նա մատենագրել զիս ածայնոց իրաց՝ ոչ ըստ Հիմարտութենէ որ անկ է բնութենն, այլ ըստ ստութենն որ ի մոլորութենէ անտի. զոր այնուր յայտնի և զեկոյց, ըստ որում ի չորրորդ գիրսն յիշատակեցի, յասել անդ թէ ունէր նա գրել ըստ պատշաճ Հանգամանաց բնութենէ, եթէ ինքնին նոքակերտեր զքաղաքն. այլ զի զՀնացեալն եգիտ, Հարկ էր զնորա սովորութենէն գալ։

ԳԻՒՂԻՍ Ի՛

Յաղագս երից տեսակաց դիցաբանութենէ ըստ վարրոնի, այն է՝ առասպելական, բնական, և քաղաքական։

Յետ այսոցիկ՝ որպիսի ինչ այն է, զի երիս տեսակս ածաբանութեան լինել ասէ, որոց մին առասպելական անուանեալ, երկրորդն՝ բնական, երրորդն՝ քաղաքական։

Յաջմինն ըստ յունին՝ Դիւթ՝ առեալ ի Դիոս բառէն, այս է առասպել, որ ի մերում՝ առասպելական կամ առասպելաբար լսի։ Երկրորդն Քսէնիա կամ բնական կոչել ընկալեալ իսկ է ի սովորութէ խօսից. սոյնպէս և երրորդն Բօլիպէիա կամ քաղաքական անուամբ ձանաչի։ Ապա ասէ Աբրան. "Առասպելեալն ի կիր առնուն առաջելական բանասաեղծք. զնականն՝ փիլիսոփայք. զքաղաքականն՝ ժողովուրդք։ Յառաջնում անդ են բազում ինչ մտացածին՝ անարժանք պատուոյ և բնութէ անմահից. քանզի անդ աստուածոնին ի գլխոյ ծնան, ոմն յաղեղացաց, ոմն ի կայլակաց արեան. անդ աստուածք կատաղին, չնան, ծառայեն մարդոյ. և պարզաբար այն ամ ընծայի աստուածոց, որ ոչ միայն որ ինչ է մարդոյ, այլ և կարի անարդ ագուհին ի մարդկանէ անկաւոր է։ Ապա Աբրան ի սմա ուր միանգամ կարէրն, ուր իշխէրն և անվտանգ ի պատուհասէ համարէր, բացաձանոյց առանց պատիպատ բանից՝ թէ ոչ ըստ բնութէ աստուածոյն թէ նմանութիւնք լինէին ի ստացաձոյէ առասպելացանտի. քանզի խօսեալ նորա, զառասպելեալ դիցաբանութէ, և ոչ զնականէն կամ զքաղաքականէն, ազատաբերան դատուել զայն արժան վարկաւ։

Տեսցուք զինչ զերկրորդէն ասիցէ. "Երկրորդ տեսակ՝ զոր ցուցի, ասէ, այն է՝ յորոյ վերայ գիրս յօրվն Թողին մեզ իմաստասէրք. ուսուցանելով թէ աստուածքն այք են, ուր աղգ նոցա, որպիսի, յորմէ ժամանակ, և կամ ի մշանջենաւորէ արդեօք լեալ իցեն. արդեօք ի հրոյ, որպես Հերակղիտոս համարեցաւ. արդեօք ի թուոյ, ըստ Պիւթագորայ. արդեօք ի հիւղէից, որպես ասէ Էպիկուրոս։ Այսպես և զայլ իրս աւանդեն, որոց կարեն տանել լսելիք ընդ որմովք դպրոցաց, քան արտաքոյ ի հրապարակս"։ Ապա երկրորդ տեսակի՝ զոր բնական կոչեն, և է իմաստասիրաց պատշաձող, ասգիւտ ինչ ոչ դնէ Աբրան. այլ յիշատակէ միայն զնոցա առ իրեարս հակառակաբանութէն, յորմէ անմիաբան աղանդոցն ծնաւ բազմութէն. ի հրապարակայ միայն ի բաց տանի,

այս է՝ ի ժողովրդոց, փակելով զայն ի գպրոցս և ընդ որմովք։ Իսկ զառաջինն տեսակն՝ զլեռնայն ստուերն և գալ շանօք ոչ հեռացուցանէ ի քաղաքաց։ Այ՛ն երկիւղած լսելեացն ժողովրդականաց, և այն՝ հոռովմայեցւոց. զի զոր զանմահ աստուածոյն խօսին իմաստասէրքը, տանել ոչ կարեն. իսկ զոր բանաստեղծք երգեն, և կատակերգակքն ձևակերպեն, թէ և հակառակ պատուոյ և բնութեան անմահից ստայօդեալք, թէ և ոչ միայն ուժ և է մարդոյ՝ այլ անարգադունին և անկաւորքը, նոքա ոչ եթէ տա նին լսել, այլ լսեն և ախորժաբար։ Այլ ոչ այդ միայն, այլ և նոցունց աստուածոյն անդամ Հաճոյանան, և նոքիմքը գՀաշտեն խոստանան։

Այսիցէ ոք. զերկու զայս տեսակս՝ զառասպելաբանն և զբնական որոշեսցուք ի քաղաքականէն՝ զորմէ առաջինքայ բանս է, որպէս և ինքն զատանէ զնոյնս. և տեսցուք զի. արդ բացայայտ զքաղաքականն։ Տեսանել տեսանեմ և ես, թէ եր վասն որոշել պարտ իցէ զառասպելաբանն. զի սա սուտ է, զի գարշ և անարժան. իսկ զբնականն զատանել ի քաղաքականէն՝ զինչ այլ իցէ, բայց խոստովանել՝ թէ ստայօդ է և քաղաքականն։ Վասնզի եթէ բնական իցէ այն, զինչ ստգիւտ կայցէ ի նմա առ ի մերժելոյ. և եթէ բնական ոչ է, վասն որոյ արժանեաց լինիցի ընդունելի։ Օ՛ի և պատճառ նախ գրելոյ նորա զմարդկայնոյ՝ և ապա զաստուածայնոյ այն էր, զի յաստուածայինս ոչ եթէ բնութենն լինէր հետախոյզ, այլ օրինադրութեց մարդկան։ Հայեսցուք ապա և ի քաղաքականն դիցաբանութիւն. «Արդարդ տեսակ է, ասէ, զոր ի քաղաքս պարտ է քաղաքացւոց՝ և մանաւանդ քրմաց գիտել և մատակարարել յորում աւանդի զոր աստուածս պաշտել հրամայարարակաւ օրէնս է. զոր պաշտամունս և զզոհս պարտի կատարել իւրաքանչիւր»։ Տեսցուք և զոր զկնին գայ. «Առաջին գիտ յարանութենն, ասէ, առաւել յարմարեալ է թատերաց. երկրորդն՝ աշխարհի. երրորդն՝ քաղաքի»։ Այս ոչ տեսա նիցէ՝ որ ժամանակ մատոյց զայդ ճանաչն. յայտ է թէ երկրորդին, զոր իմաստասիրաց ասաց վերագոյն. զի զայս վկայէ յար-

մարեալ աչխարհի, քան զոր զերազանցագոյն ինչ ոչ ձա-
նաչէն իմաստասէրքը յիւրս ամենայն։ Իսկ զերկու զայն
դիցաբանութիւնս՝ զառաջինն և զերկրորդն, զթատրո-
նաց ասեմ և զքաղաքի՝ զատոյց արդեօք, եթէ լծոր-
դեաց։ Վասնզի և զիտեմք իսկ՝ թէ ոչ որ ինչ քաղաքին
է, անգէն և անդ աչխարհի պատշաճ իցէ. թէպէտ և զքա-
ղաքս յաչխարհի գոլ տեսանեմք. քանզի պատահէ՝ զի
՚ի քաղաքի անդ ըստ պատիր կարծեաց ՚ի պատճոն առցին
և ընդունելի լինիցին այնպիսիք, որոց ոչ գոյ երբէք բնու-
թիւն յաչխարհի, կամ արտաքոյ աչխարհի։ Իսկ թա-
տրոն ոչ է, բայց ՚ի քաղաքի. ո՛ զթատրոն սահմանեաց,
բայց քաղաքն. այլ վասն սահմանեաց, բայց ՚ի պատճառս
տաղաւարաշէն խաղոյց. և ոչ կատարին խաղք տաղաւա-
րաշէնք, բայց ՚ի դիցական կամ յաճախին իրս, զորոյ հո-
գոյութիւն բազմաւ արձանագրին այդ մատեանք։

ԳԼՈՒԽ Ը.

Ընդդէմ վարդանի՝ յաղագս առասպելաց և քաղաքական գիցաբանութեանն։

Ո՛ Վարդան վարդան, գիտեմ զքեզ այր կորովամիտ
քան զամենեսին, և աներկուանալի բազմիմաստ. բայց
մարդ ես, և ոչ Ճած, և ոչ հոգւով՝ այ վերառեալ ՚ի Ճըշ-
մարտութիւն և յաղատութիւն առ ՚ի տեսանելոյ և պատ-
ուելոյ զաստուածայինն. յիրաւի նշմարես, թէ քանի
անկրպակատութիւն է աստուածայնոցն իրաց ՚ի մարդկայ-
ին աղձատանաց և ՚ի ստութեանց. բայց ակնածես եր-
գիծանել գյետասամիտ կարծիս ոմանցն և զսովորոյթս ՚ի
մեռոտի պաշտամունս հասարակաց, զորս դու ինքնին և
մանաս՝ թէ կարի անպատեհ են բնութեան աստուածոց.
և այնպիսի աստուածոց անդամ, որպիսիս մարդկային տը-
կարամտութիւն կարծէ գտանել ՚ի տարերքս աչխարհի.
զայսոսիկ կրճես դու ՚ի վեր և ՚ի վայր, և բովանդակ

գիանաւորութիւն քո զայն բարբառի ։ Օ՛ւնչ շահ է քեզ
՝ի մարդկայինդ վեհական հանճարոյ . զինչ քեզ նպաս-
տաւոր ՝ի տաղնապիդ յայդմ մարդկօրէն բազմադէմ և
լայնատարած վարդապետութիւդ ։ Օ՛ր նկատեան դիմս ցան-
կաս պաշտել , այլ՝ի քաղաքականն բռնադատիս ։ Վտեր
զդիս ոմանս առասպելայոյս , յորս թափես համարձակ
զոր ՝ի սրտիդ այպանուսն . այլ սովիմբ և զքաղաքական
դիս քո թշնամանես՝ թէ կամիցիս , թէ չկամիցիս ։ Վ՛ւանա-
զի ասես . առասպելեալքն անկ են թատրոնաց , բնա-
կանքն՝ աշխարհի , քաղաքականքն՝ քաղաքի ։ Իսկ արդ
աշխարհ գործած է ածայինն , իսկ քաղաքք և թատրոնք՝
արարք մարդկան են . ոչ այլ աստուածք զծաղուս գան ՝ի
թատրոնս՝ քան զերկրպագեալսն ՝ի տաճարս , ոչ այլոց
զիաղտն ընծայեք , և այլոց զենլիս զոհեք ։ Վ՛րչափ և ս
համարձակագոյն և ձչգրիտ եր այսպիսաբար իմն տրո-
հել զդոսա , զոմանս ասելով աստուածս բնականս , և
զայլս ՝ի մարդկանէ աստուածարեալս . և ՝ի սոցանէ՝ զոմն
դնել ՝ի բանաստեղծիցն գիրս , և զոմն ՝ի մատեանս քրը-
մաց . բայց զերկաքանչիւր այնպէս իմն ընդակիցս միմեանց
լինել ՝ի ստութեան , զի երկոքին իսկ ախորժելիք լցեն
դիւաց , որոց թշնամի է ձչմարտութիւնն ուսումն ։

Վ՛այց արդ ՝ի մի կողմն թողեալ առ վայր մի զընականն
կուսեցեալ դիցաբանութիւն , զորմէ յետոյ կայ խօսել , ի-
սկ արդեօք կեանս յաւիտենականս հայցել կամ յուսալ
յաստուածոց բանաստեղծականաց , թատրոնականաց
ծաղրականաց , կատակերգականաց ։ Վ՛աւ լիցի . ՝ի բացէ
արասցէ ածն ձչմարիտ զանհնարինդ զայդ և զսեղանա-
զերծ անմտութիւն ։ Վ՛չ զիարդ . միթէ ՝ի դից անտի որոց
ընդունելի են այսոքիկ , և որովք հաշտինն՝ ՝ի յաձախն
հանդիսանալ ապիրատութեանց նոցա , կեանք յաւիտե-
նական խնդրեսցի ։ Վ՛ն զոր կարծեմ ցայդ վայր մոլեգին
ամբարշտութիւնն վախից բանդագուշել ։ Վ՛այս ոչ առաս-
պելականաւն և ոչ քաղաքական դիցաբանութիւք լինի ըս-
տանալ ուժիւք կեանս մշանջենատուր . քանզի մին ստեղծա-
նելով ՝ի վերայ դից՝ սերմանէ զգործս անարժանութեան ,

և միւսն խնամելոյին հնձէ. այն սուտիս ցրուէ, այս ժողովէ. այն իրացն աստուածասնոց Թշնամանս դնէ ստայօդ յանցուածովք, այս զտեսարանս նոյն յանցուածոց յանձն առնու՝ի պաշտամունս անդ. այն զանասելի ստեղծուածս մարդկան տագնապուէ հնչեցուցանէ, այս՝ ոճնախմբութիւն դիցն սրբէ զնոցա զանասելիսն։ Օ եղեռն և զոհիցս դից նա երգաձայնէ, սա ախորժէ. նա՝ի յայտ բերէ, կամ պահուռէ. սա կամ վկայէ զչմարիտսն, կամ զուարճանայ և ստէպն։ Հրկաքանչիւրն իսկ են զազիրք, և երկոքին դատապարտելիք. այլ Թատրոնականն յայտատեսիլ բերէ զզազրութիւնն, իսկ քաղաքայինն այնու զազրութիւն պահնազարդէ։ Իթէ յայսպիսեաց ասէի կայցէ ակնկալութիւն կենաց յաւիտենից, յորոց Հանճառօտս այս և ժամանակեայ կեանք աղաեղանան. եթէ կցորդութիւն մարդոց չարագործաց ապականի զվարս՝ յորժամ Հանճարոյս և զուգահաւանս զմէզ առնիցեն, միթէ դիւացն կցորդութիւն ոչ ապականիցէ զվարս՝ի պաշտելն զնոսա իբեռնցն չարաչար յանցուածովք։ Իթէ ստոյգ են այն չարագործութիւնք, քանի՞ չարք իցեն ինքեանք. և եթէ սուտք, զինո՞ւդ չարաչար պաշտին։

Յասել մեր զայսոսիկ, կարծիցի Թերևս անտեղեակ ոք իրացս, Թէ իբրն այն Ճանպետութիւնն անվայելչականք և ծիծաղելիք և անպոռնելիք՝ այնոքիկ և եթէ ընծային աստուածոցն որք՝ի բանաստեղծից տաղտս նուագին, և ձևակերպին՝ի Թատրոնական խաղսն. իսկ պաշտամունք՝ զոր ոչ կատակերգակք՝ այլ քուրմք կատարեն, յամենայնի այնպիսի անպատեհութիւնք պարզեալք և օտարք են։ Իսկ այդ այդպէս էր, ոչ բնաւ արժան ոք Համարիլ զգաստութեանն Թատերականս՝ի պատիւ դիցն Հանդիսացուցանել, և ոչ նոքին դիքն զայնպիսիս մատուցանել երբէք Հրամանատարին։ Իայց յայն սակս անպատկառապէս գործին այնպիսիք՝ի Թատրոնս առ՝ի մեծարանս աստուածոց, վասն զի նմանք կատարին՝ի տաճարս։ Իվերայ այսոցիկ՝ յիշատակելոյ մտանոգիր ջանացեալ զքաղաքայինն դիցաբանութեան զատանել յառասպելականէն և՝ի բնա-

կանէն՝ իբր երրորդ ինն յիւրաքանչիւր տեսակի , յայտնել կա-
մեցաւ՝ Թէ խառնուրդ ինն է յերկուքն , քան զի՛ ի նո-
ցանէ : Վասնզի ասէ . զոր միանգամ քերթողքն գրեցին ,
չէր արժան ոտակին հետևել այնոցիկ . իսկ զոր իմաստա-
սէրքն , չէ պիտոյ ոտակաց հետաքննել զնոսին . “ Այ-
„ սոքիկ , ասէ , Թէպէտ այնպէս տարակարծ են՛ ի միմեանց ,
„ բայց տակաւին յերկաքանչիւրս տեսակէ ոչ սակաւ ինչ
„ առեալ են՛ ի քաղաքայինն եղանակ : Այլ ինն իրի որ ինչ
„ հասարակ են ընդ բանաստեղծին , զոյգ ընդ քաղաքա-
„ կանացն գրեսցուք . այլ մեր առաւել ընդ իմաստասէրս
„ իցէ հաղորդութիւն , քան ընդ բանաստեղծս „ : Այս-
պէս ուրեմն կայ և ընդ բանաստեղծս հաղորդութիւն ինչ . և
սակայն այլոյր յաղագս ճշմարտաբանութեան աստուածոց
ասէ , Թէ յաւէտ՛ ի բանաստեղծս հակասիտեալ են ժո-
ղովուրդք քան առ բնախօսս . և այսպէս անդ ծանուցանէ
զոր լինին , իսկ աստ՝ զոր լինելն պարտ է : Նախասաք ,
ասէ , ՛ի պէտս օգտի գրեցին , և բանաստեղծք՝ ՛ի զուարճու-
թիւն : Ուստի գրեալքն ՛ի բանաստեղծից՝ որոց չէ պարտ
ժողովրդեանն նմանողք լինել , են ոչիրք աստուածոցն . և
սակայն ընդ նոյնս զուարճանան և ժողովուրդք և աս-
տուածք , զի ՛ի պատճառս զուարճութե , ասէ , գրեցին բա-
նաստեղծք , և ոչ առ ՛ի յօգուտ . բայց գրեցին զայն ինչ՝
զոր դիպն ինդրեն , և ժողովուրդք մատուցանեն :

ԳԼՈՒԽ Ի.

Դիցաբանութիւն՝ որ առասպելեալ և որ քաղաքական , նման են միմեանց և միաձայն :

Այս ուրեմն կից է ընդ քաղաքային դիցաբանութեան և առասպելականն , Թատրոնականն և կատակերգակին՝ առհասարակ անտեղութիւն և զազրութիւն լի . և սա բովանդակ՝ որ և իրաւամբք պախարակելի դատեալ է և մեր-

ժելի , մանն է այնորիկ՝ որ Համարի արգոյ և պահելի . և մանն՝ ոչ արդարեւ անյարմար , որպէս և ցուցանել յանձին կալայ . և ոչ իբր այլազան ի մարմնոյ անտի յանդիպս իմն ի նոյն կցեալ և վերադրեալ , այլ ամենայնիւ Համազգդ , իբր նորին մարմնոյ անդամ ամենայարմար զոգալ : Ա՛ան զի զինչ այլ երևելոցն այն դրօշեալք , կերպարանք , հասակք , սեռի որոշումն , և Հանդերձք առտուածոյ : Ա՛ԹԷ զմօրուսաւորն Բ՛ռամազդ և զանմօրուսն Հերմէս քերթողք միայն ունին , և քուրմք ոչ ունիցին : Ա՛ԹԷ միմոսք ևԹԷ իշանդամ ձևացուցանեն զՊրիապոս , և քուրմք ոչ . միԹէ այլ օրինակ երկրպագեալ կայ ի նուիրեալ տեղիս՝ քան զծիծաղելի երևեալն ի Թատերս : Ա՛ԹԷ Կռնոս ծեր , և Բ՛ոզոն յարբունս՝ դէմք միայն իցեն խաղարկուաց , և ոչ արձանք տաճարաց : Ա՛ղբէր դռնապանին աստուած և սեմապահն՝ արուք են , և ի մէջ նոցա ծղրնեպահն՝ իցէ կգ . ոչ Հայ այսորիկ եդեալ գտանին ի գիրս տաճարանցն իրաց , զոր մտացի քերթողք անպատշաճ դատեցան ի տաղս իւրեանց : Ա՛ԹԷ Թատերականն Ա՛նհիտ սպառազինեալ իցէ , իսկ քաղաքացիքն՝ որպէս կին օրիորդ ոք կայցէ . և Բ՛ոզոն ի Թատրոնի քնարահար , և դեղփեանն որպէս անգէտ ամէն արհեստի : Ա՛ակայն այսորիկ պարկեշտագոյնք են առ այլսն զազրագունիւք : Ո՞ինչ արդեօք խորհեցան զի՞ բամազդայ՝ որք կարգեցիկն զնորուն մուցիչ ի Ա՛պիտոլիոն . ոչ ապաքէն վկայութիւն եւտուն Հերմիոբոյ պատմագրի՝ որ զբոլորեցուածոյ զաստուածոյ զայնցանէ գրեաց ոչ առասպելացոյ շաղակրատանաւք՝ այլ պատմողական բերնութեամբ , Թէ մարդիկ են մահկանացուք : Ա՛յլ և որք ի սեղան Բ՛ռամազդայ բազմեցուցին զպատառաքայծս ինքնակոչս , զինչ այլ ցուցին՝ բայց միմոսական պաշտամունս լինել . զի ևԹէ միմոս ոք ասացեալ էր՝ պատառաքուծից մատչել ի կոչունս Բ՛ռամազդայ , Համարիւր ծաղուս վասն ասել : Ա՛յրոմն ասաց զայդ՝ ոչ յորժամ ծաղս առնէր զաստուածոյնք , այլ յորժամ գովէրն . և Թէ զայդ գրեալ է նորա , վկայեն գիրք՝ ոչ մարդկայնոյն , այլ աճմանոյ .

ոչ ուր առաջի առնէր զնաղան Թատերականս , այլ ուր զկապիտուլեան իրաւունսն բացայայտուցանէր : Յետոյ ուրեմն յայսպիսեաց աստի յաղթահարեալ , խոստովանի Թէ զոր օրինակ ՚ի մարդ կերպարանեցին զաստուածսն , նոյնպէս համարէին մարդկայնովքն խրախճանալ նոցա հեշտութիւնք :

Վանդի ոչ պակասեցին և այսքն չարք յիւրեանցն արհեստ , առ ՚ի զապիրատ զայդ կարծիս հաստատելոյ խաբէութիւնք մտաց մարդկան : Որպիսի է և այն՝ զի տնտպանն Հերակլի մինչ պարապորդն կայր ինքն ընդ ինքն արար խաղ նարտից՝ ձեռանէ ՚ի ձեռն փոխոխելով , եդեալ պայման՝ զի Թէ ինքն յաղթիցի , յարկեղէ տաճարին պատրաստեսցէ իւր ընթրիս , կուշկեալ և զտարփածուն . իսկ եԹէ Հերակլեայ վիճակեսցի յաղթութիւն , ինքն յիւրոց դրամոց մատուսցէ զայն ՚ի վայելս նորին Հերակլի : Այսպէս իբրև յաղթեցաւ յիւրմէ՝ բայց իբրև ՚ի Հերակլեայ , մատոյց Հերակլի աստուածոյն զարժանի ընթրիսն և զմեծագոյն պատնիկն ղ արենտինա : Այս սա ՚ի ննջեցեալ՝ ՚ի տաճարի անդ՝ եռես յանուրջս , զի Հերակլէս եղեալ ընդ նմա՝ ասաց , Թէ յորժամ մեկնեսցես անտի , զկապիկն որում ահա ունիս կինէն՝ գտանիցես ՚ի պատանւոյ , որ նախ ընդ առաջ դիպեսցի քեզ : Այս սա ՚ի գնալ նորա՝ ընդառաջեաց Տաբուտիոս պատանի մեծատուն . և յերկար առ իւր կալեալ զսիրուհին , եԹող գնա իւր ժառանգ և մեռաւ : Վատացող եղեալ նորա բազմահարուստ ընչից , զի մի ասպա ընդհ երևեսցի ածաձիր վարձուն՝ զոր կարի հաճոյական համարէր դիցն , գրեաց իւր ՚ի ժառանգ զժողովուրդն հռովմէական . և առանց երևելոյ նորա՝ եկն ՚ի յայտ կըտակն . և սակս այսպիսի գործոյ ասեն ածական պատիւք տուան նմա :

ԱյԹէ զայսոսիկ քերԹողք յօդեն , եԹէ միմեաք խաղարկեն , ունկնէն ասել անշուշտ՝ Թէ առաստպելեալ դիցաբանուԹիւնք անկ են , բացամերժելիք ՚ի պատուոյ քաղաքացիսն ածաբանուԹիւնք : Վայլ քանզի անվայելուԹիւնք այսպիսիք վիպագրեալ են ՚ի մեծարոյ մատենագրէ անտի ,

ոչ բանաստեղծից լինել բան՝ այլ ժողովրդոց, ոչ միմոսաց՝ այլ սրբազանից, ոչ Թատերաց՝ այլ տաճարաց, այս է՝ ոչ առասպելաբանութենէն՝ այլ քաղաքական, ասա ոչ եթէ խեղկատակք վայրապար զամենիսի գարշանս ըստեղծանէն դից ըստ շաղակրատ արհեստից, այլ անշուշտ քուրմք վայրապար իբր սրբազան արարողութիւնք ձեւացուցանել հնարէն զհամեստութենէ դից, որ ի նոսա բնաւ չիք։ Պաշտամունք են Հերայ, ոճնախմբեալ ի սիրեցեալն իւր Յամոս կղզի, ուր տուաւ ի հնութենէ Բրամոզդայ։ Պաշտամունք են Վեմեարեայ, ուր յափշտակեալն Պերսեփոնէ խնդրի ի սանդարապետէ։ Պաշտամունք են Փրոդիտեայ, ուր սիրեցեալն նորա Դոնիս պատանի չքնաղագեղ յողբս առեալ է վասն ըստանմանն ի ժանեայ կնձին։ Պաշտամունք են Իէայ դիցամօր, ուր կոծ գնի յաղագս սիրեցելոյ ի նմանէ Ատիսեայ գեղագէշ պատանւոյն, որ սակս կանայի նախանձու նեղբինացաւ, զոյգ ողբալով և զթշուառութէն արանց Հաւելոյ՝ զոր Վաղղոս կոչէն։ Եւ զի այսօրիկ դարշագոյն և ես քան զընաւ Թատերական աղաեղութիւնս, զնմանէ՝ զի զառասպելայոյզ դիւտս քերթողաց ղդից՝ յարմարեալս ի սկիզս Թատրոնաց՝ հնարէն գոգ ցես զառանել ի քաղաքային դիցաբանութենէն՝ զոր հանարէն պատշաճել քաղաքին, որպէս այն Թէ ի պարկեշտից և ի վայելչականաց զառանել զանվայելուչն և զզազրատիս։ Այլ սրդ չնորհ ունել առաւել արժան է կատակերգուաց, որք խնայելոյն ի հայեցուածս մարդկան, և ոչ մերկացան ի տեսարանն՝ զոր ինչ միանգամ ի ծածուկ գործէն ընդ որմիովք նուիրական ակհնից։ Օ՜ր բարի խորհել մարթի է զպաշտամանց նոցա՝ որ ի խաւարի գաղտագողանան, ուր այնպէս գարշելիք են յայանեալքն ի լոյս։ Այլաբէն Թէ զինչ առնիցէն ծածկակից արամբք հաւելոյք և կանացեօք, Թող ինքեանք տեսցեն. սակայն զարտ զայնսիկ զողորմելի և զանմխիթար ներբինացեալսն և զեղծեալ Թաթուցանել բնաւ ոչ կարացին։ Հաճեացեն զմիտս որում և կարող են, Թէ

արդեօք առնիցեն [illegible] սրբազան, արամիք այն-
պիսեաք՝ որք ի պաշտամունս նոցա կարգեալք են և պա-
րապեալք։ Օ՞ր առնեն՝ ոչ գիտեմք, բայց գիտեմք՝
որպիսեաց ձեռօք առնեն. զի գիտացաք զոր ինչ գոր-
ծեն ի թատրոնի, յոր ոչ երթեք և ոչ ի պարս պոռնկաց
եմուտ նեղբինացեալ ոք և կանայի. և սակայն զայնս և
անմաքուրքն և անուանարկքն առնեն, զի չէր արժան առ-
նել զայն պարկեշտիցն։ Այլ ո՞ր այն սրբազան հանդէսք
իցեն, յորոց ի կատարումն զայնպիսի գործոնեայս ըն-
տրեալ սրբուհին, զորպիսիս և ոչ թատերականն խե-
նեշուհին յանձն առնու։

ԳԼՈՒԽ Ը.

Բացատրութիւն բնական փաստից՝ զոր բերէն հեթանոսացն վարդապետք ի ցոյցս աստուածոց իւրեանց։

Այլ սակայն գուն, ասեն, ինչ ինչ բնախօսական պատ-
ճառք ի մեր կոյս, որպէս թէ մեր այժմու ճառս զբնա-
բանութիւն խնդրեր և ոչ զաստուածաբանութիւն. ուր ընդ հա-
կառակս՝ ոչ զբնութիւնէ, այլ զայդ խնդրեմք բանս։ Օ՞ի թէ
պէտ որ ճշմարիտ ածն է, ոչ կարծեօք՝ այլ բնութիւնէ է
ածՙ այլ ոչ ամ բնութիւն աստուած է. քանզի և մարդոյ և
ոչխարի և ծառոյ և քարի բնութիւն է, որոց և ոչ մին աս-
տուած է։ Սակ եթէ սկիզբն բացատրուհն՝ յորժամ խօսին
յաղագս պաշտամանց Հայոյ մօրն աստուածոց, այս է՝ թէ
աստուածոյն մայր հողն է, զի նչ աւելի և խնդրեմք, զի
այլոց խոշտանգիլոյ լինիցեմք. զինչ յայտնագոյն քան զայդ
մարթի է տալ ի նպաստ այնոցիկ՝ որ ասեն, ամենայն աս-
տուածքս այս՝ մարդիկ են. զի այսպէս հողածինքն են,
որպէս մայր նոցա՝ հող է. իսկ ըստ Աշմարիտն ածաբանու-
թէ՝ գործ այ է հողն, և ոչ մայր։ Սակայն որպէս զիարդ
և բացատրել կամիցին զնորհուրդս նոցա, և տանիցեն ի

բնութեի իրաց, ապաքէն արանց զկուսութեէ կրել աղցս՝ ոչ ըստ բնութեէ է, այլ հակառակ բնութեէ։ Այս ախտ, այս ոճիր, այս գարշելութիւն, յայտնաբարբառ քարոզի յայն խորհուրդս պաշտամանց, զոր և յախտալից վարս մարդկան դժուարին է տանջանօք անդամ տալ խոստովանել։ Այլ դարձեալ. եթէ պաշտամունքդ այդ աղտեղագոյնք քան զթատերական տեւութեին՝ արդարանան և սրբին այնու՝ զի կան նոցա բացատրութիք, որով ցուցանեն զերաց բնութեի նշանակել, առիմ ոչ նոյնպէս և քեզ. Թողակաւքն արդարանայցեն և սրբեսցին. քանզի բազումք և զայնոսիկ ըստ նմին օրինակի մեհենաբանեն. մինչև զանհեթեթն զայն և զանձառ ասացածն՝ Կռոնոսի զիւր որդիան կլանել, մեհենաբանեն ոմանք՝ թէ երկայնութեի ժամանակի՝ այլաբանեալ անուամբ Կռոնոսի՝ զոր ինչ ծնանի, ինքն ծախէ. կամ որպէս կարծէ նա ինքն Կռոնոս, անուն անակ են սերմանք, որք ի հող անդր ուսումի լինին՝ դարձեալ անկանին. այլք այլազգաբար և ասեն յաղագս այսր, նոյնպէս և զայլոցն։

Այլ սակայն տակաւին առասպելական դիցաբանութեի ասի, և համայն այսպիսեօք բացատրութիք յանդիմանի, մերժի, այպանի. և ոչ միայն ի բնականէն՝ որ խմաստասիրացն է՝ իրաւամբք որիշ ձանաչի, այլ և ի քաղաքականէն՝ զորմէ խօսիմքս, որ քաղաքաց և ժողովրդոց ասի անկաւոր, իբր զի բանաստեղծականն այն զանպատշաճն յաղագս աստուածոց պատմէձ։ Իսկ դիտաւորութիւն արանցն հանձարեղաց և իմաստնագունից՝ յորոց գրեցան այսոքիկ, այն է՝ զի զերկաքանչիւրն և այպանելի համարէին՝ զառասպելեալն զայն, և զքաղաքայինս զայսզայն մերժել համարձակէին, և զայս ոչ. զայն պարսաւանօք եդին առաջի, և զայս զնորին նմանանին ի համեմատել քաւցատրեցին. ոչ զի այս քան զայն ի պահեստ ընտրեսցի, այլ զի նուաւ հանդերձ ծանիցի հերքելի. և այսպէս առանց վտանգի այնոցիկ՝ որք յայտնի ստգտանել զանգիտէին զքաղաքայինն դիցաբանութեի, երկուցն և ի բաց լքեալ, բնականն և եթէ ծածաբանութեի առկայացի յանձինս լա-

ւաբարս ։ Վ[ա]նդի և քաղաքային և առասպելական՝ միա-
պէս երկրաբանն իսկ առասպելականք են և քաղաքականք ։
զերկոսին և առասպելախառն գտանիցէ՝ որ զբ 'ի ստու-
ԹԻս երկոցունցն և յանառակութիս Հայիցի մտաւորա-
բար ։ և զերկոսին քաղաքականս տեսցէ , ուչ եդեալ՝ զի
խաղք Թատերականք առասպելականին պատշաճողք՝ կա-
տարին 'ի ծանամբուխս քաղաքային դից, և 'ի խորհրդա-
կատարուիս քաղաքացւ[ա]յս զինքդ միւմոուիք 'ի դից ան-
տի կայցէ իշխանուի՝ զյաւիտեանից կեանս ընդհելոյ, զոր
իբրեանց իսկ պատկերք և պաշտամունք ցուցանեն՝ ա-
ռասպելածին աստուածոցն անարգելոց լինել համա-
նմանս ըստ կերպարանաց և հասակաց , սեռիս և զգես-
տուք , ամուսնութիք , ծննդովք , արարողութիք ։ որովք
ամենայնիւ գոյ իմանալ՝ Թէ կամ մարդիկ եղեալ են , և
ըստ իւրաքանչիւր կենցաղ կամ մահուան պաշտամունք
սահմանեալ են նոցա և հանդէսք , և այն դիւաց գլխա-
ւիքն սադրեալ և հաստատեալ մոլորութիք , և կամ նոքին
իսկ այսքն պիղծք պատճառս իմն առեալ, պատրանօք 'ի
ներքս արկին 'ի միտս մարդկան ։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս աստղական գործոց իբրաքանչիւր դից ։

Օ[ր]ինաւ իցէն և այն գործականութիւնք սուտ աս-
տուածոցն՝ 'ի մասունս մասունս Հնդրտեալք նուաստա-
խոհ բաշխմամբ , որոյ վասն առանձինն ըստ անցնելոյ
պաշտաման օրէն է ասել՝ աղօթել առ նոսա ։ զորմէ
յառաջն ասացաք բազում ինչ , այլ ոչ զամենայն ։ Ա[յ]ն
ապաքէն միմոսական խեղկատակութիւն 'ի դէպ գան այ-
գործիկ , և ոչ ածականի վհհատութիւն ։ Այթէ որ եր-
կուս կարգէր մնուցիչս իւրումն տղայոց , զմի 'ի տալ կե-
բակուր միայն , և զմիւս՝ ըմպելի միայն , որպէս գործս եր-

կուս դիցուհիս կարգեցին ՚ի դոյն, զ\՚տուկա և զ՚ո-
ւինա, արդարեւ խելագարել կարծիւք, և միմոսաբար ինչ
գործել ՚ի տան իւրում։ \՚դին և զ՚ցատ աստուած իբր
ազատարար. որպէս Թէ արբ ՚ի խառնս իւրեանց Թափել
զաբեղն՝ նորին բարեբարուք ազատին. զնոյն առ կանայս
առնէ ասեն՝ \՚ցատու հիւանդութեան \՚փրոզիտէ իբրև օգ-
նիչ ՚ի սաղմնառուն. և վա այսորիկ առ \՚ցատ աստուածն
գնեն ՚ի նորա մեհենի զառնի անդամ մարմնոյ, իսկ առ
\՚ցատուհին զվնոջական. նմին իբր յաւելուն և զնա-
նայս նուիրականս, այլ և զդինի ՚ի զրգռուածն ցանկութեան։
\՚այն օրինակ կատարին և բաքոսեան կամ սպանդարապե-
տականքն պաշտամունք ծայրայեղ մոլեգնութե. ուր նախն
\՚արբան խոստովանի՝ Թէ չէ մարթ զամպիսիսն գործել
շամբշելոցն այնոցիկ առանց լինելոյ յայլոյ խելս. որ և
յետոյ անհաճոյ եղեն առաջնորդքն ծերակուտին,
և խափանել հրամայեաց։ \՚Նպատակ ուրեմն արդեօք ՚ի
միտ առնին, Թէ զինչ ինչ մարդկան խորհուրդս ազդել
կարող էն այսքն պիղծք, զորս առ աստուածս ունէին։
\՚յսպիսի իբր և ՚ի Թեսաղոնս լինէին. զի անդ խաղան,
և ոչ մոլեգնեն. Թէպէտ և առ աստուածս ունել զայնո-
սիկ՝ արք յայնպիսի խաղս զուարճանան, ոչ ինչ ընդհատ
եր ՚ի մոլեգնութէ։

\՚սկ այն զի՞արդ է, զի \՚արբոն զայն որոշուին եղեալ
ընդ անձն աւելակրօն և ընդ բարեկրօն, ասէ՝ Թէ աւելա-
կրօնն երկնչի յաստուածոց, իսկ բարեկրօնն պատկառէ
միայն իբր ՚ի ծնողաց, և ոչ իբրև ՚ի Թշնամեաց երկնչի.
և սոքա առհասարակ այնպէս բարի են, ասէ, զի հեշտալի
է նոցա խնայել ՚ի մեղապարտսն, քան միւսմ անմեղն վնա-
սել։ \՚յլ սակայն յիշատակէ և զայս, Թէ կնոջ ծննդա-
կանի յետ ծննդեանն առ ընթեր կան երեք դիք ՚ի պահ-
պանութէ, զի մի անտառային աստուածն ՚ի գիշերի մտա-
նիցէ և լկեսցէ զնա. և ՚ի նշանակ երից պահապանացս՝
զգիշերն ողջոյն արք երեք շուրջ դան զաեմօք տանն, նախ
տապարաւ հարկանելով զսեմսն, ապա սանդխառատաւ,
և ապա աւել ածելով. զի երիւք նշանակօքս երկրագօր-

ծուԹեան՝ խափանեսցի ՚ի մտանելոյ անտառային աս-
տուածն . իբրև զի ոչ ծառք հարկանին և կտրին առանց
տապարի , ոչ ձառայ մանրի առանց սանդիտոռին , և ոչ
արմտիք կուտին չեղջին առանց աւելի . և յերրեակ գոր-
ծոց աստի զանուն ընկալան դիքն երեքին , տապարա-
հար , սանդաղահար և աւելածու . որոց պահպանուԹիւ յա-
պահովացի ծննդականն կիւն ընդդէմ բռնուԹեանն անտա-
ռապետին : Այս այսպէս առ դժնեուԹիւ մեղապարտ աս-
տուածոյն ոչ կարողանայր պահպանուԹիւ բարեացն՝ Թէ
ոչ բազումքն դիմազրաւէին առ միմ , և խժդժագուներին
ամեմ՝ զարհուրելոյն և անողոքին իբրև անտառապետիդ՝
ոչ ընդդէմ դնելին հակառակ նշանակօքն երկրագործուԹե-
ան՝ Ի՛Թէ այս է անչարուԹիւ աստուածոյն . այս է նոցայն մի
աբանուԹիւն . այսոքիկ իցեն աստուածքն բարեգործողք
քաղաքաց , առաւել ևս քան զԹատերաց խեղկատակու-
Թիւն ծիծաղելիք :

Յորժամ արու և էգ մերձաւորին , առընԹեր դնի աս-
տուածն լծակիցս . նեբեսցի այդմ : Այլ յորժամ ՚ի
տուն ածելի է հարսին , դնի անդ և աստուած տնածու :
Որ ՚ի ծնալոյ հարսին ՚ի տան , կայ այլ աստուած տնա-
կան . և առ ՚ի ծնալոյ ընդ առն , յաւելուն աստուածուհի
ծնացական : Այս զինչ այլ ևս խնդրիցի . խնայեմք յա-
մԹխածուԹեի մարդկան , ուր զայլն յաւաջ տանի ցան-
կուԹի մարմնոյ և արեան , խնամ տարեալ գաղտնեաց
ամենայն : Որ ինչ իցէ ընուլ զսեռեական բազմուԹիւ դից ,
յորժամ և հարսնածուք անգամ մեկնին գնան ՚ի բաց :
Այս խոնին անդ խուժանք դից , ոչ զի նոցա մերձ կալցին՝
պարկեշտուԹիւ առաւել հոգ ինչ լինիցի , այլ զի նոցայն
գործակցուԹիւք դիւրաբար լուծանիցի կուսուԹիւն տկարաց
դի բնուէ որ ՚ի նորուԹիւ իրացն հարԹիւ : Արանզի անդ
մերձ կայ ասէն և աստուածուհին կուսազեղջ , անդ
աստուածն հայր կոչեցեալ՝ ներքնատիկ , անդ աստուածու-
հին մայր կոչեցեալ՝ սնդիչ , և աստուածուհին խախտիչ
և Աիրոդիտէ լկտի , և Պրիապոս անպատկառ : Արդ
զինչ իցեն ցնորըդ այդ . եԹէ յայդ գործ այսն օգնա-

կանուխէն պէտս ունէր առ ի յաստուածոյ , ոչ արդեօք բաւական էր մին ի նոցանէ արարած կամ իգական : Իսկ եթէ Հերոդիաս միայնակ չէր կարող , որ յայն սակս ասի առեալ զանուանդ Հնուս կամ Յուղիկ , զի առանց նորա գործակցուհէ ոչ լուծանի կուսուհի կնոջ : Այլ եթէ կայցէ ի մարդիկ ամենի ինչ , որ յաստուածան բնաւ չիք , ոչ ապաքէն ի կարծել և ամուսնացելոց եթէ այնպէս բազմուհին դիպ արուաց և իգաց յառագաստ անդր մտեալ՝ տեսողք իցեն գործոյն , զահի զամենի Հարկանին յոյժ յոյժ , մինչև առնն յեռնիլ ի զրգռմանէ , և կնոջն առաւել և խրտչել : Այս արդարեւ եթէ մերձ կայ դիցուհին կուսագեղծ՝ առ ի խախտումն կնքոյ կուսութեան , եթէ անդ է նեբբնարին աստուած՝ զի անկանիցի կինն ընդ արամբ , եթէ անդ աստուածուհին սիրիչ՝ զի նեբբոյ անկեալ սկսիդ կացցէ առ ի չխըռտելոյ , զինչ գործէ անդ աստուածուհին խախուիչ : Յմաչեսցէ , արտաքս ելցէ . Թողցէ զի և այլն առնիցէ ինչ . կարի պատկառանաց իրք են , զի որով կնքն անուանակոչի , ոչ ոք զայն կատարէ՝ բայց այրն միայն . այլ գուցէ յայն սակս ինոյ անդ , զի աստուածուհի ասի լինել՝ և ոչ աստուած : Վասնզի եթէ արու համարիւր , և կոչեցեալ էր խախուիչ , առաւել և օգնականութեն հայցէր այրն ընդդէմ սորա սակս պարկեշտութեն կնոջն , քան ծննդականն կին ընդդէմ անտառայնոյն : Այլ զի սկսաց ի ասել զայս , ուր հուպ անդր կայ Պրիապոս իշանդամին այն , և ի նորա անձնուն զազրահմայ բժժանաց վերոյ ունի բաղխիլ նորահարսնն՝ ըստ պարկեշտ և բարեկրօն կարծեցեալ սովորութեն տիկնոց հռոմայ :

Ոչ այսուհետև երթիցեն ջան դիցեն իւրեանցն հրնարաւոր ջնջողութեբ տրոհել զբաղաքայինն դիցաբանութեն յառասպելականէ անտի , զքաղաքս ի թատրոնաց , զմեհեանս ի տեսարանաց , զնորհրդակատարութեիս քրմաց ի տաղից քերթողաց , իբր իբս պարկեշտս ի գարշելեաց , իբր Հշմարիտս ի խաբէականաց , իբր քաջախոհս ի ծանծաղից , իբր անկատակս ի ծաղրականաց , իբր ըն-

արեւիս յանդգնեալեայ։ Վասն որոյ եւ մեք՝ Թէ զինչ առնել խորհիմ. ծանեան քաջ՝ զի Թատրոնականն այն առաքելեալ դիցաբանութիւն կախեալ կայ գբազաբականին, եւ սա՝ ի տաղից անտի քերթողաց ցոլանայ իբր՝ ի հայելւոյ. նմին իրի զայս առաջի կացուցեալ, զոր անգամանել ոչ իշխեն, զմիւսն զնորին պատկեր համարձակ երգիծանեն եւ Թշնամանեն. որպէս զի դիտողք խորհրդոյ նոցա գաղջեալ ջին եւ՝ ի սկզբնատպէ աստի՝ որոյ պատկեր է միւսն. եւ սակայն զիքն իբրեւ՝ ի միւսմ հայելւոջ նկատեալք՝ այնպէս ախորժեն, զի լաւ եւս ծանիցի յերկաքանչիւրումն՝ որպիսիք ոմանք իցեն ինքեանք աստուածքն։ Այսու որոյ ահագին հրամանօք բռնադատեցեալն զպաշտօնեայս իւրեանց՝ ձօնել ինքեանց զգաղջանս առասպելեալ դիցաբանութէ, կարգել զնոսին՝ ի տօնախմբութիւս իւրեանց, եւ առ սրբազանս ունել. որով ցուցին ակներեւ՝ Թէ ոգիքն են անմահք, եւ քաղաքային այնմ դիցաբանութէ իբր ընտրակաւ եւ գովելւոյ՝ մանն երեւեցուցին զԹատրոնականն զայն զընկեցիկն եւ զխոտան. իբրեւ զի Թէ եւ բովանդակին է զազրոտի եւ խաբէական, աստուածս մատուցանիս յինքեան ունելով, բայց մի մանն նորա կայցէ՝ ի մտաւանս քահանայիցն, եւ միւսն՝ յերգս բանաստեղծից։ Այլ Թէ ունիցի արդեօք եւ այլ մաստուն, ուրոյն ինդիր է այդ։ Այժմ սակս բաժանման Այրոյնի՝ Թուի ինձ ցուցեալ ըստ բաւականին, զի և քաղաքային և Թատրոնական դիցաբանութիւքն՝ ի մի ժողովին. և զի երկոքին իսկ են միօրինակ զազիրք, անտեղիք, անվայելուչք և սուտք, քաւ, ճն անդր՝ Թէ մարդիկ բարեկրօնք ամէն ունիցին յաւիտենից կենաց՝ ի միջէն կամ՝ ի միւսմէն։

Յայսր ամենայնի վերայ՝ սկսանի Այրոյն յանուանէ՝ ի Թիւ արկանել զդիս անդստին՝ ի յղուելն անտի մարդոյն, ՝ի գլուխ նոցա նախաԹուեալ զՅանոսն աստուած, և զշարս նոցա աւարտեալ մինչ՝ ի մահ մարդոյ զառաքելոյ. որով զդիս խնամարկուս մարդոյ ածէ ինքէ՝ ի Այնիա լալական աստուածուհի, որոյ ողբք՝ ի մեռելոցԹաղս ծերոց երգաձայնին։ Յետ այնր ցուցանէ զայլ դիս խնա-

միշտ ոչ մարդոյ, այլ ակտոյից մարդոյ, որպիսի են կերա-
կուր, հանգերձ, և որ ինչ այլ կարևորք կենցաղոյս. յայտ
արարեալ զմիոյ միոյ ի նոցանէ, թէ որ իցեն պատճառունք
իւրաքանչիւրոց, և յոր պիտոյս արժան իցէ աղօթել առ
իւրաքանչիւրն։ Այլ յայս ամենայն ձգտութիւնս ոչ զոր
ի դից ծանոյց կամ անուանեաց, յորմէ պարտ իցէ հայ-
ցել զկեանս յաւիտենից, այլ վասն եւթն մեք քրիստո-
նեայ եմք տիրապէս։ Արդ ոմն որ այնպէս թանձրամիտ իցէ,
մինչև չիմանալ՝ թէ պարտ այս Աղբօրն մանրախոյզ քա-
ջայայտեալ զքաղաքայինն դիցաբանութիւն, և զայն հա-
մանման ցուցեալ առասպելականին այնմ անվայելչակա-
նին և նախատելոյն, և համամատ իսկ միմեանց լինել
ակնարկելով, զընականն եւթն զանծաբանութիւնս՝ զոր
խմաստասիրացն ասէ անկ, կամի սերտել ի միոս մարդ-
կան. բայց Հարտարութիւն ինն՝ զի զառասպելականն դըս-
բովելով, իսկ զքաղաքայինն ոչ յայտնանախատ՝ այլ յա-
ռաջնեբութիւնն այսպանելի ցուցանելով, լեցի ողջամտոյ
մերժել զերկոսին, և զընականն միայն յանձն առնուլ։
Ո՞րպէս մի՛կին եւս կայ մեզ Հառել յիւրում տեղւոջ Հըշ-
մարտին այ օգնականութիւնք։

ԳԼՈՒԽ Ժ

Ցաղագս Համարձակութեանն Աննեկայի ի Թշնամանել զքաղաքային
դիցաբանութիւն՝ խառագոյն ևս քան Աքրբոնին զառասպելեալն։

Աննեկայ Համարձակութիւնն՝ որ պակասեաց ի Աղբօրն առ յայտնաբարբառ երգիծանելոյ զքաղաքային դիցա-
բանութիւնն իբրև զհանդուգնակից նորա զթատրոնականն,
երևեցաւ մասամբ ինչ թէ և ոչ բովանդակապէս Աննե-
նեայ Աննեկայ, զոր իւիք իւիք ցուցակութիւնք գտանեմք
ժամանակակից լինել մերոց առաքելոցս։ Օ՞ի եղև նմա
Համարձակութիւն ի գրել այլ պակասեաց առ ի հեալ։

Վանգի՝ ի գիրս իւր՝ որ ընդդէմ մնոսի պաշտամանց,
առաւել Հոխաբար և խոսիւ յանդիմանէ զդիցաբանու-
թիւնն քաղաքային, քան եթէ Ա՛ստղոն զԱստրոնոմականն
և զառասպելեալ։ Իբր զի՝ ի խօսելն զդրօշելոյն՝ ասէ.
„Օ՛սրազանն, զանմահս և զանախտականս նուիրա-
„պօծեն՝ ի նիւթ անարգ և անիմաստելի. զգեստս և ձեւս
„զնոքօք արիականն զմարդկան և զանասնոց և զձկանց, ո-
„մանց ևս խառն առնացի և կանացի յայլ և այլ մար-
„միս. աստուածս կոչեն զայնոսիկ՝ որ եթէ յանկարծ
„շունչ ընկալեալ յանդիմանն երևելին, հրեշս իմն կար-
„ծելոյ լինելին„։ Յետ սակաւ բանից զընական ածա-
բանութիւն՝ ի չառ արկեալ, և զկարծիս իմաստասիրաց
ոմանց յառաջ բերեալ, առարկուած առաջի առնէ ա-
սելով. „Ո՛րպէս ոք աստանօր. զիարդ, հաւատայցեմ ար-
„դեօք՝ եթէ երկինն և երկիրը աստուածք իցեն, և թէ վե-
„րոյ քան զլուսին այլ աստուածք դան, և ներքոյ այլք։
„Նոսայցեմ արդեօք կամ Պղատոնի, կամ Ճեմոկանին
„Սարատոնեայ, յորոց մին զաստուած դնէ անմարմին, և
„միսն՝ անհոգի„։ Ո՛ւ այս պատասխանեալ ասէ Ա՛ենեկա.
„Օ՛ ինչ ապա, միթէ չհմարտագոյնք քեզ Թուխցին երազ-
„քըն Ցաւիոսի, կամ Հոմուլոսի, կամ Տուղղոսի Հոս-
„տիլեայ. զԱլվակինն՝ Ցաւիոս արար աստուածուհի.
„զՊիկոս և զՏիբերինոս՝ Հոմուլոս աստուածացոյց.
„Հոստիլոս՝ զերկիւղ և զդեղնութիւն, զանձ կիրս մարդ-
„կան յորս առաջինն ի յուզումն ոգւոյ խռովելոյ, և եր-
„կրորդն ոչ խօթութիւն մարմնոյ՝ այլ գոյն երեսաց։ Ո՛րդ
„զայսոսիկ ընդ աստուածս համարիցիս, և յերկինս ան-
„դր զնետեղիցես„։ Ւսկ յաղագս խժական գալոյ արա-
բողուէցն տես քանի՛ համարձակութիւն գրեաց. „Ո՛յն ոք,
„ասէ, զառնի անգամն հատանել, և այլ ոք զգաղուկան
„ցետ. և զիարդ, երկիցեն՝ ի ցասմանէ դից՝ ոչք այսու
„օրինակաւ հաշտս զնոսա ունիցին։ Ո՛րթէ աստուածք
„ինքնին խնդրիցեն զայս, և ոչ միով օրինակաւ պաշտել
„զնոսա արժան է։ Ո՛գուտ ամբոխելոյ և օտարացելոյ
յիւրմէ ախտաւոր է կատաղութիւն, զի այնպիսեաւք հաշտե-

„ ցուցանել զաստուածան ձեռնարկէ , որպիսի և ոչ մար-
„ դիկն անգթութեանէ համբաւեալք յառաստկելն՝ զժ-
„ նեհանան երկեալք ։ Այլն բռնաւորք՝ որք զիշատեցին
„ զմարմինս ամենից . բայց ոչ հրամայեցին ուժով զևւրն
„ գիշատել ։ Այսպես Թագաւորական հեշտութենէ ներ-
„ քինացան ամենք . բայց ոչ որ ՚ի հրամայելոյ տեառն
„ իւրոյ՝ ձեռն յանձին եդ առ ՚ի զարութենէն խզելոյ ։
„ Այրքա ՚ի տաճարս անդ անձնախոշոշ լինին, իւրեանց վի-
„ րաւք և արեամբ հայցուած առնեն ։ Այնէ պարապ առեալ
„ որ նկատիցէ զոր առնեն և զոր կրեն , այնչափ անվայել
„ չհանոս գտանիցէ անձանց զգաստից , այնչափ անար-
„ ժանս ազատաց , այնչափ անպատեհս ողջամտաց , մինչև
„ անշուշտ մոլեգնեալս զնոսա կարծել , եթէ ընդ սակա-
„ ւուց մոլեգնեին . իսկ այժմ մոլեգնելոյն բազմութենէ
„ պատրուակ է առողջամտութենէ „ ։

Իսկ զոր միանգամ՚ի Այսպիտոլիոսէն սովորաբար գոր-
ծեցեալս յիշատակէ և ազատագրեմ յանդիմանել , ուր ու-
մեք՝ բայց խելգհատակաց կամ կատաղելոց գործել համա-
րիցի որ ։ Վասնզի յոչ արարեալ զպաշտօնն զայն եգիպ-
տացւոց՝ որով ողջային զկորուստ Այսիրիսի , և նոյնհե-
տայն խնդութենէն մեծ կատարելին ընդ գիւտ նորա , ծաղր
առնէ այնու՝ զի ուր կորուստ նորա և գիւտ միատեսակ էր,
ցաւ և խնդութենէ այնոցիկ՝ որք ոչ կորուսեալ էին ինչ և
ոչ գտեալ՝ արդեամբք կատարիւք . և յաւելու . “ Այսպէս,
„ ասէ , մոլեգնութենէն այնմ ժամանակ սահմանեալ է . նե-
„ րելն է մոլեգնիլ միանգամ՚ի տարւոջ ։ Այլ մուտ դու
„ ՚ի Այսպիտոլիոսն , և ամենի պաշարեսցէ ընդ հասարա-
„ կացն խելագարութենէ , զոր պաշտօն Հաւատոյ մոլեգնու-
„ թենէն սուտ ։ Այն զայլ աստուածս ՚ի ծառայութենէ մա-
„ տուցանէ միութիւն ՚ի նոցանէ . ոմն զժամն աւուրն զևւկու-
„ ցանէ Այրամազդայ . այլ որ նուիրակ բրաւոր . այլ ոմն
„ օծիչ , որ վայրապար յածմամբ բազկաց օծանել ձեա-
„ նայ ։ Այն որք զգեստս յօրինեն զՀերայ և զԱթենա-
„ սայ ՚ի բացէ կացեալք ոչ միայն յարձանին՝ այլ և ՚ի տա-
„ ճարէն , զմատունսն տարուբերեն ըստ օրինակի հիւսո-

,, զաց զզարդ գխսակաց. ոմանք զՀայելի կալեալ ունին 'ի
,, Հանդիսոյց. այլք 'ի պայմանեալ օր դատի իւրեանց զաս-
,, տուածան վերակարգան, առաջի մատուցանեն նոցա ըզ-
,, մարդհակս կամ յեակաբս՝ տեղեակս առնել զնոսա իւ-
,, րեանցն վիձի. Հմուտ վարժապետ ոք միմնասց՝ ծեր զա-
,, ռանցեալ՝ Հանապազօր խեղկատակէր 'ի Կապիտոլիոնին,
,, որպէս Թէ դիքն ախորժաբար կային 'ի զինն այնմ, զոր
,, մարդիկ անտես արարեալ էին. Կնդ գործոնեայք ըստ
,, իւրաքանչիւր արհեստի վաստակաւորք 'ի պէտս անմահ
,, դից կանոնեին անդորձք. Կ՚ուր փոքր մի զինի. "Կ՚յս տա-
,, քա, ասէ, Թէ և զանպէտ գործս՝ բայց ոչ գարշելիս և
,, անարգս մատուցանեն աստուծոյ ումեմն. Կան և ոմանք
,, 'ի կանանց նմանեալք 'ի Կապիտոլիոնի, որք կարծեն զան-
,, ձինս սիրեցեալս լինել. Կ՚քամաղդայ. և ոչ գեթ ակն-
,, ածեալ երկնչին 'ի խոժոռ Հայեցուածոյ կատաղու-
,, Հոյն Հերայ, եթէ Հաւանել քերթողաց կամիցիս.

Կ՚ժամանեաց Կ՚արդեն յայս Համարձակութիւն. զԹատ-
րոնականն ևեթ դիցաբանութիւն իշխեաց դատովել, և ոչ
զքաղաքայինն, զոր սա անպիտանացոյց. Կ՚յլ եթէ ար-
դար Հայիցիմք, վաղթ արագոյն և են տաճարք՝ ուր այսո-
քիկ կատարին, քան Թատրոնք՝ ուր ձևանան ևեթ. Կ՚ման
որոյ Հայոպիսի պաշտամունս քաղաքային դիցաբանու-
Թիւ՝ Կ՚ևնեկա զայն պատշաճ Համարի առն իմաստնոյ, զի
մի 'ի սիրտ կրօնասէր զնոյնս ընկալցի, այլ գործով ձևա-
յոսցէ. զի ասէ. "Ո՞ այս ամենայն կալցի այր իմաստուն
իբրև յօրինաց Հրամայեալս, այլ ոչ Համոյականս աս-
տուածոցն.. Կ՚ուր յետ սակաւուց. "Ո՞ զինչ և այն, զի
ամենանուիրեալս տամք, ասէ, դիցն. և ոչ գեթ օրինօք,
այլ 'ի մէջ եղբարց և քերց. զԿ՚ևրկնայս Հարմանացուցա-
նեմք Կ՚քեսի, Հելիւստոսի՝ զԿ՚քրոդիտէ, Պոսիդանի՝
զԿ՚աղակիա. իսկ զոմանս Թողուցեալ անանուանս, որպէս
Թէ առ 'ի չգոյէ պատեհութիւն. մանաւանդ զի ոմանք
այրիացեալք և են. որպէս Պոսդոդնիա, կամ Փուղ-
գորա, և Կ՚ուռիկա. որոց չեն զարմանք՝ Թէ տարփա-
ծուք ոչ գտան. Կ՚յս վաստուտհմիկ խոժոռն աստուա-

„ ծոց՝ զոր բազմապատկեանն ունայնակրօնութիւն առեցոյց,
„ այնպէս ասէ՝ երկրպագեցի, զի գիտասցուք թէ նոցայն
„ պաշտելութի՛ւն սովորութիւն կալեալ է, և ոչ ըստ իրացն
„ ճշմարտութիւն „ : Այլ ուրեմն ոչ օրինք և ոչ սովո-
րութիւն զայն ինչ սահմանեցին՝ի քաղաքացինն դնցաքա-
նութիւն, որ հաճելի դնոյն իցէ, կամ իրաւացի : Այլ սա
Աւետիս թէպէտ և իմաստասիրութեն ազատամիտ, բայց զի
նշանաւոր առեւնակալ էր ժողովրդեան Հռոմայեցւոց, զոր պար-
սաւէրն՝ զնոյն և պաշտէր, առնէր՝ զոր առակէրն, երկրպա-
գէր՝ զոր երգիծանէր : Այլ ինչ արդարեւ ուսեալ էր իմաս-
տասիրութեն՝ չլինել անապաշտ յաշխարհի, այլ՝ի պատճառս
օրինաց քաղաքակցացն և սովորութեց մարդկան՝ թէ ոչ
խաղարկու ձևանայր՝ի թատրոնի, այլ նմանող լինէր՝ի մե-
հենի . այնու իսկ առաւել դատապարտ գտեալ, զի զոր
ինքն առ երեսս միայն առնէր, ժողովուրդն համարէր՝
թէ ճշմարտութի՛ւն առնէ . իսկ խաղարկուն ընդ խաղ
գործելով առաւել զուարճացուցանէր, քան պատրէր
խաբելով։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Չինչ կործիք եկն Աւետիսի՝ի վերայ հրեից։

Ընդ այլ մեռոտի պաշտամունս քաղաքական ՝ծաբաս-
նութե՛ւն ստգտանէ Աւետիս և զարարողութե՛ն հրէից, և
առաւել զչաբաթն, ասելով թէ յանօգուտս գործեն
նոքա, զի յիւրաքանչիւր եօթնեակս աւուրց կորուսանեն
զոգեկս զեօթնեորդ մասն կենաց իւրեանց դատարկա-
նալովն . և բազում ինչ իրս ստիպողս՝ի ժամուն անգործ
թողեալ՝ ցնասին : Այլ զքրիստոնեայս՝ որ յայնմ ժամա-
նակի թշնամութի՛ւն էին ընդ հրեայս, ոչ իշխեաց յիշատա-
կել՝ի գովեստ կամ՝ի պարսաւ, զի մի գովեցէ հակա-
ռակ նախնի սովորութե՛ն հայրենեացն, և կամ պարսա-
ւեսցէ արդեօք ընդդէմ իւրոյին յաժարութե՛ն : Այդ՝ի

խօսէր յաղագս Հրէից՝ այսպէս ասէ. «Յայն վայր զօրա-
,, ցաւ առ մեզ սովորութիւն եղեւնաւոր այրը ազգի,
,, մինչև լինել ընդունելի ընդ ամենայն երկիր. և յաղթե-
,, ցեալքն օրէնս հաստն յաղթողաց ,, : Օ՛ արմանայր զայս
ասելովն, և անդիտացեալ զոր յաճուատ անտի գործե-
ցեալ լինէր, յարէ՛ի նոյն զկարծիս՝ զոր կրէր յաղագս հան-
գամանաց արարողութեանց նոցա. «Սակայն զգաստասաս
,, արարողութեց իւրեանց գիտեն նորա, ասէ. այլ բազմա-
,, գոյն մասն ժողովրդեանն գործէ՝ անդիտացեալ զոր վա-
,, սն գործեցէ ,, : Ա՛յլ յաղագս արարողութեց Հրէից՝ թէ
էր վասն, և որպէս կարգեցան յաճախրաման իշխանութեն,
և թէ զիարդ կատ այր՛ի պատշաճ ժամանակի բարձան
նոքին իշխանութե՛ն ի ժողովրդենէն այ , որում յայտնե-
ցաւ խորհուրդ կենացն յաւիտենից, ասացեալ է մեր յայ-
լում վայրի, և մանաւանդ՛ի Հաւել մեր ընդդէմ մանկ
քեզուց. և յառաջիկայ մատենիս ունիմք ասել՛ի դիպող
վայրի :

ԳԼՈՒԽ ԺԲ՛

Ցետ նշանակելոյ մեր զառաքելն դիցն հեթանոսաց՝ չէք երկեցել թէ ոչ ումեք կարող են տալ նորա զյաւիտենական կեանս, որք և ժամանակիս այսմ ինչ ոչ նպաստեն :

Ա՛յդ ըստ երբեմն իսկ դիցաբանութեանց՝ կռնեցելոց առասպելական, բնական և քաղաքական, չէ մարթի յաւիտենից կենացս ակն ունել. ոչ յառասպելականն, զոր և պաշտօնեայք բազմասուսուածոյն սուտ համարձակ սպասանեն. և ոչ՛ի քաղաքայնոյն՝ որ մասն է առաջնոյն, նմին նման ամենայնիւ և կամ յառեգոյն գտեալ : Այլ թէ ումեք ոչ հերիքացոյն ասացեալքս յայսմ մատենի, առցէ և զոր յանցեալ գիրս խօսեցաք, և մանաւանդ՛ի չորրորդումն որ յաղագս այ՝ տուողի երջանկութե՛ն : Ա՛յսն զի ոմն այլ բայց միայն երջանկութե՛ն ձեռնել արժան էր մարդ-

կան զանձինս վասն յաւիտենից կենաց, եթէ արդարեւ երջանկութիւն լինէր աստուած։ Այլ քանզի աստուած չէ, այլ պարզեւ՝ այ, որում աստուածոյ պարտիմք պատարագել զանձինս մեր, որ ուղիղ տենչմամբ սիրեմք զյաւիտենից կեանս, եթէ ոչ երանութիւն պարգեւաւուի, յորում կայ Հմարիան երջանկութիւն լիապատար։ Կարծեմ ոչ ումեք երկբայել ըստ համբերն ասացելոցս, թէ չէ որ ի դից անդր տուիչ երջանկութիւն, որք այնպիսեաւ պաշտին անկարգութիւն. և եթէ ոչ նոյնօրինակ պաշտիցին, անկարգագոյն եւս ցանուն. որով և յանդիմանին թէ այսք սիղծք են։ Իսկ արդ որ չտայ զերջանկութիւնն, զյաւիտենից տալ կեանս զիարդ կարիցէ. զի կեանս յաւիտենական զայս ասեմք, յորում անկատարած երջանկութիւն իցէ։ Վասն զի թէ հոգի մարդոյ կեցցէ՝ի յաւիտենական պատուհասի՝ որով և չար գիւքն ունին տանջիլ, մահ է այն մշտնջենաւոր քան եթէ կեանք. և չիք մահ մեծագոյն և դժոգոհ՝ քան ուր ոչ մեռանի մահ։ Այլ զի հոգւոյ բնութիւն անմահ պարտած՝ չկարէ լինել առանց կենաց իրիք, յաւէտ մահ նորա է օտարանալ՝ի կենացն այ մշտնջենաւոր տանջանօք։ Ա՛ն որոյ զյաւիտենից կեանս՝ զերջանիկն առանց վախճանի՝ նա միայն տայ, որոյ է զչմարիտն երջանկութիւն տալ։ Ո՞չ այս ոչ կարէն տալ՝ որպէս հաւաստեցաւ՝ դիքըն զորս պաշտէ, զիցաբանութիւնն քաղաքական. ուստի ոչ միայն պաշտելոյ արժանի չէն սակս ժամանակեան և երկրաւոր իրացս, զոր օրինակ՝ի հնդեսին անցեալ դիրս ցուցաք, այլ առաւել և սակս յաւիտենից կենաց՝ որ չեա մնան լինիցի, զոր և յայսմ մատենի հաւաստեցաք՝ի վերայ անցելոցն։ Այլ քանզի սովորութիւն ծանրադանդաղ կարի խորտարմատ է, եթէ թուիցի ումեք սակաւս խոսցեալ մեր՝ի հերքումն և՝ի զգուշութիւն քաղաքային դիցաբանութեանս, ի միտս առցի զմիւս եւս մատեան՝ զոր զինի յարեմք տեառն օգնականութիւնբ։

ԳԻՐՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

Յաղագս ընտրանւոյ որոշելոց զեղ քաղաքային գիւղաքանւոցն՝ Յանոսի, Աբամազայ, Կաւնոսի և այլոց, թէ ոսցին ևս պաշտելութեամբ ոչ գոյ ժամանել յերջանկութեն կենացն յաւիտենից։

ՅԱՐՈՒՑՄՈՒՆ

Խոնարհ երկասիրեալ իմ՝ խրել և քանցել յարմատոց զվաղեմի գլետասմիտ կարծիսն հակառակս Չմարտութեն ածպաշտուն, զորս յերկարժամանակեայ մոլորուն մարդկան սնդագոյնս արմատացոյց՝ ի խաւարեալ սիրտս, ՚ի գոյն կամելով գործակից անձամբ լինել ըստ խմուտ կարի չնորհաց Չմարտին՝ այ աւետնակալի, ակն ունիմ թէ արագ գամիաքն և քաջահանձարք, որոց և շատ իսկ են ՚ի սոյն յառաջագրեալ մատեանքն, երկայնմտութէ տանիցին, և ոչ ՚ի պէտս այլոց աւելորդ համարիցին զսոյն՝ որ իւրեանց անձանց ոչ կարևոր թուիցի։ Այլաքէն մեծ են յոյժ երքս Ճառելիք՝ հռչակաւ քարոզել, թէ խնդրել և պաշտել արժան է զՉմարիտ և զիսկական սուրբն ած՝ ոչ սակս անցանելի չնչոյ մահկանացու կենացս, թէպէտ և ՚ի նըմանէ իսկ մատակարարին գարմանքն կարևորք այժմու տկարութէ մերում, այլ վասն երանաւէտ կենացն՝ որ է միայն յաւիտենական։

ԳԼՈՒԽ Ե.

Որովհետև յայտնի եղև, Թէ չիք ուժ ի քաղաքականն դիցաբանութենէ, իսկ արդեօք կարծել Թէ գոյանիցի այն չընարանօք կարգելոց դիս։

ՏԵՍԱՒ, զի ոչ գոյաւ ուժ ի կամ ուժական ինչ՝ ի քաղաքացին կուչեցեալ դիցաբանութենէ անդ՝ մեհենաբանելոյ՝ ի Ա՛ստրոնէ վերատասան մատենիւք, յորում այնպիսեաց դից պաշտամունք իսկ ժամանել յերջանկութենէ կենացն յաւիտենից, որպիսիս և զիարդ օրինադրեցին քաղաքք առնուլ՝ ի պաշտօն։ Այնժ՝ ի դոյն ոչ Համոզեցաւոք վեցերորդ գրովս՝ զոր արդ աւարտեցաք, Թերևս արդեօք յընթեռնուլն զառաջիկայս՝ չունիցի այլ ևս ինչ խնդրել՝ ի լրումն այսր խնդրոյ։ Ա՛ռն զի մարթ է կարճել ուամբ, Թէ գէթ առտուածքն ընտրեալք և նախապատիւք՝ զոլոյ Ա՛ստրոն՝ ի վերջնում մատենին Ձառեաց, և մեք սակաւուք խօսեցաք, պարտելիք իսկն վասն երանելի կենացն՝ որ միայն յաւիտենից է։ Այլ զայն ասեմ առ առնսոր զոր Տերտուղիանոսն ասաց զուարճախօսութիւնն արդեօք՝քան լրջութիւն։ "Այնժ է առտուածք ընտրեալք իբրև զսոխս, ապաքէն ինացեալքն խոտան գառեալք են։" Օ՛այդ չասեմ ես. զի տեսանեմ Թէ նա և յընտրելոյ անտի ընտրանօք առեալ լինին ոմանք յայլ գործ առաւելագոյն և գերազանց. զոր օրինակ ի զինուորութենէ՝ նոքաւմարգքն ընտրեալք են, բայց և ի նոցանէ գոյ ընտրել՝ի գերագոյն ինչ գործ զինուց. և յեկեղեցւոջ ընտրելոյ զառաջնորդս, ոչ այնու խոտան լինին այլք, ուր Համօրէն բարի Հաւատացեալք յիրաւի ընտրեալք վերաձայնին. ընտրանօք որոշին՝ ի չինուած քարինքն անկիւնակալք, առանց անարգելոյ զքարինն՝ որ յայլ մասունս կերտուածոյն կարգեալ էն. այլ և խաղողք ընտրին յատել, և ոչ ընկեցիկ էն այլքն՝ զոր Թողութիւք յարբունի դինուց։ Այնժ Հարկ է ընդ յոլովագոյնս անցանել, ուր քաջայայտ էն իրքդ։

*Ա՛մին իրի ոչ այնր աղագաւ՝ զի դիք ոմանք ասին ընտրեաւք
՚ի բազմաց , անդէն անպտանելիք իցեն՝ կամ գրիչն կամ
դիցապաշտքն այն , և կամ ինքեանք դիքն . այլ առաւել
հարցաքննելի է՝ ոչ՛ք դոքա իցեն , և յո՛ր գործ ընտրեաւք ։*

ԳԼՈՒԽ Ը

*Ո՛ր այն իցեն դիք ընտրեալք , և միթէ իցեն ազատք ՚ի գործատուէն
նուաստագոյն դիցն ։*

Ի ԳԱՒԲԻՆ աստուածս ընտրեալս զայսոսիկ յանուանէ կարգէ Ա՛արրոն ՚ի շարաճի անդ միակ մատենին, այսինքն են Յանոս , Ա՛բամազդ , Ադոնոս, Ոգի, Հերմէս, Ա՛պողոն, Ա՛րէս , Հեփեստոս , Պոսիդոն , Ա՛ռեգաին, Ա՛յեգիս , Դիոնիսոս կամ Ա՛ստո՝ Ա՛ջատ հայր յորջորջեալ , Ա՛ր-կիւր , Դեմետր , Հերա , Ա՛ռսին, Ա՛նահիտ կամ Ա՛ստեղ-միս , Ա՛թենաս , Ա՛տղիկ կամ Ա՛փրոդիտէ , Ա՛եստա ։ Ա՛-մենեքեան սոքա Թուով քսան , երկոտասանեակն արուք , և ութ էգ ։ Ա՛ս ինչ արդեօք դիքդ այդ ընտրեալք կոչիցին . միթէ սակս մեծագունից մատակարարութեանց յաշխարհի, եթէ զի աշխարհածանօթք են ժողովրդոց , և պաշտօն առաւելագոյն ընծայիցի նոցա ։ Եթէ վասն մեծամեծ գործս մատակարարելոյն յաշխարհի , չէր արժան գտա-նել զնոսա ՚ի ռամիկ խուժանի աստուածոյն կարգելոյ ՚ի գուշնաբեայ գործս մանուանս ։ Ա՛նգղն նա և Յանո-սըն այն , յորժամ երկունք ծննդականի սկսանին , յոր-մէ և այլ ամենայն գործք սկիզբն առնուն՝ միում միում ՚ի մանրիկ աստուածոյն պատշաճեալք , բանայ ասեն ըզ-Ճանապարհ սերմնատուութեանն . անդ է և Ադոնոս վասն նորին սերմանն . անդ և Ա՛ստո ազատն , որ ազատէ զարուն թափելոյ սերմանն . անդ և ազատուհին Ա՛փ-րոդիտէ , որ զնոյն դիւրութիւն առնէ իգին՝ ազատիլ արկմամբ սերմանն . սոքա ամենեքին ՚ի յընտրելոց ան-

ան են ։ Ասկայն անտանօր է և Աստնա աստուածուհին վերակացու բղխման դաշտանին , որ Թեպէտ դուստր է Քամաղդայ , այլ անարդ ։ Նոյնպէս զայս գործակալութիւն բղխման դաշտանաց նոյն մատենագիր՝ ի գիրս ընտրական աստուածոյն ընծայէ Հերայ՝ ամէն որ Թագուհին է ընտրելոց դից . իսկ աստանօր իբրև Հերա լուսնական՝ կից ընդ Աննայի խորհի դաւերն՝ տեսուչ կայ դաշտանաց ։ Ընդ կան և երկու ոմանք անբաւական, Ի խտումնոս (կենսատուիթ) և Ինտիմնոս (զգայատու), որոց մին կեանս տայ զաւակին , և միւսն զգայութիւն . և արդարեւ առաջնոյդ իմն մատակարարին չիջնելափառքս այսոքիկ՝ քան զվերհան և զընտրեալ . քանզի առանց կենաց և զգայութիւն զինչ այլ կրի յարգանդի , բայց տխեղծ իմն սաղմն անկար՝ հանգոյն կաւոյ և փոշւոյ ։

ԳԻՒՂԻՒՍ Գ

Քանի՞ ցուրտ պատճառանք են ընտրութիւն դից ոմանց , ուր բազմայ հնաստաւգունից՝ընծայի մատակարարութիւն բարձրագոյն ։

Արդեօք՝ ինչ պատճառ հարկաւորեաց ուրեմն զքաջքն տիր աստուածն՝ի գործս յայդ մանուսնս , ուր՝ի բաղխոյս ծննդագործ պարգևատուէն առաւելուն քան զնոսա Ի խտումնոս կենսատիթն և Ինտիմնոս զգայատու կոչեցեալքըն , այլ անհամբաւ Թաքուցեալք ։ Օ՛ի ահա ընտրեալն Յանոս բանայ զմուտս և գոգոյս զգուռն սերմանն . ընտրեալն Կառնոս տայ զնոյն սերմն . ընտրեալն Խաքոս ազատ տայ արանց զարկումն սերմանն . զնոյն տայ կանանց և Վեմէտրէ հողն , կամ Պտղիչն Փրոդիտէ . ընտրեալն Հերա՝ ոչ միայնակ՝ այլ ընդ Աննայի դաւեր Քամաղդայ՝ ընձեռէ զբղխումն դաշտանաց յաձումն յղացելոյն . տայ և Ի խտումնոս անննշան և անազգի զկեանս , և Ինտիմնոս նոյնպէս անննշան անազգի տայ զգայութիւն . և այս

երկու այնչափ գերազանցիկ են քան զայն իրս, որչափ քան զսուտ գերիվերոյ են հանճար և բան։ Ա՛յսն զի զոր օրինակ ոչք խորհրդածելոն և իմանան, առաւելաւքք են քան զրս առանց հանճարոյ և բանի կեանն և զգան, որպէս անասունքն, նոյնպէս ընդունականքն կենաց և զգայութեան յիրաւի նախադասին քան զանկենդանս և զանզգայս։ Ա՛յսն որոյ Ա՛ստուածոս կենսագործիչ և Ա՛ծնողիչոս զգացուցիչ՝ առ ընտրեալ աստուածովքն մեծապէրելի և են, քան զՅանոսն դնելաբաց սերման, և քան զԱ՛ռնոս տուիչ կամ սերմանիչ սերմանն, և քան զԱ՛քոս ազատ և զՍտղիկն ազատուհի՝ որ ասին շարժիչք կամ թողեցուցիչք սերմանց։ զորս և զմեռաւ անգամ արկանել անպատեհ է, մինչ չև կեանս և զգայութե ստեալ իցեն։ Ա՛յլ ահա այսպիսի պարգեւք ընտրականք՝ ոչ յընտրելոց աստուածոցն են տուեալ, այլ յանընշանաւոր ումանց՝ որք առ այլոցն արժանաւորութե անտես լինին։ Ա՛յլ եթէ պատասխանիցեն՝ թէ ամենայն սկսմանց իշխանութե կայ՛ի Յանոսն, վասն այն յիրաւի ընծայի նմա և բացումն յղութե։ և ամենայն սերմանց իշխան է Ա՛ռնոս։ սորին վասն և մարդոյ սերմնարկութե անան՝ ջատ է՛ի նորա ներգործութե։ և ամենայն սերմանց թափելոց իշխան են Ա՛քոս և Ա՛ստղիկ։ ուստի նոցա է խըն՝ նամածոյ լինել ամենայնի՝ որ՛ի սերունդս մարդկան։ և ամենայն մանրելոց և ծնեալոց իշխան է Հերա։ ուստի ոչ պակասի՛ի մանրութե կանանց, և՛ի ծնունդս մարդկան։ Ա՛յդպէս է, թող ասացեն և վասն կենսացուչի և զգացուցչի, եթէ ունիցին և առքա զիշխանութե ամենայնի, որ կեանն և զգան։ Ա՛յսմ թէ հաւանեին, և՛ի միտ առցեն՝ քանի մեծաբանս ունին նոքա բարբառել։ քանզի սերմամբք ծնանել՝ յերկրի է և յերկրէ։ իսկ կեալ և զգալ՝ ըստ նոցա կարծելոյն՝ պատշաճի և աստեղաբնակ ոչից։ Իսկ եթէ ասիցեն, թէ կենսագործիչն և զգացուցիչն իշխեն միայն՛ի մարմնի կեցողաց և ըզգայարանաւք վարելոց, ընդէր ապա այն ոճ՝ որ ամենայնի զկեալն տայ և զգալ, ոչ տայցէ և մարմնոյ կեանս և ըզ-

գայութիւն, հանրական ներգործութիւնն ընդհակառակ ծնունդս և զայս պարգև. զինչ այլ պէտք են կենսացուցչի և զգացուցչի։ Այսպէս եթէ հանրականն այն նախախնամիչ կենաց և զգայուն՝ զմարմնականքս զայս իբր յետինս և անարգս յանձն առնէ Աթուսիոսի և Աենտիոսի իբրեւ սպասաւորաց, միթէ ընտրեալքն այն դիք բնաւ անձնաբաւք էին, մինչև չգտանել զոր՝ ուր յանձն առնիցեն զայսոսիկ, այլ սոսկ ասացին հանդերձ խրատանցն վասն և ընտրեալ անուն ազնուականութիւնն խոնարհիլ՝ ի գործ ընդ ապատոհմիկս։ Այսաւասիկ ընտրականն Հերա և դշխոյ, Աթամազդայ քոյր և լծակից, սոյն սա է մանկածու յուզող. և յայն պարագայի ընդ վատատոհմ աստուածուհեացն Աբէոնիևայ և Աղեոնիևայ երեւելիոյ։ Ընդ տանօր կարգեցին և զԱհնս աստուածուհի, զի տայցէ մանկանց բարիսիս միտս. և սա չէ յընտրելոց անտի. որպէս թէ մարթ էր ընտրել մարդոյ առաւել ինչ քան զմիտս։ Իսկ անդ դնի Հերա, զի ուսհածու է և անածու, որպէս թէ օգուտ ինչ էր յոյզի անկանիլ և՝ ի տուն բերել՝ եթէ միտք բարիսիք ոչ կայցեն. զորոյ զպարգևիչ դիցուհին ոչ՝ ի համար ընտրելոց դից դասեցին ընտրիչք նոցա. ուր և քան զԱթենաս անգամ նախամեծար առնել զսա յիրաւի էր, որում ընծայեն պիշողականն մանկանց յիրս մանուանս. և ո՞ երկբայեսցի թէ լաւ է ունել միտս բարիս, քան յիշողական քաջառուս։ Վասզի ոչ ոք՝ որ բարիսիք միտս ունիցի՝ չար է. իսկ չարախտաւորք ոմանք յիշողական ունին սքանչելի, այնչափ առաւել աւաղելիք՝ որչափ դժուարաւ մոռանան զոր չարացարն խորհին։ Այս սակայն Աթենաս Թուակից կայ ընտրելոցն դից, իսկ միտք անուանեալն՝ ընդ խառնաղանդ անարգանն ծածկեալ կայ։ Օ՜ինչ ապա զառաքինութիւնն ասացից, զինչ զերջանկութիւն, զորոյ խօսեցեալ բազումն՝ ի չորրորդում գրի. քանզի և զսոսա աստուածս ունելոյ տեր, զի ոչ էառն՝ ի դասակարգն դիցն ընտրելոց, որպէս տալ էառն Աբէսի և Աեդեայ կամ սանդարապետին, որոց մին գործող է մահուց, և միւսն ընդունող։

Ա՛յդ քանզի և ՚ի գործս դուշնաքեայս՝ որք առանձնա-
բար բաշխեալ են աստուածոց բազմաց, տեսանեմք պա-
տաղեալ և զընտրեալ դիմն, իբր այն թէ ծերակոյտն զու-
գակցապէս ընդ ռամկին գործիցէ. և զի գտանեմք և,
զի ոմանք ՚ի դից ոչ արժանի ընտրութէ կարծեցեալք՝
մեծագոյնս ինչ և լաւագոյնս ասին մատակարարել, քան
զոմանսիկ՝ որ ընտրեալքն վերակոչին, ինոյ խնամատարել
թէ ոչ ՚ի պատճառս երևելի մատակարարութեց յաշ-
խարհի կոչեցան նոքա ընտրեալք և գլխաւորք, այլ զի
յաջողեսցեն նոցա առաւել ՚ի ծանօթութիւն գալ ժողովրդոց,
Ասեմ և նա ինքն Ա՛ստրոն ասէ, թէ ոմանց աստուածոց
հայրականաց և մայրականաց, որպէս և մարդոց, ըստ
դիպաց իմն վիճակեցաւ վատագոյութէ: Ա՛յդ եթէ եր-
ջանկութէն յայն սակս արդեօք ոչ ընդ ընտրեալսն գտաւ,
զի ոչ յարժանեաց ինչ՝ այլ ՚ի բախտէ կալան նոքա զայն
աղնուականութէ, գէթ զբախտն դնել պարտ էր ընդ նո-
սա, նա վերոյ և քան զնոսա. որովհետև աստուած գնա
համարէն, և պարգևիչ իւրաքանչիւր զիւրն՝ ոչ բանա-
ւոր անտեսութէ, այլ որպէս և զիարդ յախտուն պատա-
հէր: Ամա անկ էր գահերեց լինել դից ընտրելոց, յորս
առաւելապէս զիւրն ՚ի վար արկանէ կարողութէ, երբ
տեսանեմք՝ զի ընտրեալք են նոքա՝ ոչ ըստ երևելի առա-
քինութէ, և ոչ ըստ բանաւոր երջանկութէ, այլ ան-
խորհուրդ իշխանութէ բախտի: Ա՛նզի և կորովաբանն
Ալեքսանիոս Թերևս և զաստուածսն իսկ ակնարկէ յասել
իւրում. "Ա՛յլ արդարեւ յամենայնի իշխան է բախտն.
նա ըստ իւրում կամի՝ քան թէ ուղղութէ զամենայն իրս
բարձրացուցանել և նուաստացուցանել ,, : Ա՛նզի և չը-
կարեն իսկ պատճառս յառաջ բերել, էր վասն հնչակա-
ւոր իցէ Ա՛փրոդիտէ, իսկ առաքինութէնն՝ աննշանաւոր.
ուր երկոցունց և պաշտօնս սահմանեալ են դոքա, թէպէտ
և արժանաւորութէն նոցա անհամեմատ: Ա՛մ եթէ Ա՛փ-
րոդիտէ ամբարձաւ յաղնուականութիւն այնու՝ զի բա-
զումք ցանկան այնմ, զի Ա՛փրոդիտեայ սիրողք բազումք
են՝ քան առաքինութէ, ընդէր ապա հնչակելի եղև Ա-

Թենաս, և անդուք մնայ դիցուհին Պեկունիա՝ այն է Համնայ. որովհետև ի մարդկանէ բազումք առաւել յարծաթասիրուէ բերկրեն քան յարուեստագիտութենէ. և ի նոսն իսկ արուեստագէտս գժուարաւ գտանիցես զոք՝ որ չունիցի զարուեստ իւր առ ի շահս դրամոյ. և է միշտ մեծագրեալ այն՝ որ վասն լինել ինչ, քան զայն՝ որ վասն այլոց լինի։ Վասն որոյ եթէ ըստ դատաստանի անխմաստ ամբոխին լեալ է այդ ընտրութիւն դից, առիմ[2] Պեկունիայն ոչ նախապատուեցաւ քան զԹենաս, որովհետև արուեստագէտք լինին բազումք սակս դրամոյ։ Իսկ եթէ այդ որոշումն եղև ի սակաւուց խմաստնոց, ընդէր ոչ քան զՓրոդիտէ առաւել մեծարեցաւ առաքինութիւն, վհատգոյն գոլով սորա քան զնա ըստ ուղիղ բանի։ Կամ դէթ՝ որպէս ասացիք, նա ինքն բախտն բազմազօրն ըստ կարծելոց դոցա, որ իշխէ յամենայնի, և զհամայնն ըստ կամի քան ուղղութիւն ամբառնայ և խոնարհեցուցանէ, եթէ այնչափ զօրացաւ առ աստուածսն անգամ, մինչև զոր կամի՝ ամբառնայ, և զոր կամի՝ խոնարհեցուցանէ յախտունդ դատմամբ, ինքն զգահագլուխն ունելոց էր ի մէջ ընտրելոցն այնոցիկ առ որս ի կիր առ զմեծ գիւր կարողութենէ։ Համարիցիմք արդեօք թէ նմին իսկ բախտի այլ բախտ դիմամարտ հանդիպեալ՝ արգել զնա ի դասակարգէ ընտրելոցն։ Այս ուրեմն անձամբ անձին հակառակ եկայ որ զայլս աղնուացուցեալ՝ ինքն չաղնուացաւ։

ԳԼՈՒԽ Դ

Բարեվիճակ գտան դէք խոնարհագոյնք՝ որ ոչ նշաւակեցան գործովք վատթարուէ, քան զընտրեալսն՝ որոց խայտառականքն հրապարակին։

Այդպէս ընտրելոցդ այդոցիկ դից խնդակից ունէր լինել՝ որ միանգամ աղնուականութէ և չքեղութէ և ցանկացող. և բարեբաստիկս ասելոց էր զնոսա, եթէ ոչ

տեսանէր զնոսա ընտրեալս առաւել ՚ի նախատինս՝ քան ՚ի պատիւ։ Վանդի զխոնարհագոյնն զայն խուժան ծառ կեաց ապատովմանէն առ ՚ի չլինելոյ նշաւակ թշնամանաց։ Յիրաւի ծիծաղելիք զնոքօք, տեսեալ՝ զի ըստ մարդկան կեղակարծ խորհրդոյն ՚ի գործս գործս զատուցեալ կան, զօրէն մանրավաճառն փերեզակաց, կամ իբրև զարհեստաւորսն ՚ի փողոցի արծաթագործաց, ուր առ ՚ի կատարումն անօթոյ իրիք արծաթեղինի՝ ընդ բազում արհեստագործս լինի անցանել, թէպէտ և մի միայն քաջաբուեստ ոք կարող էր բավանդակել։ Վասն զի խնամ տալեալ բազմութեանն գործաւորաց՝ պատշաճ թուեցաւ իւրաքանչիւրումն արագ և հեշտեաւ մարզիլ յիւրաքանչիւր մասն արհեստին, քան թէ ամենեցուն յերկար դեգերմամբ ՚ի միում արհեստի լինել կատարեալս։ Վասակայն ՚ի գոցանէ յանընտիր աստուածոցդ՝ հաղիւ է գտանել զոք, որ յանցմամբ իւիք համբաւ չար յանձն իւր ձգեալ իցէ. իսկ յընտրելոցն դիւց հաղիւ ոք իցէ՝ որ անպատճառ գտանիցի յերևելի ծանականաց։ Վորքա ընտրեալքն խոնարհեցան երբէք ՚ի նուաստ գործս մոցա. այլ սորա անընտիրքս ոչ հաղորդեցան ՚ի նոցին բարձր բարձր ոչխրագործութիւնս։ Յաղագս Յանոսին ոչ յիշեմ արդարեւ գործ ինչ այսպիսի։ այլ Թերևս անարատութիւն կեցեալ իցէ նորա, օտար յերեսնաւոր ապիրատութենէ. որ և զՎոմոս Վատուրնոսն փախստեայ ընկալաւ պատուասիրաբար, և ընդ նմա բաժանեաց զթագաւորութիւն. մինչև իւրաքանչիւր քաղաքս կառուցանել սա զՅանիկուղոն, և նա զՎատուրնիա։ Վայց հեթանոսքդ՝ որք յաստուածոցն պաշտամունս զանվայելուչն ախորժեն տեսանել, զսա՝ որոյ վարք չէին ինչ խառնակեաց, գարշելեացն նորանշան այլանդակութիւն արձանին, մերթ երիվարական զսա ձևացուցեալ, և մերթ և քառաձիական՝ իբրև երկուորեակ իմն։ Վասն խորհեցան Թերևս, զի որով հետև յոլովք ՚ի դիւց ընտրելոց զամենալիսն գործելով կորուսեալ էին զձիական(զամենի), սա իբր անպատճառդ (և ամենի ճած) բազմաձիական երևեսցի։

ԳԼՈՒԽ Ե

Յաղագս գաղտնի վարդապետութեանն հրեշտնոցս , և բնախօսական փաստից նոցա ։

Այլ լուիցուք առաւել ևս զնոցա բնախօսական մեկնաբանութիւնս , որովք դատեցին հնարին զտգեղութիւն աւաղելի մոլորութիւնն իւրեանց՝ ընդ պատրուակաւ գաղտնախորհուրդ վարդապետութեան ։ Ասէ առաջին Աստուածն ընդ գովելի ընծայեցուցանել զայն մեկնաբանութիւնս յաւել իւրում՝ թէ առաջինքն կերպարանեցին զդրօշեալս զիմն , զնշանակն և զարդարանս , վի աչօք տեսեալ ոգոց մատչելինն ի լուր գաղտնեաց վարդապետութեանն՝ կարող լինին տեսանել մտօք զհոգի աշխարհն և զնմասունս նորա , այս է՝ զնշմարիտ աստուածան . և որք ի մարդոյ կերպարան պատշաճեցին զդրօշեալն , զայն թուի խորհել նոցա , թէ մահկանացուացս հոգի՝ որ կայ ի մարդկային մարմնի , նման է ամենայնիւ անմահական հոգւոյն . զոր օրինակ եթէ անօթք մերձ դնիցին առ ի նշանակել զաստուածան , և ի տաճարին (աքսոսի կայցէ սրուակ կամ հադաղակ՝ առ ի զգինի նշանակելոյ՝ պարունակողիւ զգ պարունակեալն ։ Այսպէս ասպա մարդաձև դրօշելովին նըշանակի հոգին բանաւոր , որոյ բնութիւն ի կերպարանի անդ իբրև յամանի փակեալ կայ , զի և բնութիւնակից այնմ ասեն զաստուած կամ զաստուածան ։ Այսք են ահա գաղտնիք վարդապետութեանն , որոց մակացու եղեալ առնդ գիտնաւորի՝ յայտնաբանեաց ։

Այլ ո՞ դու հանձարեղդ այր , միթէ ի խորհրդածութիւնդ յայդ վրիպեաց ի քէն խոհականութիւնն՝ որով իմաստնաբար դատեցար , թէ որք զառաջինն սահմանեցին դրօշեալս ի մէջ ժողովրդոց , բարձին վերկիւղ ի քաղաքացեաց , և յաւելին զմոլորութիւն . և թէ առաւել ողջամտաբար մեծարեցին զաստուածան նահանի հոմանեցիք

առանց դրօշելոց . զի նոքին իսկ եղեն քեզ առաքնորդք՝ համարձակ զայսոսիկ՝ի դէմս հարկանելոյ հոգւոմայեացոյն յետնոց : Այնպէ եթէ էր և առաքնոցն այնոցիկ պաշտեալ զդրօշեալսն , լռեալ էին արդեօք առ երկիւղի զհանուածն քո զայդ զՀմարիա՝ ընդ խափանումն դրօշելոց , և զգաղտնի ուսմունս մնոտեացս այսոցիկ փնասաբեր պատկերաց՝ ձեռամն և բարձրաբարբառ ևս քարոզիչը : Այսպէս հոգի քո այդ խմաստուն և հանճարաւոր , ընդ որ մեծապէս ցաւիմք , ոչ կարաց խորհրդաղբաց վարդապետութիւնդ հասանել բնաւ առ ՅԾ իւր , այս է՝ առ նա յորմէ եղեն , և ոչ ընդ որում եղեն . ոչ որոյ հատուած իցէ , այլ հաստուած նորա . ոչ որ ամենայնին է հոգի , այլ որ արար զամենայն հոգի . որոյ լուսաւորելով ևեթ լինի հոգին երանելի , թէ ոչ նորա ընդհանուր լինիցի աւազախտաւոր : Այլ արդ թէ որպիսիք իցեն գաղանիքդ վարդապետութեան , և քանոյ արժիցին , ՆՀրեղինաշաւիղդ յայտ արասցեն : Այլ տեղեաւս տեսաք , զի խոստովանի բազմահմուտ այրդ , թէ հոգի աշխարհիս և մասունք նորա իցեն աստուածք Հմարիտք . որով գոյ իմանալ թէ ՅԾաբանութիւնն այն բնական՝ զոր բազմօք մեծարէ , ոչ ձգի անդր քան զընութիւն բանական հոգւոյ : Յաղագս բնականին սակաւս ինչ խօսի նա յայսմ գրի . ուր տեսցուք՝ արդեօք բնախօսական մեկնաբանութիքն իցէ մարթ՝ի բնականդ յայդ վերածել զքաղաքական , զոր՝ի յետին տեղւոջ գրեաց յաղագս դիցն բնաբելոց : Եթէ իցէ մարթ , ապա բովանդակ բնական եղիցի . և զի՞ այլ պիտոյ էր այնպէս մանրախուզիւ տրտնջել զերկոսեան : Իսկ եթէ ըստ ուղիղ զանազանութիւնէ որոշեալք են , և բնականդ այդ ՅԾաբանութիւնն նմա կարի ընդունելին՝ ոչ գտանի Հմարիտ , սակս՝ի հոգի անդր ևեթ հասանելոյն՝ և ոչ՝ի Հմարիտն ՅԾ , որ և զհոգի արար , որչափ ևս ապա ընկեցիկ և սուտ իցէ քաղաքայինն , որ առաւել զմարմնոյն բնութիւն պատաղի . որպէս յայտնի ցուցանէն մեկնաբանութիքն նորա բազում փութով Հարութեամբ և յառաջ բերեալք՝ յորոց հարկ է ինձ յիշատակել զոմանս :

ԳԼՈՒԽ Ը.

Լսա կարծեաց վարդանայ՝ ասե է հոգի աշխարհի, որ ի մասունս բաժանեալ՝ ունի հոգիս բազումս, և իւրաքանչիւր նոցա է բնութիւն ասդային։

Արդ ի սորա յառաջ վարեալ զիօսես յաղագս բնականն դիցաբանութե՛ն, համարի զնա լինել հոգի աշխարհի. և թէ այս աշխարհ՝ ասե է. այլ զոր օրինակ զայր իմաստուն՝ թէպէտ և մարմնով և հոգւով ունակ՝ ի հոգւոյ անտի կոչմամբ իմաստուն, նոյնպէս աշխարհ՝ ի հոգւոյ իւրմէ՝ կոչի աստուած, թէ և ունի հոգի և մարմին։ Ասուի թէ խոստովանիցի այսու զնա ասե. բայց զի զբազումս ևս ի ներքս մուծանիցէ, յաւելու ընդ երկու մասունս բաժանել զաշխարհ, յերկինն և յերկիր. և զերկինն՝ յերկեակ, յեթեր և յօդ. իսկ զերկիր՝ ի ջուր և ի հող. յորոց բարձրագոյն ասէ զեթերն, երկրորդ՝ զօդ, երրորդ՝ զջուր, և վերջին՝ զհող։ Օքառեակ մասունս զայսոսիկ առ հասարակ ասէ լցեալս լինել հոգւովք, անմահականօք՝ զեթեր և զօդ, մահկանացուովք՝ զջուր և զհող։ Ի վերին պարունակէ երկնից մինչ՝ ի պարունակ լուսնի՝ եթերական հոգիք են աստեղատունք և աստեղք. և այն երկնային աստուածք ոչ միայն իմանալիք են մեզ, այլ և տեսանելիք. իսկ ի բոլորակ լուսնի և ի գագաթունս ամպոց և հողմոց կան հոգիք օդեղինք, որք մտաց տեսանելի են, և ոչ աչաց. և կոչին սոքա դիւցազունք, և առանին դիք, և ոգիք։ Այս է ահա ածաբանութե՛ն բնական՝ համառօտ բացատրեալ՝ ի Արդանէ յայսմ գրուածի, որ ոչ նորա միայն է կարծիք, այլ յոլովից իմաստասիրաց. այլ զինի վէմարեղոյ իմոյ զոր ինչ կայ այլ ևս ասել յաղագս քաղաքական ածաբանութե՛ն ըստ աստուածոյն ընտրելոց, յետոյ ասցա Ճառեցից մանրամասն յաղագս բնականն՝ ձեռնտուութե՛ն այ Աչմարտի։

ԳԼՈՒԽ Ի

Մինէ բանաւոր ինչ իցէ յերկուս աստուածս որոշել զՅանոս և զՏերմինոս։

Այլ արդ հարցանեմ զվարդն. ո՞ոք Յանոսն իցէ, զոր եդեր ՚ի սկզբան։ Պատասխանէ. Աշխարհս է։ Ակիրճ արդարեւ և մեկին պատասխանի։ Ընդէ՞ր ապա նմա վերագրին սկսուածք իրաց, իսկ աւարտք իրաց այլուստ՝ որ Տերմինոն կոչի։ Յանզի վասն սկսմանցն և կատարածի՝ նուիրեն հռովմայեցիք երկուց աստուածոցս զերկու ամիսս, քաց՚ի տասանցն մինչև՚ի դեկտեմբեր, որոց առաջինն է մարտն. զյունուար ընծայեն Յանոսի և զփետրուար՝ Տերմինոսի. վասն որոյ զտերմինական կամ զսահմանական տոնսն ասեն կատարել յամսեան փետրուարի, յորժամ լինի նուիրական մաքրութիւնն փետրոս կոչեցեալ. յորմէ և ամիսն անուն ընկալաւ փետրուար (այն է, փետրուար)։ Իսկ արդ եթէ աշխարհի՝ որ Յանոսն է, անկ են սկսուածք իրաց, ո՛չ նմին անկ իցեն և աւարտքն, մինչև հարկ լինել զայլ աստուած վասն սոցա կարգել. ո՛չ ապաքէն խոստովանին՝ թէ համայն եղեալք յաշխարհիս յայսմ՝ ՚ի սմին և զաւարտումն առնուն։ Որ անմտութեի՛ իցէ՝ ՚ի գործ անդր տալ նմա իշխանութի՛ կիսամանեայ, իսկ յարձանի անդ՝ երես կրկին. ո՛չ ահա լաւ և՚ի ձահ մեկնաբանէին զերկձակատեանս զայս, ասել զմի և զնոյն Յանոս և Տերմինոս, զմի դէմն տալով սկսուածոյն, և զմիւսն կատարածին։ Այսն զի որ գործէն, պարտի ուշ ունել երկոցունց և. ապա թէ ոչ՝ որ ոք ՚ի բովանդակ ընթացս ներգործութե՛ իւրոյ չհայի ՚ի սկիզբն, ոչ տեսաւ և զկատարածն. վասն որոյ հարկ է՝ զի ընդ նախահայեաց յիշմանն լծորդեսցի դիտաւորութիւնն ուղղաւես. զի եթէ անկանիցի յուշոյ զոր սկսեալն է, ոչ ևս գտանիցէ զիարդ աւարտէն պիտոյ է։ Իսկ եթէ համա

լեին՝ Թէ կեանքն յաւիտենական սկսանին յայսմ աշխարհի, և արտաքոյ այսր կատարին, և յայն սակս Յանոսի՝ որ ըստ նոցա աշխարհ է, զիշխանութիւն սկսմանց ևեթ տային, ապաքէն այսուհանդերձ քան զնա դնէին զՏերմինոս, և ոչ արտաքոյ հանէին զնա ի Թուոյ դիցն ընտրելոց։ Ահեպիա և ըստ ժամանակեան իրացս և զըսկիզբն և զկատարումն բաժանելով ընդ երկուս աստուածս, արժան էր տակաւին Տերմինոսի՝ ընձեռել զնախապատուութիւն. քանզի մեծ և խնդութիւն է՝ յորժամ իրք իւրաքանչիւր ի կատարումն գան. իսկ դէռ սկսեալքն՝ բազմահոգս են, մինչև ի լրումն հասանիցեն. և ի սոյն առաւել դիտակն ունի՝ որ միանգամ սկսանի ինչ, ի սոյն գիմէ, անձկայ և փափաքէ, և ոչ խնդայ ընդ սկսեալն՝ մինչև ոչ աւարտեսցի։

ԳԼՈՒԽ Բ.

Որք վասն պաշտօնեայք Յանոսի՝ զնորուն պատկեր երկնական ձևացուցին, զոր և յորիքձակաուան իսկ յոժարեին տեսանել։

Ասաք է արդ յառաջ բերել զմեկնաբանութիւն երկնական գրոշելոյն Յանոսի։ Երկուս երեսս ունի, ասեն, յառաջոյ և զկնի, իբրև զի քիմք մեր՝ ի բանալ բերանոյ՝ նման իմն տեսանին աշխարհի. ուստի Յոյնք զքիմսն կամ զառաստաղն բերանոյ կոչեն ոբաօս, այսինքն երկին. և ոմանք ի լատին քերթողաց զերկինս կոչեցին քալդոմ, որ է քիմք։ Ի քմոյ անտի բերանոյն կայ Ձանապարհ արտաքս կոյս ընդ ատամունս, և ի ներքս կոյս ընդ կոկորդն։ Տես Թէ յոր վայր ձգեցաւ աշխարհս յաղագս քիմք անուանակոչութեան։ Ասայց զինչ այսի առհոգի, զինչ առ յաւիտենից կեանս. սակս լորձունից ուրեմն պաշտեացի միայն այդ աստուած, զորոց զմման ինչ ի կլանել, և զմման ինչ ի Թքանել՝ պէտք լինին բանա-

լոյ երկուց դրանոյ քմացն ։ Այլ զի՞նչ յաւէտ անտեղի , քան չգտանել յաշխարհի երկուս դրունս հանդիպակաց , ընդ որս կամ՝ ի ներքս ընդունիցի ինչ , կամ արձակիցէ՛ ի դուրս . և ապա՛ ի մերմէ բերանոյ և՛ ի կոկորդէ՝ որոց նմանուածն ինչ ոչ կայ ընդ աշխարհի , կաղմէլ զպատկեր աշխարհի՛ ի Յանոս , վասն քմացն միայն՝ առ որ Յանոս չունի նմանուածն ինչ ։ Իսկ յորժամ առնեն զնա չորեքհարիւրեան , և անուանեն Յանոս երկուտրեակ , պատշաճեցուցանեն զայս՛ ի քառեակ կողմանս աշխարհի , իբրև թէ աշխարհ նկատիցէ ինչ արտաքոյ իւր , որպէս Յանոս ընդ ամ դէմն ։ Այլ զարձեալ . եթէ Յանոս աշխարհ է , և աշխարհ՛ ի չորից բաղկանայ մասանց , սուտ է ապա արձանն Յանոսի երկձակատեան . կամ եթէ չէմարիտ իցէ այնու՝ զի և անուամբ արևելից և արևմտից իմանի աշխարհ բոլոր , միթէ յանուանել անդ զայլ երկու մասունս՝ հիւսիս և հարաւ՝ որպէս զչորեքձակատեանն կոչեն Յանոս երկուտրեակ , նոյնպէս և զաշխարհ ասիցէ՛ ոք երկուտրեակ ։ Այլ ունին նոքա զքառեակ դրունսն բացեալս առաջի մտողի և ելողի՝ յարմարել՛ ի նմանութիւն աշխարհի , որպէս առ երկձակատեանն հնարեցին ասել ինչ՛ ի նմանութիւն բերանոյ մարդոյ . բայց եթէ Պոսիդոն յօգնութիւն հասեալ մատակարարիցէ ձուկն , որ բաց՛ ի մտից բերանոյն և կոկորդին՝ ունի յաջմէ և յահեկէ ընդունարանս ։ Այլ սակայն ոչ ոք զերծանել կարէ՛ ի բազմադուռն ստուերէ՛ աստի , բայց որ լսէ չէմարտութեան բարբառելոյ “Այս եմ դուռն ,, . Յով . Ժ . 9 ։

ԳԼՈՒԽ Ժ

Իշխանութիւն Արամազդայ , և բազդատութիւն նորին ընդ Յանոսի ։

Իսկ Արամազդ , որ և Ամիազդ և Գիւոս կամ Օձևս , ասասցեն զո՛ իմանալ կամին ։ Սակս . է աստուած՝ որ ու-

նի գլուխանուածին պատճառացն , որովք լինի ինչ յաչխար-
հի : Զքնաղ է բանս , զոր և Ալ իւրգիլեայ վայելչահիւսն
տող հաստատէ . “Արանելի է՝ որ կարաց ձանաչել զգ-
պատճառս իրաց ,, : Այլ թէ յիր սակս յառաջագոյս նմա
կարգի Յանոս , հանճարեղն այն և գիտնաւոր Ալ արքն
տայ պատասխանի . “Ալ ասն գի , ասէ , Յանոսի են սկզբ-
,, բունքն , և Ալրամազդայ՝ կատարմունքն . յիրաւի ապա
,, ամենիւքն Թադաւոր համարեալ է Ալրամազդ . գի սկզբ-
,, բունքն յաղթին ՚ի կատարմանց անտի . սկզբունք թէ
,, և ժամանակաւ յառաջին , այլ կատարմունք գերազան-
,, ցին պատուականութիւբ ,, : Ով այդ ուղիղ լինէր արդեօք
ասել , եթէ գործոցն սկսուածք և կատարմունք զանա-
զանէին յիրեարս . զոր օրինակ սկսուած գործոյ է՝ գնալն ,
և կատարումն՝ հասանել . սկսումն գործոյ է աշակերտու-
թիւն , և կատարումն՝ հմտութիւն ուսմանն . այսպէս և յա-
մենայնի առաջինքն են սկսուած , և կատարմունքն՝ վախ-
ճան : Այսպէս այդ խնդիր կանխաւ իսկ վէմարեցաւ ընդ
Յանոս և ընդ Տերմինոս . իսկ պատճառք՝ որ Ալրամազդայ
ընծայքն՝ արարչականք են և ոչ արարեալք , և անմարթ
է բնաւ՝ թէ գործք կամ սկսուածք գործոցն ժամանակաւ
յառաջեսցեն քան զգործողս . քանզի միշտ յառաջագոյն
է արարողն քան զարարեալն : Այլն իրի եթէ Յանոսի
պատճառքին սկզբունք գործոց , ոչ այնու առաջինք են նո-
քա քան զպատճառան՝ որք Ալրամազդայ ընծայքն . զի որ-
պէս լինել իրիք , նոյնպէս սկսանել ՚ի լինելութէն , չէ և չէ
առանց յառաջելոյ գործողական պատճառին : Ալրդ է-
թէ զայդ աստուածդ որում անկ են համայն պատճառք
եղելոց առ հասարակ՝ բնութէից և բնաւորականաց , ժո-
ղովուրդքն Ալրամազդ անուանակոչեն , և զնա պաշտեն
ծանր ծանր անարգանօք և անհնարին ապիրատութիւբք ,
պարտաւորս ասպաքէն զանձինս կացուցանեն գժնեայ սե-
ղանակատուէ , քան եթէ բնաւ և ոչ աստուած զնա հա-
մարեին : Ալ ասն որոյ լաւ և էր նոցա զայլ որ կոչել Ալ-
րամազդ անուն , արժանի այնպիսում գալչ և եղէռնաւոր
մի ծարանաց , և զնա առաւել հայհոյել ստայօդ պատմու-

Թէ, զոր օրինակ վասն Կռոնոսի առասպելին՝ քար ինչ առաջի եդեալ առ՝ի կլանել զայն փոխանակ որդւոյն, քան Թէ զսա ինքն ասել աստուած որոտաձայն և շնացող, բռնադակ աշխարհի վարիչ, և բազմապատիկ աղճատպղծութիւնք զեղխեալ, ունակ գերագոյն պատճառաց Համայն բնութեանց և բնաւորականաց, այլ անունակ լաւութ իւրոց պատճառաց։

Հարցանեմ զարձեալ. զո՞ր տեղի արդեօք՝ի դից կարգի տան այսմ Պրամազդայ, եթէ արդարեւ Յանոսն իցէ աշխարհ։ Օ՛ի Ա՛ռ որոն ինքնին սահմանեդ, Թէ աստուածք Ձմարիտք՝ են հոգի աշխարհի և մասունք նորա. ուստի որ ինչ այս ոչ է, ոչ և ըստ նոցա՝ է նա աստուած Ձմարիտ. միթէ ասիցե՞ն զՊրամազդ լինել հոգի աշխարհի, և զՅանոսն՝ մարմին նորա, այսինքն՝ սոյն երևելի աշխարհ. եթէ զայդ ասիցեն, չունին այլ բնաւ աստուած կոչել զՅանոսն. քանզի մարմին աշխարհի՝ ըստ նոցին իսկ չէ աստուած, զոր ասացին՝ հոգի աշխարհի և մասունք նորա։ Ա՛ռ որոյ յայտնապէս նա ինքն ասէ, Թէ զաստուած Համարիմ ես լինել հոգի աշխարհի, և զնոյն ինքն աշխարհ՝ աստուած. այլ զոր օրինակ մարդ մտաւոր՝ Թէ և՛ի հոգւոյ և՛ի մարմնոյ, բայց՝ի հոգւոյն ասի մտաւոր, սոյնպէս աշխարհ՝ի հոգւոյն ասի աստուած, Թէպէտ և ունակ հոգւոյ և մարմնոյ։ Պ՛ալա ուրեմն միայն մարմին աշխարհի ոչ է աստուած. այլ կամ միայն հոգի նորա, և կամ մարմին և հոգի միանգամայն. այլ այնպէս՝ զի ոչ՛ի մարմնոյ, այլ՛ի հոգւոյն ասի աստուած։ Իսկ եթէ Յանոս է աշխարհ, և աստուած է Յանոս, միթէ առ՝ի կարելոյ աստուած լինել և Պրամազդայ կամիցին ասել Թէ մասն ինչ է նա Յանոսի։ Ա՛յս Պրամազդայ յաւէտ սուղը են տալ զտիեզերքս՝. յորմէ և առածն. "Պրամազդաւ լի է ամենայն,,։ Պ՛ալա որպէս զի աստուած լինիցի և Պրամազդ, մնայաւանդ և աստուածոց Թագաւոր, ոչ այլ ինչ ունին համարել զնա՝ բայց աշխարհ, որպէս զի և՛ի վերայ այլոց դից երթայ՝ի վերայ իւրոց մասանց Թագաւորեսցէ։ Ո՛ սոյն միտս և զտողս ինչ Պաղերիոսի Պոլեմոնի բա-

ցայսմանաց նա ինքն Ա՛ստրոն՝ ի մանուկին՝ զոր ուրոյն գրեաց յաղագս պաշտամանն դից . և տողքն այն են այսոքիկ .

“Ա՛ստղագէն այն ամենազօր ,
Ծագաւորաց՝ իրաց բոլոր ,
Նա աստուածոց ծնող Հանուր ,
Նոյն և ծընիչ միակ աստուած ,
Ինքն ամենայն ի ընդՀանուր .,,

Նա՛ ի նոյն գիրս բացատրէ , Թէ հայր Համարեալ է նա յարկանել զերկինն , և մայր յընդունել զայն . և Թէ՝ Ա՛ստղագէ է աշխարհ . նա յիւրմէ արկանէ զամենայն սերմն , և յինքն ընդունի . ոչ վասն ասաց Պողբանոս , ա՛ստ Ա՛ստրոն , Թէ է ծնող և ծնիչ . և ոչ վայրապար ասաց՝ միակ լինել և ամենայն , քանզի աշխարհ մի է , և ի միում ամենայն ։

ԳԼՈՒԽ Ժ

Եթէ էր՞ ուղիղ որոշումն Յանոսի և Աստղագոյ ։

Ա՛յդ զի Յանոս աշխարհ է , և Ա՛ստղագէ նոյնպէս աշխարհ , իսկ աշխարհ մի միայն է , ընդհէր ասա երկու աստուածք էին Յանոս և Ա՛ստղագէ . առիմք տաճարս ունին առանձին , սեղանս առանձին , այլ և այլ պաշտամունս , դրօշեալս անմոռանս ։ Նթէ այնու աղագաւ՝ զի ոչ իշ զօրութիւն է սկսմանցն , և որիշ պատճառացն , և առաջնոյն՝ Յանոս անուն տուաւ , և երկրորդին՝ Ա՛ստղագէ , միթէ և մի մարդ՝ որ ունիցի ըստ այլ և այլ գործոց իշխանութիւնս կրկին , կամ արհեստս երկու , և իւրաքանչիւր նոցա զօրութիւն պէտիէ , ասիցի արդեօք երկուս գատաւորս լինել , կամ երկուս արհեստապետս ։ Պատ սոյնպէս երբ մի աստուած ունի զիշխանութիւն սկսմանցն և զպատճառաց , զի՞նչ Հարկ զմին Համարել երկուս աստուածս՝ այնու զի սկզբունք և պատճառք են երկու իրք որիշ ։ Ապա եթէ

զայդ արդար Համարին, ազէ ասացեն և զՎրդանազդ այնչափ աստուածս լինել, որչափ մակդիր անուանս էառնն նմա սակս բազմազան իշխանութեանցն. քանզի և իրքն աստեղաց յորոց զայն անուանս մակապրեցին, բազումք են և պէսպէս. զսակաւս յայնցանէ յուշ արարից։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս մակդիր անուանց Վրդանազդայ, որք զմի և զնոյն աստուած ցուցանեն, և ոչ բազում։

Օ ԱՐԱՄԱԶԴ անուանակոչեցին յաղթող, անյաղթ, ձեռնտու, մխիթ, կացուցիչ, հարիւրբռանեակ, դարձուցիչ, նեցուկ, զարմանի, պտղաւէտ, այլովքն հանդերձ՝ զորս յերկար է թուել։ Օ այսոսիկ կոչմունս յարադրեցին միայն միայնումն՝ սակս այլ և այլ պատճառաց և իշխանութեանց, այլ ոչ վասն յոլովութեանն իրաց նոյնչափ աստուածս հարկեցան ասել։ այլ զինա ամենայնի յաղթէ, ոչ յումեքէ յաղթի. առնէ նպաստս կարօտելոց. ունի զօրութիւն մխիթարելոյ, կանգնելոյ, հաստատելոյ, յեզաչրջելոյ զիշխանութիւն. և թէ իրք նեցուկ պնդէ և՛ի վեր ունի զաշխարհ. զարմանէ զամենայն, և իրք առեւտրաք դիւցազանէ զկենդանիս։ Ցեսանելոյ ահա՛ի սոսին զոմանս լինել մեծամեծս, և զայլս զուարճալիս. բայց երկոցունց եւս արարող միւնոյն Ամասդի։ Վասն ինձ՝ հպարտանիս իրերաց մատնել պատճառաց իրաց և սկսմանց նոցա, որոց վասն յերկու աստուածս բաժանեցին զմիակ աշխարհ՝ Վրդանազդ և՛ի Հայոս, քանզի թէ պինդ ունել զաշխարհ, և դիւցազանել զկենդանիս. և սակայն երկուցս այսոցիկ արարոց՝ զօրուբն և պատուակառնէր զանազանելոց ոչ տեսցեան երկուս ասել աստուածս, այլ նոյն Վրդանազդ ըստ միում նեցուկ կոչեցաւ, և ըստ միւսումն՝ սանտու։ Վասն զի ասել զթէ տեսնուտ դիւցիկկն դանակաց՝ անկ է առաւել Հերայ, քան Վրդանազդայ. մա-

նաւանդ զի կայր նաև դիւցազնուհին Թումինա, ձեռնտու նմին յայս գործ և ապատահարիւս. Թէպէտ և ունէին պատասխանել, Թէ Հերա ինքնին ոչ այլ ոք է՝ բայց Ա-քամադդ, բայ ասելոյն Ա՝ աղերխոսի Աոմրանոսի. "Ա-քամադդ՝ ծնող և ծնիչ աստուածոց ,, : Ընդէր ապա ասացաւ նաև Թումինա՝ սմնաւս. որովհետև՝ ի հարցաքրնելն Թերևս ոմանց՝ նա ինքն գտանէր լինել դիցուհին Թումինա : Վասնզի եթէ յիրաւի անպատեհ իմն Թուէր մեծատաւութէն աստուածոց, զի՝ ի հասկի միջոցին յաստուածոց խնամեացն զնուազն, և միւսն զպատիւն, որչափ անարժան և ա՛ն է՝ միւսմ անարդ գործոյ, որպիսի է դիցուցանել զկնդանին, երկուց աստուածոց իշխանութէ տալ զայդ հոգոցութէն, որոց մին իցէ Ա-քամադդ՝ հանուրց Թագաւորն, և զայն առնիցէ ոչ ընդ իւրումն լծակցի , այլ ընդ անհնչանի ումեմն Թումինայի. բայց և եթէ ինքն իսկ իցէ նա , Թումինա Թերևս ասացեալ վասն առնդիայց արուց , և Թումինա՝ վասն իգաց : Ա՝ ան զի հանդարձակ իսկ ասէի՝ Թէ ոչ ախորժէն նորա իգական անուն կոչել Ա-քամադդայ , եթէ՝ ի տուղ անդ Ա՝ աղերեայ չէր նա անուանեալ ծնող և ծնիչ . և եթէ յայլ մեկնիչ անուանս նորա ոչ ընթերցեալ էր իմ զվէ-քունիա , այն է դրամ կամ մանիայ . զոր և գտանեմք աստուածուհի կարծեալ՝ ի դասակարգի դից մանուանց , ըստ որում՝ ի չորրորդում զրի յիշատակեցաք : Այ-քանզի և արք և կանայք սահման դրամն, դորա ինքեանք քննեցէն՝ էր վասն Ա-քամադդ ոչ կոչեցաւ վէքունիա, և վէ-քունիոս , որպէս կոչեցաւ Թումինա և Թումինոս :

ԳԼՈՒԽ ԺՐ

Ա՛ե ինչ Ա-քամադդն կոչիցի և վէքունիա՝ դրամ :

Օ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆՆ զպատճառս տեսցուք զի-արդ վայելուչս իմն արտադրեն : Ա՝ սէն . նա ինքն Ա-քա-

մազդ կոչի և փիքունիա, դրամ. վասն զի նորա է ամենայն ինչ։ Նաբէկ գերահանձար պատճառիս յածախոյ առնուանդ։ Պալաքէն այնմ որոյ է ամենայն, առաւել անարգութիւն մեծ և թշնամանք են՝ դրամ կոչել. քանզի առհասարակաւ ամենայն գոյից՝ որ յերկինս և յերկրի՝ զինչ իցէ դրանին, որով ստանան մարդիկ զոր ստանանն։ Այլ անշուշտ արծաթասիրութիւն վիճակեցոյց Քամազդայ զառնուն դրամոց. որպէս զի արծաթասէրն մի կարծեսցի սիրել զչնչին աստուած ոք, այլ զնոյն ինքն զամենեցունց Թագաւորն։ Այլազգ ինչ լինէր ամենևին, եթէ կոչէին գնա մեծութիւն կամ Նոխութիւն. քանզի այլ է մեծութիւն, և այլ դրամ. զի մեծատունս կամ Նոխս ասեմք զիմաստունսն, զարդարս, զբարիս, որոց կամ չիք բնաւ դրամ, և կամ սակաւ յոյժ. վասն զի առաքինութիւնք յաւէտ Նոխացեալ՝ մեծատունք են. որովք՝ ի կարիս անգամ մարմնաւորացն շատ է նոցա այն ինչ՝ որ՝ ի ձեռին կայ. իսկ աղքատս ասեմք զագահսն՝ զիշատ քաղցեալս և կարօտեալս. որոց թէ և բազմաթիւ իցեն դրամք, այլ՝ ի լուութիւն նոցա անհրաժեշտ է կարօտութիւն։ Օ՛նյա ինքն զնմարիան ՚ի ծածկաբիան ասեմք մեծատուն, ոչ դրամովք՝ այլ ամենաղօր կարողութիւն։ Վասն զի ասին և մեծատունքն՝ ընչեղք, բայց նեղբոյ կարօտք՝ եթէ ընչաքաղցք իցեն. ասին և աղքատքն՝ անընչք, բայց նեղբոյ մեծատունք՝ եթէ իմաստունք իցեն։ Այս ուրեմն որպիսի երևեսցի մարդոյ իմաստնոյ ծածկանութիւնդ այդ, յորում աստուածոյն Թագաւոր յինքն առնուցու զայնր իբր անուն՝ որում ոչ ոք յիմաստնոց ցանկացաւ։ Վասն առաւել հեշտալի եր, եթէ արդարեւ յայդմ վարդապետուէ կայր ուսանել ինչ պիտանի առ յաւիտենից կեանս, զնծ զտեսուչ աչխարհի ոչ դրամս կոչել այլ իմաստութիւն. որոյ սէրն սրբէ զմարդ յաղտից ագահութիւն, որ է արծաթասիրութիւն։

ԳԼՈՒԽ ԺԴ

Ի բացատրել հեթանոսաց ընդ Վարդանի զինչ Կռնոման էին և զինչ Ջէմմին, առանձ՝ զի երկոքին նոքա են նոյն իսկ Աբամազդ։

Այլ զինչ եւս վասն այսր Աբամազդայ յաձախիցեմք բանս, առ որ այլքն դոգեսս գան ժողովին, որով ունայնանայ բազմաստուածութեն կարծիք, յորժամ սա ինքն է ամենայն, եթէ զայլսն համարեցին մասունս նորա կամ իշխանութիս, և եթէ զօրուին հոգւոյ՝ զոր ընդ համայնս սիրեալ ասեն, ի մասանց կազմածոց երևելի աշխարհիս՝ ըստ պէսպէս մատակարարուեց բնութեանց ընդունիցի անուանս բազմաց աստուածոց։ Ոյն զի զինչ է և Կռնոս։ Այն. աստուած է ի գլխաւորացն, որոյ է տէրութեն ամենայն սերմանց։ Այս ո՞չ ահա բացայայտութեն տողիցն Ոյ աղեքիոսի զնեն, թէ Աբամազդ է աշխարհ, և նա ինքն արկանէ յիւրմէ զամենայն սերմանս, և յինքն ընդունի։ Այս ուրեմն սա նա է՝ որոյ է տէրութեն ամենայն սերմանց։ Օ զինչ է և Ջէմմին, կամ ոգի կամ այն։ Այաուած է, ասէ, որ վերակացուն է և զօրութիւնակիր ամենայն իրաց ծնանելոց։ Այս զի այլ կարծիցեն ունակ այսմ զօրութեն. բայց զաշխարհ, որ և ասացաւ՝ Աբամազդ ծնող և ծնիչ։ Այս զի այլուր զՋէմմին ասէ լինել բանաւոր ոգի իւրաքանչիւր ուրուք, ուստի և մի մի իւրաքանչիւրս, և զի այնպիսի ոգի աշխարհի աստուած է, յայն ապաքէն յանկի բանն, զի իբր հանրական Ջէմմն ինքն իսկ հոգի կարծիցի աշխարհի. ապա սա է՝ զոր Աբամազդն կոչեն։ Վասզի եթէ ամենայն Ջէմմն աստուած է, և ամենայն մարդոյ ոգի Ջէմմն, զհետ գայ՝ զի հոգի ամենայն մարդոյ աստուած իցէ. ապա եթէ ինքեանց իսկ զարհուրանս բերէ անտեղութիդ, ինոյ զայն ասել առանձինն և դերազանցութիւն Ջէմմն աստուած, զոր աշխարհի ոգի ասեն. և ահա սա է Աբամազդ։

ԳԻՐԻՆ ԺԲ

Յաղագս սեպհական գործոց Հերմայ և Արէսի։

ՁԳՏԵԱԼ սահմանել ինչ վասն Հերմէսի և Արէսի՝ ի մասունս աշխարհի, և՝ ի գործս այ որ՝ ի տարերքս, վերակացուս զնոսա արարին մանաւանդ գործոց մարդկան, մատակարարս բանախօսութեանն և պատերազմի։ Որով Հերմէսն եթէ արդարեւ դիպեալ և Նարատարախօսութեանն ունելոյն իշխանութիւն, ապա նմին իսկ թագաւորին ասասուածոց իշխել նա, յորժամ ըստ նորա Հաճոյից խօսի և Աքամազդ, կամ՝ ի նմանէ զխօսելոյն ազդակութիւն ստացեալ ունի, որ արդարեւ յանտեղեացն է։ Իսկ եթէ մարդկային բարբառոյ ևեթ իշխան Համարիցին զՀերմէս, ոչ է հաւանելի թէ Աքամազդ՝ որ յանձն առնու դիեզերացանել ոչ միայն զմանկունս՝ այլ և զանասունս, յորմէ Նուվինոս անուանեցաւ, չկամիցի յինքն գրաւել և զկընդամս մարդկեղէն բարբառոյ, որով առաւելութիւնք քան զանասունս։ և ահա սովիմբ նոյն ինքն է Աքամազդ և Հերմէս։ Վասն մեկնաբանութեանք նոցա զՀերմեայ՝ ցուցանեն թէ նոյն իսկ բանն կամ խօսքն ասի Հերմէս. քանզի առ լատինս Ներքուխուս, Համարի ստուգաբանել զփոխս ՚՚՚

զայնոսիկ՝ որք չէն այլ ինչ՝ բայց դևք, առ անսուրբ ոգիսն լինելով ազաւաւորք, յիրաւի ըմբռնեալ են յայնցանէ որ ոչ աստուածք են, այլ այսք պիղծք, որ և դևք։ Այսպա սմին օրինակի ոչ գտեալ նոցա վասն Աբէսի զաւորը ինչ կամ զմնան աշխարհի, յորում կատարիցէ նա զընուելն ինչ գործս, աստուած պատերազմի զնա կարդացին, որ է գործ մարդկան, այլ ոչ և նոցա փափաքելի։ Այսպա ուրեմն՝ ի պարգևել երջանկութեանն զնաղաղութեան յարակայ, բնաւ անգործ մնայր Աբէս։ Իսկ եթէ Աբէս նոյն իսկ պատերազմն իցէ, որպէս Հերմէս բան, երանի թէ որչափ քաջայայտ է չլինել նմա աստուած, նոյնչափ չլինիցի և պատերազմ առ՝ ի հնչելոյ նմա սուտանունն աստուած։

ԳԼՈՒԽ ԺԱ

Հաղագս աստեղաց ոմանց՝ զորս հեթանոսք յանուն դից իւրեանց կոչեցին։

Այլ գուցէ այն աստեղք իցեն աստուածք, զորս յանուն նոցա յորջորջեցին։ Վասնզի զմին յաստեղաց կոչեն Հերմէս կամ Երքուրիոս, այն է փայլածու. զմին Աբէս, հրատ. բայց անտանօր է և այն՝ կոչեցեալն Բամաղդ, լուսնթագ. և սակայն ըստ նոցա՝ աշխարհ է Բամաղդ։ Ընդ է զոր կոչեն Կռնոս կամ Սատուրնոս, երևակ. բայց և սմա ոչ փոքր գոյաւորութիւն տան, այսինքն է՝ զամենայն սերմանց. անդ է և ամենեցունց բազմանշոյլն՝ ի նոցանէ կարդացեալ Լիրոգիսէ կամ Լաղիկ, արուսեակն. սակայն և զնոյն Լիրոգիսէ համարեն լուսին. զորմէ ամենասպայծառ աստղէ՝ երբեմն զսակի ինձորոյ վէմ ածէ է աստեն ընդ Հերա և ընդ Լիրոգիսէ. քանզի զարուսեակն ամանք ընծայեն Լիրոգիսեայ, և այլք՝ Հերայ. բայց որպէս սովորութեանէ է, յաղիկ Լիրոգիսէ. զի բազմապոյնք են՝ որք Լիրոգիսեայ տան, և սակաւք յոյժ որ այլազա-

բար կարծիցեն ։ Իսկ ո՞ ոչ ծիծաղեսցի , լուեալ զի ամե-
նիցն Թագաւոր ասեն զ՚Քրիստոս , և նորա աստղն նուա-
զեալ է պայծառութենէ քան զաստղ՚Յիրոդիտեայ , ուր այն
չափ և այս լուսափայլագոյն պարտ էր լինել , որչափ ինքն զա-
րագոյն է ։ Պատճառս կցկցեն՝ յայն սակս աղօտագոյն է
բևեալ , զի գերակայ է , և կարի բացագոյն յերկրէ ։ Իսկ
արդ եթէ բարձրագոյն տեղի վայելչական է պատուակա-
նագունին , էր վասն Յուդաս ՚ի վերոյ կայ անդ քան զ՚Քրիս-
տոս , այսինքն երևակին քան զլուսնթագ . միթէ ար-
դեօք ստապատմէն առասպել՝ որ Թագաւորեցոյց զ՚Քրիս-
տոս , ոչ բաւեաց մինչև յաստեղս հասանել . և զոր ոչն
կարաց Յուդաս յիւրումն Թագաւորութենէ , և ոչ ՚ի կա-
պիտոլինին , տուաւ նմա յերկինս անդ ՚ի ձեռս բերել
Ընդէր դարձեալ՝ Յանոսն զաստղ ինչ ոչ ունի . Թերևս
զի աշխարհ է , և ամենայն ՚ի նմա են . բայց և՚Քրիստոս
աշխարհ է , և ունի աստղ . գուցէ արդեօք իրաւախոհ է
զեալ Յանոսի , փոխան միոյ աստեղ՝ զոր չունի ՚ի լուսա-
ւորաց միջի , ընկալաւ կերպարանս բազումս յերկրի ։ Այս
դարձեալ . եթէ միայն վասն աստեղացն Հերմէս և՚Քէս
համարեցան մասունք աշխարհի՝ առ ՚ի կարող լինելոյ ընդ
աստուածս զնոսա ունել , Թէպէտ և քան և պատերազմ
ոչ եթէ մասունք են աշխարհի , այլ գործք մարդկան ,
ընդէր ապա խոյոյ և ցլոյ և խեցգետնոյ և կարձի և
սոխալիսեաց՝ որք ՚ի համարի երկնային նշանակաց են՝ ոչ
միաստեղեայ , այլ իւրաքանչիւր բազմաստեղք գտանին
գերիվերոյ այլոցն Հաստատեալք ՚ի բարձունս երկնից ,
որոյ միօրինակ շարժումն զանմոլարն ներգործէ ընթացս
աստեղաց , սոցա ասեմ ոչ սեղանս ինչ կանգնեցին , ոչ պաշ-
տամունս , ոչ տաճարս , և ոչ բնաւ առ աստուածս կալան
զնոսա՝ գէթ ՚ի սկզբոր ՚ի ժողովրդականաց կարգի , Թող
Թէ ՚ի դասս ընտրելոցն դից ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Յաղագս Աղօղորմի և Աջահաւայ և այլոց գից ընտրելոց, զորս մատուցա աշխարհի համարեցան։

ՕՂՈՐՏԱՆ Թէպէտ և գուշակ ոք և բժիշկ համարեցան, բայց զի տայցեն նմա կայս 'ի մանն ինչ աշխարհի, ասացին և զնա արեգակին, և զհամածին քոյր նորա զԼնա-հիտ՝ նմանապէս լուսին և տեսուչ Հանապարհաց։ Ա՛ման որոյ և կոյս զնա վարկանին, իբր զի Հանապարհն ինչ ոչ ծը-նանի. և երկոքին նորա ունին նետս. այսու զի երկոքեան լուսաւորքս յերկինս ատեն անտի մինչև յերկիր արձակին զՀա-ռագայթս։ Համարին զԼեփեստոս՝ հուր աշխարհի, զՊոսիդան՝ ջուր աշխարհիս, զԱյդիս կամ զանդաթա-մետս՝ երկրաւոր և ստորերկրեայ մանն աշխարհի. զԻռո-նիսոս կամ զՏաքոս ազատ հայր, և զԱեմոտրէ որպէս երկիր մայր՝ վերակացուս առնեն սերմանց, զնա՝ արա-կանաց, և զսա՝ իգականաց. կամ զառաջինն՝ հիւթոց սերմանց, և զերկրորդն՝ չորութե՛ նոցին։ Այլ ահա զայս ամենայն վերածեն յաշխարհ, այսինքն յԱ՛ռամազդ, որ վասն այն ասացաւ ծնող և ծնիչ, իբրու արկող ամենայն սերմանց, և ներընդունող. ուր և մայր մեծ ասեն լինել զԱեմոտրէ, որով ոչ այլ ինչ իմանան, բայց երկիր. զնոյն կոչեն և Հերա կամ Յունոն։ Ասաի նմին ընծայեն զեր-կրորդ պատճառս իբրաց, Թէպէտ և Ա՛ռամազդայ ասացաւ՝ ծնող և ծնիչ լինել աստուածոց. քանզի ըստ նոցա՝ բովան-դակ աշխարհ է նա ինքն Ա՛ռամազդ։ Ա՛ռ և զԹենաս որովհետև վերակացու կացուցին մարդկան արհեստից, ոչ գիտելով Թէ յորժամ աստեղ զնա վերադեգնեն, ասացին կամ վերին եղեալ լինել, և կամ լուսին։ Որպէս և զԱս-տա՝ մեծ յաստուածուհին համարեցան, այսու զի է երկիր կամ հող. Թէպէտ և նմին և ընծայեցին զանասո-հուր աշխարհի՝ զդիւրապատրաստն 'ի պէտս մարդկան,

և ոչ զաստիճն զայն՝ որ Հեբեստոսին է։ Արդ այսու օրինակաւ զհամօրէն ընտրանաւ զաստուցեալ դիպս վարկանին լինել այս աշխարհ, զոմանս բովանդակապէս, և զոմանս ըստ մասանցն. բովանդակ՝ որպէս Արամազդ. և իբրու մասունք նորա, Տէմմն անուն՝ ոգի, և Վեմետրէ՝ մեծ մայր, և արև և լուսին, որ և Ապողոն և Դիանա։ Արեգ զմի աստուած յիրս բազումս սրոհէն, և մեզ զնայն մի իր բազմապատիկ ՅՕգնացուցանեն։ Օ՛ի ահա զմի աստուածն Արամազդ բազմացուցանեն, ասելով զնա՝ և բոլոր աշխարհ, և միայն երկինն, և միայն աստղ։ Վարձեալ զՀերա՝ դչիսոյ երկրորդ պատճառաց, այլ և օդ և հող. և եթէ յայլեսցէ Աիրոդիտեայ, աստղ է։ Դայն պէս Աթենաս՝ եթեր վերին է, և նա ինքն դարձեալ լուսին, զոր ՚ի խոնարհագոյն սահմանի եթերին համարին կալ։ Որպէս և զմի իր առնեն բազում աստուածս. զի Ձա նոյն է աշխարհ և Արամազդ. սոյնպէս Հերա է հող և մայր մեծ, և Վեմետրէ կամ երկիր։

ԳԻՐՔ ԺԴ

Թէ ինքն իակ Վարրոն յերկուանոքն ինն բարբառեցաւ զնչ կարծիս յաղագս դիցս

Արդ զոր օրինակ զայսոսիկ՝ զորս յարացուցի աղագաւ յիշատակելոյ, նոյնպէս և զայլսն, ոչ եթէ պարզաբանեն նոքա՝ քան թէ աղօտաբանեն. և ըստ բուռն վարելոյ տատանուտ կարծեացն՝ այսր անդր և աստի անտի մղին և դարձադարձ առնեն. մինչ զի և Վարրոն ինքնին երկբայել յաւէտ զամենայնիւ՝ քան հաստատել ինչ յանձին կալաւ։ Վանգի վճարեալ նորա յերից վերջին գրոց անտի՝ զառաջինն որ յաղագս ստոյգ կարծելոյ աստուածոց, ՚ի մուտս երկրորդ գրոցն՝ որ զանաստուդիսն է, այսպէս ասէ. "Եթէ ՚ի մտաւեսի աստ ՚ի մէջ բերից զերկբայական կարծիս զոյց, մի ոք ինձ մեղ դիցէ. զի որ ոք

„ 'ի լսելն պարտ վարկցի այլազգ ինչ դատել ինքն տեսցէ։
„ Այս դիւրաւ ևս բերիմ ընդ երկբայութիւն արկանել զա-
„ սացեալսն իմ յառաջնում մատենի, քան թէ զորս
„ յայսմ գրեմ, զամենայն առ հաւատոյս ունել„։ Յա-
պէս ահա ոչ միայն զգիրսն՝ որ զանատոյգ դիպ, այլ և զըս-
տուգիցն գրեալս ընդ անատոյգս դասէ։ Իսկ յերկրորդում
գրի յաղագս ընտրելոցն դիպ, նախադատեալ ինչ յա-
ղագս բնական դիցաբանութեանն որչափ'ի դէպ վարկաւ, ա-
պա ձեռնարկեալ 'ի ստութիս և 'ի պատիր յիմարութիս
քաղաքական դիցաբանութեանն, յոր վարէր զնա ոչ իրացն
ճշմարտութիւն, այլ հարկ նախնեացն օրինադրութիւն, ասէ.
„Յաղագս հասարակաց աստուածոցն հռովմէական ժո-
„ղովրդեան, որոց տաճարս նուիրեցին, և բազմապատիկ
„նշանակօք զնոսա մեծացուցին, գրեցից 'ի մատենիս
„ յայսմ. բայց որպէս ասէ Քսենոփանէս կողոփոնացի, ա-
„ ռաջի եդից զիմ կարծիս, այլ ոչ զհաւատոյս. քանզի
„ մարդոյ է կարծել զայսոսիկ, իսկ գիտել՝ Աստուծոյ է„։ Զայս
ուրեմն ոչ զգիտելի իրաց ինչ և կամ զհաւատարմաց, այլ
զկարծողականաց և զերկբայելեաց խոստանայ Ջառեալ կաղ
'ի կաղ, և ասել զիրաց որ ինչ'ի մարդկանէ կարգեալն։
Ո՞վ որպէս գիտէր Թէ գոյ աշխարհ, գոյ երկինն և երկիր,
երկինն լուսաւորօք պայծառացեալ, երկիր սերմամբք բեր-
բի, այլուիքն Հանդերձ, և որպէս աներկբայ համարէր՝ Թէ
բովանդակ այս կազմած և բնութիւն աներևոյթ ինն հզօր
զօրութիւնք մնտեսեալ վարի, ոչ կարող էր ըստ նմին օրի-
նակի հաստատել Թէ Հանման իցէ աշխարհ, կամ ստու-
գել զԱռնոսն՝ Թէ զնծրդ հայր գոլով Ադամազդայ, ա-
պա 'ի Թագաւորել նորա՝ ինքն եղև Հպատակ, և զայլս
այսպիսիս։

ԴԻՅԱՒՈ ԺՈ.

Որ էջէ հաւանելի պատճառ ածելոյ հեթանոսական մոլորութիւն։

Ա՛ՅՍՈՑԻԿ պատճառ հաւանողական այն կարծել, զի մարդիկ զոլով դոցա, որք միանգամ առ ընդհուպս ածարել զնոսա ախորժեցեալն, ըստ իւրաքանչիւր նոցա հանձարոյ և վարուց և արարոց և դիպուածոց՝ սահմանեցեալն պաշտամունս և տօնս. և սոքին առ սակաւ սակաւ սողոսկեալ յանձինս դիւանմանս՝ սիրողս խեղկատակութեց, ընդարձակագոյնս ծաւալեցան, պատուհաս՝ ի քերթողացն ստաբանութեց, ՚ի նոյնս սադրելով և ոգւոցն խաբէուէ։ Ա՛ն զի դիւրաւ ևս մարթի էր պատահել, թէ որդի մի ամբարիշտ ինքն, կամ յամբարիշտ հօրէ իւրմէ սպանուած ունելով երկիւղ, և ակն դնելով թագաւորութեն, մեծաժեալ իցէ զՀայրն յաթոռոյ, քան զոր դոքայդ ըստ Ա՛ր բոնի մեհենաբանեն՝ թէ յայն սակս Կռոնոս Հայրն պարտեցաւ յԱ՛րամազդայ յորդւոյ իւրմէ. վասն զի նախ է պատճառն՝ որ ցուցակ է Ա՛րամազդայ, քան զերծին ցուցակ Կռոնոսի։ Թէ այդպէս էին իրքդ, ոչ բնաւ Կռոնոս առաջինն լինէր, և ոչ Հայր Ա՛րամազդայ. քանզի միշտ քան զերծին յառաջէ պատճառն, և ինքն ոչ ծնանի երբէք ՚ի սերմանէ։ Ա՛յլ ՚ի ջանալ նոցա զառասպելս ստոյօգս կամ զմարդկան իրագործութեիս բնաւորական պատճառադրութիւնքն սեւեռեալ, արդարեւ ՚ի տագնապ արկանեն և զարս բազմամիտս, ընդ որոց մոլորումն ախտակցել արժան է։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Որովք մեկնաբանութիք պատճառս յոգին պաշտելոյն Կռնոսի։

ՕՆԴՈՆՈՍ, ասէ, վասն այն Աստուածոս կոչեցեալն, իբր զի գիւրական ծնունդս սովոր է կլանել, այնու զի սերմանք անդրէն ի նոյն ծնողն դառնան. և զի ասի՝ Թէ փոխանակ Ք.րամադրայ առաջի եղաւ Կռնոսի կոչտ Հողոյ առ ի կլանել, նշանակէ ասել Պ.արրոն՝ Թէ մինչ չև արօրադրու-Թէն նոպաստիլ հնարեալ, ձեռամբ մարդկան լինէր սերմանացանել զարմիս։ Ք.այս ուրեմն ըստ այդմ արժան էր Հողասեղ զԿռնոս, և ոչ սերմն. քանզի Հողն է՝ որ ըստ իւրոց ինչ կլանէ զառ յինքեանէ ծնեալսն, յորժամ ի նմանէ նէ բուսեալքն սերմանք՝ անդրէն ի նմանէ ընկալեալ լինին։ Եւ որ փոխան Ք.րամադրայ ասի զկոչտն յինքն ընդունել, զինչ յարմարութիւն ունիցի առ այն՝ Թէ մարդկան ձեռամբ ծածկի սերմն ընդ կոչտիս Հողոյ. միթէ չայն սակս չեզև կէաւ իբրև զայլսն, իբր զի ծածկեալ էր ընդ կոչտիս. քանզի այնպէս իմն ասէն զայդ, որպէս Թէ որ ընդ կոչտն ընկէց առաջի, ի բաց տարեալ իցէ զսերմն. ըստ որում Կռնոսի առաջի մատուցեալ ասէն զկոչտն, և ի բաց առեալ զՔ.րամադր. ուր ընդ հակառակն՝ կոչտոյն ծածկեալով զսերմն, գիւրակուլ և առնէր զայն. և դարձեալ, այդու տարազու սերմն լինի Ք.րամադր, և ոչ սերմանն պատճառ, որպէս փորք ինչ յառաջ ասացեալ էր։ Ակայն զի առնիցէն մարդիկ, որոց ձեռն արկեալ ի մեհենաբանել գյիմարութիւն իւրա՝ չգտանէն ասել ինչ մտաւոր։ Պ.մանգազ կրկ Կռնոս, ասէ Պ.արրոն, ի նշանակ երկրագործութիւն։ Եւ ակայն անշուշտ ի Թագաւորել նորա՝ երկրագործութիւն դեռ ոչ էր. ուստի վասն առաջնոց քան զնա ժամանակաց ասի՝ ըստ որում նա ինքն առասպելացն մեծիւղ խորհրդածէ, Թէ վաղնջականքն մարդիկ յինքեանէակաց սերմանց երկրի կերակրէին. գուցէ աբ-

դեօք ՚ի կորուսանել արքունի գաւազանին՝ առեալ էցէ ՚ի ձեռն զմանգաղ. որպէս զի որ յառաջն Թագաւոր էր անվաստակ, յորդւոյն Թագաւորել՝ լինիցի մշակ աշխատաւոր։

Ի՚սկ դարձեալ Ի՚արբոն. յայն սակս ոմանք զտղայս զԱՀեն Կռնոսի՝ իբր կարքեդոնացիք, և ոմանք նա և զչափահաս՝ իբր գաղղիացիք, վասն զի ամենայն սերմանց ընտրելագոյն է ազգ մարդկան։ Ի՚ալ զի պիտոյ է յաղագս անագորոյն այսր նանրութեանս ասել բազում. զայն յաւէտ յուշի կալցուք, զի մեհենաբանութիւնքն այսպիսիք ոչ առ Ձիմարիան ՝ած ունին զանիարկումն, ՚ի կենդանի բնութենին, յանմարմինն և յանփոփոխն, յորմէ երանելի յաւիտենից կեանքն է հայցելի. այլ կատարած նոցա ձգի յիւրա մարմնեղէնս, ՚ի ժամանակեայս, ՚ի փոփոխելիս և ՚ի մահկանացուս։ Իսկ զի ասի յառասպել, Թէ Կռնոս զՀայր իւր զԻ՚ւրանոս զերկին՝ ներբևնացոյց, զայն նշանակէ ըստ Ի՚արբոնի, Թէ առ Կռնոսի կայ սերմն ածային, և ոչ յերկինս. որով լինի իմանալ՝ Թէ յերկինս ՚ի սերմանց ինչ ոչ ծնանի։ Ի՚ալ արդ եթէ երկնից որդի է Կռնոս, Ի՚բամազդայ լինի որդի. քանզի յաձախագոյն և անշուշտ զԻ՚բամազդ համարին նոքա երկինս։ Այս ահա այսպէս ոչ ՚ի Ձիմարտութենէ Թեւադրեալքն՝ յոլովակի առանց ուրուք մտելոյ ինքնակործան լինին։ Իսկ այն զի յունական ձայնիւ Կռնոս անուանեցաւ, որ զմիջոց ժամանակի նշանակէ, յայտ առնէ ըստ Ի՚արբոնի՝ Թէ առանց ժամանակի ոչ արդիւնաւոր սերմն։ Ի՚յսոքիկ և այլ ևս բազում ինչ ասացեալք զԿռնոսէ՝ ամենայնին հայ ինն ՚ի սերմն. սակայն եթէ Կռնոս այնչափ կարողութիւն բաւական էր ՚ի գործ սերմանց, զինչ պէտք էին առ այդ ՚ի խնդիր ելանել այլ ևս դից, մանաւանդ Կաքոսի ազատի, և ազատուհւոյն Վեմարթեայ. զորոց դարձեալ այնչափ ինչ խօսի Ի՚արբոն յաղագս խնդրոյ սերմանց, որպէս այն Թէ բնաւ ինչ խօսեցեալ ոչ էր զԿռնոսէ։

ԳԼՈՒԽ Ի

Յաղագս պաշտամանց Եղիսաբեան Դեմետրեայ։

Ասէ՝ ի պաշտամունս Դեմետրեայ նշանաւոր էին ոտնքն Եղիսաբեան՝ առ աթենացիս կարի մեծահանդէս, Ո՛չ այսցանէ ոչ առնէ մեկնաբանութիւն Արքոն՝ բայց որչափ յաղագս ցօրենոյ էն խօսք գտեալ ի Դեմետրեայ, և յաղագս Պերսեփոնեայ յափշտակելոյ ի սանդարապետէ։ Ի՛նչ ասէ թէ Պերսեփոնէ նշանակէ զարգասաւորութիւն սերմանց. և զի առ ժամանակ մի պակասեաց այն, և ընդ անպտղութիւն սգայր երկիր, հնարեցան այն կարծելք՝ թէ զդուստր Դեմետրեայ զարգասաւորութիւն, որ ի սիրելոյ անտի՝ Պերսեփոնէ ձայնեցաւ, յափշտակեալ լեալ գժոխեան Ի՛ադէս, և արգելեալ ի սանդարամետս. և այս անցք ի կոծ հասարակաց հանդիսացան. և իբրև անդրէն եղև արգասաւորութիւն, և Պերսեփոնէ յաղաւթից դարձաւ, ցնծութիւն ոտնք յայսմ պատճառէ սահմանեցան։ Ի՛սկ ապա Արքոն, թէ բազում և այլ ինչ աւանդի յաղագս պաշտամանց Դեմետրեայ, որք ի գիւտ արմտեաց և ի նմին ակնարկութիւն։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յաղագս գարշութիւն պաշտամանց Լիբերի, իմն ազատ հօր, որ և Բաքոս։

Ասէ թէ յոր վատթարութիւն գարշ ձգեցան Լիբերի՝ ազատի ասեմ Աթոսի՝ պաշտամունք, զոր տեսուչ հաստեցեին խոնաւութիւն սերմանց՝ ոչ միայն որ ի պտղոց մկնի հիւթք, յորս զգերակայութիւն գոգցես տանի գինեին, այլ և սերմանց կենդանեաց, արդարեւ դանդաղիմ ասել սակս երբ

կարութիւնէ բանիցն . այլ ՚ի պատճառս ամբարհաւաճ նոցա յայն թանձրամտութենն չէ դանդաղելի : Ընդ այլոց բանից զրոյիք զնոց առնել ստիպիմ առ յոլովութենն , ասէ և զայս Պաւղոս , թէ ՚ի ձանձապարհագլուխս Թաւլիայ կատարին պաշտամունք ինչ Իբերոսի այնպէս անպատկառ լըքութիւ , մինչև առ ՚ի պատիւ նորա զամօթալի առակաս արուսյ մեծարել , ոչ էթէ ամօթով ինչ ՚ի ծածուկ , այլ հրապարակաւ խայտալով անօրէնութեն : Վասնզի ՚ի տօնս Նաքոսի մեծարուք զետեղեալ ՚ի կառս զզալիր անդամն , նախ ՚ի վինամկնս շրջեցուցանէին , ձգեալ ապա մինչև ՚ի քաղաք անդր : Ոսկ ՚ի լաւինեան աւանի զամիան ողջոյն ձանձին Նաքոսի միայնոյ . և յայն աւուրս ամենեցուն բերանք լի էին խօսիւք աղտեղեօք , մինչև զանդամն զայն շուրջ ածեալ ընդ հրապարակս՝ տանէին Հանդուցանէին ՚ի տեղւոջ իւրում . և էր օրէն միւմ ՚ի տանտիկնոց՝ դնել Հանդիսիս յայն անդամ անպարկեշտ զպատկ վայել չազարդ : Յոյս օրինակաւ ապաքէն Հաշտ առնել կամէին զ Իբեր ազատ աստուածծ վասն բերոց սերմանց , և բացամերժել յանդոց զբժժանս . մինչև զայն ինչ Հարկ էր տիկնոջ առնել հրապարակաւ , զոր և ոչ պոռնկի Թողացուցանել պարտ էր ՚ի Թատրոնի յանդիման տիկնոց : Յոցիկ աղագաւ ոչ բաւական համարեցաւ Ադոնոս միայն ՚ի տեսչութենէ սերմանց , զի պատճառս ունիցի անձն աղտեղասէր բազմացուցանել զդիս , և ՚ի միայնոյ Ձմարտին ՚ով յետս կացեալ սակս անմաքրութենն՝ առաւել անմաքրութենն տարփանօք անձնատուր լինիցի ՚ի բազում աստուածս սուտս , զորբապղծութենէն անուանելով սրբագործութիս , մանաւանդ զանձն ՚ի պղծութէ խաւժանի այսոց պղծոց :

ԴԻՏՈՂ ԻՒՆ

Յաղագս Պոսիդոնի, Սաղակիայ և Վենիլեայ։

ԱՒՆԵՐ ապաքէն Պոսիդոն իւր՝ի կին զԱղակիա, զորմէ ասացին լինել ստորին ջուր ծովու. և առ ինչ ասպա յաւելաւ նմա և Վենիլիա, բայց միայն զի առանց իրաւացի հարկի պաշտամանց՝ առ հեշտութեանն ևեթ ոգւոյ տրփացելոյ կոչունք դիւացին յաձախեսցեն։ Այլ մատիկն յառաջ մեհենաբանութեանն չքնաղ՝ ածաբանուէնն՝ որ պատճառագրութեանն լուեցուսցէ թերևս զմեզ՝ի հշտամբելոյ։ Այս, Վենիլիա այն կոհակ կամ փրփուր է, որ յափն կոյս գայ. իսկ Աղակիա այն է, որ՝ի ծով անդր յեռս գառնայ։ Ընդէր ասպա երկու դիցուհիք լինին, ուր նոյն մի կոհակ է՝ որ գայ և գառնայ յեռս. ոչ ահա խելայեղ զեղխուն է այդ անկղնտացեալ՝ի բաղմաճոռութեանն. զի թէպէտ ոչ երկպատակի ջուրն՝ որ գայ և դնայ, սակայն պատճառանաւք այսր նանրութեանն երկուց դիւաց գալով՝ի կոչունս, առաւել ևս շաղախի հոգի մարդոյ՝ որ երթայ և ոչ ևս դառնայ։ Վասն հարցանեմ, ով Վարրոն, և կամ ձեզ ընթերցողք՝ զգրուածս արանց խմաստնոց, որք սպարծիքդ մեծ ինչ ուսեալ, տուք բացայայտութեանն այսմ, ոչ ասեմ ըստ մշանջենաւոր անփոփոխ բնութեանն՝ որ միայն է ած, այլ գէթ ըստ հոգւոյ աշխարհի և ըստ մասանց նորա, զորս կարծեաք լինել աստուածս Հմարիտս։ Օ այն մասն հոգւոյ աշխարհիս՝ որ ընդ ծով չորհի, կացուցիք ձեզ աստուած Պոսիդոն անուամբ. թողցուք ձեզ զայդ մոլորութեանն. այլ միթէ և կոհակն հարեալ ընդ ափն՝ և անդրէն՝ի ծով խոյտակեալ՝ իցէն նոյնպէս երկու մասունք աշխարհի, կամ երկու մասունք հոգւոյ աշխարհի. ո՛՝ի ձէնջ այնպէս անմանայցէ առ՝ի հաւանել այսմ։ Այս առ ինչ ասպա երկուս աստուածոյս ձեզ բաժանեցին, բայց զի խմաստնոյն ձերոյ առաջնոյ փոյթ եղև՝ ոչ եթէ ընդ տեսչութեանն

բազմաց լինել ձեզ աստուածոյ, այլ զի տիրեսցեն ձեզ գնք բազումք, որք ընդ այնպիսի ունայնութիւս և սատանայ զուարճանան։ Իսկ ընդհէր Պաղակիայն կորոյս ըստ մեկնութեանդ զտաղանդն մանն ծուլոյ՝ որով ի ներքոյ կայր առն իւրում Պօսիդոնի. քանզի զնա մակընթաց և տեղատու առնելով ձեր, ի վերին երեսս զետեղեցիք. զուցէ արգելօք զայրացեալ Պենիլեայ որ իբրև չարձառաւ, տալ բազիր արար զայր իւր յերեսաց ծովոյ։

ԳԼՈՒԽ ԻԳ

Յաղագս երկրի կամ հողոյ գետնոյ՝ զոր Պարրոն աստուած լինել կատարեալ, այնու զի հոգի աշխարհի ըստ նորա աստուած կարծելով, յածի ընդ այս տարբեր մանն մարմնոյ իւրոյ, տպաւորեալ ի նմա զօրութիւն ածելոյն։

ԱՅՐԿԻ միայն է, զոր լցեալ տեսանելիք իւրովքն կենդանեօք. այլ ընդհէր արդեօք զմեծ զայս մարմին ի տարբերայ միջի և գնտարհագոյն մանն աշխարհի աստուած համարին։ Պվերևս զի բարեբեր է. հիմ ապա մարդիկ ոչ առաւել և իցեն աստուածք, որք առաւել պտղաբերք առնեն զերկիր մշակելով. յորժամ երկրագործեն զայն, և ոչ յորժամ երկրպագեն։ Պայլ ասեն. մանն հոգւոյ աշխարհի յածեալ ընդ այն՝ ածացուցանէ։ Պզոպէս թէ ոչ յայտնագոյն և իցէ հոգի՝ի մարդիկ, ընդ որոյ գոյութիւն չիք բնաւ երկբայել. և սակայն ոչ առ աստուածս գրեալ են մարդիկ. և մեծապէս ցաւելի այն՝ զի աստուածոցն այնոցիկ՝ քան զորս լաւագոյն են ինքեանք, ի ներքոյ նուաճին և աշխարհելի մոլորութիւն՝ի պաշտել զնոսա և յերկրպագել։ Պպաքէն նա ինքն Պարրոն՝ի մատենի անդ որ յաշագս ընտրելոց դից, երիս աստիճանս հոգւոյ լինել ասէ յընդհանուր բնութեան. մի՝ որ անցանէ շրջի ընդ համօրէն կենսական մասունս մարմնոյ, և զգայութիւն ոչ ունի, այլ միայն ազդումն առ՝ի կեալ. և այս

զօրութիւն, ասէ, սիրէ ՚ի մերում մարմնի ընդ ոսկերս, ընդ երկնգունս, ընդ հերս. որպէս և յաչխարհի ծառք առանց զգայութեան մնանին և անէն և կեանն ըստ իւրեանցն եղանակի։ Երկրորդ աստիճան հոգւոյ է՝ յոր մէմ զգայութիւն. և այս զօրութիւն ազդէ յաչս, յականջս, ՚ի հնգունս, ՚ի բերան և ՚ի շօշափելիս։ Երրորդ աստիճան հոգւոյ է գերագոյն, հոգի բանական կամ իմացական, որ և մտաւք է ճանաչել. և յայսմանէ անբաժ են ամենայն մտկականացուք բաց ՚ի մարդոյ. և զայս մնան հոգւոյ աշխարհի ասէ լինել աստուած. և սա է, որ ՚ի լատին բարբառ ձէնէռս ասի, այն է ոգի կամ այս։ Ոսկ յաչխարհի քարինք և հող զօր տեսանելեաք և առանց զգայութեան, են իրրև ոսկերք և երկնգունք այդր աստուածոյ։ Եւ արեգակն, լուսինն, աստեղք՝ զօրս տեսութեաբ զգամք, որովք և ինքեան աշխարհ զգայ, են զգայարանք նորա. իսկ երեք՝ է բուն հոգի նորա. որոյ զօրութեանն, ասէ, Տաճեալ յաստեղատունս անդր՝ճաճացուցանէ և զնոսա. որպէս և զօրութեանն որով յածի ընդ երկիր՝ առնէ զհող աստուածուհի. իսկ որով յածի ընդ ծովն Տամատարած՝ լինի աստուած Պոսիդոն։

Եւ արդ զարձցի ՚ի բնական կարծեցեալ դիցաբանութեանն այսի՝ յոր խոստացաւ Վարրոն՝ ոգի առնուլ փոքր ի մի, քանզ գոլով ՚ի բազմապատոյան շրջանացս։ Զարձցի աւեմ անդրէն ՚ի քաղաքականն դիցաբանութիւն. ուր կայցէ զնա տակաւին՝ վայրիկ մի և Տառել զայսմանէ։ Եւ զայսմանէ խօսիմ տակաւին, եթէ քարինք և հող՝ իցեն նմանք ոսկերաց մերոց և երկնգանց, նոյնպէս թէ չունին սոքա իմացողութիւն, որպէս և ՚ի զգայութիւն անբաժ են. կամ եթէ յայն սակս իմացողութիւն լինել կարծիցի ՚ի մեր ոսկերս և յերկնգունս, վասն զի կան ՚ի մարդուն՝ որոյ կայ իմացողութիւն. այլ զայս ասեմ, թէ այնչափ անմտական է աստուածս զոսոսս ասել յաչխարհի, որչափ անմիտ է՝ որ զոսկերս ՚ի մեզ և զերկնգունս մարդս լինել ասիցէ։ Այսկայն զայսոսիկ ընդ իմաստասիրաց թերևս Տառաբանել արժան իցէ. առ ժամն ընդ քաղաքականիս դեգերիմ առ

կաւին . քանզի և ինքն Պաւղոս՝ Թէպէտ և առ փոքր մի կամեցաւ յաղաւթսն բնական դիւցաբանութենն ամբառնալ զգլուխ , սակայն դեռ յայսմ գրի դէպ երեսիւ , և ի նոյն ուշ ունելով , անմարկուածի եւեթ արար միւսումն , այնու պատճառանօք՝ զի մի կարծեսցի Թէ հովմայեցիքն առաջինք և կամ այլ քաղաքք վայրապար լինչ պաշտէին զՏէլլոսն և զՊոսիդոն , իմա զերկիր և զծով . Այլ առայժմ զայն ասեմ , Թէ մանն այն աշխարհի հոգւոյն՝ որ ընդ հողն չորի , որովհետև երկիրս է մի , ընդէր ոչ կացոյց և մի աստուածուհի . և եթէ այնպէս իսկ արար , ոչ ինայ սանդարապետն Յեղիս եղբայր Յամազդայ և Պոսիդոնի , զոր Տարուստ Հայր կոչէն . ոչ լծակից նորա Պերսեփոնէ , որ ըստ այլում կարծեաց բացատրելոյ ի նոյն գիրս՝ ոչ Համարի արգասաւորութեի հողոյ , այլ խոնարհագոյն մանն : Այսպէս Թէ ասիցեն , մանն աշխարհի հոգւոյն՝ յորժամ յածի ընդ վերին մանն հողոյ , Տարուստ Հայրն ածացուցանէ . և յորժամ ընդ խոնարհագոյնն , զոր Պերսեփոնէ ածացուցանէ . ապա երկիրն այն՝ Տէլլոսն կոչեցեալ՝ զինչ լինիցի . քանզի որ ինչ ինքն էր բոլոր , յերկուս մասունս և յերկուս դիս բաժանեցաւ , մինչ զի գոհանել չէ Հնար՝ որ այն երրորդ իցէ , և ոչ . բայց եթէ ասել՝ երկոքին սորա Յեղիս և Պերսեփոնէ՝ են մի և նոյն աստուածուհին երկիր . որով ոչ և երեք են , այլ մի , կամ երկու : Այլ սակայն երեք ասին , երեք Համարին , երեք պաշտին՝ ունելով զիւրեանց սեղանս , զմատրունս իւրեանց , պաշտամունս , դրօշակաց , քուրմն յատուկ . որով՝ ի պղծութիւնս խաբէայ դիւաց իւրեանց շաղախեալ կան պաշտելեացն ոգիք : Յասացեն դարձեալ ընդ որ կողմն հողոյ յածի այն մանն հոգւոյ աշխարհի՝ որ զՏէլլուսինն ածացուցանէ : Ըստ այդպէս , ասէ . այլ մի և նոյն հող ունի կրկնակ զօրութիւն , զարուսական՝ որով զսերմանս արտադրէ , և զիպական՝ որ զսերմն ընդունի և տածէ . ուստի յիպական զօրութէն ասացաւ Տէլլոս , և յարուսականէն՝ Տէլլուսին : Այս էր վասն ասելս քուրմքն՝ ըստ ակնարկելոյ նորին Պաւղոսի , յաւելեալ այլ ևս երկուս՝ չորից դից ընծայեն

զնոյն գործ ածականաւ, իմա Տէրեսի, Տէրեսմանի, Աստղիկ, և Լուսոյ, և Լուսնի։ Զերկուց առաջնոցն արդէն ասացաւ. իսկ Աստղոյ կամ տածողն՝ վասն էր. զի ի հողոյ մնանէին, ասէ, ամ ծնեալք։ Իսկ ընդէր Լուսոյն կամ վերադարձի. վասն զի, ասէ, ամենայնքեան վերստին ի նա փոխադարձին։

ԿԱՅԻՍ ԻՒ

Յաղագս մակդիր անուանց Տէրեսի և կամ երկրի, Անշանակութեաց նոցա, որք ԶԷ և բազմաց իսկ լինին նշանակիչք, չէ պարտ այնու աստուածս բազում կարծել։

Այլ մի և նոյն երկիրն կամ հող՝ ըստ քառատպատիկ զբուԶէն կարող էր քառեակս ունել վերադիր անուանս, և ոչ եթէ աստուածս չորս կացուցանել. զոր օրինակ և Բամազդ մի է, և բազմանուն է. և Հերա մի, այլ բազմանուն. յորս յոքնապատիկ զօրուԶէն ասի միում աստուածոյ կամ միում աստուածուհւոյ լինել անկ. և անուանցն բազմութեէն ոչ բազմացուցանէ և զաստուածսն։ Այլ արդ զոր օրինակ և վաստիար կանայք տաղտկան երբեմն և յետս կան ի բազում հոմանեանց՝ որոց տրփանօք ի խնդիր եղեն, ըստ նմին օրինակի և հոգի անարգ անկղտացեալ յանսուրբ ոգիսն՝ զաստուածսն բազմացուցանելով, հեշտանայ յօրովակի ի պղծութիւնս նոցա տալով զանձն, բայց է երբեք զի և տաղտկանայ։ Վանգի և Այրդն ինքնին առաԹահարեալ գոգցես ընդ խուժան աստուածոցն, մի աստուածուհի լեալ դնէ զՏէլլոս. ասէ. “Օ նոյն ասեն՝ ,, մայր մեծ, առ որում կայ Թմբուկ՝ որ նշանակէ զտիեզ ,, երքս. և աշտարակք ի գլուխս նորա՝ նշանակեն զքա ,, ղաքս. աԹոռք կան գնալոյ շուրջանակի, զի ի շարժել ,, ամենեցուն՝ ինքն անշարժելի կայ։ Ի սպասու աստուա ,, ծուհւոյս կան քուրմք ներքինացեալք, նշանակել ԶԹ որք ,, սերմանց պէտս ունին, պարտ է նոցա գործել զերկիր, զի*

,, ամենայն 'ի նմա գտանի։ Այն զի եղեալքն առ նովաս
,, յար 'ի չարժման են, հրամայի երկրագ ործայ՝ մի նասիլ
,, բնաւ, զի գոյ նոցա վաստակել միշտ։ Ամբռանցն
,, հնչիւն նշանակէ զհունչիւն երկաթի գործեացն վարե-
,, լոց 'ի մշակել զանդաստան. և բամբիռն 'ի պղնձոյ է,
,, վ'ր զի մինչ չև գտեալ էր երկաթ՝ պղնձով գործէին զեր-
,, կիր առաջինքն։ Ընդ նմա դնեն առիւծ անկապ և հան-
,, դարտիկ, ցուցանել թէ ոչ գոյ ազգ գեհենոյ խոպան և
,, կորդ՝ որում չիցէ մարթ կակղել և մշակիլ.։ Յետ այսց
բանից յաւելու Արրեան. "Օ՜ հող զմայրն՝ բազում ա-
,, նուամբք և կոչմամբք ձայնելով Համարեցան աստուածս
,, բազում լինել։ Օ՜ հող Համարեցան լինել Ապա՝ իբր
,, աստար գործոյ կամ Նոխուէի, զի գործելովն լինի լա-
,, ւագոյն. մայր, զի բազում ինչ իրս ծնանի. ուժ, զի
,, ուսեալ մատակարարէ. Պերսեփոնէ, զի 'ի նմանէ սերմ
,, ևն արմտիք. Վեստա, զի խոտովք զգեստաւորի։
,, Յապէս և զայլ աստուածոչինն յայս 'ի մի վերածէն,
,, ասէ, ոչ անպատճառ.։ Այս ուրեմն եթէ մի աստուա-
ծուհի է, որ ըստ Նշմարտութեանն և ոչ նա է, զինչ այլ ևս
'ի բազում մատաբերեն. այնմ միում եղիցին բազում ա-
նուանքդ, այլ ոչ եթէ այնչափ բազմաթիւ դիք որչափ և
անուանքն։ Այլոց սակայն նախնեացն մոլորելոց զօրութի
Նոխանայ, և զնա ինքն զԱրրեան Նմիեալ յետ այնպիսի
Նանաչման տատանեցուցանէ, զի յաւելու ասել. "Ընդ
այսոսիկ ոչ դիմամարտի նախնեացն կարծիք, 'ի Համարել
յետնոցս՝ թէ բազում աստուածք են այսոքիկ.։ Օ՜ խորդ
ոչ դիմամարտիցի, ուր այլ է ամենևին միում աստուածոյ
բազմանուն լինել, և այլ է բազում աստուածս լինել։ Այս,
բայց մարթ է իրիք մի իմն լինել, և բազում ինչ իրս յին-
քեան ունել։ Ընդունիմ և ես թէ 'ի մի մարդ իրք բազմք
գտանին. միթէ վասն այն և բազում մարդիկ լինիցին.
այնպէս թող 'ի մի դիցուհի բազում իրք գտցին. և միթէ
այնու և բազում աստուածուհիք։ Սակայն որպէս և կամ
է նոցա, բաժանեացեն, Հաւաքեացեն, բազմացուցեն, կրկ
նապատկեացեն, ամիսոփեացեն զդիս իւրեանց։

Ա՛յս են աւադիկ Տէրոս մեր մեծի քաջմատան խորհրդածութիւնք, ուստի ամենայնին վերածի յապականացուսերմանս, և՝ ի մշակել զերկրագործութիւն։ Իսկ արդ յայս՝ ի սոյն պատճառս սահմանեալքն՝ բամբիռն, և աշտարակք, և հաւք կրճատեալք, և անդամոց խեղկատակ խաղք, և բամբռահարութիւն, և առիւծուց սուէրթագրութիւն, մինչ խոստանայն ումեք գյաւիտենից կեանս։ Մինչ յայն սակս նեբքինիք ծառայեն աստուածուհւոյ մերոյ, նշանակել մեզ սերման կարօտեալքն պարտին սպաս տանել երկրի, ուր մանաւանդ նոյն իսկ ծառայութիւնն անսերմին առնէ զնոսա. արդեօք արբանեկելոյ այսմ աստուածուհւոյ, ստանան երբեք զսերմն՝ որում կարօտին, մինչ ծառայելով նմա՝ զոր ունին զսերմին՝ կորուսանեն։ Մինչեւ ե՞րբ այդ, մինչ եղծաբանել։ Այս ոչ՝ ի միտ առնուն՝ մրչափ բռնացեալ են առ նոսա ոգիքն ժանտք, որ չիչխելոյ մեծս իմն խոստանալ այսոքիւք պաշտամամբք, ժպրհեցան զկարի գժնդակին պահանջել։ Մինչ երկիր չէր համարեալ իբր աստուած, տակաւին ձեռն՝ ի գործ առնելին մարդիկ մշակել զայն, և արդիւնս անտի ժողովել. այլ ոչ մինչ նմա ծառայելոյ կորուսանել վասն նորա զսերմանս։ Մինչ աստուած չլինեք կարծեալ երկիրս, այնպէս արգասաւոր լինեք օտարի ձեռօք, որ ոչ ստիպէր զմարդ լինել անարգասաւոր իւրեան ձեռօք։ Պարզին որ՝ ի տունս Հաբոսի տիկինն որ պարկեշտ պահէր զառնի ամենայն՝ ի տեսիլ բազմանէին, ուր գուցէ յամենի և ընդ քիրան մնանէր այր նորա, եմէ արդարեւ կայցէ՝ ի մարդ պատկառանի, և որ՝ ի հանդիսի հարսանեաց զնոր հարսն բազմեցուցանէին՝ ի ծունկս անամենին Պրիապոսի, այնորիկ ասէմ կարի տորինք և մեմեալք էնբան զներքինացելոցս ծառայուն, որ միօրինակ զպղերն է և դժնդակ. յորում դիւական արուեստիւ այնպէս իմն ծանակի ազդ արուի և իգի, պղ և ոչ մին բառնի իւրովք վիրօքն։ Մինդ երկիւղ է՝ ի կախարդանաց արատբերից, ասա չէք երկիւղ՝ ի հատմանէ անդամոց. անդ անպատուի արգարեւ ամենիասնուն նորատարսինն, այլ ոչ բառնի ոչ բերնասորուն, և ոչ կուսուն. իսկ ասա այնպէս հատանի արուն, պղ ոչ՝ ի կին փոխարկի, և ոչ այլ մինչ։

ԳԼՈՒԽ ԻԹ

Ջոր մեհնաբանութեի հնարեաց վարդապետութեի իմաստնոցն Յունաց յաղագս հատանն Քրիստոսի։

ՈՉ յիշատակեցաւ աստանօր Քրիստոս, և ոչ փոյթ կալաւ Աբգարն մեհնաբանութեե նորա. որոյ առ յիշատակ սիրոյն՝ Թադէոսն զհատուածն յանձն առնու։ Ապակայն Յունացն իմաստունք ոչ լռեցին զխորհրդականն հանճարիմաց պատճառս, յասել Պորփիւրի քաջ իմաստասիրի, թէ սակս գարնանային զուարթութեե երկրի՝ որ վայելչագոյն է յեղանակս, Քրիստոս նշանակ է ծաղկանց. և յայն սակս հատեալ ասի, վասն զի ծաղիկ յառաջ քան զպտուղն անկանի։ Քրիստոս ուրեմն ոչ եթէ զմարդ ոք Քրիստոս կոչեցեալ՝ ծաղկի նմանեցուցին, այլ զարուեթիս նորա. զի այսոքիկ անկան՝ մինչ նա կենդանին էր. մանաւանդ թէ ոչ անկան, ոչ խլեցան, այլ իսպառ խզեցան. և ոչ՝ի ծաղկին կորնչել պտուղ ինչ արդիւնացաւ, այլ առաւել անպտղութեի։ Քրիստոս զինչ ինքն ինաց, և հատեղոյն զինչ այլ ինաց, և զինչ այնու նշանակիցէ, զինչ ինչ ակնարկիցէ. զոր մեհնաբանութեի յառաջ քերեն։ Արդ ուր զայսոսիկ վայրապար ստեղծաբանեն առանց գտանելոյ ինչ, միթէ հաւանեցուցանէ՞ն թէ առաւել հաւատալ արժան իցէ զոր ինչ յաղագս հատեալ մարդոյ ծանոյց համբաւն, և՝ի գիրս աւանդեցաւ։ Յիրաւի ուրեմն զգուշացաւ մերս Աբգարն, ոչ կամեցեալ ասել զայդ, զի և ծածկիլ անմարթ էր՝ի գիտ նաւորս առնէին։

ԳԻԼԻՈՒ Ի.Ո.

Յաղագս առնուԹեան պաշտամանց Ռէայ՝ մօր մեծի։

ԴԱՐՁեալ, յաղագս իգացելոցն այնոցիկ՝ որք ձօնեալք են Ռէայ մօր մեծի հակառակ ամօԹիածուԹեանն արանց և կանանց, և մինչև ցայսօր շուրջ եկեալք ընդ փողոցս և ընդ դիւզս Կարբեդոնի՝ հերովք ներկելովք, դիմաք դեղելովք՝ ի սպիտակս, արձակ անդամաք, և կանացի դնացիւք, խընդրեն նա և՝ ի ժողովրդոց նպաստս առ՝ ի կեալ անառակուԹեամբ, ոչ ինչ ասել կամեցաւ Կարրոն. և ոչ յիշեմ ընԹերցեալ ուրեք բնաւ։ Կանզի պակասեալ աստ մեհենաբանուԹիւն, բանն ամենեցուն, խօսք լռեցին։ ՅաղԹեալ հասարակն որդւոց իւրոց ապիրատուԹիւն մօրն մեծի, և ոչ եԹէ շուքն դիւցական. այլանդակիս այսմ ոչ՝ ի կշիռ գայ այլանդակուԹիւն Յանոսի. նա՝ ի գրօշեալս ևԹէ ուներ զաձևուԹի, իսկ սա՝ ՚ի պաշտամունս անդ զոգեղդժնդակուԹի. նա՝ ի քարինս ցուցանէ անդամս եկամուտս, սա՝ ի մարդիկ զկորուստ անդամոց։ Կամ զազրուԹե՞ ևս Կրամաղդայ բազում և մեծամեծ աղճապղծուԹիւնքն յաղԹեն. նա յԵգիպտոս անառակեալ՝ միայն Կանխիմեդեայ մանկանն տուփանօք գարշացոյց զերկինս. սա բազմուԹե ուխտադիր իգացելոց աղաեղացոյց զերկիր, և երկինի նախատինս արար։ Կուցէ արդեօք զկռոնոս մարԹիցէ համեմատել ընդ սմա, կամ մեծագրել ևս յայս տեսակ զազիր դժնդակուԹե. զորմէ ասեն՝ ԹԷ ներքինացուցեալ իցէ զՀայր իւր, սակայն ՚ի պաշտամունս Կռոնոսի յայլոցն ձեռաց մեռանէին մարդիկ, այլ ոչ իւրեանց ձեռօք խղճին զինքեանս։ Կա զորդիսն եկուլ, որպես բանաստեղծք զրուցեն, և բնախօսք ըստ կամի մեհենաբանեն. բայց ըստ աւանդելոյ պատմուԹենն՝ սպան. այլ զի կարբեդոնացիքն զոհէին նմա զորդիս իւրեանց, զայն ոչ ընկալան հռովմայեցիքն։ Իսկ սա՝ մայր մեծ յորմէր-

ջեալս աստուածոյ՝ եմայծ և՛ի Հռովմայ մեհեանս զնեք-
քինացեալս, և պահեաց առ նոսա զդժնեայ զայս սովո-
րութիւն, կարծեցեալ յաւելուած տալ արիւնութիւն հռով-
մայեցւոց՝ հատանելով՛ի բաց զայրուելս արանց։ Օ՛ինչ
են առ չարութիւնս՝ գողութիւնք Հերմեայ, Վիրոդիտեայ
զաղտութիւնքն, ազգապղծութիւնք և գարշութիւնք այլոցն,
զորս՛ի գրոց իսկ հեթանոսաց յանդիմանեաք, թէ ոչ օր
ըստ օրէ՛ի թատրոնս երգօք և կաքաւմամբք հանդիսա-
նային։

Այլ և այսոքիկ զի՞նչ են առ ապիրատութիւն, որոց մե-
ծութիւն պահեալ կայր միայն մերն մեծի. մանաւանդ զի
թատերականքն այնոքիկ ընծային քերթողացն ստեղծա-
բանութէ. որպէս թէ նոցին իցէ գիւտ և ասէլն թէ աս-
տուածքն հաձին և ախորժեն ընդ այնպէս սխս։ Այլ արդ
գրեացուք թէ զայնպիսիս յերդ և՛ի գիր արկանել՝ իցէ
՛ի բանասաեղծիցն համարձակութիւն կամ՛ի լրբութիւն.
իսկ ասա յԾծայինան մեծանալ իրագործութիւնս և՛ի
մեծարանս՝ ՛ի նոցունց իսկ դիցն հրամանաց և՛ի ստիպ-
մանց, ոչ ապաքէն յանցանք են նոյն աստուածոց, մա-
նաւանդ թէ յայտնի հնարք գիւտց, և պատրանք չուա-
ռականաց։ Այլ զայն թէ ձեռիւք նեղբինացելոց պաշտօն
ընդունել արժանի եղև աստուածոյն մայր, ոչ եթէ
քերթողք ստեղծին, այլ երդիծանել առաւել՝ քան եր-
գաձայնել կամեցան։ Արդ մինէ այսպիսեաց դից ընտրե-
լոց իցէ՞ արժան ումեք լինել անձնանուէր՝ առ՛ի զերա-
նելին կեալ զկեանս յետ մահու, որոց արդէն նուիրեալն
չկարէ պարկեշտանալ յառաջ քան զմահ, քան կապեալ
յաղտեղի սովորութիւնս, և այսոց պղծոյ գրաւեալ՛ի ծա-
ռայութիւն։ Այլ ասէ Վարրոն, թէ այդ ամենայն
յաչխարհ ունին զակնարկումն։ Ո՛ն անդր, քաջ տես-
ցէ, մի արդեօք առաւել յաշխար ողոց ակնարկիցեն։
Վ՛անգղ զոր ինչ յաշխարհի լինել տեսանեմք, յայտ է
թէ անկ է աշխարհի. իսկ մեք զՀոգին խնդրեմք՝ որ յա-
րեալ՛ի կրօնս Ջմարիտս, ոչ իբր աստուածոյ իւրում եր-
կրպագու իցէ աշխարհի, այլ իբր աստուածոյ գործած

դովեսցէ զաշխարհ վասն ՚այ, և յաշխարհական աղտից մաքրեալ՝ ամբծուԹ՚ Հասանիցէ առ ՚ած Հաստիչն աշխարհի։

ԳԼՈՒԽ ԻԵ՚

Յաղագս մասացածին բանից ընախօսացն, որք ոչ զՀնչմարիան պաշտեն զած, և ոչ ՚ած ավայելուչ կարդաք։

ԱՆԱՑ արդ տեսանեմք՝ զի ընտիր անուանեալ դիբեն յայտնագոյն քան զայլսն ծանօԹ՚ գուցան. իբր ոչ ԼԹԻ զի լաւուԹ՚ը նոցա բացերևեցոյին, այլ զի ծանականք նոյնիսկ ծածկեցոյին. ուստի առաւել և ևս ՚անաչի՝ ԼԹԻ մալ գիւկ են նոքա. քան որում՚ ոչ միայն քերԹողական գրուԹ՚ը, այլ և պատմաբանականը զգոյն աւանդեն։ Վ՚անգի Ա՚իրգիլեայ ասացածն այն, ԹԻ

> “Ա՚յսու այս Ա՚ռնոս յԵԹ՚երականն ՚ի բարձանց,
> Ա՚Ի բամազգայն Թուսեալ զինուց կայծականց,
> գայ ԻՕանէ վըտարական յարքունեաց,,

և որ այլ ևս զՀետ յարին, են զրոյցքն վկայագրեալք Ա՚ՒՀեմերոսէ, զոր Ա՚ՆՆիոս փոխեաց ՚ի լատին բարբառ. այլ զի Հակառակ այսց մոլորուԹ՚ենց բազում՚ ինչ ասացին նախ քան զմեզ՝ որք ՚ի յոյն կամ ՚ի լատին լեզու գրեցին, ինձ ոչ են կամք ՚ի նոյնս դեգերիլ։

Ա՚յլ զմուսս ածեալ իմ զընախօսուԹ՚եան՝ որպէս արդ դիանաւորք և մտայիք զմարդկայինն նկրտին յածայինն փոխաբերել, տեսանեմ՝ ոչ զայլ ինչ, բայց զի ամենայնին դադարէ ՚ի գործս ժամանակեայս և մարմնաւորս, ՚ի բնուԹ՚է մարմնեղէն, կամ ԼԹԻ և յաներևոյԹ՚ իսկ, այլ ՚ի փոփոխելի, որ ոչ բնաւ է ած Ա՚Հմարիտ։ Ա՚սկ զայդ ԹԻ առնեին ևս խորհրդածուԹ՚իք՝ որ բարեպաշտուԹ՚է իցեն վայելչականք, ԹԷպէտ և ցաւելի էր տակաւին՝ իբր ոչ յայտարար ՚այն Ա՚Հմարտի, սակայն մասամբ ինչ տանելի Թուէր յաղագս ոչ զաղտեղիսն և զանարժանս գործեցեալ։

լոյ և հրամայելոյ ։ Այլ եթէ անպատեհ իցէ փոխան Չմարտին այ , որոյ բնակութիւն ևեթ երջանկանայ հոգւի, պաշտել զմարմին կամ զհոգւի , քանի՛ ևս դժպատեհ իցէ այնպէս պաշտել զայսոսիկ , որով ոչ զիրկուածի և ոչ ըզմարդկաբար վայելուչն ստանայ մարմին կամ հոգւի պաշտօնաւորին ։ Այլ իբր եթէ տաճարաւ , քահանայութիւն և պատարագաւ՝ որք Չմարտին այ են անկ , ի պաշտօն առնլի տարը լինչ աշխարհի , կամ ոգւի ումն արարած՝ թէպէտ և ոչ անսուրբ և չար , ոչ եթէ այնու չար է՝ զի չարք են որովք պաշտի , այլ զի այնպիսի լինչ են՝ որովք նա միայն է պաշտելի , որում ևեթ անկ է պաշտօն և ծառայութիւն այնպիսի ։ Իսկ եթէ որ համարիցի զբուն զՀրն մարիան պաշտել զայծ՝ զհոգւոյ և զմարմնոյ հաստիչ՝ խօլական կամ այլանդակ դրօշուածովք , մարդազոհութիւն , պակմամբ առնի ամօթանաց , շանսխութովք , ցտմամբ անդամոց , հատմամբ արուեց , ձօնիւք իգացելոց , տօնախմբութիւն անմաքուր և խենէն խաղուց , այնպիսին տիրապէս մեղանչէ՝ ոչ միայն զի պաշտէ զանպաշտելին , այլ զի և ոչ որպէս պաշտելն արժան է՝ պաշտէ ։ Այլ որ պաշտէ և այնպիսեաւ զաղիր և եղեռնական սպասու , և այն՝ ոչ զայծն Չմարիամ՝ զարարիչ հոգւոյ և մարմնոյ , այլ զարարած լինչ՝ թէ և անխոտելի , եթէ հոգւի իցէ , եթէ մարմին , և եթէ երկոքին միանգամայն , նա կրկին մեղանչէ յայծ , եթէ վասն պաշտելոյն՝ որ չէ այծ , և եթէ զի այնպիսեաւ պաշտէ , որովք ոչ այծ՝ և ոչ այլ որ է պաշտելի ։ Իսկ թէ դոքա զիարդ գարշ անարժանութիւն պաշտօն մատուցանեն , ահա յայտնի տեսանի . իսկ թէ զինչ կամ զո՞րս պաշտիցեն , անյայտացեալ մնայր եթէ ոչ նոցայն պատմութիւն վկայէր , թէ դիք ինքնին զգալոլելիսն զայսոսիկ սպառնալեօք պահանջէին . որովք մերկանայ պատրուաւն, թէ քաղաքականաւն այնու դիցաբանութիւն հրաւէր լինի ժանտագործ դիւաց և այսոց պղծոյ՝ կեալ յանհեթեթ պատկերան, և տիրել նոքօք սրտից խօթ ամբաց ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Վարդապետութիւն Վարդանի յաղագս գիցաբանութեան՝ յամենայնի հակառակամարտ է ինքեան։

Այլ զի՞նչ շահեցաւ ասելս Վարդանի զիանաւորն այլ և հանճարաւոր, ՚ի ջանալ իւրում՝ նրբախոհս Հառագրութիւն զաստուածոյն ամենայն Յոդուածել և յարմարել յերկինս և յերկիր։ Վ՚որպէսն և ոչ ինչ։ վասն զի դիցն այն պրծանելն ՚ի ձեռաց, ՚ի բաց վաղելն, սաղոսկին, և ՚ի գետին անկանելն։ Օ՚ի ահա կամեցեալ նորա խօսել զիգականաց աստուածոց, կամ զդիցուհեայ՝ ասէ. «Վանզի որպէս յառաջնում մատենի ասացի յաղագս տեղեացն, երկու ծագումն է աստուածոց՝ յերկնից և յերկրէ. որով աստուածք կոչ մի երկնայինք են, և կոչ երկրայինք. և որպէս յանցեալն սկիզբն արարաք յերկնից՝ խօսելով զՀանոսէ, զոր ոմանք երկին համարէցան, և այլք՝ աշխարհ, սոյնպէս զիգացն սկիզբն առնեմք գրել ՚ի Տէր լոսէ»։ Վեր խելամուտ լինիմ, թէ քանի տագնապեալ է այդն քաջահանճար. զի Հմարտատիպ պատճառաւ իւիք բերի ՚ի կարծել՝ թէ երկին է որ առնէ, և երկիր՝ որ կրէ. վասն այն երկնի տայ զօրութիւն արուական, և երկրի՝ զիգական. և ոչ ուշ ունի յաւէտ յարարիչն այսոցիկ, որ զերկաքանչիւրն արար։ Վասի նա և յանցեալսն գրի նոյնպէս մեկնաբանէ զդերազանց իմաստս սամոթրակեան աստուածոյն, և խոստանայ գրով բացայայտել զնա ևս ծանուցեալսն յիւրայոց, և առաքել առ նոսա կրօնասէր իմն փոխարէն։ Օ՚ի ասէ զանձնէ, թէ բազում նշանակօք իմաստասիրեալ իցէ անդ ՚ի Վաթրակէ ՚ի տեսոյ պատկերաց՝ թէ ոմն զերկինն նշանակէ, ոմն զերկիրս, ոմն զօրինակս իրաց, զոր Պղատոն գաղափարս անուանեաց. և երկինն՝ զՎրամազդ իմանայ, երկիրս՝ զՀերա, գաղափարս՝ զՎթենաս. երկինն՝

զայն, յորմէ լինի ինչ. երկիր՝ ուստի լինի, և օրինակ կամ տեսակ՝ ըստ որոյ լինի։ Յորում մասին Թողում ասել, Թէ Պղատոն այնպիսի ազդումն տայ գաղափարացն այնոցիկ, որ ոչ եթէ երկին ըստ նոցա առնէ ինչ, այլ ինքըն ըստ նոցա եղև։ Այս ևեթ ասեմ, Թէ Պարբան՝ի մատենի ասա ընտրելոց դից կորոյս զինդիր երից աստուածոցն՝ որովք զամենայնսն գոգցես համարիր բովանդակել. քանզի երկինի ետ աստուածս արուականս, և երկրի՝ իգականս. յորոց միջի դասեաց զԹենասս, զոր յառաջն եդեալ էր վերոյ քան զերկին։ Այլ դարձեալ, Պոսիդոն արու աստուածն՝ի ծովի է, որ մասն է երկրի քան երկնից։ Այլ Ցիս կամ Ձոխս հայր՝՝ի յունաց՝ կոչդոն կամ մեծատուն ասացեալ՝ որովհետև արու էր և նա, եղբայր երկոցունց, երկրային աստուած լինել ասի, զվերին եթաս երկրի ունելով, իսկ՝ի ստորին կողմն զՊերսեփոնէ զիւր ընակից։ Այս զիարդ զարու աստուածս ընդ երկին կապեն, և զէգան ընդ երկիր։ Այլ միթէ կայցէ՝՝ի վարդապետութեանս յայսմ բան ինչ անյողդողդ կամ հաստատուն, ողջամիտ և ճշգրտեալ։ Իսկ երկիրս կամ հող Ցելլոս կոչեցեալ՝ սկիզբն է աստուածոց, այն է մայրն մեծ, առ որում խիզախ անբան գարշութիւն իգացելոցն և հատելոց և ցտելոց և լինելոց։ Այլ այն զինչ է ասա, զի Յանոսն ասի գլուխ աստուածոց, և Ցելլոսն՝ գլուխ աստուածաբնեաց. սակայն ոչ անդ զմի գլուխ կացուցանել մոլորութիւնն, և ոչ աստ կատաղութիւնն տայ զառաջ գլուխ. և առ ինչ ջանան զուր՝ յաչխարհ պատշաճել զայսոսիկ։ Այր Թէ կարէին ևս, ոչ որ բարեպաշտ յանձն առնուր փոխան ճշմարտին ոչ պաշտել զաչխարհ. այլ զի և ոչ՝՝ի դոյն կարող գտանին, ճշմարտութիւնն ակն յայտնի ցուցանել։ Այս ուրեմն մարդոց մեռելոց ընծայեսցեն զայսպիսիկ, և դիւաց ժանտից. և այնուհետև կարձեսցի խնդիր ամենայն։

ԳԼՈՒԽ ԻԹ.

Չորք ինչ միանգամ ընախօսք յարմարեցին յաչխարհ և՛ ի մաուսնս նորա, պարտական էին վերաբերել առ մի ած Հշմարիտ։

Ա՛ՊԱՐՒՆ զոր ինչ միանգամ դոքա ըստ իւրեանցին դիցաբանեալ իրը ընախօսս պատճառաւք իմն յարմարեին յայս աշխարհ, սիկսք էին զայն ամենայն ընծայել անխիղճ յամարիչ կարծեաց՝ Հշմարտին ած՝ Համօրէն հոգւոց և մարմնոց արարչի. և զայս յայտ առնեմք այսպէս։ Ա՛ԼՔ զիած պաշտեմք, ոչ զերկին և զերկիր, որք են երկու մասունք բաղկացուցիչք աշխարհի. ոչ զՀոգի կամ զՀոգիս սփռեալս ընդ ամենայն կենդանիքս. այլ զիած որ արար զերկին և զերկիր և զամենայն որ ՚ի նոսա. որ արար զամենայն Հոգի և զիւրաքանչիւր կենդանի՝ եթէ զանձդայ և զանբանական, և եթէ զգայուն և զիմացական։

ԳԼՈՒԽ Լ.

Թէ Հշմարիտ ածպաշտութիւն որոյ արարիչն յարարածոց, զի մի փոխան միոյն ած պաշտեսցին այնչափ դէք, որչափ են գործք միոյ արարչի։

Լ՚Ի սրդ սկիզբն արարեալ անցանել ընդ գործս միոյ Հշմարտին ած, որոց վասն Հնարին դոքա ՚ի Հաճեստասկանն յարմարել իմաստս զանմանութիւն և զայլիրատ պաշտամունս, որով բազում աստուածս սուտս ստեղծին, մեք զայն ած պաշտեմք, որ իւրաստեղծ բնութեցն սահմանեաց սկզբունս և վախճանս գոյացորուէ և շարժման. որ զերացն պատճառս ունի ՚ի ձեռին, Հանապէտ և կարգաւորէ. որ զսերմանցն զօրութիւն Հաստեաց. որ զՀոգի բանաւոր տպաւորեաց ՚ի կենդանիսն՝ յորս կամեցաւ. որ զանձին

կարողութիւն և՝ զխօսել պարգեւեաց . որ զպարգեւ կանխասացութիւն բաշխեաց ոգւոյն որոց հաձեցաւ, և կանխաձայնել զլինելոցսն՝ի ձեռն որոց և հաձի , և մերժէ զախտս՝ յորոց ձեռն կամի . որ զպատերազմաց անդամ ընկիզեն , զընթացս և զելս մտաբեկ յուղղութիւն և՝ի պատուհաս ազգի մարդկան . որ զհուր աշխարհի զսաստիկն և զբուռն ստեղծ և վարէ՝ի բարեխառնութիւն համատարած բնութեն . որ բնաւից ջուրց ստեղծիչ է և զեկավար . որ զարեգակն արար զամենափայլն՝ի մէջ մարմնեղէնս լուսաւորաց , տուեալ նմին զդիպող զօրութիւն և զշարժուն . որ և՝ի ստորայնոց աստի ոչ՝ի բաց դարձուցանէ զերկրութիւն և զիշխանութիւն իւր . որ կարգեաց և բաշխեաց մահկանացուաց սերմանս և դարմանս , եթէ ցամաքս , և եթէ գիձինս ըստ պատշաձից իւրաքանչիւր բնութիւն . որ զհող սնդէ և արգասաւորէ . որ զարդիւնս նորս ընդէնէ կենդանեաց և մարդկան . որ զպատձառսն ձանաչէ և հրամանատրէ՝ ոչ միայն զնախնականսն , այլ և զկնի եկեալսն . որ հաստատեաց լուսոյ զիւրն շարժուն . որ զշաւիղս երկնային և երկրային մատակարարէ տեղեացն փոփոխմամբ . որ մարդկային հանձարոյ առ՝ի յիւրմէն ստեղծեցելոյ՝ ընդհեաց զազգի ազգի արհեստից գիտութիւս կենաց և բնութե օժանդակ . որ ըզլծակցութիւն արուի և իգի սահմանեաց՝ի զաւակասերութե . որ պարգեւատրեաց բազմութիւն մարդկան զհուր երկրաւոր՝ի գիւրապատրաստ կիրառուէ կրակի և ձրագի :

Յոտքիկ են ապաքէն գործք՝ զորս ընտրելոց կոչեցեալ դից մանաւանդել զանացաւ բնախօսական իմն յարմարութիւնք հանձարեղն այր և գիտնաւոր վարրոն , եթէ յայլոց իցէ զնոսին ընկալեալ , և եթէ ինքնին իմաստասիրեալ : Վակայն զայդ ամենայն առնէ և ազդէ միձմամբիտն ՅՅ , ըստ որում է ՅՅ , այս է՝ ամենայն ուրեք բովանդակ , ոչ ուրեք երբէք դրաւեալ , արձակ յամենայն կապոյ , անհատ՝ի մասունս , ամենևին անփոփոխելի . երկինի և երկրի լցուցիչ անանձրպետ կարողութիւն , ոչ պակասելով և բնութեն : Յե զամենայն զոր ստեղծ՝ այնպէս

ինն անտեսէ, զի և նոցա տայ ՚ի կիր առնուլև կատարել զևւբեանցն չարժմունս. զի Թէպէտ և առանց նորա ոչ կարէն լինել լինչ, բայց ոչ էն նա ինքն։ Այնէ բազում լինչ և ՚ի ձեռն հրեշտակաց, այլ ինքնին միայն երանելոյս առնի զՀրեշտակս. և եթէ ՚ի պէտս իրաց լինչ առաքէ զՀրեշտակս առ մարդիկ, ոչ հրեշտակքն երանելոյս գոր ծէ զմարդիկ, այլ ինքեամբ՝ որպէս և հրեշտակս։ Այս ահա ՚ի միջի ասաի յայ Աշմարտէ ակն ունիմք կենդանի յաւիտենից։

ԳԼՈՒԽ ԼՂ.

Յորմէ՛ սուրբն բարերարուն ևս վայելէն աշակերտացն Աշմարտութիւն՝ բաց ՚ի հանդիսան առաստաձանութենէն։

ՎԱՆՋԻ՚ի վերայ բարերարութեցին՝ որ ըստ մատակարարութենէ ընութենէ շնորհեալ էն բարեաց և չարաց, յորոց զսակաւսն ասացաք, ունիմք առ յայ զմեծ նշանակ գերազանց սիրոյն՝ որ բարեաց ևեթ յատուկ։ Օ՚ի թէ իսկապէս անբաւական գտանիմք շնորհս մատուցանել առաւնն՝ իբր զի եմք և կեամք, զի զերկին և զերկիր նկատեմք, զի մնօք և բանիւ եմք ձոխացեալ, որոյ զնա ինքն զամենահաստիչն հետազօտեմք, որ սիրոյ ասա, քանիպատճիկ լեզուք բաւականք առ՚ի շնորհակալութենէ կարծեսցին ընդ այն, զի զծանրաբեռնեալքս մեղօք և զձնչելալքս, զատեցողքս հայեցուածոյ լուսոյ նորա, զկուրացեալքս ՚ի սէր խաւարին անօրէնութենէ՝ ոչ անտես արար խոպառ, և առաքեաց մեզ զՄանն իւր՝ զորդին միածին, որպէս զի ՚ի մարմնով ծնանելն նորա և ՚ի չարչարել վասն մեր, ՚ի միտ առնուցուսք՝ թէ որչափ մեծագրէ ձաճ զմարդ, և միակ պատարագաւս այսուիկ սրբեցիմք յամենայն մեղաց, և ՚ի սփռել նորա զՀոգի իւր սիրով ՚ի սիրտս մեր, զերկիվերոյ համայն գԺնդակաց եղելալք ժամանիցեմք յանպատում ՚ի յաւիտենական հանգիստ, և յանձառ քաղցրութենէ երեսաց նորա։

ԳԼՈՒԽ ԼՀ

Խորհուրդ փրկագործութեանն զոր ոչ պակասեաց երբէք յանցեալ ժամանակն . և քարոզեցաւ միշտ պէսպէս նշանակօք ։

ԱՅՍ խորհուրդ կենացն յաւիտենից անդստին 'ի ծագ- մանէ մարդկան ազգի՝ նշանօք ոմանօք և խորհրդաւոր յեղանակօք ըստ տանելոյ ժամանակացն քարոզեցաւ որոց արժան էր՝ 'ի ձեռն հրեշտակաց ։ Յետ այնորիկ ազգն երբայական ձևացաւ 'ի մի ժողովուրդ պետական՝ լինել գործունեայ այսր խորհրդոյ . որպէս զի կանխաւ ազդեսցի 'ի ձեռն ոմանց խորհրդագործ եղելոց և ոմանց անդէտս եղելոց՝ Թէ հանդերձեալ է լինել որ ինչ միանգամ 'ի գա- լըստեան Քրիստոսի և այսր և զկնի և 'ի գլուխ ելանէ ։ Որ- պէս և յետ ցրուելոյ այսր ազգի ընդ հեթանոսս՝ ըստ գրոցն վկայուէ , որովք նախածանուցաւ յաւիտենից փըր- կուիչն որ Քրիստոս լինելոց էր ։ Ոչ միայն ամենայն մարգա- ըէութիւնք բանիւ աւանդեալք , և ոչ լոկ կանոնք կենաց բովանդակիչք վարուց ածպաշտութե՛ն 'ի գիրս անդ դրոշ- մեալք , այլ և պաշտամունք սրբութե՛ , և քահանայութի՛ք , խորանն կամ տաճար , սեղանք , պատարագ , արարողութի՛ք , ծոմք , և որ ինչ միանգամ հայի յածավայելուչ պաշտօն , զայն ամենայնն նշանակեալ նախապատմին՝ զոր ինչ վասն կենացն յաւիտենից հաւատացելոց 'ի Քրիստոս մեր արդէն 'ի գլուխ ելեալ , և տեսանեմք 'ի գլուխ ելանել , և աներկբայ յուսամք Թէ 'ի գլուխ ելանիցէ ։

ԳԼՈՒԽ ԼԴ

Ի ՀԱՒԱՏ քրիստոնէական կրօնիդ միայն հնաւր երջանկաբիլ խաբէութենէդ այսոցդն չարաց՝ որ ինդայիկն ընդ մոլորութեն մարդկան։

ՈՒՍՏԻ միակ այսու Աչմարիա կրօնիւք յայտնեցաւ, թէ դիք հեթանոսաց դիք են սահնապիղծք, որք ցանկալին ընդ պատրուակաւ հոգւոց բաժանելոց ի մարմնոց, կամ ի տեսոյ հիանալի արարածոց աշխարհի առ աստուածս գրիլ, զուարճացեալք ամբարհաւաճ լրբութե ը գործս ապիրատս և զազիրս իբրև ը ՚ածական մեծարանս, և մախացեալք ընդ դարձուածն մարդկան առ Աչմարիան ՚ած։ Ի նոցա ի դժնեայ և յանօրէն բռնաւորութէն ազատանայ մարդ, յորժամ հաւատայ յայն՝ որ եհտ զօրինակ այնչափ խոնարհութե ը առ ի կանգնուածն, որչափ հպարտութե ը անկան դիք։ Ոչ ստուստ են ոչ միայն դիքն այն, զորոց յանցեալսն ասացաք յորովայնոյս, կամ այլ և նման նոցա՝ ըստ այլոց ազգաց և ըստ գաւառաց, այլ և զորոց այժմ Ճառեմք՝ իբրու ընտրանաւ առելոց ի ծերակոյտ իմն աստուածոց, որք ընտրեալք են արդարեւ բազմայանցութեամբն, այլ ոչ արժանեօք առաքինութեանց։ Ո՞րոց զպաշտամունս երբ ջանայ Ալարբոն յարմարել ի բնական պատճառս, գերզբեսել կամելով զգաբչելիսն, ոչ գիտէ և ինքն՝ թէ զիարդ զՀամաձևութիւնն բերիցէ։ Վասն զի ոչ այն են պատճառք պաշտամանցն, զորս Համարի, կամ ձևանայ հաւատալ։ Վասնզի ոչ այդ պատճառք միայն, այլ երեք լինէին այլք և դոյնպիսիք, թէ և տակաւին ոչ յարմարեալք ի Աչմարիան ՚ած, և ի յաւիտենից կեանս՝ որ տիրապէս խնդրելին է ի կրօնսն, սակայն փոքու իմն մեղմացուցանէին արդեօք զատելութիւնն՝ զոր և առանց իմանալոց առնէր գարշութիւն կամ տգեղութիւն պաշտամանցն։ զոր օրինակ առնել ջանացաւ նա ի թատերական առասպելս ինչ, կամ՝ ի խորհրդածութիւնս մե-

հենից . ուր ոչ զթատրոնս արդարացուցանէ նմանութիւն մեհենից , այլ ընդ հակառակն՝ թատերաց նմանութիւն պախարակեաց զմեհեանս . սակայն որպէս և է՝ գուն՝ դո-ծեաց նա բնախօսական պատճառադրութիւնն մեղմել ի-վիք զանձոռնի իրացն զգարշելութիւն , որ և զգայուէց էին պիգալի ։

ԳԼՈՒԽ ԼՂ

Յաղագս գրոց Նումայի Պոմպիլեայ զորս այրել հրամայեաց սինկղիտոսն, զի մի լերևան գոյգեն պատճառք պաշտամանցն բովանդակեալք յայն գիրս ։

ԱՌՑԱ սակայն տեսանեմք ընդ հակառակն՝ ըստ որում Վարրոն ինքնին աւանդեաց այլն գիտնաւոր , զի անբերի դատեալ եղեն առ Հռովմայեցիս գիրք Նումայի Պոմպիլեայ սակս զպատճառս պաշտամանցն նշանակելոյն . և ոչ միայն արժան չհամարեցան ընթեռնուլ և իմանալ զայնս պաշտօնասիրեալ , այլ և ոչ գէթ ի խորշս ուրեք խաւարի պահել ։ Վասնզի ժամ ի ինձ ասել զոր յերրորդում գրի խոստացայ ասել ըստ դիպան վայրի . վասն զի որպէս ընթեռնումք առ նմին Վարրոնի ի գիրս յաղագս պաշտամանն դից . «Տերենտիոս սին կա-„ լուած ունէր գետնոյ առ Յոնիկուղոս լերամբ և այն ինչ „ արտաւար նորա արօր ձգէր հուպ ի շիրիմ Նումայի „ Պոմպիլեայ, ի յայտ եկին մատեանք նորա, յորս կային „ գրեալ պատճառք օրինադրեալ պաշտամանցն սրբա-„ զան համարելոց ։ Այբեր այլն զգիրսն զայն ի քաղաք „ անդր առ պրետորն գնեաւոր դատաւոր . որոյ հայե-„ ցեալ ևէթ ի գլուխ բանիցն , վաղվաղակի առ ծերա-„ կոյան էհան զնրան ։ Ընդ յընթեռնուլ գնեաւորացն „ զպատճառս ինչ՝ այր վասն այս ինչ կամ այն սահմա-„ նեալ էր ի պաշտամունս , հաւան դատաւ սինկղիտոսն „ ընդ ջանս Նումայի վախճանելոյ . բայց զգիրսն զայնս „ սիկ հարքն այն որպէս պաշտօնասէրք՝ ի հուր արկա-

„ նել պատուէր եառուն պրեւտորին „ ։ Արդ կալցի զայս իւրաքանչիւր որպէս և ախորժէ. նա՝ ասասցէ ոչ և է բուռն ըմբռնեալ ամբարշտութենն՝ զոր ինչ միանգամ ասել թե- լադիր լինի նմա մոլեկանն դրդիռ. լինձ շատ է յուշ առնել թէ զպատճառս պաշտամանցն զդրեալս ՚ի Պոմպիլեայ յարքայէ և յօրինագրէ հռովմայեցւոց՝ ոչ պարտ դա- տեցան աւագորեարն ՚ի յայտ գալ ոչ առ ժողովուրդն, ոչ առ ծերակոյտն, և ոչ նոցունց իսկ քրմաց ։ Արքէն և ինքն իսկ Նումա Պոմպիլիոս անարժան ընդվայրաբնու- թիւ տեղեկացեալ սմիսոյիկ զաղանեացն դիւականաց, թէ պէտ և անձամբ դրեաց զնոսին՝ զի ընթերցմամբն յուշի ունիցի, սակայն և թագաւոր անգամ զոլով աներկիւղ յումեքէ՝ ոչ ուսուցանել այլում համարձակեր, և ոչ ջնջել զոլ կամ բնաւ ծախելով կորուսանել. ուստի չկամեցաւ զիտել զայնս ումեք, զի մի զանպատեհն ուսուցանիցէ մարդկան. իսկ եղծանել երկեաւ, զի մի զդևսն զրգռեսցէ ՚ի ցասումն. այլ թաղոյց զայնս՝ ուրանօր աներկեւան համարեցաւ, ոչ կարծեցեալ թէ մինչ ՚ի դերեզման անդր իւր մեռանիցէ արօրագրուն ։ Իսկ սմնգլուսան խղճեալ անարգել գնահատեացն կրօնս, որ վասն ստիպեցաւ հաւա- նել ընդ ջանս՝ Նումայի, այլ զմտաեւանան այնչափ մեռաս կարս լինել դատեցաւ, զի և ոչ ծածկել դարձեալ հրա- մայեաց, զի մի ընդվայրաբնութենէ մարդկան պնդագոյն և ՚ի խնդիր լինիցի իրացն յայտնելոց, այլ հրով ծախել զանպատեհ յիշատակարանսն. զի հարկ համարեալ էր ՚ի կիր առնուլ զպաշտամունսն, և փոքր էր մոլորիլ առանց գիտելոյ զպատճառս նոցա, քան թէ գիտելովն ՚ի վեր երևեալ խռովութենէ ինչ ՚ի քաղաքին ։

ԳԼՈՒԽ ԼԱ՛

Յաղագս ջրահմայութե՛ն, որով խաղ առնէր Նումա՛ ի տեսիլ պատկերաց դիւաց։

Վասն զի և նա ինքն Նումա՛ ոչ եթէ ուրուք մարգա՛ րէի ՚այ առնս առաքմամբ, և ոչ սրբոյ հրեշտակի, այլ ինքնին շարժեցաւ ձեռնարկել ՚ի ջրահմայութե՛ն, առ ՚ի տեսանելոյ ՚ի ջուրս զպատկերս դիւց, կամ լաւ ևս զխաղարկութե՛ս դիւաց. զի լուիցէ ՚ի նոցանէ՝ զինչ արժան իցէ սահմանել և պահպանել ՚ի պաշտամունս անդ։ Ո՛չ այս ազգ հմայութե՛ ՚ի Պարսից անտի ընկալեալ ասէ Վարրոն, և թէ Նումա և զկնի նորա Պիւթագորաս իմաստասէր վարեցան այնու, յաւելեալ ՚ի նոյն և զարիւն առ ՚ի զմեռեալս հարցանելոյ, ուստի և մեռելահմայութե՛ն կոչեցաւ. յորմէ չէ ինչ ընդհատ և ջրահմայութե՛ն, այլ զամենեքեան երկաքանչիւրն մի է, զի մեռելոց ընծայի հըմայել։ Ա՛յլ թէ որով բժժանօք լինիցին այսոքիկ, ինքեանք տեսցեն. զի մի ասացից թէ այսպիսի կախարդասար մոգութիւնք օրինօք արգելեալ էին ՚ի քաղաքս իսկ հեթանոսաց նա և յառաջ քան զգալուստ փրկչին մերոյ, լուծանելով պատուհաս սաստիկ։ Ո՛չ մի ասացից ասեմ. քանզի յայնմ ժամանակի գուցէ օրէն համարեալ էր։ Այլ յայտ է թէ նովին անաստուածն արհեստիւ ուսաւ Պոմպիլիոս զպաշտամունսն զայնոսիկ, զորոց զկատարումն զեկոյց, այլ զպատճառան ծածկեաց. մինչ զի և ինքն էր կեաւ յայնմանէ զոր ուսաւն. իսկ զպատճառացն յայտնէր զոմն իրան այրեաց ծերակոյտն։

Ա՛յս զի՞ է՝ զի Վարրոն այլ ինն պատճառս բնականս զնոյն պաշտամանց ինձ յանդիման առնէ, որպիսիք թէ յայն գիրսն կային, ոչ արգելօք հրամանն էանէր այրել զնոսին. ապա թէ ոչ, և զվարրոնի գրեալսն առ Կեսար քրմապետ և զՀրատաբակեալսն՝ հրամայէինն նոյնպէս ծեր-

քըն այնպիսիկ՝ի հուր արկանել։ Իսկ որովհետեւ ջուր՝ի ձեռն էառ՝ Յուդա՝ վասն զջրահմայութիւն առնելոյ, նմին իրի ասի՝ Թէ զյաւերժահարսն Լդերիա՝ առեալ լցեր իւր՝ի հնուէ. որպէս կայ՝ի նախասացեալ մատենին Ա արքունի։ Ա՛ն զի այսպէս սովորութիւն էր նոցա՝ զերս գործեցեալս սատանայ խառնմամբ յառասպելս ձեւացուցանել։ Ա՛ն որոյ զրահմնդիրն այն արքայ Հռովմայ՝ ուսաւ ջրահմայութիւն զպաշտամունսն, զոր գրովքն իւրովք եթող քրմացն. այլ զպատճառս նոցա ոչ այլ ումեք գիտել կամեցաւ. նըմին իրի ուրոյն գրեալ գնոյնս՝ իբր զոյգ ընդ իւր ետ մեռանել, հոգ տարեալ ծածկել զայնս՝ի գիտանալոյութիւն մարդկան և թաղել։ Ի՛սպա ուրեմն անդանօր կամ պիղծ և վնասակար ցանկութիւնք դիւացն կային գրեալ, մինչ զի այսու բովանդակ դիցարանութիւնն քաղաքային նոցկալն երևէր արանցն այնոցիկ՝ որք զազգամ ինչ իրս ամօթալիս ընկալեալ էին՝ի պաշտամունս անդ, և կամ նոյն իսկ դիքն յուցեալ լինէին յայնս ոչ այլ ինչ լինել՝ բայց մարդիկ մեռեալք, զորս առ յերկարութիւն ժամանակաց անմահ դիս համարէին համօրէն ժողովուրդք ազգաց. և սակայն ընդ այնպիսի պաշտամունս զուարճանային դէք, հաւատ նեալք թէ ինքեանք ընդունելին պաշտօն փոխանակ մեռեալցն այնոցիկ, զորս պատրոզական հրաշիւք ոմանք աստուած կարծեցուցանէին։ Ա՛կայն գաղտնի տեսչութեամբ չէմարտին այ վէմարեցաւ այն. զի թոյլ ետ դեւաց խոստովանել զամենայն՝ իւրեանցն պաշտօնասիրի պոմպիլեայ, որչափ մարթի էր ջրահմայութեանն բըժժանօք. այլ ոչ թոյլ ետ ազգել նմա՝ զի՝ի մեռանել իւրում փոխանակ ծածկելոյ զնոյնս այրեսցէ. և դէք ոչ զօրեցին արգելուլ գայսանութիւն նոցա, ոչ արօրսյն՝ որով հանան՝ի դուրս, և ոչ գրչին Ա արքունի՝ որով իրագործուեին այս ժամանակաց՝ի մեր յիշատակ։ Ա՛ն զի դէք չէն ձեռնհաս յայն ինչ՝ որ չէ թոյլ տուեալ նոցա. իսկ լինի թոյլ տալ խորին և արդար դատաստանաւ մեծին այ, ըստ արժանեաց նոցա՝ որոց իրաւացի է կամ լինիլ ևեթ՝ի դիւաց, կամ գերի իսկ լինել նոցա պատրանօք։

Այլ թէ քանի՛ միաստակար և օտար՝ ի պաշտմանէ Աստուծոյ՝ ոչ ոք ոչ ինչ առնել կարէ, եթէ ոչ Աստուած հաճեսցի, զի ոչ ոք ոչ ինչ առնէ առանց Աստուծոյ կամաց։ Եւ զայս ամենայն ցուցանէ մեզ Տէր մեր Յիսուս Քրիստոս, որ ասէ. Առանց ինձ ոչ կարէք առնել ինչ։ Եւ Պաւղոս առաքեալ ասէ. Ոչ եմ ես ինչ, այլ շնորհք Աստուծոյ ընդ իս։ Եւ Դաւիթ մարգարէ ասէ. Եթէ Տէր ոչ շինէ զտունս, զամենայն աշխատութիւն շինողացն ունայն է։ Եւ Սողոմոն ասէ. Եթէ Տէր ոչ պահէ զքաղաքս, զամենայն պահապանացն ունայն է։ Եւ Յոբ ասէ. Տէր ետ, Տէր առ, որպէս հաճոյ եղև Տեառն, այնպէս եղև։ Եւ Յակոբոս առաքեալ ասէ. Ամենայն որ ասէ թէ ես այսօր կամ վաղիւ երթիցեմ ի քաղաքն այն և արասցեմ զայն և զայն, ասասցէ թէ եթէ Տէր կամեսցի և կեցուցանիցէ զմեզ, արասցեմ զայն և զայն։ Եւ Սողոմոն ասէ. Ամենայն ինչ ունի իւր ժամանակ, և ամենայն գործ ի տակ երկնից իւր ժամանակ ունի։ Ժամանակ ծնանելոյ և ժամանակ մեռանելոյ, ժամանակ տնկելոյ և ժամանակ քակտելոյ, ժամանակ սպանանելոյ և ժամանակ բժշկելոյ, ժամանակ լալոյ և ժամանակ ծիծաղելոյ, ժամանակ սգալոյ և ժամանակ պարելոյ, ժամանակ ցրուելոյ զքարինս և ժամանակ հաւաքելոյ զնոսա, ժամանակ գրկելոյ և ժամանակ հեռանալոյ ի գրկաց, ժամանակ ձեռնհասելոյ և ժամանակ ձեռնհաս լինելոյ, ժամանակ պատերազմելոյ և ժամանակ հաշտելոյ։ Եւ զայս ամենայն ասէ, զի մի՛ ոք ինքնակալ ինչ առնիցէ, այլ ամենայն ինչ ի ձեռն Աստուծոյ առնիցէ։

ԳԻՐՔ ՈՒԹԵՐՈՐԴ

Մասն այսուհետև յերրորդ ազգ գիտցաբանութ՚ի կոչեցեալն բնական կամ քնա-
խօսական , քննելով զինդիրն՝ Թէ արդեօք պարտ՚էր դիցն յիշատակելոց յայնմ
դիցաբանութ՚ն օգտիցէ՚ ի ատացումն երանելի կենացն՝ որ յետ մահու . և ընդ
պղատոնականացն կարդէ զքննութ՚ն, որք նախատրամբք են քան զայլ խոհա-
տաէրս , փոքու իմն հպատրէք ՚ի ձշմարտութ՚ն քրիստոսական հաւատոց : Եւ
Նախ հերքէ ատանօր զՈչոլուչոս , և զորս միանգամ համարին պարտն ընդ-
ծայել գիւաց իբրև միմնորդաց և պատգամաւորաց ընդ ատուածս և ընդ մարդիկ . ցուցեալ Թէ չմարթին բնաւ ընդ բարի ատուածոց հաչտեցուցանել զմարդիկ գէթ որք ախտիք են վարակեալ, յորոց և որք բարեկիրք և խոհականք ՚ի բաց դառնան և դատապարտին , գիտելով Թէ նոքին ՚ի նէրքս մտածին զանտուրք չաղակրատանս քերթողաց , զգիտաէրական խելկատակութ՚ն , զմեգական արհեստից գիւմութ՚ն , և զգեղեցկագործութ՚ն , և այնպիսեաց ինքեանք իսկ ձեռն տան և զուարճանան :

ԳԻՒՂԻՒ Ա.

Քննութ՚ն խնդրոյ բնական ատծաբանութ՚ն ընդ գերխնաստ փիլիսոփայս :

ԱՐԻՒԵԼԱԳՈՒՆԻ մեզ պէտք էն ատտանօր քննութ՚ն քան ՚ի լուծումն անցելոց խնդրոց և ՚ի բացայայտութ՚ն գրոց : Վասնզի յաղագս բնականն առձայնեալ ատծաբանութ՚ն կայ խօսս առնել , ոչ ընդ ուրմէ է մարդոյ , զի ոչ է առաստպելեալ իբրու քերթողական և Թատերական , կամ քաղաքային , որ սովորական է կարծիք քաղաքացւոց. որոց առաջինն զատտուածոցն ապիրատութ՚ն զրուցանէ , և երկրորդն յայտ առնէ զապիրատ նոցին ցանկութ՚ն , որով ոչ և ս ատտուածս լինի իմանալ զնոսա , այլ գիւս չարակամս . այլ ընդ փիլիսոփոսս են այժմու բանքս , ընդ իմաստասերս ասեմ : Այլ արդ եԹէ ատ է իմաստութ՚ն , որով ամենայն էզվս ըստ ցուցանելոյ ատծապատգամ Ձշմարտութ՚եանն , ապա Ձշմարիտ փիլիսոփայ

կամ խնաստասէր՝ ածասկըն է ։ Ա՛յլ քանզի ոչ յամենեսեան պանծացեալս խնաստասէր անուամբ՝ գտանին և ասնուանն արդիւնք, իբր այն թէ որ ոք և խնաստասէր ասնուանեսցի, անդէն չէմարիտ խնաստութենէն սիրող իցէ, վասն այսորիկ յամենեցունց յայնցանէ՝ զորոց զկարծիս ունիմք տեղեկացեալ՝ի գրոց նոցա, ընտրել արժան է զնոսեան ևեթ, ընդ որս պատշաճաբար մարթի է խօսել յաղագս այսր խնդրոյ ։ Ո՛չ ոչ առ ամենայն մնոտի կարծիս համարիլն խնաստասիրաց մաքառիլ յանձն առեալ է յառաջիկայ Ճառիս, այլ յայնս ևեթ որ ածաբանութենէն անկ են, այսինքն՝ բանին որ յաղագս ածութենէ . և յայսոսիկ ևս ոչ զամենեցուն, այլ զայնոցիկ՝ որք Հաւանեալ թէ գոյ ած՝ որ զմարդկայինքս նախախնամէ, տակաւին համարին թէ չիցէ բաւական՝ի ստացումն երանելի կենացդ յետ մահու պաշտօն միոյ անփոփոխելւոյն ած, այլ թէ պարտ իցէ վասն այսր պաշտել զայլս բազումս՝ի միոյն ած արարեալս և կարգեալս ։ Ա՛պաքէն սոքա վերագոյն գոյեսն գտանին քան զԱրրոնի կարծիս՝ իբր Չէմարտութենէն մերձաւորագոյնք, քանզի նա մինչև յայս աշխարհ ևեթ կամ՝ի նորա հոգին առկայացոյց զբովանդակ ածաբանութիւնն բնական . իսկ սոքա՝ի վերոյ քան զամենայն բնութիւն հոգւոյ՝ խոստովանին զած արարիչ, ոչ միայն երևելի աշխարհիս՝ որ յաձախ երկինի և երկրի անուամբ կոչի, այլ և ամենայնիւ ամենայն հոգւոց . որ և զբանաւոր և զիմացական հոգի՝ որում սակի է մարդկայինս, երանելի առնէ հաղորդութիւն իւրում անփոխոխ և անմարմին լուսոյ ։ Ա՛յս խնաստասէրք՝ պղատոնականք անուանակոչեցան՝ի Պղատոնէ առաջնորդէ նոցա, որպէս և գիտակ է ամենայն ոք՝ որ փոքրու իմն յայսոսիկ պարապեալ իցէ ։ Ա՛յսոցա որոյ՝ի Պղատոնի բանիցն որչափ ինչ կարևոր յայս խնդիր թուիցէ, համառօտ ընձեռեցից . բայց նախ յիշատակութիւն արարեալ այնոցիկ՝ որք կանխեցին քան զնա՝ի դարուն յայսմ։

ԳԼՈՒԽ Ը

Յաղագս երկտեսակ խմաստասիրաց, որ կոչին իտալական և յունական. և յաղագս առաջնորդաց նոցա։

ԱՅՍ հելլենական գպրութիւնք որ քան զայլոց այլազգեաց ազգաց պերճագոյն Ճանաչի, երկու ազգ փիլիսոփայից կամ խմաստասիրաց լինել աւանդէին. մին իտալական, յայնմ մարզէ Իտալիոյ՝ որ երբեմն կարգացեալ էր մեծ յունաստան. և միւսն՝ յունական, յայնմ գաւառէ՝ որ և արդ Աքայա կոչի։ Իտալականին առաջնորդ եկաց Պիւթագորաս ’ի Սամոսայ, յորմէ ասի սկիզբն առեալ և փիլիսոփայդ անուն, այն է խմաստասէր. քանզի ուր յառաջն խմաստուն կոչմամբ մեծարեալ լինէին՝ այլ գովելի վարուց իմն տարազու առաւելուին քան զայլս, իբրև Պիւթագորաս, զինչ ուսումն է քո, ասաց՝ փիլիսոփոս, այս է խմաստասէր. քանզի մեծաբանութիւն իմն համարէր խմաստուն ձայնիլ։ Իսկ յունիականին գտիչ եղև Թաղէս միղեսացի մի յեօթանցն անուանեալ խմաստնոց նոցա. յորս վեցերիցն որոշումն ունէին ’ի տարազ կենաց և ’ի կանոնս ինչ բարիոք քաղաքավարութեանց. այլ Թաղէսի կամեցեալ բազմացուցանել հետևողս, ’ի քննութիւն պարապեաց բնութեանց իրաց, և ’ի գիր արձանացուցեալ զնորոյն կարծիս՝ գեր ’ի վերոյ այլոց գտաւ, հրաշալի յաւէտ այնու ցուցեալ, զի հասու լինելով աստեղաբաշխութեանն համարոց, գիտաց ասել կանխաւ զարևուն խաւարումն և զլուսնի։ Այս սկիզբն իրաց զջուր համարեցաւ լինել, և յայնմանէ գոյացեալ զտարերքս ամ, և զաշխարհ իսկ հանդերձ ծնեալսքն ’ի նմա. սակայն աշխարհիս գործածոյ՝ զոր հրաշակերտ նշմարեմք, չեզ զծեղէնն հանձար ինչ սկզբնապատճառ։ Օ՜ սա փոխանորդեաց նորուն աշակերտ Անաքսիմանդր, և այլափոխեաց զկարծիս յաղագս իրաց բնութեանն. ոչ ’ի միոջէ համարելով իբր

Աստղէս ՚ի ջրոյ, այլ յիւրաքանչիւր սեպհական սկզբանց ծնանել անցնիւր իրաց, և թէ այն սկզբունքն անհամարք են, և ծնանին աչխարհս անթիւս, և զոր միանգամ ՚ի նոսա ՚ի վեր երևին. և այն աչխարհք մերթ լուծանին, մերթ վերանորոգին, որչափ իւրաքանչիւր կարող է յերկարել ղիւրն ժամանակ. սակայն և ոչ սա ընծայեաց ինչ ՚ածել ղէնն հանձարոյ ՚ի գործած իրացս։ Այնոր սա իւր աշակերտ և յաջորդ զ՚Նաբսիմենէս, որ զոդ անսահման համարեցաւ ամենայնի պատճառ. և զաստուածսն ոչ ժխտեաց, և ոչ լռեաց, սակայն զնոսա ոչ օդոյ համարեցաւ արարիչս, այլ յօդոյ անտի ծագեալս։ Ասէ ՚Նաբսագորաս աշակերտ նորա՝ երևելեացս ամենայնի արարող գիտաց զՀոգի ՚ածեղէն, ասելով թէ յանբաւ նիւթոյ բաղկացեալ յոյնմանասեռ մասամբք՝ ազգ իրաց ամենայնի կազմին ըստ անցնիւր եղանակի և տեսակաց՝ ՚ածեղէն Հոգւոյն ներգործելով։ Այլ և Արխոգինէս ոմն (ապողոնիացի) միւս աշակերտ ՚Նաբսիմենեայ՝ թէպէտ և զօդն ասաց լինել նիւթ՝ ուստի ամենայնքն լինին, բայց ունող ՚ածեղէնն մտաց, առանց որոյ լինել ինչ ՚ի նմանէ անմարթ էր։ ՚Նաբսագորայ յաջորդեաց աշակերտ նորա ՚Քբեղայոս, որ և սա համարեցաւ ՚ի նմանասեռ մասանց լինել զիրս իւրաքանչիւր, բայց գոլով ՚ի նոսա մտաց ինչ՝ որ զյաւերժական մարմինն՝ զմասունս զանհոսիկ շաղկապելով և լուծանելով առնէր զամենայն։ Որուն աշակերտ ասի լինել Անկրատէս՝ վարդապետ Պղատոնի, յորոյ ՚ի պատճառս կարծ ՚ի կարծոյ յառաջ բերի զայս ամենայն։

ԳԻՂՈՒԽ Գ՝

Յաղագս վարդապետութեանն Անկրատայ։

ԱՅԴ յաղագս Անկրատայ աւանդէ ՚ի յիշատակս, թէ սա նախ առաջին զիմաստասիրութիւնն ողջոյն փոխառեալ

յուղումէ և ՚ի բարեկարգումէ վարուց, ուր առաջինք քան զնա՚ի բնաւինական իրս առաւել պարապեցուցանէին զնուրեանցն քննումէ։ Ոչ ոչ քաջայայտ տեսանի, արդեօք առ տաղտկումէ մեծին և անսասդ իրաց փոյթ տալ լեալ էցէ նորա գտանել յայտնական ինչ և ստոյգ՝ կալուածոր ՚ի ստացումն երանելի կենաց, որ վասն ձգնելոր միայն համօրէն իմաստասիրացն պարապումն՝ որպէս թուի, եթէ արդեօք ըստ բարեխորհ դատման ումանց ոչ ՚ի դէպ վարկաներ նա՝ ոգւոց աղտեղելոց երկրաւոր ցանկութիւնք ձկտեցուցանել զանձինս ՚ի խոյղ ածմանոց։ Ոմն զի տեսանէր՝ զի խնդրելին նորա զպատճառս իրացն զորս նախնիւաբար և գերագոյն օրինակաւ համարէր Ոսկրատէս դոլ ՚ի կամն միոյն ոչ բարձրելոյ. նախ իրի անհնար դատեր առանց մաքրուէ մտաց ՚ի միտ առնուլ զնոսին. այլ պէտք էն ասէր մաքրիլ վարուցն բարեկարգուիք, զի ՚ի նոսին լինել հեշտութեանց թեթևացեալ հոգւոյն, կարող լիցի բնաւոր սեթափութիւնն ամբառնալ ՚ի յաւիտենական անդր, և նոր կատել սրբամտութիւնք զնուէ անմարմին և անփոփոխ լուսոյն, յորում կան անդադար պատճառք համօրէն եղական բնութեանց։ Ոսկայն տեսանի յայտնապէս՝ զի ՚ի նոյն իսկ խնդիրսն բարոյականս՝ յոր զամենայն ձիգն պարապեցուցանէր, յաճախ յեղյեղէ Ոսկրատէս զանմտութեանն տգիտաց՝ կարծելոցն գիտել ինչ. և զայս առնէ սքանչելի վայելչաբանութիւնք իմն, և անօգր բարեմարդութիւնք, մերթ զտգիտութեն խոստովանեալ, մերթ զգիտութեն պատրուակեալ։ Յայսմ պատճառէ թշնամիս իւր գրգռեալ և զուր յանցանօք պարտաւորեալ ՚ի մահ դատեցաւ։

Այլ զինի աթենացւոյն քաղաք որ զնոյն դատապարտեաց հրապարակաւ, հրապարակաւ և ողջաց, այնչափ իմն սրտմտեալ ժողովրդեանն ընդդէմ երկուց չարախօսաց նորա, մինչև միոյն կոխան լինել ՚ի խուռն անդբազմութեանն, և միւսոյն յանձն առնուլ կամաւ զարտասհմանութիւնն առ ՚ի զերծանելոյ ՚ի նոյն պատուհասէ։ Այլ ահա այսպիսի քաջ անուամբ առաքինի կենաց և մահուան իւրոյ՝ եթող Ոսկրատէս բազում աշա-

կերտեալը իւրումն իմաստասիրութեան, առ որս եղև ջան դիմամարտ՝ վարել խնդիրս բարոյականս յաղագս ծայրագոյն բարւոյն, որով մարդ երանելի լինել կարող է։ Այլ քանզի այս՝ ի խօսս Սոկրատայ ոչ բացերևակի տեսանի, իբր զի նա խնդիրս շարժէ առաւել, ասէ՝ և ոչ հաստատէ, իւրաքանչիւր ոք յաշակերտացն զայն ընտրէր զոր և ախորժէր, և ուր և Թուէր, անդ հաստատէր զվախձան բարւոյն։ Սակ վախձան բարւոյ ասի, յոր միանգամ ժամանեալ ուրուք՝ երանելի գտանիցի. և յաղագս այսր վախճանի դէմընդդէմ կարծիս բերելով սոկրատեանց, որ զբոլոր ժուարապատահ իմն Թուի լինել՝ ի հետևողս միոյ վարդապետի, ոմանք ծայրագոյն բարի զՀեշտութիւն ասացին, որպէս Արիստիպպոս. ոմանք՝ զառաքինութիւն, որպէս Անտիսթենէս. սոյնպէս և այլք՝ ե որ յայս, և ե որ յայն կարծիս եղեն. զորս մի առ մի յիշատակել յերկար է։

ԳԼՈՒԽ Գ

Յաղագս Պղատոնի գլխաւորին յաշակերտս Սոկրատայ, որ զիմաստասիրութիւն ողջոյն եռաման բաւնմամբ որոշեաց։

ՅԱՌԱԿԵՐՏՍ Սոկրատայ իրաւամբք արդեօք գերապատ ցուցաւ Պղատոն, մինչև ստուեր նսեմութիւն արկանել զայլովք։ Արդեօք էր սա յաղնուական տանէ, և իւրով զարմանալի մտաւարժութիւն գերիվերոյ աշակերտակցաց իւրոց անցանէր. սակայն փոքր ստացումն իմաստասիրութիւն համարեալ զիւրն ուշիմութիւն և զսոկրատեանն վարդապետութիւն, շրջեցաւ տարագիմ՝ ի հեռաւոր վայրս, ուր միանգամ ձգէր զնա մեծիմաստի ուրուք հռչակ գիտութիւն՝ ի՝ Այն իբր ուսաւ Արդիպատոս զոր ինչ անտանօթ արդոյ համարեալ էր, և յուսումն աւանդեալ. անտի եկեալ՝ ի կողմանս Իտալիոյ՝ ուր պիւթագորեանցն համբաւ զօրանայր՝ ի միտ առ վաղվաղակի զերևելի մասունս իտա-

լական խմաստասիրութիւնէ՝ ի գերապանծ ուսուցչաց անտի։ Ա.յլ քանզի առաւելապէս յարեաւ եր յիւրոյին վարդապետեան՝ ի Սոկրատէս, զնա ձևացուցանելոր պէս խօսող գրեթէ ամենայն բանից իւրոց. և զոր ինչ յայլոցն ուսեալ եր, կամ ինքնին իւրականն մտաւորութիւն ծանուցեալ նոր բին Սոկրատայ վայելչաբանութիւնն և բարոյական խմաստիւք յարդարեր ։

Ա.րդ որովհետև խմաստուն ուսումն պարապեալ է՝ ի գործ և՝ ի մտաւոր տեսուի, զմի մանն նորա մարթ է կոչել գործական, և զմիւսն՝ հայեցողական. յորոց առաջինն պատկանի՝ ի գործ բարեկարգուե վարուց, և երկրորդն՝ ի նկատել զպատճառս բնութ և զպարզապէս ճշմարտութիւն։ Այս ահա Սոկրատէս՝ ի գործականն ասի զերազանցեալ և Պիւթագորաս զամենայն ինչն մտաց Թափեալ յաւէտ՝ ի հայեցողականն. իսկ Պղատոն լծորդեալ զերկոսին, կատարագործեաց զխմաստասիրութիւն, բաժանեալ զայն՝ ի մասունս երիս, ՝ի բարոյական՝ որ առաւել՝ ի գործականութիւն պարապի, ՝ի բնական՝ որ՝ ի հայեցողուէ կարգեալ է, և՝ ի բանական կամ՝ ի տրամաբանական՝ որով ճշմարիտն՝ ի ստոյ տարորոշի ։ Այս այս թէպէտ և առ երկոսին ևս կարևոր է՝ առ գործականութիւն և առ հայեցողուէ, սակայն հայեցողութիւն առաւելապէս փոյթ է՝ ճշմարտութեն լինել մտացուս. վասն որոյ այս երրեակ բաժանումն ոչ հակառակ ինչ է զանազանութեն, որով զամենայն ուսումն խմաստութիւն իմանամք հաստատեալ՝ ի գործականութիւն և՝ ի հայեցողութիւն։

Այսպէս զինչ ինչ յայսոսիկ, կամ զիւրաքանչիւր մասանց զայսցանէ խորհէր Պղատոն, այսինքն է՝ ուր արդեօք ճանապէր կամ հաւաներ դնել զվախճան ամենայն ներգործութեց, ուր զպատճառ ամենայն բնութեց, ուր զղայս ամենայն բանից կամ պատճառաց, երկար համարիմ բացայտասել մանրամասն, և ոչ արժան դատիմ համարձակ ճշգրտաբանել։ Այանզի զՍոկրատէս ձևացուցեալ նորա իբր առաջնորդ բանից՝ ի մատեանս իւր, և զնորայն կալեալ զընտանի եղանակ՝ թաքուցանել զիւրն գիտութիւն

կամ զկարծիս, ոչ դիւրաւ է հասու լինել կարծեաց նո-
րա՝ ի ծանր ծանր խնդիրս։ Ապակին որ ինչ առ նմա ըն-
թերցեալ լինին, կամ զրոյս առ՝ի յայլոց ասացեալն պատ-
մեաց և գրեաց՝ ըստ սրտի հաւանելի դատեցաւ, արժան
է ինչ ինչ յայնցանէ յիշատակել և կարդալ՝ի գիրս յայս,
ուր ուրեք կամ Աշմարիտ կրօնիցն՝ զոր մեր հաւատոյ ըն-
դունին և պաշտպանեն՝ նպաստամատոյց են, և կամ հա-
կառակ թուին այնմ, ըստ խնդրոյն որ յաղագս միոյ այ
և կամ բազմից, և վասն Աշմարիտ երանական կենաց՝ որ
ինոյ յեւս մահու։ Ապա զի Թերևս արդեօք գերահրա-
շակեալքն՝ի հետևողս Պղատոնի՝ զոր գերագոյն յիմաս-
տասէրս հեթանոսաց դասէին, և անօսրագոյնս Աշդտեալ
հասու եղեն մտաց նորա, զայնպիսի ինչ խմացեալ իցեն
զայ, որ՝ի նմա դատիցի և պատճառս գոլոյ, և բան խմա-
նալոյ, և կարգ կեղոյ. որոց երեքեանց առաջինն հայի առ
բնական մասն, երկրորդն առ բանականն, երրորդն առ
բարոյականն։ Վասզի եթէ այնպէս առեղծաւ մարդ, զի
վերհագոյն իւրով մտաւոյն հպեսցի՝ որ անցանէ քան
զբնաւ, այս է՝ առ մի Աշմարիտն ած առնուազարին, առանց
որոյ ոչ բնաւ՝ի ինչ է անայ, և ոչինչ վարդապետութիւն
հրահանգէ, և ոչ մի ինչ գործ պիտանանայ, ապա ուրեմն
նա խնդրեսցի, յորում անվամանգ է մեզ առնելոյն. նա
նկատեսցի, յորում Աշդրիտ է մեզ առնելոյն։ Նա սիրեսցի,
յորում ուղիղ է մեզ առնելոյն։

ԳԻՒՂ ԺԱ.

Թէ վասն ձեռաբանութեանէ ընդ պղատոնականս առաւել արժան է՝ի պայքար մտանել, զի՝ի վայր դասալի են քան զկարծելս նոցա ուսանելոյ այլոց խնամատարից առհասարակ։

Իսկ արդ եթէ Պղատոն զնա առել լինել խնամատուն՝ որ

զորդութեամբ լինի երանելի, զի պիտոյ է զայլոյն հետա-
քննել բանս. ոչ որ այլ իբրև զպղատոնեանս մեք ձա-
ւորագոյնս մեզ մատչի. Ի բաց կացցէ ապա առասպելական
դիցաբանութեն՝ որ ապիրատութեամբք դից հեշտացու-
ցանէ զանձինս ամբարշտաց. ոչ միայն քաղաքացիսն այն՝
յորում գիւք անմահքն պատրեալ ածութեն անուամբ
զմարգիկ զմոլեալս յերկրաւոր վայելուածս, զմարդկան
մոլորութիւնս իբր ածական մեծարանս եւուն համարել, զըր-
գռելով անարժան հնարիւք զիւրեանցն պաշտօնատարս՝
կալ ի վերին եղերական խաղոյ՝ իբր իւրեանց պաշտա-
մանն, և զնոսին խակ տեսողս ինքեանց խաղ առնելով հե-
տալ. ուր եթէ կատարին ի մեհեանս իբր ինչ իբր
պարկեշտագոյնք, այլ լծորդ ունելով զթատրոնացն անա-
ռակութիւն՝ աղտեղանան. և որ ինչ զազիրքն գործին ի
թատրոնս, առ համամատուբ զղջանայց մեհենիցն արգա-
բանան. Ի բաց կացցեն և զոր ոչ արդեն յատկագոյն պաշ-
տամանցս այսոցիկ առակեաց յերկինն և յերկիր, ի սեր-
մանս և ի ներգործութիւնս իրաց ապականացուածոց. զի ոչ
այնպիսիք ինչ ցուցանեն յարարողութեան յայնոսիկ՝ բան
որում ինքն ջանայ յարմարել, որով ջանք իբր վերպ են ի
հշմարտութենէ. և եթէ կայցեն և այդպիսի իրք, ոչ ար-
ժան էր հոգւոյ բանաւորի իբրև իւրում աստուածոյ պաշ-
տօն տանել իրաց՝ որ սոսկալ քան զնա են բնաւորական
կարգաւ. և ոչ վերագասել քան զինքն իբր աստուածս՝
զիրեն զայն, քան զորս նախապատիւ արարած ինքն ի հշմ-
մարտէն ասէ. Ի Թողցին և զորս Հոմանի Պոմպիլիոս զիւր
գրեալսն զայսպիսի պաշտամանցդ փոյթ կալաւ ծածկել՝
ընդ իբր Թագելով, որ և արօրագրութիւն յերեւան եկեալ,
այրեցաւ բան Հրամանի ծերակուտին. Ի Այլ զի մեզմա-
գոյնս ինչ զՀոմանի կարծեցեմք, ի նմին սակի են և զորս
Հզեքսանդր մակեդոն գրեաց առ մայր իւր, իբրու յայտ-
նաբանեալ ինքեան ի Հնոգէ ուսեալ, քրմապետէ կրօ-
ինցն եգիպտացւոց. ուր վկայէ՝ Եթէ մարդիկ են ոչ միայն
Պիկոս և Փաւնոս և Հնեաս և Հոմանոս, այլ և Հե-
րակլէս և Հսկղեպիոս, և Հաքոս Մնաւնդ Հեմիլեայ,

և որ այլ ևս՝ ի մահկանացուաց առ աստուածս համա-
րեալք. այլ և աստուածքն ազգաց մեծամեծաց՝ զորս կի-
կերոն թուի ակնարկել առանց անուան՝ ի տուսկուղեան
Ճառն, զոր օրինակ են Ջամազդ, Հերա, Կռոնոս,
Հեփեստոս, Վեստա, և այլք բազմագոյնք, զորս Վար-
րոն փոխաբերել ջանացաւ՝ ի մասունս աշխարհի, կամ՝ ի
տարերս։ Վասնզի և եգիպտացին այն քրմապետ երկու-
ցեալ՝ ի յայտնելոյ գաղտնեացն, աղերս արկանէ Վղեք-
սանդրի, զի յետ ծանուցանելոյ մերն զգրեալսն զայսոսիկ՝
հրամայեսցէ՝ ի հուր ձախել։ Վպա ոչ այսոքիկ միայն պա-
րունակեալքս յառասպելական և՝ ի քաղաքական դիցա-
բանութիւնէ տեղի տացեն պղատոնեան իմաստասիրաց, որք
զՀնմարիան ՅՁ ասացին լինել պատճառ իրաց, և Հնմար-
տութիւն յայտարար, և երանութիւն տուիչ, այլ և ինացեալ
իմաստասէրք՝ որք մարմնախորհուրդ մարդկանն մարմնա-
կան սկզբունս բնութեան աւանդեցին, տեղի տացեն
այնչափ բազմութիւն այնոցիկ՝ որք ծանեան զՅՁ գերագոյն՝
նոքա որք պատճառ և սկիզբն իրաց ասացին. որպէս Ա-
ղէս զՀուր, Վնաքսիմենէս՝ զօդ, ստոյիկեանք՝ զՀուր, Ա-
պիկուրոս՝ զՀիւղէս՝ մանկունս մանրամասս, անհատս և
անզգայունս. և որ այլքն ևս՝ զորս չէ հարկ յերկար՝ ի թիւ
արկանել, աւանդիչք զմարմինս պարզս կամ բաղադրեալս,
անկենդանս կամ կենդանիս, բայց աներևոյթն մարմին։
Վասնզի ոմանք յայնցանէ հնարաւոր կարծեցին յանկեն-
դանի իրաց լինել կենդանիս. որպէս եպիկուրեանք։ Ւսկ
ոմանք՝ թէ՝ ի կենդանւոյ լինին և կենդանիք և անկեն-
դանք, բայց մարմինք՝ ի մարմնոյ։ Օ՝ ի ստոյիկեանք զՀուր զմի՝ ի չորից տարերաց՝ որովք երևելի աշխարհս բաղ-
կանայ, համարեցան կենդանի լինել և իմաստուն, կեր-
տող աշխարհի և աներևոյթի որ՝ ի նմա, և պարզաբար զՀուրն ՅՁ ասացին։

Վոբա և նմանք սոցա զայն ևեթ զօրեցին զմտաւ ա-
ծել, զոր Թեղադրեր սիրա նոցա զակատեալ՝ ի խորհուրդս
մարմնոյ։ Վհնչին դոքա յանձինս իւրեանց զայն զոր ոչն
տեսանէին, և երևակերպէին՝ զոր արտաքոյ տեսեալ եր

նոցա, և զնոյնս՝ի յետսանէնն անգամ խորհէին. բայց ըստ խորհրդածուեաս այսմ ոչ և և մարմին, այլ նմանուի մարմնոյ։ Իսկ այն որով՝ի հոգւոյն տեսանի այս նմանութիւն մարմնոյ, ոչ մարմին է, և ոչ նմանութիւն մարմնոյ, և որով տեսանի և ընտրի թէ գեղեցիկ իցէ ինչ և կամ տգեղ, նա ապաքէն լաւագոյն է քան զիրն՝ զորմէ դատուին է։ Ա՛ա է միտք մարդոյ և բնութիւն հոգւոյ բանաւորի, որ արդարեւ ոչ է մարմին, որովհետև և ոչ նկատեալն այն և դատեալն՝ի խոկացող հոգին՝ մարմին է։ Ա՛յլ ուրեմն սա ոչ հող է, ոչ ջուր, ոչ օդ, ոչ հուր, այն են քառեակ մարմինք՝ տարր անուանեալք, յորոց բաղկացեալ տեսանելիք զմարմինեղէնս աշխարհս։ Իսկ եթէ հոգիս մեր չէ մարմին, զիարդ արարիչն հոգւոյ ասէ՝ մարմին իցէ։ Ա՛յլ տեղի տացեն սոքա պղատոնեանց՝ որպէս ասացաւ. տեղի տացեն և այնոքիկ, որք թէպետ ոչ իշխեցին մարմին ասել զնա, սակայն նոյնաբուն ընդ նմա համարեցան զոգիս մեր։ զի ոչ հայեցան՝ի բազմադէմ փոփոխականութիւն մերոյն հոգւոյ, զոր այ բնութիւնն ընծայել անպատեհ է։ Ա՛յլ ասեն՝ թէ մարմնոյ մասամբն փոփոխի հոգւոյ բնութիւն, զի ինքեամբ անփոփոխելի է։ Ա՛յդպիսիքդ կարող էին ասել նոյնպէս, թէ մարմնով իւրք վերաւորի իրանքս մեր. զի ինքնին անխոցելի է։ Ա՛յլաբէն որ անփոփոխելին է, ոչինչ իւրք փոխել կարէ. և զի որ մարմնոյն փոփոխելի է, իրօք ինչ փոփոխի, նմին իրի անփոփոխելի զնա ասել իսկապէս՝ անմարթ է։

ԳԻ ՅԱՒԵՍ Ը.

Ցաղագս կարծեաց պղատոնեանցն՝ի բնախօսական մասին խմաստասիրութիւն։

Ա՛յլ արդ խմաստասէրքս այսոքիկ յիրաւի գերահռչակեալք քան զայլսն՝ի միտ առին թէ ոչ է մարմին ինչ բնաւին. վասն որոյ գերիվերոյ անցին զնմ մարմնովք՝ի

խնդրել զնա՛ծ ։ Յեսին՝ զի որ միանգամ փոփոխելին է, չէ նա՛ծ բարձրեալ. նմին իբրև զերիվերոյ անցեալն ամենայն հոգւոյ փոփոխականի՝ ՚ի խնդրել զբարձրեալն նա՛ծ ։ Յեսին դարձեալ, զի ամենայն տեսակ յիւրաքանչիւր փոփոխական իրազ, որով են նոքա ինչ, զիարդ և իցէ, որպիսի բնութի՛ւն և իցէ, յայտնանէ և եթէ գոյանայ՝ որ խոկութի՛ւն է և անյեղափոխ է ։ Որպէս վասն ընդհանուր աշխարհի մարմինք, կերպարանք, որակք, շարժուն կարգաւորեալ, տարբերք առկայացեալք յերկնից մինչև յերկիր, և որ ՚ի նոսա իւրաքանչիւր մարմինք, այլ և կենդանականք համայն, և թէ որ մնանի և պահի յինքեան՝ որպէս ծառք, և թէ մերձ գնան և զգայուն՝ որպէս անասունք, և թէ որ հանդերձ այսու և իմանայ՝ որպէս մարդիկ, և թէ որ անկարօտ մնացի գաբմանոյ՝ կայ յինքեան, զգայ և իմանայ՝ որպէս հրեշտակք, այս ամենայն ՚ի նմանէ և եթէ ուրեմն գոյանալ՝ որ էն պարզաբար. զի նորա ոչ այլ է գոլն, և այլ կեանն. որպէս թէ հնար իցէ լինել նմա անկենդանի. և ոչ այլ է նորա կեալ, և այլ իմանալ, որպէս թէ կեալ մարթի իցէ նմա առանց իմանալոյ. և ոչ այլ է նմա իմանալ, և այլ երանելին լինել, իբր այն թէ իմանալ կարիցէ՝ և երանելի ոչ լինել. այլ որ ինչ է նորա կեալ, իմանալ, երանելի լինել, նոյն այն է նմա գոլ ։

Յայսմիսկ անփոփոխուէ՚ն՝ ի պարզականուէ՚ն՝ ի միատեսն նոքա, թէ նա արար զնմա, և ինքն անարար է յաւիտենից և անեղ։ Ո՛ան զի խելամուտ եղեն, թէ որ ինչ միանգամ է, կամ մարմին է և կամ կեանք է. և թէ լաւագոյն է՝ կեանք լինել, քան մարմին. և թէ տեսակ մարմնոյ՝ զգալի է, իսկ կենացն՝ իմանալի. նմին իբրև զիմանալին տեսակ մեծագրեցին քան զզգալին ։ Օ՛ գալիս ասեմք՝ զոր ինչ տեսուչք և շօշափմամբ մարմնոյ մարթի զգալ։ Իսկ իմանալիս՝ զոր միտաց հայեցիւք լինի ըմբռնել քանզի չէ և ոչ ի գեղեցկութի՛ւն մարմնական՝ եթէ ՚ի տեսակ մարմնոյ իցէ՝ որպէս գեմք, և եթէ ՚ի շարժման՝ որպէս յերդամայնութի՛ւն, զոր մի ոչ գատաստան առնիցէ հոգի. իսկ զայդ չէր կարող առնել, թէ ոչ լաւագոյն լինէր ՚ի նմա այս տեսակ կամ

գաղափար՝ առանց Թանձր զանգուածոյ, առանց զօղանջ մանն ձայնի, առանց խորոյի տեղւոյ կամ ժամանակի։ Այլ և անտանօր եթէ փոփոխելի ոչ էր, ոչ այս ոք լաւագոյն քան զայլ գաւաթը յաղագս զգալի տեսակին, լաւագոյն արագամիան քան զթմամիա, լաւագոյն հմուտագեաւն քան զանհմուտ, լաւագոյն հրահանգեալն քան զանհրահանգ, որպէս և նոյն անձն՝ ի զարգանալ իւրում՝ լաւ և աւ գաւի յետոյ՝ քան յառաջն։ Այլ որ ընդունի գյաւէտ և զբաւաղ, անշուշտ փոփոխական է. նմին իրի արք կորովամիտք և գիանաւորք և ներկուածքն յայսոսիկ՝ անգէն իմաստասիրեցին, թէ չիք յայն իրս տեսակ առաջին, ուր յայսնապէս փոփոխել տեսանի։ Այս քանզի հայեցեալ տեսանելին՝ զի մարմին և հոգի յաւէտ և նուազ տեսակս ունին, և եթէ մերկ յամենայնի լինիցին, բնաւ իսկ անգոյ ինայիցին, ի միտ առին թէ գոյ լինի՝ յորում իցէ առաջին տեսակ և անփոփոխ, որով և անհամեմատ, ուղղապէս հաւանեալք թէ անգ է սկիզբն իրաց անաւարտ, յորմէ ամենայնք եղեն։ Այսպէս ահա զգիտութեն այ լինքն իսկ յայտնեաց նոցա, յորժամ անեւոյթքն այ ի ծանօթութեն եղելոցն նուաւելեւեցան, միանգնաւոր զօրութեն նորա և ածութեն, յորմէ և եւեւելիք ամենայն և ժամանակեայք հաստեցան։ Այսքիկ ըստ բնախօսականն կոչեցեալ մասին ասացան։

ԳԻՒՂԻՒ Լ

Թէ քանի վերագոյն գաւելի են պղատոնականք քան զայլս՝ ի տրամաբանութեն, այս է՝ ի բանական իմաստասիրութեն։

Լուսկ ըստ երկրորդ մասին ուսմանն՝ որ ի Հունաց լըճէկ կամ լճէկա ասի, այս է՝ բանական կամ տրամաբանական, ոչ բնաւ ի բազդատութեն ընդ պղատոնականն գնել արժան է զայնոսիկ, որք զնչմարտութեն դատումն հաստատեցին ի զգայութես մարմնոյ, և նոցուն կէզակարծ և

պատիր կանոնաք չափել պարտ վարկան զամենայն ուս-
մունս. որպիսիք եպիկուրեանքն են և այլք համամիտք,
ընդ որս և ստոյիկեանք, որք ուժգին զակատեալք ՚ի վի-
ճաբանական մարզս՝ տրամախօսական առ ՚ի նոցանէ կար-
դացեալ, համարեին թէ ըստ մարմնոյ զգայութեանց
առնուլ զայն օրէն է, պնդելով ՚ի նոցունց կազմակեր-
պել հոգւոյն զգաղափարս կամ զծանօթութիւնս իրացն՝
զորս մտաւորականս կոչէն, և սահմանաւ բացատրեալ
յինքեանց. և ասեն թէ սովիմբ անձն և բաղխիսի բովանդ-
դակ արհեստ ուսանելոյ և ուսուցանելոյ։ Այլ ես ընդ
այն եմ զարմացեալ մեծապէս, զի դոքա ոչ զայլ ինչ կոչեն
կամ դատին դեղեցիկ՝ բայց զնմաստունսն և եթէ. և որովք
զգայարանօք մարմնոյ տեսեալ իցէ նոցա զայս դեղեցկու-
թիւն. որ մարմնոյ աչօք զկերպարան խմաստութիւն և զգեղ
նշմարեցին։ Այլ պղատոնականք՝ արժանապէս նախա-
պատուեալք քան զայլսն՝ ընտրեցին մեկնեցին զմտօք ըմ-
բռնեալսն՝ յայնցանէ որք զգայարանացն են հասանելի. ոչ
զգայութեց զլացան զոր նոքայն կարեն, և ոչ ետուն նոցա
աւելի քան զոր կարեն։ Իսկ լոյս մտաց առ ուսանելոյ
զամենայն՝ ասացին զնա ինքն զնծծ, յորմէ եղեն ամենայն։

ԳԼՈՒԽ Ը.

Թէ ՚ի բարոյական խմաստութենէ ևս նախագահ են պղատոնականք։

Այնպէս մեզ բարոյականն՝ ըստ յունին էպիկ ասա-
ցեալ մասն, յորում ինդիր է զծայրագոյն բարւոյ, առ որ
վերաբերեալ զամենայն զմեր գործս, և ոչ վասն այլոյ իրիք՝
այլ վասն իւր ցանկացեալք նմին և զնա ստացեալք, ոչ այլ
ևս ինդրելոյ ինչ առ ՚ի լինելոյ երանելի։ Այնպէս յայն
սակս իսկ ասացաւ վասնզի, զի վասն նորա կամիմք զայլսն,
և զինքն վասն իւր միայն։ Այդ զայս երանացուցիչ բա-
րի՝ փիլիսոփոսք ոմանք ՚ի մարմնոյ ասացին լինել, այլք ՚ի

հոգւոյ, և կէսք յերկաքանչիւրոյ անտի ՚ի մարդումն։ Օ՚ի տեսեալ նոցա զմարդ ՚ի հոգւոյ բաղկացեալ և ՚ի մարմնոյ, համարեին թէ միով յայնցանէ, և կամ յերկոցունց իսկ կարող են ունել զաբիւրքն զոլ վախճանական ինն բաւուղ, որով լինիցին երանելիք, յայն վերաբերեալ զամենայն զոր առնէին, և ոչ այլում յոր վերաբերիցեն՝ եղեալք ՚ի խնդիր։ Ասացաւ յասել անդ զնոցանէ՝ թէ երրորդ ազգ ինն բարեաց յաւելին՝ արտաքինն անուանեալ, որպէս պատիւ, փառք, մեծութիւն, և որ այլ սոյնպիսի, ոչ յայն միոյ յաւելին՝ իբրև թէ վախճանական ինչ իցէ՝ վասն իւր ցանկալի, այլ՝ վասն այլոց. և թէ այս ազգ՝ բարի է բարեացն, իսկ չարացն՝ չար. սորին վասն զբաղին մարդոյ՝ զոր որոնէին ՚ի հոգւոյ կամ ՚ի մարմնոյ կամ յերկոցունց և ս, համարեին ՚ի մարդոյ խնդրել, և ոչ յայլ իրաց։ Այլ որք ՚ի մարմնոյ զայն ըղձանային, յանարգ մանել մարդոյ խնդրէին. և որք ՚ի հոգւոյ, ՚ի լաւագոյն մասնէն. իսկ որք յերկաքանչիւրոցն, ՚ի բոլոր մարդոյն։ Այսպա ուրեմն եթէ յիւրաքանչիւր մասնէ, և եթէ ՚ի բոլորէն, տակաւին ՚ի մարդոյ է եթէ։ Այլ ոչ զի այդ գնացեալ զանուրեքն երբեակ է, զերիս միայն՝ այլ յոլովս երկնեալ երկսաւակուրեիս և աղանդս ՚ի մէջ իմաստասիրաց. քանզի և յաղագս բարեաց մարմնոյ կամ հոգւոյ, և կամ երկաքանչիւրոց անմիաբան կարծիս կալան իւրաքանչիւր նոցա։ Հապա և սոքա առհասարակ տեղի տացեն պղատոնեանց. որք երանելի ասացին զմարդ՝ ոչ որ վայելէ ՚ի մարմնի կամ ՚ի յոգւոջ, այլ որ յամն վայելէ. ոչ որպէս հոգի մարմնովն կամ ինքեամբ, կամ որպէս բարեկամ ՚ի բարեկամ, այլ որպէս ակն ՚ի լոյս. յորս թէ որպիսի ինչ նմանուրեիք յարմարել մարթ իցէ, այլուր ըստ այ չնորհելոյն յայտնեացուք՝ որչափ մեզ կար տանիցէ։ Ճատ եւ յիշատակէ ՚ի ժամուս, թէ Պղատոն զվախճան բարւոյ սահմանեաց կեալ ըստ առաքինուրեիք. և թէ այնմ ևեթ յաջողէ այս, որ զգիտուրեիք այ ունիցի և զնմանողուրեիք, և ոչ այլով իւիք լինի երանելի. որով անեղբայրաբար հաւանի՝ թէ իմաստասիրելն է սիրել զնծ, որոյ բնուրեիք ան-

մարմին իցէ։ Արդ՝ զԿնէտ գայ տիրապէս, Թէ յայնժամ երանելի լինի իմաստասէրն, յորժամ սկսանի վայելել յԱծ, Օ՛ի Թէպէտ և ոչ անդէն վաղվաղակի երանելի է ոք ՚ի վայելելն յայն՝ զոր սիրէ. իբր զի բազումք զոչ սիրելիսն սիրելով, եղկելիք են և առաւել եղկելիք ՚ի վայելելն. բայց սակայն ոչ ոք երանելի է՝ որ չվայելէ ՚ի սիրեցեալն. քանզի և որք զսիրելիսն սիրեն, ոչ Թէ սիրելովն երանելի զանձինս վարկանին, այլ վայելելովն։ Ապա ուրեմն որ ոք վայելէ ՚ի սիրեցեալն, և սիրէ զՆշմարիտն և զծայրագոյն բարի, ո՞ զնա երանելի չասիցէ, բայց Թէ ամենևին եղկելին։ Իսկ Նշմարիտ և ծայրագոյն բարի՝ զԱծ ասաց Պղատոն. այր վասն և իմաստասէր զԱծասէրն Հաստարի. և զի իմաստասիրուԹի կարգեալ է յերանելի կեանս, յԱծ վայելելով երանելի է նա՝ որ զԱծ սիրիցէ։

ԳԼՈՒԽ Ժ

Ցաղագս այնր իմաստասիրուԹե՛ որ առաւել հուպ մտաւքն առ ՆշմարտուԹի քննական հաւատոց։

Ա՛ԱՍՆ որոյ նախապատիւ քան զայլս գնեմք, և ընտանեգոյնս մեզ Նանաչեմք զայնոսիկ յիմաստասիրաց, որք զծայրագոյն և զՆշմարիտ բարւոյն խոստովան եղեն՝ Թէ նա է եղելոց իրացն արարչագործ, և լոյս Նանաչելեացն, և բարին գործելեաց. և Թէ ՚ի նմանէ խակ է մեզ սկիզբն բնուԹե՛, և ՆշմարտուԹե՛ վարդապետուԹե՛, և երանուԹե՛ կենաց. և սոքա Եթէ սլղատանակաւք կոչեսցին յատկաբար, և կամ յանուն այլ աղանդոյ, Եթէ որք ՚ի յոնիական դպրոցի երևելիք՝ ծանեան զայսոսիկ իբրև զՊղատոն, և կամ ուղղաբար Հասու գտան մտաց նորա. Եթէ իտալացիք և՝ Համախոհք ՊիւԹագորայ և նորայոցն, և որ այլք և նմին կարծեացն Հաւանեալք. Եթէ որ յայլ ազգս գԹոք և իմաստասիրք Համարեալք, ատլան

տեսանք, լիբիացիք, եգիպտացիք, հնդիկք, պարսիկք, քաղդէացիք, սկիւթացիք, գաղղիացիք, սպանիացիք, այլովքն եւս՝ որք զսոյն ծանեան և ուսուցին։

ԳԻՒՂԻՍ Ժ՝

Ո՞ր իցէ առաւելութիւն երկիւղած քրիստոնէի յիմաստասիրական արհեստս։

Այլ քրիստոնեայ եկեղեցական տառիցն ևԷթ մակաւոյս, եԷթ անգիտանայցէ և զանուն պղատոնականաց, և ոչ երկատեսակ իմաստասիրացն եղելոց ՚ի յոյն լեզու գիտակ իցէ՝ յօնիականացն և իտալացւոց, այլ ոչ այնպէս խօթամիտ է ՚ի մարդկայինսը, մինչև չգիտել Թէ իմաստասիրաց է պարապել յուսումն իմաստութեան, և նմին խակ իմաստութեան լինել աշակերտ։ Վակայն անձնապահ կայ յայնցանէ՝ որք ըստ տարերց աշխարհիս իմաստասիրեն, և ոչ ըստ այ, յորմէ աշխարհ արարաւ։ Խրատեալ է և յառաքելական հրամանէն, և հաւատարիմ ունկնդիր ասացեալցն . “ Օ գոյշ լերուք՝ մի ոք իցէ՝ որ զձեզ կողոպտիցէ Ճարտարմտութեամբ և մնոտի խաբէութեամբ, որ ըստ տարերց աշխարհիս ,, . Կղ . Ը . 8 ։ Այլ դարձեալ՝ զի մի զամենեսեան խաբէականս վարկանիցի , լսէ ՚ի նմին առաքելոյ ասելզոմանոյ . “ Այսան զի գիտութենն այ յայտնի է ՚ի նոսա . քանզի ՚ած իսկ յայտնեաց նոցա ։ Օ յ աներեւոյթքն ած՝ ըստ՚ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին, և միանձնեաւոր զօրութիւն և ՚ածուի նորա ,, . Հռ . ա . 19 . 20 ։ Որ և ՚ի խօսել իւրում առ աթենացիսն՝ մեծամեծս իմն բարբառեալ զայ, և զսակաւուց հասանելիս զայն, “ Կոլաւ կեամբ, շարժիմբ և եմք ,,՚ի վերայ եբեր ասելով . “ Որպէս և ոմանք ՚ի ձերոց Ճարտարաց ասացին ,, . Գործ . ԺԷ . 28 ։ Այլ քրիստոնեայն գիտէ զգուշանալ և ՚ի սոցանէ՝ յորս հնչմոլորեալ են . քանզի ուր ասացաւն՝ յեղելոց իրաց յայտնեաց նոցա ՚ած նկատել զիւր աներեւոյթն, անդ նոյնպէս

ասացաւ՝ ոչ ուղղութիւն պաշտել նոցա զՅաճ . զի զպատիւ միայնում՝ այլ վայելչական՝ ընծայեցին այլոց որոց չէր անկ . " Օ ի ծանեան զՅաճ , և ոչ իբրև զՅաճ փառաւորեցին կամ գոհացան . այլ նանրացան՝ի խորհուրդս իւրեանց , և խաւարեցան անմտութիւն սիրտք նոցա : Օ անձինս առ իմաստուն ունէին , յիմարեցան . և փոխեցին զփառս անեղծին ՚ի նմանութիւն պատկերի եղծանելի մարդոյ , և Թռչնոց և չորքոտանեաց և սողնոց ... ՚ . ՚ . 21 : Որովք տայ Է մանալ և զհոռովմայեցիս և զյոյնս և զեգիպտացիս . որք իմաստութիւն անուամբն պարծէին . այլ զանս այսր յետոյ մտցուք ընդ նոսա ՚ի պայքար : Այլ յայտ և ևԷ նախաՒծար քան զայլս համարիմք զնոսա , զի համախոհք ընդ Մեզ էն յաղագս միոյն Ոյ , տիեզերացս արարողէ , որ ոչ միայն զերիվերոյ համօրէն մարմնոց անմարմին է , այլ և ՚ի վեր քան զամենայն հոգիս՝ անեղծական , սկիզբն մեր , լոյս մեր , բարին մեր :

Իսկ եԹէ այր քրիստոնեայ՝ անուսումն յիմաստասիրացն գոլոյ՝ ոչ գիտիցէ նոցին բանիւքն վարիլ ՚ի խօսս , այս է՝ բնախօսական կոչել զայս մասն՝ յորում յոյզ և խնդիր լինի բնութեանէ , և բանական զայն՝ յորում զիարդ Հմտութեանէ գտանելի իցէ՝ աւանդի , և բարոյական զայն՝ յորում բանք լինին զվարուց , ՚ի ցանկալ վախճանի բարեաց , և ՚ի խորհել ՚ի բարեաց , այլ ոչ եԹէ այսուիկ անգիտացեալ գտանիԹէ ՚ի միոյնոյ ՚ի Հմտիցիս յամենաբարւոյն Ոյ գոյ ՚ի մեզ բնութեանէ՝ որով ըստ նորա պատկերին արարաք , և վարգապետութեանէ՝ որով զնա և զմեզ Հանապէսեմք , և Հնարհք՝ որով ՚ի նա մերձենալ՝ երանելի լինիցիմք : Այս իսկ է պատՀաս՝ այր վասն զքրիստոնեայս նախասՒծար գնեմք քան զիմաստասէրս . զինոքա զիւրեանցն Հանձար և զՀիգն Թափեցին ՚ի խնդիր պատՀառաց իրացն , և ԹԷ որ էցէ յեզանակ ուսանելոյ և կենցաղավարելոյ . իսկ քրիստոնեայք ՀաՃախանիԹ եղեալք , գտին ԹԷ ուր է պատՀառ արարչագործեալ տիեզերացս , և լոյս Հասանելոյ Հմտութեանէ , և աղբիւր յարբունի երջանկութեանէ : Ա ման որոյ եԹէ պղատոնականք , և եԹէ այլոց ազգացն իմաստասէրք՝ որք զայ-

սոսիկ խորհին զնոյ, համախոհք ընդ մեզ էն. այլ ընդ պղատոնականս առաւել հաճոյ թուեցաւ մեզ առնել զբանս խնդրոյս, զի ծանօթագոյն մեզ գտանին նոցայն գրուածքն։ Օ՛ և Հոյիք՝ որոց լեզուս նախապատուեցաւ յայլ ազգս, մեծապէս համբաւեցին զնոսա. և լատինացուցոյն յորդոբեալք ի նոցա նախապատուելոյն կամ ի փառաց, մտադիւր զնոյնս ուսան, և յիւրեանցն բարբառ յեզաբղկեալ առաւել և պերճացուցին։

ԿԻՒՐԻՈՍ ԺԲ.

Ուսումն արդեաք մարթացաւ Պղատոն առանալ զայն ուշիմութիւն, որով հուպ գոյաւ ի քրիստոնէականն գիտութիւն։

Օ՛ԱՐՄԱՆԱՆ ոմանք՝ ի կցորդելոցն ընդ մեզ՝ ի հնորհնն Վիճի, ի լսել անդ կամ յընթերնուլ զՊղատոնի խորհեցեալսն զնոյ, որովք ընտանեգոյն Հանապի առ Աշմարտութիւն մերոյ կրօնիցս. որոյ վասն ոմանք՝ ի կարծիս եղեն, թէ՝ ի գնալ նորա Աղգիպտոս՝ ուսեալ իցէ Աղրեմիայ մարգարէէ, կամ զմարգարէական գիրս ընթերցեալ յուղիգնացուէ իւրում։ զորոց զկարծիս և ես ինքն յառաջ բերի յայլ գիրս իմ. յղ. *բէօ. Վրդ. Ե Նհանչ։ Այայց Աշգրտիւ գննեալ զՀաշիւ ժամանակաց՝ որ կայ ի ժամանակագիրս պատմութիւնս, ծնունդ Պղատոնի տեսանի իբր Հարիւրամեայ ժամանակաւ զինի մարգարէութէ Աղրեմիայ. և զի ութսուն և մի ամ եկեաց Պղատոն, ի մնհուանէ նորա իբր ամք վեցհնսուն Հաշուին մինչև ի ժամանակն՝ յորում Պտղոմէոս արքայ Աղգիպտոսի զմարգարէական մատեանս Հերբայեցւոց խնդրեաց ի Հրէաստանի, և ի ձեռն եօթանասնոցն արանց Հերբայեցւոց գիտակ եղելոց Հելլէն բարբառոյ՝ փոխել կալաւ տալ թարգմանել, և առ ինքն ունել։ Այմին իբրև անմարթ էր Պղատոնի տեսանել զԱղրեմիաս ի վաղուց Հետէ վախճանեալն, կամ զմատեանսն ընթերնուլ՝*

զչև և ա փոխագրեալ՝ի լեզու յոյն, զոր միայն գիտէր Պղատոն. բայց եթէ գի կորովամիտ յոյժ էր, զոր օրինակ զԵպիտականն՝ նոյնպէս զերբայականս ուսաւ Հերմէս միջնոլ դաւ Թարգմանչի, ոչ՝ի գիր անցուցանելով Թարգմանողօրէն, որ Պղտղոմեայ ընծայի՝ որպէս երևելի երախտիք Թագաւորական իշխանութեն՝ի գլուխ տարեալ, այլ կենդանի ձայնիւ զպարտականակալսն յուշի ունելով ըստ իւրումն հասողութեն։ Ի դոյն և հաւանութեն ինչ տեսանին ցոյցք. զի արարածոց գիրք այսպէս սկսանին. “Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր. և երկիր էր անշրելայթ և անպատրաստ. և խաւար՝ի վերայ անդնդոց. և Հոգի Այ շրջէր՝ի վերայ ջրոց.,, Իսկ Պղատոն՝ի Տիմէի գիրսն՝ զոր գրեաց զաշխարհարարութեն, ասէ՝ Թէ Աստուած յայնմ արարածի զառաջինն բաղկացոյց զերկիր և զՀուր, յայտնապէս հրոյ ընծայեալ զսահման երկնի. ուստի այս ասացուած համահնաստ է ընդ ասացելոյն. “Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր.,, Իսկ զայն երկուսն՝ որ՝ի միջոցին եդեալ շաղկապեն զծայրսն, ասէ ջուր և օդ. և Թուխ յայս միտս խմացեալ զգրեալն. “Հոգի Այ շրջէր՝ի վերայ ջրոց.,. քանզի անգիտացեալ զգրոյն սովորութեն՝ի կոչելն՝ Հոգի Այ, և զի օդն ևս ասէ՝ ոգի կամ շունչ, համարեցաւ Թէ քառեակ տարերքն յիշատակին յայնմ վայրի։ Իսկ զոր դարձեալ ասէ Պղատոն, Թէ Աստուածն է իմաստասէր, ոչ ինչ այնպէս յաձախեալ է՝ի գիրս սուրբս։ Այլ որ յաւէտ իմն հաւանութեն ինձ տայ՝ոչ անտեղեակ լինել Պղատոնի գրոցն այսոցիկ, այս իսկ է՝ զի Մովսէսի երանելոյ պատգամս առեալ յայ՝ի ձեռն հրեշտակի, ՝ի հարցանել իւրում զինչ անուն է նորա՝ որ հրամայէրն գնալ յազատութեն եբրայական ժողովրդեանն Յիգիպտոսէ, տուաւ պատասխանի. “Ես եմ որ էն. և ասասցես որդւոցն Իսրայէլի. որ էն՝ առաքեաց զիս առ ձեզ.,. յայտ արարեալ՝ Թէ առ Հաստատութեն իսկապէս էին՝ իբր զի է անփոխոխելի, եղեալքն ամենայն գոլով փոփոխելիք՝ անդոյ են։ Այրդ զսոյն պնդապէս կալաւ Պղատոն, և աւանդեաց բազում խնամով. և գիտեմ իսկ ոչ՝ Թէ գտանի-

ցի այդ՝ ի գիրս այնոցիկ՝ որ յառաջ եղեն քան զՊղատոն, քաց՝ ի բանից անտի գրոյն "Այս եմ որ էն. և ասասցես նոցա՝ որ էն առաքեաց զիս առ ձեզ..,

ԳԼՈՒԽ ԺԲ

Թէ պղատոնականք անդամ, Թէպէտ և ուղղոյ ինչ իմացեալ իցեն զմիոյ Աչմարտէն ոյ, այլ սակաւին արժան համարիլին պաշտօն մատուցանել աստուածոց բազմաց:

ԱՅԼ արդ ուսար և ուսեալ իցէ Պղատոնի զայսոսիկ, եթէ՝ ի կանխագունից քան զինքն նախնեացն գրոց, և եթէ զոր օրինակ առաքեալ ասէ, "Օ՛ի գիտութիւնն այ յայտնի է՝ ի նոսա, քանզի ած իսկ յայտնեաց նոցա, զի աներեւոյթք նորա՝ ի սկզբանէ աշխարհի արարածովքն իմացեալ տեսանին, այսինքն է՝ մշանջենաւոր զօրութիւն և ածութիւն նորա.., ես իրաւամբք զարգիս ընտրեցի խոսել ընդ պղատոնական իմաստասէրս վասն առաջիկայ խնդրոյս՝ որ յաղագս բնախօսական ածաբանութեանէ. և որպէս ինձ թուի՝ յայտ արարի ըստ բաւականին՝ արդեօք յաղագս երանութեանն հանդերձելոյ յէտ մահու՝ միում այ պաշտօն մատուցանել արժան իցէ, Թէ բազմաց: Վասն զի յայն սակս զպղատոնականսն ընտրեցի առաւելապէս՝ զի նոքա որչափ ուղիղ խորհեցան յաղագս այ՝ երկնից և երկրի արարողի, նոյնչափ ակնառուրք քան զայլս գտան և պերճանուն, և նոյնպիսիք համարեցան նա և յապա է կելոցն գիանաւորաց: Վասնզի Քրիստոսեկ աշակերտ Պղատոնի՝ այր գերահանձար, Թէ և պերճախօսութենն մնասմբ ոչ զուգահաւասար նմին, բայց զոլովիւք անցուցեալ, հաստատեալ կացոյց զաղանդն պերիպատիկեան, այս է՝ Ճեմական. զի Ճեմելով ուսուցանել սովոր էր. և առաւել քան զբազումս յաշակերտակցացն, առ կենդանութենէ իսկ վարդապետին ժողովեաց իւր

Հետևողս. իսկ յետ մեռանելոյ Պղատոնի՝ քեռորդի նորա Սպեւսիպպոս, և Ξենոկրատէս սիրեցեալն յաշակերտս նորա՝ փոխանորդեցին ՚ի վարժարանի նորա՝ որ կոչէր ա-կադեմիա. յորմէ ինքեանք և նոցին յաջորդեալքն՝ ակադեմականք յորջորջեցան։ Ասյց ՚ի վերայ այսր՝ մերձաւորադոյնքն մեզ իմաստասէրք անուանիք՝ առաւել ՚ի Պղատոնի նախանձ բերեալք, յանձն առին ոչ զպերիպատետիկեանն կոչումն, և ոչ զակադեմական, այլ զպղատոնական. յորոց սակի են քաջանուն յոյնքն՝ Պղոտինոս, Յամբղիկոս, Պորփիւրոս. իսկ յերկաքանչիւր լեզու յոյն և ՚ի լատին՝ եկաց Ապուլէոս ափրիկեցի՝ պղատոնական երևելի։ Այլ տակաւին ամենեքին սոքա, և այլք սոյնպիսիք, և Պղատոն ինքնին՝ արժան համարեցան պատիւս ձօնել և բազմութե դից։

ԳԼՈՒԽ ԺԴ

Ցաղագս կարծեացն Պղատոնի, որ ասաց՝ Թէ աստուածք նոքա միայն ճանաչին, որ իցեն բարիք և առաքինասէրք։

Այդ Թէպէտ և ՚ի բազում այլ իրս ճանուցնս անմիաբան գտանին դոքա ընդ մեզ, սակայն յառաջիկայս խնդիր՝ որ չէ փոքր, և զնմանէ իսկ է բան մեր, Հարցանեմ նախ զնոսա. որոյ աստուածոյ կամ դից անկ համարին տանել պաշտօն, միթէ բարեաց՝ Թէ չարաց, և կամ երկուցն և՛ս։ Այլ ահա առ ձեռն ունիմք զՊղատոնի առած, յասէլնոքա՝ Թէ աստուածքն համայն բարիք են, և ոչ ոք ՚ի նոցանէ չար։ Այսպա ուրեմն բարեացն և՛ս իմանի պաշտօն ընծայել. զի յայնժամ՝ աստուածոց ընծային. և ոչ աստուածք ասին՝ եթէ չիցեն բարիք։ Այս եթէ այդ այդպէս իցէ, քանզի և ոչ այլազգ ինչ կարծիս մարթէ ունել զաստուածոց անուանելոց, անդէն ունայնանայ կարծիք ոմանց՝ Թէ զաստուածս չարս հաշտեցուցանել պարտ է պաշտամամբք, զի մի՛ վնասիցեն. իսկ զբարիսն կարդալ

առ 'ի յօգնութիւն ։ Ա՛յսմ պէս չարքն ոչ քնաւ աստուածք են . իսկ բարեացն զպատիւ պաշտամանց վայելչական առնեն ։ Ա՛յլ ո՞ր աստուածք են նոքա՝ որք զԹատերական խաղսն ախորժեն , և ատիպեն խառնել զնոյն չծախական գործս և 'ի չարդանս իւրեանց . որոց բռնութիւն ցուցանէ՝ Թէ են ինչ . այլ անկարգ չօժարութիւնդ ցուցանէ զնոսա չարս լինել ։ Իսկ Թէ Պղատոն չար խորհուրդս էր չայզագս Թատերական խաղուցն, չայտ իսկ է . որովհետև և զբերթողս անգամ զերդագրողս անվայելչական նային մեծութէ և բարութէ աստուածոց՝ վտարել 'ի քաղաքէ պարտ վարկանէր . և ո՞ր ապա այդ աստուածք իցեն՝ որք 'ի պատճառս Թատերական խաղուց դատախազ լինին Պղատոնի ։ Վասնզի նա ոչ առնու չանձն սուտ չանցուածովք զաստուածս երդիծաբանել . և սոքա զիւրեանցն մեծարանս հրամայեն նովին իսկ չանցուածովք բարձրացուցանել . և այն դարձեալ , զի սոքա հրամայեալք անդրէն հաստատել զնաղսն , 'ի խնդրել անդ զաղաեղիսն՝ գործեցին և զդժնդակսն , երբ մահու բարձին զորդի Տիտոսի Ա՛տիմեայ , և զնա ինքն Հարին խօթութէ , այնու զի ստունդանեաց հրամանի նոցա . և չետոյ 'ի կատարել հրամանին՝ փարատեցին 'ի նմանէ զախտս . իսկ Պղատոն ոչ ինչ զանգիտեալ չայնպիսի չարաչուք ոգւոց , և անխախուտ պնդեալ չիւրում կարծիս , արտասահմանել դատի 'ի բարեկարգեալ ժողովրդենէ զանհնային զբանաստեղծին անսուրբ գոմուընս , յորս անկղնտանան դիքն աղտեղասէրք ։ Ա՛րդ զսա ինքն զՊղատոն ընդ կիսաստուածս դասէ Ա՛բէոն , որպէս յերկրորդումն գրի չիշատակեցի . և սակայն սոյն սա Ա՛բէոն համարի Թէ չար աստուածքն ցածնուն արիւնաւոր զոհիւք և այլովք նոյնպիսի պաղատանաւք . իսկ բարիքն զնաղարկութիս ախորժեն՝ և զորս ցնծութէց են առնիչք ։ Ա՛ր զի՞ է ապա զի կիսաստուածն Պղատոն՝ ոչ միայն 'ի կիսաստուածոց անտի , այլ և 'ի համակ աստուածոց՝ և ս և 'ի բարեաց իշխէ խափանել հաստատութէ չայնպիսի խենէչութիս , վասն զի անարժանս և աղտեղիս չանաչէ ։ Ո՞ւր Թողից զայն , զի և

աստուածքն ինքնին ցրեն զկարծիս Աբէոնի. քանզի ի վէպս անդ անցից Ատինեայ ցուցան նոքա ոչ միայն առաքէ և խեղկատակ, այլ և դժնեայք և ահարկուք։ Ընդ ուրեմն բացայայտեացեն մեզ զայսոսիկ պղատոնականքն, որք զկնի կարծեաց առաջնորդին իւրեանց՝ զսա տուածս աներևոյթ համարին բարիս և համեստս, և առաքինութեանց իմաստնոցն կցորդակիցս։ Ասեն. ահա բացայայտեմք։ Ապա լուիցուք ուշի ուշով։

ԳԼՈՒԽ ԺԴ

Յաղագս կարծեաց այնոցիկ՝ որք եռաստեակս ասացին զբանաւոր հոգիս, այն է աստուածք երկնայինք, դեք օդայինք, և մարդիկ երկրաւորք։

Ի մէջ բոլորից կենդանեաց պերճացելոց ոգւով բանականաւ՝ երրեակ որոշումն է, ասեն, յաստուածս, ի մարդիկ, ի դեւս։ Աստուածքն ունին զբարձրագոյն վայրն, մարդիկ՝ զստորինն, դեք զմիջինն. զի աստուածոցն կայան յերկինս է, մարդկանն՝ յերկրի, և դեւից՝ յօդս. և ըստ զանազան պատուոյ տեղեացն՝ զանազան է և բնութեց նոցա պատիւ։ Որքն վասն աստուածք հզօրագոյն են քան զմարդիկ և քան զդեւս. իսկ մարդիկ ի խոնարհ քան զաստուածս և զդեւս կարգեալ են՝ որպէս ըստ կարգի տալոցն, նոյնպէս արժանեացն որոշմամբ։ Այս դեք միջինք՝ զոր օրինակ ստորև գոլով քան զվերնաբնակ աստուածսն՝ յետադասելիք են. նոյնպէս վերագոյնք քան զմարդիկ եղով, յառաջադասելիք են։ Վասն զի ընդ աստուածոյ կցորդ են անմահութեաբ մարմնոյ. իսկ ոգւոցն կրկին համակարիք ընդ մարդկան։ Այսան որոյ չէ պարտ զարմանալ, ասեն, եթէ զուարճանայցեն ընդ անառակութեիս խաղուց, և ընդ բանաստեղծիցն պաճուճանս, ներքոյ անկեալք մարդկայնոց ախտից։ Յորոց անմասն են աստուածքն և բնաւին օտարացեալք։ Զոյ ապա իմաստասի-

ըլլ, Թէ յաղարտել Պղատոնի և յարգելուլ զբանաստեղծականն կեղծիս՝ ոչ Թէ զաստուածն զամենևին բանիսն և զգերագահս ի բաց հատանէ ի վայելից անառակ խաղուց, այլ զդէս։

Այլ Թէ այդպէս են իրքդ, զոր և առ այլս ոմանս գոյ ընդՀառնուլ, սակայն Այուլէոս պղատոնական մատուրեցի յաշխարհէն ափրիկեացւոց՝ որ մեռանի մի ողջոյն յաղագս այսր գրեաց, մակագրեալ զայն «Յաղագս աստուածոյն Սոկրատայ», Ձառէ անտանօր բացայայտեալ Թէ յորմէ կարգէ աստուածոց ունէր իւր ընտրեալ Սոկրատէս և բաբեկամացեալ. մինչև ստէպ խրատել զնա աստուածոյն իւրոյ, զի ձեռնՀասի լինի ի գործոյ՝ զոր առնէին կամի, այլ տեսանէ ձախող եղը ունել։ Արդ համարձակ ասէ, և յաՁախակի հաստատէ Այուլէոս, Թէ նա ոչ էր աստուած, այլ դև. և մանրամասն բանագրուԹեամբ խօսի յաղագս «կար ծեացն Պղատոնի ի վերայ գերակայուԹեան աստուածոց, և խոնարհուԹէ մարդկան, և միջին լինելոյ դիւաց։ Այլ եԹէ այդպէս էին իրքն, զի՛արդ ապա իշխեաց Պղատոն զրկել ի Թատերական զբօսանացն՝ ոչ զաստուածս զզատուցեալսն յամենայն մարդկօրէն ախտաւորուԹէ, այլ զբուն իսկ զդէս, տարագրելով զբերԹողս ի քաղաքէ. բայց զի խրատէր այսու զՀոգի մարդոյ մինչ կայ դեռ ի մահկանացու անդամս, արհամարհել առ ի շուք հաճոստուԹեան զդիւացն անմաքուր հրամանս, յաղաղուԹեանց նոցա պժգալով։ Վասնզի եԹէ Պղատոն ըստ հաճոստուԹեանն պատշաճի կշտամբեաց և արգել զայսոսիկ, անմաքրապէս ուրեմն պահանջելոյն զայնս զդէս և հրամայեցելոն։ Այս կամ Այուլէոս սխալէ ի կարծել անդ՝ Թէ ի դիւացն կարգէ ունէր Սոկրատէս իւր բարեկամ, և կամ Պղատոն հակառակս խորհի, մերԹ զդէս պատուելով, մերԹ զնոցայն զուարճուԹիս տարապիր ի բարեկենցաղ քաղաքէ հանելով. կամ ոչ ի պատիւ ինչ է Սոկրատայ առ դևն բարեկամուԹէ. ընդ որ և նա ինքն Այուլէոս ամաչելով մեծապէս՝ զդիրն մակագրեաց «Յաղագս աստուածոյն Սոկրատայ»... ուր ըստ իւրումն

Ա ՂԱՆ որոյ յորժամ բարիոք կշռեսցէ զայսոսիկ այլ ձրիաբարիս բարեկրօն և ծառայիլ Աստուծոյ, քաւ լիցի թէ լաւ քան զինքն համարիցի զդէս՝ սակս ունելոյ նոցա մարմին լաւագոյն։ Այլ թէ ոչ՝ զրազումն յանբանից անգամ ունէր մեծագրել քան զինքն, իբրև զի առաւելուն նոքա

Առաքանութեանէ Աղբիւր և յերկար որոշելով զաստուածային ի դիւաց, ոչ արժան էր ասել՝ յաղագս աստուածոյն, այլ յաղագս դիւին Սոկրատայ։ Այլ զայդ առաւել ի բանս նախասացութեանն յայտնել կամեցաս, քան անդէն ի գլուխ գրոց. վասն զի ի լուսաժպտել առողջ վարդապետութեանէ ի մարդկային իրքս, այնպէս իմն խուսափին մարդիկ առ հասարակ ի դիւացն անուանակոչութենէ, մինչ զի եթէ չէ ընթերցեալ ուրուք զնոսն վիճաբան յորում մեծացուցանէ Պղուտարքոս զդիւացն պատիւ, տեսանէր ի գլուխ գրոցն՝ յաղագս դիւին Սոկրատայ, և ոչ զՊղուտարքոս անդամ առողջամիտ որ համարեր։ Այլ զինչ ինչ արդեօք եգիտ նա ի դևսն գովութենէ իրս, բայց զանսօսրութենէ և զսնդտակազմութենէ մարմնոցն, և զկայանին գերակայութենէ. քանզի զի յաղագս նոցա վարուցն ի խօսել անդ զամենեցունց առհասարակ, ոչ միայն բարի ինչ ոչ ասէ, այլ յոլովագոյն չարս։ Այլ և ի վերծանել անդ զգիրսն զայն ողջոյն, ոչ որ զարմանայցէ ընդ ախորժել նոցա զնաստեղականն անառակութենէն ի պաշտամունս իւրեանց. և զի առ աստուածս ձևացեալք՝ զուարճանան յանցուածոցն ամենայն աստուածոցն. և զի որ ինչ միանգամ՝ ի պաշտամունս նոցա մեղեալ տօնիւք կամ նոգիական անկումէն կատարի առ ի ծաղր, կամ ի զարհուրանս, վայելչական խակ է ախորժակաց նոցա։

ԳԻՐՔ ԺԱ

Ոչ մարմինք սգեղինք, և ոչ վերագոյն կայանք նախապատիւ առնեն զդէս քան զմարդիկ։

քան զմեզ և զպայարանաց սրտիցն, և դիւրաշարժ երա-
գութիւն, և սաստկութիւն ուժոյ, և բազմամեայ սիգտութիւն
մարմնոյ։ Այլ որ ի մարդկանէ հաւասարեսցի արծուեաց
և անգղոյց տեսողութիւն. ո՞ր չանոյ ի հոտոտել. ո՞ր
առիւծոյ և փղոյ ուժգնակուռ. ո՞ր օձից երկայնակեցու-
թիւն, զորոց սակ՝ մերկանալով զխորխն Թողուլ զներսութիւն,
և ի մանկութիւն դառնալ։ Այլ զի որ օրինակ քան զսոսա
ամենեսին գերիվերոյ եմք բանաւորութիւն և խմացողու-
թիւն, նոյնպէս քան զդեւս լաւագոյն ունիմք լինել հաճոյս
քաղաքավարութիւն։ Այանզի յայս իսկ առարկայիցն քան
զմեզ տուան յայ նախախնամութիւնն լաւագոյն ձիրք մար-
մնոյ, զի սովին եւս խրատիցիմք՝ առաւելագոյն խնամ ա-
ծել այնմ որով գերազանցեմք քան զսոսա, քան թէ մար-
մնոյ. և զի գխառացուբ արհամարհել զմարմնականն ա-
ռաւելութիւն՝ որ ի դեւսն է, վարուց բարեկրութիւն՝ որով
նախամեծար քան զսոսա եմք, ակն ունելով և մերանմա-
հութիւն մարմնոյ, ոչ այնմ որ ի յաւիտենից տանջանաց
մաշիցի, այլ որ մաքրութիւն հոգւոյ զկնի գայ։

Այսակ ըստ տեղւոյ բարձրութիւն՝ որով դէպ յօդս կան, և
մեք յերկրի, նախամեծար զսոսա հաւատալ քան զմեզ՝
արդարեւ ծաղռ է արժանի. ապա թէ ոչ՝ նախամեծար
քան զմեզ գրել պարտ էր զթեւաւորս առնոյն։ Այլ ա-
սեն՝ թէ թեւաւորք վաստակին ի թռչելն, և տածելի
ունին մարմին. այլ վասն յերկիր իջանելն առ ի հան-
գիստ, կամ ի դարմանս. իսկ դէպ զայդ ոչ առնեն։ Այոչ
ուրեմն հաւանիմ դորա, զի թեւաւորք վնեմք քան զմեզ
իցեն, և քան զդեւս խոնարհագոյնք։ Այսակ եթէ կարի ան-
մտութիւն են կարծիցդ, չիք պատճառք սակս բնականալոյ
դիւաց ի բարձրագոյն տարիս՝ արժանիս գոսա վարկա-
նել ընդունելոյ առ ի մէնջ մեծարանս կրօնից։ Այանզի
զոր օրինակ օդապարք Թռչունքն ոչ միայն քան զերկրա-
ւորս չեն մեծագրելի, այլ ներբոյանիկեալ իսկ են՝ սակս
հոգւոյն բանականի որ ի մէջ պատուականութիւնն, նոյն-
պէս դէպ թէպետ առաւել օդեղինք՝ ոչ այնու լաւագոյն
քան զմեզ երկրաւորքս են, իբր զի օդ վերագոյն քան զեր-

կիր է, այլ այնու նախամեծար քան զնոսա են մարդիկ, զի յոյս արանց բարեպաշտից անհամեմատելի է յուսայ հատուցեալ դիւաց։ Վասնզի և Պղատոնին պատճառաբանութեամբ՝ որով զքառեակ տարերս զուգաւորեալ կարգեաց, ընդ երկու ծայրսն՝ ընդ հուր մեծաշարժ և ընդ հող անշարժ անջրպետ արկեալ զայլ երկուսն՝ զօդ և զջուր, զի որչափ օդ՝ ի վերոյ է քան զջուր, և հուր քան զօդ, նոյնչափ և ջուրք վերագոյն քան զհող իցեն, ինքնին թեզադիր մեզ լինի բաւականաբար՝ թէ կենդանեացն յարգ ոչ ըստ դրից տարերացն կշռելի է։ Եւ Պղատոնէս ինքնին և այլք՝ զմարդ կենդանի երկրաւոր ասեն կամացմաքային, որ ահա յոյժ նախասպատիւ է քան զջրականն կենդանիս. ուր Պղատոն զջուրսն վերագրեաց քան զհող. որով՝ ի միտ առնումք թէ՝ ի հետաքննել զյարգ հոգւոց՝ ոչ զայն կարգ ունել արժան է, զոր՝ ի դիրս մարմնոցն տեսանեմք, այլ մարթի և՝ ի խոնարհագոյն մարմնի բնակել հոգի ազնիւ, և՝ ի վերնագունէն՝ ոգի անարգ։

ԳԼՈՒԽ ԺՀ.

Թէ յինչ կարծեաւղն յաղագս վարուց և գործոց դիւաց Պղատոնէս պղատոնական։

Պարտ՝ ի խօսել պղատոնական առնս յաղագս բարուց դիւացն, ասել կրկին նոցա զնոյն ամբոխմունս՝ յայր և նման ոգւոց մարդկան. այն է՝ զգրգռիլ ընդ նախատինս, սպասաւարութեամբ և ընծայիւք ցածնուլ խնդալ ընդ պատիւս, զուարձանալ ընդ զանազան արարս պաշտամանց, և եթէ ինչ յայնցանէ պակասիցի՝ զայրանալ։ Հանդերձ այսոքիք ասէ և զայն, թէ նոցա անկ են գուշակութիւնք հմայից, լերդահմայից, դիւթից, և երազոց. և՝ ի նոցանէ կատարին արհեստք կախարդաց։ Այլ կարձառօտ սահման տուեալ ասէ. դևք ըստ ազգի կենդա-

նիք են, ողով՝ կրողականք, մտօք՝ բանականք, մարմնով՝ օդեղինք, ժամանակաւ՝ յաւերժականք։ Եւ հնդից յայսցանէ՝ երեք առաջինքն նոյն են ընդ մերում, որպէս և չորրորդն՝ մեզ յատուկ. իսկ գ֊ինդերորդն ունին հասարակ ընդ աստուածոց։ Եւ սակայն տեսանեմ, զի զերիս առաջինսն զոյդ մեզ ունելով նոցա, զերկու յայնցանէ ունին և ընդ աստուածոց։ Եւ ան զի և զաստուածան ասէ լինել կենդանիս, իբր զի՝ ի բաշխելն իւրաքանչիւր զտարերս, յերկրաւոր կենդանիս դասեաց զմեզ հանդերձ այլովք որ՝ ի հող կեան և զգան, ՝ի ջրայինս՝ զձկունս և զայլ զուգակս, յօդայինս՝ զգեաս, և յերեքայինս՝ զաստուածան։ Իսկ այնու՝ զի ըստ ազգի կենդանի են զերք, ոչ ընդ մարդկան միայն հասարակորդ են նոքա, այլ և ընդ աստուածոց և ընդ անանուոց. և մրոտք բանականք երկոքին կոչեցեալք են աստուածոց և մարդկան. ժամանակաւ գոլով յաւերժականք՝ ընդ աստուածս կոչեն հաղորդին. Հոգւոյ ախտակրութք՝ ընդ մարդկան միայն. իսկ մարմնով օդեղէն՝ ինքեանք միայն են։ Եւ մին իրի լինել նոցա ըստ ազգի կենդանի՝ ոչ մեծ է, զի կենդանի են և անանունք. և զի մտօք բանական են, ոչ ՝ի վեր են քան զմեզ, զի և մեք բանական եմք. իսկ Թէ ժամանակաւ մշտակայք են, զինչ այսի օգուտ՝ երբ երանելիք ոչ են։ Եւ է ապաքէն երջանկութի ժամանակեան քան զձշուտաւուն յաւիտեան։ Իսկ Թէ հոգւով ախտակիր իցեն նոքա, զնոյրդ վերոյ քան զմեզ իցեն, զի և մեք նոյնպիսի գտանիմք. և զինչ ակեր մեզ այդ, եթէ չէաք Թշուառք։ Եւ մարմին ունել օդեղէն՝ քանոյ արժիցի բնաւ, ուր հոգւոյ բնութի գերազանցեալ է քան զամենայն մարմին. որոյ վասն կրօնից պաշտօն՝ որ ՝ի հոգւոյ է խնդրելի, անպատեհ է ամենևին մեզ՝ որ ստորև է քան զհոգի։ Այլ արդ եթէ ՝ի ձերս անդ դիւաց ՝ի համար արկեալ էր նոքա զառաքինութի, զիմաստութի, զերջանկութի, և զնոսին Թէ զայսոսիկ ունէին նոքա զոյդ ընդ աստուածոցն յաւիտեան, արդարեւ ցանկալի էին ասացեալ էր և արդոյ սակայն և ոչ այսու իբրև ՝ած պաշտել զնոսա արժան էր,

այլ զնա միայն պաշտել՝ յորմէ գիտէաք ընկալեալ նոցա զայն ամենայն։ Այլ արդեաւք ևս ապա արժանի չէին օդևզին կենդանիքդ ծածկանն պատուոյ, ուր բանականքը էն նո- քա առ՝ի կարելոյ լինել Թշուառս, և ախտակիրք էն՝ զի Թշուառք լինիցին, և մշտակայք էն՝ որ մի կարիցին Թշուառութենն գտանել վախճան։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Մի՛թէ արժան իցէ մարդոյ պաշտել զայնպիսի ոգիս, յորոց ախտիցն պարտ է նմա ազատ գտանիլ։

Այ ԱՍՆ այսորիկ զանց զայլովքն արարեալ, և զայն ևԹԷ առեալ՝ի քենէն՝ զոր ասէն հասարակաբար ընդ մեզ ունել դիւաց, այն է՝ զՀոգւոյ կիրս, ևԹԷ չորեքեին տարերք առ հասարակ լցեալ էն իւրեանց կենդանեօք, հուր և օդ՝ անմահականօք, իսկ ջուր և հող՝ մահկանացուվք, արդ հարցանեմ՝ հիմ դիւացն ոգիք յուզին յամբոխմունս կրից։ Օ՛ի ամբոխումն ինչ է՝ զոր յոյնն էՀՀօս ասէ, այս է կիրք կամ ախտ. ուստի և զգևս կամեցաւ ասել՝ Հոգւով ախտակիրս. և է կիրքդ՝ չարժումն Հոգւոյ հակառակբանին։ Արդէ՛ր ապա գտանին այդպիսի ախտաւորուԹիք՛ի դիւաց ոգիս, որ յանապատս ոչ կան. քանզի ևԹԷ նմանակ ինչ էՀ- բևեսցի յանապատս, այն ոչ է ամբոխումն, զի չէ հակառակ բանի՝ յորմէ անբաժ են նոքա։ Իսկ ևԹԷ՛ի մարդիկ գտա- նիցին ամբոխմունք այդպիսի, զայդ առնէ անմտուԹիւն, կամ ԹշուառուԹիւն վիՃակ. իբրև զի չէ եմք էրանաւ- էտեաւք կատարեալ խնամատուԹիւն՝ որ՛ի կատարածի խոստացեալ է մեզ, յորժամ՛ի մահկանացուէս զերծա- նիցիմք։ Իսկ զաստուածն այնու ասէն անախտակիրս լինել յամբոխմանց յայտնէ, զի ոչ միայն յաւերժա- կայք են, այլ և էրանելիք. քանզի ԹԷպէտ և ունին, ասեն, և նոքա ոգիս բանաւորս, բայց մաքուրս բնաւ յաւհնայն

արատով և չախտիւ ։ Որին վասն եթէ աստուածք չայն սակս անխոտովս կան՝ զի կենդանիք երանելիք են և ոչ թշուառք, և եթէ անասունք այնու լինին անխոտով զի են կենդանիք անընդունակք և երանութեանն և թշուառութեանն, ինչ ոչ ուրեմն ասել, թէ գնք որպէս և մարդիկ՝ չայն սակս ամբոխին, զի են կենդանիք ոչ երանելիք, այլ թշուառք։

Որ անմտութեանն իցէ ասել, մանաւանդ թէ խելագարութեանն, կրօնիւք ոմանիք ՚ի ծառայուէ դիւաց կապիլ մեզ, ուր Չմարիտ կրօնիւքն ազատանամք չախտաւորութենէ անտի՝ որով դիւաց նմանիմք ։ Վասզի եթէ Աստուածս ինքնին՝ որ ակնածու է նոցա, և ՚ձծայնն պատուոյ արժանիս վարկանի, գայ ՚ի խոստովանել թէ բարկութիւն զգըգռնին նոքա ։ Չմարիտն կրօնք մեզ հրամայէ՝ մի բարկանալ, այլ հակառակ կալ բարկութեանն ։ Որ գնք ճանիւք կաշառին գալ յօգնուէ մեզ հրամանն է Չմարիտ կրօնիցն՝ մի ունիք աշառել կաշառօք ։ Որ գնք պատուասիրութիւն մեզկանան, մեզ հրամայեալ է ՚ի Չմարիտ կրօնից՝ մի բնաւ այնպիսեօքն յորդորիլ ։ Որ գնք զոմանս ՚ի մարդկանէ առեն, և զայլս սիրեն՝ ոչ եթէ խոհական և անխոտով դատմամբ, այլ որպէս նայն ասէ՝ ախտակիր ոգւոյն, մեզ ՚ի Չմարիտն կրօնից գոյ պատուէր՝ զմեր թերն նամիս անդամ սիրել ։ Այս կինիք բանիս, զնամ զչարժումն սրտի, և զմտաց ծփումն, զամենայն յոյզս և զամպրոպս հոգւոյ՝ որովք գնքն ջեռանին և աղմկին ըստ ասելոյ Պաւղեայ, ՚ի բաց դնել հրամայեն մեզ Չմարիտ կրօնք ։ Այս առ ինչ ապա՝ բայց առ յիմարութեանն և աւաղելի մոլորութեանն կամիցիս դու մեծարանօք խոնարհիլ այնմ, որ բուռամ աննման լինել ցանկաս ըստ վարուց ։ կրօնիւք պաշտել զայն՝ որում չկամիս նմանիլ ։ ուր կատարած կրօնիցն է՝ նմանող լինել այնմ զոր պաշտես ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Որպիսի կրնաք իցէն՝ որ ուսուցանէն , Թէ մարդիկ ոչ ասս ունիցին միջնորդութեամբ դիւաց առ ընդհս գտանելոյ ՚ի բարի աստուածոց :

Ա՝ ԱՅՐԱԳԱՐ ուրեմն Պօղոսի եւ նորուն հաւասարապէս զգաստութեան զայն ընծայեմ դիւաց՝ այնպէս ինձ միջնորդ կալ նոցա յօդս ընդ եթերականն երկին և ընդ երկիր , զի ուր աստուածքն անմատչելի են մարդկան՝ ըստ աւանդելոյ Պղատոնի , սոքա զեզբս մատուցանիցեն առ աստուածս զմարդկան աղաչանս , և անտի առ մարդիկ իջուցանիցեն զխնդրելիսն : Վասնզի հաւանեալքն յայսոսիկ՝ անպատկան վարկանին մարդկան և աստուածոց խառնել յիրերաս , բայց դիւաց պատշաճ՝ ասեն խառնիլ ընդ աստուածս և ընդ մարդիկ , ասի զՀայցուածսն ՚ի վեր տանելով , և անտի զընկալեալսն առ երերելով . մինչ զի այր ողջախոհ , և ՚ի դիւթական արհեստիցն չափաւորութենէ մերհեալ առ ՚ի լսելի լինելոյ աստուածոցն՝ իւր պաշտպանս զայնոսիկ առնուցու , որք զգաստելիսն սիրեն . զորս ինքն ոչ սիրելով՝ արժանի և էր արագ և մտադիւր լսելի լինել յաստուածոցն : Օ՚ի զեզբ ախորժեն զթատերական զաղրութիւնս՝ յորոց գարշի ամենախաւծութիւնն : Ասիրեն ՚ի դիւթութիւնս կախարդաց զինասաբեր արհեստս ազգի ազգի , զորս առեայ անհեղութիւն : Պատ ուրեմն եթէ ամենախաւծութիւնէ և անհեղութիւն կամիցին հայցել ինչ յաստուածոցն , ոչ յաջողէ այն յիւրեանցն արժանեաց , այլ ՚ի բանի առնելով զինչսամին : Ալ ունի Պօղոսէս արդարացուցանել զքերթողսյն առեղծաբանութիւնս և զթատերական ծանականս . ուր այսոցիկ դիմամարտ կայ վարդապետ նոցա դերապատուէսն Պղատոն . բայց եթէ այնչափ ինի զառածեալ իցէ ամենն մարդկային , մինչև ոչ միայն սիրել զաղտեղիս , այլև ՚ածութիւնն զնոյն կարծել հաճոյականս :

ԳԼՈՒԽ ԺԹ

Յաղագս ամբաստանութեանն դիւթական արհեստին՝ որ հաստատեալն է ի հնոմն ոգւոյն չարաց։

Ասպ ընդդէմ մոգուն կամ դիւթական արհեստից, ընդ որս վաստակեալքն ոմանք և ամբաստանագոյնք պարծել անդամ ախորժեն, ունիմ զհիւանդեալս Ձանասչումն յայնմ վկայ՝ի մէջ առնուլ։ Վասնզի առիմ՝ արդեօք պատուհաս սաստիկ յաղագս այսոցիկ կարգեալ է՝ի խստութենէ օրինացդ, եթէ արդարեւ գործք էին ձեռնպաշտութեան. միթէ՝ի քրիստոսադաւանից սահմանեցան օրէնքդ այդ, որով կախարդութիւնքն պատուհասին։ Այս այն էր վասն. բայց զի չիք տարակոյս՝ թէ ինքասակալք են մարդկան աղ զի դիւթութիւնք, որպէս ասաց հռչակելի բանաստեղծն.

“Վ ընկայ զաստուածս կոչեմ և զքեզ,
Օ քոյրդ իմ սիրուն ընդ գըլխոյդ գէս,
Ի մոգել ոչ կասիս զամ ես,,։ Վ էրփ ։ Վնէպ։ Ք։

Ահա և այլ ուր՝ի ծաղկաքաղս ասէ յաղագս նոյն արհեստի կախարդութեանց։

“Տեսի ըզգերս՝ի սերմն արկեալ,
Տեղի տեղւոյ ինքնին փոխեալ,,։

Վասնզի ասի՝ թէ ժամս և անօրէն ուսմամբս բերք յօտար անդոյ յայլս փոխաբերէին։ Վչ ապաքէն յերկոտասան տախտակսն՝ որ հռովմայեցւոցն էին օրէնք վաղնջական, յուշ առնէ Վրիկերոն՝ թէ սահմանեալ կայր պատուհաս զայսպիսիս գործողաց։ Այս միթէ նա ինքն Վպուլէոս յանդիման քրիստոնեայ դատաւորաց ամբաստանեցաւ յաղագս մոգական արհեստից. զորս թէ արդարեւ ձեռնպահն Ձանասչէր և բարեպաշտս, իբրու ձեռնպահ զօրութենէ գործս վայելչականս անդէն՝ի յանդիման հարկանելն՝ ոչ միայն խոստովանել պարտ էր, այլ և արդարացուցանել, մեղադիր լեալ օրինացն՝ որ զնոյնս արգելուին

իբր դատապարտս գրեալ, փոխանակ զի հրաշալիս ինն և պատկառելիս համարել արժան էր։ Այնպէ այսու օրինակաւ կամ հաւանեցուցանէր դատաւորաց զիւրն կարծիս, և կամ եթէ նոքա յանարդար օրէնսն համոզեալք, մահուամբ զնա պատուհասէին սակս զմոգուհին քարոզելոյ և գովելոյ, արժանի պարգևաց փոխարէնս ընդունէր ի դիւաց անտի, զի վասն զնծայելին գործս նոցա քարոզելոյ ոչ զանգիտեաց ի կլիս դնել զմարդկեղէն կեանսն։ Օ՜ որ օրինակ մարտիրոսք մեր՝ որոց ի յանցանս գրեալ էր կրօնս քրիստոնէական, այն որով նոքա զիրկութիւն ունել ի թեղին և ըզփառս յաւիտենական, ոչ եթէ զայն ուրանալովն ապրել կամեցան ի ժամանակեան պատուհասից, այլ ընդհակառակն խոստովանելով զնոյն, դաւանելովն և քարոզելով, և վասն նորա զամենայնն համբերեալք անմեղկելի քաջութիւն, և մեռեալք գեղեցիկն վատահութիւն, յամօթ արարին զօրէնսն ընդդիմակացս, և եռաւն իսկ բառնալ։ Այսպէս պղատոնականիս այսմ խմաստասիրի կայ Ճառ ընդարձակ և պերճաբան, որով յանձնէ ի բաց քերել զկախարդանաց յանցանս, և ոչ այլազգաբար ինչ զանձն անպարտ ցուցանել, բայց ուրանալով լոկ զայն՝ զոր ոչ ընաւ գործէ այր անպարտ։ Այլ արդ եթէ ամենայն զարմանագործութիւնք կախարդացն՝ զորս նա ինքն ուղղութիւն համարի մերժելիս, ըստ վարդապետութեան և գործակցութեան դիւաց կատարին, զիարդ ապա մեծարելիս զնոսա կարծեցուցանէ պիտանիս ասելով առ ի հանել զաղօթս մեր առ աստուածն, ուր ի գործոց դիւաց խորշել պիտի՝ եթէ կամիմք ժամանել աղօթից մերոց առ Ճշմարիտ։

Ասացանեմ դարձեալ, զոր աղօթս մարդկան համարի դիւացն միջնորդելով վերաբերիլ առ բարի աստուածն. զկախարդակա՞նս արդեօք, եթէ զօրինաւորս։ Եթէ զկախարդականս, բարիքն ոչ ընդունին զայնպիսիս. եթէ զօրինաւորս, ոչ ընդունին ընդ ձեռն այնպիսեաց։ Այլ եթէ յանցաւոր օք ի զղջումն եկեալ՝ մաղթանս հեղուցու, առաւելապէս եթէ կախարդութիւնք ինչ գործեալ իցէ, միթէ Թողութի՞ն հանդիսիցի բարեխօսուն այնոցիկ՝ յորոց

'ի պրդռելոյ կամ՝ 'ի ձեռնտուէ անկաւ՝ 'ի յանցումն՝ զոր ողբայ։ Կամ՝ իցէ թէ զևքն ինքեանք առ՝ 'ի ներումն պրծանելոյ ապաշխարողաց՝ կանխիցեն առնել ապաշխարութեն սակս խաբելոյն զնոսա։ Օ՜ այդ ոչ ոք ասաց յաղագս դիւաց. ապա թէ ոչ՝ յիշեսցեն ինդրել անձանց պատիւ ձեռակերպ, եթէ ցանկայիցեն ապաշխարութէ՝ հնարհայ թողութէ հասանել։ Կանգղ յայմհկայ հզարտութէն գարշելի, և յայսմ՝ խոնարհութէն կարեկցելի։

ԳԼՈՒԽ Ի

Եթէ արժան իցէ հաւանիլ՝ թէ բարի աստուածք առաւել ախտժիցեն ընդ գևս խառնիլ քան ընդ մարդկան։

Ա.ՈՒՅՆ ասեն. պատճառ բռնադատիչ հարկ առնէ՝ միջնորդ կալ դիւաց ընդ աստուածս և ընդ մարդիկ. զի առ՝ 'ի մարդկանէ զհայցելիս մատուսցեն, և առ՝ 'ի յաճոյ զընկալեալսն աւանդեսցեն։ Այս պր է այդ պատճառ, և հարկդ պրքան։ Այ՝ այն զի, ասեն, ոչ ոք յաստուածոյ ընդ մարդում խառնի։ Այ՝ աշ ձեռնտուէդ սրբութէն, որ ոչ խառնի ընդ մարդ աղաչաւոր, և խառնի ընդ գև սեգ և ապառուժ. չխառնի ընդ մարդ ապաշխարող, և խառնի ընդ գև առապատիր. չխառնի ընդ մարդ յաճ ապաւինեալ, և խառնի ընդ գև յաճ կերպարանեալ. չխառնի ընդ մարդ ներողութէն աղերսարկու, և խառնի ընդ գև անօրինութէն խորհրդատու. չխառնի ընդ մարդ՝ որ 'ի մատաղիրական գրուածովք գքերթողս վտարէ 'ի բարեչէն քաղաքէ, և խառնի ընդ գև՝ որ յիշխանաց քաղաքի և 'ի քրմապետաց պահանջէ գքերթողայն ծաղրածութէս 'ի թատերական խաղս. ոչ խառնի ընդ մարդ՝ որ արգելու յանցմունս ստեղծանել զաստուածոց, և խառնի ընդ գև՝ որ ընդ ստայօղ յանցուածս աստուածոց հեշտանայ. ոչ խառնի ընդ մարդ՝ արդար օրինաք զմոգուցն

եղեռն պատուհասիչ, և խառնի ընդ դև մոգական ար-
հեստից ուսուցիչ և յորդորիչ. ոչ խառնի ընդ մարդ՝ դև-
ւաց նմանութեն առեցող, և խառնի ընդ դև՝ մարդկան
խաբէութեն նենգիչ։

ԳԼՈՒԽ ԻԸ.

Մինէ աստուածք վարիցին պատգամաւորութե՛ և միջնորդութե՛ դիւաց, և
զառ ի նոցանէ ղպարիլն անգիտանայցին, կամ կամիցին։

Ասէ արդ մինէ այնչափ մեծ իցէ հարկ անտեղի և ան-
պատեհ կարծեացդ, մինչ զի եթէ բնական աստուածքն՝
մարդկայնոցս խնամակալք՝ ոչ գիտիցեն զինչ առ երկրա-
ւոր մարդիկ գործիցի, եթէ ոչ օդայինքն զևք ծանուցա-
նիցեն նոցա. և այս յայն սակս՝ իբրու թէ կարի տարա-
կաց է եթեր յերկրէ. փսկ օդ՝ սահմանակից ընդ եթեր
և ընդ երկիր։ Ո՛ խնաստուածեն հրաշազան։ Ուրեմն ապա
զինչ այլ խորհին դոքա զաստուածոցդ, զորս բարիս կա-
մարին ամենայնիւ, բայց միայն թէ՝ի միոյ կողմանէ զմարդ-
կայինքս խնամեն, զի մի անարժանիք պաշտամանն երևեա-
ցին, այլ և՝ի միւս կողմանէ սակս տարերացն բացակայու-
թեան անգիտանան զմարդկայինսն, որք վասն հարկաւոր
դատիցին զևքն, և վասն այսր իսկ պաշտելիք. ընդ որոց
ձեռն ուսանել կարիցեն աստուածքն զինչ՝ ի մարդկայ-
ինքս գործիցի, և ուր ձեռն տալ մարդկան ապիտոյ իցէ։
Ամէն այդպէս են իրքդ, ապա բարի աստուածոցդ այդո-
ցիկ առաւել ծանօթ է զևն միջնորդաւ հպատաւոր մար-
մնոյն, քան մարդ՝ի ձեռն բարեկրօն հոգւոյն։ Ո՛ աւա-
զելի հարկ, ո՛ ծիծաղելի սուտքեղ և անգոնեելի, ստայօղ
ածուքեն պատրուակ։ Ո՛ ասն զի եթէ աստուածք կա-
րող են հոգւով՝ որ ազատն իցէ՝ի մարմնոյ արգելմանց՝
տեսանել զմեր հոգիս, ահա ոչ ևս առ՝ի դոյն՝ պէտս ու-
նիցին դիւաց պատգամաւորաց։ Ասէ եթէ զմարմնական
նշանակս ոգւոց՝ զդէմս, զիւօսս, և զբերմունս՝ իբրեանց

մարմնոյն իմանան եթէ երկայն աստուածքն, և այնու 'ի միտ առնուն զոր ինչ գիւրն ծանուցանեն, ապա մարթին 'ի ստուեր դիւացն ըմբռնիլ պատրանօք : Այլ եթէ անմարթ է ածուէ նոցա անկանիլ 'ի պատրանս դիւաց, անմարթ է և տգիտանալ նոցա զոր ինչ առ մեզ գործին :

Այլ կամի թէ ասէին ինձ դարձ . գիւք ծանուցին ալ գիւք աստուածոց զՊղատոնի արհամարհելն զդիւս քեր-Թողաց՝ մեղսադիրս աստուածոց, և զիւրեանցն հաձել Թագուցին 'ի նոցանէ . կամ արդեօք գերկոսին և ծածկեցին, կամ ցեալք անդիտակս այսոցիկ ինալ աստուածոցն . կամ եթէ գերկոսին իսկ յայտ արարին, զՊղատոնի զնածաւ պաշտն խոհականութեն, և զիւրեանցն ածընդդէմ հեշտութեն . կամ դարձեալ՝ Թաքուն կալան արդեօք առ աստուածան զՊղատոնին բան՝ որով չկամէր արատ դնել աստուածոց ստայօղ յանցուածովք ըստ ամբարիշտն Համարձակութեն քերԹողաց, իսկ զիւրեանցն անզգամութեն ոչ պատկառեցին կամ ոչ երկեան յայտնել՝ 'ի սիրել իւրեանց զխաղս Թատերականս՝ որովք աստուածոցն խայտառակութիւք նշաւակին : Զոզ կշռեացեն, զոր 'ի քառեակ հարցմանցս ընտրել ունին, և արշալի ինչ 'ի միոյ միոյ յայսցանէ չարի կարծիս տան զբարի աստուածոցն : Վասն զի եթէ զաւաչիին ընտրեացեն, խոստովանել ունին՝ Թէ ոչ օրէն եղև աստուածոց բարեաց կցորդել ընդ Պղատոնի բարւոյ՝ որ զանարգանս աստուածոցն խափանէր, իսկ ընդ դէս չարս կցորդէին՝ երբ նոքա անարգանօք աստուածոցն խրախանային . երբ բարի աստուածք զայրն բարի զյոյժ տարակացեալն ընդ ձեռն չար դիւաց միայն ծանեան, իսկ զնոսին զմօտաւորսն Համարել ոչ կարացին : Եթէ զերկրորդն ընտրիցեն, ասել Թէ զիւք ծածկեցին զերկոսին զայսոսիկ , որով աստուածք անդիտացան բնաւ և զՊղատոնի բարեպաշտիկ օրէնս, և զդիւացն անսուրբ զուարճութեն, զինչ այլ օգտակար ինչ զմարդկայնոցս գիտել կարէին աստուածք պատգամաւորութիւք դիւաց, յորժամ անգիտանային զոր ինչ առ 'ի պատիւ նոցա սահմանեալ կարդին 'ի կրօնասէր մարդոց բարեաց՝ Հակառակ աղտեղասիրու-

[illegible] զիւաց չարաց, Իսկ եթէ զերծուցն ընարիցեն, ասել [illegible] նոցունց զիւացն պատգամաւորելով Ճանաչեաւ աստուածոց ոչ միայն Պղատոնին վՀոս՝ի խափանուիլն անարգանաց աստուածոց, այլ և զիւացն ապիրատութիւն՝ի խնդալ ընդ անարգանսն, միթէ անզգեկացուցանել [illegible] ցէ այդ, եթէ ցաւուցանել զնոսա, Իբր աստուածքն զերկոսին զայս այնպէս լսեն, այնպէս Ճանաչեն, զի ոչ միայն զչարակամ գեանն զընդդիմադարձս պատուոյ իւրեանց և կրծտասիրութեան Պղատոնի ոչ արգելուն՝ի մատչելոյ, այլ և ընդ ձեռն ընծերակայ չարացն այնոցիկ պարգեւս առաքեն առ բարեկրօնն Պղատոն առ Հեռաւորն, իբրև զի այնպէս լինի կաշկանդեալ և զնոսա տարերացն գաւառութիւն, զի յորոց անարգիմն՝ կարող են Հայոյել ընդ նոսա, այլ ոչ ընդ այնմ յորմէ պաշտպանին. երկաբանութեացն գիտակք, բայց զկրճինն օգոյ և երկրի փոխել անձեռնհասք՝ Իչպա եթէ զինացեալն՝ զչարսորդն ասեմ՝ ընարիցեն, յոռեգոյն քան զայլսն է. զի ո՞ տանել կարիցէ՝ թէ զևք յայտնեալ իցեն աստուածոց զբերթողացն պաՀուՀանս յանարգութիւն աստուածոց անմահից, և զծառերաց անպատեհ ծաղրածութիւնս, և զիւրեանցն առ՝ի նոսին զանչափութիւն և զախորժականն Հեշտութիւն, իսկ զայն լռեալ իցեն թէ Պղատոն իմաստասիրական մեծախոհութիւն արժան գտանցաւ՝ի բաց վտարել զայն ամենայն՝ի բարեկարգ իշխանութենէ. մինչ զի աստուածքն բարիք Հարկացոյն գիտել այնպիսի պատգամաւորաբ զչարիս ժանտապատնիցն, ոչ զօտարաց՝ այլ զնոցունց պատգամաւորաց. իսկ զՀակառակն այնոցիկ զբարիս իմաստասիրաց՝ ոչ ունիցին գիտել. ուր առաջինքն՝ի նախատինս են աստուածոց, և յետինքս՝ի պատիւ նոցա.

ԳԼՈՒԽ ԻԸ

Հերքելի է պաշտպ գիւաց՝ հակառակ Ագաթեայ։

Ա՛ր արդ քանզի և ոչ զմի՛ ի չորիցդ ընտրել արժան է, զի մի այնուհետեւ նուաստագոյնս խորհեսցին զաստուածոց, անհատանելի գտանելոյն բնաւ զոր Ա՛յսուհետեւ Թէոդորէ Հնաբի, և որ այլք իմաստասէրքն նմին զուգահատանք, Թէ ընդ աստուածս և ընդ մարդիկ միջնորդք իցեն գիւթն որպէս պատգամաւորք և Թարգմանք, առ՝ի տանելոյ աստուա զմեր խնդրուածս, և անտուա առ բերելոյ գաստուածոց նպաստս։ Այլ ինքեանք են ոգիքն միաստպարտք, առաքացեալք գլխովին յարդարութիւն, ամբարտաւանութիւն ատելոյք, նախանձու մաշելոք, առ՝ի պատրել նեղդամիտք։ Իսկ Թէ գորս յոգս գնգերին, չեն ինչ զարմանք։ վասն զի տարամերժելոք՝ ի բարձանց վերնայրին երկիր, բաս արժանեաց անհերձելի յանցաւորս Թէն գաստարաւեցան յայն տեղի իբր՝ ի բանտ պատկանաւոր։ Ա՛յլ ոչ եթէ վասն գոլոյ ոգոց՝ ի վերոյ տեղեաւ քան զհոգ և զջուր, գերագոյն են նորա արժանաւորութիւն քան զմարդիկ, որք առաւելուն քան զնոսա՝ ոչ հոգւական գաւածն մարմնով, այլ բարեպաշտաւթիւն յածն Աչմարխա՝ զոր ընտրեցին յօգնական։ Ասկայն յորմէնց եա՝ որք անկցորդք են Աչմարխա կրօնիցն, տերեն գնք իբրև գերեաց և նաւաձելոյ, Հաւանեցուցեալ բազմագունիցն նոցա զարմանալեաք իմն և պատիր նշանիւք գործոց կամ գուշակութեանց Թէ աստուածք ոմանք իցեն։ իսկ ոմանց՝ որք փառքաւ իմն ուշ եգեալ Հայեցան՝ի նոցսն տեսանութեանս, ոչ զօրեցին Հաւանեցուցանել զերբեանցն ծնականաւթիւն, այլ ձևացան պատգամաւորս լինել ընդ աստուածս և ընդ մարդիկ, և պարգևատուս բարեբարութեանց։ Իսկ որք ոչ աստուածս գրէին զնոսա, չարաչարն զնոսա տեսանելով, ուր աստուածքն բարի Հաւաքեալ են, քանզմին և ոչ

զպատգամաւորի պատիւ անգամ արժան վարկան ընծայել նոցա՝ի մարդկանէ, բայց և ոչ իշխեին չարժանիս զնոսա քարոզել՝ածականն պատուոյ, առ՝ի չզայրացուցանելոյ յաւէտ զբամիկս. տեսեալ զի վաղեմի ունայնութիւն ծառայեն նոցա պէսպէս պաշտամամբք և մեհենօք։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Ջինչ կարծիք եղեն Հերմէայ Տրիամեգիստոսի յաղագս կառապաշտութեան, և ուսոյ գիտաց նա զդիպուցուցն մեռոմէ պաշտամունս գոլ խափանելիս։

ՏԱՐՕՐՒՆԱԿ յաղագս այսոցիկ կարծիս կալաւ և գրեաց Հերմէս եգիպտացի, զոր Տրիամեգիստոն կոչեն, այն է՝ եռամեծ։ Օ՛ի Ո՛պուլէոս թէ և ոչ ընդունի զգեան աստուածս լինել, բայց զի միջնորդեն ասէ՝ ընդ աստուածս և ընդ մարդիկ, որով կարևորք թուին մարդկան առ աստուածս, սորին վասն զպաշտօն նոցա ոչ որոշէ՝ի պաշտելոյն վերնային աստուածոց։ Իսկ եգիպտացին այն զմանս յաստուածոցն ասէ՝ի գերագունէն՝ այ արարեալս, և զայլս՝ի մարդկանէ։ Ի լսել ուրուք զայս այսպէս, կարծիցէ թերևս խօսել նմա զդիւրչելոյ, որ ձեռագործ մարդկան են. սակայն նա զերևելի զայն և զշօշափելի դիւրչեալն ասէ իբր մարմինս լինել աստուածոց. և՝ի նոսա բնակել ոգւոց ունոց՝ի հրաւիրմանէ մարդկան. որպէս թէ զօրաւորք իցեն՝ի վնասել իւիք, կամ՝ի կատարել զնոյն դիւրաւածս ինչ այնոցիկ՝ յորոց ընծայն նոցա պատիւ ածականէ և սպասաւորութեան։ Ո՛չ սակայն զկարելին կասկել զանհերևոյթ ոգիսդ ընդ երևելի մասունս մարմնեղէնս նուիրեալոյ, որով դիւրաշարժքն նուիրեալք՝ի ծառայութեն նոցա՝ լինին իբր մարմինք ոգևորեալք, ասէ Հերմէս՝ աստուածս առնել, կարծելով թէ շնորհեալ իցէ մարդկան զօրութիւն այս ածացուցանելոյ մեծ և սքանչելի։ Ջանս եգիպտացի առնս յաւաշ բերից, որպէս թարգմանեալ կան՝ի լա-

տէն բարբառ. "Այլ քանզի յաղագս աղգակցութեանն, ասէ, ,, և հաղորդակցուն մարդկան և աստուածոյ է առաքելոյս ,, մեր բանս, 'ի միտ առ ի Յակղեպիէ, զիշխանսուէ և զզօ- ,, րութէ մարդոյ։ Արդեօք տէրն և Հայր, կամ զիշխն ա- ,, սէլ ՚ած՝ հասարիչ է երկնային աստուածոց, նոյնպէս ,, մարդն կերտող է աստուածոցն՝ որք 'ի տաճարս առ մար- ,, դիկ ընտանացեալք էն ,, ։ Այլ յետ սակաւուց ասէ. "Արդարութիւն իւրաքանչիւր բնութեան և ծագմանն գիտակ ,, միշտ՝ այնպէս պիտոյ կայ 'ի նմանութէ ՚ածութենն, մինչ ,, զի որպէս Հայրն և տէր արար աստուածս յաւերժա- ,, կանս առ 'ի յիւրն նմանութէ, նոյնպէս մարդ առնիցէ ,, իւր աստուածս ըստ պատկերի կերպարանացն ,, ։ Ետ Յակղեպիոս՝ առ որ խօսէր, իբրև Հարցանէր ցնա, միթէ զարձանան կամ զդիւրչեալսն ասես՝ ո Տրիսմեգիստէ, ետ պատասխանի. "Այո, զարձանան՝ ո Յակղեպիէ. զորոց ,, տես զիւրդ և դու երկմտիս. զարձանան ասեմ Հոգիա- ,, ւորեալ՝ լցեալս զդացմամբ և շնչով զմեծամեծ արարան, ,, զապառնեաց նախագիտոյս, և զնոյնս նախապատմողս ,, վիճակաւ, գուշակաւ, երազովք, և այլ ևս բազմօրի- ,, նակաբար. որք ախտակրութէնս արկանէն 'ի մարդ, և ,, անդրէն ապաքինեն, տրամուէթի և ուրախալի բերեալ ,, ըստ իւրաքանչիւր արժանեաց ։ Այթէ ոչ գիտես, ո Յակ- ,, ղեպիէ, զի Աշգիպտոս պատկեր երկնից է. կամ Աշգիպտ ,, ևս՝ ամենայնի որ յերկինս էն անտեսեալք և գործե- ,, ցեալք՝ այսր փոխադրուին. և Թէ ասել օրէն է, արգա- ,, րեւ երկիրս մեր տաճար է աշխարհի բովանդակ ։ Այլ ,, քանզի արժան է առն իմաստնոյ յաւելաւտես գոլ ա- ,, մենայնի, մի զանխլասցի և այս 'ի ձէնջ ։ Ակեաց ժամա- ,, նակ, յորում յայտնեսցի Թէ վայրապար 'ի պաշտօն դից ,, յարեալ էին եգիպտացիքն իբրու կրօնասիրութէ. և ,, ամենայն սրբազանեալ կրօնք նոցա ապիտ եղեալ ,, Ջնջեսցին ,, ։

Օ Հետ այսոցիկ բազում այլ բանս տուեալ Հերմէս վասն սոցին իրաց, մինչև յայտնի ցուցանել Թէ գուշակեր կան- խաւ զայժմու ժամանակս, յորում քրիստոսական կրօնքս՝

որչափ առաւել Աշմարիտք էն և սուրբ, նոյնչափ զօրա-
պոյն, և սիրասէս կործանէն զընաւ խաբեպատիր դիւա-
որպէս զի փրկչին Աշմարտի շնորհք ազատեսցէն զմարդ
յաստուածոց անտի զորս մարդն արար, և հնազանդե-
ցուսցէն Աշմարտին ՚ի, յորմէ մարդն արարաւ։ Ա.ԼՂ ՚ի
նախապատմել Երեմեայ զայսոսիկ խօսի տակաւին իբրու
Ձայնակից ընդ Ծանաչելի պաշտամունս դիւաց, անծանօթ
դոլով քրիստոնէական անուան. այլ իբր այն թէ խափա-
նելոցք իցեն պաշտամունք՝ որոց պահմամբ անեղծ մնայր
Հ.դիպտոս երկրին պատկերակցութէն, ողջայր զլինե-
լոցն, և սիրագին իմն գուշակութ վկայէր։ Ա.անզի մի ՚ի
նոցանէ էր և դա, զորոց առաքեալ ասէ. “Օ ի ծանեան
„ զնա, և ոչ իբրև զնա փառաւորեցին կամ գոհացան.
„ այլ նանրացան ՚ի խորհուրդս իւրեանց, և խաւարեցան
„ անմտութէ սիրտք նոցա. զանձինս առ իմաստունս ու-
„ նէին, յիմարեցան. և փոխեցին զփառս անեղծին այ ՚ի
„ նմանութէ պատկերի եղծանելի մարդոյ „ այլովքն Հան.
դերձ. Հռ. ա. 21։ Ո՝ ասն զի Երեմիան այն բազում ինչ
այնպիսի խօսի զմիոյ Աշմարտէն այ զաշխարհագործէն, զոր
օրինակ Աշմարտութէն աւանդէ. այլ չդիտեմ զիարդ խա-
ւարեալ ոգւով զառածանի յայն, մինչև ախորժել զի մար-
դիկ հնազանդեսցին աստուածոց՝ զորս խոստովանի արա-
րեալս ՚ի մարդկանէ, և ողջայ զբարձունն նոցա յապա ժա-
մանակս։ Ո՝ իթէ իցէ ինչ չառաւական քան զմարդ՝ որում
ձեռագործք սիրեացեն. ուր դիւրագոյն և է՝ զի որպէս
աստուածս պաշտելով զիւրան ձեռակերտս, ոչ և ինքն
մարդ գտանիցի, քան թէ նորա պաշտելովն՝ աստուածք
լինիցին՝ զորս մարդն արար։ Օ ի մօտաւոր և է՝ մարդոյ
՚ի պատուի եղելոյ՝ չիմանալովն անաանոց նմանիլ անբա-
նից, քան գործոյն այ եղելոյ ըստ նորուն պատկերի՝ նա-
խամեծար դնել զգործ մարդոյ։ Ձիրաւի ապա օտարա-
նայ մարդ յայնմանէ որ արարչն զնա. յորժամ վերագոյն
քան զինքն դնէ՝ զոր ինքն արար։

Ա.րդ դիտելով Երեմեայ եգիպտացւոյ՝ թէ մնոտիքս
այս և պատրողականք, ինասաբերք և անսուրբք խա-

վանելոցք են յերբեմն ժամանակի, ցաւագնեը ընդ այն. բայց որչափ անպատեհս ցաւեը, նորչափ անխիստաբար գիտեը. զի ոչ ՚ի յայտնելոյ Հոգւոյն սրբոյ էր, զոր օրինակ սրբոց մարգարէից, որք այսոցիկ նախատես ղեալք՝ ցնծութեամբ ասէին. “Լեր ես առնիցէ մարդ անձամբ անձին աստուածս, և նորա չեն ՚ած ,, . Լրեհ. ֆշ. ,, 20: Լե թե “Լե եղիցի յաւուր յայմիկ բարձիցէ տէր ,, զանուանս կռոց յերկրէ. և ոչ ևս եղիցի յիշատակ նո- ,, ցա ,, . Օ՚ա . ֆ՚. 2: Լոկ յանուանէ վասն Լգիպտոսի, որ ՚ի դէպ գայ իրացս, այսպէս մարգարէանայ սուրբն Լսայիաս . ֆբ . 1. “Լե շարժեացին ձեռագործք եգիպտացոց յերեսաց նոցա, և սիրտք նոցա լքցին ՚ի նո- ,, սա ,, : Լե որ այլ ևս այսպիսի ասացուածք: Նորոց սակի էին և նորա, որք զղալոյն գիտելով ցնծային ընդ Հրէաւն. որպիսի ոք Աիմէոն էր ծերունին, որպիսի ոք Աննա, որք զայն ինչ ծնեաւն Յիսուս ծանեան. որպիսի Լղիսաբեթ, որ զղացեաւն ՚ի Հոգւոյն ծանեաւ. որպիսի Պետրոս, որ ՚ի յայտնութենէ Հօր ասաց. “Դու ես Քրիստոս որդի ՝այ կենդանւոյ ,, : Լոկ որք եգիպտացոյս այսմիկ ծանուցին զՀանդերձեալ ժամանակ իւրեանցն կորստեան, այն ոգիք էին՝ որ յանդիման իսկ Քրիստոսի տեառն դողալով ասային. “Լկիր տարաժամ տանջել զմեզ ,, . Մա- . ը . 29: Տարաժամ ասեն՝ կամ զի վաղագոյն անց ընդ նոսա, զոր անագան լինելոց համարէին. և կամ զի իւրեանց տանջումն և կորուստ ասէին զնայատեակն լինել: Լե այս էր յառաջ քան զժամանակն, այսինքն է՝ քան զժամանակ դատաստանին. յորում Հանդերձեալ են պատուհասիլ դատապարտութեամբ մշանջենաւորաւ զոյգ ընդ սահմանայն մարդիկն որք կան ՚ած ՚ի նոցին կորդուածէ. որպէս ուսուցանէ սուրբ Հաւատս մեր, որ ոչ պատրէ, և ոչ պարի. և չէ իբրև զՀերմէն՝ որ իբր տատանեալ գոգցես յամենայն Հոգւոյ վարդապետուէ և զՀամարիստս ընդ սուտս խառնակեալ վշտանայ ընդ կորնչել կրճնիցն՝ զոր յետոյ մնորութի լինել խոստովանի:

ԳԼՈՒԽ ԻԹ

Թէ զիարդ Հերմէս հարկեցաւ խոստովան լինել զմեղսն նախնեաց իւրոց, ուր ընդ բարձունն նորին ցաւագնի։

Վասնզի ահա յետ այլ եւս յոլով բանից՝ դառնայ խօսել վերստին զաստուածոյն ի մարդկանէ արարելոց, ասելով այսպէս. "Այլ արդ յաղագս այսպիսեաց շատ լինին ասացեալքս. զարձցուք անդրէն առ մարդն եւ առ բանաւորութիւն նորա, որով յաճախապարտ ձրիւք կենդանի բանաւոր ասացաւ մարդն։ Ոչն են արդարեւ զարմանալիք՝ որքան ինչ զմարդոյ ասացան, այլ նուազ զարմանալիք. իսկ ի վերջ քան զամենայն զարմանս այն է, զի մարդոյ իւրոյ ճաճանչն բնութիւն գոխ եւ արարող։ Ոչ ոք ըստվհեւս նախաճնողք մեր բազում մոլորեցան թերահաւատութիւն յաղագս խնդութիւն աստուածոյն, ոչ խնամոտալք պաշտամանն եւ կրթնից ճաճանչոց, արհեստս հնարեցին ճաճագործելոյ։ Նոյն գիւտ յաւելին զնաթափութիւն զօրութիւն բարեյարմար ի բնութիւն աչխարհի. եւ զայն ընդխառնեալ, քանզի ոչխ արարչագործել կարող ոչ էին, կարգալով զոչխ գիւտ կամ հրեշտակ, կամ մուծին զնոսա ի պատկերան նոյ իրականս եւ ի խորհրդականութիւնս. որովք կուռքն կարողացին բարի առնել կամ չար։" Այլ գիտեմ, եթէ գիք երկմտիք իսկ բռնագատեալք խոստովանիլն արդեօք այսպէս, որպէս այս այր խոստովան եղեւ՝ յաւելն անդ զնախագրեալ բանս։ Ոչ միթէ մեղմով ինչ ասաց զնոսա մոլորեալս ի դառնալն զարհեստ ճաճագուցանելոյ. կամ շատացաւ ասել միայն՝ մոլորեցան, առանց յաւելուածոյն՝ բազում մոլորեցան։ Արդ այս մոլորութիւն մեծ, և թերամտութիւն հեղգացելոց ի գիտութիւն պաշտամանն եւ կրթնից աստուածոյնոյ՝ հնարեաց, ասէ, զարհեստ ճաճագործութիւն. և առկայն այլն խոստովան լեալ Հանդիպելոյ թէ յոյժ մոլորութիւն

և Թերահաւատութեի, և անսիրելութեի կրօնից Հարատեւից զատուածման, յաւգնի՝ որպէս Թէ կրօնք ոյ խափանել ունին՝ի գալոց ժամանակս։ Ցեսանես, զիարդ զօրութեին ոյ տայ նմա՝ի յայտ ածել զանցեալ մոլորութեի նախնեաց իւրոց. իսկ զօրութեին սատանայական սիսկ զնա ողբալ զհանդերձեալ պատուհաս գիւաց։ Վասզի եթէ առ յոյժ մոլորելոյ առաջնոցն յանդգնութեի անդր, անհաւանութեի և անկրօնաւոքն բարւոք արուեստակեցաւ առեղծանել աստուածս, զի՛նչ զարմանք են՝ եթէ զօր միան գամ հնարեաց այդ արհեստ նոցին՝ կրօնասիրութեան Թշնամի, բարձեալ ջնջեսցի յերեսաց ածային կրօնիցն. զոմէհետև չէմարտութեին է ուղղել զմոլորութեի, հաւատոց՝ կշտամբել զանհաւանութեի, և առ ոճ գարձմանն՝ բառնալ զօտարանալն՝ի նմանէ։

Եթէ Ջրհեղեղ խառնս առանց պատճառս ինչ տալոյ աստուածս առեղծանելոյ, մեզ ինայր արդարեւ քան ուղիղ և բարեպարիշան ծանօթութեի ուշ եղեալ առանել, Թէ ոչ անկանելին նորա յայն արհեստ ածարարուն՝ եթէ չէին առերիւրեալ՝ի չէմարտութեի. եթէ զվայելչականան ոյ խորհէին, եթէ յառաջամիտք լինէին՝ի պաշտն և՝ի կրօնս ոճային։ Յայն մերում ասելով զպատճառս այսր արհեստի, Թերևս արդեօք նեղիլ էին խայտառականք հատակարարացն չէմարտութեի. այլ քանզի նա ինքն՝ որ հրաշափառագոյն քան զամենայն վերամբառնոյ զմարդոյն կարողութեի յարուեստակել աստուածս, և աւազն զայն՝ զի յայտ ժամանակի ամենայն՝ի մարդկանէ առհասարակ ածառեղծուածքիք խափանելոց են՝ի հրաժարանել անգամ օրինաց, բայց զոյգ նմին խոստովանեալ յայտ առնէ զպատճառս՝ որով յայտ եկիցէ, իբրև Թէ առկարի մոլորութեի և անհաւանութեի, և անընդելութեան առ ածապաշտ կրօնս, հնարեցին նախնիք իւրեանց առեղծանել աստուածս, մեզ ապա զի՛նչ պիտոյ է ասել, մանաւանդ Թէ առնել, բայց զհնարատուն մեզ գոհութեիս մատուցանել տեառն ոյ մերում, որ զատհմանականն ապ-

դրբութ պատճառաւ՝ երբարձ ի միջոյ նոցուն հակառակորդն, Ա
ամն զի զոր սահմանեալն էր բազում մոլորուելն, երբարձ
Ճանապարհ Ճշմարտութեն. զոր անհաւանութեն սահ-
մանեաց, հաւատքն բարձին. զոր անընդելուն ձեռապաշտ
կարգացն սահմանեաց, երբարձ զայն գործութեն առ միաձն
Ճշմարիտ և սուրբ. և զայդ ոչ յԱրդիպատոս միայն, ըստ ո-
րում ողբայ անտանօր և էհե դիւականն ոգի, այլ ընդ ա-
մենայն երկիր՝ որ երգաձայնիւ տեառն երգ նոր. որպէս
Ճշմարտապատում Ճառք մարգարէականք յառաջագոյն
գուշակեցին. ըստ որում գրեալն է. "Որհնեցէք զտէր
յօրհնութեն նոր, օրհնեցէք զտէր ամենայն երկիր.. Աղ-
ք. 1, Օ և վերնագիրն սաղմոսիս դնի. "Ի ժամանակի
զի տաճարն շինեցաւ.., Ապանզի շինի տուն տեառն քա-
զաք այ, որ է եկեղեցի սուրբ, ընդ ամենայն երկիր, յետ
գերութեն՝ որով ըմբռնեալ ունէին գնա զմարդիկ, և ի
հաւատացելոց անտի յաճ՝ շինի տունն երբեմն ի կենդանի
վիմաց, Ա ման զի ի տեղիանել մարդոյ աստուածս, ոչ ե-
թէ այնու չգտանիցէր զմարդ՝ այն որ արարն գնա, յոր-
ժամ ի նոցայն հաղորդութեն ձգիւր մարդ պաշտելովն,
Հաղորդութեն ոչ ընդ անգգայ կուռցն ասեմ, այլ ընդ նեն-
գապատիր դիւացն. զի կուռք զինչ այլ են, եթէ ոչ
ըստ գրոյն ասելոց, "Աչս ունին, և ոչ տեսանեն.. Աղ-
ք. 5. և զոր ինչ այսպիսիս ի դէպ է ասել յաղագս
նիւթոց Հարատարագործաց, անդրաժ եղիցոյ ի կենդանուէ
և ի զգայութեն, Այլ այսքն պիղծք՝ զոր ժժգալի արհես-
տիւն մոգութեն կապեալ էին ի կուռսն յայնոսիկ, յիւ-
րեանցն հաղորդութեն ձգեալ զանձինս պաշտեցուսոցն՝
ողորմելիս ինն ընդ գերութեն ունէին, Ա ման որոյ ասէ ա-
ռաքեալ. "Ոխտեմք եթէ ոչ ինչ խակ կուռքդ են յաշ-
խարհի.... Այլ զոր զոհեն հեթանոսք, դիւաց՝ և ոչ
այ զոհեն. ոչ կամիմ զձեզ հաղորդս դիւաց լինել..
ա. Կր. Ը. ժ. ք 20, Այսպա զինի այսր գերութեն որով ի չա-
բաշուք դիւաց ըմբռնեալ էին մարդիկ, կազմի տունն այ
ընդ ամենայն երկիր. յորմէ վերնագիրս ընկալաւ նախա-
սացեալ սաղմոսդ. որ և ասէ. "Որհնեցէք զտէր յօրհ-

նուիրէ նոր. օրհնեցէք զաւէր ամենայն երկիր, Օրհնեցէք զաւէր, և օրհնեցէք զանուն նորա. աւետարանեցէք օր ըստ օրէ զփրկութիւն նորա, Պատմեցէք ի հեթանոսս զփառս նորա. յամենայն ժողովուրդս զքրանչելիս նորա, Որ մեծ է աւէր, և օրհնեալ է յոյժ. ահարկու է նա ի վերոյ ամենայն կուռց, Որ ամենայն կուռք հեթանոսաց դեւք են, և աւէր զերկինս արար։ Աղ. ՂԶ. 2. 3. 4. 5.

Զայն իբրև որ յաւէրն ընդ բարձուին կռապաշտութեան յայտ ժամնակի՝ զոչ ընդ իշխանութիւն դիւաց ի վերոյ դիցապաշտից, կամէր ուրեմն ըստ սպրեցոյց ոգւոյն չարի՝ կալ ինալ դերութիւնն այնմիկ, յորոյ ընդ պակասել երգ սաղմոսն զչինութիւն տաճարին ընդ ամենայն երկիր։ Այդ նախապատրաստակեր Հերմէս ցաւագնելով. զդէմն նախապատրաստակեր մարգարէն խնդալով։ Յր. քանզի յայնժոր է հոգին՝ որ սրբովք մարգարէիւքն երգեր զայսոսիկ, նա ինքն Հերմէս՝ որ չկամէր զբարձուին այնոցիկ և ցաւագնէր, խոստովանել բռնադատեցաւ՝ թէ ոչ յիմնանոյ ոմանց և ի հաւատարմոյ և ի կրճնասիրաց կարգեալ էին դիւաբնակ դրօշեալք, այլ ի մոլորելոյ և յանհաւանից և յատելոցդ ծածկաշաւութիւն։ Այս զի ինքն թէպէտ և աստուածս յորջորջէ զնոսին, այլ քանզի յայնպիսի մարդոց ասէ ծածկաւորեալս, որպիսիս լինել մեր ոչ առնումք յանձն, ցուցանէ յականոյ կամն՝ թէ չէն նորա պաշտելի յայնցանէ, որք ոչ են իբրև զնծածկաւորեալսն. այս է, չէն պաշտելի յիմնանոյ, ի հաւատարմոյ, ի կրճնասիրաց. սակայն յայտ առնէ միանգամայն, թէ նոքա իսկ մարդիկն՝ որ զնոսայն արարին, անձանց հարկ եղեն առ աստուածս ունել զայնոսիկ՝ որք չէին աստուածք։ Օ յ Հմարիա է մարգարէական. «Արդ առնիցէ մարդ անձամբ անձին՝ աստուածս, և նորա չէն աստուածք»։ Երեմ. ԺՀ. 20։ Արդ զայնպիսիսն թէպէտ և աստուածս անուանեաց Հերմէս, և այն՝ այնպիսեաց ոմանց աստուածս՝ յայնպիսեաց մարգոց Հարատարեալս, այս է՝ զդևսն անյայտ արհեստիւ ոմանք զուգաւարեալս ընդ կուռսն՝ իբրեանց ցանկութեանն կապանօք, այլ ոչ ետ նոցա զայն ինչ՝ զոր ետ պղատոնա-

կանն Պօղոսէոս, զոր և բաւականաբար ցուցաք կարի ան-
պատեհ գոլ և անտեղի, որպէս Թէ պատգամաւորք իցեն
նոքա և միջնորդք ընդ աստուածան զորս ՚ած արար, և ընդ
մարդիկ զորս նոյն ՚ած արար, աստի զխնդրուածան վերընդ-
ծայելով, և անտի զպարգևան առնելով։ Վասնզի յոյժ
անմտութիւն է՝ կարծել Թէ աստուածք զորս մարդիկ արա-
րին, զօրագոյնք իցեն առ աստուածան զորս ՚ած արար,
քան Թէ նոքին մարդիկն՝ զորս նոյն ՚ած արար։ Վասնզի
Թէպէտ և դևն կապեալ ՚ի կուռս անդ ամբարիշտ արհես-
տիս մարդկան՝ աստուածացաւ, սակայն այսպիսւոյ մար-
դոյ ՚ած եղև, և ոչ ամենեցուն։ Պրպիսի իցէ ապա աս-
տուածդ այդ, զոր առնէ միայն այր մոլորեալ և անհա-
ւան, և բացադարձեալ ՚ի Չմարտէն ՚այ։ Այլ արդ եթէ
դիք պաշտեցեալք ՚ի մեհեանս, որք անգէտ արհեստիւն
տաղաւարեալ կան՚ի պատկերս երևելի կոցն, և արուես-
տակեալ են՚ի մարդոց մոլորելոց և յանկրթիից, ոչ են միջ-
նորդք և պատգամաւորք ընդ մարդիկ և ընդ աստուածս՝
եթէ սակս խրեանցն չարաբարութեանն, և եթէ զի մարդիկ
՚ած ացուցիչք նոցա՝ Թէպէտ և մոլորեալք և անհաւանք և
կրճնատեացք, այլ լաւագոյն քան զնոսա են, զհետ գայ
Թէ զոր ինչ և կարեն, արդարեւ իբր դիք կարեն՝ կամ առ
երեսս բարերարելով, յորժամ առաւել վնասեն՝ առաւել
խաբելովն, և կամ յայտնապէս չար առնելով. սակայն չեն
ձեռնհաս առ մի ինչ յայսցանէ, բայց յորժամ և որչափ
Թոյլ տայ նոցա վերինն և գաղտնի տեսչութիւնն ՚այ. այլ
ոչ իբրև միջնորդք ընդ մարդիկ և ընդ աստուածս՝ բա-
րեկամութիւ աստուածոց աւելի ինչ զօրեն առ մարդիկ։
Վ՚ան զի դոքա ընդ բարի աստուածան՝ զորս մեք հրեշ-
տակս սուրբս կոչեմք, և բանաւոր արարածս, որք յերկ-
նային բնակութեանն են՝ եթէ աթոռք, եթէ տէրութիւնք,
եթէ պետութիւնք, եթէ իշխանութիւնք, ոչ ունին ամենևին
բարեկամանալ. յորոց այնչափ ՚ի բացեայ են ըղձիւք ո-
գւոյ, որչափ հեռի և յառաքինութենէ մոլութիւն, և ՚ի բա-
րութենէ չարութիւն։

ԳԼՈՒԽ ԻԵ

Յաղագս իրաց՝ որ կարեն անխափանապաշաճել սրբոց հրեշտակաց և մարդկան։

ՅՅՍՈՐԻԿ աղաղաւ չէ և չէ բնաւ դիւացն միջնորդու-թիւ ասն ունել բարեխնամութեանն աստուածոյ, կամ լաւ եւս՝ բարի հրեշտակաց, այլ միայն նմանողութիւն բարիոք կամաց, որով ընդ նոսա կցորդ եմք, ընդ նոսա կեանք, ընդ նոսա զնոյն ճաշ պաշտեմք. Թէպէտ և մարմնոյ այօք զնոսա տեսանել անկարանամք։ Այլ եթէ կամացն անդնմանութիւն և ըստ դիւրալոյծ տկարութեան եղկելիք եմք, արդարեւ բացական՝ի նոցանէ դառնիմք ոչ տեղւոյ դրիւք, այլ ըստ վարուց արժանաւորութեան։ Վասզի ոչ եթէ վասն բնակելոց մեր յաղցաւոր երկրի զատանիմք առ՝ի նոցանէ, այլ եթէ անմաքուր սրտիւ զերկրաւորս ախորժիցեմք. խակ՝ի բժշկիլ մերում՝ նմանք նոցա լինիցիմք. զարդիս հաւատովք մերձենամք առ նոսա, եթէ հաւատայցեմք՝ թէ նոցին և նպաստիւք երանելի լինիցիմք յայնմանէ՝ յորմէ և նոքա երանացան։

ԳԼՈՒԽ ԻՕ.

Թէ ամենայն կրօնք հեթանոսաց հայհոյեն առ մեռեալ մարդիկ։

ԱՅՑ արդ քաջ՝ի միտ առնուլ արժան է, թէ զիարդ եգիպտացիդ այդ Տրիսմեգիստոս՝ի ցաւագնեալ անդ, թէ յատեա ժամանակս խափանելոց են Աստիպտոս սովորու-թիւքն սահմանեալք յայնպիսեացս անտի, զորս խոստա-վանի լինել յոյժ մոլորեալս, անհաւանս, և՝ի պաշտամա-նէ ճշմարիտն կարգաց օտարացեալս, հանդերձ այլովք ա-սէ և զայս. "Յայնժամ երկիրս այս սուրբ, կայան բազ-նաց և մեհենից, ծայրալիր լցցի գերեզմանօք և մեռե-

լովք ,, ։ Որպէս այն Թէ ՝ի կալ ՚ի մեռանելոյ՝ ոչ մեռանէին մարդիկ , կամ այլուր՝ և ոչ ՝ի հող թաղէին մեռանելք . ուր ըստ առաւել հոլովելոյ ժամանակաց և աւուրց՝ բազմանային և գերեզմանք սակս յաճախութեան մեռելոցն ։ Այլ ընդ այն թուի այլդ վճռագնիլ , զի փոխան մեհենից և բագնաց լինելոց էին վկայարանք մարտիրոսաց մերոց , մինչև կարծիս տալ այնոցիկ՝ որք խոտոր նակի ընթեռնուն զայսոսիկ Թէ հեթանոսք զաստուածս պաշտէին ՚ի տաճարս , իսկ մեք զմեռեալսն պաշտեմք ՚ի գերեզմանս ։ Այսան զի այնպէս իմն կուրութիւն ընդ լերինս գոգցես հարկանին աչք ամբարիշտք , և ոչ տանին հայել ընդ իրս շրջեցուցիչս աչաց . մինչ զի ոչ առնուն ՚ի միտ Թէ յամենայն գիրս հեթանոսաց ոչ բնաւ , կամ կաւ բի սակաւ աստուածք գտանին , որ չկոչեն լեալ երբեմն մարդիկ , և ՚ի մեռանել իւրեանց պատուեալք ՚ածաբար ։ Ասողում զի արքունի ասացեալն , Թէ ամենայն մեռեալքն հեթանոսաց համարին աստուածք ուրուականք . և զայս ցուցանել պաշտամամբքն՝ որ ընծային համօրէն մեռելոց , յիշատակեալ և զխաղս եղերականս, իբր քաջայայտ ցոյցս ՚ածայնութեան , զի աստուածոց միայն սովորութիւն էր զայնպիսի մատուցանել հանդէս ։

Այս ինքն Հերմէս՝ զորմէ այժմու բանքս են , ՚ի մատենի անդ ուր զհանդերձեալն նախագուշակէ աւաղելով ըստ յառաջ բերեալ բանին, վկայէ Թէ աստուածք Հպիտոսի՝ էին մարդիկ մեռեալք ։ Վասնզի յետ ասելոյն՝ Թէ նախահաւրք իւրեանց մեծապէս մոլորեալք յաղագս աստուածոցն բանի , անհաւանք և բացագարձեալք յաճապաշտ կրօնից, հնարեցին զաստուածարարութիւնն արհեստ, ՚ի նոյն գիւտ յաւելին ասէ զզօրութիւն իմն ներգործեալ ՚ի բնութիւնս աշխարհի , և զայն խառնելով . քանզի ոգիս արարչագործել կարող ոչ էին , կարդացին զոգիս դիւաց կամ հրեշտակաց , մուծեալ զնոսա ՚ի պատկերսն նուիրականս և ՚ի խորհրդակատարութիւս, որով կուռքն կարողանային բարի ինչ առնել կամ չար ։ Յետ այսց բանից՝ իբր օրինակաւ ցուցանել կամ ցեալ զոյն՝ ասէ . « Վասնզի հաւն

„ քո,ա Ա՛սկղեպիէ, բժշկականուէ եղև նախագտակ, որում
„ տաճար նուիրեցաւ՝ի լերինն Լ լրիայ մերձ յաին կոկոր-
„ դիլոսաց . ուր հանդուցեալ կայ նորայն երկրաւոր մարդ՝
„ այսինքն մարմինն . իսկ լաւագոյն բաժին , մանաւանդ
„ բոլորն , եթէ ողջոյն մարդն իցէ՝ի ղազարէ կենդա ,
„ վերաչուեաց յերկինս . և այժմ իսկ զամենայն ղազա-
„ մանս մատուցանէ ախտացելոց մարդոց իւրոյին ձեռա-
„ նուէիւ , զոր յառաջն բժշկականն արհեստիւ կատա-
„ րեր „ : Ա՛հաւասիկ վկայէ Թէ մեռեալն պաշտօն առնոյր
՝ի տէղւոջ՝ ուր զգերեզմանն ունէր . Թէպէտ և սուտ և
պատրողական է վերաչուել այնպիսւոյն յերկինս : Ցա-
ւելոյ ասպա և զայլ ինչ . “ Հերմէսն զորոյ վանուն որպէս
„ նախահաւուս ես ինքն կրեմ , ասէ , ոչ ապաքէն՝ի համա-
„ նուն հայրենիս անդ առևտացեալ , զամենայն զմահկա-
„ նացուս խուռն դիմեալս առ նա ինամարիկ և պահպա-
„ նէ „ : Ո՛ւ այս Հերմէս մեծն՝ զոր հաւ իւր կոչէ , այն է
Ա՛երկուբիոս , ասէ Թաղեաւ՝ի Հերմոպոլիս՝ ՝ի համա-
նուն քաղաքի : Ա՛ւ ահա զերկուս աստուածսն՝ զԱ՛սկղե-
պիոս և զՀերմէս՝ մարդս լինել ասէ . և արդարեւ զԱ՛սկղե-
պիոսէ զնոյն միաբան ունին կարծիս Յոյնք և Լատինք .
բայց զՀերմէս բազումք ոչ՝ի մահկանացուաց կարծեն ,
զոր սա հաւ իւր լինել վկայեաց . իցէն Թերևս այլոք սա
և այլ նա , նմին անուան հանդիպեալք . ոչ հակառակիմ
ընդ լինել նոցա զանազանս . բայց և նա ինքն Հերմէս
իբրև զԱ՛սկղեպիոս՝՝ի մարդկանէ աստուած է , ըստ վկայ-
ութեան մեծի առն Ցրիսմեգիստեայ Թոթին նորա :

Ա՛ր և յաւելեալ ասէ . “ Ո՛յսիս զկին Ա՛սիրի քանի՞ բա-
րեպարգև գիտեմք՝ի գԹոթն , քանի՞ չարարար՝ի զայրա-
նալն „ : Ա՛ւ ապա՝ի ցուցանել Թէ ըստ այսմ աղբի են
աստուածքն՝ մարդկան արհեստիւ գործեալք , որով դևքն
համարին լինել յոգիս մարդկան մեռելոց՝ ըստ արուես-
տակելոց մարդկանն մոլորելոց , անհաւանից և անկրօնից ,
ասէ՝ Թէ այն դևք փակեցան՝ի կուռս անդ՝ սակս ոչ կա-
րելոց ձեռացուցչացն այնոցիկ արարչագործել և զհոգիս :
Իսկ յետ ասելոյն զնախայիշատակեալդ բան յաղագս՝ի-

սիդեայ, 'ի վերայ բերէ. «Հանզի աստուածքն երկրաւորք
„ և աշխարհայինք դիւրաշարժ են 'ի ցանուել. իբրև
„ զի են 'ի մարդկանէ՝ յերկաքանչիւր բնութէ եղեալք և
„ զօդեալք„, Յասելն՝ յերկաքանչիւր բնութէ, այս է՝ 'ի
հոգւոյ և 'ի մարմնոյ, տայ իմանալ 'ի ձեռն հոգւոյ զգևն,
և 'ի ձեռն մարմնոյ՝ զդրօշեալն. «Յո յայսմ պատճառէ,
„ ասէ, կենդանիքդ սուրբք անուանին սոքա յԵգիպտացւոց
„ անտի. և պաշտին ոգիքն նոցա ըստ իւրաքանչիւր քա-
„ զաքի. որոց և կենդանիքն նուիրականք են, նոցին օրի-
„ նօք պաշտեցեալք, և նոցին անուամբք կոչեցեալք„.
Յուր է արդ եղերականն այն նորա տրանջիլն, Թէ ե-
դիպտացւոցն երկիր սուրբ, կայսն բագնաց և մեհենից,
մեռելոցն շիրմաք ունի ընուէ. Ոչ պաքէն ոգին դաւա-
ճանող՝ որոյ ազգեցութեամբ ասէր զայսոսիկ Հերմէս,
բռնադատեցաւ խոստովանել նորին բանիւ՝ Թէ յայսմ
ժամանակի լցեալ էր երկիրն այն գերեզմանօք և մեռելովք,
զորս առ աստուածս ունէին. Ոչ դիւացն տագնապ
բարբառէր 'ի ձեռն նորա՝ որք տխուր կային զի պատու-
հաս'ի վերայ կայր նոցա առ վկայարանօք սրբոց մարտի-
րոսաց. վասն զի 'ի բազում յայն տեղիս տանջին գևք. և
խոստովան լինին, և Հալածական վարին յայսահիւք մար-
մնոց մարդկան.

ԳԼՈՒԽ ԻԱ.

Թէ զիր պատիւ տան մարտիրոսաց գրեստոնեայք.

Ասացն մեք ոչ բաւն նոցունց մարտիրոսաց կարգեմք
տաճարս, քահանայութիւս, պաշտամունս և պատարագս. զի
ոչ եթէ ինքեանք, այլ Քն նոցա է մեր աստուած. Ոչ դա-
րեւ պատուեմք զնիշատակս նոցա՝ իբրև սրբոց մարդոցն՝
որք մնհուամբ չափ մարտեան վասն Քրիստոսի եան, զի
Քրիստիան կրօնքն պայծառասցին՝ հերքելով զսուտս և
զմոռացածինս. զոր Թէ և յառաջն ոմանք ոմանք 'ի հե-

Թանոսաց Հանապէին, այլ լռէին առ երկիւղի։ Ո՞ր ՚ի հաւատացելոց լուաւ երբէք, զի քահանայ որ կացեալ առ սեղանաւ՝ որ չնեաւ իցէ ՚ի պատիւ և ՚ի պաշտօն այ ՚ի վէր մաքրեալ իսկ մարտիրոսի, ասասցէ յաղօթս. Ո՝ատուցանեմ քեզ պատարագ, ոչ պէտք է, կամ պօղ, կամ կիր պրիանէ. զի պատարագն ՚ի նոցա յիշատակս մատչի այ, որ զնոսա արար և մաղդ և մարտիրոս, դասակցեալ զնոսա ընդ հրեշտակացն սրբոց յերկինսաւոր փառսն. որպէս զի այնու հանդիսի տնտեսմամբ զոհութիւն մատուցցուք Հնմարեալն այ յաղագս յաղթութեան նոցա, և զանձինս յորդորամիտ արասցուք ՚ի նոյն պակաց և փառաց նպատակ զնձ կարդալով յօգնականութիւն ստէպ յիշատակաւ սրբոց վկայից։ Ա՚յլն իրի որ ինչ ուղերձք բարեպարիշտք մատչին ՚ի տեղիս կատարման մարտիրոսացն, զարդ հանդիսի յիշատակաց են, և ոչ պաշտամունք կամ պատարագք մեռելոց՝ իբրև աստուածոց։ Ա՚յլ նոքին իսկ որք միանգամ զկերակուրս իւրեանց անդր տանէին, թէպէտ և առ կաբի երկիւղած քրիստոնեայս ոչ լինի այդ, և չիք սովորութիւն այդպիսի ՚ի բազում գաւառս, բայց և որք առնեն զայդ, յետ մատուցանելոյ զաղօթս, յետս զբերեալն տանէին առ ՚ի ճաշակել, և կամ բաշխել նա և կարօտելոց, ցանկալով միայն սրբել կերակրոյ վանն արժանեաց մարտիրոսաց՝ յանուն տեառն նոցա։ Ա՚յլ ոչ որ զայսոսիկ համարեցաւ բնաւ պատարագս լինել մարտիրոսաց, որ միանգամ դիտէ՝ թէ մի միայն պատարագ քրիստոնէից մատչի և անդ։

Ա՚յլ արդ մեք զմարտիրոսս մեր ոչ ՚ձծականաւ պաշտեմք պատուով, և ոչ մարդկայնովք չարագործութիք, զոր օրինակ հեթանոսք զիւրեանց աստուածսն պաշտեն. ոչ զոհս մատուցանեմք նոցա, և ոչ զնոցին խայտառականս ՚ի պաշտօն փոխարկեմք։ Վ՚ասզի յաղագս Ւոսիդեայ՝ հնոջ Ոսիրի, որ ՚ձծուհին էր եգիպտացւոց, և յաղագս ճնոցաց նորա՝ որք առ հասարակ ասեն լինել թագաւոր, և գրեն զնմանել, թէ յորժամ յաշտ առնէր ճնոցաց իւրոց՝ եգիպտ ոՀ գաւէր, և զհասկն ելոյց առն իւրում արքային, և խորհրդականի նորա Հերմէայ. վասն որոյ և զՈսիան

համարին նոյն ընդ Աւետիս։ Այլ թէ զոր չարիս՝ և որքա-
նիս յիշատակագրեն ոչ եթէ քերթողք՝ այլ մեհենականա-
ցա մատեանք, զոր օրինակ և Զրադաշդի գրեաց առ Աղիմ
պիտադա մայրն ըստ տեղեկուեցայ Լեռնդեայ քրմի, թողն ըն-
թերցին որք յօժարիին կամ կարեն, և յուշ ածցեն զոր
ընթերցան, տեսանել որոյ մարդոյ մեռելոյ և սակս որպի-
սեաց արարուածոցնոցա պաշտամունս սահմանեալ են իբ-
րև աստուածոց։ Ոչ մի իւիք իշխեացին բնաւ ի համեմա-
տուի բերել զայնոսիկ՝ զորս առ աստուածս ունին, ընդ որս
մարտիրոսաց մերոց՝ զորս մեք ոչ համարիմք աստուածս։
Ոչ քահանայս սահմանեմք, և ոչ զոհս մատուցանեմք
մարտիրոսաց մերոց. զի այդ անդէպ է, անպատեան և
տարօրէն, այլ միայն ՚ի նմա եթէ սերտական։ Այսպէս ոչ
յանցուածովք նոցա, և ոչ զաղբատեսակ խաղուք զնոսա
զբօսեցուցանեմք. ուր հեթանոսք կամ զայրերատուբեաս
աստուածոց իւրեանց տօնախմբեն, եթէ մարդիկ էին,
և կամ զստայօդեալ զբօսանս չարասէր դիւաց, եթէ
մարդիկ ոչ էին։ Յայդպիսի ազգէ դիւաց՝ Սոկրատէս
չառնոյր իւր աստուած, եթէ ունէր աստուած զոր. այլ
թերևս այնպիսւոյ մարդոյ որ օտար էր և անպատ յծծա-
ստեղծութեանն արհեստ, աստուած զնմն ընծայիցեն
այսօրիկ՝ որք Նարտարագոյն յայն արհեստ զանձինս կար-
ծիցեն։ Օ՜ինչ այլ երկայնեմ, ոչ որ ՚ի չափով մտաւո-
րաց իսկ երկբայի, թէ ոգիք այդպիսիք չեն պաշտելոյ
արժանաւորք սակս երանական կենաց՝ որ յետ մահու։
Այլ ասիցեն թերևս. աստուածքն ամէն բարիք են, իսկ ՚ի
դիւաց՝ ոմանք չարք, ոմանք բարիք, և ՚ի ձեռն բարեացն
կարծեցեալոց մարթ իցէ ժամանել ՚ի յաւիտենիցն եր-
ջանիկ կեանս, որոյ վասն պաշտելոյ արժանիս զնոսա հա-
մարիցին։ Այլ զայդ՝ թէ իցէ իրաւացի, ՚ի յաջորդ
դիրդ տեսանելի է։

ԳԻՐՔ ԻՆՆԵՐՈՐԴ

Յետ խօսելոյ Օգոստինոսի ի նախընթաց մատենի յաղագս սիրժելոյ զպաշտօն դիւաց, իբրև զի բազում հաւատասէրք ցուցանին նոքա այսս չարս լինել, յառաջիկայումն առ այնասիկ հարկանի՝ որք զանազանութեամբ մուծանեն ի դէս՝ ո՛մանց չար լինել, և այլոց բարի։ Եւ իբրև ունայնացուցանէ զպդիսի որոշողութեամբ, ցուցանէ ասալ՝ թէ ոչ միայն ունայք ի դիւաց, այլ՝ զնի միայնում անկ է միջնորդ մարդկան լինել յերանութեան անդր։

ԳԼՈՒԽ Ա.

Թէ յինչ յանդիպեցաւ յառաջասացեալ Ճառն վերնաբան, և զինչ այլ միայ քննել յաղագս այնր խնդրոյ։

ԱՅԺՄԻՆ ոմանք համարեցան թէ գուցեն աստուածք բարիք, և չարք. բայց այլք իբր լաւիմացք այնչափ ինչ պատուասիրեցին զաստուածս, զի և ոչ զնի որ ի նոցանէ իշխեցին չար կարծել։ Այլ որք զկնոս յաստուածոց բարիս ասացին, և զկնոս չարս, զանուն աստուածոյ էտուն և դիւաց. որպէս և զաստուածս գուն ուրեք յանուն դիւաց կոչեցին. մինչ զի և զ՝Քամադդ ինքնին՝ Թագաւոր այլոց կարծեցեալ և իշխան, ասեն զև կարդացեալ՝ի Հոմերայ։ Իսկ որ միանգամ զամենայն աստուածս ճանաչէն բարիս, և կարի առաւելեալս քան՝ի մարդկանէ, յիրաւի բերին անդրանիկ զչար գործս դիւաց, զորս ժխտել ոչ է մարթ. և անհնար համարին այնպիսի իրս գործել աստուածոյ՝ որ առհասարակ պարտին բարի լինել։ Նմին իրի որոշումն առնին գնել ընդ աստուածս և ընդ դևս. իբրև զի զարժանապէս պարսաւելիսն՝ի գործս կամ՝ի ցանկութիս չարաչարս՝ զարտայայտեալս զօրութեամբ ոգւոց անբևեռելեաց, դիւաց միայն վերագրեն, և ոչ աստուածոց։ Այլ քանզի և զնոսին զդևս համարին միջնորդս կալ ընդ մարդիկ և ընդ

աստուածս՝ սակս ոչ կցորդելոյ աստուածոյ ուրուք ընդ մարդ դում, ասեն՝ Թէ նոքա զՀայցուածս մարդկան ՚ի վեր հանեն, և զկատարումնն բերեն այսր. և ՚ի դոյն հաւանեցան սղաստոնականքն՝ գլխաւորքն և ազնուականքն յիմաստասէրս. և ահա ընդ նոսա իբրև ընդ վեհմագունից կամ եղև հետազօտել զայս խնդիր՝ Թէ արդեօք պաշտօն բազմաձեռնութեան զօրիցէ՞ ինչ ՚ի ստանալ զյաւիտենից կեանս՝ որ յետ մահու. և յառաջանացեալ մատենիդ խնդիր արկաք, Թէ զիարդ զնա անկղնտացեալք յայնպիսիս՝ յորոց բարիք և խոհականք ՚ի մարդկանէ գաթչին և դատապարտեն, այն են՝ պաճուճանք բանաստեղծից անսուրբք, անագորոյնք, եղեռնականք՝ ոչ զումմէ և իցէ մարդոյ կազմեալք, այլ զաստուածոց, այլ և դիւթական արհեստիցն ապիրատ և դատապարտելին բռնութիւն, զնա ասեմ յայսպիսիս մոլեալք՝ զիարդ իբր մերձաւորք և բարեկամք աստուածոց բարեաց՝ հաշտեցուցանել կարիցեն զբարիս ՚ի մարդկանէ. և ցուցեալ ՃՀգրտեցաւ անհնարին լինել այդմ։

ԳԼՈՒԽ Բ

Արդեօք ՚ի դէս՝ որ վայրագոյնք են քան զաստուածս, կայցեն բարիք ոմանք՝ որոց վերահացութիւն հաւանել կարիցէ հոգին մարդկային ՚ի Ճշմարիտն երանութիւն։

ԱՅԻ ահա յայսմ մատենի, որպէս ՚ի կատարած անցեալսն խոստացաք, կայ մեզ Հարցաքննել զզանազանութիւն՝ զոր նոքայն դնեն, ոչ աստուածոցն յիրերաբս, զորս առհասարակ բարիս ասեն, և ոչ ՚ի մէջ աստուածոց և դիւաց՝ զի զառաջինսն մեծաւ միջոցաւ անջրպետեն ՚ի մարդկանէ, իսկ զյետինսն դնեն ընդ մէջ աստուածոց և մարդկան, այլ զզանազանութիւն բուն իսկ դիւաց, որ առաջիկայ խնդրոյս է պահել։ Ա՛ն զի բազմաց սուղորութի՛ւ է ասել, Թէ ոմանք ՚ի դիւաց բարի իցեն, և ոմանք չարք. զոր

եթէ պղատոնեանց իցէ կարծիք, և եթէ այլոց ոմանց, ոչ անքնին թողլի է. զի մի ոք համարիցի դիւաց ոմանց բաբեաց զհետ երթալ յորժամ նոքօք որպէս միշտորդօք ընդ բարի կարծեցեալ աստուածն հաշտիլ ինդրեսցէ, և ընդ նոսա լինել յետ մահու, ըմբռնեալ ի պատրանս այսոցին չարաց. և ի բաց կայցէ ի Քրմարտէն ով, ընդ որում միայն, և յորում միայն, և յորմէ միայն երանելի է հոգի մարդոյ՝ բանաւորն և խմացական։

ԳԼՈՒԽ Գ.

Ջինչ ինչ ընծայէ դիւաց Պղատոնէս. յորոց թեպէտ և ոչ բառնայ զրանաւորութիւն, բայց և ոչ մի առաքինութեան նշանակ ի նոսա։

ՈՒՍԿ արդ որ է զանազանութիւն դիւացն բարեաց և չարաց։ Ըստ պղատոնականն Պղուտէոս ընդհանուր իմն խօսելով զդոցանէ, և մեծամեծս բազմաբանեալ յաղագս օգնելոյն նոցա մարմնոյ, զոգւոցն առաքինութիւն լուեաց բնաւ, զոր պարտ էր նոցա ունել՝ եթէ արդարեւ բարիք էին։ Պայս ուրեմն զերանութենէն պատճառ լուեաց. իսկ զնշանակ Թշուառութենէն ոչ կարաց լուել, խոստովանեալ թէ միայն նոցա՝ որով բանականս զնոսա ցուցանէ, ոչ եթէ յառաքինութիւն կրթեալ և սնդեալ չարչ տեղի անբանական կրից ոգւոյ, այլ ինքնին աղուիւ մերկայոյզ ամբոխմամբք։ Պանդի այս բանք են նորա. “ Ի համարուէ աստի ,, դիւաց, ասէ, սովորեցան քերթողք ոչ լինչ օտար ի Քմարք ,, տուէ ձևացուցանել զգեան զանխոսիկ որպէս աստուածս ,, ոմանս առեցողս և սիրողս լինել ոմանց ոմանց ի մարդ- ,, կանէ. զոմանս բարեբաստել և բարձրացուցանել այլոց ,, Թշնամեռնալ և վիշտս արկանել. վասն որոյ է նոցա ողոր ,, մել և զայրանալ, և նեղիլ և խնդալ, և զամենայն դէմս ,, ոգւոյ մարդկայնոյ յինքեանս բերել, և նմանակիր շարժ ,, մամբ սրտի և ծփանօք մտաց՝ յամենայն բորբոքումն

,, խորհրդոց տատանիլ,, ։ Ա. յայլիսի ամբոխիք և մրրիկք վտարեալ են բնաւ ՚ի խաղաղաւէտ վիճակէ երկնային տաճարաց ։ Այլ միթէ իցէ երկբայել՝ Թէ յայսոսիկ բանս զվայրագ ոյն մասունս ևԷթ ոգւոյ, և ոչ զբուն զմիտս դիւացն՝ որով են կենդանի բանական, ասիցէ ամբոխիլ զօրէն մրրկայոյզ ծովու՝ կրնջիլ մրրկաբ . մինչ զի և ոչ արանց իմաստնոց Համ մատուԹԷ արժանի են նոքա , որք Թէ և կրեն զայնպիսի ամբոխմունս ոգւոյ, իբր ոչ ազատ գոլով յայնցանէ մարդկայինս տկարուԹԷ՝ ըստ պայմանի այսց կենաց , բայց անխուով մնօք Հակառակ կան՝ ոչ տալ այնուիկ տեղի առ ՚ի Հաւանիլ կամ դործել ինչ , որ վարատեսցէ զնոսա ՚ի Հանապարհէ իմաստուԹ , և յօրինաց արդարուԹԷ ։ Այլ նոքա դևքն Համամմանք անմիտ և անարդար մարդոց՝ ըստ վարուցն և ոչ ըստ մարմնոյ , զի մի ասացից վատԹարք և քան զնոսա, իբր առաւել հնացեալք և անփախուստք յարժանահաս պատուհասից, ՚ի նոյն խոկ ի մտացն ծով որպէս ասաց, ալեկոծեալ ծփին . և ոչ միով մասամբ ոգւոյ կան Հաստատուն ՚ի ՀնմարտուԹԷ և յառաքինուԹԷ , որով միայն յաջողիլ ընդդէմ գնել խուովայոյզ և անբարի յօժարուԹԵց ։

ԳԼՈՒԽ Գ·

Ջինչ կարծիք են Հնմականաց և առյիկն անց յաղագս ամբոխմանց՝ որ ՚ի յոգւոյ լինին ։

Այրկին եղեն իմաստասիրացն կարծիք յաղագս չարժմանց ոգւոյ, զոր Հոմիք ասեն՝ բամբ . յորմէ լատին ձայնն բաւսիս , այն է կիրք , զոր ընդ Արիկերոնի առ Լատինս ոմանք ձայնեն՝ ամբոխմունս , այլք՝ յօժարուԹիս , ախորժակս ։ Այդ զայսպիսի ամբոխմունս կամ զկիրս՝ ասեն ոմանք յիմաստասիրաց լինել և յայր իմաստուն , բայց չափաւորս, և Հպատակս բանաւորուԹԵ, մինչև իշխանական

մնացին օրհնս իմն դնել նոցա՝ ի նուաճեսցին ի կարևոր պայմանի։ Այս խորհեցան պղատոնականք կամ արիս տոտէլեանք. ի աշակերտ եղև Պղատոնի Արիստոտէլ, առաջնորդ Ճեմական աղանդոյն։ Իսկ այլոց՝ որ էն ստոյիկեանք, ոչ է հաւանելի թէ կիրք այնպիսի լինիցին յայր իմաստուն. բայց Սիկերան ի մտաւեանն որ յաղագս վախճանաց բարւոյն և չարին, տայ հաւաստիս՝ թէ ստոյիկեանցն հակառակուն առ պղատոնականս կամ առ Ճեմականս՝ առաւել ըստ բառիդ է, քան եթէ ըստ իրացն բնութ։ Այսպէս ի ստոյիկեանք ոչ կամին բարիս կոչել զիրս ինչ, այլ մարմնոյ դիւրութիս արտաքինս. զի ոչ զայլ ինչ բարի Ճանաչեն մարդոյ բայ յառաքինութէ, որ արհեստն է բարիոք կեցոյ, և ի յոգւոջ միայն գտանի։ Իսկ պղատոնականք պարզաբար և ըստ հասարակաց սովորութէ խօսելոյ՝ բարիս կոչեն զայսոսիկ. այլ առ համեմատութէ առաքինութէ, որով է կեալ ուղիղ, փոքունս և դուշաբեայս։ Որով յայտ է, զի երկաքանչիւր կողմն զինչ և կոչիցեն, եթէ բարիս, եթէ դիւրութիս, միօրինակ ունին զայնպանէ գատուսան. և ստոյիկեանք յայս խնդիր ընդ նորաձևութէ ձայնիդ և եթ զաւարձանան։ Այմն իրի թուի ինձ, թէ և ի խնդրելն՝ որ զեօք լինիցին յայր իմաստուն կիրք ոգւոյ, թէ բնաւ օտար յայնպանէ իցէ, բանիւք առաւել հակաձառել նոցա, քան իրօք. վասն զի ոչ այլամիտս կարծեմ զստոյիկեանսն ի պղատոնականաց անտի, եթէ ի զօրութէ իրացն հայիցիմք, և ոչ ի հնչումն բառիդ։

Վասն զի թողեալ զբազում ինչ այլ ի ցուցումն բանիս՝ առ խորշելոյ յերկարութէ, զմի և եթ զբաջայայա ի մէջ առիդ։ Ի դիրսն մակագրեալ Արտիկեան զիշերայս, զրկ Զգեղիոս՝ այր պերձաբան և յոբնիմաստ, թէ նաւեր երբեմն ինքն ընդ ստոյիկեան երևելի ումեմն իմաստասիրի. և ընդաբձակագոյն Ճառագրէ անառանօր զՀանդիպելեալն՝ զոր ի կարճառօտ բովանդակեցից։ Յայսոսիկն իմն օդոյ խոստովելոյ ծովուն, ասէ, այն ինչ ի վանդի թուէր լինել նաւն, առ երկիւղի Հատան գոյիր երեսաց իմաստասիրին. իսկ մերձակայք թէպէտ և ինքեանք ի մահու գրուն

էին, ուշ եղեալ կային հետաքննին, տեսանել եթէ խոս-
վիցի իմաստասէրն յանձն իւր։ Այս՝ ի հանդարտել մըրր-
կին՝ իբրև յապահովացեալք ժամ առին զրուցասրելոյ և
խեղկատակելոյ ևս, մի ոմն յուղեկցաց անտի՝ այր մե-
ծատուն և զեղխ ասիացի՝ բանս արկեալ առ իմաստասէրն՝
ծաղր առնէր զնա, զի երկեաւ և այլազունեցաւ. ուր ես,
ասէր, աներկիւղ կայի՝ ի կորստական յայսմ վտանգի։ Ած
իմաստասէրն՝ ի մէջ ած՝ ի պատասխանի զբան սոկրատեանն
Քրիստիպպեայ, որոյ՝ ի նմանակիր անցս լուեալ նոյն-
պիսի ինչ՝ ի համանման մարդոյ, արար պատասխանի. չէ
բաւի դուս վասն ոգւոյ առն միոյ անպիտանի ոչ ինչ հոգաս.
բայց սակս ոգւոյն Քրիստիպպեայ երկնչել արժան է։ Ի
յաղթահարիլ մեծատանն այսու պատասխանեաւ, եհարց
Գեղիոս ցիմաստասէրն՝ ոչ վիճելոյ աղագաւ, այլ ուսա-
նելոյ. զի՞նչ պատճառք էին երկիւղի նորա. որոյ ուսուցա-
նել կամեցեալ զջերմ հարցասէրն, եհան՝ ի ծրարէ իւրմէ
զգիրս ստոյիկեանն Էպիկտետեայ՝ յոր կային բովանդա-
կեալ իմաստք կամ ասացուածք Հնոմի և Քրիսիպպե-
պեայ՝ առաքինորդաց ստոյիկեան աղանդոյ։ Զայն գիրս ըն-
թերցայ, ասէ Գեղիոս, զկարծիս ստոյիկեանց՝ թէ ոգւոյ
երևոյթք, զոր երևակայմունս ասեն, ոչ են յիշխանու-
թեան մարդոյ զնոյնդ և կամ երբ լինիցին՝ ի յոգւոջ. և
յորժամ յահաւոր և յերկիւղալի անցից ծագիցին, հար-
կաւ շարժեն և զիմաստնոյն ոգիս. մինչ զի կամ երկիւղու-
առ սակաւ մի պլլայլիլ կամ տրտմութիւն ձնչիլ. զի յառա-
ջին այդ կիրք քան զմտաց և զբանին ազդեցութիւն. սա-
կայն ոչ այնու ստգիւտ չարի՝ ի միտս չիմի, և ոչ ընդ այն
հաճ և հաւան լինի։ Այլ զի զայդ ահա համարին լինել
՝ի մերում իշխանութիւն, և դնել խորհ ընդ ոգի առն ի-
մաստնոյ և ընդ անմոռ. զի սորայն ոգի ընդ կրիւք ըմբըռ-
նեալ՝ ի նոյն յանկեցուցանէ զմտացն հաւանութիւն. իսկ
ոգի իմաստնոյն՝ թէպէտ՝ ի կրիցն բռնաւորեալ՝ պինդ ու-
նի անսասան մտօք զնոսն ձնմարիտ կարծիս՝ զոր ինչ յայն
կիրս ցանկալ և կամ զգուշանալ արժան է ըստ ուղիղն
բանի։ Այսպէս ինչ ըստ կարի համառօտ, և որպէս կար-

ձեմ բացայայտագոյն, թէ և ոչ վայելչագոյն քան զ՚գե-
ղեօս՝ յառաջ բերի , զոր յիշատակեաց նա ընթերցեալ՚ի
գիրսն Հելիկոեաեայ՝ Հաւաքողի զմասանս և զկարծիս
ստոյիկեանց ։

Հե զի այս այսպէս, ապա կամ ոչ ինչ բնաւ և կամ փոքու-
ին զանազանութիւն կայ ընդ կարծիս ստոյիկեանց և այ-
լոցն իմաստասիրաց յաղագս կրից և ամբոխմանց ոգւոյ .
զի ամենեքին ջատագով կան մտաց և բանի իմաստնոյն՝
ընդդէմ իշխեցողութեան կրից . և գուցէ յայն սակս ասեն
ստոյիկեանք՝ ոչ պատահել կրից յայր իմաստուն, զի ոչ
կարեն մոլորութիւն իւրք մեծագնել կամ արատել զիմաս-
տութիւն նորա, թէ արդարեւ իմաստուն է ։ Հե պատահեն
յանձն իմաստնոյ, անպղտոր մնալով իմաստութենն,՚ի պատ-
ճառս իրացն այնոցիկ՝ զոր նոքա յաջողակս վերաձայնեն
կամ ձախողակս , թէպէտ և բարի կամ չար անուանել ոչ
առնուն յանձն ։ Վասնզի թէ արդարեւ առ ոչ ինչ գրեր
իմաստասէրն այն զոր ինչ նաւաբեկութիւն տեսանէր կո-
րուսանել, այս է՝ զկեանս մարմնոյ , ոչ այնպէս ահաբեկ
առնէր զնա վտանգն, մինչև դիմացն այլագունութիւն անձ
նամանն լինել։ Հայց սակայն կարող էր՝ և ամբոխմանցն
ըմբռնել և Հասուստիլ՚ի միտն՝ թէ կեանք և փրկութիւն
մարմնոյ , զոր բնութիւն մերկին կորուսանել սպառնայր ,
ոչ էն բարիք՝ որ զունողս իւրեանց առնիցեն բարիս , զոր
օրինակ արդարութիւն ։ Իսկ թէ ասեն՝ ոչ բարիս կոչել
զնոյնս , այլ յաջողակս կամ դիւրութիս, վիճումն ձայնից
միայն է , և ոչ իրացն խոյզ և խնդիր . զի որ խոիր է՝ թէ
պէտ բարիս կոչել պատշաճ իցէ , և թէպէտ դիւրութիս,
յորժամ առ՚ի չպակասելոյ նոցա՝ և ստոյիկեանն ոչ ինչ
նուազ քան զՀեմականն երկնչի և այլագունի . զորս ոչ
համանուանաբար կոչեն , բայց միախոհութիւք դատին ։ Հպա-
քէն երկոքինն նոքա եթէ առ վտանգի բարեացս այսոցիկ
կամ դիւրութեանց ստիպիցին յայլբրատուէ ինչ , ոչ կարա-
ցեալք այլով օրինակաւ պահպանել զնոյնս , ասեն յանձն
առնուլ առաւել զկորուստ սիրոյականացն յանձնաս պահ-
պանութեի մարմնոյ , քան զործել ինչ՝ որով արդարութիւն

աղաւաղը : Ա՛յսպէս ահա միտք՝ որ պիտի կայ յայս խոր-
հուրդ , ոչ ներէ զօրանալ բնաւ ամբոխամանց ինչ հակա-
ռակ բանին, թէ և շարժիցին ՚ի ստորին մասունս հոգւոյ,
այլ ընդ հակառակս ինքն իւրեաւ նոցա . և չհաւանելով ՚ի
նոսա , այլ դիմակալելով ՚ի վար արկանել զթագաւորու-
առաքինութիւնէ : Ա՛յսպիսի ոմն նկարագրէ և Վիրգիլիոս
զնէաս՝ յասել անդ .

"Ա՛խք նորա կան անչարժելի ,
Ընդ վայր արտօսր ՚ի վայր թափի ,, :

ԳԼՈՒԽ Ե

Կիրք շարժեալք յանձինս քրիստոնէից՝ ոչ ՚ի մերձել ձգէն զնոսա , այլ յառաքինութիւնէ կրթէն :

Ա՛զ հարկ ինչ է աստանօր ցուցանել յերկար և մանրա-
մասն, զի՛նչ ուսուցանէն յաղագս կրիցս այսոցիկ գիրքս ծածա-
կեն, յորս բովանդակի քրիստոնէականն խմաստութիւն . վասն
զի զնոսին ինքն զմիտս ներքոյ արկանէն ՚ի՝ վարել զայն և
օգնել , և մնաց ներքոյ արկանէն գլիրս՝ ՚ի չափու ունել
և սանձահարել զնոսիս , որով փոխարկեսցին ՚ի պէտս սր-
դարութիւն : Ա՛ւ դարձեալ, ՚ի մերում վարդապետութիւն
ոչ այն խնդրի թէ անձն բարեկիր զայրանայ արդեօք, այլ
թէ ընդեր զայրանայ . ոչ թէ իցէ տխուր , այլ թէ էր վասն
տխուր . ոչ թէ երկնչիցէ , այլ յումմէ երկնչիցէ : Վասնզի
չգիտեմ իսկ թէ առողջ խորհրդով սգացանիցէ՞ որ զայ-
րանալ ընդ մեղուցեալն՝ զի ուղղեսցի , տրամել ընդ վշտա-
ցեալն՝ զի սպրեսցի, երկնչել ընդ վտանգեալն՝ զի կորիցէ
մի . զի և ստոյիկեանց գթութիւնն իմն համարեալ է՝ սովո-
րաբար յանդիմանել . և քանի դովելի էր թէ ստոյիկեանն
խմաստասէր շարժիւր ՚ի կարեկցութիւնէ ազատելոյ զմարդ
որ՝ քան յերկիւղէ նահաբեկութիւն : Ա՛յլ քաջիկ և և մար-
դասիրագոյն և բարեխորհաց յանկագոյն խօսեցաւ Կիկե-

բան ՚ի գովասանութիւն Կեսարու, յասել իւրում. “ Եւ ինչ այնպէս հրաշագան յառաքինութիւնս քո, և ոչ հաճոյական՝ իբրև զողորմածութիւն ,, : Այլ զինչ է ողորմածութիւն, բայց օտարի թշուառութենէն ախտակցութե՛ ՚ի մերում սրտի . և այս շարժուին ծառայէ բանին, յորժամ այնպէս լինի ողորմիլ՝ զի պահեսցի արդարութիւն, եթէ ՚ի տալ կարօտելոյն, եթէ ՚ի ներել զպարտեալն: Օ սոյն զայս Ճարտարապետն Կիկերոն ոչ երկմտեաց կոչել առաքինութե՛, ուր ստոյիկեանք ոչ ամաչեն ՚ի համար ախտից կամ թերութենէ դնել. Թէպէտ և նոքին իսկ՝ ըստ ուսուցանելոյ Պլատիկտեայ գրոցն՝ յորում իմաստք Օ ենանի և Խրիսիպպեայ կային առաջնորդաց այնր աղանդոյ, ընդունին զայնպիսի կիրս յանձն իմաստնոյ . և սակայն զիմաստունն ազատ յախտից դնեն : Այս ուրեմն ինքեանք իսկ ոչ ախտաւորութիւն դատին զայսոսիկ, յորժամ այնպէս իմն շարժին յայր իմաստուն՝ որ չզօրեցեն ինչ հակառակ առաքինութե՛ մտաց և ընդդէմ բանին . որով ՚ի մի գան կարծիք Ձեմականաց կամ պղատոնեանցն և ստոյիկեանց . սակայն որպէս Տուղլիոս ասէ , բանականութենէն կանխաւ իսկ զօրացեալ էր յարս հելլենացիս՝ հակառակասէրս՝ քան Հռոմարտասէրս: Այլ և դարձեալ յիրաւի է խնդրել միթէ տկարութե՛ առաջնիկայ կենցաղս բերէ՝ այսպիսեաք զգածիլ ախորժակօք նա և ՚ի բարի գործակատարութիւն . ուր հրեշտակքն սուրբք անցասուն պատուհասեն՝ զորս ըստ նմ յատիտենական օրինաց ունէին պատժել, և անախտակիր ձեռն տան թշուառացելոց , և վանգելոց սրբելեաց աներկիւղապէս ողջանդակեն . սակայն զանուանս կրիցն այնոցիկ ՚ի վար արկանեմք առ նոսա ըստ սովորական բարբառոյ մարդկան , ՚ի պատճառս գործոցն համանմանութե՛, այլ ոչ ախորժմանցն տկարութե՛. զոր օրինակ և ՚ած ինքնին բարկանայ ըստ գրոց, այլ ոչ կրիւք իւիք խռովի . զի գործ վրէժխնդրութենէն ընկալաւ զայդ անուն , և ոչ եթէ խռովայոյզ ախտակրութե՛ :

ԳԼՈՒԽ Ը.

Որովք կրնաք, ըստ խոստովանելոյ Ապուլէոյ, զգածիցին գնա, զորս ասէ օգնիլս մարդկան առ աստուածան։

Յայլ թողեալ՝ի ժամուս զինդիրն յաղագս հրեշտակացն սրբոց, տեսցուք զիարդ ասէն պղատոնականք յաղագս դիւացս միջնորդս եղելոց ընդ ածս և ընդ մարդիկ՝ տատանել յեռանդն կրիցս այսոցիկ։ Վասնզի եթէ ազատ մտօք և իշխանականաւ կրէին զշարժմունս նոյնպիսիս, ոչ արդեօք ասացեալ էր Պլուտարքոս՝ նմանակիր շարժմամբ սրտի և մտաց ծփանօք տատանել նոցա յամենայն բորբոքմունս խորհրդոց։ Պլատ ուրեմն միտք նոցա՝ գերագոյն մասն հոգւոյ՝ որով էնն բանականք, յորում և առաքինութիւն և իմաստութիւնք, եթէ արդեօք գտանէր՝ի նոսա, ունէր իշխել խառնակայոյզ կրից ստորին մասանց հոգւոյ՝ ուղղելով և՝ի չափու պահելով. այն միտք նոցա ասեմ, ըստ խոստովանելոյ պղատոնականի առնս՝ի ծփանս ամբոխմանց տատանին։ Պւրեմն միտք դիւաց ներքոյ անկեալ էն կրից հեշտութիւնք, երկիւղք, բարկութիւնք, և այլոց նմանեաց։ Պյս օր մասն ապա՝ի նոսա ազատ իցէ և ունակ իմաստութեան, որով աստուածոցն հաճոյանայցեն, և՝ի հետեւումն վարուց բարեաց թելադիրք մարդկան լինիցին. ուր միտք նոցա յախտս կրից վարակեալ և նուաճեալ, զոր լինչ և բան ունին բնաւորապէս՝ի խաբել պարապեցուցանեն այնչափ ևս մոլեգնաբար, որչափ առաւել տիրէ նոցա միասարարութիւնն ցանկութիւն։

ԳԼՈՒԽ Լ

Ջոր ասէին պղատոնականք՝ Թէ առեղծուածք քերթողաց արատ բերեալ էին գից ի գրգռմունս հակառակութեանց, ոչ աստուածոց է անկ, այլ դիւաց։

Իսկ եթէ ասիցէ ոք, ոչ յամենայն դիւաց՝ այլ ի Թուոյ չարացն էն, զորս քերթողք ձևացուցանեն աստուածս լինել առեցողս և սիրողս ոմանց ոմանց մարդոց՝ ոչ օտար ի Հնմարտութենէ, իբրև զի զայսցանէ ասէ Պլուտարքոս՝ տատանիլ յամենայն բորբոքմունս խորհրդոց ծփանօք մտացն, զիարդ զայդ այդպէս իմանալ մարթիցէ մեզ, ուր յասել նորա զայն՝ ոչ զոմանց չարաց՝ այլ զհամօրէն դիւացն միչնորդութիւն յայտ առնէր ընդ աստուածս և ընդ մարդիկ վասն օգնելոյն մարմնոցն։ Վասն զի զայն ասէ յօդել բանաստեղծիցն, զի ի Թուոյ դիւացս այսոցիկ աստուածս առնուն, և անուն ՈՁական դնեն նոցա, և զորս ի նոցանէ կամին՝ բարեկամս և կամ Թշնամիս մարդկան կացուցանեն ըստ ժպիրհ յանդգնութեանն ստայօդ տաղիցն, ուր զաստուածսն յայսպիսի բարուց դիւաց կարի մեկնեալս առդնեն և երկնիցն բացակայութեանն և երջանկութեանն լըմամբ։ Վայս ուրեմն կեղծիք բանաստեղծից այս են, աստուածս ասել՝ զորս չենն աստուած, և նոցա ՈՁական անուամբ կռուել ընդ իրեարս ի պատճառս մարդկան՝ զորս ըստ միտակողմութեանէ սիրեն և կամատեն։ Իսկ զայդ կեղծիք, ասէ, ոչ օտար ի Հնմարտութէ լինել. վասն զի յանուն աստուածոց կոչեցեալք՝ որք չէն աստուածք, յուցանեն այնպիսի դեւս լինել՝ որպիսի ենն։ Վայսպիսի լինել ասէ և զՀոմերեանն Վթենաս, որ յուրնական զօրօք ընդ մէջ անցեալ արգել զՎքիլլէս. ուր բանաստեղծի դիւտ համարի՝ Վթենաս կոչել զնա. իբր զի բուն Վթենաս՝ աստուած կարծեցեալ է, ունելով իւր կայան ի վերին եթերս՝ բացատ ի մահկանացուաց կենաց

յուԹէ ։ Այլ եր նա դեւ ոմն ձեռնտու Յունաց, և դիմա մարտ տրոյացաւոյ. որպէս և այլ միւս դէ՝ հակառակ Յունաց, և տրոյացաւոյ ձեռնտու, զոր նոյն քերԹողն անուամբ Ափրոդիտեայ կամ Արկղի յիշատակէ, այն՝ որ ըստ Պաւլեայ՝ էն աստուածք յերկինս բնակացեալք, անբաժք յանմպիսին գործելոյ. և զի այս դևք ընդդէմ իրերաց մարտնչէին վ՚ս սիրելեացն հակառակ ատելեաց իւրեանց, զայդ ահա ասէ՝ ոչ օտար՝ի Ճմարտութէ խօսեցեալ բանաստեղծին։ Այսն զի զայնպանէ ասացին բանաստեղծք զայսպիսիս՝ զորոց վկայէ Պաւլէոս Թէ զօրէն մարդկան շարժմամբ սրտի և մտաց ծփանօք տատանին ընդ ամենայն բորբոքմունս խորհրդոց, որպէս զի կարիցեն՝ի կիր առնուլ զսէր և զատելութէ՝ ոչ եԹէ սակս արդարութէ, այլ ըստ նմանութէ ամբոխին յասպարէզս որսորդաց և կառաշրաւաց՝ այլ զայլոց կողմն ունելով հակառակաբար. քանզի զայն Թուի հոգալ պղատոնեանս խմաստասէր, զի առ՝ի քերԹողաց նուազեալն մի ոք կարծիցէ գործ լինել բուն աստուածոցն՝ յորոց անուն յօդէն քերԹողք, այլ՝ դիւացն միջնորդ եղելոց։

ԳԻՒՒԻՒ Ի.

Բացորոշութէ պղատոնեանն Պաւլեայ յաղագս երկնային աստուածոցն, և օդեղէն դիւաց, և երկրաւոր մարդկան։

Ասկ զինչ այն սահման է՝ ոչ վայրապար առ՝ի մէնջ նկատելի, յորում զամենայն զդևս միահաղոյն բացատրելով ասէ Պաւլէոս, լինել նոցա սեռիւ կենդանի, ոգւով կրական, մտօք բանական, մարմնով օդեղէն, ժամանակաւ մշանջենաւոր։ Ի հնգեսին յիշատակեալսդ չասաց բնաւ զայն ինչ զոր ունիցին դևք հատարակորդ գոնէ ընդ մարդոց բաւեաց, որ՝ի չարն ոչ կայցէ։ Վասնզի ընդարձակ ինն նկարագրեալ նորա զամենայն մարդ հատարակաբար,

յորժամ յիւրում տեղւոջ խօսէր զնոցանէ իբրև զստորնոց և զերկրաւորաց, և նախ քան զայն ասացեալ էր զերկնային աստուածոց, իբրև զի աւանդեալ զերկուց մասանց ըստ ծայրին, որ են վերինքն և յետինք, յերրորդումն ապա տեղւոջ խօսեցեալ զդիւաց միջակայից, ասէ այսպէս. "Այս արդ մարդիկ բանիւ զարդարեալք, բարեբառոյ ունակք, հոգւով անմահք, անդամօք մահկանացուք, խորհրդովք թեթեւք և անհանգիստք, մարմնովք թանձրունք և վշտակիրք, բարուք անմնմանք, մոլորութեամբ հանգուցանք, համարձակութեամբ խրոխտք, ի յոյս դժոխականաւք, ի վատակս մեղաց, ըստ բախտի անկայունք, իւրաքանչիւրն մահկանացուք, այլ համայնքն աղգաւ միանձնեալորք, փոփոխելիք զաւակասերու թէ, արագասահք ժամանակաւ, առ իմաստութեան դանդաղք, վաղամեռիկք, կենօք տաղտկացեալք, սոքին ահա բնակեն յերկրի."

Արդ այսչափ յոլովս ասացեալ նորա՝ որ ինչ բազմագուշնից ի մարդկանէ ի դէպ գան, միթէ լռեաց և զայն զոր սակաւուց անկ ձանաչէր, այս է զառ իմաստութեն դանդաղ լինել զորով եթէ զանց արարեալ էր, ոչ արդեօք զնշդրիտ նկարագրութեն աղգի մարդկան ամբողջ՝ ի գլուխ տարեալ էր: Իսկ յորժամ զաստուածոցն վսեմութեն աւանդէր, ասաց թէ երջանկութեին՝ առ որ իմաստութեն հասանել ունին մարդիկ ըստ իւրեանց իսկ խոստովանելոյն, յաստուածան գտանի առաւելութեն: Այսան որոյ եթէ հասմարեր Արիստոտէլես՝ դիւաց ոմանց լինել բարիս, յիշատակեր ապաքէն ի նոցա բացատրութեն ինչ մի՝ որով կամ ընդ աստուածոցն ունիցին մասն ինչ երջանկութեն, կամ ըստ մարդկան զիմաստութեի՝ թէ և դուշնաքեայ. և սակայն ոչ մի ինչ բարութեն նշանակեաց անդանօր, որով բարիքն որոշին ի չարաց: Այլ և չարութեն ինչ զնոցա ոչ իշխեաց համարձակ մերկանալ, ոչ այնչափ ի նոցա զայրացմանէն՝ քան թէ ի դիւապաշտից առ որս խօսէր՝ զգուշացեալ, այլ իմաստնոցն ակնարկեաց՝ զինչ զնոցանէ կարծել արժան էր. իբրև զի զաստուածան՝ զկարծեցեալս

առհասարակ բարիս և երջանիկս՝ զատոյց գլխովին ՚ի կրից դիւացն, կամ յամբոխմանց նոցա, մարմնոցն մշտնջենաւորութիւն ևեթ կցորդս նոցա առդնելով. իսկ ըստ հոգւոյ՝ ոչ առ աստուածս, այլ առ մարդիկ նմանեալս յայսոսիկ նապէս դնէ զնոսա. և զայն՝ ոչ ըստ իմաստութեանն բարեաց, զոր և մարդկան է ստանալ, այլ ըստ ամբոխման կրից՝ որ յանմիտս զօրանայ և ՚ի չարս. իսկ իմաստունքն և բարիքն այնպէս իմն վարեն զնոսիս, զի կամին առաւել չկրել զայնս՝ քան թէ յաղթել. Քանզի եթէ կամէր նըշանակել Պօղոս՝ ունել դիւաց ոչ զմարմնոց ևեթ, այլ և զոգւոց մշտնջենաւորութիւն ընդ աստուածս, ոչ արդեօք ՚ի կցորդակցութիւն աստի ՚ի բաց հանէր զմարդիկ. զի և զմարդկան ոգիս անշուշտ մշտնջենաւորս համարի իբրև պղատոնական. սորին վասն ՚ի բացայայտել անդ զմարդկան ազգ, ասաց զնոսա՝ անմահս հոգւով, և մահկանացուս անդամօք. և եթէ յայն սակս մարդիկ ոչ հաւասարակորդ ունին զմշտնջենաւորութիւն ընդ աստուածս, իբրև զի մահկանացուք են մարմնով. ապա յայն սակս ունին դևքն, զի մարմնով անմահք են։

ԳԼՈՒԽ Ժ.

Մխիթ. Ից՚ Հնար առանալ մարդոյ զբարեկամութիւն երկնային աստուածոյն միշնորդութիւք դիւաց։

Ասկ արդ որպիսիքը ոմանք են ընդ մարդիկ և ընդ աստուած միշնորդք, ընդ որոց ձեռն խնդրիցեն մարդիկ զբարեկամութիւն աստուածոց, միշնորդք՝ յորս հոգի զոր զոյզ ընդ մարդկան ունին՝ յոռեգոյն է, և ՚ի կենդանի մարդն՝ լաւագոյն. իսկ մարմին՝ զոր զոյզ աստուածոցն ունին, լաւագոյն է ՚ի նոսա, և ՚ի մարդն՝ յոռեգոյն։ Քանզի ընչաւորն կամ կենդանին շարադրեալ է ՚ի հոգւոյ և ՚ի մարմնոյ. և զի յերկուց աստի լաւագոյն է հոգի քան զմարմին, թէ և ախտաւոր և տկար իցէ, լաւագոյն

գոանի անշուշտ քան զմարմին անդամ քաջառողջ և պըճնադարմ. զի վեհմական նորայն բնութիւն և ոչ արատով ախտից նուաստանայ քան զմարմին. զոր օրինակ ոսկի եթէ աղտեղեալ լիցի, գնոյ համարի քան զարծաթի կամ զկապար անխառն։ Իսկ այս միջնորդք աստուածոյ և մարդկան՝ որովք մարդկայինքս լծորդին ընդ աստուածանս, ունին ընդ աստուածոյ մարմին մշանջեան, իսկ ընդ մարդկան՝ հոգի ախտաւոր. իբր այն թէ կրօնասիրութիւնն՝ որով կամին լծորդիլ մարդիկ ընդ աստուածս՝ ի ձեռն գիւաց, հաստատեալ կայցէ՝ ի մարմին՝ և ոչ՝ ի յոգւոյ։ Իսկ որ չարութիւն արդեօք կամ պատուհաս ստորագլուխ գոգեաց կախեաց զմիջնորդքս զայսոսիկ զսուտս և զդատաստանս, մինչ զի ստորին մասամբ մարմնովն՝ ընդ վերինսն հաղորդք իցեն, և վերին մասամբ հոգւովն՝ ընդ վայրագոյնսն հաղորդք, առ երկնայինն աստուածանն ծառայական մասամբն մերձաւորք, իսկ ըստ երկրաւոր մարդկան տիրական մասամբն իցեն եղկելիք։ Այսու զի ծառայ է մարմին. որպէս և Պաւղոս ասէ. “Հոգւոյ հրամանատարութիւն և մարմնոյ ծառայութիւն վարիմք յաւէտ.,.և ածէ՝ ի վէր. “Քանզի հասարակորդք աստուածոյն եմք, և միասոք անասնոց.,.զի խօսի զմարդկանէ, որոց մահկանացու է մարմինն, որպէս և անասնոցն։ Ասացեալ են ասպարէզն և միջնորդիդ հնարեալք յիմաստասիրաց անտի ընդ մեզ և ընդ աստուածս՝ ասել վէս հոգւոյ և մարմնոյ, թէ միովն հասարակորդք եմք աստուածոյն, և միասոք մարդկան. սակայն որպէս ասացի, իբրև խոտորնակի կապեալք զլխիվայր, զծառայ մարմինն ունելով ընդ երջանիկ աստուածոյ, և զիշխանական հոգին ընդ մարդկան եղկելեաց, ստորին մասամբ առ բարձեալք, վերին մասամբն վայրանկեալք։ Այսու որոյ եթէ համարիցի ոք և՝ այնու լինել նոցա մշանջենական ընդ աստուածս, իբրև զի ոգիք նոցա ոչ լուծանին մահուամբ՝ ի մարմնոյ, զոր օրինակ երկրաւոր կենդանեացն լուծանին, բայց և այնպէս մարմին նոցա ոչ եթէ կարծիցի իբր յաւիտենական կառք պատուականանայ, այլ կապանք յաւիտենական դատապարտելոյ։

ԳԼՈՒԽ Ժ

Ըստ կարծեաց Պղատոնեայ՝ նուազ թշուառ են մարդիկ՝ ի մեռանել մարմնի, քան զկնի՝ ի յաւերժական մարմնի։

ՊՂՈՏԻՆՈՍ մերձաւոր ժամանակաւ մերում դարու, առաւել քան զայլս հասու եղեալ Աստուածային մտաց Պղատոնի գովութիւն. որոյ խօսեցեալ յաղագս մարդկեղէն ոգւոյ՝ ասէ. "Խարեգութեն հայր արար նոցա կապանս մահկանացուս.,, ։ Տես, զի՝ ի մարդասիրութենէն այ հօր՝ ի վեր տանի զլինել մարդկան մահկերպս ըստ մարմնոյ. զի մի հանապազ յայսց կենաց թշուառութենս ըմբռնեալ մնասցուք ։ Այսպիսւոյ գթութեան ոչ իւիք արժանի ցուցաւ անօրէնութիւն դիւաց, որք՝ ի թշուառութեան ախտաւոր ոգւոյ՝ ոչ զմահացու մարմին զօրէն մարդկան, այլ զանմահն ընկալան ։ Այսու զի անշուշտ երջանիկ և քան զմարդիկ լինէին, եթէ ընդ նոսա մարմին ունելով մահկանացու, ունէին ընդ աստուածան զհոգի երջանիկ ։ Այլ էին և հաւասարորդ մարդկան, եթէ թշուառ ոգւովն արժանի լինէին ունել գէթ մարմին մահկանացու, յայտ է թէ մանր ինչ ևս ծածկաշտութեան յինքեանս բերելով, զի գնահ՝ ի մահու անդ հանգիստ առնուին՝ ի վշտաց ։ Իսկ այժմ ոչ միայն երջանիկ չէն քան զմարդիկ ոգւովն եղկելեաւ, այլ թշուառ և քան զնոսա մշտնջենական կապանօք մատնեալ. քանզի ոչ ծանեաւ՝ ի նոսա Պղատոնոս զծածկաշտութեն ինչ և զիմաստութեն շարժուն, որով՝ ի դիւաց աստուածք լինիցին. ուր բացերևակի ասաց զնոսա՝ դևս յաւիտենական ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս կարծեաց պղատոնեանցն՝ ի կարծել նոցա զոգիս մարդկան դևս լինել չար բաժանմանն ի մարմնոյ։

ԻՉԽ ասել նա ինքն Պղատոնիոս, թէ մարդկան ոգիք ևս դևք են, և՝ ի մարդկանէ լինին առանին դիք՝ եթէ իցեն բարեգործք. և արհաւրաց կամ առաչք դիք՝ եթէ չարք. իսկ ուրուականն աստուածք կոչին, ասէ, եթէ անյայտ իցէ բարեգործս կամ չարագործս լինելն նոցա։ Այլ արդ ո՞ր փոքու անգամ հայեցիլք մնաց ոչ տեսանիցէ՝ քանի՛ խոր անդունդս բանայ այս կարծիք ապականուԹե՛ վարուց. իբրև զի որչափ և անօրէն իցեն մարդիկն, եւ դեալք՝ ի մահ Թէ կամ դիք արհաւրաց լինիցին, և կամ աստուածք ուրուականք, առաւել ևս յոռանան, որչափ առ ինասել էն հակառակք. մինչ զի ակն ունին Թէ յետ մահու ևս՝ ի ձեռն զոհից ածակերպ հրաւիրեսցին առ՝ ի ինասելոյ։ Վասնզի արհաւրաց դիս ասէ զառ՝ ի մարդկանէ եղեալ դևսն ինասագործս։ Ասող զի այլ խնդիր է և այն, զի յայտ առնէ Թէ յոմանցն էաԹՆ կոչին, իբր քաջագիք, կամ քաջք և երջանիկք, զի բարեոգիք են, այս է՝ բարի դևք. Հաստատելով այսու՝ Թէ ոգիք մարդկան ևս դևք են կամ լինին։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յաղագս երկնակ ներհակ բանից, որովք բան պղատոնեանց՝ ատրոբոշխ բնուԹե՛ դիւաց և մարդկան։

ԱՆԱՑ աստանօր մեր բանք են զայնպիսի կենդանեաց, զորս ըստ յատուկ բնուԹե՛ ասաց Պղուտղէոս՝ իբրև միջնաահմանս լինել ընդ աստուածս և ընդ մարդիկ, ասելով՝

Թէ են մտօք բանաւորք, հոգւով կրականք, մարմնով օդեղէնք, ժամանակաւ մշտակեայք։ Վասնզի զատուցեալ նախ զաստուածն՝ի բարձունս երկնից, և զմարդիկ յերկիր՝ի խոնարհ՝ անջրպետեալս տեղեօք և բնութեամբ արժանեօք, այսպէս ինքէ. "Ահա, ասէ, երկաստեակ ,, կենդանիս, զաստուածս յոյժ զանազանեալս՝ի մարդ- ,, կանէ՝ տեղւոյ բարձրութեամբ, կենացն մշանջենաւորու- ,, թեամբ, բնութեանն կատարելութեամբ, ոչ ինչ իւիք կցորդուի ,, առ իրեարս ունելով. ուր զի և զվերնական կայանն ,, անջրպետէ՝ի ստորակայից անտի խորոյն բարձրակա- ,, տար. և կենդանութեանն՝ անտանօր յաւերժ և անզրա- ,, ւական. իսկ աստանօր՝ են անցանելի և նշխարեալ. և ,, միաբ նոցա յերանութեանն զերամբարձեալք, իսկ մարդ- ,, կանն՝ի թշուառութեանս ստորինքեալք ,, ։ Այսմարեմ՝ի տեղւոջս երրեակ դիմամարտս յիշատակել՝ի վերայ երկուց ծայրականն մասանց բնութեանց, որ են վերնականքն և ստորնայինք. զի նախ զերիս՝ի գովելեացս տալով աստուածոց, զնոսին երկրորդեաց այլովք բանիւք, առ՝ի դիմադրելոյ նոցա զայլս երիս՝ի մարդկայնոցս։ Այրեք աստուածայինն համարեալքն են, տեղւոյ բարձրութեանն, կենաց մշանջենաւորութեան, բնութեան կատարելութեան. զորս այլով բանիւ կրկին՝ զերիս զմարդկօրինսն դիմադրելոյ աղագաւ. զի ասէ՝ զվերնական կայանն անջրպետէ՝ի ստորակայից անտի խորոյն բարձրակատար. զի ասացեալ էր՝ տեղւոյ բարձրութեանն։ Այս կենդանութեանն անտանօր յաւերժ է, ասէ, և անզրաւական, իսկ աստանօր՝ անցանելի և նշխարեալ. զի ասացեալ էր՝ կենաց մշանջենաւորութեանն։ Այս միաբ նոցա, ասէ, յերանութեանն զերամբարձեալք, իսկ մարդկանն՝ի թշուառութեանս ստորինքեալք. զի ասացեալ էր՝ բնութեանն կատարելութեանն։ Այերեքեան երիս ինչ իրս ընծայեաց նա աստուածոց, այս է՝ զտեղի վերամբարձ, զմշանջենաւորութեանն, զերանութեանն. և սոցին երիս դիմամարտս ետ մարդկան, այս է՝ զտեղի ստորին, զմահկանացուութեան, զթշուառութեան։

ԳԼՈՒԽ ԺԳ

Ո՛րպէս զԱք ոչ ընդ աստուածան երջանիկք գոլով, և ոչ ընդ մարդկան թշուառք, լինելոյն միջնորդք յերկաքանչիւր կողմն առանց հաղորդակցութեան ընդ նոսա։

Զ՛որ որովհետև ընդ մէջ երբեակ այս որոշմանցս աստուածոյ և մարդկան՝ կարգեաց Զքսուլէոս զդևսն, չէք և ոչ մի հակառակուել յաղագս տեղւոյ նոցա. իբր զի ընդ վերինն տեղի և ընդ ստորինն՝ յարմարապէս կայ և ասի միջին տեղին։ Զ՛նայ մեզ այլոց կրկնակ խտրանաց ուշ ունել, զի կամ անբաժա յայնցանէ ցուցանիցին դևքն, և կամ այնպէս տացին նոցա՝ որպէս միջնաստմանուեն բան պահանջէ։ Զ՛նբաժա զնոսա ասել չէ մարթ. զի ոչ եթէ զոր օրինակ ասեմք զմիջնին տեղին ոչ վերին լինել և ոչ ստորին, նոյնպէս ուղղուԹ֊ենաը հնար իցէ զդևսն կենդանիս բանաւորս՝ ոչ երջանիկս ասել և ոչ թշուառս. որպիսի են տունկք և պաՀարք՝ անբաժք ի զգայուԹ֊է և ի բանէ. այլ յորս կայ մտաւորուԹ֊է, Հարկ է նոցա կամ թշուառս լինել, կամ երջանիկս։ Զ՛ւ դարձեալ, անմարթ է ասել ուղղապէս՝ ոչ մահկանացուս լինել դիւացն, և ոչ մնտացկայս. վասն զի ամենայն կենդանի կամ յաւիտեան կեայ, և կամ մահուամբ լուծանել զկեանսն։ Զ՛այց տեսաք, զի Զքսուլէոս զդևսն ժամանակաւ յաւէրժակայս լինել ասաց։ Զ՛ւ զի՛նչ այլ ինայ, բայց զի միջակայինքս այս ունիցին զմի ինչ յերկուցն բաժնեբաղդունից, և զմի այլ յերկուց խոնարհագունից. զի Թէ զերկուս միանգամայն զբաժնեբաղդայն ունէին, կամ զնուաստագոյնն, ոչ ևս միջինք լինէին, այլ՛ի մի կողմն՝ ի վեր կամ ի խոնարհ մերձաւորեալք։ Զ՛որ որովհետև որպէս նախ ցուցաւ, չէ մարթ պակասել դիւաց յերկուց անտի կրկնակաց, յընդունելն կինքեանս զմի մի յերկուցն՝ լինին այրդարեւ միջակաքն։ Զասոն զյաւէրժակայուԹ֊է զոր ի ստորնագունից ունել

չէ մարթ , զմի զայս ունին ՚ի գերագունից անաւ . և ոչ այլմիայ ունել ՚ի խոնարհագունից առ ՚ի պահելոյ զմիջին վիճակ՝ բայց զձշուառութիւն ևեթ ։

Արդ ուրեմն ըստ պղատոնականացս՝ ՚ի գերակայ աստուածն գոյ կամ երջանիկ յաւիտենականութիւն, կամ յաւիտենական երջանկութիւն . ՚ի խոնարհագոյն մարդիկն՝ կամ Թշուառութիւն մահկանացու , կամ մահկանացութիւն Թշուառ . իսկ ՚ի միջինսն զևս՝ կամ Թշուառ յաւիտենականութիւն, կամ յաւիտենական Թշուառութիւն ։ Վասնզի հընդեակ որոշմամբքն՝ զորս եդ Պղուղէոս՚ի բացատրել անդ զդևսն , ոչ միջականս եցոյց զնոսա ըստ որում խոստացեալն . զի ասաց՝ երիս ինչս ունել նոցա զոչ մեզ , գոլսին ըստ սեռի կենդանիք , մտօք բանաւորք , հոգւով ախտականք . և զմի ինչ զոչ աստուածոց՝ ժամանակաւ լինել յաւիտենական . իսկ զմի յատուկ ինքեանց՝ օդեղէն գոլ մարմնով ։ Եւ զայրդ ասպա միջականք իցեն , միով ևեթ ընդ վերինսն հաղորդեալք, և երեքումբք ընդ վայրագոյնս . ո՛ոչ տեսանէ՝ զի վերիպեալք՚ի միջին վիճակէ անտի , առաւել ինն ՚ի ստորինս անդր հակամիտեալք ցածնուն ։ Այլ սակայն գոյ և անտանօր միջինս զնոսա գրել, այնու զի ունին զմի ինչ յատուկ՝ զմարմին օդեղէն , որպէս և վերինքն և ստորինք ունին զանցնիւրն , աստուածքն զևեթերական մարմին , և մարդիկ՝ զերկրաւոր . գոյ և երկու ինչ առնեցուն նոցա հասարակաց . զի սեռիւ կենդանիք են , և մտօք բանաւորք . քանզի և Պղուղէոս ՚ի խօսելն զաստուածոց և զմարդկանէ՝ ասաց . Ունիք երկատեսակ կենդանիս . և ոչ հաւանի առ աստուածս չհաշուել՝ բայց զբանիւ մտաց պերճացեալս ։ Զնան երկու այնք , հոգւով ախտական լինել, և ժամանակաւ յաւերժակայ . որոց առաջնումն ընդ ստորինսն կցորդին , և միասով ընդ վերինսն . մինչ զի համեմատութեանն բանիւ չափեալ միջնակայութեանն՝ ոչ ՚ի վերինսն ձկտեսցի , և ոչ ՚ի ստորինս վայրաբերեսցի ։ Եւ այն է ահա՝ դիւացն Թշուառ յաւիտենականութիւն , կամ յաւիտենական Թշուառութիւն ։ Պաքէն յասել անդ զդևսն՝ հոգւով ախ-

տաւորս, ասացեալ իսկ էր զնոսա և Թշուառս, Թէ ոչ ակն առեալ էր ՚ի պաշտօնէից նոցա։ Իսկ արդ քանզի ոչ ըստ անխորհուրդ բախտի, այլ տեսչութեամբ մեծին այ վարի աշխարհ, որպէս ինքնին պղատոնեանքն խոստովանին, ոչ բնաւ յաւերժ լինէր դիւացն Թշուառութիւն, Թէ ոչ մեծ լինէր նոցայն չարութիւն։

Վասն որոյ եթէ արդարեւ երջանիկ ասին բարի դևքն, ոչ ևս դևք են նոքա, զորս ընդ մարդիկ և ընդ աստուածս ՚ի միջակին դասեցին պղատոնեանքդ։ Այլ ո՞ր է ապա տեղի դիւաց բարեաց, որք վերոյ քան զմարդիկ ասին, և խոնարհ քան զաստուածս, սոցա սպասաւորք լինին, և նոցա օգնականք. քանզի եթէ բարի են և յաւիտենական, ապաքէն երջանիկ իսկ են։ Իսկ յաւիտենականն երջանկութէն ոչ Թողուն նոցա միջնորդս լինել. զի կարի առ աստուածն հպեցուցանէ զնոսա, և ՚ի մարդկանէ տարատրոհեալ՝ կլանին իբրև զուր ջանան պղատոնեանքդ ցուցանել՝ Թէ զիարդ բարի դևք գոլով անմահք և երջանիկք, միջնորդք յերաւի կարգեսցին ընդ աստուածն անմահս և երջանիկս, և ընդ մարդիկ մահկանացու և Թշուառ։ Վասն զի զդէպ աստուածոց ունելով զերկուս զայն՝ զերջանկութէն և զանմահութէն, և չունելով զինչ ընդ եղկելի և մահկանացու մարդկան, իբր ոչ ահա յաւէտ որոշեալք իցեն ՚ի մարդկանէ և առ աստուածն մերձաւորք, քան Թէ ՚ի միջոցի երկոցունց կացեալք։ Ո՛չ լինելին ապաքէն միջինք, եթէ ունելին զինքեանց երկուս զինչս զուգորդս՝ ոչ ընդ կրկին հանդամանաց իւրաքանչիւր նոցա, այլ ընդ միում միում երկաքանչիւրոյն. զոր օրինակ մարդ միջին ինչ է ընդ անաստուածս և ընդ հրեշտակս. իբր զի անաստուածն է կենդանի անբան և մահկանացու, իսկ հրեշտակն՝ բանաւոր և անմահ. մարդն լինի միջին՝ խոնարհ քան զՀրեշտակս, վերոյ քան զանաստուածս, ունելով ընդ սոսա զմահկանացուԹիւն, և ընդ հրեշտակս զանմահութիւն. զի է՝ կենդանի բանական մահկանացու։ Այսպէս ապա ՚ի խնդրել մեր զմիջին ինչ ընդ անմահ երջանիկսն և ընդ մահկանացուս Թշուառս, պարտիմք գտանել զայս, զի կամ մահկանացուն իցէ երջանիկ, կամ անմահն իցէ Թշուառ։

ԳԼՈՒԽ ԺԲ

Թէ մարդիկ որ են մահկանացու, կարիցէ՞ն արդեօք երջանկանալ վերանալոյ ի չքնաղիս։

Ա. Թէ իցէ արդեօք հնարաւոր, զի մարդ լինիցի միանգամայն երջանիկ և մահկանացու, խնդիր մեծ է ի մէջ մարդկան։ Վասն զի ոմանք նուաստախոհ գտեալք ի պայմանս բնութեանս, անընդունակ երանութեանն ասացին զմարդ՝ ցորչափ ի մեռուստ կեանս է։ Իսկ այլք ոմանք մեծացուցեալ զանձինս՝ իշխեցին ասել թէ պարապեալքն յիմաստութեի կարող էն լինել երջանիկ ի մահկանացու կեանս։ Իսկ արդ թէ այդպէս է, աւիմ՞ ոչ ահա սոքին իսկ դնիցին միջնորդք ընդ մահկանացու թշուառս և ընդ անմահ երջանիկս, զերանութե՛ն ունելով կից ընդ անմահիցն երջանկաց, և զմահկանացութե՛ն ընդ մահկանացու թշուառութիցն։ Վասն զի թէ արդարեւ երջանիկ են, ոչ ումեք նախանձին. զի քան զնախանձ զի՞նչ այլ թշուառագոյն. ուստի և մահկանացուացն եղկելեաց ձեռն տան ըստ կարի առ երանութե՛ն ստացումն. որպէս զի անմահս լինել կարիցեն յետ մահու, հրեշտակացն անմահից և երջանկաց համադասելով։

ԳԼՈՒԽ ԺԱ

Յաղագս միջնորդին այ և մարդկան, որ է մարդն Յս Քս։

Իսկ եթէ ըստ առաւել հաւանելի և ուղղատես կարծեաց՝ հարկ է ամենայն մարդոյ ի մահակիցն վիճակի լինել նա և թշուառ, խնդրելի է ասել միջնորդ զոր՝ որ ոչ մարդ սոսկ, այլ և ՅՀՆ իցէ. որպէս զի՛ ի մահական թշուառութե՛ն անտի յերջանիկն անմահութե՛ն վերածիցէ զմարդ-

դիկ, զի՞ւր երանելի մահկանացուն միջնորդ արկեալ՝ որում ոչ մահկանացուն լինել պարտ էր, և ոչ մնալ մահկանացու։ Այ՝ ասն զի եղև նա մահկանացու՝ ոչ էր ի՞ ածուն Աստին տկարանալոյն, այլ զմարմնոյ տկարուն յինքն ընդունելով. այլ ոչ և՝ ի մարմնի անդ եկաց մահկանացու, զոր և յարոյցն՝ ի մեռելոց. քանզի այն խակ է պատուղ նորա միջնորդութեն. զի որոց աղատութե՞ վասն եղև միջնորդ, մի կայցեն մնայցեն՝ ի յաւէրժ մահու մարմնոյն։ Այրին աղագաւ պարտ եղև միջնորդին ընդ մեզ և ընդ ած՝ ունել զմահկանացուն առժամանակեայ, և զերանուն՞ մշտակայ. որպէս զի անցանելեաւն նմանեսցի մեռանելեացն, և մնացականաւն վերակենդանեսցէ՝ ի մեռելոց։ Այսպա ուրեմն հրեշտակք բարիք չկարեն միջասահման գտանիլ ընդ Թշուառ մահկանացուս և ընդ երջանիկ անմահս. զի և նոքեսնք երջանիկք են և անմահք։ Խակ հրեշտակք չարք կարեն միջին գտանիլ, իբր զի անմահք են ընդ առաջնոյն, և Թշուառք ընդ մարդկան։ Հակառակ սոցա է միջնորդն բարի, որ ընդդէմ Թշուառ անմահու՞ն նոցա՝ կամեցաւ լինել առ ժամանակ մի մահկանացու, կարող գոլով կալ մնալ երջանիկ յաւիտեանս. և սովին խոնարհու՞ն մահուն իւրոյ, և երանու՞ն բարերարու՞ն զամբարհաւաճ անմահն զայնոսիկ, և զինաս ագործ Թշուառանն՝ նշաւակեալ խափանեաց յանձինս այնոցիկ, զորոց զսիրտս իւրովք հաւատովքն սրբեալ, ապրեցոյց յանսուրբ իշխեցողու՞ն նոցա։

Խակ արդ մարդ մահկանացու և Թշուառ կարի տարաբաղձեալն յանմահից և յերջանկացն զի՞նչ կամ զո՞ն արեսցէ ինքեան սատար և միջնորդ, որով յանմահու՞ն յարեսցի և յերջանկու՞ն։ Կարօղն լինել վայելել՝ ի դիւացն անմահու՞ն, ողորմի՞լն վիճակ է. խակ մահկանացու՞ն Ո՞վ՝ խիթալ տուժիլ ինչ չիք բնաւ։ Այսպա ուրեմն անդ զգուշալի է Թշուառու՞ն մշանջենաւոր, և աստ չէ երկնչելի մահն՝ որ չունի մշանջենաւորել, այլ է սիրելի երանու՞ն մշանջենական։ Ո՞ւանզի յայդ խակ ընդ հակ եմուտ միջինն այն անմահ և Թշուառ, զի մի Թո

տացէ անցանել յանմահութիւն երանելի, իբր զի միւս կայ խափանարարն, այս է՝ Թշուառութիւն. բայց միջնորդն մահկանացու և երանելի՝ վասն այն ընդ միջ էարկ զանձն, զի յանցանել մահկանացուն՝ ՚ի մեռելոց անաւ գոլծիցէ անմահս, զոր եցոյց իւրովն յառնելով, և ՚ի Թշուառականաց առնիցէ երանելիս երանութիւն, յորմէ ինքն ոչ բնաւ պակասեաց։ Այլ ուրեմն այլ է միջնորդ ջար՝ որ զբաբեկամսն քակէ, և այլ բարի՝ որ զիշնամիս հաշտեցուցանէ. և բազում են միջնորդքն քակտիչք. վասն զի բազմութիւն որ երջանիկն է, հաղորդութիւն միոյն ոչ լինի երջանիկ. և յայնմ հաղորդութեն պակասեալ Թշուառ բազմութիւն հրեշտակացն չարաց, որ կրձիմն ՚ի ներքս անկանի յաւէտ՝ քան թէ նախաստամատոյց առ երանութիւն, իւրովն բազմութիւն խառնոյ ինն արկանէ առ ՚ի չհասանելոյ յայն ՚ի միակ երանաւէտ բարի, յոր ժամանել ունիմք ոչ բազմեք՝ այլ միակ միջնորդաւ. և սա այն խակ է, որոյ հաղորդութեն երանելի եմք, որ է Յանն այ, ոչ եղականն, այլ որով ամենայնքն եղեն։ Այսակայն ոչ այնու միջնորդ է՝ որով Յան. վասն զի ծայրագոյնս անմահն և երանելին այն Յանն՝ անջրպետեալ է գլխովին ՚ի մահկանացուաց Թշուառից. այլ այնու է միջնորդ՝ որով է մարդ. դովին խակ յայտ արարեալ՝ Թէ առ այն երանելի՝ միանգամայն և երանացուցիչ բարի ոչ պիտոյ է այլոց միջնորդաց ՚ի խնդիր լինել, որովք կարծիցեմք Հանապարհ հասանելոյ մեզ գտանել. վասն զի երանելին և երանագործն ած կցորդեալ մերում մարդկութեան, ձեռն էառ մեզ՝ հաղորդիլ իւրում ածուութեն։ Յանգի ազատեալ զմեզ ՚ի մահաւանէ և ՚ի Թշուառութէ, ոչ եթէ անմահիցն և երանելիս հրեշտակաց հաղորդութեն արար զմեզ անմահս և երանելիս, այլ բուն երրորդութէ՝ որոյ հաղորդութէ երանելիք էն և նոքին հրեշտակք։ Այորին վասն յորժամ առ ՚ի միջնորդ լինելոյ՝ կամեցաւ ՚ի կերպարանս ծառայի խոնարհիլ քան զհրեշտակս, ՚ի կերպարանս այ եկաց միջ վերոյ քան զհրեշտակս. նոյն ինքն ՚ի ստորեւաս Հանապարհ կենաց, և նոյն ինքն ՚ի բարձունս՝ կեանք։

ԿԱՅԻՍ ԺԴ.

Միթէ պղատոնականք ուղղութիւ՞ն ասացին, թէ երկնային աստուածք անկցուին են երկայնին ախոյեան, և ոչ խառնին ընդ մարդիկ, որոց ձեռնասու ինչն դնք առ ի բարեկամութիւն ընդ աստուածան։

Ընդ եւ էի Չնմարիտ՝ զոր պղատոնականն Պլուտիոս ասէ. որպէս թէ ասացեալ իցէ Պղատոն, թէ ոչ ոք յաստուածոց խառնի ընդ մարդ։ Եւ յաւելու ինքն, թէ նոցա զերազանցութենն հաւաստիք այն է, զի ոչ միով իւիք մերձաւորութիւն մարդկան շաղախին կամ աղտեղանան նոքա։ Ուրեմն սովիմբ խոստովան լինի թէ զնք աղտեղանան. նմին իրի ոչ կարեն սրբել զնոսա՝ յորոց ինքեանք աղտեղանան. և ամենեքին միօրինակ անսուրբ լինին, զնք վաւելով ընդ մարդկան, և մարդիկ պաշտմամբ դիւաց։ Եւ պատ թէ ոչ՝ եթէ դիւաց մարթի լինել վարիլ և խառնիլ ընդ մարդիկ առանց աղտեղանալոյ, ապաքէն լաւագոյն քան զաստուածան լինիցին, զի նոքա եթէ խառնիցին՝ աղտեղանալք գտանիցին. վասն զի այս ինչ սեպհական ասի լինել աստուածոց, իբր զի գերիվերոյ անջրպետեալ նոցա՝ անշաղախ են ի մարդկան կրից։ Պլատիոն զայծ զամենայնի արարչապետ, զոր մեք ասեմք, այնպէս քարոզէ Պղատոն՝ ըստ ասելոյ Պլուտիոսի, թէ նա միայն է բնաւ անբմբռնելի մարդկեղէն բանի. և հաղիւ արանց իմաստնոց՝ յորժամ ըստ կարի օտարանայցեն ի մարմնոյ ուժգնութիւն հոգւոյն, ծագել գիտութիւն ասի, և այն ևս է երբեք՝ զի օրինակ իմն իբր ի թանձրամած խաւարի յանկարծ իմն փայլատակմամբ լոյս ճաճանչեղ երևեսցի։ Իսկ արդ եթէ որ ի վերոյ ամենայնի բարձրեալն ասծ՝ իմանալեաւ իմն մերձակայութիւն, թէ և երբեմն, թէ և իբր յեղակարծ փայլմամբ լոյս ճաճանչեալ, հաւասի կայ յիմաստնոցն միտս՝ յորժամ ըստ կարի ի մարմնոյ օտարանայցեն, և չէ մարթ աղտեղանալ նմա ի նոցանէ, զի է՝ զի աստուածքդ այդոքիկ յայն սակս զնեն ի բարձրակատար

վայրի, զի մի աղտեղանայցեն հուպ լինելով մարդկան. որպէս եթէ այլ ինչ խնդրիցի բայ՝ի տեսանելոյ զեթէ բանական մարմինն զայնոսիկ. որոց լուսոյն պայծառանայ երկիր՝ որչափ բանական է։ Իսկ արդ եթէ աստեղք ոչ աղտեղանան՝ի տեսանելն՝ զորս տեսանէլն աստուածս առնեն, և եթէ զևք ոչ աղտեղանան՝ի հայեցուածոյ մարդկան, թէպէտ և՝ի մեռոյ տեսանելն, իցէ թէ աղտեղանայցեն՝ի խօսից մարդկան չաղտեղալքն՝ի կորովութէ առաջայ, և այնորիկ աղագաւ զդևսն ունիցին պատգամաւորս, զի նոքօք ծանուցանիցեն նոցա խօսս մարդկան, յորոց՝ի բացեայ կան առ անշաղախս մնալոյ։ Ո՞ ինչ ասես յաղագս այլոց զգայութէից ասիցեմ. քանզի ոչ՝ի հատուտալոյ աղտեղանալ էր աստուածոց՝ եթէ հուպ կայցին, և ոչ զիւաց հուպ եղելոյ աղտեղանալ մարթ էր՝ի շնչմանէ կենդանի մարմնոյ մարդկան, որք՝ի բազմապատիկ շաղղակիք հոտոց անտի զոհիցին ոչ աղտեղանան։ Իսկ ըստ Աճակռողականին չէք նոցա հարկ կազդուրելոյ զպէտս մահկանացու վիճակի, որպէս զի առ քաղցու ուտեստ՝ի մարդկանէ խընդրիցեն։ Այլ շօշափականն՝ի նոցա իշխանութէ է. զի թէպէտ և այսու զգայութէ առաւելապէս ասի հպումն լինել, բայց եթէ կամ էր նոցա՝ մինչև ցայժմ խառնեալ իսկ էին ընդ մարդկան, զի տեսանիցեն և տեսանիցեն, լսիցեն և լուիցեն. իսկ շօշափելոյ զի՞նչ հարկ։ Եւ՝ան զի և մարդիկ անգամ ոչ իշխեն ցանկալ այդմ, յետ վայելելոյ նոցա՝ի տեսութէ և՝ի զրուցասրութէ աստուածոց կամ դիւաց բարեաց. և եթէ ցանկային և՝ի զրկելոյ հետաքրքիր բարուց, զնոքա կարէր օդ շօշափել զաստուած ոմն ընդդէմ կամացն նորա, ուր ոչ և զՆՆՀղուկ կարէ շօշափել՝ բայց զանկեալն յորոգայթ։

Այս ուրեմն աստուածք տեսանելոյն և տեսանելի լինելով, և խօսելով և լսելով կարեն մարմնապէս խառնիլ ընդ մարդկան։ Իսկ եթէ այսու եղանակաւ խառնելով դիւաց ընդ մարդկան՝ չաղտեղանան, և աստուածք եթէ խառնեին՝ աղտեղանային արդեօք, այսու զգևսն անշաղախելիս համարին դոքա, և զաստուածսն՝ շաղախելիս։

Այլ եթէ և դևք աղաւեղանան, զինչ զօրիցն մարդկան առ երջանիկ կեանս յետ մահու, զորս չէն կարող մաքրել յաղաւեղութեանց, զի սրբեալս զնոսա մերձեցուցեն առ յանշարժ աստուածան, ուր ինքեանք միջնորդք ընդ սա և ընդ նոսա կարգեալք են։ Այլ եթէ զայդ երախտիս չառնեն, զինչ շահ իցէ մարդկան ի դիւացն ընդելացման միջնորդութէ. միթէ յայն ինչ զի մարդիկ ոչ եթէ առ աստուածս փոխադրեսցին յետ մահու ի ձեռն դիւաց, այլ երկաքանչիւրն իսկ կենցաղակից լինին որպէս աղաւեղեալք, որով և ոչ միւն լինի երանելի։ Այլ ասիցէ ոք արդեօք, թէ իբրև սպունդ և կամ այլ ինչ նմանեսիսի՝ մաքրեն զևք զբարեկամն իւրեանց, զի լինիցին ինքեանք ևս քան զևս աղաւեղի, որչափ մաքրագոյն լինին մարդիկ՝ նոցա սրբելոյն։ Ով այդպէս իցէ, ուրեմն ընդ անմաքրա գոյն գևս խառնին աստուածք, որք առ չաղաւեղանալոյ խորշէին ի մարդկան մերձաւորութէ և ի կենցաղակից լինելոյ։ Իսկ եթէ զօրին աստուածքն սրբել զգևս զառ ի մարդկանէ աղաւեղեալս՝ առանց աղաւեղանալոյ ի նոցա նէ, ընդէր ոչ զօրիցն ըստ նմին օրինակի սրբել և զմարդիկ։ Ո՞վ ոք հաւանիցի ընդ այսպիսի ցնորս՝ բայց որ ի դաւաճանող դիւաց պատրեալ իցէ։ Այլ ո՞ կարէ տանել այսմ, զի եթէ տեսանել և տեսանիլ աղաւեղացուցանէ ինչ, ահա տեսանին ի մարդկանէ աստուածքն՝ երևելի ասացեալք, ամենապայծառ լուսաւորեալ աշխարհի, և այլ աստեղք, և գևք միայն ինան անմերձենալիք յայսմ աղաւեղութէ մարդկան, երբ ի կամն նոցա իցէ տեսանիլ՝ կամ ոչ։ Այլ եթէ տեսանէն և եթէ աղաւեղի՝ և ոչ տեսանիլն, թող ասասցեն՝ թէ բազմահայլ լուսաւորեալ աշխարհի՝ յաստուածս կարծեցեալք, ոչ տեսանեն զմարդիկ՝ յորժամ զՀառագայթս իւրեանց միոչ յերկիր՝ ի խոնարհ արձակեն։ Այլ թէ այն շողք ընդ ամենայն գարշելիս ծաւալեալք՝ չաղաւեղանան ընդ, միթէ ինքեանք աստուածք աղաւեղանային ի խառնիլն ընդ մարդկան, թէպէտ և յօդնել իւրեանց հարկ լինէր հալիլ առ նոսա. ապաքէն և երկիր շաղի ընդ Հառագայթս արեւու և լուսնի, այլ զլոյսն ոչ աղտեղի։

ՊԻՏԻ ԺԻ

Ա. առանալոյ զերանական կեանս՝ որ է հաղորդութիւն գերագոյն բարւոյն, ոչ այնպիսի միջնորդի պէտս ունի մարդ՝ որպիսի որ գոն է. այլ որ միայն Աստուած։

Յ.ՅԻ. Մեծապէս զարմացեալ եմ ընդ բազմահմուտ արան ընդ այնոսիկ, որք ջանիւնականքս զամենայն և զգալիս վերջոյ դասեալ քան զանմարմինս և զիմանալիս, ի խոսելն վերանելի կենաց՝ կենակցութիւնս մարմնականս ունել նշանակեն։ Այս ո՞ր է ապա Պղատոնեայ ասացեալն. «Վասն չէ պարտ է ի ցանկալի հայրենիսն. անդ է հայրն, անդ ամենայն ինչ։ Այս ո՞ր է այս արշաւան կամ փախուստ. լինել նմանող ՚ի ,, ։ Իսկ եթէ այնչափ առաւել նմանող է ոք ՚ի, որչափ մերձաւորագոյն, չիք այլ բացակայութիւն ՚ի նմանէ՝ բայց աննմանութիւնն առ նա. և անմարմնոյն այնմիկ յաւիտենականի և անփոփոխելոյ այնչափ առաւել աննման գտանի անձն մարդոյ, որչափ ՚ի ժամանակայն և ՚ի փոփոխելիս զակատեալ է։ Այլ զի դարման լիցի այդմ ՚ի բաւժուն, ուր յանմահ սրբութիւնն որ է ՚ի բարձունս՝ չկարեն հաղորդիլ որ ՚ի ստորեւաս են մահկանացուքն և անսուրբք, անշուշտ պիտոյ է միջնորդ, ոչ այնպիսի՝ որ թէ և անմահ ունիցի մարմին՝ հպատոր վերնականացն, բայց ոգի աղտեղեալ նման ստորայնոցա՝ յորմէ ախտէ առաւել մախայցէ՝ զի մի բժշկիցիմք, քան եթէ առ ՚ի բժշկութիւն օժանդակ լինիցի, այլ միջնորդ այնպիսի՝ որ ստորայնոցս մեզ կցորդեալ մահկանացու մարմնով, անմահական արդարութ Հոգւոյն՝ որով կայ ինայ ՚ի բարձունս ոչ տեղւոյ անջրպետութիւք, այլ գերազանցութ յարացուցին, զարդարեալ զաճաւայելուչն օգնականութիւն մատուցանիցէ ՚ի սրբել և յաղատել զմեզ։ Այս ինքն աճ՝ անտեղիտալի արատոյ՝ չուներ բնաւ երկիւղ աղտեղանալոյ ՚ի մարդոյն զոր զգեցաւ, կամ ՚ի մարդկանէ՝ յորոց միջի մարդկութիւնն ղոջեցաւ։ Ո՞ ի ոչ փոքունք ինչ են եր-

կու այս՝ զորս ՚ի մարդեղութէ իւրում եցոյց փրկարար մարդասիրութէն, այսինքն են՝ ոչ չէմարիտ ածութէնն ա- րատիլ իւիք ՚ի մարմնոյ, և ոչ այնու լաւագոյն քան զմեզ համարիլ դիւաց՝ զի մարմին ոչ ունին։ Արդ սա է, ըստ որում ածեղէն տառքն զնա քարոզեն. "Ի՞նչ որդն այ և մարդկան, մարդն ի՞նչ ,, ։ այլ չէ տեղւոյս խօսել Ձահովզակի ըստ մերում կարի, եթէ զածութէնէ նորա՝ որով միշտ հաւասար հօր է, և եթէ զմարդկութէնէն՝ որով մեզ նմանեաց։

ԿԻՒՐԻՒՍ ԺՈ.

Թէ խաբէութէն դիւաց ՚ի խոստանալն նոցա զձանապարհ առ ածն ընդ իւրեանց ձեռն, խոտորեցուցանել հնարին զմարդիկ ՚ի Ճշմարտութէն Ձանապարհէ։

Այսպէս սուտքն այն և խաբէբայ դևք միջնորդ կարծե- ցեալք, որք իւրեանց ոգւոյն պղծութէք յայտնի լինին, թէ թշուառք են և չարահնարք բազմապատիկ գործովք, այլ անջրպետութէք մարմնական վայրաց և թեթևութէք օդե- ղէն մարմնոյն հնարին նահանջել և խոտորեցուցանել զմեզ ՚ի յառաջադիմութէ հոգւոց, ոչ եթէ հորդէն զառ- ածն Ձանապարհն, այլ խոչ և խութ լինին Ձանապարհին։ Վասնզի և ՚ի մարմնական յայնմ Ձանապարհի՝ որ սուտ է գլխովին, և մոլորութէք լի, ընդ որ ոչ գնայ արդարութէ, իբրև զի ոչ ընդ մարմնական բարձրութէն, այլ ընդ հո- գևորն ունիմք վերբերել յանմարմին նմանութէնն այ, յայնմ Ձանապարհի ասեմ, զոր բարեկամք դիւաց չափեն ընդ աստիճանս տարերց, միջինս կացուցեալ ընդ երե- քական աստուածն և ընդ հոդաւորածս մարդիկ ըզ- դևսն օդեղինս, զայն առաւելութէն ընծայեն աստուածոց՝ զի սակս վայրացն բացակայութէն ոչ աղտեղանան ՚ի մարդ- կան կենցաղակցուէ։ Այսպս ուրեմն և ինքեանք համարին, թէ առաւել ունին ՚ի մարդկանէ աղտեղանալ դևք, քան*

Թէ սրբել զմարդիկ. և Թէ՝ բուն իսկ աստուածոց աղ-
տեղանալ մարթ էր, եթէ տեղւոյն բարձրութիւն ոչ էր նո-
ցա պատասպարիչ։ Արդ ո՞ այնպէս հէք և թշուառական է-
ցէ, որ կարծիցէ սրբել Անանապարհաւս այսուիկ՝ յորում
մարդիկ աղտեղիչք են, դևքն՝ աղտեղեալք, աստուածքն՝
աղտից ընդունակք. և ոչ զայն Անանապարհ յաւէտ ըն-
տրեսցէ, յորում կայ խորհրդեալ առաւել յաղտեղիչ դիւացն,
և մարդկան սրբել յաղտեղութենէ՝ ի ձեռն անախտակա-
նին այ առ՝ ի դասակցութենէ հրեշտակաց անախտից։

ԳԼՈՒԽ ԺԶ

Դէզ անուն, և ոչ՝ ի գիւտպաշտից անգամ առեալ է իբր բարւոյ խրիք նշանակիչ։

Արդ զի մի յաղագս ձախսից Թուխցիմք կալ՝ ի վիճի,
իբրև զի ոմանք՝ ի գիւտպաշտից անտի, յորոց սակի և
Աբէոնն է, յայտ առնեն Թէ զորս ինքեանք դևս յորջոր-
ջէն, այլք՝ հրեշտակս զնոսա առնմանեն, ի դէպ կարծեմ
աստէն խօսել ինչ յաղագս բարւոյ հրեշտակաց, զորոց
գլինելն ոչ ժխտեն դոքա, բայց ընտրեն դևս բարիս՝
քան հրեշտակս զնոսա կոչել։ Իսկ մեք՝ ի բանս սուրբ
գրոց՝ որով եմքս քրիստոնեայք, Թէպէտ և ընդՀա-
նումք հրեշտակս ոմանս բարիս, և այլս չարս, բայց ոչ եր-
բեք դևս բարիս. այլ յամենայն գիրս անդ՝ ածայինս՝
դիւաց կամ այսոց անուամբ ոգիք չարք միայն նշանակին։
Եւ յայս տարաղ խօսելոյ այնչափ սովորեցան ժողովուրդք,
մինչ զի յանուանեալ հեթանոսացն անգամ, առ որս
պաշտելութենէ բազում աստուածոց և դիւաց օրէնս համա-
րի, չէ ոք գրագէտ և մտաւոր՝ որ իչխիցէ և իւրուն ծա-
ռայի ասել առ՝ ի գովութիւն դև գոյ՝ ի քեզ. այլ եթէ
զայդ ասել ումեք կամիցի, անշուշտ յանիծանաց կարգի
համարեալ է։ Իսկ արդ զի՞նչ բռնադատեմք գայթագղե-

յուցանել նախ զլսեղիս բազմաց, և գրեթէ զամենեցուն որք զայդ անուն ի չարին մասին առնուլ սովորեցան, և ապա զոր ասացաքն բացայայտել. ուր կարող եմք ի կիր առնուլ զՀրեշտակացն անուն, և տեղի տալ ի գայթագղուիլ անոի՝ որ դիւաց անուամբն լինիցի։

ԳԼՈՒԽ Ի

Յաղագս գիտութեան՝ որ զդևան հպարտացուցանէ։

Ա.ԱՅՑ սակայն և ծագումն դև անուանգ, եթէ չիածայլին տառան ուշ դնիցեմք, տայ ինչ գիտելոյ արժանի. վասն զի ըստ հելլէն բառի պէտ՛էս, դևք ասացան, ի գիտութենէ առեալ զկոչումն։ Այսք առաքեալն ի հոգւոյն սրբոյ խօսեցեալ՝ ասէ. «Գիտութիւն հպարտացուցանէ, այլ սէր շինէ.» զայս իմաստ բերելով ուղղակի՝ թէ գիտութիւն օգտէ, յորժամ սէր ի նեղքս կայցէ. իսկ առանց սիրոյ՝ յոռնային այտուցս հպարտութենէ ամբառնայ։ Այ ասպաքէն ի դևս գիտութիւն առանց սիրոյ. վասն որոյ այնչափ փքացեալք են և ամբարհաւաձեալք, մինչև զայսոքիս ածական և զկրօնից պաշտօն՝ զոր ոչ Աչմարտի ևեթ վայելչական խոստովանին, յինքեանս գրաւել ջանացան, և գեռ ի նոյն ջանսն են՝ որչափ կարենն, և առ որս կարեն։ Այլ թէ առ դիւացն հպարտութենէ՝ որով յիրաւի ըմբռնեալ կայր մարդկան ազգ, որչափ զօրաւոր էին խոնարհութենէն այ երևեալ ի ծառայի կերպարան, զայն ոչ Ձանաչէն ոգիք մարդկան փքացեալքն անմաքուր այտուցմամբ, նմանողք դիւաց հպարտութենէ, այլ ոչ գիտութենէ։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Թէ որով օրինակաւ կամեցաւ սկզբն ծանօթս տալ դիւաց զանձնէ իւրմէ։

Այլ ահա նոքին իսկ դևք այնպէս գիտակ եղեն այսմ, մինչ զի առ նոսին ինքեան տէրն՝ որ զտկարութիւն մարմնոյ ըզգեցեալ էր, ասէին. «Ո՞վ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր տաղտկալ կորուսանել զմեզ...։ Գայտ իսկ է՛ի բանից, զի կայր՛ի նոսա այդչափ գիտութիւն, բայց սէր ոչ կայր։ Վասն զի իւրեանցն պատուհասի առ՛ի նմանէ կասկածէին, այլ ոչ զոր՛ի նմանէ արդարութի՝ սիրէին։ Իսկ այնչափ ծանուցաւ նոցա, որչափ կամեցաւ. և այնչափ կամեցաւ, որչափ պիտոյն էր։ Այլ ծանուցաւ նոցա՝ ոչ որպէս հրեշտակացն սրբոց, որք բաժանորդք գոլով յաւիտենականութեանն նորա՝ իբրև՝ ոյ բանի՛ զուարճանան, այլ որպէս պատուհաս էր ծանօթանալ յահարկուի նոցա, յորոց բռնաւորութիւնն ազատելոց էր զահմանեալն յիւր արքայութիւնն և՛ի փառս, որ միշտ է Աչմարիտ, և Աչմարտապէս մշանջենաւոր։ Այսու որոյ յայտնեցաւ դիւաց՝ ոչ ըստ որում կեանքն էր յաւիտենական, և լոյս անմոտ՝ որ զաճապաշտսն լուսաւորէ, և հաւատովքն որ առ նա՝ տեսեալ, սրբութիւն լինի սրտից, այլ ցուցաւ ժամանակեայ գործովք ոմանք զօրութեանն իւրոյ, և նըշանակօք անեղեայն մեքենայութեանն, որք դիւրըմբռնելիք էին հրեշտականն մտաց՝ և և չարացն ոգւոց՝ քան թէ մարդկօրէն տկարութեամբ։ Այս դարձեալ քանզի կամէր Աստ առ սակաւ սակաւ նուաճել զդևս և յաւէտ իմն ծածկել զանձն, յերկիւղս եղև զնմանէ իշխանն դիւաց, և՛ի փորձ մատեաւ՝ տեսանել թէ իցէ Աստն, որչափ նա փորձել թողացոյց, որպէս զի զառաքն յինքն զմարդն յարմարեսցէ տարացոյց առ՛ի մեր նմանութի։ Իսկ յետ փորձութեանն իբրև պաշտեին զնա ըստ գրեցելոյնն՝ հրեշտակք բարիք և սուրբք, որք և ահարկուք էին այսոցն

*պղծոց , և և քան զևս ծանուցաւ դիւաց՝ թէ որչափ զօրա-
ւոր էր նա . որ թէ և մարմնոյն տկարութիւն նուաստ երևէր ,
այլ ի հրամայել նորա՝ ոչ ոք իշխէր ընդդէմ կալ ։*

ԳԼՈՒԽ ԻԵ

*Ջ[ինչ] խոր կայցէ ընդ գիտութիւն սրբոց հրեշտակաց , և ընդ գիտութիւն
դիւաց ։*

ԶՏԴ առ այսոսիկ բարւոյ հրեշտակս արհամարհ է ամե-
նայն գիտութիւն մարմնական և ժամանակեան իրաց , ո-
րով դևքն հպարտանան . իբր ոչ եթէ անգիտաք էն այ-
նոցիկ , այլ զի սիրելի է նոցա սէրն այ , որով սրբին . և առ
նորա գեղեցկութիւնն՝ որ ոչ անմարմին և եթէ , այլ և ան-
փոփոխ է և անձառ , որոյ սուրբ սիրոյն ջերմեռին , զա-
մենայն որ ստորև էն և ոչ էն աստուած , նա և զանձինս
անգամ ընդ նոսա արհամարհէն . որպէս զի բովանդակ
ըստ որումն բարիք էն , վայելեսցեն յայն բարւոյ յորմէ ե-
ղէն բարիք ։ Այլ այնր աղագաւ զժամանակեայքս զայսո-
սիկ և զփոփոխելիքս հաւատով և գիտեն նոքա , վասն
զի նիւթեն զսկզբնական պատճառս իրացն անդէն ի Նա-
նէն այ , որով եղև աշխարհ . զպատճառսն՝ որովք ունիք ըն-
տրին , այլք անարգին , և ամենայն ինչ անօրինի . Նոքա դևք
ոչ եթէ զժամանակեայցն զմշտնջենաւոր պատճառս՝ ըստ
իրաց ինչ մարմնականս նշմարեն յիմաստութեն այ , այլ
ներհմտութեք նշանաց ունից մեզ անյայտից՝ յորովադոյնս
քան զմարդիկ նախատեսանեն յապառնեացն . և է երբէք՝
զի զիւրեանցն նախապատմեն զնիւթեալ խորհուրդս ։
Նոյց դևքս սխալեն բազում անգամ , իսկ հրեշտակք ոչ
բնաւ երբէք ։ Վասն զի այլ է ի ժամանակեայ իմաս-
տասիրել զժամանակեայս , և ի փոփոխելեաց զփոփոխե-
լիս , և ի նոսա զհանգամանս ինչ զժամանակեայ և զփո-
փոխելի զիւրեանց հաճոյից և կարողութեանն ի կիր
առնուլ , որ թէպէտ ունեալ է դիւաց չափով իւրք . և այլ
է ի յաւիտենական և յանփոփոխ օրէնս այ , որ կեն-

դանի են յիմնաստուածեան նորա , նախատեսանել զիո-
փոխմունս ժամանակաց . և զկամն ՚ի զանվրիպելին և
և զամենայնի կարողն՝ Աստուածէ հաղորդութիւն հոգւոյնո-
րա . որ պարգևեալն է հրեշտակաց սրբոց ուղիղ ընտրու-
թիւն : Այլն իրի ոչ միայն յաւերժականք են, այլ և երանե-
լիք . իսկ բարին՝ որով են երանելիք , նա ինքն ՚ած է նո-
ցա յորմէ առեղծեալքն են . քանզի ՚ի նորա անդուադելի
հաղորդութեի և ՚ի տեսութեի վայելեն ամենայնիւ :

ԳԼՈՒԽ ԻԳ՝

*Թէ անունս աստուածք՝ ստուգ ընծայի կոչին հեթանոսաց . իսկ ՚ի բանս
ՀԾային գրոց անխափր ասի ՚ի վերայ հրեշտակաց սրբոց , և արանց
արդարոց :*

Այժ պղատոնականք զհրեշտակս կամիցին աստուածս
յորջորջել առասել՝ քան զևս , և համարել ՚ի թիւ այնո-
ցիկ՝ զորս առաջնորդ նոցա և վարդապետ ասէ ՚ի գե-
րագունեն ՚այ ստեղծեալ աստուածս, ասացցեն զոր և հա-
ձին . քանզի ոչ է մեզ յաղագս ձայնիդ կալ ընդ նոսա ՚ի
պայքար : Վասնզի եթէ այնպէս անմահս ասեն զնոսա ,
իբրև ՚ի գերագունեն ՚այ եղեալս , և երանելիս լինել՝ ոչ
եթէ անձամբ անձին՝ այլ միանալովին յարարող իւրեանց ,
ապաքէն զնոսին ասեն՝ զոր մեքն ասեմք , որով անուամբ և
կոչիցեն զնոսա : Այս զայդ կարծիս պղատոնականաց՝ կամ
ամենեցուն և կամ երևելեացն ՚ի նոսա՝ մարթի է գտանել
՚ի գիրս նոցա : Այ՝ ասն զի աստուածս անուանակոչել զա-
րարած այսպիսի անմահ և երանելի ՝ յայն սակս չկայ
դոգցես անմիաբանութեի ընդ մեզ և ընդ նոսա , զի ըն-
թեռնութեամբ և ՚ի սրբազան գիրս մեր , “Ի՚ծ աստուածոց
տէր խօսեցաւ ,, . և այլուր . “Աստուածք եղերուք ՚այ
աստուածոց ,, : Իսկ ուր գրեան է “Ի՚հարկու է նա ՚ի վե-
րայ ամենայն աստուածոց ,, (ըստ մեր . կոց) , ցուցանի
յետ այնր՝ Թէ էր վասն իւրէ ասացեալ . զի յայլն . “Ի՚
ամենայն կուռք հեթանոսաց՝ դևք են . և տէր զերկինս

արար ,, ։ Ա՛րդ ասաց՝ ’ի վերայ ամենայն աստուածոց , բայց՝ հեթանոսաց , այս է՝ զորս հեթանոսք առ աստուածս ունին , որ գևք են . ուստի և ահարկու առ նոսա , որով ահաբեկեալք ասէին առ տէրն . “Լ՛սկիր կորուսանել զմեզ ,, ։ Այլ ուր ասի՝ ՚ած աստուածոց , անմարթ է իմանալ՝ ած դիւաց . այլ զմարդիկ ևս ’ի ժողովրդեան ՚այ՝ նոյն գիր աստուածս անուանէ յասելն . “Լ՛սա ասացի Թէ աստուածք իցէք , և որդիք բարձրելոյ ամենեքեան ,, ։ Վ՛ասն որոյ առ սոսա գոյ իմանալ զասելն՝ ած աստուածոց . որպէս և զասելն՝ մեծ է տէր, կամ Թագաւոր մեծ ’ի վերայ ամենայն աստուածոց ։

Վ՛ասկայն ’ի հարցանել ցմեզ , եԹէ աստուած ասացան մարդիկ՝ այնու զի էն ’ի ժողովրդեան ՚այ , առ որ խօսի ած հրեշտակօք կամ մարդովք, քանի՛ ևս այնմ կոչման արժանաւորք էն անմահքն այնոքիկ՝ որք վայելէն յերանութեՀն , յոր տարփան հասանել մարդիկ պաշտելով զած , զի՛նչ առ այս պատասխանել ունիցիմք . բայց զի ոչ վայրապար գիրք սուրբք զմարդիկ յայտնագոյն ևս աստուածս յորջորջեն , քան զանմահսն և զերանելիս զայնոսիկ , որոց հաւատարս լինել մեզ խոստացեալ է՛ ’ի յարութեՀն . որպէս զի մի արդեօք անհաւատի ուրուք տկարամտութեՀ զմի յայնցանէ իշխեսցէ կացուցանել աստուած մեր մարդկան՝ սակս նոցունն զերազանցիկին բնութեՀ . որ առ մարդիկ չէ այնչափ կասկածելի ։ Ա՛ստի դէպ եղև բացայայտ ևս ածական անուամբ կոչել մարդկան ’ի ժողովրդեանն ՚այ , զի հաւաստեալք վստահ լինիցին՝ Թէ ած իւրեանց է նա , որ ասացաւ՝ ած աստուածոց . զի Թէ և աստուածք անուանեսցին անմահքն այն և երանելիք որ յերկինս են , այլ ոչ ասացան՝ աստուածք աստուածոց , այսինքն է՝ աստուածք մարդկան կարգելոց ’ի ժողովրդեանն ՚այ . որոց ասացաւ . “Լ՛սա ասացի Թէ աստուածք իցէք , և որդիք բարձրելոյ ամենեքեան ,, ։ Լ՛ս այս է առաքելոյ ասացեալն . “Լ՛ինելիք և իցեն անուանեալ աստուածք եԹէ յերկինս , և եԹէ յերկրի , ոմն և են աստուածք բազումք և տէրք բազումք . այլ մեզ մի է ած հայր՝ յորմէ ամ՝ և մեք նո-

վաւ . և մի տէր [illegible], որով [illegible], եւմք նովաւ ,, ։

Ալէ ապա պնդապէս յաղագս անուանն հակառառել, յորժամ իրացն բնութիւն քաջայայտ է, անմասն յամենայն երկբայութէ ։ Իսկ այն զոր ասեմք, թէ՝ի Թուոյ անմահ երանելեացն այնոցիկ առաքեալ պատգամաւորքն առ՝ի յայտնելոյ մարդկան զկամս նոյ, հրեշտակք կոչին, ոչ հաճոյ է հեթանոսաց . զի ոչ նորօք զորս աստուածս կոչեն՝ անմահս և երանելիս՝ համարին նոքա կատարիլ այսմ սպասաւորութիւն , այլ՝ի ձեռն դիւաց, զորս անմահս և երանելիս՝ այլ ոչ երանելիս իշխեն ասել . կամ այնպէս իմն անմահս և երանելիս , որ դեւս բարիս կոչիցին , և ոչ աստուածս վերնաբնակս՝ զատուցեալս՝ի մարդկան կենցաղակցութէ ։ Իր թէ և ըստ անուան Թուոյն հակառակութէ , բայց դիւացն անուն այնչափ է առեալ , զի ոչ միով օրինակաւ առնուլ ախորժեմք՝ի վերայ հրեշտակաց սրբոց ։ [illegible] արդ կինք դնեմք զրոյս , գիտել թէ անմահքն և երջանիկք՝ զիարդ և անուանեսցին , բայց եղականք և արարածք , ոչ բնաւ միջնորդք են յանմահականն երանութէն վերաբերելոյ զմահկանացու Թշուառս , երկոքումբք տարբերեալ՝ի նոցանէ ։ Իսկ միջակայինք որք ընդ վերնականն կցորդին անմահութէն , և ընդ ստորինսն՝ Թշուառութէն , քանզի առ իւրեանց չարութէն են Թշուառք , խանդալ ունին յաւէտ՝ քան զնորհել զերանութէնն՝ յորմէ ինքեանք անմասն են ։ Ոչ ասն որով բարեկամք դիւաց և ոչ մի ինչ արժանաւոր ունին մեզ առաջի դնել, այլ վասն պաշտօն տանիցիմք նոցա իբրև ձեռնտուաց . յորոց իբրու՝ի դաւաճանաց խորհել յաւէտ արժան է ։ Իսկ զորս համարին բարիս , որով ոչ անմահս և եթ , այլև երջանիկս՝ աստուածոց անուամբ պաշտելիս կրօնիւք և պատարագօք առ՝ի զերանելի կենսս ստանալոյ յետ մահուն, որպիսիք և իցեն նոքա, որս մանաւանդ և վիճակեալք, եթէ զհրեշտակաց իցէ բանն , նոքա ոչ այլ ինչ ախորժեն՝ բայց զի բարեպարիշտ կրօնիւք պաշտեսցի մին ածծ , յորմէ ստեղծեալքն են , և նորին հաղորդութէն երանաւէտեալք . զոր ա՛ հա՝ի յաջորդ գիրսդ ձառեսցուք նորին օգնականութէ։

ԳԻՐՔ ՏՄՄՆԱԲԱՐՈՒ

Յորում ուսուցանէ Օգոստինոս, Թէ ետծպատուհասն պատիւ՝ որ զոհիւք պատարագաց կատարի, կամին հրեշտակք բարիք՝ զի մի այլոյժ մատուսցի, բայց միայն միոյն ոմն, որում և ինքեանք ծառայեն: Ջետ այնր հակաճառէ ընդդէմ Պորփիւրի յաղագս սկզբան և հանգամանաց մաքրութեանն և ազատութեան հոգւոյ:

ԳԼՈՒԽ Ը.

Թէ Աշխարհն երանութեանն մի ետծ միայն պարգեւէ հրեշտակաց և մարդկան, խոստովան լինին և պարտականք: Ա՛յլ ինայ ինդրելի, արդեօք հրեշտակք զորս վասն երանելոց գոլոյ պատրելոց համարին, միոյն ոմն ևեթ սրբոյն համարին զնուէրս պատարագաց, եթէ և ինքեանց:

Ա՛ՄԵՆԵՑՈՒՆ որք փորձու ևս գիտիցեն վարիլ բանասիրութեամբ, Աշխրտեալ կարծիք են, Թէ երանութեն ցանկայ ամենայն մարդ: Իսկ թէ ոյք երանելիքն իցեն, կամ ինչ լինիցին, 'ի խնդիր առնելն տկարամիտ մահկանացուացս՝ հակառակութիւնք յուզեցան բազումք և մեծամեծք. յորս 'ի վար արկին իմաստասէրք զիւրեանցն Աիդն և զպարապմունս. և զամենայնն 'ի մէջ բերել առ 'ի քննութիւն՝ յերկար է, և անկարևոր իսկ: Վ՛ասզի եթէ վերծանող բանիցս յուշի ունիցի զոր յուսերդումբ գրի խօսեցաք յընտրել զնիմաստասիրացն կարծիս, առ որս խընդիր եդաք յաղագս երանելի կենաց որ յետ մահու, արդեօք միոյն ոմն ծառայելով որ աստուածոյն է արարիչ, ուր նիցիմք յայն հասանել՝ 'ի կեանս, Թէ բազմաստուածութեն կրօնիւք, այնպիսին ոչ խնդրէ զնոյնս երկրորդել աստանօր. մանաւանդ զի կրկին ընթերնլով կարող է ձեռն տալ յիշողականին, եթէ երբեք մոռացեալ իցէ: Վ՛ասն զի ընտրելի ցուցաք զպղատոնականն հանուրց իմաստասի-

բայց արդարեւ ընտրելագոյնս. այնու զի որպէս դիտել կա-
րողացան՝ Թէ անհնար է մարդկեղէն հոգւով՝ Թէ եւ ան-
մահի եւ մնաւորի՝ լինել երջանիկ, բայց հաղորդելով ևեթ
լուսոյն այլ, յորմէ եղեալն է եւ հոգի եւ աշխարհ, նոյն-
պէս կալան Թէ ոչ որ առացող լինիցի երանելի կենացն՝
յոր ցանկայ ամենայն մարդ, բայց որ ողջախոհ սիրոյն
մարքուածէ մերձենայցէ՝ ի մի ծայրագոյնն, յանմոռա-
նալի ՚ած, [illegible] քանզի եւ սոքա պղատոնականքս՝ կամ
աշառելով ունայնութեանէ եւ մոլորութեանէ ժողովրդոց, եւ կամ
որպէս առաքեալ ասէ, նանրացեալք ՚ի խորհուրդս իւ-
րեանց, արժան համարեցան, կամ եւտուն համարել՝ առ-
տուածս բազումս առնուլ ՚ի պաշտօն, մինչեւ ամենեք ՚ի
նոցանէ ՚ած ակերպ մեծարել զդէս անդամ ՚ի դէպ վար-
կան պաշտամունքիւ եւ նուիրանաք, որոց ոչ սակաւս ինչ
ընդդիմապրեցաք յառաջագոյն, աստանօր կայ մեզ տե-
սանել եւ ՚ի Հառ առնուլ, որչափ հնարհնոցէ ՚ած, Թէ ան-
մահքն այնորիկ եւ երջանիկք՝ կարգեալքն յերկինսաւոր
կայանս անդ ՚ի տէրութեան, յիշխանութեան, ՚ի պետու-
թեան, զորս դրա աստուածս անուանեն, եւ զումանս յայն-
ցանէ՝ կամ դէս, եւ կամ հրեշտակս զաւգաբան մեզ,
զիարդ կամիցին պահել մեզ զկրօնս եւ զպաշտօնութեան.
կամ մեկին եւս ասել, միթէ ախորժիցեն արդեօք՝ զի նա եւ
ինքեանց, եւ ոչ միայնումայ իւրեանց եւ մեր՝ պաշտամունս
առնիցեմք եւ նուէրս, կամ զմեզս ինչ, եւ զմեզ ինքեանս
նուիրագործիցեմք բարեպարիշան գործովք։

Վ[illegible]ան զի այս է ՚ածավայելուչն պաշտօն, կամ՝ ՚ածպաշ-
տութիւն. զոր ոչ բաւական գոլով լսանին լեզուի միով բառիւ
նշանակել, հարկ լինի ըստ բնութեան տեղւոյն՝ յունականաւն
վարիլ ձայնիւս, [illegible]ա, որ է պաշտօն, առեալ Թարգմա-
նեալ ՚ի սուրբ գիրս լսանին բառիւ [illegible]ա, այն է
ծառայութիւն։ [illegible]այլ ծառայութիւնն որ առ մարդ լինի,
ըստ որում առաքեալ հրամայէ, ծառայից հնազանդ լի-
նել տերանց իւրեանց, պլտով անուամբ կոչի առ [illegible]այնս՝
[illegible]ա. իսկ [illegible]ա, ըստ սովորութեանն խօսելոյ յածայնին
տառս, ամենայն ուրեք, կամ յաձախակի այնպիսի ծա-

ասյուԹիւն ասի, որ անկ է 'ի պաշտել զնա։ Իսկ եԹէ լսկ պաշտօն ասիցի առ լատինս, ոչ զնաճասկելուէն եւԹԹ Ժուի նշանակել. քանզի ասէրք պաշտել և զմարդիկ, յորժամ մեծարանօք սպասաւարկեմք նոցա։ Իսկ ոչ միայն առ այսոսիկ ասի պաշտելն որոց երկիւղածուԹիւն խոնարհիմք, այլ և առ այսոսիկ որ 'ի ներքոյ մեր են*։

Այցելէն և կրծդ անուն՝ ԹԷպէտ և առաւել զպաշտօն ոյ ԹԺուի նշանակել՝ քան անորոշ զօր և է ծառայուԹիւն, բայց ըստ լատին խօսից սովորուԹէ առ գիանաւորս անդամ, ԹՁող ԹԷ առ անհմուտս՝ կրծնս ընծայել, ասի նա և մարմնաւոր ազգակցուԹեց, խնամուԹեց, և այլոց հարազատուԹեց. նմին իրի մնայ երկդիմուԹի 'ի բառիդ՝ յորժամ զպաշտամանել ոյ առնի խնդիր, մինչ զի կարիցեմք ասել Համարձակ՝ ԹԷ կրծնն է պաշտօն ոյ միայն։ Այլ և բարեպաշտուԹին ըստ յունին Եւսեբէա, ԹԷպէտև սիրապէս պաշտօն ոյ խմանի, բայց և առ ծնողս 'ի կիր առնուն մեծարանօք։ Իսկ ըստ հասարակաց ոՀոյ՝ յաՀախ առեալ լինի որպէս զԹուի կամ ողորմածուի. զոր յայն սակս կարծեմ լինել, զի զնոյնս առաւելապէս հրամայել ՀԱծ, և ընդ այնս իբր ընդ պատարագս, և 'ի վեր ևս քան զպատարագս վկայել Հաձել։ Ըստ այսմ սովորուԹէ խօսելոյ՝ նա ինքն ՀԱծ կոչի բարեգուԹ կամ՝ մարդասէր։ Սակայն առ Հնգրիտ ևս որոշումն առնելոյ՝ լատ ևս ասի ըստ գրոց ոչ միայն Եւսեբէա, այլ ինքն բարեպաշտուԹի, այլ և ԲԷօսեբէա, ՀԱծպաշտուԹի. և զայս առաւել վայել չափան գոլ նմա ևԹԷ, որ է Հնմարիտ ՀԱծ, և նա ինքն գի առ զպաշտօնեայս իւր ասուածս ոմանս առնել։ Այլ որք միանգամ յերկնային կայանն են՝ անմահք և երջանիկք, եԹէ ոչ սիրեն զմեզ, և չխորժին լինել մեզ երջանիկս, արդարեւ ոչ են պաշտելոյ արժանիք։ Իսկ եԹէ սիրեն, և զմեր երջանկանալն կամին, յայտ է ԹԷ յայնմանէ կամին՝ յորմէ և ինքեանք երջանկացան. միԹԷ յայլմէ ումեքէ երջանիկ նոքա, և յայլմէ մեք։

* Ընտանեօք որ վարդապետն զգօրուԹէ այլ և այլ լատին բառից անխորհուրդ, զորս չնարելի յորմոքել 'ի հայումն։

ԳԼՈՒԽ Ը

Ջինչ կարծիս ունիցի Պղոտինոս պղատոնական յաղագս վերնական լուսաւորութեն։

Այլ, ոչ է մեր մտքումն ինչ ընդ վսեմախորհ խոստո-
սիրացդ յաղագս խնդրոյս այսորիկ։ Այսն զի ծանեան
դոքա, և ի գիրս իւրեանց բազմօրինակ և յաճախա-
գոյնս աւանդեցին, թէ յայնմանէ երանելի լինին եր-
կնայինքն՝ յորմէ և մեք՝ի ձեռն լուսոյ իմն իմանալւոյ, որ
ըստ նոցա՝ ած է, և որիշ է՝ի լուսաւորելոց անտի. որ-
պէս զի պայծառացեալք և նորին հաղորդութեամբ կա-
տարեալք լինիցին և երանելի։ Այտեղ իմն և կարի հաս-
տատէ Պղոտինոս՝ի մեկնել անդ զմիտս Պղատոնի, թէ և
ոչ կարծեցեալն՝ի նոցանէ հոգի աչխարհիս՝ յայլմէ լինի
երանելի քան զմեր հոգի. և թէ լոյս է նա, որ չէ ինքն,
այլ յորմէ ստեղծեալն է. և յիմացականապէս լուսաւո-
րողէ անտի՝ լուսափայլէ իմացականաբար։ Զոնու և յա-
րացոյց անմարմնականացն այսոցիկ՝ յերկինսաւորաց աստ
ակնարկէ և ընդարձակ մարմնոց. որպէս թէ նա՝ արեգակն
իցէ, և սա՝ լուսին. քանզի յարևուն յանդիմանութենէ
դնեն լինել զլուսնոյ պայծառութիւն։ Այսն որոյ ասէ
կորովի պղատոնականն, թէ հոգին բանական, կամ լաւ
և ասել՝ իմացական, որում հոմանսեռս ձանաչէ և զան-
մահից երջանկացն հոգիս զընակացեալսն յերկինսաւոր
կայանս, ոչ ունի՝ի վերոյ քան զինքն զայլ բնութիւն,
բայց միայն զնա՝ յորմէ կերտեցաւ աչխարհ, յորմէ և
ինքն եղև. և ոչ յայլ խնդիր պարգևի վերնայնոցն կեանք
երանական, և լոյս հանձարոյ ձշմարտութեն, բայց յայն-
մանէ՝ որ և մեզն պարգևէ, ձայնակից լեալ աւետարանին
Յ.Ա.ուր ասէ. “Կրկնէ այր մի առաքեալ յայ, անուն նմա
Յովհաննէս. սա եկն՝ի վկայութեն, զի վկայեսցէ վասն
լուսոյն, զի ամենեքեան հաւատասցեն նովաւ։ Այլ եր նա

լայն, այլ զի վկայեսցէ վասն լուսոյն։ Այր լայն Աչմարիտ, որ լուսաւոր առնէ զամ մարդ՝ որ գալոց է յաշխարհ ,,։ Յորոշմանս յայսմ բացերևական ցուցանի, թէ հոգին քանաւոր կամ իմացական, որպիսի ի Յովհաննէսն էր, ոչ եթէ լոյս էր ինքնին, այլ կցորդութիւն այլում Աչմարիտ լուսոյ փայլեալ. զայդ և Յովհաննէս ինքնին խոստովան լինի, երբ ի վկայելն զնմանէ՝ ասէ. "Ի լուսեղենէ անտի նորա մեք ամենեքեան առաք ,,։

ԳԼՈՒԽ Գ

Յաղագս Աչմարիտ ածպատուէ, յորմէ խոստացան պղատոնականք. զի յետ Ճանաչելոյ զարարիչն սիրելոցդ՝ ածական մատուցանէին պատիւ հրեշտակաց՝ եթէ բարեաց, և եթէ չարաց։

Այսուհետև այսպէս լինելոյ, եթէ պղատոնականք և որ այլեւա՛ի սոյնս Համամիտք, յետ Ճանաչելոյ զԱծ՝ փառաւորելին զնա իբրև Ածն և գոհանային, և ոչ նմանրանային ի խորհուրդս իւրեանց, և ոչ լինելին մոլորութեանց ամբոխին մասամբ իւիք գտիչք, և մասամբ անարիք ի հակառակել, արդարեւ խոստովան լինէին՝ թէ արժան է անմահ հիցն այնոցիկ երջանկաց, և մեզ մնհկանացուացս հի գացելոց առ ի լինելոյ անմահս և երջանիկս՝ պաշտել զմի Ած աստուածոց, որ մեր և նոցա է Ած։

Այժմ եւեթ պարտապան եմք զԱծականն Հատուցանել պաշտօն՝ եթէ սրբազան արարողութիւք լինչ, և եթէ ի սիրտս մեր։ Ոչ անզի մի տաճար եմք նորա ամենեքեան միանգամայն, և իւրաքանչիւր առանձին տաճարք. զի ի բոլորիցն միաբանութեան և յիւրաքանչիւրս Հաձի բնակաւնալ. և ոչ մեծագոյն է յամենայնսն՝ քան յիւրաքանչիւրս. զի և ոչ քանակաւ տարածանի, և ոչ Հատմամբ նուազի։ Յորժամ առ նա վերելս առնեմք, նորա սեղան՝ սիրտ մեր է. միածնաւ նորա իբրև քահանայիւ զնա Հաշտե-

ցուցանեմք . զոհս նմին զհնուամբ արիւնաւորս , յորժամ արեամբ չափ սակս Հշմարտութեանն նորա մաքրեմք . զանուշից խունկս ծխեմք նմա , յորժամ յանդիման նորա բոլ բոլիմք պատկառ և սուրբ սիրով . զնորայն պարգեւս ի մեզ և զմեզ իսկ նմին ընծայեմք և Հատուցանեմք . զյիշատակ բարերարութեանց նորա նմին իսկ ընծայաբերեմք Հանդիսաւոր ոճիւք յաւուրս սահմանեալս , զի մի արգելք ի Հոլովել ժամանակաց՝ անչնորՀակալս մոռացութեան ի ներքս մտանիցեմ . նմա քաՀանայագործեմք զպատարագ խոնարՀութեան և գովութեան ի սեզան սրտի՝ Հրով սիրոյ բորբոքելոյ : Ա՛ր ի զնա տեսանելոյ՝ որպէս և զիարդ մարթի է տեսանել , և ի նա յարելոյ՝ սրբիմք յամենայն պատաոյ մեղաց և ցանկութեանց չարաց , և յանուն նորա գրիմք : Օ՛ի նա է երանութեանս մերոյ աղբիւր . նա ինքն վախճան ամենայն ուխտից սրտից : Օ՛ա ընտրեալ մեր , մանաւանդ թէ անդրէն գտանելով , զի կորուսեալ էաք առ Հեղգութեանէ , ի նա գիմեմք սիրելութեանն , զի ժամանեալք Հանդիցուք . որով և երանելիք , զի զնա վախձան ունելով՝ նովաւ կատարիմք : Ա՛ն զի բարին մեր՝ զորոյ զվախձանն վիճումն սաստիկ է առ իմաստասերս , ոչ այլ ինչ է , բայց ի նա յենուլ . և նորա միայոյ անմարմնաբարն գրկախառնութեանէ , եթէ այսպէս ասել օրէն իցէ , ընդ Հոգին իմացական և բարգաւաձեալ Հշմարիտ առաքինութեամբք : Օ՛ն բարի Հրամայիմք սիրել յամենայն սրտէ , յամենայն անձնէ , յամենայն զօրութենէ . ի սմն բարի պարտ է մեզ առաջնորդիլ յօրոց սիրիմքն , և առաջնորդել զորս սիրեմք : Ա՛յսու օրինակաւ ի գլուխ ելանիցեն երկու պատուիրանքն՝ յորս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան . “ Ա՛ի թեսցես զտէր ած քո յամենայն սրտէ քումմէ , և յամենայն անձնէ քումմէ , և յամենայն մտաց քոց . և զընկեր քո իբրև զանձն քո ,, : Ա՛նգլ առ ի գիտելոյ մարդոյ սիրել զանձն , վախճան եղաւ նմա առաջի , յոր վերաբերեալ զամենայն գիւր արարուածս՝ լեցի երանելի . զի որ զանձն սիրէ , ոչ այլ ինչ կամի՝ բայց երանելի լինել : Ա՛ակ

վախճանագ այդ է յարել յաճախ ասն որոյ յորժամ գիտողին սիրել զանձն՝ հրամայէ սիրել զընկերն իբրև զանձն, զինչ այլ հրամայէ. բայց զի որչափ կարող է, թելադիր նմա լինի սիրել զնա։ Այս է ճանապարհն, այս է կրօնք Աստուածպաշտութեան, այս է ուղիղ բարեպաշտութեան, այս միայն ծառայութեան ճանապարհորդութեան։ Այլ այր և է իշխանութեան անմահ, քանի և մահագործ լիցի, եթէ սիրէ զմիզ իբրև զանձն, յանկարծ առ՝ի լինելոյ միզ երանելիս՝ հնազանդիլ պիտի, որում և ինքն հնազանդեալ՝ երանելի է։ Իսկ եթէ ոչ պաշտէ զնա, երկիւղի է, զի զուրկ է յայդ. այլ եթէ պաշտէ զնա, ոչ կամի պաշտօն առնուլ իբրև նա. մանաւանդ զի վրէժխնդիր ևս է ճանապարհ վհատոյն, և առ ուժի սիրոյն՝ գործակից գրեցելոցն. "Որ դիմ զոհիցէ, սատակեսցի, բայց միայն տեառն,,։ Ել. ԻԲ. 20։

ԳԻԼՈՒԽ Գ

Ասոյն ասի Աստուածն անկ է զոհ կամ պատարագ։

Վասն զի Թողեալ՝ի ժամուս զայլ պատշաճեալս՝ի սպաս կրօնից ճանապարհորդութեան, ապաքէն ոչ որ՝ի մարդկանէ զպատարագ իշխեսցէ այլուամ, բայց յայ ասել յանկարծ։ Այն բազում ինչ յաճախին ծառայութեանց՝ի կիր արկեալ և՝ի մարդկօրէն պատուասիրութիւն. և այն կամ առ նուաստ տախտ ցածութեանց, կամ՝ի կորուսիչ մարդահաճութեան. սակայն և որք այնպիսեաքն մեծարին, տակաւին մարդիկ Աստուածն, որք ասին պաշտելիք և մեծարելք, կամ թէ առաւել ինչ՝ երկրպագելիք։ Այայ ո՞ որ բնաւ պատարագ գել կամ զոհագործել արժան համարեցաւ, եթէ ոչ այնմ զոր որպէս ճանաչաւ, կամ համարեցաւ, կամ ինքնին առեղծ։ Իսկ թէ պաշտօն այդ նուիրագործութիւն քանի վաղնջական իցէ, եղեալքն երկոքին յայտ առնեն՝ Այսին և Աբէլ, յորոց զերիցուն զպատարագն անարգեաց ճած, և՝ի կրսերոյն հայեցաւ։

ԳԼՈՒԽ Ե

Յաղագս զոհից կամ պատարագաց՝ զորս ոչ խնդրէ Աստ, այլ միայն կամեցաւ զպահպանումն այնպիսեացդ՝ ի նշանակ պատարագացն՝ զորս խնդրէ։

Ա՛ՍԿ ո՞ր այնքան խօթամիտ իցէ, մինչև կարծել թէ՝ ի պէտս ինչ այ կարևորը իցեն որ ինչ նուիրին՝ ի զոհս պատարագաց։ Ո՛չ այդ՝ ի բազում տեղիս վկայեն Աստուածային դիրք. այլ զի մի յերկարեսցի, զհամառօտն զայն զաղտնեսին հերիքասցի յիշատակել. «Ո՛չ այլ տեառն, տէր իմ ես դու, և բարիք իմ քեզ չէն ինչ պիտոյ»։ Ֆե. 2։ Ա՛յս ուրեմն ոչ միայն անասնոց և այլ ևս ապականելի և երկրային իրաց անկարօտ համարելի է Աստ, այլ և նմին իսկ արդարութեանն մարդոյ. և ամենայն որով պաշտի Աստ, յօգուտ մարդոյն է՝ և ոչ այ։ Վ՛ասնզի և ոչ թէ ըմպիցէ որ յաղբերէ, ասիցէ օգտեալ աղբերն, և ոչ լուսոյ՝ թէ տեսանիցէ զայն։ Իսկ թէ՝ ի հարցն առաջնոց կատարեցան այնպիսի պատարագք՝ ի զոհս անասնոց, զորս այժմ ընթերնուս միայն ժողովուրդն այ, և ոչ առնէ, ոչ այլ ինչ է իմանալ՝ բայց զի այնոքիւք նշանակին որ՝ ի մեզ ներդործութիւնք որովք յԱստ մերձենայցեմք, և՝ ի նոյն վախճան պատրաստագոյնք լինիցիմք։ Վ՛ասն որոյ երևելի պատարագն՝ աներևոյթ պատարագին է նշանակ. ըստ որում և ապաշխարողն յիշատակեալ՝ ի մարգարէին, կամ ինքն իսկ մարգարէն թողութեան յայ հայցեալ ասէ. «Ո՛վհ կամեցեալ է իբր պատարագս՝ մատուցանէաք. բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար։ Պատարագ այ հոգի խոնարհ. զսիրտ սուրբ և զհոգի խոնարհ՝ Աստ ոչ արհամարհէ»։ Ղ. Ծ. 8։ Ցես, զի ուր ասացն՝ ոչ կամել այ զպատարագ, անդ ցուցանէ կամել զայն։ Վ՛է կամի ապա ընդ պատարագ անասնոյ զնոյն. այլ կամի զպատարագ սրտի բեկեալ. և յայն զոր չկամեցեալ ասէ, նշանակի կամեցեալն զոր գՀետ բերէ։ Վ՛ասն ըստ այմմ չկամէ այ զնո-

սա ասաց, ըստ որում անմիաբն համարին կամել՝ իբր յայնս զուարճանալով։ Վասնզի թէ չէին կամք այլ զի՛ւր զՀաձելի պատարագն, յորոց մի՛ սիրա բեկեալ և խոնարհեալ ապաշխարական ցաւօք, նշանակել զդալի պատարագօքն՝ որոց իբր ախորժելեաց ոմանց ցանկալ Թուեցաւ, ոչ արդեօք հրամայէր մատուցանել զայնս՝ ի հին օրէնսն։ Եւ վասն այսորիկ փոփոխելիք եէին՝ ի դէպ ժամանակի, զի մի՛ կարծեսցին Հաձելիք այլ, կամ տիրապէս ընդունելիք նմին՝ ի մէջ, որպէս որ ինչ նոքօք նշանակեալք լինէին։ Այմին իբր ասի յայլսւմ տաղմոսի. "Եթէ քաղցեայց, քեզ ինչ ոչ ասացից. զի իմ է աշխարհ լրիւ իւրով։ Եէ ուտեմ ես զմիս զուարակաց քոց, և ոչ զարիւն նոխազաց քոց ըմպեմ.,. Այդ. Խե։ Իբր ասել. Թէ արդարեւ ինձ պէտք ինչ էին, ոչ արդեօք՝ ի քէն խնդրէի զոր՝ ի ձեռին ունիմ։ Ցաւելու զկնի, Թէ զինչ այնօրիկ նշանակէին. "Ա՝տտո այ պատարագ օրհնութեան. կատարեա բարձրելոյն զուխտս քո։ Աարդասցես առ ինս յաւուր նեղութեան քո. ես փրկեցից զքեզ, և դու փառաւորեսցես զիս.,։ Եւ այլով մարգարէիւ ասէ. "Ո՛չ կանխեցից առ տէր. ապաւինեցայց յԱստ իմ բարձրեալ, եթէ կանխեցից առ նա ողջակիզօք և որթովք տարեւորօք։ Եթէ իցէ ընկալցի տէր ընդ Հազարաւորս խոյոց, կամ ընդ բիւրաւորս նոխազաց պարարտաց. եթէ տացե զանդրանիկս իմ վասն ամբարշտութեան, և զպտուղ միջոյ իմոյ վասն մեղաց անձին իմոյ։ Պատմեցաւ քեզ ով մարդ, զինչ է բարի, կամ զինչ խնդրէ՝ ի քէն տէր. բայց առնել իրաւունս, և սիրել զողորմութիւն, և պատրաստ լինել երթալոյ զկնի տեառն այլ քոյ.,. "Եւ։ Ը։ Հաւասիկ և՝ ի բանս աստ մարգարէիս որոշաբար բացայայտեալ է երկաքանչիւրն, Թէ ոչ զպատարագն զայնսոսիկ ըստ ինքեանց խնդրէ Աած, այլ զոր նոքօք նշանակին։ Այլ և՝ ի Թուղթն մակագրեալ առ Եբրայեցիս՝ ասէ. "Ողթութիւն և զՀաղորդութիւն մի մոռանայք. զի ընդ այնպիսի պատարագս Հաձի Աած.,. Եբ. 16։ Արդեւ ուր գրեալն է. "Ողորմութիւն կամիմ, և ոչ զպատարագ.,.

Ա՛ս. Ջ. 6. ոչ այլ ինչ է խմանալ, բայց զի նախամեծար գնի պատարագ քան զպատարագ. զի սովորաբար կոչ չեցեալն պատարագ՝ նշանակ է Աշմարիտ պատարագին. և ողորմութիւն ինքն Աշմարիտ պատարագ է, ըստ որում առացաւ՝ ի նախայիշատակել բանն "Օ՛ի ընդ այնպէս սի պատարագս հաճի ՚ած ,, : Այլ որ ինչ միանգամ՝ ի պաշտաման խորանին կամ տաճարին աւանդին հրամանք բազմօրինակաբար յաղագս զոհից կամ պատարագաց, կարգեալ են՝ ի նշանակել զայ սէրն և զընկերին : "Վ՛ասն զի յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան ,, , որպէս գրեալ է. Ա՛ՒՐ. ԷՔ. 40:

ԳԻՂԱՒ Ը.

Յաղագս Աշմարիտ և կատարեալ պատարագի :

ԱՒՏՈՒ Աշմարիտ պատարագ է ամենայն գործ՝ որ լինի առ՝ ի հաղորդիլ մեզ սրբութեամբ ընդ այ, այս է՝ վերաբերեալ յայն վախճան բարւոյ՝ որով խոհակից երանելի կարիցեմք լինել : Այժմ իրի լոկ ողորմութիւն՝ ի նպաստ մարդոյ արարեալ՝ թէ ոչ վասն այ լինիցի, չէ պատարագ. և թէպէտ և՝ ի մարդոյ լինի կամ մատուցանի, բայց պատարագն՝ ածային իրք է. վասն որոյ առ լատինս՝ ի նախնեաց հետէ զոհն կամ պատարագն կոչի սրբագործուն կամ գործ սրբազան : Ա՛ստ այսմ և մարդն ինքնին յանուն այ նուիրեալ, և այ ուխտեալ՝ այնու զի մեռանի աշխարհի առ՝ ի կեալ այ, պատարագ լինի է. զի և այս՝ ի սակի ողորմութեանէ է, զոր անձին իւրում առնէ մարդ, ըստ որում գրեալ է. "Ողորմեաց անձին քումմ, հաճոյացեալ այ ,, . Սիրաք. Լ. 24 ըստ լաւ : Ա՛յլ և մարմին մեր ժուժկալութիւն Աշնեալ, եթէ որպէս պարան է՝ վասն այ առնիցեմք զայդ, որպէս զի զանդամս մեր ոչ ընծայեցուցանիցեմք զէն անիրաւութեան մեղայն, այլ զէն արդարու-

թէ՝ այ, պատարագ է։ Զի որ խրատեալ առաքեալ ասէ. «Զգաւեմ զձեզ եղբարք՝ զթուղթն այ, պատարաստել ըզմարմինս ձեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ այ, զկօսուն պաշտօնդ ձեր»։ Հռ. ԺԲ. 1։ Զդու եթէ մարմին նուաստ՝ զոր իբրև ծառայ՝ի կիր առնուս հոգւին, և կամ իբր գործք, բարիոք և ուղիղ վարմամբ վերաբերեալ առ ած՝ պատարագ է, քանի առաւել և հոգի լընծայաբերելն զանձն առ ած, որպէս զի նորա սիրոյն հրաւառեալ, զկերպարան աշխարհային ցանկութենն՝ի բաց սրբեսցէ, և այ իբրև անայլայլակ կերպարանի ներքոյ անկեալ նորոգեսցի հաճոյ լեալ նմին՝ սակս՝ի նորայն գեղ ձևանալոյ, եղանի արդարեւ պատարագ. զոր նոյն առաքեալ անդէն յաւելու ըստ կարգի. «Այլ մի կերպարանիք կերպարանօք աշխարհիս այսորիկ, այլ նորոգեցարուք՝ի նորոգութի մտաց ձերոց առ՝ի քննել ձեզ զլաւն. և թէ զինչ են կամքն այ, բարին և հաճոյն և կատարեալն»։ Այսպա քանզի ողորմութենն գործք են պատարագ ձշմարիտ, եթէ յանձինս մեր, և եթէ յընկերս՝ առ ած վերաբերեալք, և ոչ առ այլ ինչ են գործք ողորմութեան՝ բայց զի ապատացեալք՝ի թշուառութէ, լինիցիմք երանելիք բարեաւն՝ զորմէ ասացաւ «Ինձ առ ած մերձենալ՝ բարի է»։ Ղկ. ԻԲ. 24. յիրաւի ապա զԻեսու գայ, զի ողջոյն քաղաքն փրկեալ, որ է ժողով և միաբանութի սրբոց, պատարագ ընդհանրական մատուցցի այ՝ի ձեռն քահանային մեծի, որ և զանձն մատոյց՝ի չարչարանս վասն մեր ըստ ծառայական կերպին. որպէս զի այնպիսւոյ դիւոյ լինիցիմք մարմին։ Զանգի զայս կերպարան զմեր մատոյց նա, և սովին մատուցաւ. զի սովիմբ է միջնորդ, սուրբ քահանայ, զի սովին պատարագ։ Ձ ասն այնորիկ յորդոր մեզ մատուցանէր առաքեալդի ընծայեցուցցուք զմարմինս մեր պատարագ կենդանի, սուրբ, հաճոյ այ, զկօսուն պաշտօն մեր. և մի կերպարանիլ կերպարանօք աշխարհիս, այլ նորոգիլ՝ի նորոգութի մտաց մերոց, առ՝ի քննել մեզ զլաւն. և թէ զինչ են կամքն այ, բարին և հաճոյն և կատարեալն. և ահա սոյն այս պատարագ բովանդակ՝ մեք իսկ եմք։ Ասէ՝ի վերայ բերէ առաքեալ. «Ո՞ այս

ասեմ ընորհօքն ՚այ՝ որ տուեալ էն ինձ, ամենայնի որ է ՚ի ձեզ, մի առաւել ինչ խորհել քան զարժանն խորհելոյ. այլ խորհել ՚ի զգաստանալ՝ իւրաքանչիւր որպէս բաժանեաց ՚ած չափ հաւատոյ։ Որպէս ՚ի միում մարմնի անդամն բազումս ունիմք, և անդամքն ամենայն ոչ զնոյն գործ ունին, նոյնպէս և բազումք մի մարմին եմք ՚ի Քրիստոս, և իւրաքանչիւր միմեանց անդամք եմք։ Ունայց ունիմք մեք ընորհս ըստ ընորհացն որ տուեալ էն մեզ ազգս ազգս ... ՚ած։ ՚ի Այս է ահա պատարագ քրիստոնէից. բազումքս մի մարմին եմք ՚ի Քրիստոս։ Որ որպէս յայտ է հաւատալ ցելոյ՝ սակս կատարել եկեղեցի խորհրդով սրբոյ սեղանոյն. ուր ՚ի միտ առնու եկեղեցի՝ թէ ՚ի պատարագի անդ զոր մատուցանէ, և ինքն գլխովին պատարագ մատչի։

ԳԼՈՒԽ Լ.

Թէ ակն հրեշտակացն սրբոց առ մեզ յայնմիսիկ է, զի ոչ ինքեանց՝ այլ միոյն ՚այ Հնմարտի կամին լինել զմեզ պաշտօնատարս։

Ա՚ՐԴԱՐԵՒ անմահքն այնոքիկ և երանելիքը բնակացեալք յերկինսաւոր կայանս, որք խրախանան ՚ի կցորդութեն առ բարւոյն իւրեանց, և նորա յաւիտենականութեն անշարժք են, Հնմարտութե նորա հաւատիք, և պարգևօք նորա սուրբք, այնու զի սիրեն բարեգթութե զմեզ մահացուքս և զձշուառքս՝ առ ՚ի լինելոյ մեզ անմահս և երանելիս, ոչ կամին զի մեքնոցին ինքեանց գոհս և պատարագս մատուցցուք, այլ այնմ՝ որում և զինքեանս գիտեն պատարագս լինել զոյզ ընդ մեզ։ Ա՚յսն զի միաբան ընդ նոսա մի քաղաք եմք ՚այ. առ որ ասէ ՚ի սաղմոսի ՟՟. 3. «Փառաւորեալն խօսեցաւ վասն քո՝ ահաւասիկ քաղաքդ ՚այ, որոյ կէսն աստ ՚ի մեզ պանդխտանայ, և կէսն ՚ի նոսին օգնական է մեզ։ Ա՚յսն զի ՚ի վերին քաղաքէ անտի՝ ուր կամքն ՚այ են օրէնք իմանալի և անայլայլակ, ՚ի վերին

յայնմ գոգցես գիւանէ պաշտեալ ի՛ջանէ առ մեզ՝ի ձեռն հրեշտակաց սրբազանն գիր, յորում կայ ընթեռնուլ. “Ոչ գից զոհիցէ, սատակեացի, բայց միայն տեառն...։ Ել. իբ. 20։ Յաղագս այդր գրոյ և օրինաց, և այսպիսի հրամանաց՝ այնչափ յաձախութիւ վկային սքանչելիք, մինչև այն, յայտնի տեսանիլ՝ թէ ուժ ունէք նուիրագործել մեզ կամին անմահչքն այնօրիկ և երջանիկք, որք զայն կամին մեզ՝ զոր անձանց կամին։

ԳԼՈՒԽ Ի.

Յաղագս սքանչելեացն, զորս կամեցաւ ետ յաւելուլ՝ի վերայ խոստմանց իւրոց սպասաւորութիւ հրեշտակաց՝ առ՝ի զբացուցանելզ զնաւատս ետ ապաշխից։

Ա՛Թէ զկարի վարձկանաւն կամիցիմ յիշատակել՝ թէ որչափ սքանչելիք գործեցան՝ի վկայութի խոստմանցն այ. ուր հազարաւոր ամաք յառաջ ասաց առ Ա՛բրահամ, թէ՝ի զաւակի նորա ունին օրհնիլ ամենայն ազգք։ Վանզի ո՞ոք ոչ զարմասցի, զի Ա՛բրահամու որդի ծնաւ կինն իւր ամուլ, և այն՝ի պառաւութե ժամանակի՝ յորում և ոչ բաղմածին ոք կարէր ծնանել զզաւակ. այլ և՝ի նուէրս նորին Ա՛բրահամու բոց յերկինից ընթացաւ ընդ մէջ զոհիցն յօչելոց. և նմին Ա՛բրահամու նախապատմեցաւ՝ի հրեշտակաց երկնատեղաց հուրն սոգումացուց, ի հիւրընկալելն Ա՛բրահամու զհրեշտական նմանեալս մարդկան, որոյ և զաւետիսն այ ընկալաւ յաղագս հանդերձեալ զաւակին. և յորժամ՝ի վերայ կայր հրայրեացն Սոդոմայ, սքանչելին այն ազատութե կատարեցաւ Ղովտայ եղբօրորդւոյն Ա՛բրահամու՝ի ձեռն հրեշտակաց. որոյ կնոջն յետս կոյս հայեցեալ՝ի ձանապարհին, և անդէն յարձանաղի դարձեալ, խրատ մեծ տպացոյց մի ունէք՝ի ձանապարհի ազատութե իւրոյ ցանկանալ անցելոցն գնացից։

Իսկ ապա ՝ըրբ և որբանիք են հրաշագործեցեալքն ՚ի ձեռն Պօղոսի յաղաւոթէ ժողովրդեանն այլ ՚ի լծոյ ծառայութէ Հրէիցս , ուր և մեզուց փարաւոնի արբայի եգիպտացւոց՝ որ զժողովուրդն զայն հարկատահարէր ,թոյլ տուաւ գործել ինչ զարմանալիս , զի հրաշափառապէս յաղթահարեսցին ։ Օ ի նոքա դիւթութիք և կախարդանօք գործէին , յորս դեգերին չար հրեշտակք , այսինքն դևք ։ Իսկ Պօղոսի՝ զայս աներկիւղ զօրութէ , որչափ արդարութէ յանուն Տեառն՝ որ զերկինն և զերկիրն արար , հրեշտակացն գործակցութէ առաւելոյր քան զմոգսն ։ Ա.ՀԼ յերրորդումն հարուածի յորժամ նկուն եղեն մոգք ,տապանեակ հարուածք ՚ի համար մեծաց խորհրդոց կատարեցան ՚ի ձեռն Պօղոսի , որովք փարաւոնին լուծաւ խրատասրտութէն , և եգիպտացւոց՝ արձակել զժողովուրդն այլ ։ Ա.ՀԼ զի նոյնչետայն ապաշաւեալ նոցա՝ զհետ սնդեցան երբայեցւոցն չուելոց , սոքա ՚ի բաժանել ծովուն անցին ընդ ցամաք, և եգիպտացիքդ յանդրէն կարկատել ալեացն՝ ծածկեալք սուզան ։ Օ ինչ և վասն աքանչելեացս ասացեալ յաձախելոցն ՚ի ծայնսպիսս, մինչդեռ յանապատին տատաներ ժողովուրդն . ջուր անըմպելի՝ յարկանել ՚ի նա փայտի ըստ հրամանին այլ , զղառնութէնն մերկանալը , և զպատքեաւսն զովացուցանել ։ Յերինէից տեղեաց մանանայ քաղցելոցն . և զի չափ սահմանեալ էր ժողովելոյ , զոր ինչ ոք աւելի ժողովեալ էր , որդանց ՚ի նմա եռալով նեխէր . իսկ ՚ի կրկին ժողովելն նախ քան զօր շաբաթու , զի ՚ի շաբաթու ժողովել օրէն ոչ էր , անեղծ ՚ի նեխոյ մնայր ։ Ա.յն ինչ մնոյ ցանկացան նոքա ՚ի կերակուր , ուր այնչափ բազմութեան ժողովրդեան ոչ բաւել ինչ կարծիւր , լցին թռչունք զբանական , և զեռանդն անյագութէն չիջուցին ցտաղտուկ ։ Անհնամիք ընդ առաջ չարուցեալք, որք զանցս նոցա արգելուլ կամէին պատերազմաւ, յաղթեալն Պօղոսի՝ զձեռան խաչաձև տարածելով, տապաստ անկան , ոչ միոյ ուրուք յերբայեցւոցն վտանգեալ ։ Աստուածարքք ՚ի ժողովրդեանն այլ , որք յայծահրամանն միաբանութէ որոշեցին զանձինս, յերևելի օրինակ աներևոյթ

պատուհասին՝ կենդանւոյն խորասուզեցան պատառմամբ երկրի։ Ի վիմէ հարեալ գաւազանաւ՝ յորդեցին աղբերակունք առատք ի պէտս յոքնահարեալ բազմութեանն։ Ոչ էից մահացուցիչ խայթուածք՝ արդարացի պատուհաս մեղաց՝ ի ձեռն ձողաբարձ պղնձի օձին հայեցուածոյ բժշկեցան, որոյ տառապելոյ ժողովրդեանն լինէր դիւրութիւն, և մահուամբ մահ լուծանէր՝ ի նշանակ նմանութեանն խաչելիոյ մահուն։ Այն օձ առ յիշատակ գործելոյն պահեալ, իբրև յետ այսր ի պաշտօն առնոյր ժողովուրդն թիւրեալ զօրէն կռոց, Եզեկիաս արքայ՝ որ կրօնասէր իշխանութեան ծառայէր այ, մանր խորտակեաց՝ ածպաշտութեան մեծաց գովեստից արժանի։

ԳԼՈՒԽ Ը

Յաղագս անարժան արուեստից գեւապաշտութեանն, զորս յիշատակէ Փոլփիւր պղատոնական, զոմանս գովէլով, և զոմանս պախարակէլով։

Յաւգս վայր առացեալքս և բազում այլ սոյնպիսիք՝ զոր բովանդակ յիշատակել կարի յերկար է, գործէին առ ի հաստատելոյ զպաշտօն մերոյն այ Աստուծոյ, և ի խափանել զապականն և զստոյ։ Այս յայտ է թէ լինէին պարզ հաւատովք և վստահութիւն ածպաշտութեանն, և ոչ կախարդութիւքը և մնոսի չնչնմամբք զոր մոգուն առնային, կամ վատ անուամբ՝ դիւթութիւն, և կամ արգոյ կոչմամբ՝ ածագործութիւն. քանզի որոշումն իմն յայսոսիկ դնել հնարին, և զպարապուեալսն յայսոսիկ արհեստս անարժանս՝ զոմանս պարսաւելիս համարին, զորս կախարդս և դեղատուս իսկ կոչել սովորեցան ոմանիք՝ իբրու կիւսս և դիւթս, և զայլս՝ գովելիս կարծեցուցանէն, որոց զածագործութիւնն ընծայէն. ուր երկաքանչիւր նոքա ըմբռնեալք են ի պատիր արարս դիւաց՝ անուամբ հրեշտակաց։

Քանզի և Պորփիւրիոս թէ և մաքրութիւն իմն հոգւոյ

կարծէ լինել՝ի ձեռն ՚ձագործութեան, սակայն կաղկաղ և անհամարձակ բանիւ. իսկ թէ զառ ՚ձ գարձուածն տայ ումեք այդ սրուեստ, չընդունի բնաւ. մինչ զի տեսանի այլոն՝ անմիաբան կարծեօք ծփել ընդ մոլորութիւն հմայութեան և ընդ ուսուն իմաստասիրութեան։ Վ՚ասն զի մերթ ազդ առնէ, թէ զդուշալի է այդ արուեստ, իբր խաբէական, ՚ի գործ անդր վտանգաւոր, և արգելեալ յօրինաց. և մերթ ակնածեալ՚ի գովեաց նորա, օգտակար զայն ասէ լինել՚ի մաքրութիւն մասին ինչ հոգւոյ, ոչ իմայականին՝ որով իմանալեացն Ա՚ստուածութիւն ըմբռնի՝ տալ բակաչելոյն ՚ի մարմնոց նմանութիւն, այլ չնչաւորին՝ որով մարմնականացն պատկերք տպանան։ Ո՚յ այս միանգ, ասէ, ՚ձագործ խորհրդածութիւք՝ որ կոչէին կատարողութիւք, լինի դիպողագոյն չընդունելութիւն ոգւոց և հրեշտակաց, և առ՚ի տեսանել զդիս։ Վ՚ասկայն խոստովան լինի՝ թէ այդպիսի խորհրդածութիւք ոչ մի ինչ մաքրութիւն գործի լիմացականն ոգի, որով յարմարեսցի նա՚ի տեսանել զ՚ձ իւր, և՚ի նկատել զորս էնն Ա՚ստուածապէս։ Վ՚ասլիմբ լինի իմանալ թէ զորոց աստուածոց, կամ զոր տեսուն ասէ լինել ՚ձագործն խորհրդածութիք, յորում ոչ տեսանին Ա՚ստուածապէս եղեալքն։ Վ՚արձեալ, ասէ թէ հոգին բանական, կամ ըստ որում առաւել ախորժէ կոչել՝ իմացական, կարող է՚ի գերակայն ամբառնալ, թէպէտ և չնչաւորն վիցէ մաքրեալ ՚ձագործականն արուեստիւ. բայց և սա այնչափ հեռի մաքրի՚ի ձեռն բժժանացս, զի ոչ ժամանէ յամահութիւն և՚ի միանձնաւորութիւն։ Վ՚ասն թէպէտ և զատանէ զՀրեշտակս՚ի դիւաց, օդեղէն ասէ լալ զդիւացն կայանս, և եթերական կամ հրեղէն՝ զհրեշտակայն, և թէ լալդիք լինի ունել զոր բարեկամ՚ի դիւաց՝ յորմէ վերաբերեալ կարիցէ զի չէտ մահու ամբառնալ յերկրէ առ փոքր մի, և զայլ շաւիղ ցուցանէ առ հրեշտակայն վերին կցորդութիւնս, սակայն յայտնաբարբառ իմն վկայէ խորհելի զոլ զդիւացն կցորդութիւն, յասել անդ թէ հոգի չէտ մահու պատիժս լուծանելով, զարհուրի՚ի պաշտմանէ դիւացն՝ յորոց պատրեալն էր. այլ և զ՚ձագա-

դործութիւն կոչեցեալ հմայութիւնն իսկ, զոր իբր հաշտեցուցիչ հրեշտակաց և աստուածոց պատուաբանէ, ոչ իչխեաց ներգործիչ ասէլ առ այնպիսի իշխանութիւնս, որք կամ՝ ինքեանք յաչալեին ընդ մարդուսին հոգւոյ, և կամ զարուեստ յաչաղոտաց՝ ի կիր առնուսն. և՝ ի սոյն յառաջ բերէ զարհանջիւնն քաղդէացւոյ ուրուսին անձանաօթի, ասելով. "Տրանջայր այր ոմն բարեբարոյ քաղդէացի, թէ՝ ի գերև եղիցի բազում ձգանք իւր՝ ի մարդել զհոգի ուրուք. քանզի այլ այր ձարտար՝ ի նոյն արուեստ՝ հարեալ՝ ի մահանաց, կապեալ էր զիշխանութիւնն դիւթեալս հայցուածովք խորհրդականօք, զի մի զինդրելիսն չնորհեսցեն. ապա նա կապեաց, ասէ, և սա ոչ արձակեաց.,: Այս այս է, ասէ, ցոյցք՝ թէ ածահմայուն է ուսուսին՝ և բարի զոր ծելոյ և չար, եթէ առ աստուածս, և եթէ առ մարդիկ. և թէ աստուածք և ախտանան և ձգին յայն ամբոխմունս և՝ ի կիրս, զոր սովորաբար դիւաց և մարդկան ընծայէ Այսուհետս, բայց միայն բարձրութիւն եթերական կայանին որոշելով զաստուածան՝ ի նոցանէ, և զայն որոշումն ասէլով լինել կարծիս Պղատոնի։

ԳԼՈՒԽ Ժ

Յաղագս ածագործ ասացեալ հմայութիւն՝ որ խոստանայ հոգւոց զսուտ մաքրութիւն դիւակոչութիւն։

Այդ աւասիկ միւս ևս պղատոնական Պորփիւր իմաստնագոյն համբաւեալն, ասէ՝ թէ չգիտեմ որպիսի ինն ածագործ արուեստիւ նոքին իսկ դիք պարանեն՝ ի կիրս և յամբոխմունս. վասն զի դիպ եղև խորհրդական աղօթիւք երդմնի լինել նոցա և ահիւ ըմբռնիլ՝ առ՝ ի չտալոյ զհոգւոյ մաքրութիւն. այնպէս երկուցեալ նոցա յայնմանէ որ զչարն հրամայեր, մինչ զի յայլմէ որ զբարին հայցէր, ոչ կարացին նովին ածագործ արուեստիւ արձակիլ յեր-

կիւղէ անտի, և ազատաբար զբարեբարուքեանն ընդհակառակ։ ՚Ո՛չ տեսանէ Թէ այս ամենայն գիւաք են գիւաց խաբեբայից, բայց նա միայն՝ որ ամենաճշմարտ ծառայ Նոցա է, և օտարացեալ՚ի ընդհայց ձշմարիտ ազատեցուցչին։ ՚Վասնզի եթէ աստուածք բարիք կին նոքա՝ առ որս գործէին այսոքիկ, ապաքէն հզօրագոյն և լինէր բարեբար մաքրագործողն Հոգւոյ՝ քան զչարակամն խափանիչ։ ՚Այժմ եթէ աստուածոցն արդարադատից՝ անարժան մաքրուքեանն և բևէր այլն՝ այլ վասն լինէր հայցուած, ոչ պարտ էր նոցա առ երկիւղի նախանձորդին, և որպէս նայն ասէ՝ յահէ բռնադոյն աստուածոյ խափանիլ այլ ինքնիշխան գատաստանաւ զանազ զինդիրն։ ՚Այլ զարմանք են, զի քաղդէացին այն բարեսէր՝ որ ՚ձծագործ խորհրդածութեամբք մաքրել ցանկայր զՀոգին, ոչ եգիտ զաստուած ումն գերագոյն, որ կամ սաստիկ և ահացուցանէր և՚ի բարեգործել բռնադատէր զդին ահաբեկեալս, և կամ զհացուցիչ նոցա վանէր՚ի բաց, զի անարգելաբար բարեգործեսցեն. բայց գուցէ հմայողն բարեմիտ չունէր առձեռն պաշտամունս ինչ, որով զնոսին իսկ դիս՝ զոր կարդայր՚ի մաքրութեն Հոգւոյ, մաքրէր նախ յախտէ անտի երկիւղին։ ՚Վասնզի առիմ գտանիցի աստուած հզօր՝ յորմէ զարհուրեսցին, և ոչ գտանիցի այն՝ յորմէ մաքրեսցին։ ՚Եթէ կայցէ աստուած՝ որ լուիցէ նախանձոտին, և երկիւղ արկանիցէ՚ի դիս զի բարեգործեսցեն մի. և ոչ կայցէ աստուած՝ որ բարեխնդրին լուիցէ, և փարատեսցէ զերկիւղ՚ի դից անտի առ՚ի բարեգործելոյ նոցա։ ՚Այլ նորանշան ՚ձծատհմայուն. բաւ հռչակելի մաքրուն Հոգւոյ. ուր առաւել զօրանայ անսուբն չարակնոտի, քան Թէ զինդրելին ստացնայ անարատն բարեբարուքեան։ ՚Այլ զգուշալի է յախտ և զզուելի խաբէութեն այսոցն չարաց, և փրկականն ընդ-պրկելի վարդապետութեն։ ՚Վասնզի և այն՝ զոր Պորփիւր յիշատակէ, Թէ որ զայսոսիկ աղտեղի մաքրութիս ներգործեն անսուբք պաշտամամբք, պատկերս իմն հրաշագեղս հրեշտակաց կամ դից տեսանեն Հոգւոյն մաքրեցելոյ, եթէ արդարեւ տեսանիցեն այնպիսի ինչ, ի նոյն իսկ

առաքելոյ ասացեալն . “ Վասնզի և ինքն սատանայ կերպարանի ’ի հրեշտակ լուսոյ ,, : Օ՛ի այդ են առաչօք նորա ցնորք . որոյ ուռկանել կամեցեալ զանձինս տառապեալս պատիր պաշտամամբք բազմուէ սուտ աստուածոց, և խոտորեցուցանել ’ի ստոյգն պաշտամանէ ՚այ Ա՛ստուծոյ , որով միայն սրբին և բժշկին , նմանող լինի Պրոտէոսի , որ յամենայն կերպարանս այլափոխի , ասէ Վ՛իրգիլիոս . և այսպէս վշտէ վարի Թշնամաբար , և ձեռն տայ դաւողաց պէս . և յերկոսին է ինասակար :

ԳԻՒՂԻՒ ԺԲ.

Յաղագս Թղթոյն Պօրփիւրի առ Ա՛նեպոս եգիպտացի յորում հնդրէ ուսանել զվհատութեի դիւաց :

Լ՛ԱՒ և գոգցես խորհեցաւ նա ինքն Պօրփիւր , գրեալ առ Ա՛նեպոս եգիպտացի . ուր խորհուրդ իմն հարցանել պայմանաւ ՚ի վեր հանէ զարուեստսն անարժանս , միանգամայն և ունայնացուցանէ : Յորում վայրի Թէպէտ և զգևսն առհասարակ պախարակէ , իբր զի առ՝ առ անմտութե՛ զնոսնաւական զոգիսն ծծէն , որոյ վասն ոչ յե՛Թերս անդ կան , այլ յօդս ներքոյ լուսնի , և ’ի նորա խակ գնտին , բայց ոչ իշխէ զամենայն խաբէութե՛ն և զյարուե՛Թս և զանկարգութե՛ս , զորս Ա՛ղբիտ անգոնէ և ինքն , ընծայել դիւաց ամենեցուն : Վ՛ասնզի զոմանս ըստ այլոցն խօսել կոչէ դևս բարեբարոյս , Թէպէտ և զամենեսին առ հասարակ անմիտս ստորագրէ : Լ՛ուընդ այն զարմանայ , զի աստուածք ոչ միայն ողբին զոհիւք , այլ և բռնադատին իսկ հարկեալք կատարել զոր մարդիկն կամին . և եԹէ մարմնով և անմարմնութե՛ տարորոշին աստուածք ’ի դիւաց , զի՞արդ յաստուածս համարեսցին արեգակն և լուսին և այլքն երևելիքք յերկինս , որք անշուշտ մարմինք են . և եԹէ աստուածք իցեն , իբր ոմանք ասիցին բարերարք , և

այլք չարարարք. և ոչ մարմնեղինք եղելով՝ ընդ անմարմինան զուգաւորեացին։ Հարցանէ զարձեալ իբր երկբայանօք. միթէ ՚ի դիւթիչս անդ, և որք զարմանալիս գործեն, կայցեն հոգիք զօրաւորք, թէ ոգիք իմն եկամուտք գայցեն՝ առ ՚ի գնոյնս գործելոյ։ Այս ինքն առաւել կարծէ՝ արտաքուստ իմն եկեալս. այնու զի քարինս և խոտս ՚ի կիր արկեալ՝ կապեն զմանս, և բանան զդրունս փակեալս, և զայլ նոյնպիսիս զարմանագործեն։ Ասէ որոյ ասէ՝ թէ ըստ կարծելոյ ոմանց, է ՚ի նոցանէ ազգ մի առ ՚ի լսել դիւրապատրաստ, բնութիւն խաբեբայ, ամենակերպարան, յոքնօրինակ, որ ձևանայ աստուած և դև, և հոգի մեռելոց. և սա է որ զամենայն զգայն բարի կամ չար երևեալ՝ սըն ներգործէ. սակայն առ աստուգապէս բարի իրս ոչ մի ինչ օժանդակէ. այն զի և ձանձրանայ իսկ ոչ զբարին, այլ և չարաչար խառնակէ, չարախօսէ և արգելու իսկ երբեմն զնախանձաւորս առաքինութեան. լի է յանդգնութիւն և ամբարհաւաձուԹիւն. հեշտանայ ընդ ձենձերահոտս. շողոքորթանօք գրաւի։ Խազում և այլ ինչ յաղագս այսր ազգի խաբեբայ և չար ոգւոց՝ որք արտաքուստ եկաւորին ՚ի հոգի, և զմարդկան զգայութիւնս այսպն առնեն ՚ի քուն և յարթնութիւն, ոչ իբր յիւրմէ հաւանութիւն հաստատեալ պորփիւր, այլ մեղմով ՚ի կասկածանս կամ յերկբայութիւն արկեալ, ակնարկէ զայլոցն կարծիս։ Վասնզի դժուարին եղև առնն խմաստասիրի՝ զբովանդակ զաստանայականն խուզմբ ձանձրել, կամ ազատագիմ երգիծաբանել, զոր և պատաւեալ քրիստոնեայ ոք արագ ձանձրէ, և համաբաձակաբար անգոսնէ. բայց զի գուցէ սա ակն առնոյր ՚ընել պոսի առ որ գրէին, մեծանուն առաքնորդի այնպիսի պաշտամանց, և այլոց ևս որք ՚ի մեծարանս ունէին զայն պիսի արարուածս իբր ածայինս իմն, կարգեալս ՚ի պաշտելութիւն դից։

Վակայն յառաջ երթեալ՝ զայնպիսի բանս ևս իբրև հարցուածոյ ձևով ՚ի մէջ առնու, զորս ուշի ուշով նկատեալ, ոչ այլում՝ բայց չարաց իշխանութեց ևեթ խաբեբայից մարթէ ընծայել։ Ասէ զի խնդիր առնէ. զի է զի իբր

առ լաւագոյնս ումանս կարգալով, կետոյ որպէս չարագու-
նից հրամայի՝ կատարել զանիրաւ պատուէրս մարդոյ. առ
իմ՝ ոչ լսելեն աղաչաւորի չաղելոյ յախտ վաւաշական, ուր
ինքեանք ոչ դանդաղին զրգռել զամենեսին յաղձապիղծ
խառնակութիւն. ընդէր հրամանատարեն իւրեանցն քրիս-
պետաց ժուժկալել՝ի ընչաւորաց՝ առ՝ի չպղծելոյ նոցա
թանձր գոլորշեօք, և ինքեանք յայլ ևս գոլորշիս թա-
կարդին և՝ի ձենձերս զոհից. և ուր զերդահմայն արգե-
լուն մերձենալ՝ի մեռելոտի, բազում անգամ իւրեանցն
պաշտամունքն մեռելոտովք կատարին։ Օ՛ի զի մարդ
ամենայն ախտիւք զգածեալ սպառնալիս արձակէ՝ ոչ առ
դև կամ առ հոգի մեռելոյ ուրուք, այլ յարեգակն և՝ի
լուսին և յերկնայինս իւրաքանչիւր, ահ արկեալ՝ի նո-
սա ստութեամբ, զի զձմարտութիւն՝ի նոցանէ որ-
սայցէ։ Վ՛անզի և զերկինս դղրդել սպառնայ, և այլս
նոյնպիսիս անձեռնարկելիս մարդոյ, որպէս զի մեռոի և
ծաղրական սպառնալեօք ահաբեկեալ աստուածոյն այ-
նոցիկ զօրէն տղայոց անմտաց, կատարեսցեն զհրամայ-
եալսն։ Վ՛սկ դարձեալ Պօղոսիւբ, թէ Վ՛երեմն ոմն հմուտ
այնպիսեաց պաշտամանց, մանաւանդ թէ ցնորից՝ գրեաց
թէ որ ինչ միանգամ գործէին առ եգիպտացիս ամբոխ
աղաղակաւ՝ի ծոնս Խսիդեայ, կամ Հսիրիդի առն նորա,
ուժգնակի զօրանային բռնադատել զաստուածն՝ զի
զհրամայեալսն առնիցեն. յորժամ տաղերգակն՝ի տաի-
պել անդ՝ սպառնայ յայտնել զգաղտնիս նոցա, կամ՝ի
սուտ հանել, մինչև զմարմին Հսիրիդի անգամ յօշոտել
առեր ահաւորութիւք, եթէ հեղգանայցեն՝ի կատարումն
հրամայելոցն։

Վ՛ընդ յիրաւի զարմանայ Պօղոսիւրիոս ընդ մարդ՝ որ
զայդպիսի շաղփաղիս և խօլականս սպառնայր աստուա-
ծոց, ոչ սոսկականաց, այլ երկնաւորաց՝ աստեղափայլ
լուսածագելոց, և զայն ոչ յանգործս ինչ՝ այլ բուռն զօրու-
թիւք ստիպելով, և ահարկութիւք՝ի գործել զոր կամին՝ ձգե-
լով. նա՝ի դէմն զարմացելոյ ուրուք, և զպատճառս ի-
րացն խնդրողի՝ տայ՝ի միտ առնուլ, թէ այնց ոգւոց է

զայսպիսին գործել՝ զորոց զազգ նկարագրեաց վերագոյն իբր յայլոցն կարծեաց, զնաբեբայիցն՝ ոչ որպէս ինքն եղ՝ բնութիւն, այլ վատթարութիւն. որք և կերպարանին իբր աստուածք և ոգիք մեռելոց, իսկ դևս՝ ոչ եթէ ըստ նորայն ասելոյ ձևանան, այլ են իսկ գլխովին։ Իսկ զոր կարծէ նա, թէ բուսովք ոմանօք և քարամբք և կենդանեօք և շնջմամբք և ձայնիւք, երևութիւք և պատճառանօք, այլ և զննութիւնք շարժման աստեղաց 'ի շրջանի երկնից՝ կատարիցեն մարդկիկ յերկրի զգործս ոմանս՝ բաւականս 'ի յաջողուած պէսպէս արարուածոյ, այդ ամենայն են գիւաք նոցունց դիւաց, որք խաղ առնեն զներքոյ անկեալսն ոգւովք, առ թելով անձանց զբօսանս կատակելիս 'ի մոլորութիւն մարդկան։ Իայս ուրեմն կամ ստուգիւ յերկրային գոլով Պորփիւրի, և խոյզ իրացդ առնելով, զայնս յուշ առնէ՝ որովք 'ի պարսաւանացդ մասին ցուցեալ կանդիմանեսցին, թէ ոչ են գործք իշխանութեան այնոցիկ՝ որք 'ի ստացուածն երանելի կենացն ձեռնտու մեզ լինին, այլ դիւաց պատրողաց, և կամ զի պահեսցուք զպատիւ առն փիլիսոփայի, ոչ կամիցաւ նա զայրն եգիպտացի զգրաւեալն յայնպիսի մոլորութիւն, և որ զանձնէ մեծամեծս գիտել համարեր՝ զրգռել ինչ ուսուցչի գոգեաս պերճութիւն, և ոչ յայտնի մնքառմամբ խոռվել այլ ցածուածիւք իբր հարցաքանողոք ուսումնասէր զարթուցանել զնա 'ի կշռել զիրսն, և յայտ առնել՝ որչափ անգոմնելիք են և զգուշալիք։ Իսկ ասպա հուսալ 'ի կատարած թղթոյն խնդրէ ուսանել, որ իցէ առ երանուին Անատոլիոս ըստ աւանդելոյ իմաստութեանն եգիպտացւոց։ Իայց արդ այնորիկ, ասէ, որոց պարապուն առ աստուածսն յայն ինչ ևեթ է, զի սակս գտանելոց զիսխոստականն, կամ կալուածս ստանալոց վասն, կամ ամուսնութիւն, կամ վաճառաշահութիւն, կամ նոյնպիսեաց ինչ աշխատ առնեն զայնպիսիսն խորհրդարան, վայրապար ինձ թուին իմաստութիւն լինել հետամուտ։ Իայլ և այնպիսիսն զոր ասեն, թէ և յայլ իրս ոչ ինչ բիտս իմն նախապատմեսցեն, բայց զի յաղագս երանութիւն ոչ ի ինչ կարևոր և պիտանի ազդ առնեն, չեն նոքա ոչ

աստուածք, և ոչ դևք բարեբարք, այլ կամ նոյն ինքն է՝ որ անուանեալ է խաբեբայ, և կամ է մտացածին դիւտ մարդոյ։

ԳԼՈՒԽ ԺԲ

Յաղագս պահպանելոյ զոր ներգործեն ածն Աշմարիտ սպասաւորութիւն հրեշտակացն արքոյ։

Այլ քանզի այնչափ և այնպիսի իրք գործին անյայտ արուեստիւք, որ անցանելն զանցանելն քան զընաւ պայման կալողութեամբ մարդոյ, զինչ կայ ասել, բայց քաջիկ խորհրդով՝ ի միտ առնուլ թէ որ ինչ միանգամ հրաշապէս իրքն յածուստ երևին նախապատմեալ կամ գործեցեալ, բայց ոչ անկաւորք՝ ի պաշտօն միոյն այ, յոր յարիցն պարզաբար՝ է միակ բարի երանաւէտ, որպէս պղատոնականք իսկ խոստովանին և վկայեն բազմերինակաբար, են ապաքէն խաղք այսոց չարաց, և պատիր խոչընդոտք։ յորոց Աշմարիտ ածպաշտութեն զգուշանալ արժան է։ Իսկ սքանչելիք՝ որ՝ ի ձեռն հրեշտակաց, կամ որով և է օրինակաւ այնպէս լինի գործին յածակոյս կողմանէ, զի արգոյ ընծայեցուսցեն զպաշտօն և զկրօնս միոյն այ, յորում միայն է կեանք յաւիտենական, աներկբայաբար յայնցանէ կամ նոքօք կատարին, որք սիրեն զմեզ ըստ Աշմարտութեն և ըստ ածպաշտութեն, այ ինքնին ներգործելով՝ ի նոսա։ Եւ արժան է ունկն մատուցանել այնոցիկ, որք ասեն՝ թէ անտեսանելին ածն չառնէ աքանչելիս տեսանելիս. զի ահա ըստ նոցին իսկ ընդունելոյ՝ այ գործած է աշխարհ, զոր չունին ասել թէ երևելի ոչ իցէ։ Իսկ որ յաշխարհի աքանչելահրաշ ինչ գործի, յայտ է թէ փոքր է քան զերևանդակ աշխարհ, այս է՝ քան զերկինն և զերկիրն և զամենայն որ՝ ի նոսա, զոր անշուշտ այ է արարութեան։ Եւ զոր օրինակ արարողն, նոյնպէս եղանակին ոք ոք արար՝ ծածկեալ է և անհաս՝ ի մարդկանէ։ Զդարեւ

*երևելի գոյից զարմանալիք առ յաչախ տեսութենէն փո-
քըրկանան. բայց մտաւորապէս ՚ի նոյնս հայեցեալ, մե-
ծամեծք քան զանսովորսն գտանին և քան զսակաւ երբեք
լեալն ։ Վասզի և ՚ի վեր քան զամենայն աքանչելիս
մարդոյին գործեցեալ՝ մեծագոյն աքանչելիք ինքն մարդն
է. սորին աղագաւ ասէ որ զերևելիքս արար զերկին և զեր-
կիր, ոչ խորշի աքանչելիս երևելիս ներգործել յերկինս
կամ յերկրի, որովք զոգիս տակաւին մոլեալս յերևելիքս՝
զարթուսցէ ՚ի պաշտել զինքն զաներևոյթն. իսկ թէ ուր
գործիցէ և յորժամ, խորհուրդն անայլայլելի առ նմա է.
և ՚ի նորա տեսչութենէն արդէն եղեալ իսկ են ժամանակք
որ գալոց են ։ Վասզի զժամանակեայքս շարժելով, ինքն
ոչ շարժի ժամանակաւ. և ոչ այլ ազգ ձանաչէ զլինելիսն՝
քան իբր եղեալս. և ոչ այլ ազգ ինչ լսէ որոց կարգանն առ
նա, բայց տեսանելով թէ կարգալոց են ։ Օ յորժամ և
հրեշտակք նորա լսեն, ինքն իսկ լսէ ՚ի նոսա՝ իբր ՚ի ձըշ-
մարիտ և յանձեռագործ տաճարի իւրում, զոր օրինակ և
՚ի սուրբս իւր. և հրամանք նորա ՚ի ժամանակի կատա-
րին՝ նկատեալքն յաւիտենական օրինաց նորա ։*

ԳԻՄԱՍ ԺԴ

*Թէ աներևոյթն ասի առեպ երևելի կացոյց զինքն՝ ոչ քան որում էն,
այլ քան տեսողացն առնելոյ ։*

*Այլ ոչ ընդ այն վարանել ինչ արժան է, զի անտեսա-
նելին բազում անգամ տեսանելի եղեալ ասի նախա-
հարց ։ Օ յի զոր օրինակ ձայնն որով ՚ի լուր գայ խմաստն
ներխոհական, ոչ է նոյն ինքն խմաստն, նոյնպէս կերպա-
րանն՝ յորում տեսաւ ասծ անտեսն ՚ի բնութենէ, ոչ էր այն՝
որ ինչ ինքն է ։ Վասկայն ՚ի մարմնեղէնն յայնմ կերպարանի
նա ինքն տեսանիւր, որպէս խմաստքն ՚ի հնչման անդ ձայ-
նի լինին լսելի. և զայս ոչ անգիտանայիմն նոքա՝ թէ ՚ի*

մարմնական կերպի անդ ոչ տեսանէին զինքնութեն նորա։ Այլ պաքէն Յովսէս խօսէր ընդ նմա՝ որ խօսէր առ նա, բայց տակաւին ասէր. «Լթե գոն չնորհս առաջի քո, ցոյց ինձ զանձն քո յայտնապէս»։ Ապա որոյ յորժամ հանդերձեալ էին աւանդիլ օրէնքն նմա ահաւորապէս ի պատգամս հրեշտակաց, ոչ միւսմ մարդոյ և կամ սակաւուց իմաստնոց, այլ ընդհանուր ազգի և անթիւ ժողովրդեան, յանդիման նոցուն իսկ գործեցան մեծամեծքն ի լերին անդ, ուր օրէնքն տուեալ լինէին ի ձեռն միոյ ուրուք՝ այլ բազմութեն տեսող լինէր իրացն զարհուրելեաց և՝ ահաւորաց։ Ո՛վ ոչ այսպէս հաւատաց Յովսէսի ժողովուրդն իսրայէլեան, զոր օրինակ լակեդեմոնացիք իւրեանցն Լիկուրգոսի՝ կարծեաւք Ապամաղդայ կամ Ապողոնի առնուալ զօրէնսն կարգեալս։ Վասնզի յորժամ օրէնքն տուեալ լինէին ժողովրդեան՝ որով միոյն այ պաշտեցողութեն լինէր հրամայեալ, ակն յայտնի նմին իսկ ժողովրդեան՝ որչափ ածեղէն տեսչութեն բաւական համարեր, երբեմն զարմանահրաշ նշանօք և շարժմամբք ի ձեռն հրեշտակի, զի յայտնի լինիցի Թէ ի տալ անդ զօրէնսն՝ արարածն արբանեակ արարչին։

ԳԼՈՒԽ ԺԴ

Թէ զի պարտ է պաշտել զնա՝ ոչ միայն սակս յաւիտենական բարեբարութեց, այլ և վասն ժամանակացդ. վասն զի ամենայն ինչ ի կարողութենէ տեսչութեն նոցա հաստատեալ կայ։

Այլ զոր օրինակ միոյ մարդոյ ուղիղ հրահանգութեն, նոյնպէս և մարդկան սեռի՝ որ ժողովրդոյ այ Ձանաչի, ընդ միջոցս լինն ժամանակաց աճմունն առնու, որպէս Թէ ըստ զարգանալ հասակաց, ի ժամանակաւորաց անտի յառաջելով խմանալ զյաւիտենականն, և յերևելեացն՝ զաներևոյթսն. մինչ զի նա և ի ժամանակին՝ յորում հա-

տուգումն երևելի խոստանայր նմա, միոյն այ պաշտօն ա-
ւանդեալ լինիլ. զի մի և սակս երկրաւոր բարեաց ան-
ցանելի կենացս՝ այլում հնազանդեսցին միտք մարդ-
կան՝ քան միայն այնմ որ է Ստմարիտ ստեղծիչ հոգւոյ և
տէր։ Այսն զի ամենայն ինչ զոր կարիցեն հրեշտակք
կամ մարդիկ տալ մարդկան, կայ յիշխանութեանէ միոյ ա-
մենակալի. և որ ոք ընդ այս թերահաւատիւ, մոլի։ Այս
և Պաղտինոս պզատոնեան՝ ի նուաճելն յաղագս նախախ-
նամութեանէ՝ ի վայելչութենէ ծաղկանց և սաղարթից իրաւա-
ցուցանէ՝ թէ տեսչութենէն՝ ի գերագոյնն այ, որոյ է իմա-
նալի և անճառ գեղեցկութենէ, գայ ժամանակ մինչ յերկ-
բաւորքս և՝ ի ստորինսս. պնդեալ՝ թէ անմարթ է և չնո-
չին իրաց գլխովին և արագավախճանից՝ այնպիսեաց հան-
դիպել քաջագէղ տեսակաց, թէ ոչ կերպարանեացն
յաւնմանէ, յորում կայ միայ տեսակ իմանալի և անփո-
փոխ, զամենայն ունող միանգամայն։ Ով սոյն և Այս տէրն
մեր յայտ առնէր յասելն. «Հայեցարուք՝ ի շուշանն վայ-
բենի, որպէս աճէ. ոչ ջանայ, և ոչ նիւթէ։ Այեմ ձեզ,
զի և ոչ Սողոմոն յամենայն՝ ի փառս իւրում զգեցաւ
իբրև զմի՝ ի նոցանէ։ Իսկ եթէ զխոտն՝ ի վայրի՝ որ այսօր
է և վաղիւ՝ ի հնոց արկանի, այծ այնպէս զգեցուցանէ,
որչափ և առաւել զձեզ, Թերահաւատք...» Դր. Ղ. 28։
Այս որոյ և կարի վայելչապէս մարդկայինս հոգի՝ որ դեռ
ախտացեալն է՝ ի ցանկութենէս երկրայինս, զոր ինչ միան-
գամ ախորժէ՝ ի ժամանակի զբարիս ստորինս և զեր-
կրաւորս՝ զպիտանիս անցաւոր կենացս, բայց խոտելիս առ
յաւէրժական բարեաց անտի կենացն, ոչ յայլմէ ակնկա-
լել բնաւորեցաւ՝ բայց միայն՝ ի միոյն այ. որպէս զի և՝ ի
սոցա ցանկութենէն մի օտարանայցէ յԱծպաշտութենէ, այլ
արհամարհելով զերկրաւորս և՝ ի բաց կալով՝ ի նոցանէ՝
հասանիցէ առ Ած։

ԳԼՈՒԽ ԺԶ

Յաղագս սպասաւորութ հրեշտակաց որոց՝ որով արբանեկին տեսչութն ոյ։

Ի՝ՅՁ, արդ նախախնամութենն ոյ կամք եղեն՝ այսպէս յարմարել զընթացս ժամանակաց, զի որպէս ասացիդ, և ընթեռնումք ի գործս առաքելոց է. 53. օրէնքն տացին պատգամաւորութբ հրեշտակաց՝ յաղագս պաշտամանն միոյ Աչմարտին ոյ. որովք և ինքն ՝ծ՝ ոչ ըստ իւրումն գոյի, որ միշտ անտեսական է եղծանելի աչաց, այլ ցուցակութբք ոմանբք յերևելիս գայցէ ի ձեռն ստեղծուածոյ արարչին ներքոյ անկելոյ, և մարդկօրէն բարբառով խօսիցի հեգենաբար ըստ անցանելի ամանակացն յեղանակի, այն որ յիւրական բնութենն ոչ մարմնապէս, այլ հոգեպէս, ոչ զգայաբար, այլ իմացականապէս, ոչ ժամանակաւ, այլ յաւերժաբար, ոչ խօսել սկսանի, և ոչ դադարէ. զոր առ նմա յստակ լսէն՝ ոչ մարմնոյ ունկամբ, այլ մտացն, պաշտօնեայք նորա և պատգամաւորք, որք ի նորա յանփոփոխ Աչմարտութենն վայելէն՝ անմահաբար երանեալք. և զոր լսէնն օրինակաւ ի միջ անձառելեաւ՝ թէ առնել ունին, և յայս երևելիքս և ի զգալիքս մատակարարել, կատարէն անյապաղ և անաչխատաբար։ Նակ այն օրէնք տուան բաշխմամբ ժամանակաց, ունելով նախ՝ որպէս ասացի, խոստմունս երկրաւորս, որ նշանակք էին յաւիտենականացն, և երևելի խորհրդածութբք կատարելին բազումք գնոյնս, այլ իմանալին սակաւք։ Նայց սակայն առ տեղեաւն բացայայտ վկայութբք և ձայնիցն և իրացն ամենայնի՝ պաշտօն միոյն ոյ հրամայեալ լինէր, ոչ եթէ միոյն ի խուժանէ դից, այլ այնմ՝ որ արար զերկինն և զերկիր, և զամենայն շունչ և զամենայն հոգի՝ որ չէ նա ինքն։ Ո՞վ նա արար զորս եղեն, և ի գոլն և ի բարւոքն գոլ՝ գնմանէ կախեալ կան յորմէ եղեն։

ԳԼՈՒԽ Ժ.Ջ.

Մինէ վասն արժանի լինելոյ կենաց յաւիտենից իւրէ պարտ հաւատալ առաւել այնց հրեշտակաց, որք անձանց կամին զպաշտօն յանձնավայելուչ, քան թէ այնոցիկ՝ որք պատուիրեն ոչ զինքեանս պաշտել, այլ զմի ած սուրբ կրօնիւք։

Ի զուն ուրեմն որոց հրեշտակաց՝ ի դէպ կարծիցեմք հաւատալ յաղագս երջանիկ և մշտակայ կենացն. այնոցիկ արդեօք՝ որք պաշտօն առնուլ կամին կրօնիցն կատարողութիւք, տօնս և զոհս անձանց պահանջելով՝ ի մահկանացուաց աստի, թէ այնոցիկ՝ որք զայս ամենայն պաշտօն՝ միոյն այ հանուրց արարչի ասեն պարտ գոլ և պաշտաշ, և նմա միայնոյ հատուցանել պատուիրեն չնմարիտ յանձպաշտութիւն. որոյ տեսլեամբ երանելիք են ինքեանք, և մեզ ևս լինել խոստանան։ Ա՝ ամն զի տեսութիւնն այ այնչափ գեղադիտակ է, և այնքան սիրոյ արժանաւոր, մինչև առանց այնր՝ թէ և այլովք համայն բարեօք Հոմայեաւորք իցէ և պատարուն, ոչ ինչ երկբայի Պղոտինոս՝ ամենաթըշուառ կոչել զայնպիսին։ Ի.րդ ուր ոմանք՝ ի հրեշտակաց՝ միում այ միայն, և ոմանք՝ ինքեանց պաշտօն տանել յորդորեն նշանօք զարմանալեօք, և այն զի առաջինքն արդելուն պաշտել զնաւ զյետինքս, և սորա ոչ իշխեն արդելուլ զպաշտօն միոյն, որոյ առաւել հաւատալ արժան իցէ՝ թող պատասխանի տացեն պղատոնականք, պատասխանի տացեն իմաստասէրք առհասարակ, զորոյ արասցեն յանձագործ համարեալ հմայք, կամ լաւ և՝ յիմար բըժժագործք. քանզի անուանս այսմ յաւէտ արժանաւորք են այն ամենայն արհեստք։ Ի՝ինչ բանիւ, աղէ արասցեն պատասխանի մարդիկ՝ եթէ արդեօք ողջիկ կայցէ ի նոսա մասամբ ինչ բանաւոր բնութեն զգայութեն որով հասեցանին. ասասցեն՝ միթէ այնոցիկ արժան իցէ զոհս մատուցանել՝ աստուածոց կամ հրեշտակաց, որք անձանց

հրամայեն զհեղ, եթէ նմա միայնում՝ որում հրամայեն գոքա, որք ոչ ինքեանց կամին, և ոչ այլոց։ Վեպէտ և ոչ նոքա, և ոչ սոքա գործելին ինչ զարմանալիս, այլ հրամայելին ևեթ, ոմանք՝ թէ ինքեանց լիցի նուիրագործուԹէ, և ոմանք՝ թէ մի լիցի բայց միոյն այ ևեթ, ապաքէն բարեպաշտուԹիւն ինքնին բաւական էր ընտրել՝ որ յայտ ցանել հրապոյր իցէ ամբարհաւաճուԹէ, և որ չէմարիտ կրօնիցն փոյթ։ Ոչ առաւել ասացից. եԹէ սոքա անձանց պաշտօնանխնդիրքս ևեթ առնէին զարմանագործուԹիս՝ ի գրգիռ մտաց մարդկան, իսկ որք զայդ արգելուն՝ պատուիրեալք միոյն այ ևեթ տանել պաշտօն, ոչ մի ինչ նշանս երևելիս գործել կամելին, արդարեւ ոչ ըստ տանել մարմնոյ՝ այլ ըստ մտացն կշռելոյ՝ զնոցայն վկայուԹիւն նախամեծար դնել արժան էր։ Իսկ ուր ոճ ինքնին արգոյ կամեցեալ ընծայեցուցանել զպատգամն չէմարտուԹիւն իւրոյ, իւրովքն անմահ պատգամաւորօք արար աբանելիս մեծամեծս, առաւել չգրիստս և բացափայլս՝ ոչ ի ցոյցս ինչ նոցա, այլ ի հանդէս իւրոյն մեծվայելչուԹիւն, որպէս զի մի զտկարամիտ բարեպաշտս ձգեսցեն ի սուտ կրօնս ինքնուրոյն պաշտամանցն խնդրողք՝ հրաշալիս իմն առ նոցա զգայուԹիս ցուցանելով, ոմ որ այնպէս անմտանալ յանձն առցէ, մինչև չընտրել զչէմարիտսն առ ի հետևելոյ՝ ուր առաւելագոյնս գտանէ առ ի զարմանալոյ։

Վասնզի աբանելիքն դիցն հեԹանոսաց՝ աւանդեալք ի վէպս նոցա, ոչ զայնս ասեմ որ ընդ ժամանակս ժամանակս ի գաղանի պատճառաց կենցաղականաց՝ Թէպէտ և ըստ կարգելոյ ծածկին տեսչուԹենն՝ հրաշալիս իմն պատահեն, որպիսի են կենդանեաց ծնունդք անսովորք, և կերպարանափոխ լինել երկնի և երկրի՝ մերթ յաչարուԹիւն ևեթ, և մերթ հարուածովք հանդերձ, զորս խաբեպատիր դիւացն նենգուԹիւն կարծեցուցանէ ի ներքս բերել կամ մեղմացուցանել դիւԹական հնարիւք, այլ զայն ասեմ նորագործուԹիս՝ որ յայտնապէս երևելին ներգործեալ ի զօրուԹէ և ի կարողուԹէ դիւաց. զոր օրինակ այն՝ Եթէ պատկերք առանին աստուածոց զորս Հնեաս ի գաղԹել

իւրում՝ ի Տրոյայ՝ տարաւ ընդ իւր, տեղւոջէ՝ի տեղի փո-
խաբերէին. և Թէ Տարկունիոս ածելեաւ կորեաց զյե-
սանն. կամ եալիդաւբեանն օձ ընկերեաց Ասկղեպիոսի՝ի
նաւարկելն՝ի Հռովմ. կամ նաեւն բարձող արձանի մերն
աստուածոց՝ անշարժելին՝ի բուռն ձգանաց բազում մար-
դոց և եզանց՝ լոկ կանացի գօտեաւ շարժեալ ձգեցաւ առ
՝ի վկայութի պարկեշտութեան նորա. կամ Թէ կոյս ոմն
վեստեան ամբաստանեալ վասն մարմնոյ պղծութե՛ն, ջուր
առեալ մաղով՝ի Տիբերեայ առանց վայթելոյ, նանրա-
ցոյց զկարծիսն: Զդէպ զայսոսիկ և զայլս սոյնպիսիս ոչ ի-
ւիք համեմատել արժան է ըստ զօրութե՛ն և ըստ մեծու-
թե՛ առ այնոսիկ զորս ընթեռնումք ներգործեալս՝ի ժո-
ղովրդեանն ՅԻ. Թող Թէ զայնոսիկ՝ որք օրինօք նոցունց
իսկ դիցապաշտ ազգաց գատեալք են արժանիք խափա-
նելոյ և պատուհասելոյ, այն են կախարդականքն կամ
դիւթականք. յորոց բազումք կերպարանօք ևեթ առ այս
խաղարկեալ պատրեն զմարդկան զգայարանս. որպէս այն
թէ՝ վայրաբերին զլուսին՝ ըստ Ուկիանոսի ասելոյն, մինչև
հուպ եկեալ ցօղեսցէ՝ի ստորակայ բոյսս: Ոչ ինչ ինչ
յայնցանէ թէպէտ և ըստ եղելութե՛ն նման իմն երևե-
ցին արարուածոց ՅԱծապաշտից, սակայն տարօրինակ դի-
տաւորութե՛ն չունին իւիք ընդ մերոցն՝ի համեմատութե՛
գալ: Ոչ ան զի բազումք՝ի նոցանէ այնչափ առաւել ան-
արժան են պաշտամանց, որչափ առաւել՝ի խնդիր են
այնց. իսկ մերովք պատարագօք մի ՅԱծ մեծարի, որ զինքն
անկարօտ ընաւ այնպիսեացն ցուցանէ՝ եթէ իւրոց գրոցն
վկայութէ, և եթէ յետ այնր խափանումն առնելոյ պա-
տարագաց զոհից: Ասսի եթէ հրեշտակք ոմանք զոհս
խնդրիցեն ինքեանց, արհամարհելիք են առ այնոքիւք՝
որք ոչ անձանց կամին, այլ ՅԱյլ բոլորից արարչին՝ որում
ծառայենն. ցուցեալ այսու՝ որչափ յատակամտաբար սի-
բեն զմեզ, յորժամ պատարագաւն հնազանդեցուցանել
զմեզ ախորժին՝ ոչ ինքեանց, այլ այմ՝ որոյ տեսուԹե՛ն
երջանկացեալք են, և առնա հասանել մեզ ցանկան՝ յոր-
մէ ինքեանք ոչ մեկնեցան երբեք: Ոչ եթէ հրեշտակք՝

որք ոչ միւսմ ՚այ, այլ խուժանի դիմ զոհս առնել Թեղա-
դրեն, Թէպէտ և անձանց չկամին՝ այլ աստուածոյն որոց
հրեշտակք են, այլ ՚ի վերայ այսը նախասէծար քան զնո-
սա են այնոքիկ՝ որք միւսմ ՚այ հրեշտակք գոլով, նմա միայ-
նում պատարագել հրամայեն, և ոչ այլում ումեք. ուր
առաջինքն ոչ արգելուն պատարագել այնմ միւսմ, որում
յետինքս հրամայեն։ Իսկ արդ եթէ, որ առաւել ամ-
բարհաւաճ խաբէութեն նոցա է նշանակ, ոչ բարիք իցեն,
և ոչ աստուածոց բարեաց հրեշտակք, այլ դիւք չարք, որք
ոչ զմիայն զբարձրեալն ՚ած կամին Թէ պաշտեսցի պատա-
րագօք, այլ զանձինս իւրեանց, զի՛նչ առաւել՝ բայց ըզ-
ձեռնտուութեի միոյն ՚այ հակառակ նոցա ընտրել արժան
է, որում ծառայեն հրեշտակք բարիք. որք ոչ անձանց
կամին զծառայելն պատարագօք, այլ նմա և եթէ՝ որում
մեք ինքնեին պարտիմք լինել պատարագ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ցաղագս տապանակի ուխտին, և զարմանալեաց Նշանացն՝ որ գործեցան
առ յայ ՚ի հանգէս զօրութեն օրինացն և աւետեաց։

Վ ԱՍՆ այսորիկ օրէնքն ՚այ աւանդեալք ՚ի պատգամս
հրեշտակաց, որով հրամայեցաւ զմի ՚ած աստուածոց պաշ-
տել սրբազան կրօնիւք, արգելեալ զայլոցն ամենեցուն,
զետեղեալ եղան ՚ի տապանակին, որ վկայութեն կոչե-
ցաւ. յայտ արարեալ անուամբս, Թէ ՚ած այս ամենայն
իրօք պաշտելին՝ ոչ եթէ ՚ի տեղւոջ շրջափակեալ ծած-
կի, յորժամ պատգամք նորա, և նշանք ինչ ՚ի զգայու-
թիւն մարդկան կատարէին ՚ի տեղւոյ տապանակին, այլ
զի վկայութիւնք կամաց նորա անտուստ արտայայտին։ Եւ
նոյն օրինք գրեալք ՚ի տախտակս քարեղինս՝ եղան, որ-
պէս ասացի, ՚ի տապանակի անդ. զոր ՚ի պանդխտութեն
յանապատին՝ կից ընդ խորանին որ նոյնպէս վկայութե

կոչեցաւ, բարձեալ կրկին քահանայք արժանաւոր մեծա-
բանօք. և կայր նշան, որ ՚ի տուէ ամէն երևէր, և ՚ի գի-
շերի փայլէր հրաձև. և յորժամ ամէն շարժէր, շարժէին
բանակքն. և ուր դադարէր, և բանակք զտեղի առնուին,
Նայց տուան և այլ մեծահրաշ վկայութիւնք օրինացն՝ բաց
յասացելոցս, և բաց ՚ի պատգամախօսութենէն որ ՚ի վայ-
րկ տապանակին արտաքս հնչէին. Վասզի ՚ի մնանել
նոցա յերկիրն աւետեաց՝ այն ինչ տապանակին անցանելոյ
ընդ Յորդանան, զետոյ առեալ գետոյն ըստ վերին մա-
սանց, և ներքնոցն ՚ի բաց խաղացեալ, ցամաք անցանելի
պատրաստեաց տապանակին և ժողովրդեանն. Նայս յոր-
ժամ ընդդիմակաց լինէր զառաջինն, այն քաղաք՝ որ
ըստ հեթանոսացն սովորութեանէ բազմաց աստուածոց էր
պաշտօնատար, ՚ի վայր հոսեցան պարիսպք նորա առանց
ուրուք մարտնչելոյ, առանց խոյոց մեքենայից բաղխելոյ,
եօթն անգամ գնովաւ շուրջ եկեալ տապանակին. Յետ
այսր մինչ յերկրի աւետեաց կային, և վասն մեղաց նոցա
՚ի թշնամեաց ձեռս անկաւ տապանակն, նորա որք առինն,
եդին զայն պատուով ՚ի տաճարի աստուածոյն՝ զոր առա-
ւել քան զայլսն պաշտէին, և զդուրսն փակեալ գնացին
՚ի բաց. այլ յերկրորդում աւուր բացեալ, գտին զար-
ձանն՝ առ որ յաղօթս կային, կործանեալ և խորտակեալ
չարաչար. մինչև ապա բռնադատեալ նոցա ՚ի նշանացն, և
անարգաբար հարուածեալք, դարձուցին անդրէն զտա-
պանակ վկայութենն ՚ի առ Ժողովուրդն՝ յորմէ առեալ
էին. Նայց անդրէն դարձն օրպէս. Եդին զայն ՚ի վե-
րայ սայլի լծելոյ յերինջս, յորոց ՚ի բաց քեցեալ զորթն
դիեցիկս, Թողին երթալ նոցա ընդ ՚ր և կամիցին, փոր-
ձել կամեցեալք այսու զնոյ զօրութին. Յլ երինջքն առանց
մարդոյ վարողի՝ անխոտոր կալեալք զճանապարհ առ եր-
բայեցիսն, և ոչ իւիք կասեալք ՚ի բառաչ որթուցն սո-
վելոց, նշան մեծ առաջի արարին պաշտելեացն իւրեանց,
Յսոցիկ նշանք և սքնպիսիք արդարեւ փոքունք են առ
Ռաւ. բայց յահացուցանել զմարդիկ և խրատել յօգուտ՝
մեծամեծք են. Վ ան զի եթէ խմաստասերք, և մանա-

*ամեն պղատոնականը՝ ուղղախոհը քան զայլսն համբա-
վեն, որպես փոքր մի յառաջ յիշատակեցի, այնու ևս ու-
սուցին թէ ածելոյն տեսչութիւն մատակարարին ստորինքս
և երկրածինը՝ վկայութիւն յորնամիս վայելչութեանն, որք
երևին ոչ միայն ի կենդանեաց մարմնոյս, այլ և ի գալա-
րիս և ի խոտս, որչափ և բացելոյ վկայք ածութեանն լինին
նշանքն՝ որ գործին անդէն ի քաղցրութեանն նորա, յորում
աւանդին այն կրծքք՝ որ արդելուն զնաւթրագործելն սրոց
և իցէ երկնայնոց և երկրայնոց և ստորնականաց, այլ հրա-
մայեն՝ միոյ այ ևեթ պատարագ մատուցանել, որ միայն
իւր սիրելոյին և սիրեցեալն լինելով երանելիս կացուցանէ,
որ և պատարագն այնոցիկ ժամանակակից սահմանէ,
յառաջ գուշակելով թէ ի լաւն փոխելոց են այնոքիկ ի
ձեռն առաւելագոյն քահանայի. և վկայէ՝ ոչնոցին ցան-
կալ, այլ զլաւագոյնսն նորոգ նշանակել. ոչ զի մեծամասնքն
ինքն պատուագրութիւնք այնպիսեաք, այլ զի մեք հրամա-
ռելոք ի սէր նորա՝ յորդորիցիմք ի պաշտել զնա, և ի նա
յարել. որ ոչ ի նորուն, այլ ի մեր օգուտ է։*

ԳԼՈՒԽ ԺԲ.

*Ընդդէմ այնոցին՝ որք չկամին հաւատալ գրոց եկեղեցւոյ յաղագս
պանչելեացն՝ որով հրահանգեաց ած զժողովուրդ իւր։*

Ա. Ցայ, ասիցէ ոք արդեօք. սուտ են պանչելիքդ այդ, որ-
պէս թէ ոչ արդեամբք գործելոք իցեն, այլ պատճառա-
նօք գրելոյ։ Ասի ոք զայդ ասիցէ, պնդեալ թէ յայսպիսիս
չէ պարտ բնաւ հաւատս ընծայել գրոց, ունի ասել և՝
թէ ոչ ինչ փոյթ է աստուածոց զմարդկանէ։ Այլ զի նո-
քա ոչ այլով իւիք յիւրեանցն պաշտօն հաւանեցուցին
զմարդիկ՝ բայց զարմանագործութիւնք, որոց վկայ է հե-
թանոսացն վիպասանութիւն, որովք աստուածքն առաւել
զարմանագործք ձևացան՝ քան եթէ բարեգործք։ Արդեն

վասն յառաջիկայ երկասիրութեանն մերոյ, յորոյ՝ի տասներորդն գիրս ձեռնարկեալ եմք, ոչ առ այնոսիկ վիճեցաք՝ որք կամ ուրանան բնաւ զգօրութիւն ածելոյն, և կամ համարիցին թէ զմարդկայնոցս ոչ փոյթ ինչ է նմա, այլ առ այնոսիկ՝ որք քան զնա մեր, որ է շինող սուրբ և փառաւորեալ քաղաքին՝ գերագոյն զիւրեանց աստուածսըն առդնեն. անգիտացեալք թէ նա ինքն է և երևելոյ այսմ աշխարհի և փոփոխելոյս՝ արարող աներևոյթն և անփոփոխ, և թէ երանելի կեանս պարգևէ իսկութիւն՝ ոչ յերեղելոց աստի յայսցանէ, այլ ինքնին իւրև։ ||| ասն զի Ա՛ղբ. մարտախօս մարգարէ նորա ասէ. “|նձ մերձենալ առ Աստ՝ բարի է,,։ ||| Ղ. ԽԲ. 28։ |՝յաքին խնդիր է առ իմաստասէրս յաղագս վախճանի գործոց բարեաց, յորոյ՝ի տասցուն կարգել օրէն է զգործս ամենայն։ |՝ըդ սա ոչ ասացայ՝ ինձ Աստուծոյ մեծութիւնք բարի է, կամ ծիրանեօք պերճանալ և գաւազանաւ, կամ պսակաւ ամբառնալ, կամ զոր իմաստասիրացս ոմանք ոչ ամաչեցին ասել՝ մարմնոյ հեշտութիւն ինձ բարի է, և կամ որպէս լաւագունացոյա նոցա թուեցաւ լաւ և աս ասել՝ ինձ հոգւոյ առաքինութիւն բարի է. այլ ասէ. “|նձ մերձենալ առ Աստ բարի է,,։ Այս ուսոյց մարգարէին նա ինքն, որում միայնոյ պատարագ մատուցանել իրատեն հրեշտակք սուրբք նորա՝ վկայութիւնք աբանելեաց. վասն որոյ ինքն իսկ մարգարէն եղև նորա պատարագ, որոյ հրոմն աննիւթականաւ բմբռնեալ բորբոքեր, և յանձառ՝ի նորա հոգիա գրկութիւն ձգիւր մաքուր ցանկութիւն։ |ակ արդ եթէ բազմաստուածութիւն պաշտօնեայք, որպիսիս և համարիցին զաստուածս իւրեանց, հաւատան աբանելեաց իմն առ՝ի նոցանէ գոգոյս եղելոց ըստ քաղաքական վիպացն, կամ մոգական գրովք, և կամ հմայականօք՝ ըստ որում պարկեշտագոյնս անուանեն, առիմէ չկամիցին հաւատալ լինելոյ աբանելեաց՝ ըստ այնոսիկ գրոց, որք այնչափ և արժանահաւատ են, որչափ՝ի վերայ ամենայնի մեծ է նա՝ որում միայնոյ հրամայեն ընծայել պատարագս։

ՎԱՅԵԼԱԿԱՆ ՀՈԳՈ

Յինչ հայելին երևելի պատարագին՝ զոր մով Ճշմարիտն ի այ անեղեւութի մատուցանել ուսուցանէ Ճշմարիտ ճանապարհութեին։

ՈՐՔ միանգամ կարծեն՝ թէ երևելի պատարագքս անկ են այլոց ատուածոց, իսկ անեղեւութեին ՝ի անեղեւոյթքն են վայելչականք, և մեծին՝ մեծագոյնք, և լաւին՝ լաւագոյնք, զոր օրինակ են նուէրքը մաքուր մտաց, և կամաց բարեաց, սոքա անգիտանան բնաւ՝ թէ երևելիքս են նշանակք անեղեւութեիցն այնոցիկ, որպէս ձայնատու խօսք՝ նշանակ իրաց են։ Այլ՝ի իրի զոր օրինակ յայտնեցէլն և յօրհնել՝ առ այն ուղղեմք զնշանակիչ բարբառսն, որուամ մատուցանեմք զ՝ի սրտի նշանակեալ ներգործուիս, սոյնպէս ՝ի պատարագելն՝ ոչ այլում ումեք գիտեմք մատուցանել զերևելի պատարագն, բայց այնմ որում ՝ի սիրտս մեր ունիմք մեք ինքնին լինել պատարագ անեղեւոյն։ Յայնժամ բաղկացուք մեզ լինին և իրախակիցք, և առ ՝ի նոյն ձեռնտուք մեզ ըստ իւրեանց կարողութէ հրեշտակք ամենայն, և վերին զօրութիւնք, բարութէ և ածպաշտուութէ հզօրագոյնք։ Իսկ եթէ նոցա կամէաք ընծայել զայսոսիկ, չառնուն յանձն. և յատաբիլ նոցա առ մարդիկ՝ թէ յանդիման երևեսցին, արգելուն բացէ ՝ի բացորպէս կան օրինակք ՝ի սուրբ գիրս։ Յով. ՃԲ. Ա։ Ի՝ր ժան Համարեցան ոմանք պատիւ գնել հրեշտակաց՝ երկրպագութէ, կամ նուիրագործելով, որ այ է վայելչական. բայց արգելան ՝ի նոցա խրատուէն, և հրամայեցան՝ այնմ ևեթ պատուադիր լինել՝ ուր օրէն Համարեցան։ Հրեշտակաց սրբոց նմանողք եղեն և ՝ի մարդկանէ սուրբք այ. քանզի ուր Պօղոս և Բառնաբաս բժշկութէն արարին աքանչելեօք ՝ի Լիկաւոնիա, աստուածս ոմանս զնոսա կարծելով Լիկաւոնացւոց՝ անդէն զոհս կամէին մատուցանել նոցա. այլ նոքա դադարեցուցին և զիրսն խոնարհ ածպաշ-

տուԹիւն, և քարոզեցին մարդկանն զնա՝ յոր հաւատայցեն, Վասնզի և ոգիքն դաւանաւնք ոչ վասն այլոց իրիք լինելեանս գրաւել կամին ամբարհաւանաւԹիւն զպաշտամունն, բայց զի գիտակ են՝ Ձնմարտին այ ևԷԹ վայել չականս լինել։ Այս ոչ որպէս Պորփիւր ասէ, և ոմանք կարծեն, Ի ձենձերս մեռելոտւոյն հեշտանան նոքա, այլ ընդ պատուն ածական. գոյ նոցա յաձախուԹիւն ձենձերոց ամենայն ուրեք. և ԹԷ աւելի ևս ցանկանային, կարող էին անձամբ անձին զոհել։ Վասն որոյ ոգիքն այսոքիւ՝ ածականուԹիւնք նախանձաւորք՝ ոչ ևԹԷ ընդ ծուխս մարմնոց զուարձանան, այլ ընդ անձն ողջաւորին. որպէս զի պատրեալ զնա և նուաձեալ տիրեսցեն, արգելեալ զառ Ձնմարիտն ածն զձանապարհ, և զի մի լեցի մարդն պատարագ այ, յորժամ ընծայի այլում ամենայնի բաց յայ։

ԳԼՈՒԽ Ի

Ցաղագս գերագոյն և Ձնմարիտ պատարագի, որ եղև նա ինքն միջնորդն այ և մարդկան։

ՎԱՍՆ այսորիկ միջնորդն այն Ձնմարիտ, որ զծառայի առեալ կերպարանս՝ եղև միջնորդ այ և մարդկան, մարդն Վէս ՅԻս, ԹԷպէտ և ըստ այ կերպարանին պատարագ ընդունի ընդ հօր, համագոյնմին ածն եղելով, այլ՝ի կերպարան ծառայի առաւել կամեցաւ լինել պատարագ՝ քան ընդունել. զի մի ոք յայսմ պատճառէ արժան համարիցի պատարագաբեր լինել որմէ և իցէ ստեղծուածոյ։ Այս ահա այսուիկ քահանայ է նա, ինքն մատուցող, և ինքն մատուցեալ. զորոյ զօրըստօրէ խորհուրդ կամեցաւ՝ի պատարագ եկեղեցւոյ հաստատել. և զի եկեղեցի մարմին է այնր գլխոյ, ուսանի զինքն ընդունմա մատուցանել։ Այսմ Ձնմարիտ պատարագի բազմապատիկ և ազգի ազգի նշանակք էին նախնի պատարագք նահապետաց սրբոց, երբ

մինս այս բազում իրօք նշանակեսցի, իբրու բազում ձայնելոք մի ինչ ասացեալ, զի առանց ձանձրանալոյ մեծապէս արգոյ լինիցի։ Ա. յամ գերագոյն և Հնմարիտ պատարագի տեղի ետուն համօրէն պատարագք Թարմատարք։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Որով օրինակաւ իշխանութեանն տուաւ գիւաց՝ առ ի փառաւոր առնելոյ զսուրբս վճռամբերութիւն. որք յաղթեցին այսոցն օգոյ՝ ոչ յաշտ առնելով նոցա, այլ հաստատուն կալով միաբով յՅն։

Ի ՀԱՄԱՌՕՏԵԼ, ժամանակացն սահմանելոց՝ իշխանութեանն խոկ՝ որ Թոյլ տուեալ էր դիւաց, որով որսացեալ զմարդիկ՝ Թշնամութեանս յուզէին բռնաւորականս հակառակ քաղաքին այ, պատարագս անձանց ոչ միայն ի մատուցողացն ընդունելով, և ի չժարեալոցն պահանջելով, այլ և ի չկամեցողացն բռնաղբօսելով հալածանօք, այն իշխանութեանն ասեմ՝ ոչ միայն չէ այնուհետև ձեռասակար, այլ օգտաբար ևս գտանի եկեղեցւոյ, որպէս զի յցցի Թիւ սրբոց վկայից ըստ գրոյն. Յայտ. ե. 11. զորս քաղաքն այ այնչափ առաւել ալերձս և մեծարոյ քաղաքացիս համարի, որչափ հզօրագոյնս հակառակ կան մեղացն ամբարտաւանեալ արեամբ չափ. մինչ զի և շքեղագոյն անուամբ՝ դիւացաղանս մեր զնոսա կոչէաք, եթէ նեղիր զայդ եկեղեցիա կան խօսիցն սովորութեանն. Վասնզի ըստ յունին զայդ անուն Նռօս կամ Հերոս ասեն առեալ ի Հերայ կամ Յերէկ յորմէ մին յորդւոց Նորա Հերոս կոչեցեալ իցէ ըստ հելլէն առասպելին, յայն ակնարկելով Թէ Հերայի կայան է օդն, ուր ասեն բնակել դիւացազանց ընդ դևս, և սովին աստուածք յորջորջելով զՀոգիս արդիւնական մեռելոցն։ Այլ՝ի հակառակէն՝ զմեր մարտիրոսս կոչէաք դիւացազունս, եթէ որպէս ասացի, յանձն առնոյր եկեղեցւոյ խօսից սովորութեանն. իբր ոչ եթէ հաղորդուն է նոցա ընդ դիւաց

յոգս, պէտք նոցունց իսկ դիւաց՝ որ իշխանութիւնք են օդայինք՝ յաղթեցին, որով և օդոյ գլխովին Հերայ կամ Ի.յեր կոչեցելոյ իւիք խարանօք. զոր Աստուածային արդեօք Թէնաւի առաքինութեց ձեւացուցանեն քերթողք, որպէս չարահնող որոց յերկինս դիմեն արանց քաջաց. Ի.յլ սակայն այնպիսւոյն տակաւին ցնորից անարգաբար անսայ Ալ իրգիլիոս. քանզի նմին իսկ Հերայի տայ ասել, "Յաղթիմ յ,նեասայ ... Ի.այց դնէ և ի բերան Հեղենոսի՝ խրատել զ,նէաս իբրու երկիւղած խորհրդով.

"Ա,րգեա Հերայ ուխտ կամակար.
Ալ՝ Եծ դշխոյին ընծայատար,
Ողբանօք գյաղթանակ տար ... յ,նէաս. Է. Ը.

Ի.ստ այսմ կարծեաց և Պորփիւր, Թէ և ոչ իւրն հաւատնուէն՝ բան Թէ այլոց, ասէ Թէ Ի.աստուածն բարի ոչ գայ ի մարդ, Թէ նախ ոչ հաշտեսցի չարն. իբրև Թէ ըստ նոցա կարծելոյն՝ չար աստուածք հզօրագոյն քան զբարիսն իցեն. այնու զի չարքն խափանիչք լինին ձեռնտուութէ բարեաց՝ Թէ ոչ հաշտեալք տայցեն նոցա տեղի. և յոչ կամել չարացն՝ բարիք չկարեն ինչ օգտել. իսկ չարք միտսել կարող են, անկարացեալ բարեացն զդէմ ունել նոցա. Ալ այս Ճանապարհ է Ձմարիտ և արդարեւ սուրբ կրօնիցն. ոչ այսպէս ինչ յաղթանակեն մարտիրոսք մեր ի վերայ Հերայ օդային իշխանութեցն ասեմ; չարահնեղոցն ընդ առաքինի քինի քաջուիս ճաճանալտից. Ալ բնաւ դիւցազունք մեր, Թէ օրէն էր ասել, ողբալոր ընծայիւք յաղթեն Հերայ, այլ ճաճանովքն առաքինութիք. Ի.անդի և Ալկիսիոն Ճահոզադոյն ևս ափրիկեցի վերակոչեցաւ՝ քաջութէ նուաճեալ զ'ափրիկէ, քան եԹէ պարգևօք ցածուցեալ էր զԹէնաւիս առ ի խնայելոյ նմա.

ԳԼՈՒԽ ԻԲ

Ի. Լեզ Լչխանուեթի սրբոյն Հակառակ գիւաց, և ուսոյ Ճշմարիտ մաքրութի սրսի։

ԱՐՔ Ճշմարիտ ՝ծծպաշտուեթէ են մարդիկ ըստ ՝այ, զիշ խանն օդոց զՀՇտամի և զերկրակ ՝ծծպաշտուեանն՝ երդ ՝ծեցուցանելով վարեն ՝ի բաց, և ոչ հաշտեցուցանելով. և բոլորից նորա դիմամարտ փորձուեանցն յաղեն՝ աղօթելով ոչ առ նա, այլ առ ՝ած իւրեանց հակառակ նմա. քանզի նա ոչ այլով ինչ յաղթէ ումեք կամ տի բանայ՝ բայց կցորդուեթէ մեղաց։ Վ՚ան որոյ և ինքն յաղ թի անուամբ նորա՝ որ զմարդն առընկալաւ, և առանց մեղայ վարեցաւ. որպէս զի նորին քահանայուեթէ և պա տարագաւ Թողուեթէ մեղաց լինիցի. այն է միջնորդ ՝այ և մարդկան՝ մարդն Վ՚ա Հ՝ա, որով սրբուեթէ մեղաց արա րեալն տայ մեզ հաշտիլ ընդ ՝այ։ Վ՚ան զի ոչ այլով իւիք բայց մեղօք որոշիմք յ՝այ. որոյ մաքրուեթէ ՝ի կեանս յայս ոչ մերով զօրուեթէ կատարի, այլ յողորմուեթէն ՝այ. նորա ներելոյն, և ոչ մերոյանն կարողուեթէ. քանզի և այն գոյն զօրուեթէ՝ որ մերս ասի, ՝ի նորա բարերարուեթէ ընորհեալ է մեզ. ապա Թէ ոչ՝ յանձնապաստանուեթէ պան ծայաք յանձինս ՝ի մարմնի ասա, Թէ ոչ նորա ներողուեթէն ապրեաք ընդ Հոլանեաւ նորա։ Վ՚ապա ուրեմն յայն սակս ՝ի ձեռն միջնորդին պարգևեցան մեզ ընորհք, որպէս զի մարմնով մեզաց աղտեղեալքս՝ մաքրիցիմք ՝ի նմանուեթէ մարմնոյ մեզաց։ Վ՚այս ընորհք ՝այ, որով յայտնի առնէ ՝ի մեզ զմեծ զիւր ողորմուեթէ, կատարեալ զմեզ ՝ի կեանս յայս հաւատովք, և յետ կենաց առաջնորդեսցէ մեզ յամենայնի կատարումն տեսլեամբ նորին անայլայլակ Ճշմարտուեթէն։

ԳԼՈՒԽ ԻԹ

Զորմէ պատճառաց հանաքին պղատոնականք զոգւոյն մաքրութիւն։

Ասէ դարձեալ Պորփիւր, թէ յաճախեղէն պատգամաց մերոց ազդեցաւ, ոչ սրբիլ մեզ քաւչականօք ինչ լուանոյ և արեւու. որով յայտ արար թէ չէ սրբիլ մարդոյ և ոչ միոյ ուրուք յաստուածոյն քաւութիւն. քանզի ոչ այլոյ քաւութիւն առնիցէ արդեօք մաքրութիւն, եթէ ոչ զօրէն յայդ լուսին և արեւ՝ գերագոյն կարծեցեալքն յերկնային աստուածս։ Ի վերայ բերէ ասել, թէ՝ի նոյն պատգամսդ յայտնեալ է՝ զի պատճառքն ևեթ մաքրել կարող են. զգուշացեալ զի մի յասելոյ անտի՝ անզօր լինել՝ի մաքրուի լուանի՝ և արեւու, կարծեսցի թէ՝ի հասարակական աստուածոյն ոք բաւական իցէ առ՝ի սրբել. և զի պղատոնական է այրն, գիտեմք զի՛րս ասէ պատճառս կամ սկզբունս. քանզի ՚ած հայր ասէ և ՚ած որդի, զոր անուանէ միտք հայրական. իսկ վասն Հոգւոյն սրբոյ կամ լռէ բնաւ, կամ չասէ ինչ յայտնի. այլ միջին զոր ընդ նոսա ասէ՝ ոչ գիտեմ զո՞ւ։ Վասն զի եթէ ըստ մտաց Պղոտինեայ՚՚ի ՚ձառել իւրում յաղագս երից գլխաւոր գոյացուէց, երրորդ իմանայ և սա զՀոգւոյս բնութիւն, ոչ արդեօք ասէր միջին ընդ նոսա, այսինքն է ընդ հայր և ընդ որդի. զի Պղոտինոս զբնութիւն Հոգւոյ յետոյ դասէ քան զՀայրականն միտս. իսկ Պորփիւր միջին ասէ լինել, ոչ յետոյ՝ այլ ընդ միջ դասէ։ Արդ զոր նայն ասաց որպէս կարաց կամ՝ որպէս կամեցաւ, մեք ասեմք Հոգի սուրբ, ոչ հօր միայն և ոչ որդւոյ միայն, այլ երկաքանչիւրոցն Հոգի։ Վասնզի իմաստասէրքդ համարձակախօսք են՝ի բաւից կիրառութիւն, և՝ի դժուարիմաց խնդիրս իսկ ոչ խղձին բարբառել զանախորժելին երկիւղած լեսելեաց. իսկ մեզ արժան է կանոն դնել բանի, զի մի անխորութիւն ձայնիցն տայցէ զանարժան կարծիս յիրս անդ նշանակեալս ձայնիւք։

ԳԼՈՒԽ ԻԴ

Ցաղագս մոյ և Ճշմարիտ սկզբան, որ միայն սրբէ զմարդոյ բնութէն և նորոգէ։

ՅԱՅՍ արդ մեք ոչ ասեմք երկուս կամ երիս սկզբունս՝ ի խօսել մեր զայ. որպէս և ոչ երկուս կամ երիս աստուածս ասել սրինն է, թէպէտ և խօսելով զմոյ մոյ ի նոցանէ, եթէ զՀօրէ, եթէ զորդւոյ, եթէ զՀոգւոյն սրբոյ, զիւրաքանչիւր զնոսա ած խոստովանիմք։ Այլ ոչ որպէս սաբելիանոս աղանդաւորքն՝ ասեմք թէ նոյնն Հայր իցէ՝ որ է որդի, և նոյն Հոգի սուրբ իցէ՝ որ է Հայր և որդի. այլ զՀայրն ասեմք որդւոյ Հայր, և զորդին՝ Հօր որդի, և զսուրբ Հոգին՝ Հօր և որդւոյ ոչ Հայր լինել, և ոչ որդի։ Արդ Ճշմարտութիւնն ասացաւ յիմաստասիրացդ՝ թէ ի սկզբանէն էր սրբի մարդ, թէպէտ և դորա բազմաւորաբար ասացին՝ սկզբունս։ Այլ Պօրփիւր պաշտօնատար չարանախանձ իշխանութեանն, ընդ որս թէ և ամաչէր, այլ զանգիտէր երգիծանել համարձակ, ոչ յանձն առ՝ սկիզբն խոստովանել զՀա զնոր, որոյ մարդանալովն սրբիմք։ Ոչ ան զի անգոնեաց զնա յաղագս մարմնոյն՝ զոր ընկալաւ Հա ի պատարագ սրբութեանն մերոյ. ոչ ի միտ առեալ զխորհուրդն մեծ առ իւրոյ ամբարտաւանութենն, զոր իւրոմն խոնարհութեանն տապալեաց միջնորդն Ճշմարիտ և բարեխնամող, երևեցուցեալ զանձն առ մահկանացուս ի նոյն մահկանացու պայմանի, որում անունակք եղեալ միջնորդքն չարանիւթք և պատրիչք՝ ամբարհաւանձիկն, և ողոր մելի մարդկան՝ իբր անմահք մահկանացուաց խոստանային օգնութեի խաբեպատիր։ Այլ բարերարն և Ճշմարիտ միջնորդն եցոյց, թէ մեզքն է չար, և ոչ եթէ մարմնոյ գոյացուի կամ բնութեի, զոր և մարթ եղև առնուլ Հոգւովն մարդկայնով առանց մեղաց, և ունել յանձին, և ի բաց դնել մահկանացուն, և ի լուսաւոր անդր փոխել յարութեն։

և ԹԷ 'ի մահուանէ անտի որ պատուհաս իակ էր մեղաց, զոր և ինքն առանց մեղաց յանձին կալաւ վասն մեր, չէ պարտ խուսափիլ մեղանչելով, այլ յաւէտ յանձն առնուլ սակս արդարութեան, եթէ դէպն տայցէ։ Վասն զի այնու եղև նման լուծանել զմեզ, կամ հատուցումն առնել վասն մեղաց, վասն զի մեռաւ, այլ ոչ առ իւր մեղս։ Օ՜ սա պղատոնականն այն անգիտացաւ սկիզբն լինել. ապա ԹԷ ոչ՝ Ձանաչէր զնա և քաւիչ։ Օ՜ ի ոչ եթէ մարմինն կամ հոգին մարդկային է սկիզբն, այլ՝ Բանն, որով ամենայն ինչ եղև. վասն որոյ ոչ մարմինն սրբէ ինքեամբ՝ այլ Բանիւն՝ յորմէ առաւ. իբր զի " Բանն մարմին եղև, և բնակեաց 'ի մեզ ,, ։ Վանգղ և 'ի խօսել իւրում յաղագս խորհրդոյ կան Ձաշակման մարմնոյ իւրոյ, իբրև անիմացքն գժգմբնեալք 'ի բաց գնային ասելով, " Խիստ է բանդ, ո՞ կարէ լսել դմա ,, , պատասխանի արար առ նոսայեալսն. " Ո՞ գին է կենդանարար. մարմին Ինչ ոչ օգնէ ,, ։ Այս ուրեմն բուն սկիզբն առեցելով հոգւով և մարմնով սրբեաց և զոգի և զմարմին հաւատացելոցն. սորին վասն 'ի Հարցաւ նել Երեից, ո՞ իցէ Ինքն, ետ պատասխանի. Եմ Նախն, կամ սկիզբն. Յհ. ը. 28։ Օ՜ որ մեզ մարմնաւորեալ և տկարք, մեղօք վարակեալք, և 'ի խաւար անգիտութեան պատահեալք՝ ոչ կարէաք 'ի միտ առնուլ, ԹԷ ոչ 'ի նմանէ մաքրեալք էաք և բժշկեալք, այնու որ էաքն, և ոչ էաք. քանզի մարդիկ էաք, բայց արդարք էաք ոչ։ Իակ 'ի նորա մարմնաւորութենէն՝ մարդկային բնութիւն էր, բայց արդար՝ և ոչ մեղանչական։ Այս է միջնորդութիւն, որ ձեռն կալ կառեաց զլորելոց և անկելոց. սա է զաւակն կարգեալ Հրեշտակօք, որոց պատգամաւորութիւք տուան օրէնքն, որով հրամայիւր պաշտել զմի Ած, և գալստա այսր միջնորդի լինէր խոստացեալ։

ՎԻՅԻՒ ԻԹ

ՅԱՆԱՅն սուրբք՝ որ ընդ օրինօքն, և որ ի նախնագոյն գալս, խորհրդով սրբութեանն և հաւատովք Քրիստոսի արդարացան։

ՎՅՍՐ խորհրդոյ հաւատովք կարողացան մանրբիլ և արդարքն առաջինք քաղաքավարեալք ածապաշտ կենօքս, ոչ միայն յառաջ քան զօրինացն տուչութեանն առ Ժողովուրդն Եբրայական, զի և առ նոսա ոչ պակասեաց քարոզութիւն յայ, կամ՝ ի հրեշտակաց, այլ և առ ժամանակօք օրինացն, թէպետ և յառաջ օրինակի հոգևորականացն թուէր այն բերել խոստմունս մարմնականս. այլ վասն իսկ կատակ հինն ասացաւ։ Վանդի էին և յայնժամ մարգարէք, որովք՝ որպէս և հրեշտակօք, քարոզեալ լինէր նոյն խոստումն. և մի եր՝ի թուոյ նոցա Վաւիթ, զորոյ զվէճն զայն և զածէ՝ զէն առած՝ ի մէջ առի փորը մի յառաջ յաղագս վախձանի բարեաց մարդկան. «Լսեմ մերձենալ առ ածն բարի է»։ Աղ։ Եբ։ Վ։ Ահա՝ ի նմին սաղմոսի ըս բաւականին բացատրի զանազանուի երկուց կտակարանացն՝ որ ասէն հինն և նորն։ Վանդի սակս մարմնական և երկրաւոր խոստմանցն՝ որովք զամբարիշտն բարգաւաճեալս տեսանէր, ասէ թէ փորը մի և սա սատանեալ էին ոտք իւր, սակաւիկ մի և գայթակղեալ էին գնացք. որպէս թէ ինքն զուր ուրեմն ծառայեալ էր այ, տեսեալ՝ զի երջանկուէն որում ինքն ակն ունէր առ յայ, յաջողեալ է յարհամարհողս նորա. և թէ ինքն գուն գործէր իմանալ ղիրացս զպատճառսմինչև մտանել նիւթ՝ ի սրբութեան այ, և՝ ի միտ առնուցու զկատարած նոցա որք երջանիկք կարծէին առ թիւրեալսն։ Յայնժամ գիտաց ասլա՝ զի որով ամբարտաւանեցանին, որպէս ասէ, տարագիր եղէն, կործանեցան և սատակեցան վասն անօրէնութեան իւրեանց. և քովանդակ զեղուծն ժամանակեայ երջանկուէն եղև նոցա իբրև երազ զարթուցելոյ, որ յանկարծ ունայնացեալ զանձն գտանէ յորոց երազէրն

'ի մտախաբ զուարճութիւն։ Եւ քանզի յերկրի ասա, կամ յերկրաւորս քաղաքի առ մեծս ինն գրեին զանձինս, ասէ. " Տէր, 'ի քաղաքի քում զպատկերս նոցա անարգեսցես ,, ։ Ա՛յլ թէ 'ի նորա օգուտ գործի և այս, զերկրաւոր բարիս անգամ 'ի միոյն այ Աշմարտէ Աեթ խընդրել յորոյ իշխանութենէ է ամենայն, յայտնի ցուցանէ յաւելս. " Արդէս զանասուն համարեցայ առաջի քո. և ես յամենայն ժամ ընդ քեզ եմ ,, ։ Ա՛րդ՝ որպէս անասուն, այս է՝ ոչ խմացող. քանզի ինձ պարտ էր զայն ինչ առ 'ի քէն հայցել յորում հասարակորդ ընդ իս չկարիցեն լինել ամբարիշտք. և ոչ զայն՝ որով Աոխացեալս զնոսա տեսանելով, կարծէի որպէս զուր ինչ լինել զիմ առ քեզ ծառայութենէ. իբր զի և նոքա որ չկամէին ծառայել քեզ, ունէին զնոյնս։ Ա՛ակաս 'ի վերայ այսր՝ ես յամենայն ժամ ընդ քեզ եմ. զի և 'ի ցանկութէ այնպիսի իրաց ոչ խնդրեցի աստուածս օտարս ։ Ա՛ն որոյ զՀետ բերէ. " Ա՛ալաբ զաջոյ ձեռանէ իմմէ. 'ի խորհուրդս քո առաջնորդեցեր ինձ. և փառաք ընկալար զիս ,,. իբրև Թէ ձախոյ կողմանն են ամենայնքն յորս յղփացեալս տեսանելով զամբարիշտս, փոքրու ինն գայթակղեր։ " Օ՛ ինչ կայ ինձ բնաւ յերկինս. կամ'ի քէն զինչ ևս խնդրեցից յերկրի ,, ։ Ա՛ատամբութիւն առնէ անձինն, և ապաշաւէ յիւրաւի. զի ունելով յերկինս զմեծ զայն բարի, զոր յետոյ ուրեմն ծանեաւ, զանցաւ նելի իրս, զլուծանելին զայն և զկաւեղէն գոգցես երջանկութէն խնդրեր յայ իւրմէ յերկրի ասա ։ " Ա՛ուաղեաց, ասէ, սիրա իմ և մարմին իմ, ձեռ սրտի իմոյ ,. յայտ է Թէ գովելի նուաղմամբ 'ի ստորայնոցս առ գերակայն։ Ա՛ւս ոմի յայլում սաղմոսի ասի. " Ճանկայ և փափաքէ անձն իմ 'ի գաւիթս քո ,. և յայլում դարձեալ. " Ա՛արօտացաւ անձն իմ 'ի փրկութենէ քո ։ Ա՛յլ զի յետ խօսելոյ զերկոցունցն՝ զնուաղելոյ սրտին և մարմնոյ, ոչ էած 'ի վերայ, ձեռ սրտի և մարմնոյ իմոյ, այլ Թէ ձեռ սրտի իմոյ, վասն զի սրտիւն մաքրի մարմին. ըստ որում ձերն ասէ. " Սըրբեսա նախ զնեղբինն, զի լինիցի և արտաքինն սուրբ ,, ։ Ա՛րդ բաժին իւր զնա ինքն զձեռ ասէ, և ոչ զառ 'ի նմանէ

ինչ իցս . “ Ո՞չ , ասէ , սրտի իմոյ , բաժին իմ ՚ած յաւիտեան ,, : Ի բազմատեսակ իրս՝ զոր մարդիկ ընտրեն , նա զՅաձեցաւ ընտրել : “ Ո՞հաւասիկ ասէ , ոյք հեռի ա բարին զանձինս իւրեանց ՚ի քէն՝ կորիցեն . սատակեսցես զամենեսեան՝ որ ապստամբ եղեն ՚ի քէն ,, . այս է՝ որ յաւուրս բազումս եղեն անձնատուր : Ո՞չ հետ յարի ապա և այն՝ ոյր վասն այլ բանք սաղմոսիդ ասացան . “ Ո՞նձ մերձենալ առ ՚ած բարի է ,, . ոչ հեռի առնիլ ՚ի նմանէ , կամ ապստամբ լինել : Ո՞րդ մերձենալն առ ՚ած յայնժամ կատարեալ լինիցի , յորժամ բովանդակ որ ազատելոցն է՝ ազատեսցի : Ո՞յր յայժմուս լինի որ զՀեան գայ . “ Ո՞նել առ տէր գոյս իմ ,, . զի “ Ոյս տեսանել չէ յոյս . զի զոր տեսանէ ոք , զի՞ և յուսայ , ասէ առաքեալ : Ո՞պա եթէ զոր ոչն տեսանեմք՝ յուսամք , համբերութիւ՛ ակն ունիմք ,, . Հ֊ . Ը . 24 : Ո՞ովքին յուսով ամրացեալք , արասցուք զոր վէրինն գայ , լինելով և մեր ըստ մերում պայմանի՝ հրեշտակք ՚ոյ , պատգամաւորքնորա , աւետարանել վկայն նորա և մեծացուցանել զփառս և զընորհս : Ո՞ան որոյ յետ ասելոյն՝ դնել առ տէր գոյս իմ , յաւելու . “ Պատմել զամենայն օրհնութիւնս քո ՚ի դրունս դստերՈ՞երնի ,, : Ո՞յս է ահա փառաւորեալ քաղաքն ՚ոյ . սա է՝ որ Ճանաչէ և պաշտէ զնի ՚ած . զսա հրեշտակքն սուրբք աւետարանեցին . որք զմեզ հրաւիրեցին ՚ի նորայն կցորդութիւ՛ , քաղաքակիցս իւրեանց լինել կամեցեալք . որոց չէ Յաձոյ՝ պաշտել մեզ զնոսա իբրև աստուածս մեր , այլ՝ զ՚ած նոցա և զմեր միաբանութիւ՛ամբ . և ոչ նոցունց ընծայել պատարագս , այլ կից ընդ նոսա լինել մեզ պատարագ ՚ոյ : Ո՞ան որոյ ոչ օր՝ որ զայսոսիկ ՚ի միտ առնուցու ազատ ՚ի վատախորհուրդն յամառութիւ՛ , երկբայեսցէ բնաւ թէ երջանիկքն և անմահք առՀաստատակ ընդ մեզ ոչ յաչալինն , զի թէ յաչագլեին , երջանիկ ոչ և էին , այլ մանաւանդ սիրեն զմեզ՝ լինել և մեզ ընդ նոսա երջանիկս . առաւել ձեռն տան , առաւել օգնեն յորժամ զի ՚ած ընդ նոսա պաշտեմք՝ զՀայր և զորդի և զսուրբ Հոգի , քան եթէ զնոսին ինքեանս պաշտեաք պատարագօք :

ԳԼՈՒԽ Ի.Ը.

Յաղագս յոդդողդումն Պորփիւրի՝ ի տատանել նորա ընդ խոստովանութիւն Աչմարեան ՅԵ, և ընդ պաշտան գիւաց։

ՀԱՅՏԵՄ զիարդ՝ որպէս ինձ թուի, ակնածեր Պորփիւր՝ ի բարեկամաց իւրոց կիւսահմայից։ Վ՚ասն զի ինքն զայսոսիկ զՅածայինսն գիտեր փորր՝ի շատ, բայց ոչ համաձակ պաշտպաներ հակառակ բազմածութեանն։ Զ՚ի ասաց՝ թէ ոմանք՝ի հրեշտակաց յերկինից վայրաթերեալք ծանուցանեն Յածագործ անուանեալ հմայից զՅածայինսն. և թէ են այլք՝ որք յերկրի յայտնեն զՀօրն գաղտնիս, զբարձրութիւն նորա և զխորութիւն։ Վ՚րդ էցէ արժան կարծել, թէ հրեշտակքդ այդպիսիկ՝ որոց գործ է յայտնել զՀօրն կամս, կամիցին այլում Յառայանալ մեզ՝ բայց այնմ ևեթ, զոր զկամսն պատմեն. նմին իսկ ազդ առնել՝ պղատոնական գոլով և ինքն, թէ առաւել նմանել նոցա պարտ է՝ քան կարդալ։ Վ՚ասպա չիք երկնչել թէ զայրանայցեն ինչ ընդ մեզ անմահքն այնոքիկ և երանելիք՝ միայն ՅՈ հնազանդեալքն, եթէ ոչ ընծայիցեմք նոցա պատարագս։ Վ՚ասն զի զոր միայն ՅՈ ևեթ գիտեն զոլ վայելական, յոր և ինքեանք միացեալ երանելիք են, քաջ հաւաստի է թէ չկամին՝ զի այնպիսի ինչ ընծայեացի ինքեանց, ոչ խորհրդաբեր օրինակաւ, և ոչ իրօքն նշանակելով յօրինական։ Վ՚ասն զի այդ գոլոզոլի՝ ամբարտաւանից և եղկելեաց, յորոց կարի այլազգի է երկիւղածութիւն հնազանդելոցն ՅՈ, որք՝ի նա յարելոյն միայն երանելիք են. և առ՝ի նոյն բարիս հասանելոյ մեզ ևս ունին օժանդակել անկեղծ սիրով, ոչ յանդգնեալք ընդ ինքեամբք զմեզ նուաճել, այլ զի զայն պատմեսցեն մեզ, որով լինիցիմք նոցա միաբան կցորդականիք։ Զ՚ի այլ վկեղծոտիս, ո՛ իմաստասէր դու, համարձակաձայն խօսել հակառակ իշխանութեանցն, որք խանդացողքն են ընդ Աչմարիտ առաքինութիւն

և ընդ պարգևս Աշմարտին այլ։ Ահա դու ինքնին զատուցեր զերբեշտական պատմաբանս կամաց հօրն ի հրեշտակաց յայնցանէ՝ որք առ դիւթս իջանէն չգիտեմ որով արհեստիւ առաբերեալք. հիմ տակաւին մեծարես զնոսա ասել՝ թէ զաճայինսն ծանուցանէն. և զոր աճայինս ծանուցանիցեն նոքա, որ ոչ յայտնէն զՀօրն կամս։ Ապա քեն զոքա այնք են, զորս ոգին չարանախանձ կապեաց աղբսանօք՝ մի հնարհել մարդուն թէ հոգւոյ. և ոգի բառ բերար՝ որ ցանկայցն մնքրել չկարաց ի կապանաց անտի արձակել զնոսա, և ոչ յիւր իշխանութենն գրաւել։ Ի թէ երկբայիցես այլ և ոգիս չարս զնոսա ասել կամ ձևանման չգիտել, ոչ կամեցեալ ի դիւթից աչացն ելանել, յորոց պատրեալ մնոսախասէր խուզմամբ, զինասաբեր զայն և զանուղղայ ուսմունսն ընկալար՝ իբր մեծ ինն պարգևս։ Ընդհակառակ արդեօք՝ զնախանձաբեկ զայս՝ ոչ եթէ կարողութենէ, այլ ժանտութենէ, չասեմ տիկնէ, այլ որպէս դուդ խոստովանիս՝ աղախնէն նախանձոտաց, դերիվերոյ օդոյս ամբառնալ յերկինս, և յաստեղեայ աստուածս ձեր կացուցանել. մանաւանդ և զաստեղս գլխովին այսու անարգանօք թշնամանել։

ԳԼՈՒԽ ԻԵ

Յաղագս Պորփիւրի ամբարշտութենն՝ որով անցանէ զանցանէ և զան զմոլորութիւն Ապուլէոսի։

ՎԱՆԻ՞Կ մեղմագոյն քան զքեզ, ո Պորփիւրիւ, և ներելի սխալեաց աղանդակիցդ քո պղատոնեանն Ապուլէոս, որ միայն զդևս յածեալս ի լուսնոյ և այսր թէպէտ և պատուել պատուէր, բայց և յակամայ կամն խոստովան եղէ՝ կրկնաբար ախտանալ նոցա և մոռացմամբ. այլ զաստուածսն երկնաբնակս՝ որ յերեերկին կայս, եթէ զերևելիսն որք լուսափայլ նշմարին՝ զարեգակն և զլուսին և զայլ լու-

սաւորս, և եթէ զաներևոյթսն՝ զորս միանգամ ընդու-
նէր , բուռն վիճաբանութեամբ եցոյց անբաժս լինել
յամենայն արատոյ ամբոխմանցս այսոցիկ։ Իսկ դու ու-
սար զայդ ոչ՝ ի Պղատոնէ , այլ՝ ի քաղդէացի վարժապե-
տաց , ամբաւնալ միոյ յերերական բարձրութիւնս աշ-
խարհի և՝ ի հաստատութենէ երկնից՝ զախտս մարդկօրէնս.
որպէս զի ձեր աստուածդդ կարող լինիցին ծանուցանել
դիւթից զծայրինսն . Թէպէտ և ծածկոյն այսոցիկ վե-
րագոյն գքեզ համարիս մնասուր կենցաղավարութիւ , զի
անկարօտ բնաւ կալծիցիս դիւթական արհեստի մաքրու-
թեանն՝ որպէս արդարեւ խոստասէր , բայց զնոյն աւան-
դես այլոց , իբր փոխարէնս ինն հատուցանել վարժողացդ
քոց . և զորս միանգամ առ խոստասիրել չէն բաւական,
մոլորեցուցանես յայսոսիկ՝ քեզ իբրև հասու եղելոյ բար-
ձրագունից անալիտան ծանուցեալս , որպէս զի անբաժ
դտեալսն յիմաստասիրական քաջութիւ՝ որ տարժանելին
է յոյժ , և սակաւուց վիճակեալ , առաքինորդութիւ քով
առ հարցուկս դիմեսցեն, յորոց թէ ոչ յիմացականն հոգի՝
գոնէ ՝ի շնչականն մաքրուի գտանիցեն. և զի անխմաստա
սիրացն բազմութի կարի մեծ է , յոլովադոյնք յօժարեսցին
դիմել առ վարժիչս քո ծածկագործս և անօրինս՝ քան՝ի զը-
պղորս պղատոնականս։ Վասնզի զդոյն իսկ խոստացան քեզ
դևքն ամենասիրգք , աստուածս եթերականս զանձինս
կերպարանեալքն , որոց քարոզ եղեր դու և պատգամա-
ւոր . զի մաքրեալքն ՝ի յոգի շնչաւոր դիւթական արհես-
տիւ՝ թէ և ոչ դառնայցեն առ հայր , այլ վերոյ օդային
գաւառաց ընդ եթերական աստուածս բնակեսցին ։ Եւ
անսայ այդպիսեաց բազմութի մարդկանն, զորս եկն Վե
ազատել՝ ի դիւացն իշխանութէ . վասն զի նոքաւ ունին
զմաքրութի զմտաց , և զհոգւոյ և զմարմնոյ իւրեանց ։
Վասնզի յայն սակս զմարդն ողջոյն յինքն ընկալաւ նա՝
զատ՝ ի մեղաց, որպէս զի զբովանդակն՝ որով մարդն կայ,
՝ի ժանդէ մեղացն առողջացուսցէ։ Այդ թէ և քո ծանու-
ցեալ էր զնա, և՝ ի նա ապաստան արարեալ զքոյդ բժշկու-
թի , քան թէ յանձինդ զօրութի՝ ՝ի մարդկայինս , ՝ի զաղ-

վաղիւն և ՚ի տակը, և կամ ՚ի կորստական մնոտի զննու-
Թիւս։ Ո՛անզի ոչ խաբէր զքեզ նա, զոր և ձեր պատգամքդ
սուրբ խոստովանին և անմահ՝ ըստ որում գրես և դու,
զոյմ և գերապանծ քերթողն՝ Թէ և բանաստեղծօրէն՝
ասաց, յայլոյ դէմն կերպաձևեալ բայց Հզօրատաբար՝ եթէ
՚ի Ո՛ր առցի .

“Ով յանցմանց մեր հետք մընայցեն,
Ո՛ւմ տեսչութիւք միտ անզօրք են .

Օ երկիւղ յերկրէ՚ի բաց վաքեն ,, . Ա էք·հ·վ·ք ։
Ո՛նան ասէ և կարի յառաջադիմելոյն յարդարագործ ա-
ռաքինութիւնէ Թէ ոչ յանցուածք, բայց յանցուածոյն նըշ-
մարանք սակս դիւրագայթ կենացս . որոց բժշկութիւն
յաջողէ միայն ՚ի փրկչէն՝ յոր ակնարկէ տաղս այս ։ Ո՛չ Թէ
արդարեւ ոչ յանձնէ ասաց զայդ Ա իրգիլիոս, յայտ առնէ
՚ի չորրորդ տողն անդ՝ ասելով .

“Ո՛՚հա Կումեայ երգեալ տաղին ,
Կատարվ եհաս դարձն վերջին ,, ։

Որով տեսանի անշուշտ, Թէ Կումեայ սիբիլլայի ասացեալ
է զանդ զայդ ։ Ոսկ դիւթքն այնոքիկ , մանաւանդ դևքն
ՀԱճակերպ ձևացեալք գարշացուցանեն յաւէտ՝ քան մաք-
բագործեն զոգի մարդկան՝ ստապաճոյճ երևութիւք, և
պատիր խաղարկուք ունայն կերպարանաց ։ Օ ի ոմն զմար-
դոյ հոգի սրբիցեն, ուր իւրեանցն պիղծ է . ապա Թէ ոչ ան-
մարթ էր կապել նոցա տաղիւք ոմանք մարդոյ նախան-
ձոտի . և զումպէտ բարերարութիւն՝ առ ՚ի նոցանէն յու-
սալի՝ կամ առ երկիւղի նահանջել , և կամ նմանակիր յա-
չաղանաք զլանալ ։ Ո՛յն շատ է զի ասես՝ Թէ դիւթական
մաքբագործութիւնն ոչ իմանալի հոգի կամ միտք մեր սրբել
ունի , և ոչ հնչաւորն այն մասն ոգւոյ՝ ստորին քան զմիտս
սրբեալ այնպիսի արհեստիւ՝ անմահ լինիցի ասես և յաւէր-
ժակաց ։ Ոսկ Ո՛՚ր կեանս խոստանայ յաւիտենական . որոյ
վասն առ նա խուռն ընթանայ աշխարհ . ընդ որ Թէպէտ և
զլարիք դուք , բայց և յապուշ կայք ։ Օ՛՚ինչ շահ իցէ , զի
բռնադատիս ասել՝ Թէ մոլորին մարդիկ դիւթական ուս-
մամբք , և խաբին բազումք կոյր և անիմաստ բանիւ , և

Թէ ամենևին մոլորութիւն է՝ դիմել առ իշխանս և առ հրեշտակս տաժանմամբք և աղերսանօք. և ասպա զի ինչ զրաւաստակ երևեսցիս յուսանելն զայսոսիկ, առ դիւթս առաքես զմարդիկ, զի նոքօք սրբեսցի ընչաւոր ոգի նոցա, որք ոչ կեան ըստ իմանալի ոգւոյն։

ԳԻՒՂԻՍ ԻԲ

Որովք արգելօք անձին ցնորիւք կաբացեալ Պորփիւրի՝ ոչ կարաց Ճանաչել զչնչաբիա իմաստութեան զԲ։

Ա՛ղագ ուրեմն ահ դու, ՚ի յայսանի մոլորութիւն տանիս զմարդիկ, և ընդ այս մեծ չար ոչ ինչ ամաչես՝ որ սիրողդ ձևանաս լինել առաքինութեանն և իմաստութեան։ Ա՛յն Ճշմարտապես սիրելիք զիմաստութիւն և անխոտորելիք, Ճանաչեալ արդեօք զԱ՛՝ այ զօրութիւն և այ իմաստութիւն. և ոչ ՚ի նորա փրկաւէտ խոնարհութենէն ՚ի բաց վաղելիք՝ սոնքացեալ ունայն գիտութիւն։ Ա՛յակայն խոստովանիս և զայն, Թէ մարթ է իմացական ոգւոյ սրբիլ ժուժկալութեամբն առաքինութիւն, առանց դիւթական արհեստից և կամ տարօղական ձօնից, յորոց յուսումն՚ի զուր վաստակեցար։ Ա՛յ զի և ասես, Թէ մաքրագործութիւնք ոչ թեթևացուցանեն զոգի յետ մահու. յայտ առնելով Թէ և ոչ այնմ զոր իմանալին կոչես, օգտեն ինչ յետ կատարածի կենացս. այլ ՚ի վերայ այսր բազմաբնակ զնոյնս յեղյեղես և կրկնես, ոչ յայլ պատճառս՝ բայց երևեսցիս՝ որպէս կարծեմ, մակացու այնպիսեաց իրաց, և յայս հետամուտ անարժան արհեստիցն՝ հաճոյանայցես, կամ ՚ի նոյնս զըրդռեսցես լինել հետամուտ։ Ա՛յլ բարւոք առնես, զի երկիւղալի ասես զայս արհեստ, առ վտանգի պատուհասի օրինաց, և կամ ՚ի գործոյն խիթալի գոլոյ։ Ա՛յլ երանի Թէ լսիցեն զայդ ՚ի քէն տառապեալքն, և ՚ի բաց հեռանայցեն յայնցանէ առ չկորնչելոյ, և կամ բնաւ մերձե-

նայցեն իսկ ոչ։ Քանզ ապաքէն, Թէ տգիտութիւն եւ որ անտի ախտք յոլովք՝ ոչ մի ինչ նուիրագործութիւն սրբէին, այլ միայն հայրական մտօք, որ գիտակն է հայրական կամաց։ Իսկ զսա ոչ հաւատաս Թէ ինքն Քրիստոս է. քանզի անգոսնեաս զնա վասն ի ինոջէ ծնանելոյն մարմնով, և սակս անարգանաց խաչին. վասն զի արհամարհեալ քո զգերագոյն զիմաստութիւնն՝ կարծես արհամարհ և ցածուն իրօք Թշնամանել զՔրիստոս։ Այլ նա ի գլուխ տանի զառ ի մարգարէից սրբոց չհմարտութիւնն նախաձայնեալ զիւրմէ. “Կորուսից զիմաստութիւն իմաստնոց, և զխորհուրդս խորհրդականաց արհամարհեցից ,, Ես. ԻԹ. 14։ Եւ որպէս Թէ զիւրն իմաստութիւն՝ զոր ինքնին պարգեւեաց, կորուսանէ ի նոսա և արհամարհէ, այլ զոր անձանց ընծայեն գատարկայեալքն ի նորա իմաստութենէն. սորին վասն զինի յառաջ բերելոյ մարգարէական վկայուԹ՝ յաւելու ասել առաքեալն. “Ո՞ւր իմաստուն, ո՞ւր գրիչ. ,, ո՞ւր քննիչ աշխարհիս այսորիկ։ Եւ ապաքէն յիմարեցոյց ,, Ած զիմաստութիւն աշխարհիս։ Քանզի իմաստութիւն ,, Այ ոչ ծանեաւ աշխարհ իմաստութիւն զԱծ. Հաճեցաւ ,, Ած յիմարութիւն քարոզութեամն ապրեցուցանել զհաւատացեալս։ Իսկ որովհետեւ Հրեայք նշան հայցեն, և ,, Հեթանոսք զիմաստութիւն խնդրեն, մեք քարոզեսցուք ,, զխաչեալն Քրիստոս Հրեից գայթակղութիւն, և Հեթանոս,, աց յիմարութիւն. բայց նոցին իսկ կոչեցելոցն՝ Հրեից և ,, Հեթանոսաց՝ զՔրիստոս Այ զօրութիւն, և Այ իմաստութիւն։ ,, Օ՛ի յիմարն Այ իմաստնագոյն է քան զմարդիկ. և տըկարն Այ զօրագոյն է քան զմարդիկ ,, Ա. Կոր. Ա. 20։ Օ՛այսպիսի զկարծեցեալսն յիմար և տկար՝ անարգելն ինքնապանծ իմաստունքն և հզօրք. սակայն պարգեւ է սա՝ որ զտկարսն բժշկէ, և ոչ զսոնքացեալսն յիւրեանց ի սուտ երանութենէն, այլ զորս խոնարհութիւն՝ զստոյգ Թշուառութեն իւրեանց խոստովան լինին։

ԳԼՈՒԽ ԻԹ

Յաղագս մարդեղութեանն Քրիստոսի տեառն մերոյ, զոր պզտութեանացն ամբարշտութեան ամաչէ դասանիզ։

ՅԳՆԱՒԵԱՆ ուսուցանեմ դու զՀայրն և զնորա որդի, զոր միաք Հայրական անուանեմ, և զնոցա միշնորդն, որով որպէս կարծեմք իմանաս զՀոգի սուրբ. և զնոսին ըստ ձեռնամ ոձոյ՝ երիս աստուածս վերադասեմ։ Այլ թէպէտ և անհեթեթք վարիք բանիւք, բայց տեսանիք մասամբ լինչ և ընդ ստուեր աղօտանալմար երևակերպութեանն թէ յո՞ զտեղի առնուլ արժան է։ Այակայն ձանաչել ոչ կամիք զմարմնաւորուն անփոփոխելի որդւոյն այ, որով փրկիմքս, առ՝ի կարող լինելոյ հասանել մեզ յոր հաւատամքն, և կամ՝ի մանանկ լինչ իմանամք։ Այ ասն որոյ տեսանիք արդարեւ՝ թէպէտ՝ի հեռուստ, թէպէտ մթագնին, զՀայրենիսն վերինն՝ յորում բնակել կայ մեզ, այլ ոչ յանձն առնուք զձանապարհն՝ ընդ որ գնալ արժան է։ Այայց թէ ընորհք են իրքդ, խոստովանին և դու յասել անդ, թէ սակաւուց տուեալ է ժամանել առ ած իմացականին առաքինութիւն։ Ո՞ւ ոչ ասես, սակաւուց հաձոյ եղև, կամ սակաւք կամեցան. այլ ասելովդ՝ տուեալ, զայ ընորհն անշուշտ խոստովանիս, և ոչ զմարդոյն բաւականութեան։ Յայտնապոյն և խօսիս, ուր զՀետ երթեալ իմաստից Պղատոնի՝ ոչ լինչ յերկուանաս ասել՝ թէ՝ի կեանս յայս չիք մարդոյ բնաւ հասանել՝ի կատարումն իմաստութեանն, այլ որ լինչ թերին է մնասուորաբար քաղաքավարելոցն, կարող է տեսչութիւնն այ և ընորհ լնուլ յետ այսց կենացս։ Այրանի թէ ծանուցեալ էր քո զընորհսն այ՝ի ձեռն Յոհ. Պետի տեառն մերոյ, և զմարդեղութի նորա՝ որով էառ զՀոգի և զմարմին մարդոյ. զի յայնժամ տեսանել կարէիր, թէ այս է գերաշխարհ տարացոյց ընորհից։ Այլ զի արարից. գիտեմ զի՝ի զուր խօսիմ ընդ մեռելոյ առ քո դէմս։ Այայց թերևս ոչ

վայրապար առ ամենայնի՝ որք զքեզ մեծ ինչ գրեն, յա-
րեալք ՚ի քեզ առ սիրոյ խմաստուե, կամ ՚ի հետաքննուե
արուեստիցն՝ զոր չեր արժան քեզ ուսանել. զի առ նոսա
յաւէտ խօսիմ ՚ի քումմէ կշռամբուե։ Ալ եր մարթ զքնաղ
և փայլել հնօրհասն այ, քան յորժամ ինքն միածին որդին
այ անփոփոխ յիւրումն կացեալ ինացեալ, յանձն էառ
զգենուլ զմարդն, և զոյս սիրոյն իւրոյ պարգևել մարդ-
կան՝ միջնորդաւն մարդոյ, որ յաջողէր մարդկան ժամա-
նել առ Աած՝ մահկանացուաց առ սիրապէս անմահն, փո-
փոխելեաց առ անփոփոխելին, ամբարշտաց առ արդարն,
Թշուառացելոց առ երանելին։ Այս քանզի նա անկեաց ՚ի
մէջ՝ երանութէն և անմահութէն լինել ցանկացողս, երա-
նելի լինքն ինացեալ և զմահկանացուն ընկալեալ, առ ՚ի
հնօրհելոյ մէջ զոր սիրեմքն՝ չարչարելովն ուսոյց արհա-
մարհել յոլովք երկնելմքն։

Այայց զի կարող լինիցիք Ճշմարտութեն այսմ հաւա-
նել, պիտոյ է ձեզ խոնարհութէն, որ ձերումդ պարանոցի
դժուարակրելի է։ Վանզի զինչ անհաւատալի քարոզի-
ցի՝ ձեզ առաւելապէս հաւանելոցդ յամենիսին՝ որովք
պարտ էր ինքնայօժար առ հաւատալն լինել, յորժամ ա-
սեմք Թէ Աած առընկալաւ զոգի մարդկեղին և զմարմին։
Այսաբէն այնչափ մեծագործք դուք զիմացականն ոգի, որ-
պիսի և մարդկայինն է, մինչև համարձակիլ գնա լինել
առաք հայրական մեացն, զոր խոստովանիք որդի այ։ Այս
ուրեմն զինչ անհաւատ իցէ՝ Թէ ոգի խմացական՝ սակս
բազմաց փրկու Թեն առեալ լինիցի անձառ և անհամեմատ
իմն օրինակաւ։ Իսկ զմարմինդ ընդ հոգւոյ կապակցու Թի
առ՚ի լինելոյ մարդ ողջոյն և կատարեալ, դիտեմք և քնու-
Թեաս իսկ վկայու Թիք։ Ալր դժուարահաւատալի արդեօք լի-
նելը քան զառաջինն՝ եԹէ չեր հանապազօրեայ. քանզի
դիւրագոյն և հաւանելի գոյ՝ հոգւոյ ընդ հոգւոյ միա-
նալ, կամ ըստ ձերումդ բանի խօսելով՝ անմարմնոյ ընդ ան-
մարմնականի, Թէ և մին մարդկայինն իցէ և միւսն աԱծայ-
ինն, մին փոփոխելի և միւսն անփոփոխ, քան Թէ մարմնոյ
ընդ անմարմնականի։ Այլ Թերևս զկնճռոցանկ զձեզ

անսովորականն ծնունդ մարմնոյ առ՝ի կուսէ։ Այլ չէ պարտ զԹէ յայդմ, այլ առաւել ևս յիմաստասիրութիւն անդր յօժարիլ, իբր զի աքանչելին աքանչելաբար ծնաւ, և՛ կամ գուցէ զմարմինն անչնչացեալ, և յարուԹիւն՝ի լաւագոյն անդր փոխեալ, անեղծ և անմահկանացոյս՝ի բարձունս վերառեալ հաւատալ ոչ կամիցիք. տեսեալ զի Պօղիփիւր՝ի գիրսդ յայդ՝յորմէ յոլովս ինչ յառաջ բերի, ուր և գրեաց յաղագս վերադարձի հոգւոյն, ասելով պատուիրէ՝ փախչել յամենայն մարմնոյ, զի հոգի կարիցէ երջանիկ կեալ ընդ այլ։ Սակայն նա ինքն յաւէտ յանդիմանելի է յայդպէսն խորհել, այնու զի նա, և դուք ընդ նմա զևս անհաւատալիսն զմտաւ ածէք յաղագս հոգւոյ երևելոյս այսմ մեծամարմին աշխարհիս։ Վասնզի ըստ վարդապետութեանն Պղատոնի՝ կենդանի գոլ ասէք զաշխարհ, և կենդանի երջանկափառ, զոր և յաւէրժակաց համարիք։ Այլ զիարդ ապա ոչ՝ի մարմնոյ երթէք լուծանի, և ոչ յերանութիւնն մերկանայ, եԹէ արդարեւ առ երանելի գոլ հոգւոյ՝ հարկ իցէ յամենայն մարմնոյ փախչել։ Ա.ՀԼ և զարեգակինս զայս և զայլ աստեղս ոչ միայն մարմինս ասէք՝ի գիրս ձեր, զոր և միաբան ընդ ձեզ ամենայն մարդ աներկբայ տեսանել և խոստովանի, այլ և բարձրահայեաց կարծեցեալդ հմտուԹ՝ կենդանիս բազմերջանիկս զնոսա համարիք, և կից ընդ մարմնոյն յաւերժակայս։ Իսկ ապա զիարդ է՝ զի յառաջի դնել ձեզ քրիստոսական հաւատոց՝ մռռանայք կամ անգիտանալ ձևանայք զոր սովորդ էք հարցաքննել կամ ուսուցանել. առ իմ՝ արդեօք սակս իրիք իրիք կարծեաց ձերոց՝ որոց և դուքդ հակառակիք, հրաժեշտ տայք՝ի քրիստոնէուԹէ, բայց միայն զի ՎՀ եկն խոնարհուԹէ, իսկ դուք ամբարտաւան էք։ Ով որպիսիք լինիցին սրբոցն մարմինք՝ի յարուԹէ անդ, մարԹ է խնդիրս լիմն առնել տեղեկացելոցն՝ի քրիստոնէական մատեանս. բայց ընդ միջանձնական լինել նոցա ոչ երկբայիմք բնաւ. և զի այսպիսի լինիցին, որպիսի ՎՀ յիւրում յարուԹէ եցոյց զօրինակն։ Ա.ՀԼ զիարդ և իցէն, որովհետև անեղծս զնոսա քարոզեմք և

անմահս, և ոչ խափանիչս լինել խորին տեսուէ հոգւոյ՝ որով հպի առ Ած, և ձեր իսկ ասացեալ է՝ Թէ կան յեր- կինս մարմինք անմահացուք երջանկաց անմահից, զի՞ է՝ զի առ երջանիկն լինելոյ փախչելի համարիք զանհնարն մար- մին, որով Թուխիք իրաւամբք լինն խոյս տալ ՚ի քնական հաւատոց, բայց զի՝ երկրորդելով զասացեալս, Ինխոնարհ է. դուք ամբարտաւան էք։ Կուգէ արդեօք ամաչէք գալ յաղագուն. և այդ ախտ ամբարտաւանից է. յայտ է Թէ ամօթ լինի Թուի արանցդ խմաստնոց՝ յաշակերտուԹենէ Պղատոնի անցանել ՚ի Քնին, որ իւրոյն հոգւով խմաստ- նացոյց զայր ձիւնոյս յասել. "Ի սկզբան էր Խանն, և Խանն էր առ Ած, և Ած էր Խանն. նա էր ՚ի սկզբան առ Ած։ Ամենայն ինչ նովաւ եղև. և առանց նորա եղև և ոչ ինչ որ ինչ եղևն։ Կենդանի նովաւ կեանք էր, և կեանքն էր լոյս մարդ- կան. և լոյսն ՚ի խաւարի անդ լուսաւորէ, և խաւար նմա ոչ եղև հասու.,։ Յաղագս այսր սկսուածոյ սրբոյ աւե- տարանին որ ըստ Յովհաննու՝ ասէպ լսեաք յերանելի ծե- րոյն Սիմպղիկիանոսէ՝ որ յետոյ եղև եպիսկոպոս Կիպրու- լոյ եկեղեցւոյն, ասել պղատոնականի ուրումն՝ Թէ ար- ժան էր դրոշմել ոսկի տառիւք և ընդ ամենայն եկեղե- ցիս արձանացուցանել ՚ի բարձրագոյն վայրս։ Ա՛ւլ յայն սակս նուաստացաւ յաչս ամբարտաւանից վարդապետն մեր Ած, վասն զի "Խանն մարմին եղև և բնակեաց ՚ի մեզ.,։ Իբր այն Թէ՝ փոքր էր եղկելեացն այնոցիկ խօԹա- նալ, եԹէ ոչ անդէն ՚ի խօԹուԹենէն լինելոյն նոցա գլուխ ամբառնալ ամբարհաւաճուԹիւք, և ընդ ապաքինիչ գերեզ- մանելն. քանզի և ոչ վասն այն առնեն զայդ՝ զի կանգ- նեսցեն, այլ զի անկանելով չարաչար վտանգեսցեն։

ԳԼՈՒԽ Ի.

Քանի՛ քանի՛ բանս ի կարգէ պղատոնական ուսմանց հեռացայ Պորփիւր, և հակառակելով այլափոխեցայ։

Այժ արդարեւ տարադէպ ինձ կարծիցի ուղղել զՊղատոնի դրուխիս, առիմք Պորփիւրոս ինքնին փոխեաց ոչ սակաւ ինչ, և ոչ գոյշն իրս։ Վասնզի հաւաստի գիտեմք զրեալ Պղատոնի, թէ ոգիք մարդկան յետ մահու ընդ անասնոց մարմինս անգամ շրջաբերին։ Ո գոյն կարծիս ընկալաւ և Պղոտինոս վարժապետ Պորփիւրի. այլ սա յիւրաւի ոչ հաւանեցաւ. միայն յայն կարծիս եղև՝ թէ յայլ նոր մարմինս մարդկան գնան մարդկային ոգիք, և ոչ յիւրեանցն զոր թողին։ Այսմ համարեցաւ ինքն հաւանել առաջնոյն, զի մի արդեօք մեր ուրուք ներամտեալ ի ջրի՝ բարձեալ կրնցէ զորդի իւր. և ոչ ամաչեաց հաւանել երկրորդիս, յորում գուցէ մայրն փոխաբերեալ յաղջիկ՝ ընդ որդւոյն ամուսնանայր։ Որչափ վայելուչ և է հաւաստալ զոր սուրբքն և անխարդախ հրեշտակք ուսուցին. զոր մարգարէք այ ազդեալք ի հոգւոյն բարբառեցան. զոր նա ինքն խոսեցաւ նախագուշակեաւն ի նոցանէ զաղոց փրկիչն. զոր պատգամաւորեալ առաքեալքն՝ լցուցիչք տիեզերաց աւետարանեան։ Վասնի վայելչական և է ասեմ՝ հաւաստալ թէ մի անգամ և եթ դառնան հոգիք յիւրեանց ի բուն մարմինս, քան թէ ստէպ դարձադարձ առնիցեն ի մարմինս ազգի ազգիս։ Այլ որպէս ասացիդ, բազում մասամբ ողջամտեցաւ Պորփիւրոս ի կարծիս յայսմ. իսկ զի հաւանեցաւ և եթ՝ թէ հնար է մարդկէն ոգւոյն ի մարդիկ միայն տարափոխիլ, իսկ զանասնական արգելանոցս հինն ի վեր տապալել ոչ ինչ երկմտեաց։ Այս գարձեալ. այնր աղագաւ եառ ասծ զհոգի աշխարհիս, զի գիտակ լինելով չարեաց նիւթոյն՝ հաւաստացեալ ընթանայցէ, և մի՛ շաղեսցի երբեք յասլականութեն այն-

պիսեաց ։ Զորում Թէպէտ և անդէպս ինչ խորհի, իբրև զի յայն սակս յաւէտ Հոգի տուեալ իցէ մարմնոյ, զի բա-
բիս գործիցէ, ուր ոչ ուսանիցէ նա զչարիս, Թէ ոչ առնիցէ
զայն, սակայն զայլոց պղատոնեանցն զկարծիս՝ և այն ոչ
՚ի փոքր խնդիր՝ ուղղեաց նա, խոստովանեալ Թէ Հոգի
սրբեալ յամենայն չարեաց, և առ Հօրն բնակացեալ՝ ոչ
և ա այլ ընդ չարեօք աշխարհիս գրաւեացի . որով նանրա-
ցոյց Համբուն զպղատոնականն յաւէտ կարծեցեալ գրու-
Թիւն, Թէ զոր օրինակ մեռեալք ՚ի կենդանեացն լինին, նոյն-
պէս կենդանիք ՚ի մեռելոց . սուտ եցոյց միանգամայն ըզ-
Ա՚իրգիլեայ ասացեալն՝ որպէս Թուի՝ պղատոնեանն իմա-
ցուածիւ, Թէ ոգիք մաքրեալք յերկնաւոր դաշտս, ո-
րովք ըստ առասպելին երանելեացն խնդութիւքն նշանակին,
դառնան ՚ի գետն Ա՚եԹեան, այս է՝ ՚ի մոռացումն անցելոց .

«Ա՚երնայնոյն անկիւղք
զի ըստորնոց երկին յայց .
Ի՚ղձ բերեալ միւսանգամ
առ՚ի մարմինս առնել դարձ ... »։ Ա՚նեական ը։

Ա՚րդարեւ յիրաւի անհաւան գտաւ այսմ Պորփիւրոս . քանզի է իսկ խոլական իմն՝ կարծել Թէ Հոգիք ՚ի կենաց անտի՝ որում անմարթ է լինել երանական՝ Թէ ոչ հա-
ւասար գյաւէրժակայութիւն ունիցի, յանկանայցեն աղաղ
ապականացու մարմնոց, և ՚ի նոյնս դարձ առնիցեն, իբր
այն Թէ գերագոյն մաքրութիւնն տայցէ զանմաքրութիւնն
դարձեալ խնդրել։ Պանզի եԹէ կատարելապէս սրբե-
ցելոցն առնի մոռանալ զչարիս ամենայն, և չարեացն մո-
ռացումն տայ ցանկանալ ՚ի մարմինս, յորում անդրկեն
Թաւալիցեն ՚ի չարիսն, յայտ է ապա՝ Թէ Թշուառութիւնն
պատճառ լինի ծայրագոյն երջանկութեանն, և յիմարու-
Թիւն լրումն իմաստութեան, և անսրբութիւն գերազանցն մաքրու-
Թեան լինի պատճառ։ Ա՚յս ոչ Հնմարտութիւք երանելի լինի
Հոգի անդ՝ ցորչափ իցէ, ուր առ՚ի լինելոյ երջանիկ Հարկ
իցէ սիալել ։ Օ՚ի ոչ եղիցի երանելի եԹէ անկատած ոչ
իցէ . իսկ առ անկատած լինելոյ ստութիւն ունի գնալ ՚ի
մոլ՝ Թէ միշտ կացցէ երանելի, ուր զի լինելոյ է երբեմն

Թշուառ. ապա ուրեմն որ ոք ՚ի ստուերէ ունի պատճառ խնդալոյ, զինքըդ ընդ Ձշմարտութեանն խնդայցէ։ Հասու եղև այսմ Պօղիփիւր. և զօգին մաքրեալ յայն սակս ասաց դառնալ առ հայր, զի այլ մի ևս յաղտեղութեան չադարձուսցէ։ Ա՛ման որոյ սուտ է պղատոնականաց ումանց կարևորն Թուէցեալ շրջան՝ ոգւոյն գալոյ և գնալոյ ՚ի նոցունց առ նոսա։ Ա՛յլ եթէ Ձշմարիտ ևս էր, զինչ շահ՚ի գիտելոյ զայդ, քանզի գուցէ այսու անձանց մեծարանս յաւէտ քան մեզ դնեին պղատոնեանք, իբրև զի մեք ՚ի կեանս յայս անգիտանամք զայն ինչ, զոր ինքեանք յայլ՚ի լաւագոյն կեանս՝ թէ և պատարուն՚ի մաքրութեանէ և յիմաստութենէ՝ անգիտանալոց են, և զսուտ ինչ հաւատալով լինելոց են երջանիկք։ Իսկ թէ ասել զայս՝ կարի յանտեղեացն է և անմտութեան լի, յիրաւի ապա Պօրփիւրեին կարծիք յառաջադասելի է քան զայնոցիկ՝ որք շրջանս հոգւոց մտաբերեցին յարափոփոխ յերջանկութենէ ՚ի թշուառութեան։ Ա՛յլ եթէ այս այսպէս է, ահա պղատոնականդ այդ գովութեանէ խոտորեցաւ ՚ի պղատոնէ. ահա ինքն ետես, զոր նա ոչ ետես. և զհետ այնպիսւոյ մեծի վարժապետի ոչ խուսափեաց յուղղութենէ, այլ զձշմարտութենէ նախասպատուեաց քան զմարդ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ.

Հերքումն ձեռնարկութեանց պղատոնեանց՝ որով ասեն զհոգի մարգկային մշտնջենաւորակից գոլ այլ։

Օ՛ՐԱՒՐԴ ապա ոչ ևս առաւել՝ այլ հաւատայցեմք յայն իրս՝ զորս անկարի է մեզ մարդկեղիս հանձարով հետազոտել, որ և զՀոգի ոչ յաւիտենական՚ից այլ ստեղծեալ ասէ գոլ՝ զայն որ ոչն էր։ Իսկ պղատոնականք ոչ կամեցեալ հաւատալ այսմ, այսպիսի իմն բան յառաջ բերել դիպող համարեցան՝ ասելով, եթէ Հոգի մեր չլինէր նախագոյակ միշտ, չէր կարող լինել յետ այնր մշտնջենաւոր։

Պակասնա ինքն Պղատոն գրելով զաշխարհ, այլ և զաս-
տուածոյն արարելոց առ յայ՛ի մէջ աշխարհի, ասէ յայտ-
նաբարբառ, Թէ սկիզբն առին գոլոց, այլ յաւիտենապէս կա-
մաց արարչին ինայցեն յաւիտեան։ Իսկ պղատոնեանք կա-
մելով այլ ազգ իմանալ զայս բան՝ հնարեցան ասել Թէ
ոչ գոյ՛ի բանիդ սկիզբն ժամանակի, այլ եղելուն։ "Ո՞ր
„ օրինակ, ասեն, եթէ ոտն լինէր՛ի յաւիտենից յար՛ի
„ փոշւոջ, միշտ ընդ նովաւ լինէին հետքն. որ յայտ է Թէ
„ ի կոխողէ ուժեղ լինի, և մին ոչ յառաջ է քան զմիւսն,
„ Թէպէտ մի՛ն՛ի միւսմէն լեալ է։ Նոյն օրինակ, ասեն, և
„ աշխարհ և որ՛ի նմա ստեղծեալ աստուածքն՝ միշտ եղեն՝
„ միտադոյ եղելով արարչին, և սակայն ինքեանք եղակունք
„ են „։ Ուրեմն՝ եթէ միշտ եղև հոգի, ասիցի արդեօք
Թէ և նորայն Թշուառութի՛ն լեալ իցէ միշտ։ Իսկ արդ
եթէ ինչ մի՛ի յոգւոջ գտանի, ոչ յաւիտենից գոյաւոր՝
այլ սկսեալ լինել՛ի ժամանակի, ընդէր ապա չիցէ մարթ
նմին իսկ հոգւոյ եղանիլ՛ի ժամանակի, յառաջն ոչ գո-
լով։ Եւ դարձեալ, երանութիւն հոգւոյ ստացեալ յետ
փորձոյ չարեացն՝ անդրդուելի կալոց է և անվախճան, որ-
պէս և ինքն խոստովանի. որ ահա՛ի ժամանակի սկիզբն
կալաւ, զի չկայր յառաջն։ Այս ցրեցաւ իսպառ ձեռնաթ-
կութիւն այն, որ ասէ՝ ոչ իմիք լինել անվախճան ժամա-
նակաւ, եթէ չիցէ նա և անսկիզբն ժամանակաւ. քանզի
ահա գտաւ երանութի՛ն հոգւոյն, որ սկիզբն ունելով ժա-
մանակի՛ անկատարած լինիցի ժամանակաւ։ Հապա, տե-
ղի տացէ մարդկայինս տկարութի՛ն ածմանոյ վկայութիւնն,
և յաղագս Հմարիտ կրօնիցն հաւատս ընծայեսցուք երա-
նելեացն աւետարանիկ և անմահից, որք ոչ չինքեանս ձգեն
զպատիւ՝ զվայելչականն այ իւրեանց, որ և մեր ած է. և
ոչ հրամանատրեն մատուցանել այլում պատարագ՝ բայց
նմա միայն, որում մեք և նորա լինելոց եմք պատարագ,
ըստ որում բազում անգամ ասացի, և յաՀախ ասել աղ-
ժան է, և ունիմք մատուցանիլ՛ի ձեռն քահանային՝ որ
մարդումն զոր էառ, և որով կամեցաւ լինել քահանայ, հաւ
ձեցաւ ինքնին լինել պատարագ մահու չափ վասն մեր։

ԳԼՈՒԽ Լ՚

Յաղագս արահետ Ճանապարհի փրկութեանն հոգւոյ, զոր շարաչար խնդրելով Պորփիւրի՝ ոչ եգիտ, զի զայն երաց միայն Տիրոջն քրիստոնէական։

Լ՚ՅՍ է հաւատքն քրիստոսական՝ Աչմարիտ կրօնքն, որ ունի յինքեան զՀասարակաց արահետ Ճանապարհ ազատութեան հոգւոյ, զի սովաւ՝ և ոչ այլով իւիք հնար է ապրել։ Վասզի սա է իբրու Ճանապարհ իմն աքբունի, որ միայն տանի յարքայութի՚ ոչ որ ծփականն է ժամանակեայ հարստութի՚, այլ անքոյթ յաւիտենականն հաստատութի՚։ Ասստի երբ ասէ Պորփիւր յաւաչին գիրն յաղագս վերադարձի հոգւոյն մերձ՚ի կատարած անդր, թէ չև և ս է յայտնեալ միակ կրօն ինչ կամ ազանդ՝ որ յինքն ունիցի Ճանապարհ ինչ Ճանապարհ ազատութեան հոգւոց՝ կամ՚ի ստոյգ իմաստասիրութի՚ խմբեբ, կամ՚ի հնդկացն սովորութեց և ուսմանց, կամ՚ի քաղդէականն աւանդից, և կամ այլով իւիք օրինակաւ, և ոչ Ճանապարհ այսպիսի՚ի պատմութեց ուստեք Հասեալ իցէ դէռ յիւրն ծանօթութի՚, այսու խոստովանի աներկբայ, թէ կայ այն արդեամբք, այլ չև և ս ծանուցեալ ինքեան։ Յե ահա այսպէս չէր բաւական լեալ նմա որչափ ինչ յաղագս ազատութի՚ հոգւոց ուսեալն էր Քանիւք. և թուէր ինքեան՝ մանաւանդ այլոց՝ գիտել և պինդ ունել. քանզի զի առնոյր՚ի միտ, թէ պակասի նմա այլ և ս բարձրագոյն վկայութի՚ ինչ՝ որում զՀետ երթալ արժան էր։ Ասկ յաստել անդ, թէ՚ի ստոյգ իմաստասիրութի՚ խմբեբ չև է հաստեալ յիւրն ծանօթութի՚ աղանդ ինչ՝ որ տիրապէս ունիցի զՀասարակաց Ճանապարհ ազատութի՚ հոգւոյ, լիով ցուցանէ ըստ խմուս կարծեաց՝ թէ կամ փիլիսոփայութի՚ն, յորում ինքն իմաստասիրեաց, ոչ է ստոյգ, և կամ չէք՚ի նմա Ճանապարհ այսպիսի։ Յե որպէս ասպա ամենայնիւ ստոյգ լինիցի՝ որ ոչն ունի յինքեան զայն Ճանապարհ։

Ա՛յսն զի ո՛ր այլ է հասարակացն Հանապարհ ազատուէ հոգւոյ, բայց այն՝ որով հոգիք ազատին առ Հասարակ. իսկ առանց այնր և ոչ մի հոգի ազատանայ։ Իսկ ուր յաւելու ասել, ոչ ուսեալ զայն՝ի հնդկացն սովորութենէ և յուսմանց, կամ՝ի քաղդէացւոցն աւանդից, կամ այլով օրինակաւ իւիք, մեկնաբար վկայէ Թէ որչափ՝ի հնդկաց և՝ի քաղդէացւոց ուսեալ էր, չկայր՝ի նոսա Հասարակաց փրկութենն Հանապարհ, Թէպէտ և լռել ոչ կարաց՝ Թէ արդարեւ ընկալեալ էր՝ի քաղդեայց անտի պատգամն Հաճախուս կարծեցեալս, զորս յաձախակի յուշ ածէ։ Իսկ ուրեմն զո՞ր Հասարակաց Հանապարհ ոգւոց ազատութէ իմանայ չև ընկալեալ, և ոչ՝ի տոյգ իմաստասիրութէ, կամ յուսմանց ազգաց այնոցիկ՝ ակամաւոր կարծեցեալց յիւրս Հաճայինս, առ որս առաւելաւ ուշադրութիւնդիրն պաշտօնասիրութէն Հանապարհ և պաշտելոյ հրեշտակս ումանս, պատմողաբար ծանօթութէն Հասեալ՝ի դիտութէն։ Իսկ այլ է Հասարակաց այս Հանապարհ, բայց այն՝ որ ոչ եթէ միւսմ ազգի առանձին՝ այլ բոլորեցուսն ազգաց երկրի Հասարակորդ բաշխեցաւ առ յոյ։ Իսկ պարզին ոչ ինչ երկմտեր այլն մնացի՝ Թէ կայ այն Հանապարհ. քանզի ոչ էր նմա Հաւանելի, Թէ տեսչութէն Հաճելին անխնամ յայսպիսի Հանապարհէ փրկութէ Թողուցու զմարդկան ազգ. զի և ոչ ասաց՝ Թէ չկայ այն, այլ Թէ մեծն այն պարգև և նըպաստ զօրաւոր չև է ընկալեալ, և ոչ յիւրն գիտնաւորութէն Հասեալ։ Իսկ չէն զարմանք, քանզի ինքն Պորփիւր էր՝ի ժամանակի անդ՝ յորում փրկուէ ոգւոցն Հասարակաց Հանապարհ, որ միայն է կրօնն քրիստեան, Հակառակութէն կրէր՝ի պաշտօնէիցն կռոց և դիւաց, և՝ի Թաղաւորաց երկրի, առ՝ի սէրտ և սուրբ կացուցանելոյ զըՀիւ բազմութէնեան մարտիրոսաց՝ վկայիցն Քրիստոսի Թէ, յուցանել նոքօք՝ Թէ զժամանակեայ չարիս զամենայն յանձն առնուլ արժան է սակս Հաւատոյ Հաճապաշտութէ, և՝ի պարծանս Քրիստոսի Թէ։ Իսկ զայսոսիկ տեսեալ Պորփիւրի, կարծէր Թէ յերկուց այնպիսի Հաւանմանց արար վախձան առնուցու Հանապարհն այն, ո-

բով ոչ ևս լինէր այն հաստատակաց Հանապարհ ազատուէ Հոգւոյ. և չառնոյր ի միտ՝ Թէ որով ինքն տատանէր, և երկնչէր վիշտս կրել յընդունելն զայն, նոյն իսկ կարգեալ էր ի հաստատութէն և ի քաջալինդ պարծանս այնր Հանապարհի։

Այս ուրեմն սոյն սա է արահետ և ընդհանրական Հանապարհ փրկութէ Հոգւոյ, Համօրէն ազգաց ընծրհեալ յածայրինն ողորմութէ. այր ծանօթութէն ահա Հասեալ է առ ոմանս, և առ այլս ոմանս Հասանել ունի։ Ընդ և չէ պարտ ասել նմա. և ընդէր այժմ գտաւ, առիմ՞ անագան. վասն զի խորհուրդ առաքողին զփրկիչն ոչ ի Հանձար մարդոյ սահմանի։ Այժմ ինքնին Պետրոս իրազեկ եղև յասել իւրում, չև ևս ընկալեալ զայն պարգև այ, և չև Հասեալ յիւրն ծանօթութէն. զի ոչ եթէ Համարեցաւ չլինել Հնմարիտ լոկ այնր ազագաւ՝ զի ինքն չէր Հաւատացեալ, և կամ չև էր տեղեկացեալ։ Այս է ասեմ Հաստատական Հանապարհ ազատութէ Հաւատացելոց, զորմէ Աբրահամ Հաւատարիմ ընկալաւ զպատգամն ածական. "Ի զաւակի քումմ օրհնեսցին ամենայն ազգք երկրի.,։ Այս քաղդէացի էր ազգաւ. այլ զի այնպիսեաց աւետեաց լինելոյ ընկալուչ, և ի Հնմանէ ծագեսցէ զաւակն կարգեալ հրեշտակօք ի ձեռն միջնորդին՝ յորում էր Հաստատական Հանապարհ ազատութէ Հոգւոյ՝ Հանուրց ազգաց ընծրհեալ, հրամայեցաւ նմա ելանել յերկրէ իւրմէ և յազգէ իւրմէ և ի տանէ Հօր իւրոյ։ Յայնժամ նա զառաջինն զերծեալ ի քաղդէականն մնոտի պաշտամանց, ի միոյ Հնմարտին այ յարեցաւ պաշտօն, և Հաւատաց աներկմիտ այնմ՝ որ խոստանայր ինքեան զայսոսիկ։ Այս է Հաստատական Հանապարհ, զորմէ ասացաւ սրբազան մարգարէութէն. "Ջ, ողորմեա մեզ և օրհնեա զմեզ, երեւեցո զերեսս քո ի մեզ, և ողորմեա մեզ. Հանապարհ յերկրի ընծրհանապարհս քո, յազինս ամենայն զփրկութիս քո.,։ Այն ոչ որոյ զինի բազում ժամանակաց ի զաւակին Աբրահամու մարմին առեալ նա ինքն փրկիչն՝ ասաց զանձնէ. "Այս եմ Հանապարհ և Հնմարտութէ և կեանք.,։ Յհ. ԺԴ. 6։

Ա.յս է հաստարակացն Ճանապարհ՝ ի վաղ ժամանակաց նախագուշակեալ. “ Ահղեցի յաւուրս յեհոնա յայտնի
„ լեառն տեառն, և տուն աայ՝ ի վերայ գլխոց լերանց, և
„ բարձրասցի՝ ի վերայ բլրոց. և եկեսցեն՝ ի նա ամենայն
„ հեթանոսք. և երթիցեն ժողովուրդք բազումք, և ա-
„ սասցեն, եկայք երթիցուք՝ ի լեառն տեառն, և՝ ի տուն աայ
„ Յակոբայ. և պատմեսցէ մեզ զՃանապարհս իւր, և գնասո-
„ ցուք ընդ նա: Ո՛չ՝ ի Սիոնէ երթիցեն օրէնք, և բան տեառն
„ յԵրուսաղէմ „. Ա՚՚. Ե. 2: Ա՛պա ուրեմն ոչ միոյ ազգի
է Ճանապարհս, այլ ամենայն ազգաց. և օրէնք և բան տեառն ոչ՝ ի Սիոն և յԵրուսաղէմ դադարեցին, այլ անտուստ երթին առ՝ ի սիրելոյ ընդ տիեզերս: Ասաի նա ինքն միջնորդն զինի յարութեն ասէ աշակերտացն տարակուսելոց. “ Պարտ էր ընդուել ամենայն գրելոցն յօրէնսն Մովսէսի և՝ ի մարգարէս և՝ ի սաղմոսն վասն իմ: Յայնժամ երաց զմիտս նոցա իմանալ զգիրս: Ա՚ւ ասէ ցնոսա, Թէ այսպէս պարտ էր չարչարիլ Քրիստոս, և յառնել՝ ի մեռելոց յաւուր երրորդի, և քարոզել յանունն նորա ապաշխարութիւն և թողուն մեղաց յամենայն ազգս, սկսեալ յԵրուսաղէմ „. Ղ Ի. ԻԶ. ԿԿ: Ուրեմն ապա սոյն այս է հաստարակաց Ճանապարհ ազատութեան հոգւոյ, զոր հրեշտակքն սուրբք և ածարեալ մարգարէք յառաջագոյն նշանակեցին սակաւուց ումանց արժանացելոց շնորհացն այ. առաւելապէս յերբայական ազգին, յորում կայր ժողովուրդն ածանուելք՝ մարգարէութէ և նախագուշակութէ քաղաքին այ որ ժողովելոցն էր յամենայն ազգաց, նախանշարելոցն խորանաւն և տաճարաւ, և քահանայութէ և պատարագաւ, որպէս և պատգամաւք, յորս ինչ ինչ էր բացերև, և շատ ևս խորհրդականք, կանխեալ զկուցին: Ապա ինքն միջնորդն երևեալ՝ ի մարմնի, և նորուն երանելի առաքեալք հռչակելով զՆորհս նորոյ կտակին՝ յայտնաբարբառ ծանուցին որ ինչ յանցեալ ժամանակաւն ընդ աղօտ իմն ցուցեալք էին, ըստ որում բաշխեալ էր դարուց ազգի մարդկան, այնպէս անօրինելով հաձոյից այ իմաստութէն, նշանաւք ածագործ սքանչելեաց եդեալ զվկայու-

Թէ, յորոց զսակաւս նախակարգեցի ։ Վասնզի ոչ միայն երևմունք հրեշտակականք յայտնեցան, և ոչ լոկ բանք երկնաւոր պաշտօնէից լսելի եղեն, այլ և ի ներգործել պատնդն ոյժ բանիւ պարզ և սեռն ածպաշտութեան՝ Հալածեցան այսք պիղծք ի մարմնոյ և յոգւոյ մարդկան, և գաղանք երկրի և ջրոյ, թռչունք երկնից, փայտք, տաքերք, աստեղք կատարեցին զՀրամանս ոյ. գԺոխք տեղի եառեն. մեռեալք կենդանացան. Թող զբանչելիսն յաւուրս և առանձնաւորս զնորուն զիրկին՝ մանաւանդ ի ծննդեանն և յարութեէ երևեալս, յորոց յառաջնումն ելոյց միայն զնորհուրդ մայրական կուսութէ, իսկ ի միւսումն ետ և զօրինակ այնոցիկ որք յառնելոց են ի կատարածի ։ Այս Աստուածարհ սրբէ զմարդն ողջոյն, զմահկանացուն յանմահութէն անդր պատրաստեալ ըստ համարձակն մասանց նորա. և զի մի այլ սրբութէ պահանջեսցին մասինն՝ զոր խմացական ասէ Պօղոսիւր, և այլ՝ մասինն հոգևորական ասացեալ, և այլ՝ նմին իսկ մարմնոյ, սորին վասն զբովանդակին յինքն ընկալաւ հաւատարիմն և հզօր սրբարարն և փրկիչ։ Յորոց այսր Աստուածարհի՝ որ ոչ բնաւ պակասեաց մարդկութէն՝ եթէ նախագուշակելով զլինելոցսն, և եթէ պատմելով զեղեալսն, ոչ որ ապրեցաւ, ոչ որ ապրի, ոչ որ ապրեսցի ։

Իսկ եթէ Պօղոսիւր ասէ՝ Թէ չև է ծանուցեալ հնոքեան հասարակաց Աստուածարհ փրկութէսն հոգւոյ պատմողաբար տեղեկութէամբ, զինչ ահա բացափայլագոյն քան զայս պատմութէ գտանիցի՝ որ ընդ ամենեսին համօրէն զօրացեալ ծաւալեցաւ. կամ զինչ հաւատարմագոյն, յորում՝ ի պատմել անդր զանցեալսն՝ զոյգ և ապառնիսք նախանձաւին, յորոց դյոլովս տեսանեմք լցեալս և ի նոցանէ յուսամք աներկմիտ լնուլ ինացելոցն ։ Վասն զի չկարէ Պօղոսիւր և կամ այլ որ ի պզատոնեանց արհամարհել և զնախագուշակութէս յայսմ Աստուածարհի՝ որպէս թէ երկրաստեղծ ինչ լոյս, և այժմու մահկանացու կենացս յանկաւոր, զոր օրինակ յայլ գուշակմունս և ի բաղմարուեստ ըղձութէն լինս յիրաւի արհամարհանօք

բերին . զի ոչ ընդունին Թէ արանց մեծաց խղճն այնքիկ , կամ մեծ ինչ գրելի . և արդարեւ այնպէս ։ Այսու զի կամ նախատեղկութիւնք սաստիկ պատճառաց լինին , որպէս բժշկականն արհեստիւ բազում ինչ դէպք առաջողութեի կանխաւ տեսանին 'ի յառաջընթացս նշանաց ամանց , և կամ գիւք սիղծք զառ յինքեանց գնելեալ առաքարան նախապատմեն , իրաւունս լինի անձանց գրաւելք 'ի միտս և 'ի ցանկութիւնս անզգամաց՝ վարել զնոսա յնեբաքանչիւր դէպս , և այն յանարգ նկուեալս մարդկային տկարութեէ ։ Այսպէս արք սուրբք որք ընթացան յայս հաստատակաց Հանապարհ ազատութեէ հոգւոց , ոչ փոյթ կալան զայնպիսիս իբրև մեծս ինչ նախագուշակել , Թէպէտ և ոչ խոպան զանց արարին . այլ նախապատմեցին յոլովակի առ 'ի հաւատարմացուցանել զայնպիսի իրս՝ որ առ մարդկան զգայութիւնս աներեւակք էն , և ոչ դիւրաւէր 'ի փորձ մատուցանել ։ Այլ ունէին նոքա զայլ իրս արդարեւ մեծամեծս և ահագնագինս , զորս որչափ չնորհէր նոցա կամք այ՝ պատգամաւորէին որպէս լինելոցս . զոր օրինակ Թէ Ահա գալոց է մարմնով և որ 'ի նմանս զարմանալիքն կատարեցան , և յանուն նորա 'ի գլուխ ելին , մարդկան ապաշխարութեի , և 'ի սրտի դարձ առ աւծ , Թողութի մեղաց , չնորհք արդարութեէ , հաւատք բարեպաշտաց , և աշխարհաճաշակ բազմութի հաւատացելոց 'ի Հչմնարիան աւծ . կռամոլ և դիւահան պաշտելութեանն քակտուին , փորձութեցն Հանդէսք , յառաջադիմելոցն մաքրութին և ազատութի յամենայն չարէ , դատողութէն օր , յարութի մեռելոց , ամբարշտացն խոժոժանի յաւիտ դատապարտութի , և յաւիտենական Թագաւորութի քաղքին այ՝ յանդիմանութեան վայելելոյ անմահապես ։ Այս ամենայնիւ ահա այս ամ 'ի մտանելս այսր Հանապարհի նախաձառեցան և խոստացեալք եղեն . յորոց բազմագունիցն լսման տեսողք եղեալք , վստահ եմք անվրէպ յաջողածով և ինաւցելոյն լինելոյ ։ Ո՞ անխոտորնակութի այսր Հանապարհի՝ որ ձգի մինչ 'ի տեսութի այ և 'ի նորայն յաւիտ կան միաւորութի , հաստատեալ 'ի Հչմարտութիւն զրոց

սրբոց՝ և հաւաստեաւ զնոյն քարոզողաց, որք միանգամ ոչն հաւատան, որով և իմանան իսկ ոչ, Թէպէտ և բանել կարող իցեն հակառակուբ, այլ ոչ սանանալ երբեք։

Ա. յսորիկ աղագաւ՝ի տամնեակ գիրս յայսոսիկ՝ որչափ կամք եղեն Աշմարտին այ և ոչն ձեռն տալ մեզ, Թէպէտ և նուազ քան զմանցն ակնկալուբի ըղձանաց, բայց զբաւականն այլոց ոմանց ուսումնասիրուբ հատուցաք, հերքելով զամբարշտացն դիմախօսութիս, որք զաստուածս իբեանց վերամբառնան քան զկերտող քաղաքին այ, զորմէ բուռն հարաք Ճառել։ Հնգեակ առաջինքն՝ի տասանց աստի գրոց՝ գրեցան ընդդէմ այնոցիկ, որք պաշտել զդիս արժան համարին սակս կենցաղական բարեացս։ Իսկ յետին հինգն առ այնոսիկ՝ որք պինդ ունել ասեն զդիցապաշտութիս սակս որ յետ մահու կենացն։ Ա. յսու հետև ապա որչափ առ յայ տացի օգնութիւն, ըստ խոստման մերոյ յառաջնում մատենի՝ կատարեցից զոր արժան է ասել յաղագս ծագման և յառաջադիմութե և կարևոր վախճանաց երկուց քաղաքացն, զորս յաչխարհի աստ խառն ընդ իրեարս տեսանեմք։

ԳԻՐՔ ՄԵՏՈՒՄՆԵՐՈՒ

Զորում սկսանի երկրորդ մասն մատենիս . ուր ցուցանէ Օգոստինոս զնա-գումն կրկին քաղաքաց յոտնձգան անդր բարի և չար հրեշտակաց . և յայն սակս Հառէ զխնդարուեստ աշխարհն ըստ նկարագրելոյ ճշմարիտ սատ-կան գրոցն ծննդոց :

ԳԼՈՒԽ Ա.

Զաղագս այնր մասին մատենիս՝ յորում կայ ցուցանել զսկիզբն և զկատարած երկուց քաղաքացն , երկնաւորին և երկրաւորին :

Վասնզի ասեմք այ զառ ի գրոց վկայեալն , որ ոչ ըստ դիպաց շարժման հաճոյից , այլ ըստ գերագոյն տես-չուէն տնօրինելոյ՝ ի վեր քան զՀանուրց ազգաց մտաե-նագրուիս , ճշմարիտ իշխանութիւնք գերազանցեալ՝ ընդ իւ-րով վաւերականութիւնք հնազանդեաց զմարդկան զամենա-տեսակն Ճարտարմտութեի : Վասնզի գրեալ է անդանօր . “Փառաւորեալն խօսեցաւ վ՚ը քո . ահաւադիկ քաղաքդ այ ,, . Սաղ . ՟ղ . 3 : Եւ յայլում սաղմոսի . Եէ . “ Սիճ է տէր , և օրհնեալ է յոյժ ի քաղաք այ մերոյ , ի լեառն սուրբ նորա : Հաստատմամբ ցնծասցէ ցնծութիւնք ամենայն երկիր ,, . և յետ սակաւուց . “ Որպէս լուաք , սոյնպէս և տեսաք , ի քաղաք տեառն զօրութեց , ի քաղաք այ մերոյ , Ի՚ հիմունս արկ նմա յաւիտեան ,, : Վարձեալ յայլում սաղմոսի . Եէ . “ Վնասցք գետոց ուրախ առնեն զքաղաքն այ , և սուրբ արար զյարիս իւր բարձրեալն : Ի՚ ի մէջ նորա , և նորա մի սասանեսցին ,, : Ի վկայու-թեց աստի , և յայլոց սոյնպիսեաց , զորոց յերկար է զննա-ւելն յիշատակել , ուսաք թէ կայ քաղաք իմն այ , որոյ քա-ղաքացի լինել ըղձանամք՝ այնու սիրով զոր ներգործեաց

'ի մէզ չինող նորին ։ Իսկ քաղաքացիք երկրաւոր քաղաքի զդիս իւրեանց նախասահմանեալ առնեն քան զՀաստիչ այսր սրբոյ քաղաքի , անգիտացեալք Թէ ՚ած աստուածոց է նա, ոչ աստուածոց ստոյ , ամբարշտաց և ամբարտաւանից , որք մերկացեալք 'ի նորա յանապատական և համասփիւռ լուսոյն , որով և անկեալք յապիկար իմն իշխանութէն , անցնին ը իշխանութենս ոմանս 'ի կիր արկանեն , և պատիւ ՚ածական խնդրեն 'ի պատրեալ հնազանդելոց իւրեանց . այլ ՚ած է նա աստուածոց բարեաց և սրբոց , որք առաւել ախորժեն միանն ներքոյ լինել՝ քան Թէ բազում ներքոյ ունել , առաւել պաշտել զ՚ած , քան ՚ածաբար պաշտօն առնուլ ։ Զրդ առ հակառակորդս սրբոյ քաղաքիս՝ տամանեքումբք անցելովք գրովք արարաք պատասխանի ըստ մեծումբ կարի՝ օգնականութէն ՚ան և Թագաւորին մերոյ ։ Իսկ այժմ գիտելով իմ զինչ առ չինէն ակն ունին այլք , և զիմ պարտս յուշի ունելով , վստահացեալ յօգնականութէն նորուն տեառն և Թագաւորի՝ բուռն հարից Հաւատոյ որչափ չիմումկարի է՝ յաղագս ծագմանն և յառաջադիմութէն և սեպհական վախճանից երկաքանչիւր քաղաքացն՝ որ երկրային , և որ երկնային , զորս ասացաք լինել յաշխարհի աստ իբր պատատեալս և չիրեարս խառնեալ ։ Եւ նախ առաջին ասացից՝ Թէ զիարդ ծագումն երկուց քաղաքացս կանխաւ 'ի վեր երևեցաւ 'ի զանազանութէն անդ հրեշտակաց ։

ԳԼՈՒԽ Բ

Յաղագս ՚ածգիտութէ , յորոյ 'ի ծանօթութէն ոչ որ 'ի մարդկանէ հասանի՝ Եթէ ոչ 'ի ձեռն միջնորդին ՚ոյ և մարդկան , որ է մարդն Յս ։

Ա՛ՆՑ է արդարեւ ընդխարհիկ՝ գերիվերոյ անցեալ մտաց հայեցուածք զբովանդակ մարմնական և անմարմին արարածովք՝ որ փոփոխելի ՚անաչէն , յանփոփոխականն

ժամանել խակութեի՛ այ, և անդ առ՝ ի նմանէ ուսանել՝ թէ նա միայն արար զբնութեի՛ զամենայն, որ չէ իւր ինքնութեի՛։ Ա՛ ամն զի ըստ այսմ ոչ խօսի ՚ած ընդ մարդոյ ՚ի ձեռն մարմնիզէն արարածոյ իրիք՝ յականջս մարմնիզիսս շռնդալ օդոյն բաբախմամբ ընդ հնչեցող և ընդ լսող. և ոչ իսկ ՚ի ձեռն հոգևոյզէն էակի իրիք՝ որ մարմնաձևն կերպարանիցի, զոր օրինակ յանուրջս լինի, և կամ այլազգաբար ևս. քանզի և այսպէս իբր ՚ի մարմնոյ ականջս լինի խօսեցեալ, որպէս մարմնով գոգդես խօսելով, և իբր անջպետութեի՛ մարմնական տեղեաց. վասն զի երևմունք այնպիսիք կարի նմանագոյն են մարմնոց. այլ խօսի նովինն իսկ բնիկ Ա՛ստուածութեի՛, եթէ իցէ որ յաջողեալ ՚ի լսել միտք՝ և ոչ մարմնով։ Ա՛յանգի առ այն ասան մարդոյ խօսի այսպէս, որ ՚ի մարդուն լաւագոյն է քան զայլսն՝ յորոց մարդն բաղկանայ, և քան զոր լաւագոյն՝ ած միայն է։ Ա՛ ամն զի յորժամ լինիցի խմանալ ստուգապէս, և կամ եթէ անհնարին իցէ այդ, յորժամ լիցի հաւատալ՝ թէ ՚ի պատկեր այ եղեալ է մարդ, յայտ է թէ այնուիկ իւրով մասամբ հալաւորագոյն է առ գերագոյնն ած, որով ինքն գերազանցէ քան զտորինն իւր մասունս, որովք ընդ անբանս է բաժանակից։ Ա՛յլ քանզի միտք՝ յոր բնաւորեալ է բան և հանճար, տկարանայ ախտիւք ոմանօք՝ որ խաւարեցուցիչք են և հնացեալք, ոչ միայն առ ՚ի յարելոյ վայելմամբ յանփոփոխելի լոյս, այլ և առ ՚ի հասանելոյ յայն, մինչև օր ըստ օրէ նորոգեալ և ապաքինեալ՝ մեծի այնմ երանութեի՛ լինիցի ընկալուչ, պետս ունէր հաւատովք նախ մարգելոյ և մաքրելոյ. և առ անխոտոր գնալ ընդ այդ առ Ա՛ստուածութի՛ն, նա ինքն Ա՛ստուածութի՛ն ած որդի այ լինիցի ընկալեալ զմարդն՝ անկորուստ ածութեի՛, սահմանեաց և հիմնեցոյց զնոյն հաւատս. որպէս զի եղիցի մարդոյ Ա՛նապարհ առ ած ՚ի ձեռն նորա՝ որ իցէ ած և մարդ։ Ո՛վ սա է միջնորդն այ և մարդկան մարդն Ա՛ստ Ի՛ն։ Ա՛ ամն զի նովինն իսկ է միջնորդ, որով մարդ, որով և Ա՛նապարհ։ Ա՛յանգի եթէ ընդ գնացողն և ընդ այն յոր գնայ՝ կայ միջնորդ Ա՛նապարհ, զոյ յոյս հաստա-

նելոյ . ապա եթէ չկայցէ , կամ ոչ ծանիցի որով գնասցէ պարտ է , զի՞նչ օգուտ գիտել յո՛ գնալ պարտ իցէ ։ Արդ մի միայն Հանապարհ անսայթաք հակառակ ամենայն մահացուածոցս այն է , զի նոյն ինքն իցէ ճշմ և մարդ , որով լինի գնալ առ ճշմ , և ընդ որ լինի գնալ մարդոյ ։

ԳԼՈՒԽ Գ

Յաղագս վաւերական վկայութեանն կանոնական ճշմարտութեանց գրոց ։

Արդ սա ինքն նախ մարգարէիւք , ապա անձամբ , և յետ այնր առաքեալովք խօսեալով որչափ ինչ բաւական համարեցաւ , հաստատեաց և գիրս՝ կանոնական կամ ճշմարտութիւն անուանեալ , ստուգութեամբն գերիվերոյ . ո՛րում հաւատս ընծայեմք յիրսն՝ զորս չէ պարտ անգիտանալ , և ոչ անձամբ գիտել բաւական եմք ։ Վասնզի եթէ մերովս վկայելով Հանապէղն են իրք մնասուորք մերոց զգայութեանց ներքինոցն և կամ արտաքինոց , ուստի և ներքկայք անուանին , իրք ՚ի ներքս կացեալք զգայութեանց , որպէս և առաքեալ ասէն՝ գտեալքն յանդիման աչաց , յայտ է ապա՝ զի բացակայացս ՚ի մերոց զգայութեանց՝ անգիտելի մերով վկայութիւն գոլով , զայլ վկայս խնդրեմք վասն այսոցիկ , և հաւատամք նոցա՝ յորոց ՚ի զգայութեանց գիտեմք թէ ոչ հեռի են կամ եղեն այն իրք ։ Այս զոր ա բլինակ յերևելիսն՝ զոր միանգամ մեք ոչ տեսանեմք , տեսողացն հաւատամք , նոյնպէս և յայլսն պատշաճեալս իւրաքանչիւր զգայարանաց մարմնոյ , ըստ նմին օրինակի՝ յայնս որք հոգւոյ և մտաց գան ՚ի զգայութիւն , աներեւոյթք և բացակայք ՚ի մերմէ ներքին զգայութենէ , պարտ է հաւատս ընծայել նոցա՝ որք գնոյնս ուսան կարգեալս յանմարմինն լոյս անդր , կամ նկատեն որպէս հաստատուն և ճնայուն ։

ԳԼՈՒԽ Գ

Թէ աշխարհագործութիւն ոչ անժամանակ ինչ է՝ և ոչ նորոգ խորհրդածեալ առ ի յոյն, որպէս Թէ յետոյ ուրեմն կամեցաւ՝ զոր յառաջն չէր կամեցեալ։

Հանուրց երևելեացս մեծ՝ աշխարհ է. անհրաժեշտ ըզնս ամենայնի մեծ՝ ոճ է։ Այլ զաշխարհ Թէ գոյ՝ տեսանելեաւք, և զոյ զգոլն հաւատամք։ Իսկ Թէ ոյ արարեալ իցէ զաշխարհ, ոչ ումեք հաւատամք աներկբայաբար՝ բայց նմին իսկ ոյ։ Իսկ ուր լուաք մեք զձայն նորա։ Ասէ այլ ուրեք՝ ի ժամուս ուղղապէս լսի՝ բայց ի գիրս սուրբս, յասել մարգարէի նորա. “Ի սկզբանէ արար ոճ զերկինն և զերկիրն”։ ԵԹէ անտանօթ գտաւ մարգարէս՝ միով արար ոճ զերկինն և զերկիրն. ոչ բնաւ. այլ անդ էր խնամատուին ոյ, որով ոճ ինչ եղև, որ յոգիս սուրբս փոփոխի, բարեկամս ոյ և մարգարէս յարդարէ, և զգործս իւր պատմէ նոցա ի ներբուստ անմուռնչ։ Այսոքին առ նոսա և հրեշտակք ոյ, որք հանապազ տեսանեն զերեսս հօր, և զնորա կամս ծանուցանեն որոց պիտոյ է։ Եի էր ի նոցանէ մարգարէս, որ ասաց և գրեաց. “Ի սկզբանէ արար ոճ զերկինն և զերկիրն”։ Եև և այնչափ արժանաւոր միայ է առ ի հաւատալոյ մեզ ոյ, զի նովքին հոգւով ոյ յորմէ զգայանեալքս ինքեանս ծանեաւ, գուշակեաց կանուխ ժամանակաւ զհաւատսն որ լինելոց էր ի մեզ։

Իսկ Թերևս լինիցի ասել՝ զինչ կամք եղեն մշանջենաւորին ոյ յայնժամ արարչագործել զերկինն և զերկիրն՝ զորս յառաջն չէր արարեալ նորա։ Եզոր զայս ասեմն, եԹէ արդարեւ նշանակել կամիցին Թէ մշանջենաւն է աշխարհ և անսկիզբն, որով և անարար առ ի յոյ, մեծապէս օտարացեալ են ի ձշմարտութենէ, և մոլեգնին ամբարշտութեանն մնհաւաքեր ախտիւ։ Եայն զի առանց իսկ մարգարէականացն պատգամաց, աշխարհ ինքնին իւրոյին ամենայարդար փոփոխմամբն և շարժմամբ, և բո-

լոր երևելեացս հրաշագեղ տեսակաւ լսելեացն իմն կար-
դայ , Թէ եղական է ինքն , և յայ միայն եղանելի՝ այն որ
անճառաբար և աներևակեալս մեծն է , անճառութիւն և ա-
ռանց տեսութեան գեղեցիկ : Իսկ որք ընդունին առ յայ
եղեալ զաշխարհ , բայց չիամին տալ նմա սկիզբն ժամա-
նակի , այլ միայն զարարչութիւնն , որպէս Թէ միշտ լեալ
իցէ գոյացարիմաց իմն օրինակաւ , այսու Թէ և ասել ա-
սէն ինչ առ ի բաց տանելոյ յայ զդիպուածոյ բերութիւն ,
զի մի կարծիցի յանկարծ անկեալ ի միտս նորա՝ առանց
յառաջն խորհելոյ բնաւ՝ արարչագործել զաշխարհ , և
նորոգապէս զնոյն կամեցեալ , ուր նա ոչ միով իւրք փոփո-
խելին է , սակայն ոչ իմանամ Թէ յայլ իրս զիաւրդ տեղի
ունիցի այդ պատճառ , և մանաւանդ ի հոգւոջ , զոր և
Թէ յաւիտենականէ այ դնիցեն , ուստի արդեօք դիպեացի
նմա նոր Թշուառութիւն՝ որ յառաջ յաւիտեանսն չէր ի
նմա , չկարեն բնաւ արտայայտել : Այանդի եթէ ասի-
ցեն՝ փոխանակաւ լինելոյ ի նմա Թշուառութիւն և երջան-
կութիւն , հարկ է ասել նոցա՝ Թէ նոյնպէս միշտ փոխանա-
կաւ լինիցի . որով ըմբռնեսցին յայս անտեղի բան , Թէ
նա և յերջանիկն կոչել զհոգի՝ ոչ իցէ նա երջանիկ , եթէ
յառաջ տեսանէ զապագայ գլուխ Թշուառուէ և զտեսիլ-
ծութիւն . իսկ եթէ ոչ տեսանելով՝ համարիցի զանձն լինել
միշտ երջանիկ , և ոչ Թշուառ լինելոյ և տեղիք , ապա
սուտ կարծեօք իցէ երջանիկ . և զինչ քան զայդ անմտա-
գոյն ինչ լինիցի ասել : Այլ եթէ համարիցին՝ Թէ ար-
դարեւ ի յառաջագնաց յանքաւ յաւիտեանն եղև ի հո-
գւոջ փոփոխակի երանութիւն և Թշուառութիւն , բայց արդ
ազատացեալ , ոչ եւս դառնայցէ ի Թշուառութիւն , այսու
ահա յանդիմանին՝ Թէ հոգի ոչ բնաւ երանելի լեալ է
իսկապէս , այլ յապա սկսանիցի լինել նոր իմն և անխաթ
երանութիւն՝ որով ունին խոստովանել Թէ ի վերայ գայ
նորա ինչ մի նոր . և այն՝ մեծ և չքնաղ , ոչ երևեալ ի
նմա երբեք յանցեալ յաւիտեանս : Իսկ զնորոյ հանգա-
մանացս Ճանաչութիւն եթէ ասիցեն ոչ ունել այ ի յաւիտե-
նականն խորհրդի իւրում , ապա ասիցեն նոյնպէս՝ ոչ լի-

նել՝ այ նեղդործիչ երանութե՛ հոգւոյն , որ կարի ամբա-
ըշտուե՛ է ։ Այս եթէ ասիցեն՝ թէ ՚ած ինքնին նորոգա-
պէս ընդ միտ ածեալ իցէ՝ զի կատարեալ լինիցի հոգին և-
բանեղի յաւիտեան , զինքդ՝ ի փոփոխականութե՛ անտի՝
ընդ որ և ինքեանք չհաւանին , անբաժ ցուցանիցեն
զ՚ած ։ Այլ արդ թէ ժամանակաւ ստեղծեալ ասիցեն
զհոգի , այլ ոչ սպառիլ ժամանակաւ , ըստ օրինակի թուոյ՝
սկիզբն ունելով , և ոչ կատարած , որոյ վասն զիտէ ա-
ռեալ միանգամ թշուառութե՛ եթէ ազատանայցէ յայն-
ցանէ՝ ոչ ևս այլ թշուառասցի , մի երկբայեսցին ուրեմն
թէ այդ կատարի՝ անփոփոխ մնալով խորհրդոյն ՚այ ։
Այլա սոյնպէս հաւատասցին , թէ հնար կը և աշխարհի
գոյանալ ժամանակաւ , այլ ոչ փոփոխիլ յաւիտենական
խորհրդոյ և կամաց ՚այ յարարչագործելն զայն ։

ԳԼՈՒԽ Ե

Ձի արժան զնոսա ածել նախ քան զաշխարհ՝ անսահման միջոցս ժամանա-
կաց , որպէս և ոչ անսահման միջոցս տեղւոց ։

Յաջոյ վայրի դրբա՝ որ զ՚ած Ճանաչէն լինել աշխար-
հի արարող , և՛ի միոջ հարցանէն պատասխանել վասն
ժամանակի աշխարհի , աղէ տեսցուք՝ զինչ և ինքեանք
ունիցին պատասխանել վասն տեղւոյ աշխարհիս ։ Վասն
զի զոր օրինակ հարցափորձ լինէի՝ թէ առիմ՞ արարա-
չայն ինչ ժամանակ և ոչ յառաջ քան զայն , նոյնպէս
հարցաքննել մարթի և՝ ընդէր ասա արարաւ ուր այժմ
կայ , և ոչ մնաւանդ այլ ուրեք ։ Վասն զի եթէ միջոցս
անբաւս ժամանակի զմնաւ ածէն նախ քան զաշխարհ ,
յորս անմարթի համարին կալ ՚այ անգործ , խորհեսցին
նոյնպէս միջոցս անբաւս տեղեաց արտաքոյ աշխարհի ,
յորս թէ գտաւորի կալ ամենազօրին անհաւանելի ասի-
ցէ ոք , ո՛չ սպաքէն ստիպին աշխարհս անեծուելիս կեր-

զել ընդ Կալիկուբայ, այնու և եթե որոշեալք ի նմանէ, զի Կալիկուբոս ասէ՝ յախուռն շարժմամբք հիւղէից ծը-նանել և լուծանիլ աշխարհացն այնոցիկ, իսկ սոքա ունին ասել առ ի յայ արարչագործեալս, քանզի չհաւանին դատարկ կալ այ ընդ անեզը անչափութեի վայրացն ամե-նատիպիս տարածելոց արտաքոյ աշխարհի, որպէս և ասեն՝ թէ անմարթ է աշխարհացն այնոցիկ եղծանիլ ի պատ-ճառէ իմիք, որպէս և զայս աշխարհ անեզծանելի հա-մարին։ Կանգղ աստանօր խօսիմք ընդ այն իմաստասէրս, որք միախորհ ընդ մեզ՝ անմարմին ճանաչեն զաած, և զնա ստեղծիչ բոլորից բնութեանց՝ որ չեն աած. իսկ զայլ իմաս-տասէրս ոչ արժան վարկանիմք խառնել յայս զրոյցս կրօ-նից. մանաւանդ զի առ Հաւատմատութիւն այսպիսի փիլի-սոփայից՝ որք օրէնս համարին պաշտօն տանել բազմաց աստուածոց, սոքա պղատոնականքս գերիվերոյ գտան քան զայլ իմաստասէրս աղնուականութեամբ և իշխանութեի, ոչ այլով իւիք՝ բայց զի Թէ և մեծաւ խորհրդաւ տարա-կայք են ի չէմարտութենէ, այլ հպատուորագոյնք քան զայլս։

Զդ սոքա որք զայ գոյացութեի անվայրապիակ համա-բին և անսահմանելի և անտարած տեղեաւ, այլ ըստ ո-բում վայելչական է խորհել զայ, խոստովանին զնա ներ-կայութեի անմարմնականաւ ամենայն ուրեք բովանդակ, միեի ասիցեն արդեօք՝ Թէ բացակայ եղով ի բազմա-թիւ միջոցաց տեղեաց որ արտաքոյ աշխարհի, ամիոս-փեալ կայ ի տեղոջ ուր աշխարհս է, որ կարի անձուկ է առ նորա անբաւութեին։ Կարծեմ ցայս վայր բանդա-դուշել նոցա։ Այլ քանզի զմի զայս աշխարհ՝ Թէ և մեծաքանակ՝ այլ սահմանաւոր ասեն, և յիւրում տեղոջ վակեալ, և առ յայ կերտեալ, զոր ինչ պատճառս տան այ անգործ կալոյն յանհամար տեղիսն արտաքոյ աշխար-հի, զնոյն տացեն պատասխանի՝ Թէ ոչ զի վասն անգործ կայր աած յանբաւ ժամանակին նախ քան զաշխարհ։ Կրկ զոր օրինակ անհեռաւութեի է ասել՝ Թէ դիտուածով իմն, քան Թէ ածելոյն խորհրդով կարգեաց աած զաշխարհ ի տեղոջս յորում է, և ոչ յայլում, ուր միօրինակ եղելոց

անբաւից տեղեաց՝ ոչ առաւելագոյն ինչ արժանաւորութիւն կայր զայս ընտրել, Թէպէտ և ՚ծծեղէնն ամենայն խորհրդոյ՝ որով եղեն, մարդկեղինս ոչ լինի հասու, այլ պէս անհետևութիւն է կարծել Թէ դէպք ինն եղեն ՚ի յօրինել զաշխարհ յայն ինչ ժամանակ՝ քան Թէ վաղագոյն. որովհետև վաղնջականքն ժամանակք միապէս անցեալք էին ընդ անբաւ միջոցս, և ոչ կայր խոիր՝ ըզժամանակ քան զժամանակ ընտրել նախապատուհանեալ Թեամբ. Լոկ Եթէ ասէն, ընդունայն խորհուրդք են մարդկան՝ երևակերպել տեղիս անբաւս, ուր ոչ բայ յաշխարհս չիք բնաւ տեղի, առնեմք նոցա պատասխանի. նոյն օրինակ զուր խորհին մարդիկ ժամանակս անցեալս իբր անգործ կալով ՚ի, զի յառաջ քան զաշխարհ ժամանակ ինչ ոչ գոյ։

ԳԼՈՒԽ Ը.

Ընթացութիւն աշխարհի և ժամանակի՝ մի է սկիզբն, և ոչ կանխէ միւն քան զմիւսն։

Այժ ուղղութիւն զանազանին յաւիտեանն և ժամանակին, այսու՝ զի ժամանակին ոչ է առանց յեղյեղուկ փոփոխութեանէ իրիւք, իսկ ՚ի յաւիտեանն փոփոխումն չիք, ո՛ր չառնու ՚ի միտ՝ Թէ ժամանակք ոչ լինէին, եԹէ չէր լեալ արարած ինն որ շարժութիւք իւիք առնիցէ փոփոխութիւն ինչ. և զի այդպիսի շարժման և փոփոխման մասունքն չէն միաւանական, յորժամ միւն տեղի տայ և միւսն յաջորդէ, ջնէտ գայ ժամանակ ըստ կարճառև կամ երկարաձիգ ընդմիջութեանէ։ Այդ որովհետև ՚ծծ՝ յորոյ ՚ի յաւիտենականութեանէ չիք բնաւին փոփոխումն, արարիչ ժամանակաց է և անտեսիչ, ոչ խմանամ զինքդ մարթ իցէ ասել՝ Թէ յետ շրջանաց ժամանակաց ստեղծեալ իցէ զաշխարհ. ապա Թէ ոչ՝ պարտ էր ասել, ստեղծուած որ լեալ

իսկ նախ քան զաշխարհ, որոյ շարժմամբք ձգեալ իցէն ժամանակք։ Իսկ եթէ գիրք սուրբք և ամենայնիւ Հնմարտաձառք՝ յասել անդ, ՚ի սկզբանէ արար Աստ զերկինն և զերկիրն, տան իմանալ թէ ոչ ինչ կայր արարեալ յառաջըն, ասա թէ ոչ զայն մանաւանդ ասել պարտ էր արարեալ ՚ի սկզբանէ, եթէ արդարեւ արարեալ էր այ ինչ մի յառաջ քան զայլ եղականս, անշուշտ ասա ոչ ՚ի ժամանակի եղև աշխարհ, այլ զոյգ ընդ ժամանակի։ Այսպէս զի եղեալն ՚ի ժամանակի՝ գոյանի և յհոյ յառաջ քան զժամանակ ինչ։ յհոյ՝ քան զանցեալ ժամանակն, և յառաջ՝ քան զապառնին. բայց ժամանակ ինչ անցեալ չկայ բեր լինել, զի ոչ գոյր սահմանած ինչ՝ որոյ յարափոխ շարժմամբքն կատարիլի։ Իսկ զոյգ ընդ ժամանակի եղեալ գոյանի աշխարհ, եթէ ՚ի կազմուէ նորա լեալ իցէ շարժուն փոփոխական. և զայդ իսկ ցուցանէ կարգուածն՝ առաջնոց վեցից և եօթանց աւուրցն, յորս կայ առաւօտու և երեկոյի անուանց նշանակ. մինչև համարձակործեալքն Հայ յայն աւուրս՝ կատաբեսցին ՚ի վեցերորդումն, և յեօթներորդին մեծարեսցի դադարումն այ ՚ի ցոյցս մեծի խորհրդոյ։ Այլ թէ որպիսի նշանակիցին աւուրքս, մեզ կաբի դժուարին և անհնար իսկ է խորհել, և առաւել ևս յայտնաբանել։

ԳԻՐՔ Ա.

Ցաղագս հանդամանաց աւուրցն առաջնոց՝ որոց ընծայի երեկոյ և վաղորդայն՝ նախ քան զգոյանալ արևու։

Այսն զի զաւուրքս մեզ սովորականս տեսանեմք՝ զի չունին երեկոյ, բայց ՚ի մտանել արևու, և ոչ վաղորդայն՝ բայց յարևուն ծագել. իսկ նախկին երեք աւուրքն կատարեցան առանց արևու, որ ՚ի չորրորդումն ասի արարեալ։ Այսպէսն նախ առաջին լուսոյ եղանումն պատմի՝ բա-

նիւն ՚այ, և մեկնել ՚այ ՚ի մէջ լուսոյ և ՚ի մէջ խաւարի, զլոյսն տիւ կոչելով, և զխաւարն՝ գիշեր։ Ա՚ԱՀ Թէ որպիսի ինչ էր այն լոյս, և որով յաջորդական շարժմամբ՝ զոր երեկոյ և զառաջորդայն գործէր, անմատոյց է մերոց զգայութեանց, և զորպէսն գիտել անկարանամբ։ Բայց աներկբայաբար հաւատալ պարտ է։ Ա՚ն զի կամ լոյս ինչ է մարմնեղէն, կամ ՚ի բարձրագոյն մասունս աչխարհի՝ տարածիլ ՚ի մերմէ տեսութենէ, կամ՝ անտի յետոյ վառեցաւ արեգակն, և կամ լուսոյ անուամբ նշանակեցաւ քաղաքն սուրբ՝ ՚ի սուրբ հրեշտակսն և յոգիս երանելոյս, զորմէ առաքեալ ասէ. “Ա՚ն երկինն Երուսաղէմ ազատ է, որ է մայր մեր ամենեցուն„. Գաղ. Դ. 26։ Եւ այլուր. “Օ՚ի ամենեքին որդիք լուսոյ էք, և որդիք տունջևան. չեմք գիշերոյ, չեմք խաւարի„. ա. Թես. Ե. 5։ Թվերևս առ՚ի կարող լինելոյ մեզ իմանալ ՚ի Նահ ինն զերեկոյ և զվաղորդայն այսր աւուր, մարթ իցէ ասել այսպէս։ Ա՚ն զի գիտութիւն ստեղծուածոյ երեկոյանայ զոգեղէս առ գիտութեամբ ստեղծչին. և նոյն զարձեալ լուսանայ և առաւօտ՝ յորժամ ՚ի գովութիւն վերաբերի և ՚ի սէր աբարչին, և ոչ ՚ի գիշեր շրջի՝ ուր առ սիրոյ ստեղծուածոյ ոչ էքանի ստեղծչին։ Վարձեալ ՚ի Թիւ արկեալ գրոյն զաւուրան զայնոսիկ կարգաւ, ոչ ՚ի կիր առ զնուն գիշերոյ. զի ոչ ուրեք ասաց, եղև գիշեր. այլ Թէ “Եղև երեկոյ, և եղև վաղորդայն՝ օր մի„. սոյնպէս օրն երկրորդ, և հետեւեալքն։ Վ՚ասզի Նահապետն ստեղծուածոյ չինքեան՝ աղօտագոյն է քան զոր Նահապետ յիմաստութենն ՚այ Էր ՚ի նախատիպ արուեստի՝ որով Հաստեցաւ. սորին վասն ՚ի դէպ և ասել երեկոյ՝ քան գիշեր. որ և գնայ յառաւօտ Եթէ որպէս ասացի, ուղղեացի յօրհնել և ՚ի սիրել զարարիչն։ Օ՚այս յորժամ առնէ արարածն ՚ի Նահապետն իւրոյ անձինն, օր մի է. ՚ի Նահապետն Հաստատութենէն՝ որ ընդ ներքին և ընդ վերին ջուրսն երկին կոչեցաւ, օր երկրորդ է. ՚ի Նահապետն ցամաքի և ծովու և Համայն բուսաբերաց արմատացելոց յերկրի՝ օր երրորդ է. ՚ի Նահապետն մեծ և փոքր լուսաւորաց և ամենայն աստեղաց՝

օր չորրորդ է . ի Հանապազման ջրածին կենդանեաց լուսա-
կանաց և թևաւորաց՝ օր հինգերորդ է . ի Հանապազման
բոլոր ընտանեաց յամաքային և նոքին իսկ մարդոյ՝ օր
վեցերորդ է ։

ԳԼՈՒԽ Ը.

*Ջուր և զորախոխ եղեւ խմանալ Հանգիստ ասի , որով յետ վեցօրեայ գործոց
Հանգեաւ յեօթներորդումն ։*

Ասէ յասելն՝ թէ Հանգեաւ ած յաւուր եօթներորդի
և սրբեաց զնա , ոչ եթէ ախմարաբար առնուլ արժան է ,
իբր այն թէ խանջեալ եղեւ ասի ՝ի գործելն , որ ասաց , և
եղև , խմանալն և անանցական բանիւ , և ոչ ձայնատու և
ժամանակեալ ։ Այլ Հանգիստն ասի նշանակէ զՀանգիստ
ասեցիկ՝ որք Հանգչին յած . զոր օրինակ , ցնծութեն տանն՝
զասեցիկ որք ՝ի տան անդ ցնծան՝ նշանակէ , թէպէտ և
ոչ եթէ տունն ինքնին ուրախ առնէ զնոսա , այլ այլ ինչ ։
Վասն և առաւել , եթէ և տունն իսկ իւրովն վայել-
չութեբ խրախ առնիցէ զընակիչսն , մինչ զի ուրախ ասիցի
տունն ոչ միայն յայն ոձ՝ ասացուածոյ՝ որով զպարուճա-
կեալն անուամբ պարուճակողին բացատրեմք , որպէս յա-
սելն , Թատերք ծափս հարկանեն , դաշտք բառաչեն ,
իմա վասն ծափս հարկանելոյ մարդկան ՝ի Թատրոնս , և
եզանց ՝ի դաշտս բառաչելոյ , այլ և յայն ոձ՝ որով յանուն
պատճառին նշանակի գործն . որպէս նամակ զուարթ ասի՝
նշանակեալ զուարթանալ զոր յընթերցանելին ներգործէ ։
Այլս կարի յարմարութեամբ ՝ի պատումն մարգարէական
յիշատակադրին Թէ Հանգեաւ ած , նշանակի Հանգիստ
ասեցիկ՝ որք ՝ի նմա Հանգչին , և զորս նա Հանգուցանէ ։
Այն և խոստանայ մարգարէութեբն առ մարդիկ ընդ-
որս խօսի , և վասն որոյ իսկ գրեցաւ , Թէ նոքին յետ բա-
րեգործութեբն զորս ՝ի նոսա և նոքօք յաջողէ ած , եթէ
նախ յաստի կեանս ՝ի նա յարեսցին Հաւատովք , ունկիցին

'ի նմա ղՀանդիսան յաւիտենից. և զայն օրինակեցաւ զաշ
տարկութիւն շաբաթուն առ նախնի ժողովուրդն ՚այ 'ի
հրամանէ օրինաց, զորմէ մանր խօսել'ի դէպ վարկանիմ
յիւրում տեղոջ։

ԳԼՈՒԽ Թ

Ջինչ արժան է կարծել յաղագս արարչութեան հրեշտակաց ըստ ածողոցն վկայութեանց։

Այժ արդ քանզի խօսել յանձն առեալ է իմ յաղագս
ծագման քաղաքին սրբոյ, և զառաջինն 'ի դէպ համա
րեցայ ասել վասն սրբոյ հրեշտակաց, որ են ընտրելագոյն
մասն այնր քաղաքի, և այնչափ ևս բարերջանիկ, որչափ
ոչ բնաւ օտարացեալ է անտի, զոր միանգամ վասն այսր
ակնարկեն ածողքն վկայութիւնք, ջանացայց բացայայտել
հնարհելոյին ՚այ, որչափ բաւական թուիցի։ Այր յաղագս
աշխարհարարութեանն Ածուն սրբազան մատեանք, յասեն
յայտնապէս՝ թէ երբ կամ զիարդ ստեղծեալ իցեն հրեշ
տակք. բայց և ոչ լռեն խոպառ. այլ կամ անուամբ երկնի
նշանակի յասելն. "Այ սկզբանէ արար ՚ած զերկինն և զեր
կիր,,. կամ մանաւանդ անուամբ լուսոյ՝ զորմէ մեր բանս
է։ Այս այնու զանց ոչ արար զնոցանէ գիրն, վասն զի գրեալ
է. "Հանգեաւ ՚ած յաւուրն եօթնեներորդի յամ գործոց
իւրոց՝ զոր արար,,։ Իսկ զլուխ գրոյն ասէ. "Այ սկզբանէ
արար ՚ած զերկինն և զերկիր,,. յայտ իմն առնելով թէ յա
ռաջ քան զերկինն և զերկիր այլ ինչ ոչ է արարեալ։ Այայս
զի յերկինն և յերկիր արար սկիզբն, և երկիրն նախեզակ՝
ըստ որում'ի վերայ բերեալ ասէ գիրն, "աներևոյթ էր և
անպատրաստ,,, և մինչև եղեալ լուսոյ "խաւար էր 'ի
վերայ անդնդոց,,, այն է 'ի վերայ միախառնն կուտակու
թեն հողոյ և ջրոյ. զի ուր լոյս ոչ է, 'ի հարկէ խաւար
լինի. և զի յետ այսր բովանդակ ստեղծեալ յօրինեցան՝ որ
ինչ միանգամ'ի վեց աւուրս պատմին կատարեալ, զիարդ

ասա արտաքոյ ինային հրեշտակք՝ իբր այն թէ չիցեն ի գործոց իւր, յորոց հանգեաւ յաւուրն եօթներորդի։ Իսկ թէ հրեշտակք գործած են իւր, թէպէտ և ի ծնունդս գիւրս ոչ զանց արարաւ, և ոչ յայտնապէս ծանուցաւ, սակայն այլուր յայտնաբարբառ վկայէ սուրբ գիրն։ Վասնզի յերկոսեքին մանկանցն ի հնոցին՝ յետ ասելոյն "Երկնեցէք առնեայն գործք տեառն,, ի կարգի գործոցն այնոցիկ յիշատակին և հրեշտակք։ Այլ և սաղմոսն երգէ. "Երկնեցէք զտէր յերկնից, օրհնեցէք զնա ի բարձանց։ Երկնեցէք զնա ամենայն հրեշտակք նորա. օրհնեցէք զնա ամենայն զօրութիք նորա։ Երկնեցէք զնա արեգակն և լուսին. օրհնեցէք զնա ամենայն աստեղք և լոյս։ Երկնեցէք զնա երկինք երկնից, և ջուրք որ ի վերոյ քան զերկինս օրհնեցէք զանուն տեառն։ Ով ի նա ասաց և եղեն. հրամայեաց և հաստատեցան։" Այդ և աստ յայտնապէս վկայեցաւ ի հոգւոյն՝ թէ հրեշտակք չիցեն արարած. իբր զի յետ յիշելոյ զնոսա զայդ ընդ այլ երկնային արարածս՝ ի վերայ բերի վասն ամենեցուն. "Ով ի նա ասաց և եղեն,, Իսկ իշխիցէ ոք արդեօք կարծել՝ թէ յետ ամենայնի ի թիւս արկելոյ ի վեց աւուրսն եղեալ իցեն հրեշտակք։ Այլ թէ և ոք յայդ միտս զառաջանիցի, յանդիմանէ զնմանն կարծիսդ միւս դիր նոյնպէս վաւերական, ուր ասէ ՏՏ. "Երբժամ եղեն աստեղք ծիրքն համ հրեշտակք իմ (կամ աստեղացն) օրհնեցին զնա մեծաձայն, և ամենայն հրեշտակք իմ գովեցին,,։ Այս ուրեմն կայէն հրեշտակք ի ստեղծանել աստեղացն, որք եղեն յաւուրն չորրորդում։ Եւ թէթէ ասիցեմք արարեալ զնոսա յաւուրն երրորդի։ Ի բաց տար. զի յայտնի է՝ որ ինչ յայնմ աւուր արարաւ. ապաքէն ցամաքն բաժանեցաւ ի ջուրց, և երկու տարերքս ընկալան ուրոյն ուրոյն կերպարանս սեպհականս. և երկիր վերընձիւղեաց զարմատացեալս յինքեան։ Կամ արդեօք յերկրորդ աւուրն. և ոչ այդ ի դէպ գայ. քանզի յայնժամ եղև հաստատութիւն ընդ վերին և ընդ ներքին ջուրսն, երկինք անուանեալ. և ի հաստատութիւնն անդ եղեն աստեղք յաւուր չորրորդի։

Ուրեմն եթէ արդարեւ հրեշտակք՝ ի վեցօրեայ գործոց սակի էն, նոքին իսկ էն լոյսն՝ սիւս անուանեալ. և՝ ի ցոյց միւնչեւ նորա ոչ ասացաւ օր առաջին, այլ օր մի։ Կամ ոչ այլ է օրն երկրորդ, կամ երրորդ, և կամ այլքն և այլ նոյն մի օր կրկնեցաւ առ՝ ի բովանդակելոյ զթիւն վեցեակ կամ եօթնեակ՝ ի պատճառս վեցեակ կամ եօթնեակ ձանաչմանն. այս է՝ վեցեակն գործոց եղելոց յոյ, և եօթնեակն՝ հանգստեանն այ։ Ոչ ասե զի յասել՝ Կղին լոյս, և եղև լոյս.,, եթէ արդարեւ հրեշտակացն արար չուեթէ ակնարկի դովին լուսոյ, յիրաւի ապա հաղորդք եղեն նոքա յաւիտենից լուսոյն, որ այն ինքն է անայլայլական իմաստութեն այ, որով ամենայն ինչ եղև, զոր և ասեմք միաձին որդի այ. որպէս զի նովին լուսոյն լուսաւորեալք ոբով ստեղծան, լինիցին լոյս, և անուանեսցին սիւ՝ հաղորդք դուեթէ անփոփոխ լուսոյն և տունջեան, որ է Հանն այ, որով և ինքեանք և ամենայն ինչ եղեն. այն է՝ Լոյսն Ճշմարիտ, որ լուսաւորէ առնէ զամենայն մարդ՝ որ գալոց է յաշխարհ,,։ Կոյն լոյս է՝ որ լուսաւորէ և զամենայն հրեշտակ սուրբ, զի եղիցի լոյս՝ ոչ լինքեան, այլ յաած. յորմէ թէ՝ ի բաց կացցէ հրեշտակն, լինի անսուրբ, որպիսիք են այսք պիղծք անուանեալքն, ոչ ևս լոյսք՝ ի տէր, այլ խաւարք լինքեանս, անբաժք՝ ի յաւիտենից լուսոյն։ Օ՛ի չար ոչ ընուեթէ ինչ է, այլ կորուստ բարւոյն՝ անուն չարի ընկալաւ։

ԻՒ ՅԱԻՏ Ս Ո

Ցաղագս պարզ և անփոփոխելի խակուեթէ երրորդուեթէ և միոյ ձեռնեթէ հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, յորում ոչ այլ է որպիսուեթէ, և այլ՝ գոյացուեթէ։

Ա՛ՊԱ ուրեմն միակ բարի է պարզ, և վասն այն միայն անփոփոխելի, որ ինչ է ՝ձ։ Ի բարւոյ աստի ստեղծան ամենայն բարիք, այլ ոչ պարզք, որով և փոփոխելիք։

Ստեղծեալս ասեմ կամ եղականս, այսինքն արարեալս, և ոչ ծնեալս։ Քանզի որ ի պարզական բարւոյն ծնեալն է, նոյնպէս և ինքն է պարզ, և է որ ինչ և ծնողն. և զերկոսեան միանգամ զայս կոչեմք Հայր և որդի, և երկաքանչիւրն ի նոսա է ընդ հոգւոյն սրբոյ. և այս հոգի հօր և որդւոյ՝ առանձին նշանակաւ այսր անուանն՝ հոգի սուրբ վերագոյն ի սուրբ գիրս։ Ոչ այլ ումն իսկ է՝ քան զՀայրն և զորդի. զի ոչ Հայր է, և ոչ որդի։ Քանզի՝ այլ ումն, և ոչ այլ իմն. քանզի և սա նոյնպէս պարզ է, և նոյնպէս բարի՝ անփոփոխ և մշտնջենաւորակից։ Ոչ երկորդութեամբ այս՝ մի ասի է. և ոչ անբաժ ի պարզութենէ՝ վասն լինելոյն երկորդութեան։ Քանզի ոչ յայն սակս պարզական ասեմք զայս բարւոյ բնութենէ, իբրև զի Հայր միայն է ի նմա, կամ որդի միայն, կամ հոգի սուրբ միայն. կամ թէ լոկ երկորդութեամբ անուանի իցէ՝ առանց էնթակայութեան անձանց, զոր օրինակ սաբելեան աղանդաւորք կարծեցին. այլ այնու ասի պարզական, զի զոր ունի՝ նոյն ինքն է, բայց յայնմանէ որ առինչնանակ է իւրաքանչիւր անձին առ այլ։ Քանզի ապաքէն Հայր ունի զորդի, այլ ինքն չէ որդի. և որդի ունի զՀայր, այլ չէ ինքն Հայր։ Այսուհանդերձ յայնմ որով յայնմ որ առ ինքն ասի և ոչ առ այլ, նոյն է զոր ունին. զոր օրինակ՝ առ ինքն ասի կենդանի, յայտ է թէ ունելով զկեանս, և ինքն իսկ կեանք է։

Այլ յայն սակս ասի բնութենէ պարզական, զի ոչ ունի ինչ՝ զոր կամ կորուսանել հնար իցէ, կամ այլ ինչ իցէ ուրանոյն՝ և այլ զոր ունին. զոր օրինակ անօթն ունի զՀեղանելութիւն, կամ մարմինն զդոյն, կամ օդ զլոյս և զտօթ, կամ հոգի բանական զիմաստութիւն. յորոց և ոչ մի այն ինչ է զոր ունին. զի ոչ անօթն Հեղանելութիւն է, և ոչ մարմին՝ դոյն, և ոչ օդն լոյս կամ տօթ, և ոչ բանական հոգին իմաստութիւն է։ Այլ բոլոր աղագաւ մարթ է պակասիլ սոցա յիւրացն զոր ունին, կամ փոխագարձիլ յայլ ունակութիւնս և որակս, որպէս եթէ անօթ դատարկեսցի ի հեղանելութեան որով լցեալն է, և մարմին տժգունեսցի, և օդ մթնեսցի կամ զովասցի, և հոգի մարդոյն յիմարեսցի։ Այլ թէ և կայ-

ցէ մարմին անապականացու, որպիսի խոստացեալ իսկ է սրբոց՝ ի յարութեանն, ունել ունի զանապականութեն անկորուստ հանգամանս, բայց մնալով մարմնեղէն գոյացութեն՝ ոչ է ինքն անապականութեն։ Վասնզի այս կայ ողջիկ բովանդակ յիւրաքանչիւր մասունս մարմնոյ, և չէ ուրեք առաւել, և այլ ուրեք նուազ. զի ոչ մի մասն անապականագոյն է քան զմիւս. իսկ ինքն մարմինն մեծագոյն է՝ ի բոլորումն՝ քան ՚ի մասին. և ուր մի մասն ՚ի նմա է մեծագոյն, և միւսն փոքր, ոչ եթէ մեծագոյնն անապական և է քան զփոքրն։ Այսն որոյ այլ ինչ է մարմինն՝ որ չկայ ողջիկ յամենայն յիւր մասունս, և այլ անապականութեն՝ որ ողջիկ կայ յամենայնի. զի ամենայն մասն մարմնոյ անապականացուի՝ զուգաբար անապական է ընդ այլոց անհաւասար մասանց։ Վասնզի՝ օրինակ իմն, փոքր գոլով մատին քան զձեռն ողջոյն, ոչ այնու անապականագոյն է ձեռն քան զմատն. ուստի թէպէտ և անհաւասարք են ձեռն և մատն, այլ հաւասար է անապականութեն ձեռին և մատին։ Այս այսպէս՝ թէպէտ և անապականութեն անչափութեան է յամենայն մարմնոյ անտի, բայց գոյացութեն որով մարմին է, այլ ինչ է, և այլ որակն՝ որով անապական վերակոչի. ուստի ոչ ինքն այն ինչ՝ զոր ունի։ Այլ և բանական հոգին թէ և յաւէրժ իմաստուն իցէ, որպէս յորժամ ՚ի յաւիտենական աղատութեն վայելիցէ, բայց հաղորդութեամբ անայլայլակ իմաստութեն լինիցի իմաստուն, որ չէ նոյն ինքն. քանզի և օդ եթէ անհուաղելի պահեսցի՝ ի լուսոյն սփռեցելոյ, ոչ այնու չլինի այլ ինքն, և այլ լոյսն որով լուսաւորի։ Այս ասելով ոչ զայն կամիմ ասել, իբր թէ հոգի իցէ օդն, ըստ կարծելոյ ոմանց ՚ի փիլիսոփայից՝ սրբ զնութեի անմարմին չկարացին ածել զմտաւ։ Այսայն թէ իբրզ այդ թէ և կարի տարբերեալք՝ ունին զնմանութեի ինչ յայսոսիկ. մինչ զի ոչ տարակուսել ինչ լինի ասել, թէ այնպէս լուսաւորի անմարմին հոգի անմարմնականաւն լուսով պարզական իմաստութեամբ, որպէս օդոյ մարմինն լուսաւորի մարմնեղէն լուսով. և զոր օրինակ խաւարի օդա՝ զրկեալ ՚ի լուսոյ յայսմանէ,

քանզի ոչ այլ ինչ է խաւարն ասացեալ տեղեաց ոմանց՝ բայց օդ լուսազուրկ, սոյնպէս խաւարի Հոգի երբ զրկի յիմաստութենէն լուսոյ։

Ի՛պա ուրեմն վասն այնորիկ պարզ ասէն որ ինչ տիրապէս և իսկապէս ՅԱծայինք են. զի ոչ այլ է ՚ի նոսա ոբաղին, և ոչ այլ գոյացութիւնն, և ոչ հաղորդութիւն այլոց են ՅԱծայինք, կամ իմաստունք, կամ երանելիք։ Ի՛պաքէն ՚ի սուրբ գիրս Ի.Մակ. Է. 22. Հոգին իմաստութիւն բազմաբաշխ ասացաւ, այնու զի բազումս ինչ յինքեան ունի. բայց զոր ինչ ունի, նոյն ինքն իսկ է, և այն ամենայն մի է։ Ոչ ունի բազում իմաստութիւն, այլ մի և եթէ է, յորում կան անչափ և անբաւ գանձք իմանալեացն իրաց. և ՚ի նոսա աներևոյթ և անայլայլակ պատկերք իրաց եւս և երևելեաց և փոփոխելեաց, որ նովաւն եղեն։ Ի՛ասն զի ոչ եթէ յանգիտս ինն արար ինչ ՅԱծ, զոր և ոչ գՅԱարտաբաց մարգկան ասել ուղղութիւ՝ մարթ է. իսկ եթէ գիտելով արար զամենայն, յայտ է թէ զայնս զոր գիտէրն՝ արար. ընդ որ զարմանս ինն առնուն միաբ, բայց և ՅՀգրիտ առանեն, իբր զի անծանօթ մնայր մեզ աշխարհս՝ եթէ չլինէր. այլ լինել կարէր՝ եթէ ոյ չէր ծանուցեալ։

ԳԻ ՅԻՒՍ ԺՒ.

Ընդէ՞ք երանութենէն՝ զոր սուրբ հրեշտակք ընկալան միշտ ՚ի ակզբանէ անտի, բաժանորդս արժա՞ն իցէ կարծել և զգիան՝ որք ՚ի ՅՀմարտութենէ ոչ կացին։

Ի՛ զի այսորիկ այսպէս, Հոգիքն զորս հրեշտակս առեմք, ոչ իւիք՝ և ոչ առ փոքր ժամանակ յառաջն էին խաւար, այլ անդէն ՚ի գոյանալն՝ եղեն լոյս. սակայն ոչ յայն եւեթ ստեղծման՝ զի գոյակք իցեն և կայցեն ըստ մտի, այլ լուսաւորեալք՝ իմաստութիւ և երանութիւ կեցցեն։ Ի լուսաւորութենէ աստի բացադարձեալք ոմանք ՚ի հրեշտակաց, ոչ կալան յանձինս զդարձրութիւն իմաստուն և երանելի կենացն, որպիսի է արդարեւ յաւիտենականն միայն,

որ և Հաւատի գիտակն է և անկասկած ընդ յաւէրժ իւրն տեղողութեն. բայց և զբանաւոր կեանն՝ յետ անզգամելոյ անգամ անխնասուածք՝ այնպէս ունին նոքա, զի կորուսանել ոչ կարեն և ոչ ի կամել իւրեանց։ Այլ թէ մինչ չև մեղուցեալ՝ որչափ ինչ հաղորդք եղեն նոքա այնմ իմաստութեն, ո՞ կարիցէ սահմանաւ ասել. բայց և զուգապէս բաժանորդս զիարդ ասիցեմք զսոսա ընդ այնոսիկ, որք արդարեւ բովանդակապէս երանելիք են՝ այնու զի ընդ յաւէրժական իւրեանցն երանութեն ոչ երկբային բնաւ. վասն զի եթէ հաւատարք լինէին յայնմ իմաստութեն, միայնի և սոքա նոյնպէս երանելիք՝ ի յարատեւականութեն նորին՝ իբրև միապէս հաւատովք։ Այսուամենայնիւ զի կեանք յորչափ և երկայնեսցին, ոչ նոյնպէս յաւիտենական կեանք մարթի կոչել տիրապէս՝ եթէ վախճան ունիցի. զի կեանք ասի՝ ի կելոյ միայն, իսկ յաւիտենական՝ առ չունելոյն վախճան։ Այսմիկ իրի թէպետ և ոչ որ ինչ յաւիտենական է՝ նոյն հետ տայն երջանիկ իցէ. ուր զի և հուրն տանջող՝ յաւիտենական ասի, սակայն եթէ ձշմարտապէս և կատարեալ երանելի կեանք՝ միայն յաւիտենականն է, ոչ այնպիսի երկեանք հրեշտակացն խոտորելոց, որ զբաւելին էր, որով և ոչ յաւիտենական. զոր կամ գիտէին նոքա, և կամ անգիտացեալք՝ այլ ինչ կարծէին. քանզի երկիւղ՝ի գիտելն, և մոլորումն յանգիտանալն՝ ոչ տայր երանելի լինել նոցա։ Իսկ եթէ այնպէս անգիտանային զայդ, որ ոչ՝ի սուտ և յանցայտ մտածուիս յեցեալք, յերեսի լինէին՝ի հաւանութեն՝ արդեօք միանձնականն իցէ բարին իւրեանց՝ թէ զբաւականն յերբեմն ժամանակի, յայտ է թէ դեռ երիտասարդ ընդ այնպիսի երջանկութի ոչ ունէր զայն լրումն երանելի կենացն՝ զոր՝ի սուրբ հրեշտակսն լինել հաւատամք։ Այնուհետև և զերանելի կենացդ անուն ոչ այնպէս ինչ ձշդելով առնումք ըստ նշանակութեն, մինչև զայծ միայն կոչել երանելի, վասն զի նա իսկապէս է երանելի՝ երանութէ քան զոր մեծ անհնար է լինել. առ որով հրեշտակացն երանութեն և ա՛ի ծայրացեալ իւրում չափու՝ որչափ մարթելի է նոցա, զինչ է ապաքէն և ո՞րքան։

ԳՒՄԻՍ ԺԲ

Խաղաղութիւն երանութեանց արդարոցն չէ հասեալ ի յաղթանակ խոսմանն այլ, և նախատեղծին ի գրախտին յառաջ քան զմեղսն։

Ամենայն ոչ զհրեշտակս ևեթ ի բանսաւոր կամ յիմացական արարածոց՝ երանելիս կոչել ի դէպ համարիմք. զի՞ասել իշխիցե թէ նախատեղծքն բնութիւն մարդիկ՝ ի գրախտին ոչ եղեն երանելիք նախ քան զմեղանչել, թէ պէտ և անհաւատիք՝ բազմաժամանակեայ արդեօք երանութի էր, կամ թէ մշտատև. որ և լինէր անշուշտ յաւիտենական՝ եթէ չէին մեղուցեալ. քանզի և առ մեօք ոչ յանդգնագոյնս ինչ երանելիս կոչեմք զայնոսիկ՝ զորս տեսանեմք արդարութիւն և ածպաշտութիւն վարել զկեանս՝ ի յոյս հանդերձեալ անմահութեն, անխիղճ ի յանցանաց, դիւրաւ հանդիպեալք ողորմութեն այլ ի քաւել մեղաց տկարութեն. որք թէպէտ և հաւատիք էն ընդ վարձս խոպառ տևողութեն, բայց ընդ տևողութեն անհաւատիք։ Վասնզի՞ ի մարդկանէ գիտիցէ՝ թէ համբերել ունի մինչ խոպառ ի գործս և յառաջադիմութի արդարութե, թէ ոչ յայտնութիւր իւիք ունիցի հաւատս առ ի նմանէ՝ որ իւրոյին արդար և գաղտնի գատաստանաւ ոչ զամենեսեան այսց իրաց գիտակս առնէ, բայց և ոչ զոք խաբէ։ Այսն որոյ ըստ վայելելոց այժմու բաբեացն՝ երանագոյն էր մարդն առաջին ի դրախտի անդ, քան իւրաքանչիւր արդար ի մահկանացու տկարութես. իսկ ըստ յուսոյ հանդերձելոցն՝ երանագոյն է իւրաքանչիւր ոք յամենայն խոշտանգանս մարմնոյ երբ ոչ ի կարծ ինչ՝ այլ ձնդրտաբար յայտնեալ է թէ վայելել ունի անվախձան ի հրեշտակացն անվշտանալի դասակցութի ծայրագունելն այլ հաղորդութե, ուր մարդն առաջին անստոյգ էր ընդ անկումն իւր ի մեծի յայնմ երջանկութե դրախտին։

ԳԼՈՒԽ ԺԹ

Ընդեմ միօրինակ երջանկութիւն հոգւոյն ստեղծեալ հրեշտակաց, մինչև չկարել դիտել անկէ ըզպատճառս հանդիպեալ անհուսութեան, և յետ կործանման նոցա ընկալեալ հոգին հաստատուն կացեալքն զդիտութիւն իւրեանցն տեսլոյ ի բարիս։

ԱՅՍՏ դիւրաւ լինիլ ամենայն ումեք ի միտ առնուլ զԹէ միանալով երկուց իրաց կատարի երանութիւնն, որում ուղղ յօժարութիւնք ցանկայ արարածն իմացական, այսինքն է, զի անցաւ վայելեսցի յանփոփոխ բարին՝ որ է Ած, և ի նմին յարամիալ ոչ երկբայանօք ինչ վարանեսցի, և ոչ մոլորութիւնք խաբեսցի։ Այսպիսւոյ երանութեան ունակս լինել զհրեշտակսն լուսոյ համաբերիմք բարեպարիշտ հաւատով և խոստովանութեամբ՝ եթ դիպող բանի Թէ հրեշտակքն մեղուցեալք ոչ ունէին զայն նախ քան զանկանելն, խոտորնականութիւնք իւրեանց զրկեալք ի լուսոյն յայտնման՝ բայց հաւանելի է Թէ ունէին երանութիւն ինչ՝ Թէ և ոչ յառաջագիտ, եթէ արդարեւ կեանս վարեցին յառաջքան զմեղսն։ Այս եթէ խոսք Թուիցի կարծել, Թէ ի ստեղծմանն հրեշտակաց՝ ոմանք ոչ ընկալան զյառաջգիտութիւն ոչ զաւուղութիւնն, և ոչ զանկմանն, իսկ այլք հաւասարաբար ծանեան զմիշտ տեւումն երանութիւն իւրեանց, այլ Թէ ամենեքին հաւասար երջանկութիւք ստեղծեալ հոգին ի սկզբանէ, և այնպէս կացեալ առ ժամն, մինչև որ այժմըդ չարք էն՝ անկան իւրեանց կամաւ ի լուսոյ անտի բարութիւն, ապաքէն առաւել և խոստագոյն է համարել, Թէ այժմ հրեշտակքն սուրբք կեղակարծք հոգին ընդ յաւիտենական երանութիւն իւրեանց, և ինքեանք ոչ գիտիցեն զանձանց զայն ինչ, զոր մեքս գիտացաք զնոցանէ գրովք սրբովք։ Օ՛ի որ ողջամիտ քրիստոնեայ անդիտաներ, Թէ ի հրեշտակաց անտի բարեաց ոչ ոք լինիցի այլ սատանայ, և ոչ սա երբէք դառնայցէ ի դասակցութիւն բարի հրեշտակաց։ Զանգի չէմարտութիւնն յաւետապա-

նի խոստանայ սրբոցն և հաւատարմացՙ հաւասար հրեշտակաց լինել. և խոստացեալ իսկ է երթալ ՚ի կեանս յաւիտենականս. ՚Իսկ արդ ՚ի հաւաստի լինելն մեր՝ չանկանիլ այլ բնաւ յանմահական յոյսիմ երջանկութենէ, եթէ հրեշտակք ոչ նոյնպէս հաւաստիք էին, ապա մեք ոչ եթէ հաւասարք՝ այլ առաւել քան զնոսա լինիցիմք, ՚Այց զի անիսաք է Աշմարտութիւն, և մեք հաւասար նոցա լինելոց եմք. և նոքա ուրեմն հաւաստի են ընդ յաւիտենական իւրեանցն երջանկութենէ. ՚Իսկ այլքն քանզի չէին ընդ այն հաւաստիք, զի և վախճանելի նոցայն երջանկութիւն ոչ էր յաւիտենական՝ զի մարթասցին հաւաստեաւ գիտել, ինչ ասել թէ նոքա կամ անհաւասարք էին սրբոց հրեշտակաց, և կամ եթէ հաւասարս ասիցեմք, ուրեմն յետ անկման նոցա յաւելաւ ՚ի հրեշտակս ստոյգ գիտելոյն յաւէրժական երջանկութէ իւրեանց. ՚Այլ է՝ թէ ասիցէ ոք թերևս, թէ զտէրունականն վասն սատանայի ասացած յաւետարանին, “՚Ցա մարդասպան էր ՚ի սկզբանէ, և ՚ի Աշմարտութէ ոչ եկաց.. ՅՈՒ. Ը. 44, այնպէս առնուլ արժան է՝ թէ ոչ միայն մարդասպան էր ՚ի սկզբանէ անտի մարդկան ազգի, յորմէ հետէ արարաւ մարդն, զոր խաբելովին կարէր սպանանել, այլ և ՚ի սկզբանէ եղանութենէ իւրոյ ոչ եկաց ՚ի Աշմարտութենէ. որոյ վասն ոչ բնաւ եղև երջանիկ ընդ սրբոց հրեշտակաց, ընդվզեալ յիւրմէ ապարչէն, և իբր յիւրումն իշխանութենէ զուարճացեալ աւ բարտաւանութենէ, որով և սուտ լինէր և խաբեբայ. զի ընդ իշխանութենէ ամենազօրին արտաքս վազել երբէք ոչ կարէ. և որ ոչն կամեցաւ բարեխոհիչ հպատակութենէն ունել զոր Աշմարիտն է, հնարի ամբարհաւաճ ուռուցմամբ ձևանալ որ ինչ ոչն է. մինչ զի սովին մեռօք զոյ խմանալ զոր երանելին ասէ Յովհաննէսՙ առաքեալ. “՚Ի սկզբանէ սատանայ մեղանչէ.. Ա. ՅՈՒ. Ը. 8. այս է՝ յորմէ հետէ սատեղծաւ, ՚ի բաց եկաց յարդարութենէն՝ զոր միայն բաբերիչտ կամքն հնազանդ ՚այ ունել կարող է. ՚Ար ոք յայս իմաստս հաւանեալ է, ոչ ևս խորհի ընդ աղանդաւորացն մանիքեցւոց, և ընդ այլ ևս նման նոցա ժան-

տախտակաց, որպէս թէ սատանայ յայլմէ հակառակ պատճառէ սկիզբն առեալ՝ ունիցի զսեպհական բնութիւնն չարի. որ է բան յետին մոլելոյ ի ստութիւն, զի ուր զոգ ընդ մէջ՝ ի յարգի ունկին զաւետարանական բանին, ի միտ ոչ առնուն թէ չասաց տէրն, ի չէմարտութենէ անմաան էր, այլ թէ՝ ի չէմարտութենէ ոչ եկայց, զանկանելն ի չէմարտութենէ ակնարկել կամեցեալ. յորում թէ արդարեւ կացեալ էր, բաժանորդ այնմ եղեալ՝ մնայր երանելի ընդ հրեշտակացն սրբոց։

ԳԼՈՒԽ ԺԴ

Որպիսի՛ հնով խօսից ասացաւ զատանայէ՝ թէ ի չէմարտութենէ ոչ եկայց, զի ոչ գոյ չէմարտութիւն ի նմա։

Ի վերայ բերէ տէրն իբրու լուծուանն մերումս հարցմանն ի ցուցանել՝ թէ զնիարդ ոչ եկայց ի չէմարտութենէ. ասէ. «Օ՛ ի ոչ գոյ չէմարտութիւն ի նմա», որ և լինէր ի նմա, եթէ ի նմին կացեալ էր։ Այլ ձև բանիս ոչ է սովորական. զի այնպէս իմն թուի նշանակել, ի չէմարտութենէ ոչ եկայց, վասն զի ոչ գոյ չէմարտութիւն ի նմա. որպէս թէ այն իցէ ի չէմարտութենէ չկալոյն պատճառ, վասն զի չէմարտուի ի նմա չէր. ուր ընդ հակառակն՝ վասն այն չէր ի նմա չէմարտութիւն, զի ոչ եկայց ի չէմարտութենէ։ Այն ձև բանի է և ի սաղմոսին. ՃԷ. 6. «Այս առ քեզ տէր կարդացի, զի լսեալ լինէ». ուր ասէլն թուէր՝ լսեալ լինէ՞ ած, զի կարդացի։ Այլ զի յասել իւրում՝ ես կարդացի, որպէս թէ հարցեալ էր ի մէնջ եւ ցուցանես զկարդալդ, ի լսելոյ անտի այ ցուցանէ զիղձս աղաղակի իւրոյ. իբր ասել. այնու ցուցանեմ զկարդալ իմ, զի լսեալ լինէ։

ԳԼՈՒԽ ԺԱ

Ջնորդ Լմանի գրեալն . ա՛ն սկզբանէ սատանայ մեղանչէ ,, :

Այ զայն դարձեալ զոր յաղագս սատանայի ասաց Յովհաննէս , "Ի սկզբանէ սատանայ մեղանչէ ,, , չառնուն ՚ի միտ , զի Թէ բնածին է , ոչ իւիք մեղք են : Այլ զի՞նչ պատասխանի լինիցի տալ մարգարէականացն վերկայուԹեանց . զոր օրինակ այնմ՝ զոր Նասիաս բարբառի՝ ՚ի դէմս իշխանին բաբելացւոց ձևակերպեալ զսատանայ . "Օ՛ նախ՛րդ անկաս յերկինից արուսեակն որ ընդ առաւօտն ծագէր ,, Ես . 14 . 12 : Նա միւսումն՝ զոր Նզեկիէլ ասէ . "Ի գրգանս դրախտին այ եղեր . և զամենայն ականս պատուականս ՚ի քեզ կապեցեր ,, Իէ . 13 . ուր իմանի Թէ եղև երբեմն սատանայ առանց մեղաց . զի յայտագոյն ևս ասի զկնի . "Նզեր անարատ յաւուրսն քո ,, : Նա զի անմարթ է զայսոսիկ յայլ միտս ձգհողագոյն ևս իմանալ , պարտ է ասել և զասացեալն՝ ՚ի ՆչմարտուԹէ ոչ եկաց , այսպէս առնուլ՝ Թէ եղև ՚ի ՆչմարտուԹէ , այլ ոչ ինաց : Նա զայն Թէ ՚ի սկզբանէ սատանայ մեղանչէ , ոչ համարել՝ Թէ ՚ի սկզբանէ եղանուԹէ իւրոյ մեղանչէ , այլ ՚ի սկզբանէ մեղացն , յորժամ ՚ի նորա հպարտուԹենէ սկսան մեղքըն : Այլ և գրեալն ՚ի Յոբայ գիրսն . յասել անդ ընդ սատանայի , "Նա է սկիզբն արարածոց տեառն , արարեալ խաղալիք հրեշտակաց նորա ,, Ի . 14 . որում զուդաճայն Թուի և սաղմոսին ընԹերցուած . "Ալ իշասն զոր ստեղծեր խաղալ նովաւ ,, Ղշ . Ձճ . 26 . այսոքիկ ասեմ՝ ոչ տան մեզ համարել Թէ այնպիսի ստեղծաւ ՚ի սկզբանէ , զի խաղալիկ հրեշտակաց լինիցի , այլ ՚ի դոյն պատուհաս արկաւ յետ մեղացն : Նայս ուրեմն սկիզբն նորա՝ տեառն գործած է . զի չէր բնութիւն և ոչ իսկ ՚ի դուզնաքեայ յանարգ ղեռնոց՝ զոր ոչ այ էին արարեալ . յորմէ ամենայն եղանակ , ամենայն տեսակ , ամենայն կարգ . ա-

ուանց որոց անմարթ է գտանել ինչ կամ խորհել. ոչ այսպէս և հրեշտակականն ստեղծուած, որ այլոցն ամենածագործ իրաց գերիվերոյ անցանէ պատուականութիւն բնութեանն։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Առաքինութիւք և ընտրութիւնք են արարածոց, յորս այլ են պէտք օգտակարութեաւ, և այլ կարգ բանի։

Վասն զի յիրս անդ՝ որ միանգամ գոն, և չեն նոյն ընդ այլ յորմէ եղեն, վերագոյ են կենդանիքն քան զանկեանդանիս, որպէս որք զօրութիւն ունին ծնանելոյ կամ բազձալոյ իսկ՝ քան զպակասեալսն ի շարժմանէ աստի։ Այս ի կեցողսն նախադասեալք են զգայուն քան զանզգայս. իբր քան զծառն՝ շնչաւորք։ Այս ի զգայունս վերագոյ գտանին մտաւորք քան զանխմացս, իբր մարդիկ քան զպաձարս։ Այս յիմացականս անդ յառաջակարգ են անմահք քան զմահկանացուս, որպէս հրեշտակք քան զմարդիկ։ Այսպիսի նախապատուութեանց սոցա ըստ կարգի բնութեան է. այլ գոյ ի նոսա ըստ իւրաքանչիւր պիտանութեան այլ և այլ չափ ընտրութեան. որով զանզգայս ոմանս մեծագրեմք քան զայլ զգայունս. միոյ ինչ թէ կարողութիւն էր, բառնալ յօժարեաք զայնպիսի զգայունս ի բնութենէ իրաց, կամ անգիտացեալք թէ զոր կարգ ունիցին ի բնութեան, կամ թէ և պիտիցեմք, ստոր դասեմք զայնս քան զմեր օգուտ։ Օ՞ի ոչ ընտրեսցէ առաւել ունել ի տան հայ՝ քան միւնոյն, դրամ՝ քան լուս։ Այս զինչ զարմանք, ուր և ի նոցունց իսկ մարդկան կշռութիւն, որոց բնութիւն յայտ է թէ կարի մեծարգոյ է, յոլովակի թանկագնոյ լինի ստանալ զերիվար՝ քան զծառայ, զքար պատուական՝ քան զաղախին։ Այսպէս ահա ազատական դատմամբ խորոց բազում կայ ընդ բան քննողին, և ընդ հարկ կարօտելոյն կամ

ընդ ախտիժանս ցանկացողին. իբրև զի բանն կշռի՝ զինչ իրքն են չիւրեանց աստիճանի, իսկ հարկն խորհի՝ զինչ և ւրր վասն իցէ խնդրելի. բանն հետազօտի՝ զինչ ինչ չիմարիտ լուսաճագիցի ընդ միտս, իսկ հեշտութիւն՝ զինչ ախտիժելի ամբեսոյ զմարմնոյ զգայարանս։ Ապակայն ի բանական բնութիւնս այնչափ բուռն է ծանրութիւն ինն կամացն և սիրոյ, մինչ զի թէ և նախասիճար քան զմարդիկ են հրեշտակք բնութենն կարգաւ, այլ ըստ օրինաց արդարութենէ քան զաւր հրեշտակս վերոյ դասին արք բարիք։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Արատ չարութիւն ոչ բնութիւն է, այլ հակառակ բնութենէ. և նորա մեղանչելոյն պատճառ կամքն է, և ոչ արարիչն։

Ի՞նդ ուրեմն սակս բնութենն սատանային՝ և ոչ սակս չարութենն իմանամք ուղղութիւ ասացեալ, «Նա է սկիզբն արարածոց առաւն.,. քանզի անշուշտ առ ի լինել ախտի չարութենն՝ յառաջեաց բնութենն անախտ։ Նակ ախտն այնպէս լինի դիմամարտ է բնութենէ, զի ընաւեալ միայն գնոտէ բնութենէ. և ոչ ախտ էր արդեօք հեռանալն յայ, եթէ ոչ ընդ այ միանալն յաւէտ անկ էր բնութենն՝ յորում ախտն է։ Ապրկն վասն չար կամքն իսկ՝ հզօր վիպաւթի է բարւոյ բնութենէ։ Ի՞նչ ասծ զոր օրինակ արարիչ է առնաբարի բնութեց բարեաց, նոյնպէս կամաց չարաց՝ առնարար անտեսիչ. որպէս զի ի չարաչար վարելնոցա ըզբարի բնութենէն, ինքն բարիոք ի կիր առնւոցու զչար կամն։ Ա՝ ասն որոյ արար ասծ՝ զի սատանայ որ յարարչութենէն բարի էր, և իւրոյ կամաւն չար, ի ստորայինս վայրաբերեալ խաղալիկ լինելոյ հրեշտակաց նորա. այսինքն է՝ զի փորձութիւնք նորա օգուտ գործեսցեն սրբոց, որովք վնասէն ցանկայր նոցա։ Ա՝ զի ասծ ի ստեղծանել իւրսեմ գնա՝ ոչ էր անգիտակ ապագայ չարութենէ նորա, և

յառաջ տեսանէր զբարիսն՝ զոր ՚ի չարեաց նորա գործել ունէր, վասն այն ասէ սաղմոսն. «Ալ իշասյն զոր ստեղծեր խաղալ նովաս.», զի յայտ արասցէ Թէ անդէն ՚ի ըստեղծանելն զնա բարի յիւրմէ բարութենէն՝ յառաջգիտութեամբ իւրով պատրաստեալ էր Թէ զնմանէ վարիցէ զնա և ՚ի չարանալն։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Յաղագս գեղեցկութեան տիեզերացն՝ որ յայ կարգմանէն չքնաղ ևս վայել հակառակաց դիմադրութեանց։

ՎԱՆԶԻ ոչ արգեօք ստեղծանէր ՚ած զոր բնաւ՝ ոչ ՚ի հրեշտակաց և ոչ ՚ի մարդկանէ իսկ, եԹէ նախագիտակ եղեալ Հանդերձեալ նորա չարութենէն՝ ոչ դիտեր նոյնպէս Թէ յոր պէտս բարեաց յարմարիցէ զնոյնս, որով զկարգ տիեզերացդ իբր նուագ գեղեցկայարմար հակադրելովք ամամբք յօրինեսցէ։ ՎԱնզի ընդդիմադրութիք ՚ի սաՀուՀանս վայելչաբանութենէ կարի քաջադէպք են ՚ի կիր արկեալք յամենայն լեզուս ազգաց։ ՎՅայսիսի դիմադրականս խօսիւք գեղեցիկ իմն և առաքեալն Պօղոս բացայայտէ զբանն զայն յերկրորդ Թղթի առ կորնԹացիս. Ը. Ղ. «Ալ ամն զինուն արդարութենէ՝ որ ընդ աջմէն և ընդ ահեկէն է. փառաւք և անարգութենէ, դովութենէ և պարսաւանաւք. իբրև մոլորք և Ճշմարիտք. իբրև անճանաՀք և ծանուցեալք. իբրև մահկանացուք, և ահաւասիկ կեցդանիք եմք. իբրև խրատեալք, և ոչ մահապարտեալք. իբրև արամեալք, և Հանապազ ուրախ եմք. իբրև անանկք, և զբազումս մեծացուցանեմք. իբրև ոչ ինչ ունիցիմք, և զամենայն ինչ ունիմք.»։ ՎԱրդ զոր օրինակ ներՀականքս դէմ ընդդէմ կարգեալք գեղեցկացուցանեն զասացուածըն, նոյն և տիեզերաց վայելչութիւն ՚ի Հակառակացն դիմադրութենէ բազկանայ Ճարտարութեամբ ինն ոչ բանից՝ այլ իրաց։ Օ՞սոյն քաջայայտ ՚ի Վիրաբայ գիրսն

ունիմք այսպէս . “ Հակառակ է չարն բարւոյ , որպէս կեանքն՝ մահու , այսպէս հակառակ բարեպաշտի՝ մեղաւոր : Եւ սոյնպէս Հայեաց յամենայն գործս բարձրեալն . երկու և երկու , մին հակառակ միւսոյ ... Ա. 15. Լ

ԳԼՈՒԽ ՀԻԹ

Չխոթդ իմանալ ունիմք զբանն , « Մեհենաց ած ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարին » :

Եպէտ ածային բանիցն մեծութեի պիտանի է և առ այս , զի բազում իմաստս Աշմարտութեի ծնանի , և ՚ի լոյս գիտութեի առաջնորդէ , միւսոյն այսպէս իմանալով , և միւսոյն այնպէս . բայց միայն զի յառաջ բերեալն իմաստք այնր մեհենի տեղւոյ հաստատեսցին ՚ի վկայութեի ծանօթ իրաց , կամ յայլոց յայտապատում տեղեաց , կամ յառանձնական իմաստս բազումս՝ գտանիցի և այն որ ըստ գրոցն մտաց իցէ , կամ զի թէ և այն թաքուն ինայցէ , բայց առ հետազօտելոյն պատճառի զգաստանածաճումն մեծութեի՝ այլ ինչ բանս ստոյգս լինիցի ասել : Վասն այսորիկ ոչ տարադէպ ինչ ՚ի գործոյ այդ թուի կնճռ կարծել , եթէ առաջնաստեղծ լուսով իմացեալ լինի հրեշտակացն աբարչութեի , և թէ որոշումն եղև հրեշտակաց սրբոց ՚ի պղծոց անտի՝ յասելն . “ Եւ մեհենաց ած ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւարին . և կոչեաց ած զլոյսն՝ տիւ , և զխաւարն կոչեաց գիշեր ... Ա. 4. 5 Վասն զի նա միայն որոշել զայսոսիկ կարող էր , որ նախքան զանկումն նոցա՝ կանխաւս գիտել կարաց թէ անկանելոց էն , և ՚ի լուսոյ Աշմարտութենն մերկանալով՝ ունին ինալ ՚ի խաւարային ամբարտաւանութեի : Վասն զի որ առ մեզ է ծանուցեալ տիւ և գիշեր , այս լոյս և այս խաւար՝ որոշումն ընկալան ըստ հրամանին ած ՚ի լուսաւորաց երկնից՝ որ ակն երև կան մերոց զգայութեանց , որպէս ասէ . “ Լուսկին

լուսաւորը 'ի հաստատուէ երկնից,'ի լուսաւորսն'ի վերայ երկրի, և մեհնել 'ի մէջ տուընջեան և 'ի մէջ գիշերոյ ,, ։ Եւ զկնի սակաւուց . " Եւ արար ամ երկուս լուսաւորս մեծ ամեծս , զլուսաւորն մեծ յիշխանութեի տուընջեան , և զլուսաւորն փոքր յիշխանութեի գիշերոյ , և զաստեղս . և եդ զնոսա ամ 'ի հաստատուէ երկնից , լուսաւորել լինել յերկիր , և իշխել տուընջեան և գիշերոյ , և մեհնել 'ի մէջ լուսոյն և 'ի մէջ խաւարին ,, ։ Ուսկ 'ի մէջ լուսոյն՝ որ է հրեշտակայն սրբազան դասակցութե՝ նշանակ ձշմարտութեանն խնայականապէս փայլեալ , և 'ի մէջ հակառակ նմին եղելոյ խաւարին՝ որ է աղջամղջին միտք հրեշտակաց չարաց սատուցելոյ 'ի լուսոյն արդարութե , նա միայն կարող էր մեհնել՝ յորմէ չկարէր թաքուն կամ անստոյգ լինել հանդերձեալ չարութի նոցա՝ ոչ բնութե , այլ կամաց ։

ԳԼՈՒԽ Ի

Ջինչ ինչ ասացեալն յետ որոշման լուսոյ և խաւարի , " Եւ եառ ամ զլոյսն՝ զի բարի է ,, ։

Ոչ արժան լռութե անտես առնել և զայն , զի ուր ասաց ամ , " Լոյսի լոյս , և եղև լոյս ,, , անդէն առ նմին 'ի վերայ բերի . " Եւ եառ ամ զլոյսն , զի բարի է ,, ։ Եւ այս ոչ յետ մեհնելոյն 'ի մէջ լուսոյ և 'ի մէջ խաւարի , և կոչելոյ զլոյսն՝ տիւ , և զխաւարն՝ գիշեր . զի մի արդեօք Թուիցի՝ հաւասար լուսոյն և առ խաւարն վկայել զիւրն հաստութե ։ Վասզի ուր խաւար է անմեղադրելի , և լուսաւորը երկնից մեհնեն ընդ նա և ընդ այս լոյս ասացս տեսանելի . ոչ նախ՝ այլ զկնի ասի . " Եւ եառ ամ զի բարի է ։ Եւ եդ զնոսա 'ի հաստատուէ երկնից լուսաւորել լինել յերկիր , և իշխել տուընջեան և գիշերոյ , և մեհնել 'ի մէջ լուսոյ և 'ի մէջ խաւարի ։ Եւ եառ ամ զի բարի է ,, ։ Ո՞ ընդ երկոսին ևս հաձեցաւ , գոլով երկոցունցն

որիչ՝ ի մեղայ ։ Իսկ ուր ասաց ՅԱԾ , “ Հղիցի լոյս , և եղև լոյս . և ետես ՅԱԾ զլոյսն զի բարի է ,, , և զկնի ա- ծաւ՝ ի վերայ , “ Հր մեկնեաց ՅԱԾ ի մէջ լուսոյն և ՚ի ՚ի մէջ խաւարին . և կոչեաց ՅԱԾ զլոյսն տիւ , և զխաւարն կոչեաց գիշեր ,, , աստանօր ոչ գՀետ յաւելաւ՝ և ետես ՅԱԾ զի բարի է . որպէս զի մի երկոքեան ևս զբաւոյ կոչումն ընդունիցին , որովհետև մին յայնցանէ չար է յիւր- մէ ախտաւորութեէ , և ոչ ՚ի բնէ ։ Որին վասն աստանօր լոյսն միայն Հաճոյացաւ արարչին . իսկ խաւարն հրեշտա- կական թէպէտ և վերածելի էր ՚ի տառեսութէ , այլ ոչ ՚ի Հաճութէ

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս յաւիտենական և անփոփոխ գիտութէն և կամացն ՅԱ , որով ամ զոր արար՝ այնպէս Հաճոյացաւ նմա յառաջ քան զառնելն , ոչ յետ առնելոյն ։

ՎՐԱՆՁԻ այնու որ յաղագս բոլորիցն ասացաւ , “ Հտես ՅԱԾ զի բարի է ,, , զինչ այլ իմանալ է՝ բայց զՀաճութէն ընդ գործն արարեալ ըստ արուեստի , որ այն ինքն է ի- մաստութէն ՅԱ ։ Հայլ ոչ եթէ յայնժամ մինչ եղևն՝ գի- տաց լինել բարի . ապա թէ ոչ՝ չէր և ոչ մի ինչ եղեալ յայնցանէ , եթէ անճանաչ նմին լեալ էր յառաջն ։ Ա- սոն որոյ յորժամ տեսանի՝ զի բարի է , որ ոչն իսկ լինէր՝ եթէ չէր տեսեալ յառաջ քան զլինելն , ուսուցանի՝ բարի գոլ այլ ոչ ուսանի ։ Ո՞ առաւելն իշխեաց ասել Պղատոն, իբր այն թէ լցաւ ՅԱԾ խնդութեամբ՝ ի բովանդակիլ տիեզերաց . և ոչ ցայն վայր անմտանայր նա՝ կարծել թէ նորագործ արարածոյն երանագոյն լեալ էին ՅԱԾ ։ Հայլ ցուցանել կամեցաւ՝ Հաձել Ճարտարապետին ըստ եղեալն , ընդ որ Հաձեալն էր որպէս ընդ լինելոցն յաո- Հեռսի անդ . և ոչ եթէ իբրու փոփոխիչի իւիք գիտու- թիւնն ՅԱ , զի այլ ինչ ներգործեսցէն ՚ի նմա չև եղեալ- քըն , այլ՝ որք էին , և այլ՝ որ եղէն ։ Ա՛ան զի ոչ ըստ

մերումն սովորութեանէ ընդ ապառնին նախահայեաց լինի նա, կամ ընդ ներկայն պէտս, կամ ընդ անցեալն վերակենդանի. այլ կարի զանազանեալ՝ի սովորական մերոց մտածութենէց։ Ոչ նա ոչ՝ի միոյ յայլ մտածութեէ փոխեալ, այլ ամենայնիւ անփոփոխ տեսանել. մինչ զի ուր իրք ժամանակաւ կատարին, և ապառնիք չեն և են, և ներկայք ահա են, և անցեալք ոչ և են, նա զայս ամենայն անշարժ և միանձինաւոր ներկայութեէն բովանդակէ։ Եւ այսօր այլ ազգ, և մեօր այլ. զի ոչ՝ի հոգւոյ և՝ի մարմնոյ է շարամանեալ. ոչ այլ ազգ այժմ, այլ ազգ յառաջն, այլ ազգ յապայն. զի ոչ երեք ըստ մերումն՝ և նորայն գիտութեէ երբեակ ժամանակաց որոշմամբ փոփոխի, ներկայինն՝ անցելոյն և ապառնւոյն. “Յորում չիք փոփոխումն, և կամ շրջելոյ ստուերք,, . Յակ. ա. 17։ Այլ զի հայեցողութեէն նորա ոչ գնայ՝ի մտածութենէ՝ի մտածութեէ, այլ անմարմին հայեցուածոյ նորա միահամուռ յանդիման կայ ամենայն զոր և տեսանէ։ Այլ զի և զժամանական այնպէս գիտէ իբրեւ անժամանակ համակ, զոր օրինակ զժամանակաւորսն շարժէ առանց իրիք ժամանակեայ շարժուէ իւրոյ։ Այս ուրեմն անդ է տես բարի լինել զոր արարն, ուր ետես թէ բարի է առնելն։ Եւ ոչ՝ի տեսանել անդ զերեալն՝ կրկին ստացաւ գիտութեէն, կամ մասամբ իւրիք յաւելուած արար այնմ, որպէս թէ նուազ լինել գիտութեէն նորա մինչ չև արարեալ զոր տեսանէրն. որում ապաքէն անմարթ էր այսպէս գերակատար գործել, բայց կատարեալ գիտութէն՝ յոր ոչ աճումն ինչ լինէր՝ի գործոյ նորա։ Որպէս ուրեմն ետես զիտել և եթէ կայր մեզ թէ ո՛ արար զլոյսն, բաւական էր ասել, Նա արար զլոյս։ Այս եթէ գիտել կամէաք ոչ զարարողն միայն, այլ և զայն թէ որով արար, շատ էր յայտնել, “Եւ ասաց Նա, եղիցի լոյս, և եղև լոյս,. որով՝ի միտ առնուաք, թէ ոչ միայն Նա ինքնին՝ այլ և Նահնիւն արար զլոյս։ Այլ զի երիս ինչս գիտել մեզ յաղագս արարածոյ պարտ վարկաւ, այս է՝ ո՛ արար, ի՛ արար, ե՛ր վասն արար, ասէ. “Այսպէս Նա, եղիցի լոյս, և եղև լոյս.

և հառաս ՚ած զլոյն՝ զի բարի է ,, ։ Ասաի եթէ խնդրեմք, թէ ո՞արար , լսեմք՝ ՚ած . եթէ ԻՒ արար , լսեմք՝ ասաց՝ ելոյծ , և եղև . եթէ վասն ելր արար , լսեմք՝ զի բարի է ։ Ոչիք արարիչ մեծահրաշ քան զ՚ած , և ոչ արուեստ քան զաղբր քան զ՚ամն ՚այ , և ոչ պատճառ լաւագոյն քան թէ բարւոյ ստեղծանիլ ՚ի բարւոյն ՚այ ։ Ոչ սոյն և Պղատոն ասէ՝ աշխարհի ստրարչութէ լինել պատճառ իրաւագատ, զի ՚ի բարւոյն ՚այ եղանիցին գործք բարիք . և զայս կամ ՚ի գրոց ընթերցեալ ասաց, կամ ընթերցողացն գիտաց, կամ կորովի հանճարով յեղելոց անտի զանեբևոյթն ՚այ իմացեալ հառաս, և կամ ՚ի ներհուն գիտողաց ուսաւ և ինքն ։

ԳԼՈՒԽ ԻԸ

Զաղագս այնոցիկ զոք չհաճին ընդ իրս ինչ ՚ի բարիսք արարածս բարւոյ արարչին ընդ սիեղբս, և համարին թէ կայցէ բնութէ ինչ չար ։

Այլ ահա զայս պատճառ , իմա զբարութէ ՚այ , առ ՚ի զբարիսն ստեղծանել, պատճառ աւետնարդար և քաջագէպ՝ որ աշխատասիրաբար զմտաւ ածեալ, և ըստ բարեպաշտութէ նկատեալ, գիտէ կարձել զամենայն վիճմունս ոգոց ինդիրս յուզեն յաղագս սկզբան աշխարհի, ոչ ՚ի միտ առն ոմանք ՚ի հերեսիոլատայց . այնու զի իրք ինչ մերում ապիկար և դիւրաթնասելի մահկանացուեաց՝ հասեալ կալեալ զմեզ ըստ արդար պատուհասի՝ անախորժ հանդիպիլին, և ստէպ նեղեն զմեզ . զոր օրինակ են հուր , կամ ցուրտ , կամ գաղան դժնդակ , կամ այլ ինչ սոյնպիսի ։ Այս ոչ հայիմն այդպիսիք, թէ զնդրդ զօրաւորք են իրքդ յիւրեանց կայանի և ՚ի բնութէս, զեղեցիկ կարգաւ յարմարեալք, որչափ ինչ զեղաւարդեն զբովանդակութէն տիեզերաց ըստ իւրաքանչիւր մասին՝ իրր զհասարակաց թագաւորութէն, և քանի շահաւէտք են մեզ զկովին, եթէ ըստ պատշաճի առնուցումք ՚ի կիր և համաբար . մինչ զի և թոյնք

անգամ՝ որ վնասաբերք են արտաքոյ պատշաճին, ի գործ արկեալք պատշաճապէս՝ փոփոխին ի գեղս շահեկանս. զսորին հակառակ՝ որք հեշտալիքն են, իբր կերակուր և ըմպելի և լոյս ինքնին, վնասակար գտանին ի լինելն անջատ և տարապայման։ Սորին աղագաւ խրատէ զմեզ Տէրն տեսչուի, մի զիրս պախարակել անմտաբար, այլ զիրացն պիտանութեի հետազօտել. և ուր միթս խելամտութեի կամ տկարութեի ոչ գտանիցէ, այնպէս հաւանել ընդ գաղտնութեին, որպէս եղեն և ինչ ինչ՝ զորս անագան ուրեմն կարողացաք գտանել. քանզի և անյայտութեի շահեկանութեն՝ կամ մարզիչ է ի խոնարհութեի, կամ բարձրամտութեի Տէրութեն։ Այլ թէ ոչ՝ չիք և չիք չար ինչ բնութեի. և այդ անուն ոչ զոյ ինչ՝ բայց սոսկ զպակասութեի բարւոյ յայտ առնէ. ուր երկրաւորացս ասի միանչ յերկինսն, և յերևելեացս յաներևոյթսն մի քան զմի լաւագոյն են. և յայն սակս անհաւասարք, որպէս պի ամենայն ինչ գտանիցի։ Իսկ ինքն Տէր այնպէս Հարատարապետ մեծ է՝ի մեծամեծս, որ ոչ փոքրկանայ՝ի փոքունս, որք ոչ եթէ յիւրեանցն մեծութեէ չափելի են, որ չիք իսկ՝ի նոսա, այլ յիմաստուէ Հարատարապետին. զոր օրինակ յերևելի գործակ մարդոյ՝ եթէ մի՝ի յօնիցն զերծիցի, թէպէտ և դուշնաքեայ ինչ բառնի՝ի մարմնոյ անտի, այլ բազում ինչ՝ի գեղեցկութեէն. որ ոչ՝ի քանակին հաստատեալ կայ, այլ՝ի զուգութեէ և՝ի չափակցութեէ անդամոց։ Այս ոչ կարի զարմանալ ընդ այն պարտ է, եթէ այք կարծեսին՝ թէ կայցէ բնութեի ինչ չար՝ի հակառակ սկզբնէ խմբէ իւրոյմէ յառաջ եկեալ և առեղեալ, ոչ հաւանիցն ընդ այս պատճառս արարչութեէ. այս է՝ յոյ բարւոյ ստեղծանել զբարիս. համաբերելով թէ նա յաչխարհագործութեի բերեալ իցէ՝ հարկաւորեալ առ՝ի մերժուսին հակառակատարատ չարին, և զիւր զբարի բնութեին ընդխառնեալ առ՝ի սանձելոյ և յաղթահարելոյ զչարն. և թէ զայն բարութեի զանարգաբար աղտեղեալն, և զչարաչար գերեալն և զնուաճեալն՝ հաղիւ աշխատութեի մեծաւ կարող իցէ սրբել և ազատել, և զայն ոչ բոլանդակապէս. բայց մի-

այն Թէ անմաքրելի մնացեալն՝ լճիկի Թշնամւոյն պաթեւելոյ և արգելոյ բանտ և կապանք ։ Եւ այդպէս անմնայնի , մանաւանդ Թէ մոլեգնելին մանիքեցիք , և Թէ զոյ բնութիւնն հաւատային՝ որպէս և էն իսկ , անփոփոխելի և ամենայնիւ անախտական . որուն՝ ոչ մի ինչ վնասել կարող է . իսկ զՀոգի՝ որ կամաւ փոփոխելին է՝ի վատԹարն , և մեղօք ապականելի , որով և պակասելի առլոյն անայլայլակ Հնմարտութիւնէ , ոչ գնելին մասն ինչ այ , և ոչ յաճախական բնութիւնէ , այլ առ՝ի նմանել ստեղծեալ՝ կարի խոնարհ Հանաչելին քրիստոնէականն ողջմտութիւն ։

ԳԼՈՒԽ ԻԳ՝

Յաղագս մերթութեան՝ յորում յանգիմանի Որոգինի վարդապետութիւնն ։

ՒՆՉՊ առաւել զարմանալ պարտ է ընդ այն , զի և ոմանք որք զոգ մեզ Հաւատան , Թէ մի սկիզբն է իրաց ամենայնի , և ամենայն բնութիւն որ չէ ՅԱծ , ոչ ուստեք յայլմէ Հաստչէ՝ բայց միայն՝ի նմանել մարթի արարչագործիլ ոչ կամեցան զայս պատՀառ աշխարՀարարուէ զարքին և զանխառն՝ ուղղապէս և յստակ Հաւատալ , Թէ այ բարւոյ է բարիս արարչագործել , և Թէ յետ այ էն ամենայն ինչ՝ որ չէն ՅԱծ , բայց բարի գտանին , զի էն գործածք միայն այ բարւոյ ։ Ա՛յլ ասեն , Թէ Հոգիք ոչ մասն այ , այլ՝ի նմանել եղականք՝ մեղան որոշելով յարարչէն , և Հետ զՀետէ ըստ մեղացն զանազանուէ՝ յերկինից յերկիր յայլ և այլ մարմինս դատապարտեցան իբր՝ի կապանս . և զայս ասեն լինել աշխարՀ , և Թէ այս եղև պատՀառ գործելոյ զաշխարՀ , ոչ զի բարիք ստեղծանիցին , այլ զի չարք խափանեսցին ։ Աստի իրաւամբք բամբասի Որոգինէս . քանզի՝ի գլխոն յորջորջեալ Յաղագս սկզբանց , այսպէս խորհեցաւ , և այսպէս գրեաց ։ Ուր ոչ բաւեմ զզարմանս իմ բերել բանիւ , զիարդ այր այնպիսի քաջահմուտ և հեռվար-

ձեալ՝ի սուրբ գիրս՝ոչ՝ի միտ առ նախ, թէ քանի դիմա-
մարտի այդ մտաց անսուտ գրոյն, որ առ իւրաքանչիւր
գործ ՚ի վերայ բերեալ, “Այս հատս ՚ած զի բարի է ,, ,
ապա ՚ի կատարել բոլորիցն յարէ . “Այս հատս ՚ած զամե-
նայն զոր արար, և ահա բարի են յոյժ ,, . կամեցեալ յայտ
առնել թէ չէր այլ պատճառ աշխարհի արարչութեն, բայց
զի բարիք լինիցին՝ի բարւոյն ՚ած : Այր եթէ չէր որ մեղու-
ցեալ, աշխարհս լինէր ողջոյն բարի բնութիւք նեթ զար-
դարեալ և պատարուն : Այլ զի մեղք կան, ոչ եթէ վասն
այնր ամենայնին լի մեղօք իցէ . ուր յոլովագոյն բարեացն
թիւ յերկինս՝ պինդ ունի զիւրոյ բնութեն զկարգ : Այս
ոչ կամքն չար զկարգ բնութեանն ոչ պահելով, խուսա-
փիցէ երբեք յօրինաց արդարադատն ՚ած , որ զամենայն
անտեսէ ՚ի բարի : Վասնզի զոր օրինակ նկար ուրեք ուրեք
թխատիպ ներկեալ ըստ տեղւոյն, նոյնպէս բովանդակուի
արարածոց նկատեալ և մեղուցեալքն հանդերձ՝ գեղե-
ցիկ է, թեպէտ և նոքա յինքեանս մնացեալ լոկ՝ զգլխոր
էն առ իւրեանցն տգեղութեն :

Այս գարձեալ, պարտ էր զմտաւ ածել Աստուծոյ և որք
նմանաբարն խորհին, զի եթէ չէմարիտ լինէր կարծիքդ
այդ, թէ յայն սակս ստեղծեալ իցէ աշխարհ, որպէս զի
ոգիք ըստ արժանի մեղաց զգենուցուն մարմինս՝ փակիլ
՚ի նոսա իբր՝ի զնդանս առ՝ի պատիժ, սակաւամեղքն զվե-
րին և զթեթև մարմինս առնուցուն, և բազմամեղքն զըս-
տորինս և զծանրունս, ապա պարտ էր դիւացն՝ քան զորս
վատթարագոյն ինչ չէիր, կրել զհողազանգուած մարմինս՝
զվայրագոյնս և զծանրագոյնս քան զայլսն, քան թէ մարդ-
կան, և այն՝ լաւաց գլխովին : Իսկ արդ առ ՚ի գիտելոյ
մեզ թէ զորժանիս ոգւոց ոչ ըստ հանգամանաց մար-
մնոյն է չափելի, ամենաչարն դև զօգայնին կալաւ մարմին,
իսկ մարդ եթէ այժմ երբ չար է՝ բայց կարի նուազ քան
զդիւաց չարութեն, և եթէ յառաջ քան զմեղսն կաւեղէն
մարմին կրեաց : Այս զինչ անմտագոյն կայցէ, որպէս ա-
սել, թէ արեգականքս՝ որ միակ արարաւ ՚ի միւմ աշ-
խարհի, ոչ եթէ զպատշաճ վայելչութեն հոգացաւ չար-

տարապետն ՅԱԾ, կամ զօգուստ մարմնեղինապէս. այլ Թէ դիպաւ այդ վասն մեղանչելոյն ոգւոյ միոջ այնպէս, զի արժանասցի փակիլ՝ի մարմին այնմիսի։ Այլ ոչ Թէ դէպ լեալ էր ոչ միւսմ ոգւոյ, այլ երկուց, և ոչ երկուց միայն, այլ տասանց կամ հարիւրոց՝ նմանօրինակ և համալափ մեղանչել, հարիւր արեգակունս ուղղել էր այս աշխարհ։ Այլ զի մի այս լինիցի, ոչ՝ի սքանչելի նախախնամութիւն Աստուածապետին ապաստան եղեն առ՝ի յօգուտ և՝ի վայելուչութիւն մարմնական, այլ իբր դէպս իմն համարեցան՝ զի մի միայն ոգի առնեցմամբ մեղացն՝ այնպիսւոմ արժանասցի մարմնոյ։ Այլ՝ապաքէն ոչ զոգւոյն, զորոց չգիտեն զինչ խօսիլ, այլ զայսպիսիս խորհողացն զյանդգնութիւն ընկրկել արժան է, կարի տարակացելոցն՝ի Աչմարտութիւն և՝ի գովուէ։ Այլ՝ի լուծումն երից իրաց զոր վերագոյն յիշատակեցի, յորժամ խնդիր լինի զիւրաքանչիւր արարածոյ՝ Թէ ո՞ զայն արար, իւ արար, էր վասն արար, պարտ է պատասխանել ՅԱծ, Աստուած, զի բարի է։ Այլ Թէ արդեօք յայսմ բանի ակնարկիցի մեզ բարձր խորհրդով երրորդութիւնն՝ Հայր և որդի և Հոգի սուրբ, կամ Թէ արգել ինչ կայցէ իմանալ զայդ յառաջիկայ բան գրոց, յորով բանից պէտս ունի այս խնդիր, և ոչ Թախանձելի է՝ի միւսմ մատենի բացատրել մեզ զբովանդակն։

ԳԼՈՒԽ ԻԳ.

Յաղագս ՅԾայնի երրորդութեանն, Թէ զոյցս նշանակի իւրոյ սիրելւոյ Յամենայն՝ի գործս իւր։

ՀԱՒԱՏԱՄՔ և դաւանեմք և աներկբայ քարոզեմք, Թէ Հայր ծնաւ զՅանն, այսինքն զիմաստութիւնն՝ որով ամենայն ինչ եղև, զորդի միածին, մին զմին, յաւիտենական զյաւիտենականէն, ծայրագոյն բարին զղուգահա-

ւասար բարին. և Թէ Հոգին սուրբ է միանդամայն Հոգի Հօր և որդւոյ, և ինքն համագոյակից և աշխոյնաւորա- կից երկոցունց: Իսկ բոլորս այս՝ երրորդութիւն է վասն յատկութեանն դիմացն, և մի ոմն՝ վասն անբաժանելի ոմն- թեանն. որպէս և մի ամենակալ՝ սակս անբաժան ամենա- կարողութեան: Իսկ ի հարցանելն զինոյ միոյ՝ պատասխա- նեմք Թէ իւրաքանչիւր ի նոցանէ և ոմն է, և ամենակա- րող. իսկ զամենիսին միանդամայն, ոչ երիս աստուածս, կամ երիս ամենակարողս, այլ մի ոմն ամենազօր. այսպէս է յերիսին անորոշելի միութեն. որ այսպէս կամեցաւ քա- րոզել մեզ զինքն: Իսկ որովհետև Հօրն բարւոյ և որ- դւոյն բարւոյ Հոգին սուրբ է երկոցունց հասարակ, միթէ մարթի իցէ բարութեն երկոցունցն ասել, չիշխեմ արագ վը- ճիռ հատանել. սակայն երկոցունցն սրբութիւն զնա ասել ա- ռաւել համարձակիմ, ոչ իբր որակութիւն երկուցն, այլ և զնա որպէս գոյացութեի, և երրորդ անձն յերրորդութեն: Իսկ- զի ի սմին հաւանութեն բերիմ ոմնոյ՝ զի և Հայր գոլով Հոգի, և որդի Հոգի, նոյնպէս Հայրն՝ սուրբ, և որդին՝ սուրբ, նա միայն յատկաբար կոչի Հոգի սուրբ, իբր գոյացական և համաբուն սրբութեի երկոցուն: Իսպա եթէ ոչ այլ ինչ է բարութիւն ածական՝ բայց նոյն իսկ սրբութիւն, արդարեւ խնամ հանձարոյ իցէ՝ և ոչ յանդգնութիւ բերութիւն՝ անգէն ի գործս ոմն իմանալ խորհրդաւոր օրինակաւ առ ի մարգութիւն իմաս- տից մերոց, Թէ նա ինքն երրորդութեին նշմարի. և Թէ զիւրաքանչիւրս արարած ո արար, իւ արար, այր վասն ա- րար: Իսանզի Հայր Իանվին իմանի այն՝ որ ասացն, եղիւ- ցի. և որ ինչ նորա ասելոյն եղև, անշուշտ Իանվիւն եղև: Իսկ յասելն՝ եռաս ոմն զի բարի է, լիով նշանակի Թէ ոմն ոչ առ Հարկի ինչ, ոչ առ կարօտութեն իւրումն օգտի, այլ սոսկապէս ի բարութեի իւրմէ արար զոր ինչ եղևն. այս- ինքն՝ զի բարի է. և յայն սակս յետ լինելոյն ասացաւ այդ, զի ծանեցի Թէ որ ինչ եղևն՝ պատկանի առ բարու- թեն անդր՝ որ վասն եղև: Օ այս բարութեն եթէ ուղղու- թեի իմանամք զՀոգւոյն սրբոյ, բովանդակ երրորդութեին ակնարկի մեզ ի գործս իւր: Իսու ասաի իսկ է սրբոյ քա-

զաքին՝ որ 'ի վերինն 'ի սուրբ հրեշտակն՝ սկիզբն և յո-
բինուած և երանուելոյն։ Վասնզի եթէ ինդրեսցի թէ
ուստի՞ է, այս է պատասխանին. Ձայն Հաստատեաց զայն.
և թէ ուստի՞ իմաստուն իցէ, ասելի է. վասն զի առ յայ
լուսաւորի. և թէ ուստի՞ երջանիկ իցէ, ասելի է. վասն
զի զձայ վայելէ խոկալոյ, 'ի նմա հաստատեալ բարեկար-
գի, զնա նկատեալ պայծառանայ, 'ի նա յեցեալ զուար-
ձանայ. է, կեայ, սիրէ. 'ի մշանջենաւորութենն այ բար-
գաւաձի, 'ի չքմարտութենէ այ բացափայլէ, 'ի բարու թենէ
այ բերկրի։

ԳԼՈՒԽ ԻԹ

Յաղագս եռամեան ուսման Հանճարէն իմաստասիրութենէ։

ՈՐՔԱՓ ինչ մարթ է իմաստասիրել, աստուստ եղև փի-
լիսոփայից եռամեան կարգել զուսումն իմաստութե, մինաւ-
անդ թէ այնպէս իսկ գոլ ընկալան, զի ոչ եթէ ինքեանք
սահմանեցին այնպէս լինել, այլ նոքաւսիկ գտին. որոց ա-
ռաջին մասն բնական կոչի, երկրորդն՝ բանական, երրոր-
դքն՝ բարոյական. զորս և յոլովերորդ գիրսն համառօտ
յուշ արարաք։ Ել զայն ասեմք, թէ իմաստասէրքն յա-
ղագս երրորդութենն այ խորհեալ ինչ ի նեն յայսոսիկ երից
մասունս. Թէպէտ և վասն Պղատոնի ասի՝ թէ առաջին
եգիտ նա և աւանդեաց զայս բաժանումն, որ և բոլորից
բնութեց Հաստիչ՝ զձայ միայն ծանեաւ, զնա միայն տուիչ
Հանճարոյ, միայն ազդիչ սիրոյ՝ որով է կեալ բարիոք և ե-
րանելի։ Ել թէ արդարեւ յաղագս բնութեան իրաց, յա-
ղագս արհեստի քննելոյ զչքմարտութենէ, և յաղագս վախ-
ճանի բարւոյն՝ յոր ուղղել պարտ է զամենայն զմեր գոր-
ծս, բազումք զանազանաբար կալան կարծիս, սակայնոյ
ցայն Հայեցողութենէ բովանդակ յերից յայսոսիկ 'ի մեծ և
'ի Հանրական խնդիրս յածէ. յորս իւրաքանչիւր գիւրն
խորհելով, բազում է կարծեաց անմիաբանութենէն, բայց

ոչ ոք հակառակի՝ Թէ գոյ պատճառ բնութեանէ, տիպար գի-
տութեանէ, կանոն վարուց։ Այլ և յիւրաքանչիւր մարդ ար-
հեստագէտ առ՝ի գործելոյ ինչ՝ զերիս իրս է տեսանել.
զբնութեանէ, զուսուցին և զվարուցին, բնութենին կշռադատելի
է ըստ Ճարտարութեանն, ուսուցին ըստ գիտութեանէ, վարուցին
ըստ արգասեաց պաղցն։ Եւ անգիտանամ Թէ տիրապէս
առեալ պատուոյն վայելողին է, և վարուցն՝ի կիր առողին.
յորս այս ինչ խոհիր Թուի լինել, զի վայելել ասի յայն
ինչ՝ որ ինքնին զուարճացուցանէ զմէզ առանց ուղղելոյ
յայլ ինչ. իսկ վարել զայն ինչ՝ զոր սակս այլոյ ինչ գործեմք.
ուստի գժամանակաւորս յաւէտ լինի վարել քան վայե-
լել, որպէս զի՝ի յաւիտենականսն վայելել արժանասցուք։
Այլ ոչ որպէս Թիւրեալքն խորհին, որք վայելել կամին
յինչսն, իսկ վարիլ՝ՇՎ. զի ոչ սակս՝ՈՅ ծախեն զինչսն, այլ
վասն ընչից պաշտեն զՅԾ։ Այլ սակայն ըստ յաՃախս սո-
վորութեանէ խոսելոյ, և պաղովք վարիմք, և վարելով վայե-
լեմք. քանզի պտուղ ասի տիրապէս և անդաստանաց,
զորս յայտ է Թէ՝ի կիր առնումք աւենաբերին յաւժամա-
նակեայս։ Ուսանի ըստ այսմ սովորութեանէ՝ վարուցն ունիմ
ասել յերեսին յայսոսիկ՝ զորս յուշ արարի նկատել՝ի մաս-
դէն, այսինքն են բնութենէ, ուսուցին, և վարուցն։ Ի սոսին
Հայելով՝ և առ երանելի կեանս ստանալոյ՝ եռամասն մա-
կացութիւն ըստ ասացելոցս Հնարեցաւ յիմաստասիրաց.
բնական՝ վասն բնութենէ, բանական՝ վասն ուսման, բարոյա-
կան՝ վասն քաղաքավարութենէ։ Այսպս ուրեմն եԹէ ինքնա-
գոյ էր բնութենիս մեր, ինքնածին ունէաք ապաքէն և զի-
մաստութիւն մեր, և ոչ ջանն գնէաք այլուստեք վարդապե-
տիլ ուսմամբ. և մեր սերն առ՝ի մէնջ յառաջագայեալ,
և առ մեզ շրջեալ, բաւական լինէր յերանելի կեանս, ոչ
կարօտեալք այլում բարւոյ՝ առ՝ի վայելումն։ Իսկ այժմ՝
քանզի բնութիւն մեր առ՝ի գոլ զՅԾ ունի պատճառ, ան-
շուշտ առ՝ի գՀՇմարիտսն վարժելոյ՝ գնա պարտ է ունել
ուսուցիչ, և առ երանելի լինելոյ՝ գնա ունել պարգևատու
Ներբին քաղցրութենէ։

ԳԼՈՒԽ Լ.Ը.

Յաղագս պատկերի գերագոյական երրորդութեանն, որ երբ ինչ նմանի ի բնութենէ մարդոյ՝ և հասկըն յերանութենէ։

Լ.ՊԱՐԻՆ և միք անձամբ յանձինս Ձանաչեմք զպատկեր ՅՍ, զգերագոյնսի այնր երրորդութենէ, ոչ եթէ գՀատասարն, մանաւանդ զկարի այլազան, ոչ յաւիտենականից նմին, և համառօտ ասել, ոչ համեմատի ընդ ՅՍ, այլ զի յամենայն եղեալսն առ յՅՍ ոչ մի ինչ բնութենէ քան զնա ՅՁծամերձ գտանի, որ և ի նորոգման իւրում առաւել կատարեսցի՝ լինել և ևս մերձաւոր նմանակցութենէ։ Լ.այն զի եմք, և զմեր գոլ Ձանաչեմք, և զնոյն զգոլ և զՁանաչել սիրեմք. և յերիս ասացեալքս ոչ կասկածեմք՝ թէ կայցէ ինչ առաւել խելացի։ Վ.Ձանզի ոչ որպէս յայլ արարածինս՝ մարմնոյ զգայարանօք հալիմք յայսոսիկ, զոր օրինակ գանազոյ զգայութենէ առնուամբ տեսութենէ, հնչմանց՝ լսելութեամբ, հոտոց՝ հնչելով, համոյ՝ Ձաշակելով, խըստոյց և կակղոյ՝ շօշափելով. և զզգալեացս այսոցիկ ըզպատկերս համամատնս՝ թէ և ոչ մարմնեղինս՝ յածեցուցանեմք ի խորհուրդս, յիշողականաւ պահեմք, և նոքօք յաճախժամս իրացդ զրգռիմք։ Վակայն առանց իրիք պատրողական երևակերպութենէ կամ ցնորից՝ ամենայնիւ հաւաստի է ինձ, թէ գոմ, և զայն Ձանաչեմ, և սիրեմ. չիք ինձ յայսոսիկ երկնչել ի ձեռնարկութեանց ակադեմականաց՝ որք ասեն. և միոյ եթէ խաբիցիս։ Վ.Ձանզի եթէ խաբիմ, ուրեմն գոմ. զի որ ոչն գոյ, և խաբել կարէ ոչ. ուստի եթէ խաբիմ, այնու իսկ յայտ է՝ թէ գոմ։ Վ.այս եթէ ի խաբելն՝ գոմ, զիարդ խաբիմ ընդ գոլ իմ, ուր Հաւաստի եմ գոլ՝ եթէ խաբիմ. և զի Հարկ էր գոլ ինձ առ ի խաբել, եթէ արգարեւ խաբեալ լինէի, յայտ է թէ ի Ձանաչելն զիս գոլ՝ ոչ խաբիմ։ Ուստի հետևի թէ ուրեմն նա և յայսմ զի Ձանաչեմ ըզ-

Ճանաչել իմ, ոչ խաբիմ. քանզի ոչ զգոյ իմ ճանեայ, նոյն պէս ճանեայ և զիմ Ճանաչել։ Այլ յորժամ զերկուս զայսպիսիկ սիրեմ, զնոյն սէր իբր երրորդ ինչ համապատիւ՝ լծակցեմ յիրան զոր ճանեայ. զի և ոչ խաբիմ թէ սիրեմ զիս, յորժամ չխաբիմ յիրս զոր սիրեմ. և եթէ այնք սուտ և լեալ էին, տակաւին սիրել իմ զսուտս՝ Ճշմարիտ էր. քանզի ոչ պակս ուղղութիւն լինէր ինձ կշտամբիլ և հրաժարել՝ ի սիրոյ ստոցն, եթէ արդարեւ սուտ էր սիրել իմ զնոսա։ Այլ զի այնպիսիկ Ճշմարիտք են և ստոյգ, ո՞ երկբայիցի թէ՝ ի սիրիլ նոցա՝ և այն սէր Ճշմարիտ և ըստոյգ է։ Այլ որպէս չէ ոք որ չկամիցի լինել երանելի, նոյնպէս ոչ ոք է որ զիւր գոլ չկամիցի. զի որ անգոյ է, երանելի զիա՞րդ լինիցի։

ԳԼՈՒԽ ԻԱ՝

Յաղագս գոյութեան և Ճանաչման, և սիրոյ երկաքանչիւրոց։

Այդ ԱՒԱՒԻՆ բնաւորական իմն ազգմամբ այնչափ հեշտական է գոլն, մինչ զի յայսմ պատՃառէ ևեթ որք կարի Թշուառքն իսկ են՝ զկորնչելն չկամին. և Թշուառականս զինքեանս տեսանելով, առաւել զԹշուառութեանն բացբարձուին խնդրեն՝ քան Թէ զանձանց՝ ի կենցաղոյս։ Այլ և այնպիսեաց՝ որք առնահաշուառս Ճանաչեն զինքեանս, և են իսկ՝ ի գլխովին, և ոչ միայն յիմասանոց առ Թշուառս դատեալք են սակս ախմարութեանն, այլ և յերջանիկ կարծեցելոցն՝ վասն չքաւորս և մուրացս լինելոյն, այնպիսեաց ասեմ՝ եթէ չնորհէր ոք զանմահութիւնն՝ ինալով և Թշուառութեանն նոցա, պայման առաջի եդեալ զի եթէ չկամիցին յար՝ ի Թշուառութէ կալ, անգոյ լինիցին բնաւ, և առնոյանիւ՝ ի կորուստ, արդարեւ խնդալիցք եղեալ ընտրեին յաւէտ կալ ինալ այսպէս՝ քան բնաւ անգոյ։ Ընտանի վկայ է այսմ նոցայն

զգայութիւն . զի ուսանի է երկնչել նոցա ՚ի մեռանելոյ , և
ախորժելին կեալ առաւել ՚ի տառապանս , քան մահուամբն
վախճան առնուլ . այլ զի յայտնի լիցի՝ քանի՛ արդեօք խու-
սափ բնութիւն յանգոյ լինելոյ : Որբին վասն տեսեալ զնո-
քեանս մօտալուտ առ ՚ի մահ , ցանկալի իրը մեծաց երախ-
տեաց՝ առնել նոցա զայն ողորմութիւն , զի այլ և ժամանակս
յերկարեսցին կեանքնոցա՚ի Թշուառուե անդ , և անագան
և մեռանիցին : Ընդուշտ ուրեմն յայտ առնեն՝ քանի՛ խըն-
դամիտ յանձն առնուին զանմահութիւն զայնպիսի՝ որ ոչ վախ
Ձան առնէր մուրողութեն : Այլ զինչ , միթէ կենդանիք ան-
գամ անբանք առհասարակ՝ որոց չէ տուեալ խորհել զայ-
սոսիկ , յանարի վիշապաց անտի մինչ ՚ի Ձձիս մանուկս ,
ոչ ակն ցուցանեն Թէ զգոն խնդրեն , և այսր աղագաւ
՚ի կորստենէ խոյս տան ամենայն հնարաւոր Ձգամբք :
Օ զինչ ծառատունկք և ամենայն պտղաբերք՝ որոց զգայու-
թիւն ոչ է առ խորշելոյ ՚ի վտանգէ յայտնի Ձգամբ , ոչ
ապաքէն առ անկասկած զգարձր ուղեշրն արձակելոյ՝ ՚ի
խորս երկրի սնդեն զարմատս , հիւթ յինքեանս Ձգեալ ,
որով ըստ իւրաց ինչ զնութեանցն գոլ պահիցեն : Ապրիլ խակ
մարմինք՝ անբաժք ոչ միայն ՚ի զգայուէ , այլ և ՚ի փոքուէ
յայն սերմնական կենդանութէ , այնպէս ՚ի վեր կոյս դէ-
մեն , կամ ՚ի ստորինս վայրաբերին , կամ ՚ի միջոց վայրս
կլինս գադարեն , զի զնութեանցն գոյութէն պահպանիցեն՝
ուրանօր բնաւորապէս մարթէ և նոցա :

Խակ Թէ քանի՛ սիրելի է Ձանաչելն , և որչափ չախորժ
խաբէլ մարդոյ բնութէն , գոյ և այսուիկ խմանալ , զի ընա-
րէ այր իւրաքանչիւր լալ առաւել առողջ մնօք՝ քան խըն-
դալ ՚ի մնաթափուն : Այս զօրուէ մեծ և աքանչելի՝ բայ ՚ի
մարդոյ չիք յայլ մահկանացու կենդանիս . որոց Թէ և ՚ի
տեսուէ զգալի լուսոյս սրագոյն և է ոմանց զգայուէ աչաց
քան զմերս , բայց չունին հալել յիմանալի լոյս անդր՝ որ
՚ի մեր միտս նշողէ գոգլես՝ առ ՚ի կարելոյ ուղիղ դատել
զայս ամենայն , զի որչափ յայն լոյս հասանելոյ , նոյնչափ
՚ի դատել կարողանամք : Վակայն յանբանիցն զգայու-
թեան Թէպէտ և գիտութէն բնաւին չիք , այլ գոյ նշմար

ինն դիտուքեձ ։ Իսկ այլ մարմնեղինք՝ թէ և ինքեանք ոչ զգան , բայց զի զգացեալք լինին , անուանեցան զգալիք . և ՚ի բուսաբերս նմանակ ինն զգայուքեանց այն է՝ զի մանին և ծնանին ։ Ի յօդիկ և այլ մարմնեղինք առ հասարակ ունին պատճառս ծածկեալս ՚ի բնութեանն , այլ զիւրեանցն կերպարանս՝ որովք երևելի աշխարհիս կազմած վայելչացեալն է , առ ՚ի զգացողութեձ յանդիման առնին . մինչ այսպէս ինն կարծեցուցանել՝ թէ փոխանակ զի ինքեանք չկարեն ձանաչել , դեմ ՚ի ծանօթուքեձ գալ ախորժեն ։ Այլ մեք այսպէս ըմբռնեմք զայնոսիկ մարմնոյ զգայութիք , զի մի մարմնապէս և եթէ գատ արասցուք զայնցանէ . վասն զի ունիմք զգայութիւն այլ գնեղբին մարդոյն առաւել գերազանցիկ . որով ընտրեմք զիրաւացին և զանիրաւացին , զիրաւացին՝ իմանալի տեսակաւն , և զանիրաւացին՝ պակասմամբն ՚ի նմանէ ։ Ի կատարումն այսր զգացողութեձ ոչ բաւ կորովութեձ արբանեկէ , ոչ խոռոչք ականջաց , ոչ շնչերակք ուղղաց , ոչ ձաշակ քմոյ , ոչ մարմնական ինչ շօշափումն ։ Այսու հասատի եմ ընդ գոլ իմ , և ընդ ձանաչել իմ զայդ . և որպէս սիրեմ զայսոսիկ , նոյնպէս հաւատի եմ և ընդ սիրել իմ։

ԳԼՈՒԽ ԻԸ

Ուրեք յառաւել պատկերակցութիձ ձծայնոյ երկրորդութիձ՝ իցէ պարտ սիրել և զնէն , որով սիրեմք զմեր գոլ և ձանաչել։

ՅԱՂԱԳՍ երկուցն այսոցիկ , այս է՝ գոյութեան և ձանաչման՝ թէ քանի սիրելեաւ են ՚ի մեզ , և թէ զինչրդ յիրաս անգամ խոնարհագոյնս քան զմեզ տեսանի նմանութիձ ինչ այսոցիկ՝ թէ և տարօրինակ , բաւականապէս ըստ պահանջել կարգի յանձն առեալս գործոյ՝ ասացաք . իսկ յաղագս սիրոյն՝ որով սիրեն , դեռ ոչ ասացաւ՝ միթէ իցէ սիրելի և նոյն ինքն սէրն ։ Այդպարեւ սիրելի է . և

ցուցանեմք այնու, զի 'ի մարդիկ՝ որք արժանապէսն սիրին, առաւել լինքն սէրն սիրի. քանզի ոչ եթէ այր բարի նա ասի տիրապէս՝ որ զիտէ զբարին, այլ որ սիրէ զնոյն, և ընդէր ապա ոչ զգամք 'ի մեզ ինքեանս՝ սիրել զնոյն զսէրն՝ որով սիրեմք զոր ինչ բարի և սիրեմք: Այսն զի գոյ և սէր՝ որով սիրի և այն որ սիրելի ոչ է. և զսէրս զայս առէ յանձին նա՝ որ զայն ինչ սիրէ, որով սիրի արժանին սիրոյ: Այսնզի մարթ է երկուցն և լինել 'ի մի և 'ի նոյն մարդ. և այս լաւ է մարդոյ, որպէս զի յաձել այնր որով բարիոքն քաղաքավարիմք, նուազեսցէ այս՝ որով չարաչարն կեամք. մինչև բովանդակ առողջասցի և 'ի բարին փոխարկեսցի համբրէն մերս քաղաքավարութէն: Օ՛ի եթէ անասունք էաք, զմարմնականն սիրէաք կեանս՝ և որ նորա զգայութէց անկ են. և լինէր այն մեր բաւականութէն. յորում բարեկեցիկ եղեալք, այլ ինչ ոչ խընդրէաք: Այսարձեալ, եթէ էաք անկականք, չէր կարողութէն սիրել մեզ ինչ զգացողականաւ, բայց ցանկացողք իմն թուէաք յուրմէ և առատ պաղաքերութէն: Այսար եթէ էաք, կամ ալիք, կամ հողմ, կամ քոց, կամ նմանեակ ինչ, թէ և անզգայք և անկենդանիք, այլ չպակասեր 'ի մեզ իբր յօժարութէն իմն յատուկ տեղեաց և կարգի. վասն զի մարմնոյն չափք զանգուածոյ՝ սիրոյ նման են, 'ի նկրտիլ նոցա ծանրութէն 'ի խոնարհ, կամ թեթևութէն 'ի վեր. զի որպէս հոգի սիրով նոյնպէս մարմինք զանգուածով բերին յո և բերին: Այդ քանզի մարդիկ եմք՝ հաստեալք 'ի պատկեր արարչին մերոյ, որոյ է Հնմարիտ յաւիտենական նուէն, յաւիտենական Հնմարտութէն, յաւիտենական և Հնմարիտ սէր, և է ինքն յաւիտենական, Հնմարիտ և սերաւիկն երրորդութէն, ոչ չիոքեաւ, և ոչ բաժանեալ, աճնարկեացուք և յիրս անդր՝ որ ստորև են քան զմեզ. որոց ոչ գոլ էր բնաւ, ոչ 'ի տեսակ ինչ կերպարանիլ, ոչ կարգի իմիք ցանկալ կամ պահել, եթէ ոչ լեալ էին յայնմանէ՝ որ ծայրագոյն էն է, ծայրագոյն իմաստուն, ծայրագոյն բարին. ընդ ասացուք աղէ ընդ ամենայն զոր արար նա սքանչելահրաշ հաստատութեամբ, և զնո-

բա հետս ինչ ուր յաւէտ, ուր նուաղ ասպացեալս ի միտ առցուք. իսկ յանձինս մեր զնորային նկարեալ զպատկեր, և ըստ օրինակի կրսեր որդւոյն անառակի զգաստացեալք յարիցուք դառնալ առ Նա՝ յորմէ մեղանչելովն ուծացաք։ Ի նմա գոյութիւն մեր անմահ լինիցի, ի նմա Հանապազել մեր՝ անսխալ, ի նմա սիրել մեր՝ անյաղթ։

Ո՛չ այսոսիկ երեսին ձիրս մեր թէպէտ և զարդիս հաւասարի ունիմք, և ոչ յայլոց վկայից հաւանեմք յայսոսիկ, այլ մեծ առ մեզ Հանապազեմք, և ներքին անխաբ հայեցուածով նշմարեմք, բայց սակայն թէ ցորչափ լինիցին արդեօք, կամ թէ չիցեն երբեք պակասելի, կամ թէ յինչ աւարտիցին՝ յորժամ ի կիր առցին բարիոք կամ չարաչար, զայսոսիկ քանզի չեմք բաւական անձամբ Հանապազել, նմին իրի զայլ վկայս խնդրեմք, կամ ունիմք իսկ. զորոց զաներկբայելի հաւատարմութիւն մնոր Հառել՝ ոչ է տեղւոյս, այլ յետոյ ուրեմն Թողլի է քաջ զինել։ Իսկ յայսմ գրի բացայայտեսցուք ըստ կարի մերում օժանդակ կեալք առ յոյ զոր միանգամ սկսաքն յաղագս քաղաքին ոյ. որ ոչ պանդխտանայ ի մահկանացու յայս կեանս, այլ անմահաբար միշտ յերկինս է, այս է՝ զհրեշտակացն սրբոց յարելոց յՅԾ, որք ոչ եղեն, և ոչ լինիցին երբեք վտարանելոք. և ահա ի մէջ սոցա, և ի մէջ այնոցիկ որք զլոյսըն յաւիտենից լքանելով եղեն խաւար, մեհենաց ՅԾ ի սկզբանէ, որպէս յառաջ ասացաք։

ԳԻՒՂԻՍ ԻԹ

Յաղագս գիտութեան սրբոց հրեշտակաց՝ որով զերծոցդութեան ծանեան յԾծուն ՅԾ անդ, և նովին իսկ զպատճառս իրաց նկատեն նախ յարուեստի Հարատաբարեսին՝ քան ի գործս անդ նորա։

Վանդի հրեշտակքն սուրբք ոչ եթէ ձայնատու բարբառովք ուսանին զՅԾ, այլ Հպատակութեամբ անփոփոխ Հնմարտութեն, այս է՝ միածին Խանիւն, և զնոյն ինքն զԽանն

և զՀայրն և զՀոգի՝ որ նոցա, և Թէ նա ինքն է երրորդութեի՛ անքաժանելի, և իւրաքանչիւր անձն՝ ի նմա՝ մի գոյացութե՛ի, վասն որոյ երեքեանն ոչ երեք աստուածք են, այլ մի Աստուած։ Այս զայս այնպէս իմանան հրեշտակք, մինչ զի առաւել գիտակ են այդմ, քան Թէ մեք անձանց մերոց։ Այլ և զարարածն գլխովին լաւ և գիտեն նոքա անդէն՝ այսինքն յիմաստութեանն այ, իբրև՝ ի բուն աբուեստի որով եղև՝ քան՝ի՛նմին յարարածի անդ, որպէս և զինքեանս լաւ և՛ի նմա՝ քան յանձինս. բայց և յանձինս նոքա և գիտեն։ Այսպէս եղական արարածք են, և զանազանեալք յայսմանէ որ արարն. վասն որոյ՝ի նմա Աստուած նայեն իբր տուընջենային ծանօթութե՛ն, իսկ յինքեանս իբր երեկորեին, որպէս վերագոյն ասացաք։ Այսպէս զի խաւիր բազում է, Թէ ծանիցի ինչ ըստ այնմ բանի՛ ըստ ոչ արարաւ, քան Թէ յինքեան. զոր օրինակ այլազգաբար լինի գիտել զուղղութե՛ն գծից կամ զՀակառակութե՛ն ձևոց՝ յորժամ մտօք նկատի, և այլ ազգ՝ի փուշոջ գծագրեալ. այլ ազգ արդարուէին Աստանալի յանփոփոխելի Հնմարտութե՛, և այլ ազգ յոգւոջ արդարոյն։ Այսպէս և այլքն. որպէս Հաստատութե՛ին ընդ վերին և ընդ ներքին ջուրս, որ երկինն կոչեցաւ, որպէս ստորին ջուրցն ժողովուին և բանալ ցամաքի, և բուսոց և ծառոց բողբոջուին, որպէս արևու յօրինուին և լուսնոյ և աստեղաց, որպէս ջրածին կենդանեացն՝ Թռչնոց և ձկանց և լողական գազանաց, որպէս իւրաքանչիւր ցամաքայնոց շարժնոց և զեռնոց, և նորին իսկ մարդոյ, որ՝ի վեր է քան զամենայն երկրածինն։ Այս ամենայն ասեմ այլօրինակ Աստանալին հրեշտակք՝ի Հանն ածք, յորում կան պատճառք և իսկութիք՝ ըստ որոց ապրարան իրք՝ անայլայլելի մնալով, և այլօրինակ՝ի նոյն իրս. անդ պայծառագոյն Աստանալմամբ, և աստ աղօտագոյն, իբր ընդ մէջ արուեստի և գործոյ։ Այլ յորժամ գործքս այսոքիկ կարգին՝ի փառս և՝ի պատիւ արարչին, իբրու առաւօտ ինն ծագէ՝ի հայեցողացն միտս։

ԳԼՈՒԽ Ի.

Ցաղագս կատարելութեան վեցեակ Թուոյ, որ առաջին ’ի քանորդութեան իւրոց մասանցն կատարի։

Ասկ եղակնաքա պատմին կատարեալք ’ի վեց աւուրս, վեցկոս երկրորդելով զնոյն օր սակս կատարելութեան վեցեակ Թուոյն. իբր ոչ եթէ այլ պիտոյ էին կէտք միջոցք ժամանակաց, որպէս այն թէ անկարող լինէր միանգամայն ստեղծագործել զամենայնն, որ յետ այնր դիպող շարժմամբք կացուցանէն զժամանակ. այլ զի գործոյն կատարելութեան օրինակեցաւ վեցեակ Թուոյնի։ Վասզի սա է առաջին ’ի թիւս որ իւրովք մասամբն լրանայ, այսինքն է՝ վեցերորդ իւրով մասամբն, և երրորդաւն, և կիսոյն. որ են՝ մի, և երկու, և երեք. որոց ’ի մի գումարմամբն՝ լինէն վեց։ Սակ մասունս ’ի Համարողուէ ասա Թուոց զայնս պէտք են իմանալ, որք կարեն քանորդ նորա ասել, զոր օրինակ կէսն, երրորդն, չորրորդն, և որ հետզհետէ անուանեալքն ’ի Թուոյ իմեքէ. քանզի ոչ եթէ՝ օրինակ իմն կայնեակ թիւն քանորդ ասի նորա չորքն, թէ և մասն է նորա. իսկ միւն է քանորդ, զի հինեերորդ մասն է նր, և երեքն նոյնպէս, զի երրորդ մասն է նորա։ Այլ երկու այս մասունքն նորա շարակցեալք՝ հինեերորդն և երրորդն, որ է մի և երեք, հետևի են ’ի բոլոր գումարէն՝ որ է հինն։ Վարձեալ, ’ի տասնեակն՝ քառեակն մասն հինչ է նորա, այլ քանորդ ոչ ասի. իսկ միւն ասի քանորդ, զի տասնեերորդ մասն է նորա. ունի և զհինգերորդն՝ որ է երկու. ունի և զկէս, որ է հինգ։ Սակայն այս երեք մասունքք, այսինքն մի և երկու և հինգ՝ ’ի մի առեալք ոչ բովանդակեն զտասն, զի է ութ։ Սակ երկոտասան Թուոյ մասունքք գումարեալք առաւելուն քան զնա. զի ունի զերկոտասաներորդ մասն՝ որ է մին. ունի զվեցերորդ՝ որ է երկու. ունի զչորրորդ՝ որ է երեք. ունի զերբորդ՝ որ է չորք. ունի և զկէս՝ որ է վեց։ Զդ մի և երկու

և երեք և չորք և վեց՝ ոչ երկոտասան լինին, այլ աւելի, այն
է վեշտասան։ Ո՞րոյն յիշատակել համառօտ ի դէպ վար-
կայ՝ առ յայտնի առնելոյ զկատարելութիւն վեցեակ Թուոյն.
որ առաջին ի թիւս՝ որպէս ասացիդ՝ յիւրոց մասանց
գումարելոց կատարեալնայ. որով և ած կատարեաց ըզ-
գործս իւր։ Այլ իրի Թուոցն քննութիւն չէ անգոսնելի,
այլ Թէ զիարդ մեծագրելի է ի բազում տեղիս սրբազան
գրոց՝ յայտնի տեսանէն մտադիր քննողք. և ոչ վայրա-
պար ասացաւ ի գովութիւս այ. «Ո՞ամենայն չափով և
Թուով և կշռով կարգեցեր»։ Իմաստ. ԺԱ. 21։

ԳԼՈՒԽ Լ.

Յաղագս աւուրն Հոգեգալստեան և պահածոյ ցուցանի կատարումն և
հանգիստ։

Ասի յաւուր հոգեգալստի, այս է՝ յհոգեգից կրկնիլն
նոյն աւուր, որ և այս Թիւ ըստ այլումն բանի կատարեալ
է, պատուով նշանակի հանգիստ այ, յորում նախ առաջին
յուշ առնի սուրբ առնելն։ Եւ կամեցաւ ած սրբել զօրս
զայս ի գործս իւր, այլ ի հանգստեան իւրում, որ ոչ
ունի երեկոյ. զի ոչ եթէ արարած լինէ այս, որ այլ ազգ
ծանուցեալ ի Հանն այ, և այլ յինքեան, առնիցէ զօրո-
շումն առաւօտին և երեկորին գիտութիւն։ Ասի յաղագս
կատարելութեանն հոգեգակ Թուոյ էր յոլովս լինչ ասել.
բայց և գիրս յերկար ձգեցաւ, և խիթամ զի մի իբրու
առիթ իմն գտեալ Թուիցիմք զդուշնաքեայ հմտութիւն
մեր ի ցոյցս բերել Թեեւ առնիմք՝ քան եթէ յօգուտ. վասն
որոյ ուշ ունել արժան է չափաւորութիւն և ծանրութիւն,
մի գուցէ զԹուոյ բազմաբանելով, անտես առնել կարծի-
ցիմք զչափ և զկշիռ։ Այլ շատ լիցի ակնարկել, Թէ բո-
լորովին կոձատ Թիւ առաջին՝ երբեակն է, և բոլորովին
դար՝ քառեակն. յորոց երկոցունց հոգեգալստեան բաղկանայ։

Ա՝ ասն այսորիկ յոլովակի իբրու շատ կամ հանրական ե-
դեալ է՝ ի գիրս. ըստ այմմ. "Լթէ եօթն անգամ ան-
կանիցի արդարն, կանգնեսցի... Բ-ոմ. ԺԲ. 16. այս է,
քանիցս անգամ և անկանիցի, ոչ կորիցէ. զոր ոչ յաղագս
յանցաւածոց տայ խմանալ, այլ՝ի վերայ նեղութեանց որք
խոնարհեցուցանեն։ Լա և. "Լօթն անգամ յաւուր
օրհնեցից զքեզ,,. Ող. ճՃԷ. որ այլ ուրեք այլով ոճով ա-
ռացաւ. "Յամենայն ժամ օրհնուն նորա՝ի բերան իմ,,.
Ող. ՀԱ։ Լա բազումն այսպիսիս է գտանել յածախին պատ-
գամս, յորս եօթնեակ թիւ՝ որպէս ասացի, փոխանակ
ընդհանրութեան ար և է իրաց գնի։ Ապրին վասն ստէպ սո-
վին թուով նշանակի նեղչարժութեան հոգւոյն սրբոյ, զոր-
մէ ասէ տէրն. "Ալսուսցէ ձեզ զամենայն ճշմարտուն,,։
Լդդ հանդիսատ այ յայմմ է, որով լինի հանդչել յածխ։
Ա ասն զի՝ի բոլորումն՝ այս է՝՝ի լիապատար կատարելու-
թենն է հանդիսատ, իսկ՝ի մասին՝ վատակք. վասն այն աշ-
խատիմք, ցորչափ փոքր՝ի շատէ գիտեմք. այլ յորժամ
եկեսցէ կատարումն, փոքր՝ի շատէն խափանեսցի։ Լայս
իսկ է պատճառն, զի և զդիրս սուրբս մեք աշխատութիք
քննեմք. իսկ հրեշտակքն սուրբք յորոց՝ի դասակցութի
և՝ի ժողով անձկամբ՝ի տաժանելի պանդխտութենս, որ-
պէս ունին զմշտնջենաւորութի կայից, նոյնպէս զերա-
գութի Աստուածման, և զերջանկութի հանգստեան։ Ալս-
տի անաչխատաբար ձեռնտու մեզ լինին, զի ոչ խոնջին
հոգևորական անախատ և ազատ շարժմամբք։

ԳԼՈՒԽ ԼՐ

Ա. կարծիս այնոցիկ՝ որք զհրեշտակացն արարչուէ վաղագոյն լինել համարին քան զաշխարհի։

Ալ. մի ոք հակաճառեսցէ ասել, Թէ՝ի բանի անդ
գրոյն "Լղկեցէ լոյս, և եղև լոյս,,, ոչ նշանակին հրեշ-
տակք սուրբք, այլ համարիցի կամ ուսուցանիցէ՝ Թէ լոյս

ինչ մնալիներէին նախ առաջինն արարած յայնժամ. իսկ հրեշտակք յառաջագոյն եղեն՝ ոչ միայն քան զՀաստատութիւնն՝ ի մէջ ջուրց և ջուրց՝ երկինն կոչեցեալ այլև նախ քան զասացեալն “ Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր ,, : Որպէս Թէ՝ ի սկզբանն կամ՝ ի սկզբան ասէին՝ ոչ տայցէ իմանալ, Թէ այս արարած զառաջինն, զի յառաջ լեալ էին հրեշտակք, այլ Թէ զամենայնն խմաստութիւն արար աստուած, որ է բան նորա. և զնա՝ սկիզբն անուանեաց գիրն. որպէս և ինքն յաւետարանի անդ՝ ի հարցա նել Հրէից ո՞ իցէ, ետ պատասխանի, Կ՚ասեն իսկ · ՅԱ · Ը · 25 : Կ՚ը այս ոչ ընդդիմաբանեմ և ես, մանաւանդ զի յաւետ լինի ինձ ախորժելի է՝ անդէն՝ ի սկսուած գրոցն ծննդոց զերբորդութիւնն՝ ի միտ առնուլ. քանզի եթէ յաւետն “ Ի սկզբանէ արար Աստուած զերկինն և զերկիր ,, խմանայցի Թէ հայր որդւովն արար ըստ սաղմոսին վկայելոյ, “ Որպէս զի մեծ են գործք քո տէր , և զամենայն ինչ խմաստութիւք արարեր ,, Սղ. ՃԳ. 24, ըստ պատշաճի ապա յետ սակաւուց յիշատակի և Հոգին սուրբ : Կ՚անգի յետ ասելոյն Թէ զորպիսի երկիր նախաստեղծեաց Աստուած , կամ զոր զանգուած և զնիւթ հանդերձելոյ կազմուէ աշխարհի՝ անուամբ երկնի և երկրի յորջորջեաց յաւելուածով բանին “ Կ՚ը երկիր եր անեղեւոյթ և անպատրաստ, և խաւար՝ ի վերայ անդնդոց ,, , նոյնհետայն առ ամբողջ բեռնելոց զերբորդութիւնն յայտարարութիւն՝ ասէ . “ Կ՚ը Հոգի Այ շրջեր՝ ի վերայ ջրոյ ,, : Կ՚ան այնորիկ կալցի զայս իւրաքանչիւր ոք որպէս և ախորժէ . իբր զի բանիդ խորութիւն ունի արտայայտել բազում խմաստս ոչ օտարաձայնս՝ ի կանոնաց Հաւատոյ՝ առ՝ ի վարժուին ընթերցողաց . բայց միայն զի յերկեայս ոք մի լինիցի՝ Թէ հրեշտակք սուրբք կան՝ ի բարձր կայանս՝ ոչ արդարեւ մշանջենակիցք Այ, այլ անկաւ կածք և անեղերայ հաւասի ընդ իւրեանցն յաւելուած և ձգրիտ երջանկութիւն . որոց համագասելիս ուսուցանելով տէրն զխոքրկուհնս իւր , ոչ լոկ ասէ՝ Թէ հաւասար հրեշտակաց Այ են, այլ զայն ևս ցուցանէ՝ Թէ որովհետեւ զուարճանան նոքին հրեշտակք յասելն . “ Օ դոյշ

լերուք, մի արհամարհիցէք զմի ՚ի փոքրկանցս յայսցանէ. ասեմ ձեզ, զի հրեշտակք նոցա յերկինս հանապազ տեսա- նեն զերեսս հօր իմոյ որ յերկինս է ... Մատ. ԺԸ. 10։

ԳԼՈՒԽ Լ.Ը

Յաղագս երկուց այլ և այլ և անձնաւոր խմբի հրեշտակաց, զորս ՚ի դէպ է իմանալ անուամբ լուսոյ և խաւարի։

Այլ, թէ մեզան ոմանք ՚ի հրեշտակաց, և ՚ի խորս աշ- խարհիս խորհրդաւանեցան իբր ՚ի բանտ մինչ ՚ի յետին դա- տաստանն որ լինելոցն է յաւուր դատաստանի, բայե- լիապէս ահա ցուցանէ առաքեալն Պետրոս՝ ասելով, թէ "Ի հրեշտակսն յանցուցեալսն ոչ խնայեաց, այլ խաւա- րին կապանօք արկեալ ՚ի տարտարոսն՝ ետ պահել ՚ի դա- տաստան ... Բ. Պետ. Բ. 4։ Այդ ընդ սոսա և ընդ բարին որոշումն դնել այ յաւուրդ իսուքն, կամ իբրօք խոկ՝ ո՞ երկ- մտեացի, և ո՞ անհաւանեսցի՝ զբարին յիրաւի լոյս անուա- նակոչել. որովհետև մեք խոկ՝ որ տակաւին հաւատով դնամք, և հրեշտակացն հաւատարուած սպասաւ ենամք, չև ընկալեալք զայն, յաւուրքդ անտի այժմկն լոյս կոչեցեալ եմք. "Ի՞նչպէս և երբեմն էիք խաւար, այդ լոյս էք ՚ի տէր ... Եփես. Ե. 8։ Խոկ զապստամբողական զայն ոգիս յայտնի խաւար անուանել՝ քաջ հասու լինին, որ միան- գամ զնոսա չար և քան զանհաւատս ՚ի մարդկանէ. Ա- նայնն, կամ հաւատան։ Որպէս վասն Թէպէտ և յայս տե- ղի գրոցս այլ լոյս իմանալ գոյ յընթերցուածն, "Ոմանց ոճ, եղիցի լոյս, և եղև լոյս ... , և այլ խաւար նշանակեալ է յասելն, "Ի եղեսեաց ոճ ՚ի մէջ լուսոյն և ՚ի մէջ խաւա- րին ... , սակայն մեք զերկու զայս խօսմբ հրեշտակական, իմանամք զմին յոճ վայելեալ, և զմիսն փրով ամբար- տաւանութեն ուռուցեալ. վասն միոյն ասէ. "Երկիր պատ- ցեն նմա ամենայն հրեշտակք նորա ... Աղ. ՂԲ. 8. և միւ-

սոյն իշխանն ասէ. «Ո՛չ այս ամենայն քեզ տայ, եթէ ան-
կեալ երկիր պագանիցես ինձ ,, . (Մատ. Դ. 9, Ա՛ին որ
սիրոյն ՚ի վառեալ, և միւսն ծխեալ անուրբ սիրով իւ-
րումն բարձրութեանէ. և զի որպէս գրեալ է, «Ո՛չ ամբարտա-
ւանից հակառակ կայ, տայ շնորհս խոնարհաց ,, , ինչ յեր-
կինս երկնից բնակիչ, միւսն վայրանկեալ ՚ի ստորին յօդե-
ղէն երկինս խոռվայոյզ . այն՝ լուսաւոր ածոյաշտութիւն
անդորրացեալ, այս՝ խաւարային ցանկութիւնք յուզեալ .
այն ըստ այ ակնարկուէ բարեխնամ նպաստիչ արդարու-
թեանէ վրէժխնդիր , այս՝ տոչորեալ ամբարհաւանութիւն ՚ի
տիրել, խանդիւ ՚ի վնասել. այն՝ առ ՚ի ձեռն տալ որչափ
կամի՝ այ բարութիւնն արբանեակ, այս՝ զի մի որչափ կամի՝
վնասիցէ՝ այ իշխանութիւնն սանձահարեալ. այն՝ խաղայ
զսովաւ, զի իւրովքն հալածմամբք օգուտ գործեսցէ յոչ
կամաց , այս խանդացեալ ընդ այն՝ զի զօտարս ժողովէ
յիւր քաղաքացիս ։

Արդ զերկու զայս զհրեշտակական խումբս՝ անմահս
առ իրեարս և հակառակամարտս , զմին բնութիւն բարի
և կամաք ուղիղ, և զմիւսն թէ և բարի բնութիւն, այլ կա-
մաք թիւրեալ, որ և այլովք յայտնագունիւք վկայութիւնք
ածային գրոց ծանուցեալ իսկ էն, դատեցաք նշանակեալ
նա և յայս գիրս ծննդոց անուամբ լուսոյ և խաւարի. և եթէ
գուցէ զայլ ինչ իմանայցէ մատենագիրն ՚ի բանիս յայսմ,
այլ ոչ յանօգուտս զմիութիւն իմաստիցն հետաքննեցաք .
զի թէ և մտաց առաջնորդի գրոցս ոչ եղաք մակացու ,
բայց ոչ ստերիւբեցաք ՚ի կանոնաց հաւատոյ՝ որ այլովք
սրբազան գրովք համազօրօք ծանուցեալ է հաւատացե-
լոց ։ Ո՛չ ի արգարեւ մարմնեղէն գործք այ պատմաբանին
աստանօր , բայց ունին ստուգապէս և զհոգևորականացն
զնմանութիւն ինչ , ըստ որում առաքեալ ասէ . «Ո՛չ ի ա-
մենեքին դուք որդիք լուսոյ էք և որդիք տուընջեան. չեմք
գիշերոյ, չեմք խաւարի ,, . ա. Թես. Ե. 5. Իսկ եթէ սոյն
այս իցեն և միտք մատենագրողին, ահա դիտաւորութիւնս
մեր զկատարելագոյնն համբուրէ վախճան հարցաքննու-
թեան. առ ՚ի չկարծելոյ թէ այրն այ գերազանցեալն ածային

խնաստուԹիւ , մանաւանդ Թէ նոյնս հոգին ՚ի՝ զանց բնաւին արարեալ իցէ զՀրեշտակսն՝ ՚ի պատմագրել անդ զգործս ՚ի, զորս համօրէն գլխաւորեալս ասէ ՚ի վեցերորդ դուման աւուր . և այն եԹէ խնասցի ոք զ՚ի սկզբանէն՝ իբրև Թէ նախ, առաջին արար , և եԹէ դխզողագոյն և՝ (որոց վերծանեն) ՚ի սկզբան , (իբր սկզբամբ կամ ՚ի ձեռն սկզբան, խմս) միածին (՚անիւն արար վերկին և զերկիր , որով անուամբք ընդ հանուր արարածն նշանակի, այսինքն՝ կամ հոգեղէնն և մարմնաւորն, որ հաւանելի և՝ է, և կամ երկու երևելի մասունք աշխարհի՝ յորս պարունակին արարածք ամենայն . որպէս Թէ յառաջաբանիս զովանդակն գնել յանդիման , և ապա զմասունս նորա ըստ խորհրդաւոր Թուոյ աւուրցն ՀնգետասաբանեալՀ ։

ԳԼՈՒԽ ԼՂ

Ցաղագս կարծեաց ոմանց , Թէ ՚ի կատուցանել զհաստատուԹիւն՝ անուամբ ջուրցն զաստուցելոց նշանակին հրեշտակք , որպէս և կարծելոյ ոմանք զջուրս անսահմանս ։

ԼՂԵՒ և կարծել ոմանց , Թէ անուամբ ջուրց նշանակիցի որպէս Թէ հրեշտակայն ժողով , և Թէ այս իցէ ասացեալն ՝՝ ԼՂևցի հաստատուԹի ՚ի մէջ ջուրցդ և ջուրց... իբր այն Թէ ՚ի վերոյ քան զհաստատուԹիւն իմանին հրեշտակք , իսկ ՚ի ներքոյ՝ կամ երևելի այս ջուրք , կամ բազմուԹիւ հրեշտակայ չարաց , կամ ազգ մարդկան առհասարակ ։ Այլ Թէ և այդպէս լինիցէ , ոչ ՚ի յայտ գայր այդուիկ՝ ուր արարան հրեշտակք , այլ Թէ ուր զատան ։ Այլ և ոմանք յետասիրտ և ամբարիշտ ստուԹիւ ուրանան Թէ յայ արարեալ իցեն ջուրք . պատՃառելով Թէ չիք ուրեք գըրեալ՝ ասաց ՏՃ , եղիցին ջուրք ։ Այլ նմանաօրինակ զրաբառնուԹիւ կարելիս և զերկրէ կամ զՀողոյ ասել . զի ոչ ընԹեռնումք ուրեք՝ ասաց ՏՃ , եղիցի երկիր կամ Հող ։

Ասպա եթէ ասէն, թէ ահա գրեալ է, " Սակզանէ արար
Աստ զերկինն և զերկիրն ,, , և կարի իսկ քաջ ուրեմն և
Յուբն իմանի անտանօր. զի ընդ միով անուամբ երկրի փա-
կին Հող և Ջուր միանգամայն. քանզի " Եւորա է Ծով ,
ասէ սաղմոսն. և նա արար զնա. և զգամանաք ձեռաք նորա
ստեղծին ,, . ղբ. 5։ Սակ նոքա՝ որք անուամբ վերնային
Ջուրց զհրեշտակս ընտրեն իմանալ, զտարերդ զծանրու-
թեն առնուն պատճառս, կարծեցեալք թէ անմարթ է
լոյծ և ծանր բնութեն Ջուրց զետղ առնուլ՝ի բարձրագոյն
վայրս աշխարհի։ Սյդպիսիքդ ըստ այդմ իւրեանց պատ-
ճառի, եթէ կարողութեն էր դոցա առնել զմարդ, ոչ գինեին
ուրեմն՝ի գլուխ նորա զհիւթ մաղասոյ որ փոխան Ջրոց կայ
՝ի տարր մարմնոյ մերոյ։ Սյանզի անդ է կայան մաղասոյ
կարի յարմարագոյն ըստ այ գործուածոյն, իսկ առ դոցա
կարծիս՝ այնպէս իմն տարադէպ, մինչ զի եթէ զայս ոչ գի-
տեաք մեք, և՝ի սմին գրի գրեալ կայր նմանաբար՝ թէ
Ձեծ զհիւթ լոյծ և զալ նոյն և ծանր կարգեաց էդ՝ի մեռ
մարդկային մարմնոյ՝ բարձր կայիւք քան զայլս ամենայն,
դոքա տարերաց քննողքդ ոչ արդեօք հաւատային. և եթէ
ակնածուք էին վկայութէ գրոցս, համարիկին այլ ինչ
այնու իմանալ։ Սակայն եթէ զամենայն որ յաղագս աշ-
խարհի արարչութէ արձանագրեալն յայսմ մատենի ու-
րոյն և մանր՝ի քնին առեալ Ձանիցեմք, բազում ինչ այլ
հարկ է ասել, և արտաքոյ ելանել ըստ առաջարկութէի
կարգեալս գործոյ. և զի ըստ բաւականին թուի խոսե-
ցեալ մեր յաղագս երկուց աննման և դիմամարտ ժողովոյ
հրեշտակաց, յորոց սկիզբն առնուն և երկու քաղաքք
՝ի մարդկային կենցաղս, կամ է այսու հետև կնիք դնել
այսմ գրոց։

ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍՆԵՐՈՐԴ

Որ նախ ինդիր առնէ Օգոստինոս յաղագս հրեշտակաց, թէ ուստի յոմանս ի նոցանէ բարի կամք եղեն, և յայլս՝ կամք չար. որ իցէ բարեացն երանութեանն պատճառ, և որ թշուառութեանն չարացն: Ճառէ ապա յաղագս կազմութեանն մարդ, ուսուցանելով ոչ ի յաւիտենից հաստեալ, այլ ի ժամանակի. ոչ յայլմէ, այլ յնոյ միայն:

ԳԼՈՒԽ Ա.

Թէ մի և նոյն բնութիւն է հրեշտակաց՝ բարեաց և չարաց:

Մինչ չև խօսեցեալ յաղագս յօրինուածոյ մարդոյն, յորում յերևան գայցէ ծագումն երկուց քաղաքացն՝ որ ըստ բանաւորս մահկանացու ազգիս են, զոր օրինակ յանցելումն գրի ցուցաւ այն որ՝ ի հրեշտակսն է, թուի ինձ թէ ասել արժան է, ինչ ինչ առ՝ ի ցուցանել ըստ մեծի՝ կարի՝ զնոսին՝ ի դէպ և ոչ արտաքոյ պատշաճից է՝ ժողովս կամ ընկերութիւն ասել մարդկան և հրեշտակաց, ոչ քառեակս, իբր երկու հրեշտակաց, և երկու մարդկան, այլ յաւէտ երկուս և եթ քաղաք, այս է՝ ժողովս ասել յիրաւի, զնոսին՝ ի բարեաց հաւաքեալ, և զմիւս՝ ի չարաց, ոչ՝ ի հրեշտակաց սոսկ, այլ և՝ ի մարդկանէ:

Ընդ օրէնն երկբայել անդամ թէ բարի և չար հրեշտակաց հակառակաբարն յօժարութիւն ոչ եղև՝ ի նոսա՝ ի նեղ հակակիր բնութենէ և՝ ի սկզբանց, որովհետև երկաքանչիւր նոցա ստեղծիչ՝ ած է, համօրէն գոյից պատճառ բարի և հաստիչ. այլ՝ ի նոցա կամացն է և՝ ի ցանկութենէ. իբր զի ոմանք կացին անպրդուելի՝ ի բարին բաղձից հաստատակաց որ նա ինքն ած է, որպէս և՝ ի մշտնջենաւորութենէ նորա, ի չէմարտութենէն, և՝ ի սէրն. իսկ այլք

իւրեանց իշխանութիւնն խայտառակեալք, իբր համակ բարի անձանց երևի՛ի գերագոյն՛ի հասարակաց և յերանաւէտ բարւոյ անտի յանձնականն խոտորեցան և զանգուսպ զբեղուսն ամբարհաւաճութիւնն կալեալք իբր մշանջենաւորութիւն վերըմբերձիւ, զնենգաւորն ունայնութիւն իբր ձմեռ տութիւն հաւաստի, և զկողմնակցութիւնն գրգիռ իբր սէր անմեկնելի, գարձան եղեն ամբարտաւանք, խաբեբայք, նախանձոտք։ Այսպս ուրեմն բարեաց երանութիւն պատճառ է յարիւն յիծ. որով չարացան Թշուառութիւն պատճառ՛ի ներհակէն ձանաչի, որ է ոչ յարիւն յիծ։ Այլ եթէ՛ի հարցանելն՝ ընդէր նոքա երանելիք իցեն, ուղիղ պատասխանեմք՝ քանզի յարիւն յիծ. և թէ սոքա առ իմ՝ Թշուառք, ուղիղ պատասխանեմք, զի ոչ յարիւն յիծ, զհետ գայ թէ բանաւոր կամ իմացական արարածոյ չիք այլ բարի որով երանելի իցէ, բայց ոճ միայն։ Այսպէս ահա թէպէտ և ոչ արարած ամենայն լինել կարիցէ երանելի, զի ոչ ընդունակք են այսմ պարգևի գազանք, փայտք, քարինք, և որ այլ նոյնպիսի, սակայն որ լինելն կարէ, ոչ յիւրմէն կարէ, զի յանդոյից ստեղծաւ, այլ յայնմանէ յորմէ ստեղծաւն. զի զայն ստանալով երանելի է, իսկ կորուսանելոյն եղկելի։ Այայց որ ոչ այլով իւիք, այլ ինքնաբուն բարութիւնն է երանելի, այնու իսկ Թշուառ լինել նմա յանհնարիցն է, զի կորուսանել զանձն կարէ ոչ քնաւ։

Զայն այսորիկ ասեմք, թէ բարի անփոփոխ ոչ այլ ոք է՝ բայց մի ձշմարիտն ոճ երանելին. իսկ զոր սա արարն, են են և նոքա բարիք՝ զի՛ի նմանէ են, բայց փոփոխելիք, զի ոչ եթէ յիսկութիւնէ նոցա՝ այլ յոչէից արարան։ Այսուհետև թէ և ծայրացեալ բարիք ոչ են, զի ծայրագոյն և գերագոյն մեծուքէ քան զնոսա բարի ոճ է, բայց մեծ են և այն բարիք փոփոխելիք՝ որ յարել կարող են յանփոփոխ բարին՝ առ՛ի լինելոյ երանելի. որ և այնպիսի բարի է նոցա, զի հարկ է առանց այնր լինել Թշուառ։ Այայց ոչ վասն այսր այլքն յընդհանուր արարածոց լաւագոյն գտանին, իբր զի Թշուառ լինել անմարթ է նոցա. զի և ոչ այլ մասունք մարմնոյ մերոյ լաւագոյն քան զաչս ասիցին՝ սակս

կարելոյ նոցա լինել կոյր ։ Եւ զոր օրինակ զգայուն բնութիւն՝ և ի ցաւագնիլ անդ իւրում լաւագոյն է քան զքար անցաւելի բնաւ , նոյնպէս բնութիւն բանական գերազանցեալ է նա և ի Թշուառութիւնէ քան զանբան և զանզգայուն , որով և անբաժ ի Թշուառութիւն ։ Եւ զի այս այսպէս է , բնութիւն արարչագործեալ յայնքան վեհմուտ , որ Թէ և ինքնին փոփոխելի , բայց յանփոխելի բարին միացեալ ի ծայրագոյնն ՚ած՝ զերանութիւն ստանայ , և իւրումն կարօտութիւնէ լռուին առնու միայն երանելի լինելոյին , և յայն լռուին ոչ այլ ինչ է բաւական՝ բայց ՚ած ևէթ , անշուշտ չարիլն ի նոյն՝ արատ է նմա . իսկ ամենայն արատ՝ վնասիչ է բնութեան , ուստի և բնութեան հակառակ ։ Եւբեմն ապա յայնմանէ՝ որ չ՚ած չարի , ոչ եթէ բնութեամբն որոշի սա , այլ արատովին . և ընդ նովին իսկ արատով տակաւին մեծ յոյժ ցուցանի բնութիւնն և բազմագովելի ։ Եւ ասն զի այր արատն կամ ախտն իւրաւամբ դարովի , չայտ է Թէ գովի բնութիւնն . զի արդարացի պարսաւ արատոյն է՝ խանգարել նորա զբնութիւնն գովելի ։ Եւյա որպէս արատ աչաց զկուրութիւնն ասելով ցուցանի Թէ բնութեան աչաց անկ է տեսութիւն , և չասելն արատ ականջաց զխլութիւնն՝ ընդլութիւնն Ճանաչի անկաւոր բնութեան նոցա , նոյնպէս բնութեան հրեշտակականի արատ ասելով զոչ չարիլն չ՚ած , նովին իսկ չայտնի ցուցանի՝ Թէ վայելչական նորա բնութեան մերձենալն է առ ՚ած ։ Եւ Թէ քանի մեծ գովութիւն է չարիլ չ՚ած՝ առ ի կեալնմա , ի նմանէ իմաստնանալ՝ ի նա խնդալ և չայքան բարի վայելել անմահապէս՝ անմոլար , անվնաս , ով խորհել արժանապէս բաւական իցէ , կամ ՚ի բան բերել ։ Եորին վասն նա և չարատոյ անտի հրեշտակացն չարաց՝ որով չարին չ՚ած , և զի ամենայն արատ վնասակ բնութեան , վկայեալ ցուցանի Թէ այնչափ բարի արարչագործեաց ՚ած զնոցայն բնութիւն , զի ոչ լինելն ընդ ՚այ՝ մեծապէս գեան է այնպիսւոյ բնութեան ։

ԳԼՈՒԽ Ը

Չիք էութիւն ինչ հակառակ ՅՍ , այլ առ ի նմանէ՝ որ է Ծայրագոյն և միշտ , այն միայն օտար է՝ որ ինչ անգոյ է ։

Ո՞Ւ ԱՑՍՈՍԻԿ ասացաք , զի մի՛ ոք արդեօք ՚ի խօսել մեր յաղագս հրեշտակացն ապստամբելոց՝ կարծիս առնուցու թէ հնար էր նոցա յայլմէ սկզբնէ ունել բնութիւն այլ և թէ բնութեան նոցա ոչ ՅԱծ իցէ արարող։ Այլ այնչափ ոք ՚ի մոլար ամբարշտութենէ աստի արագ և հեշտեաւ անդրմբռնելի կայցէ , որչափ ուշի ուշով ՚ի միտ առնուցու զՅՍ ասացեալն ՚ի ձեռն հրեշտակին՝ յորժամ առաքէրն զՅՍ՝ ոմնէս առ որդիսն իսրայէլի. «Այս եմ որ էն.,, Այնզի Ծայրագոյն էութիւն գոլով ՅՍ , այս է՝ Ծայրագոյնս է , որով և անփոխոխելի , իւրացն հաստելոց յոչընչէ՝ ետ զգոլն , այլ ոչ զգոլ Ծայրագոյն , որպէս ինքն է . ոմանց ետ գոլ առաւել , ոմանց՝ նուազ. և այնպէս աստիճանօք ոմանիք կարգեաց զբնութիւնս էացելոց ։ Ո՛չ որպէս ՚ի նմանէ որ բուն իմանալ է՝ կոչի իմաստութիւն. նմանապէս ՚ի նմանէ որ ինքն էն է , կոչի էութիւն , որ որպէս ՚ի յոյն և ՚ի լատինական լեզուի նոյնպէս և ՚ի հայկականն վարի երբեմն առ մատենագիրս իբրու գոյացութիւն ։ Այսու այնմ բնութիւն՝ որ է Ծայրագոյն , և նորա առնելովն էանան էք ամենայն , ոչ գոյ բնութիւն հակառակ՝ բայց միայն ոչէն ։ Այնզի էին՝ անէն միայն է գիմամարտ. վասն այսորիկ ՅՍ Ծայրագոյն էութիւն , և այլոց համայն էութեանցն պատճառ էութիւն ներհակ ոչ գոյ ։

ԳԼՈՒԽ Գ

Թշնամիք ոչ գտանին ոչ ի բնութեէ, այլ ի ներհակ կիր կամաց, որ միասեւով նոցա յայտ է թէ բարի բնութեէ միասէ. զի արատ որ ոչ միասէ, չէ արատ։

Այլ ասին՝ ի գիրս թշնամիք ոչ, որը ոչ բնութեէ՝ այլ արատով ախտաւորութեէ հակառակ կան իշխանութեէ նորա. ոչ նմա ինչ կարացեալը միասել, այլ անձանց իւրեանց. զի թշնամիք են կամաք հակառակելոյ, և ոչ կարողութեէ միասելոյ։ Այանգի անփոփոխելի է ոճ, և աստիճանախիւ անեղծ. նմին իրի ախտն որով հակառակին ոչ թշնամիք նորա կոչեցեալքն, ոչ եթէ ոչ է չար, այլ անձանց նոցա. և այսմ՝ ոչ այլ ինչ է պատճառ՝ բայց զի խանգարէ՝ ի նոսա զբնութեէն բարիս։ Այսպա ուրեմն ոչ բնութեիւն է հակառակ ոչ, այլ ախտն. զի չարն՝ բարւոյն է հակառակ, և ո՞ժխտիցէ զայծ լինել բարի ծայրագոյն. ուրեմն ախտն հակառակ է ոչ, իբրև չար բարւոյ։ Այս զի բարի է նա և բնութեէն զոր արատաւորէ, նմին իրի և այսմ բարւոյ հակառակ է. բայց ոչ հակառակ է միայն իբրև չար՝ բարւոյ, իսկ բնութեէն զոր խանգարէ՝ ոչ չար միայն, այլ և միասակաւ։ Այանգի ոչ մի ինչ չար՝ միասիչ է ոչ, այլ միայն փոփոխելի բնութեէց և եղծանելեաց. իսկ բարեաց միասիչ է՝ վկայութեէ նոցունց իսկ ախտիցն. զի եթէ ոչ բարիք էին, նոցա միասել ինչ ոչ կարէին ախտքն։ Այան զի զինչ՝ի միասելն գործեն՝ բայց զամբողջութեէն բառնալ, զգեղեցկութեէն, զառողջութեէն, զոյժն, և որ այլ ևս բարիք բնութեէ յախտել խնդրել բառնալ կամ նուազիլ սովորեցան. իսկ եթէ չկայցէ ինչ, յոյն բառնալ զբարի իմն միասել իսկ ոչ. ուստի և ոչ ախտ է. զի անհնար է լինել ախտ, և ոչ միասել։ Այան որոյ գոյ իմաստասիրել, թէ արդարեւ ոչ զօրէ ախտն բերել միասյանն փոփոխ բարին, բայց և չկարէ միասել՝ բայց միայն բառնալ. զի չկայ՝ բայց ուր միասէ եւթէ։ Օգոյն ունիմք և

այսպէս արտայայտել. չկարէ ախտն վնասել ոչ՝ի ծայրագոյն բարւոջ և ոչ առանց բարւոյ իրիք. ուստի սոսկ բարի մարթի գտանիլ ուրեք, այլ լոկ չար՝ ոչ ուրեք երբեք. զի և նոքին բնութիք ապականեալք յախտէ չար կամացն՝ են արդարեւ չար՝ իբր ախտաւոր, բայց իբր բնութիք բարի են: Այլ յորժամ՝ի պատժի կայցեն բնութիքն ախտաւոր, բայց՝ի բարւոյ բնութիքն գոյ և այն բարի՝ զի անպատուհաս ոչ է: Վասզի արդար է այդ, և առնայն արդար՝ անշուշտ բարի է. զի ոչ՝ի սակս բնաւորը ախտից պատուհաս ոք լուծանէ, այլ սակս կամաւորաց. և եթէ ախտ սովորութիք և ուժգնակի զօրացեալ իբր բնաւորապէս իմն տիրանայ, ՚ի կամաց անտի է սկիզբն նորուն: Վասզի առ տեղեաւս մեր բանք են զախտից այնոր բնութիքն՝ որ միտս ունի ընդունակ իմանալի լուսոյն՝ առ որոշումն իրաւացւոյն յանիրաւէն:

ԳԼՈՒԽ Դ

Յաղագս բնութիք անբանից կամ անկենդանեաց՝ որ յիւրումն ազգի և՚ի կարգի ոչ անբաժ է՚ի վայելչութիք տիեզերաց:

Լոկ զանասնոց և զծառոց և զայլոցն փոփոխելեաց և մնայացուաց՝ պակասելոց՚ի հանգարոյ, կամ՚ի զգայութիք, կամ բնաւ՚ի կենաց՝ զախտսն գատաւորաբար համարել, որովք լուծանելի նոցայն բնութիք խանգարի, արդարեւ ծաղրս արժանի է. վասն զի զայն կերպարան ընկալան արարածքդ ըստ ակնարկութիք արարչին, զի տեղի տալով և յաջորդելով կատարեացեն յազգի իւրեանց զչափաւոր գեղեցկութիւնն զայն ժամանակաց, որ այսց խոնարհ մասանց աշխարհի վայելչականն է: Ոչ ոչ եթէ երկնաւորացն զերկրայինքս զուգահաւասարս առնել արժան էր, կամ թէ սոցա ոչ լինել՚ի տիեզերս, իբրև զի նոքա լաւագոյնք են, Այլ՚ի վայրքս՝ ուր այնպիսեացն

լինել՝ի դէպ եր, յորժամ՝ի պակասիլ ումանց՝ այլք ճնա-
նին, և փոքունք նեղբոյ անկանին մեծաց, և յաղթե-
ցեալքն՝ի հանգամանս յաղթողացն փոխարկին, այս է
կարգ իրաց անցանելեաց։ Ոչ ինչ ոչ զուարճանամբ ընդ
վայելչութիւն այսր կարգի. վասն զի կապեալ գոլով մեր՝ի
մի մասն գոլս ըստ պայմանի մահկանացու բնութես,
ոչ բաւեմք՝ի միտ առնուլ զլուսաւոդին՝ որում վայելչա-
բար յարմարեալ են այլ մասունքն գժպատեհ մեզ թուե-
ցեալք։ Այորին վասն յորս միանգամ անկարանամբ տե-
սանել զայն, յիրաւի հրամայիմք ընծայել հաւատս տես-
չութեան արարչին, զի մի անխորհուրդ մարդկօրէն յան-
դգնութէ առգտանել իւիք իշխեցեմք զգործ այնպիսի ձար-
տարապետի։ Այակայն եթէ մտաւորապէս ուշ ունիցիմք,
նոքին իսկ ախտք երկրաւոր իրաց՝ որք չեն կամայականք
կամ պատժողականք, ըստ նմին պատձառի արգոյ ցուցա-
նեն զընութիւն, որոց ամենեցուն ՚ած միայն է պատձառ
և յօրինիչ. քանզի և՝ի նոսա գժկամակիմք երբ ախտիւ
իւիք՝ի նոցանէ բառնի այն ինչ որ ըստ բնութեն հաձոյ
է մեզ. և է բազում անգամ, զի մարդիկ և ընդ բնու-
թիան տհաձին, յորժամ ՚ի նասաբերքք ինչ նոցա լինին, ոչ
զբնութիան կշռելով, այլ զիւրեանցն օգուտ, ըստ օրինա-
կի ՚ձձեաց որոց յաձախութէն գանեցաւ ամբարտաւա-
նութէն եգիպտացւոց։ Այայց ըստ այդմ կարեն դոքա և
զարեւպահն անգամ ընդվայր հարկանել. քանզի յանցա-
ւորք ումանք, կամ չհաւանցանողք պարտեաց՝ յանդիման
արևու դնին դատաւորաց հրամանաւ։ Այ՝ սոն որոյ բնու-
թին ոչ ըստ մեր ինչ օգտի կամ վնասց՝ այլ ինքնին մնա-
ծեալ՝ փառաց լինի առիթ իւրումն ձարտարապետի։ Այստ
սմին սակի և մշտնջենաւոր հրոյն բնութի գոլելի է, թէ
պէտ և պատուհասիչ լինիցի դատապարտելոց. զի զինչ
քան զհուր գեղեցկագոյն յարծարծելն, ՚ի բորբոքելն, ՚ի
փայլելն. զինչ քան զնա պիտանագոյն ՚ի ջեռուցանել, ՚ի
դարմանել, լուսել. թէպէտ և ոչ ինչ քան զայն գժնեայ
՚ի տուչութէն, ուստի նոյն որ օտարաբար հպեալ վնասին է,
ըստ պատշաձին առեալ՝ի կիր՝ օգտաւէտագոյն գտանի.

զի ո՞ բաւեսցէ զնորայն չահեկանութիւնսն որ ընդ տիե-
զերս՝ արտայայտել բանիւք ։ Այլ ոչ անսակ արժան է նո-
ցա՝ որք զլոյս գովեն՝ի հուրն, և զտապն պախարակեն,
կշռեալ ոչ՝ի նորա բնութենէն, այլ յիւրեանց օգտի
կամ՝ի վնասուէ. զի տեսանել կամին, տապիլ ոչ կամին.
այլ ոչ՝ի միտ առնուն թէ նոյն լոյս՝ որ նոցա հաճոյականն
է, աչացաւաց վնաս գործէ սակս անյարմարութենն. և
՝ի տապի անդ՝ որ նոցա չախորժելին է, անասունք ոմանք
կեան քաջողջութիւն սակս համասպատշաճն գոլոյ ։

ԳԼՈՒԽ Ա.

Յամենայն տեսակի և՝ի պայմանի բնութենէ գովելի է արարիչն։

Զարուրեան բնութիւնք ամենայն՝ քանզի գոյակք են, որով
և ունին զիւրեանց եղանակ, զտեսակ և իբր խաղաղութի
լինն յիւրեանս, անշուշտ բարի են ։ Այլ յորժամ կան ինան՝
ուրանօր ըստ կարգի բնութենէ անկ է նոցա, պահին զգոյ
իւրեանց՝ որչափ առնին ։ Այլ որոց ոչ տուաւ գոլ մշտա-
կայ ըստ պիտոյից և շարժմանն իրաց՝ սահմանելոյ օրինօք
արարչին՝ փոխին՝ի լաւն և կամ՝ի վատթարն, յայն կա-
տարած վարեալ նոցա ճաճային տեսչութեամբն, զոր տիե-
զերացս կարգաւորութենն բան պահանջէ. մինչ զի և ապա
կանութենն՝ որ բնաւ յեղծուին տանի զընութիւնն փոխոխելիս
և մահկանացուս, ոչ եթէ այնպէս յանեզութի արկանել
զնահն, զի ոչ լինելոյն անտի հետեւաբար լինչ մի՝ որում
լինելն պարտ է ։ Այլ զի այնպէս են իրերդ, ճաճ որ ծայրա-
գոյնս է, և՝ի նմանէ գոյացաւ էութի ամենայն՝ որ չէ ծայ-
րագոյն, զի ոչ եթէ հաւասար նմին լինել ունէր յանեզից
արարեալն, և ոչ էանալ բնաւ կարէր՝ թէ ոչ՝ի նմանէ
էր արարեալ, ոչ է ստգտանելի՝ի պատճառս իրիք իրիք
ախտի մեզ անհաճոյ եղելոց. այլ գովելի՝ հայելով՝ի բնու-
թիս ամենայն ։

ԳԼՈՒԽ Ը.

Որ իցէ պատճառ երանութեանն բարւոյ հրեշտակաց, և որ չարաց հրեշտակացն թշուառութեան։

ԱՅՍՏ իսկական պատճառ երանութեանն բարւոյ հրեշտակաց զայն գտանեմք, զի յարեալ կան յԱյն ծայրագոյն։ Իսկ ի խնդրել զպատճառ թշուառութեանն չար հրեշտակաց՝ զայն գտանեմք իրաւամբք, զի բացագարձեալ նոցա ի ծայրագոյն էէն անձամբք յանձինս իւրեանց դարձան, ուր չէին ինքեանք ծայրագոյն է։ Եւ զինչ այլ անուն իցէ ախտիս այսմ՝ բայց հպարտութեանն. ըստ այմմ. «Սկիզբն մեղաց՝ ամբարտաւանութիւն». Եկեղ. ՃԻ. 14։ Այսպս ուրեմն ոչ կամեցան զզօրութեանն իւրեանց պահել առ Աստ. Աշ. ԽԷ. 10. և ոչք առաւել ունէին լինել՝ եթէ էին յարեալ յԱն ծայրագոյն, զանձինս քան զնա մեծարելով՝ զիոքրն նախամեծար արարին։ Այս նախակին պակասութիւն է, նախակին անանկութիւն, և նախակին ախտ բնութեանն, որ այնպէս է առեղծեալ, զի չիցէ ծայրագոյն, բայց առ ստանալոյ զերանութիւն կարող իցէ վայելել յԱն ծայրագոյն. յորմէ եթէ՝ի բաց կացցէ, թէ և չլինիցի անգոյ, բայց յետնեալ գոցի, որով և թշուառաւ։ Իսկ եթէ զայսպիսի չար կամայ սկզբնապատճառ խնդրիցեմք, գտանի և ոչ ինչ։ Ո՞զի զինչ է՝ որ առնի զկամքն չար, ուր ինքն է որ առնի զգործ չար. որով չար կամքն լինի սկզբնապատճառ կամ արարող գործոյն չարի. իսկ կամայ չար արարող՝ է ոչինչն։ Այսն զի եթէ իր ինչ է, կամ ունի կամս և կամ չունի. եթէ ունի, կամ բարի է այն, կամ չար. եթէ բարի, ով այնքան ամմանայցէ ասել՝ թէ բարի կամքն առնիցէ զչար կամս. զի թէ այդպէս է, բարի կամքն լինի մեղայ պատճառ. զոր կարծել՝ յոյժ անտեղի է։ Իսկ եթէ իրդ այդ՝ արարող չար կամայ կարծեցեալգ՝ ունի և ինքն չար կամս, գործեալ և զնորին արարող հարցանեմ. և զի չափ տացի հարցաքննու-

թէն, զպատճառս առաջնոյն չար կամացն խնդրեմ. վասն զի ոչ եթէ առաջին չար կամք այն է՝ զոր առնէ չար կամքն, այլ այն է առաջինն՝ զոր ոչին արար. զի եթէ չառաջեաց ինչ՝ յորմէ լինէր, այն կանխագոյն է՝ որ զմիւսն արար, և թէ տացի պատասխանի, զայն կասն ոչ իբր ինչ արար, այլ միշտ էր, հարցանեմ, կայր արդեօք այն ի բնութեան իմիք. զի թէ ոչ եղև յիմիք, ապա բնաւ և ոչ եղև. իսկ եթէ կայր ի բնութեան ինչ, ապաքէն արարածոցն զայն և խնդրեսցուք, և ինասիչ նորա էր, որով և զրկէր զնա ի բարւոյ. և յմին իրի անմարթ էր չար կամաց լինել ի չար բնութեան, այլ ի բարւոյն՝ բայց ի փոփոխելին, որում ինաւսել կարիցէ ախտն. զի եթէ ինաւսաց ոչ, ապա ոչ եղև ախտ. ուրոյ վասն և ոչ կամք չար ասելի է. և եթէ ինաւսաց, արդարեւ բառնալով կամ պակասեցուցանելով զբարին՝ ինաւսաց։ Եւ բերեն անմարթ էր մշտնջենաւոր լինել չար կամաց յայն իր՝ յորում յառաջեաց բնական բարին, զոր կարող լինէր բառնալ չար կամքն ինաւսելով։ Իսկ եթէ մշտնջենաւոր ոչ է, ո՞ զայն արար՝ հարցանեմ։ Եւ նոյ ասել, թէ այն ինչ արար զչար կամքն, յորում չկայր բնաւ կամք։ Իսկ այս արդեօք գերագոյն իցէ՝ հարցանեմ. մի թէ խոնարհագոյն, միթէ հաւասար։ Եթէ գերագոյն ասիցի, ապաքէն և լաւագոյն. և զինքդ ապա կամաց անունակ էր, մանաւանդ թէ բարի կամաց իսկ։ Եւ այն այս հանդիպի, եթէ հաւասար ասիցի. քանզի երկուք ումանք ցորչափ նմանակիրք բարի կամաց են, մին ոչ ներգործէ ի միւսն զչար կամս։ Եւ ապա մնայ ասել թէ խոնարհագոյնն այն իր անունակ կամաց՝ ներգործեալ իցէ ի հրեշտակական յայն ի նախայանցն բնութեան զչար կամս։ Եւ կայն և այն իրն որչափ և խոնարհագոյն իցէ մինչ ի ստորինն երկիր, գոլով բնութեամբ և էութեամբ, անշուշտ բարի է, ունելով զիւր պայման և զտեսակ յաղագի իւրումն ի կարգի։ Եւ որպէս ապա բարին արարող իցէ չար կամաց. զինքդ, ասեմ, բարին չարի պատճառ իցէ։ Եւ անդղի կամքն ինքնին թողուլով զվերագոյնն և ի խոնարհագոյնս դառնալով, լինի չար. ոչ եթէ զի չար ինչ կայ յոր դարձաւն,

այլ զի ինքն զարձուածն խոտորնակ է ։ Այն իրի ոչ խո-
նարհագոյն իրն արար զչար կամին , այլ ինքն կամքն՝
քանզի եղական է , չարաչար և խոտորնակի յանկացաւ ՚ի
խնարհագոյնն ։ Այանգի երկուց ամանց զուգակիր վի-
ճակելոց հոգւոյ և մարմնոյ՝ տեսեալ զմի և զնոյն մար-
մնոյ զչեղ դիմաց , եթէ մի ՚ի նոցանէ տեսանէին յանար-
ժան տարփուածն զրգռիցի , և միւսն անշարժ կացցէ յող-
ջախոհ կամին , զինչ պատճառս համարիցիմք միւսին ՚ի
չար կամն լինելոյ , և միւսումն ոչ նոյնպէս ։ որ իրք արա-
բին զայն կամ ՚ի նմա՝ յորում՝ արարաւ ։ Այլ արդարեւ
գեղեցկութեն մարմնոյն ։ զի ոչ յերկոսին ներգործեաց
զայն , յորժամ երկոցունց հայեցուածոցն միապէս յանդի-
մանն կայ ։ Այթէ մարմին հայեցողին իցէ պատճառ ։ ըն-
դէր ապա և միւսոյն ոչ ։ կամ թէ հոգին արդեաք ։ և ըն-
դէր երկաքանչիւրոցն ոչ նոյնպէս ։ զի կանխեցաք ասա-
ցաք՝ երկոցունց ևս համահարիս լինել և հոգւով և մար-
մնով ։ Այամ լինիցի արդեաք ասել , թէ մին ՚ի նոցանէ փոր-
ձութեն իցէ կրեալ ՚ի գաղանի հրապուրանաց այսոցիկ չարի,
որպէս թէ ոչ իւրով կամաւ հաւանեալ իցէ ընդ հրա-
պուրանն և ընդ ՚ր և իցէ յորդորանս ։ Այս ահա զայդ
խնդրեմք , թէ զինչ իրք են որ ներգործեցին ՚ի նմա զայն
հաւանութեան , զչար զայն կամ՝ որով անասց չարա-
չար հրապուրողին ։ Այլ զի կարձեսցի և այս կրճիւն ՚ի
խնդրոյ առաթ , եթէ նոյն փորձութեն անցանիցէ ընդ
երկոսին ևս , և մին թուլացեալ հաւանեսցի , հաստա-
տուն կալով միւսոյն որ մնաց էին , զինչ այլ խնամն՝ բայց
զի մին կամեցաւ , և միւսն չկամեցաւ թերանալ յողջա-
խոհութենէ ։ և ուստի այս՝ բայց ՚ի սեպհական կամաց ,
նոյն գոլով յերկոսին կրից մարմնոյ և հոգւոյ ։ Այերկո-
ցունն նոցա աչաց միապէս երևութացաւ նոյն գեղեցկու-
թիւն ։ յերկոսին միապէս հարաւ փորձութիւն գաղտնի ։
ապա որք դիտելոյ կամիցին՝ թէ որ բան ներգործեաց ՚ի
միւսին գյաւտուիլ չար կամին , եթէ ձարտար նկատիցին՝
գտանեն ոչ մնաց ։ Այանգի եթէ ասիցեմք՝ թէ ինքն իակ
արար զայն կամն , զինչ էր ինքն յառաջ քան զչար կամին՝

բայց բնութեի բարի . որոյ արարող՝ ած է՝ անփոփոխ բա-
րին . Այլա ուրեմն որ ասէ , թէ որ չհաւանեցաւ փորձո-
ղին և հրապուրողին , որում միւսն չհաւանեցաւ՝ յանար-
ժան վայելչութն գեղեցիկ մարմնոյն միապէս յանդիմանն և
ղեղոյ երկոցունցն , ուր միոչ չէ եղեալ տեսութենէն և փոր-
ձութենէն՝ երկոքինն ևս համակիրք էին հոգւով և մար-
միով , նոյն ինքն ինքեան արար զչար կամս . և զի բարի էր
յառաջ քան զչին կամն , ինդիր արասցէ թէ առիմ՞ ա-
րար զչին , արդեօք զի բնութի՞ է , թէ վասն զի յանգոյից
եղեալ է . և գտանիցէ ոչ այնու 'ի գոյ եկեալ զչար կամն
առ 'ի նմանել՝ զի բնութի է , այլ այնու՝ զի յոչէից եղեալ
բնութի է : Վասն զի եթէ բնութինն պատճառ իցէ կա-
մաց չարի , ասել բռնադատիմք թէ 'ի բարւոյ լինի չարն ,
և բարին է չարի պատճառ , իբրև զի 'ի բարի բնութէ
լինին կամք չար : Այս զիարդ մարթի լինել , թէ բնութէ
բարի՝ թէ և փոփոխական՝ չէ ունելով զչար կամս , առնի-
ցէ չար ինչ , այս է՝ զչար կամն :

ԳԻՒՒԻՒ Ի.

Ոչ է պարտ ինդրել զարարող պատճառ չար կամաց :

Այլ ուրեմն մի ոք չար կամաց արարչական ինդրիցէ
պատճառ . զի չէ որ առնէ , այլ որ յեանի . զի և կամքն
չար ոչ է արարուած ինչ , այլ պակասուի : Վասնզի չեղիւ
'ի ծայրագոյն էէն առ ընչին ինչ՝ է սկսուած չար կամաց :
Իսկ զայսպիսեաց պակասութենց թէ կամիցի ոք զպատ-
ճառան գտանել , որք ըստ ասացելումն՝ չէն արարող ինչ ,
այլ յեանեալ թերութէ , այնպէս իցէ՝ որպէս զի ոք տե-
սանել կամիցի զխաւար , կամ լսել զլռութէ . և սակայն
սոքին իսկ ոչ այլ ազգ ծանուցեալ են մեզ , բայց խաւա-
րըն բանիւ աւց , և լռութիւնն՝ ականջաց , ոչ եթէ տե-
սական իւիք , այլ նոքին իսկ պակասութէ տեսական : Այս

մի՛ ոք լինիցի գիտել խնդրիցէ զայն՝ զոր ես գիտեմ Թէ անգիտանամ, բայց եԹէ զի ուսանիցի Թերևս չգիտել զայն՝ զոր գիտել պարտ է անգիտելի գոլ։ Այսմ զի ոչք ոչ տեսական իւիք՝ այլ տեսականին պակասամբ լինին գիտացեալք, եԹէ մարԹ իցէ ասել ինչ զնոցանէ կամ իմանալ ըստ իրաց ինչ անգիտանալովին գիտացեալ լինին, որպէս զի գիտելովին՝ անգէտ կայցեն։ Օ՛ի և մարմնեղէնն աչայ կորովուԹիւն որովհետև չածի զմարմնական տեսակօք, ոչ տեսանէ ուրեք զիաւար՝ բայց ուր սկսանի չտեսանել. սոյնպէս ոչ այլոյմ՛ի զգայարանաց անկէ զգալ ըզլուսԹե, բայց միայն լսելեաց. և սակայն ոչ այլ ազգ լինի զգալ զայդ՝ բայց եԹէ չլսելով։ Ի՛նա այսմ միտք մեր զիմանալի տեսական իմանալով նկատէ. իսկ ուր պակասինն, անգիտանալովին տեղեկանայ. զի “Օ՛չ յանցուածս իւր ոմ կարէ առնուլ՛ի միտ,,. Աղ. ԺԷ. 13։

ԳԼՈՒԽ Ը.

Յաղագս խոտորնակ սիրոյ՝ որով ըմբռնամ կանքն յանփոփոխ բարւոյն յեառնել չեզն՛ի բարին փոփոխական։

Օ՛չԱՑՍ գիտեմ, զի այ բնուԹե ոչ երբէք և ոչ ուրեք և ոչ մասամբ իւիք մարԹի յեառնիլ կամ նուաղիլ. իսկ որ միանգամ կարէ յեառնիլ և նուաղիլ, յոլընդէ է եղեալ։ Այլ այսպիսիք որչափ առաւել լաւ իմն էակ են և բարի ինչ առնեն, զի յայնժամ միայն ասին առնել ինչ, ունին պատճառս արարչականս. իսկ ուր յեառնեալ գտանին ըմբռնուԹե, և վասն այն չար գործեն, որ է առնել մնոտիս և եԹէ, ունին պատճառս պակասականս ըստ վտարանջուԹե կամ խոտորնակուԹե։ Այս գարձեալ գիտեմ, զի յոմ՛ր ոք լինին կամք չար, վասն այն լինին՛ի նմա, զի ԹէՀ չկամէր՝ ոչ լինէին. ուստի կամաւոր ԹերուԹե՝ և ոչ եԹէ հարկաւ եղելոց՛ի վերայ գայ պատուհաս արդար։ Վանզի խոտո-

բուսին է՝ ոչ առ չար ինչ, այլ չարաչար, այսինքն՝ ոչ առ չար բնութիս իմն, այլ չարաչար չեղուսին, իմն հակառակ կարգի բնութեց՝ ի ծայրագոյն եկն առ հակ ընդին։ Օ որ օրինակ ազատութենն ոչ ոսկւոյ ախտ կամ թերութենէ է, այլ մարդոյ խոտորնակի յարելոյ յոսկին, ի բաց թողեալ զարդարութի՝ որ անհամեմատ ի վեր գնելի էր քան զոսկի։ Նոյնպէս զկնոջէն ոչ գեղեցիկ և քաղցրագեմ մարմնոյ ախտ է, այլ հոգւոյ յանկարգս տուփելոյ ի մարմնական հեշտախտութենս, թողեալ ի բաց զժուժկալութենէ որով հպատրիմք ի հոգեկս գեղեցկին և յանեղծ անուշակսն. և ոչ փառասիրութիւն ախտ է մարդկային գովեստից, այլ անձին յանկարգս խնդրողի զառ ի մարդկանէ զգովութենէ, թեպէտև համարեալ զիշխանութենէն վկայուի. և ոչ հպարտութենէ ախտ է տուողին զիշխանութենէ, կամ բուն իշխանութենէ, այլ հոգւոյ յանդգնեալ զակատելոյ զհետ իշխանասիրութենէ, արհամարհեալ զառաւել արդար իշխանաւորն։ Այսպէս ահա որ ոք խոտորնակի սիրէ զաբին զինչ և իցէ բնութենէ, թեպէտ և զայն ի ձեռս բերիցէ, լինի ինքն չար ի բարւոջ անդ, և չուառականն զրկեալ ի լաւագունէն։

ԳԼՈՒԽ Թ.

Միթէ հրեշտակքն տուրքս զնոյն զարարիչ բնութ իւրեանց ունիցին պատճառ. բարի կամաց՝ սերոմն սիրելով ի նոսա ի հոգւոյն սրբոյ։

Այդ քանզի չար կամաց արարող ինչ պատճառ բնական, կամ թէ ասել՝ էական, բնաւ չիք, իբրև զի յայնմանէ իսկ սկիզբն առնու չարն ոգւոյ փոխոխելեաց, որով նուազն և խանգարի բարին բնութենէ, և զայնպիսի կամն առնէ պակասումն ևեթ ի թողուլն զնա, ուր նմին իսկ պակասմանն չիք պատճառ, եթէ ասիցեմք թէ նա և բարւոյ կամաց պատճառ արարող ոչ դոյ, խնդալի է՝ մի արդեօք կարծիցի թէ բարի կամք հրեշտակացն բարեաց չի-

ցէ եղական, այլ մշանջենական ընդ այ։ Այլ քանզի ինքեանք եղական էն, զնուազդ այն կամք չեղեալ ասիցի. և զի եղեալ է, արդեօք զոյգ ընդ նոսին եղև՝ եթէ առանց այնր ինքեանք նախ էացան։ Այթէ կից նոցուն, անշուշտ ի նմա եղև՝ յորմէ և ինքեանք. և միանգամայն անդէն յեղանիլն՝ յէացուցիչ իւրեանց յարեցան սիրոյն՝ ընդ ո-րում էացան։ Այլ այնուիկ իսկ զատան սոքա ի միաբա-նութէ հրեշտակաց չարաց, զի սոքա կացին ինացին յայն բարի կամս, իսկ նոքա պակասեալք յայնմանէ փոփոխե-ցան չար կամօքն, այնու իսկ զի ի բարւոյն թերացան. և ոչ թերանային արդեօք՝ եթէ կամեցեալ ոչ էին։ Այլ եթէ բարի հրեշտակքն եղեն յառաջ առանց բարի կամաց, և զայն ինքեանք անձամբ նեղգործեցին առանց այ յաջո-ղելոյն, ուրեմն ապա լաւագոյնք եղեն յանձանց՝ քան յա-բարչէն։ Այաւ լիցի։ Օ զի զինչ էին առանց բարի կամաց, բայց եթէ չարք. իսկ եթէ չար իսկ ոչ էին այնու՝ զի չկայր ի նոսա կամք չար, իբրև զի չև և ս թերացեալ էին յայնմանէ՝ զոր դեռ ոչ ունէին, յայտ է թէ տակաւին ոչ այն-պիսի և այնչափ բարիք էին, որչափ սկսան լինել բարի կամօքն։ Այս կամ եթէ չկարացին լաւագոյն առնել զան-ձինս քան զարարեալն յայ, որում միայն է առնել զլա-ւագոյնն, ապաքէն և զայն բարի կամս որով լաւագոյնք լինէին՝ ոչ այլ ազգ կարէին ունել՝ քան թէ արարչին օ-ժանդակելովն։ Այս քանզի բարի կամացն գործ այն էր, զի մի զարձցին յանձինս իւրեանց՝ որ փոքր ինչ էին, այլ ի ծայրագոյն էն, և ի նա յարեալովն առաւել լինցին, և նո-ցին կցորդութէ կեանս վայելեսցեն խնամատուն և երանա-կան, զինչ այլ ձգդեալ ցուցանի այսու, քան եթէ ա-մենայն կամք բարի անարգասաւոր ինայր ի լոկ յօժարու-թէն՝ թէ ոչ նա որ յանդոյիչ ընդունակ իւր արար զգա-րի բնութէին, ինքնին լաւագոյն առնէր զնա լրումն տա-լով, զոր յառաջն կանխեաց զարթուցանել ի լինել փա-փագող լաւին անձկանօք։

Այանդի և զայն արժան է հետազօտել. զի թէ բարի հրեշտակքն անձամբ յանձինս կալան կամս բարիս, կամօք

ինչ արարին զայն՝ Թէ առանց բնաւին կամաց ։ Այլ Թէ ոչ կամաք ինչ, ապա ոչ գործեցին ինչ. և եթէ կամաւ իւիք, արդեօք չար կամք էր այն՝ Թէ բարի ։ Այլ Թէ չար, զիարդ բարի կամաց գործնեայ լինէը չարն. իսկ եթէ բարի, ապա յառաջնմէ ունելին զայն. և ո՞ զայդ ներգործեաց՝ եթէ ոչ նա որ ստեղծն զնոսա բարի կամաք, այս է՝ մաքուր սիրովն առ՝ի յարելոյ՝ի նա, միանգամայն հաստեալ նոցա զնուէրն, և պարգևեալ զնորս ։ Այն ո՞րոյ հաւատալ արժան է, Թէ հրեշտակք սուրբք ոչ էրբէք եղեն առանց բարի կամաց, այս է՝ առանց սիրոյն ՅԱ։ Այսպէս՝ որ յարարչութէ բարի էին, այլ չարացան իւրեանց չար կամաւն, զի զայդ ոչ բնութէին բարի ազդեաց՝ բայց եթէ՝ի բարւոյն ինքնակամ պակասելով ուրուք, որով պատճառ չարին ոչ բարին լինի, այլ նուազելն՝ի բարւոյն, դոքա ասեմ՝ կամ նուազագոյն ընկալան զնորս ՅԱծային սիրոյն՝ քան զայնոսիկ որք՝ի նմին կացին, և կամ եթէ երկաքանչիւր ստեղծան բարիք հաւասարապէս, յանկանիլ նոցա չար կամաք՝ նոքա առաւել օգնականուն գտեալ՝ ժամանեցին յայն լրումն երանութէն, յորմէ ոչ երբէք անկանել գիտեն անկասկած. որպէս՝ի նախակարգեալ գիրսդ Ճառեցաք ։ Այլ մին իրի խոստովանել արժան է հանդերձ վայելչական գովութէ արարչին, զի ոչ զարանց արդարոց ևէթ՝ այլ և զսրբոց հրեշտակաց Ճահողակի լինի ասել, Թէ "Այերն ՅԱ սփռեալ է՝ի նոսա՝ի ձեռն հոգւոյն սրբոյ որ տուաւ նոցա.,. Հ֊. Ը. 5. և ոչ մարգկան միայն՝ այլ նախկին և առաւելութէ ևս հրեշտակաց բարին այն է, որ գրեալն է. "Ինձ մերձենալ առ ՅԱ՝ բարի է... Այ. ԿԲ. 28։ Այրք միանգամ այսմ բարւոյ բաժանորդքն էն, ունելին ապաքէն և առ այն յոր մերձեցեալք էն, և առ միմեանս զմիաբանութէն սուրբ, և էն մի քաղաք ՅԱ, և նոյն՝ կենդանի պատարագ նորա, և տաճար կենդանի ։ Այլ զոր օրինակ յաղագս ծագմանն հրեշտակաց ասացաք, ժամ Թուի ասել այսուհետև՝ Թէ զիարդ նորին ՅԱ ստեղծանելոյն սկզբնաւորեցաւ այն մանն քաղաքին ՅԱ, որ՝ի մահկանացու մարդկանէ հաւաքեալ միանալ ունի յանմահ

*հրեշտակս, և զարդիս աղցաւոր կենօք յերկրի պանդխտա-
նայ, կամ ըստ մասին փոխադրելոյն մահուամբ՝ հանգչի
ի գաղտնի ընդունարանս և ի բնակարանս հոգւոց։ Քան-
զի ի միոջէ մարդոյ նախաստեղծելոյն Յայ՝ ծագումն ըն-
կալաւ ազգ մարդկան ըստ վկայութեանն սուրբ գրոց, որ ի-
բաւամբք զաբանչելին ունի զվաւերականութեանն ընդ տիե-
զերս և առ համօրէն ազինս, զորոց ընդ այլ անսուտ բանս
իւր անշուշտ և ճշմարտաբար նախասէաւեաց՝ թէ հաւատալոց
են ի նա։*

ԳԻՒՈՒՍ Ժ

*Յաղագս սուտ թեան այնպիսի վիպաց՝ որ բազում հազարս ամաց ընծայեն
անցելոց ժամանակաց։*

ԼԻՈՂՈՒԿ արդ ի բաց զկարծիս արանց որ ոչ գիտեն
զինչ խօսին՝ յաղագս բնութեանն կամ եղանութեանն մարդկայ-
ինս ազգի։ Քանզի ոմանք որպէս զաշխարհն կարծեցին,
նոյն և զմարդիկ համարեցան՝ մշտագոյ լինել. ուստի և
Պղուտոս ի նկարագրելն զբանաւոր կենդանիս զմարդ՝
ասէ. «Ուրախանալիս՝ մահկանացուք. այլ միահամուռ
ազգաւ մշտնջենաւորք»։ Եւ յասել մեր առ այդպիսիս,
թէ զիարդ ի միջոց լինել մարդկան ազգի՝ ձշմարտիցի
նոցայն զրուցաբանութեանն, ուր ձառի թէ այք և որոց իրաց
գտակք լեալ էցեն, այք առաջինք աւանդիչք ազատական
մակացութեանց և այլոց արհեստից, յորոց ոմանց զառաջինն
բնակեալ այս և այն գաւառ և կողմն երկրի, այս կամ
այն կղզի, պատասխանի առնեն. ի ջրհեղեղաց և ի հրո-
կիզութեանց ընդ այլ և այլ միջոցս ժամանակաց այնպէս ինն
ամայացան յոլովագոյն կողմանք երկրի՝ թէ և ոչ բովան-
դակն, մինչև նուազունս մնալ մարդկանն, և ի նոյ սերընդ-
դոյն դարձեալ ի վեր երևել նախկին բազմութեանն, և այս-
պէս հետզհետէ նորոգիլ և հաստատիլ իրք յառաջն,
յորժամ անդրէն փոխանակէն խափանեալքն և եղծեալք*

յահագին աւերմանց անտի. այլ մարդն, ասեն, ոչ այլ ազգ՝ բայց ի մարդոյ ևեթ ունի զգեստանալն։ Պաքէն խօսին դոքա զոր կարծեն, և ոչ զոր գիտեն։

Այսքին դոքա և ի առասպատում գրուածոց ոմանց, ո- րովք ի պատմութէ ժամանակաց բազում հազարս ամաց յառաջ բերեն. ուր ըստ սրբազան գրոց՝ յերկրութէ ան- սի մարդոյն չև և բովանդակեալս համարեմք վեց հա- զարս ամաց։ Այլ զի մի յերկար ձգեսցի վիճումն ի ցրել զատութէ գրուածոցն այնոցիկ պատմողաց զբազմահազա- բեան ամս, և ցուցանել թէ չիք ի նոսա արժանահաւատ վկայութիւն վասն իրացս այսոցիկ, շատ լիցի այն Թուղթ Ալեքսանդրի մեծի՝ գրեալ առ Արիմաթիա մայր իւր՝ յայտարար վիպասանութէ քրմի ուրումն եգիպտացւոյ, զոր առեալ էր նորա ի մեհենական գրոց. և ի նմա բո- վանդակեալ կային Թագաւորութիւնքն, զորս և յունա- կանն զեկուցանէ պատմութէն. յորոց միջի ասորեստա- նեայցն Թագաւորութէ ասի ի Թղթի անդ Ալեքսանդրի բաւեալ աւելի քան զհինգհազար ամ. իսկ յունականն պատմութէն տայ իբր հազար և երեքհարիւր ամ ի տի- բասլեառութէ անտի Նէլայ, զոր և եգիպտացին այն գնէ նախկին այնր Թագաւորութէ։ Իսկ զՊարսիցն և զմահե- դոնացւոց տէրութէն մինչև յԱլեքսանդր՝ առ որ խօսէր, ձգէ յամս ութ հազար. ուր առ Ղարս՝ մահեդոնացւոց մինչ ի մահ Ալեքսանդրի գտանին ամք չորեքհարիւր ու- թասուն և հինգ, և Պարսից հաշուին երկերիւր և երեսուն՝ մինչև բարձաւ ի յաղթել Ալեքսանդրի։ Ոյք ասեն որոյ այս հաշիւք ամաց կարի պտկաս են քան զեգիպտականսն. և եթէ երեքհինգսցին և այ, ոչ զուգին նոցայոցն։ Ոչ ի թէ և աւանդի՝ թէ յերբեմն ժամանակի ամք եգիպտացւոց փո- քունք էին, իբր չորիւք ամսովք բովանդակեալ, որով մի ամն ամբողջ և իսկական՝ որպիսի այժմ մերս է և նոցայն, յինքն ունէր զնոցա երիս ամս վաղնջականս, սակայն և ոչ այսպէս ի թիւ ժամանակաց միաբանի յոյն պատմու- թէին ընդ եգիպտականին, որպէս ասացի։ Ալմին իրի ա- ռաւել հաւատարիմ է յունականն. զի ոչ անցանէ քան

զստուգութեի ամացն պարունակելոց 'ի գիրս մեր՝ որ արդարեւ սրբազանք են։ Իսկ արդ եթէ այս Թուղթ Ղեքսանդրի քաջածանօթ՝ օտարանալ բազմիք 'ի միջոցս ժամանակաց յերացն հաւատարմութենէ, ըստ ևս անվաւերական համարեսցի գրեանն՝ զորս լցեալս նախնականացն առասպելօք ընդդէմ կամիցին արկանել վկայութենէ ամենայնի ոճաշունչ մատենի, որ կանուխ գուշակեաց զգալոց տիեզերացն՝ թէ հաւատալոց են, որպէս և աշխարհ ամենայն հաւատաց ըստ յառաջասացութենէն, և թէ քանի չէմարտապատում է 'ի վերայ անցելոցն, ցուցեալ հաւաստէ այնոքիւք՝ զորս լինելոցս նախասաւեաց, և անսբխալ չէմարտութենէ 'ի գլուխ ելանեն։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Եւ այնոսիկ որք թէպէտ ոչ մշտակաց համարին զայս աշխարհ, բայց կամ անհամար աշխարհս գիտեն, և կամ զնոսին զմի աշխարհ աւելն ծնանել և լուծանիլ հանապազ 'ի սահմանեալ չրջանս գալոց։

Իսկ այլք ոմանք որք չհամարին զաշխարհս գոլ մշտընջեան, կամ ոչ զայս միակ՝ այլ զանթիւ աշխարհս կարծեն, կամ եթէ միակ ևս՝ բայց ընդ սահմանեալ միջոցս անդադար ելանել և մտանել, այդպիսիքդ ստիպին ասել թէ մարդկան ազգ գոյաւորեալ իցէ յառաջին առանց մարդոց ծնանելեաց։ Վասնզի թէ 'ի զայրանալ հեղեղացն և հրայրեցաց՝ որ ոչ ընդ բնաւ կողմանս տիեզերաց պատահեն, համարին այնպիսի կարծողք թէ ինքեան միշտ սակաւք 'ի մարդկանէ, որովք նախկին բազմամարդութենին հաստատեսցի, ոչ նոյնպէս կարեն համարիլ և սորա՝ թէ 'ի բնաջինջ լինել աշխարհի՝ կայցեն ինքեանք մարդիկ ոմանք յաշխարհի։ Այլ թէ զոր օրինակ զաշխարհ յիւրմէ նիւթոյն կարծեն ծնանել վերստին, նոյնպէս'ի տարերացն նոքա վերերևեալ ազգի մարդկան, և յետ այնր 'ի ծնողաց բողբոջել սերնդոց մահկանացուաց իբրև զայլ կենդանիսո

ԳԼՈՒԽ ԺԲ

Չինչ առ այնոսիկ իցէ պատասխանել, որք անագան ասեն զառաջին կազմուածն մարդոյ։

ՈՐ միանգամ տուաք պատասխանի՝ ի խնդրել անդ յաղագս ծագմանն աշխարհի՝ առ այնոսիկ որք չհաւանին ընդ միշտն լինել աշխարհի, այլ սկիզբն առեալ գոլոյ, որպէս և Պղատոն ինքնին խոստովանի յայտնապէս, թէպէտ և թուի ոմանց՝ հակառակ իւրոց մտացն խօսեցեալ նորա, զնոյն առնեմ պատասխանի յաղագս նախկին կազմուածն մարդոյ՝ առ այնոսիկ որք նմանաբար հարցաքննեն, եթէ վասն ոչ ստեղծաւ մարդն ընդ անհամար և անբաւ ժամանակս յառաջ անցեալս, այլ հաստեցաւ կարի անագան, մինչև պակաս քան զվեցհազար ամս ցլինելուածն նորա գտանեմք ի գիրս սուրբս։ Վասնզի եթէ ժամանակին կարձուածն զնոսա գայթակղեցուցանէ, իբրև զի սակաւ թուին նոցա ամքն՝ յորմէ հետէ զմարդոյ կազմուածն աւանդեն մատեանք մեր, զայն խորհեսցին թէ չէ ինչ յեր կարատև՝ յորում գոյ աւարտ. և համօրէն միջոցք դարուց սահմանափակք՝ առ անեզը յաւիտենականութեն համեմատեալք, ոչ եթէ սուղ ինչ՝ այլ ոչ ինչ համարին։ Ասա՛ եթէ յորմէ հետէ արարած զմարդ՝ ոչ եթէ ամք հինգ կամ վեց հազար ասիցին, այլ և վաթսուն հազար, կամ վեցհարիւր հազար, կամ վաթսնից և կամ վեցհարիւրից հազար, և դարձեալ այս գումար բազմապատկեսցի նովին չափով և հետզհետէ, մինչև Թուոյն անուն սպառեսցի, ի վերայ այսր ամենայնի կայր նոյնպէս խնդրել ընդէր ոչ յառաջ քան զայն արար։ Վասնզի՝ այ անգործն կալ յառաջնմէ առ մարդոյ արարչութի՝ այնչափ անսկիզբն յաւիտեան է, մինչ զի առ նովաւ բաղդատեալ զևս բազում և զանսահման յոլովութե ժամանակաց՝ որոց կատարած լինիցի ըստ կիտի սահմանելոյ, և ոչ գոնէ այնչափ Թուոյն՝ որչափ ի համեմատել զնուազ կաթիլ ջրոյ առ

ծով համատարած ովկիանոս պարագայութիւն հանդերձ. զի թէ և մին յերկուց կարի դուշնաքեայ է, և միւսն անհամեմատ մեծ, բայց և երկաքանչիւր սահմանափակ են. իսկ այն միջոց ժամանակին՝ որ սկզբնաւորը է, և ծայրիւ իւիք զտեղի առնու, որչափ և յերկարագոյն ձգեսցի, համեմատական առ այն՝ որոյ չիք սկիզբն, չգիտեմ փո՞քր արդեօք իցէ համարելի՝ թէ բնաւ ոչ ինչ։ Այն զի եթէ ըստ այսմ՝ ի բաց հանցին սուղ իսկ վայրկեանք մի առ մի՝ ի վախճանէ անտի, և թիւն նուազեսցի յոյժ յեամս յեամս չարժեալ, մինչև ոչ ևս կարող լինելոց բացատրել, որպէս եթէ ժամանակ մարդոյ յօրէ անտի յորում այժմ կեայ՝ մինչև յօրն յորում ծնաւ՝ հանիցես ի բաց, հուսկ յեամոյ ի սկիզբն անդր ժամանէ հանումն այն։ Իսկ եթէ ի միջոցի՝ որոյ ոչ գոյ սկսուած, ի բաց հանցին յեամս կոյս՝ ոչ առեմ մի մի վայրկեանք մանուանք կամ այլ չափք ժամուց, կամ աւուրց, կամ ամսոց, կամ տարեաց, այլ այնպէս յորնամանակ միջոցք՝ որչափ ամացն գումարումն անձառելի ինայ համօրէն համարակալաց, թէպէտ և սպառի այն մի ըստ միոջէ բարձմամբ վայրկենիցն, և եթէ այնքան միջոցք հանցին ի բաց ոչ միանգամ և երկիցս և բազում անգամ, այլ միշտ և հանապազ, զինչ իցէ, զինչ լինիցի՝ երբ չժամանէ երբէք ի սկիզբն, որ ոչ իսկ գոյ բնաւ։ Այլ մին իրի զոր մեքս խնդրեմք այժմ յեամ հնգից հազարաց և այլ ևս անցելոց ամաց, կարեն և զինչիք մեր նոքին հետաքննութիւնք խնդրել յեամ վեցհարիւր հազարաց ամաց, եթէ կայցէ ինայցէ տակաւին այս մահկանացու վիճակ մարդկան ի ծնանել և ի մեռանել, հանդերձ այս սիսի անաեղեակ տկարամտութիւն։ Այսուհետև և որ յառաջքան զմեզ եղեալքն՝ անդէն ի դեռածին ժամանակս աբարչութեան մարդոյ չարժել զայս խնդիր. նա՝ ինքնին մարդն առաջին կարող էր յերկրորդումն աւուր, կամ ի նմին իսկ եղանութեն աւուր խնդիր առնել, առիմ ոչ վաղ ևս իցէ արարեալ. և թէ երբէք կանխագոյն ևս լեալ էր, ոչ եթէ այս հակառակութիւն յաղագս սկզբան ժամանակիցս տկարանայր քան զոր այժմ, կամ զՀետ այսր ևս,

ԳԻՒՒՍ ԺԴ

Յաղագս հոգւովման դարուց՝ յորոց աւարտիլն ի սահմանեալ կիսէ՝ ըստ կարծեաց ոմանց ի փիլիսոփայից ուսիցին ամենայն իրք սխեզբայ դառնալ միւսո ի նոյն կարգ և ի նոյն կերպարան։

Յայլ գնախանձանակեալդ խնդիր վասն աշխարհիս ոչ այլազգաբար հնարաւոր կարծեցին կամ՝ ի դէպ առ՝ ի լուծանել իմաստասէրքն արտաքինք, բայց արուեստակելով շրջանս իմն ժամանակաց, որովք ասէին՝ միշտ նոցին իրաց նորոգիլ և վերադարձիլ՝ ի բնութէ գոյից, և թէ նոյնպէս յետ այնր լինելոյն անդադար պտոյտք դարուց որ գան և գնան. և այս շրջանք լինէին՝ կամ անեղծ մնալով աշխարհի, և կամ ընդ սահմանեալ միջոցս երևելով նորա և ծածկելով, այլ միշտ գնոյնս իրրև նորս յանդիման առնելով՝ զանցեալսն և զգալոցսն։ Հայոպիսի ծաղրաբանուէ և ոչ զանմահ հոգին՝ թէ և յիմաստութէ հասեալ իցէ՝ ազատ կացուցանէն գոքա, որով լինէր նմին անդադար դիմել յերանութէն սուտ, և դառնալ անդադար՝ ի ստոյգ թշուառութէն. զի որպէս Ճշմարիտ երանութէն իցէ, որոյ յաւէրժ տեւականութէնն չիք հաւաստիք, յորժամ հոգին զհանդերձեալ թշուառութէնն կամ իսկապէս անգիտանայ տխմարաբար, կամ երկնչի յերանութէ անդ խռովաբար։ Այսպա եթէ առանց դառնալոյ այլ ևս երբեք՝ ի թշուառութէն՝ չուէ գնայ աստի յերանութէն անդր, ապա ուրեմն լինի նոր ինչ՝ ի ժամանակի, որոյ չիք վախճան ժամանակի։ Այլ ընդէր ասպա ոչ նոյնպէս աշխարհ. ընդէր ոչ նոյնպէս մարդն եղեալ յաշխարհի. որպէս զի այսպէս ըստ շաւղաց ուղիղ Ճանապարհի յոգեմիտ վարդապետութէնէ խորհելի լինին խոպան անծանօթքն այն ստոյգ շրջանք կազմակերպեալք՝ ի տուց և՝ ի խաբեբայ իմաստնոց։

Վանզի եղեն և ոմանք որք (ըստ հետոց Պրոկլինի) և զընթերցուածն զայն՝ ի Պողոմեոսի գիրս որ Ժողովողն կո-

չեցեալ է, «Ո՞վ ինչ է որ եղևն, նոյն ինքն որ լինելոցն է. և զինչ է որ արարաւն, նոյն ինքն որ առնելոցն է. և ոչ է ա-մենայն առաժամայն ընդ արեգակամբ. զի զոր խօսիցի ոք և ասիցէ, ահաւասիկ այս նոր է, վաղ իսկ եղեալ է ի յա-ւիտենից եղելոցն նախ քան զմեզ..., կամեցան իմանալ ի վերայ շրջանացս այսոցիկ՝ որովք ամենայն ինչ ի նոյն դարձադարձ առնէ. ուր Աղոմոն կամ զնախահաւատեալոցն իրաց ասաց զայդ, այս է՝ զազգացն որ գնան և գան, զա-բեւռ պարագայութեացն, զգետոց սահելմանէ, և կամ բնաւ զսեռից համայն իրաց՝ որք գոյանան և եղծանին, Աման զի նախ քան զմեզ եղեն մարդիկ, են և առ մեօք և լինիցին զկնի մեր. սոյնպէս իւրաքանչիւր կենդանիք և տունկք։ Ա՛ւր և հրեշք ինքնին՝ որք օտար ծնունդք են, թէպետև յիրեարս այլակերպք, և ոմանք գուցէ միանգամ ևեթ լեալք պատմիցին. բայց ըստ որում ընդհանրապէս նորանշանք և հրեշաւորք՝ արդարեւ եղեն և եղիցին. և ոչ առաժամայն և նոր ինչ է ծնանել հրեշից ընդ արեգակամբ։ Ա՛ւր թերևս ոմանք այսպէս իմանայցեն՝ թէ միտք իմաստ-նոյն ակնարկեն ասի եղեալ յառաջագոյն ի նախասահմա-նութեանէ այ, որով չէ և չէ առաժամայն ինչ ի ներքոյ արե-գական։ Ապա այն քաւ յուղիղ հաւատոց, թէ Աղոմոնի բանիւքս համարիցիմք նշանակել զշրջանն՝ որովք փի-լիսոփոսքն կարծեն մի և նոյն ժամանակաց և ժամանակիւ անդրէն հոլովիլ. օրինակ իմն, որպէս այն թէ յայսմ դա-րու Պղատոն փիլիսոփոս յաթենացւոցն քաղաքի աշա-կերտս ուսուցանէ յակադեմեանն կոչեցեալ դպրոցի, նոյն պէս յետ անհամար դարուց՝ յերկարաձիգ միջոցաց սահ-մանելոց ի վերայ անցանելոյ՝ դառնալ ունիցին նոյն Պղատոն և նոյն քաղաքք և նոյն դպրոց և նոյն աշա-կերտք. և զկնի անհամար դարուց վերստին դարձեալ երևեսցին. քաւ ի միտ այսոցիկ հաւատս ընծայել։ Վասնզի Վ՚ի միանգամ վասն մեղաց մերոց մեռաւ, և յարուցեալ այլ ոչ ևս մեռանի, և մահ նմա ոչ ևս տիրէ. և մեք յետ յարուցեալ յամենայն ժամ ընդ տեառն լինիցիմք. առ որ և այժմէն ասեմք զաղաչեալն ի հոգենուագ սաղ-

մոսէն. ԺԸ. 8. "Ոյս տէր պահեցեր զմեզ, և ապրեցուսցես յազգէ յայսմանէ միանգ յաւիտեան.,: Ասէ առ այդոսիկ փիլիսոփայս զյաջորդն՝ի դէպ համարիմ. "Ե՞ր ուրջանակի ամբարիշտք շրջին.,. իբր ոչ եթէ կեանք նոցա ընդ անասուն ունին ընդ շրջանս առ՝ի նոցանէ յերազեալս, այլ զի արդէն նոյնպիսի բազմաւորք է մոլորութե՛ն նոցա շաւիղ, այն է՝ վարդապետութե՛ն սուտ:

ԳԼՈՒԽ ԺԳ՝

Յաղագս ժամանակաւն ասելոյ զանցագործութեան ազգի մարդկան. զոր ՃԾ ոչ նորոգ ինչ խորհրդով ահմանեաց, և ոչ յերկարեաւն կամաք:

Այ զի՞նչ զարմանք էն՝ եթէ մոլորեալ ոմանց՝ի շրջանս յայնոսիկ, ոչ մուտս գտանէն, և ոչ ելս. քանզի անգետք էն՝ և սկզբանն զոր կալաւ ազգ մարդկան և մահկանացու մերս վիճակ, և կատարածն՝ որով կնքեաց զի, անկարացեալք հասու այ խորհրդոյն լինել: Ա՝ ասն զի ուր նա յաւիտենական է և անսկիզբն, յակզբան իմիք հիմն էարկ ժամանակաց, և զմարդ զոր ոչ բնաւ յառաջն արար բեալ էր, արար՝ի ժամանակի՝ ոչ նոր ինչ և յերազակարծ խորհրդով, այլ անփոփոխելեաւ և յաւիտենականաւ: Այս ո՞ զանհետազօտելի զայս խորութե՛ն հետազօտել կարիցէ, և քննել զանքննելին. որով՝ ածէ զմարդն ժամանակ կեաց՝ և՛ ևս մարդոյ ուրուք եղելոյ, հասուեաց՝ի ժամանակի ոչ փոփոխելի կամաք, և՝ի միջին զազգ մարդկան բազմացոյց: Ա՝յդ և սաղմոսն յետ զայն բան ասելոյն, "Ոյս տէր պահեցեր զմեզ, և ապրեցուսցես յազգէ յայսմանէ միանգ յաւիտեան.,, և յետ կշտամբելոյ զայնոսիկ՝ յորոց՝ի յիմար և յամբարիշտ վարդապետութէն ոչ պակի մշանջենաւորս ազատուի և երանութի՛ հոգւոյ, անդէն՝ի վերայ էած զայն՝ թէ "Ե՞ր ուրջանակի ամբարիշտք շրջին.,. Այս որպէս թէ ասէր ոք ցնա, զի՞նչ ասպա դու համարիս, զի՞նչ

խորհիս , զինչ խմանաս . եթէ իցէ օրէնն կարծել թէ ած նորոգ ինչ կամեցեալ իցէ առնել զմարդ , զոր ոչն էր արա- րեալ յառաջ ընդ անբաւ յաւիտեանն անցեալս . որում անհնար է նոր ինչ կրել , յորում փոփոխելի ինչ ոչ գոյ . այսմ իսկ և իսկ պատասխանի տայ՝ առ ած խօսելով . “ Ի՞նա բարձրութեն քումմէ մեծ արասցես դու զորդիս մարդկան ,, : Այսորհեացին , ասէ , մարդիկ զոր ինչ յօդեն , համարեացին վիճեացեն զոր հաձինն . այլ դու ըստ բար- ձրութեն քումմէ կամ ըստ խորութեն , որումն աք՝ի մարդկանէ չկարէ հասու լինել , բազմացուցանես զորդիս մարդկան : Վ՚անզի արդարեւ որպէս կարի բարձր և խոր է միշտ գոլն այ , նոյնպէս և զմարդ զնա բնաւ արարեալն կա- մել նախ առաջին առնել յիմիք ժամանակի , առանց փո- փոխելոյ զխորհուրդ իւր և զկամն :

ԳԻ ՅՈՒԽ ԺԱ

Արդեօք որպէս ած միշտ ճանաչի որ էն , նոյնպէս առ խմանալոյ գնա միշտ տէր՝ պարտ իցէ կարծել թէ ոչ պակասեցաւ երբէք տեղծուած ինչ , որում տիրեացէ . և զինչդ ասիցի՝ միշտ տեղծեալ , զոր չէ մարթ ասել յաւիտենական :

Ո՞ՐՈ օրինակ չիշխեմ ես ասել զտեառնէ այ , թէ երբ- եմն տէր ոչ էր , նոյնպէս երկբայել ոչ ունիմ թէ յա- ռաջնմէ չկայր երբէք մարդն , այլ ըստ ժամանակի իրիք ստեղծաւ նախ առաջին : Այլ յորժամ զմտաւ ածեմ , թէ իմ իմիք միշտ տէր լեալ իցէ , եթէ չկայր միշտ ստեղ- ծուած , երկնչիմ հաստատել ինչ . քանզի և չիս ինքն հայիմ , և զդրեանէն յիշատակեմ . “ Ո՞ւ ոմ է մարդ որ գիտիցէ զխորհուրդս այ , կամ ոմ ածիցէ զմտաւ թէ զինչ կամիցի տէր : Ո՞ւ խորհուրդք մահկանացուաց զանգի- տողք են , և զաղփաղփուն հնարագիտութիւնք մեր : Ո՞ւ մարմին եղծանելի ծանրացուցանէ զոգի , և հակէ հողե- ղէն յարկ զմիտս բազմահոգս ,, . Իմաստ . Թ : Իազմահոգ

իմա, զի քաղում ինչ իրա հոգայ խորհելով. այլ ոչ զօրեմ գտանել՝ եթէ ոք ի սոցանէ կամ արտաքոյ այսոցիկ իցէ Հիմարիա, զոր գուցէ և խորհիմ իսկ ոչ։ Ասաի եթէ ասացից՝ եթէ միշա եղև ստեղծուած՝ որում էր միշտ ներն անպատճառն ի սէրումէ, և եթէ լեալ իցէ ստեղծուած մերթ այս, և մերթ այն, յայլ և այլ միջոցս ժամանակաց, խիճալի լինի, զի մի արդեօք զմի յայսցանէ յաւիտենական կոչ ասիցեմք ստեղծողին, զոր գտանապարտէն հաւատաք և առաջ բանն. արդէս և զդուշալի է՝ մի գուցէ տարագէպ և ծաւր իցէ ի լուսոյ Հիմարտումէն՝ ասել եթէ լեալ իցէ միշտ ստեղծուած մահկանացու փոխոխմամբ ժամանակաց՝ միաւին գնալով, և միւսումն յաջորդելով. իսկ անմահ ստեղծուած սկսեալ իցէ լինել ի հասանել և եթէ մերոյ դարուս՝ յորժամ ստեղծան և հրեշտակք, եթէ արդարեւ զնոսա յայտ առնիցէ լոյսն առաջնաստեղծ, կամ լաւ եւս երկինն զրամէ ասացաւ. "Ի սկզբանէ արար Ած զերկինն և զերկիր ,, . բայց և սոքա չկային՝ մինչ չև լեալ էին. զի մի յասելն միշտ եղեալս զանմահսն՝ կարծիցին յաւիտենականիցս գոլ այ։ Իսկ եթէ ասիցեմ եթէ հրեշտակք ոչ ի ժամանակի ստեղծան, այլ եղեն և նոքա յաւազ քան զամենայն ժամանակս, որոց տէր լինիցի Ած՝ միշտ տէրն, լինի խնդրել դարձեալ կինեն, զի եթէ յաւազ եղեն քան զամենայն ժամանակս, միեթէ կարէին միշտ լինել ոչք եղեն։ Զերեւս ի Հաճ եթէ պատասխանել առ այս. և զնոյնդ ոչ միշտ, իբր զի որ զոչ յամենայն ժամանակի, ոչ տարադէպ ասի լինել միշտ. և սոքա այնպէս եղեն յամենայն ժամանակի, զի յառաջ իսկ քան զամենայն ժամանակս եղեն. եթէ արդարեւ յերկնից սկիզբն առեալ իցեն ժամանակք, և հրեշտակք արդեն յառաջ քան զերկինն լեալ իցէ։ Իսկ եթէ ժամանակն ոչ յերկնէ, այլ նախ քան զերկինն եղև, ոչ այն որ ժամուց է և աւուրց և ամանց և տարեաց, զի այս չափմունք ժամանակական միջոցաց՝ որ սովորաբար և տիրապէս ժամանակք կոչին, յայտնապէս յաստեղացն պարագայութենէ ունին սկիզբն, քան որում և Ած ի յօրինել անդ զայսո-

սիկ՝ ասաց , « Յո՛ եղեցին 'ի նշանս և 'ի ժամանակս , և յաւուրս և 'ի տարիս ,, (Ծն . ա . 14) , այլ լեալ էցի փոփոխելի շարժութիւք իւիք , յորում կայցէ ոմն առաջին , և ոմն յետին , ոչ կարելով նոցա լինել միահաղոյն , եթէ ասեմ եղև այսպիսի ինչ 'ի հրեշտակական շարժմունս նախ քան զերկինն , և այնուհետև եղև յայնժամ ժամանակ , և հրեշտակք յորմէ հետէ եղենին՝ շարժելոյն ժամանակաւ բաբաք , եղեն սոյն օրինակ յամենայն ժամանակի , որմէ հետէ կիս ընդ նոսա եղեն ժամանակք . Ո՞ւ ո՞ ասիցէ ոչ միշտ եղեալ զայն ինչ՝ որ եղեն յամենայն ժամանակի .

Վասն որոյ եթէ զայս այսպէս պատասխանիցէ , լինէր ասել ցիս . ապա զնոքօրդ ոչ էցեն յաւիտենականիցք արարչին , եթէ սա միշտ է , և նոքա միշտ եղեն . և զնոքօրդ զարձեալ առեղծեալք կամ եղականք ասիցին՝ եթէ մինչ տագոյ չհանապէն . Ո՞ւնդ էցէ առ այս պատասխանել . միթէ 'ի դէպ է ասել , և մշտագոյ են՝ իբր յամենայն ժամանակի եղեալք , որ եղենին ընդ ժամանակի , կամ ընդ որս ժամանակսն եղեն , և միանգամայն առեղծեալք են . քանզի և ոչ զնոյն ժամանակն կարիցեմք չառեղծեալ ասել , թէպէտ և ոչ որ երկայնի թէ յամենայն ժամանակի եղև ժամանակ . զի եթէ ոչ յամենայն ժամանակի լեալ է ժամանակ , ապա ուրեմն էր ժամանակ՝ յորժամ ժամանակ ինչ ոչ դոյր . և ո՞ր 'ի խօլականաց ասիցէ զայդ . Վասզի եմք ապաքէն չհնարաւոր ասել էր ժամանակ՝ յորժամ ոչ կայր Հոգւոյն էր ժամանակ՝ յորժամ Աբրահամ ոչ էր . էր ժամանակ՝ յորժամ Աբրահամ ոչ կայր . էր ժամանակ՝ յորժամ ոչ էր մարդ , և որ այլ ևս սոյնպիսի . Յո՛ պարզաբար , եթէ ոչ ընդ սկզբան ժամանակի արարաւ աշխարհ , այլ յետոյ քան զժամանակ ինչ , կարելի՞ ասել , էր ժամանակ՝ յորժամ ոչ էր աշխարհ . Այլ սակայն ասել , թէ էր ժամանակ՝ յորժամ ժամանակ ինչ ոչ դոյր , այնպէս յանառեղծաց է , որպէս եթէ որ ասիցէ , էր մարդ՝ յորժամ չէր մարդ որ . կամ էր այս աշխարհ՝ յորժամ չկայր այս աշխարհ . Վասզի եթէ զայլմէ և զայլմէ խմաացի , միթէ է ըստ իրաց ինչ ասել , էր այլ մարդ՝ յորժամ

ոչ կայր այս ոք մարդ. սոյնպէս ուղիղ ասեմք,եր այլ ժամանակ՝ յորժամ ոչ կայր այս ժամանակ։ Այլ ո՞ր և յանմտոց իչխիցէ ասել, եթէ էր ժամանակ՝ յորժամ չկայր բնաւ ժամանակ ինչ։ Այլ զոր օրինակ ստեղծեալ ասեմք զժամանակն, զի վասն այն ասի միշտ եղեալ, զի յամենայն ժամանակի եղև ժամանակ, սոյնպէս եթէ միշտ եղեն հրեշտակք, ոչ հետևանոյ թէ յայն սակս չիցեն ստեղծեալք. քանզի այնու ասին միշտ եղեալ, զի եղեն յամենայն ժամանակի. և վասն այն յամենայն ժամանակի, վասն զի առանց նոցա անմարթ էր լինել բնաւ ժամանակաց։ Ո՛ւր ուր ոչ գուցէ արարած ինչ՝ որպ յեզափոխս շարժմամբք կատարեսցին ժամանակք, անմարթ է ամենևին ժամանակաց գոլ. և սոքին վասն թէ և միշտ եղեն, այլ ստեղծեալք են. և ոչ սակս միշտ գոլոյ՝ յաւիտենական կիցք են ՅՈ։ Վասնզի ինքն միշտ էր և է յաւիտենականութէ՛ անայլայլելեաւ. իսկ սոքա եղականք են, այլ միշտ լեալ ասին՝ զի եղեն յամենայն ժամանակի, առանց որոց անկինելի էին ժամանակք. իսկ ժամանակն զի փոփոխութէն հոսէ գնայ, ոչ ունի անփոփոխ յաւիտենականութէն յաւիտենականից լինել։ Ոմն իբրև թէպետ և հրեշտակացն անմահութէ՛ ոչ անցանէ ժամանակաւ, ոչ անցեալ է՝ իբր ոչ ևս գոյող, ոչ ապառնի՝ իբր չև եղեալ, բայց նոցայն շարժմունք որով ժամանակքն բացակատարին, գնան յապառնոյ յանցեալն, ուստի և յաւիտենակիցք լինել ոչ կարեն արարչին, յորոյ ՚ի շարժմանն չմարթի ասել կամ եղեալ՝ որ ոչ ևս է, կամ լինելոց՝ որ չև ևս իցէ։

Ուստի եթէ ած միշտ տէր էր, ունէր ապա միշտ զարարած ապաստարկու իւրում տէրութէն, ոչ անդստին՛ի նմանէ ծնեալ, այլ նովաւ յանէից արարեալ. ոչ յաւիտենակից նմին, զի յառաջ էր քան զնա, թէպետ և ոչ առ ժամանակ մի առանց նորա, ոչ միջոցաւ յառաջ անցեալ քան զնա, այլ անյեղլի մշտնջենաւորութէ՛ նախադասեալ։ Այդ եթէ ես զայս տայց պատասխանի առ հարցասիրողն, թէ զիա՞րդ միշտ արարիչ եղև, և միշտ տէր՝ եթէ արարած արբանեկող ոչ կայր միշտ, կամ ո՞րպէս ա-

բարած՝ և ոչ մանաւանդ յաւիտենականէ արարչէն՝ եթէ արդարեւ միշտ եղև, կասկածեմ մի արդեօք Թուեցայց հաստատել զոր չդիտեմ, քան զոր դիտեմն՝ ուսուցանել։ Այլա զտեղի կալայց յայն ինչ՝ զոր արարչէ մեր կամեցաւ դիտել մեզ. իսկ զայնոսիկ զոր իմաստնագունիցն աստանօր պարզևեաց դիտել, և կամ բնաւ կատարելոցն՝ի հանդերձեալ կեանսն դիտել պահեաց, խոստովանիմ զանցանել զիմով կարողութէ։ Այլ յայն սակս լաւ համարեցայ՝ի մէջ բերել առանց հաստատութեան, զի օրք ընթեռնուն՝ տեսանիցեն թէ յորմէ վտանգիւ զգուշանալ արժան է յայսոսիկ ինդիրս, և մի առնոյնմէ բաւական զինքեանս վարկանիցին. այլ առաւել՝ի միտ առցեն՝ զիարդ անսալ ունին առաքելոյ փրկաւէտ հրամանին յասելն. «Այս ասեմ՝ չնորհօքն ինձ որ տուեալ են ինձ՝ ամենայնի որ է՝ի ձեզ, մի առաւել քան զարժանն խորհել, այլ խորհել՝ի զգաստանալ, իւրաքանչիւր որպէս բաժանեաց ձեզ չափ հաւատոց...» (Հռոմ. ԺԲ. 3։ Վասնզի տղայ եթէ ըստ կազդուրել՝ իբրեւ տածեսցէ, չայզդեսցէ նմա ձեղջիւր արուարագոյն լինել. բայց ըստ կար զօրութեանն բռնադատեսցէ նիհարացի՝ քան թէ ձեռսցէ։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Չիարդ խաղի կեանք յաւիտենական խոստացեալ մարդոյ չայ յառաջ քան զժամանական յաւիտենից։

Այլ ինձ ինչ դարձ անցեալ իցեն արդեօքնախ քան զեզանուն մարդկան ազգի՝ անգէտ զիս լինել խոստովանիմ. այլ զայս աներկմիտ դիտեմ, զի և ոչ մի արարած յաւիտենականէց է արարչին։ Այսէ և առաքեալ ժամանակս յաւիտենից՝ ոչ զգալոցս, այլ որ զարմանալի ևս է՝ զանցեալսն. զի ասէ այսպէս. «Չուսով կենդանի յաւիտենից՝ զոր խոստացաւ անսուտն՝ ձեզ յառաջ քան զժամանակս յաւիտենից, բայց

յայտնեաց իւրովք ժամանակօք զգանն իւր... Տէրտէրական սահիկ ասաց՝ Թէ կանխաւ լեալ իցեն ժամանակք յաւիտենից, այլ ոչ եթէ յաւիտենականքն իցեն այ։ Ա՝ ասեն զի նա ոչ միայն յառաջ էր քան զժամանակս յաւիտենից, այլ և խոստացաւ և զկեանս յաւիտենից զոր յայտնեաց իւրովք, այս է՝ զիսպող ժամանակացն, և յայտնեաց զինչ այլ բայց զգանն իւր։ Ո՞վ սա է կեանքն յաւիտենից։ Եւ զինչ խոստացաւ, երբ արդարեւ մարդկան խոստացաւ՝ որք չեն էին յառաջ քան զժամանական յաւիտենից, եթէ ոչ զի՛ նորա մշանջենաւորուէն, և՛ մշանջենաւորակից Հանգն նորա արդէն նախասահմանեալ էր անվրէպ այն ինչ, որ լինելոցն էր յիւրաքանչիւր ժամանակի։

ԳԼՈՒԽ ԺԱ՛

Զինչ հաստատէն ուղիղ հաւատոյ յայտգոյ անփոփոխ խորհրդոյ և կատարն այ ընդդէմ պատճառագրութեանց այնոցիկ՝ որք համարին զործոցն այ ի յաւիտենից անտի գործադործ առնել հանապազ ընդ նոյն չքնաւ գաղուց։

Ա՛ն իւրք յերկուանամ և ընդ այն՝ Թէ նախ քան զաբարչութիւն նախասահեղծ մարդոյն ոչ եկաց բնաւ այլ մարդ, և ոչ նոյն մարդ կամ այլ ոք համաբուն՝ հոլովեալ իցէ չգիտեմ՞ որմիք չրջանօք և քանիցս անգամ։ Յայսմ հաւատոց ոչ զրդուեցուցանեն զիս իմաստասիրացն առաքուածք, յորս անօգագոյն կարծի այն զոր ասեն, Թէ անսահման ինչ իրք ոչ բավանդակին երբեք ընդ գիտութիւն։ ուսաի և ինքն ձա, ասեն, զբոլոր սահմանաւոր իրաց՝ զորս առնէ, ունի յինքեան սահմանեալ գաղափարս առհասարակ։ Եւ որովհետև չէ արժան կարծել Թէ բարութիւն նորա անգործ երբեք կացեալ իցէ, զի մի ժամանակաւ իցէ նորին ներգործութիւն, երբ յառաջեալ իցէ անգործութիւն յաւիտենական, որպէս այն Թէ ապաշաւեալ իւրք ընդ նախկին անակնկալն անգործութիւն, և այնք ազագաւ

սկիզբն արարեալ գործելոյ ։ առաջի Հարկէ, ասէն, նոյն ի-
րաց նորոգիլ միշտ, և միշտ հասել գնալ նորոգելոցն, և
այս՝ կամ՝ինալով աշխարհի ընդ փոփոխուէն, ուր չէզև եր-
բէք անգոյ՝ բայց էզև առանց սկզբան ժամանակի, և կամ
նորին իսկ աշխարհի յէն և՝ի մուտս շրջանաբեր միշտ նորա-
գեալ գոլով, և միշտ նորոգելի ։ Ըստ այս յայն սակս՝զի մի
յոսեսցէ՝ Թէ յերբեմն ժամանակի սկսեալ իցեն գործք
այ, կարծեսցի Թէ ած պախարակեալ իցէ զնախկին զիւր
անսկիզբն անգործուէն իւր գաստակուԹէն և պղերգուԹէն,
ոչ անձամբ յանձին գԺամանակելով, վասն որոյ և փոփո-
խեալ իցէ զնոցին ։ Այլ եԹէ դիցէ՝ Թէ Թէպէտ և միշտ
ժամանակաւ գործեաց ած, բայց հետզհետէ զայլ զայլոց
գիմի, և այնպէս ժամանակաւ երբեմն և՝ի մարդոյ արար-
չուԹէ, զոր յառաջն բնաւ արարեալ ոչ էր, և այս ոչ գի-
տուԹէ՝ որով անբովանդակելի համարին զոր և է անսահ-
մանս, այլ գոգցես ըստ բերման ժամուն՝ ըստ որում գիր-
ուաւն գայր, ապա ըստ գիպաց իմն յեղաշրջուԹէ Թուիցի
արարեալ զոր արարն ։ Այլ ընկալեալ միանգամ, ասէն,
զշրջանան զայնոսիկ, որով կամ՝ինալովն աշխարհի, կամ՝
նորուն իսկ ներքոյ անկանելով ելիւ և մաի՝ի ձեռն այնց
շրջանաց, նոյնք վերադառնայցեն ժամանակաւոր իրք,
այնուհետև ոչ անգործ գաստակուԹէ ընծայի այ, մնաս-
ւանդ ընդ այնչափ յերկարաձիգ անսկիզբն տեղուԹէն, և
ոչ յանկարծագէպ պատահումն գործոց նորա ։ Այլանդի
եԹէ ոչ նոյն իրք վերադարձցին, անհնար լինի ասել
զանբաւումն բիւրակերպ տարբերեալս բովանդակել գի-
տուԹէ կամ յառաջդիտուԹէ ։

Օ այսպիսի առարկուածս՝ որով խոտորեցուցանել
հնարին ամբարիշտք զմեր անխարդախ ածպաշտուԹիւն
յուզիլ պղտոտային, որպէս զի շրջանակի նման նոցա
շրջիցիմք, Թէ և անկարանայր հերքել բանն, Հարկաւ ծաղր
առնելին հաւասր ։ Այլ Թողից զայն, զի օգնականուԹիւն
առաւել այ մերոյ՝ դյեղդեղուկ զրաջանան զայնոսիկ զոր
կարծէրն առեղծանել, բանն ակնբիւ եղծանել ։ Այլանդի
այնու մոլորին առաւելապէս յանկացոգքն շրջիլ ընդ մուա-

ցածին չըՋանա՝ և ոչ ընդ շաւիղ ստոյգ և ուղիղ, զի բաւ
իբրեւ ասդրդկեղէն և փոփոխելի և անձուկ մտացդ չափ-
ինն չափեն՝ զամենևին անփոփոխն, զընդունայնն որպ և
է անբաւութիւն, և զբոլոր անհամարիչ համարոցն անփո-
խանորդելի մտածութիւն։ Յդպիսեացդ ի գէպ ելանէ ա-
ռաքելոյ ասացածն. “Ի կշռել անձամբ յանձինս՝ ոչ առ-
նամն ի միտ,,։ Ք։ Կոր։ Ժ։ 12։ Զի նոցա իբրև ի միտս
անկանի նոր ինչ առնել, առնեն զայն նորոգ մտածութիւն,
փոփոխելի ունելով միտս. ուստի ոչ գնած խորհելով, զոր
չկարեն իսկ խորհել, այլ զանձինս փոխանակ նորա, ոչ
գնաս, այլ զինքեանս, ոչ առնա՝ այլ առ ինքեանս կշռել
համեմատեն։ Իսկ մեզ է օրէն կարծել, թէ այլաբար
ինչ կրիցէ ած ի գատաւորանաւն, և այլ ի գործէն. զի
և կրել նմա չմարթի ասել, որպէս թէ ի նորա բնութենն
ընկոյզի ինչ՝ որ չատաղն ոչ եր. զի որ կրէն՝ չինքն ընդունի
ինչ, և ամենայն որ ընդունական է՝ փոփոխելի է։ Ա՛ն ոչ
ըստ ծն անգր ի բաց տար, թէ ի կարծեցեալ անգործութենն
քան զնուաւ որ ածիցէ յուղութիւն, պղերգութիւն, դատարկու-
թիւն, կամ ի գործել նորա՝ վատակս, Չիգն, հնարագիտու-
թիւն։ Ի սոսկ հանգչելով առնել, և առնելով հանգչել.
կարող է ի գործ նոր ի կիր առնուլ խորհուրդ՝ ոչ գնոր,
այլ զմշանջենաւոր. և ոչ ապաշաւ բերելով ընդ նախկին
դադարութիւն՝ առնել սկսանի զոչ արարեալն։ Ա՛յլ եթէ
և յառաջ դադարեաց, և յետոյ գործեաց, որ չգիտէ
զիարդ իցէ մարդոյ հասանելի, անշուշտ յառաջ և յետոյ
ասելն՝ յիրս անդ կատարի յանդոյական նախ, և ապա գոյա-
ցեալս։ Իսկ ի նմա ոչ եթէ յետոյ եկեալ կամքն փոխե-
ցին զնախեղական կամ խափանեցին, այլ միով մշանջենա-
կան և անչեզ յի կամօք զհաստատեալն զամենայն արար՝ զի
նախ ոչ իցէն՝ ցորչափ եղեալ ոչ էին, և զի յետոյ իցէն՝
յորժամ սկիզբն առին գոլոյ. ցուցեալ այսու պարզելա-
պէս՝ որոց կարողն են զայսպիսիս տեսանել, թէ զիարդ չու-
նէր նոցա պէտս, այլ ինքնաշարժ բարութիւն հաստեալ
զնոսա, ոչ նուազ ինչ երևանեալ գոլով առանց նոցա
յանկեան յաւխտենից։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ընդ որս սահն՝ Թէ անբաւքն չեն բովանդակելիք յոյ գիտութենն։

Յասել նոցա և զայն բան, Թէ ոչ գիտութիւ անգամ չիք բովանդակել զանբաւսն, կայ նոցա և յայս ժպրհել և առաքասոյզ՝ի խոր անդունդս ամբարշտութենն լինել՝ Թէ ոչ գիտէ՝ ած զիթիս ամենայն։ Զոտոց անբաւս լինել՝ ա մինայնիւ հաւատոյն է. քանզի յոր և Թիս աւարտ դնել հաւարիցիս, նոյն ոչ լոկ միակի յաւելմամբ աձել կարող է, այլ որչափ և ևս ծիլ և տարօրինակ բազմութիւ պատուականն ըստ բանի և գիտութիւ Թուոց, ունի ոչ կրկնիլ միայն, այլ բազմապատկիլ ևս. և Թիս իւրաքանչիւր այնպէս ինն աւարտի իւրովք յատկութիւիք, զի և ոչ միայնացանէ զոյզ այլ ևս ոչ ունի գալ. վասն որոյ անզուգականք են յերեսս և այլաչափք, իւրաքանչիւր ուրոյն՝ առհմանաւորք, այլ համօրէն՝ անսահմանք։ Լոկ արդ առ անբաւութենն ոչ արգելօք գիտիցի՝ ած զանհնայն Թիս. և միևնոյն չիք գումար Թուոցն հասու իցէ գիտութենն ոչ, այլոցն անգիտակ մնալով. և ո՞ի կարի անմտաց իսկ ասիցէ զայդ։ Այլ յանդգնեացին դոքա քամահանս առնել Թուոց, ոչ անկասուս ոչ գիտութենն զնոսա ասելով. ուր և Պղատոն ականատեսն՝ի փիլիսոփայս նոցա վաւերական վկայութիւ իւրով ասէ զոյն, Թէ զաշխարհ օրինաւք ինն Թուոց կարգեաց. և՝ի մեր գիրս ասի առ ած. «Ո՛ամենայն չափով և Թուով և կշռով կարգեցեր». Իմաստ. ժա. 21։ Իսկ փրկիչն ասէ յաւետարանին. «Այլ ձեր և ամենայն իսկ հեր գլխոյ Թուեալ է». Ա՛ռք. ժ. 30։ Այսպա մի լիցի բնաւ երկբայել, Թէ ամենայն Թիս ծանուցեալ է այնմ, որոյ «Իմաստութենն ոչ գոյ բաւ». Ես. ԽԻ. 5։ Ասսի Թուոցն անբաւութենէ, Թէպետ և Թուոց անբաւից ոչ գոյ Թիս, ոչ ևեթ անբմբռնելի է այնմ որոյ չիք իմաստութենն բաւ կամ չափ և Թիս։ Այլդ ևեթ որ ինչ միանգամ գիտութիւ

բովանդակի, առ հասուածն գիտողին սահմանեալ է, անշուշտ և ամենայն անքաւութիւն սահմանեալ է առ ՚ած անչառելի օրինակաւ. զի նորա գիտութիւնն չէ անհասանելի. Ա՚ն որոյ եթէ անքաւութիւն թուաց առ գիտութիւն ՚այ՝ որպէս բովանդակի, չմարթի լինել անքաւ, ոչ եմք մեք մարդ տառապեալ, թէ սահման կարգել իշխեցեմք գիտութեն նորա, ասելով զի եթէ ժամանակաւ իրք ոչ նոյնք ընդ նոյն շրջանս ժամանակաց վերակենացաղեացն, ոչ մարթի է ՚այ զամենայն զոր արար՝ նախագիտել զի առնիցէ, կամ գիտել յորժամ արարեալ իցէ. որոյ իմաստութիւն պարզաբար բազմապատիկ և միեղնապէս յոքնապիսի, այնպէս անքաւ վանդակելի ըմբռնմամբ զամենայն բովանդակ զանքաւվանդակելիս, մինչ զի եթէ կամք էին նմա առնել միշտ նորս և անմահս՝ հեռզհետէ ոչ բնաւ խառնիխուռն լինէին նմա և յանկարծադէպ. և ոչ եթէ ՚ի վերահաս ժամանակէն նախատեսանէր զնոսա, այլ յաւիտենից յաւաջգիտութիւն պարագրեր։

ԳԼՈՒԽ ՀԻԹ

Յաղագս ձայնից Յաւիտեանս յաւիտենից։

ԻՍԿ թէ ըստ օրինակիդ ըստ այդմիկ առնիցէ ՚ած, և արդեօք անընդհատ կապակցուլթ միմեանց զկնի կացեալին այնք՝ որ կոչին յաւիտեանք յաւիտենից (կամ դարք դարուց), թէպէտ և այլք զկետ այլոց՝ կարգաւոր անմմանուլթ անցանելին, և միայն ապրեալքն՚ի թշուառուլէ մնայցեն անվախճան յիւրեանցն երանելի անմահուլէ, կամ թէ յաւիտեանք յաւիտենից ասիցին յայն միտս, որպէս թէ յաւիտեանք որ կան մնան անշարժաբար յիմաստուէն ՚այ, իցեն արարչականքն յաւիտեանցս այսոցիկ՝ որ անցանեն ընդ ժամանակի, չիշխեմ սահմանաւ որոշել զնոսն։ Ա՚ն զի թերևս մարթի իցէ միաւորական խմանալ յաւիտեան՝ զգաղմա-

սորակի ասացեալն յաւիտեանք. որով նոյն իսկ ասել յաւիտեան յաւիտենի, և յաւիտեանք յաւիտենից. զոր օրինակ ոչ այլ ինչ է՝ երկին երկնի, քան եթէ՝ երկինք երկնից. զի ահա երկին կոչեաց ամբ զհաստատութիւնն յորոյ վերայ ջուրք են. այլ սաղմոսն ասէ. "Ջուրք որ՛ի վերոյ քան զերկինս՝ օրհնեցէք զանուն տեառն ,, : Կամ արդ թէ զինչ յաղագս երկուց իմաստիցս ասել իցէ, կամ թէ բաց յերկուցս և այլ ինչ մտրթի իցէ իմանալ բառիւքս յաւիտեանս յաւիտենից, ինդիր է ընդբաւես. և ոչ որ այժմու մեր բանս արդելու անբնին թողուլ զայն առ ժամս, եթէ յապայ կալցեմք արդեօք սահմանել ինչ յայսմ, և եթէ զգուշացուք և եթէ լինիցիմք՛ի ձչգրիտ տեսութի՛ բանիս, զի մի վայրապար իշխիցեմք հաստատել ինչ՛ի մեռութե՛ իրացդ: Կամզի առ կարծիս այնոցիկ հակառառեմք աստանօր, որք ուսուցանեն շրջանս կարևոր կարծեցեալս առ՛ի միշտ նորոգումն նոյն իրաց ընդ միջոցս ժամանակաց. և զոր և է՛ի կարծեացդ յաղագս ձախիցս յաւիտեանս յաւիտենից կալցի ոք որպէս ձշմարիտ, ոչ իւիք բան ունի ընդ շրջանս ընդ այնոսիկ. վասն զի եթէ յաւիտեանք յաւիտենից ոչ նոյնք իցեն կրկնեալք, այլ ուրոյնք մի զմիոյ կնի կարգաւորշաղկապմամբ ընթացեալք, անկասկած ինալով երանութե՛ տալեցելոցն առանց վերադարձի թշուառութե՛ց, և եթէ մշտնջենաւոր յաւիտեանք յաւիտենից՝ իցեն ժամանակեայ յաւիտենիցն իբրև իշխեցողք առնելոյ անկեալս, և ոչ՛ի միւսմն տեղի ունին ջանքն հոլովիչք մի և նոյն իրաց. զորս ամենայն իրօք հերքել յաւիտենական սրբոցն կեանք:

ԿԻՐԻԱԿՈՍ Ա

Ընդդէմ ամբարիշտ կարծեաց այնոցիկ՝ որք Հաւատոյն Թէ Հոգիք բաժանորդք ծայրագոյն և Աշխարհս երանութեն՝ ունկնդիր դարձագարձ առնել չկարենան ժամանակաց՝ ի նոյն Թշուառութիւնս և՝ ի վատաճս։

Արո՞ց բարեպաշտաց տանել կարիցէն լսելիք, Թէ յետ այնքան և այնպիսի տառապանաց անցանելոյ կենացս, միայն Թէ կեանս արժան իցէ ասել զայն՝ որ մահ է առաւել, այնպէս իմն դժնդակ՝ զի առ սէր այնր մահու երկիւղալի լինի մահն ազատեցուցիչ յայսմանէ, յետ այնչափ մեծաց չարեաց՝ յոքնազանից և սարսափելեաց, որք և երբեմն սրբեցան և բարձան Աշխարհիս կրօնիւք և իմաստութիւք, այնպէս իցէ ժամանել յանդիման ՚ՈՒ, և այնպէս երանալ տեսլեամբ աննիւթական լուսոյն, Հաղորդեալ անմահութեն նորա՝ յորոյ ՚ի սաւացուն տարփամբ, մինչև Հարկ իցէ լքանել զայն երբեմն, և որոց լքինն՝ տարաւերժիլ ՚ի միջոցն ջինաւորուէ անտի, ՚ի Աշխարհուէն, յերջանկուէն, և բամբռնիլ ՚ի մահ անդնդային, յանհնարին խեղաթարուէ, ՚ի Թշուառութիւնս ամենատատաղուկս, ուր իցէ զՅԾ կորուսանել, ուր Աշխարհութիւն տեղի լիցի, ուր երանութեն յաղծապիղծ անօրէնութիւնն խնդրեսցի. և այս միանգամ և միւս անգամ՝ նոյնօրինակ եղեալ յառաջն, և լինելոյ՝ առանց վախճանի յաւիտեանցն առաջնոց և յետնոց ընդ կարգեալ միջոցս և յերկարութիւնս. և այս՝ այնր աղագաւ, զի կարիցէ ՅԾ Աննայեալ զգործս իւր որոշեալ չքջանօքն Հանապազորդելովք ՚ի գնալ և ՚ի դառնալ՝ առ ՚ի մեր սուտ երանութիւն և ՚ի ստոյգ Թշուառութիւն, որք Թէ և փոփոխակի՝ բայց անդադար չքջաբերութեն մշտնջենաւորք են. զի այսպէս ասեն՝ ոչ ՚ի գործելոյ դադարել ՅԾ, և ոչ ՚ի գիտելն խոյզ և խնդիր առնել անբաւից։ Օ այսոսիկ արդաւ լեալ ո՞ լսել ախորժիցէ, ո՞ Հաւատայցէ, ո՞ ժուժայցէ։ Թէ այդք Աշխարհիւք էին, ոչ միայն խոհականադոյն էր լռել,

այլ և որպէս զիարդ զմիտս իմ արտայայտել կարողութի՛ն է, իմաստնագոյն էր չգիտել բնաւ։ Այսպէս եթէ անտա՛ռնօր անյիշելի մեղ լինէին այսօրիկ, և այնու իցեմք երանելի՛ք, առ ինչ աստանօր նոցին գիտութի՛ն առաւել ծանրա՛նայցէ թշուառութի՛ս մեր։ Իսկ եթէ անտառնօր գիտել ունիմք Հարկաւ զայսոսիկ, զոնե աստանօր տգիտասցուք, որպէս զի աստ երջանիկ և լցեալ ակնկալութի՛ն ծայրագոյն բարւոյն, քան անդ աստացումն նորա. զի ըստ այդմ աստ գոյ յոյս ստանալ զկեանս յաւիտենական, իսկ անդ Հանապազ կեանք երանելի՛, բայց ոչ յաւիտենական՝ այլ լուծանելի յերբեմն ժամանակի։

Այլ եթէ ասէն. ոչ օր յայն երանութի՛ւն ժամանել կարող է, եթէ ոչ՝ ի հրաշանդս այսոյ կենաց ծանիցէ զչքնաղն՝ ընդ որս երանութի՛ն և թշուառութի՛ն զիրեարս փոխաբերէն, զիարդ ապա ասէն՝ թէ որչափ առաւել ոք զաճ սիրիցէ, նոյն դիւրագոյն յերանութի՛ւն անդր Հասանիցէ, ուր զայն ինչ ուսուցանեն՝ որով սէրն ընդարմանայ։ Օ՛ի ո՞ր ոչ մեղ լինիցի և թոյլ՝ի սիրել զայն՝ զոր գիտէ թէ թողուլ ունի Հարկաւ, և զՀակառակն խորհել Աչմարտութե՛ն և իմաստութե՛ն նորա, և այս՝ յետ ժամանելոյ՝ի կատարեալ Հանապազն նորա ըստ իւրում չափու՝ լրմամբ երանութե՛ն. քանզի և ոչ գ՛ի մարդկանէ բարեկամ սիրիցէ ոք Հաստատութե՛ր, եթէ գիտիցէ թէ՝ի թշնամութե՛ն դառնալ ունի ընդ նմա։ Այլ քաւ լինի՝ թէ Աչմարիտ իցեն բանք, որք սպառնան մեղ ստոյգ թշուառութիւն ինքնին անզրաւելի, և միայն ընդմիջարկութե՛ն սուտ երանութե՛ն սակս և անդադար խափանելի։ Այնպէս զինչ առաւել սուտ և պատիր քան զերանութե՛ն զայն, յորում զմեր գալոց թշուառութե՛ն կամ անգիտանամք՝ի պայծառ լոյս Աչմարտութե՛ն, և կամ երկնչիմք յայնմանէ՝ի բարձր ամբի անդ երջանկութե՛ր։ Օ՛ի եթէ անգիտացեալոց իցեմք զգալոց տառապանն, ապա այժմ մեր թշուառութի՛ն յայտնագոյն և՝ Հանապէզ զգալոց երանութի՛ն. իսկ եթէ ոչ թաքուն է՝ի մեզ անտառնօր վտանգն մնալոյս, ապա Հոգին թշուառ առաւել երջանկութե՛ր

անցուցանէ զժամանակն՝ յորոց ՚ի կատարելն ամբարձցի յերանուեցն անդր, քան հոգին երանելոյ՝ որ յանցանել ժամանակացն ունի վայրաբերիլ ՚ի թշուառութենէ։ Ա՛յլ պէս ասա յոյս թշուառութենս մերոյ՝ երջանկական իցէ, իսկ յոյս երջանկութենէն՝ ապերջանիկ. և զի ասա ՚ի ներքոյ չարեաց տանջիմք, և անդ յապագայիցն երկնչիմք, զհետ գայ լինել մեզ արդարեւ միւռ թշուառ, և երանելի ոչ բնաւ երբեք։

Ա՛յլ քանզի զայսոցիկ ատութեն յայտնաբարբառ չնմարտութեն վկայէ ածպաշտութեն, և չնմարտութենն յայտնի խոստատակի, իբրև զի որ մեզն խոստացեալ երջանկութենն չնմարիտ, միշտ անվթար կացցի զիւրն յապահովութեն, անխափանելի ՚ի թշուառութենէ խնդել, զուղիսն դնալով Հանապարհ, որ նա ինքն ՚Ի՛ն է մեզ, և զնա ունելով առաջնորդ և փրկիչ, ՚ի նահիր և յանձնակ չրջանաց անտի ամբարշտացն ՚ի բաց քեզեսցուք զքնեթացս հաւատոց և զվիտս մեր։ Ա՛նգղի յաղագս չրջանացս այսոցիկ, և անդադար փոխարկիկ երթևեկութեց Հոգւոցն՝ և Պօղ փիւրիոս ինքնին պզատոնականն ոչ առ յանձն զհետ երթալ կարծեաց իւրայոցն, չարժեալ թերևս յիւրացն ատութենէ, կամ ակնածեալ քրիստոնէական ծանօթութենէն. և որպէս ՚ի տառևերորդութիւն յիշատակեցի գիրս, ընտրեաց առել թէ Հոգի վաստրեցաւ յաշխարհ սակս Հանապետելոյ զչարին, որպէս զի տարեալ և սրբեալ յայնցանէ, ՚ի դառնալ իւրում առ Հայրն՝ մի այլ այնպիսի ինչ կրեսցէ, որ չափ ևս ասա մեզ երաւ է դարձիլ և զգոյշ կալ ՚ի ատութենէ՝ որ դիմամարտ է քաջական հաւատոց։ Այսպէս ուրեմն նահատելոյ և ՚ի դերև ելանելոյ չրջանացս այսոցիկ, չիք ինչ բնաւ՝ որ ստիպեսցի զմեզ յայն սակս անսկիզբն ՚ի ժամանակէ կարծել զգոյաւորութեն մարդկան ազգի, իբրև զի ՚ի ձեռն մտացածին չրջանաց ոմանց ոչ նոր ինչ լինի ՚ի տիեզերս, որ յառաջն չիցէ լեալ ընդ կարգեալ միջոցս ժամանակաց, և որ յետ այնր չիցէ լինելոց։ Այսպէս եթէ ազատանայ Հոգի՝ ոչ ևս դառնալով ՚ի թշուառութենս, որպէս յառաջն չէր երբէք ազատացեալ, լինի արդարեւ ՚ի

նամ ինչ մի՝ որ բնաւ չէր լեալ յառաջն, և այն՝ մեծ յոյժ, այս է՝ երջանկութիւն յաւիտենական բնաւ անդադարելի։ Եւ եթէ նորուն այնպիսի մեծ՝ լինի յանմահ բնութիւն, ոչ ի՞նչ չքնաւս կրկնեալ յառաջն, և ոչ կրկնելի, իբրև լոյս ուժգ այնգ՝ թէ յիրս մահկանացուս չմարթի լինել։ Եւ թէ ասէն, ոչ եթէ նորոգ ինչ լինի ի հոգւոջ երանութիւնն, զի վերադարձի յայն՝ յոր միշտ եղև, զանգ ազատութիւնն այն նոր է, յորժամ ազատանայ ի թշուառութենէ անտի՝ յորում երբէք ոչ եղև, և նոյն իսկ նորութիւն թշուառութեանն եղև ի նմա՝ որ ոչն էր եղեալ երբէք։ Եւ սակ այս նորութիւն եթէ ոչ մնանէ ի կարգ իրացն՝ որք վաղիւն յաճախին տեսչութենէ, այլ մանաւանդ դիսպառաճով իմն պատահեաց, ուր միան շքջանքն այն որոշեալք և չափեալք՝ յորս չառնին իրք նորք, այլ նոյնք որք եղենն՝ երկրորդեալք լինին։ Եւ այս եթէ և այդ նորութիւն չէ արտաքոյ կարգի տեսչութենն, և հոգի՝ կամ առ յայլ տուեալ իցէ ի մարմին, և կամ ինչպէս անկեալ ի նոյն, լինին ուրեմն իրք նորք՝ չեղեալք յառաջագոյն, բայց և ոչ օտարք ի կարգէ իրաց։ Այլ զի կարաց հոգի իւրոյն անմոռութիւն գործել անձինն զթշուառութիւն նոր, որ չէր յանկարծապէս առաջի տեսչութենն այ, այլ ի՛ նեղբս փակեալ կարգի իրաց, ուստի և ոչ ըստ դիպաց ինչ ազատէր ած զհոգի, որ ժպրհութիւն ապա մարդոյ մնուցոյ իշխեացն ասել թէ չիցէ կարող ած առնել իրս նորս՝ ոչ ինչ բան նոր թուեցեալս, այլ աշխարհի, զորս ոչ յառաջն իցէ արարեալ և ոչ եթէ յանկարծապէս ինչ պատահեսցին նմա։ Այլ թէ ասէն, հոգիքն ազատեալք ոչ գործցին արդարութ ի թշուառութենէ. այլ թէ և լինիցի այդ, ոչ նոր ինչ գործի ի տիեզերս. քանզի հանապազ այլք հոգիք և այլք ազատեցան և ազատին և ազատեսցին։ Եթէ այդպէս ասիցեն, հարկ է ընդունել զայս՝ թէ լինին հոգիք նորք, որոց իցէ և թշուառութենէ նոր, և ազատութենէ նոր։ Վասնզի եթէ հինս ասիցեն զայնոսիկ, և յետս կոյս հայելով մտանջնաւորս, յորոց լինիցին հանապազորք մարդիկ նորք, և ի նոցա մարմնոցն իմաստ նորաստ բազմացուածելոց ազատանայցեն առանց գոնէպէս

երբէք ՚ի Թշուառութենէ, զհետ գայ զի անբաւս ասիցեն լինել Հոգիս. զի ցորչափ սահմանաւոր լինէր ոգւոյն Թիւ, չէր բաւական յանբաւ յաւիտեանսն առ ՚ի լինելոյ միշտ նոմա մարդկան, որոց Հոգիք զերծեալք ՚ի մահկանացուէ ասեմ՝ ոչ ևս ՚ի նոյն դառնալ ունէին։ Այլ ոչ իւիք օրինաց կաւ կարիցէն դորա բնաւ լուծանել զինձնէն Թէ զիարդ յիւրմն՝ զորս սահմանաւորս ասէն լինել՝ առ ՚ի կարելոյ Ճանաչել զայսոսիկ, կայցէ անբաւ և անսահման Թիւ Հոգւոց։

Վասն որոյ ՚ի դերևանալ շրջանացն այսոցիկ՝ որովք հարկ համաբիւր դառնալ անդրէն Հոգւոյ ՚ի նոյն Թշուառութիւնս, զինչ այլ միայ վայելչական առ բարեպաշտութիւն, բայց հաւաստալ՝ Թէ չէ անհնար այ նորագործել զորս բնաւ չէր արարեալ, և ըստ անձառ յաւաջգիտութեանն ունել զկամն անփոփոխելի։ Իսկ Թէ արդեօք Թիւ Հոգւոցն ազատելոց՝ որոց չէք այլ դառնալ ՚ի Թշուառութիւն, իցէ միշտ անճեղական, նոցա Թոզումք քննել, որք մանրախոյզ վիճաբանեն ընդդէմ անբաւութեանէ իրաց. այլ զմեր իրաւաբանութեանն այսպէս կրնեմք ըստ երկաբանչիւր կողմանն։ Ո՞ի եթէ հնարաւոր է անճէն, առիմ ապա ուրանալ՝ Թէ չմարթի ստեղծուլ այնմ՝ որ յաւաջն չէ ստեղծեալ բնաւ, եթէ արդարեւ Թիւ Հոգւոցն ազատելոց որ յաւաջն ոչ եղեն, ոչ միայն լեալ է միանգամ, այլ և ՚ի լինելոյ ոչ երբէք դադարիցի։ Այլ եթէ սահմանել պարտիցէ Թիւ լինչ Հոգւոց ազատելոց և ոչ ևս այլ ՚ի Թշուառութիւն դարձելոց, և այն Թիւ չունի անձել այլ ևս, ահա նոյն Թիւ որչափ և է՝ յաւաջն արդարեւ չէղեն բնաւ. և ոչ կարէ այն անձել և լեզու իւրոյ օրբանութենն ժամանել առանց սկսուածոյ իրիք. իսկ սկսուածգ այդու օրինակաւ ոչ եղեն երբէք յաւաջն։ Արդ որպէս զի այդ այդպէս լինիցի, ստեղծաւ մարդն՝ քան զոր յաւաջ եղեն և ոչ ոք։

ԳԼՈՒԽ ԻԲ.

Յաղագս կազմուԹե՛ան միոյ մարդոյն առաքինոյ, և ի նմա՝ մարդկային ազգի։

Ի ԱՌԱՋ արդ յետ պարզաբանելոյ մեր ըստ կարի զամենագիժաւար զինդիրն որ յաղագս յաւիտենականին այս առեղծուածի զնորանոր առանց կամայն ինչ այլայլուԹեան, դիւրաւ է տեսանել՝ Թէ առաւել լաւ եղև՝ ի միջի մարդոյ զոր նախ հաստեաց՝ բազմացուցանել զազգ մարդկան, քան եԹէ սկիզբն՝ ի բազմից եր արարեալ։ Վասնզի որ գչնչաւորս կէս մի առանձնակեացս արար և իբր մենաշընջեցիկս՝ որք զամայուԹե՛ն յաւէտ ախորժեն, զոր օրինակ են արծուիք, ցինք, առիւծք, գայլք և նոյնպիսիք, և կէս մի խմբակիցս՝ սիրողս առաւել համաժողով ընկերական կենաց, որպիսի ազաւնիքն են, տատրք, եղջերուք, այծեմունք և այլք նոյնպիսիք, տակաւին զերկաքանչիւր զայս սեռ ոչ՝ ի միակաց բազմացոյց, այլ հրամայեաց՝ ի դոյ ելանել բազմաց միանգամայն։ Խոկ զմարդ բնուԹե՛ իբրու միջասահմանն առնելով ընդ հրեշտակս և ընդ անասունս, որպէս զի եԹէ հպատակ կացեալ իւրումն արարչի իբրև ձեմարիտ տեառն՝ վերիցի նորա հրամանակատար բարիոք գնազանդուԹե՛, ի հրեշտակականն փոխեսցի դասակցուԹե՛ւն, առանց մահկանացու միջնորդելոյ զերանականն ստացեալ անմահուԹե՛ անվախձան։ Խակ եԹէ ամբարհաւաձեալ և ստուն գանեալ անձնիշխան կամաք, յանցաւոր գտանիցի առ տէր ձած իւր, ՚ի մահ վտարանդեալ կեցցէ անասնօրէն, ցանկուԹե՛ն ծառայ, և յաւիտենից տանջանաց պարտաւոր յետ մահու։ Ո՞ մարդն ասեմ՝ առեղծ ձած մի և միակ, իբր ոչ եԹէ Թողուլ կալ միայնիկ առանց մարդկային ընկերուԹե՛, այլ զի սովին օրինակաւ զնդագոյնս հաստատեսցի նմա միուԹե՛ ընկերուԹե՛ն և յօդ միաբանուԹե՛ն, յորժամ՝ ոչ միայն համարնուԹե՛ առ իրեարս, այլ և ազգակցուԹե՛ ախորժակօք յօդակապեսցին մարդիկ։ Մինչ զի և

ոչ զկինն զուգելի ընդ առնն՝ կամեցաւ ստեղծանել որպէս զայրն, այլ յառնէն, որպէս զի համօրէն ազգ մարդկան ՚ի միոջէ մարդոյ ծաւալեսցի։

ԳԼՈՒԽ ԻԸ

Թէ գիտէր Աստուած զի ունէր մեզանէլ նախատեղծ մարդն, նոյնպէս և յառաջաւտս էր, Թէ որչափ ժողով բարեպաշտաց յազգէ նորա հանդերձեալ է ընծրհօք իւրովք վերաբերել ՚ի հրեշտակականն գասակցութիւն։

Որ անպիտանայր Աստուած Թէ հանդերձեալ է մեզանէլ մարդն, և ընդ պարտեօք մահու գրաւեալ՝ ծնանել զմա հացուս. և Թէ այնչափ ունին մոլեգնիլ ՚ի մեզանէլ մարդք մահկանացուք, մինչ զի անաստուածք համացեղք անբաժք ՚ի բանաւոր կամաց՝ որոց բազմութիւնք ՚ի ջրոց և յերկրէ գոյացան, առաւել անբոյիթ և հանդարտագոյն կեցցեն ընդ իրեարս, քան մարդիկ՝ որոց ազգ ՚ի միոջէ սերեցաւ առ ՚ի պահելոյ զգեղեցիկ միաչնորհութիւն։ Օ՜ի ոչ առիւծունք կամ վիշապք զայնպիսի մարտս գրգռեցին ընդ միմեանս, որպիսիս մարդիկ։ Սակայն տեսանէք և զայն կանխաս, Թէ իւրովք ընծրհօք յորդեգրութիւն կոչեա ցի ժողովուրդ Աստուած. որոյ արդարացեալ մեղացն Թողութիւնք ՚ի հոգւոյն սքի, կայ ինայ ընկերակից սրբոց հրեշտակացն լինել յաւիտենականն խաղաղութիւն, խափանելով յետին Թշնամւոյն՝ մահու. և Թէ այնմ ժողովոյ յօդուտ լինիցի ածել զմտաւ, Թէ ՚ի միոջէ մարդոյ սահմանեաց Աստուած զմարդկան ազգ, առ ՚ի ցուցանելոյ նոցա՝ Թէ որչափ հաճոյական է նմա և միաւթիւն ՚ի մէջ բազմաց։

ԳԼՈՒԽ ԼԴ

Յաղագս բնութեան մարդկային հոգւոյ՝ որ արարած ի պատկեր ՅԻ։

ԱՅԴ արար Աստուած զմարդ ի պատկեր իւր, իբր զի հասանեսցէ նմա հոգի այնպիսի՝ որով ի ձեռն բանի և հանճարոյ գերիվերոյ լինիցի համօրէն կենդանեաց ցամաքայնոց և լուղակաց և թռչնոցն երկնաւորաց, որք չունին զայնպիսի միտս բանականութեան, յորժամ կազմեաց զայրն ի հողոյ երկրի, և ի նմա փչելով տպաւորեաց զայդպիսի հոգի՝ զոր կամ յառաջին արարեալ էր, և կամ առաւել փչմամբն արար։ Այլ զչունչն զայն՝ զոր փչմամբ իւրով արար, զի զինչ է այլ փչել՝ բայց առնել զչունչ, կամեցաւ՝ զի լիցի հոգի մարդոյն, որպէս և լծակից նմա օգնական՝ ի ծնունդ արար՝ ասէր ի կողոյ նորա հանեալ աճապարար։ Ոչ եթէ ըստ մարմնական սովորութեան կրեալի են իրքդ, որպէս զարուեստագէտս տեսանեմք՝ զի յորոց և է նիւթոց կազմեն մարմնաձև անդամոք ըստ հնարագիտութեան արուեստին։ Այլ ձեռն ՅԻ կարողութեի նորա է, որ և զիւրեւիս անգամ գործէ անտեսաբար։ Այլ զոր ի սովորելոց ասէ և ի հանապազօրեայ գործոց չափեն զՅԻ զօրութենէն, որ գիտաց և բազմական եղև առանց սերմանոյ զսերմանիս անգամ գոյացուրել, առասպելս առաւել քան թէ ճշմարիտս համարին զայսոսիկ. իսկ զի սկզբանէ հաստատեալն՝ քանզի ոչ գիտացին բնաւ, անհաւատալի գատին։ Այլ ապաքէն և զգիտելիսն իսկ յաղագս մարդկային յղութեանց և ծնունդագործութեանց՝ թէ պատմիցէ որ անտեղեակ մարդոց, առաւել ևս չհաւատալիք թուիցեն. թէպէտ և են բազումք՝ որք զայնոսիկ ևս ընծայեն առաւել նիւթական պատճառաց բնութեանց, քան ներգործութեանց ածային հանճարոյ։

ԳԼՈՒԽ ԻԴ

Արդեօք և փոքու իրիք արարածոյ իցէ մարթ արարիչ ասել զհրեշտակս։

Ոշ բանք լինչ են մեր՝ի գիրս յայսոսիկ ընդ այնոցիկ, որք չհաւատան թէ ՚ի ծայրին միտք առնուն և ինամին զայս ամ. իսկ որ հաւատան Պղատոնին իւրեանց՝ համարին թէ կենդանիք ամենայն եղծանելիք՝ ոչ ՚ի գերագունէն ՚ի իցեն եղեալ որ զաշխարհս արար, այլ յայլոց ումանց կրսեր բայ ստեղծելոց ՚ի գերագունէն՝ արարեալ նորին թոյլ տալով կամ հրամանաւ. յորս զակամաւոր տեղի ունի մարդն՝ ազգակից կոչեցեալ աստուածոց։ Ոթէ եթէ ազատք իցեն ՚ի մնոտի կարծեաց անտի՝ որով ջանան արդարացուցանել զպաշտամունս և զնուիրագործութիւնս ընծայելս նոցա իբրև հաստոզաց իւրեանց, դիւրաւ արդեօք ազատք լինիցին և ՚ի մոլորութենէ այոց կարծեաց։ Վասնզի ոչ օրէն է զայլոք բայ յոյ և դուշնաքեայ իրիք եղծանելի բնութենէ արարիչ կարծել և ասել, և ոչ իմանալ անգամ մարթ է։ Իսկ հրեշտակք զորս պղատոնականք համարձակ աստուածս կոչեն, թէպէտ և ներգործեն ՚ի հրամանէն ՚ի այ կամ ՚ի թոյլ տալոյ յիրս՝ որ ծնանիլն յաշխարհի, այլ ոչ արարիչս կենդանեաց ասելմբ զնոսա, որպէս և ոչ զերկրագործսն՝ արարիչս արմտեաց և ծառոց։

ԳԼՈՒԽ ԼԶ

Ամենայն բնութենէ և ամենայն կերպարան ընդհանուր արարածոց՝ միայն յոյ ներգործելոյն ունի գործնուածն։

Վասնզի այլ է կերպարան՝ արտաքուստ մուծեալ յիւրաքանչիւր ՚ի նիւթ մարմնեղէն, զոր օրինակ առնէն բրուտք և դարբինք, և նոցին սակի արուեստագործք, որ

և նկարէն և ձևացուցանէն կերպս կերպս նմանեալս մարմնոց կենդանեաց։ Այլ այլ կերպարան է, որ ներքոյ ունելով պատճառս արարողն՝ի գաղտնի յանյայտ հաձոյից կենդանի և իմացող բնուէ՝ ոչ միայն զընաւոր կերպարանս մարմնոց, այլ և զոգիս կենդանեաց առնէ, ինքն անարար գոլով։ Աստի կերպարանն յառաջասացեալ ընծայի իւրաքանչիւր արուեստագիտի, բայց երկրորդն՝ միայնուամբ ձարտարապետի, արարչի և յօրինողի. որ զաշխարհ ինքնին և զհրեշտակս արար առանց իրիք սատարուէ աշխարհի և հրեշտակաց։ Վասնզի որ՛ի ձոձային զօրութիւն արարչական՝ որ ոչն գիտէ առնել՝ այլ առնել, կերպարանեցաւ յաշխարհարարութիւն անդ բոլորակութիւն երկնից և արեգական, նովին ձոձայնով արարչականն զօրութիւն՝ որ անեղանելի և միայն արարող, կերպարանեցաւ բոլորակաւն աչաց և ինձորոյ, և այլ և ընաւոր ձևք՝զորս տեսանեմք յիւրաքանչիւր երկրածինս՝ոչ եկամուտս ինչ գործեցեալ այլ՝ի բնուստ կարողէ արարչին, որ ասացն. «Այ՝ինէ զերկինս և զերկիր ես ոչ ընուցում...» (Երեմ. ԼԲ. 24. և նորա իմաստութիւն է՝ որ «Զգի՝ի ծագաց մինչև՝ի ծագս օդատակար առաջնութիւն, և դարմանէ զամենայն քաղցրութիւն...» (Իմաստ. Շ. 1։ Աստի չգիտեմ, Թէ հրեշտակք կանխաւ ստեղծեալք որպիսի արբանեկութիւն մատուցեալ իցեն արարչին՝ի ստեղծանել նորա զայլ արարածս։ Ընդհեմ ընծայել նոցա՝ զոր չկարեն Թերևս, և ոչ զոր կարեն՝ ժխտել պարտիմ։ Այլ զարարչագործութիւն և զյօրինուածն բոլորից բնուԹեց՝ յայն ինչ որով բնուԹիք են, Թէ և հրեշտակք իսկ սպասաւորեալք իցեն, ընծայեմ ոչ, այնմ որում և ինքեանք զանձանց գոյուԹիւն պարտապան ձանաչեն շնորհակալուԹեամբ հանդերձ։ Այ՝ այն որոյ ոչ միայն զերկրագործան չասեմք արարիչս բնաւ պաղոց, ուր ընԹեռնուումք, «Այ՝ այն ինչ որ է որ անկեացն, և ոչ որ զջուրն ետ, այլ որ աձեցոյցն ածն...» (Ա. Կոր. Գ. 7. այլ և ոչ զՀոգին՝ զամենեցուն կարծեցեալն մայր բիւրաբեղուն, որ՝ի վեր աձեցուցանէ սերմանաբոյսս, և զարմատացեալսն պինդ ունի. որպէս և դարձեալ ընԹեռնուումք. «Ո՞ծ տայ ինձ

մարմին որպէս և կամի, և իւրաքանչիւր սերմանեաց զիւր մարմին ... անդ. ԺԵ. 38։ Նոյնպէս և զկին իւրումն զսահմանաւորիչ անուանեալ քնաւ չմարթիմք, այլ զնա առաւել՝ որ ասացն միւսմ՝ ի ծառայից իւրոց. «Ո՞վ ինչ չև սահմանեալ էիր յորովայնի, գիտեմ զքեզ... Յրեմ. ա. 5։ Նա թէպէտ և հոգի ծննդականին կարող է ըստ իւրում այլ և այլ կրից որակս ինչ տալ առնել՝ ի սաղմն անդր, ըստ որում Յակոբ նահապետն գաւազանաձև խայտախաբիւս տայր ծնանիլ խաշանցն, բայց զընտրութիւնն՝ որ ծնանի, ոչ ինքն հոգին առնէ, այն՝ որ և ոչ զինքն ինքեամբ առբար։ Ոչ ան որոյ թէ և որ և է պատճառք մարմնականք կամ սերմանականք՝ ի գործ արկանիցին՝ ի ծնունդս իրաց՝ սպասաւորութեամբ եթէ հրեշտակաց եթէ մարդկան, և կամ այլոց կենդանեաց, և եթէ զուգախառնութիւն արուաց և իգաց, նոյնպէս անցնիւր ախորժակք և բերմունք հոգւոյ մերն ազդիցեն ինչ ըստ գծագրութեան կամ գունոց վերանկարիլ՝ ի մատաղ և՝ ի լոյծ սաղմն, բայց զընտրութիւնն գլխովին՝ որք պէսպէս կերպարանին չիւրեանց ազգի, ոչ այլ ոք՝ բայց գերագոյնն ՅԱծ առբաչգործէ. որոյ գաղտնի զօրութիւն անցեալ ընդ ամենայն առնէ իւրոյն անշաղախ ներկայութիւնք որ ինչ միանգամ գոյ է, և որչափ ինչ է. զի առանց նորա առնելոյն՝ ոչ այս ինչ և այն էր, և կարէր խոկ ոչ՝ ի գոյ ելանել։ Խոկ արդ եթէ ըստ արտաքինն կերպարանին՝ զոր արուեստագէտք մնծանեն չիրս մարմնականս, Հռոմէմայ քաղաքի կամ Աղեքսանդրիոյ՝ ոչ զդարբինսն և զդրծաւորսն առեմք կառուցողս, այլ զԱթագաւորսն՝ որոց կամք և խորհրդով և հրամանատարութիւնք կառուցան, միւսմն զՀռոմուլոս և միւսում զԱղեքսանդր, որչափ և առաւել քնաւեթէ յօրինիչ զծծ միայն գաւանել արժան է, որ ոչ յայլմէ նիւթոյ առնէ ինչ՝ բայց զոր ինքն արար, և ոչ գործաւորս՝ ի կիր առնու՝ բայց զորս ինքն ստեղծ. և եթէ զներգործիչ զիւրն կարողութիւն՝ ի բաց Հանիցէ չիրաց անտի, այնպէս անկք լինիցին, որպէս յառաջն միոչ չև լեալք՝ անգոյ էին։ Այլ յառաջ առեմ՝ ըստ յաւիտե-

նից, և ոչ ժամանակաւ։ Ո՛վ ո՞ այլ ոք ժամանակացն ա-
բարել՝ բայց նա միայն որ արար զայնս, որոց չարժուե՛ք
հոլովին ժամանակք։

ԳԼՈՒԽ Լ.Ո.

Յաղագս կարծեաց պղատոնականացն՝ որով համարեցան զհրեշտակս Թէպէտ
և առ յայն պարագրծեալս, այլ մարդկէղէն մարմնոց արարիչ լինել։

Լ.ՊԱՒՒՒՆ Պղատոն զաստուածն փոքունս զառ՝ ի մե-
ծէն այ ներգործեալս՝ համարեցաւ ներգործիչ լինել այ-
լոց կենդանեաց, որպէս այն Թէ զամսամահական մանուն՝ ի
մեծէն ընկալեալ էին և զմահկանացուն յինքեանց յա-
ւելեալ։ վասն որոյ ոչ եթէ ոգւոց մերոց ստեղծիչս գնո-
սա եդ, այլ մարմնոց։ Այս քանզի Պորփիւր ասէ, Թէ առ
սուբբ պահելոյ զոգի պարտ է խորհիլ յամենայն մար-
մնոյ, և միաբան ընդ իւրումն Պղատոնի և այլոց պղատո-
նեանց համարի Թէ քաղաքավարեալքն անխտիր և անժու-
ժաբար առ՝ ի զպատիժս լուծանելոյ դառնան՝ ի մարմինս
մահկանացուս, ըստ Պղատոնի՝ յանառնոյ անգամ մար-
մինս, ըստ Պորփիւրի՝ ՝ի մարդկան և՛Թէ, զհետ գայ ա-
պա զի այգպիսի աստուածք՝ զորս պաշտելոյ ՝ի մէնջ ար-
ժանիս ասեն իբրև ծնողս և արարողս, ոչ այլ ինչ էին,
բայց չինիչք շղթայիչ և բանտիչ մերոց, ոչ յօրինիչք, այլ
բանդիչք և կալանաւորապետք մեր ՝ի զնդանս գժոխոյմ
բերս և ՝ի ծանր ծանր կապանս։ Այսպս ուրեմն կամ լուծցին
պղատոնականքս սպառնալ պատուհաս հոգւոց ՝ի մարմնոց
աստի, կամ մի և աստուածս պաշտելիս մեզ քարոզեսցեն
զայնսոսիկ՝ յորոց ազդեցութէնն առ մեզ խորատեն խորհել և
առնել որչափ կարողք էցեմք, Թէպէտ և ամենևին սուտ է
և այս և այն, Այանզի ոչ իւիք պատիժս լուծանեն հո-
գիք յորժամ դարձեալ յայս կեանս փախապրին, և բա-
լորից կենդանակացաց որ յերկինս և որ յերկրի, ոչ այլ յո-

լինիլ գոյ՝ բայց յորմէ եղեն երկինք և երկիր։ Ո՛վ եթէ՝ ի մարմնի քաղաքավարելոյն պատճառ՝ էր միայն պատուհաս սիցն վէմարուածն, զիարդ Պղատոն ինքն ասէ՝ Թէ աշխարհ ոչ այլազգաբար ամենաավայելուչ լինէր և ամենալաւ, եթէ ոչ լիով ունէր յինքեան զհամօրէն կենդանեաց սեռս՝ զանմահից և զմահկանացուաց. իսկ եթէ մերս կազմուածքն՝ որով մահկանացուք իսկ եղեաք, պարզև է ձեռաձիր, զիարդ՝ ի պատիժ համարիցի բնականալ՝ ի մարմինս յայսոսիկ՝ ի տուրս ՚այ։ Այլ եթէ ձեռ ըստ յառնիս ասելոյն Պղատոնի յաւիտենական իմացողութիւն բովանդակեալ կրէ զառեսակ որպէս զյնդհանուր աշխարհի՝ նոյնպէս զկենդանեաց համայն, իբր ոչ ինքն իւրէ ամենայնից յօրինիչ. մի եթէ ոմանց ոչ կամեցաւ լինել Հարտարապետ, զորոց զարարչագործուածն զարուեստ կրէր նոյն միտք նորա՝ անձառն, և անձառութիւն գովելին։

ԳԼՈՒԽ ԻԵ՚

Թէ՝ ի մարդն առաջին բնաւորեցաւ մարդկան ազգի բովանդակ լրումն, յորում յառաջասաւ եղև ձեռ՝ Թէ ոչք ոմանք պատկերոց իցեն յաշխատանաւք, և ոչք պատուհասելոց։

ՅԻՐԱՒ ուրեմն կրօնք Հնոցն Հայոց զձեռ Հանապէն և քաղցրագոյն Հաստիչ ընդՀանուր աշխարհի, և կենդանեաց առՀասարակ, և Հոգւոց և մարմնոց. իսկ գերագոյնն յերկրաւորեցս մարդ՝ պատկերակից ՚այ արարաւ՝ ի նմանել մի եւեթ, այլ ոչ Թողաւ միայնակ, սակս պատճառին զոր ասացի, և Թերևս այլ մեծ ևս պատճառ ծածկեալ կայցէ։ Ո՛վ զկնի երբեմն զայս ազգ դիւրայարելոյ ըստ ախտի, և ընկերական՝ բնութիւն. և ընդդէմ անմիաբանութեանն ախտի ոչ ինչ այնպէս Հնարս քարոզէր մարդոյս բնութեանն՝ կամ՝ ի զգոյշ լինել, զի մի ծագեսցի, կամ զարմանն մատուցանել ընդ ծագելն, ոչ յիշատակել զնախածնողն

զայն՝ զոր յայն սակս միակ ստեղծանել կամեցաւ ած յաձուսն բազմամարդութեն, զի ուսցին պահել և ի բաւ զուսմ անդ. զհամաշունչն միութեն։ Իսկ զի կին արարաւ նմա ի կողէն, սովիմք և այնակեցաւ թե որչափ ընտանի սիրելի լինել պարտի լծակցութեն առն և հնոյ։ Այս գործք այ այնու դատելն անհամեմատ, վասն զի առաջինք են. իսկ որ այսոցիկ ոչ հաւատան, ոչ այլ և այ նշանաց ետեղոց ունկն հաւատալ. զի և այնք եթե ըստ սովորական ընթացից բնութեն գործէին, նշանք ոչ ասէին։ Այս միթե ի զուր ինչ գործիցի ընդ աքանչելի կարգաւ ածական տեսչութեն, թէպէտ և պատճառն ոչ յայտ իցէ։ Այդ և սրբազանն ասէ սաղմոս. «Այկայք և տեսէք զգործս այ, որ արար զնշանս և զարուեստս ի վերայ երկրի»։ Ե. 9։ Այլ թե առ ինչ արդեօք յառնն կողէ արարաւ կին, և զի՞նչ այս նշան իբր նախկին նախանշակութիւն, ասացից յայլում վայրի որչափ ձեռն տացէ ած։

Իսկ աստանօր վախճան տալով այսմ գրոց, յայն ի մարդն առաջինն՝ որ նախ արարաւ, համարիմք թե և ոչ տակաւին յայնասակս իրօք, բայց ըստ կանուխ գիտութեան այ յառաջագայեալ մարդկայինս ազգի իբրև երկուց քաղաքաց։ Այանզի ի նմանէ ունէին լինել մարդիկ ամենք հանդերձեալք ի միանալ ընդ չար հրեշտակս ի տանջանս, և այնք ընդ բարիս ի պսակն, զաղտնի միանգամայն և արդար դատաստանաւն այ։ Այս զի գրեալ է. «Այմենայն ձանապարհք տեառն ողորմութեամբ և ճշմարտութեամբ են»։ ոչ հնարհք նորա մարթին անարդար լինել, և ոչ արդարութենն՝ անողորմ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Որ ցուցանի, Թէ մահ պատիժ է ի մարդիկ՝ յառաջ եկեալ ի մեղս Ադամայ։

ԳԼՈՒԽ Ա.

Յաղագս անկման առաջին մարդոյն, որով ի ներքս մուծաւ մահ։

ԶԼԽՈՒՈՐԵԱԼ զոր յաղագս ծագման մերոյ յաւիտենից և սկզբան մարդկային սղոյ զլինդիրսն դժուարիմս, ժամ է արդ ըստ պահանջելոյ կարգի իրացն յառաջ վարել զյանձնառեալս Ճառ յաղագս անկման մարդոյն առաջնոյ, կամ լաւ և ասել նախաստեղծից, և յաղագս ծագման և տարածման մահու ի մարդիկ։ Պարզի ոչ ըստ հրեշտակացն օրինակի հաստեալ ածծ զմարդիկ, այլ նոցա անմեռս՝ նա և յետ մեղանչելոյ, այլ զի ի կատարել նոցա զպարտիս հնազանդուէ՝ տացի առանց մահուան ի ներքս անկանելոյ անմահութեան հրեշտակական, և միանձնաւորութեան երջանիկ, իսկ յոյն հնազանդիլ՝ մահ Ճարակեսցէ իրաւացն զիս դատաստանաւ. զոր և յանցեալսն զրկի ասացաք։

ԳԼՈՒԽ Բ.

Յաղագս մահուան՝ որ կարէ պատահել և հոգւոյ միշտ կենդանի եղելոյ որ և է օրինակաւ, և մահուն՝ որում ներքոյ անկեալ է մարմինն։

ՎՅԼ որպէս ինձ Թուի, պէտք են կանխաւ զբանն վիճակել մահուան Ճշգրտաբանել սակաւուք։ Ոչ թէպէտ և հոգի մարդկային անմահ խոստովանեալ է տիրապէս,

քայց է և նման մահ ինչ իւր ։ Վասնզի անմահ ասի՝ ըստ որում չունի դադարել իւիք օրինակաւ՝ի կենդանի և՝ի զգալ ։ իսկ մարմինն՝ մահկանացու , զի կարէ վրնասել յա- մենայն կենդանի , և ոչ կեայ ինքնին իւիք իրօք ։ Վասն ո- րոյ մահ զօրծի հոգւոյ՝ յորժամ լքանի զնա ած , որպէս մարմնոյ՝ յորժամ լքանի զնա հոգի ։ ուստի երկոցունց և- այսինքն ողջոյն մարդոյ մահ է , յորժամ հոգի լքեալ առ յոյ , լքանի զմարմին ։ զի այսպէս ոչ հոգին կեայ ոյ , և ոչ մարմինն հոգւով ։ իսկ զհետ այսպիսւոյ մահուան ոզ- ջոյն մարդոյ՝ պայ երկրորդ մահն անուանեալ ըստ վկայու- թե ածային պատգամոյ ։ Հայտ ։ ի ։ 8 ։ զոր և փրկիչն յայտ արար յասել անդ իւրում ։ “Երկերուք յայնմանէ՝ որ կարող է՝ զոգի և զմարմին կորուսանել՝ի գեհենի ,, ։ Ասծ ։ Ե ։ 28 ։ Վայց քանզի այդ ոչ լինի յառաջ՝ մինչ չև իցէ հոգին այնպէս զոգեալ ընդ մարմնոյ , զի ոչ այլ և լինիցի քակիլ նոցա բնաւ , զարմանք լինի թուի՝ զնոյդ ևս առանել ասիցի մարմինն այնպիսի մահուամբ , որով ոչ է լքեալ՝ի հոգւոյն , այլ առանձին կենդանւոյն և զգալով ։ Վա- սըն զի՝ի յեսուին յայնմ՝ի մշանջենաւոր պատուհասին , զոր մէկ յիւրում տեղւոջ խօսեացուք որոշաբար , ուղղու թիւ ասի մահ հոգւոյ , զի ոչ և կեայ առ յոյ ։ իսկ մարմնոյ մահ որ- պէս , մինչ կեայ նա առ՝ի հոգւոյն ։ զի և ոչ այլ ազգ մարդի է նման զգալ զմարմնաւոր տանջանս՝ որք յետ յարուցեալ լի- նելոցին ։ Վասւցէ լինիցի ասել , թէ որովհետև որ և է կենդանի բարի ինչ է , իսկ ցաւն՝ չար , ոչ կեանս արժան է կոչել մարմնոյ՝ յորում ոգի ոչ կելոյ է պատճառ , այլ ցաւս կրելոյ։ Վստահ կեայ հոգին առ յոյ , յորժամ բարիոք կեայ ։ զի չկարէ կեալ բարիոք , եթէ ոչ այ ներդործելով՝ի նման զըս- բին ։ իսկ մարմին կեայ՝ի հոգւոյ , յորժամ հոգի կեայ՝ի մարմնի անդ , թէ և ինքն կեցցէ կամ ոչ կեցցէ առ՝ի յոյ ։ Վասնզի որ՝ի մարմնոս ամբարշտացն է կենդանի , ոչ եթէ ոգւոյ կենդանի է , այլ մարմնոյ ։ զոր հաղորդել նոցա կա- րող են նա և ոգիքն մեռեալք , այս է՝ լքեալք յոյ , թէ- պէտ և անկարուստ մնան յառուկ կենդանի՝ որով անմահք են ։ Վայց՝ի գառապարտութենն յեսուսէ թէպէտ և զգ-

դալ զդայ մարդ , այլ զի զդայութիւնն չէ քաղցը ՚ի հեշտութիւն , և ոչ պիտանի առ ՚ի հանգիստ , այլ պատուհասիչ առ ՚ի ցաւս , յիրաւի արդեօք մահ առաւել՝ քան թէ կեանք կոչեցաւ : Իսկ երկրորդ , վասն զի զնոսին առաջնոյն գայ , որով քակտումն լինի բնութեացն զօդելոց , եթէ ՚ից և հոգւոյ , և եթէ հոգւոյ և մարմնոյ : Այսպա ուրեմն զառաջնոյ մահուանէ մարմնոյն գոյ ասել՝ թէ բարեգործացդ բարի է , և չարագործացդ՝ չար . իսկ երկրորդին անշուշտ որպէս ոչ ումեք ՚ի բարեգործացդ անկ է , նոյնպէս ոչ ումեք բարի :

ԳԼՈՒԽ Գ

Արդեօք մահն այն՝ որ մեզք նախաստեղծից էանց յամենայն մարդիկ , իցէ և արդոց պատիժ մեզայ :

Այլ խնդիր ծագի մեզ կարեւոր թէ արդարեւ մահն որով բաժանումն լինի հոգւոյ և մարմնոյ , իցէ բարեգործացն բարի : Օ՛ի թէ այդպէս իցէ , զիարդ լիցի ընդունել՝ թէ մեզաց պատուհաս իցէ այն . վասն զի ոչ կրէին զայդ նախաստեղծք՝ եթէ մեղուցեալ ոչ էին . զիարդ ապա բարի լինիցի բարեգործացդ՝ այն որ չարագործացդ միայն ունէր պատահել : Այլ դարձեալ , եթէ չարագործացդ միայն էր անկ , բարեգործացն և ոչ բարի մահ էր կրելի , այլ՝ ոչ մի մահ . զի առ ինչ լինէր պատուհաս ինչ առ այնոսիկ՝ յորս ոչ կայրն պատուհասի արժանիք : Այսն որոյ խոստովանել արժան է՝ թէ այնպէս հաստատեցան նախաստեղծքն , զի եթէ չմեղանչէին , ոչ մի ինչ ազգ մահու կրէին . բայց նոքին իսկ առաջին մեղուցեալք այնպէս իմն ՚ի մահու տոյժս պարտաւորեցան , զի և յարմատոյ նոցա սերեալն ընդ նովին պատուհասիւ ըմբռնեսցի . զի ոչ այլ բնութեի ծնանէր ՚ի նոցանէ , այլ նոյն՝ որ ինչ նոքայն էին . զի առ մեծութե յանցանացն՝ զբնութեին ՚ի յոռեգոյն անդրէն փոխեաց դատակնիքն դատապարտութեան . զի որ

պատժողաբար կանխաւ ի վերայ եդաւ ի վերայ նախա-
ստեղծիցն մեղուցելոց, նոյն բնաւորաբար զհետ եկեսցէ
յայլ ծնունդս։ Օ՛ի ոչ այնպէս մարդ ի մարդոյ, որպէս
մարդ ի հողոյ. քանզի յատարչաւէ մարդոյն՝ նիւթ եղև
նմա հողն, իսկ մարդ ի զաւակագործելն զմարդ՝ ծնող
լինի. ուստի որ ինչ է հողն, ոչ այն է մարմինն, թէպէտ և
ի հողոյ եղև մարմինն. բայց որ ինչ է մարդն ծնող, նոյն
է և մարդն ծնեալ որպէս զաւակ։ Ա՛յլ ուրեմն ի մար-
դէն առաջինն ստեղծուածք էր միջնորդաւ հնոջ բովանդակ ազգ
մարդկան, յորժամ միաղօդ կասն այն լծակցաց ընկալաւ
առ յայլ զինուք գատապարտութենէ իւրոյ. և որ ինչ գատա-
մարդն՝ ոչ եթէ ի ստեղծանել իւրում՝ այլ ի մեղանչելն
և ի պատուհասիլ, զնոյն և ծնաւ՝ ըստ պարտեաց մեղացն
և մահու։ Ա՛յսր զի մարդն առաջինն ոչ եթէ սակս մե-
ղացն և պատուհասին անկաւ ի մանկականն յայն ախտա-
բութենէ և ի տկարութենէ հոգւոյ և մարմնոյ, զոր ի տղայն
տեսանեմք. զի զոսա եթող ած լինել իբրև զայն ինչ
ծնեալ կորուսնս անասնոց, երբ ծնողք նոցա վտարեցան
յանասնական ի կեանս և ի մահ, ըստ գրեցելումն.
«Ա՛րդ ի պատուի էր, և ոչ իմացաւ. հաւասարեցաւ
անասնոց անբանից և նմանեցաւ նոցա»։ Աղ. Ե՛. 13։
Զ՝ողզի զղաղայս մարդկան տեսանելիք տկարագոյս լինել
ի վարուն և ի շարժուն անդամոց, ի ցանկալ և ի խոս-
սել՝ քան զմատաղաճին զածածս այլոց կենդանեաց. իբր
այն թէ ուժգին ևս ամբառնայցէ մարդկեղենն զօրութի՛ն
առ այլովք կենդանեօք, որչափ առաւել յետս կայս զիւրն
յարձակումն ընկրկեսցէ, ըստ օրինակի նետի ձգելոյ ի
լայնալո՛ղ աղեղանէ։ Ա՛յսր որոյ մարդն առաջին ոչ կայս
պիսի մանկական թերութիւն անկաւ առ անարժան յանդըգ-
նութենէն, կամ վարեցաւ ըստ արդար պարտաւորութենէն.
այլ այնչափ միայն խանգարեցաւ ի նմա կամ այլայլեցաւ
մարդկայինն բնութի՛ն, զի կրեսցէ յանդամն զդիմամարտ
անհնազանդութիւն ցանկութե՛ն, և ընդ կարեօք ըմբռնեսցի մե-
ռանելոյ, և որ ինչ ինքն եղև ըստ ախտի և ըստ պատուհա-
սի, այնպիսիս և ծնանիցի՝ նեղբոյ անկեալս մեղաց և մահու։

Այլ Թէ ընդհանուր միաբանդին՝ ի կատարած աստի մեղաց ապաշաւեցին մահկանացու, զայն մահ և եթէ ունին կրել, որ զպիղծ զատանէ՝ ի մարմնոյ. բայց յերկրորդ մահն անեզր պատուհասի ոչ անցանեն, ազատացեալք՝ ի պարտեաց մեղաց։

ԳԼՈՒԽ Դ

Ընդհանուր արդեօք արձակեալքն՝ ի մեղաց ընդհանուր վերսին ծննդեան՝ առաքելին չեն ազատ ի մահուանէ՝ որ է պատիժ մեղաց։

Այժ տարակոյս ումեք լինիցի, հիմ արդեօք զմահ՝ որ մեղաց է պատուհաս՝ կրիցեն այնոքիկ որոց Թողան պարտիքն՝ ի ձեռն ընդհանուր, զայդ խնդիր յայլում մատենի՝ զոր գրեցաք յաղագս մկրտութեան տղայոց, Ասացաք և լուծաք. ուր ասացաւ Թէ յայն սակս մնայ հոգւոյ փորձն բաժանման՝ ի մարմնոյ, նա և՝ ի բառնալ կապոյ յանցանացն, վասն զի եթէ խորհրդոյ վերածնութեն անդէն պիտ գայր անմահութեն մարմնոյ, Հաւատքն ինքնին տկարանային. զի հաւատ յայնժամ է, յորժամ չև և արդեամբք երեւեալն՝ յուսով ակնկալեալ է։ Այլ և հաւատոցն քաջութեք և մրցմամբ յաղթել պարտ էր և զմահուն երկիւղ՝ ի զարգացեալն հասակաւ. որ և՝ ի սուրբ մարտիրոսան գերբանալոցեալ ցուցաւ առաւելապէս. և առանց մահու՝ ոչ յաղթութեք ինչ լինէր այնր պատերազմի, և ոչ մի ինչ պարծանք. նա և ոչ այն պատերազմ բնաւ լինէր, եթէ զինի աւազանին ծննդեան սրբեալքն այլ ոչ ևս լինէին կրօղականք մարմնաւոր մահու։ Այլ զարձեալ, ո՞ ոչ՝ ի վճռի ընդհանուն փութայր ընդ տղայս մկրտեալս՝ յայս սակս առաւել՝ զի էր երկանայեցէ՝ ի մարմնոյ։ Այլ ահա այսպէս ոչ հաստատէին հաւատք աներեւոյթ վարձուքն. այլ ոչ և հաւատք անդամ լինէր, անդէն փութանակի գհատուցումն վաստակոյն խնդրելով և ընդունելով։ Այսուհետև այժմ մեծ ևս և զարմանահրաշ պարգեւք փրկչին՝ ի սիտս արդարութեն փոխե-

ցաւ մեղայն պատիժ ։ Վասնզի ուր յայնժամ ասացաւ առ մարդն , մեռանիցիս՝ եթէ մեղիցես , այժմ առ մարթիքոյն ասի . մեռիր՝ զի մի մեղիցես ։ Յետացաւ յայնժամ , եթէ պատուիրանին առանդանիցիք , մահու մեռանիցիք . այժմ ասի , եթէ ՚ի մահուանէ հրաժարիցիք , պատուիրանին լինիցիք յանցաւոր ։ Որ յայնժամն երկնչելի էր առ՚ի չմի դանդեղել , այժմ ընդդրկելի՝ զի մեղք մի լինիցին ։ Այսու օրինակաւ ըստ այ անբաւ մարդասիրութեն՝ յանցմանցն պատիժ ՚ի վեհոն դարձաւ առաքինութեան , և արդարոյն ՚ի վարձ լինի պատուհաս մեղուցելոյն . զի յայնժամ մահ տիրեաց մեղանչելոյն , այժմ արդարութեն ընտ մեռանելոյ ։ Եւ այս կատարի առ սուրբ մարթիրոսս , որոց զմի յերկուցս գնեմ առաջի հալածիչն , զի կամ զհաւատոն Թողցեն , կամ զմահ յանձն առցեն . իսկ արդարք առաւել ընտրեն հաւատալով կրել զայն ինչ , զոր առաջին անօրինեալք չհաւատալովն կրեցին ։ Վասնզի եթէ մեղուցեալ ոչ էին , չմեռանէին . իսկ սուրբ մեղանչէին՝ եթէ ոչ մեռանէին . ապա նոքա մեռան , զի մեղան . և սուրբ ոչ մեղանչեն , զի մեռանին ։ Այսոցա եղև յանցանօք անկանել ՚ի պատուհաս . սուրբ պատուհասեալ լինի չանկանել ՚ի յանցանս . իբր ոչ եթէ բարի ինչ եղև մահն՝ որ յառաջն չար էր , այլ զի այնպիսի ընդհաղարդեաց ՚ած զհաւատաս , մինչև մահ որ յայտնի դիմամարտ ի կենաց՝ գործի լինի ՚ի փոխադրելոյ ՚ի կեանս ։

ԴԻՎՈՒՒՆ Ե

Թէ պղպէս անիրաւ խոտորնակի վարէն զօրէնս՝ որ բարին է , նոյնպէս արդարք բարիք ՚ի կիր առնուն զմահ՝ որ չարն է ։

ԿԱՄԵՑԵԱԼ առաքելոյ ցուցանել՝ քանի զօրաւորք առ ՚ի ջնասել իցեն մեղք՝ առանց օգնականութեանէ հնարհաց , ոչ խղճեաց զնոյն ինքն զօրէնս՝ զհրաժարեցուցիչն ՚ի մե-

զայ՝ կոչել զօրութիւն մեղայ . “ Այլոյ մահու , ասէ , մեղք են , և զօրութի՛ն մեղայ՝ օրէնք ,, . ա . Կոր . ԺԵ . 56 . Այլ կարի խակ քաջ . վասն զի արգելուն զայրացուցանել զցանկութի՛ն տարօրէն գործոյն , յորժամ արդարութի՛ն ոչ այնպէս իմն իցէ սիրեցեալ , մինչև նորայն տարփանօք նկուն լինել ցանկութի՛ն մեղանչելոյ . իսկ առ ՚ի զՀնա֊ բիան արդարութի՛ն սիրելոյ և ՚ի նոյն տարփալոյ՝ պիտոյ են օգնականուե՛ ածային շնորհաց : Այլ զի մի՛ չար ինչ օրէն֊ քըն համարեալ լիցին՝ սակս զօրութի՛ն ասելոյ զնա մեղայ , նորին աղագաւ յայլում վայրի ՚ի մէջ առեալ զայսպիսի խնդիր՝ ասէ . “ Այսուհետև օրէնքն սուրբ են , և պա֊ տուիրանն՝ սուրբ և արդար և բարեբար . իսկ արդ ինձ բարին մա՞հ եղև , քաւ լիցի . այլ մեղքն . զի երևեսցին մեղքն բարեաւն գործել ինձ զմահ . զի եղիցին ըստ ա֊ ռաւելութե՛ մեղքն մեղաւոր ՚ի ձեռն պատուիրանին ,, . Հռ . է . 12 . 13 : Ո՛չ այս ասաց ըստ առաւելութե՛ . վասն զի յաւելուածով ՚ի վերայ գայ և յանցաւորութի՛ն , յորժամ աձմամբ ըղձիցն մեղանչելոյ՝ լինի նմին իսկ օրինացն ար֊ համարհութի՛ն : Իսկ ընդէր զայս յիշատակել դէպ վար֊ կաց : Ալ սան զի զոր օրինակ ոչ չար են օրէնք , յորժամ ցանկութի՛ն մեղուցելոցն աձումն գործեն , նոյն օրինակ ոչ բարի է մահ , յորժամ զփառս յանձնառուցն աձեցու֊ ցանէ . իբրև զի օրէնք սակս անօրէնութե՛ ապահաս եղեալ առնեն օրինազանցս . և մահ վասն Հնամբաւութե՛ Հատե֊ լեալ առնէ մարտիրոսս : Ասաի բարի են օրէնք , զի արգելիչ մեղաց են . իսկ մահ չար , զի թշնակ է մեղաց . այլ որպէս անիրաւք չարաչար վարին ոչ չարաւն և եթ՝ այլ և բարեաւ , նոյնպէս արդարք բարիոք վարին ոչ միայն բարեաւն՝ այլ և չարաւ . և լինի այսու չարաչար վարել չա֊ բաց զօրէնս , թէպէտ և օրէնքն բարի են . և բարիք բա֊ րիոք մեռանին , թէպէտ և մահն ըստ ինքեան չար է :

ԳԼՈՒԽ Ը.

Թէ չար ասի հասարակաց մահն, որով քակի միաբանութիւն հոգւոյ և մարմնոյ։

Ա՝ԱՍՆ այսորիկ հայելով՝ ի մահն ըստ մարմնոյ, որ է անջատումն հոգւոյ՝ ի մարմնոյն, երբ կրկին զայն մարդիկ՝ ի մեռանելն, ոչ ումեք բարի է։ Ա՝ասն զի բռնութիւնն այն՝ որով երկաքանչիւր միացեալքն և բաղխիւսեալք՝ ի կենդանուօջն քակտին՝ ի միմեանց, ՝ի ներքս բերել կիրս իմն խիստ և հակառակամարտ բնութիւն, ցորչափ յուժ կայ, մինչև դադարեսցէ ամենայն զգայութիւն՝ որ ազդի՝ ի կապակցուէ անտի հոգւոյ և մարմնոյ։ Ո՝չ այսպիսի տագնապ երբեմն բառնայ զկռուիկն հարուած ինչ մարմնոյ, կամ ընդարմացումն հոգւոյ, որ յանկարծ երագութիւ՝ ի վերայ հասեալ ոչ ներէ զգալ վշտին։ Ա՝կայն որ ինչ միանգամ յայլ մեռեալս սաստիկ ցաւովքն զզգայութիւնն բառնայ, իսկ բարեպաշտութիւն և հաստատուն յանձն առեալ զվաստակս համբերութիւնն աձեցուցանէ, ոչ եթէ փոխէ այսու զանուն պատուհասին։ Ա՝յսու օրինակաւ մահն՝ որ անշուշտ ըստ անընդհատ սերնդեան մարդոյն առաքեալ է պատիժ ծնեալոյն, սակս ոճապաշտութիւն և արդարութիւն ածեալ՝ ի վերայ՝ լինի փառք վերածնելոյն։ և ուր մահ՝ փոխարէն է մեղաց, զայն շահի երբեմն՝ զի և ոչ մի փոխարէն գոյնն մեղքն։

ԳԼՈՒԽ Ժ.

Ցաղագս մահու, զոր վասն խոստովանութիւն քրիստոնէական անկնունքին։

Ա՝ՊԱՐԵՆ որք միանգամ չև և ոչ ընկալեալք զծնունդ աւազանին՝ մեռանին սակս խոստովանութիւն Քրիստի, այնչափ զօրէ այդ նոցա առ՝ի մեղաց թողութիւն, որպէս թէ լուա-

ցեալք իսկ էին առաքեալքն միրտութեէ։ Օ՛ի որ ասացն, "Լթէ ոչ ոք ծնցի՛ի ջրոյ և՛ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութի՛ն երկնից" (Յհ. գ. 5), այլով վճռով ազատս կացոյց զսոսա՝ յասելն նոյնպէս արձակաբար. "Որ մեղայն որ խոստովանեսցի ինձ առաջի մարդկան, խոստովանեցայց և ես զնմանէ առաջի հօր իմոյ որ յերկինսն է..." և "Որ կորուսցէ զանձն իւր վասն իմ, գտցէ զնա..." (Մտթ. ժ. 32, 39)։ Այլ սորին աղագաւ գրեալ իսկ է. "Պատուական է առաջի տեառն մահ սրբոց իւրոց..." (Սղ. ճԺե. 5)։ Օ՛ի զինչ պատուականագոյն քան զմահ, որով և մեզանէն ամենայն թողեալ լինին, և վարձք ևս քան զևս առնեն։ Վասն որ ոչ այնչափ մեծ են վարձք՝ որոց չկարացեալք ընկրկել զմահ մօտալուտ՝ միրտեցան, և սրբեալք յամենայն յանցուածոց մեղեցան՛ի կենաց աստի, որպէս զի այնոցիկ որք կարող լով հեռի առնել զմահ, առաւել ընտրեցին խոստովանելովն զՔ՚ն զրաւել զկեանս, քան ուրանալովն զնա՝ հաւանեալ՛ի միրտութէ։ Ամենայնիւ զայդ իսկ թէ արարեալ էին, լինէր և այնմ թողութէ նոցա յաւազանին, զի մահն երկիւղիւ ուրացան զՔ՚ն. ուր յաւազանին թողաւ և եղեռն մեծ այնոցիկ որք զՔ՚ն սպանին։ Սակայն զիմարդ կարող էին նոքա առանց առաւութէ ընծրհաց Հոգւոյն՝ որ ուր կամի հնչէ, այնչափ սիրել զՔ՚ն, մինչև՛ի ծանր վըտանգի անդ կենաց՝ ունելով և զմեծ յոյս ներողութէն՝ ոչ ուրանային զՔ՚ն։ Այսպս ուրեմն պատուական այդ մահ սրբոցն, որոց այնչափ պարգևաց յառաջեաց և վիճակեցաւ մահն Քի՛ն, մինչև առ՛ի զնա շահելոյ՝ ոչ վհերեցան զիւրեանցն մահ փոխանակել, յայտ արար՝ թէ սահմանեաւն յառաջնմէ առ՛ի պատիժ մեղուցելոյն՝ յայն պէտս շրջեցաւ, զի արդարութէն պատուղք նովաւ առաւութէ՛ն և արդիւնասցին։ Այլ ոչ վասն այնր բարի թուելոյ մահ. զի ոչ եթէ յիւրմէ զօրութէ՛ այլ յայ օգնականութէնէն փոխեցաւ՛ի մեծ յայս շահեկանութէն. որպէս զի որ յայն ժամին իբր երկիւղալի եղաւ առաջի՝ մեղս չգործելոյ վասն, այժմ առաջի գնի յանձն առնուլ զի ոչ միայն մեղս չգործիցէն, այլ և գործեցեալն ջնջեսցի, և մեծի յաղթութէն հատուսցի արդարութէն պսակ արժանաւոր։

ԳԼՈՒԽ Ը.

Թէ յանձն առնուլն սրբոց զառաջին մահն վասն Ջչմարտութեանն լուծումն է երկրորդ մահուան։

Վասնզի անապատառ տեսութեանն նա և յայնժամ, յորժամ մեռանի որ հաստատութեանն և գովութեանն վասն Ջչմարտութեանն, անձնասպառ լինի ի մահուանէ. զի զմասն ինչ նորա առնու յանձն զի մի պատահեսցէ բոլորին, և մի երկրորդն որ անեզրականն է՝ ի վերայ հասանիցէ։ Այս զի զՀոգւոյ անջատումն ի մարմնոյ յանձն առնու, զի մի՛ ի բաժանիլ Հոգւոյ յԱյ՝ բաժանիցի և ինքն ի մարմնոյ, և այսպէս յետ առաջին մահու ողջոյն մարդոյս՝ յայնորդեսցէ երկրորդն մշտնջենաւոր։ Այս որոյ թէպէտ և մահն ըստ ասացելոցս, յորժամ կրի ի Հոգեվարսացս, և տայ նոցա մեռանել, ոչ ումեք բարի է. բայց գովութեանն լինի յանձըն առնուլ զայն առ ի պահելոյ կամ ստանալոյ զբարին։ Իսկ յորժամ ի մահու անդ կան արդէն մեռեալքն, ոչ անդէպ է ասել՝ թէ չարաց չար է, և բարեաց՝ բարի։ Վասզի ի հանգստեան են բարեպաշտացն Հոգիք անջատեալք ի մարմնոյ, իսկ ամբարշտացն՝ պատիժս լուծանելն. մինչև մարմինք նոցա վերակենդանացեսցեն ի յաւիտենից կեանս, և սոցայս՝ ի մահն յաւիտենից՝ որ երկրորդ ասի։

ԳԼՈՒԽ Թ.

Արդեօք ժամանակ մահու՝ որով գոյութեանն կենաց բառնի, յորս ասելի է, ի Հոգեվարսն՝ թէ ի մեռեալս։

Այս զժամանակն զայն՝ որով Հոգիք ի մարմնոյ անջատեալք՝ կան ի բարիս և կամ ի չարիս, արդեօք յետ

մահուն ասելի է, թէ՝ի մահու անդ։ Այլ եթէ յետ մահուն է, ոչ եւս մահն՝ որ այն ինչ անցեալ գնացեալ է, այլ որ յետ այնր ներկայ կեանք Հոգւոյ բարի կամ չար իցէ։ Այսուհակ մահ յայնժամ չար եր նոցա՝ միայն կայրն, այս է՝ յորժամ կրկին զայն օրհասականքն. զի եր ի նոսա ըզգայութիւն ծանր և վշտագնիչ, զոր բարիք ի լուսն առնուն ի կիր։ Այլ մահ այն ինչ վճարեալ՝ զիաթդ բարի կամ չար իցէ, որ ոչ գոյ այլ. և եթէ մանր եւս ուշ դնիցեմք, և ոչ այն մահ լինել թուիցի՝ զորոյ զծանր և զվշտագնիչ կիրն ասացաք լինել յօրհասականն։ Այն զի ցորչափ զգան, տակաւին կենդանի են. և եթէ կեան դեռ, յառաջ քան զմահ ասելի է առաւել՝ քան թէ՝ի մահու անդ, որ՝ի վերայ հասեալ բառնայ զամենայն զգայութիւն մարմնոյ. և՝ի մերձենալն վշտագնիչ է։ Այլ ոչ վասն զըժուարին է ճշգրտաբանել թէ երբեմն մեռանողս ասիցեմք զորս չեն մեռեալք, այլ՝ի մօտալուտ մահուանէն տագնապին յետին մահաբեր վշտիւքն. թէպէտ և ուղիղ կոչին սոքա մեռանողք. զի յորժամ մահն սպառնացեալ գոյ հասանել, ոչ եւս մեռանողք՝ այլ մեռեալք անուանին։ Այլ ոչ ոք է մեռանող՝ բայց կենդանին. զի յորժամ յայն կատարած կենաց գտանի, յորում կան Հոգեվարք անուանեալքն, յայտ է թէ չև պակասեալն՝ի Հոգւոյ՝ դեռ կենդանի է։ Այսու նոյնն է միանգամայն մեռանող և կենդանի, այլ առ՝ի մահ մօտեալ, լքանող կենաց. դեռ՝ի կենդանութեան, զի Հոգին՝ի մարմնի անդ է. չև եւս՝ի մեռելութեան, զի չէ տակաւին մեկնեալ՝ի մարմնոյ։ Այլ՝ի մեկնիլ անդ, եթէ ոչ եւս յայնժամ՝ի մահու լինի՝ քան թէ յետ մահու, երբ ապա՝ի մահու լինիցի՝ ասիցէ ոք։ Այնպէս ոչ եւս ոք լինիցի մեռանող, եթէ չիցէ մարթ միաւին լինել միանգամայն մեռանող և կենդանի։ Ո՛չ ցորչափ Հոգի՝ի մարմնի անդ է, չիմարթիմք անկենդանի ասել։ Այժմ եթէ մեռանող առաւել իցէ ասելի, յորոյ մարմինն կայ՝ի տագնապ մեռանելոյ, և չէ մարթ միաւ ումեք լինել միանգամայն մեռանող և կենդանի, երբ ապա իցէ կենդանի՝ անդ խտանամ։

ԳԼՈՒԽ Ժ

Թէ կենդանութիւն մահկանացուաց՝ առաւել մահ ասելի է, քան եթէ կեանք։

Վասն զի յորմէ հետէ՝ ի մեռուստ մարմնի սկսանիցի ոք լինել, յար ներդործի՝ ի նմա առ՝ ի մահն ընթացութիւն. զի փոփոխելի նորայն բնութիւն ընդ ամենայն ժամանակ կենցաղոյս, եթէ կեանս արժան իցէ ասել հոգւոյ զաւասարհ առ՝ ի մահ։ Վասն զի ոչ ոք է որ չիցէ գալուստ պագոյն առ մահ յետ տարւոյ միոյ՝ քան ամաւ յառաջ, և վաղիւ՝ քան այսօր, և այսօր՝ քան յերէկին, և յետ սակաւուց՝ քան այժմուս, և այժմ՝ քան փոքր ինչ յառաջ։ Օ՛ի որչափ ժամանակ առ՝ ի կեալն ձգի, ծախեալ պակասի՝ ի ժամանակակիտէ անտի կենաց, և որ ինայն՝ նուազանայ օր ըստ օրէ. մինչդի ոչ այլ ինչ արդարեւ ժամանակ կենցաղոյս համարիցի՝ բայց դիմեցուածն՝ ի մահ անդր. յոբում ոչ ումեք տուեալ է կամ զկայ առնուլ վայրիկ մի, կամ յուշիկ ոանիփոխ լինել. այլ ամենեքեան վարին հաւասար ընթացիւք, և ոչ այլ և այլ մղանօք։ Վասնզի ոչ եթէ որ սակաւակեացն եղև՝ արագագոյն ըզօրն կատարեաց քան զերկայնակեացն. այլ միւնդեւս երկոցունց իսկ միօրինակ և զուգաթիւ հոսեին վայրկեանք, մին՝ ի մեծոյ եկաս, և միւսն՝ ի հեռուստ, ուր երկոքեան համահաւասար երագութիւք ընթանային։ Պատքէն այլ է զառաւել ձանձարհ հատանել, և այլ՝ հանդարտիկ գնալ. ուստի որ ոք մինչ՝ ի մահ յերկարագոյնս ձգէ զմիջոցս ժամանակին, ոչ եթէ մեղմով գնայ, այլ առնէ ձանձարհ առաւել։ Իսկ արդ եթէ յայսմ ժամ սկսանի ոք մեռանել, կամ՝ ի մահու լինել յորմէ սկսանի՝ ի նմա ազդումն մահու, այսինքն է՝ հատուածն կենաց, և եթէ յորժամ հատանելոյն սպառին կեանք, յետ մահու է այնուհետեւ՝ և ոչ՝ ի մահու. յայտ է անշուշտ՝ զի յորմէհետէ սկսանի լինել՝ ի մարմնի յայսմ՝ ի մահու է։ Վասնզի զինչ այլ ներդործի յիւ-

բաբանչիւր աւուրս և՝ ի ժամն և՝ ի վայրկեանս, մինչև նախ զզգեցիկ մահն սպառեալ կատարեսցի, և անդէն սկսանիցի լինել ժամանակ յետ մահու, այն՝ որ յորժամ կեանքն կարձառեր, արդէն՝ ի մահուն էր. ապա ուրեմն մարդ ոչ երբէք՝ ի կեանս է՝ յորմէ հեռի կայ՝ ի մարմնի աստ՝ ի մեռոտ՝ քան՝ ի կենդանի. եթէ չիցէ մարթ լինել նմա միանգամայն՝ ի կեանս և՝ ի մահու։ Կամ թերևս իցէ առաւել՝ ի կեանս և՝ ի մահու միանգամայն. ի կեանս՝ յոր կեայ, մինչև սպառիցի բովանդակ. իսկ ի մահու, որով արդէն մեռանի, երբ կեանքն կարձի։ Ո՛չ եթէ ոչ ի կեանս իցէ, զինչ է այն որ կարձառի, մինչև համակ ծախեալ վատնեսցի. և եթէ ոչ՝ ի մահու է, զինչ այն հետզհետէ բարձումն կենաց իցէ։ Վասնզի ոչ վայրապար՝ ի սպառել բոլոր կենաց՝ ի մարմնոյ անտի՝ ասեմք յետ մահու, եթէ ոչ՝ զի կայր մահն, յորժամ կեանքն՝ ի բաց կարձէր։ Ո՛չ եթէ՝ ի ծախիլ կենաց՝ մարդն ոչ է՝ ի մահու, այլ յետ մահու, երբ ապա լիցի՝ ի մահու՝ եթէ ոչ յորժամ հետզհետէ կեանքն՝ ի բաց կարձի։

ԳԼՈՒԽ ԺՒ.

Մարթ հնար իցէ լինել ումեք կենդանի միանգամայն և մեռեալ։

Զի եթէ անպատեհ իցէ ասել զմարդոյ չէ և՝ ի մահ հասեալ, թէ՝ ի մահու կայ, իբրև զի չինչ լինի արդեօք մեր ձենոյ վաթելով զժամանակս կենաց՝ եթէ արդէն՝ ի մահուն իցէ, մանաւանդ զի օտարաձայն իմն է ասել զումեք՝ թէ կենդանի է միանգամայն և մեռեալ, զոր օրինակ չէ մարթ ասել՝ հսկող և ննջող միանգամայն, խնդրելի է ապա երբ լինիցի նա մեռանող, կամ մահակիր։ Վասնզի չէ և՝ եկեալ մահուն, ոչ մահակիր է, այլ կենդանի. իսկ ի գալ մահուն, մեռեալ լինիցի՝ և ոչ մահակիր. ուստի այն՝ յառաջ քան զմահն է, և այս՝ յետ մահուն։ Ո՛չ

պա երբ իցէ 'ի մահու , զի յայնժամ գոյանի մահակիր . որպէս զի՝ զոր օրինակ երբեակ վիճակք են, յորժամ առեմք , նախ քան զմահ, 'ի մահու ,և յետ մահու ,նոյնպէս իւրաքանչիւրում համեմատեցի մի մի յերից աստի՝ կենդանի , մահակիր կամ մեռանող , և մեռեալ : Այսն որոյ կարի դժուարին է սահմանաւ ասել՝ երբ արդեօք մահակիր իցէ , այս է՝ 'ի մահու . ուր ոչ կենդանի իցէ , այս է՝ նախ քան զմահ , և ոչ մեռեալ , որ է յետ մահու , այլ՝ մահակիր, այս է՝ 'ի մահու : Այսն զի ցոյնափ 'ի մարմնի կայ հոգին, մնանաւանդ եթէ զգայութիւն և 'ի ներքս իցէ , անշուշտ կենդանի է մարդն , որ 'ի հոգւոյ բազկանայ և 'ի մարմնոյ . ուստի նախ քան զմահ լինել ասելի է , և ոչ 'ի մահու . իսկ յորժամ 'ի բաց գնայ հոգի , և պարապ բառնայ զամենայն զգայութիւն մարմնոյ , այնուհետև յետ մահու և մեռեալ գոյանի : Այս ուրեմն պակասէ մարդ ընդ միջոց երկուց՝ որով լինիցի մահակիր կամ 'ի մահու . զի եթէ տակաւին կեայ , յառաջ քան զմահ է . եթէ 'ի կեղտն վերջանայ , յետ մահու է : Ասի ոչ ըմբռնի բնաւ լինել մահակիր կամ 'ի մահու : Այս այսմ օրինակի և 'ի հոլովմանն ժամանակաց՝ խնդրի ներկայ ժամանակն , և ոչ դոյանի . զի առանց իրիք միջոցի լինի անցումն յապագայէ յանցեալն : Իսկ արդ չիցէ արժան կասկածել , եթէ ըստ այսմ մարմնոյ մահ իսկ կայցէ ոչ բնաւ . զի եթէ կայ , երբ կայ՝ այն որ ոչ յումեք լինել կարէ , և ոչ ոք 'ի նմա : Յորմէ տեւէ կեանն , դեռևս ոչ կայ . զի այս յառաջ քան զմահ է , և ոչ 'ի մահու . իսկ եթէ դադարեալ իցէ 'ի կեղտ , ոչ այլ գոյ մահն . զի և այս յետ մահու , և ոչ 'ի մահու է : Այայց կրկին դարձեալ , եթէ մահ ոչ բնաւ է յառաջ կամ զինի , զմի՞ ապա ասիցի՝ նախ քան զմահ կամ յետ մահու . զի և այս յումեքս ասի , եթէ արդարեւ մահ ինչ չկայ 'ի միջի : Այլ իցէ թէ արժանաւորապէս քաղաքավարելով 'ի դրախտի՝ լրօրէն իսկ չլինէր բնաւ մահ . իսկ այժմ ոչ միայն է , այլ և այնչափ ինն տաժանական , զի ոչ բանիւ իւիք մարթի է բացատրել , և ոչ իւիք արուեստիւ խուսափել :

Ա՛լ արդ սովորականին զՀետ երթեալ խօսիցի, իբր զի օտարանալ անմարթ է, ասասցուք՝ յառաջ քան զմահ, մինչ չև հասեալ իցէ մահն. ըստ որում և գրեալ է.“ Յա՛ռաջ քան զվախճան մի տաը երանի մարդոյ,,. Ես. ՟Ի. 30։ Ասասցուք և ՚ի մահուն հասանել, զինի մահուան այս կամ այն մարդոյ՝ եղև այս ինչ կամ այն։ Ասասցուք և ներկայ ժամանակաւ ըստ մարթելոյ, որպէս և խօսիմք իսկ։ Ան որ ՚ի մեռանելն՝ արար կտակ, և սոցա կամ նոցա եթող զայս ինչ և զայն. Թէպէտ և զայս կենդանւոյ միայն առնել կարողութի է, և նախ քան զմահ առնէ՝ քան Թէ ՚ի մահու։ Խօսեացուք զարձեալ ըստ լեզուի ՝ճ՚ային գրոց, որ և զմեռեալսն ոչ ասէ զինի մահու, այլ ՚ի մահու. որպէս այն.“ Օ՛ի ոչ ոք է որ ՚ի մահու յիշէ զքեզ,,. Սղ. ՟Զ. 6։ Վանզի մինչ չև են յարուցեալ, ուղիղ ասէն ՚ի մահու լինել. ոչ և ՚ի քուն կալ ասելմբ մինչ չև զարթուցեալ ուրուք. Թէպէտ զըմբռնեալսն ՚ի քուն ասելմբ և ննջողս, ուր ոչ կարեմբ զարդէն մեռեալսն ասել նոյնպէս մեռանողս։ Օ՛ի ոչ մեռանին տակաւին՝ որք բանիւ մահու մարմնոյն՝ զորմէ այժմ խօսիմբ, անդէն բաժանեալ են ՚ի մարմնոց։ Ա՛լ այս է զոր ասացի՝ Թէ չէ մարթ բանիւ բացատրել, այսինքն Թէ զիարդ մեռանողաց վասն ասելի կեաց, կամ վասն մեռելոցն՝ նա և կեաց մահու ասել, Թէ ՚ի մահու կան. զի որպէս ասելի կեաց մահու, եԹէ տակաւին ՚ի մահու են՝ ։ Այլ արդ գԻէ կերկրորդ մահուանէն հնար է մեզ ազատ լինել ձեռնտուութեամբ ընորհաց փրկչին մերոյ։ Օ՛ի այն դժնդակագոյն է և չար քան զամենայն չարիս. որ ոչ եԹէ բաժանմամբ հոգւոյն և մարմնոյն գործի, այլ երկաքանչիւրոց սերտ միակցութիւն առ ՚ի պատուհաս յաւերժական։ Ընտանւօր ընդ հակառակն ոչ եղիցին մարդիկ նախ քան զմահ և կեաց մահու, այլ միշտ ՚ի մահու. որով ոչ բնաւ կենդանիք, ոչ բնաւ մեռեալք, այլ անվախճան մեռանողք։ Օ՛ի և ոչ չարագոյն ինչ երբեք դիպեսցի մարդոյ ՚ի մահու՝ բայց ուր մահ իցէ անմահ։

1 Զանց առնեմ զՀատուած բանի, ուր լսելի բառից լինի զննութի։

ԴԻՅՈՒԽ ԺԲ

Ջո՛ր մահ սպառնացաւ ՚ի նախատեղծից յանցանել Նոցա զպատուիրանսն ։

ՎՐԴՅորժամ լինդիր լինիցի, Թէ զո՛ր մահ արդեօք սպառնացեալ էիցէ ՚ով առ նախատեղծմն՝ յանցանել Նոցա ընդ պատուիրանն անհնազանդութեր, միթէ զՀոգւոյն, եթէ զմարմնոյն, կամ Թէ զմարդոյ ողջոյն, և կամ զայն որ երկրորդ մահն կոչի, պատասխանել՚ի դէպ է ։ Օ՚մինայնն իսկ ։ ՎԱռաջինն մահ յերկուց բազկանայ, իսկ երկրորդն՝ յամենայնէն ըստ ամենայնի. օրինակ լիցի, տիեզերքը ՚ի բազում երկրէ բովանդակին, և հանրական եկեղեցի՚ի բազում եկեղեցեաց, նոյնպէս ընդհանուր մահ յամենայն մահուց ։ Վառաջինն՝ յերկուց ամբողջանայ, որ Հոգւոյն և որ մարմնոյն. որպէս զի լինել առաջին մահ ողջոյն մարդոյ, յորժամ Հոգին առանց ՚ով և առանց մարմնոյ՝ ժամանակաւ լուծանէ զպատիժն. իսկ երկրորդն՝ յորժամ Հոգի ա՛ռանց ՚ով՝ բայց մարմնով հանդերձ զյաւիտենից տուժի պատուհաս ։ Վայն որոյ յասէլ ՚ով առ մարդն առաջին յաղագս արգելեալ պտղոյ “ Յորում աւուր ուտիցէք ՚ի նմանէ, մահո՛ մեռանիցիք ,, , ոչ սոսկ ըստ միոյ մասին առաջնոյ մահուն էին սպառնալիք, որով Հոգի մերկանայ յ՚ով , ոչ լոկ ըստ միւսոյն՝ որով մարմին ամայանայ ՚ի Հոգւոյ , ոչ միայն ըստ առաջնոյ մահուն համակ, որով Հոգի որոշեալ և յ՚ով և ՚ի մարմնոյ՝ կայ ՚ի պատժի, այլ որ ինչ միանգամ ՚ի մահու սակի է մինչ ՚ի յաւիտեան՝ երկրորդ մահ ասացեալ, քան զոր այլ յաւէտ չիք ։

ԳԼՈՒԽ ԺԴ

Պատուիրանազանցութեան նախատեղծիչն զոր պատուհաս նախ առաջին կրեաց։

ՎԱՆԶԻ անդէն յետ յանցաւորութեանն պատուիրանին՝ ի լքանել վաղվաղակի ածային հնորհացն, ամօթ կալաւ զնոսա ընդ մերկութեի մարմնոց իւրեանց. ուստի և թզենի տերևավք՝ զոր գտանէ առ տագնապի հնարեցին ի ժա մուն, զամօթանսն ծածկեցին, որ յառաջն նոյն անդամք իսկ էին, բայց ամօթալիք ոչ էին։ Վասն որոյ յանձինս զգացին զնլոտիւն անսովոր զմարմնոյ անհնազանդի, իբր պատուհաս փոխարէն իւրեանցն անհնազանդութե։ Վանզի այն ինչ յիւր ազատութենէն զուարձացեալ լինէր հոգին խոտորնակի, ծանր համարեալ ծառայել ՚ւյ, մերկ և ինքն ինայր ի նախնական ծառայութե մարմնոյն. և զի ընդդէմ դերագունի տեառն ըմբոստացու ինքնահաճու թե, ոչ ևս գլեհին սպառեալին ունէր իւր կամակատար. ոչ ևս հպատակ յամենայնի կայր նմա մարմինն, որպէս հանդերձեալ իսկ էր միշտ ունել զնա, եթէ և ինքն կացեալ ինայեալ էր հպատակ ՚ւյ։ Այսպա յայնժամ սկսաւ մարմինն ցանկալ հակառակ հոգւոյ, և նովին հակառա կութեամբն ծնաւք և մեք, ձգեալք յանձինս զսկիզբն մա հու, և ի մեր անդամս և յախտաւոր բնութեան բե բելով զմարտ կամ գլաղթութե մահու յառաջին յանցա ւորութենէն։

ԳԼՈՒԽ ԺԶ

Յհիւսիսի արարած մարդ յայ, և յոր վճռակ անկաւ խրտիլն անձնիշխան կամաց։

ՎԱՆԶԻ՞ ձեզ բնութիւնն արարիչ՝ և ոչ ախտաւորութիւնս, արար զմարդն ուղիղ. այլ նա կամովին վատթարեաւ և իրաւամբք դատապարտեաւ, ծնաւ զաւակս վատթարս և դատապարտս։ Վ՚ասն զի՝ ի միւսմի յայնմ եղեալք ամենեքեան, յորժամ ամենեքինն մեք նոյն մին էաք, որ՝ ի մեղսն սահեցաւ՝ ի ձեռն կնոջն առելոյ՝ ի նմանէ նախ քան զմեզս։ Չև և էր մեզ հաստեալ և բաշխեալ ուրոյն կերպարան կենաց իւրաքանչիւր, այլ կայր բնութիւն բեղմնաւոր առ՝ ի մեր առնելութիւն, որ և՝ ի մեղացն ախտացեալ, և մահու կապանօք պարաւանդեալ, և արժանապէս դատապարտեալ, ոչ այլևսման ինչ ծնանէր մարդ՝ ի մարդոյ։ Այսուհետև չարաչար՝ ի կիր արկանելով ազատ անձնիշխանութիւնն՝ յառաջ եկին անընդհատ այս թշուառութիւնք, որ և զմարդկան ազգ ըստ խանդաղելոյ ծագման նորա իբր արմատոյ փտելոյ՝ կարեաց յաձախութիւն տանի արկանել՝ ի սատակումն երկրորդ մահուն, որոյ չիք վախճան, բաց յահացանէ միայն՝ որք հնարհօքն այ զերծանին։

ԳԼՈՒԽ ԺԷ

Ադամ մեղանչելով եթող նախ զնա՝ մինչ չև թողեալ յայ, և նախկին մահ հոգւոյ եղև պատճէն յայ։

Վ՚ԱՍՆ այսորիկ յայն որ ասացաւ, «Մահու մեռանիցիք», ուր ոչ խօսի բազմաբար՝ մահուամբք, իմանամք միայն զայն մահ՝ որ լինի յորժամ հոգին լքանի՝ ի կե-

նայ իւրոց, որ է նա ինքն ՚ած, զի ոչ եթէ լքաւ հա-
գի՝ զի լքցէ զ՚ած, այլ ինքն եղիք՝ զի լքցի, քանզի առ
իւր չարն յառաջէ կամք նորա, իսկ առ բարին նորին
յառաջէ կամք արարչի նորա, եթէ ՚ի ստեղծանել զնա՝
մինչ ոչն իսկ էր, և եթէ ՚ի վերաստեղծել և ՚ի կանգ-
նել՝ մինչ անկեալ էր ՚ի կորուստ, արդ թէ և զայս մահ
իմանայցեմք սպառնացեալ ՚ցյ յասել անդ “Կորուա ա-
ւուր ուսից՚ցէք ՚ի նմանէ, մահու մեռանիցիք,, իբրու
ասել՝ յորում աւուր թողուցուք զիս անհնազանդութիւն,
թողից զձէզ արդարութիւն, բայց յայսր ամենայնի վերայ
յայտ է թէ ընդ նովին մահու սպառնացեալ էղեն և այլքն՝
որք անվրէպ զՀեռն գային. քանզի ՚ի զարհնուլ ապատամբ
խրտմանն ՚ի մարմնի անդ անհնազանդ հոգւոյն, որոյ
վասն ծածկոյթ զամօթալուք արկին, եղև զգալ զայն զմի
մահ որով եղիք ՚ած զհոգին. որ և նշանակեցաւ այնու բա-
նիւ զոր ասաց մարդոյն ՚ի թաքուցանել նորա զանձն առ
ահի յիմարութիւն, “Ադամ, ուր ես,,. իբր ոչ եթէ անգի-
տաբար զնա որնեղով, այլ կշտամբանօք ազդ առնելով,
՚ի յուշ ածցէ՝ թէ ուր իցէ նա՝ յորում ոչ գոյր ՚ած։ Իսկ
յորժամ նայն ինքն հոգի մարդոյն եթող եղիք զմարմինն
ամօք աղՀատեալ և ՚ի ծերութիւն համակեալ, եղև փորձ
միւսոյ մահուն, զորմէ ասաց ՚ած առ մարդն ՚ի պատու-
հասել անդ զմեզ. “Հող եիր, և ՚ի հող դարձցիս,,. որ
պէս զի յերկուց յայսցանէ բովանդակեացի մահն առա-
ջինն՝ որ ողջոյն մարդոյ է, որում և երկրորդն մահ զՀեռ
գայ ՚ի վերջ, թէ ոչ ՀնորՀօք ապրեսցի մարդ. զի մար-
մին որ ՚ի հողոյ է՝ ոչ այլ ազգ գառնայր ՚ի հող, բայց իւ-
րովն վերահաս մահուամբ, յորժամ թողեալ ինայ ՚ի կե-
նաց իւրոյ՝ ՚ի հոգւոյն։ Զմին իրի առ քրիստոնեայս՝ որք
զուղղափառ հաւատս ունին Հնմարտութիւն, քաջայայտ է
թէ և մարմնոյ իսկ մահն ՚ի վերայ եդաւ մեզ՝ ոչ եթէ օրէ
նօք բնութիւն, զի ՚ած մահ ինչ ոչ արար մարդոյ, այլ ըստ
արժանի մեղաց. զի այժմ զմեզ պատուհասելով ասաց
՚ած առ մարդն՝ յորում կայաք յայնժամ և մեք ամենեքին.
“Հող եիր և ՚ի հող դարձցիս,,։

ԳԼՈՒԽ Ժ.Զ.

Ցաղագս փիլիսոփային՝ ոյք զանձաւումն հոգւոյ ՚ի մարմնոյ ոչ ՚ի պատիժ ինչ լինել համարին, երբ պատան աւանդէ՝ թէ մեծ աստուածն խոստացեալ էցէ փոքունց աստուածոց՝ ոչ մերկանալ բնաւ ՚ի մարմնոյ իւրեանց։

Ասացն իմաստասէրքն՝ որոց զրպարտանաց Հակառակ՝ պաշտպան կամք քաղաքին ՚այ, այս է՝ եկեղեցւոյ նորա, իմաստութիւն իմն համարին խաղ առնել զասացեալսն, թէ ընդ պատուհաս կարգեալ է հոգւոյն առ ՚ի մարմնոյ անջատումն. իբրև զի գիտասիրեալն երանութիւն հոգւոյն յայն գնել նոքա, յորժամ որպէսեալ գլխովին յամենայն մարմնոյ՝ դառնայցէ առ Ած՝ պարզ և միայնակ և իբր մերկիկ։ ՚Այլքն եթէ ՚ի մերժումն այսց կարծեաց ոչ ունէաք նպաստս ՚ի նոցայն իսկ գրոց, աչխատութիւն էր լինձ վիճ՚ մամբ ցուցանել՝ թէ ոչ մարմինն, այլ եղծանելի մարմինն է որ ծանրացուցանէ զոգի. ըստ որում և ՚ի նախընթաց գիրս յիշատակեցաք զասացեալն ՚ի մեր սրբազան մաաեանս. “Օ՚ի մարմին եղծանելի ծանրացուցանէ զոգի...” Ի՚մասք. Ը. 15. ուր զեղծանելին յաւելադրելովն յուշ առնէ թէ ոչ որով և է մարմնով ծանրանայ հոգի, այլ որպիսին ՚ի մեզսն պատժապարտութիւնէ եղև. թէպէտ և առանց այնը յաւելուածոյ և ոչ այլ ազգ իմանալ ՚ի դէպ էր։ Ի՚այց ուր Պղատոն յայտնապէս քարոզէ թէ աստուածքն ՚ի մեծին ՚այ արարեալք մարմինս ունին անմահս, և թէ աստուած արարող նոցա խոստանայ իբր մեծ իմն պարգեւս՝ կալ միանալ նոցա յաւիտեան ՚ի մարմինս իւրեանց, և ոչ մատնուամբ իւիք լուծանիլ զի՝ արդեօք դոքա իմաստասէրքդ ընդ քեզական հաւատս ոգորել կամեցեալք՝ չգիտեն ձևաանան զոր գիտենն. կամ ընդ անձինս իսկ մաքառելով, աուաւել ընարեն հակառակ անձանց խօսել, միայն զի յաստղ ընդդիմաբանութիւնն ոչ վերջանայցեն։ Ի՚ա քեզբանք Պղատոնի՝ ըստ որում՝ ՚ի լաւին բարբառ յեղու վնոյնս կի

կերան, որովք այսպէս տայ խօսել մեծին ՅՈՎ առ իւրա-
պօրծան աստուածս. « Դուք որք աստուածոց նոյնասեր-
,, մանք էք, հայեցարուք և տեսէք որոյ գործոց էս ինքն
,, ճնող եմ և յօրինիչ։ Այն սոքա անբակտելիք յիմիմ կա-
,, մելոյս. Թէպէտ և ամենայն բաղկացականն է և լուծա-
,, նելի։ Այլ ոչ է բարւոք՝ զՀանճարով շաղկապեալն
,, անդրէն լուծանել կամաւ։ Այլ զի եղական էք դուք,
,, ոչ կարէք անմահս լինել և անբակտելիս. սակայն չլու-
,, ծանիցէք երբէք, և ոչ ի ինչ մահու արկածք սանանել
,, ցեն ձեզ. զի ոչ եթէ զօրագործիք քան զխորհուրդս իմ
,, լինիցեն, որ ուժգին ևս կապ է առ ի ձեր մշանջենաւո-
,, րութիւն՝ քան զայն որով կապեցայքդ ի ծնանիլ ձեզ
,, բուժ։։ Հաւասարիկ Պղատոն մահկանացուս լինել ասէ
զաստուածան շաղկապմամբ մարմնոյ և հոգւոյ, բայց և
անմահականս ի կամաց և ըստ խորհրդոց ՅՕՎ յորմէ եղենն։
Իսկ արդ եթէ ըստ իմաստասիրացդ՝ պատուհաս է հո-
գւոյ կապիլ յոր և իցէ մարմին, զի է զի ՅՕՎ խօսելով առ
նոսա որք հոգային թէ գուցէ մեռանիցին լուծմամբ ի
մարմնոյ, սրատեսդէ զնոսա ընդ անմահութեի իւրեանց,
ոչ յաղագս նոցա բնութեն որ յօդաւորն է և ոչ պարզա-
կան, այլ յիւրոց անպարտելի կամացն՝ որ առնել կարող
է, զի ծագեցեալն լոյս անմուտ իցէ և յօդակապեալք
չքակտեսցին, այլ կայցեն ՅԱՅՑԵՆ անեղծութեբ։

Իսկ թէ արդեօք Հաւաստեաւ ասիցէ զայս Պղատոն
յաղագս աստեղաց, այդ այլ խնդիր է։ Օ՛ի և ոչ վայրա-
պար զննանիլ նմա արժան է՝ թէ այս լուսակիր գունդք
կամ չքնանալք՝ որք զարի և զգիշեր չողշողեն ի վերայ եր-
կրի մարմնեղէն լուսով, կենդանի իցեն իւրեանց սեպհա-
կան հոգւովք, և այն՝ իմացական և երանելի. զոր և յա-
ղագս Հանդրական աշխարհի այնգագոյնս հաստատեալ Պղա-
տոն, իբրու լինել այնմ կենդանի մեծամարմին, կին-
քեան կրելով զայլ ամենայն կենդանիս։ Այլ այդ այլ
խնդիր է՝ որպէս ասացի, զոր ի ժամուս ոչ առնումք ի
քննութեի։ Այլ յիշատակել միայն ի դէպ վարկայ զսոյն
ընդդէմ իմաստասիրացդ՝ որք պղատոնականս պարծին

դոլ և կոչել, և առ պաճուճանաց անուանդ՝ ամօթ զքրիս-տոնեայն լինել վարկանին, զի մի հասարակ ընդ այլ մարդկանն անուանադրուի ցածուցանիցէ զաղաբողոնաք պարծեցեալս, որոց Թիւ որչափ փոքր է, նոյնչափ առաւել փքացեալ. և խնդրելով ծագիւտ ինչ զքրիստոնէական ուսմամբ արկանել, ի մշանջենաւորութեէ մարմնոց ընդհարկանին. որպէս Թէ դիմամարտ ինչ իցեն՝ զերանուԹէն հոգւոյ խըն-դրել, և կարծել Թէ հոգի կայցէ միշտ ի մարմնի՝ որպէս դժնդակ կապանաք պնդեալ. ուր առաջնորդ նոցա և վար-դապետ Պղատոն՝ պարգևս ասէ ընծրհեալ ի մեծէն Յայ առ իբրաստեղծ աստուածսն, զի մի երբէք մեռանիցին, այս է՝ յաժանիցին ի մարմնոց ընդ որս շաղկապեաց զնոսա։

ԳԼՈՒԽ ԺԲ։

Ընդդէմ այնոցիկ որ ասեն, անմարԹ է երկրաւոր մարմնոց լինել անապական և յաւերժակաց։

Պէտ դարձեալ խմաստասէրդ, Թէ մարմնոց հողե-ղինաց անկար է մշանջենաւորս լինել. ուր ինքեանք զեր-կիր առ հասարակ՝ զոր ընդհանուր աշխարհիս իբր երևե-լի աստուածոյ Թէպէտ և ոչ գերագունի՝ համարին ան-դամ՝ի միջոցին կարգեալ, ոչ ինչ երկբային ասել մշանջե-նաւոր։ Այլ եԹէ գերագոյնն աստուած արար նոցա միւս ևս աստուած առ՝ի նոցանէ կարծեցեալ զաշխարհս զայս, որ քան զայլ վայրագոյն աստուածս նախադասելի իցէ, և զնոյն զայն համարին լինել կենդանի՝ հոգւով որ-պէս հաւանինն՝ բանաւորաւ և իմանալեաւ՝ի մեծաքա-նակ մարմնի անդ նորա փակեալ, և այնր մարմնոյ իբր անդամս յիւրաքանչիւր տեղի եդեալս և յարմարեալս հաստատեալ իցէ՝ այծ զքառեակ տարերս, զորոց գյօդա-կապուԹէն անլոյծ համարին և մշանջենան, որպէս զի մի ականաւորն այն աստուած նոցա երբէք մեռանիցի, առի-

մէ արդեօք Հողն միջին անդամն կարգեալ՝ի մարմնի անդ կենդանւոյս մեծի՝ յաւիտենական իցէ. իսկ այլոց Հողածինն կենդանեացն մարմնոց չիցէ հնար լինել յաւիտենական, եթէ այնպէս կամք լինին այ։ Այլ ընդդէմ ասեն. պիտոյ է հատուցանել Հողոյ զՀողն, ուստի երկրածինն կենդանեացն առան մարմինք, այր վասն Հարկ է ասեն լուծանիլ նոցա և մեռանել, և այնպէս յերկիր անդր՝ի կայուն և՝ի մշտակաց ուստի առանն՝ փոխադարձիլ։ Օ այդ եթէ ոք և յաղագս Հրոյ նոյնպէս Հաստատեալ ասիցէ՝ թէ՝ի Հանրական Հուր անդր դառնալոց են մարմինք որ առան անտի առ՝ի լինելութէ երկնային կենդանեաց, ոչ ահա՝ի Հարկելոյ այդր պատճառաբանութէ՝ ընդ վայր անկանիցի անմահութէին՝ զոր այնպիսեաց աստուածոց խոստանայր Պղատոն՝ իբր՝ի բարբառելոյ մեծին այ. միթէ յայն սակս ոչ լինի անտանօր՝ զի ոչ կամի ած, որոյ կամացն ոչ ի ինչ զօրութէ յաղթէ՝ ըստ նորուն իսկ Պղատոնի։ Այլ զինչ ապա արգելու զդոյն նոյնպէս առնել այ առ Հողածինն մարմինս, որովհետև խոստովանի Պղատոն ինքնին՝ թէ կարող է առնել ած, զի ծագ գեղեաւն լոյս անմուտ իցէ, և յօդակապեալք չքակտեսցին, և՝ի տարերաց եղեալքն մի այլ լուծանիցին, որով և ոգիքն կարդեալք՝ի մարմինս մի Թողուցուն զնոսա, այլ՝ի միասին վայելեսցեն յանմահութէ և յարակայ երանութեան։ Այսպա ընդէր չկարիցէ առնել զի և երկրածինքն չմեռանիցին. միթէ ած չէ առակ յայն զոր քրիստոնեայք հաւատան, այլ յայն եթէ՝ զոր պղատոնականքն ախորժեն. իբր այն թէ զայ զնորհուրդ և զիշխանութէն գիտել անկարացան մարգարէքն, և խմաստասէրքը եղեն հասու. ուր ընդ հակառակն՝ այ Հոգին ուսոյց մարգարէից իւրոց որչափ և կամեցաւն՝ յայտնի առնել զկամս իւր. իսկ զիմաստասէրս պատրեաց Հանճար նոցա մարդկեղէն՝ի Հանդիպել զկամս այ։

Այլ արդ ոչ արժան էր նոցա ցայն վայր՝ի խաբս անկանիլ ոչ տգիտութէ լոկ՝ այլ և Հեստութէ, մինչև անձանց յայտնապէս ընդդէմ կքրել և առ բուռն բանակռիւ

յարձակմանն հաստատել, Թէ հոգւոյ առ երանութիւն հասանելոյ պէտք են հրաժեշտ առնուլ ոչ միայն յերկրայինս մարմնոյ, այլ յամենայնէն բնաւ. իսկ վասն աստուածոյն ասել՝ ի ներհակին՝ Թէ ունկնդիր ոգիս երանաւէտս՝ կապեալս՝ ի մարմնոյս յաւերժակաց, երկնայինքն՝ ի հրեղէնս, իսկ զ[՝]քամազդայ ոգին՝ զոր նոյն ընդ աշխարհիս համարին, ասեն փակեալ՝ ի նեղքս ընդ քնաւ մարմնականն տարերքս՝ որովք ամբառնայ բովանդակ այս ընդարձակութիւն յերկրէ մինչև յերկինս։ [՝]Անդր յաղագս այնր ոգւոյ կարծի Պղատոն, Թէ՝ ի խորոց անտի՝ ի միջակիտէ երկրի՝ զոր երկրաչափք կեդրոն անուանեն, սփռեալ տառբածեալ կայ մինչ՝ ի գագաթունս երկնից՝ երաժշտական ինն Թաւովք. մինչև լինել աշխարհիս այսմ կենդանի ամենաամբ, ամենէրջանիկ, յարատեւակ, որոյ հոգին զկատարեալն պինդ ունելով զիմանալին էրջանկութիւն՝ ոչ Թողուցու և զիւրականն մարմին, և՝ ի հոգւոյ անտի կեցցէ մարմինն յաւիտեան, և ինքն Թէ և ոչ պարզական՝ այլ յայնքան՝ ի բազումս՝ ի մեծամեծ մարմնոյ բաղդօգեալ, ոչ ինչ կարիցէ ծանրացուցանել և խափանել զհոգին։ Իսկ արդ եԹէ իւրեանց մտացածին կարծեաց այդչափ ընորհեն դոքա, զմի՞ անհաւատանան Թէ հոդագանգուածն մարմնոյ հնար իցէ անմահս լինել՝ այ կամաւ և իշխանութիւն, յորս ոգիք առանց մահու՝ մի՞ւք բաժանելոյ և առանց՝ ի կրիցն ծանրանալոյ՝ կեանս ձգիցեն յաւերժս երջանիկս, ուր զայդ ընդունին հնարաւոր լինել աստուածոյ իւրեանց՝ ի մարմինս հրանիւթս, և նմին իսկ [՝]քամազդայ Թագաւորի նոցա ընդ քնաւ մարմնական տարերս։ [՝]Անդր եԹէ հոգւոյ՝ երանելի լինելոյ վասն խորշել պարտ իցէ յամենայն մարմնոյ, աղէ խորչիցեն և աստուածք նոցա՝ ի պարունակաց աստեղաց. խորշեսցի և [՝]քամազդ յերկինից և յերկրէ. կամ եԹէ զայդ չկարեն, եղկելիք ուրեմն դատեսցին։ Վասկայն և ոչ զմի յայսցանէ յանձն առնուն դոքա. ոչ բաժանուին՝ ի մարմնոյ իշխեն տալ աստուածոյ իւրեանց, զի մի պաշտօնատարք մահկանացուաց երևեսցին, և ոչ երանութիւն բարձուին, զի մի հէքս

զնոսա լինել խոստովանեացին ։ Այսպա ուրեմն ոչ հարկ է առ երանութեանն ստացումն յամենայնցն խորշել՝ ի մարմնոց , այլ յեղծանելեացն , ՚ի ցասեցուցչաց , ՚ի ծանրակրաց , ՚ի մեռելոտեաց , ոչ զորպիսիս ՚ա՛ծայինն բարերարութեն կազմեաց նախաստեղծիցն , այլ որպիսիս պատուհասս մեղացն ՚ի ներքս եմոյծ ։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Ընդ այն զոր խնամասիրեալք հաստատեն յաշագս երկրաւոր մարմնոց , թէ չէ հնար կալ նոցա յերկնայինն , զի երկայինն բնիկ ծանրութեբ յերկիր դիմէ ։

Այ. Հարկ է , ասեն , զի մարմինք երկրաւորք սակս բնական ծանրութեն իւրեանց կամ յերկրի կռուեալ կայցեն , կամ յերկիրն կոյս մղեսցին . որոյ վասն անմարթ է երկինս կալ նոցա . որպէս և նախաստեղծ մարդիկն կայս ունէին յանտառախիտ և յամենապտուղ երկրի՝ դրախտ անուամբ պատուեալ ։ Այդ քանզի և առ այս պատասխանել արժան է , եթէ սակս Աստի մարմնոյն՝ որով համբաձաւն յերկինս , և եթէ վասն մարմնոց սրբոցն՝ որպիսի լինելոց են ՚ի յարութեն , յառեալ նկատեսցուք առ վայր մի զծանրութեհն հողեղինս ։ Օ ի թէ արուեստագիտութեբ մարդկան ՚ի մետաղաց անտի՝ որք ՚ի ջուր արկեալ ընկղմանին նոյն հետայն , գիտաց ձևով իմն գործել անօթս՝ որ ջրեսօքն լողայցեն , որչափ արժանահաւատ իցէ առաւելապէս և աղղողագոյն գաղանի ՚ա՛ծայինն ներգործութեն եղանակ , որոյ ամենազօր կամբ՝ ըստ Պաղատոնի ասելոյն՝ յաջողէ ծնելոցն ոչ կորնչել . և յօդակապելոց անլուծ մնալ , որ և մեծ ևս սքանչելութբ զանմարմնականս ընդ մարմնեղինսց յօդէ , քան թէ զմարմնաւորս իւրաքանչիւր ընդ այլ մարմինս . ապա կարող է հնարհել հողեղէն զանգուածոց՝ ոչ միով իւրք ծանրութբ խուժել ՚ի ստորինս կոյս , և նոցունց իսկ ոգւոց երջանկացելոց հնարհել՝ զի զմարմինն երկրաւորս՝ բայց մնասականս՝ կացուսցեն*

ուր և կամին, և վարեսցեն ընդ նր և հաձինն՝ անաչխատ դրիւք և շարժմամբ։ Այլ կամ եթէ զայդ առնիցեն հրեշտակք, և զամենայն կենդանի երկրածին յափշտակեսցեն ուստի և կամ իցէ, և դադարեցուսցեն ուր և ա-խորժեն, միթէ չկարիցեն զայդ անաչխատաբար, կամ համարիցիմք վաստակիլ նոցա ի ծանրութենէն։ Այսպս երբ վասն չհաւատայցեմք թէ նա և զայդ հոգիք կատարեալքն և երջանիկք ըստ այ պարգևացն՝ կարող են հեշտեաւ զիւրեանց մարմինս փոխադրել յօ և կամին և վերադել ուր ախորժեն։ Վասնզի յերկրաւոր մարմնոյն՝ ըստ որում ի բառնալն զնոսին սովոր եմք զդալ զծանրութիւն, որչափ մեծ իցէ քանակն, նոյնչափ և ծանրութենէն առաւել է, որով բազմաւոր ծանունք առաւել ձնշէն քան սակաւաւորքն. սակայն հոգի զանգամս մարմնոյ իւրոյ առաւել թեթևաշարժ տանի՝ մինչ զօրեգդ են յառաջդութեանն, քան յորժամ նիհարք ի խօթութենէ։ Այս ուր քան զայլ բարձոզս ծանրաբեռն է այր առողջ և ուժեղ՝ քան վտիտն և անասւազ, ինքն հոգին առ ի զիւր մարմինն շարժելոյ և կրելոյ արուորագոյն է ի քաջողջութենէն՝ յորժամ առաւել թանձրամարմին է, քան յորժամ առ խօթութենէ կամ առ քաղցու-ներգևեալ։ Այս և ի մարմնոս հոգեղենս դեռ ապակա-նելիս և մահկանացուս՝ այսչափ զօրաւոր է ոչ քանակու-թենէ կշռոյ, այլ բարեխառնութենէն չափ։ Այս ո կարիցէ բա-նիւ բացատրել՝ թէ քանի՛ անջրպետութենէ կայ ընդ այժմու ասացեալ առողջութիւնն և ընդ հանդերձեալն ան-մահութենէ։ Այ՝ ասն որոյ մի զմեր հաւատս երդիծանիցեն իմաստասէրքն՝ պատճառանօք ծանրութենէ մարմնոց. զի և ոչ ի խնդիր կամիմ ընդ նոսա մտանել թէ զիարդ ան-հաւատ լինին երկրային մարմնոյ ինչ յերկինս կալոյ, ուր երկիր համակ յոչընչի կշռեալ կայ. քանզի ունիցիմք թէեւ և առաւել հաւանելի ձեռնարկութենէ ի նմին խոկ ի մեջոց վայրէ աշխարհի, յոր համախուռն դիմին ծանունք ամենայն։ Այլ ասեմ և եթէ, զի եթէ աստուածք մանունք՝ որոց չնորհէ Պղատոն և զմարդոյ անդամ կազմութենէ ընդ այլ ևս երկրածին կենդանեաց, կարողացան՝ որ-

պէս նայն ասէ , Հաստանէլ ՚ի հրոյ զայրեցուցն զօրս Աթէ Թողեալ ՚ի նմա զփայլողականն առ ՚ի լուսաւորել զաչս , մինչ վերագունեին ոչ , այլմ որոյ կամաց և կարողութէ ընդհակառակ Պղատոն առնէ՝ զի ծնեալք չհառանիցին , և որ կորի այլազանք և անմտանք՝ մարմնեղիցին և անմարմինք յիրեարս շաղկապեալք չքակտեսցին բնաւ իւիք , երկբայիցիմք արդեօք ընդհակ՚ զի ՚ի մարմնոյ մարդոյն որում զանմահութէն պարգեւէ , ՚ի բաց առնիցի զապականութէն , զենութէն Թողուցու անեղծ , և զապաշաւութէն կերպին և զանդամոյն պահիցէ , արգելեալ զծաղրութէնն դանդաղանս : Ոչայց յաղագս հաւատոյ յարութէ մեռելոց և զանմահութէ մարմնոյ նոցա , Ձշդրտագոյն ևս՝ եթէ հաւ Ձեսցի ՚ած , Ձառեսցուք ՚ի կատարածէ մատենիս :

ԳԼՈՒԽ ՀԻԹ

Ընդդէմ այնոցիկ՝ որք չհաւատան Թէ նախատեղծ մեղքն անմահք . եւ Թէ մեղուցեալք ոչ էին :

ՀԱՄ է բացատրել արդ զոր յաղագս մարմնոյ նախասատեղծիցն եդաք առաջի . իբր զի եթէ պարտիք մեզայ չլինէին , ոչ ՚ի վերայ հասանէր նոցա այս մահ , որ բառնացն զիսկի բարի . և ծանուցեալ իսկ է ոչ սակաւուց միայն մտաւորաց կամ հաւատացողաց , այլ բոլորեցունց , որով անջատումն առնի հոգւոյն ՚ի մարմնոյ , և մարմին կենդանւոյն՝ որ ահն յայտնի կեայր , ահն յայտնի անշնչանայ : Զի Թէպէտ և անպատեհ է յերկբայս արկանել Թէ ննջեցեալքն արդարոց և բարեպաշտացն ոչ իբր ՚ի հանգըստեան կեան , սակայն այնչափ լաւ և էր նոցա կենաց կցորդ լինել մարմնոյ իւրեանց բարեկրաց , մինչ զի նոքին իսկ որք հաւանին լինով երջանկիկս լինել հոգւոց առանց մարմնոյ , զայս զիւրեանց կարծիս հակառակ կարծեօքն զառաջանեն : Ոչանգի ոչ որ ՚ի նոցանէ իշխէ՝ զարս խմաս-

տախտակս, եթէ մեռեալ իցեմ, եթէ մեռանելոց, խնամ պՀրաժարեալս կամ պՀրաժարելիս ի մարմնոյ, վերապոյծ գասել քան զաստուածան անմահս, որոց մեծն Յոհ խոստանայ առ Պղատոնի՝ ի չքնաղ պարգևի մասին զանազանական կեանս, այս է՝ պյաւէժն Հաղորդակցութեի ընդ մարմնոյ իւրեանց։ Իսկ առ մարդիկ գեղեցիկ իմն վիճակեալ համարի Պղատոն՝ եթէ բարեպարիշտ եարդար կենց ցաղավարեսցին զի Հրաժեշտ առեալ՝ի մարմնոյ իւրեանց՝ Հանդիցեն՝ի ծոց նոցին իսկ աստուածոյն. զի նոքա ոչ Թողուն բնաւ զմարմինս իւրեանց։ Ըստ պղատոնեան ուսմանց խոսկացաւ, ասէն, Վիրգիլիոս զայն բան.

"Վ երնաչնոյն անյիշողք
զի ըստորնոց ելցեն յայց.
Իղձ բերեալ միւսանգամ
առ՝ի մարմինս առնել դարձ.,.յԱնկան.ը,

Վանգի այնպէս իմն Համարի, Թէ մահկանացուացն ոչ ոք չար՝ի մարմինս իւրեանց զօրեն կալ, այլ առ Հարկի մահուն լուծանիլն. և ոչ մերկ՝ի մարմնոյ բաւել՝ի հանգիստնաւորս, այլ Թէ հեռագետ անդադար լինիցին՝ի մեռելոց կենդանիք, և՝ի կենդանեաց մեռեալք. այնու և եթէ որոշեալք խնամատունքն յայլ՝ի մարդկանէ, զի սոքա յետ մահու տեղափոխին յաստեղս անդր, Հանգչել իւրաքանչիւր նոցա՝ի Համապատշաճ աստեղ առաւել ժառանգս. ուր՝ի մոռացօնս եղեալ Հոգի նախկին Թշուառութեին, և ըմբռնեալ ցանկութեի յարեղոյ՝ի մարմինն, դառնայցէ անդրէն յաշխատութեիս և՝ի տառապանս մահկանացուաց։ Իսկ որք անմոռութեի քաղաքավարեցան, փոխադարձին վաղվաղակի՝ի մարմինս ըստ իւրեանց գործոյն պատշաճի, կամ մարդոց և կամ անասնոց։ Ըստ ուրեմն՝ի դոյն՝ի ծանրատաղտուկ պայմանի կարգեաց Եզ Պղատոն զբարիսն անգամ և զիմաստուն ոգիս, զի ոչ այնպիսի տուան նոցա մարմինք՝ ընդ որս կեցցեն միշտ և անմահասիկս, ոչ կարացեալք ոչ՝ի մարմինսն յարատեալ, և ոչ առանց նոցա՝ի յաւիտենից անախտութեին վայելել։ Ընդ այս պղատոնական ուսումն՝ որպէս կան-

խեցաք ասացաք՝ ի յառաջանցեալ գիրսդ , ՚ի քառասնից դարու ամալեայց Պորփիւր . և ոչ միայն զանասնոց մաքս միոնս ՚ի բաց տարաւ ՚ի մարդկային հոգւոց , այլ և զիմաստնոցն ոգիս այնպէս արձակս համարեցաւ ՚ի մարմնէ զէն կապանաց , մինչև մեհուսացեալս յամենայն մարմնոց կալ ունալ նոցա առ հօրն երանելիս անվախձան . Այդ զի մի ՚ի ՚Վախ՝ որ խոստացաւն սրբ կեանս հանդիսնաւորս՝ պարտեալ երևեսցի , կարգեաց և ինքն զանարատիցն ոգիս յերջանկութիւնն յաւիտենից՝ անդարձաբար ՚ի նախկին Թշուառութիւնս . Այլ զի հակառակ և եղեւ ՚Վախ , ուրացաւ զյարութիւն անապական մարմնոց , հաստատեալ Թէ հոգիքն այնոքիկ ոչ միայն յերկրական մարմնոց , այլ բնաւ յամենայն մարմնոց մերկացեալ կեցցէն ՚ի հանդիսնաւորս . Վասն ՚ի վերայ այսպիսւոյ ծանածուռ կարծեաց ոչ իչխեաց օրէնս տալ՝ Թէ այն ոգիք ազատք իցեն ՚ի տանելոյ պաշտօն աստուածոցն մարմնաւորեցից . և առիմ՚ այդ , բայց զի զոգիսն զայն՝ Թէ և անկցորգս մարմնոյ՝ ոչ համարեցաւ լուսազոյնս քան զաստուածսն լինել : Որոյ վասն եթէ չիչխէն դոքա , որպէս և հաւաստնեալս եմ Թէ չիչխիցեն , վերոյ դասել զմարդկայինսն հոգիս՝ քան զամենեքեանիկ աստուածսն կապեալս ՚ի յաւերժական մարմինս , էր վասն տարադէպ Թուի նոցա զոր քրիստոնէականս քարոզէն հաւատք , Թէ այնպէս իմն հաստեցան նախասահմանք մարդկին , զի եթէ չէր նոցա մերժելի , ոչ լուծանէին մեռելութիւն ՚ի մարմնոց իւրեանց , այլ ըստ արժանեաց հնազանդութեն Ադամայ՝ անմահութիւն , կէին զոյգ ընդ մարմնոյ յաւիտեան . և Թէ արդարք ՚ի յարութիւն այնպիսի առնուսցուն զմարմինսն՝ յորս աստանօր վաստակեցան , զի ոչ ընդ մարմին նոցա անցանիցէ ապականութիւն ինչ կամ ծանրութիւն , և ոչ ընդ երանութիւն նոցա՝ ցաւ և եղկութիւն ,

ԳԼՈՒԽ Ի

Թէ պիտոյն մարմին այժմ հանդուցեալ յուսով, ի լուսոյն հանդամանս նորոգեցոյց զան որ նախասահմանեցին եղև յառաջ քան զիմս։

Ասաս այսորիկ սրբոյն վախճանելոց հոգիք ոչ ծանրանային ինչ համարին այժմ զմահ՝ որով յիւրեանցայնին մարմնոյն անջատին, իբր զի մարմին նոցա հանգչի յուսով, որչափ և անարգութիւն թուիցի կրել առանց զգալոյ։ Վասն զի ոչ եթէ որպէս Պղատոնի կարծեցաւ, առ մուացութիւն վշտացն փափաքին մարմնոց իւրեանց, այլ մանաւանդ զի յիշեն զինչ նոցա խոստացաւն է յայնմանէ՝ որ ոչ զոք խաբէ, որ և հերաց նոցա անդամ ոչ ջինկ պատհելոյն երաշխաւորեաց, սորին վասն անձկանաքը և երկայնմտութիւն ակն ունին յարութիւն մարմնոցն՝ որով զգաղտմ դժնդակն կրեցին, ուր ոչ եւս այլ այնպիսի ինչ ունին կրել յապայս կրելն։ Օ՛ի եթէ ոչ առեցին նոքա զմարմին իւրեանց՝ յորժամ ի հակառակել նորա մտաց առ ակարուե հոգևոր օրինաքն զնա ձնշէին, քանի առաւել եւս զնա սիրեն՝ որ հոգևորն լինելոց է։ Օ՛ի զոր օրինակ մարմնոյ ծառայացեալն հոգի ի չհ խակ կոչի մարմնաւոր, նոյնպէս մարմին հոգւոյ ծառայեալ արդարապէս կոչեսցի հոգևոր, ոչ եթէ ի հոգի փոխադրութիւն, որպէս կարծեցին ոմանք ի գրեցելոյն «Ներմանի մարմին հնչաւոր, և յառնի մարմին հոգևոր ,,, ա · կր · ձե · 42, այլ զի հոգւոյն ի ներքոյ գրաւի ամենապատիկ աբանդելի դիւրաժամուութիւն՝ մինչև յանկասկած վայելուչն անցուծիչ կենացն, ի բաց տարագրելով ամենայն վշտակրութիւն, բնաւ ապականելի կրից և դանդաղութիւն։ Վասն զի ոչ միայն այնպիսի եղելոյն՝ որպիսի այժմ լինի նա և ի կարի սնդաւկաշխ առաջնութիւն, այլ և ոչ որպիսի եղև ի նախասահմանեցաւ յառաջ քան զիմանալն. զի նոքա թէպէտ և չէին մեռանելոց՝ եթէ ոչ մի զանչէին, բայց դարմանոց պէտս

ունէին ըստ մարդկան, չև և այ Հոգևոր կրելով մարմինս, այլ հնչաւորս երկրականս։ Այլ եր ծերութիւն հնանալ նոցա, որով ի չարիկ վարիչն ի մահ. զոր և զանծերանալ զայն վիճակ հնորհեր նոցա սքանչելի բարերարութիւնն այ կենացն փայտիս, որ էր ի մէջ դրախտին՝ անկակից արգելեալ ծառոյն. սակայն ի կիր առնուին զայլ կերակուրս՝ բաց ի միջէ ծառոյ անտի, որ արգելաւ նոցա՝ ոչ զի չար եր, այլ սակս արգոյ ընծայեցուցանելոյ զբարին յատակամիտ և անխարդախ հնազանդութիւնէ, որ ընտրական առաքինութիւնէն է ստեղծուածոյ բանաւորի կարգելոյ ի ներքոյ տեառն արարչի. զի արդարեւ ուր չեր ի չար ինչ մերձենալ՝ եթէ մերձենային յարգելեալն, միայն անհնազանդութիւնէն եր մեղանչել։ Այսսոի տածէին նոքա այլովք ուտելեօք, զի մի հնչաւոր մարմինքն կրնային ինչ վիշտս ի քաղցնուլ և ի ծարաւել. իսկ ի կենացն փայտէ ճաշակէին առ ի չգտանելոյ մահու մուտս, կամ զի մի ծերութիւնէն ներգևաւալք՝ ժամանակացն անցմամբ պակասիցին ի միջոյ։ Այլով այլք ի կերակրոց առ ի դարման էին, իսկ ծառ կենացն՝ ի խորհուրդ. զոր այսպէս ինչ լինա, թէ այնպիսի ինչ եր փայտ կենաց ի մարմնականն դրախտի, որպէս ի հոգևորական յիմանալի դրախտին իմաստութիւնն այ, զորմէ գրեալ է. «Փայտ կենաց է առնեղուն որ պատապարին ի նա ...» Առակ. Գ. 18։

ԳԼՈՒԽ ԻԱ.

Ցայգագս դրախտին յորում եղեն նախաստեղծքն՝ մարթ է իմանալ խորհրդական իմաստս ինչ, բայց անվթար պահելով զշիմարտութիւնն պատմական ըստ ձառին յաղագս մարմնական տեղւոյ։

Ո՞Վ ԱՍՏՄԵՆԱՍՆ Աշխարհաբան գրոց սրբոց յաղագս դրախտին՝ յորում եղան նախաստեղծք՝ նախածնողք մարդկութեան, ոմանք փոխաբերեն բովանդակ ի հոգևորա-

կանս, զծառս որ ի նմա և զիայս պաղաբերս այլաբա-
նեալ առաքինուեիս վարուց և ի կենցաղս, որպէս թէ ոչ
զգալիք և մարմնականք ինչ լեալ իցեն, այլ սակս խմանա-
լեացն նշանակելոց այնպէս ասացեալք և կամ գրեալք։
Որպէս այն թէ՝ յայս սակս չլինիցի գրեալս մարմնեղէն,
զի և հոգևորական օրինակաւ լինի խմանալ. իբրու ասել,
ոչ երկու կանայք էին Հագար և Սառա, և ոչ ի նոցանէ
երկու որդիք Աբրահամու՝ յաղախնոյն և յազատէն,
վասն զի զերկու կտակարանսն ի նոսա օրինակեալս ասէ
առաքեալ. կամ թէ ոչ ի վիմէ խմբէ բղխեաց ջուր ի
Հարկանել Մովսէսի, վասն զի գոյ խմանալ անառնօր ա-
ռակաւ զնա ինքն Քն, ըստ նորին առաքելոյ ասելոյն.
Վէմ էին երբեմն Քս.։ Այլոյ արդ ոչ ոք արգելու՝ զրեալս
խմանալ զերանելեացն կենաց, չորիւք գետովք զբառեակ
առաքինուեիս, զխոհեմուէ, զարիւթէ, զբարեխառնուէ և
զարդարուէ, ծառովք նորա՝ զամենայն ուսմունս
պիտանիս, պաղովք ծառոյ՝ զվարս բարեպաշտաց, փայտիւ
կենաց՝ զմեղսն համայն բարեաց զիմաստուէ, և փայ-
տիւն գիտուէ բարւոյ և չարի՝ զփորձ պատուիրանա-
զանցուէն. քանզի յանցաւորաց բարւոք սահմանեաց
Աստ զպատիժ, զի արդար իսկ էր. այլ մարդ ոչ յիւրն բարի
զփորձ առնու։ Արթ է խմանալ զայսոսիկ և յեկեղեցի,
լաւ ևս առեալ զնոյնս իբր ցուցակս ինն մարգարէականս՝
յառաջընթացս ապաւնէացն. զբառեակ՝ զնոյն ինքն զեկե-
ղեցի, ոչ է ընթեռնուլ զնմանէ յերգս երգոց. քառեակ
գետս զբառեակին՝ զչորս աւետարանս. փայտս պաղաբերս՝
զառաքեալսն, և պտուղս՝ զգործս նոցա. փայտ կենաց՝ զը-
նծութբեան, և պտուղ՝ զգործս նոցա. փայտ կենաց՝ զը-
նծութբեան սրբոց զՔն. ծառ գիտուէիեան բարւոյ և չա-
րի՝ զբուն զանձնիշխան կամս։ Քանզի անձամբ ևէթ
վարելով մարդն՝ արհամարհել զկամս այլ, ոչ այլ ինչ՝
բայց միայն գտանել. և այնու իրաւի թէ զինչ խաիր
կայցէ ընդ չարիսն ի հասարակաց բարիս առնեցուն,
և ընդ հեշտանալ չիւրն միայն։ Ոչ ի անձնասէր լինել-
լոյն՝ ինքեան ևէթ անձնատուր լինի. ուստի լքեալ եր-
կիւղիւ և որտմունջ զսաղմոսն երգեսցէ, եթէ միայն

զգայեկ իւրոց չարեացն . "Ո՛նձն իմ յոյժ խռովեցաւ ,, . Իսկ ապա զգաստացեալ ասիցէ . "Օ՛ զօրութիւն իմ առ քեզ պահելոյ ,, : Օ՛ այսոսիկ , և զոր այլ ևս դիպողք եթէ ասել մարթի իցէ յաղագս հոգևորական խնամատիս դրախտին , չէ ոք որ արգելուցու , բայց միայն ակնդ կալցի՝ թէ ստոյգ պատմութիւնն աւանդի անտանօթ հաւատարիմ վիպագրութիւք իրացն գործեցելոց :

ԳԼՈՒԽ ԻԸ

Յաղագս մարմնոյ սրբոյն յետ յարութիւն , որ ասին հոգևոր լինել . այլ առանց փոխելոյ ի հոգի :

Ա՛ՅԺ արդարոցն մարմինք ի յարութիւն անդ՝ և ոչ միով իրիք ծառայ պէտս ունիցին առ ի չհեռանալոյ նոցա սխատակրութիւք իւիք կամ զառամեալ ծերութիւն . և ոչ այլ ինչ մարմնական դարմանոց՝ առ ի մերժելոյ զնիւս քաղցու և ծարաւոյ . վասն զի զդեցեալ նոցա զանմահութիւնն պարգև՝ զտոյգն և զընաւին անդրժելին , ոչ իւիք հարկին , այլ միայն կարեն՝ եթէ կամիցին՝ կերակրել : Օ՛սոյն և հրեշտակքն երևեալք մարմնապէս և ընտանեբար առարին՝ ոչ զի կարօտք էին , այլ զի կամեցան և կարէին առ ի ըստ մարդկան ձևանալոյ զիջմամբ իմն իւրեանց սպասաւորութեանն . զի ոչ ըստ երևակայութեան ինչ կարծելն է զկերակրիլ հրեշտակաց՝ յորժամ հիւրընկալեցան ի մարդկանէ , թէպէտ և որոց չգիտեինն զնոսա հրեշտակս լինել՝ թուէին առ կարօտութիւն ուտել նման մեզ . սորին վասն ասաց հրեշտակն ի գիրս Տոբիթայ . "Ա՛ռ կերայ և ոչ արբի , այլ իբրև տեսիլ տեսանէիք ,, . այս է , համարեիք առ ի պէտս յագենալոյ ձաշակել ինձ , որպէս դուքդ առնէք : Ա՛յլ յաղագս հրեշտակաց թերևս զայլ ևս հաւանելի ինչ մարթի իցէ հարցաննել . բայց յաղագս փրկչին ասացեալ լիք երկրայել

ըստ քրիստոսական հաւատոց, Թէ զկնի յարութեանն և՝ ի հոգևորն, բայց ի Հնմարիտ մարմնի հաղորդեցաւ ընդ աշակերտսն ի կերակուր և յըմպելի. զի յայնպիսի մարմնոց ոչ ևթէ կարողութիւն բաւնի ուտելոյ և ըմպելոյ՝ այլ կարօտութիւն։ Ուստի և հոգևորքն են՝ ոչ իբր ի մարմնի գոլոց դադարեալք, այլ զի կենդանարար հոգւով կեան։

ԳԼՈՒԽ ԻԹ

Զինչ խառնի մարմին ընդաւոր, և զինչ մարմին հոգևոր. կամ ոյք մեռանին յԱդամ, և ոյք կենդանանան ի Քրս։

Վասն զի զոր օրինակ մարմինքս՝ որք ունին շունչ կենդանական և ոչ դեռ զոգի կենդանարար, ասին մարմինք ընչաւորք, բայց չեն շունչք, այլ՝ մարմինք, սոյնպէս յարուցեալքն կոչին մարմինք հոգևորք, բայց քաւ լեցի կարծել Թէ լինիցին հոգիք, այլ մարմինք իցեն ունակք մեղձն գոյացուԹե, և ոչ կրիցեն զմարմնոյ ինչ մեղկուԹե և զապականուԹե կենդանարար հոգւովն։ Այնժամ ոչ ևս երկրաւոր՝ այլ երկնաւոր լինիցի մարդ. ոչ ևթէ չիցէ նոյն որ յերկրէ արարաւ մարմին, այլ զի երկնաւոր պարգևաւն այնպիսի եղիցի՝ զի և երկնային բնակուԹեն իցէ անկաւոր, անկորուստ բնուԹեն և այլակերպեալ հանգամանօք։ Ուսկ առաջին մարդն յերկրէ հողեղէն՝ եղև ի շունչ կենդանի, և ոչ ի հոգի կենդանարար, որ պահեալն էրնմա ըստ վաստակոց հնազանդուԹե։ Այլ մին իրի մարմին նորա՝ որ պէտս ունէր կերակրոյ և ըմպելոյ առ ի մերժուն քաղցոյ և ծարաւոյ, և ոչ բուն անքակտելի անմահ հուրն՝ այլ կենացն փայտիւ ազատանայր ի բռնուԹէ մահու, անԹառամելի զծաղիկ առուգուԹեն պահելով, յայտ է Թէ ոչ էր հոգևոր, այլ շնչաւոր. բայց և ոչ մեռանել ունէր՝ եԹէ ոչ յանցանելովն ի ներքոյ անկանէր յառաջասաց սպառնացեալ վճռոյն ոյ։ Ունել ունէր դարմանս և արտա-

քոյ դրախտին, բայց 'ի կենացն փայտէ զրկեալ. վախճան առնելոց էր ժամանակաւ և հնութ՝ ըստ այն կենաց և՛ի զոր 'ի մարմնի դէռ ընդաւորի կարող էր յաւերժացուցանել 'ի դրախտին, եթէ չէր մեղս ցեալ, մինչև հնազանդութեն արգասեաք լինէր հոգևոր։ Ա՝ան որոյ Թէպէտ և զերև լինն մահ և՝ որով հոգւոյ 'ի մարմնոյն լինի անջատումն, և մանաւանդ ընդանակեալ յաճախասաց բանն, "Յորում աւուր ուտիցէք 'ի նմանէ, մահու մեռանիցիք .., այլ ոչ արժան է տարագէպ ինչ գրել զայն՝ զի ոչ անգէն արագ լուծան 'ի մարմնոյ՝ առ օրին յորում զարգելեալն առին կերակուր զմահաբերն։ Վասզի յայնմ 'ի նմին աւուր 'ի վատթարն փոփոխեալ բնութեն և խանգարեալ, այլ և արդարադատ բացամերժութեն 'ի ծառոյն կենաց, կարիք մահուն մարմնականի արդիւնացան 'ի նոսա, և նովին կարեաք ծնաք մեք։ Ամին իրի չատաց առաքեալ, Թէ մարմինն մեռանելոց է վասն մեղաց, այլ ասէ. "Մարմին մեռեալ է վասն մեղաց, և հոգին կենդանի է վասն արդարութե .. Հռ. Ը. 10։ Ուր և զնովին ածէ. "Եթէ հոգի այնորիկ որ յարոյցն զՅն 'ի մեռելոց՝ բնակեալ է 'ի ձեզ, ապա և որ յարոյցն զՅն 'ի մեռելոց՝ կենդանացուսցէ զմահկանացու մարմինս ձեր բնակեալ ոգւովն իւրով 'ի ձեզ .։ Այս ուրեմն յայնժամ եղելոյն մարմինն 'ի հոգի կենդանարար, որ այժմ է 'ի չունչ կենդանի, զոր մեռեալ ասէ առաքեալն, իբր 'ի կարիս մեռանելոց վտանգեալ։ Այլ յայն 'ի նախնումն վիճակի այնպէս էր յոգի կենդանի՝ Թէպէտ ոչ 'ի հոգի կենդանարար, մինչ զի չէր մարթ ասել տիրապէս մեռեալ. զի միայն յանցաւորութեն զօրանային 'ի նմա կարիք մեռանելոյ։ Իսկ արդ քանզի ած ասելոյն "Գամ՝ ուր ես .., զմահ հոգւոյն նշանակեաց՝ որ 'ի թողլոյն այ եղև, և ասելոյն, "Հոգ էիր, և 'ի հող դարձցիս .., զմարմինոյն եցոյց մահ, որ լինի հոգւոյ բաժանելոյն, վասն այսորիկ ոչ ինչ վերկրորդ մահուանէն Թուի ասացեալ, այլ ծածկել զայն կամեցաւ առ 'ի մատակարարութե նորոյ կտակիս, յորում յայտնապէս ծանուցանի այն. որպէս զի այս առաջին մահ՝ որ

Հասարակաց ամենեցուն է, ցուցցի նախ յառաջ ելեալ
՚ի մեղացն՝ որ ՚ի միում եղև ամենեցուն հասարակաց. իսկ
մահ երկրորդ՝ ոչ ամենեցուն հասարակաց է, երբ կան՝
՚՚Որք հրաւիրանաւն կոչեցան. զորս յառաջն Ճանաչէր,
և յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատ-
կերի որդւոյ իւրոյ. զի եղիցի ինքն անդրանիկ ՚ի մէջ եղ-
բարց բազմաց ՚՚. Հռ. Ը. 29. զորս յերկրորդն մահուա-
նէ ապրեցուցին ընդհանուր ՚այ ՚ի ձեռն միջնորդին։

՚՚Սակայն այսպէս խօսի առաքեալն՝ ասելով վասն մար-
դոյն առաջնոյ լինել ՚ի մարմին հնչաւոր. քանզի զառա-
նել կամեցեալ զայժմու հնչաւորս ՚ի հոգևորէն՝ որ ՚ի յա-
րութենէն լինիցի, ասէ. ՚՚Սերմանի ապականութե՛ւ, և յա-
նէ առանց ապականութե՛ւ. սերմանի անարգութե՛ւ, և
յառնէ փառաւք. սերմանի տկարութե՛ւ, և յառնէ զօրու-
թե՛ւ. սերմանի մարմին հնչաւոր, և յառնէ մարմին հո-
գևոր ՚՚. Ա՝Կոր. ԺԵ. 42։ Այլ ՚ի ցուցահուէ բանիս յաւելու.
՚՚Այնպէս գոյ մարմին հնչաւոր, գոյ և հոգևոր ՚՚։ Այս առ
՚ի ցուցանել զինչ հնչաւոր մարմինն իցէ, ասէ. ՚՚Գրեալ
է և գրեալ է. եղև մարդն առաջին Ադամ շունչ կենդա-
նի ՚՚։ ՚Քան սովին օրինակաւ ցուցանել կամեցաւ՝ զինչ
իցէ մարմին հնչաւոր. Թէպէտ և գիրն վասն առաջնոյ
մարդոյն կոչեցելոյ Ադամ՝ յորժամ փչմամբ ՚այ ստեղծաւ
՚ինմա հոգին, ոչ էր ասացեալ, եղև մարդն ՚ի մարմին հնչա-
ւոր, այլ թէ՝ ՚ի շունչ կենդանի. ուստի յայն որ գրեալն է՝
եղև ՚ի շունչ կենդանի, ընտրեաց խմանալ առաքեալն,
հնչաւոր մարմին մարդոյ։ Իսկ թէ զինչրգ հոգևոր իցէ ի-
մանալի, ցուցանէ ՚ի վերոյ բերելով. ՚՚Երկրորդ Ադամ
՚ի հոգի կենդանարար ՚՚. անշուշտ զՔրիստոս յայտ առնելով.
որ այնպէս իմն յարեաւ ՚ի մեռելոց, որ այլ ոչ ևս կարէ
մեռանել։ Զայսմանէ ապա ասէ. ՚՚Այլ ոչ նախ հոգևո-
րըն, այլ հնչաւորն, և ապա հոգևորն ՚՚. որով յայտնա-
գոյս ծանուցանէ, թէ մարմին հնչաւոր նշմարել ինքն
յայն գրեալն, եղև մարդն առաջին ՚ի շունչ կենդանի.
իսկ հոգևոր՝ յայն զոր ասէ, ՚՚Երկրորդ մարդն ՚ի հոգի
կենդանարար ՚՚։ ՚Այսն զի նախ է մարմինն հնչաւոր՝ և-

ղեալ՝ի մարդն առաջին, Թէպէտ ոչ մահկանացու՝ եթէ մեղս ոչ եգեալ էր, զորպիսի մեք այժմ ունիմք, այնպէս փոփոխեալ և խանգարեալ բնութեն՝ որպէս՝ի նմանէ եղև զկնի մեղանչելոյն, յորմէ ձգեաց յանձն զկարիս մեռանելոյ. զնոյնպիսի յանձն առ և Ինձ զառաջինն վասն մեր, ոչ բռնադատութեբ, այլ իշխանութեբ. յետ այնր ապա և հոգևորն, որ յառաջեաց՝ի Նէ իբրև՝ի գլուխ մեր, և լինելոց է յանդամոնորա՝ի յետնութիւն յարութեն մեռելոց։

Այսպէս՝ի վերայ ածէ առաքեալ զմեծ անջրպետութեն երկուց մարդոցս ասելով. «Առաջինն մարդն յերկրէ հողեղէն, իսկ երկրորդ մարդն՝ տէր յերկնից։ Ոպիսեք հողեղէնն, նոյնպէս և հողեղէնքս. և որպէս երկնաւորն, նոյնպէս և երկնաւորքն։ Եւ որպէս զգեցաք զպատկեր երկնաւորին, նոյնպէս զգեցցուք և զպատկեր երկնաւորին»։ Ոյս առ տեղեաւս ըստ խորհրդոյ վերստին ծննդեանն լինել ծանուցանէ առաքեալ, որպէս և այլուր ասէ. «Ոլոք միանգամ՝ի Նէ մկրտեցայք, զՆէ զգեցեալ էք»։ Իսկ արդեամբք կատարեսցի յայնժամ, յորժամ՝որ՝ի մեզ չեաւոր ծնեալն՝ եղիցի հոգևոր յառնելոյն. և զի զնորաւն իսկ բանս առցուք զարձեալ. «Ոյսով ապրեցաք»։ Այդ զպատկեր երկրաւորին մարդոյ զգեցաք առմամբ յանցաւորութեն և մահու, որ՝ի ձեռն ծննդեան յարեցաւ՝ի մեզ. իսկ զպատկեր երկնաւորին զգեցաք մարդոյ՝ հնորհօք Թողութեն և միանձնեանս ևենաց, զոր վերըստին ծնունդն հնորհէ մեզ՝ միայն՝ի ձեռն միջնորդին այ և մարդկան, որ է մարդն Ինձ Նէ. զոր մարդ երկնային կոչել կամեցաւ, զի ևն յերկնից՝ զգենուլ զհողեղէնն մահկանացութեն մարմին, առ՝ի զգեցուցանելոյ զնա անմահութեբն երկնայնով։ Այլ և զայլսն յայն սակս կոչէ երկնաւորս, վասն զի հնորհօք լինին նորա անդամք, որպէս զի լինել ընդ նոսա մի Նէ, իբրև գլուխ և մարմին։ Ոյսոյն յայտնի ևս դնէ՝ի նմին Թղթի յասելն. «Ոարդով եղև մահ, և մարդով յարութեն մեռելոց. որպէս Ոդամն ամենեքին մեռանին, նոյնպէս և Նէով ամենեքին կենդանասցին»։ յայտ է Թէ հոգևոր մարմնով որ

եղեցի՝ ի հոգի կենդանարար ։ Իրը ոչ եթէ ամենեքին որ Յ\գամ մեռանին , անդամք Չ\նի լինիցին . քանզի յոլովագոյնք՝ ի նոցանէ պատուհասիցին երկրորդ մահուամբ յաւիտեան . այլ ասացաւ ամենայն և ամենայն , զի զոր օրինակ ոչ ոք ընկալաւ մարմնոյն մեռանի՝ բայց Յ\գամաւ , նոյնպէս ոչ ոք հոգևոր մարմնով կենդանանայ՝ բայց Չ\նիւ ։ Վ\ասն որոյ չէ պարտ կարծել , եթէ՝ ի յարութենէ այնպիսի ունելոց իցեմք մարմին , որպիսի նախկին մարդոյն էր յառաջ քան զմեղսն . և ոչ զասացեալն “Որպէս հողեղէնն , նոյնպէս և հողեղէնքս ,, , ըստ այնր մարմնոյ իմանալ արժան է՝ որ յետ գործոյ մեղացն եղև ։ Ո՛չ չէ կարծելի եթէ յառաջ քան զմեղանչելն՝ հոգևոր ունէր մարմին , և՝ ի պատճառս մեղացն փոխեցաւ՝ ի հնչաւոր . ապա եթէ ոչ՝ ըստ այդմ ասպետ լինին բանք մեծի առաքելոյն որ ասէ . “Նախ զոչ մարմին հնչաւոր , գոյ և հոգևոր . որպէս և գրեալ է . եղև մարդն առաջին՝ ի հունչ կենդանի ,, ։ Այլ միթէ զինչ մեղացն եղև այդ , ուր զնախկին կազմուածն մարդոյնէ բանն . և երանելի առաքեալն առ՝ ի ցուցանելոյ զմարմինն հնչաւոր՝ ի միջ առ զայդ վկայութեն գրոց ։

ԳԻՒՂԻՒ ԻԹ

Չ\ամբգ խնամալ պարտ է զիչուին զոյն՝ որով Ա\արգն առաջին եղև ի յոգի կամ՝ ի հունչ կենդանի՞ . և զայն փչուին՝ զոր ասաւ , Առէք հոգի սուրբ ” ։

ԱՒՏՍՒ ոչ այնչափ քաջագէտ զմտաւ ածեալ ոմանց (՝ի հարց) կարծելին, եթէ յայն ընթերցուած գրոյն, “ փչեաց ՚ի՛ երեսս նորա հունչ կենդանի , և եղև մարդն յոգի կենդանի ,, , ՚ԵՒՆ . Է . Ի , ոչ եթէ յայնժամ տուաւ հոգի առաջին մարդոյն , այլ որ էրն արդէն ՚ի նմա՝ կենդանացաւ հոգւով սրբով ։ Զայս յօժարեցան ոմանք՝ այնու զի

տէր Յս յետ յարութեն՝ի մեռելոց՝ փչեաց առեալ զա-
շակերտսն . « Առէք Հոգի սուրբ ,, . որով համարին նոյն-
պիսի ինչ գործեցեալ յառաքեալն՝ որպիսի առ նախինին
եղև . որպէս այն Թէ ըստ նմին բանի առեր և առեատրա-
նիչն , Յս եղեն աշակերտքն յոգի կենդանի : Իր Թէ և
այդպէս էր ասացեալ , ունէաք իմանալ Թէ Հոգին այ
կեանք իմն է Հոգւոց , առանց որոյ Հոգիքն բանականք
որպէս մեռեալք են համարելի , Թէպէտ և մարմինք նոցա
կենդանի երևեսցին : Ա.յլ զի ոչ այդպէս ինչ եղև՝ի կազ-
մուԹե մարդոյն՝ յայտնի վկայեն նոյն իսկ բանք գրոյն այս-
պէս ունելով . « Յս ստեղծ ած զմարդն Հող յերկրէ ,, .
զոր ոմանք իբրու պարզագոյնս համարեցան Թարգմա-
նել . « Յս ստեղծ կամ կերպարանեաց ած զմարդն՝ի
կաւոյ երկրի ,, : Ասդեղ վերագոյն ասացեալ էր . « Այլ
աղբիւր ելանէր յերկրէ , և ոռոգանէր զամենայն երեսս
երկրի ,, . յորմէ իմանալ Թուէր լինել կաւ , ՚ի Հողոյ և ՚ի
ջրոյ զանգեալ . զի յետ զայդ ասելոյ՝ անդէն յարի . « Յս
ստեղծ զմարդն Հող յերկրէ ,, . որպէս ունին յոյն օրինակք ,
ուստի երբեմն ՚ի լատին բարբառ Թարգմանեցան սուրբ
գիրք : Ասկայն եԹէ ստեղծ կամիցի ոք ասել , և եԹէ
կերպարանեաց կամ ձևացոյց , ՚ի նոյն միտս բերի . Թէպէտ
և յունականն էպլասէն առաւել նշանակէ ձևացոյց , կեր-
պարանեաց , այլ առ՚ի խորհելոյ յերկրանուԹէ առաւել
ընտրեցին ասել ՚ի լատին formavit քան finxit. զի այս ըստ
յաճախ սովորուԹեան լատին բարբառոյ նշանակէ կեղ-
ծեօք կամ ՚ի սուտ ինչ ձևացուցանել : Ա.րդ զայս մարդ
զի Հողոյ երկրի կամ՚ի կաւոյ կազմեաւն , իբր զի էր Հող
առաջացեալ , զոյն զայս զՀող երկրի ասեմ ըստ գրոյն
Հայնի մարմին ընդաւոր լեալ ուսուցանել առաքեալն , յոր-
ժամ ընկալաւ զՀոգին . և եղև մարդս այս ՚ի շունչ կեն-
դանի . այսինքն , կերպարանեալ այս Հող՝ եղև Հոգւով
՚ի շունչ կենդանի :

Ա.յլ ասեն, ունէր արդէն զՀոգին . ապա Թէ ոչ՝ չիւէր
մարդ . զի ոչ մարմին լոկ է մարդ , և ոչ Հոգի սոսկ . այլ
բաղկացու ՚ի Հոգւոյ և ՚ի մարմնոյ : Ա.յսմարաիւ այդ այդ-

պէս է. զի ոչ ողջոյն մարդ, այլ ազնիւ մասն մարդոյ է հոգի. և ոչ ողջոյն մարդ մարմինն, այլ նուաստ մասն մարդոյ. բայց երկոքին շաղկապեալք ունին զմարդոյ անունն, զոր և ուրոյն անկորուստ պահեն, յորժամ զմիոյ միոյ խօսիմք։ Օ՛ի՞ արգելու ասել ըստ հանապազօրեայ սովոյ խօսից. այս ոք մարդ ննջեաց, և այժմ կայ ի հանգիստ կամ ի տանջանս. զոր յաղագս հոգւոյն ևեթ է մարթ ասել։ Կամ, յայս ինչ կամ յայնմ վայրի թաղեցաւ այն անուն մարդ. ուր վասն մարմնոյ միայն մարթիմք զայդ իմանալ։ Մի՛ևեթ ասիցե՛ն, թէ ոչ է ճշմարիտն զրոյց սովորութեան խօսել այդպէս։ Ո՛չն անդր. նոյն իսկ այնպէս իմն վկայէ մեզ յայգմ, զի և մինչդեռ զգեաւլիսկ են հոգի և մարմին, և կենդանի է մարդն, զիւրաքանչիւր զնոսա մարդոյ անուամբ կոչէ, զհոգին անուանելով մարդ նեբրքին, և զմարմինն՝ մարդ արատաբին, որպէս եթէ երկու մարդ իցեն, ուր երկոքին միանգամայն են մի մարդ։ Այլ ասայ իմանալ՝ եթէ իւիք ասի մարդ ի պատակեր ՚ոյ, և եթէ մարդն հոգ է և ունի ի հոգ դառնալ. քանզի առաջինն ասի ըստ բանական հոգւոյն, զոր ՚ած փչմամբ տպաւորեաց ի մարդոումն, այս է՝ ի մարմնի մարդոյ. և երկրորդն ըստ մարմնոյն ասի, զորպիսի մարդ ստեղծ ՚ած ի հողոյ. որում տաւաւ հոգի առ ի լինելոյ մարմին ընդաւոր, այս է՝ մարդ ի հոգի կենդանի։

Այսպա այնու զոր տէրն արար՝ փչելովն և ասելով, “Այ՚ռէք հոգի սուրբ,,, յայտ արար թէ հոգին սուրբ ոչ հօր միայն, այլ և միածնին հոգի է. նոյն ինքն է հոգի հօր և որդւոյ, որով է երրորդութիւն հայր և որդի և հոգի սուրբ, ոչ արարած, այլ արարիչ։ Վասնզի զգալի այն փչումն ի մարմնոյն բերանոյ յառաջագայեալ՝ ոչ եթէ գոյացութիւն և բնութիւն էր հոգւոյն սրբոյ, այլ նշանակ իմն առ ի միա առնուլ՝ ըստ որում ասացիդ, թէ հոգին սուրբ հասարակ է հօր և որդւոյ, ոչ իւրաքանչիւր նոցա այլ և այլ, այլ մի երկոցունց։ Այս հոգի ի սրբազան դիրս միշտ յատնական ձայնիւ ասի ՓՆԵՄԱ. որպէս և յայսմ վայրի կոչեաց տէրն, յորժամ փչմամբ բերանոյն

նշանակեաց տալ զնա աշակերտացն. և ոչ գտանեմ ուրեք երբեք այլազգաբար անուանեալ ի բոլոր յաճախին պատգամն՝ Իսկ աստանօր յընթերցուածի ծննդոց. «Ես ասեղծ ես զմարդն հող յերկրէ, և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի.., ոչ ասէ յունականին φῦσ-ա, որպէս ըզհոգւոյն սրբոյ ասէ սովոր է, այլ φοή (իբր ընդհուն), որ յա Ձախ զարարածոց՝ քան զարարչէն գոյ ասացեալ. ուստի ամենք ի լատինաց ի սակս որոշման ընտրեցին փոխանակ այսր բառի զնել flatus, փչումն կամ շունչ, քան թէ spiritus, հոգի. զի այն բառ է ըստ յունականին և ի բանն Եսայեայ ասացեալ յայ, «Ո՛ ամենայն շունչ ես արարբ.. ԾԷ. 16. յայտնապէս զամենայն հոգի նշանակելով. Եւ զոր ուր Հոգիք φῦσ ասէն, Լատինք (որպէս և Հայք) երբեմն թարգմանեցին՝ շունչ, երբեմն հոգի, երբեմն փչումն, յորժամ կին և ունիցի զբառն՝ այ. Սակայն զյոհան φῦσ-ա ամենայն ուրեք թարգմանեն հոգի, եթէ մարգոյ իցէ, զորմ ասէ առաքեալն. «Ո՛ր ո՞ր ի մարգկանէ գիտէ ինչ զմարդոյն՝ եթէ ոչ հոգի մարդոյն որ ի նմա.. Ա. Կոր. Բ. 11. Եթէ անասնոյ. որպէս ի Սողոմոնի գիրս կայ. «Եւ ով գիտէ զոգի որդւոց մարդկան՝ թէ ելանէ ի վեր, և զշունչ անասնոց (լատ. spiritus) թէ ի ջանէ ի խոնարհ յերկիր.. Եկեղ. Գ. 21. Եթէ մարմնեղէնն այն՝ որ և Հոգմ ասի. զի այս անուն է երգեալն ի սաղմոսի. «Հուր և կարկուտ, ձիւն և սառն, Հոգմ (spiritus) և մրրիկ.. ՃԽԸ. 8. Եթէ նա և անստեղծն կամ արարիչն. որպէս ի նոն ասացեալն. «Ի՛րեք Հոգի սուրբ.. զոր և բերանոյն փչմամբ նշանակեաց. Եւ ուր ասէն «Ի՛կրտեցէք զամենայն հեթ անտոս յանուն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ.. զնա ինքն զերրորդութիւնն հրաշափառապէս բացածանուցանելով. Եւ ուր ընթ Եռնուք, «Հոգի է ձե.. և յայլ ևս յոլովագոյն տեղիս գրոց սրբոց, ի բովանդակ յայս վկայութիւքս ըստ յունին ոչ տեսանեմք գրեալ φῦσ, այլ φῦσ-ա, և ի լատինականն ոչ flatus, շունչ, այլ spiritus, Հոգի. Սորին վասն եթէ ի գրեալն «փչեաց յերեսս նորա շունչ կենդանի.., յունականն ոչ եր

եղեալ ֆնէ, որպէս ունի ընթերցուածն, այլ ֆնէ-մա, և ոչ այնպէս զհետ գայր՝ հարկաւ իմանալ զարարչականն հոգի, որ և միրապես հոգի սուրբ ասացեալ յերրորդութեան. որովհետև ֆնէ-մայդ՝ ըստ որում ասացաւ՝ ի կիր առեալ է յայտնապէս ոչ միայն զարարչական ոգւոյ, այլև զարարածականին։

Այլոց ընդդիմաբանեն, թէ յասել գրոյն՝ շունչ, ոչ արդեօք յաւելոյր զկենդանին կամ կենաց, եթէ չիամէր զհոգին սուրբ անմարկել անտանօր։ Եւ յասէլն զարձեալ՝ «Զի մարդն յոգի..., ոչ յաւելոյր կենդանի, եթէ ոչ յայտ առնէր զայն կեանս հոգւոյն, որ յաճուատ մասնաւորեալ նմա պարգեւօք հոգւոյն ոյ։ Պատգի ասեն. երբ հոգի զիւրականն ունի բան կենդանութեան, զինչ պէտք էին յաւելուլ՝ կենդանի, թէ ոչ զայն կեանս էր իմանալ՝ որ հոգւովին սրբով տուեալ լինի նմա։ Պակաս զինչ այլ իցէ այդ՝ բայց ձշդով վիճել յաղագս մարդկօրէն կարծեաց, անտես արարեալ ուշ ունել գրոց սրբոց. և ոչ հարկ ինչ էր հետի ուրեք գնալ, այլ անդէն ի նմին գրի ընթեռնուլ փոքր ինչ ի վեր. «Պղնեսցէ երկիր շունչ կենդանի...» յորժամ ցամաքային կենդանիքն ստեղծան։ Օ ինչ դժուարին գաղձեալ յետ ընդ միջ անկելոց բանից ոմանց՝ ուշ ունել գրեցելումն ի նոյն գիրս անդ. «Եւ ամենայն որ ունէր շունչ կենդանի, և ամենայն որ ինչ էր ի վերայ ցամաքի՝ մեռաւ...» ուր արտայայտէ զջնջել բոլոր շնչականաց ի ցամաքի ջրհեղեղաւ։ Պայս եթէ և հոգի կենդանի, և շունչ կենդանի գտանեմք զանատնող իսկ ասացեալ ըստ սովոր ուրեք ճաշակին գրոց, և ուր ի բանիս յայսմ ընթեռնուն՝ «Ամենայն որ ունէր շունչ կենդանի...», յուշանականն ոչ ասէ ֆնէ-մա, այլ ֆոխ, առիմն ոչ հարցաքանեմք՝ զի՞նչ պէտք էին յաւելուլ զկենդանին, ոչ բոլորեւին հոգւոյ չէ գոլ առանց կենդոյ. կամ՞ զի պէտք առ շունչն յաւելուլ զկենդանին։ Այլ իմանամք շունչ և հոգի կենդանի ասել գրոց սովորութեամբ յորժամ զկենդանացման՝ կամ զմարմինս հոգևորեալս կամիլ յայտ առնել. յորս ի ձեռն հոգւոյ ազդիւր ակնեղէն զգացումն մար-

մեղս։ Իսկ ի կազմուԹԵ մարդոյ մուտանայցեմք արդեօք զգերոց սովորեալն ձև բանի՝ զոր և պահեացն իսկ առ ի տալ մեզ գիտել ԹԵ նա և մարդն ընկալեալ զոգին բանա- կան՝ ոչ ըստ այլոց մարմնոց ի ջրոյ և ի հողոյ արտադրե- ցոյց, այլ ի փչմանէն այ արարչագործեալ, այնպէս իմն եղև՝ զի ի կենդանականն մարմնի՝ հոգւոյ ի նմա կեղծին, կեց- ցէ և ինքն իբրև զայլ կենդանիս՝ զորոց ասացաւ. " Իբղ- խեացէ երկիր շունչ կենդանի ,, . ուր և յոյնն ֆոՀ ասէ, և ոչ ֆՍՀ. յայտ է ԹԵ ոչ զՀոգին սուրբ ցուցանելով այ նու անուամբ, այլ զոգի նոցա։

Ասացեալն ասեն. փչումն կամ շունչ այ իմանալի՝ ելանել ի նորա բերանոյն. և ԵԹԵ զոգի մարդոյն համարիցեմք, Հա- մԱՒուԹԵ ուրեմն ասելիք զայն ընդ այ, և զուգական ի- մաստուԹԵ նորա՝ որ ասէ. " Այս ի բերանոյ բարձրեալոյն եղև ,, . Աէրա. ԻԲ. 5։ Ասելոյն ոչ ասաց զինքն իմաստունն ի բերանոյն այ փչեալ, այլ ելեալ. և զոր օրինակ մեք կարող եմք՝ ոչ ի մերոյին բնուԹԵ որով մարգս եմք, այլ ի շրջապատուս օդոյ աստի՝ տուրս առնիկ լինելով շունչ տալ ի փչելն, նոյնպէս Հնարաւոր էր այ ամենազօրի՝ ոչ յիւրական բնուԹԵ, և ոչ յընԹերական ինչ արարածոյ, այլ յանդոյիւ առնել շունչ, զոր ի մարմին մարդոյ յօ- դակապուել, ՀաՀոզապէս իմն փչել ասացաւ, անմարմինն զանմարմինն, և անփոխոյն զփոխոխելին, իմա՝ անեղն զեղականն։ Ասացեալ զի դարձ՝ ոչք ի գրոց խոսել կամին, և ոչ ուշ ունին ասացուածոյ գրոց, գիտասցեն ԹԵ ի բե- բանոյն այ ելանել ոչ զայնմանէ և ԵԹԵ ասէ՝ որ նորա բնու- ԹԵականէ իցէ, ԹՈղ լուիցեն կամ ընԹերցցին զգրեալն ի դիմաց այ. " Օ ի գաղջ էս, և ոչ ջերմ, և ոչ ցուրտ, Հանգերձեալ էս փսխել ի բերանոյ իմմէ ,, . Հայ. Գ. 16։

Ասան որոյ չէք պատճառ ինչ բնաւ օտարանալոյ ի քա- ջայայտ բանիցս առաքելոյն, ուր զմարմին չնչաւոր զա- տանելով ի Հոգևորին, այս է զայս մարմին յորում եմք՝ յայնմանէ յոր լինելոցն եմք, ասէ . ա. Կոր. ԻԵ. " Կերմա- նի մարմին չնչաւոր, և յառնէ մարմին Հոգևոր. ԵԹԵ գոյ մարմին չնչաւոր, գոյ և Հոգևոր։ Այսպէս և գրեալ է.

եղև մարդն առաջին Ադամ՝ ի շունչ կենդանի. երկրորդ Ադամ՝ ի հոգի կենդանարար: Այլ ոչ նախ հոգևորն, այլ հնչեղն, և ապա հոգևորն: Առաջին մարդն յերկրէ հողեղէն, իսկ երկրորդ մարդն տէր յերկնից: Որպէս հողեղենն, նոյնպէս և հողեղիքն. և որպէս երկնաւորն, նոյնպէս և երկնաւորքն: Եւ որպէս զգեցաք զպատկեր հողեղինին, զգեցցուք և զպատկեր երկնաւորին»: Այսոր առաքելական բանից բոլորովին խօսեցաք վերադոյնդ: Այսպա հնչեղ մարմինն՝ որով եղեալ ասէ զառաջին մարդն զԱդամ, էր այնպէս ինն արարեալ, որ ոչ էթէ բնաւ անմեռ էր, այլ զի մեռանէր ոչ՝ էթէ չէր մեղուցեալ. զի այն մարմին որ հոգւոյն կենաւարաւ հոգևոր էր և անմահ, ոչ ունէր մեռանել երբէք: Որ օրինակ հոգի անմահ առեղծեալ՝ Թէպէտ և մեղաւ՝ ի մահ ինն գրաւի, պակասեալ՝ ի կենաց հնչ իւրոց, այն է հոգին որով կարողն էր կեալ համաստուածէ և երանելի կենաւք, սակայն ըստ իւրումն չատուկ կենաց՝ Թէ և Թշուառ, ոչ դադարէ՝ ի կենդանութէ, զոլովն անմահ ըստ արարչութէ: Որպէս և հրեշտակքն ապստամբողք՝ Թէպէտ և յեղանակաւ ինն մեռեալք են յանցանելոյն, զի Թողին զաղբիւր կենաց զԱստ, յորմէ արբեալք՝ ունէին կեալ համաստուածէ երանաւէտ, սակայն չէր մարթ այնպէս մեռանել նոցա, զի բնաւ անկենդանիք ինայցեն և անզգայք. քանզի անմահացուք առեղծան. և յերկրորդն մահ խարդաւանեալք չետ վերջնում դատաստանի, և ոչ չայնժամ կենաւզիրկ լինիցեն. իբրև զի ոչ պակասիցի նոցա զգայութէն ցաւոցն՝ զորս կրէլոց են: Այլ՝ ի մարդկանէ արժանացեալքն շնորհացն ինչ, քաղաքակիցք հրեշտակացն սրբոց հաստատեալ յերանելի կեանս՝ այնպէս զգենուցուն մարմինս հոգևորս, զի ոչ ևս այլ մեղանչել է նոցա, և ոչ մեռանել, զանմահութէն որպէս զհրեշտակացն տարեալք՝ ի չանձինս, որում և ոչ մեղք լինի այնուհետև լուծանիլ. զի Թէպէտ և կայ մեզ՝ ի նոսա բնութէն մարմնոյ, այլ ոչ մի ինչ մարմնական ապականութէն կամ ախտակրութէն:

Հետ գայ այլ խնդիր կարևոր՝ ի չառնել և օժան-

դակեալով տեսան որ ոճծն է Չմարտուէ՝ լուծուելն առնել, եթէ ցանկալի էր շարժեցաւ անսասան անդամոց յառաջինն մարդիկն առ՝ի մեղաց անտի անհնազանդուէ՝ ի լքանել զնոսա Հնորհացն ոյ, որով բացան աչք նոցա առ յիւրեանցն մերկութէ, այս է՝ ուշագիրք եղէն այնմ՝ և վասն զի խորհուրդն անմահութ ըմբռնացայր առ իշխանական կամն, զամօթոյն վերարկեցին, որպէս արդեօք ունէին նոքա զսերունդ որդւոց, եթէ ըստ որում ստեղծանն՝ ինացեալ էին առանց յանցանաց։ Ա՛յլ զի կատարած այսմ գրոց դնելի է, և զինդիրդ զմեծ չէ մարթ՝ի սակաւ բանս ամփոփել,՝ի դեպ և՝ն Թողութիւք քննել՝ի հետագայ գիրսդ։